1000-ꝶz
2.0.0.01

1579
1000-ԱՀ
127-207

# ԿԱՐՃԱՌՕՏԱ

## ԳՈՒ՛ՆԵԱԳ ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ

Ընդհանրական Աստուածաբանութեան խոհականի, ուսումնականի, գործականի, բարոյականի, և այլ ։ Աստուա- կանաւ խօսակցութեամբ ։

Շարադրեցեալ ՚ի լատինական լեզուոջ ՚ի Գերապատուելւոյ Խաչատրոյ Երզրումեցւոյ Աստուածաբան Վարդապետէ ։

Եւ թարգմանեցեալ ՚ի հայկական լեզու ՚ի Մարկոսայ Բարթուղեան Կոստանդնուպօլսեցւոյ Կրօնաւորէ ։

Տպագրեցեալ ջանիւ նորին Վարդապետի, ՚ի փառս Աստուծոյ, և յօգուտ մերայնոց ։

Յամի Տեառն 1736.

Ի Հայրապետութեան Տեառն Աբրահամու Ամենից Հայոց Կաթուղիկոսի ։

Ի ՎԵՆԵՏԻԿ ։

Ի Տպարանի Անտօնի Պօրթօլի ։

Հրամանաւ Մեծաւորաց ։

8493-57

КНИЖ-СОРА
ИМ. А. МЯСНИКЯНА

# ԳԵՐԱԶԱՆՑԴ

Գունեղք , և Գերապատուելագունեղք Տեարք կարդինալք սրբոյ ժողովոյ զծաւալելոյ Հաւատոյ:

Հրամանաւ Գերազանցութեանց ձերոց կոչեցեալ 'ի Հռոմ վասն սրբոյ տպելոյ առ 'ի քարոզել զՔ̅ծային բանն 'ի Հայկական լեզուոջ 'ի յեկեղեցւոջ սրբուհւոյ Մարիամայ Եգիպտացւոյ Հայոց : Եւ առ 'ի յուսուցանել զքրիստոնէական վարդապետութի̃ Հայոց , առատապէս Եկողաց 'ի Հռոմ յայսմիկ ո̃ւ տարւոջ վասն Յ'ոբեանութեան , թողեալ զերկս մեծամեծս գործս իմ , զորս ունէի 'ի ձեռին իմում առ ընդհանրական օգտակարութիւն , դրկեցի զհնազանդութիւն : Եւ տեսի հպատակելով ընդդէմ յօժարութե̃ իմոյ հրամանի Գերազանցութեանց ձերոց , առժամայն անդրաբերի զիս 'ի Հռոմ ; և հաւանութեամբ ամենայնի հոգևորաց գործոց , 'ի փրկութի̃ հոգւոյ իմոյ յանձնեցելոց , որ ըստ օրէ հետևաբար Հայոց ուխտաւորաց եկողաց քարոզելով զՔ̅ծային բանն 'ի Հայկական լեզուոջ , ուսուցանելով զքրիստոնէական վարդապետութի̃ , և լսելով զխոստովանութիւս նց̃ , ո̃ց խոստովանահայր Հայոց : Զի մի փափագն իմ առաջացուցանելոյ զշնորհագրութի̃ երկց մեծամեծաց վերոյասացելոց գործոց իմոց , զորս կարի յոյժ ջանամ , զի նախ քան զմահն իմ աւարտեցեմ , զխափեցէր ինձ , շարադրեցի նաև զՔ̅ծաբանական համառօտութի̃ . սորապատկանաւ խօսակցութե̃ 'ի լատինականի լեզուոջ : Արդ ուրեմն յիշելով զմեծամեծս , և զմեծադունեղս , և զբազմադունեղս գերազանցս բա-

բարերարութի՛ս, այնքան զհոգևորս, որքան զժամանակաւ-
որս 'ի մանկութենէ իմմէ 'ի գերապանծութեանց ձերոց առատաբար
ինձ շնորհեցեալս, սահմանեցի զայս կարճառօտ Բ.ուսաբանա-
կան գործն իմ՝, առ օգտակարութի, զլատինական լեզուն
գիտողաց, և զԲ.ուսաբանականս ծանօթութիւնս սիրողաց, յի-
նէն համառօտաբար ստորասականաւ խօսակցութիւ շարադր-
եցեալն, նուիրել գերապանծութեանց ձերոց։ Արդարև ընծայս
է կարի յոյժ փոքր, բայց բաղձանս ընծայելոյ զպարտաւորս
պաշտօնս Գերապանծութեանց ձերոց, է մեծագունեղ, զի այ-
սորիկ աղերսանօք հայցեմ 'ի Գերապանծութեանց ձերոց, զի
արժանաւորեսցին հայիլ ոչ 'ի նուաստութի ընծայի մատուցե-
լոյ, այլ 'ի մեծութի սրտի մատուցանողի։ Արդ ուրեմն ա-
պաւինեալ 'ի քաղցրաբարոյութի Գերապանծութեանց ձերոց,
նաև զդուզնաքեայ ընծայս, պարտաւորաւ, և ծառայակա-
նաւ սրտիւ մատուցեալս, հաճեցողացն ընդունիլ, զայս,
աշխատանաց իմոց Բ.ուսաբանական գործս նուիրեմ Գերա-
պանծութեանց ձերոց։

'Գերապանծութեանց ձերոց։

Պարտաւորագունեղ, և պարտաւորեցելագունեղ
ծառայ Խաչատուր Ռ.աքելեան
Մխսաննար։

Բ. Ա-

# ԱՌ ՓՈՐՁՈՒՄՆ:

Յանձնէն Վերապատուելագունեղի Հօր, և Եղբօր Գրիգորի Սելլերեան վարդապետի սրբազանի, և Առաքելական Պալատի, բերկրութբ ոգւոյ ըն-թերցայ զգիրքս զայս, որ կոչի Համառօտութիւն ընդ-հանրոյ Ածաբանութեան, շարադրեցեալ 'ի վերապատուելւոյ Տէ Խաչատրոյ Առաքելեան, և այլ: Որ յանձնառեալ անցա-նել ձեռամբ ընդ մեծ, և ընդարձակ ծով, արդարև ընդ բո-լոր Ածաբանութի, եհաս 'ի խորութի ծովու, և մրրիկն զնա ոչ ընկղմեաց. զի թէպէտ առեալ իցէ առ ինքն զմեծամեծ մատեան. սակայն գրեաց այնու ոճիւ մարդոյ. արդարև մար-դոյ, բայց սակաւուք զբազումն համառօտողի, հզօրի վար-դապետութբ առողջաւ, պայծառաւ բանիւ իւրով մեկնողի զխաւար անգիտութե, և զճանապարհն ԱՅ 'ի ճշմարտութե ուսուցանողի. արդարև մարդոյ, բայց մերձեցելոյ առ խո-րութի սրտի. յայտնողի, ուր իցէ իմաստութի, և ո՞ իցէ տեղի իմացողութե, զի բարձրացուցանիցի ԱԾ, ցուցանողի զանհունութի կատարելութեց նորին հիանալի պայծառութբ, և տեղեկացուցմամբ, և զանմատչելի լոյս նորին, զերրորդու-թի Անձանց, և զմիմ, որ ինչ առ ներքս, և առ արտաքս ար-տադրեցաւ 'ի նմանէ. մարդոյ արդարև, բայց 'ի գանձէ մտաց ամենագիտութե իւրոյ զնորս, և զհինս առաջաբերողի, և մեծագունեղապէս փափագողի, զի ոչ միայն ոտք Աւետարա-նողաց զխաղաղութի, և Աւետարանողաց զբարիս, իցեն գե-ղեցիկք, այլ նաև զի միտք, և լեզուք նոցին իցեն ճարտա-րախօսք, վն որոյ 'ի յայսմիկ գործոյ անյանդիմանելի բանիւ քաղցրաբար զնոսա հմտացուցանողի. հեռի է 'ի նմանէ նաև փոքրագունեղ ինչ անհամաձայն սրբազանից վարդապետաց, կամ ուղղափառականաց բարուց, զի առ այսոսիկ իւրով բա-րեպաշտութբ, և առ այնոսիկ իւրով վարդապետութբ ածէ: Վո որոյ ոչ յանդիմանութե, այլ վն օգտակարութե ընդ-հանրականի իմաստասիրականի պետութե, ո՞մ և այլք գործք այսորիկ հեղինակի եղեն, հրապարակական լուսոյ արժա-նաւոր համարիմ:

Տուեցեալ 'ի Հռոմ 'ի ժողովարանի սրբուհւոյ Մարիամու զյաղթութե, յամի Տն. 1725. յերկրորդում յաւուր դեկ-տեմբերի:

Նշան

Եղբայր Լէոն 'ի Սրբոյ Ռէլիքսէ Կարմելիթան բոբկագնաց Սրբոյ Ա̃ծաբանութե̃ նախընթերցիչ, և որդւոց ժողովոց ծանուցչի, և արարողութեց խորհրդակից:

# Ա Ռ Փ Ո Ր Ձ Ո Ւ Մ Ն:

Առաջաւորաւ հրամանաւ վերապատուելագունեղի Հօր, և Եղբօր Գրիգորի Սելլերեան վարդապետի սրբազանի Պալատի Առաքելականի, մտադրաբար տեսի, և բերկրութե̃ ընթերցայ զգիրքս զայս, որ կոչի Համառօտութի̃ ընդհանրոյ Ա̃ծաբանութե̃, շարադրեցեալ 'ի վերապատուելւոյ Հօրէ Խաչատրոյ Առաքելեան Հայ Քահանայէ, և Արխիօնարէ Առաքելականէ. 'ի բոլորում այսմիկ գործում որդւոց Հեղինակն բղխեաց զբան բարի, զբան առողջ, և անյանդիմանելի, հմտայուցանօղ զամենայն մարդ եկեալ 'ի յայս աշխարհ, որով բանաւոր կարողութի փայլել լուսով վերնայնոյ Ճշմարտութե̃, բանայ մ̃իտս զխորհուրդս երկնայինս, զճանապարհ, որով դիմեմք առ հայրենին, գրեթէ մատամբ ցուցանէ 'ի ձեռն ոմանց բարոյականաց խնդրոց առաջարկեցելոց, վերածեցելոց առ իւրս դասս, 'ի միասին կցուեցելոց ծանրութե̃ բանից, և զնոսին իբրև զգեղեցկագունեղ ճարակ իմաստնականի աշխարհի կարկառէ: Զայսքան ուրեմն գործ օգտակար հոգեաց, և արժանաւոր հեղինակի 'ի լոյս ելանել կարի արդարագունեղ համարիմ, պահեցելոց պահելեաց: 'Ի մենաստանէ սրբոյն Պեռնարտոսի զ Հռոմայ: Ամի Տ̃ն 1725. 'ի քան և հինգերորդի աւուր Նոյեմբերի:

Տ̃ր Յօհաննէս Մկրտիչ 'ի Ֆլորէնցայ քաղաքէ խորհրդակից սրբազանից ժողովոց ծանուցչի, և արարողութեց:



ՍՐԲԼՕԼՆ ՏՈՀՄ:

# ԿԱՐՃԱՌՕՏ ՏԱԳՌՈՒՆՍԴ

## Ածաբանական Համառօտութիւն ․

### ԳԼՈՒԽ Ա․

Յաղագս Ածաբանութեան ։

1․ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ է բան․ և խօսակցութի զԱԾ․ ուսուցանէ մարդոյ զայնոսիկ իրս, որք պատկանին ԱԾ ։ որպէս բնական գիտութիւն է այն, որ ընձեռէ զբնութիւն, և զայնս, որք պատկանին առ բնութի․ այսպէս Ածաբանութիւն է գիտութի, որ ընձեռէ զԱԾ, և զայնս, որք պատկանին ԱԾ։ Փափագելագոյն է Ածաբանութի՛ն, քան զբնական գիտութի․ քանզի փափագելագոյն է գիտելն զԱԾ, որ է ստեղծող մեր, և վախճան մեր, քան զգիտութի, որ է զստեղծուածոց ։ Փափագելագոյն է Տիրուհին, քան զաղախինն ։ Ածաբանութիւն է Տիրուհի, բնական գիտութիւն խնդրելի է, զի ծառայիցէ Ածաբանութեան ։ Ածաբանութիւն խնդրելի է, զի ծառայիցեմք ԱԾ ։ Սա առնէ, զի Աւետարանական լոյսն պայծառագոյն փայլեսցի ՚ի մեզ ։ Սա է գիտութի գիտութեանց ։

2․ Առարկայն Ածաբանութեան է ԱԾ ։ Քանզի առարկայն գիտութեան է այդ, շուրջ զորով վարի գիտութիւն ։ Ածաբանութի է շուրջ զԱմենակարողն ԱԾ ։ Սա է հեղինակ, զի պայծառագոյն ճանաչիցեմք զԱրարիչն մեր․ զնա, որ է սկիզբն, և վախճան մեր․ զնա յորում միայնում կարէ հանգչիլ անհանգստիտ սիրտ մեր․ զնա, զոր նախապատուեսցուք, և ՚ի վեր քան զամ ինչ սիրել պարտաւորիմք․ զնա, որոյ ծառայելն է թագաւորել, զոր սիրելն է երջանկութի ։ Որոյ հնազանդիլն է գանձ պատուական, զոր տեսանելն է երանութի, և որոյ հարուածն կամաւորապէս ընդունեցեալն է ստացումն ամենամեծից բարեաց․ զնա, որ է սկիզբն, և վախճանն ամից իրաց․ զնա, յորմէ են համայնք բարիք, որ է ստեղծողն, և պահպանիչն համայնից իրաց, զնա, յորմէ կախեալն ընդհանուրք իրք ՚ի դոլն, ՚ի համապահելն, և ՚ի գործելն․ զնա, յորմէ ընկալան դոյացողք զգոյութիւն, կեցողք զկեանս, և իմացողք զիմացումն ։ Արդարև վերահայի և առ այլս իրս, բայց նկատէ զնոսա, ըստ որում անեն առ ԱԾ, որ է մանաւանդական, և նախապատուական առարկայն ։

3․ Աստուածաբանութիւն բաժանի ՚ի խոկականն, ՚ի վիճաբանականն, ՚ի բարոյականն, ՚ի քարոզողականն, և ՚ի ստորասականն ։ Խո-

կական է, որ նորաբար նկատէ զԱստուածայինս իրս, և զանոսիկ, որք վերահային առ Ած։ Սա մեկնելով, և ենթադրելով եզրակացուցանէ զոմանս իրս։ Նրբագունիւք պատճառօք պաշտպանէ զեզրակացութիւն, և լուծանէ զառարկութիւս։ Սա սրէ զմիտն մեր։ Վիճաբանականն է, որ յառնէ ընդդէմ հերետիկոսաց, և արձակի ընդդէմ վատթարութեանց նց։ Սա պաշտպանէ զուղղափառականս ճշմարտութիւս 'ի յԱծաշնչոյ, 'ի սահմանադրութեանց ժողովոց, և եկեղեցւոյ, և 'ի սրբոց Հարց, լուծանելով զխորամանկս առարկութիւս հերետիկոսաց։ Բարոյականն է, որ կրթէ զհաւատացեալս 'ի յայնոսիկ իրս, որք վերահային առ բարս։ Ուստի լուսաւորէ զմարդիկ շուրջ զմոլութեք, և զառաքինութեք, զի փախիցեն 'ի մոլութեանց, և փարիցեն զառաքինութեք։ Քարոզողականն է, որ յորդորէ փախչիլ 'ի մոլութեանց, և գրկել զառաքինութիւս։ Ստորասականն է, որ ուսուցանէ հաւատացելոց զիրս հաւատալիս, և յուսալիս, և զայնոսիկ, որք են գործելիք։

4. Ածաբանութիւն է ազնուագունեղ։ Է գիտութիւն ազնուագունեղ, որ և է իմաստութիւն, որպէս մետաֆիզիքայն, քանզի է իմաստութիւն, է ազնուագունեղ գիտութիւն։ Ածաբանութիւն է իմաստութիւն իմաստութեանց, և Տիրուհի իմաստութեանց. քանզի ոչ միայն է տիրուհին ֆիզիքայի այլ նաև մետաֆիզիքայի. վասնզի նաև մետաֆիզիքայն ծառայէ սրբազանի Ածաբանութեան։ Ուստի աններկբայաբար է ամենասիրելի գիտութիւն. և համահետևապէս աններկբայաբար է ազնուագունեղ։ Նաև այն գիտութիւն է ազնուագունեղ, որոյ առարկայն է ազնուագունեղ. քանզի գիտութիւն, որպէս ընդունի զտեսակն, և զգերազանցութիւն 'ի յառարկայէ, այսպէս և զազնուութիւն. առարկայն Ածաբանութեան, որ է Ած, մինչ է կատարելագունեղ, գերազանցագունեղ, և ամենաբարեգունեղ, աններկբայաբար է ազնուագունեղ. ուստի Ածաբանութիւն աններկբայաբար է ազնուագունեղ։ Եւ ևս է ազնուագունեղ 'ի կողմանէ սկզբանց, յորոց եզրակացուցանէ. վասնզի սկզբունք նր են Ածայինք բարբառք, սահմանադրութիւնք եկեղեցւոյ, և ժողովոց։

5. Սրբազան Ածաբանութիւն ունի, և վայելէ զսկզբունս ամենաբարիս, վարի սկզբամբք, ուք յաղթեն զհամայնս սկզբունս, նաև մետաֆիզիքականս։ Քանզի նաև մետաֆիզիքականք սկզբունք են սոսկ բնականաւ լուսով. վասնզի համայնք մարդկայինք, և բնականք սկզբունք յենուն բնականի լուսոյ։ և 'ի բնականէ լուսոյ ընդունին զաներկբայութիւն։ Արդ սկզբունք սրբազանի Ածաբանութեան են Ածայինք բարբառք, Ածային աւանդութիւնք, և սահմանադրութիւնք եկեղեցւոյ, և ժողովոց 'ի ներշնչեցմանէ Հոգւոյն սրբոյ խօսողաց, և միաոգի, և միակերպ համահաւանութիւնք սրբոց հարց, որք միակերպաբար խօսեցան, և լուսաւորեցեալք 'ի Հոգւոյն սրբոյ, զուղղափառականս ճշմարտութիւս, զորս ուսան 'ի յԱծայնոց բարբառոց, և 'ի յաւանդութեանց, աւանդեցին մեզ առ լուսաւորութիւն մեր։ Ածայինք բարբառք, և սահմանադրութիւնք եկեղեցւոյ, և ժողովոց 'ի ներշնչեցմանէ Հոգւոյն սրբոյ խօսողաց, են աններկբայք Ածայնով լուսով, քանզի յենուն Ածայնոյ լուսոյ, և 'ի նմանէ ընդունին զաններկբայութիւն։ Ուստի սկզբունք սրբազանի Ածաբանութեան են ամենաբարիք։

6. Սրբազանի Ածաբանութիւն, որ է գերազանցագունեղ իմաստութիւն, և որոյ սկզբունքն են ամենաբարիք, յեցօղք Ածայնոյ լուսոյ, և ներբերօղք 'ի միտս քրիստոնէից զամենամեծ ստուգութիւն, պարտին անսալ եպիսկոպոսք փոխանորդք առաքելոց, վարդապետք քարոզօղք զԱւետարանականաց ճշմարտութեանց, և քահանայք մատակարարիչք խորհրդոց։ Անսալ պարտին եպիսկոպոսք, զի օգնեցեալք լուսով Ածաբանութեն,

թէ, կարիցեն 'ի ժողովս վայելչաբար արտաբերել զվճիռս, և զհօտն իւր յանձնեցելոյն հոգաբարձութե իւրեանց ըստ աստուածաբանականաց ճշմարտութեանց կարիցեն պատշաճաբար կառավարել: Անաւլ պարտին վարդապետք, զի լուսաւորեցեալք լուսով ածաբանութե, զաւետարանականս ճշմարտութիւնս, որպէս պիտոյ է, կարիցեն առաքել քրիստոնէից: Պարապիլ պարտին քահանայք, մատակարարիչք խորհրդոց, միջնորդք 'ի մէջ այ, և քրիստոնէից, և բացատրողք քրիստոնէականի վարդապետութե հարկաւորի առ փրկութի, զի վայելչաբար մատակարարիցեն զփրկաւէտս խորհուրդս, և պատշաճաբար ուսուցանիցեն զիրս առ փրկութի հարկաւորս:

7. Օգտակարութի ածաբանութե է անհնամեծ: Օգտակար է 'ի կողմանէ այ. վասնզի ածէ առ պայծառ փառոյն ճանաչումն նր: Օգտակար է 'ի կողմանէ խորհրդոց. քանզի բանայ զբարձրագոյնս խորհուրդս: Օգտակար է 'ի կողմանէ վախճանի մերոյ, առ որ ստեղծեցեալք եմք. վասնզի ցուցանէ զճշմարիտ երջանկութին: Օգտակար է 'ի կողմանէ միջոցաց առ վախճան մեր ածողաց. քանզի ցուցանէ զճանապարհն, տանողն զմեզ առ կեանն յաւիտենական: Օգտակար է 'ի կողմանէ առաքինութեց. վասնզի ուսուցանէ զճշմարիտս առաքինութիս, և զճշմարիտս բարեգործութիւնս: Օգտակար է 'ի կողմանէ շնորհի. քանզի ցուցանէ զպատուականութի նր: Օգտակար է 'ի կողմանէ մեղաց. վասնզի ցուցանէ զտգեղութի նց: Օգտակար է 'ի կողմանէ հաւատոյ. քանզի երևեցուցանէ զստութի առարկութեանց հերետիկոսաց, և 'ի յածայնոց բարբառից պաշտպանէ զհաւատն մեր: Ուստի ասէ առքն Պօղոս: (Ամ գիրք ածաշունչք և օգտակարք, 'ի վարդապետութի են, և յանդիմանութի, և յուղղութի, և 'ի խրատ արդարութեան: Զի կատարեալ իցէ մարդն Այ. յամենայն գործս բարութե հաստատեալ:) Առ Տիմո. երկ. գլ. 3. թիւ. 17.

8. Գերազանցութի ածաբանութե է ծայրագունեղ: սա գերազանցէ զամս այլս գիտութիս: Համայնք այլք գիտութիք համեմատին առ ածաբանութի, որպէս աղախինք առ տիրուհին: Վասնզի ամք այլք գիտութիք խնդրին, զի ծառայիցեն ածաբանութե իբրև տիրուհւոյ իւրում: Գերազանցութի ածաբանութե երևի 'ի կողմանէ առարկայի: Քանզի առարկայն ածաբանութե, մինչ է Ած գերազանցիւ լուսով ճանաչեցեալ, յաղթէ զառարկայս ամից այլոց գիտութեց: Գերանցութի նր յայտ է նաև 'ի կողմանէ սկզբանց նր: Սկզբունք նր են ազնուագունեղք. քանզի են ստուգագունեղք: Սկզբունք նր են բարբառքն այ, և յայտնութիւնք ածայինք: Սկզբունք նորա յեցեալք են ածայնոյ ճշմարտախօսութեան: Սկզբունք նորա է բանն աստուծոյ, որ է ճշմարտութիւն. բանն աստուծոյ, որ ոչ խաբիլ, ոչ խաբել կարէ: Բանք Այ, որ է հաւատութի, և են յայտնութիք նորա, որ է իմաստութի: Սկզբունք ածաբանութե է բանն նորա, որ է ճանապարհ, ճշմարտութի, և կեան: Ուստի ածաբանութին է գերազանցագունեղ իմաստութի:

9. 'Ի սկզբունս ածաբանութե է հոգին իմացողութե այ, միակ, բազմապատիկ: Ածաբանութիւնն ուսուցանէ զբանն այ, հմտացուցանելով զմարդն 'ի յաւիտենականս պատուիրանս: Ուսուցանէ զբանն, յորում է աղբիւրն իմաստութե: Սրբազան ածաբանութին է դուռ իմաստութե, որ բղխեաց 'ի բերանոյ ամենաբարձրելոյն, և է անդրանիկ նախ քան զամ ստեղծուած: Սրբազան ածաբանութին է գիտութի 'ի վարդապետութեց նորա, որ եղև մեզ իմաստութի, և արդարութի, և սրբացուցումն, և փրկութի: Սրբազան ածաբանութին առնէ, զի իմանայցեմք զբանս Այ, որամագրէ զունկն առ 'ի լսել զի‿

մաստութիւն, և հակէ զսիրան առ 'ի Ճանաչել զխոհեմութիւն : Որ լուսաւորեցեալ լուսով ածաբանութեան կոչէ զիմաստութիւն, և հակէ զսիրտ իւր խոհեմութեան, և խնդրէ զնա իբրև զդրամ, և զգանձ, իմասցէ զերկիւղն այ, և գտցէ զգիտութիւն. քանզի Տր Ած տայ զիմաստութիւն, և 'ի բերանոյ նր բղխէ խոհեմութիւն, և գիտութիւն : Ճշմարիտ իմաստութիւն է 'ի սիրողն զուղղութիւն. վասնզի 'ի չարակամ հոգին ոչ մտանէ իմաստութիւն, և ոչ բնակէ 'ի մարմնոջ ծառայողի մեղաց :

10. Լուսափայլ է իմաստութիւն, որ է ընդ երկիւղի Տն, և ոչերբեք թառամի, և դիւրաբար երևի նց, որք սիրեն զնա, և որք խնդրեն զնա գտանեն : Փափագողի շնորհի մտս, և աւկոչողի գայ հոգի իմաստութեան : Իմաստութիւն, որ է ընդ երկիւղի Տն, կարէ առնել զամ իր, և մնալով 'ի յինքեան նորոգէ զհամայնս իրս, և ընդ ազգս անդրաբերէ զիւր ինքն 'ի սբս հոգիս : Ամ իմաստութիւն է 'ի Տէ այ, և միշտ եղև ընդ նմա, և է նախ քան զյաւիտեան : Եհեղ զնա 'ի վերայ ամց գործոց իւրոց, և 'ի վերայ ամե ստեղծուածոյ ըստ հրամանի իւրոյ, և տայ զայն զնա սիրողաց : Ցանկացողն իմաստութեան, սիրել պարտի զարդարութիւնն. քանզի պահողի զարդարութիւն, պարգևի իմաստութիւն : Հակօղն զունկն իւր ընդունի զվարդապետութիւն, և սիրօղն լսել, լինի իմաստուն : Խոնարհ, և Ճշմարիտ իմաստունն խնդրէ զիմաստութիւն նախնեաց, պարապի մարգարէութեանց, պահէ զպատմութիւն արանց անուանաւորաց, և 'ի հնարագիտութիւն առակաց 'ի միասին մտանէ :

11. Խնդրեա՛ յայ զիմաստութիւն. քանզի նա յայտնէ զխորհինս, և զգաղտնիս, և զկացուցեալս 'ի խաւարի ճանաչէ, և լոյսն է ընդ նմա : Լսօղք, և պահօղք զպատուիրանս են իմաստունք : Շրջօղն 'ի պատմէրս է իմաստուն, և գիտուն : Վասնզի երկիւղ Տն է ինքն իմաստութիւն, և խոտորիլն 'ի չարէ, է գիտութիւն. զի իմաստունն երկնչի, և խոտորի 'ի չարէ : Որ հակէ իմաստութեան, գտանէ զնա մերձաւորող 'ի դրունս իւրս : Բացահերքօղն զիմաստութիւն, և զխրատն, և անգոսնօղն զվարդապետութիւն, արդարև է ապերջան, և յիմար, և ժողովուրդ անիմաստ հարեսցի : Բնակօղն ընդ իմաստութեան, սիրի 'ի յայ : 'Ի յիմաստութեան է ամենամեծ գեղեցկութիւն. քանզի վայելչագոյն, և գեղեցկագոյն է քան զարեգակն : Իմաստունն, և գիտունն, որ երկնչի 'ի յայ, է երանելի. քանզի երանելին մնայ 'ի յիմաստութեան : Իմաստունն բացատրէ զսիրտ իւր առ 'ի հակել կամաւ Տր, որ արար զնա, և առաջի բարձրելոյն աղաչեսցէ :

12. Իմաստունն լնանի հոգւով իմացութեան 'ի մեծէ Տնէ : Սիրօղն զխրատ, պարապի իմաստութեան, և ուրախ առնէ զսիրտ իւր, զի կարիցէ պատասխանել զբան : Սիրտ իմաստնոյ իմանայ զժամանակն, և զպատասխանին. բան բերանոյ իմաստնոյ, է շնորհ, 'ի լեզուոջ ճանաչի իմաստութիւն, և խորհուրդ, և վարդապետութիւն, և գիտութիւն 'ի բանի հանճարեղի : Իմաստունն առնէ զիւր ինքն սիրելի 'ի բանս : Իմաստունն ցուցանէ զիւր ինքն 'ի բանի, և այր խոհեմ հաճոյանայ իշխանաց : Այր իմաստուն լնանի օրհնաբանութեամբ, և դովի 'ի տեսանողաց : Երանի առն, որ եգիտ զիմաստութիւն, և որ շատանայ խոհեմութեամբ : Լաւագոյն է ստացումն նր քան զմատակարարութիւն ոսկւոյ, և արծաթոյ, առաջինք, և մաքրագունեղք պտուղք նր : Պատուականագոյն է քան զամս փարթամութիւնս. և համայնք փափագելիք իւրք, ոչ կարեն համեմատիլ սմա : Հմտութիւն, և իմաստութիւնն տան զկեանս այնմիկ, որ ժառանգէ զնն :

13. 'Ի վեր քան զառողջութիւն, և 'ի վեր քան զգեղեցկութիւն սիրելի է խրատն, և իմաստութիւն, և ընդունելի է փոխանակ լուսոյ.

քանզի

քանզի անշիջանելի է լոյս նր: Ընդ իմաստութեն դան իմաստնոյ համայնք բարիք, և անթիւ համեստութի 'ի ձեռն նր: Զարդն խոհեմի է վարդապետութիւն, և իբր ապարանջան 'ի յաջ բազկի: Իմաստունն ժառանգեսցէ զպատիւ 'ի ժողովրդեան, և անունն նորա կեցցէ 'ի յաւիտեան: Մինչ իմաստութիւն մնանէ 'ի սիրտ մարդոյ, և գիտութիւն հաճոյանոյ հոգւոյ նր. յայնժամ խորատն պաշտպանէ զնա, և խոհեմութիւն համապահէ. այնպէս զի կարիցէ արտահանիլ 'ի վատթար ճանապարհէ, և 'ի մարդոյ, որ խօսի զանիրաւութիւն: Իմաստունք ժառանգեն զփառս: Լաւագոյն է իմաստութիւն քան զպատճառականագունեղս փարթամութիւս. և ամ ցանկալի իր ոչ կարէ համեմատիլ նմա: Այր իմաստունն և հզօր է. և այր գիտուն է հզօր, և զօրեղ: Իմաստութիւն զօրացուցանէ զմարդն, 'ի վերայ տասանց իշխանաց քաղաքաց: Իմաստութիւն է փարթամագոյն քան զամ փարթամութիւս, որք ցանկացեալք լինին 'ի կենի:

14. Տեսաք զէութիւն, զառարկայն, զբաժանումն, զազնուութիւն, զանկզբունս, զգերազանցութի, զօգտակարութի, և զգովասանն որբազանի Ածաբանութե: Նաև ճանաչեցաք զանձինս, որք պարապիլ պարտին ածաբանութե. որք են եպիսկոպոսք աջորդօղք առաքելոց, և 'ի յեկեղեցւոջ քի իշխանք. վարդապետք քարոզօղք Աւետարանի, և հրատարակօղք զբանն այ. և քահանայք մատակարարօղք խորհրդոց, և մատուցանօղք զպաշչանս քրիստոնէից ամենամեծին այ: Ո՛վ եպիսկոպոսք, ո՛վ վարդապետք, և ո՛վ քահանայք, գիտութի ձեր է որբազան ածաբանութիւն: ուսումն ձեր զոխ, և զգիշեր մերձեցուցանելի այսմիկ իմաստութեան, պարտեղ ձեր մատեանք ածաբանականք: Ոչ պատկանի ձեզ դատարկութիւն, այլ ներգործումն փրկութե քրիստոնէից: Զբաղումն ձեր ոչ պարտի գոլ խաղն, այլ ուսուցանելն մարդկանց զբանն այ, դուք էք լոյսն, և ճրագն արտաքօղք զլոյս 'ի յաշխարհի վարդապետութեք, և օրինակօք, զի հաւատացեալք կարիցեն շրջիլ 'ի լոյս ձեր: Մտադիրք լերուք ուրեմն վարդապետութեց, և ընթերցման որբազանից մատենից:

## ԳԼՈՒԽ. Բ.

### Յաղագս ԱՅ.

1. Գոլն այ է յայտնագունեղ: Յամենայնում ժամանակի խոստովանեցան զայս ճշմարտոնք ածապաշտք, և ուսուցին քարոզիչք ճշմարտութե: Նաև բոլոր աշխարհն իմաստնագունեղապէս կարգաւորեցեալն ծանուցանէ, և մատացոյց առնէ ածյ մատդրաբար նկատողաց զիմաստնագունեղ, և զամենակարօղ ստեղծօղն, և արարիչն իւր: Ճանաչումն այ է հարկաւորագունեղ: Ած է սկիզբն, և վախճան մեր: 'Ի նմանէ, և վասն նորա եմք: Ած է դատաւորն ածյ, վարձատրիչն բարեաց գործոց, և պատժիչն չարեաց: Եւ մեզ ոչ գոյ երանութի, և երջանկութի, եթէ ոչ 'ի յած: Ուստի կարի յոյժ ջանալ պարտիմք, զի կատարելապէս ճանաչիցեմք զսկիզբն, և զվախճանն մեր. զդատաւորն, և զվարձատրիչն մեր. և զառարկայն երանութե, և երջանկութե մերոյ: Օգտակարագունեղ է մեզ ճանաչումս այս. վասնզի 'ի ձեռն կատարելոյ ճանաչման այ կարեմք հասանիլ ածյ բարեաց մերոց: Ճանաչումն այ է գերազանցագունեղ, և ամենաբարձր իմաստութի. քանզի որպէս Ած յաղթէ զհամայնս այլս իրս. այնպէս ճանաչումն նորա յաղթէ զճանաչումն ածյ այլոց իրաց:

2. Ած ստեղծօղն ածյ է մի, միութիւն այ է հարկաւորագունեղ: Ած է սկիզբն, և վախճանն ածյ:

Ած

ԱԾ է այդ, յորմէ են ամք իրք, և վասն որոյ համայնքն։ Սկիզբն, և վախճանն ամից, և այդ յորմէ, և վասն որոյ են համայնք իրք, է մին։ Ուրեմն ԱԾ է մին։ ԱԾ է կատարելագունեղ էակ, պարունակող յինքեան գերազանցապէս զկատարելութիս ամից իրաց։ Կատարելագունեղն, յորում գերազանցապէս են կատարելութիք ամից իրաց, է մին։ Ուրեմն ԱԾ է մին։ ԱԾ է հարկաւորագունեղ էակ պարունակող 'ի յինքեան զամս աստիճանս կատարելութեց։ Հարկաւորագունեղ էակն, յորում են համայնք աստիճանք կատարելութեց, է մին։ Ուրեմն ած է մին։ ԱԾ է ստեղծօղն, և համապահօղն բոլորոյ, վասնզի աշխարհս ոչ է յինքենէ, այլ է 'ի յԱՃ։ Ստեղծօղն, և համապահօղն աշխարհի է մին, որպէս ցուցանէ միակերպ կարգաւորագունեղ կառավարումն նորա, որով իմաստնագունեղիւ, և կարգաւորագունեղիւ կառավարութբ կառավարին ընդհանուրք իրք, վերնագոյնք, և ստորնագոյնք, գոյացօղք, և կեցօղք, էակք ունեցօղք զիմացութի, և ոչ ունեցօղք. ուրեմն ԱԾ է մին։ ԱԾ է էակ յինքենէ, յորմէ կախին համայնք իրք։ Էակն յինքենէ, յորմէ կախին ամք իրք, է մին։ Ուրեմն ԱԾ է մին։

3. Զզինչէութին այ, որպէս է 'ի յինքեան, յայսմիկ մահկանացու կենի, յորում ոչ տեսանեմք զնա 'ի բանի, իմանալ ոչ կարեմք. քանզի իմանալիք տեսակք մերք, որովք ըմբռնեմք զնա, են հունաւորեցեալք, և եղերեցեալք. ուստի ոչ կարեն երևեցուցանել զնա, որպէս է 'ի յինքեան։ Վասն այսորիկ ոչ կարեմք իմանալ զզինչէութի նորա։ Եւ վասն այսորիկ ած է 'ի վեր քան զայդ ամ, զոր մեք իմանալ կարեմք։ Սակայն որքան կարեմք, պարտիմք ծանուցանել զնա, զի մարդիկք ունիցին զնմանէ զճանաչումն, զոր ունիլ կարեն։ Արդ ուրեմն ԱԾ է նոյն ինքն ներգործական ենթակայանալն։ Է այդ, որ է կատարելագունեղ, և գերազանցագունեղ։ Է այդ որ յաղթէ զհամայնս իրս։ ԱԾ է նոյն ինքն ներգործաւոր իմանալն։ Ուստի է նոյն ինքն ներգործաւոր կեանն, և է նոյն ինքն մաքրագունեղ ներգործութին։ Է բոլոր ներգործութի, զոչըք կարողութենականութի ունեցօղ։ Ուստի 'ի նմա էութին, կարողութին, և ներգործութին է մի, և նոյն կատարելագունեղ անբաժանելի էակութի։ 'Ի նմա են ամք աստիճանք գոլոյ, կելոյ, և իմանալոյ, ուստի 'ի նմա գտանին անհունք կատարելութիւնք։ Քանզի աստիճանքն են կատարելութիք։

4. Ուստի 'ի յԱԾ են անհունք կատարելութիք։ Այսոքիկ անհունք կատարելութիք ոչ միայն նոյնանան, և են մի անբաժանելի էակութին, այլ նաև 'ի յինքեան են մի տեսակաւորութի, ոչըքն այնոցիկ 'ի կարգի առ այլն ունի զկարողութենականութի. այլ իւրաքանչիւրն է մաքրագունեղ ներգործութի, և իւրաքանչիւրն յինքեան տեսականապէս ներփակէ զմիւսն, թէպէտ վասն անկատարելութե իմացութե մերոյ մինն այնոցիկ կարիցէ ճանաչիլ թարց միւսոյ բացադրաբար ճանաչեցելոյ։ ԱԾ է ծայրագունեղ բարութին, և ծայրագունեղ ճշմարտութին։ ԱԾ է ուղղութիւն, երանութիւն, երջանկութիւն։ Աստուած է էակ յինքենէ, անընդունակ հպատակութե. ուստի է է յաւիտենականութի։ ԱԾ այնպէս է, և այնպէս գոյանայ, զի 'ի նմա իցէ ամենակերպ հարկաւորութիւն գոյանալոյ։ Ուստի է ճշմարտութի։ 'Ի յԱԾ է անհուն ծով կատարելութեց. ուստի է բարութի։ 'Ի յԱԾ է լիութի բարութե, և ոչըք կարօտութի 'ի ներքնոյնոյ. ուստի է երանութի։ 'Ի յԱԾ է ծայրագունեղ իմաստութի, և պայծառութիւն. ուստի է գեղեցկութի։ ԱԾ է իմացութի իւր, և իմացութի նր է իմացումն նր. ուստի ԱԾ է իմացումն իւր։ Իմացումն նորա է

ներ-

ներգործութիւն. ուստի ԱԾ է մաքուր ներգործութիւն, արտաքսող զամ կարողութենականութիւն, և զամ բաղադրութիւն:

5. Նմանապէս ԱԾ է կամք իւր, և կամք նր է կամեցումն նր: Ուստի ԱԾ է կամեցումն իւր. կամեցումն է ներգործութիւն. ուստի ԱԾ է մաքուր ներգործութիւն նաև 'ի կողմանէ կամին, արտաքսող զամ բաղադրութիւն, և զամ կարողութենականութիւն: ԱԾ իմանայ զհամայնս իմանալիս իւրս. քանզի ըմբռնէ զանհունն, և զկատարելագունեղ էութիւն իւր, զնախատիպն ամից կարելեաց. ուստի իմանայ զամս իւրս, որք իւիք կերպիւ մասնակցիլ կարեն էութեան իւրոյ: Իմանայ և ևս զկերպս, որովք կարեն եղանիլ այնքիկ. ուստի է ամենակարող: Զորս արարչագործապէս կամի, լինին. ուստի է ամենակարող 'ի ձեռն իմացութեան, և կամին: ԱԾ է իմացութիւն իւր, և կամք իւր, որք են կարողութիւն ԱՅ, 'ի ձեռն իմացութեան, և կամին գործող. ուստի ԱԾ է կարողութիւն իւր: Իմացութիւն, և կամք այ է ներգործութիւն. ուստի կարողութիւն այ է ներգործութիւն: Ներքին ներգործութիւն այ է կամեցումն նորա. ուստի ԱԾ, որ է կամեցումն իւր. է ներքնային ներգործութիւն իւր. ուստի 'ի յԱԾ գոյացութիւն, կարողութիւն, և ներքնային ներգործութիւն են մի, և նոյն անբաժանելի էակութիւն, և մի, և նոյն մաքուր ներգործութիւն, արտաքսող զամ բաղադրութիւն:

6. ԱԾ է ամենակարող, ոչումեք հպատակող, է պատճառն ամից իրաց, 'ի նմանէ կախեցելոց: ԱԾ է ստեղծողն աշխարհի, և ամից իրաց, որք գտանին 'ի յաշխարհի: Է ստեղծողն երկնի, և երկրի, և տարերաց, և համայնից 'ի տարերաց բաղադրեցելոց: Է ստեղծողն գոյացողաց, կեցողաց, և ամից զիմացութիւն ունեցողաց: Ինքն ստեղծ, և ինքն համապահէ զհամայնս իւրս: Համայնք գոյացողք, կեցողք, և զիմացութիւն ունեցողք, 'ի գոլն, 'ի համապահիլն, և 'ի գործելն կախին 'ի նմանէ: Արար, համապահէ, և համագործէ յամս, 'ի յիւրաքանչիւրում ստեղծուածոջ ըստ բնութեան նր: 'Ի հարկաւորս այնպէս, զի հարկաւորապէս գործիցեն. 'ի ներընդունականս այնպէս, զի ներընդունականապէս գործիցեն. և 'ի յազատս այնպէս, զի ազատաբար գործիցեն: Ուստի յայտ է, զի ոչ միայն համագործէ. այլ նաև թէ պատճառիցէ զկերպն գործելոյ ստեղծուածոց: ԱԾ է Տր, թագաւոր, և կառավարիչն ամից իրաց. և է դատաւորն ազատաբար գործողաց: Խնամէ զամս, տալով զիւրս հարկաւորս: Կառավարէ զընդհանուրս, տիրէ ամից, վարձատրէ զբարիս, և պատժէ զչարս, ազատաբար գործօղս: Նախախնամէ զմարդիկ, որք են ընդունակք շնորհի, և երանութեան, նաև որքան առ շնորհ, և յաւիտենական երանութիւն:

7. Մեք մարդիկքս, որք եմք ազնիւք ստեղծուածք այ, առ պատկեր, և նմանութիւն նր արարեցաք. և որք եմք ստեղծուածք ճանաչողականք, և բանականք, և իմացողականք, ընդունակք շնորհի, առաքինութեց, և երանութեան. ոչ միայն ջանալ պարտիմք, զի վայելչապէս, և որպէս պիտոյ է ճանաչիցեմք զԱԾ, զստեղծօղն, և զհամապահօղն մեր. զակիզբն, և զվախճանն մեր. զբարերարն, և զպարգևատուն մեր. ոչ միայն զբնականս, այլ նաև զգերբնականս բարերարութիւնս մեզ առատաբար շնորհօղն, 'ի ձեռն խորհրդոց յինքենէ կացուցելոց, զմեզ առ իւր ինքն, առ բարեկամութիւն, և առ շնորհ իւր կոչօղն, և առ ճշմարիտ երջանկութիւն, և երանութիւն հրաւիրօղն. այլ նաև ջանալ պարտիմք, զի յետ ճանաչելոյն զՏրն մեր, մինչ եմք ընդունակք ճշմարտի սիրոյ, որպէս պիտոյ է, սիրիցեմք, սիրելով զնա 'ի վեր քան զամս իւրս սիրելիս, մտերմաբար հնա-

հնազանդելով նմա, և զպատուէրանս նր պահելով։ Սիրոյ սէր հատուցանելի է, և սիրելութն սիրելութը փոխարինելի։ Նա սիրեաց. ուրեմն և մեք սիրել պարտիմք։ 'Ի ստեղծողէ մերմէ զբազումս բարերարութիս ընկալաք։ Երախտագիտութին պահանջէ, զի լիցիմք երախտաճանաչք։ Եղանիմք արք երախտագէտք, եթէ սիրիցեմք։ Ուրեմն նաև սիրել պարտիմք։ Բարին սիրելի է։ ԱԾ է ամենաբարի։ ուրեմն է ամենասիրելի։

8. ԱԾ է Տր, և ծայրագունեղ դատաւոր։ Է հայր մեր ըստ որդեգրութե, որպէս է բարի, այսպէս է և արդար. որպէս է ծայրագունեղ բարութին այ. այսպէս է ծայրագունեղ և արդարութե նր. որպէս վասն բարութե իւրոյ բաշխէ զբարերարութիս. այսպէս վասն արդարութեան իւրոյ պատժէ զանիրաւս։ Որպէս ուրեմն վասն բարութե, և բարերարութեց իւրոց է սիրելի. այսպէս վասն արդարութե ամենեքեան պարտին երկնչել 'ի նմանէ։ Որպէս վասն խոստացմանց է ցանկալի. այսպէս վս ահարկութեց ոչ է վշտացուցանելի։ Որպէս է բարի. այսպէս և զարհուրելի. որպէս վասն ստեղծման, և փրկութե է Հայր. այսպէս և վասն Տիրապետութե, և կառավարութե է դատաւոր. որդիականաւ երկիւղիւ երկնչելի է 'ի ստեղծողէ այ մերմէ, զի մի վշտացուցանիցեմք զերկնային սիրելի Հայրն մեր։ Վասն սիրոյ նր երկնչելի է 'ի նմանէ որպէս 'ի Հօրէ, և վասն սիրոյ մեր երկնչելի է ոմ 'ի դատաւորէ. Լուր սասացողի։ Երկիր 'ի յԱՅ, և պահեա զպատուիրանս նր. այս է ամ մարդ։ Արդարև ուրեմն երկիւղն այ ընտրելի է 'ի սրտի մերում, և ուշադրագունեղապէս ջանալի է, զի զստեղծօղն, և զկերտիչն մեր, որ է սկիզբն, և վախճանն մեր, պարտաւորաւ ճանաչմամբ ճանաչիցեմք, ճշմարտիւ սիրով սիրիցեմք, և որդիականաւ, և կատարելով երկիւղիւ երկնչիցիմք։

9. ԱԾ է իմաստնագունեղ կառավարիչն ամից։ Իմաստնագունեղապէս կառավարէ զերկինս, և զերկիրն. զերևելիս, և զաներևոյթս. զարեգակն, զլուսինն, և զաստեղս. զհուրն, զօդն, զջուրն, զանձրևս, զկարկուտս, զձիւնն. զծովս, զկայծակն, զերկիրն, զպարզս, և զհամայնս խառնեցեալս իրս, զտունկս, զծառս, զբանջարս, զանբանս, զկենդանիս, զանասունս. զօձս, զձկունս, և զհամայնս թռչունս. զամս Հրեշտակս, և զհամայնս մարդիկ։ ԱԾ է կարգաւորօղն ամից։ Կարգաւորեաց զերկինս, և զաստեղս 'ի նա։ Կարգաւորեաց զտարերս, և զզօրութիս նց։ Կարգաւորեաց զծովս, և զամս խառնեցեալս։ Բևեռեաց 'ի միջին զերկիրն, կարգաւորելով զհամայնս մասունս նր. հարթիւ, լերամբք, և ձորիւ զանազանեաց զնա. և ակամբք պատուականօք փարթամացոյց զնա. ծառովք, և ծաղկօք զարդարեաց զնա. Անբանիւք, և անասնօք լցոյց զնա։ Եդ 'ի յաշխարհի զբազումս շնչաւորս, զարմանալեաւ կարգաւ կարգաւորելով զանուանս նց։ ԱԾ է քննիչն սրտից։ Ճանաչէ և զհամայնս ծածուկս մտածմունս մարդկանց, և Հրեշտակաց։ Յայտնիք են առաջի նր համայնք թաքուցելագունեղք գաղտնիք, և խորհուրդք ազատք.

10. Զարմանալի է նախախնամութին ԱՅ։ Դարմանէ զամենեսեան։ Ետ զզօրութիս ամից իրաց։ Ետ վերնագունից մարմնոց զզօրութիս, 'ի յայստնիկ ստորնագոյնս ներհոսել կարողաց։ Շնորհեաց Հրեշտակաց զզօրութիս, որովք նք շարժել կարիցեն զերկինս։ Իմաստնագունեղապէս զանազանեաց զժամանակս, առ գործողութիս մարմնաւորաց իրաց օգտակարագունեղս։ Զտարերս ետ խոտոց և զխոտս կենդանեաց։ Զտարերս, զխոտս, և զկենդանիս ետ մարդոյ, ունեցողի զմեծ իշխանութի 'ի համայնս ստացեալս։ Ուստի աղաղակէ սաղմոսասացն։ Ո՞վ է մարդ,

զի յիշես դու զնա ․ կամ որդի մարդոյ , թէ այց առնես դու նմա ։ Փոքր ինչ խոնարհ արարեր զնա քան զհրեշտակս քո ․ փառօք , և պատուով պսակեցեր զնա ․ և կացուցեր զնա 'ի վերայ ձեռակերտաց քոց ։ Զամ ինչ հնազանդ արարեր 'ի ներքոյ ոտից նր , զխաշն , և զարջառ , և զամ ինչ ։ Եւ ևս և զերէվայրի , զթռչունս երկնից , և զձկունս ծովու , որք շրջին ընդ շաւիղս ծովու ։ Սաղմոս ․ 8 ․ Թիւ ․ 5 ․ Ուրեմն փառաւոր , և մեծապատիւ 'ի յաշխարհի մարդն , դերազանց ստեղծուած ԱՅ ։ Ենթարկեցեալք են այսմիկ համայնք իրք , տարերք , բանջարք , ձկունք , թռչունք , տունկք , ծառք , ծաղկունք , պտուղք , և ամք կենդանիք ։

11 ․ Կարի զարմանալի է նախախնամութիւնն Աստուծոյ դէպ 'ի մարդն ։ Մեծ է նախախնամութիւնն Աստուծոյ զմարդոյ և որքան առ մարմինն , և որքան առ հոգին ։ Նախապատրաստէ մարդոյ զկերակուր , զըմպելի , զզգեստ , զբնակարան , և զամս հարկաւորս իրս առ 'ի պահել զմարմինն , և զմարմնաւոր կեանն ։ Ետ նմա զիշխանութի 'ի վերայ ստեղծուածոց իւրոց , զի կարիցէ վարիլ նոքօք առ հարկաւորութի , և կարօտութիւն իւր ։ Աստուածային պատրաստէ մարդոյ որքան առ հոգին նր ։ 'Ի վեր քան զլոյս բնութե , ետ մարդոյ նաև զլոյս հաւատոյ , և զլոյս օրինի , և վարդապետութե , ոչ միայն մարգարէականի , այլ նաև Աւետարանականի , և առաքելականի ։ Ետ զլոյս խորհրդոց , սահմանադրութեց եկեղեցւոյ , և վարդապետութեց սրոց հարց ։ Տայ օր ըստ օրէ զլոյս բարեաց ներշնչմանց ։ Ետ զխորհուրդս , որովք ստանալ կարիցէ զշնորհ , և զաճեցումն նր ։ Կերտեաց զեկեղեցի , յորում կարիցէ փրկել զհոգին իւր 'ի ձեռն հաւատոյ , յուսոյ , և սիրոյ , և 'ի ձեռն ընկալման խորհրդոց , և պահպանման պատուիրանաց ։ Կերտեաց զերկնային արքայութիւն , յորում յետ այսորիկ մահկանացուի կենի , վայելելով զյաւիտենական երանութիւն , կարիցէ թագաւորել ընդ նմա 'ի յաւիտեան ։

12 ․ Ած է , որ է ։ Ած է Տր մեր , նա է ամ 'ի վերնադունի երկնի , և 'ի վայրադունի երկրի ։ Ած մեր Տր առաջին , և վերջին ։ Ած մեր է Տր մեր , և ոչ է այլ Ած բաց 'ի նմանէ ։ Ած մեր , և Տր մեր , է կերպաւորողն զլոյս , և առնողն զխաղաղութի ։ Նա է առաջինն , և վերջինն , և բաց 'ի նմանէ ոչ է այլ Ած ։ Նա է Ած , ոչ այլոք է Ած , և ոչ այլոք նման նմա ։ Ած մեր է մի Տր , և բաց 'ի նմանէ ոչ գոյ այլ Ած ։ Նա միայն է ճշմարիտ փրկիչ , բաց 'ի նմանէ ոչոք է փրկիչ ։ Մեզ հաւատացելոցս է մի Ած Հայր , յորմէ են համայնք իրք , և մեք եմք 'ի նմա ․ և մին է Տր մեր Յս Քս , որով են ամք իրք , և մեք նովաւ ։ Տր Ած մեր , է գեղեցկութի , և ճշմարտութի ․ երանութի , և երջանկութիւն ․ է կատարելագունեղ , և բարութիւն ․ է ամենաբարի , և ամենասիրելի ․ է ընդհանրական վերակացու , և իմաստնագունեղ կառավարիչ ․ է զարհուրելի դատաւոր , կարի յոյժ արդար , և կարի յոյժ ողորմած , և գթած ։ Ճանաչեա՛ զսկիզբն , և զվախճան քո , և կարի յոյժ սիրեա՛ զՏր Ած քո ։ Խոկա՛ զԱծ քո , և սիրեա՛ զՏրն քո ։ Պարապեաց փրկութե հոգւոյ քո , և երկիր 'ի ճշմարտէ դատաւորէ քումմէ ։

## ԳԼՈՒԽ։ Գ

### Յաղագս կատարելութեանց ԱԾ։

1. Աստուած կատարելագունեղն, ունի յինքեան զամենայնս խոհականս կատարելութիւնս։ Աստուած է ծովն կատարելութեանց։ Ուստի համայնք կատարելութիւնք գտանին 'ի նմա։ Աստուած է նոյն ինքն յինքենէ էնթակայացողն։ Ուստի ամենայնք ստիպմանք գոլոյ են 'ի յԱստուած, որ է հարկաւորութիւն էնթակայանալոյ։ Աստուած է նոյն ինքն ինքեամբ կեցողն, և է նոյն ինքն կեանն, և է հարկաւորութիւն կելոյ։ Ուստի ամենայնք ստիպմանք կելոյ են 'ի յԱստուած, որ է հարկաւորութիւն կելոյ։ Աստուած է նոյն ինքն ինքեամբ իմացողն, և է հարկաւորութիւն իմանալոյ։ Ուստի համայնք ստիպմանք իմանալոյ են 'ի յԱստուած, որ է հարկաւորութիւն իմանալոյ։ Ուրեմն ամենայնք ստիպմանք գոլոյ, կելոյ, և իմանալոյ, են 'ի յԱստուած, որ է հարկաւորութիւն գոլոյ, կելոյ, և իմանալոյ։ Ստիպմանք գոլոյ, կելոյ, և իմանալոյ են անհունք, և են կատարելութիւնք։ Ուրեմն 'ի յԱստուած են անհունք կատարելութիւնք։ Ամենայն կատարելութիւն Աստուծոյ է ծայրագունեղ։ Ուրեմն է անհուն։ Ուրեմն 'ի յԱստուած են անհունք կատարելութիւնք, և ամենայն կատարելութիւն նորա է անհուն։

2. Իմացութիւն է կատարելութիւն իմացողի. վասնզի է կատարեալ կարողութիւն իմացողի։ Եւ իմացումն է կատարելութիւն. քանզի է ներգործութիւն իմացողի։ Աստուած է իմացող. ուրեմն 'ի յԱստուած է իմացութիւն, և իմացումն։ Աստուած ոչ միայն ունի զիմացումն, և իմանայ. այլ նաև է իմացութիւն իւր, և իմացումն իւր. վասնզի ոչ ունի զկարողութենականութիւն, այլ է մաքուր ներգործութիւն։ Ապաուրեմն ոչ միայն է կատարեալ կատարելութեամբ իմացողականաւ, այլ նաև է նոյն ինքն իմացողական կատարելութիւնն. Աստուածային իմացութիւնն է անհուն, և իմացումն նորա է անհուն. վասնզի աստուածային իմացութիւնն ըմբռնէ զաստուածային անհուն էութիւնն, և իմանայ զհամայնս իմանալիս իւրս։ Ուրեմն որպէս է անհուն աստուածային էութիւնն, այսպէս և է անհուն աստուածային իմացութիւնն, և է անհուն աստուածային իմացումն։ Ուրեմն Աստուած, որ է իմացութիւն իւր, և իմացումն իւր, և իմացութիւն, և իմացումն նորա են կատարելութիւն, և արդարև անհուն. ոչ միայն է անհունապէս կատարեալ կատարելութեամբ իմացողականաւ, այլ նաև է նոյն ինքն անհուն իմացողական կատարելութիւնն։

3. Եւ ևս կամք է կատարելութիւն կամեցողի. քանզի է կարողութիւն կամեցողի։ Եւ նաև կամեցումն է կատարելութիւն. վասնզի է ներգործութիւն կամեցողի։ Աստուած է կամեցող. քանզի կամի զինքն անհունապէս բարին, և զհամայնս կատարելութիւնս իւրս անհունապէս բարիս. և շարժեալ 'ի բարութենէ իւրմէ, ազատապէս կամի զստեղծուածս։ Ուրեմն 'ի յԱստուած է կամք, և կամեցումն։ Աստուած ոչ միայն ունի զկամս, և կամի, այլ նաև է կամք իւր, և կամեցումն իւր. վասնզի յոչումեքէ կողմանէ ունի զկարողութենականութիւն, այլ 'ի յամենայնէ կողմանէ է մաքուր ներգործութիւն։ Ուրեմն ոչ միայն է կատարեալ կատարելութեամբ կամեցողականաւ, այլ նաև է նոյն ինքն կամեցողական կատարելութիւնն։ Կամք Աստուծոյ է անհուն, և կամեցումն նորա է անհուն. քանզի Աստուած կամի զինքն անհունաբար բարին, և զկատարելութիւնս իւրս անհունապէս բարիս։ Ուրեմն որպէս Աստուած է անհուն, և կատարելութիւնք նորա են անհունք. այսպէս և աստուածային կամքն, վասնզի Աստուած կամի զինքն, և զկատարելութիւնս իւրս, է անհուն, և աստուածային կամեցումն է անհուն։ Ուրեմն Աստուած, որ է կամք իւր, և կամեցումն իւր, և կամքն, և կամեցումն նորա են կատարելութիւն, և արդարև անհուն. ոչ

ոչ

ոչ միայն է անհունապէս կատարեալ կատարելութ՟բ կամեցողականաւ. այլ նաև է նոյն ինքն անհուն կամեցողական կատարելութիւն ։

4. ՚Ի մէջ կատարելութեց գերազանցագունեղ է կատարելութ՟ի բարութե ։ Բարութիւն է սիրելի ։ Ամ՟ բարի է սիրելի վասն բարութե ։ Որպէս իմացութիւն դիմէ ՚ի ճշմարիտն, և խնդրէ զճշմարիտն. այսպէս կամ՟ դիմէ ՚ի բարին, և խնդրէ զբարին ։ Որպէս ուրեմ՟ ճշմարիտն է առարկայն իմացութե, այսպէս և բարին է առարկայն կամին ։ Բարութիւն ա՟յ է ծայրագունեղ, և անհուն ։ Քանզի բարութիւն ա՟յ է այնքան, որքան է գոյացութ՟ի, և էութ՟ի նր ։ Վասն զի գոյացութիւն ա՟յ, և բարութ՟ի նր են մին, և նոյն իրական տեսակաւորութ՟ի, և են մին, և նոյն անբաժանելի էակութ՟ի, և են մին, և նոյն մաքրագունեղ ներգործութ՟ի, արտաքսող զա՟մ բաղադրութ՟ի ։ Քանզի նոյնանան ամենակերպիւ նոյնութ՟բ, և մինն այնոցիկ ՚ի կողմանէ իւրեան տեսականապէս պարունակէ զմիւսն ։ Գոյացութիւն, և էութ՟ի՟ն ա՟յ են անհունք, մինչ ա՟ծ է նոյն ինքն լիութ՟ի՟ն գոլոյ ։ Ուրեմ՟ և բարութիւն ա՟յ է անհուն ։ Մինչ ուրեմ՟ ա՟ծ է բարութ՟ի իւր, և բարութ՟ի նր է կատարելութ՟ի, և արդարև անհուն, ա՟ծ ոչ միայն ունի զանհուն կատարելութ՟ի բարութե. այլ նաև է նոյն ինքն անհուն կատարելութ՟ի՟ն բարութե ։

5. Նաև ճշմարտութիւն է գերազանցագունեղ կատարելութիւն ։ Քանզի որպէս բարութիւնն է սիրելի, այսպէս և ճշմարտութիւն ։ Եւ որպէս բարին է առարկայն կամին, այսպէս ճշմարիտն է առարկայն իմացութե ։ Ոչ միայն կամ՟ է գերազանց զօրութիւն, այլ նաև իմացութիւն ։ Բարին կատարէ զկամ՟, և ճշմարիտն կատարէ զիմացութիւն ։ Ուրեմ՟ որպէս բարին է կատարելութ՟ի կամին, այսպէս ճշմարիտն է կատարելութ՟ի իմացութե ։ Մինչ ուրեմ՟ բարութիւն է գերազանցագունեղ կատարելութ՟ի նաև ճշմարտութիւն համարելի է գերազանցագունեղ կատարելութ՟ի ։ Ճշմարտութիւն ա՟յ է ամենամեծ, և անհուն ։ Վասնզի ճշմարտութ՟ի՟ն ա՟յ է նոյն ինքն գոյացութ՟ի՟ն, և էութ՟ի՟ն ա՟յ ։ Քանզի որպէս էութ՟ի՟ն ա՟յ, և ա՟ծային բարութ՟ի՟ն ամենակերպիւ նոյնութ՟բ նոյնանան. այսպէս և էութ՟ի՟ն ա՟յ, և Ա՟ծային ճշմարտութիւն ամենակերպիւ նոյնութ՟բ նոյնանան, և են մի, և նոյն մաքուր ներգործութ՟ի ։ Եւ որպէս Ա՟Ծ է բարութ՟ի իւր. այսպէս նաև է ճշմարտութ՟ի իւր ։ Էութ՟ի՟ն է անհուն ։ Ուրեմ՟ և ճշմարտութ՟ի նր է անհուն ։ Մինչ ուրեմ՟ Ա՟Ծ է ճշմարտութ՟ի իւր, և ճշմարտութ՟ի նր է կատարելութ՟ի, և արդարև անհուն, Ա՟Ծ ոչ միայն ունի զանհուն կատարելութ՟ի ճշմարտութե, այլ նաև է նոյն ինքն անհուն կատարելութ՟ի ճշմարտութե ։

6. Եւս ողորմածութ՟ի՟ն է կատարելութ՟ի ։ Ողորմածութ՟ի՟ն է, որով ոմ՟ շարժեալ ՚ի բարութե, և ՚ի սրտէ փրկէ, և ազատէ զողորմելին ՚ի թշուառութեց իւրոց, յորս գտանի ։ Ուստի ողորմածութ՟ի՟ն է դուստր սիրոյ ։ Որքան է բարութ՟ի՟ն, և սէրն, այնքան եղիցի ողորմածութ՟ի՟ն ։ Ուստի որպէս բարութ՟ի՟ն, և սէրն, են կատարելութիւն, այսպէս և ողորմածութիւն ։ Աստուծոյ է ծայրագունեղ, և անհուն ։ Քանզի ողորմածութ՟ի՟ն ԱՅ է այնքան, որքան է բարութ՟ի՟ն նր ։ Վասնզի որպէս բարութ՟ի՟ն ԱՅ նոյնանայ ընդ Ա՟ծայնոյ էութե, և ընդ նմա է մին, և նոյն մաքրագունեղ ներգործութ՟ի. այսպէս և ողորմածութ՟ի նր ։ Բարութ՟ի՟ն ԱՅ է ծայրագունեղ, և անհուն ։ Ուրեմ՟ և ողորմածութ՟ի նր ։ Ուստի որպէս Ա՟Ծ ոչ միայն է անհունաբար բարի, և ունի զանհուն բարութ՟ի. այլ նաև է նոյն ինքն անհուն բարութ՟ի՟ն այսպէս և ա՟ծ ոչ միայն է անհունապէս ողորմած, և ունի

զանհուն ողորմածութիւն · այլ նաև է նոյն ինքն անհուն ողորմածութիւն ։ Ողորմածութիւն Այ երևեցաւ ՚ի ներմարմնութեան · քանզի որդին Այ առ ՚ի յաղաւել զմարդն ՚ի յամենամեծից թշուառութեանց , և ՚ի յաւիտենականէ մահուանէ , եղև մարդ , և ըստ մարմնոյ չարչարեցաւ , և մեռաւ ՚ի խաչին ։ Ուստի աղաղակէ սաղմոսասացն ։ Խոստովան եղերուք Տեառն , զի քաղցր է , զի յաւիտեան է ողորմութիւն նորա ։ Սաղ. 117. Թիւ. 1.

7. Նաև արդարութիւն է կատարելութիւն ։ Արդարութիւն է վերնադունի , և դատաւորի , որով վերնադոյնն , և դատաւորն ըստ հրամանի քանի պատժէ զանիրաւս , և վարձատրէ զբարիս , և զուղիղս ։ Ուստի արդարութիւն է դուստր ուղղութեան ։ Որքան է ուղղութիւնն այնքան եղիցի և արդարութիւն · վասնզի ըստ ուղղութեան արդարն դատէ , և պատժէ , ունելով զհեղինակութիւն պատժելոյ ։ Ուղղութիւն է կատարելութիւն · ուրեմն և արդարութիւն ։ Արդարութիւն ԱՅ է ծայրագունեղ , և անհուն · քանզի արդարութիւն ԱՅ է ուղղութիւն նորա ։ Ուղղութիւն ԱՅ է դատաստան նորա ։ Դատաստանն ԱՅ է իմացումն նորա ։ Իմացումն ԱՅ է իմացութիւն նորա · քանզի ՚ի յԱստուած իմացութիւն , և իմացումն նոյնանան , և են մին , և նոյն մաքրագունեղ ներգործութիւն ։ Աստուածային իմացութիւն է Աստուածային գոյացութիւն · վասնզի ՚ի յԱստուած ոչ որ պատահումն գոյ , և ոչոք բաղադրութիւն ՚ի գոյացութենէ , և ՚ի պատահմանէ ։ Գոյացութիւն Աստուածային է անհուն · ուրեմն և արդարութիւն · քանզի Աստուածային գոյացութիւն , և Աստուածային արդարութիւն վասն մերոյ ասացելոյ նոյնանան , և են մի , և նոյն մաքրագունեղ ներգործութիւն ։ Ուստի Աստուած , որ է իմացութիւն իւր , իմացումն իւր , դատաստան իւր , ուղղութիւն իւր , և արդարութիւն իւր , ոչ միայն է անհունաբար արդար , և ունի զանհուն արդարութիւն · այլ նաև է նոյն ինքն անհուն արդարութիւն ։ Իսկ համահետևաբար ոչ միայն ունի զկատարելութիւն անհնոյ արդարութեան , այլ նաև է նոյն ինքն կատարելութիւն անհնոյ արդարութեան ։ Արդարութիւն ԱՅ երևի ՚ի հատուցման · քանզի իւրաքանչիւրոյ հատուցանէ ըստ արդեանց նորա ։

8. Եւ ևս ճշմարտախօսութիւն է կատարելութիւն · քանզի ճշմարտախօսութիւն է ուղղութիւն զրուցատրութեան ։ Աստուածային ճշմարտախօսութիւն է անհուն · քանզի ճշմարտախօսութիւն ՚ի յԱստուած է Աստուածային գոյացութիւն , որ է անհուն ։ Ուստի Աստուած ունի զկատարելութիւն ճշմարտախօսութեան և է նոյն ինքն կատարելութիւն ճշմարտախօսութեան ։ Նաև հաւատարմութիւն է կատարելութիւն · վասնզի է ուղղութիւն խոստացման ։ Հաւատարմութիւն Այ է անհուն · քանզի է Աստուածային ուղղութիւն , որ է անհուն ։ Ուստի Աստուած ունի զկատարելութիւն հաւատարմութեան , և է նոյն ինքն հաւատարմութիւն ։ Նաև երջանկութիւն է կատարելութիւն · քանզի երջանիկն , և գոյացօղն ՚ի յերջանկութեան , ոչ ունի զկարօտութիւն · այլ զայդ ամ , որում ցանկայ , ունի ներգործութը ։ Աստուած ՚ի ներքնայնոյ է անընդունակ կարօտութեան · վասնզի է նոյն ինքն լիութիւն գոլոյ , փակելով ՚ի յիւրեան ինքեան զամն ատրճանս գոլոյ ։ Ուրեմն ոչ միայն է երջանիկ , և երանեցեալ , այլ նաև ունի զծայրագունեղ և զանհուն երջանկութիւն , և երանութիւն · և ոչ միայն ունի զծայրագունեղ , և զանհուն երջանկութիւն , և երանութիւն այլ նաև է ծայրագունեղ երջանկութիւն , և ծայրագունեղ երանութիւն · վասն զի է երջանկութիւն իւր , և երանութիւն իւր ։ Քանզի ինքն , և երջանկութիւն իւր են մի , և նոյն անբաժանելի էակութիւն , և մի , և նոյն մաքուր ներգործութիւն ։ Ով ծայրագունեղ երջանկութիւն արա , զի կարիցեմ հասանիլ երջանկութեան ։

## ԳԼՈՒԽ: Դ.

### Յաղագս երրորդութեան:

1. Մեք քրիստոնեայքս, և պաշտօղքս ճշմարտին Ած, ոչ միայն խոստովանիմք զմի գոլ զէութին, և զծովն կատարելութեանց, զէակն յինքենէ, զամենեւին զանկախն յայլմէ. և գոլ զնա մի 'ի յէութե, և 'ի կատարելութիւնս. և զինքն, և զհամայն կատարելութիւնս նր գոլ մին, և նոյն անբաժանելի էակութի. և գոլ մի, և նոյն մաքուր ներգործութի. այլ նաև խոստովանիմք զնա զերրեակ 'ի յԱնձինս: Քանզի ուսեալք 'ի յԱծայնոց բարբառից, և 'ի սբոյ մօրէ կաթուղիկէ եկեղեցւոյ, խոստովանիմք զմի Ած հայր ամենակալ, և զմի Յս Քս որդին նր միածին, ծնեալն 'ի հօրէ նախ քան զամս յաւիտեանս. զԱծն 'ի յԱծոյ, զլոյսն 'ի լուսոյ, զճշմարին Ած յԱծոյ ճշմարտէ, զծնունդ, և ոչ արարած, զհամագոյակիցն հօր, և զմի հոգին սբ 'ի հօրէ, և 'ի յորդւոյ բղխօղն: Ուստի հաւատամք զմիութի Ածուե, և զերրորդութիւն Անձանց: Հաւատամք զԱծ մի 'ի յէութե, զերրեակ 'ի յանձինս: Հաւատամք զհայրն անծին, զորդին ծնեալ 'ի հօրէ, և զհոգին սբ բղխեալ 'ի հօրէ. և 'ի յորդւոյ:

2. Հայրն է առաջին Ածային Անձն: Ուստի առաջադունութե կարգի ոչոք այլ անձն գոյ յառաջ քան զնա: Հայրն յաւիտենական, մինչ է Ածային անձն, ոչ բղխօղ յայլմէ, է աղբիւրն Ածուե: Ուստի է Ած: Այս Ածային անձս է պարարտադունեղ, ունեցօղ զիմացութիւն, և զկամս: Արդարև ունի զիմացութիւն անհունապէս կատարեալ. վասնզի է նոյն ինքն ներգործական իմանալն: Ունի նաև զկամս անհունապէս կատարեալ. քանզի է նոյն ինքն կեանն: 'Ի ձեռն իմացութե արտադրէ զբանն կատարելագունեղն ինքեան համագոյակիցն: 'Ի յարտադրութե բանի հաղորդէ նմա զբոլոր Աստուածութի իւր, և զհամայնս անհունս Աստուածայինս կատարելութիւնս իւրս: Բանն արտադրեցեալն 'ի ձեռն իմացութե ասի որդի: Անձն արտադրօղն զբանն իմացութեամբ, ասի հայր, և ծնօղ: Բանն արտադրեցեալն ասի որդի: Բանն որ է որդի ծնեալ, ելանօղն 'ի հօրէ 'ի ձեռն իմացութե, երևեցուցանէ զբոլոր Ածութիւնն, և զհամայնս տեսականապէս, և դերադանցաբար 'ի յԱծութե ներփակեցեալս: Հայրն ծնանելով զորդին, հաղորդէ նմա զԱծային էութիւնն, և զհամայնս Ածայինս յատկութիւնս. և որդին ծնեալն վերընդունի 'ի հօրէ զԱծային էութիւնն, և զհամայնս Ածայինս յատկութիւնս: Ուստի հայրն է Ած վասն Ածուե, զոր ունի, և հաղորդէ որդւոյ:

3. Նաև որդին է Ած: Քանզի նոյն Ածութիւնն, և նոյնք Ածայինք յատկութիք, զորս ունի հայրն, են 'ի յորդւոջ. ուստի որպ հայրն վասն Ածութե է Ած, այսպէս և որդին վասն նորին Ածուե է Ած: Նոյն էութին, որ է 'ի հօր, է և 'ի յորդւոջ. և նոյն Ածութի, որ է 'ի հօր, է և 'ի յորդւոջ. և նոյնք կատարելութիք, որք են 'ի հօր, են և 'ի յորդւոջ: Քանզի որպէս հայրն է ճշմարտութի, այսպէս և որդին է ճշմարտութի: Որպէս հայրն է բարութի, այսպէս և որդին է բարութի: Որպ հայրն է երջանկութի, այսպէս և որդին է երջանկութի: Որպ հայրն է անհուն ծովն կատարելութեց, այսպէս և որդին է անհուն ծովն կատարելութեց: Եւ որպէս հայրն է յաւիտենական, այսպէս և որդին է յաւիտենական: Հաղորդումն, որով հայրն 'ի ծննդեան հաղորդէ որդւոյ զԱծայինս, է ծայրագունեղ: Ուստի 'ի ծննդեան այնորիկ ամենեքեան հաղորդին որդւոյ, որք

գտա-

գտանին 'ի հօր ։ Որպէս ուրեմն վ̄ս ասացելոց հայրն է ա̄ծ, և որդին է Ա̄ծ ։ Ուստի հայրն և որդին են ա̄ծ վ̄ս միութեան ա̄ծութեան, և բնութեան ։ Զանազանութիւն միայն է 'ի յայսմիկ, թէ հայրն իցէ ծնանող, իսկ որդին ծնեալ ։ Եւ այս է վ̄ս առընչականի հակադրութեան ծնանողի, և ծնեցելոյ ։ Ուստի միութիւն է որքան առ բնութիւն, զանազանութիւն միայն որքան առ Անձինս ։

4. Հայրն, որ է աղբիւրն Ա̄ծութեան, որպէս 'ի ձեռն իմացութեան արտադրէ զբանն երևեցուցանողն զա̄ծային էութիւն, և զհամայնս ա̄ծայինս ա̄ծայնոյ իմացութեան ․ և այսպէս ծնանի զորդին ․ այսպէս ընդ որդւոյ, որում հաղորդեաց զհամայնս իւրս 'ի ծննդեան, արտադրէ 'ի ձեռն կամին զանհուն սէրն, որով ա̄ծային անհուն բարութիւն սիրիցի ․ և այսպէս ընդ որդւոյ իբրև մի սկիզբն փչէ զհոգին ս̄բ բղխողն 'ի հօրէ, և 'ի յորդւոյ ։ Որպէս 'ի ծննդեան որդւոյ, համայնք բացարձակք ա̄ծայինք հաղորդին որդւոյ ․ այսպէս 'ի փչման հոգւոյն սրբոյ 'ի հօրէ, և յորդւոյ իբր 'ի միոյ սկզբանէ, հաղորդին հոգւոյն սրբոյ համայնք բացարձակք ա̄ծայինք, այսինքն նոյն ա̄ծային էութիւն հօր, և որդւոյ, և նոյն ա̄ծայինք յատկութիւնք հօր, և որդւոյ ։ Ուստի որպէս հայրն աղբիւրն ա̄ծութեան վ̄ս ա̄ծութեան, է ա̄ծ, և որդին ծնեալն 'ի հօրէ, վասն նոյնոյ ա̄ծութեան ինքեան հաղորդեցելոյ 'ի ծննդեան, է ա̄ծ ․ այսպէս և հոգին ս̄բ վ̄ս նոյնոյ ա̄ծութեան 'ի փչման ինքեան հաղորդեցելոյ, է ա̄ծ ։ Ուստի հայրն, և որդին, և հոգին ս̄բ վասն միութեան բնութեան, և էութեան, են մի Ա̄ծ ։

5. Հայրն, որդին, և հոգին ս̄բ, որք վասն միութեան բնութեան, և էութեան են մի ա̄ծ, վասն զանազանութեան անձանց, են երեք անձինք, երեք անձնաւորութիւնք, և երեք ենթադրեալք ․ այսոքիկ երեք ա̄ծայինք անձինք են ամենևին հաւասարք ։ Քանզի որպէս 'ի հօր է ա̄ծութիւն, այսպէս 'ի յորդւոջ, և 'ի հոգին ս̄բ է ա̄ծութիւն ։ Որպէս 'ի հօր են անհնիցս անհունք կատարելութիւնք ․ այսպէս 'ի յորդւոջ, և 'ի հոգին ս̄բ են անհնիցս անհունք կատարելութիւնք ։ Որպէս հայրն է յաւիտենական, էակ յինքենէ, ոչումեք հպատակեցեալ ․ այսպէս և որդին է յաւիտենական, էակ յինքենէ ոչումեք հպատակեցեալ ։ Եւ որպէս հայրն է անհունապէս իմաստուն, անհունապէս բարի, անհունապէս արդար, անհունապէս ողորմած, ամենաճշմարտախօս, ծայրագոյնեղ կեան, ամենակարող, ստեղծող աշխարհի, Տ̄ր բոլորոյ ընդհանրոյ, թագաւոր անհնոյ մեծվայելչութեան, անհունաբար երջանիկ, և դատաւորն ա̄մից ․ այսպէս և որդին անհունապէս իմաստուն, անհունապէս բարի, անհունապէս արդար, անհունապէս ողորմած, ամենաճշմարտախօս, ծայրագոյնեղ կեան, ամենակարող, ստեղծող աշխարհի, Տ̄ր բոլորոյ ընդհանրոյ, թագաւոր անհնոյ մեծվայելչութեան, անհունապէս երջանիկ, և դատաւորն ա̄մից ․ նմանապէս և հոգին ս̄բ ․ ուրեմն ամենևին հաւասարք են ․ ուստի 'ի յԱ̄ծայինս անձինս ոչոք առաջադրութիւն ժամանակի, և ոչոք հպատակութիւն դասանի ․ այլ միայն հայրն է առաջին անձն, որդին երկրորդն, և հոգին ս̄բ երրորդն ։

6. 'Ի յԱ̄ծայինս անձինս է իրական զանազանութիւն անձանց ։ Վասնզի ա̄ծայինք անձինք առընչաբար հակադրին ։ Քանզի հայրն, որ է առաջին անձն վերահայի առ որդին, և վերաբերի առ որդին ․ և որդին վերահայի առ հայրն, և վերաբերի առ հայրն ․ վասնզի ծնողն վերահայի առ ծնեցեալն, և վերաբերի առ ծնեցեալն ․ և ծնեալն վերահայի առ ծնողն, և վերաբերի առ ծնողն ․ արդ հայրն է ծնող, և որդին ծնեալ ։ Նմանապէս հայրն, և որդին վերահային առ հոգին ս̄բ, և վերաբերին առ

հո-

հոգին սբ․ քանզի փչօղն վերահայի առ փչեցեալն, և վերաբերի առ փչեցեալն․ և փչեցեալն վերահայի առ փչօղն, և վերաբերի առ փչօղն․ արդ հայրն․ և որդին են փչօղք, և հոգին սբ փչեցեալ, ուստի ՚ի յածայինս անձինս է առընչական հակադրութի, և իրական զանազանութի ըստ առընչականի հակադրութե։ Ուստի ՚ի յԱծայինս անձինս որք իրական զանազանութի․ ապա յայտ է, թէ հոգին սբ ըղխիցէ նաև ՚ի յորդւոյ։ Քանզի եթէ ոչ ըղխիցէր ՚ի յորդւոյ, ոչ զանազանիցիւր ՚ի յորդւոյ, և այսպէս քանդիցիւր խորհուրդն երրորդութե․ վասնզի խորհուրդն երրորդութե ՚ի յայսմիկ կայանայ, թէ Ածայինք անձինքն իցեն երեք։ Արդ ուրեմն հաւատամք ՚ի յԱծ զերիս զանազանեցեալս անձինս վս առընչականի հակադրութե, և զմի էութի, և զմի բնութի, յորում կայանայ խորհուրդն ամենասրբոյ երրորդութե։

7 Ած, որ է նոյն ինքն ինքեամբ էնթակայացօղն, և նոյն ինքն ինքեամբ կեցօղն, և նոյն ինքն ինքեամբ իմացօղն, և որ է նոյն ինքն ներգործական իմանալն, որ տաքսօղ զամ բաղադրութիւն, և զայն, որ է ՚ի յէութե, և ՚ի դոյութե, և զայն, որ է ՚ի բնութե, և ՚ի կարողութե, և զայն, որ է ՚ի կարողութե, և ՚ի ներգործութե, ամ ալով մաքրագունեղ ներգործութի, իմանայ, և կամի։ Ուստի ՚ի նմա է իմացումն, և կամեցումն, իմացումն ՚ի ձեռն իմացութե, և կամեցումն ՚ի ձեռն կամին․ ուստի ՚ի նմա է իմացութի, և կամ․ ՚ի ձեռն իմացութե է արտադրումն բանի, և ՚ի ձեռն կամին, արտադրումն սիրոյ․ ուստի առ ներքս միայն արտադրումն բանի, և արտադրումն սիրոյ։ Արտադրումն բանի, քանզի է ՚ի ձեռն իմացութե, է ծնունդ։ Իսկ արտադրումն սիրոյ, քանզի է ՚ի ձեռն կամին, է փչումն․ ուստի ՚ի յԱծ առ ներքս միայն ծնունդ, և փչումն․ ապա է, թէ Ածայինք անձինք իցեն միայն երեք, ծնանօղն զբան, բանն ծնեցեալն, և սէրն փչեցեալն, այսինքն, հայր, որդի, և հոգին սբ։ Հայրն է աղբիւրն Ածութե, որդին ՚ի հօրէ, և հոգին սբ ՚ի հօրէ, և ՚ի յորդւոյ։ Հայրն է անծին, որդին ծնեցեալ, և հոգին սբ ըղխօղ ՚ի հօրէ, և ՚ի յորդւոյ։

8. Հայրն վերհայի առ որդին, և վերաբերի առ որդին ՚ի ձեռն հայրութե․ ուստի հայրութին է յատկութի հօր։ Որդին վերահայի առ հայրն, և վերաբերի առ հայրն ՚ի ձեռն որդիութե․ ուստի որդիութին է յատկութիւն որդւոյ։ Հոգին սբ վերահայի առ հայրն, և առ որդին, և վերաբերի առ հայրն, և առ որդին ՚ի ձեռն ըղխման․ ուստի ըղխումն է յատկութի հոգւոյն սրբոյ։ Հայրութին է առընչութի հօր, որդիութին առընչութի որդւոյ․ ներգործական փչումն առընչութի հօր, և որդւոյ ՚ի կարգի առ հոգին սբ, և ըղխումն, և կրաւորական փչումն առընչութիւն հոգւոյն սրբոյ։ Ճանաչի հայրն, քանզի է անծին, և ծնօղ։ Ճանաչի որդին, քանզի է ծնեալ։ Հայրն, և որդին ՚ի կարգի առ հոգին սբ, ճանաչին սկիզբն մի, քանզի են փչօղք, և ճանաչի հոգին սբ, քանզի է ըղխեալ։ Սբ Օգոստինոս այսպէս խօսի զերրորդութե։ (՚Ի յամենամեծի երրորդութե այնքան է մինն, որքան են երեքն ՚ի միասին, և ոչ առաւել իմ են երկուն, քան մին իր, և յինքեանս են անհունք․ այսպէս և իւրաքանչիւրքն են ՚ի յիւրաքանչիւրս։ Եւ նաև համայնքն ՚ի յիւրաքանչիւրս, և իւրաքանչիւրքն ՚ի յամս․ և ամքն ՚ի յամս, և մինն ՚ի յամս։) ՚Ի վեցերորդում մատենի զերրորդութե։ Ով սբ երրորդութիւն մի Ած, արա, զի զքեզ սիրիցեմ, և առ տեսումն քո հասանիլ կարիցեմ։

## Գ Լ Ո Ւ Խ. Ե.

### Յաղագս կարողութեան ԱՅ:

1. Ած ոչ միայն իմանայ զիւր ինքն, և կամի զիւր ինքն, այլ նաև 'ի յէութեան իւրում իմանայ զհամայնս կարելիս իրս, գերազանցապէս 'ի նմա պարունակեցեալս, որոց ինքն է նախատիպ: Կարելիքն են անթիւք, և զանազանիւք կերպիւք կարեն մասնակցիլ ածայնոյ էութեան: Ածային էութիւն է անհուն. ուստի անհնիւք կերպիւք մասնակցիլ կարէ: Կարելիքն ներգործութեամբ 'ի յածայնոջ էութեան ոչ այլ ինչ են, քան նոյն ինքն անհուն ածային էութիւն: Կարելիքն, որք գան 'ի ներգործութիւն, և ընդունին զգոյութիւն, են կատարելագոյնք, կամ նուազ կատարեալք մասնակցութեամբ ածայնոյ էութեան. ածային իմացութիւն, մինչ է անհուն, իմանայ զհամայնս կարելիս, գերազանցապէս 'ի յածայնոջ էութեան, զոր ըմբռնէ, նախապարունակեցեալս. և իմանայ զհամայնս կերպս, որովք կարելիքն մասնակցիլ կարեն ածայնոյ էութեան. ածային զօրութիւն, որ կարէ առնել, զի կարելիքն կատարելագոյն, կամ նուազ կատարելապէս մասնակցիցին ածայնոյ էութեան, և գայցեն 'ի ներգործութիւն, ասի ածային կարողութիւն, և մինչ է ծայրագունեղ, և անհուն, ասի ամենակարողութիւն նոյնացեալ ընդ ածայնոյ իմացութեան, և ընդ ածայնոյ կամին. այս ածային զօրութիւն գործէ առ արտաքս:

2. Ամենակարողն ած, ունողն 'ի ձեռն իմացութեան, և 'ի ձեռն կամի զծայրագունեղ գործողական կարողութիւն առ արտաքս, 'ի յաւիտենից գիտաց զայս աշխարհս, և կամեցաւ, արտադրել զնա 'ի ժամանակի. Ճանաչումն, և կամեցումն, Աստուծոյ է 'ի յաւիտենից, իսկ արտադրումն աշխարհի եղև 'ի ժամանակի. կամեցումն այ զգոյութեան աշխարհի է ազատ, քանզի բարութիւն աշխարհի է հունաւորեցեալ. իսկ բարութիւն ածայնոյ կամին է անհուն. ուստի բարութիւն աշխարհի ոչ կարաց հաւատարիլ բարութեան ածայնոյ կամին. ուստի ոչ կարաց հարկաւորել զածային կամն առ գոյութիւն իւր: Վասն այսորիկ ած ազատաբար կամեցաւ զգոյութիւն աշխարհի. կամեցումն ԱՅ զգոյութեան աշխարհի եղև 'ի յաւիտենից. վասնզի կամեցումն ԱՅ ոչ է պատահումն, նորապէս առեկող ԱՅ. քանզի ած անընդունակ է պատահման. ուստի կամեցումն ԱՅ է գոյացութիւն, նոյնացեալ ընդ կամին ԱՅ, և ընդ էութեան նորա: Բայց արտադրումն աշխարհի եղև 'ի ժամանակի. վասնզի ած 'ի յաւիտենից կամեցաւ զգոյութիւն աշխարհի 'ի ժամանակի, և վասն այսորիկ արտադրեցաւ աշխարհս 'ի ժամանակի: Արդարև ած կարաց արտադրել զլաւագոյն աշխարհ, վասնզի զօրութիւն նորա է անհուն. սակայն հաճոյացաւ նմա զայս կատարեալ աշխարհս արտադրել:

3. Արդարև կատարելութիւն աշխարհի է հունաւորեցեալ. սակայն ածային արտադրողական զօրութիւն աշխարհի, է ծայրագունեղ, և անհուն. քանզի նախ քան զարտադրումն, և զստեղծումն աշխարհի, ոչ ինչ էր, և ոչ ինչ գոյր բաց 'ի յԱՅ. ուստի ոչ գտանիւր նախաենթադրեցեալ ենթակայ, յորմէ արտածիցիւր աշխարհս: Ուրեմն արտադրեաց ած զաշխարհս 'ի յոչընչէ: Արտադրումն 'ի յոչընչէ է ստեղծումն: Ուրեմն ած ստեղծեաց զաշխարհս. ստեղծողական զօրութիւն է ծայրագունեղ. վասնզի պարտի յաղթել, և յաղթահարել զծայրագունեղ հեռաւորութիւն, որ է 'ի մէջ ոչընչի, և 'ի մէջ գոլոյն. ուստի զօրութիւն արտադրողական աշխարհի, և զօրութիւն ստեղծիչն,

է

է ծայրագունեղ, և անհուն: Դարձեալ զօրութիւն ստեղծիչ աշխարհի նոյնանայ ընդ ածային իմացութեան, և ընդ ածային կամին. ածային իմացութիւն է ծայրագունեղ, և անհուն զօրութիւն. նմանապէս ածային կամն է ծայրագունեղ, և անհուն զօրութիւն: Ուստի զօրութիւն ստեղծիչ աշխարհի նոյնացեալ ընդ ածային իմացութեան, և ընդ ածային կամին, է ծայրագունեղ, և է անհուն: Այս ածային զօրութիւն, որ է գործողական կարողութիւն Այ առ արտաքս, արտաքնապէս ասացեալ է ամենակարողութիւն. վասն զի նովաւ ած կարէ զամենայն: Ած ոչ միայն ստեղծ զաշխարհս, այլ նաև համապահէ զնա: Քանզի եթէ ոչ ամենակարողն ած համապահիցէր զաշխարհս, ոչընչանայցէր աշխարհս: Ցարակայանայ աշխարհս ՚ի յամենակարողէ ստեղծեցեալն վասնզի ամենակարողն ած համապահէ զաշխարհս յինքենէ ստեղծեցեալն:

4. Նաև ՚ի կողմանէ համապահման աշխարհի ածային գործողական զօրութիւն առ արտաքս, է ծայրագունեղ, և է ամենակարողութիւն. վասն զի համապահումն է շարունակ ստեղծումն: Ուստի նաև ՚ի կողմանէ համապահման ած զբոլոր ընդհանուրն համապահօղն է ամենակարող: Ամենակարողն ած ստեղծօղն, և համապահօղն զաշխարհս, ոչ միայն ստեղծ, և համապահէ զաշխարհս. այլ նաև ընդ ամից իրաց, որք գտանին ՚ի յաշխարհի համագործէ: Քանզի համայնք իրք, որք գտանին ՚ի յայսմիկ աշխարհի, ոչ միայն կախին ՚ի յԱյ ՚ի գոլն, և ՚ի համապահելն. այլ նաև ՚ի գործելն. վասնզի համայնք ստեղծուածք ամենակերպիւ կախեցմամբ կախին ՚ի յԱյ. քանզի յամէ կողմանէ ենթարկեցեալք են այ, և ած ստեղծօղն նց, տիրէ այնոցիկ: Ուստի և գոլն, և յարամնալն, և գործելն ամից իրաց զայս ընդհանուրս բաղկացուցանողաց, կախին ՚ի յԱյ: Համայնք իրք կախին ՚ի յԱյ. վասն զի ած է առաջին էակն: Ուստի համայնք որով և կերպիւ էակք կախին ՚ի նմանէ: Ուստի ոչ միայն արարողութիք հարկաւորապէս, և ներընդունականաբար գործողաց կախին ՚ի յԱյ. այլ նաև ազատք շարժմունք կամաց, և ամք արարողութիք ազատաբար գործողաց: Ուստի ած տիրէ նաև կամաց. և մինչ է ամենակարող, այնպէս տիրէ կամաց, զանձնիշխանութիւն ունեցողաց, զի ազատաբար գործիցեն:

5. Ամենակարող իմաստնագունեղն ած ստեղծօղն ընդհանրոյ, և կերտիչն ամից իրաց, յորմէ կախին համայնք իրք ամենամեծիւ կախեցմամբ, իմաստնագունեղապէս կարգաւորեաց զաշխարհս, և զիւրաքանչիւրս իրս ՚ի յաշխարհի գտեցեալս: Կարգաւորեաց զիւրաքանչիւրս ՚ի յիւրեանս ինքեանս, պարգևելով նց զբնութիւն, և զպարտաւորս կարողութիւնս յարմարս առ արարողութիւնս: Ած զանձնիւթականս, զհոգևորս, զանմահս, և զնմանագունեղս ինքեան, այսինքն զհրեշտակս վայելչացոյց իմացութբ, և կամօք, շնորհելով նց զտեսակս իմանալիս, և առնելով զնս զօրութիս, և շարժիչս երկնից: Արար զերկինս, և զաստեղս շարժելիս ներհոսօղս ՚ի յայսմիկ ստորնագոյնս: Ետ զտարերս ունեցօղս զներհակս զօրութիս, և ՚ի ձեռն ներհակաց զօրութեց ՚ի մէջ իւրեանց մենամարտողաց առ ծնունդ խառնեցելոց: Զարդարեաց զերկիրս զանազանիւք տնկօք, ծառօք, բանջարօք, և ծաղկօք: Ելից զծովս, և զգետս ձկամբք, զերկիրն կատարելագունիւք, և նուաղ կատարելօք կենդանեօք, և զօդն թռչնօք: Կացոյց զմարդն ունեցօղն զկազմողական մարմին, և զբանական հոգի, թագաւոր իրաց ինքեան ենթարկեցելոց, և ենթ իշխանութե նր եդելոց, վարօղն նոքօք ըստ հաճոյից իւրոց:

6 Մասունքն աշխարհի ՚ի յիմաստնագունեղէ այ կերտեցեալք, համապահեցեալք, և կառավարե‿



8493-5Ք/1579

library stamp: Гос. Пуб. Библ. ... ՀՍՍՀ-ССР

ցեպլք զայս ընդհանուրս զկատարեալ գործն ա̅յ բաղկացուցանօղք · և զիմաստութի, զբարութի, և զկարողութի ստեղծողի, համապահողի, և կառավարողի նորա մտադրաբար նկատողաց ցուցանօղքն, են այսոքիկ, որք հետևին · հրեշտակք, երկինք, աստեղք, տարերք, խառնեցեալք, տունկք, կենդանիք, և մարդն իշխանն երկրելեաց, ունեցօղն ինքեան զենթարկեցեալս զոչխարս, և զարջառս, և զխաշինս դաշտի, զթռչունս, և զձկունս, և զհամանս անասունս : Հրեշտակք են ազնուագունեղք ստեղծուածք, աննիւթականք, անմարմինք · պարզք գոյացութիւնք, անմահք, ոչ բաղադրեցեալք 'ի նիւթոյ, և 'ի տեսակէ, տեսակք ինքեամբք կայացօղք · ունեցօղք զազնուագունեղս կարողութիւս, և զգերազանցագունեղս արարողութիւս : Երկինք, և և աստեղք են ազնուագունեղք մարմինք, անապականելիք, բաղադրեցեալք 'ի նիւթոյ, և 'ի տեսակէ անապականելւոյ, ներհօսօղք 'ի ստորնագոյնս : Տարերքն են մարմինք ապականելիք, կարգաւորեցեալք առ ծնունդ խառնեցելոց : Խառնեցեալք 'ի պատերազմէ տարերաց ծնեցեալք : Տունկք են մարմինք կեցօղք, ունեցօղք զաճողական, զսնանողական, և զծնանողական զօրութի : Անասունքն են մարմինք զգացողականք, ունեցօղք զներքինս, և զարտաքինս զգայութիւս : Մարդն ունեցօղն զբան, և զանձնիշխանութի, է ընդունակ գիտութե, և իմաստութե :

7. Աշխարհս գործ Ա̅ծայնոյ իմաստութե, յայտնապէս ցուցանէ զզարմանալի զօրութին, և կարողութին ա̅յ առ արտաքս գործողական : Ա̅ծային զօրութին առ արտաքս գործողականն, ոչ ընդդէ առ միակս բնականս, այլ գերազանցէ զա̅մ բնութի : Քանզի որպէս ա̅ծ կարաց զայս ընդհանուրս արտադրել 'ի յոչընչէ, և զարտադրեցեալն համապահել, և զարմանալեաւ իմաստութը կառավարել, և համագործել ընդ իրաց, առ այնոսիկ, առ որս իմաստնագունեղ զայպէս կարգաւորեցեալք են, այսպէս նաև կարէ գործել 'ի վեր քան զբնութի, և քան զզօրութիւս իրաց յինքենէ ստեղծեցելոց, և գործել զսքանչելիս · վասնզի զօրութիւք իրաց 'ի յա̅յ ստեղծեցելոց, ոչ հաւասարին ա̅ծայնոյ զօրութե առ արտաքս գործողականի · այլ անհունին յաղթահարին 'ի նմանէ : Ուստի ա̅ծային զօրութի առ արտաքս գործողականն գերազանցէ զա̅մ ստեղծեցեալ զօրութի · ուստի որպէս ա̅ծ ա̅ծայնով զօրութբ իւրով առ արտաքս գործողականաւ, կարէ արտադրել և զնորս իրս, և զայլ աշխարհս · այսպէս նաև 'ի վեր քան զզօրութիւս արտադրեցելոց իրաց կարէ գործել և առնել զսքանչելիս : Իւ արդէն, որք ուսուցանեն, և վկայեն ա̅ծայինք բարբառք, ա̅ծ ա̅ծայնով զօրութբ իւրով առ արտաքս գործողականաւ գործեաց զբազումս սքանչելիս, 'ի ծովու, 'ի յարեգական, 'ի լուսնոջ, 'ի հրոջ, և 'ի մարդում լուսաւորելով զկոյրս առողջացուցանելով զհիւանդս, տալով զլսումն խլից, բանալով զբերանս համրից, և յարուցանելով զմեռեալս,

8. Կարի յոյժ զարմանալի է զօրութին ա̅յ որքան առ շնորհն, և առ փառքն : Վասնզի ա̅ծ կարաց առնել · զի մին մարդկային բնութին անձնաւորիցի ա̅ծայնով անձնաւորութբ · քանզի մարդկային բնութին Քի անձնաւորի անձնաւորութբ բանին : Ա̅ծայնով կարողութբ Ք̅ս է ա̅ծ, և մարդ ունեցօղ զերկուս կատարեալս բնութիւս, զա̅ծային, և զմարդկային, մի անձն, և մի ենթադրեալ : Ա̅ծ նաև կարէ առնել, զի մարդն վերընդունիցի զարդարացուցիչ շնորհն, և 'ի ձեռն արդարացուցչի շնորհի, որ է մասնակցութի ա̅ծայնոյ բնութե, լինիցի հաղորդակից ա̅ծութե · և լինիցի բարեկամ, որդի, և ժառանգ ա̅յ, և կերպիցի տա֊

ձար

ճար հոգւոյն սրբոյ , և բնակարան ամենասրբոյ երրորդութե̄ ։ Այլ կարէ նաև ասել , զի իմացութիւն մարդոյ 'ի ձեռն լուսոյ փառաց վերանայցէ առ ա̄ծային տեսութի̄ , այնպէս զի պայծառաւ տեսութե̄ տեսանիցէ զա̄ծային էութի̄ն 'ի բանի , և անքաժանելեաւ սիրով զուգակցեալ ա̄յ , վայելիցէ զնա , ունելով զնոյն առարկայն երանութե̄ , զոր ունի ա̄ծ , լեալ մասնակից ա̄ծայնոյ երանութե̄ ։ Մինչև ցաստ ասացեալքս զկարողութե̄ ա̄յ առ արտաքս գործողականէ , ցուցանեն , և քարոզեն իմացողաց զազնուականեղ գերազանցութի̄ նորա ։

## ԳԼՈՒԽ․ Զ․

### Յաղագս ստեղծման աշխարհի ։

1․ ԶԱնազանս արարողութիւնս նկատել կարեն 'ի մէնջ , և են , արուեստ , այլայլութի̄ , աճեցումն , ծնունդ , և ստեղծումն ։ Արուեստն է , որով արուեստաւորն 'ի յիրաց իբր 'ի նիւթոյ առնէ զիր ինչ․ որպէս ճարտարապետն 'ի զանազանից իրաց իբրև 'ի նիւթոյ կերտէ զպալատ ։ Այլայլութի̄ն է արարողութի̄ , որով 'ի յումեք ենթակայոջ 'ի առնողէ արտադրի իմն որակութի̄․ որպէս հուրն արտադրէ զջերմութի̄ 'ի ձեռին , կամ 'ի յերկաթոջ ։ Աճեցումն է արարողութի̄ , որով նիւթական , և մարմնեղէն գոյացութի̄ն վերընկալմամբ կերակրոյ աճի ։ Որպէս կենդանին վերընկալմամբ կերակրոյ աճի ։ Սասի ճանաչի նաև սնուցումն․ վասնզի է արարողութիւն , որով մարմնեղէն գոյացութի̄ն սնանի կերակրով ։ Որպէս կենդանին սնանի կերակրով ։ Ծնունդն է արարողութի̄ , որով 'ի գործողէ 'ի նախենթադրեցելոյ ենթակայէ արտադրի իմն գոյացութի̄․ որպէս հուրն 'ի փայտէ արտադրէ զհուր ։ Ստեղծումն է արարողութի̄ , որով իր ինչ արտադրի 'ի յոչընչէ ։ Արարողութի̄ն , որով աշխարհս արտադրեցեալ է 'ի յո̄չ , է ստեղծումն․ վասնզի ա̄ծ ստեղծ զաշխարհս 'ի յոչընչէ ։

2․ Արուեստն , այլայլութի̄ն , աճեցումն , սնունդ , և ծնունդն կարեն գոլ 'ի ստեղծեցելոց պատճառաց․ քանզի այսպիսիք արարողութիւնք ոչ վերախնդրեն զամենամեծ , և զանհուն զօրութի̄ , այլ բաւական է հունաւորեցեալ զօրութի̄ ։ Ուստի կարեն յարմարիլ ստեղծեցելոց պատճառաց ։ Ուստի մարդն , որ է ստեղծեցեալ պատճառ , 'ի ձեռն զանազանից արուեստից յինքենէ մտածեցելոց․ և գտեցելոց , առնէ զբազումս արուեստաւորս գործս ։ Տարերք այլայլեն , և արտադրեն զորակութիս ։ Կեցողք այլայլին , աճին , և սնանին 'ի ձեռն արարողութեց երկրորդաց պատճառաց , և ստեղծեցելոց պատճառաց ։ Երկինք , աստեղք , և ջերմունք ծնանին զտունկս , և կենդանիք ծնանին զինքեանց զնմանս ։ Այլ ստեղծումն , որ է արտադրումն 'ի յոչընչէ , և թարց համընթացման ենթակայի նախաենթադրեցելոյ , և որ խնդրէ զծայրագունեղ զօրութի̄ 'ի գործողի ստեղծողի , և 'ի յոչընչէ արտադրողի․ այսինքն , որ խնդրէ զզօրութի̄ յաղթօղ զհեռացութի̄․ որ է 'ի մէջ ոչընչի , և գոլոյն․ միայնոյ ա̄յ յարմարի , որոյ զօրութիւնն է ծայրագունեղ , և որ է պատճառն ա̄մից իրաց , և յորմէ կախին համայնք իրք , և ընկալան զգոլ ։ Ուստի միայն ա̄ծ է ստեղծօղն բոլորոյ աշխարհի , 'ի յոչընչէ ա̄ծայնով զօրութե̄ կերտեցելոյ ։ Եւ մինչ համապահումն , որով աշխարհս յարատևէ 'ի գոլն , է շարունակ ստեղծումն , միայն ա̄ծ է համապահօղն ընդհանրոյ ։ Արդուրեմն ա̄ծ արտադրեաց զաշխարհս 'ի

յուշընչէ, և զօրութբ իւրով համապահէ զնա 'ի գոլ:

3. Ած ստեղծ զերկինս, և զերկիր, և բանիւ նր երկինք հաստատեցան: Նա ասաց, և եղեն համայնք իրք: Նորա է տիւն, և նորա է գիշերն, և նա արար զհամայնս եզերս երկրի: Հռչակեցեալք են գործք նորա, համայնք արարեցեալք են իմաստութբ: Բանիւ այ արարեցեալք, և յարմարեցուցեալք են դարք: Կարգադրութբ նր յարատևէ օրն: Զօրս արար, սիրէ, և յինքենէ կերտեցեալս համապահէ: Կամօք նորա յարատևեն 'ի գոլ, որք 'ի նմանէ ընկալան զգոյութի: Են գործք Տն, համայնք իրք 'ի յայսմիկ ընդհանրոջ դասեցեալք: Վասն բարութե իւրոյ, կերտեաց զստեղծուածն: Հեղինակն այսորիկ աշխարհի է Ած, գերազանցագունեղ քան զամ հեղինակ, իմաստնագունեղ քան զամ ճարտարապետ, լաւագոյն քան զամ պատճառ: Կերտիչն ընդհանրոյ 'ի 'ի ժամանակի արարեցելոյ, է ստեղծօղն յաւիտենական, արարիչն ամենակարօղ, կարգադրիչն, և մատակարարիչն ամենաբարի: Իմաստութին կերտչի աշխարհի, և ստեղծչի ընդհանրոյ, է պայծառագունեղ 'ի մարդումն, որ է ստեղծուած ըստ մարմնոյ ազնիւ, ըստ հոգւոյ առաւել ազնիւ, գերահռչակ պատկերաւ ստեղծողի, բանի մասնակից, երանութե ընդունակ, և զիշխանութի տիրողութե ունեցօղ: Ասացեալ իմաստութին ստեղծողի, է վերագերապայծառագունեղ 'ի հրեշտակում, որ է ստեղծուած իմացողական, թարց երևակայութեան իմացօղ, անմարմին, պարզ տեսակ, ստեղծողի իւրոյ նմանագունեղ:

4. ստեղծօղն ամենեցուն է խնամատարն ամենաբարի, նա խոկայ զհամայնս իրս մերս, և շրջի շուրջ զծղխնեաւ երկնի: Պատրաստէ զկերակուր ագռաւոյ, երբ ձագք նորա տատանեալք աղաղակեն առ Ած, այնու թէ ոչ ունիցին զկերակուրս: Այնպէս կառավարէ զմեզ Տրն, զի ոչինչ պակասիցի մեզ. զմարդիկ, և զանասունս պահէ, որ համապահէ զընդհանուրս, դատէ զժողովուրդս իրաւամբ, և առաջնորդէ ազգաց երկրի: Նա արար զփոքրիկն, և զմեծն, և հաւասարապէս դարմանէ զամենեսեան, 'ի ձեռին նորա եմք մեք, և խօսակցութիւնք մեր, և ամ իմաստութի: Հասանի 'ի ծայրէ մինչ և առ ծայր հզօրաբար, և տրամադրէ զհամայնս իրս քաղցրաբար: Հայրական նախախնամութի նորա, 'ի սկզբանէ կառավարէ զամ իրս, մինչ 'ի յերկուց ճնճղկանց, որք դանկի միոջ վաճառին, ոչ անկանի 'ի յերկիր թարց հօր մերոյ, և համայնք հերք գլխոյ մերոյ թուեցեալք են. 'ի նմա կեամք, և շարժիմք, և եմք: Ամ հոգ մեր ձգեալ է 'ի նա, վասնզի ինքն հոգայ զմեզ: Համայնք իրք, որք լինին 'ի յերկրի, են 'ի նախախնամութէ այ: Ամք իրք դասեցեալք 'ի յայսմիկ ընդհանրոջ, 'ի յիմաստնագունեղէ ստեղծողէ ստեղծեցեալք, իմաստնագունեղապէս ուղղեցեալք, արդարութբ, և իրաւամբ կառավարեցեալք, իմաստնագունեղիւ դատողութբ կարգաւորեցեալք, եդեալք են 'ի չափոջ, 'ի թուոջ, և 'ի կշռոջ:

5. Ած է գերազանց 'ի զօրութե իւրում, և ոչոք է նման նմա 'ի յօրինադրաց: Իմաստնագունեղիւ օրինաւ ուղղէ, կառավարէ, և նախախնամէ զամենեսեան: Տր Ած մեր, որ հոգայ զամենեսեան, արդարապէս դատէ զդատողութի: Տր Ած մեր է արդար, արդարութբ տրամադրօղ զամ իրս, զօրութի ստեղծչի մերոյ, է սկիզբն գերափայլ արդարութեան: Արդարագունեղ Տրն, կերտիչն ընդհանրոյ Ած, պատժէ զանօրէնն, և պսակէ զանմեղն, և զարդարն, հանդերձ ուղղութբ կառավարելով, և հանդերձ արդարութբ նախախնամելով: Դատաստանն այ, ստեղծողի աշխարհի ուղիղ.

ուղիղ․ կառավարութ՟ի նորա արդար , կարգադրութիւն նորին է քաղցր , և նախախնամութ՟ի նորա հանճարեղ ։ Ստեղծօղն աշխարհի Ած , իմաստնագունեղիւ , և կանոնագունեղիւ օրինաւ , ա՟մից իւրոց եդըլով յինքեան , կառավարէ զերկինս , և զաստեղս , և զհամայնս տարերս․ զտունկս , և զկեցօղս , և զհամայնս կենդանիս․ զհրեշտակս , և զմարդիկ , և զընդհանուրս ազինս ։ Իմաստնագունեղն Ած , ամենաբարի ստեղծօղն աշխարհի , խնամէ զա՟մս իւր , որպէս յարմարի ն՟ց ։ Արար զերկինս , զաստեղս , և զտարերս ծառայել տնկոց․ զտունկս կենդանեաց , և զկենդանիս մարդկանց ։ Ամենակարօղն ա՟ծ , որ՟ն ընդհանրոց , պահանջէ , զի երկինք , աստեղք , տարերք , տունկք , կենդանիք , մարդիկք , և նաև հրեշտակք ծառայեցեն ինքեան , որ է սկիզբն , և վախճանն ա՟մից իւրոց ։ Ած նախախնամիչն հասարակ նաև 'ի մասնաւորի , զարմանալաբար խնամէ զիւրաքանչիւրս ։

6․ Ած զի է ստեղծօղն , և կերտիչն աշխարհի , վասն այսորիկ և է համապահօղն , նախախնամիչն , ուղղիչն , տրամադրօղն , Տ՟րն , և դատաւորն նորա ։ Ապաուրեա՟մ , որ ստեղծ զաշխարհս , համապահէ զնա , խնամէ զիւրս 'ի յաշխարհի դտեցեալս , տրամադրէ , կառավարէ զաշխարհս , և տիրէ նմա , և է դատաւոր մարդկանց , և հրեշտակաց ։ Ստեղծութ՟մբ աշխարհի , է արտադրութ՟մբ նորա 'ի յոչընչէ ։ Համապահութ՟մբ է արարողութ՟ի , որով Ած պահէ զաշխարհս 'ի դոլ ։ Նախախնամութ՟ին է խնամատարութ՟ին ա՟յ զիւրաց 'ի յաշխարհի դտեցելոց ։ Կառավարութ՟մբ է արարողութ՟ի , որով ա՟ծ կառավարէ զաշխարհս , տրամադրութ՟ին է արարողութ՟ի , որով ա՟ծ կարգադրէ զիւրս 'ի յաշխարհի դտեցեալս ։ Տէրութ՟ին է արարողութ՟ի , որով Ած հրամայէ ա՟մից , և ունի զհամայնս իւրս ինքեան ենթարկեցեալս , դատաստանն է արարողութ՟ի , որով Ած իւրաքանչիւրոյ հատուցանէ , ըստ արդեանց նոցա , պարգևատրելով զարդարս , և պատժելով զանիրաւս ։ Ստեղծողական , համապահողական , նախախնամողական , ուղղողական , կառավարողական , տրամադրողական , կարգադրողական ‹ իշխողական , և դատողական զօրութ՟ին 'ի յա՟ծ , են մի , և նոյն անբաժանելի էակութ՟ի , և նոյննանան 'ի մէջ իւրեանց , և ընդ ա՟ծային էութ՟ե ։ Ուստի համայնք առացեալք զօրութ՟իք , որովք ա՟ծ զաշխարհս , զոր ստեղծ , համապահէ , նախախնամէ զնա , կառավարէ , տրամադրէ ․ կարգաւորէ զնա , տիրէ նմա , և դատէ զնա , են ծայրագունեղք , և են ներգործութ՟իք ա՟ծայնոյ իմացութ՟ե , և կամին․ վասնզի ա՟ծ գործէ իմացութ՟բ , և կամաւ ։

7․ Ած ստեղծօղն աշխարհի , համապահօղն ընդհանրոյ , խնամատարն ա՟մից , ուղղիչն , և կառավարիչն երկնի , և երկրի , վերակացուն , տրամադրօղն , և կարգաւորօղն մասանց աշխարհի , տիրօղն ընդհանրական , և դատաւորն դատելեաց , 'ի յա՟մուս իւրի դտանի ներքսագոյնս ներկայ․ վասնզի համայնք իւրք բոլորագէս , և ամենևին 'ի նմանէ կախին , և թարց նորա ամենևին , և բոլորագէս գոլ ոչ կարեն ։ Զի ուրե՟մ համայնք իւրք կախին 'ի նմանէ , ներքսագոյնս ներկայ է ա՟մից իւրոց ։ Եւ քանզի ոչ հաւասարին նմա , այլ յաղթահարին 'ի նմանէ , է անպարագրելի , և ըմբռնէ զհամայնս իւրս ։ Եւ զի ոչ ունի զմասունս , այլ է էակուի ամենևին անբաժանելի , և է մաքրագունեղ ներգործութ՟ի , բոլոր է 'ի յիւրաքանչիւրում ։ Ստեղծօղն ամենեցուն ոչ միայն համապահէ զգոլն իւրոց , և զկարողութ՟իս , և զզօրութ՟իս նոցա , այլ նաև տայ ն՟ց զզօրութ՟ի գործելոյ ։ Քանզի ոչ միայն գոլն , և կարողութ՟իք , և զօրութ՟իք իւրոց կախին 'ի նմանէ , այլ նաև գործելն նոցա ։ Ուստի է գործակից արարողութ՟եց ա՟մից , և արա֊

արարողութիւնք, և ներգործութիւնք ամենեցուն կախին 'ի նմանէ. ուստի համընթանայ առ ամս իմացմունս, և կամեցմունս հրեշտակաց, և առ ներգործութիւնս երկնից, աստեղաց, տարերաց, տնկոց, կենդանեաց, և մարդկանց, և համայնք արարողութիւնք, և ամք ներգործութիւնք ամից առաջելոց կախին 'ի նմանէ: Եւ այս վասն այնորիկ, քանզի ամենակարողն Ած է ստեղծողն ամից:

8. Ած ստեղծողն աշխարհի, համապահելով, և դարմանելով, զընդհանուրն, մատակարարելով, կառավարելով, տրամադրելով, կարգաւորելով և դատելով զնա, և խնամելով զնա, և տիրելով նմա, ոչ աշխատի. այլ կարի յոյժ հրճուի: Քանզի ամենակարողն ած, որպէս իմացող, և կամեցող ստեղծ զաշխարհս. այսպէս նաև որպէս իմացող, և կամեցող համապահէ, մատակարարէ, ուղղէ. կառավարէ, տրամադրէ, կարգաւորէ, և դատէ զնա, և խնամէ զնա, և տիրէ նմա: Իմացութիւն այ ծայրագունեղ, և կամն նորա է արարչագործագունեղ. ուստի 'ի ներգործութեն իմացութեն, և կամի նորա ոչ ոք աշխատումն գտանի, այլ ծայրագունեղ հրճուումն: Ուստի ամենակարողն, յաւիտենականն, և մշտնջենաւորն ած թարց աշխատանաց, զաշխարհս, զոր վասն բարութե իւրոյ, և առ 'ի ցուցանել զփառս մեծվայելչութե իւրոյ, ստեղծ, և 'ի յոչընչէ արտադրեաց, համապահէ, դարմանէ, ուղղէ, կառավարէ, տրամադրէ, կարգաւորէ, և դատէ, և նախախնամէ, և տիրէ նմա: Արդարև ստեղծողն երկնի, և երկրի է ած. քանզի ասէ սբն Պօղոս Առաքեալն: Եւ դու տր 'ի սկզբանէ զերկիր հաստատեցեր, և գործք ձեռաց քոց երկինք են: 1. Թիւ: 10. առ եբրայեցիս. Նոյն առաքեալն ասէ: Զի ամ տուն կազմի, յումեմնէ կազմի. իսկ որ զամ արար, է ած: 3. Թիւ: 4. առ եբրայեցիս: Իշխող Տր իմ, ամենակարող մշտնջենաւոր ած, այնպէս կառավարես զիս, զի կարիցեմ հասանել առ քեզ:

## ԳԼՈՒԽ Է.

### Յաղագս իրաց, որք գտանին 'ի յաշխարհի:

1. Բազմագոյնք իրք գտանին 'ի յաշխարհի. քանզի 'ի յայսմիկ աշխարհի են հրեշտակք, երկինք, աստեղք, իրք ծնեցեալք 'ի գոլորշեաց, տունկք, կենդանիք, և մարդիկք: Այսոքիկ իրք են 'ի յայս ստեղծեցեալք, և 'ի յայսմիկ ընդհանրոջ գտեցեալք: Հրեշտակք են աննիւթագունեղք, և գերապանծագունեղք ստեղծուածք: Սոքա են նմանագունեղք այ, ցուցանօղք զանծայրն կատարելութիս, և կատարելագոյն քարոզօղք զստեղծօղն իւր, առաւել քան զայլս, նուազ կատարեալս ստեղծուածս, 'ի յանծայրն իմաստութե մատծեցեալս: Սոքա են լաւագոյնք, և կատարելագոյնք քան զայլս 'ի գոյացութե, 'ի զօրութե, և 'ի ներգործութիս. 'ի գոյացութե են լաւագոյնք, և կատարելագոյնք. քանզի են պարզք տեսակք, և անքակտանելիք. աննիւթականք. և անմահք. և ոչ գոյանան 'ի նիւթոյ, այլ 'ի յիւրեանս ինքեանս: Են կատարելագոյնք, և լաւագոյնք 'ի զօրութիս, և 'ի կարողութիս. վասնզի կարողութիւնք նոցա են իմացութիւն, և կամն: Եւ են կատարելագոյնք 'ի ներգործութիս. քանզի ներգործութիւնք նց են իմացումն, և կամեցումն:

2. Երկինք են աղնուագոյնք մարմինք, բաղադրեցեալք 'ի նիւթոյ, և 'ի տեսակէ անապականելոյ. ուստի են գոյացութիւնք նիւթականք անապականելիք, և մնացականք: Ունին զմեծ զօրութիս. վասն-

վասնզի ներհուսն 'ի յայսոսիկ ստորնադոյնս ։ Երկինք են ընդունակք կանոնաւորութեան շարժման. քանզի շրջապատկաբար կանոնաւորութենեղապէս շարժին 'ի յիմացողութենէց ։ Են մեծք մարմինք մեծութեամբ համեմատեցեալք, 'ի յանհնոյ իմաստութենէ չափեցեալք ։ Ութք երկինք են անհուն. զի ամ մարմին ներգործութեամբ գոյացողն է հունաւորեցեալ ։ Քանզի անհունն ներգործութեամբ 'ի մեծութեան է անկարելի, որպէս նաև է անկարելի անհունն ներգործութեամբ 'ի թուոջ ։ Հրեղէն երկինն է պայծառագունեղ, մինչ է աթոռ երանելոց ։ Յետ աթոռոյ երանելոց, է առաջին շարժելին, որոյ կանոնաւորութենեղ շարժումն 'ի յԱրևելից 'ի յարևմուտս արձակութեամբ քանից և չորից ժամուց է չափ դիմացուն իւրոյ մարմնաւորաց ։ Յետ առաջնոյ շարժելոյ, է հաստատութիւն ։ Յետ հաստատութեան, է երկինն երևակի ։ Յետ երկնի երևակի է երկինն լուսնթագի ։ Յետ երկնի լուսնթագի, է երկինն հրատի ։ Յետ երկնի հրատի, է երկինն Արեգական ։ Յետ երկնի արեգական, է երկինն լուսաբերի ։ Յետ երկնի լուսաբերի, է երկինն փայլածունի ։ Յետ երկնի փայլածունի, է երկինն լուսնի, որ է վերջինն ։

3. Երկինք զարմանալեաւ կարգաւ, և զարմանալեաւ համեմատութեամբ, 'ի յանհնոյ իմաստութենէ Այ զետեղեցեալք են ։ Առաջին երկինն շրջապատէ զերկրորդն ։ Այս կանօնս պահի մինչև առ վերջին ։ Առաջին երկինն է մեծագոյն քան զերկրորդն, և թերավերջն է մեծագոյն քան զվերջինն ։ Նմանապէս խօսելի է զայլոց ։ Համայնք երկինք են կիցք, զի զօրութիւն ամից կարիցէ հասանիլ մինչև առ տարր ։ Երկինք մինչ են մարմինք վերնագոյնք, ունին զպատճառելութիւն 'ի ստորնադոյնս. 'ի յերկինս են աստեղք, և աստեղունք, որք կոչին խարուկածինք ։ 'Ի հաստատութեան բևեռեցեալք աստեղքն, իմաստնադունեղապէս 'ի հեղինակէ բնութեան առ զարդ ընդհանրոյ կարգաւորեցեալք են ։ 'Ի յաստեղս են զօրութիւնք, առ ստորնադոյնս ներհոսօղք ։ 'Ի ձեռն լուսոյ, և շարժման ներհուսեն 'ի ստորնադոյնս ։ Աստեղք, որք կոչին մոլորակք, են 'ի յիւրս երկինս, ունեցօղք զյատուկս շարժմունս ։ Սոքա շարժին զանազանիւք շարժեցմամբք, զի զանազանք գործք պատճառեսցին 'ի յայսոսիկ ստորնադոյնս ։ Ասացեալք աստեղք թուով են եօթն, այսինքն, երևակն, լուսնթագն, հրատն, Արեգակն, լուսաբերն, փայլածունն, և լուսինն ։ երևակն պատճառէ զչորութիւն, և զմեծ ցրտութիւն. լուսնթագն բարեգութ ։ Հրատն պատճառէ զչորութիւն, և զմեծ ջերմութիւն ։ Արեգակն քաղցրապէս է ջերմ, և քաղցրապէս է չոր ։ Լուսաբերն է գորովագութ ։ փայլածունն ունի զզօրութիւն իւր ։ Լուսինն է կարի խոնաւ, նաև ձմնաչեցեալ է ցուրտ ։ 'Ի յԱրեգական է մեծ առատութիւն լուսոյ ։

4. Տարերք են բաղադրեցեալք մարմինք 'ի նիւթոյ, և 'ի տեսակէ ապականելոյ ։ Յարատևեն ըստ բոլորս. իսկ ըստ մասանց հանապազ ապականին ։ Յետ երկնից իմաստնադունեղապէս զետեղեցեալք են, որոց ներհոսմանց ենթարկեցեալք են ։ 'Ի յերկնից, և 'ի յաստեղաց այլայլին, և որսամդրին առ ծնունդ խառնեցելոց, կոչին պարզք մարմինք. վասնզի ոչ լինին յայլոց մարմնոց, այլ են սկզբունք խառնեցելոց ։ Ուստի խառնեցեալքն են 'ի տարերաց. իսկ տարերք ոչ են 'ի յայլոց մարմնոց ։ Տարերքն թուով են չորք, այսինքն, հուր, օդ, ջուր, և երկիր. 'ի տարերս են ծանրութի, և թեթևութի. թեթևութիւն վերացուցանէ, իսկ ծանրութիւն իջուցանէ. ուստի հուրն, որ է թեթևագոյն քան զամենեսեան, է անընդմիջապէս յետ երկնից 'ի վեր քան զամս տարերս ։ Յետ հրոյ է օդն, թեթևագոյն քան զջուր, ծանրագոյն քան զհուր. ծանրագոյնն քան զամե‿

նե‿

նեռեան է երկիրն. ուստի է 'ի վայր քան զամս տարերս, որք են 'ի մէջին, և է եդեալ 'ի միջակէտի աշխարհի: 'Ի վր երկրի է ջուրն, ծանրագոյն քան զօդ, և թեթևագոյն քան զերկիր: Տարերք 'ի մէջ իւրեանց անցանեն, և 'ի ծննդեան խառնեցելոյ արարածին: 'Ի տարերս են առաջինք որակութիք, այսինքն, ջերմութի, ցրտութի, խոնաւութի, և չորութի: Ջերմութին է ներհակ ցրտութե. և չորութին է ներհակ խոնաւութե:

5. Զօրութք աստեղաց, և երկնից և շարժմամբք նց, բազումք իրք լինին 'ի ծոցս երկրի, 'ի յերկրի, և 'ի յօդոջ ցուցանօղք զզարմանալի բարութին, իմաստութին, և զօրութին Ածային: Զօրութք աստեղաց, և շարժմամբք նոցա, 'ի ծոցս երկրի ծնանին պատուականք հրահալելիք, և նմանապէս ոչ պատուականք. ակունք պատուականք, և ոչ պատուականք, ծաւալօղք առ շահաւէտութի ընդհանրոյ, և ցուցանօղք զզօրութի ստեղծչի: 'Ի յերեսս երկրի անձրևօղք, և տարափք թրջեցելոյ. կամ վերալուծանմամբ սառի, և ձեանց խոնաւեցուցելոյ, լինին գոլորշիք, և բարձրացօղք հիւթք: 'Ի գոլորշեաց, և 'ի բարձրացողաց հիւթոց մանունց, զօրութք արեգական 'ի յօդն վերացուցելոց, ծնանին 'ի յօդոջ զանազանք, և այլազանք հողմունք, և ձևակերպին ամպք: 'Ի յամպոց լինին անձրևք, տարափք, ձիւք, և կարկուտք ըստ զանազանութե ժամանակաց: 'Ի բարձրացողաց հիւթոց բարձրագոյն վասն մեծագունի թեթևութե վերացելոց, 'ի վերնագոյնս մասունս օդոյ լինին նաև բորբոքեցմունք: Արդարեւ զօրութք երկնից, և աստեղաց, և շարժմամբք նոցա, ըստ զանազանութեան ժամանակաց, 'ի ծոցս երկրի, և 'ի յերեսս նորա, և 'ի զանազանս դասուս օդոյ, լինին ասացեալք, և նմանք իրք փորձառութք ճանաչեցեալք, որի‿մաստութի ստեղծչի մերոյ ցուցանօղք:

6. Տունկք են մարմինք խառնեցեալք, 'ի խառնեցմանէ տարերց ծնեցեալք, զանազանիւք կերպիւք զորակութի տարերաց վայելօղք, և զաճողական կեան ունեցօղք: Են զարդք աշխարհի զերեսս երկրի զարդարօղք: Տունկք 'ի հեղինակէ բնութե տնկեցեալք են կենդանեաց, և մարդկանց 'ի կերակուր: Ոմանք վայսեն, և ոմանք դարմանեն: Բաժանին 'ի զանազանս սեռս, և սեռք նոցա, 'ի զանազանս տեսակս, զզանազանս բնութիս, և զզանազանս զօրութիս ունեցօղս. 'ի տունկս են զանազանք համեղութիք, և գտանին զանազանք հոտք, նաև գոյնք, և որակութիք, զնս առնօղք շօշափելականս. ուստի են առարկայք ճաշակողութե, հոտոտողութե, և նաև տեսողութե, և շօշափողութե: Ունին զհամ, զհոտ, և կարեն տեսանիլ, և շօշափիլ: Ունին զաճողական կարողութի, զսնանողական, և զծնանողական: Աճին առ համեմատեցեալ, և առ բացորոշեցեալ մեծութի, 'ի հեղինակէ բնութե իւրեանց շնորհեցեալ, սնանին ցորքան ժամանակ կեան կենիւ կենաբուսականաւ, ունին զհունտս, 'ի ձեռն որոց ծնանին զնմանս իւրեանց առ 'ի համապահել զտեսակ, և ստեղծօղի իւրոյ, և բոլորոյ ընդհանրոյ, յորում գտանին, ցուցանեն զզարմանալի բարութին, զամենամեծ իմաստութին, և զծայրագունեղ զօրութին:

7. Կենդանիքն են կեցօղք, զաճողական, և զզգացողական կեան ունեցօղք: Կենդանիքն են կատարելագոյնք խառնեցեալք քան զտունկս, և յայտնագոյն քան զտունկս երևեցուցանեն զստեղծօղ իւր, նաև այսուքիկ զանազանիւք կերպիւք ունին զզօրութիս տարերաց: Նաև 'ի յայսոսիկ գտանի աճողական, սնանողական, և ծնանողական զօրութի: Քանզի աճին առ համեմատեցեալ, և առ բացորոշեցեալ

շեցեալ

շեցեալ մտութե, մինչև առ վաղճան կենաց իւրոց սնանին. և առ համապահեցումն տեսակի իւրոյ ծնանին զնմանս ինքեանց: Կատարեն զընդհանուրս, ծառայեն մարդկանց, և քարոզեն զկատարելութիւն ստեղծողի իւրոյ: Ունին զզգացողական ճանաչումն. վասնզի զգան ներքնայնովք, և արտաքնայնովք զգայութեմբք: Կատարեալք կենդանիք տեսանեն, լսեն, հոտոտեն, ճաշակեն, և շօշափեն, ունելով զտեսողական, զլսողական, զհոտոտողական, զճաշակողական, և զշօշափողական զօրութիւն: 'Ի ձեռն հասարակի զգայութե զանազանեն զայնս, զորս զգան 'ի ձեռն զգայութեանց: 'Ի ձեռն յիշողութե պահեն զտեսակս կերպաւորեցեալս զզգալականաց: 'Ի ձեռն երևակայութե, և երևակերպութեան ըմբռնեն զձևս: 'Ի ձեռն կարծողականի զօրութե ճանաչեն զվնասակարս, և զշահաւէտս: 'Ի ձեռն համարողականի զօրութե համարին 'ի վնասակարաց փախչել, և զշահաւէտս խնդրել: Ունին զտեղաշարժողական զօրութի, ուստի ընթանան առ շահաւէտս, և փախչին 'ի վնասակարաց: Կենդանիք այսպէս ունին զինքեանս:

Է. Մարդն է բանական կենդանի, ունելով ինքեան զընթարկեցեալս զայլս կենդանիս, կեցող կենիւ աճողականաւ, զգայականաւ, և բանականաւ միով հոգւով աննմանագունեղի հանդիսացողաւ բազմաց, ունողաւ զանձնիշխանութի. նաև 'ի մարդում է աճողական, զգացողական, և ծնանողական կարողութի: Քանզի աճի առ համեմատեցեալ, և բազմապատկեցեալ մեծութի, սնանի մինչև առ մահ, և կարէ ծնանիլ զինքեան նմանն: Ունի զհամայնս զգայութիս ներքինս, և արտաքինս: 'Ի ձեռնն տեսողութե տեսանէ, 'ի ձեռ լսողութեան լսէ, 'ի ձեռն հոտոտողութե հոտոտէ, 'ի ձեռն ճաշակողութե ճաշակէ, և 'ի ձեռն շօշափողութե շօշափէ, այսպէս ունի զինքն որքան առ արտաքինս զգայութիւնս: Բայց որքան առ ներքնայինս զգայութիս, 'ի ձեռն հասարակի զգայութեան զանազանէ զըմբռնեցեալս իւր արտաքնայնովք զգայութեամբք. 'ի ձեռն յիշողութե պահէ զտեսակս, 'ի ձեռն երևակայութե, և երևակերպութե ըմբռնէ զձևս, 'ի ձեռն կարծողականի կարծէ, և 'ի ձեռն համարողականի համարի: 'Ի յերևակայութեց ձևակերպէ զտեսակս իմանալիս, և իմանայ: Ունի զախորժակ ոչ միայն զգացողական. այլ նաև բանական, ազատաբար գործող, Տէրն արարողութեց իւրոց, առ պատկեր, և նմանութի այ արարեցեալ ըստ այնմ ծննդոց: Արասցուք մարդ ըստ պատկերի մերում, և ըստ նմանութե: Գլ: ա. Թիւ: իզ.

## ԳԼՈՒԽ: Ը.

### Յաղագս հրեշտակաց:

ա. Զհրեշտակաց զիր ինչ 'ի հասարակի խօսեցաք: Այժմ մասնաւորապէս խօսակցութին է զայնց: Հրեշտակք են գոյացութիք աննիւթականք, հոգևորք, անմահք, անբաժանելիք, և պարզք, ոչ ունին զգոյացական բաղադրուի, են պարզք տեսակք գոյացօղք 'ի յիւրեանս ինքեանս, կատարելագունեղապէս երևեցուցանօղք զկատարելութիս ստեղծողի իւրոյ: Սոքա բնութբ յաղթեն, և գերազանցեն զհամայնս ստեղծուածս, 'ի յայսմիկ ընդհանրօջ գտեցեալս. քանզի մինչ սոքա ոչ ունին զնիւթ, և ոչ զկարգ առնիւթ, են նմանագունեղք այ: Հրեշտակք 'ի միասին ընդ գոլում իւրում 'ի ստեղծողէ իւրմէ ընկալան զտեսակս իմանալիս կատարելագոյնս, կամ նուազ կատարեալս ըստ կատարելութե բնութեց իւրոց, զյարմարս, և զպարտաւորս ճշ-

մարտութիս իմացութեան նոցա երևեցուցանօղս ։ Այնպէս կատարեալք , և գերազանցք են 'ի յիմանալն , զի կոչեցին իմացողութիւք ։ Են էակք հունաւորեցեալք , քանզի ընկալան զգոլ ։ Ուստի են գերազանցագունեղք մասնակցութիւք էակի յինքենէ գոյացողի ։ Ոչ են մաքուր ներգործութիւ ․ վասնզի ունին զբաղադրութիւ էութեան , և գոյութեան ․ գոյացութեան , և կարողութեան , և ներգործութեան ։

2․ Հրեշտակք են գերազանցագունեղք գոյացութիւք աննիւթականք , ոչ ունեցօղք զնիւթ , և ոչ զկարգ առ նիւթ , են կարի յոյժ իմացօղք ։ Ուստի ունին զգերազանց զօրութիւ իմացողական , և զիմացութիւ ։ Ըստ կատարելութեան բնութեան , է կատարելութիւ իմացութեան ։ Ըստ կատարելութեան իմացութեան , է կատարելութիւ տեսակի իմանալւոյ , երևեցուցանողի իմացութեան զճշմարտութիւս ։ Ըստ կատարելութեան տեսակի իմանալւոյ , է կատարելութիւ իմացման ։ Համայնք տեսակաւ տարբերին , վասնզի են պարզք տեսակք , ինքեամբք գոյացօղք․ ուստի են տեսակաւ տարբերք ։ Տեսակք իմանալիք հրեշտակաց անկախապէս 'ի յերևակայութենէ , եդեալք 'ի հրեշտակայնում իմացութեան , զբոլորն երևեցուցանեն ։ Ուստի հրեշտակային իմացութիւն ոչ է տրամաբանողական , գալով 'ի միոյն առ միւսն ․ այլ է իմացօղ , 'ի միաօրին առ շօշափօղ զսկիզբն , և զայդ , որ 'ի սկզբանէ ։ Ուստի ներգործութիւ հրեշտակայնոյ իմացութեան է գերազանց , և հաստատ ։ Աստի է , թէ և հրեշտակային ընտրողութիւն իցէ հաստատ ։

3․ Հրեշտակք ունին զգերազանց իմացութիւ , գոլով նմանագունեղք այ , ունին նաև զկամս ազատաբար գործօղ , գտեցեալք տեարք արարողութեց իւրոց ։ Վասն որութե հրեշտակայնոյ իմացութեան հաստատուն է հրեշտակային ընտրողութիւն ։ 'Ի ձեռն ազատի կամեցման խօսին ընդ իրերարս ։ Ըստ մեծութեան գերազանցութեան իւրոյ , հրեշտակն ունի զզօրութիւն 'ի վերայ մարմնոյ , և գործէ 'ի մարմին , իմացութբ , և կամեցմամբ , մինչ ոչ ունին զանդամս ։ Հրեշտակն է ընդունակ ածայնոյ յայտնութեան ։ Քանզի ամենակարողն ած կարէ վերացուցանել զիմանալի տեսակն հրեշտակի , զի երևեցուցանիցէ զյայտնեցեալ իրն ։ Լուսաւորեալ յայտնութբ , կարէ լուսաւորել զմիւսն ։ Է ընդունակ շնորհի , և բարեկամութեան այ ։ Քանզի մինչ է գերազանցապէս իմացողական , կարէ նաև գերազանցագունեղիւ լուսով ճանաչել զած , և օգնիլ 'ի նմանէ , զի նաև գերբնականաւ սիրով սիրիցէ զնա , և այսպէս եղանիցի բարեկամ այ , և մասնակից շնորհի նր ։ Է նաև ընդունակ է փառաց , վասնզի գերազանց հրեշտակային իմացութիւն կարէ վերանալ 'ի յայ , զի լուսաւորեալ , և օգնեցեալ լուսով փառաց , տեսանիցէ զածային էութիւն , կատարեալ սիրով սիրիցէ զածային բարութիւն , անբաժանելաբար միաւորիցի ԱՅ , և վայելիցէ զնա 'ի յաւիտեան ։

4 Ինն են դասք հրեշտակաց , այսինքն , սերոբէք , քերոբէք , Աթոռք , Տէրութիւք , իշխանութիւք , պետութիւք , զօրութիւք , հրեշտակապետք , և հրեշտակք ։ Սերոբէք են այնոքիկ , որք են գերազանցագունեղք 'ի սիրոջ ։ Այնպէս սիրեն , զի բորբոքիցին , և վառիցին սիրով ։ Սէրն նոցա է հրդեհումն , և բորբոքեցումն ։ Քերոբէքն են հրեշտակք , որք պայծառագունեղապէս տեսանեն զածային էութիւն ։ Այնպէս տեսանեն , և իմանան , զի անուանիցին տեսանօղք , և իմացօղք ․ Յարմարաբար կոչեցեալք են իմացօղք ։ Աթոռքն են հրեշտակք , որք զմեծվայելչութիւն Ածայնոյ գերազանցութեան յայտնագոյնս ցուցանեն ։ Տէրութիւքն են հրեշտակք , որք 'ի տեղի այ 'ի յայամիկ ընդհանրոջ իբրև Տէր ճանաչին ։ Իշխանութիւքն են հրեշտակք , որք իբրև իշխանք փոխանակ այ , են

կառա֊

կառավարողք 'ի յաշխարհի ։ Պետութիւնք են հրեշտակք, որք Ածայնով զօրութեամբ, կարեն գործել զիրս մեծամեծս ։ Զօրութիւնք են հրեշտակք, որք արտաքսեն զԹշնամիս այ ։ Հրեշտակապետքն են հրեշտակք, որք առաքին առ մեծս պաշտօնս ։ Հրեշտակք են պաշտօնեայք, որք առաքին առ պահպանութիւն մարդկանց ։ Արդ ուրեմն հրեշտակք են պաշտօնատարք հոգւոց, առաքեցեալք 'ի պաշտօնատարութիւն վասն այնոցիկ, որք ժառանգելոցք են զփրկութիւն ։

5. Համայնք հրեշտակք արարեցեալք են բարիք, քանզի գործն այ է բարի, և ստեղծումն, և աբարողութիւն նորա արտադրողն զիրն 'ի յոչընչէ, է բարի ։ Հրեշտակք ստեղծեցեալք են բարիք. դոյացօղք ազատք. են Տէրք արարողութեց, և գործողուեց իւրոց, արդարև կարացին օգնեցեալք 'ի յայ յարատևել բարիք. և ընտրել զբարին, և լուսով փառաց վերանալ առ տեսութիւն ածայնոյ էութե, և առ անբաժանելի զուգակցութի ընդ այ 'ի յաւիտեան 'ի ձեռն կատարեցելոյ սիրոյ ածայնոյ բարութե, և երանականի վայելման այ. և արդարև արդէն բազումք օգնեցեալք շնորհիւն այ մնացին բարիք, և ընտրեցին զբարին. և 'ի ձեռն լուսոյ փառաց վերացեալք առ տեսութն ածայնոյ էութե, և առ անբաժանելի զուգակցութի ընդ այ 'ի ձեռն կատարեցելոյ սիրոյ Ածայնոյ բարութե, և առ երանական վայելում այ 'ի ձեռն յաւիտենականի փառին, ստացեալք են զփառս, և զյաւիտենական երանութի. սակայն բազումք ոչ մնացին բարիք, այլ հպարտացեալք, ընտրեցին զչարն, և մեղանչեցին. և լեալք դատապարտեցեալք կորուսին զշնորհ, և եղեն հակառակք, և Թշնամիք այ, և լեալք դեւք դատապարտեցան առ մշտնջենաւոր պատիժ, և արտաքսեցան 'ի յերկնէ ։ Եղև մարտ 'ի մէջ բարեաց, և չարաց, և բարիք լեալք յաղթօղք, արտաքսեցին զչարս ։

6. Բարիք հրեշտակք են 'ի փառս, և են աներկբայք, թէ ոչ են կորուսանելոցք զերանութիւն, այլ Թագաւորելոցք են ընդ այ 'ի յաւիտեան ։ Իսկ չարք հրեշտակք են 'ի պատժոջ, և ստոյգք են թէ ոչ են հասանելոցք փառաց, այլ 'ի յաւիտեան չարչարելիք են 'ի դժոխս ։ Ոչ ունին նշմ յոյս զփառաց, և զերանութե. այլ զբոլորական յուսահատութի. բայց զյաւիտենականէ պատժոյ ունին զամենամեծ ստուգութի ։ Ուստի վասն յուսահատութե զյաւիտենականէ երանութէ, և վասն ստուգութեան զմշտնջենաւորէ պատժոյ, և վասն խստութե չարչարանաց կարի յոյժ տանջին ։ Դատապարտեցեալք հրեշտակք, և 'ի չարութե հաստատեցեալք արդարև ունին զիմացութի, և զկամ. սակայն են Թշնամիք ըստ երկաքանչիւրոյն ։ Թշնամիք են ըստ իմացութե, քանզի ոչ տեսանեն զածային էութին, և ոչ ունին զկատարեալ իմաստութի ։ Թշնամիք և.ս են ըստ կամաց. վազի ոչ սիրեն զածային բարութին, և ոչ ունին զուղղութիւն կամաց ։ Բարիք հրեշտակք հասեալք փառաց, ունին զաներկբայութի զերանութէ ։ Ուստի 'ի նա ոչք երկիւղ գոյ զկորուսմանէ երանութե, և զչարչարանաց ։ Ուստի երջանիկք են վասն փառաց, վասն ստուգութե, և վասն արտաքսեցման երկիւղի ։

7. Բարիք հրեշտակք ունին զհոգացողութի զմէնջ ։ Զի պահպանեն զմեզ, օգնեն մեզ, ազատեն զմեզ 'ի յորոգայթից, հովանաւորեն զմեզ ընդդէմ թշնամեաց, և ընդդէմ որոգայթից սատանայի, ներշնչեն 'ի մեզ զբարիս, և յորդորեն զմեզ առ առաքինութիս ։ Ուստի ասէ սաղմոսերգիչն ։ ( Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո. պահել զքեզ յամ ճանապարհս քո ։ 'Ի բազուկս իւրեանց ընկալցին զքեզ. զի մի երբեք հարցես զքարի զոտն քո ։ ) Ուստի ասէ

մե՛րն իղձսորոս : ( Բարիք հրեշտակք կարդեցեալք են առ պաշտօնատարութի մարդկայնոյ փրկութե, զի սպասաւորիցեն բոլորոյ աշխարհի, կառավարիցեն զհամայնս իւրս հրամանաւ ա̃յ : ) Զծայրագունեղէ բարւոյ, նոյն մե՛րն ուսուցանէ : ( Իւրաքանչիւրք ազինք հաւատանէին ունիլ զհրեշտակս վերակացուս, համայնք մարդիկք ցուցանին ունիլ զհրեշտակս : 'Ի նոյնում տեղւոջ : ( Իւրաքանչիւրում մեր մերձ է բարի հրեշտակն, զի կառավարիցէ զմեզ, ազդիցէ մեզ, մատակարարիցէ զմեզ, և վասն ներգործութեց մերոց յանդիմանեսցէ, և վասն ողորմութեց հայցեսցէ հանապազ տեսանիցէ զերեսս հօր, որ է 'ի յերկինս : ) Բարի հրեշտակք առնեն զօր տօնախմբութե, խնդալով 'ի վերայ այնոցիկ, որք փախչելով 'ի յընկերակցութէ դիւաց, 'ի ձեռն կրթութեց առաքինութեց, փութան ընկերակցիլ հրեշտակայնոց հաղորդակցութեց : Երախտաձանաչք մարդիկք, պատուեն զպահապանս հրեշտակս, պատասխանեն բարերարութեց, և հնազանդին ձայնից նոցա :

7. Չարք հրեշտակք, թշնամիք ա̃յ, 'ի չարութէ իւրեանց նախանձին մարդկանց, ջանան, և նկրտին վնասել ամ̃ից. դաւաճանին մարդկանց, և զորոգայթս դնեն առաջի մեր : Փորձեն զմեզ, և սերմանեն 'ի մեզ զչարիս : Զարթուցանեն զերևակայութիս, զմեզ հրաւիրօղս առ 'ի փախչել 'ի յառաքինութեց, և առ 'ի գրկել զմոլութիս : Հզօրաբար գրգռեն զպատերազմ ընդդէմ մեր, ջանալով ածել զմեզ առ մեղս : Հակառակորդն մեր սատանայն շրջի իբրև զառիւծ մռնչելով, և խնդրելով թէ զո՛ կլանիցէ : Մեծ վիշապն, հին օձն, կոչեցեալ բանսարկու, և սատանայ, ելեալ 'ի յերկիր, ջանայ մոլորեցուցանել զմարդիկ, և հրեշտակք նորա ընդ նմա : Պարտիմք հզօրաբար ընդդիմանալ սատանայի, և հրեշտակաց նորա, ընդդէմ մեզ պատերազմ դրդռողաց : Մեք պարտիմք զգենուլ զսպառազինութի ա̃յ, զի կարիցեմք կալ ընդդէմ դարանակալութեց սատանայի : Զի ոչ է մեզ պատերազմ ընդ մարմնոյ և ընդ արեան. այլ ընդ իշխանութիս, և ընդ պետութիս, ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ, ընդ այսս չարութե, որք են 'ի ներքոյ երկնից : Պարտիմք հզօրապէս պատերազմիլ, և մարտնչիլ ընդդէմ խորամանկի թշնամւոյ, զի յաղթիցեմք, և առնուցումք զպսակն յաղթութե :

## Գ Լ Ո Ւ Խ : Թ.

### Յաղագս բարի հրեշտակաց :

1. Ուսեցաք զի՛ր ինչ զբարեաց հրեշտակաց 'ի հասարակի, այժմ զի՛ր ինչ ասացուք մանաւորապէս : Բարիք հրեշտակք ստեղծեցեալք 'ի յոչընչէ, ընտրեցին զբարին : Ճանաչեցին զինքեանս ծառայս, զա̃ծ Տ̃ր, զիւրեանս ինքեանս ենթարկեցեալս, զա̃ծ հրամայօղ. զկամս իւր ստորնագոյն, և պարտաւոր առ 'ի հպատակիլ. զկամն ա̃յ վերնագոյն, ունեցօղ զիրաւունս առ 'ի հրամայել. զիմաստութի իւր հաւանորեցեալ, զիմաստութին Ա̃Յ անհուն. զբարութի իւր ստեղծեցեալ, զբարութին ա̃յ անստեղծ. զգերազանցութի իւր վերընդունեցեալ, և սահմանադրեցեալ. զգերազանցութին ա̃յ ծայրագունեղ, և անսահման. ուստի խոնարհեցուցին զիւրեանս ինքեանս, և ենթարկեցին կամացն ա̃յ, հաւանեցան հնազանդիլ ա̃յ հրամայօղի, և զհրաման իւր ն̃ց առաջադրողի : Յարեան ընդդէմ թշնամւոյ նորա, և հզօրաբար պատերազմեցան ընդդէմ թշնամւոյ, որպէս պատմի 'ի յայտնու‿

նութե Յօհաննու : ) Եւ եղեւ պատերազմ յերկինս. միքայէլ և հրեշտակք իւր կռուէին ընդ վիշապին : Եւ վիշապն պատերազմէր զօրովք իւրովք : Եւ ոչ կարացին կալ ընդդէմ : և տեղի ոչ գտաւ նց յերկինս : ) Գլուխ: 12. Թիւ. 7.

2. Բարիք հրեշտակք, որք ընտրեցին զբարին, և կամեցան հնազանդիլ այ, և մարտնչիլ ընդդէմ թշնամւոյ նր, և լեալք յաղթօղք ընկալան զյաղթանակն. առժամայն առին զպսակն, և մտին 'ի փառս, և ստացան զկատարեալ երանութիւն, և զկատարեալ երջանկութիւն, դէմյանդիման տեսանելով զածային էութիւն 'ի բանի, և կատարեալ սիրով սիրելով զածային բարութիւնն, և քաղցրագունեղին բերկրութբ վայելելով զած, և թագաւորելով ընդ նմա 'ի յաւիտեան : Արդ որպէս բարեկամք այ ծառայեն նմա 'ի կառավարեցման ընդհանրոյ, կոչեցեալք զօրութիւնք երկնից : Ասացեալք հրեշտակք հասեալք փառաց, վասն սիրոյն այ զբաղումս բարերարութիւնս առնեն մարդկանց, հաւատարմագունեղապէս պաշտպանելով զնս, և զարդարացուցմանէ, և զփառաւորեցմանէ նոցա կարի յոյժ ցնծալով, խնդալով, և ուրախանալով, և մեծագունեղապէս փափագելով, զի մեղաւորք դարձցին 'ի մեղաց, և ստանայցեն զփառս աստուծոյ. և զի արդարք 'ի յարդարացուցչի շնորհի յարատեւելով, հասանիցեն փառաց, և ընկերակցիցեն ինքեանց 'ի յերկինս, 'ի միասին անդ թագաւորելով ընդ այ, և վայելելով զյաւիտենական կեանսն:

3 Բարիք հրեշտակք են բարիք հոգիք, մատակարարիչք 'ի պաշտօնատարութիւն առաքեցեալք վասն մեր, զի կարիցեմք ընդունիլ զժառանգութիւն փրկութե : Արդ 'ի հօրէ ողորմութեց առաքին, զի առաջնորդիցեն մեզ, և պաշտպանիցեն զմեզ 'ի ճանապարհի, և ներածիցեն զմեզ առ տեղին, 'ի յամենակարողէ այ մեզ պատրաստեցեալն : Արդ են հոգիք, որոց պարտիմք հնազանդիլ, և ունկնդիր լինիլ ձայնից նոցա : Բարիք հրեշտակք են հոգիք պատուելիք, հոգիք, նաև զմեղաւորս ոչ բացահերքօղք, այլ զուշադիր ջան 'ի կիրարկանօղք վասն դարձման, և փրկութե նց : Արդ են այնոքիկ հոգիք, ընդ որս է սրբազանագունեղ անուանն Տն : եթէ լուիցեմք զձայնս բարեաց հոգեաց, և երանեցելոց, 'ի յայ առ մեզ առաքեցելոց. և առնիցեմք զհամայնս իրս, վասն որոց առաքեցեալք են առ մեզ նոքա 'ի յայ. ամենակարօղն ած եղիցի թշնամի թշնամեաց մերոց, և նեղեսցէ զնեղիչս մեր, և առածցէ զմեզ առ ստացուածս փառաց, և արասցէ զմեզ, զձայնս բարեաց հրեշտակաց, և երանեցելոց լսօղս, ընկերս երանեցեալս նոցա, 'ի յերկինս 'ի յաւիտեան թագաւորօղս, և զերանեցեալ կեանն վայելօղս, թարց ուարտման խնդացօղս, ընդ ամից սրբոց ուրախացօղս, և զամենասուրբ երրորդութիւն օրհնօղս :

4. Բարիք հրեշտակք, բարեկամք այ ամենակարողի, ոչ պահպանեն զմեզ 'ի յամս ճանապարհս մերս, և 'ի հրամանէ այ տանին զմեզ 'ի ձեռս, զի մի երբէք հարցուք զքարի զոտս մեր. այսպէս հարեն զթշնամիս մեր, զմեզ վշտացուցանել ջանացօղս, և ջանան փրկել, և ազատել զմեզ 'ի թշնամեաց, մեզ զորոգայթս հնարողաց : Բարիք հրեշտակք աղօթեն վասն մեր, զի մի իջանիցեմք 'ի յապականութիւն : Ոչ միայն աղօթեն վասն մեր, զի մի կորընչիցիմք. այլ նաև զաղօթս, և զաղաչանս, զորս պարապօղքս բարեգործութեց հեղումք արտասուօք հանդերձ, մատուցանեն այ. և զշնորհս 'ի ձեռն աղաչանաց, և խնդրուածոց ընկալեալս, և ստացեալս 'ի հօրէ ողորմութեց, առբերեն, և առածեն առ մեզ ուրախութբ. դան, և կան առաջի խորանի, և ծուխն խնկոց ելանէ զաղօթից սրբոց : մինչ բարեկամքն այ դնան յայսմանէ

աշ

աշխարհէ, տանին զհոգիս նոցա 'ի գոգն Աբրահամու, հաւատացողաց հօր, և այժմ 'ի յերկնի Թագաւորութ: Ած մեր, զոր պաշտեմք, առաքէ զհրեշտակ իւր, և խցէ զբերանս Առիւծոց, և ոչ վնասեն: Մինչ պատերազմիմք ընդ թշնամեաց, որք հրեշտակք յառաջեն 'ի սպիտակ հանդերձի, և ունելինօք զինուք զնիզակս արկանելով պաշտպանեն զմեզ պատերազմօղս:

5. Հրեշտակք երկնից են վերակացուք 'ի վերայ պետութեց ազգայնոց: Սոքա հային առ օրէն հաստատ, օրէն յաւիտենական, և և կայուն և 'ի յայնմանէ առնեն որինչ լինի սատ, որպէս ասէ սբն Օգոստինոս: 'Ի ձեռն այսոցիկ ած երևեցաւ, և խօսեցաւ հարց: Սոքա են փողն այ, զկամն նր մարդկանց ծանուցանօղք: Սբք հրեշտակք են քաղաքացիք երկնայնոյ քաղաքի, 'ի հրեշտակաց, և 'ի մարդկանց բաղկացելոյ, առ որ այնքանք մարդիկք ելանելոցք են, որքանք անդ մնացին սբք, և ընտրեալք հրեշտակք, որպէս վկայ սբն Գրիգորիոս, զի 'ի հրեշտակաց, և 'ի մարդկանց լինիցի հաւասար ընկերակցութի: Քանզի հաւատամք, զծայրագունեղ իմաստութին, և զանհուն գիտութին կացուցեալ գոլ զեզերս ազանց, ըստ թուոյ հրեշտակաց. ամբողջութի այնր քաղաքի 'ի հրեշտակաց, և 'ի մարդկանց լցուցանելի է. 'ի հրեշտակաց այ ուսանողաց, և խոկմամբ յաւիտենականի ճշմարտութե երանեցելոց. և 'ի մարդկանց զհրեշտակային կեանս վարողաց, և հրեշտակայնոց ձայնից հնազանդողաց: Որք սատ են ընկերակիցք հրեշտակաց, և 'ի յերկինս եղեցին ընկերք նց: Այնոքիկ են ընկերակիցք հրեշտակաց, որք դարձուցանեն զընկերին 'ի վատթարութե, և յորդորեն զնա առ 'ի գործել զբարի, և զյաւիտենական արքայութին, կամ զպատիժ աղալողաց ծանուցանեն, զբանս արքոյ աւետման քարոզելով:

6. Սոքա, որք զսակաւ ինչ իմանան, և զիմացեալս բարեպաշտաբար ծանուցանել եղբարց ոչ դադարին: ընթանան 'ի թիւս հրեշտակաց: Նոքա, որք կարեն իմանալ զծայրագունեղս գաղտնեաց, և փութան ծանուցանել, համարին 'ի թիւս հրեշտակապետաց. նոքա, որք բարբոքին սիրով, և խօսելով բորբոքեն զայլս, արժանաւորին կոչիլ սերովբէք: Զսակաւ ինչ քարոզօղք, կոչին հրեշտակք. զմեծ ինչ և զծայրագունեղս աւետօղք հրեշտակապետք. և բորբոքելաբար սիրօղք, և զայլս բորբոքօղք սերոբէք: Սբք հրեշտակք, պահապանք մերք ոչ միայն արտաքսագոյն լնուն զպաշտօնն, այլ նաև ներքնագոյն պարապին խոկման, և սիրոյ. քանզի պահպանելով զմեզ, կան յանդիման այ, հայեցողապէս տեսանելով զնա, բորբոքելաբար սիրելով զբարութի նորա. ընկերակցութե նոցա փափաքօղքս, և նոցա ընկերակցիլ ցանկացօղքս, պարտիմք հետևիլ նոցա, զի կարիցեմք լինիլ նմանք նոցա, արտաքսագոյն 'ի կիր արկանելով զգործս բարեգործութե դէպ 'ի յընկերս, և լցուցանելով զպաշտօն եղբայրսիրութե. իսկ ներքսագոյն խոկալով զածային իրս, և սիրելով զածային բարութին. կամ երբեմն պարապելով բարեգործութեց, և երբեմն պարապելով խոկմանց:

7. Սբք հրեշտակք տեսանելով զածային էութին, խոկան զինքն աղբիւրն գիտութե. ուստի գիտօղք զգիտօղն զամ ինչ, գիտեն զայսոսիկ ամենեսեան, որք յինքեանց գիտելիք են: Ուրեմն մեք, 'ի վերայ որոց գիտութիք նոցա կարի անհամեմատաբար տարածին, պարտիմք գոլ ուշադիրք, զի լուսաւորեցեալք յայնցանէ, զայսցանէ, զորս պատրաստք են ուսուցանել մեզ, լուսաւորիցիմք յայնցանէ, զմեզ լուսաւորել փափագողաց, և գործիցեմք ըստ լուսաւորման նոցա, մեզ զհարկաւորս ուսուցանել ջանացողաց, զի և մեք 'ի յերկինս կարիցեմք տեսանել զած, և գիտի-

ցեմք

ցեմք զխօղն պհամայնս իւր ։ Մեք, որք տակաւին եմք փոքրիկք, ենթ պաշտպանչաց, և կատարողաց, և որք փափագիմք լինել ժառանգակիցք հրեշտակաց, և ընկերք նոցա, և որք աստ զբաղումն բարերարութիւնս 'ի հաւատարմագունեղից պահապանաց մերոց վերընդունիմք, մինչ լուսաւորիմք 'ի նոցանէ, և յորդորիմք առ բարեգործութիւն, լիցուք ջերմեռանդք, լիցուք երախտաճանաչք պահպանչաց, ճշգրտիւ զմեզ սիրողաց, և վերասիրեսցուք զնոսա, որքան կարեմք, և որքան պարտիմք, զի մեզ զբարերարութիւն առնողաց, և ճշգրտիւ զմեզ սիրողաց, կարիցեմք յարմարաբար պատասխանել, և սիրողաց զպարտաւոր, և զպատշաճ սէր հատուցանել, ըստ օրինի երախտաճանաչի պատասխանել կարիցեմք ։

8. Մեք հրեշտակք պահապանք մերք ցանկան օգնել մեզ 'ի հարկաւորութիւն մերս ։ Ուրեմն երբ տեսանիւ նեղել ծանրագունեղ փորձութի, և վերակայ հզօր վիշտ, պարտիմք կոչել զպահապանս մեր, զուղղիչս մեր, և զօգնիչս մեր 'ի կարևորութիւն մեր ։ Կոչելիք են 'ի նեղութե․ վասնզի մինչ շրջապատիմք վշտիւք, ոչ քնին, և ոչ 'ի քուն մտանեն, այլ զուարթունք են առ 'ի յօգնել ։ Ընկերակցութիւն հրեշտակային արժանապատուութե հարկաւոր է մեզ վասն վերջապացելոց ։ Ուրեմն զգուշանալ պարտիմք, զի մի վշտացուցանիցեմք զնս ։ Ի յայնոսիկ իրս կարի յոյժ կրթել պարտիմք զմեզ, որովք ծանեաք հրճուիլ զնս ։ Հաճոյ է նց գոլ 'ի մեզ զզգաստութի, զողջախոհութի, զառատաձեռնութի, զյաճախ հառաչումն 'ի յերկինս, զխաղաղութի, զսէր ճշմարտութե, զխոնարհութի, զմիաբանութի, զարդարութի, զապաշխարումն զմեղաց, և զեղբայրական սէր, զպատուիրան նորոյ օրինի, զհրաման փրկչի, և զնշան քրիստոնէի ։ Ուրեմն 'ի յայսոսիկ ամենեսեան, նորատես անուանեցեալս անդադար զմեզ կրթել պարտիմք, զի աստ նպաստաւորաւ ընկերակցութբ սրբոց հրեշտակաց, և 'ի յերկինս անբաժանելեաւ ընկերակցութբ նոցա, կարիցեմք զմայլել 'ի յաւիտեան ։

## ԳԼՈՒԽ․ Ժ․

### Յաղագս դիւաց ։

1. Զվատթար հրեշտակաց զեր ինչ 'ի վեր 'ի հասարակի ասացաք, այժմ խօսիմք զայնց մասնաւորապէս ։ Բազումք հրեշտակք ոչ յարատևեցին 'ի բարւոջ, այլ անձնիշխանութբ իւրով հպարտացեալք, և լեալք ամբարտաւանք, ընտրեցին զչարն, և մեղանչեցին, պատերազմելով ընդդէմ բարեաց, և սրբոց հրեշտակաց ։ Վասն մեղաց իւրեանց եղեն դարշելիք ։ Վնասեցան և 'ի յիմացութեան, և 'ի կամին․ 'ի յիմացութեան, քանզի իմացութիւն նոցա է թարց լուսոյ շնորհի, և փառաց ։ Եւ 'ի կամին, զի կամս նոցա հաստատեցեալ է 'ի չարութե ։ Եղեն թշնամիք, և հակառակք ստեղծողի իւրեանց ։ Որք կարէին հասնիլ փառաց, և մշտնջենաւորի երջանկութե, և երկնային արքայութե, և ընդ այ ստեղծողի իւրեանց թագաւորել 'ի յաւիտեան, յաղթեցան, և արտաքսեցան, եղեն թշնամիք, և դատապարտեցան առ մշտնջենաւոր պատիժ ։ Որք ունէին զզօրութի 'ի մարմինս, չարչարին, և տանջին 'ի հրոյ 'ի դժոխս ։

2. Իշխանն դիւաց, որ ծագէր յառաւօտու, անկաւ 'ի յերկնէ, և գլորեցաւ 'ի յերկիր, էջ 'ի դժոխս ։ Որ ասէր 'ի սրտի իւրում ելից 'ի յերկինս, 'ի վերոյ քան զաստեղս երկնից արկից զաթոռ իմ․ նստայց 'ի լերինն բարձու, 'ի

վերոյ

վերայ լերանց բարձանց հիւսիսոյ: Ելից 'ի վեր քան զամպս, եղէց նմանօղ բարձրելոյն. էջ 'ի դժոխս, և 'ի հիմունս երկրի: Իշխանն դիւաց հպարտացեալ, դատապարտեցաւ 'ի յարդարութենէ, և էջ 'ի յերկիր խաւարին, և մթին. առ երկիր աղջամղջին յաւիտենականի. ուր ո՛չ գոյ լոյս, և ո՛չ տեսանել զկենաց մարդկան: Դատապարտեցաւ իշխանն դիւաց, և հրեշտակք նորա պատերազմօղք ընդդէմ մ̄ր հրեշտակաց: Ինքն, և հրեշտակք նորա, հալածեցան 'ի հալածման միոյ խորձոյ 'ի լիճն, և խցեցան անդ 'ի բանտի: Լեալք օրինազանցք ընդդէմ ա̄յ, տանջին որդամբ ճանաչման, և չարչարին հրով դժոխոյ. որդն նոցա ոչ մեռանի, և հուրն նոցա ոչ շիջանի: Վասն հպարտութեան իշխանն դիւաց, և հրեշտակք նորա ստացան զասացեալս չարիս:

3. Ստահակեցաւ գազանն, և կորեաւ, և մատնեցաւ, զի ընդ հետևողաց իւրոց այրիցի 'ի հրոջ: Մեղանչօղք հրեշտակք, կապեցեալք հրեղինօք, և խաւարայնօք շղթայիւք, և կապանօք, մատնեցան 'ի դժոխս առ 'ի տանջիլ: Հրեշտակք լեալք օրինազանցք ընդդէմ ա̄յ, արտաքսեցան 'ի յերկնից, կապեցեալք յաւիտենականօք կապանօք չարչարելիք են: Զարչարին հրով, չարչարին ներգործութ̄բ իմացութե, և չարչարին ներգործութ̄բ կամաց: Զարչարին հրով, տեսանելով զիւրեանս ինքեանս յաղթեցեալս, և արգելեցեալս 'ի հրոյ, որ է ստեղծուած ստորնագոյն քան զիւրեանս ինքեանս: Զարչարին ներգործութ̄բ իմացութե, տեսանելով զիւրեանս ինքեանս թշուառս, և թարց աւարտման 'ի հրոյ 'ի դժոխս չարչարելիս, և ոչ երբէք ստանալոցս զփառս, և զճշմարիտ երջանկութի. այլ միշտ տանջելիս թարց փառաց, և երջանկութե. իսկ զո̄րս հրեշտակս, և զո̄րս մարդիկ, 'ի բնութե ստորնագոյնս քան զիւրեանս ինքեանս, ստացեալս զփառս, և զճշմարիտ երջանկութի, միշտ խնդալով, և 'ի յաւիտեան թագաւորելով 'ի յերկինս ընդ ա̄յ: Զարչարին ներգործութ̄բ կամաց: ոչ կարելով հասանիլ այնմիկ, զոր կամին, զորօրինակ ազատութե 'ի չարչարանաց, այլ կրել զայդ, զոր ոչ կամին, որպան զչարչարանս: Ուստի չարք հրեշտակք, և դեւք, որք ընտրեցին զչարն, և օրինազանցեցան ընդդէմ ա̄յ, յամէ կողմանէ չարչարին, և զգան զխստաբարոյագունեղս տանջանս:

4. Ստանայն թշնամին մարդկայնոյ սեռի, կարի յոյժ ջանայ վնասել մարդոյ, մանաւանդ, զի ածիցէ զնա առ մեղս, զանազանօք կերպիւք փորձելով զնա: Համարձակեցաւ փորձել և զՅս̄ ք̄ս որդին ա̄յ, զփրկիչն մեր, ասելով: Եթէ որդի ես ա̄յ, ասա զի քարինքս այսոքիկ հաց լինիցին: Մատթէի: 4. թիւ. 3. Եւ ասելով. Զայս ա̄մ քեզ տաց, եթէ անկեալ երկիրպագանիցես ինձ: Մատթէի: 4. 9. Որ համարձակեցաւ փորձել զՅս̄, ոչ դադարի փորձել զմեզ. փորձել կարէ, բռնադատել ոչ կարէ: Ամենակարօղն Յս̄ օգնէ իւրայնոցն, 'ի թշնամւոյ փորձեցելոց: Եւ տայ զզօրութի իւրայնոցն, և շնորհէ նոցա զարիութի, թշնամւոյ ընդդիմանալոյ, և զփորձութի նորա տանակոխ առնելոյ. քաջապէս զթշնամին յաղթելոյ, և կարի փառաւորապէս յաղթանակելոյ: Քանզի հաւատարիմ է ա̄ծ, և ոչ թողու զմեզ փորձիլ առաւել քան զկարն մեր. այլ առնէ ընդ փորձութե նաև զելս, զի կարասցուք տանիլ. ուստի քաջք ծառայքն ա̄յ, 'ի թշնամւոյ փորձեցեալք. օգնութ̄բն ա̄յ զօրացուցեալք, և ընդդէմ թշնամւոյ ամրացուցեալք, յաղթեցին զթշնամին, և ընկալան զպսակն. ամաչեցուցին զթշնամին, և փառաւորեցին զա̄ծ: Ած թոյլ տայ զմեզ փորձիլ առ հոգևոր օգուտ մեր, զի փորձիցիմք, և ունիցիմք զպատու փառս:

5. Յս̄ ք̄ս վասն մեր խա-

չե-

չեցելով, և 'ի խաչի հօր երկնայնոյ պատարագեցելով, բարձաւ իշխանութիւն սատանայի ։ Քանզի միածին որդին այ առնլով զմարմին, և ընդ մարմնոյ չարչարեցեալ 'ի խաչի, յաղթեաց զթշնամին, և զիշխանն այսր աշխարհի արտաքսեաց 'ի դուրս ․ և ապրեցոյց զմեզ 'ի զօրութենէ խաւարի, և անդրբաբերեաց 'ի յարքայութիւն որդւոյ սիրոյ իւրոյ, և մերկացուցանելով զիշխանութիւնս, և զզօրութիւնս, համարձակաբար անդրբաբերեաց, յայտնապէս յաղթահարելով զնա 'ի յիւրեան ինքեան ։ Արդ ուրեմն փրկիչն մեր Յս Քս աւերեաց զմահն, և շնորհեաց զկեանս, և զանապականելութիւն, յաղթանակելով 'ի խաչին մերկացուցեալ զթշնամին ։ Որդին այ առնլով զմարդկային բնութիւն երևեցաւ յաշխարհի ․ և ընդ առնելոյ մարդկայնոյ բնութեան չարչարեցեալ, աւերեաց զգործս սատանայի, և զօրացոյց զմարդիկ ընդդէմ գաւաճանութեանց, և խորամանկութեանց նորա ․ և մահուամբ որով մեռաւ, եղծեաց զնա, որ ունէր զհրամանն մահուան, այսինքն, զսատանայն ։ Ուրեմն զօրութբ Քի, ծառայքն այ 'ի սատանայէ փրկեցեալքն, միայն հաւատարիմք մինչև 'ի մահ, և ընդունին զպսակն կենաց, զօրութբ Քի քաջախրոք ծառայքն այ, յաղթեն, և յաղթահարեն զթշնամին ․ ամաչեցուցանեն զմերկացեալն, և ելանեն 'ի յերկինս ։

6․ Սովորական թշնամին մեր սատանայն զներքինս մտածմունս հոգւոյ մերոյ ոչ տեսանէ ․ սակայն շարժմամբ մարմնոյ, և նշանիւք ըղձից հաւաքէ զնա ։ Իսկ զգաղտնիս սրտից միայն նա ճանաչէ, որ է քննիչն սրտից որդւոց մարդկան, այսինքն Այ, մինչ նաև գաղտնիք սրտից կախին 'ի նմանէ ։ Արդ ուրեմն սատանայն, մինչ է թշնամի, կարի յոյժ կամի վնասել մեզ ․ սակայն ոչ կարէ ․ վասնզի կարողութիւն նորա է ենթ կարողութեան այ, որ է ամենակարող ․ ուստի թարց թոյլտուութեան այ ոչ կարէ վնասել ։ Քանզի եթէ այնքան կարէցէր վնասել, որքան կամի ․ ոչոքն 'ի սրբոց մնայցէր, որպէս ասէ սբն Օգոստինոս ։ Թէպէտ սովորական թշնամին մեր կարի յոյժ ջանայ փորձել զծառայս աստուծոյ ․ սակայն եթէ արիաբար չար կամաց նորա ընդդիմանայցեմք, ոչ յաղթէ, այլ յաղթի ։ Վասնզի կատարելապէս յաղթի հակառակորդն, և փորձիչն մեր, յորժամ միտն մեր 'ի փորձութիւս նորա ոչ համաքարշի առ հեշտութի, և առ հաւանութիւն, և 'ի մէջ նախատանաց ընկերի պահմանի 'ի գրանէ, և 'ի մէջ հարուածոց այ սանձահարի 'ի բամբասանէ, որպէս ասէ սբն Գրիգորիոս ։ Այսինքն յաղթի երբ ընդդիմանալով ներդրդմանց նորա, սանձեմք զցանկականն, և պաշտպանեմք զլեզուն ։

7․ Սբն Գրիգորիոս դերադանցապէս բացայայտէ զխորամանկութի սովորականի թշնամւոյ, և փորձչի մերոյ, ասելով ։ Նախ հակառակորդն մեր հայի 'ի բնութի իւրաքանչիւրոյ, և յետոյ դիմադրէ զօրաւորանս փորձութեան ․ Քանզի զոմն ըմբռնէ ուրախականօք, զոմն տրտմականօք, զոմն երկչոտականօք, և զոմն հպարտիւք բարուք ․ զի ուրեմն ծածուկ հակառակորդն դիւրաբար ըմբռնիցէ, զմերձաւորս խաբէութիւնս պատրաստէ կազմածոց ․ վասնզի բերկրութի ուրախութեան, մերձաւոր բերկրականաց բարուց, առաջադրէ զբղջախոհութի ։ Եւ զի տրտմութիւն դիւրաբար սահի 'ի բարկութիւն, տրտմականաց կարկառէ զմեղն վիճոյ ․ վասնզի երկչոտք երկնչին 'ի պատժոց, երկչոտաց սպառնայ զարհուրանս ։ Եւ քանզի տեսանէ զհպարտս փքանալ գովասանօք, զնոսա առ որսամանս կամիցի ․ քարշէ շողոքորթականօք օժանդակութեամբ ։ Ուրեմն լարէ զորոգայթ իւրաքանչիւրոց ըստ մոլութեք յարմարօք ։ 29․ 'ի մատ․ բարոյականաց ։ Խորամանկ թշնամին մեր ոչ

միայն ինքեամբ փորձէ զմեզ, այլ նաև նոքօք, որք են ընդ մեզ: Փորձչի մերոյ է սերմանել զչարիս. մերն է ոչ հաւանիլն: Եթէ նա ջանայ սերմանել զչարիս. մեք պարտիմք քաջապէս ընդդիմամարտել: Որքանիցս ընդդիմանամք նմա, և արհամարհեմք զներդրդմունս նորա. այնքանիցս յաղթեմք զնա, հաւաքեմք զօրդիւնս, դանձեմք 'ի յերկինս, փառաւորեմք զհրեշտակս, և զԱծ, որ յայցելանէ, զի մարտնչիցիմք, օգնէ զի յաղթիցեմք, և համահաստատէ, զի մի պակասիցիմք, պատուէմք:

8. Զուժդնութե սատանայի այսպէս խօսի Տէրն Յօհան ոսկեբերանն. նախ ծանր, և անյաղթելի է ուժդնութի սատանայի. և եթէ ամն արիութբ հանդուրժեալ իցէ նմա, 'ի յերկրորդում դացէ զնա տորնադոյն: Քանզի որքան առաւել ձաղեցեալ իցէ, առաւել թուլանայ, և պակասի: 'Ի վերայ Մատթէի: Զգխութե դիւաց այսպէս խօսի Տէրն Իզիդորոս: Դեւք եռապատկիւ սրամտութբ նախաձանաչման զօրանան, այսինքն, նրբութբ բնութե, փորձառութբ ժամանակաց, յայտնութբ վերնադունից իշխանութեանց: Յառաջնում մատենի զծայրագունեղէ բարւոյ: Նոյնն 'ի նոյնում տեղւոջ ասորաէ: Որքան մերձագոյն տեսանէ սատանայն զվերջն աշխարհի. այնքան անողորմաբար 'ի կիր արկանէ զհալածանս. զի որ զիւր ինքն տեսանէ շարունակաբար դատապարտելի, բազմապատկեսցէ ինքեան զընկերս, ընդ որս նուէրիցի դժոխայնոց հրոց: Նոյն Տէրն իզիդորոս ուսուցանէ: Սատանայն երբ խնդրէ խաբել զոմն, նախ նկատէ զբնութին իւրաքանչիւրոյ, և անտի մերձեցուցանէ, ուստի տեսանիցէ զմարդն ընդունակ առ մեղս: 'Ի յերրորդում մատենի զծայրագունեղէ բարւոյ: Նոյնն 'ի նոյնում տեղւոջ ասէ: Սատանայն է բզջախոհ օձն, որոյ եթէ գլխոյ, այսինքն, առաջնոյ ներդրդման ոչ լինի ընդդիմացուսն; բոլոր 'ի ներքնադունեղս սրտի, մինչ ոչ զգանի. ներսպրդի: Նոյնն 'ի նոյնում տեղւոջ ասէ: Ընդդէմ որոյ, զոր իւրացուցեալ է սատանայն, խստադոյն մոլեդնի, երբ ճանաչէ զիւր ինքն Ածայնով զօրութբ 'ի նմանէ բացամերժելի: Քաջաբար ընդդիմացիր, զի փառաւորապէս յաղթիցես:

## ԳԼՈՒԽ ԺԱ·

### Յաղագս մարդոյ, և յաղագս բանականի հոգւոյ:

1. Արձանօտաբար զեր ինչ տասցաք զմարդոյ, այժմ մասնաւորապէս ընձեռի զնմանէ: Յարմարաբար ընձեռի զմարդոյ յետ ընձեռման զսատանայէ, անողորմէ թշնամւոյ մարդոյ. որ է հեղինակ չարի, սկիզբն վատթարութե, թշնամի իրաց, ապականիչ աշխարհի, միշտ թշնամի մարդոյ. և որ լարէ զորոգայթս, պատրաստէ զանկանուսն, փորէ զխորխորատս, յարմարեցուցանէ զկործանմունս, խայթէ զմարմինս, խոցոտէ զհոգիս, ազդէ զչար խորհուրդս, գրգռէ զբարկութիւս, տայ զզօրութի ատելութե, առատորէ զմոլութիւս սիրոյ, սերմանէ զախտս, անուցանէ զխռովութիւս, վրդովէ զխաղաղութի, ցրուէ զիղձս, խանդարէ զմարդկայինս իրս. փորձէ զԱծայինս. և որ միշտ բախէ զնախատկզբունս բարիս, որպէս զվարժմունս առաքինութեց, և փութայ շիջուցանել զՏէս իւր 'ի յինքեան ծագման, գիտելով, թէ զայնոսիկ հիմնեցեալս կործանել ոչ կարիցէ: Յետ խօսակցութե զսատանայէ, ըմբռնաբար ճառի զմարդոյ. քանզի մարդն է, որ պարտի արհամարհել զթելադրութիս սատա֊

նա֊

տանայի, և առժամայն ընդդիմանալ փորձութեանց նորա, և քաջապէս ընդդիմամարտիլ ընդդէմ անողորմ նախանձու թշնամւոյ, և 'ի կիր արկանել զմեծ ուշադրութի՟ն, զի մի յաղթիցի, այլ յաղթիցէ, և լինելով յաղթօղ, ընդունիցի զպսակն, և զանմահական փառն:

2. Մարդն յետ հրեշտակի է ազնուագունեղ, և գերազանցագունեղ, ևևս ընտրելագունեղ ստեղծուած ա՟յ: Բայց 'ի հրեշտակաց, որք են պարզք տեսակք, չունեցօղք զնիւթ, և զկարգ առնիւթ, յաղթէ զհամայնս այլս ստեղծուածս, 'ի յընդհանրոջ դասեցեալս: Քանզի ունի զտեսակ, որ յաղթէ զհամայնս այլս տեսակս: Այլք տեսակք են նիւթականք, իսկ տեսակն մարդոյ է հոգևոր, ոչ արտածեցեալ 'ի նիւթոյ, այլ անընդմիջապէս ստեղծեցեալ 'ի յա՟յ: Տեսակն մարդոյ է բանական հոգին, առ պատկեր, և առ նմանութի՟ն ա՟յ ստեղծեցեալ, անմահ, և անբաժանելի, բոլորն 'ի բոլորոջ մարմնոջ, և 'ի յիւրաքանչիւրս մասունս ն՟ր, ունեցօղ զիմացութի՟ն, և զազատ կամս: Բանիւ բանականի հոգւոյ մարդն է իմացօղ, և կամեցօղ, և Տ՟ր արարողութեանց իւրոց: Եւ մարմինն մարդոյ է ազնուագունեղ, ունեցօղ զհամեմատականագունեղս անդամս, և ընդունակագունեղս առ ներգործութի՟ս, առ որս գտանին կարգաւորեցեալք: Մարմինն մարդոյ է ազնուագունեղ· վասնզի է մարմին յարմարեցուցեալ բանականի հոգւոյ, և համեմատեցուցեալ առ բանական հոգին, որ բանական հոգին 'ի մէջ տեսակաց մարմնոյ միաւորեցելոյ, է ազնուագունեղ: 'Ի յասացելոց երևի, թէ մարդն, փիլիքապէս խօսելով, իցէ բաղադրեցեալ 'ի մարմնոյ կազմեցելոյ, և 'ի բանականէ հոգւոյ, անմահէ, և անբաժանելւոյ:

3. Առաջին մարդն է Ադամ, և առաջին կինն Եւայ: Մարդն առ պատկեր, և առ նմանութի՟ն ա՟յ արարեցեալ, ունեցօղ 'ի յինքեան զնմանութի՟ն ստեղծողի իւրոյ: Տ՟ր ա՟ծ էառ զմարդն, և եդ զնա 'ի դրախտի բերկրութե՟ն, զի գործիցէր 'ի նմա, և պահպանիցէր զնա· մարդն փորձեցեալ 'ի սատանայէ, օրինազանց ընդդէմ ա՟յ մեղանչեաց: Ուստի Տ՟ր Ա՟ծ արտաքսեաց զնա 'ի դրախտէ բերկրութե՟ն, զի գործիցէր զերկիր, յորմէ առեցեալ է: Եւ արտաքսեաց զադամ, և զետեղեաց առաջի դրախտին բերկրութե՟ն զքերոբէ, և զբոցեղէն սուր, և գիւրաշրջելի, առ 'ի պաշտպանել զճանապարհն փայտի կենաց: Հոգին մարդոյ է պատուական: Եւ այս յայտ է յայնմանէ, զոր արար միածին որդին ա՟յ երկրորդ անձն ամենասրբոյ երրորդութե՟ն: Վասնզի անստեղծ բանն, միածին որդին ա՟յ, համագոյակիցն հօր, ա՟ծն յա՟յ, լոյսն 'ի լուսոյ, ծնունդն, և ոչ արարածն, առ 'ի փրկել զբանական հոգին մարդոյ և վասն մեր մարդկան, և վասն մերոյ փրկութե՟ն էջ 'ի յերկնից, և 'ի կուսական արգանդի ամենօրհնեցելոյ կուսին Մարիամու մարմնացաւ, և մարդ եղև, առնլով զմարդկային բնութի՟ն, և միաւորելով զնա ինքեան անձնաւորականաւ միաւորութե՟մբ, զի ա՟ծ, և մարդ իցէր մի անձն, մի անձնաւորութի՟ն, և մի ենթադրեալ ունեցօղ զերկուս բնութի՟ս, զա՟ծային, և զմարդկային, և կոյսն Մարիամ իցէր մայր ա՟յ:

4. Արդարութի՟ն որդին ա՟յ վ՟ն մարդոյ, և վասն փրկութե՟ն մարդոյ ունայնացոյց զիւր ինքն, առնլով զկերպարան ծառայի, և խոնարհեցոյց զիւր ինքն, լինելով հնազանդ մինչև առ մահ խաչի: Ա՟ծ խոնարհեցոյց զիւր ինքն, զի բարձրացուցանիցիւր մարդն: Էառ զչարչարելի, և մահուան ենթարկեցեալ բնութի՟ն, և ըստ առեցելոյ բնութե՟ն չարչարեցաւ, և մեռաւ, զի մարդն ազատեցեալ 'ի մահուանէ, և 'ի թշնամութենց այսր աշխարհի, 'ի յայսմիկ կենի կեայցէր կենիւ շնորհի, և յետ այսր կենի

'ի հանդերձելում կեայցէր կենիւ անչարչարելեաւ, և անմահիւ։ Որդին այ եղեալ մարդ ետ զարիւն իւր, զի փրկիցէր զմարդն. մեռաւ վասն մարդոյ, զի չարչարանօք, և մահուամբ իւրով 'ի խաչին, ազատիցէր զմարդն 'ի մահուանէ մեղաց, և 'ի մահուանէ դժոխոց։ Էջ 'ի յերկնից 'ի յերկիր, զի ելանիցէր մարդն 'ի յերկինս։ Շրջեցաւ, և աշխատեցաւ, զի մարդն ունիցիւր զհանգստութի, լուսաւորեաց, և ուսոյց, զի լուսաւորիցիւր մարդն աւետարանականաւ լուսով։ Ընտրեաց զառաքեալս, զի գործիցեն զփրկութի մարդկանց։ Կերտեաց զեկեղեցին, զի մի կորընչիցիւր մարդն. կացոյց զխորհուրդս, զի մարդն ընդունիցիւր զշնորհ, և զաճեցումն շնորհի։ Երթաց վերկինս, զի մարդն մտանիցէր 'ի փառս։ Զայնքան բարիս ետ մարդոյ վասն բանականի հոգւոյ ուրեմն է պատուականագունեղ։

5. Մարդն ոչ միայն ունի զարտաքինս, և զներքինս զգայութիս. այլ նաև ունի զիմացութի, և զկամս։ Եւ ոչ միայն ունի զզգայողական բաղձան, այլ նաև ունի զբանական բաղձան։ Եւ ոչ միայն ունի զերևակայութի, այլ նաև ունի զտեսակս իմանալիս։ Քանզի 'ի յերևակայութենէ ձևակերպէ զիմանալիս տեսակս, և զնո ընդունի յինքեան։ 'Ի ձեռն իմանալեաց տեսակաց իմանայ զճշմարտութիւն, և լինի վերահասու սկզբանց։ 'Ի սկզբանց գայ 'ի ճանաչումն եզրակացութե։ Ստուգապէս մակաբերելով զեզրակացութին 'ի սկզբանց, ստանայ զգիտութի։ Եւ առնելով զայս 'ի գերազանցի առարկայոջ, ստանայ զիմաստութի։ Խորհի զկանոնս, և ըստ կանոնաց առնէ զգործս։ Ըստ կանոնաց խորհեցելոց գործելով, ստանայ զարհեստս։ Ճանաչէ զվախճանն, և դատէ զյարմարս միջոցս առ ստացումն վախճանի։ Ասացելով կերպիւ գործելով, ստանայ զխոհեմութի։ Ուստի է ընդունակ ճանաչման սկզբանց, և է ընդունակ իմաստութե, գիտութե, խոհեմութե, և արուեստի։ Զայսոսիկ ամենեսեան ունի մարդն բարերարութբ բանականի հոգւոյ. ունեցողի զիմացութի, և վայելողի զլոյսն իմացողականութե։ Ասացեալք իրք երևին գոլ ազնիւք։ Ուրեմն բանական հոգին իմացողականն, և տրամաբանողականն, որոյ բարերարութեամբն մարդն հասանի վերոյասացելոց. է պատուականագունեղ։

6. 'Ի ձեռն կամաց մարդն կարէ սիրել զբարին. քանզի որպէս առարկայն իմացութե է ճշմարիտն, այսպէս առարկայն կամին է բարին. որպէս ուրեմն 'ի ձեռն իմացութե կարէ իմանալ զճշմարիտն. այսպէս 'ի ձեռն կամաց կարէ սիրել զբարին։ Եթէ ճանաչէ զճշմարիտ վախճանն, և սիրէ զնա. և ընտրէ զյարմարս, և զպատշաճս միջոցս, և հասանի վախճանի, է խոհեմ. եթէ ճանաչէ զիւրաւունն, և սիրէ զնա, և իւրաքանչիւրոյ հատուցանէ, որ է իւրն, է արդար. եթէ 'ի յայնմիկ, առ որ է ցասմնական մասն, դատէ զմիջոցն, և սիրէ զնա. և ոչ հակի առ աջ, և ոչ առ ահեակ. այլ շրջի 'ի միջին, յորում է ուղղութի. և համբերութեամբ տանի զներհակս իւր վասն առաքինութե, է արի։ Եթէ 'ի յայնմիկ, առ որ է ցանկական մասն, դատէ զմիջոցն, և սիրէ զնա, և շրջի 'ի միջին, է բարեխառն։ Ուրեմն յայնժամ է խոհեմ, արդար, արի, և բարեխառն։ Ապա ուրեմն յայնժամ 'ի նմա է խոհեմութի, արդարութի, արիութի, և բարեխառնութի, որք են առաքինութիք։ Ուրեմն յայնժամ 'ի նմա են առաքինութիք։ Ապա ուրեմն է ընդունակ առաքինութեց, որք են գերազանցք բարիք։ Իսկ մարդն է ընդունակ առաքինութեց բարերարութբ բանականի հոգւոյ, ունեցողի զիմացութի, և զկամս։ Ուրեմն բանական հոգին է պատուականագունեղ։

7. Մարդն ոչ միայն է ընդունակ

նակ գիտուն՟, իմաստուն՟, խոհեմուն՟ արուեստի, և առաքինուն՟ց · այլ նաև է ընդունակ արդարացուցչի շնորհի ա՟յ, որ է տեսական մասնակցութի ա՟ծայնոյ բնուն՟ · վասն զի մարդն օգնութե՟ն ա՟յ կարէ զօրացուցանիլ, և օգնիլ, զի սիրիցէ զա՟ծ 'ի շարժողականէ գերբնականէ, և սիրիցէ զնա սիրով բարեկամութե՟, և այսպէս լինիցի բարեկամ ա՟յ, և որդի նորա 'ի ձեռն որդեգրութե՟, և մի ինչ ընդ նմա 'ի սիրոջ, և 'ի ձեռն սիրոյ մասնակից ա՟ծայնոյ էութե՟ : Այսոքիկ լինին 'ի ձեռն Ա՟ծայնոյ սրբացուցչի շնորհի : Ուրեմն մարդն է ընդունակ ա՟ծայնոյ շնորհի, այնպէս զի 'ի ձեռն սիրոյ մնայցէ 'ի յա՟ծ, և ա՟ծ 'ի նմա, լինիցի տաճար հոգւոյն սրբոյ, և բնակարան ամենասրբոյ երրորդութե՟ · և զի հոգին նորա զուգակցիցի ա՟յ իբր սիրելի հարս սիրելւոյ փեսայի իւրոյ · մարդն է ընդունակ ա՟ից վերջասացելոց բարերարութե՟ բանականի հոգւոյ, ունեցողի զիմացութի, և զկամս : Ուրեմն մարդն, զորմէ է բան, և որ յետ հրեշտակի է գերազանցագունեղ ստեղծուած ամենակարողին ա՟յ, բարերարութե՟ բանականի հոգւոյ, որ է տեսակ մարդոյ, կարէ ճանաչել զա՟ծ, և սիրել զնա 'ի շարժողականէ գերբնականէ, և ընդունիլ զշնորհս նորա : Այսուրեմն բանական հոգին է պատուականագունեղ :

8. Մարդն, որ է ընդունակ սրբացուցչի շնորհի, որ է տեսակաւոր մասնակցութի ա՟ծայնոյ էութե՟, և որ է ընդունակ բարեկամութե՟, և գերբնականի սիրոյ ա՟յ, որով 'ի գերբնականէ շարժողականէ սիրիցէ զնա 'ի վեր քան զա՟մ ինչ, և սիրիցէ զնա 'ի բոլորէ սրտէ, 'ի բոլորէ անձնէ, 'ի բոլորէ մտաց, և 'ի բոլորէ զօրութե՟ իւրմէ, և զընկեր իւր իբրև զանձն իւր վասն սիրոյն ա՟յ · է նաև ընդունակ յաւիտենականի փառաց, կատարելոյ երանութե՟, և մշտնջենաւորի երջանկութե՟, և է ընդունակ լինի, յորում դէմյանդիման տեսանիցէ զա՟ծային էութի՟ն, և կատարելապէս սիրիցէ զա՟ծային բարութի՟ն, և վայելիցէ զա՟ծ 'ի յաւիտեան · քանզի իմացութի մարդոյ կարէ վերանալ 'ի ձեռն լուսոյ փառաց առ տեսումն ա՟յ դէմյանդիմանական, որով տեսութե՟ տեսանիցէ զա՟ծ ընդ էութի, այնպէս զի ա՟ծային էութի՟ն միաւորիցի իմացուն՟ մարդոյ իբրև ներատպեցեալ տեսակ, և բանն անստեղծ իբրև արտատպեցեալ տեսակ, և այսպէս իմացութի մարդոյ ունիցի զիր ինչ համարակ ընդ ա՟ծայնոյ իմացութե՟, այսինքն, զտեսակ ներտպեցեալ, և արտատպեցեալ, որ է ծայրագունեղ արժանապատուութի : Արդ մարդն ունի զայս բարերարութե՟ բանականի հոգւոյ : Ուրեմն բանական հոգին է պատուականագունեղ : Ո՛վ մարդ ճանաչեա ուրեմն զարժանապատուութի քո, և զպատուականութի հոգւոյ քո, և ուշադրաբար հոգա, զի մի կորուսանիցես զնա :

## ԳԼՈՒԽ : ԺԲ·

### Յաղագս կրօնի, և ներգործութեանց կրօնի :

1. Կրօնն է սրբազան կացութի զա՟ծ պաշտողաց ըստ օրինի կացուցանողի : Կրօնն մեր, յորում կեամք քրիստոնեայքս, է ա՟ք կացութի, կացուցեալ 'ի փրկչէն մերմէ Տեառնէ Յ՟սէ Ք՟սէ, որ է անստեղծ իմաստութի, միածին որդի ա՟յ, բանն անստեղծ, որով եղև ա՟մ ինչ · ասեմ սրբազան կատարելագունեղ կացութի, պարունակօղ 'ի յիւրեան ինքեան զհամայնս ցանկալիս բարիս, յորում մեք քրիստոնեայքս ; հոգւով պաշտօղքս զճշմարիտն ա՟ծ, զստեղծօղն աշխարհի, հետևօղքս նորոյ

նորոյ օրինի , և նորոյ կտակարանի , և որդւոց սորա եկեղեցւոյ , կերտեցելոյ յորդւոյն ա՟յ , զՃշմարիտն ա՟ծ զստեղծօղն , և զհամապահօղն ընդհանրոյ , յորմէ կախին համայնք իրք , ըստ աւետարանականի օրինի , որ է օրէն սիրոյ , սիրելութե , և բարեկամութե , պաշտեմք , և երկրպագեմք նմա , հաւատալով զխորհուրդն երրորդութե , և նեբմարմնութե , զխոնարհս աղաչանս ամենաքաւոյ ա՟յ մատուցանելով , վասն բարերարութեց յերկնից ընդունեցելոց զշնորհակալութիս մատուցանելով , զՅ՟ս Ք՟ս Ճշմարիտն ա՟ծ , և զՃշմարիտն մարդ հօր ա՟յ պատարագելով , զխորհուրդս նորոյ օրինի զորբացուցիչ շնորհն առբերօղս ընդունելով , և զՃշմարիտ երջանկութի , և զերկնային երանութին յուսալով :

2. Հեղինակն կրօնի մերոյ է Յ՟ս Ք՟ս որդին ա՟յ , Ճշմարիտն ա՟ծ , և Ճշմարիտն մարդ . քանզի է կրօն նորոյ օրինի , որ առեալ է մեզ Ք՟սէ : Կրօնն մեր է գերազանցագունեղ , մինչ հեղինակն նորա է գերազանցագունեղ : Ա՟ծ է գերազանցագունեղ . հեղինակն այսորիկ է ա՟ծ . ուրեմն հեղինակն սորա է գերազանցագունեղ : Դարձեալ այն հեղինակն է գերազանցագունեղ , որ է կարողագունեղ , իմաստնագունեղ , և բարեգունեղ - հեղինակն այսորիկ , մինչ է Տ՟րն մեր Յ՟ս Ք՟ս , Ճշմարիտն ա՟ծ , է կարողագունեղ , իմաստնագունեղ , և ամենաբարի . ապաուրեմն հեղինակն սորա է գերազանցագունեղ : Գործն գերազանցագունեղի հեղինակի է գերազանցագունեղ . կրօնն մեր է գործ գերազանցագունեղի հեղինակի , մինչ է գործ Ք՟ի գերազանցագունեղի . ուրեմն կրօնն մեր է գերազանցագունեղ : Կրօնն մեր յա՟մէ կողմանէ է գերազանցագունեղ : Է գերազանցագունեղ 'ի կողմանէ հեղինակի , քանզի է ա՟ծ : Է գերազանցագունեղ 'ի կողմանէ աղօթից , վասնզի շարադրեցեալ է 'ի Ք՟է : Է գերազանցագունեղ 'ի կողմանէ պատարագի , քանզի է Տ՟րն մեր Յ՟ս Ք՟ս որդին ա՟յ : Է գերազանցագունեղ 'ի կողմանէ խորհրդոց , վասնզի համաբերեն զորբացուցիչ շնորհն : Վերջապէս է գերազանցագունեղ 'ի կողմանէ վարձանի , քանզի երկինն առժամայն ստանալին :

3 Հոգևորք բարիք են բազմապատիկք 'ի կրօնի մերում . 'ի յայսմիկ ամենասրբոյ կրօնի է կատարեալ ճանաչումն Ճշմարտին ա՟յ , ստեղծողի երկնի , և երկրի . 'ի յայսմիկ ճանաչումն բարձրագունեղից խորհրդոց , 'ի յա՟յ մեզ յայտնեցելոց . 'ի յայսմիկ Ճշգրիտ քաղաքութիւն ա՟ծաբանականաց , և բարոյականաց , առաքինութեց . 'ի յայսմիկ է Ճարակն ընդդէմ ա՟մից մեղաց . 'ի ձեռն մկրտութե է սրբեղանելն ընդդէմ սկզբնական մեղաց . և 'ի ձեռն ապաշխարութե սրբեղանելն ընդդէմ ա՟մից ներգործականաց մեղաց : Ուստի 'ի յայսմիկ կրօնի է ջնջումն , և և թողութի մեղաց մեղաւորաց , պարտաւորապէս առ խորհուրդս այսր ամենասրբոյ կրօնի մերձեցաղաց . 'ի յայսմիկ ներհեղումն սրբացուցչի շնորհի , զմարդն ա՟յ համոյ առնողի , 'ի ձեռն խորհրդոց զորբացուցիչ շնորհ առբերողաց . 'ի յայսմիկ են խորհուրդք արդարոց , և մեղաւորաց , զառաջին շնորհն , կամ զաճեցումն նորա , առ նոսա պարտաւորապէս մատչողաց , համաբերօղք . 'ի յայսմիկ մարդն 'ի ձեռն մկրտութե վերածնանի որդի ա՟յ , և ժառանգ արքայութե երկնից . 'ի ձեռն ապաշխարութե վերանորոգի , և 'ի ձեռն այլոց խորհրդոց աճի 'ի շնորհի . 'ի յայսմիկ մարդն 'ի ձեռն բարեգործութեց , և ներգործութեց առաքինութեց գանձէ 'ի յերկինս . 'ի յայսմիկ հաւատացեալք սնանին մարմնով , և արեամբ ք՟ի . 'ի յայսմիկ տրամաբաշխումն շնորհաց ձրի տուեցելոց , այսինքն , 'ի յայսմիկ է շնորհ լեզուաց , շնորհ բանից , շնորհ մարգարէութեց , և շնորհ նշանաց :

4 Ներ֊

4. Ներգործութիւն Ածապաշտութեան կրօնի մերոյ է եռապատիկ, այսինքն, երկրպագութիւն, պաշտօն գերծառայութեան, և պաշտօն ծառայութեան։ Երկրպագութիւնն է, որով պաշտեմք զԱծ̅, ճանաչելով զնա վերինագոյնեղ Տր̅ մեր, և զմեզ բոլորովիմք ենթարկեցեալս ծառայս, 'ի վերաճանաչումն գերազանցագունեղի տէրութեան նորա 'ի վ̅ր̅ մեր, կրօնի մերոյ նմա զհաճոյագունեղ պատարագն մատուցանալովմին, զքարիս, զորս ոչ ունիմք, 'ի նմանէ խնդրելով, վասն բարերարութեանց 'ի նմանէ ընդունեցելոց զշնորհակալութիւս նմա մատուցանելով, զմեզ պարտիլ հնազանդիլ նմա, և զպատուիրանս նր̅ պահել խոստովանելով, զամենասուրբ անուն նորա գովաբանելով, և հաստատոյ, յուսոյ, և սիրոյ մաքուր հաստուցանելով նմա. պաշտօն գերծառայութեան է, որով զամենապանեցեալ Մարիամ կոյսն ծնօղն Ած̅, զմայրն փրկչին մերոյ Յս̅ի Ք̅ի, զհամայնս ստեղծուածս 'ի յարժանապատուութեան, 'ի շնորհի, 'ի սրբութեան, և 'ի փառս գերազանցօղն, և յաղթօղն, 'ի վեր քան զամ̅ս ստեղծուածս համարիմք, պատուեմք, և գովաբանեմք։ Ճանաչելով զնա դուստր հօր Ած̅, մայր որդւոյն Ած̅, և հարս հոգւոյն սրբոյ։ Պաշտօնն ծառայութեան է, որով զսուրբս, յաւիտենականի փառաց հասեալս որքան առ հոգին, և 'ի յերկինս ընդ Ած̅ երանեցելով կենիւ թագաւորօղս, իբրև զբարեկամս Ած̅ պատուեմք, զմիջնորդութիւս նոցա հայցելով. մեք որդիքս այսր ամենասրբոյ կրօնի, զպատկերն փրկչին պատուեմք պատուով նմա պարտաւորաւ, և զպատկեր Ածածնի պատուով նմա պարտաւորաւ, և զպատկերս սրբոց պատուով նոցա պարտաւորաւ։

5. 'Ի սրբազնագունի կրօնի մերում աներևոյթ գլուխն է Ք̅ս̅ կացուցիչն այսր կրօնի։ Քանզի հաստատեցեալք այսր կրօնի 'ի ձեռն Ճշմարտի հաւատոյ, և միութեան լինին խորհրդաւորք անդամք եկեղեցւոյ։ 'Ի ձեռն սիրոյ լինին կենդանիք անդամք։ Համայնք քրիստոնեայք 'ի ձեռն Ճշմարտի հաւատոյ միաւորեցեալք, և 'ի միասին առեցեալք բաղկացուցանեն զխորհրդաւոր մարմին, յորում գտանին կենդանիք անդամք, և մեռեալք անդամք, սակայն 'ի միասին առեցեալք բաղկացուցանօղք զխորհրդաւոր մարմին։ Հաստատեցեալք ունեցօղք զկեան շնորհի, և սիրոյ, են կենդանիք անդամք. իսկ 'ի մէջ մեղաց կեցօղքն, են մեռեալք անդամք։ Խորհրդաւոր գլուխն այսր խորհրդաւորի մարմնոյ է Տր̅ն մեր Յս̅ Ք̅ս̅, քանզի լուսաւորութեամբ հաւատոյ, և կեանն շնորհի է ք̅ն̅իւ տէրամբ մերով։ Սա է լոյսն աշխարհի լուսաւորօղն զամ̅ մարդ զեկեալն 'ի յայս աշխարհ. և 'ի լիութենէ սորա համայնք ընդունին զշնորհ։ Ուրեմն յայսմանէ 'ի յասացեալ խորհրդաւոր մարմինն իջանէ լուսաւորութեամբ հաւատոյ, որով միաւորեցեալք անդամք բաղկացուցանեն զասացեալ խորհրդաւոր մարմինն, և կեանն շնորհի, որով կեան անդամք կենին։ Ուրեմն Ք̅ս̅ է աներևոյթ գլուխն մեր ասացելով կերպիւ ընդ մեզ։ Տակաւին է ընդ մեզ 'ի ձեռն օգնականութեան իւրոյ, օգնելով մեզ առ ինքն վերադիմօղս։ Եւ ևս իրականապէս աներևութաբար է ընդ մեզ, 'ի յամենապատուելւոյ խորհրդոյ հաղորդութեան։

6. Երևելի գլուխն այսր սրբազնասրբոյ կրօնի, յորում մեք քրիստոնեայքս պաշտեմք զճշմարիտն Ած̅, է պապն Հռովմէական, փոխանորդն Յս̅ի, և աջորդն սրբոյն Պետրոսի, գլխոյն Առաքելոց։ Որ այսպէս համօղի։ Տր̅ մեր Յս̅ Ք̅ս̅ կերտեաց զեկեղեցին իւր 'ի վերայ սրբոյն Պետրոսի, նախ քան զմահ, և զյարութիւն իւր, ասելով նմա։ Դու ես վէմ, և 'ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցին իմ։ և դրունք դժոխոց զնա մի յաղթահարեսցեն։ Եւ տաց քեզ փականս արքայութեան երկնից։ Եւ զոր միանգամ կապեսցես յերկրի. եղիցի կա‿

կապեալ յերկինս ։ Եւ զոր արձակեսցես յերկրի, եղիցի արձակեալ յերկինս ։ Մատթէի ։ Գլուխ. 16. 18. Եւ յետ յարութեն ։ Արածեա զխաշինս իմ․ արածեա զոչխարս իմ ։ Յովհաննու ։ գլ. 21. 17. Ուրեմն սբն Պետրոս եղև փոխանորդ Քի․ իսկ պապն հռոմէական է աջորդ սրբոյն Պետրոսի․ ուրեմն է փոխանորդ Քի․ և համահետևապէս ՚ի տեղի Քի երևելի գլուխ այսր արբայնս սրբոյ կրօնի, ունեցող զփականս արքայութեն երկնից, կարօղն կապել, և արձակել զոր միանգամ կամի, հովիւն դառանց, և ոչխարացն Քի, ունեցօղն զմասնաւոր մերձակայութի հոգւոյն սրբոյ ՚ի յուսուցանելն, հովիւն հովուաց, և վարդապետն բոլորոյ աշխարհի, համակոչօղն, և ամփոփօղն ժողովոց, ունեցօղն զլիութի եկեղեցականի իշխանութեն, և տրամաբաշխօղն ներողութեց ։

7. Կրօնն մեր է ազնուագունեղ, և դերազանցագունեղ, ունեցող զգերազանցագունեղս ներգործութիւս, աղօթի, և պատարագի ։ Ներգործութի աղօթի կրօնի մերոյ է ազնուագունեղ․ քանզի է կարողագունեղ, և օգտակարագունեղ․ վասնզի արարեցեալ, որպէս պիտոյ է, վերացուցանէ զմիտ մեր, և զուգակցէ զնա ընդ այ, և շնորհէ նմա զվստահութի, զի համարձակեսցի խօսիլ ընդ Թագաւորի ամենամեծի վայելչութեն, և ունկնդրել նմա զկիրառութէ յաւիտենականի փրկութեն մերոյ, և արարեցեալ որպէս պիտոյ է, առընկալնու զթողութի մեղաց, զօգնութիւնն աստուծոյ առ ՚ի կատարել զկամս նորա, զարդարացուցումն մեր, և զսրբացուցիչ շնորհն, զորդիութի այ ըստ որդեգրութեն, և զժառանգութի յաւիտենականի կենի, և արարեցեալ որպէս պիտոյ է, առնէ, զի հոգին մեր, ՚ի սիրոջ աղօթօղն, և ընդ ամենակարողն Այ խօսօղն նաև ՚ի ճանապարհի ներգործականապէս վայելեսցէ զած խոկմամբ, և սիրով, և երանութբ ճանապարհորդաց, ՚ի շնորհի այ գոյացողաց յարմարողաւ ։ Ներգործութի պատարագի կրօնի մերոյ է ազնուագունեղ․ վասնզի մատուցանելով այ զպատարագ կարի յոյժ ընդունելի, այսինքն, զնոյն ինքն միածին սիրելի որդին նորա, ՚ի միասին ընդ առեցելոյ մարդկութե, անձնաւորականաւ միաւորութբ միաւորեցելոյ ընդ բանի, հաշտեցուցանէ զած, ընդունի զթողութի, և զխաղաղութի, ստանայ զշնորհ, վճարէ վասն կենդանեաց, և վն մեռելոց, երևեցուցանէ զարիւնաւոր պատարագն ՚ի սեղանի խաչի մատուցեալն, և արդիւնաւորի մեզ, ՚ի շնորհի այ գոյացողաց զյաւիտենական կեանն ։

8. ՚Ի կրօնի մերում վերափայլէ աւետարանական լոյսն, և ճառագայթէ աւետարանական պայծառութի ։ Վասնզի վարդապետութի մեր է աւետարանն, զոր ուսոյց մեզ ներմարմնացեալ որդին այ բերանով իւրով ։ Արդ ուրեմն ՚ի կրօնի մերում է աւետարանական քարոզութի, բացայայտող մեզ զխորագունեղս խորհուրդս, ուսուցանելով մեզ զկամս այ, ցուցանելով մեզ զտգեղութի մեղաց, զպատուականութի, և զարժանաւորութիւն շնորհի, և ցուցանելով մեզ զճանապարհն յաւիտենականի փրկութեն ։ Քարոզութի մեր է քարոզութի ածաշնչոյ ածաբար բացայայտեցելոյ ։ ՚Ի կրօնի մերում է վարդապետութի առաքելոց ՚ի ներշնչմանէ հոգւոյն սրբոյ խօսողաց, և զածայինս աւետարանողաց, և զերկնայինս հրատարակողաց, և ածաբար բացայայտեցելս քարոզողաց ։ ՚Ի կրօնի մերում է վարդապետութի եկեղեցւոյ, ՚ի Քսէ կերտեցելոյ, որ է տուն այ, սիւն, և հաստատութի ճշմարտութեն ։ ՚Ի կրօնի մերում է վարդապետութի ժողովոց, հոգւով սրբով հաւաքեցելոց, և ՚ի սբոյ եկեղեցւոյ համահաստատեցելոց ։ ՚Ի կրօնի մերում է վարդապետութի սրբոց հարց, ՚ի հոգւոյն սրբոյ լուսաւորեցելոց ։

՚Ի

Ի կրօնի մերում է նաև պահեցողութիւն 'ի մսոյ , և խստակրօնք ծոմապահութիւնք առ 'ի սանձահարել զմարմին մեր , և առ 'ի վճարել զվս մեղաց մերոց ։ Ճանաչեա զպատուականութիւն կրօնի քո , և այնպէս կեաց 'ի նմա , զի հաճոյասցիս ԱՅ ։

## ԳԼՈՒԽ ։ ԺԳ․

### Յաղագս Աղօթից ։

1․ Աղօթն է գերազանցագունեղ , և ազնուագունեղ ներգործութիւն կրօնի ։ կրօնն է , զի աղօթիցեմք , ուստի աղօթն է զարդ կրօնի ։ Աղօթն է վերացումն մտի առ ԱԾ , և զուգակցումն հոգւոյ ընդ ստեղծողի իւրոյ , վասնզի աղօթօղքս խօսիմք զԱԾ , և սիրեմք զնա ։ Խօսիմամբ մտօն մեր վերանայ առ ԱԾ , և սիրով հոգին մեր միաւորի ընդ ԱՅ ․ ուստի մատչօղքս առ աղօթս պարտիմք սիրել , զի խօսիմամբ լինիցի վերացումն մտի առ աստուած , և սիրով լինիցի միաւորումն հոգւոյ ընդ աստուծոյ , այնպէս աղօթել պարտիմք , զի ստանայցեմք , և արդիւնաւորիցիմք , 'Ի ձեռնպարտաւորի խնդրուածոյ ստանամք , և 'ի ձեռն սիրոյ արդիւնաւորիմք ։ Աղօթն է խօսակցութիւն մարդոյ ընդ ԱՅ ։ 'Ի ձեռն խնդրուածոյ , և 'ի ձեռն շնորհակալութեան խօսի մարդն ․ իսկ 'ի ձեռն ունկնդրութեան քարոզութեն խօսի ԱԾ ․ դարձեալ 'ի ձեռն խնդրուածոյ խօսի մարդն , և 'ի ձեռն ներշնչման խօսի ԱԾ ։ 'Ի յաղօթի հանդերձ սիրով նաև է համախօսակցութիւն սիրոյ ։ Մարդն սիրօղն զԱԾ խօսի ընդ ԱՅ , և ԱԾ սիրօղն զմարդ խօսի ընդ մարդոյ ։ Աղօթն է ամենամեծ արժանապատուութիւն մարդոյ , մինչ է սրտակից խօսակցութիւն մարդոյ ընդ ԱՅ , ծառայի ընդ տեառն , ենթարկեցելոյ ընդ Թագաւորի մեծվայելչութեան , որդւոյ ընդ հօր , բարեկամի ընդ բարեկամի , և հարսի ընդ փեսայի , զամենամեծէ զիրողութէ , այսինքն , զիրողութէ յաւիտենականի փրկութեան ։

2․ Ներգործութիւն աղօթից է մեզ հարկաւորագունեղ ։ Հարկաւորագունեղ 'ի կողմանէ բարեաց , զորս խնդրելոցք եմք , որոց կարօտիմք , և նաև հարկաւորագունեղ 'ի կողմանէ բարեաց խնդրեցելոց , և ընդունեցելոց , Է հարկաւորագունեղ 'ի կողմանէ բարեաց , զորս խնդրելոցք եմք ․ վասնզի հարկաւորագունեղ միջոց առ 'ի ստանալ զբարիս , զորս խնդրեմք , է աղօթն ։ Քանզի ամենակարօղ ողորմածն ԱԾ , յորմէ են համայնք բարիք , մինչ է աղբիւրն ամից բարեաց , խոստացաւ խնդրողի , ասելով ։ Խնդրեցէք , և տացի ձեզ ․ հայցեցէք , և գտջիք ․ բախեցէք , և բացցի ձեզ ։ Զի ամ որ խնդրէ , առնու ․ և որ հայցէ , գտանէ ․ և որ բախէ , բացցի նմա ։ Մատթէի ։ 7․ թիւ․ 7․ Ողորմած , և գթածն ԱԾ , որ է աղբիւրն ամից բարեաց , ոչ միայն հաճի , զի խնդրիցեմք , այլ նաև վասն անհնոյ , և ծայրագունեղի բարութեան իւրոյ , կամի զխնդրուածն մեր դոլ գործաւոր միջոց , զի ընդունիցիմք ։ Ներգործութ աղօթից է հարկաւորագունեղ նաև 'ի կողմանէ խնդրողաց , և ընդունողաց զբարիս ․ վասնզի պաշտօնն երախտաճանաչութեան պահանջէ , զի ճանաչիցեմք , և խոստովանիցիմք զընդունեցեալս բարերարութիւնս , և զպարտաւորս շնորհակալութիւնս մատուցանիցեմք բարերարի մերոյ վս բարերարութեանց ընդունեցելոց ։ Ուստի յայտ է , թէ ներգործութիւն աղօթից իցէ հարկաւորագունեղ մեզ ։

3․ Աղօթքն մեր պարտաւորապէս արարեցեալ դտանի կարողագունեղ ։ Կարողութիւն , և գործաւորութիւն աղօթից մերոց յառաջա-

գայի 'ի խոստմանէ այ̄ ։ Խոստումն այ̄ է արարչագործ . քանզի ած̄ որպէս է Ճշմարտութի̄ , այսպէս է հաւատարիմ , և Ճշմարտախօս ։ Այ̄ , զի է բարի , է ողորմած , և գթած ։ Եւ քանզի է ողորմած , և գթած , խոստացաւ ։ Եւ քանզի է հաւատարիմ , և Ճշմարտախօս , առնէ , զոր խոստացաւ ։ Խոստացաւ ընկալնել աղօթից մերոց պարտաւորապէս արարեցելոց ։ Ուրեմն աղօթից մերոց պարտաւորապէս արարեցելոց ընկալնէ ։ Յայտ է , թէ խոստացեալ իցէ ընկալնել աղօթից մերոց պարտաւորապէս արարեցելոց ։ Վասնզի ամենաՃշմարտախօս Տրն̄ մեր Յս̄ Քս̄ ասաց 'ի սրբում աւետարանին ։ Եւ զամ̄ ինչ , զոր խնդրիցէք յաղօթս հաւատովք , առնուցուք ։ Մատթէի ։ 21 . Թիւ . 22 . Եւ այլուրեք ասաց ։ Ամէն ամէն ասեմ ձեզ , զի զորինչ խնդրիցէք 'ի հօրէ իմմէ յանուն իմ , տացէ ձեզ , խնդրեցէք և առնուցուք , զի ուրախութի ձեր լցեալ իցէ ։ Յօհաննու ։ 16 . Թիւ . 23 . Նաև ասի աղօթք խոնարհեցուցանողի զինքն զամպս խուզէ . և մինչև մերձեսցի , ոչ մխիթարեսցի . և ոչ իջցէ , մինչև բարձրեալն հայեսցի ։ Էկլէսիկ̄ ։ 35 . Թիւ . 21 . Ուստի ասէ սբ̄ն Օգոստինոս ։ Աղօթքն եթէ է մաքուր , եթէ իցէ սր̄ , Թափանցելով զերկինս , ոչ յետադառնայ դատարկ ։ Ուրեմն աղօթքն մեր պարտաւորապէս արարեցեալն , է կարողագունեղ , և արարչագործագունեղ , ունեցօղ զարարչագործութիւն 'ի խոստմանէ այ̄ ։

4 . Խնդրուածն 'ի յաղօթս առնելի է որպէս փրկիչն մեր ուսոյց , 'ի յաւետարանի , ասելով ։ Խնդրեցէք նախ զարքայութի̄ այ̄ , և զարդարութի̄ նորա , և այդ ամ̄ յաւելցի ձեզ ։ Մատթէի ։ 6 . Թիւ . 33 . Խնդրելի է 'ի յերկնայնոյ հօրէ մերմէ , զի սբ̄ եղիցի անունն նորա 'ի վերայ մեր , այսինքն , զի շնորհիցէ մեզ կատարելով Ճանաչմամբ Ճանաչել զինքն , և Ճշմարտիւ սիրով սիրել զնա , սրբացուցանելով զմեզ սրբացուցչիւ շնորհիւ ։ Խնդրելի է , զի եկեսցէ արքայութի̄ նորա , այսինքն , զի Թագաւորիցէ 'ի վերայ մեր աստ շնորհիւ , և բարեկամութբ̄ , և 'ի յերկինս փառօք , և երանութբ̄ , առնելով զմեզ մասնակիցս շնորհի , և փառաց իւրոց . Խնդրելի է , զի կատարեսցի կամք նորա 'ի մեզ , որպէս յերկինս , և 'ի յերկրի , այսինքն , զի տացէ մեզ զօգնութի̄ հնազանդելոյ նմա բոլորապէս , և պահելոյ զհամայնս պատուիրանս նորա ։ Խնդրելի է , զի տացէ մեզ զհաց մեր հանապազորդն , զհոգևորն , և զժամանակաւորն , այսինքն , զի առնիցէ զմեզ պտղաբերաբար լսել զբանն այ̄ , կեալ 'ի շնորհի , արժանապէս ընդունիլ զհաղորդութի̄ն , և ունիլ զբաւականութի̄ կենի ։ Խնդրելի է , զի Թողուցու մեզ զպարտս մեր . շնորհելով մեզ զԹողութի̄ մեղաց մերոց ։ Խնդրելի է , զի մի տանիցի զմեզ 'ի փորձութի̄ , տալով մեզ զզօրութի̄ ընդդիմանալոյ փորձութեց ։ Վերջապէս խնդրելի է , զի փրկիցէ զմեզ 'ի չարէ , և յամ̄ մեղաց ։

5 . 'Ի յաստացելոց երևի օգտակարութի̄ աղօթից ։ Վասնզի աղօթքն պարտաւորապէս արարեցեալ տանայ զաղատութի̄ 'ի չարէ . զա̄ծային օգնականութի̄ ընդդիմանալոյ փորձութեց , և յաղթելոյ զԹշնամին . զԹողութի̄ մեղաց . զմասնաւոր նախախնամութի̄ն այ̄ , որքան առ բաւականութի̄ կենի . զլուսաւորութի̄ մտաց , զհամապահութի̄ , և զսնուցում̄ հոգևորի կենի . զա̄ծային օգնութի̄ն հաւատարմաբար կատարելոյ զկամս այ̄ , և զպատուիրանս նորա պահելոյ . զարքայութի̄ն այ̄ 'ի վերայ մեր 'ի շնորհի , և 'ի փառս . զսրբացուցիչ շնորհն , զբարեկամութի̄ն այ̄ , և զորդիութի̄ նորա ըստ որդեգրութե̄ , և զժառանգութի̄ն յաւիտենականի կենի ։ Աղօթքն արարեցեալ բորբոքեցելով սիրով , լուսաւորէ զմիտն . համահաստատէ զհաւատն ,

հաւատն, զօրացուցանէ զյոյսն, վառէ զսէրն, հաստատուն պահէ զառաքինութիս, զխոհեմութիւն, զարդարութիւն, զարիութիւն, զբարեխառնութիւն, զխոնարհութիւն, զառատաձեռնութիւն, զհեզութիւն, զպահեցողութիւն, զգաստութիւն, զջերմեռանդութիւն, և զայլս· չիջուցանէ զբոցս ցանկութե, մաքրէ զսիրտ, օգնէ ողջախոհութե, աճեցուցանէ զշնորհն, և գանձէ 'ի յերկինս: Առնէ զհոգևոր հարսն մաքուր, և ողջախոհ սիրով զուգակցեալն սիրեցելոյ իւրում, 'ի ճանապարհի վայելել զիւր հոգևոր ամենասիրելի փեսայն:

6. Աղօթքն պարտաւորականս արարեցեալ· աղօթողի է յօժանդակութի, այ աղօթից լսողի, ընդունելի պատարագ, և դիւացդծաւայս այ փորձել ջանացողաց, դառն գանահարումն Աղօթքն պարտաւորականս արարեցեալն, ջերմեռանդ հոգւոյ սիրողի զորբակացութի, է օգնութի, բարւոյ հրեշտակի զմեզ առ առաքինութիս յորդորողի, է սփոփումն, բանսարկուի զվասս թելադրութիս առնողի, է պատիժ, այ զջերմեռանդ, և զբորբոքեցեալ աղօթքն սիրողի, հաճոյ ծառայութի, և ապաշխարութե ամենաբերոյ կրօնի մերոյ, յորում պաշտեմք զած, և զաղաչանս մերս մատուցանեմք նմա, բոլոր գովուի, կատարեալ փառք, ճշմարիտ յոյս, և անապականեցեալ առողջութի: Երբ պարտաւոր աղթօքն մատուցանի, փախչի ցանկութիւն, բացագնայ բղջախոհութիւն: Մեծ է զօրութի մաքուր աղօթից: Վասնզի կակղացուցանէ զխստութի սրտի, բարեխառնէ զդառնութի, և քաղցրացուցանէ զծոմապահութի: Քանզի որպէս թարց ըմպելւոյ ոչ է լիակատար ճաշակումն, այսպէս և ծոմապահութին թարց ճաշակման աղօթից զհոգին ոչ կարէ կատարելապէս սնուցանել, որպէս ասէ սբն Օգոստինոս: Որպէս ծոմապահութին առողջացուցանէ զկիրս մարմնոյ, այսպէս աղօթքն առողջացուցանէ զժանտացաւութիւս մտաց, փախուցանելով զվասս խորհրդս, և արգելլով զունայնս կամեցմունս:

7. Զի աղօթքն լինիցի ընդունելի, և հաճոյ, վերախնդրին թէութիք: Վասնզի խնդրի, զի իցէ խոնարհ, մտադիր, ջերմեռանդ, պարկեշտ, յաճախ, և յարատևօղ: Խնդրի խոնարհութի· քանզի ած հայի 'ի խոնարհս, և հակառակ կայ հպարտաց: Խնդրի մտադրութի, զի պատուէիցի ած, և աղօթքն լինիցի գովելի: Վասնզի զայնս աղօթս ած ոչ լսէ, որոց մարդն, երբ սաղմոսէ, ոչ լինի մտադիր, որպէս ասէ սբն Գրիգորիոս: Խնդրի ջերմեռանդութի, զի աղօթքն լինիցի բորբոքեցեալ: Խնդրի պարկեշտութի, զի գերապատուէիցի ած: Պարտի գոլ յաճախ; զի լինիցի միշտ ստացօղ զբարերարութիս: Վասնզի միշտ կարօտիմք օգնութե այ, և բարերարութեց նորա: Պարտի գոլ յարատևօղ, զի կարիցէ ընդունիլ զպասկ: Խնդրի բարի դիտաւորութի, զի մի ընկալեալ լինիցի վարձն ունայնից փառաց: Աղօթքն լինիլ պարտի, որպէս պիտոյ է, և ոչ վատաբար· վասնզի որք չարաչար խնդրեն, ոչ ընդունին, այլ մաշին 'ի ցանկութիս իւրս: Բայց յորժամ աղօթքն է հաւատարիմ, և խոնարհ, և ջերմեռանդ, թարց երկբայութե զերկինս թափանցէ· ուստի ասացեալ է, թէ դատարկ յետադառնալ ոչ կարիցէ: Եւ 'ի յականջս ստեղծողի կարի յոյժ գովաբանի աղօթքն այն, որ ջանայ բարեխօսել և ևս վասն թշնամեաց, որպէս ասէ սբն Գրիգորիոս: Ուստի աղօթելի է բարեպէս, և որպէս պիտոյ է:

8. Աղօթքն որքան առ խնդրուածն, որով աղօթօղքս խնդրեմք 'ի յայ զբարերարութիս, կոչի հայցումն: Իսկ որքան առ ճանաչումն, որով խորհիմք զբարերարութիւնս այ, և ճանաչեմք զմեզ պարտաւորս, և ջանամք որքան կարեմք համապատասխանել բարերարութեց ընդունեցելոց, 'ի ձեռն սիրոյ և

հաւատարմութեան, կոչի չնորհակալութիւն: Բայց ըստ որում աղօթօղքս 'ի խնդրուածոջ, և 'ի հայցման ներկայացուցանեմք հօր ա՟յ զարդիւնս Ք՟ի, և զչարչարանս նորա, սոյն աղերսանք: Եւ ըստ որում աղօթօղքս 'ի յաղօթս գովաբանեմք զկատարելութիւնս ա՟յ, սոյն գովասան Աճայնոյ անուանն. արդ ուրեմն 'ի յաղօթս խնդրեմք, աղերսեմք, զշնորհակալութիւս մատուցանեմք, և զամենասուրբ անուն տեառն գովաբանեմք: Երբ զասացեալս կատարեմք մտօք, սոյն մտածական աղօթք: Բայց երբ նաև արտաբերեմք ձայնիւ, սոյն ձայնաւոր աղօթք: Վասն յորդորելոյ զհաւացեալս առ ջերմեռանդութիւն, և առ հրատարակ ա՟ծպաշտութիւն, և առ յայտնի երկրպագութիւն ամենասրբոյ անուան նորա, օգտակարագունեղ է ձայնաւոր աղօթքն, և այն, որ է հանդերձ ջերմեռանդութեամբ, և պատուելի երկրպագութեամբ: Աստի պաշտօնեայք եկեղեցւոյ 'ի դասի ձայնաւորաւ աղօթիւ աղօթելով, և երգելով գովաբանեն զամենասուրբ անուն տեառն: Ուրեմն յաճախապէս աղօթեա, և սիրեա զընտանեկկից խօսակցութիւն ընդ ա՟յ, զի շրջիցիս առաջի նորա, և կարիցես լինիլ կատարեալ:

## Գ Լ Ո Ւ Խ: ԻԴ

### Յաղագս պատարագի:

1. Կրօնն ոչ միայն ընդունի զաղօթս, այլ նաև զպատարագն: Ուստի որպէս ոչ կարէ գոլ կրօն թարց աղօթից, այսպէս և ոչ կարէ գոլ թարց պատարագի: Վասնզի աղօթիւք, և պատարագաւ պաշտեմք զա՟ծ, և երկրպագանեմք նմա: Վասն այսորիկ կարի վայելչաբար յետ աղօթից ընձեռի զպատարագէ: Պատարագն է ընծայ, զոր մատուցանեմք ա՟յ 'ի վերաձայնչումն ծայրագունեղի տէրութեան նորա 'ի վերայ մեր: Արդ ուրեմն մատուցանօղքս զպատարագն, գիտեմք նշանակել, և խոստովանիմք զաստուած գոլ վերնագունեղ տէրն մեր, զստեղծօղն, և զհամապահօղն մեր, և զունեցօղ ծայրագունեղ տէրութիւն 'ի վերայ մեր իսկ զմեզ գոլ բոլորովիմք ենթարկեցեալս նմա, և զմեզ ամենևին կախիլ 'ի նմանէ, և 'ի գոլն, և 'ի համապահիլն, և 'ի գործելն: Այն նոյն ինքն, որ կացոյց զամենասուրբ քրեստոնեայ կրօնն մեր, և ուսոյց մեզ զկերպն աղօթելոյ, և զբարերարութիւս յա՟յ աղերսէ ա՟մից բարեաց խնդրելոյ, կացոյց և զպատարագն մեր, այսինքն, փրկիչն մեր Յ՟ս Ք՟ս Ճշմարիտն ա՟ծ, և Ճշմարիտն մարդ.

2. Պատարագն մեր է գերազանցագունեղ, և հօր ա՟յ հաճոյագունեղ. վասնզի նոյն ինքն փրկիչն մեր Յ՟ս Ք՟ս, միածին որդին ա՟յ, Ճշմարիտն ա՟ծ, և Ճշմարիտն մարդ, որ կացոյց զպատարագն մեր, է նաև պատարագ մեր. այն նոյն, որ մատոյց զինքն հօր ա՟յ արիւնահեղ պատարագ 'ի սեղանի խաչին, և ջնջելով զձեռագիրն վձռոյն, առբևեռելով զայն խաչին, մերկացուցանելով զիշխանութիւս, և զպետութիւս, հաշտեցոյց զմեզ ընդ ա՟յ, և գործեաց զփրկութիւն մեր, յաղթանակեաց 'ի խաչին, կացոյց զքահանայութիւն նորոյ կտակարանի, և ետ զիշխանութիւն քահանայից նորոյ կտակարանի, մատուցանել զինքն 'ի վերայ խորանի հօր ա՟յ զանարիւնահեղ պատարագ միայն զենեալ զօրութեամբ բանից սրբագործութեան, վասն կենդանեաց, և վասն մեռելոց, և վասն փրկութեան աշխարհի: Մինչ ուրեմն պատարագն մեր է նոյն, որ մատուցաւ 'ի խաչին, այսինքն, տէրն մեր Յ՟ս Ք՟ս հանդերձ ա՟ծութեամբն և մարդկութեամբն. և պատարագն մատուցեալն 'ի խաչի լեալ է գերազանցագունեղ, և հաճոյագունեղ ա՟յ, պարտարագն մեր է գերազանցագու-

ղունեղ, և հաճոյագունեղ ա՟յ։

3. Տ՟րն, և փրկիչն մեր Յ՟ս Ք՟ս, որ միանգամ զիւր ինքն 'ի սեղանի խաչին, միջեցելոյ մահուան մատոյց, սիրեցելոյ հարսի իւրոյ սրբոյ եկեղեցւոյ եթող զերևելի անարիւնահեղ պատարագն, որով երևեցուցանիցիւր այն արիւնահեղն։ Եթող 'ի յեկեղեցւոջ զայս անարիւնահեղ պատարագն, զի յիշատակն այնորիկ արիւնահեղի մնայցէր մինչև 'ի վերջն աշխարհի. և փրկաւէտ զօրութի նորա մերձեցուցանիցիւր 'ի թողութի մեղաց օր ըստ օրէ 'ի մեզ գործեցելոց։ Արդարև քահանայ ըստ կարգի մելքիսեդեկի զիւր ինքն 'ի յաւիտեան կացուցեալ յայտարարեալ, զմարմին, և զարիւն իւր ընդ տեսակաւ հացի, և գինւոյ հօր ա՟յ մատոյց, և հրամայեաց առաքելոց, և 'ի քահանայութե նոցա կատարանի աջորդաց նոցա, զի մատուցանիցէին։ Որպէս փրկիչն մեր կացոյց զիւր ինքն նոր պասէք, 'ի յեկեղեցւոջ 'ի ձեռն քահանայից ընդ երևելեաց նշանաց պատարագելի, յիշատակ անցման իւրոյ յայսմ աշխարհէ առ հայր։ Այս մատուցումն նորոյ կտակարանի 'ի խորանի, ոչ իւիք անարժանութբ, կամ չարութբ մատուցանողաց արատաւորիլ կարէ։ Վասնզի է մատուցումն այն, որ ըստ մաղաքիայի, 'ի հեթանոսս մեծի անուան Տ՟ն յամ տեղւոջ մատուցանելի էր։ Ուստի է այն մատուցումն, որ 'ի ձեռն զանազանաց նմանութեց պատարագաց 'ի ժամանակի բնութե, և օրինի ձևակերպեցեալ էր, իբրև այնոցիկ ա՟մից աւարտումն, և կատարումն, համագրկող զհամայնս բարիս 'ի ձեռն այնոցիկ նշանակեցեալս։

4. Պատարագն մեր է ստացողական. վասնզի 'ի ձեռն հաճոյագունեղի մատուցման այսորիկ, 'ի հօրէ ա՟յ զբազումս բարերարութիս ստանալ կարեմք։ Քանզի հայրն ողորմութեց, ընդունելով զպատարագն անհնոյ գնոյ, շնորհէ զբարերարութիս խնդրեցեալս յայնց, որք մատուցանեն։ Է նաև վճարողական, Վասնզի մատուցանօղքս զպատարագս զայս, և ստանամք զթողութի, և ազատիմք 'ի պատժոց։ Արդարև երևելի պատարագս այս, է քաւարար ոչ միայն վասն կենդանեաց, այլ նաև վասն մեռելոց։ Քանզի 'ի յայսմիկ ա՟ծայնում նուիրման, որ կատարի 'ի պատարագի, պարունակի այն նոյն ինքն Ք՟ս, և մատուցանի անարիւնահեղաբար, որ 'ի սեղանի խաչի միանգամ արիւնահեղաբար մատոյց զիւր ինքն։ Ուստի պատարագս այս ճշմարտապէս է քաւարարողական, և նովաւ լինի, զի մերձեցօղք առ ա՟ծ ճշմարիտ սրտիւ, և ուղիղ հաւատով, երկիւղիւ, և պատկառանօք, զղջացեալք, և ապաշխարօղք ստասցին զողորմութի, գտցեն զշնորհ 'ի յօգնութե 'ի դէպ ժամանակի։ Վասնզի այսու մատուցմամբ Տ՟րն մեր հաշտեցեալ, զշնորհ, և զպարգև ապաշխարութե պարգևեալ թողու զչարագործութիս, և զմեղս նաև մեծամեծս. քանզի է մին, և նոյն նուէրն, նոյնն է այժմ մատուցանեղն պաշտօնատարութբ քահանայից, որ զիւր ինքն յայնժամ մատոյց 'ի խաչին, միայնով բանիւ մատուցանելոյ զանազան։ Վասն որոյ ոչ միայն վասն մեղաց, պատժոց քաւարարութե, և այլոց հարկաւորութեց կենդանեաց, այլ ևս վասն մեռելոց տակաւին 'ի ք՟ս ոչ լիապէս մաքրեցելոց, վայելչաբար, և ըստ աւանդութե Առաքելոց, մատուցանի։

5. Ամենամեծ ջան 'ի կիրարկանելի է, զի ամենասուրբ նուէրն պատարագի մատուցանիցի ա՟միւ ա՟ծպաշտութբ, և երկրպագութբ կրօնի. քանզի անիծեալ է մարդն, որ առնէ զգործն ա՟յ պղերգաբար. ոչոք այլ գործ գտանի այնքան ս՟բ, և ա՟ծային 'ի քրիստոնէից 'ի գործածելի, քան այս նոյն ինքն զարհուրելի խորհուրդն, որով կենդարարարը նուէրն այն, 'ի ձեռն որոյ հաշտեցեալք եմք ընդ հօր ա՟յ, 'ի վե-

րայ

բայ խորանին որ ըստ օրէ մատուցանի 'ի ձեռն քահանայից ։ Ուրեմն 'ի գործ ածելի է ա՟մ զգաստութի, և ուշադրութի, զի այս ա՟ծային պատարագս մատուցանիցի ա՟միւ կարելեաւ ներքնայնով անարատութեամբ, և մաքրութեամբ սրտի, և ջերմեռանդութե, և բարեպաշտութե տեսակաւ ։ Արժանապատուութի այսր պատարագի է անհուն. վասնզի յայսմիկ պատարագի մատուցանի Տ՟ն մեր Յ՟ս Ք՟ս, Ճշմարիտն ա՟ծ, և Ճշմարիտն մարդ. ուրեմն մատուցանելի է ա՟միւ կարելեաւ պատկառանաւ ։ Գինն այսորիկ պատարագի է անհուն. քանզի է գինն Յ՟սի Ք՟սի որդւոյն ա՟յ փրկչին մերոյ. ապաուրեմն 'ի նուիրման այսր պատարագի, մատչելի է առ ա՟ծ հայրն ողորմութե ա՟միւ կարելեաւ յուսադրութբ ։ Պատարագս այս է ընծայ սիրոյ. քանզի որդին ա՟յ շարժեցեալ 'ի ծայրագունեղէ սիրոյ, եթող սիրեցելոյ հարսին իւրում սրբոյ եկեղեցւոյ զայս անարիւնահեղ պատարագս. ապաուրեմն այս ա՟ծայնագունեղ նուէրս մատուցանելի է ա՟միւ կարելեաւ սիրով, և ջերմեռանդութբ ։

6։ 'Ի նուիրման պատարագի մատուցանի Անձն ամենամեծվայելչութե, և ծայրագունեղի վերաբարձրութե հաւասարն հօր ա՟յ. ուրեմն մատուցանելի, և լսելի է պատարագն ա՟միւ կարելեաւ խոնարհութբ, և հպատակութբ, զի և անձին, որում մատուցանի. և անձին, որ մատուցանի հանդերձ ա՟ծուութբն, և մարդկութբն վ՟ն մեր հաւատացելոց, լինիցի պատիւ, և երկրպագութի, և զի 'ի վերայ մեր խոնարհաց իջանիցէ 'ի յերկնից առատ, և բազում շնորհ ։ Մինչ մատուցանի պատարագն, և ընծայի ա՟յ նուէրն, ս՟բք հրեշտակք կան յանդիման պատարագի հանդերձ պատուով, պատկառանօք, և սիրով ։ Ուրեմն պատարագօղքս, և և լսօղքս զպատարագ, զի լինիցիմք արժանաւորք ընկերք սրբոց հրեշտակաց, պարտիմք հետևիլ նոցա պատուելով. և երկրպագանելով պատուելւոյ, և զարհուրելւոյ պատարագի, և բորբոքեցելով սիրով սիրելով զկենդանի նուէրն վ՟ն մեր հօր ա՟յ մատուցեալն։ Եթէ այսպէս, որպէս ասացեալ է, կայցեմք առաջի պատարագի, և ստասցուք զմեծս արդիւնս առաջի ա՟յ, և հաւաքեսցուք զբազում գանձս 'ի յերկինս, և աճիցուք 'ի շնորհի, և ուսուսցուք զմանաւոր պաշտպանութի ։

7. Քահանայք պատարագօղք պաշտօնեայք նորոյ կտակարանի, խորհելով զգերազանցութին այնքանոյ պատարագի, և զմեծութի արժանապատուութե իւրոյ, ոչ միայն 'ի ներգործական մատուցման պարտաւորին պարտաւորի ջերմեռանդութե, երկրպագութե, և սիրոյ. այլ նաև յառաջագոյն պարտին նախապատրաստել զիւրեանս ինքեանս առ մատուցումն պատարագի, և առ նուիրումն նոյնոյ, գիտելով. թէ ոչ միայն են պատարագօղք, և նուիրօղք, այլ նաև մասնակցօղք, մատակարարօղք, և հաղորդօղք ։ Նմանապէս և քրիստոնեայք մատչօղք առ ս՟բ պատարագ, և առ սեղան այնքանոյ խորհրդոյ, գիտաւորութբ ընդունելոյ զս՟բ հաղորդութին, պարտին յառաջագոյն նախապատրաստել զիւրեանս ինքեանս ։ Վասնզի մասնակցութիւնն այնքանոյ պատարագի արդիւնաւորի զամենամեծ, և զծայրագունեղ նախապատրաստութի ։ Արդ ուրեմն մասնակցումն, և հաղորդումն այնքանոյ խորհրդոյ 'ի մատչօղս առ խորան վերախնդրէ զպարտաւոր, և զջերմեռանդ յառաջօղ նախապատրաստութի, 'ի ներգործական մատչման զջերմեռանդութի, զերկրպագութի, և զսէր, և յետ ընդունելոյ, զշնորհակալութի, և ճշգրիտ հաւատարմութի ։ Ուրեմն ով պատարագօղք, և ով քրիստոնեայք առ ս՟բ սեղանն մատչօղք, յառաջագոյն պարտաւորապէս, և ջերմեռանդաբար նախապատրաստեցէք զձեզ, 'ի մատչման եղերուք երկրպագանօղք, և սիրօղք.

և

և յետ ընկալման մատուցէք զշնորհակալութիւն, և եղերուք հաւատարիմք։

8. Քահանայք փափագողք աճման շնորհի, և առաքինութեց, և բորբոքեցման սիրոյ, և ցանկացօղք 'ի յայսմիկ կենի վայելել զերանութի ճանապարհորդաց, և ըղձացօղք հաւաքել զմեծս, և զպատուականս հոգևորս գանձս 'ի յերկինս, հանդերձ պարտաւորաւ նախապատրաստութբ, ներգործական ջերմեռանդութբ, և հաւատարմաւ շնորհակալութբ յաճախապէս պատրաստեցէք, մատուցանելով հօր ՟այ զգառն կենդանի, և 'ի ձեռն մասնակցութե, և հաղորդութե զնա բոլոր վերընդունելով 'ի ձեզ, և զմարմին նորա ուտելով, և զարիւն նորա ըմպելով. վասնզի կենդանի գառն այս մատուցեալն, և բոլոր 'ի մեզ ընկալեալն, է աղբիւրն շնորհի, և հնոցն սիրոյ, և է երանեցուցանօղն զմասնակցօղս իւրեան ինքեան, և բաշխօղն, և բաժանօղն զհոգևորս բարիս ինքեան մասնակցողաց։ Նմանապէս համայնք քրիստոնեայք վերոյասացելոց բարեաց փափագօղք, հանդերձ ջերմեռանդութբ, երկրպագութբ, և սիրով յաճախապէս լսեցէք զպատարագն, նուիրելով զկենդանի անարատ գառն ընդ քահանայի, և հոգևորապէս հաղորդելով. և բազմիցս արժանապէս, և ջերմեռանդաբար, և հանդերձ սիրով մատիք առ իրական հաղորդութի գառին անարատի հօր ՟այ մատուցելոյ, զի աճիցէք 'ի շնորհի, և փարթամանայցէք բազմօք հոգևորօք հարստութբք։

# ԳԼՈՒԽ։ ԺԵ.

## Յաղագս երանութե.

1. Երանութիւն է իմն կացութի, յորում է հաւաքումն ամից փափագելեաց, և ցանկալեաց բարեաց, և արտաքսումն ամից երկնչելեաց չարեաց. ուստի երանեալն վայելէ զհամայնս ցանկալիս բարիս, և է ազատ յամից երկնչելեաց չարեաց։ Վայելէ զհամայնս բարիս, որք պատկանին հոգւոյ, և ունի զհամայնս բարիս, որք պատկանին իմացուե, և կամաց։ Եւ 'ի ձեռն վերաստութե ունի զհամայնս բարիս, որք յարմարին մարմնոյ։ Հոգին երանեցելոյ զուգակցեալ է ծայրագունեղի բարւոյ. իմացութի երանեցելոյ ճանաչէ զծայրագունեղ ճշմարիտն, և կամն երանեցելոյ սիրէ զծայրագունեղ բարին։ Հոգին երանեցելոյ է ազատ 'ի մեղաց, իմացութին 'ի տգիտութե, և կամն նորա 'ի չարութե։ Մարմինն երանեցելոյ է փառաւոր, անմահ, և անչարչարելի։ Ախորժակն հանդարտի, զգայութիքն ոչ իմիք իրի կարօտին. 'ի յերանութե է կատարեալ հանդարտութի, բայց ոչոք վիշտ է 'ի նմա։ Ուրեմն 'ի յերանութե կատարեցելոյ է գումարումն ամից ցանկալեաց բարեաց, և է արտաքսումն ամից երկնչելեաց չարեաց։ Երանութին է ամենասիրելի. և ամենափափագելի. վասնզի է այն բարին, առ որ տենչեցեալ է մարդն ունեցօղն զիմացութի, և և զկամ, և վասն այսորիկ է ընդունակ երանութե։

2. Է երանութի, որ է հայրենւոյ, և է երանութի, որ է ճանապարհի։ Երանութի հայրենւոյ է այն որով սիրելիքն ՟այ, որք հաւատարմաբար պահեցին զպատուիրանս

լանս ա՟յ, և եկեղեցւոյ, Ճշմարիտ սիրով սիրեցին զա՟ծ, և յարատևեցին 'ի շնորհի ա՟յ մինչև առ վախճան ներկայ կենի, և յետ մահուան ընկալան զպսակն արդարութե՟ 'ի յարդար դատաւորէ ;՝ վայելեն 'ի յերկինս որքան առ հոգին, և յետ աւուր ընդհանրականի դատաստանի վայելեսցեն նաև որքան առ մարմին 'ի յաւիտեան ։ Այս է կատարեալ երանութի՟, և է կացութի՟ հաւաքմամբ ա՟մից բարեաց կատարեալ, խոստացեալ 'ի յա՟յ զպատուիրանս նորա պահողաց, և է պսակ արդարութե՟, զոր արդարք ընդունելոցք են յետ այսր կենի, և է վարձն 'ի յապագայոջ կենի հատուցանելի 'ի յայգւոջ Քի՟ հաւատարմաբար մինչև առ վախճան կենի աշխատողաց․ զքաղցրութի՟ն այսորիկ կատարելոյ երանութե՟, այնպէս որպէս է, ոչ կարեմք մեկնել նոքա զգան, որք Ճաշակեն ։ Երանութի՟ Ճանապարհի է այն, որով ծառայքն ա՟յ հաւատարմաբար զպատուիրանս նորա պահողք, թարց մահացու մեղաց գոյացողք, 'ի շնորհի ա՟յ կեցողք, Ճշմարիտ սիրով զա՟ծ սիրողք, համհանդերձ անկեղծութե՟ պարապողք գործոց ջերմեռանդութե՟, և յաճախապէս մատչողք առ խորհուրդ հաղորդուե՟, վայելեն․ զքաղցրութի՟ սորա նոքա Ճաշակեն, որք որպէս ասացեալ է, սիրեն զԱ՟ծ մեր ։

3. Երանութի՟ն ոչ կարէ կայանալ 'ի յայսոսիկ արտաքինս բարիս աշխարհի, այսինքն, 'ի սիրոջ, և 'ի բարւոջ համարման մարդկանց, 'ի համբաւոջ, և 'ի պատուոջ, 'ի դահոջ, և 'ի փարթամութիս ։ Վասնզի երանութի՟ մեր է ներքին բարին մեր, գոյացող 'ի ներքոյ իշխանութե՟ մերոյ․ իսկ ասացեալքն են արտաքինք բարիք, գոյացողք 'ի ներքոյ իշխանութե՟ այլոց․ ուրեմն երանութի՟ մեր ոչ կարէ կայանալ 'ի նոսա ։ Դարձեալ, սէրն մարդոյ ոչ է վախճան մեր, և է փոփոխելի ։ Բարի համարումն մարդկանց է դատողութի՟ նոցա զմենջ, սա աներկբայաբար է փոփոխելի, և կարէ գոլ սուտ․ համբաւն է յայտնի ծանօթութի՟ 'ի յաշխարհի, կարի անկայուն, և անցաւոր․ քանզի նաև միակ ձայնն կարէ ոչընչացուցանել զնա, և յա՟մից Ճանաչի գոլ կարի փոփոխական․ արտաքին պատիւն գոյացօղն 'ի նշանս, կարէ գոլ թարց ուրուք ներքնայնոյ բարւոյ համարման․ ուրեմն 'ի պատուոջ կարէ գտանել նենգութի՟․ դահն կարէ կործանիլ․ ապաուրեմն և ոչ 'ի յայսմիկ է հաստատութի՟․ փարթամութիւք ծառայեն հարկաւորութեց մերոց․ ուրեմն ոչ են վախճանք․ իսկ երանութի՟ մեր է վախճանն մեր, և է մնացական, և Ճշմարիտ, և հաստատուն բարին մեր, և ոչ ծառայէ այլոյ․ ապաուրեմն երանութի՟ մեր ոչ կարէ կայանալ 'ի յասացեալս իրս, այսինքն, 'ի սիրոջ մարդկանց, 'ի բարւոջ համարման, 'ի համբաւոջ, 'ի պատուոջ, 'ի դահոջ, և 'ի փարթամութիս ։ 'Ի յասացելոց յայտ է, թէ որք գնեն զերանութի՟ իւր 'ի յասացեալս իրս, յայտնապէս խնդրեն զունայնութի՟ այսորիկ աշխարհի ։

4. Երանութի՟ մեր ոչ ևս կարէ կայանալ 'ի բերկրութիս, և 'ի հեշտութիս մարմնոյ, և ոչ 'ի յայնմիկ, որ է 'ի զուգակցութե՟, և ոչ 'ի յայնմիկ, որ է 'ի կերակրոյ, և 'ի յըմպելւոյ ։ Քանզի զուգակցութի՟ մարմնոյ, և հեշտութի՟ նորա է վասն համապահութե՟ տեսակի, և ուտու՟ն, և ըմպու՟ն է վա՟ համապահութե՟ անհատի․ ուստի ոչ են վախճան, այլ միջոցք վասն վախճանի․ իսկ երանութի՟ մեր է վախճան մեր, ապաուրեմն երանութի՟ մեր ոչ կարէ կայանալ 'ի յասացեալս հեշտութիս Ճաշակողութե՟, և շօշափողութե՟ ։ Որք զերանութի՟ իւր գնեն 'ի հեշտութիս Ճաշակողութե՟, և շօշափողութե՟, գնեն զիւրեանս ինքեանս 'ի թիւս անասնոց․ աստի երգէ սաղմոսերգիչն․ մարդ, 'ի պատուի էր, և

ոչ

ոչ իմացաւ, հաւասարեցաւ անասնոց անբանից, և նմանեցաւ ն͞ց : Սաղ. 48. թիւ. 21. ոչ ևս երանութ͞ի մեր կայանալ կարէ 'ի յառողջութ͞ե, և 'ի գեղեցկութ͞ե մարմնոյ : Վասնզի երանութ͞ի մեր է ենթ իշխանութ͞ե մերոյ . առողջութ͞ին, և գեղեցկութ͞ին մարմնոյ ոչ ենթ իշխանութ͞ե մերոյ . ուրեմն երանութ͞ի մեր ոչ կարէ կայանալ 'ի յայսոսիկ : Դարձեալ գեղեցկութ͞ին, և առողջութիւնն են ստորնագունի մասին, իսկ երանութ͞ի մեր է վերնագունի մասին, յորմէ լինի վերատասուէ 'ի ստորնագոյն մասն . ապաուրեմն երանութ͞ի մեր ոչ կարէ կայանալ 'ի յայսոսիկ :

5. Մարդն մինչ տակաւին է 'ի յայսմիկ կենի, կարէ վայելել զերանութ͞ի ճանապարհի, և զմայլիլ ներգործականապէս երանութեամբ ճանապարհի : Երանութ͞ի ճանապարհի կայանայ 'ի շնորհի, և 'ի սիրոյ . քանզի ամենամեծ փափագելի բարին մեր 'ի յայսմիկ կենի է շնորհն . և սէրն : Եւ այս բարիս մեր կերպիւ իւրով է կայութ͞ի հաւաքմամբ ամ͞ց բարեաց կատարեալ, արտաքսեցմամբ հանդերձ ամ͞ց չարեաց : Վասնզի այս բարին մեր, այսինքն, կեալն 'ի շնորհի, և 'ի սիրոյ, հաւաքէ 'ի մեզ զամն առաքինութիս, զարմատ, և զսկզբունս բարեաց գործոց, զաւետարանական երանութիս, զպարգևս հոգւոյն սրբոյ, և զպտուղս նորա, զգանձս գումարեցեալս 'ի յերկնի 'ի ձեռն բարեաց, և արդիւնաւորաց գործոց առաքինութեց, 'ի շնորհի 'ի հրամանէ սիրոյ ելուզեցելոց, զբան արդիւնաւորելոյ զյաւիտենական կեան, գոլ զտաճար հոգւոյն սրբոյ, զբնակարան ամենասրբոյ երրորդութ͞ե, զհոգևոր հարսն ք͞ի, զուրախութ͞ի 'ի յուսոյ, և զխրատուն առ փառս . բայց արտաքսէ զամն մահացուս մեղս, զթշնամութ͞ի մահացունաց մեղաց, և մոլութեց, և զպարտաւորութ͞ի դժոխոց . զհամայնս աղաւանս, և զմեղադրելի տխրութ͞ի . այլ ոչ զամն ներելիս մեղս, զանմեղադրելի տխրութ͞ի, զփորձութիս, և զմարմնեղէնս պակասութիս, այսինքն, զհիւանդութ͞ի, զաղքատութ͞ի, զհալածանս, և զայլնպիսիս : Վայելումն այսր երանութ͞ե կայանայ 'ի ներգործականի սիրոյ ա͞յ : Զքաղցրութ͞ի սորա նա իմանայ, որ ճաշակէ :

6. Կացողն 'ի շնորհի, և 'ի սիրոյ, և ունեցողն զերանութիւն ճանապարհի, վայելէ զաւետարանականս երանութիս, որք են աղքատուէ հոգւով, գոլ հեզ, սգալն, քաղցիլն, և ծարաւիլն արդարութ͞ե, գոլ ողորմած, ունիլ զսիրտ ս͞ր, գոլ խաղաղարար, և կրել զհալածանս վասն արդարութեան : Աղքատն հոգւով է, որ ոչ ունի զանկարգ սէր 'ի վերայ իրաց այսր կենի : Հեզն է, որ ոչ նեղացուցանէ զընկերն : Սգայ, որ ցաւի վ͞ն մեղաց իւրոց : Քաղցի, և ծարաւի արդարութ͞ե, որ ջանայ զարդանալ 'ի յարդարութ͞ե : Ողորմածն է, որ ցաւակցի ընկերի, և ջանայ զերծուցանել, և ազատել զնա 'ի թշուառութեց : Եւ ս͞ր սրտիւ, որ ունի զմաքրութ͞ի սրտի : Խաղաղարարն է, որ ջանայ բառնալ, և բացահերքել 'ի միջոյ զտարաձայնութ͞ի, որ գտանի 'ի մէջ մարդկանց : Կրէ զհալածանս վասն արդարութ͞ե, որ վասն հաւատոյ, կամ վասն ուրուք այլոյ առաքինութ͞ե տառապեցուցանի, և նեղացուցանի 'ի յամբարշտայց : Վայելողն զայսոսիկ Աւետարանականս երանութիս խոստանին արքայութ͞ի երկնից, վայելումն երկրի, մխիթարութին, յագեցումն, ստացումն ողորմութ͞ե, տեսումն ա͞յ, որդեգրութ͞ի ա͞յ, և ժառանգումն արքայու͞է երկնից : Որ էած զկեան իւր 'ի շնորհի, և 'ի սիրոյ, և ճշմարտիւ սիրով սիրէ զա͞ծ, վայելէ զայսոսիկ աւետարանականս երանութիս, 'ի քա͞է տեսանէ փրկչեն մերմէ որդւոյն ա͞յ ուսուցեալս :

7. Էական կատարեալ երանու‿

նութեն հայրենւոյ կայանայ ՚ի պաշտօն, և ՚ի դէմյանդիման տեսման ա՟ծային էութեն. այս կատարեալ երանութիւն հայրենւոյ, բոլորապէս հաւաքէ զհամայնս ցանկալիս բարիս, և ամենևին արտաքսէ զա՟մս չարիս. ՚ի յայսմիկ կատարելոյն երանութեն հայրենւոյ իմացութիւ մարդոյ վերացեալ լուսով փառաց, և միաւորեցեալ ա՟ծային էութեն իբրև ներտպեցելոյ տեսակի իւրոյ, և բանին ա՟ծային իբրև արտատպեցելոյ տեսակի իւրոյ, դէմյանդիման տեսանէ զա՟ծային էութիւն. այնպէս զի ոչ կարիցէ յետադարձուցանել ՚ի յառաջելոյ տեսութենէ. և կամքն նորա կատարեալ սիրով այնպէս սիրէ զա՟ծային բարութիւն, զի ոչ կարիցէ ոչ սիրել. և հոգին նորա այնպէս միաւորի ընդ ա՟ծային էութեն, զի ոչ կարիցէ բաժանել ՚ի նմանէ: ՚Ի յառաջելոյն տեսման, է կատարեալ ա՟ծացուցումն մարդոյ. քանզի ՚ի յառաջելոյն տեսման իմացութիւ մարդոյ ունի զոր ինչ ա՟ծային հասարակ ընդ ա՟ծային իմացութեն, այսինքն, զ ներտպեցեալ, և զարտատպեցեալ տեսակ. ուստի ՚ի յառաջելոյն տեսման մարդկային իմացութիւն այնպէս խօսակցիլ կարէ ընդ ա՟ծային իմացութեն. քո, և իմ ներտպեցեալ, և արտատպեցեալ տեսակն նոյն է. այս կատարեալ երանութիւս արտաքսէ ամենևին զա՟մս մեղս, նաև զներելիս, և զկարողութի մեղանչելոյ. և ամենևին զա՟մս մոլորութիւս, և ամենևին զա՟մ տգիտութի, և զկարողութի անկանելոյ ՚ի տգիտութի: Քաղցրութի երանութեն հայրենւոյ է անպատմելի. զքաղցրութիւս զայս նոքա զգան, որք անդ Ճաշակեն զնա:

8. ՚Ի յերանութեն հայրենւոյ ՚ի յերջանկութէ հոգւոյ եղիցի վերառատութի ՚ի մարմինն: Քանզի ՚ի յերանութեն հայրենւոյ նաև մարմինն երանեցելոյ եղիցի փառաւոր. արդուրեա՟մ ՚ի յայնմիկ կատարելոյն երանութեն, մարմինն երանեցելոյ եղիցի անմահ, և անչարչարելի, գեղեցիկ, պայծառ, արագ, նուրբ, փութադնաց, և թափանցիկ. անդ հանդիցի զգացողական բաղձանն, ոչումեք իրի կարօտանալով. անդ հանդիցի ցանկական մասն ՚ի ձեռն վերառատութեն յագեցեալ. անդ հանդիցի ցասմնական մասն, յոչէ մեքէ յերկնչելով. անդ հանդիցին հոտոտողականն, Ճաշակողականն, և շօշափողականն ՚ի ձեռն վերառատութեն ՚ի յիւրեանս իրքեանս յագեցեալք. անդ ոչոք աշխատան գոյ. քանզի զօրութիւք ոչ պակասին: Ոչոք երկիւղ. վասնզի ոչ ոք վնասէ: Ոչինչ տրտմութի. քանզի ոչոք վտանգելութի: Ոչոք ցաւ. քանզի ոչ գոն վէրք: Ոչոք լաց, վասնզի է լիակատար ուրախութի: Ոչոք թշնամութի. քանզի սատանայն, և համայնք դատապարտեցեալք փակեցեալք են ՚ի դժոխս, համայնք այլք բարեկամք սիրեն, ունին զբարի համարումն, պատուեն, և գովեն. ոչոք մահ, քանզի է յաւիտենական կեան: Վերջապէս անդ ոչ գոյ գիշեր. վասնզի միշտ է օր: Աչք երանեցելոց տեսանեն զփառաւոր մարմինն Քի փրկչին մերոյ, Մարիամայ ա՟ծածնի, և ա՟մից այլոց երանեցելոց. և տեսանեն զհրեղէն երկինն, և զգեղեցկութի աշխարհի: Ականջք երանեցելոց լսեն զ քաղցրագոյնեղձայնն Քի, Մարիամայ, և այլոց երանեցելոց:

## ԳԼՈՒԽ: ԺԶ:

### Յաղագս ախտից:

1. Ի Մեզ է կրկնակ ախորժակ, այսինքն, ախորժակ բանական, և ախորժակ զգացողական: Բանական ախորժակն կոչի կամք, և է վերնադոյն. ուստի որպէս վերնադոյն հրամայէ զգացողականի ախորժակի որպէս ստորնադունի: Բանական ախորժակին ունի զսէր, և զատելութիւն: Սիրով սիրէ զբարին ճանաչեցեալն իմացութեամբ. և ատելութեամբ ատէ զչարն իմացեալն իմացութեամբ: Բանական ախորժակն է կարողութիւն վերնադունի մասին մարդոյ, և ուղղի 'ի ձեռն իմացութեան, որ է լուսադոյն քան զզգայութիւն. ուստի սէրն, և ատելութիւն, և այլք ներգործութիւնք նորա ոչ կոչին ախտք, այլ սոսկ ներգործութիւնք վերնադունի ախորժակի: Իսկ զգացողական ախորժակն է կարողութիւն ստորնադունի մասին մարդոյ, և ուղղի զգայութեամբ, այսինքն, շրջի շուրջ զնովաւ, որ իմանի 'ի ձեռն զգայութեան. ուստի սէրն, և ատելութիւն, և այլք ներգործութիւնք նորա կոչին ախտք: Ներգործութիւնք զգացողականի ախորժակի, և ախտք նորա, եթէ իցեն ըստ հրամանի բանի, են բարիք. իսկ եթէ իցեն ընդդէմ հրամանի բանի, են վատք. և են սանձելիք:

2. Մասունք զգացողականի ախորժակի են երկու, այսինքն, ցանկական մասն, և ցասմնական մասն: Ցանկական մասն է շուրջ զբարեաւ 'ի ձեռն զգայութեան ըմբռնեցելով: Իսկ ցասմնական մասն շուրջ զդժուարաւ, և մատչելեաւ: Զգացողական ախորժակն 'ի մարդում է 'ի հեղինակէ բնութեան, զի ստանայցէ զզգալի բարին, և յառնիցէ ընդդէմ զգալւոյ չարին: Այժմ յետ սկզբնականի մեղաց ադամայ կարի զգուշաբար առաջանալի է մեզ որքան առ ներգործութիւնս զգացողականի ախորժակի ունեցողի զլուցին մեղաց, զմարդն յօժարեցուցանող առ մեղս: Ուստի 'ի մեզ պարտի գոլ ամենամեծ զգուշութիւն զի մի խաբեսցիմք 'ի յախտից, և պարտի գոլ ամենամեծ ուշադրութիւն, և մեծադունեղ մտադրութիւն առ 'ի սանձել զախտս, և զայնոսիկ, որք դիմեն 'ի բարին 'ի ձեռն զգայութեան ըմբռնեցեալն, և զնոսա, որք յառնեն ընդդէմ չարի 'ի ձեռն զգայութեան ըմբռնեցելոյ, զի մի լինիցին ընդդէմ հրամանի բանի, և ընդդէմ օրինի, այլ լինիցին ըստ հրամանի բանի, և ըստ օրինի, և վասն պարտաւորի վախճանի: Ներգործութիւնք զգացողականի ախորժակի շուրջ զբարեաւ են այսոքիկ, սէր, փափագ, ցանկութիւն. և սոքա հային առ զգալի բարին. և ատելութիւն, փախչումն, և տրտմութիւն. և սոքա են ընդդէմ զգալւոյ չարի: Համայնք ասացեալք են ներգործութիւնք ցանկականի մասին: Իսկ շուրջ զդժուարաւ են այսոքիկ, բարկութիւն, համարձակութիւն. երկիւղ, և յոյս: Բարկութիւն, և երկիւղ են ընդդէմ չարի, յոյսն է զբարւոյ, բայց համարձակութիւն է առ 'ի բացաշարժել զչարն, կամ առ 'ի ստանալ զբարին: Համայնքն են ներգործութիւնք ցասմնականի մասին:

3. Սէրն է ներգործութիւն ցանկականի մասին, որով մարդն ըղձիւ հանդերձ բերի 'ի զգալի բարին: Որպէս սէրն, որով մարդն սիրէ զկերակուրն, կամ զըմպելին: Եթէ ներգործութիւն այս իցէ առ զգալի բարին պարտաւոր մարդոյ, և վասն պարտաւորի վախճանի, որգոն եթէ իցէ առ կերակուրն ինքեան հարկաւորն, և իցէ վասն համապատասխանեցման կենի, եղիցի բարի. քանզի է ըստ հրամանի բանի, և ոչ է ընդդէմ օրինի: Իսկ

եթէ իցէ առ երևելի զգալի բարին, ոչ յարմարողն մարդոյ. կամ եթէ իցէ առ զգալի յարմարող բարին, այլ ոչ վասն պարտաւորի վաղճանի. եղիցի չար. քանզի ոչ է ըստ հրամանի բանի, այլ կամ է ընդդէմ հրամանի բանի, և ընդդէմ օրինի, կամ է բաց 'ի հրամանէ բանի, և բաց 'ի յօրինէ. որպան եթէ ոմն փափագիցի կերակրոյ, և ուտիցէ զարգելեցեալ, և զվնասակար կերակուր. կամ եթէ ոչ իցէ արգելեցեալ. և վնասակար, փափագիցի, և ուտիցէ վասն միայնոյ զգալւոյ հեշտութեան: Իղձն է ներգործութիւն ցանկականի մասին, որով մարդն գիտէ առ սիրեցեալ զգալի բարին: Վերջապէս հեշտութիւն է ներգործութիւն, որով մարդն բերկրի, և հանգչի 'ի զգալի սիրեցելոյն, և փափագեցելոյն բարւոյն, զոր արդէն ասացեալ է: Զբարութենէ, և չարութենէ ըղձի, և հեշտութեան, նոյնով կերպիւ խօսելի է, որպէս ասացեալքս եմք զբարութենէ, և չարութենէ սիրոյ, որ է ախտ:

4. Ատելութիւն, որ է ախտ, է ներգործութիւն, որով մարդն գարշի 'ի զգալի չարէ, և ատէ զնա. զորօրինակ ատելութիւն, որով մարդն ատէ զթիւնն, և գարշի 'ի նմանէ. Եթէ ներգործութիւնս այս իցէ առ զգալի չարն վնասակար մարդոյ, և վասն պարտաւորի վաղճանի. որպան եթէ իցէ զթիւնոյ վնասակարէ կենի, և վասն այնորիկ, զի մի վնասիցէ կենի, եղիցի բարի. քանզի է ըստ հրամանի բանի, և ոչ է ընդդէմ օրինի: Իսկ եթէ իցէ առ երևելի զգալի չարն, որ ոչ է չար, և ոչ վնասակար մարդոյ, այլ է շահաւէտ, և օգտակար նմա, եղիցի չար. վասնզի ոչ է ըստ հրամանի բանի, այլ կամ է ընդդէմ հրամանի բանի, և ընդդէմ օրինի, կամ է բաց 'ի հրամանէ բանի, և բաց 'ի յօրինէ: Զորօրինակ, եթէ ոմն գարշիցի 'ի հարկաւորէ կերակրոյ առ համապահութիւն կենի, և 'ի հարկաւորէ բժշկականութենէ վասն դառնութեան, կամ 'ի յօգտակարէ բժշկականութենէ, զի մի զգայցէ զդառնութիւն, և ատիցէ զնոսա: Փախուստն է ներգործութիւն, որով մարդն փախչի 'ի զգալւոյ չարէ: Տրտմութիւնն է ներգործութիւն, որով մարդն 'ի զգալւոյ չարութեան, որ նմա հանդիպի, տրտմի: Փախուստն, եթէ իցէ ըստ հրամանի բանի, է բարի. եթէ ոչ իցէ ըստ հրամանի բանի. է չար: Տրտմութիւնն եթէ իցէ չափաւոր, և բանաւոր, ոչ է չար. իսկ եթէ իցէ անչափ, և անբան, է չար:

5. Բարկութիւնն, որ է ախտ, է ներգործութիւն ցասմնականի մասին, որով մարդն ջանայ ընդդիմանալ այնմիկ, որ նկրտի վնասել ինքեան. կամ եթէ արդէն վնասեաց, ջանայ պատել զվէր ինքն 'ի չարէ: Խօսիմք զբարկութենէ ըստ որում է ախտ, այլ ոչ ըստ որում է մոլութիւն, որ միշտ է չար, և դասանի մայրբազմաց չարեաց: Բարկութիւն ըստ որում ախտ, և ներգործութիւն ցասմնականի մասին, է 'ի հեղինակէ բնութեան, տուեցեալ մարդոյ, զի պաշտպանիցէ զինքն 'ի չարէ, և պատուիցէ զինքն 'ի ձեռանէ սպառնացողին: Ուստի ըստ ինքեան է անտարբեր, և կարէ գոլ բարի, և կարէ գոլ չար: Եթէ իցէ ըստ հրամանի բանի, և ըստ օրինի, է բարի. բայց եթէ ոչ է այնպէս, է չար: Եթէ իցէ չափաւորեցեալ, և իցէ ընդդէմ չարի, և վնասու, այնպէս զի մարդն այսու շարժմամբ բանաւորապէս ելուզեցելով, և ըստ թոյլտուութեան օրինաց, արգելուցու զչարն, և զվնասն, կամ բացաշարժիցէ զնա, է բարի. իսկ եթէ իցէ անմիջավար, և իցէ ընդդէմ բարւոյ, անբանաւորապէս ելուզեցեալ, և վնասակար, է չար: Յայսմիկ ախտի պարտիմք մեք 'ի կիրականել զամենամեծ զգուշութիւն, որք յղացեալք, և ծնեալք եմք 'ի սկզբնականի մեղի, զի մի հզօր ախտս այս ներծնանիցի զխաւար մտաց մերոց, և լինիցի մեզ արմատ բազմաց չարեաց:

6. Համարձակութիւն, որ է ախտ, է ներգործութիւն ցասմնակա-

նի

նի մասին, որով մարդն ջանայ բացահերքել զչարն, 'ի յոր անկաւ, կամ վերատատանալ զբարին, զոր կորոյս: Խօսիմք զհամարձակութենէ ըստ որում է ախտ, այլ ոչ, ըստ որում է մոլութիւն: Համարձակութիւն, ըստ որում է ախտ, է ներգործութիւն ցասմնականի մասին, և առնեցեալ է 'ի բնութենէ, զի բացամերժիցեմք զչարն, և վերատատանեսցեմք զբարին: Ըստ ինքեան է անտարբեր: Ուստի կարէ գոլ բարի. և կարէ գոլ չար: Եթէ իցէ ըստ հրամանի բանի, և կանոնաւորիցի 'ի խոհեմութենէ. ջանայցէ բացամերժել զճշմարիտ չարն, և վերանորոգել զճշմարիտ բարին. որպէս եթէ ունեցօղն զհեղինակութիւն, ըստ օրինաց խոհեմութեան տանիցէ զարդար պատերազմ ընդդէմ անիրաւ թշնամւոյ, զի պաշտպանիցէ, և նախախնամիցէ զհայրենին, արգելլով զգերիութիւն, և ազատելով զգերիս, բացահերքելով զթշնամին, և տալով զազատութիւն իւրոցն, է բարի. վասնզի է ըստ իրաւանց, և ըստ հրամանի բանի: Իսկ եթէ ունիցի զառաջնորդ զանմտութիւն, և ոչ վերահայիցի առ օրէն արդարութեան, և իրաւանց, է չար. քանզի ոչ է ըստ հրամանի բանի, և ոչ է ըստ գիտաւորութեան հեղինակի բնութեան, զնա շնորհողի մարդոյ:

7. Երկիւղն, որ է ախտ, է ներգործութիւն ցասմնականի մասին, որով մարդն երկնչի 'ի վերահասցողէ չարէ: Ախտս այս է անտարբեր: Ուստի կարէ գոլ բարի, և կարէ գոլ չար: Եթէ իցէ բանաւոր, և ըստ բանի, և հանդերձ չափաւորութեամբ, և թարց անմտի վրդովման, է բարի: Որզան եթէ ոմն տեսանելով վերակալ իւրեան ինքեան զմեծամեծ չար, և որոգայթ մահուան, երկնչիցի, և զարհուրիցի 'ի նմանէ թարց անմտի վրդովման, և թարց անհամբերութեան, ունի զբանաւոր, և զմարդկային երկիւղ: Ուստի ախտն նորա ոչ է չար, այլ է մարդկային, և յառաջադայի 'ի բանաւորէ սիրոյ կենի. Իսկ եթէ ստացեալ ախտն իցէ անբանաւոր, ոչ վերահայօղ առ հրաման բանի, և իցէ անմիջավար, և հանդերձ անմտի վրդովմամբ, և իցէ զայնմանէ իրէ, յորմէ ոչ է երկնչելի, և անհամբերութեամբ հանդերձ, է չար: Որպէս եթէ ոմն տեսանելով վերակալ իւրեան ինքեան զչար ինչ, անմտաբար զարհուրիցի 'ի նմանէ, այսինքն, հանդերձ անմտի վրդովմամբ, և հանդերձ անհամբերութեամբ. կամ անմտի ըմբռնեցմամբ երկնչիցի, և զարհուրիցի յայնմանէ, յորմէ ոչ է երկնչելի, ունի զանբանաւոր երկիւղ: Ուստի ախտն նորա է չար. քանզի ոչ է ըստ հրամանի բանի, այլ է 'ի յանհամբերութենէ, կամ 'ի յանմտէ ըմբռնեցմանէ: Եւ ոչ է 'ի բանաւորէ սիրոյ, այլ 'ի յանկարգէ սիրոյ ուրուք իրի:

8 Յոյսն, որ է ախտ, է ներգործութիւն ցասմնականի մասին, որով մարդն բաղձայ իմիք տաժանելւոյ զգալւոյ սիրեցելոյ բարւոյ: Յոյսն, որ է ախտ, է անտարբեր: Ուստի կարէ գոլ բարի, և կարէ գոլ չար: Եթէ իցէ բանաւոր, և ըստ հրամանի բանի. եթէ իցէ զճշմարտէ բարւոյ, մարդոյ յարմարողէ հանդերձ ուղղով գիտաւորութեամբ վասն պարտաւորի վախճանի. և ոչ իցէ ընդդէմ ուրուք օրինի պահելւոյ, է բարի. քանզի է բանաւոր, և է ըստ հրամանի բանի: Որզան եթէ ոմն փափագելով ումեք տաժանականի մեծի շահի, ջանայցէ արդարաբար, և հանդերձ ուղղով գիտաւորութեամբ վասն պարտաւորի վախճանի ստանալ զնա, այսինքն, զի վայելչաբար խնամիցէ զընտանիս իւրս; և տայցէ զողորմութիւնս ինքեան յարմարօղս, ունի զյոյս բարի. քանզի է բանաւոր. իսկ եթէ իցէ անբանաւոր, և զիրէ ոչ յարմարողէ մարդոյ, և թարց ուղղոյ գիտաւորութեան, է չար. քանզի ոչ է ուղիղ: Որզան եթէ ոմն փափագելով ումեք տաժանականի մեծի շահի, ջանայցէ

նայցէ ստանալ զնա անարգաբար , և հանդերձ վատթ դիտաւորութեամբ , վասն անպարտաւորի վախճանի , այսինքն , զի խաղայցէ , կամ բղջախոհաբար կեայցէ , ունի զչար յոյս . քանզի յոյս նորա է անբանաւոր , և ընդդէմ հրամանի բանի : Յուշադրաբար ջանացիր , զի ստանձիցես զախտս քոյս , զի լինիցին նիւթք առաքինութեանց , և ոչ մոլութեանց :

## ԳԼՈՒԽ ԺԷ.

### Յաղագս առաքինութեանց:

1. Յետ ընձեռման զախտից , որք առնելք են նիւթք առաքինութեանց , և ոչ մոլութեանց , բանն է զառաքինութեանց , որք են վայելչութիւն , պայծառութիւն , փառք , պատիւ , և զարդարանք մեր : Մին ներգործութիւն ճշմարիտ առաքինութեան է լաւագոյն քան զամ արծաթ , քան զամ ոսկի, քան զամս փարթամութիւնս, քան զամս ակունս պատուականս, քան զամ գանձ , քան զամ պատիւ , քան զամ աթոռ , և քան զամ փառս այսր աշխարհի : Առաքինութիւն է ունակութիւն առնող զունեցողն բարի , և զգործ նորա , հակող զունեցողն առ բարի արարողութիւն : Ուստի 'ի ձեռն առաքինութեանց , և 'ի ձեռն մոլութեանց է զանազանութիւն 'ի մէջ մարդկանց : 'Ի ձեռն առաքինութեանց են բարիք մարդիկք , 'ի ձեռն մոլութեանց չարք : 'Ի ձեռն առաքինութեանց են սիրելիք , և պատուելիք . 'ի ձեռն մոլութեանց գարշելիք , և արհամարհելիք : 'Ի ձեռն առաքինութեանց գովելիք , և պայծառք . 'ի ձեռն մոլութեանց անարգելիք , և մթայինք : 'Ի ձեռն ճշմարտից առաքինութեանց , զուգակցելոց ամենայնոյ շնորհի , մարդիկք են բարեկամք այ , և սիրելեք արքայի երկնայնոյ , 'ի ձեռն մոլութեանց չարք անկեալք 'ի մեղս , և ծանրացեալս մեղապարտք , են արժանիք դժոխայնոց տանջանաց : 'Ի ձեռն ներգործութեանց առաքինութեանց սիրով ներտեսակաւորեցելոց մարդիկք արդիւնաւորին զյաւիտենական կեանս . 'ի ձեռն ներգործութեանց մոլութեանց զմահն հոգւոյ ծնանողաց , չարք պարտաւորին առ յաւիտենական մահ , և առ մշտնջենաւոր կորուստ , 'ի յոր յետ այսր կենի անկանելք են :

2. Գերազանցութիւն առաքինութեան է ամենամեծ : Յամէ կողմանէ երևի գերազանցութիւն նորա : Մեծ է գերազանցութիւն նր 'ի կողմանէ ինքեան . քանզի է ազնուագոյն ունակութիւն : Մեծ է գերազանցութիւն նորա 'ի կողմանէ բանին . վասնզի ներգործութիւնք նորա են ըստ հրամանի բանի : Մեծ է գերազանցութիւն նորա 'ի կողմանէ այ . քանզի առաքինութիւնք կարի յոյժ հաճոյք են այ , և առնեն զմարդիկ սիրելիս նմա : Մեծ է գերազանցութիւն նորա 'ի կողմանէ շնորհի . վասնզի ճշմարիտք առաքինութիւնք են յատկութիւնք շնորհի : Քանզի 'ի հոգևորականի կենի շնորհն է իբրև բնութիւն , և առաքինութիւնք են իբրև յատկութիւնք նորա : Մեծ է գերազանցութիւն նորա 'ի կողմանէ փառաց , և յաւիտենականի կենի . վասնզի ներգործութիւնք առաքինութեանց արդիւնաւորին զփառս , և զյաւիտենական կեանս : Մեծ է գերազանցութիւն նորա 'ի կողմանէ ներգործութեանց նորա . քանզի ներգործութիւնք առաքինութեանց են փարթամութիւնք , և գանձք մերք 'ի յերկինս : Մեծ է գերազանցութիւն նր 'ի համեմատութենէ իրաց աշխարհի . վասնզի առաքինութիւնք են լաւագոյնք քան զարծաթ , քան զոսկի , քան զակունս պատուականս , քան զփարթամութիւնս , քան զաթոռ , քան զփառս , քան զպատիւ , քան զգեղեցկութիւն , և քան զառողջութիւն մարմնոյ : Եթէ է մեծ գերազանցութիւն առաքինութեանց , մեծ է և արժա-

տրժանապատուութիւն մարդկանց զառաքինութիս սիրողաց :

3. Առաքինութիւն է տրամադրութի առ երանութի : 'Ի յայսմիկ կենի երանութի մեր է վայելումն այ 'ի շնորհի , և 'ի սիրոջ · Առ աստցեալ վայելումն վերախնդրին առաքինութիք : Վերախնդրի հաւատ · քանզի հաւատով մերձենամք առ ած : Վերախնդրի յոյս · վասնզի յուսով ցանկամք , և փափագիմք վայելել զած : Վերախնդրի սէր · քանզի սէրն , որ է ներգործութի սիրոյ , առնէ զմեզ վայելել զած : Վերախնդրի խոհեմութի · վասնզի այս ազնուագունեղ առաքինութիս լուսով իւրով գտանէ զյարմարս , և զմիջոցս միջոցս տանօղս առ սիրեցեալ , և փափագեցեալ վախճան , որ է վայելումն այ : Վերախնդրի արիութի · քանզի առաքինութիս այս յաղթէ , և յաղթահարէ զդժուարութիս , և առնէ զմեզ յաղթօղս , և յաղթահարօղս : Վերախնդրի բարեխառնութի · վասնզի 'ի ձեռն այսորիկ լինիմք ընդունակք խոկման : Վերախնդրի արդարութի · քանզի թարց արդարութե անկարելի է հաճոյանալ այ : Վերախնդրի խոնարհութի · վասնզի ած հակառակ կայ հպարտաց : Վերախնդրի եղբայրասիրութի · քանզի սէրս այս է նշան սիրոյ աստուծոյ : Վերախնդրի առատաձեռնութի , և ողորմածութիւն · վասնզի ողորմածք գտանեն զողորմութիւն : Վերախնդրի հեզութի · քանզի հեզք են աշակերտք քի : Վերախնդրի պահեցողութի , և զգաստութի · վասնզի 'ի ձեռն այսոցիկ առաքինութեց լինիմք խոկացօղք : Վերախնդրի ողջախոհութի · վնզի այսու է մաքրութի սրտի : Վերջապէս վերախնդրի ջերմեռանդութի , զի վայելումն լինիցի ատոկագոյն : Յայսմանէ վայելմանէ մարդիկք անցանեն առ ապագայ վայելումն :

4. Առաքինութիւն բաժանի 'ի յիմացողականս , և 'ի բարոյականս : Իմացողականք վերահային առ ճշմարտութիս : Բարոյականք վերահային առ բարս : Իմացողականք կատարեն զիմացութիւն , և տրամադրեն զնա առ ուղիղս իմացմունս : Ուստի են կատարելութիք իմացութե , և ունակութիք առ կատարեալս արարողութիս : Հինգ են առաքինութիք իմացողականք , և են այսոքիկ , իմացութի , գիտութի , իմաստութի , խոհեմութի , և արուեստ : Իմացութիւն ըստ որում ունակութի , է ունակութի տրամադրող զիմացողական կարողութիւն առ ճանաչումն սկզբանց : Իմացութիւն ըստ որում ներգործութի , է ճանաչումն սկզբանց : Գիտութիւն ըստ որում ունակութի , է ունակութի տրամադրող զիմացութիւն առ ստոյգ , և յայտնի ճանաչումն 'ի սկզբանց : Գիտութիւն ըստ որում ներգործութի է ստոյգ , և յայտնի ճանաչումն 'ի սկզբանց : Իմաստութիւն ըստ որում ունակութի , է ունակութի տրամադրող զիմացութիւն առ բարձրագունեղ գիտութի : Իմաստութիւն ըստ որում ներգործութի , է բարձրագունեղ գիտութի : Խոհեմութիւն ըստ որում ունակութի , է ունակութի տրամադրող զիմացութիւն առ ճանաչումն ներգործելեաց : Խոհեմութիւն ըստ որում ներգործութի , է ճանաչումն ներգործելեաց : Արուեստն ըստ որում ունակութիւն , է ունակութիւն տրամադրող զիմացութիւնն առ ճանաչումն առնելեաց : Արուեստն ըստ որում ներգործութի , է ճանաչումն առնելեաց ըստ կանոնաց : Դարձեալ բաժանի առաքինութիւն 'ի ստացեալս , և 'ի ներհեղեցեալս : Ստացեալքն են , զորս ստանամք բազմապատկեցելովք ներգործութեք : Ներհեղեցեալքն են , որք ներհեղանին մեզ 'ի այ :

5. Ներհեղեցեալքն բաժանին 'ի յածաբանականս , և 'ի բարոյականս · ածաբանականք առաքինութիքն են , որք շրջին շուրջ զած , և ունին զած վս առարկայի : Ուս-

տի

ուի յառարկայէ իւրմէ, որ է ած, կոչին աստուածաբանականք։ Այսուքիկ առաքինութիւք են ազնուագունեղք, և գերազանցագունեղք · որ այսպէս ցուցանի։ Առաքինութին ունեցօղն զազնուագունեղ առարկայ, է ազնուագունեղ, և գերազանցագունեղ · իսկ աստուածաբանականք առաքինութիւք ունին զազնուագունեղ առարկայ · քանզի ունին զած վասն առարկայի, քան զոր ոչինչ է ազնուագոյն · ուրեմն աստուածաբանականք առաքինութիւք են ազնուագունեղք, և գերազանցագունեղք · աստուածաբանականք առաքինութիւքն են երեք, այսինքն, հաւատ, յոյս, և սէր։ Հաւատն առաջադրէ զած · յոյսն փափագի նմա · և սէրն միաւորէ զմեզ ընդ նմա։ Հաւատն ցուցանէ զած · յոյսն դիմէ առ նա · սէրն առշօշափէ զնա։ Հաւատն ասէ, ահա ած · յոյսն ասէ, կամիմ զած։ Սէրն ասէ, սիրեմ զած։ Հաւատն ցուցանէ զճանապարհն · յոյսն սկսանի զնա, սէրն հասանի վախճանի։ Հաւատն խոկայ զած · յոյսն ցանկայ այ · սէրն սիրէ զած։ Հաւատն ուսուցանէ · յոյսն դունդորդէ · սէրն ժառանգէ։ Հաւատն ներկայացուցանէ · յոյսն տարածէ զձեռն · սէրն փարի, և վայելէ։ Բարի է հաւատն, և բարի յոյսն · բարեգոյն քան զերկաքանչիւրն է բորբոքեցեալ սէրն։

6. Ներհեղեցեալք բարոյականք առաքինութիւք վերահայլին առ բարս, և գերազանցագունիւ կերպիւ կատարեն զմարդիկ 'ի բարոյականս, հակելով զնոսա առ վարքականս արարողութիւս, ըստ օրինի այ, և ըստ ածայնոյ բարբառի։ Սոքա վերահայլին առ վարս, և վասն այսորիկ կոչին բարոյականք · մինչ են ներհեղեցեալք, և հակեն զմարդիկ առ բարոյականս արարողութիւս, ըստ օրինի այ, և ըստ ածայնոյ բարբառի, են ազնուագունեղք բարոյականք գլխաւորք առաքինութիւք · և կարտինալականքն են չորք, այսինքն, խոհեմութի, արդարութի, արիութի, և բարեխառնութի։ Խոհեմութին կատարէ զիմացութին որքան առ բարոյականս։ Արդարութին կատարէ զկամս։ Արիութին կատարէ զցասմնական մասն։ Եւ բարեխառնութին կատարէ զցանկական մասն։ Խոհեմութին գտանէ զչափմարս միջոցս, առ 'ի ստանալ զյաւիտենական կեանն։ Արդարութին ուսուցանէ զիրաւասիրութիւնն, և զուղղութին։ Արիութին գտանէ զմիջոցն 'ի տաժանելիս իրս, և բարեխառնութին 'ի հեշտալիս · 'ի յայսոսիկ յիշեցեալս սիրելիս չորս առաքինութիս է բարի շրջաբերութի · վասնզի ասէ սրն Ամբրոսիոս։ Է բարի շրջաբերութի, եթէ արդարութին խնդրէ, խոհեմութին գտանէ, արիութին իւրացուցանէ, բարեխառնութին ժառանգէ · զի արդարութին իցէ 'ի բաղձանի, խոհեմութին 'ի յիմացութե, արիութին 'ի գործոջ, բարեխառնութին 'ի վարժման։ Յաղագս պաշտօնի։ Ջանացիր, հոգս, և լեր ուշադիր, ով սիրող առաքինութեց, զի իցես խոհեմ, արդար, արի, և բարեխառն։

7. Սատծին նաև բազումք ներհեղեցեալք առաքինութիւք ընդդէմ եօթնից գլխաւորաց մոլութեց, որք են հպարտութի, նախանձ, ագահութի, բարկութի · բղջախոհութի, որկրամոլութի, և ծուլութի։ Ներհեղեցեալք առաքինութիւք ընդդէմ ասացելոց մոլութեց են այսոքիկ, խոնարհութի ընդդէմ հպարտութե, եղբայրասիրութի ընդդէմ նախանձու, առատաձեռնութի ընդդէմ ագահութե, հեզութի, և համբերութի ընդդէմ բարկութե, ժուժկալութի, և ողջախոհութի ընդդէմ բղջախոհութե, պահեցողութի, և զգաստութի ընդդէմ որկրամոլութե, և ջերմեռանդութի ընդդէմ ծուլութե։ Խոնարհութին է արհամարհել զսուտ գերազանցութին, որոյ փափագի հպարտութին, և բաղձալ ճշմարտի, առ որ ծնեցեալք եմք։ Եղբայրսիրութիւնն է

կամիլ

կամիլ ընկերի զբարի, և խնդալ 'ի վերայ բարւոյ նորա: Առատաձեռնութիւն է 'ի բարեաց իւրոց օգնել թշուառաց: Հեզութիւն է ոչ թախանձեցուցանել զընկերն, այլ խաղաղութբ կեալ ընդ նմա: Համբերութիւն է զներհակս իւր քաջութբ սրտի կրել վասն սիրոյն այ: Ժուժկալութիւնն է վատթարից շարժմանց ցանկութե ընդդիմանալ: Ողջախոհութիւն է սանձել, և նուաճել զմարմինն, և ենթարկել զնա հոգւոյ: Պահեցողութիւն է դատանել զմիջոց 'ի կերակրոջ, և հրաժարիլ 'ի կերակրոյ ճաշակաբէ, և արդելեցելոյ: Զգաստութիւն է դատանել զմիջոց 'ի յըմպելիս: Եւ ջերմեռանդութիւն է մտադրաբար, և բորբոքելաբար պարապիլ հոգևորաց գործոց: Եր խոնարհ, փափագող գերազանցութե շնորհի: Սիրեա զընկերն, խնդալով 'ի վերայ բարեաց նորա: 'Ի բարեաց, զորս վայելես, օգնեա աղորմելեաց. լեր հեզ, և համբերող: Ջանայիր, զի լիցես ժուժկալ, և ողջախոհ. պահեցող, և զգաստ, լեր նաև ջերմեռանդ:

8. Փարթամութիւք մերք են ներգործութիւքն առաքինութեց. զի ուրեմն որ ըստ օրէ հարստանայցեմք, և հաւաքիցեմք զհոգևորս փարթամութիս, պիտոյ է զի զմեզ կրթիցեմք 'ի ներգործութիս առաքինութեց: Հանապազորդական կրթութի մեր, հաւատալն զած, հաւատալն այ, և հաւատալն 'ի յած, 'ի ձեռն բորբոքեցելոյ սիրոյ անդրադարձելով զմեզ 'ի նա: Կրթութի մեր, յուսալն 'ի տր, և յուսադրիլն 'ի նա, աղօթելն, շնորհակալութի մատուցանելն, թողութի խնդրելն, հայցելն զօգնութի: Կրթութի մեր, սիրելն զած: Կրթութի մեր, խոկալն զիրս երկնայինս, և զմիջոցս զմեզ համածօղս առ յաւիտենական կեանս: Կրթութի մեր, հնազանդիլն այ, պահել զպատուիրանս. պատուել զծնօղս, և պահել զարդարութի առ ամս մարդիկ: Կրթութի մեր, քաջապէս պատերազմիլն, զի փառաւորապէս յաղթիցեմք: Կրթութիւն մեր, սանձել զմարմին, ապստամբն ընդդէմ հոգւոյ: Կրթութի մեր, արհամարհել զաշխարհս, և բաղձալ շնորհի: Կրթութի մեր, սիրել զընկերն, կամելով նմա զբարի: Կրթութի մեր, տալ զողորմութիս, և առնել զբարեգործութիս: Կրթութի մեր, դրկել զհամբերութի, և լինիլ հեզ: Կրթութի մեր, ընդդիմանալ ցանկութե, վարել զողջախոհ կեանս, պահել զծոմս, զգաստաբար, և բարեպաշտաբար կեալ: Վերջապէս կրթութի մեր, բորբոքելաբար, և եռափափագ սրտիւ պարապիլ գործոց ջերմեռանդութեան:

## ԳԼՈՒԽ: ԺԲ.

### Յաղագս հաւատոյ:

1. Զհաւատոյ 'ի վեր ճառեցաք կարճառօտաբար, այժմ զնմանէ է բան մանաւորապէս: Հաւատն է աստուածաբանական առաքինութի ներհեղեցեալ 'ի յաստուծոյ, յօժարեցուցանօղ զմեզ առ 'ի հաւատալ իրաց 'ի յայ մեզ յայտնեցելոց: Ներգործական հաւատն է ապա հաւանութի իրաց 'ի յայ յայտնեցելոց: Է աստուածաբանական. քանզի շրջի շուրջ զայիւ, և հաւատայ վասն ճշմարտախօսութե նորա: Է լոյս իմացութե մերոյ, լուսաւորօղ զմեզ 'ի յայնոսիկ իրս, որոց բնական լոյսն մեր հասանիլ ոչ կարէ: Է զիրաց աներևութից. սակայն է ստոյգ, և աներկբայելի. վասնզի յենու ճշմարտախօսութե այ, որ ոչ խաբի, ոչ խաբել կարէ, ունեցօղ զանհուն անպատրելութի, և զանհուն ճշմարտախօսութի: Նշանք հաւատալութե են մեծք, և բազումք: Նշանք հաւատալութե մաքրութի

վարդապետութե հաւատոյ, յաղ֊
թօղ զմաքրութի ա՟մի վարդապե֊
տութե. մեծք սքանչելիք արարե֊
ցեալք 'ի հեղինակէ հաւատոյ. և
ամենամեծ յաղթութի, որով 'ի յաշ֊
խարհի յաղթեցաւ անհաւատութին:
Հաւատոյ զա՟ծ, վասնզի հաւանի
գոլ զա՟ծ: Հաւատոյ ա՟յ, քանզի
հաւանի զասացեալս 'ի յա՟յ գոլ ճշ֊
մարիտս: Եւ. հաւատոյ 'ի յա՟ծ,
վասնզի առնէ զմեզ անդրաբերել 'ի
նա:

2. Մեծ է գերազանցութի
հաւատոյ մերոյ յա՟մէ կողմանէ:
Մեծ է 'ի կողմանէ նորա, վասն֊
զի է հոգևոր գերբնական լոյս,
լուսաւորօղ զիմացութի. և է աղ֊
նուագունեղ մասնակցութի ա՟ծայ֊
նոյ լուսոյ: Մեծ է 'ի կողմանէ
շնորհողի, և զնա մեզ ներհեղողի.
վասնզի է ազնուագունեղ պարգև
ամենակարողի աստուծոյ: Մեծ է
'ի կողմանէ խորհրդոց, և գաղտ֊
նեաց Աստուծոյ, զորս յայտ֊
նէ մեզ. վասնզի զբարձրագունեղս
խորհուրդս, և զխորագունեղս
գաղտնիս ծանուցանէ մեզ մարդ֊
կանցս: Մեծ է 'ի կողմանէ հոգև֊
որի կենի մերոյ, որ է 'ի ձեռն
շնորհի. քանզի ցուցանէ զպատուա֊
կանութի շնորհի, որ է տեսական
մասնակցութի ա՟ծայնոյ էութե,
Ածացուցանօղ զմարդն: Մեծ է
'ի կողմանէ առաքինութեց. վասն֊
զի ծանուցանէ մեզ զճշմարիտ ա֊
ռաքինութիս: Մեծ է 'ի կողմա֊
նէ խորհրդոց. քանզի առնէ զմեզ
ճանաչել զխորհուրդս, համբերօղս
զսրբացուցիչ շնորհ: Մեծ է 'ի
կողմանէ վախճանի մերոյ. վասնզի
ցուցանէ մեզ զճշմարիտ երանու֊
թի: Մեծ է 'ի կողմանէ միջոցաց.
քանզի առաջադրէ մեզ զըմբռնս, և
զյարմարագունեղս միջոցս առ 'ի
ստանալ զյաւիտենական կեանն:
Վերջապէս մեծ է 'ի կողմանէ ե֊
կեղեցւոյ, հարսին քի, յորում մի֊
այնում է փրկութի մարդոյ. վա՟ն֊
զի ուսուցանէ մեզ զմին, ս՟բ,
կաթուղիկէ, և Առաքելական եկե֊
ղեցի:

3. Հաւատն է հարկաւոր մար֊
դոյ վասն փրկութե. քանզի թարց
հաւատոյ անկարելի է հաճոյանալ
ա՟յ. ուստի ասէ ս՟բն Պօղոս: Այլ
հաւատալ արժանէ այնմ, որ մեր֊
ձենայ առ ա՟ծ, թէ է ա՟ծ. և որք
խնդրեն զնա լինի պարգևատու:
Առ եբրայեցիս. 11. թիւ. 6. հաւատն
է հիմն քրիստոնէականի շինուածոյ.
ուստի որպէս ոչ կարէ կեալ շի֊
նուածն թարց հիման. այսպէս 'ի
մեզ ոչ կարէ բաղկացուցանիլ տա֊
ճար հոգւոյն սրբոյ, և բնակա֊
րան ամենասրբոյ երրորդութե
թարց հաւատոյ. այնպէս է 'ի մար֊
դում հաւատն առ փրկութի, որ֊
պէս արմատն 'ի ծառոջ առ պտուղ.
իսկ 'ի ծառոջ ոչ կարէ գոլ պտուղ
թարց արմատոյ. ուրեմն և ոչ 'ի
մարդում կարէ գոլ փրկութի թարց
հաւատոյ: Առ փրկութի մեր խն֊
դրի ճանաչումն բազմաց իրաց, որ֊
պէս թէ ա՟ծ իցէ երրեակ 'ի յան֊
ձինս, և մին 'ի յէութե, և 'ի
բնութե: թէ որդին ա՟յ իցէ ներ֊
մարմնացեալ 'ի յարգանդի կուսին,
ծնեալ 'ի կուսէն, չարչարեցեալ.
և խաչեցեալ վասն փրկուե մարդ֊
կանց. թէ 'ի միում անձին քի ի֊
ցեն երկու զանազանեցեալք կատա֊
րեալք բնութիք, ա՟ծային, և
մարդկային և ճանաչումն բազմաց
այլոց իրաց. իսկ ճանաչումն այս֊
պիսեաց իրաց է 'ի ձեռն հաւա֊
տոյ. ուրեմն հաւատն է հարկաւոր
առ փրկութի: Ուստի ասէ Տ՟րն:
Որ հաւատասցէ, և մկրտեսցի,
կեցցէ. և որ ոչն հաւատասցէ,
դատապարտեսցի: Մարկոս: 16.
թիւ. 16. Ապաւրեմն թարց հա֊
ւատոյ դատապարտութի:

4. Հաւատն է մին, բայց հա֊
ւատալիք իրք են բազումք, Հա֊
ւատալի է խորհուրդն Ամենասր֊
բոյ երրորդութե, այսինքն, թէ
ա՟ծ իցէ մին, բայց ա՟ծայինք ան֊
ձինք երեք, հայր, որդի, և հո֊
գին ս՟բ. հայրն ոչ յայլմէ անձնէ,
որդին 'ի հօրէ, և հոգին ս՟բ 'ի
հօրէ, և 'ի յորդւոյ: Հաւատալի է
խորհուրդն ներմարմնութե, այս֊
ինքն,

ինքն, թէ 'ի քս իցէ մին անձն, և երկու բնութիւք, ածային, և մարդկային, թէ ծնեալ իցէ 'ի կուսէն, և վասն մեր չարչարեցեալ, խաչեցեալ, մեռեալ, և թաղեցեալ. թէ յարուցեալ իցէ, ելեալ իցէ 'ի յերկինս. նստիցի ընդ աջմէ հօր, և գալոց իցէ դատել զմս : Հաւատալի է, զեկեղեցին այ, սիրելի հարսն քի, սուրբն, և հաստատութին ճշմարտութե, գոլ մին, սբ, կաթուղիկէ, և առաքելական : Հաւատալիք են եօթն փրկաւէտք, համաբերողք զշնորհն խորհուրդք նորոյ օրինի, մկրտութին, դրոշմն, հաղորդութին, ապաշխարութին, վերջին օծումն, կարգն, և ամուսնութին : Հաւատալի է, 'ի հաղորդութե զորն մեր Յս Քս իրականապէս գոլ ներկայ : Հաւատալիք են վերջինք մերք, այսինքն, յարութին, դատաստանն. արքայութին, և դժոխն : Վերջապէս հաւատալիք են համայնք այլք իրք, զորս հաւատայ սբ մայր հռոմէական եկեղեցին, որ է հարսն քի, սուրբն, և հաստատութին ճշմարտութե :

5. Կենդանի հաւատն փրկէ. քանզի ունի զկեան հոգւոյ, որ է կեան փրկութե : Կենդանի հաւատն է, երբ ոմն այնպէս կեայ, որպէս հաւատայ. այսինքն, հաւատալով, առ փրկութի հոգւոյ գոլ հարկաւոր պահպանումն պատուիրանաց, պահէ զպատուիրանս. հաւատալով, հարկաւոր գոլ զշնորհն, կեայ 'ի շնորհի. հաւատալով հարկաւոր գոլ զսէրն այ, և ընկերի, սիրէ զած. և զընկերն. հաւատալով գոլ հարկաւորս զառաքինութիս, զարդարէ զիւր ինքն առաքինութեք. հաւատալով. զբարեգործութիս գոլ հարկաւորս, պարապի բարեգործութեց : Գործօղն որպէս հաւատայ, է իմաստուն : Վասնզի հաւատոյ իւրում կուդակցէ զգործ իւր : Է իմաստուն, քանզի ոչ միայն խնդրէ զհաւատն, այլ նաև զկեանն հաւատոյ, որ է շնորհն այ : Է իմաստուն, վասնզի սիրով, որ է տեսակն առաքինութեց, ներտեսակաւորէ զհաւատն : Է իմաստուն, քանզի առ սիրելի վաղճան, զոր առաջադրէ ինքեան հաւատն, մերձեցուցանէ զըմբռնս, և զյարմարս միջոցս : Յայտ է, թէ հաւատն կենդանին շնորհիւ, և տեսակաւորեցեալն սիրով, փրկէ : Քանզի ասէ Տրն : Եւ որպէս մովսէս բարձրացոյց զօձն յանապատի, նոյնպէս բարձրանալ պարտ է որդւոյ մարդոյ : Զի ամ որ հաւատայ 'ի նա ոչ կորիցէ. այլ ընկալցի զկեանսն յաւիտենականս : Յօհաննու : 3. թիւ. 14.

6. Կաթուղիկէ հաւատն, որով մեք հաւատամք 'ի քս, վասն փրկութե մերոյ խաչեցելոյն, լաւագոյն է քան զամս փարթամութիս, քան զամս պատիւս, և քան զամ ինչ այսր աշխարհի. վասնզի կաթուղիկէ հաւատն մեր զմեղաւորս մարդիկս փրկէ, զկոյրս լուսաւորէ, զհիւանդս առողջացուցանէ, զդեռահաւատս մկրտէ, զհաւատացեալս արդարացուցանէ, զապաշխարօղս վերանորոգէ, զարդարս աճեցուցանէ, զմարտիրոսս պսակէ. զկուսանս, և զայրիս, և զզուգադիցեալս ողջախոհիւ ամօթխածութբ համապահէ, զեկեղեցիկոսս կարգաւորէ, զքահանայս սրբագնագործէ, և 'ի յաւիտենականի ժառանգութե ընդ սրբոց հրեշտակաց զետեղէ, որպէս ասէ սբն Օգոստինոս. տես որպէս խօսիցի զկաթուղիկէ հաւատոյ մերմէ սբն Պեռնարտոս : Զինչ է զոր ոչ եգիտ հաւատն. առշօշափէ զանշօշափելիս, հասանի անծանօթից, իմանայ զանչափս, ըմբռնէ զվերջինս. վերջապէս զինքն յաւիտենականութին այնու ընդարձակադունեղիւ ծոցիւ իւիք կերպիւ շրջապատէ : 'ի վերայ երգերգոց : Հաւատոյ մերոյ այսպէս գերազանցի, և բարձրադունի պարտիմք համապատասխանել, զի լինիցիմք ճշմարտախօսք հաւատացեալք, և խոհեմք, և իմաստունք հաւատացօղք : Եղիցի համապատասխանութին, եթէ

գործք մերք համապատասխանիցեն բանից. ուստի ասէ ս̄բն Գրիգորիոս։ Քանզի յայնժամ ճշմարտապէս եմք հաւատացեալք, եթէ զոր խոստանամք բանիւք, կատարեմք գործովք։ 'Ի ճառի։ 26. երորդի։

7. Մեռեալ հաւատն ոչ փրկէ. քանզի ոչ ունի զկեանս հոգւոյ, որ է կեանս փրկութե̄։ Մեռեալ է հաւատն, որ է թարց շնորհի, և թարց սիրոյ. թարց առաքինութե̄ց, և թարց բարեգործութե̄ց։ Որ հաւատայ, և մեղանչէ մահացորէն, և անցանէ զօրինօքն ա̄յ, ունի զմեռեալ, և զանտեսակ հաւատ։ Այսպիսի հաւատն է մեռեալ, և թարց տեսակի, վասնզի ոչ ունի զշնորհ, որ է կեանս, և ոչ ունի զսէր, որ է տեսակ։ Այսպիսի հաւատն ոչ ունի զիրաւունս առ փառս, և ոչ զչափ փառաց, և ոչ զբան արդիւնաւորելոյ. իրաւունս առ փառս է շնորհն, չափն փառաց է սէրն, և բանն արդիւնաւորելոյ է սիրումն։ Հաւատացեալն, որ մահացորէն մեղանչէ, է անխոհեմ. քանզի ճանաչելով զվարձանն, զոր առաջադրէ հաւատն, ոչ գնէ զմիջոցս համաձօղս առ վարձան, այլ գործէ զմեղս արգելօղս զնա. է անխոհեմ, և անմիտ. վ̄ն զի ճանաչելով զկեանսն, գրկէ զմահն. ճանաչելով զազատութի̄ն, ենթարկէ զիւր ինքն գերութե̄. և ունելով զծանօթութի̄ յաւիտենական ճանապարհի, մտանէ 'ի ճանապարհն մշտնջենաւորի մահուան։ Ո՞վ ունեցօղ զմեռեալ, և զանտեսակ հաւատ, ջանացիր, զի կենդանացուցանիցես զհաւատն քո շնորհիւ, և ներտեսակաւորիցես զնա սիրով, և սիրմամբ, զի մի մեալով անմիտ, կորիցես, այլ լեալ իմաստուն կեցցես 'ի յերկրի 'ի շնորհի, և կարիցես կեալ 'ի յերկնի միշտ փառօք։

8. Կենդանի, և տեսակաւորեցեալ հաւատն, ուշադրաբար պահպանելի է։ Այս է պատուականագունեղ մարգարիտն, զոր պարտիմք գնել, տալով զա̄մ ինչ, զոր ունիմք, ըստ այնմ։ Նմանէ արքայութի̄ն երկնից առն վաճառականի, որ խնդրիցէ մարգարիտս գեղեցիկս։ Եւ գտեալ մի պատուական մարգարիտ, երթեալ վաճառեաց զա̄մ զոր ինչ ունէր, և գնեաց զայն մարգարիտն. Մատթէի։ 13. թիւ 45. Այս է այն ագարակն։ 'Ի յորում թաղեցեալ է պատուականագունեղ գանձն շնորհի։ Ուրեմն պարտիմք վաճառել զա̄մ ինչ, զոր ունիմք, և զոր ժառանգեմք, զի գնիցեմք զայս պատուականագունեղ այգիս, ըստ ասացելոյ փրկչին։ Նմանէ արքայութի̄ն երկնից գանձի ծածկելոյ յագարակի, զոր գտեալ մարդոյ թագոյց, և 'ի խնդութէ̄ անտի երթեալ վաճառէ զա̄մ ինչ, զոր ունի, և գնէ զագարակն զայն։ Մատթէի։ 13. թիւ. 44. Հաւատն մեր է լապտերն մեր, զոր պարտիմք վառեալ պահել ձիթով սիրոյ, զի որպէս զխոհեմս կուսանս ելանիցեմք ընդ առաջ երկնային փեսային։ Հաւատն մեր է քանքար մեր, պարգևեցեալ մեզ 'ի Ք̄նէ թագաւորողէ 'ի յերկինս։ Ուրեմն պարտիմք գործել 'ի նմա սիրով, և այլովք առաքինութե̄ք, ելուզանելով զներգործութիս նորա 'ի հրամանէ սիրոյ, և ստանալ զարդիւնս, զի 'ի յուրախութե̄ տեառն մերոյ, յետ այսր ներկայ կենիս մտանել կարիցեմք։

# ԳԼՈՒԽ։ ԺԹ·

## Յաղագս յուսոյ ։

1. Յոյսն է ա՟ծաբանական առաքինութի, ներհեղեցեալ մեզ 'ի յա՟յ, հակօղ զկամս մեր առ 'ի խնդրել զյաւիտենական կեանն, և փափագիլ նմա, ցանկալ տեսութե Ա՟ծայնոյ էութե, և ճշմարիտ երջանկութե, և երանութե մերոյ ։ Այս Ա՟ծաբանական, վասնզի ցանկայ ա՟յ, և փափագի ա՟ծացուցման ։ Յենու բարութե, ողորմածութե, խոստման, և օգնութե ա՟յ ։ Ա՟ծ աղբիւրն բարութե, և հայրն ողորմութեց. մեզ բանականաց, և իմացողականաց ստեղծուածոց իւրոց, ամենակարողութբ իւրով 'ի յոչընչէ արտադրեցելոց, առ պատկեր, և նմանութի իւր ձևակերպեցելոց, զանձնիշխան կամս ունեցողաց, և երանութե, և երջանկութե ընդունակաց, շարժեալ 'ի բարութէ, և ողորմածութէ իւրմէ, խոստացաւ զմասնակցութի երանութե իւրոյ. քանզի խոստացաւ զտեսումն ա՟ծայնոյ էութե իւրոյ, և վայելումն իւր, և կամի լինիլ մեզ ձեռնատու օգնութբ իւրով առ 'ի ստանալ զխոստացեալ երջանկութին, և առ այս վաղճան ներհեղեաց 'ի մեզ զունակութի յուսոյ, զի զօրանայցեմք առ 'ի ստանալ զխոստացեալ երանութին, և հրամայէ մեզ, զի յուսասցեմք, և օգնեցեալք օգնականութբ նորա, ունելով զունակութի յուսոյ, փափագիցեմք, և ցանկայցեմք վայելման նորա ։ Ո՛վ անպատմելի բարութի, և զարմանալի ողորմածութիւն ։

2. Նաև յոյսն է գերազանց առաքինութի ։ Է գերազանց 'ի կողմանէ իւրմէ. քանզի է գերբնական ունակութի ներհեղեցեալ, մասնաւոր, և աղնիւ գործ Ա՟ծայնոյ բարութե, և ողորմութե ։ Է գերազանց 'ի կողմանէ ա՟յ, քանզի ամենակարօղն ա՟ծ, շարժեալ 'ի ծայրագունեղէ բարութէ, և ողորմածութէ իւրմէ, ներհեղեաց զնա 'ի մեզ ։ Է գերազանց 'ի կողմանէ կարողութե մերոյ, զոր զօրացուցանէ. վասնզի զօրացուցանէ զանձնիշխան կամս մեր. է գերազանց 'ի կողմանէ գործոյ, առ որ տուէցեալ է մեզ. քանզի գործն, առ որ տուէցեալ է մեզ, է փափագն, որով փափագիմք երանութե, և երջանութե մերոյ ։ Եւ գործս այս է ներգործական յոյս. քանզի է ներգործութի, որով փափագիմք երջանկութե մերոյ, որ է յաւիտենական կեանն, և արքայութին երկնից ։ Եւևս է գերազանց 'ի կողմանէ փառաց, վասնզի առնէ զմեզ բաղձալ յաւիտենականաց փառաց ։ Յոյսն մեր ոչ միայն զօրացուցանէ զկամս մեր, զի փափագիցի վայելման ա՟յ, այլ նաև զօրացուցանէ զնա, զի փափագիցի, և ցանկայցէ կատարման ա՟ծայնոյ կամացն, որ է հարկաւոր առ 'ի ստանալ զյաւիտենական երջանկութի ։ Յոյսն մեր 'ի յա՟յ ներհեղեցեալն, և ողորմածաբար պարգևեցեալն, նաև զօրացուցանէ զկամս մեր, զի գարշիցի 'ի մեղաց, որք արգելուն զվայելումն ա՟յ ։

3. Յոյսն մեր փափագի այնոցիկ ամենեցուն, զորս ուսանիմք 'ի տէրունականի աղօթի ։ Անհուն իմաստութին ուսոյց մեզ զայնոսիկ որք պարունակին 'ի յասացելոջ աղօթի, գոլ խնդրելիս. ուստի խոստացեալք են, քանզի այնոքիկ իրք են խնդրելիք, որք են խոստացեալք ։ Խոստացեալք իրք, որք են խնդրելիք, են փափագելիք ։ Ուրեմն են յուսալիք. քանզի են բաղձալիք ։ Ուրեմն յոյսն փափագի, և ցանկայ սրբացուցման ա՟ծայնոյ անուան. գալստեան արքայութե ա՟յ. բոլորականի կատարման ա՟ծայնոյ կամացն, և համահետևաբար պահպանման պատուիրանացն. հա֊

նա֊

նապաղորդականի հացի մերոյ․ հոգևորի , և մարմնաւորի ․ վճարման պարտուց , և թողութեան , և քաւութե՟ մեղաց ․ օգնութե՟ յաղթութե՟ , և ազատութե՟ 'ի չարէ ։ Յայտ է 'ի յասացելոց , թէ ոյք իցեն յուսալիք յուսով , և և փափագելիք 'ի յուսացողէ ։ Ապաուրեմն զօրացուցեալք յուսով , փափագիմք սրբացուցչի շնորհի ․ ըղձամք երջանկութե՟ , և յաւիտենականի երանութե՟ , վայելման ա՟յ , և արքայութե՟ երկնից ․ ցանկամք անուցման հոգւոց մերոց 'ի շնորհի , և բաւականութե՟ ժամանակաւորաց իրաց ։ Բաղձամք թողութե՟ , և քաւութե՟ մեղաց ․ փափագիմք յաղթութե՟ 'ի փորձութիս , և յաղթանակի ընդդէմ թշնամւոյ ․ և խնդրեմք զօգնութի ընդդիմանալոյ մեղաց ։

4․ Տեսակաւորեցեալ յոյսն փրկէ ․ վ՟ն զի ունի զշնորհն , և զսէրն ․ ուրեմն ունի զկրաւուն 'ի փրկուի , և 'ի յաւիտենական կեանն , և ունի զբան արդիւնաւորելոյ ․ քանզի իրաւունն 'ի փրկութի , և 'ի յաւիտենական կեանն , է շնորհն , և բանն արդիւնաւորելոյ զյաւիտենական կեանն , է սէրն , և սիրուեմն ․ ունեցողն զյոյս կենդանի շնորհիւ , և զտեսակաւորեցեալն սիրով , է երջանիկ ․ քանզի մինչ ունի զիրաւունն 'ի փառս , և զբանն արդիւնաւորելոյ զփառս , 'ի յա՟մում փափագի իւրում , և 'ի յա՟մում ներգործութե՟ յուսոյ արդիւնաւորի , և բաղմապատկէ զարդիւնս ։ Արդիւնաւորի 'ի յաղօթելն , և 'ի յաղերսելն , և 'ի մատուցանելն զաղաչանս , և արդիւնաւորի 'ի յապաշխարելն զանցելոց մեղաց , ողորմածաբար ներելոց , և 'ի յապաշխարելն , և 'ի ցաւելն վ՟ն ներելեաց մեղաց ։ Արդիւնաւորի 'ի հառաչելն , և 'ի հեծելն ․ և արդիւնաւորի 'ի փափագելն շնորհի ։ Արդիւնաւորի 'ի մատչելն խորհրդաւորապէս առ հաղորդութի , կամ 'ի հաղորդելն հոգևորապէս ․ և արդիւնաւորի 'ի մատուցման զշնորհակալութիս , և 'ի խնդրելն զյարատևութի ։ Արդիւնաւորի 'ի ցանկալն արքայութե՟ երկնից , և երջանկութե՟ ․ և արդիւնաւորի 'ի փափագելն պահպանման պատուիրանաց , և հնազանդութե՟ ա՟յ ։ Արդիւնաւորի 'ի փափագելն լուսաւորութե՟ մտաց , և 'ի բաղձալն բաւականութե՟ կենի ։ Արդիւնաւորի 'ի խնդրելն զքաւութի , և զթողութի , և 'ի խնդրելն զներումն ․ և արդիւնաւորի փափագելով յաղթութե՟ , և փրկութե՟ 'ի չարէ ։ Ապաուրեմն միշտ արդիւնաւորի , և բաղմապատկէ զարդիւնս ։

5․ Յոյսն է հարկաւոր առաքինութի առ փրկութի մարդոյ ․ ա՟ծաբանականք առաքինութիք են հարկաւորք առ փրկութի ըստ այնմ սրբոյն Պօղոսի , բայց արդ մնան հաւատ , յոյս , սէր , սոքա երեքեան ․ և մեծ քան զսոսա սէրն է ։ Առ Կորընթացիս ։ Առաջնորդ 13․ թիւ․ 13․ Իսկ յոյսն է ա՟ծաբանական առաքինութի ։ Ուրեմն է հարկաւոր առ փրկութի ։ Աղօթքն է հարկաւոր առ փրկութի ․ քանզի ասէ , Տ՟րն , թէ պարտ է յա՟մ ժամ կալ ն՟ յաղօթս , և մի ձանձրանալ ․ Ղուկաս ։ 18․ թիւ․ 1․ Եւ ս՟րբն Պօղոս ասէ ։ Անդադար աղօթս արարէք ։ Թեսաղոնիկեցիս առաջնորդ ։ 5․ թիւ․ 17․ Իսկ աղօթքն ենթադրէ զյոյսն ․ վ՟ն զի այնոքիկ իրք են խնդրելիք , որք են փափագելիք , և յուսալիք ։ Ուրեմն յոյսն է հարկաւոր առ փրկութի ։ Ապաշխարութի՟ է հարկաւոր առ փրկութի մեղանչողի ․ քանզի ասէ Տ՟րն ․ եթէ ոչ ապաշխարիցէք , ամենեքին նոյնպէս կորնչիցիք ։ Ղուկաս ։ 13․ թիւ․ 3․ Իսկ ապաշխարութի՟ ենթադրէ զյոյսն ․ վ՟ն զի ապաշխարողն փափագի , և յուսայ թողութե՟ ։ Ուրեմն յոյսն է հարկաւոր առ փրկութի մեղաւորի ։ Ցանկալն արքայութե՟ն ա՟յ է հարկաւոր առ փրկութի ․ քանզի ասէ Տ՟րն ։ Խնդրիցէք նախ զարքայութի՟ն ա՟յ , և զարդարութի՟ն ն՟ր , և այդ ա՟մ յաւելցին ձեզ ։ Մատթէի ։ 6․ թիւ․ 33․ Իսկ ցանկալն արքայութե՟ն,

ութեան այ է ներգործութիւն յուսոյ, Ապաուրեմն յոյսն է հարկաւոր առ փրկութի ։

6. Յոյսն յուսացողի 'ի Տր̄ է ամրութի, ապաւէն, վահան, և որմն ընդդէմ թշնամեաց ․ կարի յոյժ հաճոյ է այ̄ նախախնամել զյուսացողն 'ի յինքն, և նպաստել նմա ։ Ամենակարողն այ̄ ոչ թողու զնա, որք զյոյսն իւրեանց դնեն 'ի նա ։ Որք բոլորով սրտիւ յուսադրին 'ի Տր̄, ապահովք են 'ի պատերազմի, ոչքա յաղթեն զհասարակ թշնամին, և զանողորմ ոսոխն մարդկանց 'ի պատերազմի ․ 'ի պատերազմի հարկաւորք են զէնք ․ զէնն մեր է յոյսն մեր 'ի Տր̄ ։ Պիտոյ է յուսադրիլ 'ի Տր̄, և միշտ պաշտել օգնութե նր̄ ․ քանզի դիւրին է 'ի յաջս տեառն օգնել յուսացողաց 'ի յինքն ։ Այ̄ ողորմի յուսացողաց 'ի նա, և սպասողաց նմա, և է բազուկ նց̄ 'ի յառաւօտու, և փրկութի 'ի ժամանակի նեղութե ։ Օրհնութիւն այ̄ է 'ի վր̄ յուսացողացն 'ի նա, և Տր̄ն եղիցի յուսադրութի նց̄ ։ Տր̄ն է բաժին հոգւոյ սպասողի նմա, հոգւոյ յուսացողի 'ի նա, և խնդրողի զնա ։ Յուսացողն 'ի Տր̄, համարձակեսցի ասել ։ Ես առ Տր̄ հայեցայց, սպասեցից այ̄ փրկչին իմոյ ։ ունկնդիր լիցի ինձ Տր̄ Այ̄ն իմ ․ քանզի զյուսացողս 'ի նա, և կարդացողս առ նա մաքուր սրտիւ, փրկէ, և պահէ ։ Ուստի է ուրախութի, և խնդութի յուսացողաց 'ի Տր̄ ։

7. Յոյսն յուսացողաց, և յայ̄ երկնչողաց, է հաստատագունեղ մխիթարութի, և է ապահով, և հաստատ խարիսխ հոգւոյ, 'ի Տր̄ն յուսացողի ․ և է հրդեհումն բոցով սիրոյ վառեցեալ, մինչև առ ներքնայինս ծածկոցի, և մինչև առ երկին, յոր եւ փրկիչն մեր Յս̄ Քս̄ քահանայապետն 'ի յաւիտեանս ըստ կարգի մելքիսեդեկի, Անունն տեառն, և յիշատակարան նր̄ է 'ի յըղձի հոգւոյ յուսացողի, փափագողի 'ի գիշերի, և բորբոքելով սիրով 'ի յառաւօտու հսկողի առ նա ։ Ողորմութիւն տեառն է 'ի վր̄ յուսացողացն 'ի նա ․ կենդանեաւ, և տեսակաւորեցելով յուսով յուսացողն 'ի յանուն տեառն, նաև 'ի ճանապարհի է երանեցեալ, 'ի յօգնելն այ̄ 'ի սիրոջ ․ կենդանեաւ յուսով յուսացողք, առաջի մարդկանց չարչարեցեալք, ունին զյոյս լի անմահութբ ։ Յուսացողքն 'ի Տր̄, իմանան զճշմարտութիւն ․ և կենդանեաւ յուսով սպասողք տեառն, ժառանգեն զարիութի, և բորբոքեցելով սիրով սիրողք զայ̄, վայելեն զերանութի, և հրճուէին ուրախութբ յուսոյ ։ Կենդանեաւ յուսով յուսացողք 'ի Տր̄, ոչ ամաչեսցեն 'ի յաւուրն դատաստանի, այլ 'ի յԱրդար դատաւորէ ընկալցին զպսակն արդարութե, զոր խոհեմաբար, և իմաստնաբար յուսացան, սիրելով զայ̄, և հնազանդելով նմա, և զպատուիրանս նր̄ պահելով ։

8. Յուսացողն 'ի Տր̄, ժառանգեսցէ զերկիրն, և վայելեսցէ զլեառն սբ̄ նր̄ ։ Վասնզի երկիրն արքայութե, և երկնային արքայութիւն այ̄, է ժառանգութիւն երկիւղածացն այ̄, և 'ի յանուն նր̄ յուսացողաց ։ Յուսացողքն 'ի Տր̄ են հզօրք, և ազատք 'ի տկարութէ ։ Քանզի Տր̄ն է զօրութի նց̄, և ամենակարողն ուժգնութի նց̄ ։ Մեծ է վարձատրութի յուսացողի 'ի Տր̄ ։ Կենդանեաւ յուսով յուսացողի 'ի Տր̄, վարձատրութիւն է կեանն յաւիտենական, զոր խոստացեալ է այ̄ յուսացողացն 'ի նա, Յուսացողն 'ի Տր̄ ոչ երկնչի 'ի պատերազմէ ․ քանզի ունի զօգնիչ, և նախախնամիչ զՏր̄ն մեր Այ̄ հզօրն, որ փրկէ զհոգիս ծառայից իւրոց, 'ի յանուն նր̄ ուսացողաց, և բարեգթածիւք աչօք հայի 'ի վերայ երկիւղածաց իւրոց, զի ազատիցէ 'ի 'ի մահուանէ զհոգիս նոցա ։ Այր տառապեցուցեալ, որ յուսայ 'ի Տր̄, է երջանիկ ․ զի բարի է Տր̄, և զօրացուցիչ 'ի յաւուր նեղութե, և ճանաչէ զյուսացողս 'ի յինքն ։ Ո՛ հաւատացող քրիստոնեայ, ջա-

նա-

նացիր, զի իցես երկիւղած, և յուսացող կենդանեաւ յուսով ։ Մեռեալն, և անտեսակաւորն ոչ փրկէ․ այլ այս միայն, որ է կենդանի, փրկէ ։ Բացամերժեա ուրեմն զյուսահատութիւն, և կալ զկենդանի յուսադրութիւն, որ է 'ի շնորհի, և 'ի սիրոջ, զի 'ի տեառնէ պաշտպանիցիս, և զյաւիտենական կեանն ստանայցես ։

## Գ Լ Ո Ւ Խ Ի․

### Յաղագս սիրոյ ։

1. Սէրն է ունակութիւն ածաբանականի առաքինութեան ներհեղեցեալ մեզ 'ի այ, յօժարեցուցանող զկամս մեր առ 'ի սիրել զած 'ի վեր քան զամ ինչ, և զընկերն մեր իբրև զմեզ ։ Սէրն է ներգործութիւն սիրոյ այ 'ի վեր քան զամ ինչ, և ընկերի մերոյ իբրև զմեզ ։ Ասի ածաբանական, քանզի նախապէս առ շօշափէ զած, և սիրէ զնա 'ի վեր քան զամ ինչ ։ Սէրն է տեսակն առաքինութեանց, և թագուհին նց ։ Է տեսակ, քանզի սա տեսակաւորէ զնս, և տայ նց զգեղեցկութիւն ։ Եւ է թագուհի, վասն զի հրամայէ ամից առաքինութեանց ։ Սէրն է զօրութիւն այլոց առաքինութեանց ։ Քանզի թարց սիրոյ ոչինչ արժեն ։ Ներգործութիւնք առաքինութեանց արարեցեալք 'ի հրամանէ սիրոյ արժեն, և արդիւնաւորին զյաւիտենական կեանն ։ Ըստ սաստկութեան ներգործութեան սիրոյ, է սաստկութիւն ներգործութեանց այլոց առաքինութեանց ։ Ըստ սաստկութեան ներգործութեան սիրոյ, է սաստկութիւն ունակութեան սիրոյ, շնորհի, և այլոց առաքինութեանց ։ Սէրն է բանն արդիւնաւորելոյ, և չափն էական երանութեան ։ Է բանն արդիւնաւորելոյ․ վասն զի ամ ներգործութիւն ելուզեցեալ 'ի հրամանէ սիրոյ, է արդիւնաւոր ։ Է նաև չափն երանութեան․ քանզի ըստ մեծութեան սիրոյ, է մեծութիւն էական երանութեան ։

2. Սէրն է կարողագունեղ առաքինութիւն ընդդէմ մեղաց․ վասն զի մին ներգործութիւն սիրոյ է բաւական առ 'ի ջնջել զամս մահացու մեղս ։ Քանզի ած զինքն սիրողս սիրէ ։ 'Ի զօրութէ չարչարանացն քի վն ջնջման մեղաց մերոց չարչարեցելոյ, ջնջէ զմեղս պարտաւորութէ հանդերձ առ 'ի խոստովանիլ․ և բառնայ զպարտաւորութիւն յաւիտենականնայ չարչարանաց ։ Ոմն ներգործութիւն սիրոյ կարէ գոլ այնպէս սաստիկ, զի վճարիցէ վասն ամից պատժոց մեղաց մերոց պարտաւորաց ։ Քանզի է վճարողական․ ուստի կարէ գոլ այնպէս սաստիկ, զի վճարիցէ վն ամից ։ Սէրն առնէ զմեզ սիրելիս այ, և առնէ, զի ած իցէ 'ի մեզ, և մեք 'ի նմա, և զի լինիցիմք մի ինչ 'ի սիրոջ ընդ այ ։ Ներգործութիւն այսր առաքինութեան զուգակցէ զմեզ ընդ այ, և ածացուցանէ ։ Ուստի ըստ սաստկութե սիրոյ, և սիրման է սաստկութիւն զուգակցութեան մեր ընդ այ, և ածացուցման մերոյ ։ Շնորհիւ, և սիրով, որ է յատկութիւն շնորհի, և սիրմամբ լինիմք բարեկամք, և որդիք այ, եղբարք քի որդւոյն այ միածնի, և ժառանգք յաւիտենականի կենի ։ 'Ի ձեռն սիրոյ լինիմք տաճար հոգւոյն սրբոյ, և բնակարան ամենասրբոյ երրորդութե ։ 'Ի ձեռն սիրոյ հոգին մեր լինի սիրելի հարս քի երկնայնոյ փեսայի սիրելագունեղի, քաղցրագունեղի, և հեզագունեղի ։

3. 'Ի ձեռն սիրոյ քրիստոնեայն լինի կենդանի անդամ քի, վերընդունելով զկենդանական ոգին 'ի նմանէ ։ Սէրն է ամենամեծ և առաջին պատուիրանն ։ 'Ի հրամանի սիրոյ են ամք օրէնք, և մարգարէք ։ Սէրն է պատուիրանք քի, և նշանն նորոյ օրինի, և քրիստոնէի ։ Սէրն է վախճանն պատուիրանաց, և կատարումն նց ։ Թարց

սիրոյ

սիրոյ ոչ լեզուք մարդկանց, և հրեշտակաց, ոչ մարգարէութիւն, և ծանօթութիւն խորհրդոց, և գիտութիւն իրաց ազնուագունեղից, ոչ զօրութիւն սքանչելեաց, ոչ բաշխումն ընչից 'ի կերակուր աղքատաց, և ոչ մատնումն մարմնոյ այնպէս զի այրեսցի, արժէն զիր ինչ։ Սէրն է լաւագոյն քան զմարգարէութիւնս, քան զլեզուս, և քան զգիտութիւն. վասն զի մարգարէութիւնք դատարկասցին, լեզուք դադարեսցեն, և գիտութիւն եղծեսցի. քանզի երբ դայցէ, որ է կատարեալ, այսինքն, տեսութիւն ա՟յ, որ սպասումն ն՟ր, դատարկասցի, որ է 'ի մասանէ։ Արդ սէրն ոչ երբեք անկանի։ Նա և է լաւագոյն քան զհաւատ, և քան զյոյս։ Քանզի որպէս մնան այժմ այսօրէն երեք. հաւատ, յոյս, և սէր. բայց մեծագոյնն սոցին է սէրն։ 'Ի սիրոջ է համբերութիւն, բարեգթութիւն, եղբայրսիրութիւն, խոնարհութիւն, արհամարհումն աշխարհի, խնդրելն զայնոսիկ իրս, որք են ք՟ի, մտածումն բարւոյ, և սէրն ճշմարտութեան։

4. Որ սիրէ զեղբայր իւր, կայ 'ի լուսում, և ոչ գոյ 'ի նմա գայթագղութիւն. քանզի սէրն առնէ զմեզ շրջիլ 'ի ճառագայթի. և տալ զբարի օրինակ ընկերի։ Իսկ որ ատէ զեղբայր իւր, տակաւին է 'ի խաւարի, և շրջի 'ի խաւարի, և ոչ գիտէ, յո՛ երթայ. քանզի խաւարն կուրացուցեալ է զաչս նորա։ 'Ի ձեռն սիրոյ որդիքն ա՟յ զանազանին յորդւոց սատանայի։ Վասնզի ա՟մ որ սիրէ զընկեր իւր, է 'ի յա՟յ, և է որդի ա՟յ. ա՟մ որ ոչ սիրէ զընկեր իւր, այլ ատէ զնա, ոչ է 'ի յա՟յ։ Ուստի է որդի սատանայի. քանզի միայն սէրն որոշէ զորդիս ա՟յ 'ի յորդւոց սատանայի։ Այնուհետև քրիստոնեայք, որք սիրեն զընկեր իւր անդրաբերեալք են 'ի մահուանէ առ կեան. ուրեմն որք ոչ սիրեն,, մնան 'ի մահուան։ Եւ ա՟մ, որ ատէ զեղբայր իւր, է մարդասպան. ուստի ոչ ունի զկեանսն յաւիտենական 'ի յիւրեան ինքեան մնա֊

ցօղն։ Սէրն մեր պարտի գոլ նման սիրոյն ք՟ի. քանզի Ք՟ս է օրինակն մեր, որում պարտիմք հետևիլ։ Ք՟ս եդ զանձն իւր վասն մեր. ուրեմն և մեք պարտիմք դնել վասն ընկերաց մերոց զանձինս մեր, երբ սէրն պահանջիցէր զայս։ Ոչ միայն բանիւ, և լեզուաւ, այլ գործով, և ճշմարտութեա՟մբ սիրել պարտիմք։

5. Որոք ունելով զինչս այսր աշխարհի, և տեսանելով զընկեր իւր ունիլ զհարկաւորութիւն, եթէ փակիցէ զսիրտ իւր ընդդէմ ն՟ր, ոչ կարէ ցուցանել, թէ ունիցի զսէրն ա՟յ. վասն զի սէրն ոչ է դատարկ, այլ է գործողական։ Պարտիմք սիրել զիրեարս, քանզի սէրն է 'ի յա՟յ, և ա՟մ, որ սիրէ, ծնեալ է 'ի յա՟յ, և ճանաչէ զա՟ծ. որ ոչ սիրէ, ոչ ճանաչէ զա՟ծ, զի ա՟ծ սէր է. և այս է պատուէր ն՟ր, զի սիրիցեմք զմիմեանս։ Ա՟ծ նախ սիրեաց զմեզ, տալով մեզ զօրինակ սիրոյ. ուրեմն և մեք պարտիմք սիրել զմիմեանս։ Եթէ սիրիցեմք զմիմեանս, ա՟ծ գտանի 'ի մեզ, և սէր ն՟ր 'ի մեզ կատարեալ է։ Ա՟ծ է սէր, և որ կայ 'ի սիրոջ, կայ 'ի յա՟ծ, և ա՟ծ 'ի նմա. ապաուրեմն 'ի ձեռն սիրոյ ա՟ծ է 'ի մեզ, և մեք 'ի յա՟ծ։ Սէրն մեր առնէ, զի ա՟ծ սիրիցէ զմեզ. ուստի ա՟ծ 'ի ձեռն սիրոյ իւրոյ է 'ի մեզ. և մեք 'ի ձեռն սիրոյ մերոյ եմք 'ի յա՟ծ. և այսպէս 'ի ձեռն սիրոյ 'ի սիրոջ միինչ եմք ընդ ա՟յ։ Որ ասէ, թէ սիրէ զա՟ծ, զոր ոչ տեսանէ, և ատէ զընկեր իւր, զոր տեսանէ, է ստախօս. վասնզի ունիմք զպատուէրս զայս 'ի յա՟յ, զի որ սիրէ զա՟ծ, սիրիցէ և զընկեր իւր. և սիրով ընկերի իւրոյ ցուցանիցէ թէ սիրէ զա՟ծ.

6. Սէրն է գերազանցագունեղ առաքինութիւն. քանզի է թագուհին, և տեսակն ա՟մից առաքինութեանց։ Դարձեալ գերազանցագունեղ. վասնզի է անբաժանելի 'ի շնորհէ, որ է տեսական մասնակցութիւն ա՟ծային էութեան։ Դարձեալ է գերազանցագունեղ. քանզի է բանն արդեանց մերոց, և չարին

յաւիտենականի երանութեան մերոյ ։
Տակաւին է գերազանցագունեղ ․
վասնզի երանութիւն մեր 'ի ճանա֊
պարհի, է զուգակցողն զհոգին մեր
իբրև զսիրելի հարս ընդ Յ՟ի Ք՟ի
երկնայնոյ փեսայի մերոյ, և առ֊
նողն զհոգին մ՟ր բնակիլ 'ի մեզ
իբրև առաջնորդ մեր ։ Դարձեալ
է գերազանցագունեղ․ վ՟զի սաստ֊
կագոյն ներգործութիւն սիրոյ պատ֊
ճառէ զմեծագոյն սաստկութիւն
շնորհի, ունակութեան սիրոյ․ և այ֊
լոց առաքինութեանց, սիրով տեսա֊
կաւորելոց ։ Քանզի ըստ սաստկու֊
թեան սիրոյ է սաստկութի շնորհի,
ունակութեան սիրոյ, և այլոց առա֊
քինութեանց ։ Սէրն է մեզ հարկա֊
ւորագունեղ առ փրկութիւն ։
Վասնզի թարց սիրոյ ոչ գոյ շնորհ,
ոչ արդիւն, և ոչ արդիւնաւոր
պահպանութիւն պատուիրանաց, որք
են հարկաւորք առ փրկութի, և
առ 'ի ստանալ զյաւիտենական
կեանն ։ Ուստի սէրն է ամենա֊
մեծիւ ուշադրութեամբ պահպանելի,
և սիրութիւն, որ է ներգործութի
սիրոյ յաճախապէս 'ի կիրարկանե֊
լի, և մեծագոյն սաստկութի նր՟ մե֊
ծաւ ջանիւ հոգալի ։

7․ Նախկնական առարկայն սի֊
րոյ է Ա՟ծ․ զի մինչ է ա՟ծաբանա֊
կան առաքինութիւն, նախապէս վե֊
րահայի առ ա՟ծ ։ Բայց երկրորդա֊
կան առարկայն սիրոյ, է ընկերն ։
Քանզի յետ ա՟յ սիրելի է ընկերն,
որ է նման մեզ 'ի տեսակի, և ըն֊
դունակ ընդ մեզ շնորհի, և փառաց ։
սիրելի է ա՟ծ 'ի վեր քան զա՟մ ինչ․
վասնզի է անհունապէս բարի, և
է սկզբն, և վախճանն մեր, և է
հեղինակն ա՟մից բարեաց մերոց ։
Իսկ ընկերն մեր սիրելի է վ՟ն սի֊
րոյն ա՟յ․ քանզի ոչ է վախճան մեր,
այլ ընկեր կարգաւորեցեալ առ նոյն
վախճան ։ Ուստի ասէ Տ՟ր ն ։ ( Սի֊
րեսցես զՏ՟ր ա՟ծ քո յա՟մ սրտէ քում
մէ, և յա՟մ անձնէ քումմէ․ և
յա՟մ մտաց քոց ։ Այս է մեծն, և
առաջին պատուիրանն ։ Երկրորդն
նման սմին․ սիրեսցես զընկեր քո
իբրև զանձն քո ։ ( Մատթէի ։ 22․
թիւ․ 38․ Վասն սիրոյն ա՟յ նաև
թշնամին է սիրելի․ քանզի, եթէ
է անհաւատ, կարէ գոլ հաւատա֊
ցեալ, և եթէ է մեղաւոր, կարէ
գոլ արդար ։ Ուստի է նման 'ի
տեսակի, և է ընդունակ շնոր֊
հի, և փառաց ։ Ուստի հրամայէ
Տէրն ։ ( Այլ ես ասեմ ձեզ․
սիրեցէք զթշնամիս ձեր․ բա֊
րի արարէք ատելեաց ձերոց․
և աղօթս արարէք 'ի վերայ այ֊
նոցիկ, որք լլկեն զձեզ, և հալա֊
ծեն ։ Զի եղիջիք որդիք հօր ձե֊
րոյ, որ յերկինս է․ զի զարեգակն
իւր ծագէ 'ի վերայ չարաց, և
բարեաց․ և ածէ արձրև 'ի վե֊
րայ արդարոց, և մեղաւորաց ։ )
Մատթէի ։ 5․ թիւ․ 44․

8․ 'Ի ձեռն սիրոյ միշտ կա֊
րեմք շահիլ, և աճիլ, և վայե֊
լել ։ Քանզի ելուզանողքս զներ֊
գործութիւս առաքինութեանց 'ի հրա֊
մանէ սիրոյ, հոգևորապէս շահիմք,
և գանձեմք 'ի յերկինս ։ Եւ օգ֊
նութեամբն ա՟յ ելուզանողքս զսաստ֊
կագոյն ներգործութի սիրոյ, ա֊
ճիմք 'ի հոգևորի կենի, Եւ ներ֊
գործութեամբ սիրողքս զա՟ծ, 'ի վեր
քան զա՟մ ինչ սիրելին, վայելեմք
զերանութի ճանապարհի ։ Ուստի
'ի ձեռն սիրոյ ունիմք զհոգևորս
շահաւէտութիս, զաճեցութի հոգե֊
որի կենի, և զվայելութի երա֊
նութեան ճանապարհի ։ Գործն սիրոյ
է ողորմածութիւն ։ Քանզի սէրն
ոչ միայն սիրէ, այլ նաև ողորմի ըն֊
կերի անկելոյ 'ի թշուառութիս ։
Որքան առ հոգին, եթէ ընկերն
գտանիցի 'ի մեղս, ջանայ դար֊
ձուցանել զնա 'ի մեղաց․ եթէ 'ի
կուրութեան, և 'ի տգիտութեան, ջա֊
նայ լուսաւորել զնա, և ուսուցա֊
նել նմա․ եթէ ունի զտարակուսա֊
թիւնս, լուծանէ․ եթէ իցէ 'ի
սառապանս, մխիթարէ․ եթէ իցէ
տկար 'ի յառաքինութեան, տանի զ
պակասութիս, զի մի անկանիցի
'ի մեղս․ եթէ խնդրիցէ զթողու֊
թի, շնորհէ․ և աղօթէ առ Տ՟ր վ՟ն
ա՟մից ։ Բայց որքան առ մարմինն,
եթէ ընկերն քաղցիցի, կերակրէ․
եթէ

եթէ ծարաւէիցի, արբուցանէ. եթէ իցէ մերկ զգեցուցանէ. եթէ իցէ օտար, ժողովէ. եթէ իցէ հիւանդ, տեսանէ, և բժշկիւ առողջացուցանէ. եթէ իցէ 'ի բանտի, ազատէ, վճարելով զպարտս. և թաղէ զմեռեալս։ Սիրեա զսէրն, և կալ զուշադիր ջան ընմանէ, զի 'ի նմա փայլել կարիցես։

## ԳԼՈՒԽ. ԻԱ.

### Յաղագս խոհեմութե.

1. Խոհեմութին է բարոյական կարտինալական առաքինութի ներհեղեցեալ մեզ 'ի յԱյ, զի լուսաւորիցէ զիմացութի մեր շուրջ զըմբռնօք միջոցովք առ 'ի ստանալ զյաւիտենական կեանն, և տայցէ նմա զպարտաւոր ծանօթութի այնոցիկ, որք արգելուն զյաւիտենականկեանն, այսինքն, զպարտաւոր ծանօթութի մեղաց արգելողաց զվախճանն մեր. և զի յօժարեցուցանիցէ զկամս մեր առ յարմարս, և առ ըմբռնս միջոցս, զմեզ համառատանողս առ վախճան. և առ փախուստ արգելմանց, և մեղաց, որք խափանեն զվախճանն մեր։ Առաքինութիս այս ասի բարոյական. վասնզի լուսաւորէ զիմացութի մեր շուրջ զառնելեօք, և շուրջ զբարոյականօք, և լուսաւորմամբ իմացութե, հակէ զկամս մեր առ 'ի գնել զըմբռնս միջոցս, և առ 'ի փախչել յարգելմանց։ Արդուրեմն 'ի բարոյականաց, առ որս կարգաւորի, կոչի բարոյական։ Իսկ ըստ որում լուսաւորէ զիմացութին, և վերանայ 'ի նմա, է իմացողական, և է ամենամեծ լոյս իմացութե մերոյ։ Կոչի նաև կարտինալական. քանզի է գլխաւոր առաքինութի 'ի կարգի առ բարս, որոյ առաջնորդութե կարօտին այլք առաքինութիւնք 'ի կարգի առ վարս։

2. Խոհեմութին շրջի շուրջ զմիջոցովք առ վախճան համածողօք, և շուրջ զխափանօք զվախճանն արգելողօք։ Առաջադրէ զմիջոցս զի գնիցեմք զնա, և եգմամբ նոցա հասանիցեմք վախճանի։ Ցուցանէ զխափանս, զի փախիցեմք 'ի նոցանէ, զի մի արգելուցուն զդիտեցեալ, և զխորհեցեալ վախճանն։ Խոհեմութին է դերապանց առաքինութի. քանզի լուսաւորէ զիմացութին, և 'ի ձեռն լուսաւորմաննորա շարժէ զկամս. ցուցանէ զմիջոցս, և տայ զծանօթութի խափանաց. ուղղէ զառաքինութիս, և գտանէ զմիջոցն, յորում կայանայցէ առաքինութին, զի մի լինիցի հակուռն առ աջ, կամ առ առ ահեակ, այլ լինիցի շրջում 'ի յուղղորդճանապարհի, զի շրջօղն 'ի յուղղորդճանապարհի կարիցէ հասանել առ վախճան. և առնէ զմարդն տաւջացօղ ըստ կանոնաց, և ըստ օրինի խոհեմութե. և գործօղ իմաստնաբար, դերահաչակ, և գովելի. որպէս հաւատն է լոյս, և պայծառութի, այսպէս և խոհեմութին է լոյս, և պայծառութի. հաւատն 'ի կարգի առ իւր հաւատալիս, խոհեմութին 'ի կարգի առ իւր անելիս։ Հաւատն առաջադրէ զվախճանն։ Խոհեմութին ցուցանէ զմիջոցս առ 'ի հասանել վախճանի։ Հաւատն ցուցանէ զգարշելութիւն արգելմանց, այսինքն մեղաց։ Խոհեմութին փախչի 'ի նոցանէ։

3 Խոհեմութին քրիստոնէի է իմաստութի, նմա առ փրկութիւն նորա հարկաւոր։ Է իմաստութի. քանզի է բարձրագունեղ դիտութի բարոյականաց։ Է հարկաւոր. քանզի է ծանօթութի իրաց առ փրկութի մարդոյ հարկաւորաց, մինչ է ծանօթութի միջոցաց գնելեաց, զմարդն առ վախճան իւր ածողաց. և արգելմանց փախչելեաց, զպարտաւոր վախճանն արգելողաց. Տակաւին է հարկաւոր. քանզի է ծանօթութի միջոցի, յորում կայանայ առաքինութին, հարկաւոր մարդոյ

առ փրկութիւն : Խոհեմութիւնն է քան զա̃մ շարժելիս շարժելագոյն իմաստութիւն, ունելով զոգի իմացողութեան, զխոհեմ̃ն ածող առ մաքրութիւն արդարութեան, արիութեան, և բարեխառնութեան, 'ի խոհեմութենէ է իմացողութիւն արդարութեան, արիութեան, և բարեխառնութեան : Ուստի խոհեմ̃ն է արդար, արի, և բարեխառն: Այր խոհեմ է բարի օրինակ, շահօղ զա̃մս զհայօղս, և ոչ տուօղ զտեղի գայթագղութեան, այլ զարմանալաբար առաջօղ : Խոհեմ̃ն եթէ է տանուտէր, է շինութիւն տան . եթէ է տիրուհի տան, է խաղաղութիւն տան . եթէ են որդիք, և դստերք, և ընտանիք, են զարդք քաղաքի . եթէ է կառավարիչ, և թագաւոր, է ուրախութ̃ի քաղաքի, և խնդութիւն թագաւորութեան . եթէ է քահանայ, և կղերիկոս, է գովասան 'ի բերանս մարդկանց . եթէ է քարոզիչ ա̃ծայնոյ բանի, և վարդապետ եկեղեցւոյ, դարձուցանօղ զմեղաւորս, և շահօղ զմոլորեալս :

4. 'Ի խոհեմութենէ է իմացողականութիւն . շրջահայեցողութիւն, նախամտածութ̃ն, և զգուշութիւն : Ուստի խոհեմ̃ն է իմացօղ, շրջահայօղ, նախամտածօղ, և զգոյշ : Նկատէ զներկայս, խորհի զառագայս տեղւոյ, ժամանակի, և անձանց, նախամտածէ զապառնիս, որք կարեն առաջադայիլ, և 'ի միտ ածէ զանցեալս, և զայնոսիկ իրս, որք հանդիպեալք են : Ոչ գործէ դահավիժաբար, այլ մտածէ հմտաբար : Ընդունի զխրատս, և ունկնդիր լինի իմաստնոց : Մտադրաբար քննէ, և սրամտաբար թափանցէ : Ոչ խնդրէ զիւր հաճոյս, այլ ցանկայ, և փափագի ուղղոյ իրի : Ընտրէ իմաստնաբար և գործէ արիաբար : Խոհեմ̃ն այսպէս ունի զինքն, ո̃զ կարճառօտաբար ասացեալ է: Խոհեմ̃ն ունկնդնէ իմացողութ̃ե, և հակէ զմիտս իւր առ 'ի ճանաչել զիմաստութիւն, և առ 'ի ունիլ զերկիւղ Տեառն, զակիզբն իմաստութեան : Խոհեմ̃ն կոչէ զիմացողութիւն, և յօժարեցուցանէ զմիտս իւր իմաստութեան, և որպէս գտանձս թաքուցանէ զնա 'ի մէջ իւրում : Վասն այսորիկ իմանայ զերկիւղ Տեառն, և գտանէ զգիտութիւն նորա, զգիտութիւնն, որ է իմաստութիւն, և զիմացողութիւնն, որ է 'ի բերանոյ Տեառն : Խոհեմութիւնն է պայծառ իմաստութիւն, որ ոչերբեք փոխի, և դիւրաբար երևի այնոցիկ, որք սիրեն զնա . և որք խնդրեն զնա, գտանեն : Իմաստութիւս այս, որ է 'ի յա̃յ, տրի փափագողն, և շնորհի զնա կոչողն :

5. Խոհեմութիւնն, որ է իմաստութիւն 'ի բերանոյ Տեառն, կարէ առնել զա̃մ իրս : Կարօղ է 'ի յարդարութեան, 'ի յարիութեան, և 'ի բարեխառնութեան : 'Ի յարդարութեան . քանզի ուղղութիւն հատուցանելոյ իւրաքանչիւրում, գտեցեալ է 'ի խոհեմութենէ . միջինն արիութեան, և բարեխառնութեան, մտածեցեալ է 'ի յիմաստութենէ . ուղիղ դատաստանն համարելոյ զընկերն թարց յանդգնութեան, է 'ի յիմացութենէ . պատիւն վայելչաբար տրամաբաշխելոյն, մտածեցեալ է 'ի խոհեմութենէ . գովաբանութիւնն յարմարաբար արտաբերելոյն, սահմանեցեալ է 'ի յիմաստութենէ . խոնարհեցութ̃ն որպէս պիտոյ է 'ի կիրարկանելն, ենթադատեցեալ է 'ի յիմացութենէ . յարմար կերպն տրամաբաշխելոյ զինչս, հրամայեցեալ է 'ի խոհեմութենէ . վայելչութիւնն հեզութեան, պատուէրեցեալ է 'ի յիմաստութենէ . չափն պահեցողութեան, և զգաստութեան, պատուիրեցեալ է 'ի յիմացողութենէ . բան պատշաճաբար բարեխառնելոյ, և չափաւորելոյ զաշխատանս, է 'ի խոհեմութենէ : Ուստի իմաստութիւնն 'ի բերանոյ Տեառն ա̃յ ելանողն, և 'ի մտի մարդոյ վերանստօղն, 'ի յիւրեան յինքեան հաստատօղն, և զա̃մս իւր նորոգօղն, և անուանեցեալն խոհեմութիւն, ունի զիշխանութիւն 'ի յա̃մս իւր, և գտանի 'ի յա̃մում իրի, 'ի յարդարութեան, 'ի յարիութեան, 'ի բարեխառնութեան, 'ի բարի համարման, 'ի պատուոջ, 'ի գովասանս, 'ի խոնարհութեան, 'ի հեզութեան, 'ի պահեցո-

հեզութեան, 'ի զգաստութեան, 'ի չափաւորութեան աշխատանաց, և 'ի բազումս այլս վասն կարճառօտութեան բացաթողեալս ։

6. Բազումք բարիք են 'ի մեզ 'ի խոհեմութենէ ։ Քանզի 'ի նմանէ է 'ի մեզ ուղիղ դատողութիւն շուրջ զառնելեօք իւրօք, և լուսաւորութեամբ միտի շուրջ զբարոյականօք իւրօք, և միջինն պահելին 'ի բարոյականս առաքինութիւնս ։ 'Ի խոհեմութենէ է շահութեամբ ընկերի, և օգտակար կառավարութեամբ. սիրելի համարձակութեամբ, և քաղցր կենցաղավարութեամբ ։ Քանզի կարի քաղցր է համբերականն ընդ խոհեմաց ։ Մինչ խոհեմութիւն, և իմաստութիւն են կարի յոյժ սիրելիք, և օգտակարք, կարի յոյժ ջանացիր զի ստանայցես զնոսա ։ Եթէ սիրիցես զա̄ծ, կայցես զիմաստութիւն ։ Վասնզի Ամենագթածն ա̄ծ, որ էհեղ զիմաստութիւն իւր 'ի վր̄ ամ̄ից գործոց իւրոց, տայ զնա զինքն սիրողաց, և զարդարութիւն պահողաց ։ Խոնարհեցո զունկն քո, և ընկալցիս զվարդապետութիւն ։ Սիրեա լսել, և եղիցիս իմաստուն ։ Սիրեա զՏր̄ ա̄ծ քո, և լեր նմա ունկնդիր, և ուսուսցէ քեզ զօգտակարս ։ 'Ի յո̄յ, որ յայտնէ զխորհինս, և զգաղտնիս իւր, խոնարհութե̄ հանդերձ խնդրեա զիմաստութիւն ։ Քանզի որ հակառակ կայ հպարտաց, տայ զիմաստութիւն տղայոց ։ Սիրեա զիմաստութիւն, և խնդրեա զնա, զի լինիցիս երջանիկ ։ Վասնզի որ բացամերժէ զիմաստութիւն, և զխրատն, և անարգէ զվարդապետութիւնն, է թշուառ, և յիմար, և ժողովուրդ ոչ իմացող հարցի ։

7, Խոհեմն ոչ միայն ունի զխոհեմութիւն, այլ նաև զպարգեւս հոգւոյն սրբոյ, խոհեմութեան համապատասխանօղս ։ Քանզի հոգին սբ̄, առաջնորդն մարդոյ, յորում բնակի, ոչ միայն ներհեղու զառաքինութիւնս, այլ նաև շնորհէ զպարգեւս առաքինութեանց համապատասխանօղս ։ Պարգեւք հոգւոյն սրբոյ համապատասխանօղք խոհեմութեան, են չորք, այսինքն, իմացումն, գիտութիւն, իմաստութիւն, և խորհուրդ ։ Իմացութիւն է գերազանց ճանաչումն ա̄ծայնոց սկզբանց ։ Գիտութիւն է գերազանց ստոյգ ճանաչումն ա̄ծայնոց իրաց ըստ ստեղծեցելոց բանից ։ Իմաստութիւն է գերազանց ստոյգ ճանաչումն ա̄ծայնոց իրաց ըստ ա̄ծայնոց բանից ։ Խորհուրդն է գերազանց ճանաչումն առնելեաց ։ Ուստի 'ի յիմացման խոհեմի գտանին, տեսակաւորեցեալ հաւատոն, առաքինութիւն խոհեմութեան, և չորք պարգեւք հոգւոյն սրբոյ, այսինքն, իմացութիւն, գիտութիւն, իմաստութիւն, և խորհուրդ ։ Ուստի խոհեմն հաւատայ զա̄ծ, և 'ի ձեռն սիրոյ անդրաբերի 'ի նա ։ 'Ի ձեռն առաքինութեան խոհեմութեան գտանի լուսաւորեցեալ շուրջ զառնելեօք իւրօք ։ 'Ի ձեռն պարգեւի իմացութեան գերազանցապէս ճանաչէ զսկզբունս ա̄ծայինս ։ 'Ի ձեռն պարգեւի գիտութեան գերազանցապէս գիտէ զա̄ծային իրս ըստ ստեղծեցելոց բանից ։ 'Ի ձեռն պարգեւի իմաստութեան գերազանցապէս գիտէ զա̄ծային իրս ըստ ա̄ծայնոց բանից ։ Եւ 'ի ձեռն խորհրդոյ գերազանցապէս իմանայ զառնելիս բարոյականս ։ Ուստի է երջանիկ միտն խոհեմի ։

8. 'Ի խոհեմի է նաև պտուղն հոգւոյն սրբոյ, պատասխանօղն խոհեմութեան ։ Պտուղն հոգւոյն սրբոյ պատասխանօղն խոհեմութեան, է հաւատն, նշանակօղն զհաւատարմութիւն, և զճշմարտախօսութիւն, և զանկեղծութիւն ։ Հաւատարմութիւնն է ճշմարտախօսութիւն, որով խոստացօղն մնայ հաստատ 'ի խոստացմանն, կատարելով զայն, զոր խոստացաւ ։ Ճշմարտախօսութիւն է ճշգրտախօսութիւն, որով խօսօղն խօսի թարց խաբեբայութեան, և թարց ստախօսութեան արտաքերէ զբանս ։ Անկեղծութիւն է ճշմարտախօսութիւն, որով այրն անկեղծ խօսի, և գործէ թարց խարդախութեան ։ Ուստի 'ի խոհեմի են հաւատարմութիւն, ճշմարտախօ‿

սու‿

սութե, և անկեղծութի. և խոհեմն է հաւատարիմ, ճշմարտախօս, և անկեղծ, ունեցող զսիրտ, և զշրթունս ուղիղս, ոչ ունեցող զխելագարութի, և զանմտութի, կեցող, և խօսող թարց ստախօսութե, թարց խաբեբայութե, և թարց խարդախութե, և է գործող թարց անհաւատարմութե, մնացող հաւատարիմ 'ի խոստացման այ, և մարդկանց: Խոհեմն և ևս է ունեցող զաւետարանականս երանութիս, համապատասխանողս խոհեմութեան: Խոհեմն 'ի յենթադատողութե խոհեմութե համարելով, զանցաւորս բարիս անկարգաւ ըղձիւ բաղձալն դոլ յիմարութի, վայելէ զաղքատութիւն հոգւոյ. և փափագելով տեսութե այ, վայելէ զմաքրութի, և զանարատութի սրտի: Սիրեա զխոհեմութի, և հաստատապէս պահեա զնա 'ի մտի քում, զի յետ այսր կենի կարիցես տեսանել զածային էութին:

## Գ Լ Ո Ւ Խ. ԻԲ.

### Յաղագս արդարութե:

1. Արդարութին, է բարոյական, կարդինալական առաքինութի ներհեղեցեալ մեզ 'ի յայ առ 'ի պահել զիրաւունս, հակօղ զկամս մեր, զի կամիցի իւրաքանչիւրում հատուցանել, զոր պարտի նմա: Արդարութին է առաքինութի, վասնզի առնէ զմարդն բարի, և գործ նորա բարի: Է բարոյական առաքինութի, քանզի շրջի շուրջ զբարոյականօք պարտուք: Է կարդինալական առաքինութիւն, վասնզի առակցին նմա բաղումք առաքինութիք: Է առաքինութի առ 'ի պահպանել զիրաւունս. քանզի հրամայէ մեզ, զի ըստ իրաւանց հատուցանիցեմք իւրաքանչիւրում, զոր նմա պարտիմք: Առաքինութիս այս բնակի 'ի կամս մերում, զի լինիցի ուղիղ: Ուստի է ուղղութի կամին մերոյ: Է սիրելագունեղ առաքինութի. վասնզի սովաւ հաճոյանամք այ, և մարդկանց: Է հարկաւորագունեղ. քանզի թարց արդարութե իրաւունք կործանին: Է օգտակարագունեղ. վասնզի սովաւ արգելումք զբաղումս չարիս: Այն ներհեղեալ 'ի յայ. քանզի խօսիմք զարդարուէ, որ պարտի յաղթել զարդարութին ամից այլոց: Ուստի ասէ Տէրն: (Բայց ասեմ ձեզ, զի եթէ ոչ աւելցի արդարութի ձեր. աւելի քան զդպրացն և զփարիսեցւոց, ոչ մտանիցէք յարքայութին երկնից:) Մատթէի 5. թիւ: 20. Արդարութի մեր պարտի դոլ լուսաւորեալ, և պայծառ, և պարտի դոլ աւետարանական:

2. Աւետարանական արդարութի մեր, որով մեք քրիստոնեայքս փայլել պարտիմք, ոչ միայն արգելու զմարդասպանութի. այլ նաև զամ անիրաւ վրէժխնդրութի, նաև զայն, որ կայանայ 'ի միայնս բանս, մինչ ասէ Տէրն: (Եթէ ամ որ բարկանայ եղբօր իւրում տարապարտուց, պարտաւոր լիցի դատաստանի. և որ ասիցէ ցեղբայր իւր յիմար, պարտաւոր լիցի ատենի. և որ ասիցէ ցեղբայր իւր մորոս, պարտաւոր լիցի դեհենի հրոյն:) Մատթէի: 5. թիւ. 22. Եւ ոչ միայն արգելու զշնութի, այլ նաև զամ ապիրատ ցանկութի, մինչ ասէ նոյն Տէրն: (Բայց ես ասեմ ձեզ. թէ ամ որ հայի 'ի կին մարդ առ 'ի ցանկանալոյ նմա, անդէն շնացաւ ընդ նմա 'ի սրտի իւրում:) Մատթէի: 5. թիւ. 28. Եւ ոչ միայն արգելու զերդմնազանցութին, և զսուտ երդումն. այլ նաև արգելու զամ անպարտաւոր երդումն, որ լինի թարց դատաստանի. քանզի հրամայէ Տէրն: (Այլ ես ասեմ ձեզ, ամենևին մի երդնուլ. մի յերկինս. զի աթոռ է այ: Եւ մի յերկիր, զի պատուանդան է ոտից նորա. և մի յԵմ. զի քաղաք է մեծի արքային: Եւ մի 'ի գլուխ քո երդնուցուս, զի ոչ

կարես

հարեա մազ մի սպիտակ առնել, կամ թուխ ։ Այլ եղիցի ձեր բան այո, այո ։ և ոչն ոչ ։ զի աւելին քան զայն 'ի չարէն է ։) Մատթէի ։ 5 ։ Թիւ ։ 34 ։

3 ։ Արդարութիւն է ճանապարհ, առածօղ առ երանութիւն ։ վասնզի երանեալ է այր, որ խորհի, և գործէ զարդարութիւն ։ Արդարութիւն է շաւիղ փրկութեան ։ քանզի պահողի զպատուիրան, և առնողի զարդարութիւն, մերձ է փրկութիւն ։ Արդարն գտանէ զօգնութիւն Տեառն ։ քանզի Տր՟ն զարդարութիւն սիրողի, և զարդարութիւն առնողի գթածաբար ընդ առաջ ելանէ ։ Առնօղն զարդարութիւն, է արդար, և որդի երկնայնոյ հօր ։ զի ա՟մ, որ առնէ զարդարութիւն, ծնեալ է 'ի յա՟յ ։ Առնելի է արդարութիւն ուղիղ դիտաւորութբ՟, զի հաճոյանայցեմք հօրն երկնայնոյ, առ ուղիղ արդարութիւն զմեզ հրաւիրողի ։ այլապէս ոչ եղիցի արդիւն առաջի հօր, որ է երկնային ։ Ուստի ծանուցանէ մեզ Տր՟ն ։ (Զգուշ լերուք ողորմութեան ձերում մի առնել առաջի մարդկան, որպէս թէ 'ի ցոյց լինելո՟յ դուցէ և վարձս ոչ ընդունիցիք 'ի հօրէն ձերմէ, որ յերկինս է ։) Մատթէի ։ 6 ։ Թիւ ։ 1 ։ Արդ ուղղով դիտաւորութբ՟ գործողի զարդարութիւն, անտարակուսաբար է վարձատրութիւն առաջի հօրն երկնայնոյ ։ քանզի Տր՟ն արդար դատաւորն, շնորհէ իւրաքանչիւրոյ ըստ արդարութեան, և ըստ հաւատոյ իւրում և գործօղն զարդարութիւն երևելի առաջի նորա ։ Ուստի երանի, որք պահեն զպատուիրան, և առնեն զարդարութիւն յա՟մ ժամանակի ։ Ուրեմն պարապելի է արդարութեան, և ոչ դանձեցման փարթամութեանց ։ վասնզի 'ի յաւուրն վրէժխնդրութեան, ոչ փարթամութիւնք, այլ ներգործութիւնք արդարութեան երևեսցին ։ և ոչ փարթամութիւնք, այլ արդարութիւն ազատեսցէ զմեզ 'ի մահուանէ ։

4 ։ Գործողի զարդարութիւն, է կեանք ։ բայց գործողի զանիրաւութիւն, մահ ։ Քանզի 'ի շաւղի արդարութեան, է կեանք ։ իսկ խոտորեալ ճանապարհն ածէ առ մահ ։ Պղծութիւն է Տեառն ճանապարհն ամբարշտի ։ որ հետևի արդարութեան, սիրի 'ի նմանէ ։ Սկիզբն բարւոյ ճանապարհի է գործել զարդարութիւն ։ քանզի առաջի ա՟յ է առաւել ընդունելի, քան զզոհս ։ Վասնզի արդարութիւն է մշտնջենաւոր, և անմահ ։ իսկ անիրաւութիւն, է ստացումն մահուան ։ Պահօղք զարդարութիւն, ընկալցին զպսակն ։ պատրաստեցեալն գործողի զարդարութիւն ։ Պսակն արդարութեան, գործողի զարդարութիւն ։ Արդար դատաւորն, արդարութբ՟ դատեսցէ զարդարս ։ Ուստի, որք պահեսցեն զարդարութիւն, արդարաբար դատեսցին ։ և որ ուտեալք են զիրս արդարս, գտցեն, զինչ պատասխանիցեն ։ Արդարն է ժառանգ օրհնութեան ։ քանզի օրհնութիւն ա՟յ փութայ 'ի վարձատրութիւն արդարոյ ։ 'Ի ներկայ կենի գործելի է արդարութիւն, զի 'ի յապագայոջ ընկալցի զպսակն ։ Եթէ հետևիցիս արդարութեան, գտցես, և ըմբռնեսցես զնա, և զգեցցիս իբրև զպատմուճան պատուոյ, և բնակեսցիս ընդ նմա, և պաշտպանեսցէ զքեզ 'ի յաւիտեան, և անտի գտցես զհաստատուն ճանաչման ։ Գործն արդարութեան, է խաղաղութիւն, և 'ի յարդարութեան, եթէ լիցէ հաւատարմութիւն, եղիցի ապահովութիւն մինչև 'ի յաւիտեան ։ Արդարութիւն է սիրելի, և կարի յոյժ փափագելի ։ առաքինութիւն այս է գովասան, և պատիւ մարդոյն ։ Այս է փառք, և գերազանց համբաւ ։ Այս է մեծ գանձ, և ճշմարիտ պատիւ ։ Այս է նիւթ խնդութեան, և 'ի յայսմիկ է ուրախութիւն մեր ։ Սիրեա ուրեմն զարդարութիւն, զի ունիցիս զճշմարիտ ուրախութիւն ։

5 ։ Արդարութիւն հատուցանէ իւրաքանչիւրոյ զայն, զոր նմա պարտի 'ի յիրաւանց ։ Սիրօղն զարդարութիւն, և պարապօղն արդարութեան ։ նախ քան զա՟մ ա՟յ, զոր 'ի վեր քան զա՟մ ինչ սիրել պարտի, և յոր-

մէ

մէ զամենայն ինչ, զոր ունի, ընկալեալ է. Ճանաչելով զնա զստեղծօղ իւր, և տուօղ ամենից բարեաց իւրոց, և բնականաց, և գերբնականաց, և Ճանաչելով զիւր ինքն յամենայնում իրի կախեալ գոլ 'ի նմանէ, և գոլ ծառայ նորա, յամենայն կողմանէ գոլ նմա պարտաւոր, և պարտական. հատուցանէ, զոր 'ի յարդարութենէ պարտի հատուցանել նմա: Նկատելով զիւր ինքն պարտիլ հաւատալ 'ի յԱստուած, յուսալ 'ի նա, և սիրել զնա 'ի վեր քան զամենայն ինչ, հատուցանէ նմա զհաւատ, զյոյս, և զսէր, հաւատալով, յուսալով, և 'ի վեր քան զամենայն ինչ սիրելով զնա: Խոկալով, զհամայն իւրս բարիս ինքեան շնորհեցեալս լեալս գոլ, և առ ինքն իջեալս գոլ յերկնէ, և ծորեալս գոլ 'ի հօրէն ողորմութեանց, հատուցանէ նմա զգոհաբանութիւնս, մատուցանելով նմա զծայրագունեղս շնորհակալութիւնս վասն ամենից բարերարութեանց 'ի նմանէ ընդունեցելոց: Մատուցանելով զիւր ինքն ամենևին կատարեալ Աստուծոյ, մատուցանէ նմա զաղօթս, խոնարհաբար խնդրելով զթողութիւն մեղաց իւրոց, և զօգնութիւն նորա, և խնդրելով զհամայնս իւրս, որոց կարօտի: Ճանաչելով զԱստուած վերնագունեղ Տէր, հատուցանէ նմա զենթարկութիւն. և զծայրագունեղ հնազանդութիւն, զպաշտօն երկրպագութեան, և զծառայութիւն, կամելով պահել զամենայն պատուիրանս նորա, և հաւատարմաբար հնազանդիլ նմա յամենայնում իրի:

6. Արդարն փափագելով հաւատարմաբար պահել զամենայն իրաւունս արդարութեան, Ճանաչէ զիւր ինքն պարտաւոր առ 'ի պահել նաև զպատուիրանս եկեղեցւոյ, մինչ ասացեալ է 'ի տեառնէ: (Որ ձեզ լսէ. ինձ լսէ. և որ զձեզ անարգէ. զիս անարգէ. և որ զիս անարգէ, զառաքիչն իմ անարգէ:) Ղուկաս: 10. Թիւ. 16. Եւ այլուրեք ասէ: (Ապա եթէ և եկեղեցւոյ ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրև զհեթանոս, և զմաքսաւոր:) Մատթէի: 18. Թիւ. 17. Ուստի հատուցանէ եկեղեցւոյ իբրև սիրելւոյ հարսին Քրիստոսի, 'ի նմանէ 'ի վերայ հաւատացելոց զհեղինակութիւն ունեցողի. զպարտաւոր հնազանդութիւն, հաւատարմաբար, և զգուշաբար զամենայն պատուիրանս նորա պահելով, և և զպարտաւորս պատիւս, առաջնորդաց, քահանայից, և այլոց կղերիկոսաց եկեղեցւոյ, ըստ աստիճանաց, և արժանապատուութեանց նոցա մատուցանելով: Սիրօղն զարդարութիւն, Ճանաչելով զիւր ինքն պարտաւոր նաև հայրենեաց, ծնողաց, և մեծաւորաց, հայրենեաց հատուցանէ զպաշտպանութիւն, ծնողաց զպատիւ, զսէր, զհնազանդութիւն, և 'ի կարօտութիւնս զօգնութիւն. և մեծաւորաց զհնազանդութիւն, և զպատիւ: Արդարն հատուցանէ նաև փոքրաւորաց, այսինքն զբարի վարժումն, զպարտաւոր, և զզգուշաւոր հոգաբարձութիւն: Վերջապէս հասարակաբար հատուցանէ ամենից զպարտաւոր բարի համարումն, զպատիւ, և զգովասան, հեռանալով 'ի թիւր դատողութենէ, 'ի բամբասանէ, 'ի յանիծաբանութենէ, 'ի զրպարտութենէ, և յամենայն անիրաւ արարողութենէ:

7. Արդարն ունի զպարգևն հոգւոյն սրբոյ, պատասխանօղն արդարութեան, այսինքն, զպարգևն գթութեան: Ուստի է բարեգութ 'ի հայրենիսն, 'ի ծնօղս, 'ի յորդիս. և 'ի յայլս արենակիցս, գերազանցաբար դէպ 'ի յասացեալս 'ի կիրարկանելով զգործս գթութեան: Արդարն ունի նաև զպտուղս հոգւոյ սրբոյ, պատասխանօղս արդարութեան, այսինքն, զսէր, զխնդութիւն, զխաղաղութիւն, զքաղցրութիւն, և զբարութիւն: Ունի զսէր. վասնզի սիրէ զԱստուած 'ի վեր քան զամենայն ինչ, և զընկերն իւր իբրև զիւր ինքն: Ունի զխնդութիւն. քանզի ունի զշնորհս, զկեանս հոգւոյ, և զառաքինութիւնս, զհոգևորս զարդս, և զներգործութիւնս առաքինութեանց, 'ի հրամանէ սիրոյ եղուզեցեալս, զհոգևորս գանձս, և զհոգևորս փարթամութիւնս. անհամեմատաբար

գե‿

գերազանցագոյնս, և ազնուագոյնս քան զամս ժամանակաւորս գանձս, և փարթամութիւնս, խնդայ, և ուրախանայ հոգւով ։ Ունի զխաղաղութիւն · քանզի ունի զստորնագոյն մասն ենթարկեցեալ վերնագունի, զմարմինն ենթարկեցեալ հոգւոյ, և զհոգին ենթարկեցեալ ա̃յ, վասն որոյ զանդորր խաղաղութիւն բարւոյ խղճի մտաց ։ Ունի զքաղցրութիւն · վասնզի ոչ միայն լեզուաւ, այլ նաև սրտիւ է հեզաբարոյ · ունելով զողորմածութիւն դէպ 'ի մարդիկ ։ Վերջապէս ունի զբարութիւն · քանզի կարելով 'ի կիրարկանել զգործս ողորմածութեան · զոր ունի 'ի սրտի, արդէն 'ի կիրարկանէ դէպ 'ի մարդիկ, յայսմիկ աշխարհի զթշուառութիւնս ունեցօղս ։

8 · Արդարն, զարդարութիւն սիրօղն, և գործոց արդարութեան պարապօղն, վայելէ զաւետարանական երանութիւնս, արդարութեան պատասխանօղս, այսինքն, զայսոսիկ, քաղցիլն և ծարաւիլն արդարութեան, գոլ ողորմած, գոլ խաղաղարար, կրել զհալածանս վասն արդարութեան ։ Քանզի արդարն ոչ միայն գործէ զարդարութիւն, և պարապի գործոց արդարութեան · այլ նաև ջանայ աճել 'ի յարդարութեան, և լինել առաւել արդար ։ Ուստի քաղցի արդարութեան ։ Եւ արդարն ոչ միայն հատուցանէ, զոր պարտի · այլ նաև կամի և դէպ 'ի 'ի թշուառս 'ի կիր արկանէ զգործս գթութեան ։ Ուստի վայելէ զողորմութիւն ։ Եւ արդարն ոչ միայն ունի զխաղաղութիւն 'ի յիւրեան ինքեան · այլ նաև ջանայ սերմանել զնա և 'ի մէջ այլոց, արգելլով զտարաձայնութի ։ Եւ վերջապէս արդարն ոչ միայն գործէ զարդարութիւն · այլ նաև պատրաստ է կրել զհալածանս վասն արդարութեան ։ Ուստի վայելէ և զայսոսիկ երանութիւնս, այսինքն, գոլ ողորմած, և կրել զհալածանս վասն արդարութեան ։ Արդարոյ զասացեալս երանութիւնս վայելօղի, որին վարձք նոցա խոստացեալք, այսինքն, յագեցուցանել, ողորմութիւն, որդեգրութիւն ա̃յ, և արքայութիւն երկնից ։ Քանզի արդարն յագի, գտանէ զողորմութիւն, է որդի ա̃յ, և արքայութիւն երկնից է նորա ։

## Գ Լ Ո Խ Ի Գ ·

### Յաղագս արիութեան ։

1 · Արիութիւն է բարոյական կարտինալական առաքինութիւն, հակօղ, և զօրացուցանօղ զմեզ առ 'ի սկսանիլ զտաժանականս, և զդժուարինս իրս 'ի բարոյականս ։ Արիութիւն է առաքինութիւն · քանզի զայրն առնէ բարի, և զգործ նր̃ բարի 'ի տաժանականս իրս ։ Է բարոյական առաքինութիւն · վասնզի շրջի շուրջ զբարոյականօք տաժանականօք իրօք ։ Է կարտինալական առաքինութիւն · քանզի է գլխաւոր, և առանցին նմա այլք առաքինութիւնք ։ Զօրացուցանէ զմեզ · վասնզի զօրութեամբ նորա սկսանիմք զտաժանականս իրս, և յաղթեմք զնոսա · և նովաւ լինիմք յաղթօղք, և առբերեմք զյաղթանակն ընդդէմ թշնամեաց ։ Առաքինութիւն այս զօրացուցանէ զցասմնական մասն մեր, և շնորհէ նմա զուղղութիւն, զի ըստ հրամանի բանի սկսանիցի զտաժանականս իրս, և զի շրջիցի 'ի միջոցին ոչ հակելով դէպ 'ի յահեակ, և ոչ դէպ 'ի յաջ ։ Գտանէ զմիջինն 'ի տաժանականս իրս, յորում վայելչաբար շրջիցի այրն ։ Սկսանին տաժանականք իրք ըստ հրամանի բանի ։ Ուստի ոչ է թարց խոհեմութեան ։ 'Ի սկսանիլն, կամ 'ի դադարիլն ըստ հրամանի բանի, պահէ, և պահպանէ զիրաւունս ։ Ուստի ոչ է թարց արդարութեան ։ Նաև 'ի տաժանականս իրս ցանկականի մասին զօրացուցանէ, և առնէ զյաղթութիւն ։ Ուստի ոչ է թարց բարեխառնութեան ։ Ուստի այրն է խոհեմ, արդար ·

և նաև բարեխառն ։

2. Արին զօրացուցանի քաջաբար, և գործէ ուշադրաբար ըստ հաճոյից տեառն ։ Ուստի ունի զտէրն ընդ ինքեան ՚ի բարիս գործս ։ Արին ոչ յենու ՚ի վերայ զօրութեց իւրոց, այլ ՚ի վերայ օգնութեանն ա՟յ ․ և սրտիւ ՚ի տեառնէ զօրացուցելով, քաջապէս պատերազմի, և փառաւորապէս սատանայ ըյաղթութին ։ Արին ջանայ գոլ արդար, զի տ՟ր ա՟ծ լիցէ զօրութի նորա ։ Արին է բարի, և ՚ի ճշմարտութե՟ արդար, օգնութե՟ տեառն, որ է զօրութի արդարոյ, նաև ՚ի նեղութիս, և ՚ի տառապանս է յաղթօղ, և փառաւոր յաղթահարօղ ։ Մարդիկք օգնութե՟ն ա՟յ հզօրք, ոչ իւիք կերպիւ փոքրոգիք ․ այլ քաջապէս պատերազմօղք, և արիաբար մարտնչօղք, և վասն այսորիկ փրկութե՟ իւրոյ հասանօղք ․ քանզի ինքն ամենակարօղն ա՟ծ, և ընդհանրաց տ՟ր, գայ առ այնոսիկ, զօրութե՟ իւրով պատերազմօղս, ՚ի պատերազմի փրկելով զնոսա ։ Ուրեմն են յուսացօղք ՚ի տ՟ր, և ապաւինօղք օգնութե՟ նորա ։ Մինչ զգեցեալք զարդարութի, և զքաջութին հաճոյն տեառն, պատերազմիք, և մենամարտիք ընդդէմ թշնամւոյ, ըստ հրամանի խոհեմութե՟, արիք ․ և զգեցարուք զարիութի, զամենակարօղն տ՟ր ձեր, և քաջապէս պատերազմեցարուք, և համապազօրդ մարտերուք, քանզի այսպէս պատերազմելով, զօրութե՟ արիութե՟ ձերոյ յաղթեսջիք, և հալածեալք զամօթահարեալ թշնամին, եղիցիք դուք յաղթանակօղք ։

3. Արիութին մեզ, փափագողացս յաղթութե՟ ընդդէմ թշնամեաց, է կարի հարկաւոր ․ քանզի առաքինութե՟ արիութե՟ ստացեալ լինի յաղթութին ։ Ունիմք զբազումս թշնամիս, պիտոյէ յաղթել, և յաղթահարել զհամայնս, զի լինիցիմք յաղթօղք, և ընդդէմ թշնամեաց յաղթանակօղք ։ Ներքինք թշնամիքն են անկարք կիրք զմեզ առ մոլութիս, և առ մեղս յօժարեցուցանօղք ։ Արին սկսանի զպատերազմ ընդդէմ կրից, և քաջապէս պատերազմի, զի սանձիցէ, և արգելուցու զնոսա ։ Ոչ հաճի ՚ի յախտս, այլ ընդդիմանայ նոցա ։ Արգելլով, և սանձելով յաղթէ, և ստանայ զփառաւոր յաղթութիւն, Արտաքինք թշնամիք են բազումք, պատերազմօղք ընդդէմ մեր ոմանք գործովք և ոմանք բանիւք ։ Ոմանք պատերազմին վատ օրինակօք, զորս մեզ կարկառեն, և տան ․ արիք յաղթեն, և յաղթահարեն զայսոսիկ, ոչ հետևելով վատից օրինակաց նոցա ։ Ոմանք պատերազմին զրպարտելով, և զանիրաւս չարախօսութիս իրոցելով ․ արիք յաղթեն, և յաղթահարեն զայսոսիկ, զրպարտութիս, և զչարախօսութիս համբերութե՟ տանելով ։ Ոմանք պատերազմին, զանիրաւս աբարողութիս, և զմեծս վնասս մեզ առնելով, և զմեծս զրկանս մեզ ներբերելով ․ արիք յաղթեն, և յաղթահարեն զոսոս, ոչ հատուցանելով զչար փոխանակ չարի ․ այլ բարեաւ զչարն յաղթելով ։ Ասացելովք կերպիւք արիք յաղթեն զթշնամիս, և զչարակամս, քաջապէս պատերազմելով ։

4. Է և թշնամի խորամանկ, գաղտաբար պատերազմիլ փափագօղ, ըստ այնմ ։ ( Արթուն լերուք, և հսկեցէք ։ Զի ոսոխն ձեր սատանայ իբրև զառիւծ գոչէ ։ Շրջի, և խնդրէ, թէ զո՞ կլանիցէ ։ Որում ՚ի դիմի հարկանիցիք հաստատեալք հաւատովք ։ ) Պետրոսի առաքելոյն առաջներորդ ։ 5․ թիւ․ 8․ Թշնամիս այս խորամանկ, գաղտաբար պատերազմիլ փափագօղ, փորձէ ներդրդեցմամբք, և որքան կարէ, մարտնչի ։ Արիք զայս խորամանկ, և դաղտնի թշնամին մեր փառաւորապէս յաղթեն, և յաղթահարեն, և ամաչեցուցանեն զնա, արիաբար վատից ներդրդեցմանց նորա ընդդիմանալով, և զվատթար կամս նորա անարգելով ։ Են ոմանք չարաբարոյք թշնամիք, ընդդէմ մեր յարուցանօղք զհալածանս,

ծանս, վասն հաւատոյ, կամ վասն այլոյ ուրուք առաքինութե՛ ։ Սոքա զանազանիւք կերպիւք նեղացուցանեն զմեզ, և զանազանիւք տանջանօք չարչարեն, և վշտացուցանեն զմեզ ։ Յափշտակեն զբարիս, առաքեն 'ի յաքսորանս, վրդովեն զխաղաղութի, զրկեն 'ի բարեկամաց, և զհայրենիսն չարչարեն, և տանջեն, և զկեանն մեր 'ի բաց բառնան ։ Խոկան զանողորմս տանջանս, և խզրատեն զմարմինս մեր ։ Արիք քաջք զինուորք քո, զգեցեալք զճշմարիտ արիութի, և օգնութե՛ն այ լեալք անյաղթելիք, համբերութե՛ տանելով զչարչարանս, և զմահն կամաւորապէս գրկելով, յաղթեն զթշնամիս ։

5. Են, որք չարժեն զանիրաւ պատերազմ ընդդէմ հայրենեաց ։ Արիք զօրացուցեալք արիութե՛, յուսացեալք 'ի տր, պահելով զօրէնն խոհեմութե՛, և գրկելով զարդարութիւն, յառնեն ընդդէմ անիրաւաբար պատերազմողաց, և քաջապէս պաշտպանեն զհայրենիսն, հզօրաբար մարտնչելով, և կրելով զնեղութիւնս պատերազմի վասն հայրենեաց, և համբերութե՛ տանելով, և միշտ թէ կենդանիք, թէ վասն հայրենեաց 'ի պատերազմի մեռեալք, լեալք յաղթօղք, և փառաւորք յաղթանակօղք ։ Արիք են գովելիք, և պատուաւորք ։ Գովելիք. վասնզի են առաքինիք. և պատուաւորք, քանզի են պաշտպանօղք հայրենեաց, և երբեմն նաև կրօնի, երբ պատերազմն է ընդդէմ անհաւատից ։ 'Ի յարւոջ յառաջացումն է խոհեմ, ընթացն արդար, յուսադրումն 'ի յած, համբերութին երկայնամիտ, քաջարտութին հաստատ, յարատևութին վերջին, և երբեմն նաև է պսակն մարտիրոսութե՛ ։ 'Ի յարւոջ յառաջացումն է խոհեմ. քանզի ըստ հրամանի բանի, և ըստ օրինի խոհեմութե՛ սկսանի զտաժանականս իւր ։ 'Ի յարւոջ ընթացն է արդար. քանզի պահէ զամս իրաւունս արդարութե՛ ։ 'Ի յարւոջ է յուսադրութի 'ի տր. վասնզի յուսալով 'ի տր սկսանի զտաժանականս իւր ։ 'Ի յարւոջ է համբերութի երկայնամիտ. քանզի զնեղութիւնս պատերազմի համբերութե՛ տանի ։ 'Ի յարւոջ է քաջարտութի, և յարատևութի, վասնզի ոչ դառնայ յետ կոյս ։ Եւ է պսակ մարտիրոսութե՛, քանզի երբեմն մեռանի վասն հաւատոյ ։

6. 'Ի յարւոջ է պարգևն հոգւոյն սրբոյ, պատասխանօղն արիութե՛ ։ Պարգևն արիութե՛ է զօրութին ։ Քանզի հոգին սբ ներբնակելով 'ի յարւոջ, գերազանցապէս զօրացուցանէ, և քաջացուցանէ զսիրտն նր առ 'ի սկսանիլ զդժուարս իւր, և նաև առ 'ի համբերել 'ի տանջանս, և 'ի բռնաւորի մահուան վասն հաւատոյ, կամ վասն ուրուք առաքինութե՛ ։ Ուստի արիք զօրացուցեալք, և քաջացուցեալք 'ի հոգւոյն սրբոյ, ոչ երկնչին 'ի բռնաւորաց. այլ անգոսնեն զտանջանս, 'ի յանողորմութե՛ բռնաւորաց մատուցեալս ։ 'Ի յարւոջ է պտուղն հոգւոյն սրբոյ պատասխանօղն արիութե՛, այսինքն, հեզութի, համբերութի, և երկայնմտութի ։ Քանզի արիք ունեցօղք զոգի հեզութե՛, և պահելով զարդարութի, զոչք անիրաւաբար չարչարեն, այլ 'ի կողմանէ իւրեանց ընդ ամենեսեան կեան խաղաղաբար ։ Զանիրաւս տանին, համբերութե՛ կրելով զամս անիրաւութիս ։ Ունին զընդհանրական համբերութի, զհամբերթի 'ի չարախօսութիս, զհամբերութի 'ի բամբասանս, զհամբերութի 'ի յանարգանս, զհամբերութի 'ի յանիրաւս արարողութիս, յորմէ ումեքէ արարեցեալս, զհամբերութի 'ի վնասս, յորմէ ումեքէ առբերեցեալս, զհամբերութի 'ի տանջանս յորմէ ումեքէ անողորմութե՛ դնեցեալս, զհամբերութի 'ի բռնաւորի մահուան, և զհամբերութի յամում տեղւոջ, և 'ի յամում ժամանակի մինչև առ վերջն կենի ։

7. Արին վայելէ զերանութիս արիութե՛ պատասխանօղս, որք են այ-

այսորքիկ, գոլ հեզ, գոլ խաղաղարար, և կրել զհալածանս վասն արդարութեան: Արին է հեզ, և քաղցրաբարոյ: Քանզի սիրողն զարդարութիւն, ոչումեք վնասէ, և ոչ զոք անիրաւաբար նեղէ, կամ չարախօսելով, կամ զրպարտելով, կամ անիծանելով, կամ իւիք կերպիւ անիրաւաբար վնասելով, կամ զչարն փոխանակ չարի հատուցանելով. այլ միայն զանիրաւութիւս, զորս արգելուլ ոչ կարէ, համբերութբ տանի: Ուստի 'ի կողմանէ իւրմէ վայելէ զխաղաղութի 'ի ձեռն համբերութեան: Արին ունելով զսէր, ոչ միայն իւրեան ինքեան, այլ նաև այլոց ամենայն խաղաղութեան: Ուստի որքան կարէ, ջանայ խաղաղացուցանել զմարդիկ, 'ի մէջ իւրեանց զտարաձայնութիւս ունեցօղս, ջանանով բառնալ զտարաձայնութիւս, և ոչ ընչացուցանել զնս: Արին սիրէ զհամայնս առաքինութիւնս: Ուստի երբ 'ի յանիրաւաց լինի հալածան վասն առաքինութեանց, անանշարժելաբար յենու առաքինութեանց, թէ իցէ հաւատն, թէ իցեն այլք, և պատրաստ է ևս առաւել կրել զհամայնս տանջանս, և նաև զբռնաւոր մահն, քան թողուլ զառաքինութիւն, և հեռանալ 'ի նմանէ: Եւ յորժամ գտանին հալածօղք, որոց 'ի յանողորմութէ զինքն ազատել ոչ կարէ, կամաւորապէս կրէ զհալածանս վասն առաքինութեան: Յարուոջ զասացեալս երանութիւ վայելողն, խոստացեալ է վարձ ժառանգութե երկրի, որդէգրութիւն ա̃յ, և արքայութին երկնից:

8. Արիութիւն, որ է առաքինութիւն, յամէ կողմանէ է գովելի: Է գովելի 'ի կողմանէ ա̃յ, պաշտօնիւ երկրպագութեան պատուելոյ. և ամիւ խոնարհութե պաշտելոյ: Քանզի խնդրէ զպատիւ ա̃յ, և վս պատուոյ նորա ոչ փախչի 'ի չարչարանաց: Է գովելի 'ի կողմանէ կրօնի. վասնզի վս պաշտպանման կրօնի, դրկէ զմեծս նեղութիւս: Է գովելի 'ի կողմանէ առաքինութեան. քանզի վասն առաքինութեան պատրաստ է կրել, ոչ միայն զչարչարանս, այլ նաև զբռնաւոր մահն: Է գովելի 'ի կողմանէ հայրենեաց. քանզի պահէ, և պաշտպանէ զնա, քաջաբար ընդդէմ թշնամեաց պատերազմելով, և հզօրաբար մարտնչելով: Է գովելի 'ի կողմանէ հաւատացելոց. զարմացողաց 'ի վերայ արարողութեանց արւոյ, և հռչակողաց զգովասանս նորա. վասնզի տայ զբարի օրինակ հաւատացելոց, ընդոստուցանելով զնոսա առ 'ի սիրել զառաքինութիւս, և 'ի ժամանակի հալածանաց, հաստատելով. և անխափան պահելով զհաւատացեալս 'ի հաւատոջ, և 'ի սուրբ կրօնոջ, և զօրացուցանելով, և քաջալերելով զնոսա առ 'ի կրել զնեղութիւնս վասն առաքինութեան, և առ 'ի համբերութեամբ տանել զանողորմութիւս բռնաւորաց, զճշմարտութին հալածողաց: Վերջապէս է գովելի 'ի կողմանէ ինքեան արւոյ. քանզի առնէ զնա հռչակաւոր առ ամենեսեան, զառաքինութին սիրօղս, և 'ի չարչարանաց, և 'ի տանջանաց կազմէ նմա զպատուական պսակ անմահի յաղթութեան, և փառաւորի յաղթանակի:

## ԳԼՈՒԽ: ԻԴ.

### Յաղագս բարեխառնութեան:

1. Բարեխառնութիւն է բարոյական կարողինալական առաքինութիւն, գտօղ զմիջոցն 'ի ցանկալիս, զի մի լինիցի 'ի նոսա հակումն դէպ 'ի յաջ, կամ դէպ 'ի յահեակ. այլ լինիցի շրջումն 'ի միջին, յորում կայանայ առաքինութիւն: Բարեխառնութիւն է առաքինութիւն. քանզի զբարեխառն առնէ բարի, և զգործ նորա բարի: Է բարոյական առաքինութիւն. քանզի շրջի շուրջ զցանկալեօք բարոյականօք իւրօք. առաքինութիւս այս ըստ հրամանի բանի, և օրինի, 'ի բանականէ մարդոյ պահելոյ, կացուցանէ զմիջինն 'ի ցանկալիս, այսինքն, 'ի կերակրոջ, և 'ի յըմպելւոջ, 'ի յաշխատանս, և 'ի ննջման, և 'ի յամուսնացեալս, 'ի վարման շօշափման, զի մարդն ընդունակն կիրառութեան բանի, շրջիցի 'ի միջին, և մի հակիցի դէպ 'ի յաջ, կամ դէպ 'ի յահեակ 'ի ցանկալիս: Այս շրջումս 'ի միջին, հարկաւոր է 'ի ցանկալիս: Վասնզի ցանկալիք իւրք իւրացելիք են վասն վաղճանի, 'ի հեղինակէ բնութեան դիտեցելոյն: Վաղճանն ոչ փրկի, եթէ ոչ 'ի ձեռն շրջեցման 'ի միջին, որպէս յայտէ 'ի կերակրոջ, և 'ի յըմպելւոջ, որոց վաղճանն է առողջութիւն, որ ոչ փրկի, եթէ ոչ 'ի ձեռն շրջեցման 'ի միջին, այսինքն, 'ի ձեռն բաւականի ընկալման կերակրոյ, և ըմպելւոյ: Քանզի աւելորդութիւն կերակրոյ, և ըմպելւոյ, վնասէ առողջութեան. նմանապէս սակաւութիւն հարկաւորի կերակրոյ, և հարկաւորի ըմպելւոյ վնասէ:

2. Առաքինութիւն բարեխառնութեան է կարողինալական. քանզի է գլխաւոր առաքինութիւն, և բազումք առաքինութիւնք առակցին նմա. առաքինութիւս այս զցանկական մասն մեր կառավարէ, և առնէ զնա ուղիղ, և եւս առնէ զմեզ 'ի ցանկալիս իւրս առաջնալ ըստ հրամանի բանի, և շրջիլ 'ի միջին, յորում կայանայ առաքինութիւն, և ոչ հակիլ դէպ 'ի յաջ, կամ դէպ 'ի յահեակ: Առաքինութիւն բարեխառնութեան է կարի հարկաւոր մարդոյ: Վասնզի ուղղութիւն ցանկականի մասին է հարկաւոր մարդոյ. քանզի 'ի ձեռն ուղղութեան ցանկականի մասին է կեանն մարդկային, և է կեանն ըստ հրամանի բանի. իսկ թարց ուղղութեան ցանկականի մասին, է կեանն անասնոյ, և անասնականութիւն. Արդ ուղղութիւն ցանկականի մասին է 'ի ձեռն առաքինութեան բարեխառնութեան. ապաուրեմն առաքինութիւն բարեխառնութեան հարկաւոր է մարդոյ: 'Ի յայտածիկ իւրս, որք պատկանին ցանկականի մասին, է բարեխառն նա, որ հեռանայ 'ի յարգելեցելոց, և 'ի վնասակարաց իրաց, հեռանայ 'ի յաւելորդաց, և 'ի յանչափից, և վարի հարկաւորօք, և օրինաւորօք իւրօք վասն պարտաւորի վաղճանի. զորօրինակ, 'ի կերակրոջ, և 'ի յըմպելւոջ, 'ի ննջման, և 'ի յաշխատանի, ունի վասն վաղճանի զառողջութիւն. իսկ 'ի վարման շօշափողութեան, եթէ իցեն ամուսնացեալք, զզաւակն, կամ զայլեղանին տկարութեան, կամ զպարտն արդարութեան. իսկ այլապէս ունօղն զիւր ինքն, և ոչ պահօղն զասացեալսն, է անբարեխառն:

3. 'Ի բարեխառնութեանն է պահեցողութիւն, զգաստութիւն, ժուժկալութիւն, ողջախոհութիւն, և 'ի յոմանս նաև հրեշտակային առաքինութիւն, որ է կուսութիւն: Ուստի բարեխառն է պահեցօղ, զգաստ, ժուժկալ, և ողջախոհ. և ոմն ժուժկալ, և արդէն կոյս: Է պահեցօղ, որ վարի կերակրով չափաւորաւ, և օրինաւորաւ ըստ հրամանի բանի և վասն պատուիրանի եկեղեցւոյ, և վասն պարտաւորի վաղճանի: Է

զգաստ, որ վարի չափաւորաւ, և օգտակարաւ ըմպելեաւ ըստ հրամանի բանի, և վասն պարտաւորի վաղճանի : Է ժուժկալ, որ ընդդիմանայ անկարգից շարժմանց ցանկութեան մարմնոյ, և ոչ տայ զտեղի շարժմանց բղջախհութեան : Է ողջախոհ, որ պատժէ, և սանձէ զմարմինն, և ենթարկէ ընդ հոգւոյ : Է կոյս, որ ոչ վարի կիրառութեամբ շօշափման, այլ առնէ զիւր լինքն ներքինի վասն արքայութեան երկնից : Կուսութիւն է հրեշտակային առաքինութիւն. քանզի կոյսն պահէ զիւր լինքն իբրև զհրեշտակ անարատ : Պատկանի առ բարեխառնութիւն նաև չափաւորութիւն ննջման, և աշխատանի, և պարկեշտութիւն զգեստից : Է չափաւորեցեալ 'ի ննջման, որ ննջէ որքան է հարկաւոր, և հեռանայ 'ի յաւելորդէ ննջմանէ : Է չափաւորեցեալ 'ի յաշխատանի, որ վարի աշխատանօք, որք ոչ վնասեն առողջութեան : Է պարկեշտ 'ի զգեստի, որ վարի զգեստիւ պատշաճաւորաւ, և կայութեան իւրոյ յարմարաւ, և հեռանայ 'ի յանպատեհէ, և 'ի յանյարմարէ : Նմանապէս խօսելի է զայլոց, որք երևին պատկանիլ բարեխառնութեան, և պահանջեն զչափաւորութիւն :

4. Բարեխառն ունի զպարգևն հոգոյն սրբոյ, պատասխանօղն բարեխառնութեան, այսինքն, զպարգևն երկիւղի տեառն : Քանզի բարեխառն երկնչելով 'ի զարհուրելւոյ, և 'ի յահաբեկէ դատաստանէ տեառն արդարով, և պարտաւորաւ պատժով պատժողի զմեղս անբարեխառնութեան, որպէս և զայլս, սանձէ զցանկութիւն, մեռուցանէ զմարմինն, և ենթարկէ զնա հոգւոյ, ընդդիմանայ անկարգից շարժմանց բղջախոհութեան, և արգելու զմարմնասիրութիւն : Յարմարագունեղ սպեղանին, և փրկաւէտագունեղ բժշկականութիւն ընդդէմ ցանկութեան մարմնոյ, և ընդդէմ բղջախոհութեան, է երկիւղն տեառն : Զի ուրեմն արգելուցումք զցանկութիւն մեր, ընդդէմ բանի, և օրինի այ հակառակօղն, պարտիմք երկնչիլ յամենակարողէ տեառնէ մերմէ, արդարագունեղէ դատաւորէ ընդհանրոց : Վերջինք մերք խորհելիք են, և սահէպ 'ի միտ ածելիք, այսինքն, մահն, յարութիւն, արդար հատուցումն գործոց ; զարհուրելի դատաստանն այ, անյետադարձուցանելի դատապարտութիւն, յաւիտենական մահն, մշտնջենաւոր պատիժն, անտանելի գեհենն, դժոխին թշուառութիւն լին, արքայութիւն երկնից, յաւիտենական ուրախութիւն, մշտնջենաւոր խնդութիւն, անվերջաւորելի թագաւորութիւն, ճշմարիտ երջանկութիւն, կատարեալ երանութիւն, անմահ կեանն, լիակատար անչարչարելութիւնն, և կատարեալ փառքն :

5. Երկիւղ տեառն պարտի գոլ 'ի մեզ, զի մի մեղանչիցեմք : Երկնչելի է 'ի յամենակարողէն այ : Քանզի մի է բարձրագունեղն, սահեղծօղն, ամենանից ամենակալօղն, և կարի երկնչելի է : Վաղվաղակի կործանի տունն նր, որ զիւր լինքն ոչ յարաժամ պահէ 'ի յերկիւղի տեառն : Տէրն զօրաց պարտի գոլ երկիւղն մեր, և ահն մեր, զի լիցէ մեզ 'ի սրբացուցումն : Երկնչելէ, որ կարէ և զհոգին, և զմարմին կորուսանել 'ի գեհենի : Արդարեւ երկնչելի է, որ յետ սպանանելոյն, ունի զկարողութիւն արկանելոյ 'ի գեհեն : Երկնչելի է 'ի տեառնէ, և ծառայելի է նմա կատարեալ, և ճշմարիտ սրտիւ, և ծառայելի է նմա 'ի յերկիւղի, և 'ի մարմնի մերում բևեռելի է երկիւղ նր, զի ծառայիցէ հոգւոյ : Որ երկնչի 'ի տեառնէ, հեռանայ 'ի չարէ : Վս զի առողջութի լիցի երկիւղամանց նր, և ուղղութն ոսկերաց նորա : Երկիւղ տեառն ատէ զչարն : Իմաստունն երկնչի, և խոտորի 'ի չարէ : Քանզի 'ի յերկիւղի տեառն, և երկիւղիւ նր է խոտորումն 'ի չարէ : Պարտիմք յամենայն ժամու գոլ 'ի յերկիւղի տեառն, զի ունիցիմք

զյոյս

պյպս 'ի վերջնումն, և յուսադրութի մեր ոչ բարձցի ։ Երանեալ է այր, որ միշտ է երկիւղած, և երկնչի 'ի տեառնէ ։ Քանզի, որ երկնչի յայ, զոչինչ զանցառնէ, և երկիւղ տեառն բացահերքէ զմեղս, և որ երկնչի յայ, զարհուրելի դատաւորէ, պահէ զպատուիրանս նր ։

6. Երկնչօղքդ 'ի տեառնէ, պարտիմք հաւատալ նմա, զի մի դատարկանայցէ վարձն մեր ։ Երկնչօղք 'ի տեառնէ խնդրեն զբարեհաճոյութիս նր, և պատրաստեն զսիրտս իւրս, և առաջի նորա սրբացուցանեն զհոգիս իւրս, և պահեն զպատուիրանս նորա, և ունին զհամբերութի մինչև առ համահայեցումն նորա ։ Յամէ սրտէ մերմէ երկնչելի է 'ի յայ ։ Քանզի որ երկնչի 'ի յայ, արտասցէ զբարի, և դարձցի առ սիրտ իւր, և լրումն երկիւղի այ է իմաստութիւն, և զգացումն, և երկիւղ տեառն է սկիզբն սիրոյ նորա ։ Զբազումս բարիս ստասցուք, եթէ երկնչիցիմք 'ի յայ, և հեռանայցեմք յամէ մեղաց, և առնիցեմք զբարի ։ Ինքն երկիւղ տեառն է իմաստութի, և հեռանալն 'ի չարէ, իմացողութի, և ժառանգութիւնն երկնի երկնչողացն յանուանէ տեառն, և երկնչօղն 'ի տեառնէ, է երանեցեալ, և կարօղ 'ի վերայ երկրի ։ Փառք և մեծութի են 'ի տան նր ։ 'Ի յերկիւղի տեառն է յուսադրութի արիութե, և աղբիւրն կենի, արգելօղն զկործանումն մահուան ։ Վախճանն պարկեշտութե, է երկիւղ տեառն, փարթամութիւնք, փառք, և կեան ։ երկիւղ տեառն, է փառք, և փառաւորութի, և խնդութի, և պսակ ուրախութե ։ Երկնչողի 'ի տեառնէ բարի եղիցի 'ի վախճանի, և 'ի յաւուր մահուան իւրոյ օրհնեսցի ։ Լիութի իմաստութեն է, երկնչել 'ի յայ ։ Աչք տեառն 'ի վերայ երկիւղածաց իւրոց ։ Երանեալ է այր, որում պարգևեցեալ է երկիւղն այ ։

7. Բարեխառն ունի զպտուղս հոգւոյն սրբոյ, պատասխանօղս բարեխառնութե ։ այսինքն, զճնշումն, զժուժկալութի, և զպարկեշտութիւն ։ Ուստի 'ի յառն բարեխառնի, է ճնշումն, ժուժկալութի, և պարկեշտութի ։ և համահետևապէս այր բարեխառն է ճնշօղ, ժուժկալ, և պարկեշտ ։ Բարեխառն է ճնշօղ ։ քանզի ախտից ցանկութե, և անկարգից շարժմանց նորա ոչ հաւանի, այլ ընդդիմանայ ։ Բարեխառն է ժուժկալ ։ վասնզի մեռուցանելով զանդամս, և զզգայութիս իւրս, և ենթարկելով զմարմինն հոգւոյ, 'ի ձեռն բազմապատկեցելոց ներգործութեց մեռուցման անդամոց, և զգայութեց, և տիրապետութե մարմնոյ, և 'ի ձեռն ծոմապահող սաստիկ զյօժարութի առ չափաւորեցեալս օրինաւորս շարժմունս ցանկութե ։ և համահետևապէս սաստիկ զդադարումն անկարգից շարժմանց ցանկութե ։ Յորժամ բարեխառն 'ի ձեռն մեռուցման մարմնոյ, և ծոմապահող հասանի առ ստացեալ կացութի, արդէն ունի զմարմինն ճնշեցեալ, և սանձեցեալ ։ և այսպէս է ողջախոհ ։ Բարեխառն է նաև պարկեշտ ։ քանզի զհամայնս, որք պատկանին առ ցանկութի, ունի չափաւորեցեալս, և վայելուչս բանի ։ Բարեխառն ունի զպարկեշտութիւն 'ի բանս, 'ի շարժմունս, 'ի զգեստու, 'ի զարդարանի, 'ի սեղանոջ, 'ի յընթացման, 'ի կենցաղավարութե, և 'ի յընկերակցութե մարդկանց ։ Հոգին սբ է 'ի յառն բարեխառնի, յորում բնակի, արտադրէ զստացեալս պտուղս ։

8. Բարեխառն վայելէ զաւետարանական երանութին, որ է սգալն ։ Վասնզի բարեխառն, որպէս ընդդիմանայ անկարգից շարժմանց ցանկութեան, և պատժէ զմարմինն, և ենթարկէ զնա բանի, և պարկեշտաբար ունի զիւր ինքն 'ի յամում իրի ։ այսպէս ճշմարտիւ ցաւով, և ճշմարտիւ ապաշխարութբ լոյ զգործեցեալս, և զորարեցեալս մեղս ։ Բարեխառն

քսան յիշելով զմեղս , ընդդէմ այ արարեցեալս , զղջայ , և ջանայ տարջանալ և ցաւիլ 'ի վերայ նոցա վասն սիրոյն աստուծոյ : փոշիմանեալ , և զղջացեալ ցաւելով 'ի վերայ գործեցելոց մեղաց , ընանի մխիթարութիւն զղջման , և փոշիմանութեան : Ճնշումն , ժուժկալութիւնն , պարկեշտութիւն , երկիւղ տեառն , և լացն 'ի վերայ մեղաց , զուգակցեալք 'ի միասին , արգելուն զանկարգս շարժմունս ցանկութեան , և 'ի բարեխառնոջ պատճառեն զզարմանալի քաղցրութիւն : Ուստի բարեխառն վայելէ զքաղցրութիւն բարեխառնութեան , և ողջախոհութեան , և երանութեան այդ , լցեալ քաղցրագունեղև մխիթարութեամբ : Իսկ անկարգք շարժմունք անբարեխառնութեան , բազումք չարեաց 'ի յանբարեխառնութենէ պատճառեցեալք , և խայթումն խղճի մնաց անբարեխառնի , կարի չարչարեն , և տառապեցուցանեն զանբարեխառն : Բարեխառնութիւն առնէ զմարդն ցուցանել զիւր ինքն մարդ : Բարեխառնութիւն բացաշարժէ 'ի մէնջ զանասնականութիւն : Բարեխառնութիւն արգելու զանկարգս շարժմունս ցանկութեան : Բարեխառնութիւն առնէ գովելիս զարարողութիւնս ստորնագունի մասին :

## ԳԼՈՒԽ : ԻԵ.

### Յաղագս խոնարհութեան :

Ա. Խոնարհութիւն է առաքինութիւն , որ առնէ զկամս մեր ուղիղ շուրջ զբաղձանաւ գերազանցութեան : Ուստի է ուղղութիւն կամին մերոյ շուրջ զբաղձանաւ գերազանցութեան : Արդուրեմն խոնարհութիւն առնէ զմարդն բաղձալ գերազանցութեան , ոչ երևելւոյ , և անպատեհի , այլ ճշմարտի , և պատշաճաւորի : Է գերազանցութիւն , որ է երևելի , և է , որ է անպատշաճ , Երևելին է , որ երևի , այլ ոչ է . որպիսի է փառաւորումն 'ի վերայ վատից արարողութեանց : Անպատեհն է , որ է , բայց ոչ յարմարի . որպէս պատիւն յարմարօղն ազնուին , է անպատեհ անտոհմի . զայսոսիկ գերազանցութիւնս , զերևելին , և զանպարտաւորն , հպարտութիւն խնդրէ , և այնց բաղձայ հպարտն . իսկ խոնարհութիւն ոչ խնդրէ . ուստի խոնարհն արհամարհէ զնոսա : Եւ է գերազանցութիւն , որ է ճշմարիտ , և է , որ է պատշաճ : Ճշմարիտ գերազանցութիւն է , որ արդարև է գերազանցութիւն : Եւ պատշաճն է , որ փափագողի յարմարի : Խոնարհութիւն խնդրէ զճշմարիտն , և զպատշաճն . ուստի փափագի ճշմարտի , և պատշաճի : Ճշմարիտ գերազանցութիւն , և մարդոյ յարմարն , է արդարացուցումն , բարեկամութիւն այ . առաքինութիւնք , և բարեգործութիւնք . յաւիտենականն կեանն , և երկնային փառքն . վասն զի մարդն վերացուցեալ է առ այս գերազանցութիւն : Խոնարհութիւն խնդրէ զայս ստացեալ գերազանցութիւն : Ուստի խոնարհն փափագի շնորհի , բարեկամութեան այ . առաքինութեանց , և բարեգործութեանց , յաւի-

յաւիտենականն կենի, և երկնայնոց փառաց ։

2. Երանեալ է մարդ, որ առաջի այ է խոնարհ ։ Քանզի ամենաբարձրագունեղ տրն հայի 'ի յաղօթս խոնարհաց, և ոչ անգոսնէ զաղաչանս նց ։ 'Ի խոնարհութե խոնարհաց յիշէ զնա, և տայ զփառս այնոցիկ, որք են խոնարհք սրտիւ։ Գերազանցագունեղ տրն բարձրացուցանէ զայնոսիկ, որք են խոնարհք, և սիրողք խոնարհութե ։ Ճշմարիտք աշակերտք քի, բոլորոյ աշխարհի վարդապետի, մարդկանց զճշմարտութի ուսուցանողի, եղեն խոնարհք ։ քանզի լոյսն աշխարհի, լուսաւորողն զմարդն, զաւետարանական լոյսն սիրողն, կոչէ առ ինքն, զի ուսանիցի զխոնարհութի, և կամի գալ առ ինքն զմանկունս, որք են խոնարհք, և ընդունիլ զարքայութի՛ն երկնից ։ Անսխալելի գինադիրն, զայսոսիկ ձանաչէ մեծագոյնս 'ի յարքայութե երկնից, որք աստ 'ի յերկրի են խոնարհագոյնք ։ Սաքակէ զհզօրս յաթոռոց, և բարձրացուցանէ զխոնարհս ։ Վարդապետն մեր սիրեաց զխոնարհութի, և եղև խոնարհ ։ Քանզի ոչ եկն պաշտիլ, այլ պաշտել, և տալ զանձն իւր 'ի փրկութի փոխան բազմաց ։ և ետ զօրինակ զարմանալւոյ խոնարհութե, լուանալով զոտս աշակերտաց ։ Ուստի կամի, զի որպէս արար ինքն, այնպէս առնիցեմք և մեք ։ Ունայնացոյց զիւր ինքն, առեալ զկերպարան ծառայի, և խոնարհեցոյց զիւր ինքն մինչև առ մահ խաչի ։ Ուստի կամի, զի 'ի նմանէ ուսանիցիմք զխոնարհութի ։

3. Խոնարհութե հանդերձ աղօթել պարտիմք առաջի ամենաբարձրելոյն ։ Քանզի աղօթն խոնարհաց, և հեզոց հաճոյ է ամենաբարձրելոյն, և զխոնարհս դնէ 'ի բարձու, և զտրտմեալս զօրացուցանէ, և զերծուցանէ 'ի վտանգէ ։ ով է որպէս Տր ած մեր ։ 'Ի բարձունս բնակեալ ։ Եւ զխոնարհս տեսանէ յերկինս, և յերկրի ։ Յարուցանէ զաղքատս յերկրէ ։ և բարձր առնէ զտառապեալս յաղբեաց. Նստուցանէ զնա ընդ իշխանս ։ 'Ի խոնարհութե առնելի է համբերութի ։ Քանզի որպէս 'ի հրոջ փորձի ոսկին, և արծաթն, այսպէս մարդիկք ընդունելիք 'ի հնոցի խոնարհութե ։ և խոնարհեցուցանելի է սիրտ մարդոյ, նախ քան փառաւորիցի ։ Մեծ ոք խոնարհեցուցանելով զիւր ինքն, գտանէ զշնորհ առաջի այ ։ քանզի կարողութի այ, պատուի 'ի խոնարհաց ։ Աղօթքն խոնարհեցուցանողի զինքն խուզէ զամպն, և ոչ յետադառնայ, մինչև ամենաբարձրեալն հայիցի ։ Գերազանցագունեղն, և ամենաբարձրն բնակողն 'ի յաւիտենականութեան ։ կեցուցանէ զոգիս խոնարհաց, և զսիրտն զղջացելոց ։ Ամենաբարձրագունեղ Տրն հայի առ աղքատիկս, և առ զղջացեալս սրտիւ, և առ երկնչօղս 'ի բանից իւրոց ։ Պարտիմք խոնարհեցուցանել զմեզ առաջի տեառն, և ընդ կարողագունի ձեռին այ, զի զմեզ բարձրացուսցէ 'ի ժամանակի այցելութե ։ Պարտի ունիլ 'ի մեզ խոնարհութի, զի գայցէ 'ի վերայ մեր իմաստութի ։ Քանզի ուր է խոնարհութի, անդ է իմաստութի, խոնարհութին պահանջէ, զի, յորժամ առնիցեմք զհամայնս իրս, որք պատուիրեցեալք են մեզ, ասիցեմք, ծառայք անպիտանք եմք, զոր պարտէաք առնել, արարաք ։

4. 'Ի ձեռն խոնարհութեան ստանամք, և առընդունիմք զբազումս բարիս ։ 'Ի ձեռն խոնարհութե է բարձրացումն ։ քանզի որ խոնարհեցուցանէ զիւր ինքն, բարձրացուցանի ։ 'Ի ձեռն խոնարհեցուցման հանդերձ զղջմամբ, է թողութե մեղաց, և ներումն յանցանաց ։ Վասնզի մաքսաւորն խոնարհեցուցեալ կալով մեկուսի, ունելով զաչս խոնարհս, զղջացեալ բախելով զկուրծս իւր, և խոնարհաբար խնդրելով զնպաստութի, և զթողութի մեղաց, էջ արդարացուցեալ 'ի տուն իւր ։ 'Ի ձեռն խոնարհութե է պարգևումն շնորհի ։

և Քան_

Քանզի ա̃ծ հակառակ կայ հպարտաց, տայ զշնորհս խոնարհաց: Ուստի շնորհն իջանէ 'ի վերուստ 'ի վերայ խոնարհաց: 'Ի ձեռն խոնարհութեան է քաջադործութիւն աղօթից: Վասնզի աղօթն խոնարհի պարտաւորապէս, և որպէս պիտոյ է, աղաչողի զա̃ծ, հասանի առ ամենաբարձրագունեղն, և ստանայ, և առընդունի 'ի նմանէ զխնդրեցեալն, կամ զլաւագոյնն: 'Ի ձեռն խոնարհութեան է յենարանն, հաստատութիւն, և սիւնն առաքինութեանց: Քանզի որպէս հպարտութիւն ցրուէ զառաքինութիւնս, այնպէս խոնարհութիւն յեցուցանէ, հաստատէ, և անշարժ պահէ զն̃ս: 'Ի ձեռն խոնարհութեան է դիւրածանուցումն, յայտնեցումն, և խոստովանութիւն մեղաց. քանզի խոնարհի ոչ անհաձոյանայ կրել զպարտաւոր ամաչումն: 'Ի ձեռն խոնարհութեան է յաղթութիւն 'ի պատերազմի: Քանզի ամենաբարձրագունեղ Տ̃րն խոնարհի 'ի յինքն յուսացողի, և յուսադրողի, օգնէ, և ձեռնատու լինի նմա: 'Ի ձեռն խոնարհութեան մեծ գանձ է մեզ 'ի յերկինս: Վ̃ա զի խոնարհն յա̃մում արարողութեան խոնարհի, 'ի սիրոջ ելուզեցելոջ գանձէ 'ի յերկինս:

5. 'Ի խոնարհութեան են բազումք առաքինութիւնք: Քանզի 'ի խոնարհութեան է ճշմարտութիւն, ճշմարտախօսութիւն, հաւատարմութիւն, հնազանդութիւն, ընդունումն խրատոյ, յուսադրութիւն 'ի յա̃ծ, համբերութիւն 'ի ձախորդութիւնս, ապահովութիւն 'ի պատերազմի, խոստովանումն մեղաց, պատուումն, և գովումն ընկերի պատուելոյ, և գովելոյ, ընդունումն խոնարհաց արարողութեանց, և խնդրումն թողութեան: 'Ի խոնարհութեան է ճշմարտութիւն. վասնզի խոնարհն խնդրէ ոչ զսուտ, այլ զճշմարիտ գերազանցութիւն, և փափագի նմա: 'Ի խոնարհութեան է ճշմարտախօսութիւն. քանզի խոնարհն ոչ պարծի զստոց, այլ զճշմարտից, երբ պիտոյանայ: 'Ի խոնարհութեան է հաւատարմութիւն. վասնզի խոնարհն կատարէ զխոստացումն, յորում է խոնարհեցումն: 'Ի խոնարհութեան է հնազանդութիւն. քանզի խոնարհն ենթարկէ զիւր ինքն մեծաւորի, և պահէ զպատուիրանս նր̃: 'Ի խոնարհութեան է ընդունումն խրատոյ. վասնզի խոնարհն կամաւորապէս խրատի, և ուղղի: 'Ի խոնարհութեան է յուսադրութիւն 'ի յա̃ծ. քանզի խոնարհն, մինչ վերակայ պատերազմն, ոչ յուսայ 'ի յիւր ինքն. այլ 'ի տր̃: 'Ի խոնարհութեան է համբերութիւն 'ի ձախորդութիւնս. վասնզի խոնարհն համարի զիւր ինքն արժանի չարչարանաց 'ի յայսմիկ կենի: 'Ի խոնարհութեան է ապահովութիւն 'ի պատերազմի. քանզի խոնարհն ունի զօգնութիւնն ա̃յ 'ի պատերազմի: 'Ի խոնարհութեան է խոստովանումն մեղաց. վասնզի խոնարհն ոչ փախչի 'ի խոստովանելոյ զմեղս: 'Ի խոնարհութեան է պատուումն, և գովումն ընկերի. քանզի խոնարհն ոչ ընդդիմանայ պատուել զպատուելին, և գովել զգովելին: 'Ի խոնարհութեան է ընդունումն խոնարհաց արարողութեանց. վասնզի խոնարհն սիրէ զխոնարհս արարողութիւնս: 'Ի խոնարհութեան է խնդրումն թողութեան. քանզի խոնարհն կամաւորապէս խնդրէ զթողութիւն:

6. Խոնարհութիւնն է ճանապարհ առ գերազանցութիւն. ուրեմն սիրողն զգերազանցութիւն, պարտի գրկել զխոնարհութիւնն, զմարդն առ գերազանցութիւն ածողն: Խոնարհութիւնն առնէ զքրիստոնեայ մարդն նման քի̃ փրկչին մերոյ, վ̃ա փրկութեան մերոյ կարի յոյժ խոնարհեցուցելոյ: Ուրեմն փափագողն նմանութեան քի̃, փրկչին բոլորոյ աշխարհի, պարտի գոլ խոնարհ, զի կարիցէ լինել նման քի̃: Խոնարհութիւնն կերտէ զտուն, բնակարանն ամենաբարձրելոյ տեառն: Քանզի ամենաբարձրագունեղն ա̃ծ, պատրաստ է բնակել 'ի սրտոջ խոնարհի: Ուրեմն այր իմաստուն, որ փափագի գոլ տուն աստուածոյ,

ծոյ , պարտի գոլ խոնարհ , զի կարիցէ լինել ըմբռնն տուն նորա ։ Քս̃ ուսուցանէ զխոնարհութիւն ։ Ուրեմն արդարն պարտի գոլ խոնարհ , զի լինիցի վայելչաւոր աշակերտ վարդապետի իւրոյ ։ Հաւատացեալ մարդն 'ի շնորհի այ̃ խոնարհ , 'ի յերկնի բարձր , և անդ կարի բարձրացուցեալ ։ 'Ի յաստացելոց երևի գերազանցութիւն , և ազնուութիւն ճշմարտի խոնարհութեան , ամենաբարձրելոյն այ̃ հաճոյի ։ Երևի և գովասանն , և պարծանքն առն խոնարհի ։ Խոնարհն է ընդունելի այ̃ , և հաճոյ ամ̃ից սրբոց ։ Հաւատացեալն, որ է խոնարհ , նաև 'ի մէջ մեր է սիրելի ։ Ընկերակցութիւն նորա է անոյշ , և կենցաղավարութիւն նորա քաղցր ։ Զհայեցօղս չինեն օրինակօք , 'ի խոնարհ հաւատացելոց տոէեցելովք ։ Արարքն խոնարհաց , զխոնարհութիւն սիրողաց , հրաւիրեն առ սէր խոնարհութեան , զմարդիկ , որք սիրեն զառաքինութիւս ։ Ապաուրեմն սիրելիք են խոնարհք , զխոնարհութիւն սիրօղք ։

7. Ունեցօղն զճշմարիտ խոնարհութիւն , ցուցանէ զուղղութիւն խոնարհութեան 'ի յա̃մում իւր , այսինքն , 'ի խորհուրդս , 'ի յիղձս , 'ի համարման իւրեան ինքեան , 'ի յենթադատման , 'ի բանս , 'ի խօսակցութեան , 'ի գործս , 'ի պատիւս , 'ի գովասանի , 'ի պարգևի , 'ի կենցաղավարութեան , 'ի սեղանոջ , 'ի զգեստի , 'ի ծախս , և 'ի հանդիսաւորութիւս ։ Ուղիղ է 'ի խորհուրդս ․ քանզի ոչ մտածէ զինքենէ զայնոսիկ իրս , որք ինքեան ոչ վայելեն ։ Ուղիղ է 'ի յիղձս ․ վասնզի փափագի միայն այնոցիկ , որք ինքեան պատշաճին ։ Ուղիղ է 'ի համարման իւրեան ինքեան ․ քանզի համարի զիւր ինքն այնպիսի , որպիսի է ։ Ուղիղ է 'ի յենթադատման ․ վասնզի ոչ դատէ , զորս դատել ոչ կարէ ․ իսկ զորս դատել կարէ , համարի զայնպիսիս , որպիսիք են ։ Ուղիղ է 'ի բանս , և 'ի խօսակցութիւս ․ քանզի ոչ խօսի զինքենէ , եթէ ոչ որքան պիտոյ է , և այլապէս լռէ ։ Ուղիղ է 'ի գործս , վասնզի ոչ փախչի 'ի կրթելոյ զիւր ինքն 'ի խոնարհս իրս ։ Ուղիղ է 'ի պատիւս ․ քանզի ոչ բաղձայ սոոյ , ունայնի , և անպարտաւորի պատուոյ ։ Ուղիղ է 'ի գովասանի ․ վասնզի ոչ խնդրէ զդունայնս , և զանպատեհս գովասանս ։ Ուղիղ է 'ի պարգևի ․ քանզի ոչ ընդունի զպարգևս , որոց զիւր ինքն ճանաչէ անարժան ։ Ուղիղ է 'ի կենցաղավարութեան ․ վասնզի խոնարհաբար շրջի ընդ ամենեսեան ։ Ուղիղ է 'ի սեղանոջ ․ քանզի վարի խոնարհաւ , և ինքեան յարմարողաւ սեղանով , թարց ունայնի պարծանի ։ Ուղիղ է 'ի զգեստի ․ վասնզի զգենու միայն ինքեան զյարմարն ։ Ուղիղ է 'ի ծախս ․ քանզի առնէ միայն զվայելուչս , և կացութեան իւրում պատշաճս ։ Վերջապէս ուղիղ է 'ի հանդիսաւորութիւս ․ վս̃ զի հեռանայ յայնմանէ , որ է անվայելուչ , և անյարմար ․

8. Փափագօղն բարձրացուցման , պարտի գրկել զխոնարհութիւն ․ քանզի ամենաբարձրագունեղն այ̃ , որ հակառակ կայ հպարտաց , բարձրացուցանէ զխոնարհս ։ Աբրահամ գրկելով զխոնարհութիւն , խոստովանեցաւ զիւր ինքն գոլ փոշի և մոխիր ։ Իսկ այ̃ բարձրացուցանօղն զխոնարհս , կացոյց զնա հայր բազմաց ազգաց ։ Դաւիթ ասէ ։ ( Այլ ես որդն եմ ․ և ոչ եմ մարդ ․ նախատինք մարդկան , և արհամարհանք ժողովրդոց ։ ) Սաղմոս ։ 21 ․ Թիւ ․ 7 ․ Բայց այ̃ ճանաչեաց զնա այր ըստ սրտի իւրում ։ Մարիամ ասաց ( Ահաւասիկ կամ աղախին տեառն ։ ) Ղուկաս ։ 1 ․ Թիւ ․ 38 ․ իսկ կաթուղիկէ հաւատն խոստովանի զնա ած̃ածին , մայր Յի Քի որդւոյն այ̃ , և թագուհի հրեշտակաց , և մարդկանց , բարձրացուցեալ 'ի վեր քան զամ̃ս ստեղծուածս ։ Սբ̃ն Պօղոս գրէ զքէ վս̃ մեր խոնարհեցելոյ ։ ( Որ 'ի կերպարանս այ̃ էր ․ ոչինչ յափշտակութիւն համարեցաւ զլինիլն հաւա-

սար այ • այլ զանձն ունայնացոյց, զ կերպարանս ծառայի առեալ, 'ի նմանութիւն մարդկան եղեալ, և կերպարանօք գտեալ իբրև զմարդ : Խոնարհեցոյց զանձն, լեալ հնազանդ մահու չափ, և մահու խաչի, վա որոյ և ած զնա առաւել բարձրացոյց, և շնորհեաց նմա անուն, որ 'ի վեր է քան զամ անուն : Զի յանուն Յի Քի ամ ծունր կրկնեսցի երկնաւորաց, և երկրաւորաց, և սանդարամետականաց • և ամ լեզու խոստովան լիցի • թէ Տր Յս Քս է 'ի փառս այ հօր : ) Առ փիլիպպեցիս : 2. Թիւ. 6.

## ԳԼՈՒԽ. ԻԶ.

### Յաղագս եղբայրական սիրոյ :

1. Եղբայրական սէրն է առաքինութիւն, որով սիրեմք զընկերս վա սիրոյն այ, կամելով, և առնելով նոցա զ բարիս, և ջանալով ազատել զնոսա 'ի չարէ, և 'ի թշուառութենէ : Որպէս սիրողն զընկեր իւր, խնդայ 'ի վերայ բարեաց, զորս նա ունի • և զբարիս զորս ոչ ունի պարգևէ : Իսկ 'ի վերայ չարեաց և 'ի վերայ թշուառութենէ, յորս գտանին, տրտմի, և ուշադրաբար ջանայ, զի ազատեսցէ զնա 'ի չարէ, և արտահանիցէ 'ի թշուառութենէ : Համայնք մարդիկս, որք եմք 'ի յայսմիկ աշխարհի վա բաղմաց պատճառաց եմք եղբարք : Եմք եղբարք • վասն զի համայնքս եմք որդիք ադամայ, և եւայի, 'ի նոյնոց նախածնողաց ծնեցեալք : Յետոյ եմք անհատք նոյնոյ մարդկային տեսակի : Ուստի ըստ տեսակի, և ըստ բնութեան եմք նմանք, և եղբարք : Դարձեալ մեք հաւատացեալքս, և մկրտեցեալքս եմք որդիք եկեղեցւոյ • և այլք կարեն հաւատալ, և մկրտիլ : Ուրեմն ընդ ոմանց ներգործութեամբ, և ընդ ոմանց 'ի կարողութեան ըստ հաւատոյ եմք եղբարք : Գտանօղքս 'ի շնորհի, և 'ի սիրոյ եմք որդիք այ • և այլք կարեն ունիլ զշնորհ, և զսէր : Ուրեմն ընդ ոմանց ներգործութեամբ, և ընդ ոմանց 'ի կարողութեան եմք եղբարք ըստ շնորհի, և ըստ սիրոյ : Վերջապէս համայնքս կարեմք հասանիլ փառաց : Ապաուրեմն համայնքս եմք եղբարք 'ի կարողութեան ըստ փառաց :

2. Յայտ է պարտաւորութին, պարտաւորողն զմարդիկ սիրել զթշնամիս • այսպէս բացադրի պարտականութիւն սիրոյ առ իրեարս : Եղբարք պարտին սիրել զմիմեանս • քանզի զայս պահանջէ եղբայրական զուգակցութին • իսկ մեք վա բաղմաց պատճառաց եմք եղբարք, որպ ցուցեալ է • ուրեմն պարտիմք սիրել զմիմեանս : Է ածային պատուիրան, պարտաւորող զմեզ սիրել զընկերն • քանզի գրեալ է 'ի յաւետարանի : ( Սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո : ) Մատթէի : 22. Թիւ. 39. Արդ մեք մարդիկքս եմք ընկերք ընդ միմեանց • քանզի մարդն մարդոյ է ընկեր : Ուրեմն մեք մարդիկքս պարտիմք սիրել զմիմեանս : Սէրն ընկերի է պատուիրան քի, և պատուիրան նորոյ օրինի • քանզի ասէ Տրն : ( Այս է պատուէր իմ, զի սիրեսջիք զմիմեանս, որպէս և ես զձեզ սիրեցի : ) Յոհան : 15. Թիւ. 12. Եւ նոյն Տրն ասէ : ) Պատուիրան նոր տամ ձեզ, զի սիրիցէք զմիմեանս • որպէս սիրեցի ես զձեզ • զի և դուք սիրեսջիք զմիմեանս : ) Յոհ. 13. Թիւ. 34. Իսկ մեք եմք հետևօղքն քի, և հաւատացեալք նորոյ օրինի, և նորոյ կտակարանի : Ապաուրեմն պարտիմք սիրել զմիմեանս : Մեք եմք աշակերտք քի • իսկ աշակերտք քի պարտին սիրել զմիմեանս • քանզի ասէ Տրն : ( Յայսմ գիտասցեն ամենեքեան եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս : ) Յոհ. 13. Թիւ. 35. Ապաուրեմն մեք քրիստոնեայքս, որք եմք աշակերտք քի պարտիմք սիրել զմիմեանս :

3. Ոչ միայն զբարեկամս, այլ նաև զթշնամիս սիրել պարտիմք. քանզի ասէ Տ̅ր̅ն: (Այլ ես ասեմ ձեզ. սիրեցէք զթշնամիս ձեր. բարի արարէք ատելեաց ձերոց. և աղօթս արարէք 'ի վերայ այնոցիկ, որք լլկեն զձեզ, և հալածեն: Զի եղիջիք որդիք Հօր ձերոյ, որ երկինս է. զի զարեգակն իւր ծագէ 'ի վերայ չարաց, և բարեաց. և ածէ անձրև 'ի վերայ արդարոց, և մեղաւորաց:) Մատթ. 5. Թիւ. 44. Ահա յայտնագունեղագոյն պատուիրան Ք̅ի̅ զփրկմանէ թշնամւոյ: Ուստի պատուիրանաւ Ք̅ի̅ պարտաւանդիմք սիրել նաև զթշնամիս մեր, բարի առնելով այնոցիկ. որք ատեն զմեզ, և աղօթելով վասն զմեզ հալածողաց, և զրպարտողաց: Ամենասիրելագունեղ փրկիչն մեր առածէ նաև զպատճառ, զի ներածիցէ զմեզ առ 'ի սիրել զթշնամիս, օրինակաւ Հօրն երկնայնոյ, նաև անիրաւաց, և չարաց բարերարի: Առածէ և զայլ պատճառ ասելով: (Զի եթէ սիրիցէք զայնոսիկ, որք սիրեն զձեզ, զինչ վարձք իցեն, ոչ ապաքէն և մաքսաւորք զնոյն գործեն: Եւ եթէ տայցէք միայն ողջոյն բարեկամաց ձերոց, զինչ աւելի առնէք. ոչ ապաքէն մաքսաւորք և մեղաւորք զնոյն գործեն: Արդ եղերուք դուք կատարեալք. որպէս և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է:) Մատթ. 5. Թիւ 46. Ուրեմն հետևօղք Ք̅ի̅, աշակերտքս փրկչին աշխարհի, և վարդապետի մեր ամենեցուն, որ է լոյսն մեր, լուսաւորողն զմեզ 'ի յա̅մ̅ում իւրի, որք պատկանիմ առ փրկութե̅ մեր, պարտիմք սիրել զթշնամիս մեր:

4. Բազում պատճառք համոզեն զմեզ սիրել զթշնամիս: Առաջին այսպէս ունի զինքն: Սիրել զթշնամիս է պատուիրան տեառն. ուրեմն պարտիմք սիրել զթշնամիս: Երկրորդն այսպէս առաջնոյ: Ունելի է այդ, որով լինիմք որդիք ա̅յ. իսկ սէրն թշնամեաց վ̅ս̅ սիրոյն ա̅յ ամենաբարձրելոյն տեառն, առնէ զմեզ որդիս ա̅յ. ուրեմն պարտիմք սիրել զթշնամիս մեր: Երրորդ պատճառն այսպէս ձևակերպի: Մեք, որք ըստ իմացութե̅, և ըստ կամի արարեցեալք եմք առ նմանութե̅ ա̅յ ստեղծողին մերոյ, պարտիմք ջանալ, զի լինիցիմք նմանք ա̅յ նաև ըստ ներգործութե̅. իսկ լինիմք նմանք ա̅յ 'ի ձեռն սիրոյ թշնամեաց. ուրեմն պարտիմք սիրել զթշնամիս: Չորրորդ պատճառն այսպէս կերպի: Մեք քրիստոնեայքս պարտիմք հետևիլ աւետարանական կատարելութե̅. իսկ սէրն թշնամեաց է Աւետարանական կատարելութի. ուրեմն պարտիմք սիրել զթշնամիս մեր: Հինգերորդ պատճառն է այս: Որդիք եկեղեցւոյն Ք̅ի̅ պարտին պահել զպատուիրանս նորոյ օրինի. իսկ սէրն թշնամեաց է պատուիրան նորոյ օրինի. ապաուրեմն պարտիմք պահել մեք, որք եմք որդիք եկեղեցւոյ: Վեցերորդն է այս: Պարտի 'ի մեզ գոլ այդ, որով զանազանիմք 'ի հեթանոսաց, և 'ի մաքսաւորաց. իսկ 'ի ձեռն սիրոյ թշնամեաց զանազանիմք 'ի նոցանէ. ապաուրեմն պարտիմք սիրել զթշնամիս: Եօթներորդն է, զի ունիցիմք զաւատ վարձ առ ա̅ծ: Վերջինն է, զի հետևիցիմք օրինակի Ք̅ի̅:

5. Սէրն ընկերի է նշան սիրոյն ա̅յ. քանզի որ սիրէ զընկերն, ցուցանէ, թէ սիրէ զա̅ծ: Ճշմարիտ, և ուղիղ սէրն ընկերի է, որ ոչ հանգի 'ի յընկերոջ, այլ հանգի 'ի յա̅ծ: Ուստի այնպէս բերի 'ի յընկերն, զի հասանիցի առ ա̅ծ, և առշօշափելով զա̅ծ, դադարիցի 'ի նմա: Է պատուիրան ա̅յ, սէրն ընկերի: Քանզի վաղճանին պատուիրանի, է սէրն ընկերի, և սիրումն ընկերի, է կատարումն օրինի: Ուստի, որ սիրէ զընկեր իւր, կատարէ զօրէնն, և պահէ զպատուիրանս: Ունեցողն զպատուիրանս, և պահօղն զն̅ս̅, սիրէ զա̅ծ, քանզի ասէ Տ̅ր̅ն: (Որ ունի զպատուիրանս իմ, և պահէ զնոսա.

նա

նա է, որ սիրէ զիս։) Յօհան. 14. թիւ. 21. ուստի սիրողն զընկեր իւր ճշմարտիւ, և ուղղով սիրով, որ է պատուիրան Քի, ունի զպատուիրանս քի, և պահէ զնոսա. ուրեմն սիրէ զքն, մինչ ունեցողն զպատուիրանս քի, և պահօղն զնս, սիրէ զքն ըստ վկայութեն նոյնոյ քի։ Ապա ուրեմն սէրն ընկերի է նշան սիրոյ այ, մանաւանդ եթէ սիրիցի, թշնամին վասն սիրոյն այ։ Վասն այսորիկ յորդորէ զմեզ մեծն Պօղոս, ասելով. (եթէ քաղցեալ է թշնամին քո, հաց տուր նմա. եթէ ծարաւի, ջուր տուր նմա. զայս արարեալ կայծակունս հրոյ կուտեսցես ՚ի գլուխ նորա։ մի յաղթիր ՚ի չարէն. այլ յաղթեա բարեաւն չարին։) Առ հռոմ. 12. թիւ. 20. Լինի մեծ յաղթութի ՚ի սիրոյ թշնամեոյ. վասնզի յոյնժամ ՚ի կիրականի սէրն աստուծոյ. քանզի մինչ սիրի թշնամին, պատճառն շարժօղն զմեզ առ սէր, է սէրն այ, զսէրն թշնամւոյ առ կատարելութի մեր հրամայողի։

6. Սէրն ընկերի է համապահիչն արդարութեն։ Քանզի որ սիրէ, կամի ընկերի զբարի, և առնէ. և ոչ կամի զչար, և ոչ առնէ. այլ եւս ջանայ ազատել ՚ի չարէ, զոր սիրէ։ Կամեցօղն, և առնօղն զբարի, հատուցանէ իւրաքանչիւրոյ, որ է իւրն, վասնզի որ կամի, և առնէ զբարի ումեք, կամի, և առնէ նմա զայն, զոր պարտի նմա. իսկ կամիլն, և առնելն ումեք զայն, որ պարտաւոր լինի նմա, է հատուցանել նմա, որ է իւրն. ապա ուրեմն որ կամի, և առնէ այլոց զբարիս, հատուցանէ իւրաքանչիւրոյ, որ է իւրն. իսկ հատուցանելն իւրաքանչիւրոյ, որ է իւրն, է պահել զարդարութի. ուրեմն որ սիրէ զընկերն, պահէ զարդարութի։ Ուստի ոչ կարէ գոլ սէր թարց պահպանման արդարութեն։ Ապա ուրեմն սիրողն է արդար։ Արդ ուրեմն քրիստոնեայն, որ սիրէ զընկեր իւր, ոչումեք առնէ զանիրաւութի, և զոչոք անիրաւաբար նեղէ։ Զոչոք թիւրաբար դատէ։ Զոչոք վշտացուցանէ նախատանօք, և անիծաբանութեամբք, ոչումեք զբարի համբաւն, և զփառաւոր անունն անիրաւաբար սևացուցանէ։ Զոչոք անարգէ, ոչումեք վնասէ ՚ի կենի։ Զոչոք պղծէ բղջախոհութբ։ Ոչուրուք զինչս, և զժառանգութիս յափշտակէ, կամ յանկացուցանէ։ Զոչոք խաբէ։ Ընդդէմ ոչուրուք արտաբերէ զսուտ վկայութի։ Ոչուրուք կնոջ ցանկայ։ Եւ ոչուրուք ընչից բաղձայ։ Սէրն ընկերի է համբերօղ, և է քաղցրաբարոյ։ Ոչ նախանձի, ոչ գործէ թիւրաբար, ոչ հպարտանայ։ Ոչ է փառամոլ, ոչ խնդրէ, որ է իւրն, ոչ զայրանայ, ոչ խորհի զչար։ Ոչ խնդայ ՚ի վերայ անիրաւութեն. այլ խնդայ ՚ի վերայ ճշմարտութեն։ Ամի տանէ, ամի հաւատայ, ամենայն յուսայ, ամի համբերէ։

7. Քս գնալոց առ հայրն, եթող քրիստոնէից զխաղաղութի, ասելով, (Զխաղաղութի թողում ձեզ. զխաղաղութի զիմ տամ ձեզ։) Յօհան. 14. թիւ. 27. Զխաղաղութիս այս մեզ ՚ի քէ տեառնէ թողեալն, համապահէ եղբայրական սէրն։ Քանզի եղբայրական սէրն սերմանէ զհամաձայնութի ՚ի մէջ հաւատացելոց, և բառնայ զհամայնս տարաձայնութիւնս, և զխէթս։ Ուր է սէր, և եղբայրսիրութի, անդ է խաղաղութի, և միաբանութի։ Բայց ուր է պակասութի սիրոյ, և եղբայրսիրութեն, անդ է տարաձայնութի, և խէթ։ Քս պաղօթեաց առ հայրն, զի զքրիստոնեայս առնիցէր մին, ամենամեծի միաւորութբ։ Քանզի աղաչեաց ասելով, (Այլ ոչ վասն նոցա միայն աղաչեմ, այլ և վասն ամ հաւատացելոց բանիւն նոցա յիս։ Զի ամենեքին մի իցեն, որպէս դու հայր յիս, և ես ՚ի քեզ. զի և նոքա ՚ի մեզ իցեն։) Յօհ. 17. թիւ. 20. Զայս միաւորութիս, որով քրիստոնեայք են մի ՚ի մէջ իւրեանց, և միաւորեցեալք ՚ի մէջ իւրեանց, են մի ընդ այ, առնէ սէրն, և եղբայրսիրութին։ Վասնզի սէրն,

և

և եղբայրսիրութիւն բերէ դէպ 'ի յընկերն, և հանգէ 'ի յա̃ծ, առնելով զմեզ սիրել զընկերն վասն ա̃յ ։ Քանզի սա միաւորէ զանդամս եկեղեցւոյ 'ի մէջ իւրեանց, և առնէ մին 'ի սիրոյ ․ և միաւորէ, և զուգակցէ զնոսա ընդ քի̃, որ է գլուխն եկեղեցւոյ, և առնէ մին ընդ նմա ։ Ուրեմ̃ վասն խաղաղութե̃ և միաւորութե̃ ուշադրաբար պահելի է սէրն, և եղբայրսիրութիւնն ։

2. Ուր է սէր, անդ է արդարութի̃ ։ Ուրեմ̃ ուր է պակասութի̃ ընդդէմ սիրոյ, և սիրելւոյ, անդ է ատելութի̃, վրէժխնդրութի̃, թշնամութի̃, անիրաւութի̃, և անարդարութի̃ ։ Ուր է սէր, անդ է ողորմածութի̃ ։ Բայց ուր անիրաւութի̃, և անարդարութի̃, անդ է անողորմութի̃ ։ Քանզի որպէս 'ի սիրոյ, և 'ի սիրելութե̃ է ողորմածութի̃, և գթութի̃ ․ այսպէս 'ի յատելութե̃, 'ի վրէժխնդրութե̃, յանիրաւութե̃, և 'ի յանարդարութե̃, է անողորմութի̃ ։ Ուստի որպէս սիրողք են ողորմածք, և ցաւակիցք ․ այսպէս անիրաւք, և անարդարք են անողորմք, և գազանաբարոյք ։ Սիրողք են խաղաղարարք, և միաբանիչք ․ բայց ատողք, տարաձայնք ․ և անմիաբանք ։ Ուր են սիրողք, անդ է արքայութի̃, ըստ այնմ ։ ( Զի բարի, կամ զի վայելուչ ․ զի բնակին եղբարք 'ի միասին ։ ) Սաղ. 132. թիւ. 1. Բայց ուր են ատողք, և փափագողք վրէժխնդրութե̃, անդ է դժոխս ։ Սիրողք, են տուողք զբարի օրինակ ․ իսկ ատողք գայթագղեցուցանողք ։ Սիրողք փրկեն զիւրեանս ինքեանս, և զայլս ․ իսկ ատողք, կորուսանեն զիւրեանս ինքեանս, և զայլս ։ Սիրողք ներեն, և առնելով զողորմածութի̃, գտանեն զողորմութի̃ ․ բայց ատողք, և հաւաչողք վրէժխնդրութե̃, ոչ ներեն ․ և զրկին 'ի յողորմութե̃ ։ Սիրողք հասանին բազմաց բարեաց ․ իսկ ատողք անկանին 'ի բազում չարիս ։ Զի ուրեմ̃ հասանիցիս բարեաց, առ որս ածէ սէրն, և ազատիցիս 'ի չարաց, առ որս ածէ ատելութիւն, թողլով զատելութիւն սերմանիչն չարաց, դրկեա̃ զսէրն ծո̃ղ բարեաց ։

## ԳԼՈՒԽ ԻԵ ։

### Յաղագս առատաձեռնութե̃ ։

1. Առատաձեռնութիւն է առաքինութի̃, յօժարեցուցանող զմեզ առ գործ գթութե̃, և ողորմութե̃, 'ի դրամոց օրինաւորապէս ստացելոց ։ Արդուրեմ̃ առատաձեռնութիւն է առաքինութի̃, որ առնէ զուղիղ կամ̃ մեր շուրջ զբաշխանս դրամոց, և զկիրառութե̃ ընչից ։ Քանզի առնէ զմեզ բաշխել կանոնաւորաբար և չափաւորեցելով բաշխանս արդարոց դրամոց, և յօժարեցուցանէ զմեզ ծախել զարդարս դրամս առ վախճան, առ որ ստանալիք են ։ Ուստի առատաձեռն բանաւորաւ, և չափաւորեցելով բաշխանս փափագի արդարոց, և օրինաւորաց դրամոց ․ և ջանայ ժողովել զնոսա, և ունել պատրաստեցեալս, դիտաւորութե̃ վարելոյ նոքօք, և ծախելոյ զնոսա առ վախճան, առ որ կարգաւորեցեալք են նոքա 'ի հրամանէ բանի ։ Արդուրեմ̃ 'ի յառատաձեռնի գտանին այսոքիկ, այսինքն, ուղիղ փափագ դրամոց, ուշադիր ջան հաւաքելոյ, արդարք դրամք, և կիրառութի̃ դրամոց առ վախճան դիտեցեալն 'ի յառատաձեռնութե̃ ։ Խնդրի չափաւորեցեալ բաշխան ․ քանզի անչափն պատկանի ագահութե̃ ։ Խնդրի ուշադիր ջան ․ վ̃զի թարց այնպիսւոյ ջանի ոչ հաւաքին դրամք ։ Խնդրին արդարք դրամք ․ քանզի անիրաւք դրամք ոչ են նիւթք առա-

առա-

առատաձեռնութեան ։ Խնդրի կիրառումն առ դիտեցեալ վախճան 'ի յառատաձեռնութէ. վասնզի այլ կիրառումն ոչ է առատաձեռնութեան ։

2. 'Ի հեղինակէ բնութեան տուեալ են մարդոյ դրամք, ոչ իբրև վախճան, այլ իբրև միջոցք առ 'ի ստանալ զայլ պարտաւոր, և համեստ վախճան, զորօրինակ, առ 'ի համապահել զմարդկային անհատն, 'ի ձեռն կերակրոյ, և ըմպելւոյ, և 'ի ձեռն զգեստի, և բնակարանի ։ Ամ մարդ ունի զիրաւունս 'ի բնութէ առ ստացեալս միջոցս. քանզի կարօտի նոցա առ 'ի համապահել զանհատն իւր ։ Առաջնորդութեամբ բանի մարդիկք միաբանեցան ընդ միմեանս, զի իւրաքանչիւրոք կարիցէ վայելել զյատուկս բարիս առ համապահումն անհատի իւրոյ, համարելով զայս կերպս գոլ լաւագոյնն 'ի յընդհանրոջ աշխարհի, յորում են բազմազանք մարդիկք, և բազմազանք ազինք, առ ուշադիր ջան զիրաց հարկաւորաց առ համապահումն կենի ։ Ասաի է, թէ իւրաքանչիւրոք կարէ ունիլ, և ժառանգել զյատուկս բարիս, և կարէ ստանալ զյատկականս ։ Ստացուածս այս, զի իցէ բարի, պարտի գոլ արդար ։ Ուստի է չար, որ է անիրաւ ։ Մարդն, որ պարապի անիրաւի ստացման, զոր օրինակ, 'ի ձեռն բռնութեան, 'ի ձեռն յափշտակութեան, և 'ի ձեռն խաբեբայութեան, մեղանչէ, և է անիրաւ ։ Իսկ մարդն, որ պարապի արդարոյ ստացման, ոչ մեղանչէ, այլ զոր ստանայ, արդարապէս իւրացուցանէ. արդար ստացումն լինի արդարով ժառանգութեամբ, թողեցելով իւրեանց 'ի ծնողաց իւրոց ։ Լինի նաև արդար ստացումն աշխատանօք, զորս ոմն 'ի կիրարկանէ, և իրոցէ, որպէս ստացումն 'ի ձեռն աշխատանաց, և վաստակոց մշակաց, և արուեստաւորաց ։ Լինի նաև 'ի ձեռն հնարագիտութեան, որով ոմն վարի, որպէս ստացումն վաճառականաց ։ Լինի նաև 'ի ձեռն պտղոյ երկրի, և անասնոց, զորս ոմն ունի ։ Լինի նաև պատշաճաւորաւ, և օրինաւորաւ, շնորհեցմամբ, որ լինի ումեք յայնմանէ, որ զինչս իւրս կարէ շնորհել այլոց. արդար ստացումն լինի ստացելովք կերպիւք յայսմիկ աշխարհի ։

3. Առատաձեռն կարէ պարապիլ արդարոյ ստացման ։ Քանզի դրամք, և ինչք արդարապէս ստացեալք կարեն գոլ նիւթք գործոց առատաձեռնութեան ։ Մարդն արդարաբար ստացելովքն կարէ վարիլ վասն իւրեան ինքեան, և վասն խնամատարութեան իւրեան, և իւրոցն, զորօրինակ, ծնողաց կարօտացելոց, կնոջ, որդւոց, դստերաց, եղբարց, քերց, և այլոց արենակցաց, և ընտանեաց, և 'ի նոցանէ կարէ առնել զիւրս պատշաճաւորս, և վայելուչս ծախս վասն վայելչաւորի ապրուստի, զգեստու, և բնակարանի, և կարէ առնել զպարտաւորս, և զպատշաճաւորս ծախս վասն վայելչաւորի ապրուստի, զգեստու, և բնակարանի իւրոցն ։ Կարէ առնել յայնց զպարտաւորս, և զվայելուչս ծախս վասն իւրեան ինքեան, քանզի պարտի սիրել զիւր ինքն ոչ միայն որքան առ հոգին, և որքան առ հոգևոր կեանն, այլ նաև որքան առ մարմինն, և որքան առ մարմնաւոր կեանն ։ Կարէ նաև առնել յայնց զպարտաւորս, և զպատշաճաւորս ծախս վասն իւրոցն. վասնզի ոչ միայն զիւր ինքն, այլ նաև զիւրայինս պարտի սիրել ։ Եւ այս ոչ է ընդդէմ առատաձեռնութեան. այլև պատկանի առ առատաձեռնութիւն. վասնզի առատաձեռնութիւն ոչ է ընդդէմ սիրոյ, և հոգաբարձութեան իւրեան ինքեան, և իւրոցն. այլև ևսառաւել հրամայէ զհոգաբարձութիւն իւրեան ինքեան, և իւրոցն ։ Ուստի ուսուցանէ սուրբն Պօղոս ։ (Իսկ եթէ ոք իւրոցն և մանաւանդ ընտանեացն խնամ ոչ տանիցի, 'ի հաւատոցն ուրացեալ է, և չար ևս քան զանհաւատն է ։) Առ Տիմ.

Տիմ. 5. Թիւ. 8. 'Ի յասացելոց երեւի, թէ առատաձեռն, որ ուղղով, և պարտաւորաւ գիտաւորութեամբ փափագի արդարոց դրամոց, և արդարոց ընչից, միով բաժամբ նոցա, զորս արդարապէս ստացաւ, կարէ վարել վ̃ն իւրեան ինքեան, և վասն իւրոցն, և օգնել հարկաւորութեանց իւրոց, և իւրայնոց :

4. Մարդն զհամայնս դրամս, զորս արդարապէս ստացաւ, ոչ պարտի ունայնաբար ծախել վասն իւրեան ինքեան, և վասն իւրայնոցն, կամ թաքուցանել 'ի ներքոյ երկրի իբրև զհուռ, այլ պարտի բաժանել զն̃ա 'ի յերկուս մասունս, որոց միոյն ծառայիցէ բարեգործութեանց, և միւսն ծառայիցէ առ 'ի բաշխել զողորմութիւնս : Ուրեմն առատաձեռն յայնց, զորս արդարութ̃բ ստացաւ, հոգացելոյն պարտաւորի, և վայելչաւորի խնամատարութե̃ իւրեան ինքեան, և իւրոցն, պարտի առնել զվայելչաւորս, և զյարմարս ծախս վասն բարեգործութեանց. 'ի քաղաքի գտանին բազումք տեղիք բարեգործութե̃, այսինքն, եկեղեցիք, տաճարք, վանորայք, ուսումնարանք, հիւանդանոցք, և իջևանք : Եկեղեցիք, և տաճարք կարօտին վերանորոգման, զարդուց, ս̃բ անօթոց, ձիթոյ, մոմեղինաց, և քահանայից վասն պաշտօնարարութե̃, և մատուցման պատարագաց : Վանորայք կարօտին խնամատարութե̃ կրօնաւորաց, և միայնակեցից : Ուսումնարանք կարօտին վարդապետաց, և վերանորոգման : Հիւանդանոցք, և իջևանք կարօտին վերանորոգման, և դարմանման պանդխտոց, և հիւանդաց : Ծախք արարեցեալք վ̃ն ասացելոց տեղեաց, են բարեգործութիւնք, որք կարի հաճոյք են ա̃ծայնոյ մեծվայելչութե̃ : Առատաձեռն 'ի յարդարապէս ստացելոցն զմին մասն առնէ վասն ծախից բարեգործութեանց : զի ոչ միայն 'ի կիրարկանիցէ զվայելչաւոր, և զյարմար զընտանեկան հոգաբարձուն, այլ նաև 'ի կիր արկանիցէ զգործս բարեգթութե̃, ա̃յ, և մարդկանց հաճոյս, և զի ոչ միայն սիրիցէ զիւր ինքն : և զիւրայինս, այլ նաև լինիցի բարեպաշտ դէպ 'ի յա̃ծ :

5. Առատաձեռն 'ի բարեաց արդարութ̃բ ստացելոց առնէ զայլ մասն, որով օգնիցէ թշուառաց, և աղքատաց : Յայտնի աշխարհի են ոմանք, որք առատանան բազմօք բարեօք. և են ոմանք, որք կարօտին : Կարօտօղք ունին զիրաւունս 'ի բնութէ 'ի բարիս, որոց կարօտին : Ուստի որք շատանան, և ունին զաւելորդս իրս, պարտաւորին 'ի յաւելորդաց օգնել կարօտեցելոց, տալով զողորմութիւնս : Առատաձեռք օգնեն կարօտեցելոց, և աղքատաց, և բաշխեն կարօտեցելոց, և աղքատաց զաւելորդս իրս : Ունին զներքին ցաւակցութի առ ա̃մս ողորմելիս, իսկ զողորմութիւնս տրամաբաշխեն ըստ հրամանի բանի, և ըստ կանոնաց խոհեմութե̃, որքան կարեն : Յայտ է, թէ շատացօղք իրօք, և զաւելորդս իրս ունեցօղք, պարտաւորին բաշխել զիրս, և տալ զողորմութիւնս. քանզի են բաշխօղք : Ուստի պարտին բաշխել զիրս տերանց իւրոց, ունեցողաց զիրաւունս 'ի բնութէ 'ի նոսա : Եւ 'ի սիրոյ պարտաւորին. վասնզի սէրն որպէս պահանջէ կամիլ, և առնել զբարիս ընկերաց. այսպէս պահանջէ աղատել, և արտահանել զնոսա 'ի թշուառութեանց : Եւ պարտաւորին 'ի հրամանէ. քանզի է հրաման տեառն, զի զաւելորդս բաշխիցեմք, և տայցեմք աղքատաց : Ուստի 'ի յաւուր վերջնոյ դատաստանի, զանողորմս, և զխստասիրտս դատապարտէ յաւիտենական պատժով, ասելով ն̃ց : (Երթայք յինէն անիծեալք 'ի հուրն յաւիտենական. որ պատրաստեալ է սատանայի, և հրեշտակաց ն̃ր : ) Մատթէի : 25. Թիւ. 41. Ապաւրե̃մ խստասիրտք դատապարտին 'ի յաւուրն դատաստանի :

6. Առատաձեռք 'ի բարեաց արդարապէս ստացելոց, ոչ առնեն

զանկարգս ծախս, որք արգելուն զողորմութիւնս. քանզի են խոհեմք, և առաքինիք։ Ուստի վարին յաւելորդօք առ վաղձան, առ որ կարգաւորեցեալք են, արդ վաղձանն աւելորդաց իւրաց, է ջամբումն ողորմութեանց։ 'Ի յառատաձեռնութեան է տնտեսութիւն, գթութիւն, և ողորմածութիւն։ Տնտեսութիւն դէպ 'ի յընտանիս, գթութիւն դէպ 'ի տեղիս բարեպաշտականս, և ողորմութիւն դէպ 'ի յաղքատս։ Ուստի առատաձեռն է տնտես, գթած, և ողորմած։ Է տնտես վասն հոգաբարձութեան տան, գթած վասն բարեգործութեանց. և ողորմած վասն ողորմութեանց։ Պաշտօնք առատաձեռնութեան են այսքիկ, այսինքն, հոգաբարձութիւն տան, բարիք գործք, և բաշխումն ողորմութեանց։ Ուստի առատաձեռն խնամէ զտունն, առնէ զբարիս գործս, և տայ զողորմութիւնս։ Առատաձեռն յամէ կողմանէ է գովելի. քանզի է հաւատարիմ դէպ 'ի յիւր ինքն, և դէպ 'ի յիւրայինս. է հաւատարիմ դէպ 'ի տեղիս բարեպաշտականս, և դէպ 'ի յած. և է հաւատարիմ դէպ 'ի յաղքատս, և դէպ 'ի թշնամիս։ Առատաձեռն արժանի է գովասանի վասն հոգաբարձութեան տան. է արժանի օրհնութեան վասն բարեգործութեանց, և է արժանի ողորմութեան վասն ողորմութեանց։ Առատաձեռն, քանզի է ողորմած, արժանաւորի ողորմութեան. վասնզի ասէ տրն։ (Երանի ողորմածաց, զի նոքա զողորմութիւն գտցեն։) Մատթ. 5. թիւ. 7. 'Ի յառատաձեռնութեան նաև է հանդիսավեհութիւն, և առատաձեռն երբեմն նաև գործով է հանդիսավեհ. քանզի երբ կարէ, առնէ նաև զգործս հանդիսավեհութեան, և առնէ զհանդիսաւորս ողորմութիւնս։

7. Բաշխումն ողորմութեան է կարի օգտակար. քանզի ողորմութիւն ազատէ յամից մեղաց, և 'ի մահուանէ, և ոչ թողու զհոգին, որ առնէ զողորմութիւն, գնալ 'ի խաւարն։ Ողորմութիւն ամից, որք առնեն զնա, է մեծ յուսադրութիւն առաջի ամենամեծին այ։ Ողորմութիւն պարգևէ զսրբացուցումն, առնողի զողորմութիւն։ Ողորմութիւն է, որ քաւէ զմեղս, և առնէ գտանել զկեանն յաւիտենական։ Ողորմութիւն ազատէ յամից մեղաց. քանզի արարեցեալ 'ի սիրոյ, և 'ի շնորհի, տայ մեզ զմեծ քաջութիւն ընդդէմ ամից մեղաց. իսկ արարեցեալ 'ի մեղաւորէ, որպէս պիտոյ է, առընդունի զպարգևն զղջման, և ապաշխարութեան, որովք ազատի մեղաւորն 'ի մեղաց իւրոց, 'ի ձեռն զղջման, և ապաշխարութեան ջնջելոց։ Ազատէ նաև 'ի մահուանէ. քանզի արարեցեալն 'ի շնորհի, և 'ի հրամանէ սիրոյ, զօրացուցանէ զմեզ օգնութեամբ այ, առընդունելով վասն ողորմութեան ընդդէմ յաւիտենականի մահուան. իսկ արարեցեալն 'ի մեղաւորէ, ազատէ զնա 'ի մահուանէ մեղաց 'ի ձեռն զղջման, և ապաշխարութեան։ Ողորմութիւն ոչ թողու զհոգին գնալ 'ի խաւարն. քանզի առընդունի զլոյս, լուսաւորօղն զմարդ։ Ողորմութիւն է է մեծ յուսադրութիւն առ ած, զողորմութիւն առնողաց. վասնզի շնորհէ մեզ զյուսադրութիւն 'ի Տր, խոստացողի զողորմութիւն, առնողի զգործս ողորմութեան։ Ողորմութիւն պարգևէ զսրբացուցումն, ջնջեցելոց մեղաց, և առնէ գտանել զկեանն յաւիտենական. քանզի առընդունի զզղջումն, և զապաշխարութիւն, որք ջնջեն զմեղս, և սրբացուցանեն զհոգին, և առնեն մտանել զշնորհ։

8. Առատաձեռնութիւնն 'ի բարեաց արդարապէս ստացելոց, ծախեցելոց վասն վաղձանի, առ որ կարգաւորեցեալք են, այսինքն, ծախեցելոց վասն պարտաւորի հոգաբարձութեան տան, վասն բարեգործութեանց, և վասն կարօտութեանց աղքատաց, հաւաքէ զմեծս գանձս 'ի յերկինս. վասնզի ամ ծախս 'ի բարեաց արդարապէս ստացելոց, արարեցեալ 'ի շնորհի 'ի հրամանէ սիրոյ,

սիրոյ, վասն անտեսութե, վ̅ս բարեգործութենց, և վ̅ս ողորմութենց, է գործ բարի, և արդիւնաւոր․ քանզի է գործ առաքինութե, արարեցեալ 'ի շնորհի 'ի հրամանէ սիրոյ։ Ուստի առատաձեռն գոյացօղն 'ի շնորհի ա̅յ, և 'ի հրամանէ սիրոյ գործօղն, միշտ արդիւնաւորի, և ժողովէ զհոգևորս փարթամութիս, և գանձէ ի յերկինս։ Գանձէ, մինչ 'ի շնորհի 'ի հրամանէ սիրոյ հանդերձ ուղղով, և պարտաւորաւ դիտաւորութբ պարապի արդարոյ ստացման դրամոց։ Գանձէ, մինչ 'ի դրամոց արդարապէս ստացելոց 'ի շնորհի, և 'ի հրամանէ սիրոյ պարապի գործոց անտեսութե։ Գանձէ, մինչ 'ի յարդարապէս ստացելոցն 'ի շնորհի, և 'ի հրամանէ սիրոյ պարապի բարեգործութենց։ Գանձէ, մինչ 'ի յարդարաբար ստացելոց 'ի շնորհի 'ի հրամանէ սիրոյ պարապի ողորմութենց։ Իմաստուն, և խոհեմ է առատաձեռն․ քանզի 'ի դրամոց յինքենէ անտարբերից, յորոց բազումք գանձեն ինքեանց զմեղս, ուղղապէս վարելով նոքօք 'ի շնորհի 'ի հրամանէ սիրոյ, ժողովէ ինքեան զարդիւնս, ա̅յ հաճոյս, և և գանձէ 'ի յերկինս։

## Գ Լ Ո Ւ Խ Ի Ը․

### Յաղագս հեզութե։

1․ Հեզութիւն է առաքինութի, յօժարեցուցանօղ զմեզ առ 'ի տանիլ համբերութբ զանիրաւութիւս։ Է առաքինութի, որ առնէ զմեզ հեռանալ 'ի յանկարգից վրէժխնդրութենց։ Զօրութբ այսորիկ առաքինութե սանձեմք զնղձն անկարգի վրէժխնդրութե։ Զօրութբ այսորիկ առաքինութե զիւրաքանչիւրս անիրաւութիւս յորոցմանց մեզ անիրաւաբար արարեցեալս, համբերութբ տանիմք, և որոցմանց մարդկանց առնողաց մեզ զանիրաւութի, այսինքն, Թիւրաբար զմեզ դատողաց, անիծաբանականօք բանիւք զմեզ անիծանողաց, զրպարտանօք, և նախատանօք զմեզ անարգողաց, վատահամբաւականօք բանիւք զանուն, և զբարի համբաւ մեր սևացուցանողաց, և արարողութբք, և գործովք մտադրաբար մեզ վնասողաց, վ̅ս սիրոյն ա̅յ, 'ի մէնջ զհեզութի, և զհեզաբարոյութի պահանջողի, կամաւորապէս, և բոլորով սրտիւ ներեմք, տալով զտեղի բարկութե, և Թողլով ա̅յ զվրէժխնդրութին, ա̅մից արդարաբար հատուցանողի․ և լեալք նմանք քրի հեզագունեղի գառին, և սիրելագունեղի վարդապետին մերում զհեզութի մեզ գործով, և բանիւ ուսուցանողի, ոչ յաղթիմք 'ի չարէ, այլ յաղթեմք բարեաւ չարին․ հանդոյն նոյնոյ Քրի փրկչին մերոյ 'ի խաչին ներելով սպասողի։ ( Հայր Թող դոցա․ զի ոչ գիտեն, զինչ գործեն։ ) Ղուկ․ 23 Թիւ․ 34 Այր հեզ, հետևօղ օրինակի Քրի, հեզագունեղի գառին, այսպէս ունի զինքն։

2․ Հեզն զոչինչ անիրաւաբար նեղացուցանէ ոչումեք առնէ զանիրաւութի, և ոչումեք վնասէ։ Պահէ զիրաւունս, և զհամայնս պատուիրանս արդարութե։ Ոչ դատէ Թիւրաբար, այլ համարի ըստ արդարութե։ Ոչ անիծաբանէ, այլ օրհնէ։ Ոչ անարգէ, այլ պատուէ։ Ոչ բամբասէ, այլ գովաբանէ։ Ոչ վնասէ, այլ օգնէ։ Ոչ առնէ զանիրաւութի, այլ պահէ, և պահպանէ զարդարութի։ Է քաղցր, և հեզաբարոյ․ ուստի է կարի սիրելի։ Հեզն է վերյարգելի, պատուելի, գովելի, և սիրելի։ Անիրաւք լուծանօղք զօրէնս արդարութե, անիրաւաբար նեղեն, և չարչարեն զհեզն, հատուցանելով զչար փոխանակ բարւոյ։ Ուստի անիրաւք յայտնապէս են արք ապերախտք։ Ոչ հատուցանեն, որ է

հատուցանելի, այլ հատուցանեն զներհակն: Քանզի փոխանակ սիրոյ հատուցանեն զատելութիւն. փոխանակ վերյարգութեան, զանարգանս. փոխանակ օրհնութեան, զանիծանութիւն. փոխանակ քաղցրութեան, զդառնութիւն. փոխանակ մարդավարութեան, զտմարդութիւն. փոխանակ պատուոյ, զանարգանս. փոխանակ գովասանի. զշարախօսութիւն. փոխանակ արդարութեան, զանիրաւութիւն. և փոխանակ բարերարութեանց, զնախատինս, և զվնասս: Անիրաւք ոչ յաղթեն, այլ յաղթին. վասնզի հատուցանեն զչար փոխանակ բարւոյ: Իսկ հեզն համբերութեամբ տանելով զանիրաւութիւնս, և ներելով, յաղթէ. քանզի հատուցանէ զբարի փոխանակ չարի: Ուստի փոխանակ ատելութեան, հատուցանէ զսէր. փոխանակ անարգանի, զպարտաւոր վերյարգութիւն. փոխանակ անիծանութեան, զօրհնութիւն. փոխանակ դառնութեան, զքաղցրութիւն. փոխանակ տմարդութեան, զմարդավարութիւն. փոխանակ անարգանի զպատիւ. փոխանակ բամբասանի, զգովասան. փոխանակ անարդարութեան, զարդարութիւն. և փոխանակ անիրաւութեանց, և վնասուց զբարերարութիւնս:

3. Ի հեզութեան են բազումք առաքինութիւնք. քանզի ՚ի նմա գտանին այսոքիկ, որք հետևին, այսինքն, համբերութիւն, երկայնմտութիւն, արիութիւն, մեծասրտութիւն, սէր թշնամւոյ, ողորմածութիւն, հաստատութիւն, արդարութիւն, խոհեմութիւն, խոնարհութիւն, և երբեմն նաև մարտիրոսութիւն: Ի հեզութեան է համբերութիւն. քանզի հեզն, և քաղցրաբարոյն, որպէս ոչ ներբերէ այլոց զանիրաւութիւնս, այսպէս զանիրաւութիւնս ինքեան յայլոց առբերեցեալս, կամաւորապէս, և համբերութեամբ տանի: Ի հեզութեան է երկայնմտութիւն. վասնզի հեզն, ոչ ՚ի միում ժամանակի, այլ ՚ի յամենայն ժամանակի, և ՚ի յամենայն տեղւոջ, և յորժամուրեք ինքեան զառբերեցեալս անիրաւութիւնս, կամաւորապէս, և համբերութեամբ տանի: Ի հեզութեան է արիութիւն. քանզի հեզն ոչ յաղթի, առնելով զվրէժխնդրութիւն, և հատուցանելով զչար փոխանակ բարւոյ. այլ ներելով ամենայն անիրաւութեանց, և հատուցանելով զբարի փոխանակ չարի, յաղթէ, և ստացեալ զյաղթութիւն ընդդէմ անիրաւաց, յաղթանակէ: Ի հեզութեան է մեծասրտութիւն. վասնզի հեզն, ոչ միայն զփոքրիկս, այլ նաև զմեծս անիրաւութիւնս կամաւորապէս, և համբերութեամբ տանելով, առնէ զգործս արժանիս մեծի պատուոյ: Ի հեզութեան է սէրն թշնամւոյ. քանզի հեզն ներէ, և հատուցանէ զբարի փոխանակ չարի, որք են գործք սիրոյ թշնամւոյ: Ի հեզութեան է ողորմածութիւն. քանզի հեզն, և քաղցրաբարոյն ներելով, և առնելով թշնամեաց զբարի փոխանակ չարի, զնոսա, եթէ քաղցեան, կերակրէ. եթէ ծարաւին, արբուցանէ. եթէ են մերկք, զգեցուցանէ. եթէ օտարք, ժողովէ. եթէ հիւանդանան այցառնէ. եթէ են ՚ի բանդի, ազատէ. և առնէ զայլս գործս ողորմութեան:

4. Ի հեզութեան է հաստատութիւն. քանզի հեզն ոչ անիրաւութեամբք ոչ տանջանօք, ոչ չարչարանօք, և ոչ բռնաւորաւ մահուամբ յաղթի. այլ յամենայն ստացեալս յաղթէ. վասնզի ոչ վասն անիրաւութեանց, ոչ վասն չարչարանաց, և ոչ վասն երկիւղի մահուան հեռանայ յառաքինութեանց. այլ յարատևէ ՚ի յառաքինութեան մինչև ՚ի մահ: Ուստի հեզն է հաստատ ՚ի յառաքինութեան: Ի հեզութեան է արդարութիւն. վասնզի հեզն զոչոք անիրաւաբար նեղացուցանէ, և ոչումեք անիրաւի: Քանզի ոչ թիւրաբար դատէ, ոչ արտաքերէ զանարգանս, և ոչումեք վնասէ. այլ արդարաբար դատէ, ունի զբարի համարումն, պատուէ, գովէ, և պահէ զամենայն իրաւունս: Պաշտօնն հեզի է, ոչ չարչարել, այլ չարչարիլ. ոչ առնել զանիրաւութիւն, այլ տանիլ զանիրաւութիւնս.

ոչ

ոչ վնասել, այլ զվնաս անիրաւաբար առբերեցեալս կամաւորապէս, և համբերութբ տանիլ ։ 'Ի հեզութե է խոհեմութի. քանզի հեզն, և քաղցրաբարոյն, ոչ շարժի մղեցմամբ ախտի, այլ կանոնաւորի հրամանաւ բանի. ոչ ունկնդնէ, թէ զինչ ասիցէ ախտն, այլ ունկնդիր լինի, թէ զինչ հրամայիցէ բանն, և բանական, և ուղիղ դատողութին ։ Ուստի հեզն է խոհեմ ։ 'Ի հեզութե է խոնարհութի, վասնզի հեզն ենթարկէ, և խոնարհեցուցանէ զիւր ինքն կարգաւորութե Ածայնոյ դատողութե. և ուղղադունելի կամին այ, առ հոգևոր օգտակարութի արդարոյ, զանիրաւութիս անիրաւաց իմաստնագունեղապէս թոյլտուողի ։ Եւ վս այսորիկ զանիրաւութիս անիրաւաբար առբերեցեալս կամաւորապէս, և համբերութբ տանի ։

5. 'Ի հեզութե երբեմն նաև է մարտիրոսութի. քանզի հեզն, և քաղցրաբարոյն, որ զամս անիրաւութիս, յորմէ ումեքէ առբերեցեալս, կամաւորապէս, և համբերութբ տանի. և ներէ թշնամեաց, յաղթելով բարեաւ չարին. նաև պատրաստ է համբերութբ տանիլ զիւրաքանչիւրս տանջանս վասն առաքինութե, և նաև յանձնառնուլ զբռնաւոր մահն, եթէ իցէ հարկ ։ Եւ երբ վերյառնեն անիրաւք առ 'ի տանջել զնա վասն առաքինութե, և առ 'ի ներբերել նմա զբռնաւոր մահն. համբերութբ տանի զտանջանս, և կամաւորապէս ընդունի զբռնաւոր մահն վասն առաքինութե, և համբերութբ յանձնառնու զնա ։ Եւ համբերութբ յանձն առնլով զբռնաւոր մահն վասն առաքինութե. ընդունի զպսակ մարտիրոսութե, և լինի մարտիրոս ։ Քանզի մեռանիլն բռնաւորաւ մահուամբ վասն առաքինութե է մարտիրոսութի ։ Բազումք եղեն այսպիսիք հեզք ։ Եղեն 'ի մարգարէից, 'ի յԱռաքելոց, 'ի կրօնաւորաց, 'ի կուսանաց, 'ի պապից, 'ի յեպիսկոպոսաց, 'ի քահանայից, 'ի սարկաւագաց, և յայլոց բազմաց արանց, և կանանց քրիստոնէից, վասն հաւատոյ, կամ վասն ուրուք այլոյ առաքինութե պատկառ մարտիրոսութե պսակեցեալք ։ Եղև հեզագունեղ, և քաղցրաբարոյագունեղ իշխանն ամից տացելոց Տրն մեր Յս Քս, որ վիրաւորեցաւ վասն մեղաց մերոց, և պատժեցաւ վասն մերոց անօրէնութեց. առ վշտին ոչ եբաց զբերան իւր. իբրև զոչխար առ սպանդ վարեցաւ. և իբրև որոջ առաջի կտրչի անմռունչ եկաց, և ոչ եբաց զբերան իւր ։

6. Հեզք են գովելիք. վնզի տան զտեղի ամբարշտութեց, և ոչ ընդդիմանան չարի, այլ յաղթեն բարեաւ չարին ։ Այր հեզ է բժիշկ սրտի. քանզի համբերութբ տանելով, առողջացուցանէ զխօթութի ախտից ։ Հեզութին այնպէս պահելի է, զի և պահիցի խստաբարոյութի. քանզի երանի, որ ունի զխստաբարոյութի, և զհեզութի, զի միով պահիցի խրատ, միւսով անմեղութին ոչ տառապեցուցանիցի ։ Որպ ասէ սբն Ամբրոսիոս ։ Հեզն է թարց ոխի, և թարց անկարգի բարկութե. քանզի հեզն է, զոր ոչ ոխն, ոչ բարկութին չարչարէ, այլ զհամայնս իրս անվրդովաբար տանի, ոչ զայրացուցանէ, և ոչ զայրանայ. ոչ վնասէ, և ոչ մտածէ վնասել ։ Որպէս ասէ սբն Հերօնիմոս ։ Պահելի է ճշմարիտ հեզութին, ոչ արտաքինն. քանզի են ոմանք հեզք, բայց յորժամ ժամանակ ոչինչ ասի, կամ գործի, եթէ ոչ ըստ հաճոյից նոցա. այլ յայտնեսցի, թէ որքան հեռիք իցեն 'ի ճշմարտէ հեզութէ, եթէ լինիցի փոքրիկ իմն պատճառ, որպէս ուսուցանէ սբն Բեռնարդոս ։ Խրատէ սբն Գրիգորիոս ասելով ։ Կառավարեսցէ կրթութի, խստութին զհեզութի, և հեզութին զարդարեսցէ զխստութի. և այսպէս գովեսցի մինն 'ի միւսոյ, զի ոչ խստութին իցէ անողորմ, ոչ հեզութին թուլացեալ ։ 19. Բարոյականաց ։

կանաց։ Ասէ մէն իղխոտոս։ Մեծ առաքինութիւն է, եթէ ոչ վնասիցես, յորմէ վնասեցեալ ես։ Մեծ արիութիւն է, եթէ նաև վնասեցեալ ներիցես։ Մեծ փառք է, եթէ որում կարացեր վնասել, ներիցես։ 'Ի երկրորդում մատենի միայնախօսութեն։ Հեզն ոչ վնասէ, վնասեցեալ ներէ, և կարելով վնասել ոչ վնասէ։

7. Ած բարձրացուցանէ զհեզս 'ի փրկութիւ, և տայ նոցա զշնորհս։ Փառքն ոգւոյն հաշտեցուցանելի է հեզութբ, և զգածելի է պատուով, զոր արդիւնարի։ Բառնալի է բեռն Քի 'ի վերայ մեր, և 'ի վարդապետէ, որ է հեզ և խոնարհ սրտիւ, ուսանելի է հեզութի։ Հեզք, և քաղցրաբարոյք են երանեալք, քանզի են ժառանգիչք երկրի, և վայելօղք զերկրութիւ 'ի բազմութեն խաղաղութեն։ 'Ի հեզութեն կատարելիք են գործք մեր, զի լինիցին տեառն այ մերոյ ընդունելիք։ Հեզութի սիրելի է 'ի վեր քան զփառս մարդկանց. վնզի հեզութին է լաւագոյն, քան զփառս մարդկանց։ Գրկելի է հեզութին, սիրելին, և ընդունելին այ. քանզի ած եղծէ զաթոռս հպարտաց, և 'ի տեղի նոցա նստուցանէ զհեզս։ Խրատելիք են բազմազբաղք, մխիթարելիք են փոքրոգիք, և ընդունելիք են տկարք։ Համբերութին ունելի է առ ամենեսեան, և հեզութին ցուցանելի է առ համայնս։ Հեզն, և քաղցրաբարոյն է երանեալ. վասնզի 'ի բազմութեն խաղաղութեն է հանդարտ, և հանգիստ։ Է ազատ 'ի թշուառութեց մեղանչականաց վրդովմանց։ Է ազատ 'ի թշնամութեց, պատճառեցելոց 'ի յանիրաւութէ, և 'ի բռնաբարութէ մեղաց զանհամբերս վրդովողաց։ Հեզն վայելէ զբարիս, 'ի յարդարութէ իւրեանն պարգևեցեալս։ Հրճուի բարեօք, 'ի ձեռն համբերութեն ստացելովք, խնդայ 'ի վերայ բարձրացուցման, տուեցելոյ իւրեան 'ի խոնարհութենէ։ Ուրախանայ 'ի վերայ անդորրութեան, զոր հեզն ունի 'ի սրտի։

8. Հեզն է սիրելի, և կարի գովելի, Հեզն է քաղցրաբարոյ, և բարի։ 'Ի հեզութե է քաղցրութի, բարութի, և գթութի։ 'Ի հեզութե է քաղցրութի. քանզի հեզն ոչ միայն բարեկամի, այլ նաև չարակամի կամի զբարիս։ 'Ի հեզութե է բարութի. վասնզի հեզն ոչ միայն զբարիս, այլ նաև զպարգևս շնորհէ։ 'Ի հեզութե է գթութի. քանզի հեզն ոչ միայն շնորհէ զպարգևս, այլ նաև թողու զյանցանս։ Հեզն է մեղմ առ 'ի ցասուցիլ, դիւրին առ 'ի ներել, պատրաստ առ 'ի յօգնել։ Հեզից է ուրախութի. քանզի մանաւանդ սիրով առվորեցեալք են ունիլ զբարեխառնութի ամից իւրեանց։ Հեզք են համբերօղք, և քաղցրաբարոյք, վասնզի զանօրէնութիւ այլոց տանին, և ոչ համարձակին զոմն նեղացուցանել։ Հեզութին է ճշգրիտ բարութի, որ է զարդն ամից բարեաց, ոչերբեք է միայն, քանզի ճանաչի դոլ ծնեցեալ յառաքինութեց։ Ասէ տուղիոս։ Գթութին է առաքինութի, որով ոգին շարժեցեալ 'ի յատելութի ուրուք, բարութբ արդելանի։ Երկրորդում մատենի հռետորութե։ Գրէ Պղուտարքոս։ Զմարդն մարդոյ ոչ ինչ այլ ինչ առնէ հեզ, և անուշախօս, քան քաղցրաբարոյութե արդարութե, և բարեպաշտութե կատարուամ։ Յաղագս քաղաքականութե։ Սիրեա զառաքինութիւ, զայս, որ է այնքան սիրելի։

## ԳԼՈՒԽ Խ։ ԻԹ․

### Յաղագս պահեցողութեան ։

1. Պահեցողութիւն է առաքինութիւն, որ առնէ զցանկական մասն ուղիղ շուրջ զկերակրով։ Ուստի է առաքինութիւն, որ ցուցանէ մեզ զմէնջն շուրջ զկերակրով, և հրամայէ մեզ, զի մի հակիցեմք դէմ 'ի յաջ, և ոչ դէպ 'ի յահեակ, մինչ ուտեմք, այլ զի շրջիցիմք 'ի միջին վ՟ր պարտաւորի վաղճանի։ Այսու առաքինութեամբ ըստ հրամանի բանի փափագիմք հարկաւորի կերակրոյ, վասն համապահեցման կենի. վասն առողջութեան մարմնոյ, զի կենդանիք, և առողջք ծառայիցեմք այ՟. և հեռանամք 'ի կերակրոյ վնասակարէ, արգելեցելոյ, աւելորդէ, և 'ի յանպարտաւորէ վաղճանէ։ Կերակուրն տուեցեալ է մեզ 'ի հեղինակէ բնութեան առ համապահեցումն կենի, և վասն առողջութեան մարմնոյ. և է 'ի մեզ իղձ ուտելոյ զկերակուր։ Քանզի որպէս սիրեմք զառողջութիւն, և զմարմնեղէն կեանս մեր. այսպէս նաև փափագիմք կերակրոյ առ 'ի համապահել զմարմնաւոր կեանն մեր, և զառողջութիւն մարմնոյ։ Կերակուրն, և կերակրելն է միջոց, իսկ համապահեցումն կենի, և առողջութիւն մարմնոյ է վաղճան։ Որ ըստ հրամանի բանի փափագի կերակրոյ, և ուտէ զհարկաւոր, զօրինաւոր, և զչափաւորեցեալ կերակուր, բանաւորաւ կերպիւ, վասն փրկութեան, և առողջութեան մարմնոյ. և հեռանայ 'ի կերակրոյ վնասակարէ, արգելեցելոյ, և աւելորդէ, է պահեցող, և ունի զառաքինութիւն պահեցողութեան. իսկ այլապէս առաջացօղն, ոչ է պահեցող, և ոչ ունի զառաքինութիւն պահեցողութեան։

2. Կերակրելն ոչ է չար. այլ է բարի. վասնզի իմաստնաբար կարգաւորեցեալ է առ համապահեցումն մարմնաւորի կենի։ Ուստի է միջոց իմաստնաբար կարգաւորեցեալ 'ի հեղինակէ բնութեան առ 'ի հասանիլ ասացելոյ վաղճանի։ Ուտելն զվնասակար կերակուր է վատ. քանզի ոչ է միջոց տանօղ առ ասացեալ վաղճան. այլ ևս առաւել է արգելումն նր՟. վասնզի կամ պատճառէ զբժշկելի, և զառողջանալի խօթութիւն. և այսպէս վնասէ առողջութեան. կամ պատճառէ զանբժշկելի, և զանառողջանալի հիւանդութիւն. և այսպէս վնասէ մարմնաւորի կենի, և բառնայ զնա, և սպանանէ. կամ թարց հիւանդութեան սպանանէ, և է թիւն, և է ընկալումն թիւնոյ, և ոչ կերակրոյ։ Նաև ուտելն զարգելեցեալ կերակուր է չար. վասնզի այսպէս կերակրելն է անհնազանդութիւն։ Նաև ուտելն զաւելորդ կերակուր է չար, քանզի եթէ պատճառէ զհիւանդութիւն է չար. վասնզի է վնասակար. իսկ բարի կերակուրն, որ ոչ պատճառէ զհիւանդութիւն, է չար. քանզի ոչ է գործ առաքինութեան, այլ անկարգի ըղձի, խնդրողի, ոչ զառողջութիւն մարմնոյ, այլ զմարմնաւոր հեշտութիւն։ Նաև ուտելն զկերակուր միայն վասն հեշտութեան, ոչ է բարի. քանզի է գործ անկարգի ըղձի, ոչ խնդրողի զպարտաւոր վաղճան, որ է համապահումն կենի, և առողջութիւն մարմնոյ։ Իսկ ուտելն զհարկաւոր, զօրինաւոր, և զչափաւոր կերակուր, վասն համապահեցման մարմնաւորի կենի, և առողջութեան մարմնոյ, է բարի. քանզի է ըստ հրամանի բանի, և է գործ առաքինութեան պահեցողութեան։

3. Որպէս ընկալումն հարկաւորի, օրինաւորի, և չափաւորեցելոյ կերակրոյ, վասն պարտաւորի վաղճանի, է բարի. այսպէս հրաժարումն յայսպիսւոյ կերակրոյ է չար. վասնզի բոլորական հրաժարումն 'ի հարկաւորէ կերակրոյ սպանանէ։ Ուստի որ առնէ զասա‿

ցեալ

ցեալ հրաժարումն, լինի սպանանող իւրեան ինքեան: Աստցեալ հրաժարումն 'ի կերակրոյ, ոչ է 'ի յառաքինութէ պահեցողութե, այլ 'ի չարութէ մարդոյ: Քանզի առաքինութի պահեցողութե գարշի յաստցելոյ հրաժարմանէ: Արդուրեմն առաքինութի պահեցողութե, որպէս գարշի 'ի յընկալմանէ վնասակարի, արգելեցելոյ, և աւելորդի կերակրոյ, և ոչ ընդունի զայն ընկալումն, որ ոչ խնդրէ զպարտաւոր վախճան, այլ մանաւանդ լինի վասն համեղութե, և մարմնաւորի հեշտութե. այսպէս նաև գարշի 'ի հրաժարմանէ 'ի հարկաւորէ կերակրոյ, որ բառնայ զմարմնաւոր կեանն, և սպանանէ զմարդն: Այսուրեմն առաքինութի պահեցողութե ընդունի զառումն հարկաւորի, օրինաւորի, և չափաւորեցելոյ կերակրոյ. վասն համապահեցման մարմնաւորի կենի, և առողջութե մարմնոյ, և փափագի նմա, և հակէ զպահեցող մարդն առ աստցեալ առումն կերակրոյ. և առնէ, զի փափագիցի նմա, և առնիցէ զնա: Նաև յօժարեցուցանէ զպահեցողն. զի ոչ փափագիցի վնասակարի, արգելեցելոյ, և աւելորդի կերակրոյ, և ոչ դիմիցէ զառաբար զհեշտութի ճաշակողութե, և առնէ, զի հեռանայցէ 'ի վնասակարէ, արգելեցելոյ, և աւելորդէ կերակրոյ, և 'ի յանպատեհէ դիտաւորութէ, և 'ի յանպատշաճէ կերպէ ուտելոյ զկերակուրն: Յամից ասացելոց յայտ է, թէ յորում կայանայցէ առաքինութի պահեցողութեան, և թէ պահեցօղն որպէս պարտիցի ունիլ զիւր ինքն:

4. Պահեցողութին տրոհի 'ի պահեցողութի 'ի կերակրոյ, և 'ի պահեցողութի 'ի մեղաց: Պահեցողութի 'ի կերակրոյ, որ է մասնաւոր առաքինութի, և է ընդդէմ որկրամոլութե, է այն, զորմէ խօսեցաք, և զոր արդ բացատրեցաք: Պահեցողութին 'ի մեղաց է, որով ումն գարշի 'ի մեղաց, ոչ միայն յայնց, որք են մեղք որկրամոլութե, և են ընդդէմ յատկի առաքինութե պահեցողութե. այլ նաև գարշի յամից այլոց մեղաց, և հեռանայ յամից այլոց մեղաց, որք են ընդդէմ այլոց առաքինութեց: Պահեցողութին 'ի մեղաց անհամեմատաբար լաւագոյն է քան զայն, որ է միայն պահեցողութի 'ի կերակրոյ: Քանզի ունեցողն զպահեցողութի 'ի միայնոյ կերակրոյ, և ոչ 'ի մեղաց, թէպէտ 'ի պահելն ազատիցէ զինքն 'ի մեղաց որկրամոլութե. և այնց, որք ծորին 'ի յորկրամոլութէ. սակայն գոլով 'ի յումեք մահացու մեղի, ոչ ունի զարդիւնաւորս գործս: Ուստի զրկի յարդեանց: Եւ ներգործութին նորա, որով հեռանայ 'ի կերակրոց, ոչ է ներհեղեցեալ յառաքինութէ պահեցողութե, որ է զուգակցեալ ընդ շնորհի, և ընդ սիրոյ, և ընդ այլոց ներհեղեցելոց առաքինութեց. այլ է 'ի ստացելոյ առաքինութէ պահեցողութե: Իսկ նա, որ հեռանայ 'ի մեղաց, 'ի հեռանալն գոլով 'ի շնորհի, ունի զարդիւնաւորս ներգործութիս: Ուստի ոչ զրկի 'ի յարդեանց: Եւ ներգործութի նորա, որով պահէ, է 'ի ներհեղեցելոյ առաքինութէ պահեցողութե, որ է զուգակցեալ ընդ շնորհի, և ընդ սիրոյ, և ընդ այլոց ներհեղեցելոց առաքինութեց: Ուստի պահեցողութին 'ի մեղաց է լաւագոյն քան զայն, որ է 'ի միայնոյ կերակրոյ:

5. Պահեցողութին 'ի մեղաց կարի հաճոյ է այ: Քանզի զայսմանէ այսպէս գրեալ է 'ի մարգարէութե եսայեայ մարգարէի: (Զի, է զի պահեցաք մեք, և դու ոչ տեսեր. խոնարհեցուցաք զանձինս մեր, և դու ոչ գիտացեր:) գլ. 58. թիւ. 3. է ձայն ծոմապահողաց, և պահեցողաց, թարց պահեցողութե 'ի մեղաց: Պատասխանէ տծ 'ի նոյնում մարգարէութե եսայեայ մարգարէի: Ահա զի յաւուրս պահոց ձերոց գտանին կամք ձեր կատարեալք. և կսկծեցուցանէք զամն. որք ընդ ձեռ-

ամբ

ամբ ձերով են: 'Ի հակառակութիս, և 'ի կռիւս պահէք, և կռփէք զանաւագն. իսկ զի՞նչ պիտոյ են ինձ այնպիսւոյ աւուր պահք. գալ բողոքել ձեզ առ իս, և ինձ ոչ լսել ձեզ: Ոչ զայսպիսի պահս ընտրեցի. և ոչ զօրն, յորում կարկամեցուցանէ մարդ զանձն իւր. զի եթէ կորացուցանես իբրև զանուր զպարանոց քո. և քուրձ և մոխիր 'ի ներքոյ քոյ տարածանիցես. սակայն և ոչ զայն կոչեցից պահս, և օր ընդունելի. ոչ զայնպիսի պահս ընտրեցի, ասէ Տր. այլ լոյծ զկնձիռն անիրաւութե. քակեա զխարդախութի վաճառաց քոց. արձակեա զնեղեալս թողութք. և զամ մուրհակս անիրաւութե պատառեա: Բրդեա քաղցելոց զհացքո. և զաղքատս անյարկս տար 'ի տուն քո. եթէ տեսանիցես զմերկն, զգեցուցանիջիր. և յընտանեաց զաւակի քոյ զակն մի արկանիցես: Յայնժամ ծագեսցի կանուխ լոյսքո. և բժշկութի քեզ վաղվաղակի հասցէ. և գնասցէ առաջի քո արդարութի՛ն քո. և փառքն այ զքև փակեսցին: ) Գլ. 58. Թիւ. 3. դու որ ցանկաս հաճոյանալ այ. այսպէս ծոմապահեա, և հեռացիր 'ի կերակրոյ, զի նաև հեռանայցես 'ի մեղաց:

6. Այնպէս պահեա, զի պահեցողութի քո լիցի սրբօք բարուք: Այսպէս պահելով հաճոյանաս այ, զպահեցողութի, և զծոմապահութի և զնիւթականս կերակուրս առնես զարդս առաքինութեց: Քանզի պահեցողութի՛ն. և ծոմապահութի սիրողի, այնքան առաւել հաճոյք են այ, որքան սրբօք բարուք մատուցանին, զի որք 'ի յայլս են հովանիք մոլութեց, 'ի նմա իցեն զարդք առաքինութեց: Պահելի է հանդերձ խոնարհութք, և 'ի շնորհի, զի մի լինիցի կորուստ 'ի ձեռն հպարտութե, կամ 'ի ձեռն այլոյ ուրուք մոլութե: Քանզի զի՞նչ օգուտ է մաշել զմարմինն պահեցողութք, եթէ հոգին ուռի հպարտութք: Զի՞նչ օգուտ է ոչ ըմպել զգինի, և բարկութք, և ատելութք արբենալ: Այնպէս պահել պարտիմք, զի սանձիցեմք զմարմինն, որքան կարեմք: Վասնզի ոչինչ է յառաքինութի պահեցողութե, եթէ որք ոչ սանձէ զմարմին իւր այնքան, որքան կարէ. կամ է կարի անկարգ. եթէ տրորէ առաւել, քան զկարն: 'Ի զուր տրորի մարմինն պահեցողութք, եթէ անկարգիւք բարուք միտն արձակեալ մոլութեք ցրուի: Ուրեմն պահեցողութք ոչ մարմինն, այլ մոլութիք մարմնոյ մաշելիք են: Այսպէս հարկ է, զի զարուեստն պահեցողութե իւրաքանչիւրոք գիտիցէ, ըստ որում ոչ զմարմինն, այլ զմոլութիս սպանանիցէ: 'Ի պահեցողութե պահելի է խոհեմութի, զի մի, մինչ մարմինն առաւել քան զպիտոյն նեղացուցանի, նաև 'ի կրթութե բարեգործութեց թուլացուցանիցի: Բայց երբ մերձէ խոհեմութին, 'ի կիրարկանելի է պահեցողութի, զի որք 'ի խնդութեց դրախտի 'ի ձեռն կերակրոյ անկաք, առ այսոսիկ որքան կարեմք, 'ի ձեռն պահեցողութե վերյառնիցեմք: Երբեմն նաև 'ի յօրինաւորաց հեռանալի է. վասնզի ասէ սբն Գրիգորիոս: ( Պահեցողութի՛ն է, երբ ոմն վասն սիրոյն այ, և վասն յառկի փրկութե, ոչ միայն 'ի յանօրինաւորաց, այլ և երբեմն և 'ի յօրինաւորաց, և 'ի շնորհեցելոց սանձէ զիւր ինքն: ) 'Ի հինգերորդում մատենին բարոյականաց: Ասէ սբն Խոսրով: ( Որք հեռանան 'ի կերակրոց, և գործեն զչար, հետևին դիւաց, որոց մեղքն են մերձք, և կերակուրն հեռի: ) 'Ի վերայ Ամովսայ մարգարէի:

7. Հարկաւոր է մեզ առաքինութի պահեցողութե. վասնզի սովաւ գտանեմք զմիջոցն 'ի կիրառման կերակրոց, և սովաւ վարիմք կերակրովք ըստ հրամանի բանի, և սովաւ 'ի յընկալման կերակրոյ շրջիմք 'ի միջին, և ոչ հակիմք դէպ 'ի յաջ, կամ դէպ 'ի յահեակ, և սովաւ զանազանիմք յանասնոց, որք ոչ շարժին 'ի յառաքինութե առ 'ի

N յըն-

ընդունիլ զկերակուր, այլ 'ի մղեցմանէ ախտի · քանզի չունեցողք զբան, և զանձնիշխան կամ, են անընդունակք առաքինութեանց · ունեցողքս զառաքինութիւն պահեցողութեան, և կամեցողքս վարիլ առաքինութեամբ, շարժիմք առ 'ի յընդունիլ զկերակուր 'ի յառաքինութենէ պահեցողութեան : Վերջապէս սովաւ 'ի շնորհի 'ի հրամանէ սիրոյ գործելով, ներգործութեամբք ստորնագունի մասին, և ներգործութեամբք անասնականօք արդիւնաւորիմք զկեանն յաւիտենական, և գանձեմք 'ի յերկինս : Առաքինութիւն պահեցողութեան է գովելի, և սիրելի · քանզի զդուեհիկս, և զանասնականս արարողութիւնս մերս առնէ սիրելիս, և գովելիս, և զնոյն 'ի շնորհի 'ի հրամանէ սիրոյ ելուզեցեալս առնէ արդիւնաւորս, և առնէ զի իցեն հոգևորք փարթամութիւնք, և գանձք 'ի յերկինս : Ուստի քրիստոնեայն ունեցողն զառաքինութիւն պահեցողութեան, 'ի շնորհի կրթելով զիւր ինքն 'ի հրամանէ սիրոյ 'ի ներգործութիւնս ստորնագունի մասին, է սիրելի, գովելի և փարթամ : Սիրելի, և գովելի · վասնզի որ է առաքինի, է սիրելի, և գովելի : Է նաև փարթամ · քանզի ներգործութիւնք ստորնագունի մասին ստացելով կերպիւ ելուզեցեալք, են հոգևորք փարթամութիւնք :

8. 'Ի յառաքինութեան պահեցողութեան է հնազանդութիւն · քանզի պահեցողն, 'ի յառաքինութենէ պահեցողութեան գործօղն ընդունի զպահս 'ի յեկեղեցւոյ հրամայեցեալս, և զծոմս 'ի նմանէ պահելիս առաջադրեցեալս քրիստոնէից : Բանականաբար 'ի յեկեղեցւոյ հրամայեցեալք են պահեցողութիւնք, և առաջադրեցեալք են ծոմք, այսինքն, զի 'ի ձեռն պահեցողութեանց, և ծոմից սանձիցեմք զմարմինն, մահացուցանիցեմք զանդամս, արգելուցումք զանկարգս շարժմունս, սանձահարիցեմք զախտս անողջախոհութեան հակօղս, վճարիցեմք վասն մեղաց 'ի ձեռն ապաշխարութեան ջնջեցելոց, լինիցիմք ընդունակագոյնք առ աղօթս, և առ Աստուածայինս պաշտօնս, և առ 'ի լսել զԱստուածային բանն, պարապիցիմք ստացման ժուժկալութեան, և ողջախոհութեան, արդիւնաւորիցիմք առ Աստուած, և հաւաքիցեմք զգանձս 'ի յերկինս : Պահեցողութիւն արգելու զոմանս կերակուրս, զորօրինակ, զկերաուս մսոյ 'ի յաւուր ուրբաթի, և 'ի յաւուր շաբաթու : Իսկ ծոմն արգելու զամ կերակուր մինչև առ բացորոշեցեալ ժամանակ, զորօրինակ, մինչև առ կէս օր : 'Ի բազմաց չարեաց ազատէ զմեզ առաքինութիւն պահեցողութեան · քանզի ազատէ զմեզ 'ի մեղաց որկրամոլութեան, բղջախոհութեան, և անհնազանդութեան 'ի կարգի առ կիրառութեան կերակրոյ : Եւ զբազումս բարիս մեզ շնորհէ առաքինութիւն պահեցողութեան · վասնզի օգնէ մեզ առ 'ի ստանալ զժուժկալութիւն, և զողջախոհութիւն : Օգնէ նաև առ ջերմեռանդս աղաչանս, և աղօթս, առ 'ի լսել զԱստուածային բանն, և առնէ զմեզ արդիւնաւորիլ առ Աստուած, և գանձել 'ի յերկինս :

## Գ Լ Ո Ւ Խ : Լ:

### Յաղագս զգաստութեան :

1. Զգաստութիւն է առաքինութիւն, որ կառավարէ զցանկական մասն շուրջ զըմպելեաւ : Քանզի որպէս պահեցողութիւն կառավարէ զցանկական մասն շուրջ զկերակրով · այսպէս զգաստութիւն կառավարէ զնոյն շուրջ զըմպելեաւ : Արդ ուրեմն զգաստութիւն առնէ զմեզ ուղիղս շուրջ զըմպելեաւ : Առնէ, զի ըմպիցեմք ըստ հրամանի բանի, և ոչ այլապէս : Այսու առաքինութեամբ փափագիմք հարկաւորի ըմպելոյ

առ

առ 'ի շիջուցանել զծարաւութիւն, զինի վնասիցէ առողջութեան ։ Քանզի ծարաւութիւն աճելով ծախէ զխոնաւութիւն 'ի ձեռն ջերմութենէ ։ Ուստի աճելով բառնայ զհարկաւոր խոնաւութիւն առ մնունդ, և արգելլով զմնուցումն, վնասէ առողջութեան ։ Եթէ ծախիցէ զբոլոր խոնաւութիւն, սպանանէ ։ Զի մի ուրեմն լինիցի 'ի մեզ վնաս այս, փափագիմք ըմպելւոյ, և առնումք զնա ։ Որպէս փափագելին կերակրոյ մեզ է 'ի բնութենէ, այսպէս և փափագելին ըմպելւոյ վասն համապահեցման մարդկայնոյ անհատի մերոյ ։ Որպէս ուրեմն կարգաւորեցեալ փափագն կերակրոյ վասն համապահեցման մարմնաւորի կենի, է բարի · այսպէս և կարգաւորեցեալ փափագն ըմպելւոյ, է բարի · և որպէս բանաւոր առումն հարկաւորի, և չափաւորեցելոյ կերակրոյ վասն ասացելոյ վախճանի, է բարի · այսպէս և բանաւոր առումն հարկաւորի, և չափաւորեցելոյ ըմպելւոյ վասն նոյնոյ ասացելոյ վախճանի, է բարի ։ Զգաստութիւն ընդունի զայսպիսի ըմպեցումն ։

2. Անկարգ փափագն ըմպելւոյ է չար, և անկարգ ըմպութիւն է վատ · քանզի ոչ են ըստ հրամանի բանի, և ոչ են 'ի յառաքինութենէ զգաստութեան ։ Է անկարգ փափագ ըմպեցման, և անկարգ է ըմպութիւն նորա, երբ փափագեցեալ լինի, և ըմպի վնասակարն, կամ անչափն · քանզի լինի վնաս առողջութեան, վասն որոյ ըմպելի է ։ Նաև անկարգ է փափագն ըմպելւոյ, և ըմպութիւն նորա, յորժամ փափագեցեալ լինի, և ըմպի, ոչ վասն առողջութեան, այլ միայն վասն հեշտութեան · քանզի ոչ գիտէ վախճանն, վասն որոյ ըմպելի է ։ Զգաստութիւն ոչ ընդունի զայսպիսի փափագ, և զայսպիսի ըմպեցումն · քանզի ոչ են 'ի զգաստութենէ, այլ 'ի ներհակէ մոլութենէ զգաստութեան ։ Ուրեմն զգաստութիւն առնէ, զի թողուցումք զփափագն, և զըմպեցումն վնասակարի, և անչափոյ ըմպելւոյ, և նաև զայն ըմպեցումն, որ միայն է վասն հեշտութեան ։ Քանզի զգաստութեան է գտանել զմէջն 'ի կարգի առ ըմպելիս, և առաջադրել մեզ զայդ, զի 'ի նմա շրջիցիմք ոչ հակելով դէպ 'ի յաջ, և ոչ դէպ 'ի յահեակ, և զի սանձելով զանկարգ փափագն ըմպելւոյ, և հեռանալով 'ի վնասակար, և 'ի յանչափոյ ըմպեցմանէ, և 'ի յայնմանէ, որ միայն է վասն հեշտութեան · ըստ հրամանի բանի փափագիցիմք, և առնուցումք զհարկաւոր, և զչափաւորեցեալ ըմպեցումն, վասն համապահեցման մարմնաւորի կենի ։

3. Մեծ է գովասանն զգաստութեան ։ Վասնզի զգաստութիւն է մտաց, և զգայութեան, ամենից անդամոց, և մարմնոյ ապաստանն · ողջախոհութեան, և ամօթխածութեան ամրոց · պարկեշտութեան մերձաւոր · բարեկամութեան, և խաղաղութեան ծառայ · և համեստութեան միշտ զուգակցեալ · և չարագործութեանց, և ամենից մոլութեանց փախուցանող ։ Քանզի զմիտս, զզգայութիւն, զանդամս, և զմարմինն պաշտպանէ ։ Զողջախոհութիւն, և զամօթխածութիւն ամրացուցանէ · պարկեշտութեան ընկերակցի · զբարեկամութիւն, և զխաղաղութիւն պահպանէ · համեստութեան զուգակցի · վերջապէս զչարագործութիւնս, և զմոլութիւնս կործանէ ։ Զգաստութիւն զուղիղ դատողութիւն պահէ · զյիշողութիւն, և զյիշեցումն պահպանէ · զգաղտնիս համապահէ · զծածուկս քօղէ · զընթերցուածս, և զվարդապետութիւնս իմանայ · զգիտութիւնս, և զբարիս արուեստս ուսանի · զանուն, և զբարի համբաւ ստանայ · զփրկաւէտս, և զօգտակարս իւր պատճառէ, օգնէ առաքինութեան, տրամադրէ զհամայնս իւր, զզգաստն զետեղէ 'ի ժողովման համեստից ։ Զգաստութիւն փախուցանէ զանդգնութիւն, խոտորի յամենից վտանգից, փոխաբերականաց պաշտօնատարութեանց հնազանդի, գարշի 'ի հպարտութենէ, զտունն, և զընտանիս կառավարէ միջավորութեամբ · զհա-

ւատն, ինքեան յանձնեցեալն պահէ։ Ներկայութ՟բ զգաստութ՟ն է անգին արիութ՟ի ոգւոյ, համայնք առաքինութ՟նք, և ամ՟ք մակադիրք գովասանաց ցանկան նմա. քանզի թարց նորա զարդարիլ, կամ հաճոյանալ ոչ կարեն։ Որպէս Արբեցողութ՟ին է սկիզբն ամ՟ց մոլութ՟եց. այսպէս զգաստութ՟ին թշնամին արբեցողութ՟ն, է մայր ամ՟ց առաքինութեանց։ Երջանիկ զգաստութ՟ի, փրկաւէտ է լինութ՟ի, որ որքան առատագոյն տանանի, այնքան առաւել զզգաստութ՟ի շնորհել, և պարգևել արժանաւորի մտաց։

4. 'Ի զգաստութ՟ն է ուսում՟ վարդապետութ՟եց, մտադրութ՟ի աղօթից, ըմբռնութ՟ի ջերմեռանդութ՟ն, պահեցողութ՟ի մաքրութ՟ն, մաքրութ՟ի կենցաղավարութ՟ն, վայելչութ՟ի սեղանոյ, ամբողջութ՟ին դատողութ՟ն, համաձայնութ՟ի արարողութ՟եց, քաղցրութ՟ի ընկերակցութ՟ն, և պարզութ՟ի մտաց։ 'Ի զգաստութ՟ն է ուսում՟ վարդապետութ՟եց. քանզի զգաստք գտանին ըմբռնք առ 'ի պարապիլ ստացման վարդապետութ՟եց։ 'Ի զգաստութ՟ն է մտադրութ՟ի աղօթից. վասնզի զգաստք ոչ ունելով զմարմին ծանրացուցեալ, և ունելով զանդամս պատրաստ, և զմիտն ազատ, դիւրաբար կարեն պարապիլ աղօթից։ 'Ի զգաստութ՟ն է ըմբռնութ՟ի ջերմեռանդութ՟ն. քանզի զգաստք ոչ ունելով զարգելիչս ներգործութ՟եց մտաց, գտանին տրամադրեցեալք առ ներգործութ՟իս ջերմեռանդութ՟ն։ 'Ի զգաստութ՟ն է պահեցողութ՟ի մաքրութ՟ն. վասնզի զգաստք գոլով ապահովք, և ազատք յայնցանէ, որք բորբոքեն զբոցն բղջախոհութ՟ն, գտանին ըմբռնք առ 'ի պահել զմաքրութ՟ի։ 'Ի զգաստութ՟ն է մաքրութ՟ի կենցաղավարութ՟ն. քանզի զգաստք 'ի կենցաղավարութ՟ն ոչ պղծին անմաքրութ՟բք արբեցողութ՟ն, 'Ի զգաստութ՟ն է վայելչութ՟ի սեղանոյ. վասնզի սեղանք զգաստից են թարց բծաւորութ՟ն արբեցողաց։ 'Ի զգաստութ՟ն է ամբողջութ՟ի դատողութեան. քանզի 'ի մտի զգաստից ոչ է ծուխն շոգայութեան, արգելողն զուղղութ՟ի դատողութեան։ 'Ի զգաստութեան է համաձայնութիւն արարողութեանց. վասնզի զգաստք առաջնորդեցեալք ենթադատողութ՟բ բանի, գործեն զիրս համաձայնս։ 'Ի զգաստութեան է քաղցրութիւն ընկերակցութեան. քանզի զգաստք ունին զքաղցրաբարոյ ընկերակցութ՟ի։ Վերջապէս 'ի զգաստութեան է պարզութ՟ի մտաց. վասնզի միտն զգաստից է պայծառ։

5. Առաքինութ՟ին զգաստութեան է հարկաւոր մեզ. զի հարկաւոր է մեզ 'ի կիրառութ՟ն ըմպեցման ունիլ զուղղութ՟ի, զի այնպէս գործիցեմք, որպէս յարմարի մարդոյ ունեցողի զբան, զիմի ոչ իրիցէ մեզ արբեցողութ՟ի. կամ անգոսնելի շոգայութ՟ի. իսկ արդ զուղղութ՟ին 'ի կիրառման ըմպեցման տայ զգաստութ՟ին. վասնզի առաքինութ՟իս այս առնէ շրջել 'ի միջին թարց հակեցման դէպ 'ի յաջ, կամ դէպ 'ի յահեակ, 'ի կարգի առ ըմպեցում՟։ Ուրեմ՟ առաքինութ՟ի զգաստութեան հարկաւոր է մեզ։ Այնոքիկ, որք անհաճոյանան զգաստութեան են այսոքիկ. ըմպեցում՟ միայն վասն հեշտութեան, ըմպեցում՟ աւելորդի, ըմպեցում՟ վնասակարի, և ըմպեցում՟ պատճառաւ զարբեցողութ՟ի։ Անհաճոյ է ըմպեցում՟ միայն վասն հեշտութ՟ն ճաշակողութեան. քանզի զգաստութ՟ին դիտէ, ոչ զանպարտաւոր, այլ զպարտաւոր վախճան, որ է համապատասխանեցում՟ մարդկայնոյ անհատի։ Անհաճոյ է ըմպեցում՟ աւելորդի. վասնզի զգաստութ՟ին խնդրէ զբաւականն, որ օգտակար է, ոչ զաւելորդութ՟ի, որ անհանդարտացուցանէ, և երբեմ՟ վնասէ, Անհաճոյ է նմա ըմպեցում՟ վնասակարի. քանզի զգաստութ՟ին խնդրէ զհարկաւորն, և զօգտակար ըմպելին, ոչ զվնասակարն, որ վնասէ, և

և երբեմն սպանանէ : Վերջապէս անհաճոյ է նմա ընկերցումն պատճառօղ զարբեցողութեան · վասնզի զգաստութիւն է, զի մարդն վարօղն բանիւ, ունիցի զկիրառումն բանի, և առաջնորդութիւն բանի գործիցէ · իսկ արբեցողութիւն արգելու զկիրառումն բանի, և զվարումն ուղղոյ դատողութեան :

6. Կարի յոյժ անհաճոյէ զգաստութեան արբեցողութիւն : Քանզի զբազումս վնաս առբերէ մարդոյ արբեցողութիւն : Մոլութիւս այս արբեցողութեան, վնասէ հոգւոյ, վնասէ մարմնոյ, վնասէ փարթամութեանց, վնասէ ընտանւոյ, վնասէ բարւոյ համբաւոյ, վնասէ առաքինութեանց, և վնասէ բարեգործութեանց : Վնասէ հոգւոյ, վասնզի բառնայ զկիրառումն բանի, որ է ամենամեծ բարին մարդոյ : Դարձեալ վնասէ հոգւոյ · քանզի կատարեալ արբեցողութիւն է մահացումն · ուստի զրկէ զմարդն 'ի շնորհէ, որոյ փոքրագունեղ աստիճանն է առաւել, քան զընդհանուր աշխարհ : Տակաւին վնասէ հոգւոյ · վասնզի դնէ զմարդն 'ի կացութեան, յորում ոչ ունելով զկիրառումն բանի, և ուղղոյ դատողութեան կարէ գործել զբազումս չարիս : Վնասէ մարմնոյ · քանզի անհանգստացուցանէ, և կարէ պատճառել զհիւանդութիւն, և երբեմն նաև սպանանել : Վնասէ փարթամութեանց · վասնզի փարթամութիւնք, որք են հարկաւորք մարդոյ վասն խնամատարութեան, և վասն գործոց ողորմութեան, ցրուէ, և վատնէ : Վնասէ ընտանեաց · քանզի ցրուելով զինչս, և զփարթամութիւնս, առնէ զընտանիս ողորմելիս : Վնասէ բարւոյ համբաւոյ · վասնզի զպատուելի, և զգովելի մարդն, առնէ արհամարհելի, և անգոսնելի, և առնէ զնա կատական մարդկանց : Վնասէ առաքինութեանց · քանզի արբեցողութիւն առնէ զմարդն բղջախոհ, անպարկեշտ, անմաքուր, խեղկատակ, կռուարար, զրպարտող, հպարտ, և զայրացող : Վերջապէս վնասէ բարեգործութեանց · վասնզի առնէ զմարդն անյարմար առ բարեգործութիւնս, առ աղօթս, առ 'ի լսել զաստուածային բանն, և առ ջերմեռանդութիւնս :

7. Արբեցողութիւն է վիշտ հոգւոյ : Վասնզի գինին կարի ըմպեցեալ, է դառնութիւն հոգւոյ : Ըմպօղն միջավայրաբար, է զգաստ, իսկ ըմպօղն անմիջավայրաբար, է արբեցող : Ըմպելի է վասն հրճուանութեան, այլ ոչ վասն արբեցողութեան · քանզի գինին 'ի սկզբանէ ստեղծեցեալ է 'ի յուրախութիւն, ոչ 'ի յարբեցողութիւն : Է հրճուանումն հոգւոյ, և սրտի, գինին միջավայրաբար ըմպեցեալն, և զգաստ ըմպեցումն, է առողջութիւն հոգւոյ, և մարմնոյ : Միջավայրաբար ըմպօղն, 'ի նընջելն ոչ աշխատի 'ի նմանէ, և ոչ զգայ զցաւ · իսկ անմիջավայրաբար ըմպօղն, աշխատի, և զգայ զցաւ : Ոչ է շրջելի 'ի յորովայնամոլութիւս, և 'ի յարբեցողութիւս, այլ 'ի զգաստութեան, և 'ի պարկեշտութեան · քանզի այս վայելէ պճնեցելոց բանիւ : Ողորմելիք են, որք զարթնուն 'ի քնոյ 'ի յառաւօտու առ 'ի հետևիլ արբեցողութեան, և առ 'ի յըմպել մինչև ցերեկոյ, տօթացեալք գինեաւ, և հանդերձ քնարաւ, և ջնարաւ, և թմբկաւ 'ի խրախութիւս իւրս ըմպելով զանմիջավար գինի, իսկ ոչ վերահայելով առ գործս Տեառն, և ոչ նկատելով զգործս ձեռաց նորա : Թշուառք են, որք են կարօղք առ 'ի յըմպել զգինի, և են հզօրք առ 'ի խառնել զարբեցողութիւն : Քանզի մարգարէական վայն մերձակայ է նոցա : Արբեցօղք զարքայութիւն Տեառն ոչ ժառանգեսցեն : Ուրեմն արբեցօղք, և համայնք, որք ըմպեն զանչափ գինի 'ի քաղցրութեան, ապրեցուցալով զանձինս իւրեանց, պարտին զարթնուլ, և արտասուել, և ողբալ, ապաշխարելով, զի մի կորնչիցին, այլ նաև կարիցեն հասանիլ յաւիտենականի կենի, և վայելել զարքայութիւնն երկնից :

8. Արբեցողութիւն է բորբոքումն

քում բղջախոհութեան, որով 'ի ձեռն մարմնոյ գալորշեան նեղքինք փորանք, և ոգին հրանայ: Արբեցողութիւն է մայր ամենից չարագործութեանց, և նիւթ մեղաց, առիթ յանցանաց, արմատ եղեռնագործութեանց, ակիզբն մոլութեանց, վտովինչ գլխոյ, կործանումն զգայութեանց, ալեկոծումն լեզուի, գրգռումն անարգանաց, և զրպարտանացն յորդորումն կռուոց, և կազաւելութեան, մրրիկ մարմնոյ, նաւաբեկումն ողջախոհութեան, կորուստ ժամանակի. կամաւոր խայտառակութիւն, վատահամբաւական ախտաժէտութիւն, արհամարհան մարդկանց, նախատինք արբեցողաց, տգեղութիւն բարուց, նախատինք կենի, քանդումն ամօթխածութեան, վատահամբաւութիւն պարկեշտութեան, պղծութիւն անդամոց, ապականութիւն հոգւոյ, վատնումն ընչից, ցրտումն փարթամութեանց, և թշուառութիւն ընտանեաց: Արբեցողութիւն 'ի յերկաքանչիւրում սեալ ցանկայ ամենից չարեաց, և գործէ զժանդագործութիւս, և զրկէ զփափագօղս յարքայութենէ երկնից: Արբեցողութիւն շփոթէ զբնութիւն, կորուսանէ զշնորհսն, և զփառս, ներընթանայ 'ի յաւիտենական դատապարտութիւն: Ոչինչ այնպէս բարեկամ դիւաց, որպէս արբեցողութիւն, որ է մայր ամենից մոլութեանց: Արբեցողութիւն է արմատ, և սնուցիչ յանցանաց: Ուր թագաւորէ արբեցողութիւն, քանն աքսորի, իմացութիւն բթանայ, խրատք թիւրին, և դատողութիւնք ենթակործանին: Արբեցողութիւն է մեղրածորան դեւ, քաղցր թիւն, և ժանտաբարոյ մեղք: փախիր ուրեմն 'ի յարբեցողութենէ: և գրկեա զզգաստութիւն:

## ԳԼՈՒԽ. ԼԱ.

### Յաղագս ողջախոհութեան.

1\. Ողջախոհութիւն է առաքինութիւն, որ յօժարեցուցանէ զմեզ առ 'ի պահել զմաքրութիւն մարմնոյ: Բանիւ այսորիկ առաքինութեան ազատք եմք 'ի պղծութենէ բղջախոհութեան: Բղջախոհութիւն պղծէ զխորհուրդս, պղծէ զիղձ, պղծէ զզգայութիւնս, պղծէ զանդամս, և պղծէ զարարողութիւնս: Ողջախոհութիւն ազատէ զմեզ յաստացելոց պղծութեանց. վասնզի հակէ զմեզ առ մաքրութիւն խորհրդոց, ըղձից, բանից, զգայութեանց, անդամոց, և արարողութեանց: Ուստի ողջախոհն սանձէ զանմաքուրս խորհուրդս, և ելուզանէ զմաքուրս խորհուրդս: Ընդոստուցմանց անմաքրոց 'ի թշնամւոյ զարթուցելոց ընդդիմանայ զօրութեամբ ժուժկալութեան, և ոչ տայ նոցա զհաւանութիւն: Սանձահարէ զիղձս անմաքուրս, և ելուզանէ զմաքուրս փափագս: Պահպանէ զշրթունս, զբերանն, և զլեզուն, զի մի ելանիցեն բանք զազիրք, արատաբերելով զբանս պարկեշտս, և անարատս: Ճնշէ, և զսպէ, զզգացմունս անմաքուրս, զի զգայութիւնք ունիցին զպայծառութիւն պարկեշտութեան: Սանձահարէ զվավաշոտ անկարգութիւն, դարշի յանհամեստից բանից, ոչ ունկնդրէ արատաւորաց բանից, փախչի 'ի խօսողաց զերս զազիրս, ունկնդիր լինի դովասանողաց զմաքրութիւն, ոչ հայի յերեսս վտանգաւորս, հեռանայ 'ի շօշափողութեանց միւսոյ սեռի, և ոչ շօշափէ զվտանգաւորն: Ուստի սանձէ զտեսողութիւն, զլսողութիւն, զշրթունս, և զշօշափողութիւն:

2\. Ողջախոհն ունի զանդամս, համա-

ծոմապահօք, պահեցողութեամբք, աղօթիւք, և հոգևորօք կրթութեամբք ճնշեցեալս, արարեցեալս զէնս ջերմեռանդութեան, ոչ պղծութեան, պարկեշտութեան, ոչ անպարկեշտութեան, մաքրութեան. ոչ անմաքրութեան ։ Ողջախոհն պարապի ներգործութեանց տրամադրողաց առ մաքրութիւն ։ Ուստի է մաքուր, և ազատ յամենից արատաւորութեանց զմարդն պղծողաց ։ 'Ի յողջախոհութեան են ժուժկալութիւն. պատժումն, ճնշումն, ծոմապահումն, ջերմեռանդութիւն, աղօթք, խոնարհեցուցումն, մաքրութիւն, պարկեշտութիւն, համեստութիւն, պահեցողութիւն, զգուշութիւն, փախուստ, կրթութիւնք արգելօղք զողջախոհութիւն, ընկերակցութիւն համեստից, և յուսադրութիւն 'ի յԱստուած ։ 'Ի յողջախոհութեան է ժուժկալութիւն. քանզի ողջախոհն սանձէ զիւր ինքն ընդդիմանալով շարժմանց գրգռողաց առ անպարկեշտութիւն, և արիաբար, քաջապէս, և հաստատապէս ոտներաղմելով, և մարտնչելով ընդդէմ բղջախոհութեան, և ընդդէմ ցանկութեան մարմնոյ ։ 'Ի յողջախոհութեան է պատժումն. վասնզի ողջախոհն ոչ դադարէ զմարմինն, հոգւոյ զպատերազմ յարուցանօղն, ըստ օրինաւորաւ կերպիւ, և ըստ արուեստաւորաւ հնարագիտութեամբ, 'ի յողջախոհութէ մտածեցելով, պատժէ, և դանակոծէ զմարմինն. և զնա ճնշեցեալ պինուք համեստութեան, ենթարկէ հոգւոյ, և օրինի Աստուծոյ գերապանցագունեղի թագաւորի, և ամենաբարձրելոյ տեառն, բոլորոյ ընդհանրոյ հրամայողի, զառաքինութիւն ողջախոհութեան մարդկանց պատուիրողի, և ընդդէմ անմաքրութեան զօրէն դնողի ։ 'Ի յողջախոհութեան է ճնշումն. քանզի ողջախոհն զանդամս մարմնոյ մահացուցանէ, սանձահարելով հոգևորօք կրթութեամբք զմահաբերս զգացմունս անդամոց, և արգելլով զապօրինաւորս ներգործութիւս զգայութեանց, այսինքն, զանպատեհս ներգործութիւս տեսողութեան, լսողութեան, հոտոտելութեան, ճաշակողութեան, և շօշափողութեան, և զանվայելուչս շրջեցմունս ։

3. 'Ի յողջախոհութեան է ծոմապահութիւն. քանզի ողջախոհն զծոմապահութիւս յեկեղեցւոյ պատուիրեցեալս, կամաւորապէս յանձնառու, իբրև զզէնս ընդդէմ բղջախոհութեան դնեցեալս, և զայլս կամաւորապէս յանձնառեցեալս, զի սանձիցէ զանկարգս, և զարհամարհելիս շարժեցմունս անդամոց ։ 'Ի յողջախոհութեան է ջերմեռանդութիւն, վասնզի ողջախոհն պարապի գործոց ջերմեռանդութեան, այսինքն, յաճախութեան խորհրդոց ապաշխարութեան, և հաղորդութեան, ընթերցման սրբոց գրոց, ունկնդրութեան աստուածայնոյ բանի, բարձրագունեղի վարդապետութեան, որ է կենդանի բանն Աստուծոյ, և ազդօղ, և հատու քան զամենայն սուր երկսայրի, և անցանէ մինչև ցորոշումն շնչոյ, և ոգւոյ, և յօդից, և ուղղոյ, և քննիչ է մտաց, և խորհրդոց սրտից. խոկման խորհրդոց, խորհելով զվերջինս մարդոյ, այսինքն, զմահն, զդատաստանն, զատանջանս դժոխոյ. և զերջանկութիւն արքայութեան. և բորբոքեցման աստուածայնոյ սիրոյ, շիջուցանողի զբոցն մարմնասիրութեան, ընդոստուցանողի զկամս առ սէր մաքրութեան, և լցուցանողի զսիրտն մարդոյ հոգևորօք ախորժութեամբք ։ 'Ի յողջախոհութեան են աղօթք. քանզի ողջախոհն, զի ընդդիմանայցէ փորձութեանց, զի յաղթիցէ զխորամանկ թշնամին, զի յաղթանակիցէ ընդդէմ թշնամւոյ, զհոգևոր կործանումն մարդոյ նիւթողի, և հնարակերտողի, և հոգևորօք բերկրութեամբք սանձահարիցէ զշարժմունս ցանկութեան, և զի հոգևորաւ բոցով սիրոյ մաքրիցէ զխորհուրդս, զիղձս, և զփափագս. տայ զիւր ինքն ջերմեռանդից աղօթից, աղաչանաց, աղերսանաց, և պաղատանաց ։

4. 'Ի

4. 'Ի յողջախոհութեան է խոնարհեցումն · վասնզի ողջախոհն ճանաչելով, զհպարտութիւն պատճառել կքանդումն, և զկործանումն ողջախոհութեան, խոկ զխոնարհութիւն, գոլ յենարանն նորա, զի մի հպարտութիւն կործանիցէ զողջախոհութիւն, փարի խոնարհութեան, և խոնարհեցուցանէ զիւր ինքն առաջի ամենաբարձրելոյն, զի օգնիցէ նմա ընդդէմ ջանադրութեանց ըղջախոհութեան: 'Ի յողջախոհութեան է մաքրութիւն քանզի ողջախոհն պատժելով զանդամս հոգւորոք փրկաւէտիւք պատժովք, և սանձելով զերևակայութիւս, առ մարմնասիրութիւն դրդողս, պատճառէ զմաքրութիւն 'ի խորհուրդս, 'ի յիղձս, 'ի յանդամս, 'ի մարմնոջ, և 'ի յարարողութիւս: Ուստի 'ի խորհուրդս, 'ի յիղձս, 'ի յանդամս, 'ի մարմնոջ, 'ի յարեան, 'ի սրտի, 'ի փափագս, և 'ի յարարողութիւս ողջախոհս փայլի, պայծառանայ, և ճառագայթի մաքրութիւն: 'Ի յողջախոհութեան է պարկեշտութիւն, և ամօթխածութիւն · վասնզի ողջախոհն պահէ զզգայութիւս յօրինեցեալս, ունի զշարժմունս մարմնոյ, և անդամոց վայելչաւորս, զընթացս պատշաճաւորս, զհայեցուածս ամօթխած, զլռողութիւն փափագող մաքրոց բանից, զբերանն արտաբերող զհամեստ բանս, զշօշափողութիւս պարկեշտս դատարկացեալս յամենայն աղտեղութենէ · 'ի կիրարկանէ զարարողութիւս բուրողս զանուշահոտութիւն պարկեշտութեան, և վայելուչս մարդոյ զողջախոհութիւն սիրողի, 'ի սեղանոջ ընդունի զպարկեշտս, և զհամեստս մարդիկ, զգենու զզգեստս ցուցանողս զպարկեշտութիւն · զարդարի զարդիւք կացութեան իւրոյ վայելեւչաւորօք, և կենցաղավարի պարկեշտութեամբ յարմարողաւ մարդոյ ողջախոհի · վերջապէս ունի զոգի հաւանօղ համեստութեան:

5. 'Ի յողջախոհութեան է համեստութիւն · վասնզի ողջախոհն զզուի, գարշի, և հեռանայ յամենայն արարողութեանց, զբանական մարդն խայտառակողաց, և յամենայն նշանաց զպատուելն մարդոյ խափանողաց · և միայն գործէ զարարողութիւս, արժանիս պատուոյ, և յարմարս մարդոյ առաքինւոյ, զհրաման, և զօրէն բանի սիրողի: 'Ի յողջախոհութեան է պահեցողութիւն · քանզի ողջախոհն ոչ միայն գարշի 'ի վավաշոտութենէ, այլ նաև 'ի պատճառաց վավաշոտութեան: Ուստի յամենայն իրաց զվավաշոտութիւն պատճառողաց հեռանայ, թէ իցէ ճաշակելի, և թէ իցէ ըմպելի: 'Ի յողջախոհութեան է զգուշութիւն · վասնզի ողջախոհն զգուշանայ յամենայն իրաց զմարդն առ վավաշոտութիւն տրամադրողաց: Զգուշանայ, զի մի առնիցէ զայնոսիկ իրս, յորոց է վավաշոտական կեան: 'Ի յողջախոհութեան է փախուստ · քանզի ողջախոհն փախչի յառիթից, զմարդն առ վավաշոտութիւն ածողաց: Այր ողջախոհ փախչի 'ի կերպարանէ, 'ի խօսակցութենէ, 'ի կենցաղավարութենէ, և 'ի յընկերակցութենէ կնոջ վտանգաւորի: Փախչի 'ի խաղից, 'ի սեղանոց, 'ի կենցաղավարութեանց, և 'ի յընկերաց, բացողաց զճանապարհ առ վավաշոտական կեան: 'Ի յողջախոհութեան են կրթութիւք արգելլօղք զվավաշոտութիւն · վասնզի ողջախոհն որպէս սիրէ զողջախոհութիւն, այսպէս և զայնոսիկ ամենեսեան, որք համապահեն զողջախոհութիւն, և բացաշարժեն զվավաշոտութիւն · Ուստի սիրէ զաղօթս, զծոմս, զպահեցողութիւն, զջերմեռանդութիւն, զհոգեւորս բանս, զքրիստոնէական կրթութիւնս, և զյաճախումն խորհրդոց: 'Ի յողջախոհութեան է ընկերակցութիւն համեստից · քանզի ողջախոհն որպէս զգուշանայ յանձանց վտանգաւորաց, այսպէս ընկերակցի համեստից: Վասնզի որպէս 'ի նոցանէ է վնասակարութիւն · այսպէս 'ի սոցանէ է օգնութիւն: Որպէս կեանն անձարձակաց դրդէ առ վավաշոտութիւն · այսպէս օրինակն համեստից շարժէ առ համեստութիւն, և առ կեան պատուելի: Վերջապէս 'ի յողջախոհութեան է

յու-

յուսադրութիւն 'ի յանձ · քանզի ողջախոհն ճանաչելով զտկարութիւն իւր · ոչ յենու զօրութեանց իւրոց, այլ օգնութեան Այ :

6. Ողջախոհութիւն բաժանի 'ի կուսականն, յայրիականն, և 'ի յամուսնականն : Ամուսնական ողջախոհութիւն է առաքինութիւն կայացող 'ի միջին · քանզի ամուսնականն ըստ հրամանի բանի միջավարաբար վարի շօշափմամբ մարմնոյ վասն ուղղոյ վախճանի : Սա առնէ զողջախոհն շրջիլ 'ի միջին վասն պարտաւորի վախճանի : Սա պահանջէ, զի ողջախոհն վարիցի զուգակցութեամբ, և շօշափմամբ մարմնոյ միջավարաբար, պարկեշտաբար, և համեստաբար : Պահանջէ, զի վարիցի միջավարաբար, զի մի լինիցի անկարգ սէր մարմնոյ, և վնաս առողջութեան : Պահանջէ, զի վարիցի պարկեշտաբար · քանզի վարումն այս ոչ է ներգործութիւն մոլութեան, այլ առաքինութեան, պահանջողի զպարկեշտութիւն : Պահանջէ, զի վարիցի համեստաբար · վասնզի այրն, և կինն այնպէս զուգակցիլ պարտին, զի մի կորուսանիցեն զպատիւն, որով զերկարս պարտին պատուել : Ողջախոհութիւն նաև պահանջէ, զի ողջախոհն ոչ վարիցի շօշափողութեամբ մարմնոյ վասն հեշտութեան մարմնոյ իբրև վասն վախճանի, այլ վարեսցի վասն պարտաւորի վախճանի, 'ի յամուսնութեան դիտեցելոյ · վասնզի հեշտութիւն մարմնոյ ոչ է վախճան, այլ միջոց · իսկ վախճանն է ծնանելութիւն զաւակի, սպեղանի ցանկութեան և հատուցումն պարտուց : 'Ի յառն մասնաւորապէս խնդրի սէր, 'ի կնոջ հնազանդութիւն : 'Ի յառն խնդրի սէր, զի կնոջ դիւրին լիցի հնազանդիլ : 'Ի կնոջ խնդրի հնազանդութիւն, զի առն դիւրին լիցի սիրել : 'Ի յերկաքանչիւրում խնդրի սէր · վասնզի ամուսնութիւն է փոխաբերական բարեկամութիւն : 'Ի յերկաքանչիւրում խնդրի նաև հաւատարմութիւն · քանզի սա է համապահիչն սիրոյ · 'ի յերկաքանչիւրում է պարտաւորութիւն հատուցանելոյ զպարտս · քանզի զայս պահանջէ արդարութիւնն : Պահանջի և համբնակութիւն, զի կարիցէ լինիլ հատուցումն պարտուց : Գովելի է ամուսնութիւն · վասնզի այսու է պահպանումն մարդկային տեսակի :

7. Այրիական ողջախոհութիւն է, որ ոչ վարի զուգակցութեամբ, և շօշափմամբ մարմնոյ 'ի յայրիութեան : Սա ամենևին արտաքսէ զհեշտութիւն մարմնոյ · որ է 'ի զուգակցութեան : Ուստի 'ի յայրիութեան ունի զմաքրութիւն մտաց, և զմաքրութիւն մարմնոյ : Ողջախոհութիւս այս է լաւագոյն քան զողջախոհութիւն ամուսնականութեան · քանզի ունի զլաւագոյն մաքրութիւն, և զսակաւ զբաղումն : Ուստի 'ի յայրիութեան մարդն գտանի ընդունակագոյն առ 'ի պարապիլ հոգևորաց կրթութեանց · մանաւանդ եթէ ուխտիցէ զայրիական ողջախոհութիւն, և մտանիցէ 'ի յիմն փորձեցեալ կրօն : Զայրեաց այսպէս գրէ Առաքեալն : ( Բայց ամուրեացն, և այրեացն ասեմ · լաւ է նոցա, եթէ կայցեն իբրև զիս : ) Առ կորընթացիս առաջնորդ. գլ. 7. թիւ. 8.

8. Կուսական ողջախոհութիւն է, որով ողջախոհն ոչ վարի շօշափողութեամբ մարմնոյ, և պահէ զամբողջութիւն կուսութեան : Կուսական ողջախոհութիւնն է հրեշտակային ողջախոհութիւն · վասնզի ունի զամենակերպ, և զբոլորական մաքրութիւն յամենայն ժամանակի : Ուստի լաւագոյն է քան զայրիական մաքրութիւն · քանզի ունի զմեծագոյն մաքրութիւն, և զամբողջութիւն մարմնոյ : Արժանի է պսակի · վասնզի առնէ զհրաշակաւոր յաղթութիւն, Կուսական ողջախոհութիւնն է օրինաւոր, քանզի բազմազանք են, որք պարապին համապահեցման տեսակի : Կոյսն ևս առաւել է ընդունակագոյն առ 'ի պարապիլ հոգևորաց կրթութեանց · վասնզի ոչ ունելով զուստերս, և զդստերս է ազատ 'ի զբաղմանէ : Եւ ոչ ունի զզբաղումն առն, ոչ որդւոց, և ոչ դստերաց · մանաւանդ եթէ ուխտիցէ զկուսութիւն, և մտանիցէ 'ի յիմն կրօն :

8. Այսպէս գրէ Առաքեալն զկուսանաց։ (Այլ կամիմ զձեզ անհոգս լինել. զի որ անկին է, հոգայ զտն, թէ որպէս հաճոյ լինիցի Տն։ Եւ որ կանամբին է հոգայ զաշխարհիս, թէ որպէս հաճոյ լինիցի կնոջ իւրում. և ահա մեկնեցան 'ի միմեանց։ Առնակինն, և կոյսն. զի կոյսն հոգայ զՏն, զի իցէ սրբ հոգւով, և մարմնով. և առնակինն հոգայ զաշխարհիս, թէ որպէս հաճոյ լինիցի առն իւրում։) Առ կորընթացիս առաջնորդ։ գլ. 7. թիւ. 32. սբն Օգոստինոս զասացելոց ողջախոհութեանց այսպէս խօսի։ (Բարի է զուգականական ամօթխածութիւն, բայց լաւագոյն է կուսական, կամ այրիական ժուժկալութի։) Զմատենէ այրիութե, Սբն Ամբրոսիոս բարձրացուցանէ զկուսութին ասելով (Որքան է՞ շնորհն կուսութե, որ արժանաւորեցաւ ընտրիլ 'ի քէ. զի իցէր մարմնաւոր տաճար այ, յորում մարմնաւորապէս բնակեցաւ լիութի այծութե. կոյսն յղացաւ զփրկութի աշխարհի, կոյսն ծնաւ զկեանն ընդհանրոյ։) 'Ի մատենի զպաշտօնից։ Զյաղթութին կուսանաց ուսուցանէ դոյլ մեծագոյնն, ասելով։ (Կուսութին դերազանցէ զթէութի մարդկայնոյ բնութե, որով մարդիկք նմանեցուցանին հրեշտակաց։ Սակայն մեծագոյն է յաղթութիւն կուսանաց, քան հրեշտակաց։ Քանզի հրեշտակք կեան թարց մարմնոյ, իսկ կուսանք յաղթանակեն 'ի մարմնոջ։) 'Ի յընթերցունածոջ զայրեաց։ Նոյն սբն ասէ։ (Ո՞վ կարէ մեծագոյն համարել զգեղեցկութի քան զգեղեցկութի կուսի, որ սիրի 'ի թագաւորէ, հաւանեցեալ լինի 'ի դատաւորէ, տեառնադրի տեառն, նուիրի այ։) Յաղագս կուսանաց յերկրորդում մատենի։ Եթէ կամիս հաճոյանալ այ, սիրել 'ի հրեշտակաց, և սիրել 'ի մարդկանց, սիրեա զողջախոհութի։

# ԳԼՈՒԽ ԼԲ.

## Յաղագս ջերմեռանդութեան։

1. Ջերմեռանդութին է առաքինութի, որ հակէ զմեզ առ հոգևորս կրթութիւնս, միջավարիւք աշխատանօք, հրամանաւ բանի, և ըստ կանոնաց խոհեմութե յանձնառեցեալս, 'ի կիրարկանելիս առ հոգևոր օգուտ մեր, առ 'ի հաւաքել զհոգևորս փարթամութիս, և առ 'ի վայելել զած 'ի սիրոջ, և 'ի ներգործական սիրեցման։ Առաքինութիս այս կանոնաւորէ պաշխատանս կանոնիւք խոհեմութե, զի իցեն բանաւորք, և ոչ անդրանցանօղք զզօրութիս մեր, ոչ ևս պակասօղք քան զնոսա. ոչ անդրանցանօղք զզօրութիս մեր, զի մի մաշեսցեն, և պատճառելով զտկարութի, արգելուցուն զհոգևորս կրթութիս ոչ պակասօղք, զի մի գործիցի մոլութի պղերգութե, և ծուլութե։ Կրթութիք յայսմանէ առաքինութե սիրեցեալք, և փափագեցեալք, են հոգևորք, այնպիսիք արարողութիք, որք օգտակարք իցեն հոգւոց մերոց, և յորոց լինիցի մեզ ուրախութիւն հոգւոյ, մխիթարութի սրտի, ներքնային խնդութիւն, և հոգևոր զուարճութի։ Առաքինութիւնս այս առնէ. և պահանջէ, զի առ օգուտ հոգւոց մերոց, 'ի հոգևորս կրթութիւնս իցեմք 'ի շնորհի, և 'ի հրամանէ սիրոյ եղուպանիցեմք զներգործութիս առաքինութեց, հաւատոյ, յուսոյ, սիրոյ, կրօնի, յուսադրութե, խոնարհութե, երկրպագութե. և այլոց առաքինութեց, զի հոգևորապէս հարստանայցեմք, ջերմեռանդաբար գործելով։ Վերջապէս առաքինութի ջերմեռանդութե դիտէ,

ակ , և պահանջէ , զի 'ի հոգևորս կրթութիս , 'ի հրամանէ սիրոյ ելուզանելով զներգործութիս առաքինութեանց , ներգործականապէս սիրեցեմք զած ։

2. Հոգևորք կրթութիք , զորս առ շօշափել առաքինութի ջերմեռանդութեան , են այսոքիկ , խոկումն , յափշտակումն , հոգևորք խօսակցութիք , ունկնդրումն ածայնոյ բանի , ընթերցումն հոգևորաց գրեանց , շարադրումն հոգևորաց գործոց , լսումն պատարագի , մատուցումն պատարագի , յաճախումն խորհրդոց ապաշխարութեան , և հաղորդութեան , մատակարարումն խորհրդոց , և ընկալումն նոցա , աղօթքն , աղաչանքն , պաղատանքն , զղջումն զմեղաց , առաջադրութիւն ոչ մեղանչելոյ , և ելուզանումն ներգործութեանց առաքինութեանց ։ Ուստի ջերմեռանդն բորբոքեցելով փափագաւ , և վառեցելով ըղձիւ խորհի զնա առ փրկութի իւր հարկաւորս ․ մտադրաբար , և ջերմեռանդաբար խոկայ զբարձրագոյնս խորհուրդս ․ խօսի զնա հարկաւորս , և օգտակարս առ փրկութի իւր , և առ փրկութի այլոց , յորժամ կարէ քարոզէ զածայինս իրս , յորդորէ զքրիստոնեայս առ 'ի գրկել զառաքինութիս , և առ 'ի փախչել 'ի մոլութեց ․ մտադրաբար , և հանդերձ ուղղով դիտաւորութբ լսէ զածայինս բանս 'ի պաշտօնէէ բանին ածյ , թարց ունայնի , և սնոտւոյ հետաքրքրութե ․ ունի 'ի ձեռին զգրեանս ուսուցանօղս զգթութի , և զառաքինութի , ընձեռօղս զիրաց առ փրկութի մեր հարկաւորաց , և օգտակարաց ․ գոլով իմաստուն շարադրէ զգրեանս , զկոյրս լուսաւորօղս , զմեղաւորս խրատօղս , և դարձուցանօղս , զբարիս 'ի յառաքինութիս հաստատօղս ; զհաւատն , և զսբ եկեղեցին պաշտպանօղս ․ զհերետիկոսս , և զհերձուածօղս ամաչեցուցանօղս ․ երկրպագութբ , մտադրաբար , և պարկեշտաբար լսէ զպատարագն , ջերմեռանդաբար աղօթելով , և ընդ պատարագօղի բորբոքեցելով ըղձիւ մատուցանելով զնա ։

3. Ջերմեռանդ պատարագօղն , հանդերձ շինութբ , պարտաւորաւ երկրպագութբ , և բորբոքեցելով սիրով պատարագէ , և պարտաւորիւք աղօթիւք 'ի յեկեղեցւոյ հրամայեցելովք , զհաճոյագունեղ պատարագն վասն փրկութե աշխարհի մատուցանէ հօր ածյ ․ Ջերմեռանդն , պարտաւորաւ նախապատրաստութբ , և տրամադրութբ յաճախէ զխորհուրդս , պարտաւորաւ կերպիւ , և որպէս պիտոյ է , մաքրելով առ ապաշխարութի , ցաւելով 'ի վերայ մեղաց , առաջադրելով զդարձումն , խոստովանելով անկեղծաբար , և ընդունելով զեդեալ վճարումն ․ զսբ հաղորդութի , որ է խորհուրդ սիրոյ , և հնոց սիրելութե , բորբոքեցելով սիրով , և վառեցելով սիրելութբ ընդունի քահանայն մատակարարօղն , և պաշտօնեայն խորհրդոց , պատուով մատակարարէ զնս պարտաւորապէս ընդունողաց ։ Ջերմեռանդ ընդունօղն , մերձենայ հանդերձ տրամադրութբ , և սիրով ։ Ջերմեռանդ քրիստոնեայն , սիրէ զաղօթս , սիրէ զաղաչանս , և հառաչէ պաղատանաց ։ Ուստի բորբոքեցելովք աղօթիւք , յաճախիւք աղաչանօք , և խոնարհիւք պաղատանօք , վերացուցանէ զմիտն իւր առ ած , մատուցանելով զխոնարհս աղօթս , հայցելով զիրս վայելչաւորս , խնդրելով զփրկութի իւր , և սիրելով զսիրօղն զած ։ Ջերմեռանդ քրիստոնեայն 'ի միտ ածելով զանցեալ կեանն , զզղջումն արարեցեալն , զցաւն , և զդարձումն իւր 'ի մեղաց վերանորոգէ ։ Ջերմեռանդ քրիստոնեայն , աղաչանօք մերձենալով առ ած իւր ամենասիրելին , ելուզանէ զներգործութիս առաքինութեց , հաւատոյ , յուսոյ , և սիրոյ ․ յուսադրութե , և խոնարհութե , երկիւղի , և սիրոյ ։

4. Ջերմեռանդութին է եռանդ բարւոյ կամի , զոր միտն ոչ կարելով արգելուլ , յայտնէ ոմամբք

տուցիւք նշանօք ։ Արդուրեմն սաստիկ եռանդն կամին, որով մարդն ՚ի սիրոջն այ ներքսապէս հալի, և զօրաթափի, է ջերմեռանդութի ։ Եռանդս այս սիրոյ վասն սաստկութե իւրոյ ոչ կարելով արգելանիլ, արձակի ՚ի դուրս, և ՚ի հոգևորս կրթութիս վասն սիրոյն այ ՚ի կիրարկանելիս յայտնիւք նշանեօք երևի ։ Ջերմեռանդութին ցուցանէ զքաջութի մարդոյ ՚ի յառաջադիմութիս ։ Ուստի ջերմեռանդն, և բորբոքելաբար սիրողն ՚ի փոքրագոյնս առաջադիմութիս է քաջագոյն, քան զանջերմեռանդն ՚ի մեծագոյնս ։ Աստի է թէ որն Պեռնարտոս ասէ ։ Լաւագոյն է գտանել ջերմեռանդ ՚ի փոքրագոյնս, քան զանջերմեռանդ ՚ի մեծագոյնս առաջադիմութիս ։ ՚Ի յընթերցուածոջ ։ Ջերմեռանդութին խայթէ, զխօթութի բացահերքէ, և զջերմեռանդն մխիթարէ ։ Վասնզի զղջմամբ, և ապաշաւութե խայթէ, և բացահերքէ զմեղս, և ՚ի ՚ի ձեռն շնորհի մխիթարէ, և ուրախացուցանէ զմիտ ։ Քանզի բորբոքեցեալ սէրն, առնէ ՚ի զղջմանէ մեղաց զալել զվատթար կեանն, և բանալ զբերանն առ ՚ի խոստովանիլ զյանցանս, և ջնջելով զմեղս, լնու զմիտ ուրախութե ։ Ուր է ոգի ջերմեռանդութե, անդ է դադարումն վասն ներդրդման ։ Վասնզի բորբոքեցեալ, և վառեցեալ սէրն սրտի, փախուցանէ զվատթարս ներդրդեցմունս, և զհեղինակն վատթարի ներդրդեցման, զջանացողն սերմանել ՚ի մեզ զչարիս ։ Ուստի ասէ սրբն Գրիգորիոս ։ Եթէ առ չօշափէ զմեզ ՚ի խորոց սրտի ոգին ջերմեռանդութեան, ամ դողումն վատթարի ներդրդեցման պապանձի ։

5. Ճշմարիտ, և անկեղծ ջերմեռանդութին, շնորհէ զբաղումն բարիս ջերմեռանդի ։ Սա փախուցանէ զդատարկաբանութի, և զդատարկ կեանն ։ Քանզի ջերմեռանդն սիրէ զկրթութիս, և զգործողութիս ։ Ուստի դարձն, և զզուելի ՚ի դատարկութէ, և ՚ի դատարկէ կենէ ։ Ջերմեռանդութին լցուցանէ զմիտ խոկմամբ, և ափշեցմամբ, և նկատեցմամբ ամենաբարեաց իրաց ։ Ուստի միտն ջերմեռանդի է դատարկ ՚ի մեղանչականաց, ՚ի յանիրաւաց, ՚ի յունայնից, և ՚ի յանօգտից մտածմանց ։ Ջերմեռանդութին բորբոքէ զբարիս խղճս, և զբարիս փափագս ։ Ուստի չարք փափագք, և վատթարք խղճք կարի հեռիք են ՚ի ջերմեռանդէ, և ջերմեռանդութե տոկեցելոյ ։ Ջերմեռանդութին բորբոքէ ՚ի սրտի զսէր, և վառէ զսիրելութիւն դէպ ՚ի յԱստուած, և դէպ ՚ի յընկերն, դէպ ՚ի յամ սիրելին ՚ի վեր քան զամ ինչ, դէպ ՚ի յընկերս սիրելիս իբրև զմեզ ։ Ուստի ՚ի սրտի ջերմեռանդի, ոչ է ատելութի, ոչ բաղձան վրէժխնդրութե, ոչ նախանձ, և ոչ փափագ վնասելոյ ընկերի ։ Ջերմեռանդութին ՚ի սրտի ջերմեռանդի զարթուցանէ զսէր առաքինուեց, զատելութի մոլութեց, զզղջումն, և զցաւ ՚ի վերայ մեղաց, զարարչագործ կամեցումն դարձման, զսէրն բարւոյ, և զատեցումն չարի. և զսէրն այ ։ Ուստի ՚ի սրտի ջերմեռանդի ՚ի ձեռն զղջման, և սիրոյ է ջնջումն մեղաց, և մաքրումն հոգւոյ ։ Ջերմեռանդութին առնէ զսիրտ մարդոյ տաճար հոգւոյն սրբոյ, բնակարան ամենասրբոյ երրորդութե, և առագաստ երկնային փեսայի ։ Ուստի ՚ի սրտի ջերմեռանդի, է Հոգին սբ, Ամենասուրբ երրորդութին, և երկնային փեսայն ։

6. Ջերմեռանդութին շարժէ զջերմեռանդն, ոչ միայն առ ներքինս կրթութիս ջերմեռանդութե. այլ նաև առ արտաքինս, որք լինին զգայութեք, և անդամօք, բանիւք, և գործովք. քանզի է հոգևոր բոց. կարի յոյժ վառեցեալ. և արարեցեալ է մեծ հրդեհումն. ուստի ոչ մնայ ՚ի միայնս ներքինս կրթութիս ջերմեռանդութե, այլ արձակի ՚ի դուրս առ արտաքինս ։

Ուստի

Ուստի ջերմեռանդն առելով զբանս անիրաւս, մեղանչականս, ունայնս և անօգուտս, որք ոչ են կրթութիւնք ջերմեռանդութեան, այլ անօրէնութեան, կամ ունայնութեան, արտաքերէ զբանս ն՟րա, օգտակարս, և շահաւէտս, որք են կրթութիւնք ջերմեռանդութեան, ուսուցանելով զադէտն, լուսաւորելով զկոյրն, խրատելով զմեղանչօղն, յորդորելով զհաւատացեալս առ 'ի գրկել զառաքինութիւս, և առ 'ի փախչել 'ի մոլութեց, առ սէր, և առ կրթութի բարեգործութեց, և առ ատեցում, և առ դարշեցում չարագործութեանց, մխիթարելով զտառապեցեալն, գովելով զառաքինին, մատուցանելով ա՟յ զաղօթս, շնորհակալ լինելով զնմանէ վասն ընդունեցելոց բարերարութեց, հայցելով զիւրս խնդրելիս, օրհնելով, գովելով, և մեծացուցանելով զամենասուրբ անունն ա՟յ, և քարոզելով զա՟ծային բանս ։ Եւ առելով զբամբասանս, զզազրախօսութիւս, և զերգս, զունայնս, և զանօգուտս խօսակցութիւս, որք ոչ են կրթութիւնք ջերմեռանդութեան, այլ անօրէնութե, կամ ունայնութեան, կարկառէ զականջս բանից օգտակարաց, որք են կրթութիւնք ջերմեռանդութեան, ունկնդնելով ա՟ծային բանից, գովասանաց ա՟յ, և հոգևորաց խօսակցութեց ։

7. Ջերմեռանդութիւն, որ է հոգևոր սէր, վառեցեալ 'ի հնոցի սրտի հրով սիրոյ, առ 'ի գործել զհոգևորս կրթութիւս 'ի յօգուտ ընկերի, և վասն փառացն ա՟յ, որպէս ուժգին արձակի առ հոգևորս կրթութիս, որք լինին 'ի ձեռն գործոց. այսպէս առէ զա՟մ չարս գործս ։ Ուստի ջերմեռանդն դարշելով, և հեռանալով յա՟մից չարագործութեց, և 'ի դատարկութե, որ է մայր, և սկիզբն մոլութեց, և յա՟մից մեղաց, ընդդէմ պատուիրանացն ա՟յ, և եկեղեցւոյ, և 'ի համայնից եղեռնագործութեց, որք ոչ են կրթութիւնք ջերմեռանդութեան, այլ ներդոր֊ծութիւնք անիրաւութե, տայ զիւր ինքն գործոց, որովք սանձահարին անդամք, և արգելանին մեղք. գործոց, յորոց է շահաւէտութիւն ընկերի. գործոց, յորոց է պատիւ ա՟յ. գործոց, յորոց են հոգևորք փարթամութիւնք, և արդիւնք առ ա՟ծ վասն յաւիտենականի կենի. և գործոց, յորոց է գանձում 'ի յերկինս, այսինքն, տայ զիւր ինքն գործոց հնազանդութե, և պահպանման պատուիրանաց. գործոց արդիւնաւորաց, և ա՟յ հաճոյից, և հաճոյապատունից. գործոց ողորմածութե, և ցաւակցութե. գործոց ա՟ծպաշտութե, երկրպագութե, ընծայման, և ա՟ծային պաշտօնատուրութե. և գործոց վայելչաւորի մատակարարութե, կամ պարտաւորի ընկալման խորհրդոց, որք են կրթութիւնք ջերմեռանդութե. սանձելով զմարմինն երկիւղիւն ա՟յ, և ծոմապահութեք, մեռուցանելով զանդամս, սանձահարելով զանկարգս շարժմունս նոցա, տալով զողորմութիս աղքատաց, և տնանկաց, ազատելով 'ի թշուառութեց, զարժանաւորս ցաւակցութե, պարապելով գործոց ա՟ծպաշտութե, մօտաւոր լինելով ա՟ծային պաշտօնատարութե, եթէ է պաշտօնեայ խորհրդոց, մատակարարելով զխորհուրդս. եթէ է ենթակայ խորհրդոց, ընդունելով, և առնլով զխորհուրդս ։

8. 'Ի ջերմեռանդութե են բազմազանք առաքինութիւնք, այսինքն, հաւատ, յոյս և սէր. խոհեմութի, արդարութի, արիութի, և բարեխառնութի. խոնարհութի, առատաձեռնութի, ա՟ծպաշտութի, ողորմածութի. հեզութի, ողջախոհութի, պահեցողութի, զգաստութի, ուշադրութի, երկիւղ ա՟յ, և յուսադրութի 'ի նա ։ 'Ի ջերմեռանդութե է հաւատ. քանզի ջերմեռանդն խոկայ զխորհուրդս հաւատալիս ։ 'Ի ջերմեռանդութե է յոյս. վասնզի ջերմեռանդն մտածելով զողորմածութիւն ա՟յ, յենու օգնութե նորա ։

'Ի

'Ի ջերմեռանդութեան է սէր · քանզի ջերմեռանդն վառեցեալ բորբոքեցելով սիրով, սիրէ զած, և զընկերն ։ 'Ի ջերմեռանդութեան է խոհեմութի · վասնզի ջերմեռանդն թողու զանկարգս աշխատանս, և շրջի առաջնորդութբ բանի ։ 'Ի ջերմեռանդութեան է արդարութի · քանզի ջերմեռանդն հատուցանէ այ զպատիւ, մեծաւորի զհնազանդութի, և ընկերի զգործ ողորմածութե ։ 'Ի ջերմեռանդութե է արիութի · վզի ջերմեռանդն յաղթէ, և յաղթահարէ զդժուարութիս արգելօղս զկրթութիս ջերմեռանդութե ։ 'Ի ջերմեռանդութե է բարեխառնութի · քանզի ջերմեռանդն պատժէ զմարմինն, և մեռուցանէ զանդամս ։ 'Ի ջերմեռանդութեան է խոնարհութիւն · վզի ջերմեռանդն մոռանելով զմեծութի ածայնոյ մեծվայելչութե, և զդուզնաքէութի իւր, ձևակերպէ զիւրենէ ինքենէ զուղիղ համարումն ։ 'Ի ջերմեռանդութե է առատաձեռնութի · քանզի ջերմեռանդն տայ զժամանակաւորս բարիս, զի հաւաքիցէ զհոգևորս ։ 'Ի ջերմեռանդութե է ածպաշտութի · վզի ջերմեռանդն պարապի գործոց ածպաշտութեան ։ 'Ի ջերմեռանդութեան է ողորմածութի · քանզի ջերմեռանդն ողորմի ։ 'Ի ջերմեռանդութեան է հեզութի · վասնզի ջերմեռանդն է համբերող ։ 'Ի ջերմեռանդութեան է ողջախոհութի · քանզի ջերմեռանդն պատժէ զմարմինն ։ 'Ի ջերմեռանդութե է պահեցողութիւն · վզի ջերմեռանդն է միջավար 'ի կերակրոջ, և 'ի ըմպելւոջ · ուստի 'ի նմա է ևս զգաստութի ։ 'Ի ջերմեռանդութե է ուշադրութի · քանզի ջերմեռանդն է լի սիրով, երկիւղած այ · և յուսադրող 'ի նա ։

## ԳԼՈՒԽ ։ ԼԳ.

### Յաղագս օրինի ։

1. Օրէնն է կանոն մտացական, և պարտաւորող, նպաստացող զպատժեցումն օրինազանցի, և խոստացող զվարձատրութի պահողի, առաջադրող զկանոն, ըստ որում է գործելի ։ Օրէնն է կանոն · քանզի է լոյս ցուցանօղ զայդ, որ է առնելի, և զայդ յորմէ է փախչելի ։ Հրամայէ, զի գործիցեմք զբարի, և պատուիրէ, զի հեռանայցեմք 'ի չարէ ։ Հրամայէ զբարին, և արգելու զչարն ։ Օրէնն է մտացական · վզի միշտ գործելի է բարի, այլ հեռանալի 'ի չարէ ։ Օրէնն պարտաւորէ · քանզի այնոքիկ, որոց դնի օրէն, և որք են հպատակք ենթարկեցեալք օրինի, պարտաւորին պահել զօրէնն, և զպատուէրս նր ։ դնի, զի պահպանիցի, և առաջադրի պատուիրան, զի կատարիցի ։ Որպէս օրինադիրն կարէ հրամայել, ունեցօղն զհեղինակութի հրամայելոյ · այսպէս հպատակք պարտաւորին հնազանդիլ ։ Սպառնի պատիժ, զի ենթարկեցեալք կատարիցեն ։ Օրինադիրն պատժէ զօրինազանցն · քանզի օրինազանցն վզ անհնազանդութե, և անարգանաց արժանաւոր լինի պատժոյ ։ Օրէնն խոստանայ զվարձատրութի, զի ենթարկեցեալք յօժարիցին առ կատարումն ։ Քանզի որպէս անհնազանդն, և օրինազանցն արժանաւոր լինի պատժոյ, և տուժանաց · այսպէս հնազանդն, և պահօղն արգիւնաւորի զվարձ, և զվարձատրութի ։ Օրէնն առաջադրէ զկանոն, զի մի թէքիցիմք 'ի յուղղոյ ճանապարհէ, մեզ առաջադրեցելոյ, այլ 'ի նմա շրջիցիմք, գործելով ըստ օրինի, որ առնեցեալ է մեզ ։

2. Մարդն

2. Մարդն է ընդունակ պահպանման պատուիրանաց օրինի. քանզի է բանական, և ունի զանձնիշխան կամ, և բոլորովին է ենթակայ առեղծողի իւրոյ, գոլով ամենևին կախեալ 'ի նմանէ : Ած առեղծօղն մարդոյ, և կերտիչն նր 'ի յոչընչէ, ունի զամենամեծ հեղինակութի, և զծայրագունեղ իշխանութի 'ի մարդն: Մարդն առեղծուածն այ, արտադրեցեալն 'ի յոչնչէ, ունի զամենամեծ ենթարկեցութիւն նմա: Ուստի ած է վերնագունեղ օրինադիր: Մարդն կարի յոյժ ենթարկեցեալ: Մարդն է բանական. ուստի կարէ ճանաչել զօրինադիրն իւր, զեդեալ օրէնն, և զպարտաւորութի իւր: Մարդն է պճնեցեալ անձնիշխանութբ. ուստի կարէ ազատաբար ընտրել զկատարումն օրինի, և զհնազանդութի իւրում օրինադրի: Որպէս կարէ ընտրել զկատարումն, և զհնազանդութի, այսպէս կարէ ոչ կամիլ կատարել, և ոչ կամիլ հնազանդիլ: Ուստի մարդն է ընդունակ արդեան, և պատժապարտութե: Քանզի եթէ ընտրէ զկատարումն, և կատարէ, և հնազանդի, ունի զարդիւն. իսկ եթէ ոչ կամի կատարել, և ոչ կամի հնազանդիլ, ունի զպարտաւորութի: 'Ի ձեռն արդեան, է արժանի վարձու, 'ի ձեռն պարտաւորութե է արժանի պատժոյ: Այ վերնագունեղի տեառն պատկանի կառավարել, և կարգադրել. մարդոյ ամենևին 'ի նմանէ կախեցելոյ, կառավարիլ, և կարգաւորիլ: Այ Վերնագունեղի օրինադրի պատկանի դնել զօրէն. մարդոյ կարի յոյժ ենթարկեցելոյ, պատկանի զեդեալ օրէնն կատարել: Այ ծայրագունեղի կայսեր պատկանի հրամայել, և պատուիրել. մարդոյ պատկանի հնազանդիլ:

3. Ած իմաստնագունեղ օրինադիրն, է ամենաբարեգունեղ, արդարագունեղ, և ողորմածագունեղ: Ած է իմաստնագունեղ օրինադիր. քանզի օրէնն նր է ամենամեծ լոյս, է ճրագ վառեալ, լուսաւորօղ զմիտս: Օրէնն այ առաջադրէ մեզ զիմաստնագունեղս պատուիրանս, և զպատուէրս նորա, և ծանուցանէ մեզ զամենայն կամս նր. ցուցանէ զճանապարհն հոգևորի կենի. ուսուցանէ զճշմարիտս, և զգովելիս առաքինութիս. ածէ առ ծանօթութիւն ադեղութե մեղաց. բանայ զաչս մտաց, զի տեսանիցեն զպատուականութի շնորհի. ցուցանէ մեզ զգործս բարիս, և զհաճոյս այ. յայտնէ մեզ զկերպն ստանալոյ զշնորհս, և հասանելոյ փրկութե, զկերպն հեռանալոյ 'ի մեղաց, և մերձենալոյ շնորհի. առնէ երևելի զլայն, և զարձակ ճանապարհն. զմարդն առ կորուստ ածօղն. և ևս զնեղ, և զանձուկն, զմարդն առ փրկութի ածօղն. վերջապէս մատացոյց առնէ զշաւիղն մշտնջենաւորի երջանկութե, և արքայութե երկնից. և յաւիտենականի երանութե, և անապական փառաց: Ած է Արդարագունեղ օրինադիր. վասնզի դնէ զօրէն հրամայօղ զարդարուլի, և հրամայէ զպատուէրս 'ի յարդարութե պահանջեցեալս. հրամայէ զկարելիս, և զքաղցրագունեղս: Քանզի արդարութին է օգտակարագունեղ ամից. վասնզի 'ի ձեռն արդարութե է խաղաղութի, և հանդարտութի, և հանգստութի: Ած է ամենաբարեգունեղ օրինադիր. քանզի դնէ զօրէն, առբերօղ մեզ զամս յարմարս բարիս, այսինքն, զբարին առաքինութե, զբարին շնորհի, և զբարին փառաց: Ած է ողորմածագունեղ օրինադիր. վզի ոչ միայն հրամայէ զօգտակարագունեղս, այլ նաև օգնէ մեզ, և տայ զօգնութի առ 'ի կատարել զօրէնն:

4. Է օրէն, որ ասացեալ է բնական, ներադրեալ 'ի միտ մարդոյ 'ի հեղինակէ բնութե, ցուցանօղ մարդոյ զբարին առնելին, և զչարն փախչելին. վասնզի նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց տեառն: Քանզի մարդն արարեցեալ առ պատկեր, և առ նմանութի այ,

ունի

տանի զմիտ , և զլոյս մտի ։ Զօ֊
րութբ այսր լուսոյ մարդն որպէս
կարէ ճանաչել զիւր բնականս , և
ստանալ զգիտութիւս , և զարու֊
եստս , և կարէ զաներևոյթս այ ,
և զմշտնջենաւոր զօրութի , և ած֊
ուի նորա , արարածովքս իմացեալ
տեսանել · այսպէս նաև կարէ ճա֊
նաչել զբարոյականս իւր , բնակա֊
նաւ ճանաչմամբ , այսինքն , զբա֊
րին , և զչարն , զառաքինութիւս ,
և զմոլութիւս , այսինքն , զխոհե֊
մութի , զարդարութի , զարիութի ,
և զբարեխառնութի , ըստ որում
են ստացեալք առաքինութիւք · և
զանմտութի , զանիրաւութի , զփո֊
քրոգութի , և զանբարեխառնու֊
թի ։ Այս բնական լոյս , որով ճա֊
նաչին բարոյականք իւր բնականաւ
ճանաչմամբ , ասի բնական օրէն ,
յայնմանէ թէ տնկեցեալ իցէ մեզ
'ի բնութէ ։ Այս բնական օրէնս
ցուցանէ , զբարին առնելն , և
զչարն փախչելն , զոր միանգամ
ոչ կամիմք թէ առնիցի մեզ , ոչ
առնել այլոց · և զոր միանգամ կա֊
միմք , թէ առնիցի մեզ , առնել
այլոց ։ Օրէնս այս ցուցանէ , թէ
առաքինութիւք են գրկելիք , բայց
'ի մոլութեց է հեռանալի · թէ ար֊
դարութին է պահելի , յանիրաւ֊
ութին է դարշելի · թէ խոհեմու֊
թին է սիրելի , անմտութին ատե֊
լի ։ Եւ այսպէս խօսելի է զնմանաց ։

5 · Անկարգք ախտք խաւարե֊
ցուցանեն զօրէնն ։ Ուստի մարդիկք
յօժարեցեալք առ մոլութիւնս ,
եղեն տնկեցեալք անկարգից ախ֊
տից , և խաւարեցուցին զօրէնն 'ի
Հեղինակէ բնութե 'ի միտս մար֊
դոյ եդեալն ։ Ուստի եկն ածային
գրական օրէնն , զի ցրուիցէր զխա֊
ւարս , պատճառեցեալս 'ի յանկար֊
գից ախտից ։ Նախ եկն հին օրէնն ,
յետոյ աւետարանականն ։ Հին բա֊
րոյականն միշտ է պահելի ։ Իսկ
արարողակարգականն , և դատա֊
ղականն արդէն է խափանեցեալ ։
Արարողակարգականն նաև է մա֊
հաբեր · քանզի եկն այն , զոր նկա֊
րագրէր ։ Օրէնն այ է ամբիծ ,
դարձուցանօղ զհոգիս ։ Վկայու֊
թեան հաւատարիմ , և իմաստուն
առնէ զտղայս ։ Արդարութիւնք
տեառն ուղիղք են , և ուրախ առ֊
նեն զսիրտս ։ Պատուիրանք տեառն
լոյսք են , և լոյս տան աչաց ։ Դա֊
տաստան Տն ցանկալի է քան զոս֊
կի , և քան զականս պատուականս
բազումս , և քաղցրագոյն է քան
զմեղու խորիսխ ։ Բանն այ է լոյս
ոտից մերոց , և ճրագ շաւղաց մե֊
րոց , օրէնն ածային է բղխումն ճա֊
ռագայթի ամենակարողին այ , է
ճաճանչ լուսոյ յաւիտենականի , է
հայելի թարց արատոյ , և է պատ֊
կեր բարութե ամենաբարձրելոյն ։
Օրէնն այ ուսուցանէ զգաս֊
տութի , զխոհեմութի , զարդարու֊
թի , և զառաքինութի , քան զորս
օգտակարագոյն ոչինչ է 'ի կենի
մարդկանց ։ Սա ուսուցանէ զմի
Ած ամենապատուելի , և զնր անուն
նորա օրհնաբանելի ։ Հրամայէ
զօրն պահելի սրբութբ , յորում ած
է պաշտելի ։ Կամի զի պատուիցի
հայր , և որ ծնաւ զմեզ մայր ։ Ար֊
գելու զմարդասպանութին , զշնու֊
թին , զգողութիւն , և ընդդէմ ըն֊
կերի զսուտ վկայութի ։ Հրամայէ ,
զի մի մարդն ցանկայցէ կնոջ , կամ
որումումեք իրի այլոյ , պահելով
զամ արդարութի ։

6 · Ած 'ի հնոջ կտակարանի
ետ մարդոյ զօրէն 'ի ձեռն մօսէսի
մարգարէի · իսկ 'ի նորոջ կտակա֊
րանի քսիւ , որդւով իւրով միած֊
նով ։ Բազում մասամբք , և բա֊
զում օրինակօք կանխաւ խօսեցաւ
ած ընդ հարս մերս մարգարէիւք ։
'Ի վաղճան աւուրց այսոցիկ խօսե֊
ցաւ ընդ մեզ որդւովն · զոր ետ
ժառանգ ամի , որով և զյաւիտե֊
անս արար ։ Յս Քս միածին որ֊
դին այ , որ է 'ի ծոց հօր , և որ
վասն մեր մարդացաւ , ոչ ելոյծ
զօրէնն , այլ ելից ։ Կամեցաւ զի
արդարութի մեր աւելանայցէ
քան զգպրացն , և փարիսեցւոցն ։
Ոչ միայն արգելեաց զմարդասպա֊
նութին , այլ նաև զատելութին ,
զանիրաւ վրէժխնդրութին , զա֊

նի֊

նիրաւ բարկութեան, և զզրպարտութեան ։ Եւ ոչ միայն դատապարտեաց զչնութիւն, այլ նաև զվավաշոտ հայեցուածս, և զաւելորդս չնութեան ։ Եւ ոչ միայն արգելեաց զսուտ երդումն, այլ նաև զերդնուլն Թարց դատաստանի ։ Եւ ոչ միայն պատուիրեաց զսէրն ընկերի, այլ նաև թշնամւոյ ։ Հրամայեաց մտանել 'ի նեղ, և 'ի յանձուկ ճանապարհն, որ տանի առ կեանս ։ Ազդ արար զգուշանալ 'ի լայն, և 'ի յարձակ ճանապարհէ, որ տանի առ կորուստ ։ Ուսոյց զխոնարհութիւն, զհամբերութիւն, զհեզութիւն, և զուրացումն իւրոյ ինքեան ։ Կացոյց զնոր օրէնն, զհրաման իւր, և զնշանն քրիստոնէի 'ի սիրոջ ։ Սկսեալ առնել, և ուսուցանել, և տալ զօրինակ խոնարհութեան իւրոյ ։ Օրէնն Քրիստոսի է ամենասուրբ, և գերազանցագունեղ ։ Լուծն Քրիստոսի է քաղցր, և բեռն նորա փոքրոգի ։ Քաղցր է կատարումն օրինի · քանզի է օրէն կատարելոյ սիրոյ ։

7· Օրէնն Քրիստոսի է ազնուագունեղ օրէն · վասնզի է օրէն սիրոյ, օրէն խաղաղութեան, օրէն միաւորութեան, օրէն Թողութեան, օրէն ողորմածութեան, օրէն շնորհի, օրէն խորհրդոց շարաբերողաց զշնորհ, օրէն ոգւով պաշտողաց, օրէն վառեցելոյ սիրոյ, օրէն հոգևորի բորբոքեցման, և օրէն կատարելութեան, Օրէնն Քրիստոսի է օրէն սիրոյ · վասնզի կայանայ 'ի սիրոջ, և 'ի սիրելութեան ։ Օրէնն Քրիստոսի է օրէն խաղաղութեան · քանզի գործէ զխաղաղութիւն խղճի մտաց, զխաղաղութիւն ընդ Աստուծոյ, և զխաղաղութիւն ընդ մարդկանց ։ Օրէնն Քրիստոսի է օրէն միաւորութեան · վասնզի պատճառէ զսէրն Աստուծոյ, և ընկերի · և սիրովն Աստուծոյ միաւորէ զմեզ ընդ Աստուծոյ, և սիրովն ընկերի, միաւորէ զմեզ ընդ ընկերաց ։ Օրէնն Քրիստոսի է օրէն Թողութեան · վասնզի ածէ զմեզ առ ներումն ընկերի, զանիրաւութիւնս մեզ ներբերողի ։ Օրէնն Քրիստոսի է օրէն ողորմածութեան · քանզի պատուիրէ գործս ողորմութեան, և ցաւակցութեան ։ Օրէնն Քրիստոսի է օրէն շնորհի · վասնզի առնէ զմեզ հասանիլ սրբացուցչի շնորհի 'ի ձեռն սիրոյ · 'ի ձեռն ներգործութեան սրբոյ, 'ի ձեռն զղջման, և 'ի ձեռն ապաշխարութեան ։ Օրէնն Քրիստոսի է օրէն խորհրդոց շարաբերողաց զշնորհ · քանզի Քրիստոս կացոյց զխորհուրդս շարաբերօղս զշնորհ ։ Օրէնն Քրիստոսի է օրէն ոգւով պաշտողաց · վասնզի քրիստոնեայք մանաւանդ ոգւով պաշտեն զԱստուած ։ Օրէն Քրիստոսի է օրէն վառեցելոյ սիրոյ · քանզի գործէ 'ի սրտի զվառեցումն սիրոյ ։ Օրէնն Քրիստոսի է օրէնն հոգևորի բորբոքեցման · վասնզի վառէ 'ի սրտի զսուրբ, և զմաքուր սէր ։ Օրէնն Քրիստոսի է օրէն կատարելութեան · քանզի հրամայելով զսէր թշնամւոյ, առնէ զմեզ զոլ կատարեալս, որպէս Հայրն մեր երկնաւոր կատարեալ է ։

8· Օրէնն Աստուծոյ է սէր ։ Օրէնն տուեցեալ է, զի խնդրիցիւր շնորհն ։ Շնորհն տուեցեալ է, զի կատարիցիւր օրէնն ։ Արարեցեալք են օրէնք, զի երկիւղիւ նոցա արգելանիցի մարդկային լրբութիւն, և ապահով լինիցի անմեղութիւն 'ի մէջ ամբարշտաց, և 'ի յինքեանս ամբարիշտս զարհուրելեաւ տանջանաւ սանձահարիցի կարողութիւն մնասելոյ ։ Է օրէն, որ եդեալ է 'ի յեկեղեցւոյ, որ է սիւն, և հաստատութիւն ճշմարտութեան ։ Եւ օրէնս այս է կատարելի · քանզի ասէ տէրն ։ (Որ ձեզ լսէ, ինձ լսէ · և որ զձեզ անարգէ, զիս անարգէ · և որ զիս անարգէ, զառաքիչն իմ անարգէ ։) Ղուկաս ։ 10· Թիւ· 16· օրէնն աւետարանական, է օրէն պտղաբեր ։ Այսպէս նախախօսեցաւ զայսմանէ երեմիայ մարգարէն ասելով ։ (Ահաւասիկ աւուրք գան ասէ տէր · և ուխտեցից տանդ Իսրայէլի, և տանդ յուդայ ուխտ նոր ։ Ոչ ըստ ուխտին, զոր ուխտեցի ընդ հարս նոցա, յաւուր որում առի 'ի ձեռանէ նոցա, հանել զնոսա յերկրէն եգիպտացւոց · զի նոքա ոչ կացին յուխտին իմում, և ես անփոյթ արարի

զնչէ, ասէ տր̃ ։ Այլ այս է ուխտ, զոր ուխտեցից տանդ Իղի յետ աւուրցն այնոցիկ ասէ տր̃ ․ տաց զօրէնս իմ ՚ի միտս նց̃, և ՚ի սիրտս նոցա գրեցից զնոսա ․ և եղէց նց̃ յա̃ծ ․ և նոքա եղիցին ինձ ժողովուրդ ։ Եւ մի ևս ուսուցանիցեն իւրաքանչիւր զընկեր իւր ․ իւրաքանչիւր զեղբայր իւր ասել թէ ծանիր զտր̃ ․ զի ա̃մքն ծանիցեն զիս ՚ի փոքրականց նոցա մինչ ՚ի մեծամեծս, ասէ տր̃, զի քաւիչ եղէց անիրաւութեանց նոցա ․ և զմեղս նց̃ ոչ ևս յիշեցից ։ ) Գլ․ 31 ․ Թիւ․ 31․ Կատարողի զօրէն է արդիւն ․ քանզի կատարողն արժանի է վարձու ։ օրինազանցի է պատիժ ․ վ̃զի օրինազանցն արժանի է պատժոյ ։ Վարձն կատարողի, է կեանն յաւիտենական ։ Պատիժն օրինազանցի, է մահն մշտնջենաւոր ։

## ԳԼՈՒԽ․ ԼԴ․

### Յաղագս պատուիրանաց ։

1․ ԻՅօրինի են պատուիրանք ։ Ուստի յետ ընձեռման զօրինէ, ընձեռելի է զպատուիրանաց ։ Պատուիրանն է հրաման, որով ոմն ունելով զիրաւունս, զհեղինակութի̃, և զիշխանութի̃ դէպ ՚ի յոմն, պարտաւորէ զնա առ ՚ի գործել զիր ինչ, կամ առ ՚ի հրաժարիլ յումեքէ իրէ ։ ՚Ի հրամայողի խնդրին իրաւունք, հեղինակութի̃, և իշխանութի̃ ․ վասնզի հաւասարն ոչ կարէ պարտաւորել զհաւասարն ․ և համահետևապէս ոչ կարէ պատժել ․ և ոչ ստորինադոյնն կարէ պարտաւորել, և պատժել զվերնադոյնն ։ ՚Ի յայնմիկ, որում յումեքէ պատուիրի, խնդրի ենթարկութի̃, քանզի հնազանդեցեալն, և ենթարկեցեալն պարտաւորի հնազանդիլ ․ և գտեցեալ մեղապարտ, կարէ պատժիլ ։ ՚Ի պատուիրանի խնդրի ուղղութի̃ ․ վասնզի թարց ուղղութե̃ պատուիրանն ոչ ունի զզօրութի̃ն, մինչ է ընդդէմ պատուիրանի նորա, որոյ պատուիրանն է ուղղութի̃, և կանոն հետևելի ։ Ուստի պատուիրանն, որ ոչ ունի զուղղութի̃, և է ընդդէմ ուղղութեան, և ընդդէմ պատուիրանի, որ է նոյն ինքն ուղղութի̃ն, ոչ ունեցող զզօրութի̃, ոչ պարտաւորէ, և ոչ կարէ պատժել ։ Պատուիրանն ա̃յ է ուղղութի̃ ․ քանզի Ա̃Ծ հրամայէ ըստ իմաստութե̃ իւրոյ ․ իմաստութի̃ն ա̃յ է անհուն, և է նոյն ինքն անհուն Ա̃Ծութի̃ն ։ Ուստի պատուիրանն ա̃յ, մինչ է ուղղագունեղ, և է նոյն ինքն ուղղութի̃ն, միշտ պարտաւորէ, և համահետևապէս Աստուած, միշտ կարէ պատժել զօրինազանցն ։

2․ Ա̃Ծ ունի զիրաւունս, զհեղինակութի̃, և զիշխանութիւն ՚ի յա̃մս ․ վասնզի է վերնագունեղ տր̃, և ծայրագունեղ իշխան ընդհանրոյ ․ և ընդհանրականագունեղ կայսր ․ և համայնք մարդիկք ՚ի յա̃մում իրի կախեալք կան ՚ի նմանէ, և ՚ի գոլն, և ՚ի համապահիլն, և ՚ի շարժիլն, և ՚ի գործելն ։ Վասնզի ա̃ծ է էակ յինքենէ, անկախ յայլմէ, ստեղծօղ, համապահօղ, և արարիչ ամենեցուն, ՚ի նմանէ յա̃մում իրի կախեցելոց ։ Ուստի ա̃մ ոք պարտաւորի, և պարաւանդի պահել զպատուիրանն ա̃յ ։ Եկեղեցին քի̃ ունի զհեղինակութի̃, և զիրաւունս ՚ի յա̃մս քրիստոնեայս մկրտեցեալս ․ քանզի մարդիկք մկրտութե̃ մտանեն ՚ի յեկեղեցին, և լինին ենթարկեցեալք եկեղեցւոյ, ՚ի քս̃է տէ̃ մերմէ զիւրաւունս, և զհեղինակութի̃ ունեցողի ՚ի յիւրս ։ Ուստի պատուիրանն եկեղեցւոյ պարտաւորէ զհամայնս մկրտեցեալս, և զանհնազանդս, և զյանդուգս կարէ պատժել եկեղեցականաւ պատժով ։ Ուստի համայնք մկրտեցեալք քրիստոնեայք պարաւանդին հնազանդիլ պատուիրանի եկեղեցւոյ ․ և համահետևա-

պէս

պէս անհնազանդք, և օրինազանցք են պարտաւորք, և պատժապարտք, և մեղանչեն։ Երևելի գլուխն եկեղեցւոյ է ծայրագունեղ Պապն Հռոմէական, փոխանորդն քի, և աջորդն սրբոյն պետրոսի իշխանի Առաքելոց, որում 'ի քնէ տէ տուեցեալք են փականք արքայութե երկնից, և յանձնեցեալք են ոչխարք, և գառինք նորա, զի արածիցէր։ Ուստի և ծայրագունեղ պապն հռոմէական ունի զիրաւունս 'ի յամս մկրտեցեալս քրիստոնեայս, և պատուէրան նորա պարտաւորէ զհամայնս. և համահետևապէս համայնքն պարտաւանդին հնազանդիլ պատուէրանի նորա։

3. Նաև ինքնագլուխք իշխանք ունին զքաղաքական իրաւունս 'ի յենթարկեցեալս իւրս, և կարեն պատուիրօք իւրովք պարտաւորել զնս, և զօրինազանցս պատժել։ Քանզի ասէ Առաքեալն։ (Ամ անձն որ ընդ իշխանութե է, 'ի հնազանդութե կացցէ. քանզի ոչ ուստեք է իշխանութի. եթէ ոչ յայ։ և որք ենն, յայ կարգեալ են։ Այսուհետև որ հակառակ կայ իշխանութեն, այ հրամանին հակառակ կայ. և որք հակառակ կան, անձանց դատաստանս ընդունին։ Զի իշխանքն ոչ են յերկիւղ բարեաց գործոց, այլ չարաց. կամիս չերկնչիլ յիշխանութենէ, անտի զբարիս գործեա. և ընկալցիս գովութիւն 'ի նմանէ։ Զի այ պաշտօնեայ է քեզ 'ի բարիս. ապա եթէ զչար գործիցես, երկիր. զի ոչ եթէ վայրապար ածեալ է զսուսեր ընդ մէջ. զի այ սպասաւոր է վրէժ խնդիր 'ի բարկութի, այնմ, որ զչար գործիցէ։ Վասն որոյ հարկ է հնազանդ լինել, ոչ միայն վասն բարկութեն, այլ և վասն մտացն խղճի։) Առ Հռոմայեցիս։ 13. Թիւ. 1. Որ ասացեալ է, այսպէս համոզի։ Իշխանքն պատկանին ունիլ զհոգաբարձութի զհասարակութե, և հոգալ զհասարակաց բարին, և պաշտպանել զքաղաքական կեանն, զի սանձիցէ զչարագործս, և դնիցէ 'ի յապահովութե զբարիս, և զառաքինիս։ Իշխանք զի կատարիցեն զասացեալս, կարօտին դնել զպատուէրանս, և պատժել զօրինազանցս։ Ուստի նաև ինքնագլուխք իշխանք ուղղովք պատուէրանօք իւրովք, կարեն պարտաւորել զենթարկեցեալս իւրս, և զօրինազանցս պատժել։ Եւ համահետևապէս ենթարկեցեալք պարտաւորին հնազանդիլ իշխանաց իւրոց։ Ուստի գրէ Առաքեալն։ (Վասն այսորիկ և հարկս հարկանէք, զի այ սպասաւորք են 'ի նոյն կանխեալք։ Արդ հատուցէք ամցուն զպարտս. որում զհարկ, զհարկն. որում զմաքս, զմաքսն. որում զերկիւղ, զերկիւղն. որում զպատիւ, զպատիւն։) Առ Հռոմայեցիս։ 13. Թիւ. 6.

4. Նաև ծնողք կարեն պատուիրել զուղիղս պատուէրանս, զաւակաց իւրոց, այսինքն, որդւոց, և դստերաց, և պատժովք 'ի յիրաւանց ինքեանց շնորհեցելովք, պատժել զկամակորս։ Քանզի ծնողքն են սկզբունք որդւոց, և դստերաց իւրոց։ Ուստի նոցա պատկանի ունիլ զուշադիր զընտանեկան հոգաբարձութիւն, և բարեպէս դարմանել զիւրայինս, և ուսուցանել նոցա զերկիւղն այ, և զբարի վարս, զի իցեն բարիք. և առաքինիք։ Ծնողք, զի հասանիցեն այնց, որք ասացեալք են, կարօտին հրամայել, և պատժել պատժօք, 'ի յիրաւունց ինքեանց շնորհեցելովք։ Եւ ոչ միայն կարեն, այլ նաև պարտաւորին. վասնզի պարտաւանդին բարեպէս վարժել զիւրայինս, միայն թէ պատուէրանք նոցա իցեն ուղիղք, և ոչ իցեն ընդդէմ պատուիրանաց մեծաւորաց, և պատիժք, 'ի նոցանէ եդեալք իցեն հայրականք, չափաւորեցեալք, միջավորք, և ըստ իրաւանց։ Եւ համահետևապէս զաւակք. այսինքն, որդիք, և դստերք պարտաւանդին հնազանդիլ ծնողաց իւրոց, և զպատուէրս նց պատուել, և պահել. Նաև վար‿

դատելոյք կարեն պատուիրել աշակերտաց իւրոց, 'ի յայնոսիկ իրս, որք նոցա պատկանին, և պատժել պատժօք ի՛քեանց թոյլտուեցելովք. քանզի պարտին վարժել զաշակերտս 'ի գիտութե՟, զոր պարտին ուսանիլ. արդ զասացեալ պաշտօնն վարդապետք ոչ կարեն կատարել թարց պատուիրանաց, և միջավարաց պատժոց: Ուստի կարեն պատուիրել, և միջավարօք պատժօք ինքեանց թոյլտուեցելովք, պատժել: Եւ համահետևապէս աշակերտք պարաւանդին հնազանդիլ վարդապետաց, 'ի յայնոսիկ իրս, յորս նոցա պատուիրել կարեն: Նաև այրն կարէ հրամայել կնոջ իւրոյ իբրև ընկերի, 'ի յայնոսիկ իրս, որք նմա պատկանին. քանզի այրն է գլուխ կնոջ: Ուստի կինն պարաւանդի հնազանդիլ առն իւրում, 'ի յայնոսիկ իրս, որք առ նա պատկանին:

5. Բոլոր ուշադրութի՟ մեր, ջանն մեր, և հոգաբարձութի՟ մեր պարտի կայանալ 'ի յայսմիկ, զի պահիցեմք զպատուիրանս ա՟յ: Երջանկութի՟ մեր է 'ի պահպանման պատուիրանացն ա՟յ: Պահօղք զպատուիրանս ա՟յ, են բարեկամք ա՟յ, որդիք ա՟յ, և ժառանգք արքայութե՟ երկնից: օրհնութի՟ն ա՟յ, 'ի վերայ պահողաց զպատուիրանս ա՟յ: 'Ի պահպանման պատուիրանացն ա՟յ, է ապահովութի՟ խղճի մտաց, հանդարտութի՟ սրտի, ուրախութի՟, խնդութի՟, մխիթարութի՟, բերկրութի՟, և ցնծութի՟ ոգւոյ: Պատուիրանն, զոր հրամայէ մեզ տ՟րն, ոչ է 'ի վեր քան զկարն մեր, այլ է ըստ կարեաց մերոց: Բանն տեառն լիցի 'ի բերանի մերում, 'ի սրտի մերում, զի կատարիցեմք զնա: 'Ի ճանապարհի վկայութե՟ց տեառն ա՟յ մերոյ, հրճուիլ պարտիմք, ո՟պ 'ի յա՟մս փարթամութիւս: Քանզի ճշմարիտք փարթամութի՟ք, ուրախացուցանօղք զսիրտս մեր, ճշմարիտ, և անկեղծ խնդութի՟, են 'ի ճանապարհի վկայութե՟ց տեառն: Բոլոր ջանն մեր գնելի է 'ի յայսմիկ, զի 'ի շաւիղս պատուիրանաց տեառն ընթանայցեմք, քանզի ոչ ինչ է լաւագոյն, քան զերկիւղն ա՟յ, և ոչ ինչ քաղցրագոյն, քան պահել զպատուիրանս ա՟յ: Այր իմաստուն սիրէ զպատուիրանս, և պահէ զարդարութիւս: 'Ի պահպանման պատուիրանաց, գօտիաւորի իբրև պարսպաւ: Այր խոհեմ հաւատայ օրինի, և օրէնն է նմա հաւատարիմ: Այս է սէրն ա՟յ, զի պահպանիցեմք զպատուիրանս ն՟ր, և պատուիրանք նորա ոչ են ծանունք: Բանք, զորս մեզ պատուիրէ տ՟ր ա՟ծ մեր, այնպէս լսելիք են, զի պահպանիցեմք, և պատմիցեմք այլոց, և խոկայցեմք գոլով 'ի տան. և ընթանալով 'ի ճանապարհի, և իբրև զնշան կապիցեմք 'ի ձեռս մեր, և գրիցեմք զնոսա 'ի շեմն, և 'ի դրունս տանց մերոց:

6 Բանք տեառն գնելիք են 'ի սիրտս, և 'ի հոգիս մերս, և կախելիք են 'ի նշան 'ի ձեռաց մերոց: Բարբառք ա՟յ թաքուցանելիք են 'ի ծոցս մերս, և խոկումն մեր պարտի լինիլ 'ի յարդարացուցմունս ն՟ր: Մտածումն մեր լիցի 'ի յօրէնս տեառն, զի 'ի յաւիտեան մի մոռանայցեմք զարդարացուցմունս նորա: Այր ուղիղ սիրէ զօրէնս տեառն, և միտն արդարոյ խոկայ զհնազանդութի՟, և խորհուրդն ն՟ր 'ի պատուիրանս ա՟յ: Այր արդար արիաբար պահէ զպատուիրանս ա՟յ իբրև զնշան 'ի ձեռին իւրում, և իբրև զյիշատակարան առաջի աչաց իւրոց, զի օրէնն տեառն միշտ իցէ 'ի բերանոջ իւրում, և խօսակցութի՟ իւր իցէ զպատուիրանացն նորա, և ա՟մ պատմեցումն իւր իցէ 'ի պատուիրանս բարձրելոյն: Այնպէս պարտիմք պահպանել, և առնել զն՟ա, զորս պատուիրեաց մեզ տ՟ր ա՟ծ մեր, զի մի հակիցիմք, ոչ դէպ 'ի յաջ, և ոչ դէպ 'ի յահեակ. այլ ընդ ճանապարհ, զոր հրամայեաց տ՟ր ա՟ծ մեր, շրջիցիմք, զի բարի լինիցի մեզ, և երկարացուցանիցին աւուրք մերք 'ի յերկրի, զոր ժառանգ եմք.

Պար-

Պարտիմք կալ պատրաստ, զի պահիցեմք զպատուիրանս այ. և հակիցեմք զմիտս մեր առ 'ի գործել զարդարացուցմունս նորա: Եթէ ունկնդրիցեմք ձայնի տեառն, և պահպանիցեմք զդաշնակցութիւնս, եղիցուք նմա 'ի սեպհական ժողովուրդ յամենայն ժողովրդոց: Ընտրեսցուք զկեանն, զի կեցցեմք: Կեանն է պահել զպատուիրանս այ, և սիրել զնա: Դիցուք առաջի աչաց մերոց զՃրագն, զի շրջիցիմք 'ի լուսոյ, զի մի ըմբռնիցեն զմեզ խաւարք անօրէնութեան: Ճրագն ճառագայթող է պատուիրան տեառն, և լոյսն լուսաւորօղն, է օրէնն նր:

7. Պահպանութիւն պատուիրանաց տեառն, է փրկութիւն հոգւոյ, քանզի որ պահէ զպատուիրանն, պահէ զհոգին իւր. բայց որ զանց առնէ զճանապարհ իւր, մահացուսցի, և ենթարկցի յաւիտենականին մահուան: Վասն այսորիկ պարտիմք երկնչել 'ի յայ, և պահել զպատուիրանս նորա: Պահպանութիւն օրինի, է կատարումն անսպականութեան, և ստացումն կենի. քանզի որ է հաստատուն 'ի պատուիրանս տեառն, ոչ բացաթողցի: Քանզի տրն ոչ վերահայի, եթէ ոչ առ աղքատիկն, և առ զղջացեալն սրտիւ, և առ երկնչօղն 'ի բանից նր: եթէ ունկնդրիցեմք ձայնի տեառն, նա եղիցի մեզ աձ. և մեք եղիցուք նմա ժողովուրդ: Ուրեմն շրջիցուք 'ի յամի ճանապարհի, զոր հրամայեաց մեզ տր, զի բարի լինիցի մեզ: Սիրեսցուք զքս, և զբան նորա պահեսցուք, զի հայրն երկնաւոր սիրիցէ զմեզ, և զի հայրն, և որդին, և հոգին սբ գայցեն առ մեզ, և առնիցեն զօթևանս առ մեզ: Առաջադրեցեալք են մեզ պատուիրանք, խոստացօղք զկեանն յաւիտենական, և սպառնացօղք զմշտնջենաւոր մահն, զի սիրիցեմք զտր աձ մեր, և շրջիցիմք 'ի ճանապարհս նորա, և պահպանիցեմք զպատուէրս նորա, և պահիցեմք զարդարացուցմունս, և զդատաստանս նորա; և կեցցեմք հոգևորաւ կենիւ: Խոկացօղն զօրէնն այ, և 'ի բոլորէ սրտէ պահօղն զպատուիրանս նորա, ստասցի զկեանս, և կալցի զխաղաղութիւն, և ոչ կրեսցէ զչարիս: Տր Աձ մեր արտածեաց զմեզ 'ի դառնութենէ սատանայի 'ի ձեռն մկրտութեան, և եդ զմեզ 'ի սբ եկեղեցւոջ իւրում, և ետ մեզ զպատուիրանս իւրս, և եցոյց մեզ զդատաստանս իւրս. զի առնօղքս զնոսա, կեցցեմք 'ի նոսա: Եթէ ունկնդրիցեմք դատաստանի տեառն, և պահիցեմք, և առնիցեմք զնոսա, պահեսցէ տր աձ մեր ընդ մեզ զդաշնակցութիւն իւր, և սիրեսցէ զմեզ, և օրհնեսցէ զմեզ:

8. Եթէ շրջիցիմք 'ի պատուիրանս տեառն և պահիցեմք, և կատարիցեմք զհրամանս նորա, տացէ մեզ զբարիս, արասցէ զմեզ գերապանծագոյնս քան զամ ազինս, որք շրջին 'ի յերկրի, տացէ զխաղաղութիւն 'ի քաղաքս մերս, բարձցէ զչարիս, կործանեսցէ զթշնամիս մեր առաջի մեր, տացէ մեզ, զօրէն նորա սիրողաց, զբազում խաղաղութիւն, և առատացուսցէ իբրև զգետ զխաղաղութիւն մեր: Հայօղն առ պատուիրանս տեառն, մի ամաչեսցէ: Քանզի երանեալ է այր, որ երկնչի 'ի տնէ, զպատուիրանս նորա նա կամի յոյժ: փառք, և մեծութիւն են 'ի տան նորա, և բաժին նորա 'ի յերկրի կեցօղաց: Որպէս օրհնութիւնքն են 'ի վերայ այնոցիկ, որք պահեն զպատուիրանս տեառն, այսպէս անէծքն 'ի վերայ նոցա, որք ոչ կամին լսել զձայն տեառն, զի պահիցեն, և կատարիցեն զպատուիրանս նորա: Քանզի եղիցին անիծեալք 'ի քաղաքի, և անիծեալք 'ի յագարակի, անիծեալ շտեմարանն նոցա, և անիծեալք մնացորդքն նոցա. անիծեալ պտուղն որովանի նոցա, և անիծեալ պտուղն երկրի նոցա. անիծեալք անդեայն եզանց նոցա, և անիծեալք հօտք ոչխարաց նոցա անիծեալք մտանօղք, և անիծեալք ելանօղք: Որք տարամերժեսցին զօրէն

տեառն,

տեառն, և զհարբեալս որդւոյն Ելի հայհոյեցին, սրտմտութե՛ տեառն հարան: Անիծեալք են, որք խոտորին 'ի պատուիրանաց տեառն, և են կարի յոյժ թշնամիք: Քանզի որ խոտորէ զականջս իւր, զի մի լուիցէ զօրէնն, աղաչանքն նորա են գարշելիք, և անիծեալ է այն, որ ոչ ունկնդրնէ բանից, զորս պատուիրեաց տր̃: Տեսեր զբարիս, որք պատրաստեցեալք են պահողաց զպատուիրանս, և զչարիս, որք պահեցեալք են օրինազանցից: Պահեա ուրեմն, զպատուիրանս, զի հասանիցես բարեաց:

## ԳԼՈՒԽ. ԼԵ.

### Յաղագս մոլութեց:

1. Մոլութիւն է այն, որ հակադրի առաքինութե, վասնզի է ներհակն առաքինութե: Քանզի որպէս ջերմութիւն, և ցրտութիւն ներհակաբար հակադրին, այսպէս և առաքինութիւն, և մոլութիւն: Մոլութիւն զունեցողն զինքն առնէ չար, և զգործ նորա վատթար, որպէս առաքինութիւն, որում ընդդիմադրի, զունեցողն առնէ բարի, և զգործ նորա բարի: Մոլութիւն առնէ մոլեկան, և զունեցողն զմոլութիւն հակէ առ չարս, և առ վատթարս արարողութիւնս: Քանզի որպէս առաքինութիւն հակէ առ բարիս, և առ ուղիղս արարողութիւնս. այսպէս մոլութիւն, որ հակադրի առաքինութե, հակէ առ չարս, և առ վատթարս արարողութիւնս: Մոլութիւն ստանի 'ի ձեռն բազմապատկութե վատթարից, և մոլեկանաց արարողութեց: Քանզի որպէս առաքինութիւն ստացական, ստանի 'ի ձեռն բազմապատկեցման ներգործութեց նմանաց բարեաց, զորս մարդն ազատաբար ելուզանէ. այսպէս մոլութիւն ստանի 'ի ձեռն բազմապատկեցման նմանաց վատթարից ներգործութեց, զորս մարդն ազատաբար ելուզանէ: Դիւրաբար մարդն 'ի ձեռն բազմապատկեցման նմանաց ներգործութեց, զորս ազատաբար ելուզանէ, ստանայ զմոլութի, քանթէ ստանայցէ զառաքինութիւն. քանզի մարդն յղացեալ, և ծնեալ ընդ ակզբնական մեղաց, ունի դիւրութի առ չարս արարողութիս, և դժուարութի առ բարիս: Ուստի դիւրագոյն 'ի ձեռն վատթարից արարողութեց ստանայ զմոլութին յօժարեցուցանողն առ վատթարս արարողութիս, քան ստանայցէ զառաքինութին յօժարեցուցանողն առ բարիս:

2. Մոլութիւն վասն բազմաց պատճառաց է անգոսնելի: Քանզի է անգոսնելի 'ի կողմանէ պատճառի, որով ստանի. է անգոսնելի 'ի կողմանէ իւրեան, և 'ի կողմանէ բնութե իւրոյ. է անգոսնելի 'ի կողմանէ գործոց, զորս արտադրէ 'ի մարդում, որ տիրեցեալ է մոլութե. անգոսնելի 'ի կողմանէ հրամանի այ̃, արգելողի զվատթարս արարողութիս, և հրամայողի զբարիս. է անգոսնելի 'ի կողմանէ այ̃, զնա ատողի. է անգոսնելի 'ի կողմանէ առաքինութե, որում հակադրի. է անգոսնելի 'ի կողմանէ կրօնի, յորում գտանիմք. է անգոսնելի 'ի կողմանէ խորհրդոց, զորս պարտիմք յաճախել. է անգոսնելի 'ի կողմանէ հոգևորաց փարթամութեց, և գանձից, 'ի յերկինս հասուցելեաց. և վերջապէս է անգոսնելի 'ի կողմանէ վախճանի, առ որ ստեղծեցեալք եմք: Է անգոսնելի 'ի կողմանէ պատճառի, որով ստանի. վասնզի ստանի 'ի ձեռն վատթարաց, և գարշելեաց արարողութեց, և ներգործութեց, որք են թշնամունք մեզ, և ոչ վայելեն մեզ: Է անգոսնելի 'ի կողմանէ իւրեան, և 'ի կողմանէ բնութե իւրոյ. քանզի ոչ է համակերպ բանի, այլ անհամակերպ: Վասնզի բանն ոչ ուսուցանէ զմոլութի, հակ-

կող

կող առ չարն․ այլ ուսուցանէ զա-
ռաքինութիւն, յօժարեցուցանօղն առ
բարին։ Մինչ ուրեմն մոլութիւն ոչ
է ըստ հրամանի բանի, որ է դուքս
մեր, անօգ առ ուղիղս առաջնորդու-
թիս․ այլ է ըստ ապականութե՟,
ներածողի զմեզ առ անյարմարս, և
առ անվայելուչս արարողութիս, և
ներգործութիս, է անդոսնելի։

3․ Է անդոսնելի 'ի կողմանէ
գործոց, զորս արտադրէ 'ի մար-
դում, որ առնեցեալ է մոլութե՟, որ
արտադրէ զգործս, որք վնասեն
մարդոյ։ Քանզի մինչ հակէ առ
չարն, պատճառէ զարարողութիս
աններմանս բանի, և համակերպս ա-
պականութե՟ մերոյ, որք արարողու-
թիք են թշնամութիք մերք, և
վնասք հոգւոյ մերոյ, որոց փար-
թամութիք են արարողութիք հա-
մակերպք հրամանի, և ենթադա-
տողութե՟ բանի, և արարողութիք
բժշկօղք զապականութիս մերս։
Է անդոսնելի 'ի կողմանէ հրամա-
նի ա՟յ, արգելողի զչարս արարո-
ղութիս, և հրամայողի զբարիս․
քանզի հակէ առ արարողութիս ներ-
հակս գործողութեց, առ որս հրա-
ւիրեն զմեզ պատուիրանքն ա՟յ։
Վասնզի մոլութիւն յօժարեցուցանէ
զմեզ առ վատթարս ներգործութիս․
իսկ պատուիրանքն ա՟յ հրաւիրեն
զմեզ առ բարիս, և արգելուն
զչարս։ Է անդոսնելի 'ի կողմանէ
ա՟յ, զնա ատողի․ քանզի է գարշե-
լի ա՟յ մեղն, և մեղաւորն։ Ուստի
գարշելի է նմա և մոլութիւն,
զմարդն առ մեղս յօժարեցուցա-
նօղն, և տրամադրօղն։ Մինչ ու-
րեմն մոլութիւն է ատելի, և գար-
շելի ա՟յ, զճշմարիտս բարիս մեզ կա-
մեցողի, և առ բարիս գործս զմեզ
կոչողի, անդոսնելի է մոլութիւն զ
մեզ առ չարն հակօղն։ Է անդոս-
նելի 'ի կողմանէ առաքինութեան,
որում հակադրի․ քանզի առաքի-
նութիւն է գովելի։ Ուրեմն մոլու-
թիւն ներհակն առաքինութե՟, է
անդոսնելի։ Առաքինութիւն է բա-
րին մեր․ ուրեմն մոլութիւն է չարն
մեր։ Առաքինութիւն է սիրելի․
ուրեմն մոլութիւն ներհակն առա-
քինութե՟, է ատելի։ Առաքինու-
թիւն է գովելի․ ուրեմն 'ի մոլութե՟
է փախչելի։ Առաքինութիւն է
պատիւն մեր․ ուրեմն մոլութիւն է
անարգանք մեր․ առաքինութիւն է
փառք մեր․ ապաուրեմն մոլութիւն
է եպերանք, և նախատինք մեր։

4․ Է անդոսնելի 'ի կողմանէ
կրօնի, յորում գտանիմք․ քանզի
ս՟բ կրօն մեր, 'ի միածնէ որդւոյն
ա՟յ կացուցեալն, սիրէ զանարա-
տութի, և զաւետարանական մա-
քրութի․ ուսուցանէ զառաքինու-
թիս, և զպայծառս բարեգործու-
թիս․ և փափագի, զի քրիստոնէ-
այք, ոչ միայն կրթիցեն զնուրեանս
ինքեանս 'ի յառաքինութիս, և 'ի
բարեգործութիս, այլ նաև զի ե-
լանիցեն առ բարձրութի կատարե-
լութե՟։ Ուստի անարգէ զմոլու-
թիւն, որ ոչ ճանաչէ զկատարե-
լութի, հակադրի առաքինութե՟․
զուղիղս արարողութիս առնէ դժո-
արինս, յօժարեցուցանէ առ վատ-
թարս ներգործութիս։ Է անդոս-
նելի 'ի կողմանէ խորհրդոց, զորս
յանձնել պարտիմք․ վասնզի խոր-
հուրդք յանձնելիք, խնդրեն զա-
ռաքինութիս, պահանջեն զտրա-
մադրութիս, և փափագին ներգոր-
ծականի ջերմեռանդութե՟։ Մոլու-
թիւն ընդդիմանայ առաքինութեց,
անգիտէ զտրամադրութիս, և
արգելու զջերմեռանդութիւն։ Ուս-
տի 'ի կողմանէ խորհրդոց, ջեր-
մեռանդաբար, և ըստ արժանւոյ
յանձնելեաց, կարի անարգելի է
մոլութիւն։ Է անդոսնելի 'ի կող-
մանէ հոգևորաց փարթամութեց,
և գանձից 'ի յերկինս հաւաքելեաց,
քանզի հոգևորք փարթամութիք,
և գանձք մերք 'ի յերկինս հաւա-
քելիք, են բարեգործութիք, և
ներգործութիք առաքինութեց, և
բարիք գործք, առ որս ոչ հակէ
մոլութիւն, մինչ հակէ առ չարս
գործողութիս, որք են պատժա-
պարտութիք, և թշնամութիք
մերք։ Վերջապէս անդոսնելի է 'ի
կողմանէ վախճանի, առ որ ստեղ-
ծե-

ծեցեալք եմք ․ քանզի վախճանն մեր է կեանն յաւիտենական , առ որ վերախնդրին արդիւնք , և բարեգործութիւնք , առ որս ոչ յօժարեցուցանէ մոլութիւն , մինչ յօժարեցուցանէ առ վատթարս արարողութիւնս , և առ պատժապարտութիս ։

5. Մոլութիւն տրոհի 'ի յիմացողականն , և 'ի բարոյականն ։ Իմացողական մոլութիւն է չարն իմացութեան , հակօղ զմեզ առ չարն ։ Բարին իմացութեան մերոյ է ճշմարիտն , քանզի որպէս բարին կամաց մերոց է ուղիղն ․ այնպէս բարին իմացութեան մերոյ է ճշմարիտն ։ Իմացութիւն խնդրէ զճշմարիտն , և հանգչի 'ի ճշմարտի իմացելոջ ․ ուստի չարն իմացութեան է սուտն ։ Իմացողական մոլութիւն բաժանի 'ի մոլորութիւն , 'ի տգիտութիւն , և 'ի յիմարութիւն ։ Մոլորութիւն է ներգործութի իմացութեան , առաւել շափօղ զառարկայն այլապէս , քան թէ իցէ ։ Մոլորութիւն սկզբանց է վնասակարագունեղ քանզի մոլորօղն շուրջ զսկզբամբք , զրկի 'ի ճշմարտից ճանաչողութեանց , և 'ի ճշմարտից եզրակացութեանց , արտածեցելոց 'ի սկզբանց ։ Մոլորութիւն 'ի հաւատոջ , է անհաւատութիւն , ուստի է վատթարագունեղ ։ Մոլորութիւն հեթանոսաց է կռապաշտութի , հեթանոսք սղալին 'ի ճանաչման ճշմարտին այ ։ Մոլութիւն հրէից է հրէութի ․ հրէայք սղալին 'ի ճանաչման փրկչին ։ Մոլորութիւն հերետիկոսաց է հերետիկոսութիւն . հերետիկոսք սղալին 'ի ճանաչման ուրուք մասին հաւատոյ ։ Են , որք ընդունին զսուտ օրինադիր ․ մոլորութիւն այսոցիկ է 'ի յընկալման սուտ օրինադրի ։ Են , որք մոլորին յանդգնաբար ։ Մոլորութին սոցա է որոգայթագունեղ , մինչ ամենեւին է կամաւոր ։ Են , որք մոլորին տգիտաբար ․ մոլորութի սոցա է 'ի ծուլութենէ ։ Սիրօղն զճշմարտութի , և ատօղն զսուտութի , անարդէ զկամակորութի , զի մի անկանիցի 'ի մոլորութի , և ուշադրաբար ունկնդնէ ուսուցանողի , զի կարիցէ գտանել զճշմարտութի ։

6. Տգիտութիւն է պակասութի պարտաւորի ճանաչման ։ Ուստի տգէտն է , որ ոչ գիտէ զայնսիկ , զորս գիտել պարաւանդի ։ Տգիտութիւն իրաց , առ փրկութի մեր հարկաւորաց , է չար ․ քանզի է վնասակար հոգւոց մերոց ։ Ուստի որ զանց առնէ ուսանիլ զայնոսիկ իրս , որք են հարկաւորք առ փրկութի , մեղանչէ ․ վասնզի պարտաւորիմք գիտել զայնոսիկ իրս , որք են հարկաւորք առ փրկութի ։ Վասն այսորիկ 'ի յեկեղեցւոջ են վարդապետք , և քարոզիչք , զի ուսուցանիցեն զտգէտս ։ Որպէս ուրեմն վարդապետք , և քարոզիչք պարաւանդին ուսուցանել , և քարոզել ; այսպէս նաև տգէտք պարաւանդին ունկնդնել , և ուսանիլ ։ Գրէ սբն Գրիգորիոս ։ ( Որ տեսանէ զլոյսն , գիտէ թէ զինչ իցէ խաւարն ․ վասնզի որ ոչ ճանաչէ զպայծառութի լուսոյ , նաև զխաւարայինս համարի լուսաւորս ։ ) 'Ի բարոյականս ։ Սբն Պեռնարտոս ուսուցանէ ։ ( Բազումք գիտելիք անգիտին կամ վասն անհոգութեան գիտելոյ , կամ վասն ծուլութեան ուսանելոյ , կամ վասն ամօթոյ հարցանելոյ , և արդարև այսպիսի տգիտութիւն ոչ ունի զպատճառս ։ ) 'Ի յընթերցուածոջ ։ Նոյն սբն ասէ ։ ( Տգիտութի իւրեանց ինքեան , է սկիզբն ամից մեղաց ․ տգիտութիւն դէպ 'ի յած , է գործումն ամից մեղաց ։ ) 'Ի գիրս երգոյերգոց , 'ի բանի , 27. Նոյն սբն ասէ ։ Երկաքանչիւր ճանաչումն , այսինքն այ ․ և քոյոյն ինքեան , հարկաւոր է քեզ առ փրկութի քանզի որպէս 'ի ճանաչմանէ քոյոյ ինքեան գայ 'ի քեզ երկիւղն այ , և 'ի ճանաչմանէ այ նմանապէս սէրն ․ և ներհակաբար , 'ի տգիտութենէ քոյոյ ինքեան գայ հպարտութի , և 'ի տգիտութենէ այ յուսահատութի ։ ) 'Ի վերայ երգոյերգոց ։ Յիմարութիւն է պակասութի պարտաւորի ճանաչման շուրջ զմիջոցօք համածողօք

առ

առ վաղճան ։ Դիրքն ընդդէմ յիմարութեան է խոհեմութիւն ։ Ուստի ուշադրաբար ստանալի է խոհեմութիւն ։

7. Բարոյական մոլութիւնք են, որ յօժարեցուցանեն զմեզ առ չարն 'ի բարոյականս իրս ։ Բարոյական մոլութիւնք բաժանին 'ի յանխոհեմութիւն, 'ի յանիրաւութիւն, 'ի յանբարեխառնութիւն 'ի փոքրոգութիւն, և 'ի յանկարգ լրբութիւն ։ Անխոհեմութիւն է մոլութիւն, որով անկարգաբար շրջիմք շուրջ զմիջոցօք ։ Այսու մոլութեամբ այր անխոհեմ բացաթողու զմքոնս, և զյարմարս միջոցս, և վարի միջոցօք անըմբռնելեօք ։ Բացահերքէ զհամաձօղս, և վարի զանհամաձօղօք ։ Անիրաւութիւն է մոլութիւն, որով անկարգաբար շրջիմք շուրջ զիրաւամբ ։ Այսու մոլութեամբ մարդն հակի առ 'ի գործել զայդ, որ է ընդդէմ իրաւանց, և արդարութեան, և յօժարի առ 'ի յուծանել զկանոնս արդարութեան ։ Անբարեխառնութիւն է մոլութիւն, որով անկարգաբար շրջիմք շուրջ զայնուքիւք իրօք, առ որս վերահայի ցանկական մասն ։ Այսու մոլութեամբ անբարեխառն հակի առ 'ի թիւրիլ դէպ 'ի յաջ, կամ դէպ 'ի յահեակ, 'ի հեշտալիս իրս, շրջելով արտաքոյ միջոցի ։ Փոքրոգութիւն է մոլութիւն, որով ոմն յօժարի առ 'ի յերկնչիլ, ուր ոչ է երկնչելի, և առ 'ի զարհուրիլ, ուր ոչ է զարհուրելի ։ Անկարգ լրբութիւն է մոլութիւն, որով ոմն յօժարի առ 'ի սկսանիլ զիր ինչ 'ի տաժանելիս, որ ոչ է սկսանելի ։ Անխոհեմութիւն է ընդդէմ խոհեմութեան, անիրաւութիւն ընդդէմ արդարութեան, անբարեխառնութիւն ընդդէմ բարեխառնութեան, և փոքրոգութիւն, և անկարգ լրբութիւն ընդդէմ արիութեան ։ Համայնք մոլութիւնք են անգոսնելիք վասնզի են ընդդէմ առաքինութեանց սիրելեաց ։ Է մոլութիւն, որ է ունակութենական. և է մոլութիւն, որ է ներգործական ։ Ունակութենականն է այդ, որ յօժարեցուցանէ զմեզ առ չարն ։ Ներգործական մոլութիւն է այն չարն, առ որ հակէ զմեզ ունակութենական մոլութիւն ։

8. Շուրջ զմամբք մոլութեանք այսպէս զգուշացուցանէ զմեզ Սբն Հերոնիմոս, ասելով ։ ( Իցէ քեզ ծայրագունեղ գիտուն, և ծայրագունեղ ծանօթութիւն, զմոլութիւնս. և զառաքինութիւնս զանազանելն ։ Որք թէպէտ միշտ լիցեն ներհակք միմեանց. սակայն ոմանքն յայնցանէ զուգակցին այնքանաւ նմանութեամբ, զի հազիւ ամենեքին որոշիլ կարիցեն ։) Ա. Գեմետրիոս ։ Եւ առածէ զպատրանս ոմանց ասելով ։ ( Ոմանք զհպարտութիւն համարին 'ի տեղի առատաձեռնութեան, զերեսպաշտութիւնն ընդունին փոխանակ խոնարհութեան, զչարութիւն դրկեն 'ի տեղի խոհեմութեան, և յիմարութեան դնեն զանուն պարզամտութեան ։ Այսու խաբեբայիւ, և վատթարագունեղիւ նմանութեամբ պատրեցեալք պարծին 'ի վերայ մոլութեանց փոխանակ առաքինութեանց ։) 'Ի նոյնում տեղւոջ ։ Ուսուցանէ Սբն Գրիգորիոս զմերձաւորութիւն ոմանց մոլութեանց, ասելով ։ ( Են ոմանք մոլութիւնք իբրև ոմամբ խնամութեամբ ինքեանց հպաւորք. զորօրինակ Թուլութիւն ոգւոյ, բաղձանս որկրամոլութեան. և անմաքրութիւն բղձախոհութեան, բազմախօսութիւն, ստախօսութիւն, և սուտ երդնուլն ։ 'Ի Թուլութեան ոգւոյ միտն յափշտակի առ որովայնամոլութիւն. և մինչ որովայնն տարածի կերակրով, մարմինն քարշի առ բղձախոհութիւն. 'Ի բազմախօսութենէ ծնանի ստախօսութիւն. քանզի դժուարին է, զի որ խօսի զբազումս իրս, ոչ նաև ստախօսիցի, և բազմիցս ստախօսութիւնն նաև երդմամբ գալի, զի առաջի մարդկայնոց դատողութեանց քօղիցի ։) 'Ի վերայ եզեկիելի մարգարէի ։ 'Ի ճառի 12 Զմոլութեանց խօսեցաք սեռաւորապէս ։ Զտեսակաւորաց մոլութեանց խօսիցուք 'ի վայր մասնաւորապէս ։ 'Ի յասա_

ցելոց՝ ճանաչելով զանդորմնելութի մոլութեանց, զգուշացիր, զի մի անկանիցիս 'ի նոսա :

# ԳԼՈՒԽ ԼԶ.

## Յաղագս մեղաց :

1. Մոլութիւնք հակեն առ մեղս : Ուստի պատշաճաւորապէս յետ ընձեռման զմոլութեանց, ընձեռեմք զմեղաց : Մեղն, որ է չարն մեր, և ամենամեծ թշնամութի մեր, այսպէս սահմանիլ կարէ. օրինազանցութի, և կամաւոր մտածումն, կամ փափագ, կամ բան, կամ գործ ընդդէմ պատուիրանաց : Մեղն է չար, առ որն հակեն զմեզ մոլութիւնք : Մեղն է ամենամեծ պակասութիւն մեր. քանզի է պակասութի վերնագունի մասին : Վասնզի մեղանչողքս պակասիմք 'ի վերնագունի մասին : փառքն մեր է հետեւիլ առաջնորդութեան, և հրամանի բանի : Մեղանչողքս գործեմք ընդդէմ առաջնորդութեան, և հրամանի բանի : Ուստի մեղն է խայտառակութիւն մեր, ճանապարհն մեր է այն, զոր առաջադրէ մեզ յաւիտենական բանն : Ճանապարհս այս է ուղիղ. քանզի է համակերպ յաւիտենականի բանի : Մեղանչողքս խոտորիմք յայսմանէ ճանապարհէ : Ուստի կորուսանեմք զուղղութիւն : Ներգործութի մեր յարմար մեզ, է գովասան մեր : Ներգործութիւն յարմարողն մեզ է այն, որ ելուզեցեալ է ըստ կանոնի : Կանոնն մեր է յաւիտենական բանն : Ուստի ներգործութիւն ելուզեցեալն ըստ յաւիտենականի բանի, է գովութի մեր : Մեղքն մեր են պակասութիւքն այսպիսւոյ ներգործութեան : Ուրեմն մեղքն մեր են անարգանք : Քանզի որպէս ներգործութիւն ըստ կանոնի է պարծան, այսպէս ներգործութիւն ընդդէմ կանոնի է անարգան : Մարդն է ծառ արտաբերող զպտուղս : Եթէ պտուղն է բարի, ծառն է բարի. իսկ եթէ պտուղն է չար, ծառն է չար : Պտուղն մարդոյ, է ներգործութի նորա : Ներգործութիւն առաքինութեան, է ներգործութիւն բարի. ներգործութի մոլութեան, է ներգործութի չար : Մեղանչողն է արտաբերող զներգործութի մոլութեան. ուրեմն մեղանչողն է ծառ չար :

2. Ոչ գնացողն 'ի խորհուրդս ամպարշտաց, և ոչ կացողն 'ի ճանապարհի մեղաւորաց, և ոչ նստողն յաթոռս ժանտից, այլ 'ի տուէ, և 'ի գիշերի խոկացողն զօրէնն տեառն, է ծառ բարի, տնկեալ 'ի գնացս ջուրց, տուող զպտուղ իւր 'ի ժամու իւրում, այսինքն, բերող զպտուղս ոգւոյ, որք են, սէր, խնդութի, խաղաղութի, համբերութի, քաղցրութի, հեզութի, հաւատ, պարկեշտուի, ժուժկալութի, և ողջախոհութի. ուրեմն ոչ խակացողն զօրէնն տեառն, այլ գնացողն 'ի խորհուրդս ամպարշտաց, և կացողն 'ի ճանապարհի մեղաւորաց, և նստողն յաթոռս ժանտից, և առնողն զգործս մարմնոյ, որք են, անմաքրութի, անպարկեշտութի, բղջախոհութի, ագահութի, կախարդութի, թշնամանութիւք, կռիւք, նախանձք, բարկութիւնք, աղմուկք, տարաձայնութիւք, ոխք, մարդասպանութիւնք, արբեցողութիւք, շուայտութիւք, խէթ, անհամբերութի, անողորմութիւն, անհաւատարմութի, ստախօսութի, խաբեբայութի, երդմնազանցուի, և լրբութի, է ծառ չար, բերող զպտուղս չարս. այսպիսի մարդն է մեղաւոր. ապաուրեմն մեղաւորն է է ծառ չար : Այր առաքինի, և ելուզանողն զներգործութիս առաքինութեանց, որք են ներհակք մոլութեանց, է սիրելի, համարելի, պատուելի, և գովելի. ուրեմն այր մոլեկան, և ելուզանողն զներգործութիս մոլութեանց, որք են ներհակք առաքինութեանց, է անդոսնելի, սակաւահամարելի, անարգելի, և

դար-

դարշելի ։ Պատճառն դարշելութեան, խոտանութեան, անարգելութեան, եւ անգոսնելութեան առն մեղաւորի, է մեղն ։ Ապաուրեմն մեղն է դարշելի, խոտան, անարգելի, եւ արհամարհելի ։ Մեղն է տգեղութիւն, նախատինք, եւ անարգանք ։

3. 'Ի մեղի է տակաւութիւն, տգեղութիւն, արատութիւն, անարգութիւն, յիմարութիւն, անպարկեշտութիւն, անպատուելութիւն, անհնազանդութիւն, հպարտութիւն, անգոսնելութիւն, ամպարշտութիւն, անողորմութիւն, եւ խստաբարոյութիւն ։ 'Ի մեղս է պակասութիւն. վասնզի 'ի նմա պակասի ճառագայթն հրամանի բանի, պայծառութիւն օրինի, վայելչութիւն պատուիրանի, սպիտակութիւն աստուածային լուսոյ, եւ ազնուութիւն ուղղութեան ։ 'Ի մեղս է տգեղութիւն. քանզի մեղն ոչ ունի զգեղ բանի, զգեղեցկութիւն ուղղութեան, զվայելչատեսութիւն յաւիտենականի բանի, եւ զգեղեցկադիմութիւն առաքինութեան ։ 'Ի մեղս է արատութիւն. քանզի զրկողն զբանական հոգին 'ի վայելչութենէ իւրմէ, որ է ներգործութիւն ըստ հրամանի բանի, եւ ըստ լուսաւորութեան աստուածային օրինի, անվայելչութիւն մեղանչողականի ներգործութեան պղծէ, եւ ապականէ ։ 'Ի մեղս է անարգութիւն. վասնզի զհոգին մեր վասն բանի, եւ անձնիշխանութեան ազնուագունեղ ստեղծուածն, ստեղծեցելոյն առ պատկեր, եւ առ նմանութիւն աստուծոյ, անվայելչութեամբ մեղանչողականի ներգործութեան պղծելով, առնէ անարգ, եւ անգոսնելի, ըստ այնմ բանի աստուածային բարբառի ։ ( Մարդ 'ի պատուի էր, եւ ոչ իմացաւ. հաւասարեցաւ անասնոց անբանից, եւ նմանեցաւ նոցա ։ ) Սաղ. 48. Թիւ. 21. 'Ի մեղս է յիմարութիւն. քանզի մարդն գործողն ըստ լուսոյ աստուածային իմաստութեան, եւ ըստ հրամանի բանի, եւ խոհեմութեան, եւ ըստ լուսաւորութեան աստուածային օրինի, ոչ մեղանչէ, այլ գործէ ուղղապէս. ապաուրեմն յայնժամ մեղանչէ, երբ գործէ ընդդէմ, կամ բաց 'ի հրամանէ բանի, եւ ընդդէմ, կամ բաց 'ի լուսաւորմանէ աստուածային օրինի. եւ համահետեւապէս մեղանչէ, երբ գործէ յիմարաբար ։ Ուստի 'ի մեղս, եւ 'ի յանօրէնութիւնս է յիմարութիւն ։

4. 'Ի մեղս է անպարկեշտութիւն. քանզի պարկեշտութիւն է հետեւիլ առաջնորդութեան. եւ դատողութեան բանի, եւ հրամանի օրինի. ուրեմն անպարկեշտութիւն ոչ հետեւի առաջնորդութեան, եւ դատողութեան բանի, եւ հրամանի օրինի ։ Մեղանչողն ոչ հետեւի առաջնորդութեան, եւ դատողութեան բանի, եւ հրամանի օրինի ։ Ապաուրեմն 'ի մեղս է անպարկեշտութիւն ։ 'Ի մեղս է անպատուելութիւն. քանզի մարդն է պատուելի, մեղօք կորուսանէ զպատուելութիւն, եւ լինի անարգելի ։ 'Ի մեղս է անհնազանդութիւն. վասնզի մեղանչողն ոչ առնէ, զոր աստուած, եւ օրէնն նորա հրամայէ. եւ ոչ գործէ, զոր հրամայէ բնական լոյսն, Ապաուրեմն է անհնազանդ աստուծոյ, եւ օրինի նորա. եւ է անհնազանդ հրամանի բնականի լուսոյ ։ 'Ի մեղս է հպարտութիւն, վասնզի մեղանչողն ոչ հնազանդի. ոչ հնազանդողն հպարտանայ. ուստի մեղանչողն հպարտանայ ։ 'Ի մեղս է անգոսնելութիւն. վասնզի գոյացութիւն պատուականի մարդոյ է մեծագին, եւ ներգործութիւն մարդոյ ըստ հրամանի բանի է պատուելի. ուրեմն ներգործութիւն մարդոյ ոչ ելուղեցեալ ըստ հրամանի բանի, ոչ ունի զպատուելութիւն ; ուրեմն է անարգելի. իսկ ներգործութիւն մարդոյ ոչ ելուղեցեալ ըստ հրամանի բանի, է մեղանչական. ուրեմն մեղանչական ներգործութիւնն է անգոսնելի ։ 'Ի մեղս է ամպարշտութիւն. վասնզի մեղանչողն ոչ հնազանդի աստուծոյ, եւ ոչ հատուցանէ նմա, զոր պահանջէ արդարութիւն ։ Ոչ հատուցանողն աստուծոյ, զոր պահանջէ արդարութիւնն, է ամպարիշտ. ապաուրեմն մեղանչողն է ամպարիշտ ։ 'Ի մեղս է անողորմութիւն. վասնզի մեղանչողն վնասէ

իւրեան ինքեան , զրկելով զիւր ինքն յուղղութենէ հրամանի բանի , որ ուղղութիւն է ամենամեծ բարին մարդոյ ։ ուրեմն մեղանչօղն է անողորմ իւրեան ինքեան , զրկելով զիւր ինքն 'ի յամենամեծէ բարւոյ իւրմէ ։ 'Ի մեղս է խստաբարոյութի . քանզի ուղղապէս գործօղն է հեզաբարոյ . ապաուրեմն այլապէս գործօղն է խստաբարոյ ։

5. Մեղն բաժանի 'ի սկզբնականն , և 'ի ներգործականն ։ Սկզբնական մեղն է , յորում յղանիմք , և ծնանիմք , և զոր համաքարշեմք 'ի յադամայ , առաջնոյ ծնողէ մերմէ ։ Ոմանք 'ի մասնաւորէ շնորհէ ԱՅ 'ի յարգանդի մօր իւրեանց սրբացուցեալք են , և ծնեալք են սրբք , որպէս Երեմիայ մարգարէն , և Յօհաննէս մկրտիչն ։ Միայն ամենօրհնեցեալ կոյսն մարիամ մայրն այ նախապահեցեալ է 'ի սկզբնականէ մեղէ . իսկ համայնք այլք մարդիկք համաքարշեն զսկզբնական մեղն . վասնզի համայնք մեղանչեցին 'ի յադամ , որպէս ասէ առաքեալն , Ամենօրհնեցեալ կոյսն մարիամ ածածինն նախապահեցեալ է 'ի սկզբնականէ մեղէ . վասնզի էր վայելչաւոր , զմայրն այ , որ յղացաւ , և ծնաւ զորդին այ , և որ եղև լի շնորհօք , 'ի վեր քան զամս ստեղծուածս սրբեցեալ 'ի յամենասրբոյ երրորդութենէ , ոչ երբէք լեալ գոլ դուստր անիծից , և ոչ երբէք լեալ գոլ ենթ գերութեան թշնամւոյ մարդկայնոյ սեռի ։ Մեք մարդիկքս որդիքս ադամայ , 'ի ժամանակի աւետարանի , նորոյ օրինի , և նորոյ կտակարանի ծնեցեալքս , ազատիմք 'ի սկզբնականէ մեղէ մկրտութբ 'ի քսէ տեառնէ փրկչէն մերմէ կացուցելով . վասնզի մկրտութբ վերածնանիմք որդիք , և բարեկամք այ , և ժառանգք արքայութեն երկնից ։ Ուստի մկրտութիւն կոչի խորհուրդ վերածննդեան ։ Խորհուրդն մկրտուեն կացուցեալ եղև 'ի քսէ տեառնէ միածնէ որդւոյն այ , զի մարդիկք ընդունօղք զխորհուրդս այս , ազատիցեին 'ի սկզբնականէ մեղէ . 'Ի յԱդամայ համաքարշեցելոյ , և զարդացեալքն , նաև 'ի ներգործականաց մեղաց ։

6. Ներգործական մեղն է , զոր զարգացեալ մարդն կարօղն մեղանչել , գործէ ներգործութբք իւրովք ։ Երկւք կերպիւք մարդն մեղանչել կարէ , այսինքն , խորհրդով , բանիւ , և գործով ։ Մեղանչէ խորհրդով , երբ 'ի սրտի իւրում ցանկայ ումեք իրի ընդդէմ պատուիրանի այ ։ Մեղանչէ բանիւ , և բերանով , յորժամ ասէ , և արտաբերէ զիր ինչ ընդդէմ օրինի , և պատուիրանի այ , կամ եկեղեցւոյ ։ Մեղանչէ գործով , երբ առնէ զիր ինչ ընդդէմ օրէնի , և պատուիրանի այ , կամ եկեղեցւոյ ։ Արդ ուրեմն մեղն սրտիւ յղանի , բերանով արտաբերի , և գործով կատարի ։ Սրտիւ սկսանի , բանիւ տարածի , և գործով եզերի ։ Ցանկութբ , և հաւանութբ ենթակայանայ , բանիւ , և գործով տարածի ։ 'Ի սրտի ազդեցմամբ , հեշտութբ , և հաւանութբ ։ Վաղվաղակի ընդդիմանալի է ազդեցման , զի մի լինիցի հեշտութի , և արդեանիցի հաւանութիւն ։ 'Ի գործոյ դաղտաբար , հրապարակաբար , և ունակութենաբար ։ Գաղտնի մեղն վնասէ արդարև մեղանչօղի , սակայն ոչ վնասէ այլոց . վասնզի ոչ տայ այլոց զաւիթ մեղանչելոյ ։ Հրապարակականն ոչ միայն վնասէ մեղանչօղի , այլ նաև բազմաց այլոց . վասնզի տայ այլոց զաւիթ մեղանչելոյ ։ Վատթարագոյն է հրապարակականն , և գայթագղեցուցիչն . քանզի ոչ միայն կորուսանէ զմեղանչօղն , այլ նաև զբազումս այլս մեղանչօղի հետևօղս ։ Գայթագղութիւն է վատթարագունեղ մեղ . քանզի վնասէ հոգւոյ ընկերի ։ Ունակութենական մեղն է կարի յոյժ վնասակար մեղանչօղի . վասնզի կարի յոյժ դժուարաբար առողջանայ ։ Ուստի 'ի յունակութենականէ մեղէ կարի յոյժ , և ամիւ ջանիւ փախչելի է ։

7. Ներ-

7. Ներգործական մեղն բաժանի 'ի մահացուն, և 'ի ներելին: Մահացու մեղն է, որ աւերէ զմահն հոգւոյ. քանզի բառնայ զշնորհն ա̄յ, որ է կեան հոգւոյ: Վասնզի հոգին շնորհիւն ա̄յ կեայ կենիւ հոգևորաւ. ուստի որպէս մարմինն թարց հոգւոյ, որ կեցուցանէ զնա, մեռեալ է. այսպէս հոգին թարց շնորհի ա̄յ, որ զնա կեցուցանէ, մեռեալ է. զայս հոգևոր մահն պատճառէ մահացու մեղն: Ծանր մեղն է մեղք մահացու: Մեղքն ընդդէմ պատուիրանի, է մեղք մահացու: Մեղքն ընդդէմ սիրոյ է մեղք մահացու: Եւ մեղքն ծանրապէս վնասօղն է մեղք մահուչափ: Ներելի մեղն է, որ ոչ աւերէ զմահ. քանզի ոչ բառնայ զշնորհն, որ է կեան հոգւոյ. այլ կարէ գոլ ընդ շնորհի. սակայն նուազեցուցանէ զջերմութի սիրոյ: Ուստի է այդ, որ է թեթև, և որ ոչ է ընդդէմ պատուիրանի, այլ է բաց 'ի պատուիրանէ. և որ ոչ է ընդդէմ սիրոյ, այլ է բաց 'ի սիրոյ. և որ ոչ վնասէ ծանրապէս: Բազումք, և կարի մեծք են չարիք, զորս պատճառէ մահացու մեղն: Քանզի բառնայ զշնորհն, աւերէ զմահն, չիջուցանէ զսէրն, և եղծէ զառաքինութիս, ընդ սիրոյ հարկաւորապէս զուգակցեալս, բառնայ զբարեկամութին ա̄յ, և եղծէ զորդեգրութին, զհարան քն առնէ չնացող, բառնայ զիրաւունսն 'ի յաւիտենական կեանն, մահացուցանէ զբարեգործութիս արարեցեալս 'ի շնորհի, արգելու զարդիւնաւոր ներգործութին յաւիտենականի կենի, 'ի յայնմիկ, որ է 'ի մահացու մեղս, պատճառէ զպարտաւորութի առ մշտնջենաւորս պատիժս, և բորբոքէ զարդարութին ա̄յ առ 'ի պատժել զմեղաւորն: Ուստի որպէս շնորհն, և սէրն է ամենամեծ բարին մարդոյ. այսպէս մահացու մեղքն է ամենամեծ չարն, և ամենամեծ թշուառութին մարդոյ:

8. Ներելի մեղն բաժանի 'ի ներելի մեղն մտադրաբար արարեցեալն, և 'ի ներելի մեղն 'ի տկարութէ գործեցեալն: Ներելի մեղն մտադրաբար արարեցեալն, է տրամադրութի առ մահացու մեղն: Գործօղն 'ի մահացու մեղաց, զգուշանայ 'ի ներելեաց մտադրաբար գործեցելոց, զի մի անկանիցի 'ի մահացու մեղն: Ներելի մեղն 'ի տկարութէ գործեցեալն, պատճառէ 'ի մեզ զխոնարհութի: Անկանօղքս 'ի յայսպիսիս մեղս, պարտիմք խոնարհեցեալք խնդրել զթողութի, ասելով, թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց: Չի նուաղեցուցանիցեմք զայսպիսիս ներելիս մեղս, 'ի մարդկայնոյ տկարութէ գործեցեալս ընդդէմ հաստատազօրականի առաջադրութե մերոյ, պարտիմք բազմիցս 'ի յաւուր հառաչմամբ հանդերձ ելուզանել զբորբոքեցեալ ներգործութի սիրոյ, և զզջման, և յաճախապէս ջերմեռանդութբ հանդերձ, և բորբոքեցելով սիրով մերձենալ առ հաղորդութի, որ է խորհուրդ սիրոյ, և սիրելութե, և 'ի յիւրեան ինքեան իրականապէս պարունակէ զհեղինակն շնորհի, և ատելով զդատարկութին, և զունայնախօսութի; և զկենցաղավարութիս, պարապիլ կրթութեց, և գործոց ջերմեռանդութե, այսինքն. աղօթից, խոկման, ունկնդրութե հոգևորաց բանից, և ընթերցման հոգևորաց գրոց: Հարկաւոր դեղն ընդդէմ մահացու մեղաց, է փրկաւէտ խորհուրդն ապաշխարութե. վասնզի առէ Ճշմարտութին: (Եթէ ոչ ապաշխարիցէք, ամէքին նոյնպէս կորնչիցիք:) Ղուկաս: 13. Թիւ. 3. ուրեմն ով մարդ, որ գործես զմահացուս մեղս, և կեաս 'ի Ճանապարհի կորստեան, և թշուառաբար տանիս զծանր բեռն մեղաց, ապաշխարեա քանզի եթէ ոչ ապաշխարիցես, ապաշխարութբ առ փրկութի քո, հարկաւորաւ, կորիցիս 'ի մեղս քոյս:

# ԳԼՈՒԽ: ԼԵ·

## Յաղագս հպարտութեան:

1. Հպարտութիւն է անկարգ իղձ գերազանցութեան։ Ուստի որ անկարգաբար փափագի գերազանցութեան, է հպարտ։ Կրկնակ դոլ կարէ իղձն գերազանցութեան, կարգաւոր, կամ անկարգ։ Կարգաւոր իղձն գերազանցութեան, է բարի. քանզի է ըստ հրամանի բանի։ Ուստի է ներգործութիւն առաքինութեան, և է ներգործութիւն առաքինութեան խոնարհութեան։ Իսկ անկարգ իղձն գերազանցութեան, է չար. քանզի է ընդդէմ հրամանի բանի։ Ուստի է ներգործութիւն մոլութեան, և է ներգործութիւն մոլութեան հպարտութեան։ Է կարգաւոր իղձն գերազանցութեան, երբ փափագեցեալ լինի ճշմարիտ, և պարտաւոր գերազանցութիւն, առ որ ծնեցեալ է ըղձացօղն. վասնզի իղձս այս է ըստ հրամանի բանի։ Քանզի բանն ցուցանէ, զճշմարիտ, և զպարտաւոր գերազանցութիւն, առ որ ծնեցեալ է ըղձացօղն, դոլ ըղձալի։ Իսկ է անկարգ իղձ գերազանցութեան, յորժամ փափագեցեալ լինի սուտ, կամ անպարտաւոր գերազանցութիւն, առ որ ոչ է ծնեցեալ ըղձացօղն. քանզի իղձս այս ոչ է ըստ հրամանի բանի։ Վասնզի բանն ցուցանէ, զսուտ, կամ զանպարտաւոր գերազանցութիւն, առ որ ոչ է ծնեցեալ ըղձացօղն. ոչ դոլ փափագելի։ Երկաքանչիւր իղձն գերազանցութեան, այս ինքն, կարգաւորն, և անկարգն բաւականաբար բացայայտնեցեալ, և բացատրեալ է։ Եւ կարգաւորեցեալ իղձն գերազանցութեան է խոնարհութիւն, իսկ անկարգն է հպարտութիւն։

2. Մարդն կերտեցեալ 'ի յԱստուծոյ առ պատկեր, և առ նմանութիւն նորա, է բանական, և է ընդունակ սիրոյ։ Նա կարէ, և պարտի սիրել զիւր ինքն. քանզի պարտի կամիլ իւրեան ինքեան զճշմարիտ, և զպարտաւոր բարին։ Սէրն մարդոյ, որով սիրէ զիւր ինքն, կարէ դոլ կարգաւոր, և կարէ դոլ անկարգ։ Եթէ սիրիցէ զճշմարիտ, և զպարտաւոր բարին, և խնդրիցէ ինքեան զճշմարիտ, և զպատշաճ բարին, առ որ ծնեցեալ է, այսինքն, զվախճան իւր, և զմիջոցս համաձօղս առ վախճան, և ատիցէ զարգելիչս վախճանի, զորօրինակ, սիրիցէ, և խնդրիցէ ինքեան զերանութիւն, զշնորհն Աստուծոյ, և զառաքինութիւս, և ատիցէ զմեղս, բարձօղս զշնորհն, և արգելօղս զերանութիւն. սէրն իւրեան ինքեան է բարի, և կարգաւոր. քանզի է ըստ կարգադրութեան Աստուծոյ, և ըստ հրամանի բանի, որոյ է ընդունակ։ Իսկ եթէ սիրիցէ զերևելի, և զսուտ, կամ զանպատշաճ բարին, առ որ ոչ է ծնեցեալ, և զայն խնդրիցէ իւրեան ինքեան. սէրն իւրոյ ինքեան է վատ, և անկարգ. քանզի ոչ է ըստ կարգադրութեան Աստուծոյ, և ոչ է ըստ հրամանի բանի, որոյ է ընդունակ։ Եւ քանզի է ընդունակ բանի, վատաբար, և անկարգաբար սիրելով զիւր ինքն, խնդրէ իւրեան ինքեան զերևելի, կամ զանյարմար գերազանցութիւն, առ որ ոչ է ծնեցեալ։ Եւ այսպէս վատաբար, և անկարգաբար սիրելով զիւր ինքն, 'ի յանկարգէ սիրոյ իւրոյ ինքեան գայ 'ի յանկարգ իղձ գերազանցութեան։ Աստի 'ի յանկարգէ սիրոյ իւրոյ ինքեան ծնանի մոլութիւն հպարտութեան։ Արդ բաւականաբար, և վայելչաբար բացատրեալ, և բացայայտնեցեալ է, որպէս ծագիցի մոլութիւն հպարտութեան։

3. 'Ի հպարտութեան են բազումք մոլութիւնք, և բազումք մեղք։ Քանզի 'ի հպարտութեան է անկարգ բարձրացումն մտի, սուտ համարումն իւրոյ ինքեան, անափառութիւն, ինք‿

նա‿

նախանձութի , անարգութի այլոց , լրբութի , վէճ , խռովութի , գրգռութի , զրպարտութի , թշնամանողութի · բարկացողութի , դիմակացութի , յանդգնութի , անհնազանդութի , ամբարտաւանութի , և յանձնապաւինութի : 'Ի հպարտութե է անկարգ բարձրացումն մտի · վասնզի հպարտն զինքենէ · և զայնց , որք պատկանին ինքեան , այսինքն , զընդունակութե իւրմէ , զգիտութե իւրմէ , զառաքինութեց իւրոց , զընտանեաց իւրոց , զծննդենէ իւրմէ , զտանէ իւրմէ , զտոհմէ իւրմէ , զհնարագիտութե իւրմէ , և զխօսելոյ կերպէ իւրմէ , զառնելոյ , և զգործելոյ , ունի զբարձունս ենթադատողութիս : 'Ի հպարտութե է սուտ համարումն իւրոյ ինքեան · քանզի հպարտն համարի զիւր ինքն այնպիսի , որպիսի ոչ է : Համարի զիւր ինքն առաքինի · և սակայն է մոլեկան : Համարի զիւր ինքն 'ի վեր քան զեղանակ իմաստուն , և սակայն զբազումս իրս ագիտանայ : Համարի զդատողութի իւր դերազանց , և ազնիւ · և սակայն է դոյզն · և խոտան : Եւ զբազումս այլս նմանս սուտս համարեցմունս ունի զինքենէ , և զիւրայնոցն : 'Ի հպարտութե է անափառութի , վասնզի հպարտն յիմարաբար պարծի զինքենէ , զգիտութե իւրմէ , զդատողութե իւրմէ , զերևելեաց առաքինութեց իւրոց , և զբազմաց այլոց · որք պատկանին ինքեան · և պարծի զիրաց ունայնոց , ոչընչաց , և խոտանաց , արժանաւորաց անարգանաց : Եւ երբեմն հպարտք , և անափառք , այնպէս խելագարին , և յիմարանան , զի համարձակիցին պարծիլ նաև 'ի վերայ մոլութեց , և մեղաց , վասն որոց պարտիցեին ամաչել : Այսպիսիք անափառք , ունին զդատողութի անմիտ : և յիմար :

4. 'Ի հպարտութե է ինքնաձութի · քանզի հպարտք , և անափառք , անխոհեմաբար , և յորժամ ոչ է պիտոյ , ունայնաբար գովեն զիւրեանս ինքեանս , և արտաքերեն զբանս 'ի գովասան իւրեանց · և երբեմն զայնպիսիս , որք ոչ գովասանաց , կամ բարւոյ համարման են արժանիք , այլ անարգանաց , և անգոսնանաց : 'Ի հպարտութե է անարգումն այլոց · քանզի հպարտք բարձրացուցանեն զիւրեանս ինքեանս 'ի վեր քան զայլս , և համարին զիւրեանս ինքեանս լաւագոյնս քան զայլս , և զիւրեանս ինքեանս վարկանեն գովելագոյնս · պատուելագոյնս · և արժանաւորագոյնս քան զայլս : Ուստի երբ զիւրեանս ինքեանս բաղդատեն ընդ այլոց , անկարգաբար բարձրացուցանեն , և գովեն զիւրեանս ինքեանս · իսկ զայլս անարգեն , անգոսնեն , և արհամարհեն : 'Ի հպարտութե է լրբութի · վասնզի հպարտք յիմարաբար բարձրացուցանելով զիւրեանս ինքեանս , և անիրաւաբար անարգելով զայլս , լրբաբար խօսին ընդ այլոց , զորս անարգեն , և անգոսնեն : 'Ի հպարտութե է վէճ , խռովութի , և գրգռութի · քանզի հպարտք անկարգաբար սիրելով զիւրս դատողութիս , և զիւրս կարծիս , և անարգելով զդատողութիս , և զկարծիս այլոց · վիճեն , խռովին , և գրգռեն , և կագեն հանդերձ աղաղակօք , և սաստկաւ շատախօսութե , ընդ այլոց այլապէս դատողաց , և կարծողաց , 'ի մէջ որոց , և 'ի մէջ նոցա են տարաձայնութիւնք 'ի յենթադատողութիս , և 'ի կարծիս : Դարձեալ անկարգաբար սիրելով զպատիւս , զարժանաւորութիս , և զմեծահանդէս աստիճանս , և ջանալով ստանալ ինքեանց զասացեալս պատիւս , արժանապատուութիս , և զմեծահանդէս աստիճանս , վիճեն , խռովին , և կագեն ընդ այլոց , որք ջանան ստանալ զասացեալս պատիւս , արժանաւորութիս , և զմեծահանդէս աստիճանս : Ուստի 'ի մէջ հպարտաց միշտ է կռիւ :

5. 'Ի հպարտութե է զրպարտութի , և թշնամանողութի · քանզի

զի հպարտն անգոսնելով, և անարգելով զայլս, զայրացուցեալ, և բորբոքեցեալ, եղեալ անհամբեր, արտաքերէ զբանս զրպարտականս, անիրաւս, և թշնամանողականս 'ի նոսա, զորս անգոսնէ, և անարգէ։ Ուստի 'ի վիճելն 'ի կռուելն, և 'ի մաքառելն զրպարտէ։ 'Ի հպարտութենէ է բարկացողութիւն. քանզի հպարտք 'ի յանկարգէ սիրոյ գերազանցութեան, դիւրաբար զայրացուցանին, և բորբոքին 'ի բարկութիւն ընդդէմ այնոցիկ, ընդ որոց զրպարտաբար, և թշնամանողաբար վիճեն, և կռուին։ 'Ի հպարտութենէ է դիմակացութիւն, և յանդգնութիւն. քանզի հպարտք դիմակացութեամբ, և յանդգնութեամբ հանդերձ կան, և միշտ հաստատք 'ի յիւրս ենթադատողութիւնս, և 'ի յիւրս կարծիս։ Որանք այնպէս յանդգունք են 'ի յենթադատողութիւնս իւրս, և 'ի յիւրս յիմարս կարծիս, զի ոչ իցէ փոյթ նոցա անկանիլն 'ի մոլորութիւն, և 'ի հերետիկոսութիւն։ Ուստի բազումք վասն հպարտի յանդգնութեան եղեալք են հերետիկոսապետք, և վատթարագունեղապէս մոլորելով նաւաբեկեցան 'ի հաւատոջ, և մոլորեցուցին զբազմազանս։ Կորուսին զիւրեանս ինքեանս, և եղեն պատճառ կորստեան բազմաց։ 'Ի հպարտութենէ է անհնազանդութիւն. քանզի հպարտք 'ի յաճիլն հպարտութեան, անգոսնեն նաև զենթադատողութիւնս մեծաւորաց, և անարգեն զդատողութիւնս նոցա, որոց հնազանդիլ պարաւանդին։ Որանք վասն հպարտութեան, խզելով զլուծն ենթարկութեան, անհնազանդեցան, և եղեն ապստամբք։ Որանք հպարտք, նաև եկեղեցւոյ ոչ կամեցան հնազանդիլ, և հպատակիլ, որ է սիւն, և հաստատութիւն ճշմարտութեան, և եղեալք են հերձուածողք։

6. 'Ի հպարտութենէ է ամբարտաւանութիւն. վասնզի հպարտն է ամբարտաւան. քանզի անկարգաբար սիրելով զպատիւս, զարժանապատուութիւնս, և զմեծահանդէսս աստիճանս, նաև ապօրինաւորօք միջոցովք հետևին նմա, ոչ մտածելով զբանս առաքելոյն ասացողի։ (Եւ ոչ եթէ անձամբ ոք առնու զպատիւ, այլ կոչեցեալն յԱյ, որպէս և Ահարոն։) Առ եբրայեցիս։ 5. թիւ. 4. Ջանայ ստանալ զպատիւս, զարժանապատուութիւն, և զմեծահանդէսս աստիճանս, որոց է անարժան։ Ջանայ ընդդէմ իրաւանց, ընդդէմ օրինի, ընդդէմ կարգադրութեանց, և ընդդէմ խղճմտանաց իւրոց, գիտելով զիւր ինքն ոչ ունիլ զբաւականութիւն, վերախնդրեցեալ հմտութիւն, զբաւական գիտութիւն, զպարտաւոր սրբութիւն, զյարմարութիւն կառավարելոյ, կարգադրելոյ, և արածելոյ։ Գիտելով զիւր ինքն վերացեալ առ արժանապատուութիւն, և առ մեծահռչակ աստիճան, ոչ օգնել, այլ վնասել այնոցիկ, որոց է օգնելի։ Վերջապէս վարի ապօրինաւորօք եղանակօք, խորամանկութեամբ, խաբեբայութեամբ, ստախօսութեամբ, սպառնալեօք, և պարգևօք, և ընծայիւք, Ոչ հոգայ զվնասս այլոց, այլ խնդրէ զպատիւ իւր։ Ոչ է հովիւ, այլ վարձկան։ Հպարտն բարձրացուցանէ զիւր ինքն, իսկ Ած զնա խոնարհեցուցանէ։ Զի ամ ոք, որ զիւր ինքն բարձրացուցանիցէ, խոնարհեցուսցի։ Սադայելն բարձրացոյց զիւր ինքն, իսկ Ած զնա խոնարհեցոյց։ Ած հակառակ կայ հպարտաց, բայց տայ զշնորհ իւր խոնարհաց։ 'Ի հպարտութենէ է անձնապաւինութիւն. քանզի հպարտն է ինքնահաւան։ Քանզի ընդունի, և յանձնառնու զբեռն, որոյ է անընդունակ։ Հպարտն նաև անկարգաբար փափագի փարթամութեանց, և հաւաքէ զինչս, զի կարիցէ հանդիսաւորաբար կեալ, և զունայնից հանդիսից, և զփարթամութեանց ունայնաբար, և հպարտաբար պարծիլ։

7. Հպարտութիւն է մինն յայնց մոլութեանց, զորոց այսպէս խօսի սուրբն Գրիգորիոս։ (Գլխաւորք մեղք այնքանս զուգակցութեամբ կցին

ընդ

ընդ միմեանս, զի ոչ եթէ ոչ մինն արտաքերկսի յայլմէ. քանզի առաջին պատակն հպարտութեան է սնափառութիւն, որ մինչ զնեղացուցեալ միան ապականեալ է, առժամայն ծնանի զնախանձ. զի արդարև մինչ բաղձայ փառաց ունայնի անուանն, զի մի ումն այլ առանալ կարիցէ զայս, մաշի նախանձու: Ծնանի զբարկութի. քանզի որքան ոգին ներքնայնովք վիրօք նախանձու խոցոտի, այնքան նաև խաղաղութի հեզութեան կորուսանի: 'Ի բարկութէ ծնանի տրտմութի. քանզի չփոթեալ միան որքան անկարգաբար զիւր ինքն շարժէ, այնքան առակցելով չփոթէ: 'Ի տրտմութէ առաջադայի ագահութի. քանզի մինչ չփոթեալ միան զբարին ուրախութեն 'ի յիւրեան ինքեան 'ի ներքս կորոյս, ուստի պարտ լեալ էր զնա մխիթարել, խնդրէ արտաքոյ. և այնքան առաւել փափագի ստանալ զարտաքինս բարիս, որքան ոչ ունի զուրախութիւն, առ որ 'ի ներքս վերընթանայցէ:) 'Ի բարոյականս: Հպարտութիւն ամուրեք է վնասակար: Քանզի այլք մոլութիք ունին զկարողութի 'ի չարագործութիս. 'ի միայնոյ հպարտութէ զգուշանալի է նաև 'ի յաղթող արարողութիս. քանզի յայլոց մոլութեց երկնչելի է 'ի մեղս: իսկ 'ի հպարտութէ 'ի բարեգործութիս, զի մի այնք, որք գովելաբար արարեցեալք են, կորուսանիցին փափագանաւ ինքեան գովասանի: Որդն փարթամութեց է հպարտութիւն: Դժուարինէ, թէ ոչ իցէ հպարտ, որ է փարթամ: (Բարձ զհպարտութին և փարթամութիք ոչ վնասեսցեն:) Է ասացեալ սրբոյն Օգոստինոսի: 'Ի հպարտութե են բազումք թշնամութիք: Թշնամութիք ինքեան հպարտութե, և թշնամութիք բազմաց այլոց մոլութեց տառապեցուցանողաց, 'ի հպարտութե դնեցելոյ:

8. Արդուրեմն խոնարհութիւն է հրեշտակային առաքինութիւն. քանզի որք հրեշտակք խոնարհեցուցին զիւրեանս ինքեանս ա̄յ. իսկ հպարտութիւն է սատանայական մոլութի. վասնզի սատանայն, և հրեշտակք նորա հպարտացան ընդդէմ բարձրելոյն: Ապաուրեմն խոնարհութիւն առնէ զմարդն նման հրեշտակաց, և հպարտութիւն 'ի հրեշտակաց առնէ դևս: Նա է սկիզբն, և վախճան, և պատճառ ամ̄ից մեղաց. քանզի ոչ միայն է մեղք ինքն հպարտութիւն, այլ նաև ոչ որք մեղք կարող, կամ կարէ, կամ կարասցէ գոլ թարց հպարտութեան: Քանզի ամ̄ մեղանչող է անհնազանդ. ամ̄ անհնազանդ է հպարտ. ուրեմն ամ̄ մեղանչող է հպարտ. և այսպէս ոչ որք մեղք թարց հպարտութե: Եւ յայսմիկ նշանակութե հըպարտութին է մայր ամ̄ից մեղաց: Արմատն ամ̄ից չարեաց, և ծագ ամ̄ից մոլութեց է հպարտութին. վասնզի սկիզբն ամ̄ից մեղաց է հպարտութին: Եօթն գլխաւորք, և մահաւանդականք մոլութիք արտաբերին 'ի կանանչէ արմատոյ հպարտութե, այսինքն, սնափառութին, նախանձն, բարկութին, տրտմութին, ագահութին, որկրամոլութին, և բղջախոհութին: Այս զբուցատրութիւ է ասացեալ Գրիգորիոսական: Զտեսակս, որովք ցուցանի հպարտութի ամբարտաւանից, երևեցուցանէ սբն Գրիգորիոս, ասելով: (Չորք են տեսակք, որովք ցուցանի ամ̄ հպարտութի ամբարտաւանից, մինչ համարին ունել զբարին կամ 'ի յիւրեանց ինքեանց. կամ հաւատան տուեալ գոլ ինքեանց 'ի վերուստ, և համարին ընկալեալ գոլ զայս վասն արդեանց իւրոց. կամ իրաւի մինչ պարծին ունել զինքեանս զայն, զոր ոչ ունին. կամ անարգելով զայլս, փափագին երևիլ ունել մանաւորապէս զայն, զոր ունին:) 'Ի բարոյականս. ապաուրեմն կարի յոյժ փախչելի է 'ի հպարտութե:

## ԳԼՈՒԽ: ԼԸ.

### Յաղագս նախանձու:

1. Նախանձն է տրտմութիւն զբարեաց ընկերի: Անկարգաւ սիրով սիրողն զիւր ինքն, կամի զբարին միայն ինքեան, և զգերազանցութիւն միայն ինքեան, և ոչ կամի ընկերի: Ուստի 'ի յանկարգ սիրոյ իւրեան ինքեան ծագի նախանձն, որով անկարգաբար սիրողն զիւր ինքն, տրտմի 'ի վերայ բարեաց ընկերի: Նախանձն ուղղակի հակադրի սիրոյ: Քանզի սէրն կամի զբարին ընկերի, և խնդայ 'ի վերայ բարեաց նորա. իսկ նախանձն ոչ կամի, այլ տրտմի 'ի վերայ բարեացն: Մոլութիւնս այս հակադրի բնականի լուսոյ: Քանզի բնական լոյսն հրամայէ, զի մարդն սիրեսցէ զընկեր իւր, որպէս զիւր ինքն, մինչ երկու մարդիկք, և համայնք այլք են անհատք նոյնոյ տեսակի, և յառաջադային 'ի նոյնոց ծնողաց, և են կարգաւորեցեալք առ նոյն վերջին վախճան: Հակադրի նաև հրամանի Աստուծոյ, զսէրն ընկերի հրամայողի: Վասնզի երկրորդ պատուիրանն Աստուծոյ, նմանն ամենամեծի, և առաջնոյ պատուէրի նորա, զսէրն Աստուծոյ հրամայողի, է այս. սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո, Նախանձն հակադրի նաև պատուէրի Քրիստոսի, և պատուիրանի նորոյ օրինի, և նորոյ կտակարանի. քանզի պատուէրն Քրիստոսի, է սիրելն զմիմեանս: Այսպէս և պատուիրանն նորոյ օրինի, և նորոյ կտակարանի: Ուր է նախանձ, անդ ոչ է նշան քրիստոնէի, և աշակերտի Քրիստոսի. քանզի նշանն քրիստոնէի, և աշակերտի Քրիստոսի է սէրն ընկերի:

2. Նախանձն է թշնամի խաղաղութեան, միաւորութեան, և միակամութեան: Է թշնամի խաղաղութեան. և անդորրութեան. քանզի պատճառէ զվրդովմունս: Է թշնամի միաւորութեան. վասնզի որպէս սէրն միաւորէ, այսպէս նախանձն տարորոշէ: Եւ է թշնամի միակամութեան. քանզի որպէս սէրն առնէ համախոհս, այսպէս նախանձն պատճառէ զտարաձայնութիւնս: 'Ի նախանձու է ատելութիւն, անողորմութիւն, բարկութիւն, չարագործութիւն, և որդն մաշող: 'Ի նախանձու է ատելութիւն. քանզի նախանձողն ոչ սիրէ, այլ ատէ զնա, որում նախանձի, կամելով նմա զչար, և զզրկեցումն բարւոյ, և հառաչելով վնասել նմա: 'Ի նախանձու է անողորմութիւն, և խստաբարոյութիւն: Վասնզի նախանձօտն է անողորմ իւրեան ինքեան, և անողորմ ընկերի: Է անողորմ իւրեան ինքեան. քանզի եղեալ դահիճ, և տանջիչ իւրեան ինքեան չարունակօք նախանձականօք մտածմամբք, և փափագանօք ոչ լցուցելովք, այլ արգելեցելովք, չարչարէ, և տանջէ զիւր ինքն 'ի տուընջեան, և 'ի գիշերի: Է անողորմ ընկերի. վասնզի ոչ յագի վնասեցմամբ, այլ մինչև առ հեղումն արեան ընկերի, որում նախանձի, գտանի հառաչօղ, և հեծօղ: 'Ի նախանձու է բարկութիւն. քանզի տեսանելով զնա, որում նախանձի, և նախանձաւորի, ատացեալ զբարիս ընդդէմ փափագանաց իւրոց, զայրանայ, և բարկանայ, և բարկութեամբ իւրով չարչարի: 'Ի նախանձու է չարագործութիւն. քանզի նախանձօտն ջանայ վնասել: որքան կարէ, և մինչ կարէ վնասէ, և վնասակարէ: 'Ի նախանձու է որդն մաշօղ. քանզի երբ արգելանի վնասել, նախանձն նորա լինի որդ, մաշօղ զնա:

3. Նախանձօտն խնդայ 'ի վերայ կործանման ընկերի, և ուրախանայ, երբ գտանիցէ զնա թշուառ, տեսանելով լցեալ զվատթարագունեղ փափագ իւր, որով ցանկայր թշուառութեան ընկերի: Ուստի նախանձօտն որպէս տրտմի զբարեաց ընկերի. այսպէս խնդայ, և ու‿

րախա‿

բախանայ 'ի վերայ Թշուառութեան նորա ։ Նախանձոտք ժառանգեն զվայ․ վասնզի գնան 'ի ճանապարհի կայենի, որ 'ի նախանձու, և յայնմանէ թէ գործք նորա էին չարք․ իսկ եղբօր իւրոյ արդարք, սպան զեղբայր իւր Աբէլ ։ Ուստի նախանձոտք եղեալք նմանք կայենի ժառանգեն զվայն նորա ։ Նախանձոտն խնդացօղն, և ուրախացօղն 'ի կործանման այլոց, ոչ եղիցի, և ոչ մնասցէ անպատիժ ։ Քանզի որպէս պատժեցաւ նախանձոտ կայենն, և պատժեցան նախանձոտք հրէայք, որք սպանին զորդին այ, այսպէս պատժեսցի ամ նախանձոտ ։ Որպէս կարի հաճոյ է այ ամ եղբայրասէր․ այսպէս կարի անհաճոյ է նմա ամ նախանձոտ ։ Որպէս օրհնութիւն այ է 'ի վերայ եղբայրասիրաց․ այսպէս անէծքն նորա են 'ի վերայ նախանձոտաց ։ Նախանձոտն անհաճոյէ հօր․ քանզի հայրն այնպէս սիրեաց զաշխարհս, զի տայցէր զմիածին որդին իւր ։ Ուստի հաճոյ է նմա եղբայրսիրութիւն, և անհաճոյ է նախանձն թշնամին եղբայրսիրութեան ։ Նախանձոտն անհաճոյէ որդւոյ․ քանզի որդին շարժեալ 'ի սիրոյ մարմնացաւ, և 'ի սիրոյ չարչարեցաւ, խաչեցաւ, և մեռաւ վասն փրկութեան մարդկանց ։ Ուստի և որդւոյ զմեզ սիրողի հաճոյ է եղբայրսիրութիւն, և անհաճոյ է նախանձն, թշնամին սիրոյ ։ Նախանձոտն անհաճոյ է Հոգւոյն սրբոյ․ վասնզի սէրն այ սփռեալ է 'ի սիրտս մեր Հոգւով սրբով, որ տուեալ է մեզ ։ Ուստի և հոգւոյն սրբոյ հաճոյ է եղբայրսիրութիւն, և անհաճոյ է նախանձն ։

4․ Տակաւին անհաճոյ է հոգւոյն սրբոյն նախանձոտն․ քանզի հոգին այ է հեղինակ տրամաբաշխութեանց շնորհաց ։ 'Ի ձեռն այսորիկ է բաժանումն պաշտօնատարութեանց, և բաժանմունք արարողութեանց ։ Սա գործէ զամ 'ի յամս, և առնէ զյայտնեցումն իւրաքանչիւրոյ առ օգուտ ։ Սա շնորհէ միոյ զբան իմաստութեան, և միւսոյ զբան գիտութեան ։ Սա պարգևէ միոյ զհաւատ, միւսոյ զշնորհս առողջութեց ։ Սա շնորհէ միոյ զներգործութիւն զաւրութեց, և միւսոյ զմարգարէութիւն․ միոյ զորոշումն ոգեաց, միւսոյ զսեռս լեզուաց, և այլում զթարգմանութիւն բանից ։ Սա գործէ զհամայնս իրս տրամաբաշխելով իւրաքանչիւրոյ, բստ որում կամի ։ Սա արդարացուցանէ, սրբացուցանէ, տայ զշնորհս, և շնորհէ զպարգևս ։ Ուստի հաճոյ է նմա սէրն, և բարերարութիւն, և գործն սիրոյ․ և անհաճոյ է նմա նախանձն, Գործօղն զչար, և խնդացօղն 'ի կործանման, հեղինակն չարաբարոյութեան, և գործիչն մահու ։ Ուստի նախանձոտն է անհաճոյ Ամենասրբոյ երրորդութեան, և ոչ կարէ գոլ տաճար հոգւոյն սրբոյ ։ Եւ համահետևանէս ոչ է առ նա օթևան ամենասրբոյ երրորդութեան, և ոչ գտանի 'ի նմա հոգին քի ։ Եւ ոչ դուքան նորա է հոգին այ, հոգին ճշմարտութեան, ուսուցանօղն մեզ զամ ճշմարտութիւն․ այլ հոգին չարաբարոյն, որոյ նախանձու եմուտ մահն 'ի յաշխարհս ։ Դուքան նախանձոտի է հոգին նախանձոտ, հոգին չարութեան, և անիրաւութեան, հոգին մահաօղն, և կորուսանօղն, և հոգին ատելութեան, և նախանձու ։

5․ 'Ի յեկեղեցւոջ քի է խորհրդաւոր մարմին, խորհրդաւոր գլուխ, և խորհրդաւորք անդամք ։ Գլուխն է քս, եկեղեցին մարմին, քրիստոնեայք անդամք ։ Միով հոգւով մեք համայնքս 'ի մի մարմին մկրտեցեալք եմք ։ Մարմինն ոչ է մի անդամ, այլ բազումք ։ Ուստի մարմինն է մին, անդամք բազումք, հաւատով, յուսով, և սիրով զուգակցեալք ։ Ոտն ոչ է ձեռն․ սակայն է 'ի մարմնոյ ։ Ունկն ոչ է ակն․ սակայն այնքան ունկն, որքան ակն են 'ի մարմնոյ ։ Բոլոր մարմինն ոչ է միայն ակն, ոչ միայն ունկն, և ոչ միայն հոտոտելիքն․ այլ են 'ի մարմնոջ ակն, ունկն, հոտո‿

հաստատելիքն , և այլք անդամք ։ Արդ ուրեմ՟ բազումք խորհրդաւորք անդամքս եղեալք եմք 'ի միում խորհրդաւորի մարմնոջ ։ Այն կարօտի գործոց ձեռաց , և ևս ոտքն են հարկաւորք ։ Հարկաւորք են նաև այնք անդամք մարմնոյ , որք երևին գոլ տկարագոյնք , զի մի իցէ հերձուած 'ի մարմնոջ , այլ առ նոյն ինչ 'ի մէջ իւրեանց հոգաբարձք իցեն անդամք ։ Ուստի մինչ չարչարի մին անդամն , համաչարչարին համայնք անդամք . և մինչ փառաւորի մին անդամն , համախնդան համայնք անդամք ։ Այսպէս ունին զինքեանս կենդանիք անդամք, զկեանն 'ի գլխոյ առօղք ։ Այսպէս ունին զինքեանս անդամք , սիրով զուգակցեալք , և սիրով միաւորեցեալք ։ Նախանձոտն է անդամ մոլածին . քանզի մինչ այլք մարդիկք , և այլք ընկերք նաև քրիստոնեայք խնդան , նա չարչարի , տանջի , և տրտմի . իսկ մինչ այլք չարչարին , և տրտմին , ոչ ցաւակցի , այլ խնդայ , և ուրախանայ ։ Ո՜ զարհուրելի մոլածնութիւն , և գարշելի ադեղութիւն ։

6. Նախանձոտն զանկեցմանէ , և զդիպուածոյ ընկերի խնդայ , և և 'ի կործանման նորա ուրախանայ , իսկ իմաստուն քրիստոնեայն , աշակերտն վարդապետի , նաև զտէրն թշնամւոյ ուսուցանողի , պատուիրողի , և օրինակաւ իւրով դիւրացուցանողի , և քաղցրացուցանողի , զանկմանէ , և զդիպուածոյ ընկերի տրտմի , և 'ի կործանման նորա ցաւակցի . այլ խնդայ 'ի վերայ բարւոյ նորա , և ուրախանայ 'ի վերայ աջողութեան նորա , ճանաչելով զիւր ինքն խորհրդաւոր անդամ , և զընկեր իւր համանդամ . Աճապարողաց փարթամանալ , և նախանձողաց այլոց վերահասանի կարօտութիւն ։ Ընդ այնմ , որ մաշի նախանձու , ոչ ևս գնալի է 'ի ճանապարհ . քանզի այնպիսի մարդն ոչ եղիցի մասնակից իմաստութեան ։ Մեք քրիստոնեայքս , զերկնայինս փառս խնդրողքս , աշակերտքս վարդապետի . զխաղաղութիւն , զմիաբանութիւն , և զսէր ուսուցանողի , այնպէս կեալ պարտիմք , զի յաղթիցեմք զսնափառութիւն , զբարկութիւն , և զնախանձն , զի մի լինիցիմք ունայնասէրք , զմիմեանս զայրացուցանելով , միմեանց նախանձելով . քանզի ուր է նախանձ , և կռիւ , անդ է փոփոխականութիւն , և ամ՟ չարագործութիւն ։ Ուրեմ՟ բացահերքելով զամ՟ չարագործութիւն , և նախանձ , և զամ՟ զրպարտութիւն , իբրև մանկունք այժմ ծնեցեալք , բանականք , և թարց նենգութեան կաթին փափագեսցուք , զի 'ի նմա աճիցիմք 'ի փրկութիւն , խոկալով , և մտադիր լինելով , 'ի յաշխատանս , և 'ի հնարագիտութիւնս նախանձոտաց , և 'ի նախանձու ընկերի , գոլ զունայնութիւն , և զաւելորդահոգութիւն ։ Նախանձու սատանայի եմուտ մահն 'ի բոլոր աշխարհ . հետևին նմա , որք են 'ի կողմանէ նորա ։ Զմանուկն սպանանէ նախանձն ։ Կեանն մարմնոյ է առողջութիւն սրտի , փտեցումն ոսկերաց է նախանձ ։ Որ նախանձի իւրեան ինքեան , ոչոչինչ է վատթարագոյն քան զայն , և այս հատուցումն է չարութեան նորա ։

7. Մեք քրիստոնեայքս 'ի յեկեղեցւոջ գոյացողքս , այնպէս պարտիմք սիրել զմեզ ինքեանս , և ունիլ զսէր առ միմեանս , որպէս մ՟րք 'ի յերկինս սիրեն զիւրեանս ինքեանս , և ունին զսէր առ միմեանս . քանզի պարտիմք գոլ նմանք նոցա , և պարտիմք ունիլ զսէր նման սիրոյ նոցա ։ Մ՟րք 'ի յերկինս ոչ միայն խնդան 'ի վերայ բարեաց իւրոց , այլ նաև ուրախանան 'ի 'ի վերայ բարեաց մ՟մց ։ Իւրաքանչիւրք խնդան 'ի վերայ բարեաց իւրաքանչիւրոց ։ Ուրեմ՟ նաև մեք պարտիմք խնդալ ոչ միայն 'ի վերայ բարեաց մերոց , այլ նաև 'ի վերայ բարեաց մ՟մց , և իւրաքանչիւրքս պարտիմք խնդալ 'ի վերայ բարեաց իւրաքանչիւրոց , զի նաև 'ի մէջ մեր իցէ ճշմարիտ սէր , նման սիրոյ երանելոց , և ճշմարիտ հաղորդութիւն ,

թի, նման հաղորդութեան որբոց ։ Ասացելով կերպիւ կեալ պարտիմք 'ի յեկեղեցւոջ, զի նաև 'ի մէջ մեր իցէ երանութի, նման երանութեան սրբոց ։ Տրտմիլն 'ի վերայ բարեաց միւսոյ ոչ է սրբոց, այլ սատանայի ․ քանզի նախնձն է մոլութի սատանայի, որով միայնով սատանայն է պատժապարտ, և անքաւելաբար մահապարտ ։ Ուստի նախանձոտք ոչ հետևին սրբոց, այլ հետևին սատանայի ։ Նախանձոտն է վնասաբեր ամենեցուն, և մեծաւորաց, և փոքրաւորաց, և հաւասարաց ։ Քանզի նախանձն է տրտմութիւն երջանկութեան այլոյ ․ վերահայեցմամբ առ մեծաւորս, զի նոցա ոչ հաւասարի ․ վերահայեցմամբ առ փոքրաւորս, զի մի հաւասարիցին ինքեան ․ և վերահայեցմամբ առ հաւասարս, և զոյգս, զի հաւասարին ինքեան ։ Ժանտաբարոյ նախանձն, է դուստր, և ազգական հպարտութեան, առատաբերի մօրն մոլութեց, և արմատոյ մեղաց ։ Խեղդեա, և սպան զժանտաբարոյ մայրն, զի մի ծնանիցի չարաբարոյ դուստրն նախանձն ։

8. Հնոյ թշնամւոյ ժանտաւոր մահադեղն, և թիւնն, 'ի վեր քան զեղանակ 'ի մոլութեան նախանձու, մարդկայնոյ սրտի ներհեղանի ․ քանզի թիւնաւոր օձն սատանայն, չարութեան իւրով համաշարժէ զբոլորս փորոտիս 'ի մոլութեան նախանձու, և ներատպելւոյ չարութեան արտահեղու զժանտ 'ի բերանոյ ։ Սիրտն առն ուղղոյ, և սիրողի զառաքինութի, տեսանելով զգործսն արդարոյ, և լսելով զիմաստութի նորա, նա առաւել համահատատի ․ իսկ սիրտն վատթարի, ոչ միայն ոչ համահատատի, այլ առաւել առ նախանձ զարթուցանի, և առաւել չարանայ ։ Ուստի նախանձոտն է վատթար ։ Նախանձն միշտ է թշնամի իւրեան ինքեան ։ քանզի որ նախանձի, ծնանի ինքեան զխայտառակութի, բայց այնմիկ, որում նախանձի, զփառս ։ Որ ասացեալ է յայտ եղև 'ի Յովսէփ, որում նախանձեցան եղբարք նորա ։ Քանզի նախանձոտք եղբարք ամաչեցին ․ իսկ Յովսէփ, որում նոքա նախանձեցան, փառաւորեցաւ ։ Եղև յայտ նաև 'ի դաւիթ, որում նախանձեցաւ սաւուղ ։ Քանզի նախանձոտն սաւուղ ամաչեաց ․ իսկ դաւիթ, որում նա նախանձեցաւ, փառաւորեցաւ ։ Եղև յայտ նաև 'ի քն, որում նախանձեցան հրէայք ։ Քանզի քն եղև փառք աշխարհի, իսկ հրէայք եղեն նախատին աշխարհի ։ Նախանձոտ այրն է անտանելի ։ Քանզի երեսք նորա են սպառնացողք, հայեցումն խոժոռեալ, 'ի դէմս նորա գեղնութի, 'ի շրթունս դողումն, 'ի յատամունս կրճտումն, բանք նորա են կատաղեալք, զրպարտանք 'ի բերանոյ նորա արտաբերեալքն են անսանձք, և ձեռք նորա են պատրաստք առ բռնութի ։ Նախանձոտաց, յաջողութին այլոց ենթադատի ձախորդութին ․ ձախորդութին այլոց յաջողութի ։ Սոքա 'ի յուրախութեան այլոց տրտմին, 'ի տրտմութեան այլոց ուրախանան ։ Բաւականաբար տեսեր զտգեղութիւնն նախանձու ։ Արհամարհեա, անդոսնեա, և ատեա զնա ։

# ԳԼՈՒԽ. ԼԹ.

## Յաղագս ագահութեան։

1. Ագահութիւն է անկարգ սէր փարթամութեանց։ Ուստի ագահն է անկարգաբար փափագօղ փարթամութեանց։ Կարգաւոր փափագն փարթամութեանց, որ է ըստ հրամանի բանի, և է համդերձ արդարութեամբ, և վասն ուղղոյ, և պարտաւորի վաղճանի, է բարի, և ոչ է ներգործութիւն ագահութեան, այլ առատաձեռնութեան, քանզի հնազանդի բանի, և հպատակի օրինի, պահէ զարդարութիւն, և գործէ զիրս բարեպաշտս։ Իսկ անկարգ փափագն փարթամութեանց, որ ոչ է ըստ հրամանի բանի, և ոչ է ըստ արդարութեան, և ոչ վասն ուղղոյ, և պարտաւորի վաղճանի, է վատթար, և է ներգործութիւն ագահութեան. քանզի ոչ հնազանդի բանի, և ոչ հպատակի օրինի, և ոչ գործէ զիրս բարեպաշտականս։ Առատաձեռն է բարի ձիրատարապետ։ Ագահն է չար արուեստաւոր։ Նիւթն երկաքանչիւրոյ են փարթամութիւնք. առատաձեռն ՚ի յընչից, ՚ի հեղինակէ բնութեան պատրաստեցելոց, և տուեցելոց, կերտէ զձեռագործութիւն առաքինութեան։ Ագահն ՚ի նոյնոյ նիւթոյ կերտէ զձեռագործութիւն մոլութեան։ Գործն առատաձեռնի ՚ի յընչից, է ձեռագործութիւն առաքինութեան. քանզի բարւոք, և ուղղապէս վարի նոքօք։ Իսկ գործն ագահի ՚ի յընչից, ձեռագործութիւն մոլութեան. վասնզի չարաբար, և վատթարաբար վարի նոքօք։ Արդ ուրեմն ՚ի բարւոյ կիրառմանէ ընչից, է ձեռագործութիւն առաքինութեան. իսկ ՚ի չարէ կիրառմանէ նոյնոց, է ձեռագործութիւն մոլութեան։ Է յիմարութիւն, ՚ի նիւթոյ, յորմէ կարէ լինել բարի, և գովելի ձեռագործութիւն, կերտել զվատթար, և զանարգելի շինուած. քանզի բանն ցուցանէ, և հրամայէ, ոչ զչարն, և զանարգելին, այլ զբարին, և զգովելին։ Ուստի առատաձեռն է իմաստուն արուեստաւոր, իսկ ագահն է յիմար, և անմիտ ձիրատարապետ։

2. Ագահն պակասի ՚ի փափագանս, ՚ի ստացման, ՚ի կերպի ստանալոյ, և ՚ի վաղճանի, և ՚ի կիրառման ստացելոց ընչից։ Պակասի ՚ի փափագող. քանզի ունի զանսահման փափագ հաւաքելոյ, և ժողովելոյ զինչս, ՚ի կենի, որ ոչ է վաղճան, այլ ճանապարհ, և յորում ոչ եմք մնալոց, այլ պանդխտիմք, և եմք ճանապարհորդք, գիմօղք ՚ի հայրենին, ուր է օթևանն մեր, հանգստութիւն մեր, և երջանկութիւն մեր։ Պակասի ՚ի ստացման. քանզի ոչ հոգայ, թէ ուստի իցեն ստանալիք, միայն թէ իցեն ստանալիք, թէ իցեն արդարք, թէ իցեն անիրաւք, թէ իցեն օրինաւորք, թէ իցեն ապօրինաւորք, թէ իցեն ստացմունք, թէ իցեն յափշտակութիւնք։ Ուստի նաև զանիրաւս ինչս ընդունի, առնու, և հաւաքէ, և յորժամ կարէ, նաև յափշտակէ, և առնէ զյափշտակութիւնս։ Պակասի նաև ՚ի կերպի ստանալոյ. վասնզի մինչ ստանայ, վարի անիրաւօք, և ապօրինաւորօք միջոցովք. քանզի վարի ստով, երդմամբ, նենգութեամբ, խաբեբայութեամբ, սուտ չափով, անիրաւ կշռաւ, և բռնութեամբ։ Ուստի խօսի զսուտ, երդնու զսուտ, առնէ զնենգութիւն, խաբէ, պատրէ ՚ի չափով, և ՚ի կշռով, և անկարգ առնէ զբռնութիւն։ Արդ ուրեմն ագահն է անկարգ ՚ի յղձի, ՚ի բաղձանի, ՚ի սիրոյ, և ՚ի փափագի ընչից, և դրամոց, է անիրաւ ՚ի ստացման, և ՚ի հաւաքման ընչից, ոչ հոգալով զարդարութիւն, ընդունելով նաև զանիրաւս ինչս ընդդէմ իրաւանց, և արդարութեան, սի-

րէ-

բերկրութենէն, և փափագելագունէն առաքինութենէ. և 'ի կերպի ատանձնալոյ, է ստախօս, երդմնազանց, նենգաւոր, խաբեբայ, անիրաւ ոչ միայն դէպ 'ի յընկերն, այլ նաև դէպ 'ի յԱծ վասն սուտ երդման ։

3 Վերջապէս ագահն պակասի 'ի վախճանի, և 'ի կիրառման ասացելոց դրամոց, և ընչից ։ Պակասի 'ի կարգի առ վախճան. քանզի զի գիտէ, ոչ զկատարեալ, այլ զանկատար վախճան ։ Ոմանք պարապին հաւաքման ընչից, զի հարստանայցեն, և լեալք փարթամք, ունայնաբար պարծիցին զընչից ։ Այսպիսիք ագահք, ոչ միայն են ագահք, այլ նաև մնափառք ։ Ոմանք հաւաքեն զինչս, զի ունիցին զհռչակաւոր, և զպատուելի անուն 'ի մէջ մարդկանց, և զի յայլոց պատուիցին ։ Այսպիսիք ագահք նաև են խնդրողք զունայն պատուի ։ Ոմանք ժողովեն զինչս, զի լեալք փարթամք, միջնորդութբ ընչից հասանիցին արժանապատուութեանց, և պատուելեաց աստիճանաց ։ Այսպիսիք ագահք նաև են փառամոլք ։ Ոմանք պարապին հաւաքման ընչից, զի ունելով զառատ դրամս, դիւրաբար կարիցեն պարապիլ շուայտութեանց, մնասակութեան, ունայնի հանդիսաւորութեան, խաղի, որկրամոլութեան, և բղջախոհութեան ։ Այսպիսի ագահութիւն է արմատ չարաց ։ Քանզի արմատն մնասակութեան, շուայտութեան, որկրամոլութեան, բղջախոհութեան, անպատշաճի խաղի, և անկարգից ծախից ։ Եւ այսպիսիք ագահք նաև են մնասակք, շուայտք, որկրամոլք, բղջախոհք, և հեղինակք անպատշաճից ծախից ։ Ոմանք կամին փարթամանալ, զի վայելիցեն զփարթամութի ։ Սոքա ոչ վատնեն զինչս, այլ ժլատաբար պահեն. ջանան, զի միշտ աճեցուցանիցեն զինչս ։ Ծառայեն ընչից, որք պարտին ծառայել մեզ, զծառայս առնեն տիրուհիս ։ Շփոթեն զկարգն. ծառայեն այնոցիկ, որք մեզ ծառայել պարտին ։ Վայելեն զնոսա իբրև զվախճան, որք ոչ են վախճան, այլ են վասն վախճանի. այսպիսի ագահութիւն է կռապաշտութիւն ։ Երկաքանչիւրն է անգոսնելի, և այն, որ է արմատ չարաց, և այս, որ է կռապաշտութի ։

4. Պակասի 'ի կիրառման ասացելոց ընչից. քանզի եթէ ագահն վայելէ զինչս, արդ ոչ վարի ընչիւք, այլ եղեալ է ծառայ ընչից ։ Ուստի ինչք եղեալք տիրուհիք, վարին նովաւ. այսպիսի ագահն մեղանչէ ընդդէմ բնութե, շփոթելով զկարգն նորա. վասնզի կարգն բնութե է, զի դրամք, և ինչք, որք արարեալք են վս մեր, իցեն աղախինք, իսկ մեք իցեմք տեարք և վարիցիմք նոքօք առ վախճան, առ որ կարգաւորեցեալք են 'ի հեղինակէ բնութե ։ Բայց ասացեալ ագահն առնէ, զի մարդն իցէ ծառայ, իսկ դրամքն իցեն տիրուհիք, և վարիցին մարդով. ուստի ասացեալ ագահն, ոչ վարի ընչիւք, այլ ծառայէ նոցա. շփոթելով զկարգն բնութե, մեղանչէ ընդդէմ բնութե ։ Նաև մեղանչէ ընդդէմ իւրոյ ինքեան, ընդդէմ աղքատաց, և ընդդէմ այ ։ Մեղանչէ ընդդէմ իւրոյ ինքեան, քանզի ծառայից իւրոց, ինքեան շնորհեցելոց է հեղինակէ բնութեան առ կիրառումն իւր, ոչ վարի առ իւրս պատշաճաւորս հարկաւորութիս, և առ վայելչութի իւր ։ Մեղանչէ ընդդէմ աղքատաց, և ընդդէմ թշուառաց, վասնզի ոչ վարի աւելորդիւք, ինքեան տուեցելովք 'ի հեղինակէ բնութե առ 'ի յօգնել, և առ 'ի օժանդակել աղքատաց, և թշուառաց վասն ձեռնատու լինելոյ նց, այլ թաքուցանէ ընդ երկրի, կամ 'ի յարկեղ, և պաշտէ զնոսա ։ Մեղանչէ ընդդէմ այ, որ կոչոյց զնա բաշխիչ. քանզի ոչ է հաւատարիմ մատակարարիչ ։ Տակաւին մեղանչէ ընդդէմ այ, տուողի ամից բարեաց. քանզի 'ի յաւելորդաց ոչ առնէ զբարեգործութիս 'ի պատիւ այ, որ միայն պարտի գոլ վերջին վախճան մեր.

մեր․ վասնզի ա՟ծ ստեղծօղ մեր, է սկիզբն, և վախճան մեր։

5. Բայց եթէ վարի ընչիւք, և դրամօք ստացելովք, ոչ վարի առատաձեռնաբար, այլ անառակաբար․ արդ ոչ բարեպէս վարի, այլ վատաբար վարի։ Ուստի ագահն պակասի 'ի կիրառման դրամոց, և ընչից ստացելոց։ Անառակն, և անառակաբար վարօղն ընչիւք ստացելովք, վատթարաբար վարի նոքօք․ քանզի ոչ վարի առ վախճանս, առ որս կարգաւորեցեալք են, այլ վարի առ վախճան, առ որ ոչ են կարգաւորեցեալք։ Քանզի վարի առ շռայլութի, առ որկրամոլութի, առ բղջախոհութի, առ խաղ, առ ցոյց, առ անվայելուչ զարդ, առ ունայն հանդէս, և առ այլս նմանս անպատեհս ծախս, որք ոչ են վախճանք ստացելոց ընչից։ Քանզի վախճանք ստացելոց ընչից, են այսոքիկ, վայելչաւոր խնամատարութի ընտանեաց, օգնութի՛ն աղքատաց, և կրթութի բարեգործութեց։ Իսկ վերջին վախճանն է պատիւն ա՟յ։ Ուստի անառակն, և անառակաբար վարօղն ստացելովք ընչիւք, մեղանչէ ընդդէմ իւրոյ ինքեան, մեղանչէ ընդդէմ ընտանեաց իւրոց, մեղանչէ ընդդէմ բարեպաշտից տեղեաց, և մեղանչէ ընդդէմ ա՟յ ստեղծօղի իւրոյ, և շնորհօղի ա՟մից բարեաց իւրոց։ Անառակն, և անառակաբար վարօղն դրամօք։ և ընչիւք, մեղանչէ ընդդէմ իւրոյ ինքեան․ քանզի վատթարաւ կիրառմամբ ընչից, որոց բանականաւ, և պարտաւորաւ կիրառմամբն կարէր գանձել 'ի յերկինս, պարապելով որկրամոլութե, շռայլութե, արբեցողութե, բղջախոհութե, դրամականի խաղի հանդերձ հայհոյանօք, անիծաբանութեբք, և թշնամանօք, և այլովք վատթարօք ներգործութեբք, ծանրապէս մեղանչելով, կորուսանէ զպատուականագոյնն հոգին իւր, հեղմամբ արեան քի փրկեցեալն, և որկրամոլութեբ, և բղջախոհութեբ ստանայ ինքեան զխօթութիս, և զկորուսումն գեղեցկութեան մարմնոյ։

6. Անառակն, և անառակաբար վարօղն ընչիւք մեղանչէ ընդդէմ ընտանեաց․ քանզի ծախելով զինչս 'ի յորկրամոլութե, 'ի բղջախոհութե, 'ի դրամականի խաղի, և 'ի յայլս անպարտաւորս ծախս, որովք պարտիւր վայելչաբար խնամել զիւրայինս, զտունն, և զընտանիս իւրս, առնէ թշուառս, անառակութեբ իւրով պատճառելով նոցա զաղքատութի, և զանանկութի, և խաւարեցուցանելով զազնիւ անուն ազգատոհմի իւրոյ։ Մեղանչէ ընդդէմ աղքատաց, և թշուառաց․ քանզի որկրամոլութեբ, բղջախոհութեբ, խաղիւ, անվայելչաւորաւ ցուցմամբ, և ունայնիւ հանդիսիւ, առնէ զիւր ինքն անկար առ 'ի յօգնել, և լնուլ ձեռնտուու աղքատաց, և թշուառաց, և քանզի զաւելորդս ինչս, զորս որպէս հաւատարիմ մատակարարիւ հեղինակի բնութե պարտիւր հատուցանել տերանց իւրոց, որք են աղքատք, վատնէ 'ի յանպարտաւորս, և 'ի մեղանչականս արարողութիս։ Մեղանչէ նաև ընդդէմ բարեպաշտից տեղեաց․ վասնզի զինչս, զորս պարտիւր ծախել 'ի կրթութիս բարեգործութեան, մսխէ 'ի չարս, և 'ի վատթարս ներգործութիս, այսինքն, 'ի շռայլութիս, 'ի խաղս, 'ի յորկրամոլութիս, 'ի բղջախոհութիս, և 'ի յայլս նմանս։ Վերջապէս անառակն, և անառակաբար վարօղն ընչիւք, մեղանչէ ընդդէմ ա՟յ․ քանզի բարեօք, 'ի նմանէ ընդունեցելովք, ոչ վարի առ փառս նորա, 'ի ներկրթութիս, որք նմա հաճոյք են, և վասն որոց ինչք շնորհեցեալք են մարդոյ, այլ վարի առ 'ի վշտացուցանել զնա մեղանչելով, և զպատուիրանս նորա ոչ՝ պահելով․ որկրամոլութե, բղջախոհութե, և արբեցողութե պարապելով, և բղջախոհաբար կելով․ խաղալով, անիծաբանելով, հայհոյելով, և ապերախտաբար գործելով․ զան-

պար-

պարտաւորս ծախս առնելով. և 'ի բարեպաշտութեանց, և բարեգործութեանց հեռանալով։

7. 'Ի յագահութենէ են բազումք մոլութիւնք, և բազմազանք մեղք։ Քանզի, որպէս ցուցանեն վերոյասացեալք, 'ի յագահութենէ են կռապաշտութիւն, արմատ չարեաց, անափաւութիւն, անվայելուչ ցուցումն, բաղձանն անպատշաճի պատուոյ, փառամոլութիւն, անառակութիւն, շռայլութիւնք, որկրամոլութիւն, արբեցողութիւն, բղջախոհութիւն, խաբեբայութիւն, ստախօսութիւն, սուտ երդումն, նենգութիւն, անիրաւ կշիռ, սուտ չափ, խարդախութիւն, անողորմութիւն, անգթութիւն, խաղ, անիծաբանութիւն, հայհոյան, հպարտութիւն, խստասրտութիւն 'ի յանկարն, 'ի յորբն, և 'ի յայրին, և յափշտակութիւն։ Բերանն ագահի լի է անիծիւք, դառնութեամբ, և նենգութեամբ, 'ի ներքոյ լեզուի նորա ցաւք, և վաստակք։ Նստի դարանեալ ընդ մեծամեծս, 'ի դաղտնիս սպանանել զամբիծն։ Աչք նորա 'ի տնանկս հային, վարանի 'ի դաղտնիս, որպէս առիւծ 'ի մորւոջ իւրում։ Դարանի, զի յափշտակեսցէ զաղքատն, ջանայ յափշտակել զաղքատն և ձգել զնա։ Ագահն, և հետեւողն ագահութեան վրդովէ զտուն իւր. որպէս զգժոխ, և կորուստն ոչերբեք լնանի. այսպէս աչք ագահաց են անյագելիք։ Քանզի ագահն ոչ լնանի դրամօք։ Մինչ լի է բազմազանօք մոլութեամբք, և մեղօք, ոչինչ է վատթարագոյն քան զնա։ Բազումք ագահք են 'ի յաշխարհի. զի ասէ եսայի մարգարէ։ ( Ամենեքին ըստ իւրաքանչիւր ճանապարհաց իւրոց դնացին։ ) Գլ. 56 թիւ. 11. Եւ զայս համահաստատէ երեմիայ մարգարէ, ասելով։ ( 'Ի փոքունց նց մինչև 'ի մեծամեծս. ամենքեին կատարեցին զանօրէնութիւն։ ) Գլ. 6. թիւ. 13. Աչք ագահաց, և սիրտ, և փափագ նոցա է առ 'ի հեղուլ զարիւն անմեղաց, և առ զրկարութիւն, և առ պատճառ չարագործութեան։ Ագահք են թշնամիք. վասնզի ագահք զարքայութիւն այ ոչ ժառանգեսցեն։ Ուրեմն ագահութիւն մի և ոչ անուանիցի 'ի միջի մերում, որպէս վայելէ սրբոց։

8. Սկիզբն ագահի է նիւթ աշխատանաց, և որոգայթ ժառանգողաց։ Սկիզբն ագահի է կորուստ առաքինութեանց, չար Տր, և մատնիչ ծառայ։ Ինչք շնորհեցեալք մեզ 'ի յայ, առընկեք են նպաստութիւնք առաքինութեանց, ոչ արգելմունք, և արդէն, զորս չարք առնեն զէնս մոլութեանց, զայնս բարիք, և իրաւարարք առնեն նպաստութիւնս առաքինութեանց. ուստի բարիք, և իրաւարարք են իմաստունք, իսկ չարք յիմարք։ Որ է ծառայ ընչից, պահէ զինչս, որպէս ծառայ, իսկ որ թօթափեալ է զլուծ ծառայութեան, բաշխէ զնս որպէս Տր։ Միայնք ճշմարիտք ինչք են, որք զմեզ առնեն փարթամս առաքինութեամբք։ Ուրեմն որք փափագին դոլ փարթամք, պարտին սիրել զճշմարիտ փարթամութիւնս, եթէ խնդրեն զգագաթն պատուոյ, դիմեսցեն առ արքայութիւն երկնից։ Եթէ սիրեն զփառս արժանապատուութեանց, փութասցին գրիլ 'ի յանմիկ վերնայնոջ ապարանի հրեշտակաց։ Երկրային ինչն համեմատեցեալ յաւիտենականի երջանկութեան, է բեռն, ոչ օժանդակութիւն։ Ժամանակաւոր կեանն համեմատեցեալ յաւիտենականի կենի, ստուերել ասելի է մահ, քան կեան։ Սկիզբն, և արծաթն, և այլք սոյնպիսիք, որքան պատկանի առ բարին հոգւոյ, ոչ բարիք են, ոչ չարք. այլ միայն կիրառումն սոցա է բարի, ապաչարումն չար, հոգատուութիւն չարագոյն, շահն չարագունեղ։ Ի զգացումն Պետրարտոսական։ Ճշմարիտք փարթամութիւնք, ոչ են ինչքն, այլ առաքինութիւնքն, զորս ածբերէ ընդ ինքեան խիղճն մտաց. զի լինիցի փարթամ 'ի յաւիտեան. ապաւորեմն առնելով զփարթամութիւնս,

մի կամիր հետեւիլ ագահութեան, այլ արա՛ զնոսա նիւթ առաքինութեանց, զի կարիցես ժառանգել զճշմարիտս փարթամութիւնս ։

## ԳԼՈՒԽ։ Խ․

### Յաղագս բարկութեան ։

1․ Բարկութիւն է անկարգ իղձ վրէժխնդրութեան ։ Կրկնապատկաբար ըղձանիլ կարէ վրէժխնդրութիւն, այսինքն, կարգաւորապէս, կամ անկարգաբար ։ Եթէ վրէժխնդրութիւն ըղձանիցի կարգաւորապէս, ըստ հրամանի բանի, և ըստ օրինի, ոչ է մոլութիւն բարկութեան, այլ է իմն ուղիղ պատկանող արդարութեան ։ Քանզի իշխանք, և պաշտօնեայք արդարութեան, ոչ թարց պատճառի տանին զսուրն, այլ պատճառաւ, և բանաւորաբար ։ Քանզի են պաշտօնեայք Աստուծոյ, վրէժխնդրողք ՚ի բարկութիւն այնմիկ որ գործէ զչար, զի արդարութիւն պահիցի, վնասք արգելանիցին, չարագործութիւն սանձիցի, անխրատք սանձահարիցին, բարիք, և անմեղք վայելիցեն զխաղաղութիւն, և իցեն ապահովք ։ Ուստի վրէժխնդրութիւն կարգաւորապէս, և վայելչաբար բաղձացեալ, և ըստ իրաւանց ՚ի կիր արկեցեալ, ոչ է անիրաւ, այլ է բարի, և հարկաւոր ։ Քանզի եթէ ոչ իցէ ուղիղ բարկութիւն, ոչ վարդապետութիւն օգնէ, ոչ դատաստանք մնան, ոչ եղեռնագործութիւնք արգելանին, և ոչ անխրատք սանձահարին ։ Ուստի որ ունի զպատճառ, և ոչ բարկանայ, և ոչ արգելու զմեղս, զոր կարէ արգելուլ, մեղանչէ ։ Վասնզի անբան համբերութիւն սերմանէ զմոլութիւնս, սնուցանէ զծուլութիւն, և ոչ միայն զչարս, այլ նաև զբարիս հրաւիրէ առ չարագործութիւն ։ Որ բարկանայ պատճառաւ հանդերձ, ոչ բարկանայ եղբօր իւրում, այլ մոլութեան․ իսկ որ բարկանայ եղբօր հայհոյելով ՚ի հաղորդակցութիւն բնութեան, կամ ՚ի միութիւն հաւատոյ, պարտաւոր լիցի դատաստանի ։ Արդուրեմն վրէժխնդրութիւն կարգաւորապէս փափագեցեալ, ոչ է մոլութիւն բարկութեան, այլ պատկանի արդարութեան ։ Իսկ եթէ վրէժխնդրութիւն բաղձացեալ լինիցի անկարգաբար, և ընդդէմ հրամանի բանի, և ընդդէմ օրինի, եղիցի մոլութիւն բարկութեան, զորմէ այժմ է բան ։

2․ Զի վրէժխնդրութիւն իցէ կարգաւորեցեալ, ուղիղ, և արդար, խնդրին բազումք իրք․ խնդրի, զի ՚ի պատժողն, և ՚ի վրէժխնդրողն իցէ հեղինակութիւն ։ Քանզի որ ոչ ունի զիշխանութիւն ՚ի վերայ ուրուք, ոչ կարէ պատժել զնա ։ Վասնզի ՚ի պատժողն խնդրի իշխանութիւն, և ՚ի պատժելւոջ ենթարկութիւն ։ Բանն այսպէս հրամայէ, և իրաւունք այսպէս պատուիրեն ։ ՚Ի պատժելւոջ խնդրի յանցանս ։ Քանզի ոչ է պատժելի արդարն, այլ պատժելի է անիրաւն, զի լինիցի արդարութիւն, այլապէս իցէր անիրաւութիւն ։ ՚Ի ներհարելւոջ պատժոյ խնդրի չափ, զի պատիժն իցէ այնքան, որքան արժանաւորի, և պահանջէ մեղն ։ Քանզի պատժումն պարտի գոլ արդար ։ Ուստի երբ առաւելուն է ՚ի պատժոյ, է պակասութիւն ՚ի յարդարութեան ։ Պատժումն առնելի է ոչ անողորմութեամբ հանդերձ, այլ հանդերձ արդարութեամբ, և ողորմածութեամբ ։ Պատժումն մարդոյ պարտի հետեւիլ պատժատուութեան Աստուծոյ, որ պատժէ արդարութեամբ, և ողորմածութեամբ հանդերձ ։ ՚Ի պատժողն, և ՚ի վրէժխնդրողն, ունեցողն զիշխանութիւն պատժելոյ, խնդրի ուղիղ դիտաւորութիւն, զի մի բարկանայցէ մարդոյ, այլ բարկանայցէ մեղաց ։ Ուրեմն պարտի դիտել, զի լինիցի արդարութիւն, զի արգելանիցին մեղք, և անօրէնութիւնք․ զի

զի տեսանօղք զարհուրիցին, և ահաբեկեցեալք ոչ հետևիցին չարագործաց, զի բարիք իցեն ապահովք, և վայելիցեն զխաղաղութի, և կեայցեն 'ի հանդարտութե, զի վրդովինչք, և անհանդարտք սանձիցին, և անսաստելիք բառնիցին 'ի միջոյ, զի կրօնն ոչ զգայցէ զվնաս, և զի փառաւորիցի ա̃ծ ստեղծօղն ա̃մց ։ Վերջապէս խնդրի, զի կերպն վրէժխնդրելոյ, և բարկանալոյ 'ի վրէժխնդրողի, ունեցողի զիշխանութի պատժելոյ, իցէ մարդկային, և վայելուչ, քանզի պարտի գոլ բանաւոր ։

3. Ա̃ծ ունի զծայրագունեղ իշխանութի 'ի վ̃ր ամենեցուն․ քանզի է ստեղծօղն, և վերնագունեղ Տ̃րն ամենայնից ։ Ուստի նմա պատկանի դատելն, և պատժելն զհամայնս անիրաւս, և առնել զվրէժխնդրութի զա̃մց ամբարշտաց ։ Ուստի ասէ ինքն ։ ( Իմ է վրէժխնդրութի, և ես հատուցից նց 'ի ժամանակի ։ ) Երկրորդօրինաց ։ գլ․ 32․ թիւ․ 35․ Բարկութին, և վրէժխնդրութին ա̃յ է ուղղագունեղ․ քանզի է ներգործութի անհնայ արդարութե ։ Ուստի պատժութն նորա է արդարագունեղ ։ Եկեղեցին ունի զիշխանութի 'ի վ̃ր ա̃մց հաւատացելոց․ վ̃զի մկրտութբ ենթարկեցեալք են եկեղեցւոյ համայնք մկրտեցեալք ։ Ուստի եկեղեցին կարէ դատել, և պատժել եկեղեցականաւ պատժով զա̃մս մկրտեցեալս ։ Այսպէս և ծայրագունեղ պապն Հռովմէական․ քանզի է երևելի գլուխն եկեղեցւոյ ։ Կայսերք, և թագաւորք, և ա̃մք ինքնակալք իշխանք, և դատաւորք նոցա, 'ի նոցանէ ունեցօղք զիշխանութի դատելոյ, և պատժելոյ կարեն դատել, և պատժել արդար պատժով զենթարկեցեալս իւրս․ քանզի են պաշտօնեայք աստուծոյ վրէժխնդիրք 'ի բարկութի այնոցիկ, որք առնեն, և գործեն զչարիս ։ Հարք, և մարք կարեն դատել, և պատժել արդար պատժով ինքեանց 'ի յիրաւանց շնորհեցելով զմեղապարտս որդիս, և զծառայս․ քանզի 'ի բնութէ, և 'ի յիրաւանց ունին զիշխանութի 'ի նս ։ Վարդապետք կարեն դատել, և պատժել 'ի յիրաւանց ինքեանց թոյլտուեցելով զաշակերտս իւրս, 'ի յայնոսիկ իրս, որք նոցա պատկանին․ վ̃զի որքան առ գիտութի աշակերտք ենթարկեցեալք են վարդապետաց ։ Վերջապէս համայնք մեծաւորք, և ունեցօղք զվերնագունութի, կարեն դատել, և պատժել, ըստ վերնագունութե, զոր ունին, արդար պատժով ինքեանց 'ի յիրաւանց թոյլտուեցելով, զստորնագոյնս իւրս․ քանզի ստորնագոյնք ըստ վերնագունութե մեծաւորաց իւրոց, ենթարկեցեալք են նոցա, և պարաւանդին հնազանդիլ նոցա, 'ի յայնոսիկ իրս, որք պատկանին նոցա ։

4. Առանձնականք մարդիկք, որք ոչ ունին զիշխանութի 'ի վ̃ր այլոց, շարժեցեալք 'ի բարկութէ պատժօղք, և առնօղք զվրէժխնդրութի զթշնամեաց յատուկ հեղինակութբ, որք արարին ինքեանց զանիրաւութիս, ոչ առնեն զներգործութի առաքինութե վրէժխնդրութե, այլ գործեն զներգործութի մոլութե բարկութե, և մեղանչեն մեղօք բարկութե, և են անհամբերք, և օրինազանցք պատուիրանի սիրոյ թշնամեաց, և նաև մեղանչեն մեղօք, զոր գործեն․ քանզի եթէ սպանանեն, են մարդասպանք ։ Մեղանչեն մեղօք բարկութե, քանզի ոչ ունեցօղք զիշխանութի 'ի վ̃ր այլոց, ոչ կարեն պատժել զն̃ս ։ Ուստի վնասեցեալք, որք ոչ կարեն գնալ առ դատաւորս զիշխանութի ունեցօղս, ոչ պարտին առնել զվրէժխնդրութի յատ'յուկ հեղինակութբ, այլ ներել, և զվրէժխնդրութին թողուլ ա̃յ ստացողի ։ ( Իմ է վրէժխնդրութի, և ես հատուցից ։ ) Առ Հռովմայեցիս, 12․ թիւ․ 19 Պատժօղք զայլս անիրաւ պատժօք, մեղանչեն․ քանզի պատժութն նոցա ոչ է 'ի յատաքի-

քինութեան վրէժխնդրութեան, այլ 'ի մոլութեան բարկութեան ։ Վասնզի առաքինութիւն վրէժխնդրութեան ոչ գործէ զանիրաւութիւն, այլ հետևի արդարութեան ։ Որպէս գործելն ընդդէմ արդարութեան է մոլութիւն բարկութեան, որ ոչ զարհուրի յանիրաւութենէ ։ Ապա ուրեմն անիրաւ պատժով պատժօղք են անիրաւք ։ Նաև այնոքիկ պատժօղք, որք ոչ ունին զուղիղ դիտաւորութիւն պատժելոյ, այսինքն, զի պահիցի արդարութիւն, սանձիցին անիրաւք, և արդելանիցին եղեռնագործութիւնք, այլ ունին զանպարտաւոր դիտաւորութիւն, զորօրինակ, զի յագիցի ախտն, կամ 'ի կիրարկանիցի ատելութիւն, ոչ շարժին 'ի յառաքինութեան վրէժխնդրութեան, այլ շարժին 'ի մղեցմանէ ախտի, կամ 'ի յատելութենէ․ քանզի առաքինութիւն վրէժխնդրութեան ունի զուղիղ դիտաւորութիւն․ այսինքն, զի պահիցի արդարութիւն ։ Ուստի վասն պակասութեան բարւոյ դիտաւորութեան, մեղանչեն պատժօղք ։ Նաև անվայելուչ կերպն վրէժխնդրելոյ, և պատժելոյ ցուցանէ գոլ զիմ զմոլութեան բարկութեան․ քանզի կերպն առաքինութեան վրէժխնդրութեան է բանաւոր ։

5. 'Ի բարկութեան, որ է անկարգ իղձ վրէժխնդրութեան, և որ է մինն 'ի յեօթնից մահաւանդականաց, և գլխաւորաց մոլութեանց, և որ է դուստրն հպարտութեան, մօրն մոլութեանց, և արմատոյ մեղաց, գտանին բազումք մոլութիւնք, և բազումք մեղք ։ Քանզի 'ի նմա են անհամբերութիւն, անիրաւութիւն, յիմարութիւն, խստասրտութիւն, անկարգ համարձակութիւն, անիծաբանութիւն, նախատինք, զրպարտութիւն․ հատուցումն չարի փոխանակ բարւոյ, անիրաւ պատժումն, ամբարտաւանութիւն․ մոլեգնութիւն, և անպատեհք բանք, ճաղումն, վիրաւորումն, և սպանանումն ։ 'Ի բարկութեան է անհամբերութիւն․ քանզի բարկացօղք ոչ կամին տանիլ զանիրաւութիւն, յայլոց ինքեանց արարեցեալս, և ոչ կամին ներել, և թողուլ զանիրաւութիւնս․ այլ հառաչեն առնել զվրէժխնդրութիւն, և հատուցանել զփոխարէնն ։ 'Ի բարկութեան է անիրաւութիւն․ քանզի բարկացօղն ընդդէմ արդարութեան յատկաւ հեղինակութեամբ պատժէ․ և երբեմն 'ի յանիրաւէ բարկութեան շարժեցեալ բարկանայ անմեղի, և արդարոյ, յայնմանէ թէ ոչ հնազանդիցի անիրաւ կամաց իւրոց ։ Բարկութիւնս այս է վատթարագունեղ․ քանզի հալածէ զարդարութիւն, և զառաքինութիւն, և առաջադայի 'ի յանկարգէ սիրոյ ուրուք երևելւոյ, և ստոյ բարւոյ ։ Բարկութիւնս այս է անիրաւ 'ի յարմատոյ․ վասնզի է 'ի յանիրաւէ սիրոյ․ է անիրաւ 'ի կողմանէ անձին, զոր պատժէ․ քանզի պատժէ զանմեղ, և զարդար մարդն․ և է անիրաւ 'ի կողմանէ առաքինութեան, զոր սիրէ անմեղն, և արդարն, և վասն որոյ անմեղն, և արդարն ոչ կամի հնազանդիլ անիրաւ կամացն բարկացողի․ քանզի հալածէ զառաքինութիւն, և զարդարութիւն ։

6. 'Ի բարկութեան է յիմարութիւն․ վասնզի անկարգ շարժումն, և յանդուգն արձակումն բարկութեան խաւարեցուցանեն զմիտն բարկացողի, և 'ի յերևելւոյ պատճառէ շարժէ զնա առ անյարմարս իրս ։ 'Ի բարկութեան է խստասրտութիւն․ քանզի յորժամ բարկութիւն առաջադայի 'ի յանկարգէ սիրոյ ուրուք երևելւոյ, և ստոյ բարւոյ, սաստկապէս սիրեցելոյ, բարկացօղն անողորմաբար պատժէ զնա, ընդդէմ որոյ բարկանայ ։ 'Ի բարկութեան է անկարգ համարձակութիւն․ քանզի անբան համարձակութիւն բարկացողի, է թարց հրամանի բանի ։ 'Ի բարկութեան է անիծաբանութիւն, նախատինք, և զրպարտութիւն․ վասնզի անհամբերն, և բարկացօղն, և հառաչօղն վրէժխնդրութեան, երբ ոչ կարէ պատժել, և առնել զվրէժխնդրութիւն, այլապէս առնու զվրէժ չարախօսութեամբ, բամբասանօք, անի֊

ծա֊

ծառանութիւն, նախատանօք, զըպարտութիւն, և անարգականօք բանիւք։ 'Ի բարկութեան է հատուցումն չարի փոխանակ բարւոյ. քանզի անհամբերն, և անհարբերաբար բարկացօղն, ոչ գիտէ յաղթել զչարն բարեաւ ներելով, և առնելով զգործ բարւոյ, այլ յաղթի 'ի չարէ հատուցանելով զչար փոխանակ բարւոյ։ 'Ի բարկութեան է անիրաւ պատժումն. քանզի 'ի բարկութեան է պատժումն 'ի յառկէ հեղինակութեան, պատժումն 'ի վերարձակմանէ, զպատճառս, և զարդարութիւն ոչ գիտացողէ; պատժումն ընդդէմ իրաւանց, պատժումն աւելորդ, պատժումն թարց ուղղոյ գիտաւորութեան, և երբեմն նաև պատժումն անմեղի, և արդարոյ։ 'Ի բարկութեան մոլեգնութիւն, ամբարտաւանութիւն, և անպատեհք բանք. վասն զի մոլեգնաբար բարկացօղն, ոչ շարժի 'ի հրամանէ բանի, և ոչ 'ի պատուիրէ խոհեմութեան, այլ շարժի 'ի մղեցմանէ անկարգի ախտի։ Ուստի արտաբերօղն զանվայելուչս բանս, և անպատեհաբար շարժօղն զձեռս անդամս իւրս, առաջակէ որպէս զկատաղեալ անասուն։ 'Ի բարկութեան է ձաղումն; վիրաւորումն, և անիրաւ սպանանումն. քանզի երբեմն բարկացօղն, հառաչելով մեծի վրէժխնդրութեան, դատեալ զդէպ ժամանակ հարկանէ, վիրաւորէ, և յառկաւ հեղինակութեամբ սպանանէ զընկերն։

7. Մեծ է թշուառութիւն հառաչողի վրէժխնդրութեան, և յառկաւ հեղինակութեամբ սպանանողի զընկեր իւր։ Քանզի երբեմն 'ի միասին ընդ կենի, և զհոգին իւր կորուսանէ. վասն զի երբեմն մինչ սպանանէ, սպանանի. մինչ վիրաւորէ, վիրաւորի։ Եթէ կեայցէ, և ըմբռնիցի, կեանս փոխանակ կենի հատուցանի, իսկ եթէ փախիցի, կորուսանէ զտունն, և զհայրենիսն։ Ո՛և ուր դառնի, անդ երկչոտ վարանի։ Դեղն ընդդէմ վրէժխնդրութեան, և ընդդէմ անկարգի, և վատթարի բարկութեան, որ է անկարգ իղձ վրէժխնդրութեան, գտանի համբերութիւն, և համբերութեամբ տանիլն, սէրն թշնամեաց, և բացահերքումն ատելութեան։ Իմաստունն ոչ առնէ զվրէժխնդրութիւն, այլ ընդունի զճշմարիտ համբերութիւն։ Ներէ, և թողու, նաև զթշնամին սիրէ։ Սիրէ զթշնամին, զի Աստուած լինիցի հայր իւր։ Աղօթէ առ Ճշմարիտն Աստուած, և լինի այր կատարեալ։ Հետևի Քրիստոսի, և ծառայի նր սրբոյն ստեփաննոսի, զի լինիցի ժառանգ Աստուծոյ, և ժառանգակից Քրիստոսի։ Փարի զառաքինութեամբ, կարի յոյժ սիրելեաւ, զի ունիցի զայնիւ, և զմեծ վարձ առ Աստուծոյ։ Քանզի մեծ վարձ է այնմիկ, որ է սիրող թշնամեաց։ Արդիւն նորա է մեծ, որ սիրէ զթշնամին իւր։ Միտն նորա է լուսաւոր, և պայծառ, որ է թարց վրէժխնդրութեան։ Նա, որ է համբերող, և ներող, է կարի գովելի։ Որ թողու, առնու զթողութիւն, քանզի ասէ Տէրն։ (Արձակեցէք, և արձակիցիք։) Ղուկաս. 6. Թիւ. 37. Թող զմեղս, զի թողանիցին քեզ յանցանք. քանզի ասէ Տէրն։ (Զի եթէ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, թողցէ և ձեզ Հայրն ձեր երկնաւոր զյանցանս ձեր։ Ապա եթէ ոչ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, և ոչ Հայրն ձեր երկնաւոր թողցէ ձեզ զյանցանս ձեր։) Մատթէի 6. Թիւ. 14.

8. Բարկութիւն ոչ ունի զողորմածութիւն, և ոչ ուժգին ելալօղ արտմտութիւն, և արձակումն զայրացելոյ ոգւոյ, է անտանելի։ Հնազանդօղն բարկութեան կորուսանէ զհոգին իւր 'ի զայրացման իւրում, Բարկութիւն սպանանէ զայրն յիմար, և անմիտն առժամայն ցուցանէ զբարկութիւն իւր։ Այր բարկացօղ գրգռէ զկռիւս, և որ է դիւր առ զայրացումն, յօժարագոյն է առ մեղս։ Բարկութիւնն, և զայրացումն են գարշելիք. քանզի բարկութիւն առն ոչ գործէ զարդարութիւն Աստուծոյ։ Որպէս գործեալքն առ կայծս, և փայտք

առ

առ հուրն , այսպէս այր բարկացող յարուցանէ զկռիւս ։ Ծանր է վէմ , և ծանրաբեռն է աւազն , բայց բարկութ̅ն յիմարի է ծանրագոյն քան զերկաքանչիւր ։ Այր բարկացող բորբոքէ զվէճ, և յարուցանէ զկռիւս ։ Այր , որ գրգռէ զբարկութիւս , արտադրէ զտարաձայութիւս , հրդեհումն առ 'ի դործել վատաբար է բարկութ̅ն ։ Բարկութ̅ն մերձաւորն զայրացման, այնպէս չփոթէ զմիտս բարկացողի , զի շրթունքն դողացեն , ատամունքն համաբախիցին , և դէմքն դեղնութ̅բ փոփոխիցին ։ Բազումք չարիք լինին բարկութ̅բ , քանզի ասէ ս̅բն Գրիգորիոս ։ ( Բարկութ̅բ թողանի արդարութ̅ն . վասնզի մինչ չփոթեալ միտն , դառնացուցանէ զդատողութ̅ն թարց բանի , զմ̅ , զոր զայրացումն համոզէ , զուղիղ համարի ։ Բարկութ̅բ շնորհն կենի ընկերակցն կորուսանի . քանզի , որ զիւր ինքն 'ի մարդկայնոյ բանէ ոչ բարեխառնէ , հարկ է , զի կայցէ անառանաբար ։ Բարկութ̅բ կորուսանի հեզութ̅ն . բարկութ̅բ հերձի համաձայնութ̅ի . բարկութ̅բ կորուսանի լոյսն ճշմարտութ̅ե . վասնզի մինչ մոխ բարկութ̅ն զխաւարս վրդովման ներածդէ , յայսմանէ ա̅ծ զշառաւիղն ճանաչման իւրոյ թաքուցանէ ։ ) 'Ի հինգերորդում մատենի բարոյականաց ։ Սանձեա ուրեմն զայսքան վնասակար բարկութ̅ն ։

⁂⁂

# ԳԼՈՒԽ ԽԱ.

## Յաղագս որկրամոլութ̅ե ։

1. Որկրամոլութ̅ն է անկարգ իղձ կերակրոյ , և ըմպելւոյ ։ Ուրեմն որ անկարգաբար փափագի կերակրոյ , և ըմպելւոյ , է որկրամոլ ։ Կարգաւոր փափագն կերակրոյ , և ըմպելւոյ . է բարի . քանզի է ըստ հրամանի բանի . ուստի ոչ է ներգործութ̅ի մոլութ̅ե որկրամոլութ̅ե , այլ է ներգործութ̅ի պահեցողութ̅ե , և զգաստութ̅ե ։ Արդ անկարգ փափագն կերակրոյ , և ըմպելւոյ , է չար . քանզի ոչ հետևի հրամանի բանի ։ Ուստի է ներգործութ̅ի մոլութ̅ե որկրամոլութ̅ե ։ Անկարգ իղձն կերակրոյ , է ներգործութ̅ն մոլութ̅ե շռայլութ̅ե . և անկարգ փափագն ըմպելւոյ , է ներգործութ̅ն մոլութ̅ե արբեցողութ̅ե ։ Կերակուրն , և ըմպելին տուեցեալք են մարդոյ առ համապահումն կենի իւրոյ ։ Ուստի են միջոցք առ համապահումն մարդկայնոյ կենի ։ Վարողն նոքօք կարգաւորապէս , չափաւորապէս , շահաւէտաբար , և պարտաւորապէս , ըստ բնական լուսոյ , բարեպէս գործէ . քանզի վարի բանաւորաբար հարկաւորօք միջոցիւք առ համապահումն կենի ։ Բայց վարողն նոքօք անկարգաբար , անչափաբար , անօգտաբար , անպարտաւորապէս , և անբանաբար , վատաբար գործէ . վասնզի ապավարի հարկաւորօք միջոցիւք առ համապահումն անհատի ։ Կարգաւ , և ուղղապէս վարողն է իմաստուն . քանզի հետևի բնական լուսոյ , և գործէ որպէս զմարդ , ըստ որում յարմարի մարդոյ ։ Իսկ անկարգաբար , և անպարտաւորա-

պէս

պէս վարօղն, է անմիտ. քանզի ոչ հետևի բնականի լուսոյ, այլ մոլեգնման ախտի, և ոչ գործէ որպէս բանական մարդ, այլ գործէ որպէս անասուն, յորում ոչ գոյ բանականութիւն, այլ մոլեգնումն ախտի ։

2. Զի կիրառութիւն կերակրոյ, և ըմպելւոյ իցէ բարի, խնդրին բազումք իրք ։ Խնդրի, զի կերակուրն իցէ չափաւոր, և ըմպելին իցէ չափաւոր. քանզի չափաւոր կերակուրն, և չափաւոր ըմպելին շահաւէտք են առհամապահութիւն կենի ։ Իսկ անչափ կերակուրն, և անչափ ըմպելին վնասեն, և պատճառեն զանհանդստութիւն, և զխօթութիւն ըստ անչափութեան ։ Կարեն նաև զմահաբեր խօթութիւն առբերել, և բառնալ զկեանն, և սպանանել զմարմինն ։ Դարձեալ, խնդրի, զի կերակուրն իցէ լաւ, և ըմպելին իցէ լաւ. վասն զի վատ կերակուրն, և վատ ըմպելին են վնասակարք ։ Ուստի ըստ վնասակարութեան վնասեն առողջութեան, և պատճառեն զխօթութիւնս ։ Այսուքիկ վնասակարք կարեն գոլ այնպիսիք, զի բառնայցեն 'ի մէնջ զկեանն ։ Նաև խնդրի, զի կերակուրն ոչ իցէ արգելեցեալ. վասն զի ընկալումն կերակրոյ արգելեցելոյ է անհնազանդութիւն ։ Ուստի կիրառութիւն նորա եղիցի չար ։ Եւևս խնդրի, զի կերակուրն, և ըմպելին առնանիցին վասն պարտաւորի վախճանի, այսինքն, վասն առողջութեան մարմնոյ, և համապահեցման կենի. քանզի բանական գոյացութիւն գործելով զիր ինչ 'ի կամաւորէ ընտրութենէ իւրմէ, պարտի առնել զգործ իւր վասն պարտաւորի վախճանի նորա, որպէս կերտի տունն, զի բնակիցիմք 'ի նմա, և լինի զգեստն, զի ծածկիցէ զմերկութիւն մեր ։ Արդ վախճանն ընկալման կերակրոյ, և ըմպելւոյ է առողջութիւն մարմնոյ, և համապահութիւն կենի ։ Ուստի պարտին առնանիլ վասն առողջութեան մարմնոյ, և համապահեցման կենի ։ Վերջապէս խնդրի, զի առնանիցին պատշաճաւ, և յարմարաւ կերպիւ. քանզի պարտին առնանիլ մարդկայնով, և բանականաւ կերպիւ, և որպէս յարմարի մարդոյ, զբանականութիւն ունեցողի. և քանզի կարի անվայելուչ տենչն ուտելոյ ցուցանէ զանկարգութիւն անսանձի ախտի ։

3. Նա, որ 'ի կիրառման, և յընկալման կերակրոյ, և ըմպելւոյ ոչ պահէ զվերոյասացեալս վերախնդրեցեալս իրս, զի կիրառութիւն, և ընկալումն կերակրոյ, և ըմպելւոյ իցէ ներգործութիւն պահեցողութեան, և զգաստութեան, մեղանչէ մեղօք որկրամոլութեան, և չռայտութեան, կամ արբեցողութեան, և է որկրամոլ. քանզի պակասի 'ի յայնոսիկ իրս, որք խնդրին, զի կիրառութիւն, և ընկալումն կերակրոյ, և ըմպելւոյ իցէ ներգործութիւն առաքինութեան պահեցողութեան, և զգաստութեան ։ Զայս ոչ շարժէ առաքինութիւն, այլ շարժէ մոլութիւն առ 'ի յընդունել զկերակուր, և զըմպելի ։ Մեծութիւն մեղի համարելի է ըստ մեծութեան պակասութեան վերախնդրեցելոց ։ Ուստի որ 'ի կիրառման կերակրոյ, և ըմպելւոյ, անկարգաբար, և աւելորդաբար ուտէ, և ըմպէ, գործէ զմեղս որկրամոլութեան. վասն զի պակասի 'ի քանակութեան, և 'ի չափաւորութեան կերակրոյ, և ըմպելւոյ ։ Նմանապէս նա, որ 'ի կիրառման կերակրոյ, և ըմպելւոյ վարի կերակրով, և ըմպելեաւ, զորս ճանաչէ գոլ ինքեան վնասակարս, մեղանչէ մեղօք որկրամոլութեան քանզի պակասի 'ի յորակութեան կերակրոյ, և ըմպելւոյ ։ Դարձեալ նա, որ 'ի կիրառման կերակրոյ, և ըմպելւոյ վարի կերակրով 'ի յօրինէ արգելեցելով, մեղանչէ մեղօք որկրամոլութեան, և անհնազանդութեան. քանզի ոչ պահէ զօրէնն, զամ կերակուր արգելօղն ։ Յայտ է, թէ այսպիսին իցէ կարի որկրամոլ. վասն զի այնպէս անկարգ է յայսպիսւոջ մարդում փափագն տենչալոյ անպարտաւորի կերակրոյ, զի առնիցէ զնա յանցանել զպա-

զպատուէրմանս, զայնոսիկ կերակուրն արգելողաց : Նմանապէս նա, որ վարի կերակրով, և ըմպելեաւ ոչ վասն առողջութեան մարմնոյ, և համապահեցման կենի, այլ միայն վասն հեշտութեան, մեղանչէ մեղօք որկրամոլութեան. քանզի պակասի 'ի կարգի առ պարտաւոր վախճան ընդունելոյ զկերակուրն, և զըմպելին : Վերջապէս նա, որ սաստկաւ տենչիւ ընդունի զկերակուրն, և զըմպելին, մեղանչէ մեղօք որկրամոլութեան. քանզի պակասի 'ի կերպի առնլոյ զկերակուրն, և զըմպելին :

4. 'Ի որկրամոլութեան են բազումք մոլութիւնք, և բազումք մեղք : Քանզի 'ի յորկրամոլութեան դատանին շռայլութիւն, արբեցողութիւն, ծուլութիւն, բղջախոհութիւն, խեղկատակութիւն, անպատեհ ծիծաղ, անվայելուչ խաղ, զաղիրք բանք, և անմաքրութիւն : 'Ի յորկրամոլութեան է շռայլութիւն. քանզի նա, որ 'ի կիրառման կերակրոյ պակասի 'ի քանակութեան, և 'ի յորակութեան, և որ վարի արգելեցելով կերակրով, և գիտէ միայն զհեշտութիւն կերակրոյ, և սաստկաւ անվայելչաւ ագահութեամբ ուտէ զկերակուրն, մեղանչէ մեղօք շռայլութեան : 'Ի յորկրամոլութեան է արբեցողութիւն. քանզի նա, որ 'ի կիրառման ըմպելւոյ առնու զայնքան ըմպելի, և վարի այնպիսեաւ ըմպելեաւ, և այնքանաւ ըմպելեաւ, զի կորուսանիցէ զկիրառումն բանի, է արբեցող, և մեղանչէ մեղօք արբեցողութեան : Ուստի 'ի յորկրամոլութեան է շռայլութիւն, և արբեցողութիւն : 'Ի յորկրամոլութեան է ծուլութիւն. վասնզի որկրամոլք, և ուռեցեալք մգութեան որկրամոլութեան, լնուն զինքեանս աւելորդաւ կերակրով, և ըմպելեաւ, և լինին անընդունակք առ աղօթս, առ հոգևորս կրթութիւնս, և առ ջերմեռանդութիւն. և ունին զանսանձ հեշտութիւն առ 'ի յուտել, և առ 'ի յըմպել, և առ 'ի յանպատեհաբար ուրախանալ. և համահետևապէս ունին զընդդիմութիւն առ հոգևորս գործս : Ուստի 'ի յորկրամոլս 'ի յորկրամոլութենէ ծնանի, և ծագի ծուլութիւն : 'Ի յորկրամոլութենէ է բղջախոհութիւն. քանզի որկրամոլք, և ուռեցեալք որկրամոլութեամբ, 'ի ձեռն աւելորդի կերակրոյ, և ըմպելւոյ սնուցանեն զբղջախոհութիւն, և զարթուցանեն զցանկութիւն. և սիրեն զընկերս անըմբռնաբար խնդացօղս, և զընկերուհիս առատապէլաբար երգօղս, և զբղջախոհութիւն բորբոքօղս, վառօղս, և ընդոստուցանօղս : Ուստի 'ի յորկրամոլս 'ի յորկրամոլութենէ բորբոքի մարմնասիրութիւն, և համահետևապէս ծագի բղջախոհութիւն : 'Ի յորկրամոլս նաև բղջախոհութեան ուռեցեալս, յայնմանապէս է խեղկատակութիւն, անպատեհ ծիծաղ, զաղիրք բանք, անվայելուչ երգ, գարշելի անմաքրութիւն, և կատակախօսութիւն :

5. Բազումք վնասք են մարդոյ 'ի յորկրամոլութենէ : Քանզի առնէ զմարդն որկրամոլութեան ուռեցեալն անըմբռն, և հակառակ հոգևորաց կրթութեանց. յօժարեցուցանէ առ զաղիրս, և առ գարշելիս իրս : Աւելի է, զի խնդրիցէ զանջերմեռանդս ընկերս, զմարմնասէրս, և զմարմնաւոր մխիթարութիւն սիրօղս : Նուտրամադրէ զմարդն, զի ոչ միայն թողուցու զհոգևորս կրթութիւնս, այլ նաև զժամանակաւորս հարկաւորս և զօգտակարս իրողութիւնս, և զգործս, և զուշադիր ջանն, և զպարտաւոր կառավարութիւն ընտանեաց : Աստի որկրամոլն եղեալ ծոյլ շուրջ զհոգևորօք կրթութեամբք, և զպարտաւորօք իրողութեամբք ընտանեաց, պարապի զեխութեան, որովայնամոլութեան, արբեցողութեան, խաղի, ունայնի ուրախութեան, խեղկատակութեան, անպատեհից բանից, զազրալեաց ներգործութեանց, ծախելով զպատուականանդունեղ ժամանակն 'ի յունայնութեան, և 'ի մեղանչականս արարողութիւնս : Ուստի որկրամոլութիւն վնասէ հոգւոյ որկրամոլի. քանզի մեղանչէ : Վնասէ առողջութեան. վասնզի երբեմն հի-

ւան-

ւանդանայ ։ Վնասէ անուան, և բարւոյ համբաւոյ․ քանզի որովայնամոլք և արբեցողք են խայտառակք ։ Վնասէ պատուոյ․ վասնզի պարապողք սնոտեաց արարողութեանց են անգոսնելիք ։ Վնասէ գովասանի․ քանզի որովայնամոլք, և արբեցողութեան հետևողք են անարգելիք ։ Վնասէ ժամանակաւորաց իրողութեանց․ քանզի արգելու զշահաւէտութիւն նոցա ։ Վնասէ ընտանեաց․ քանզի երբեմն պատճառէ զչքաւորութիւն ։ Վնասէ ողորմածութեան․ վասնզի առնէ զմարդն անկար առ ՚ի առնել զողորմութիւն ։

6․ Շուայտութեանց, բղջախոհութեան, և մեղանչականաց խրախութեանց պարապողք, ՚ի վաղընջուց քարակոծեալք լինէին ՚ի ժողովրդենէ, հրամանաւ տեառն․ որպէս յայտէ ՚ի գիրս երկրորդօրինաց ։ գլ․ 21․ թիւ․ 20․ Ուրեմն պարապողք շուայտութեանց, և բղջախոհականաց խրախութեանց պարտին երկնչել ՚ի դատաստանէ տն̃ ։ Զքաղցր քուն վայելէ սիրտն բարեխառնի, յառաւօտուն կանգնի նոյնն, և է տր̃ անձին իւրոյ․ բայց աշխատանն, հսկումն, և բարկութիւն, և խոշտանկմունք կրթեն զանյագելի մարդն ։ Բարեխառն է պահեցող, և զգաստ․ անյագելին, է որովայնամոլ, և արբեցող ։ Պահեցողն, և զգաստն է իմաստուն․ որովայնամոլն, և արբեցողն յիմար ։ Ըմպօղն միջավարաբար զգինի, է զգաստ․ անմիջավարաբարն, է արբեցող․ գինին ՚ի սկզբանէ ստեղծեցեալ է ՚ի յուրախութիւն, և ոչ ՚ի յարբեցողութիւն ։ Ուստի է խնդութիւն հոգւոյ, և սրտի, գինին չափաւորապէս ըմպեցեալն ։ Է առողջութիւն հոգւոյ, և մարմնոյ զգաստ ըմպումն․ իսկ գինին կարի ըմպեցեալն, առնէ զբորբոքումն, և զբարկութիւն, և զբազումս թշնառութիւնս ։ Գինին կարի ըմպեցեալն է դառնութիւն հոգւոյ ։ Զօրեղութիւն արբեցողութեան, է բարկութիւն անխոհեմ, նուազեցուցանող զառաքինութիւն, և առնօղ զվէրս ։ Այ որովայնամոլաբար յադեցողաց․ քանզի քաղցեացին․ ոչ են ծանրացուցանելիք սիրտք մեր ՚ի յորովայնամոլութեան, և ՚ի յարբեցողութեան, և ՚ի հոգս այսր կենի․ այլ պահեցողութբ̃, և զգաստութբ̃ տրամադրելիք, և յարմարեցուցանելիք են առ հոգևորս կրթութիւնս, և առջերմեռանդութիւն, զի մի լինիցիմք մարմնասէրք, և իմաստունք առ իրս մարմնաւորս ։ Քանզի որք են ըստ մարմնոյ, գիտեն զայնոսիկ իրս, որք են մարմնոյ ։

7․ Մեք քրիստոնեայքս պարտիմք շրջիլ իբր ՚ի տունջեան․ ոչ անառակութբ̃ք, և արբեցողութբ̃ք, ոչ խառն անկողնօք, և պղծութբ̃ք, ոչ նախանձու, և հակառակութբ̃․ այլ զգենուլ պարտիմք զտր̃ Յս̃ Քս̃, և ոչ առնել զխնամ մարմնոյ ՚ի ցանկութիւս ։ Քանզի բարեգոյն է շնորհիւ հաստատել զսիրտ, ոչ կերակրովք, որք ոչ օգնեցին շրջողացն ՚ի նոսա ։ Արդարև առաջին կինն ետես, թէ բարի էր ծառն ՚ի կերակուր․ և հաճոյ աչաց հայելոյ․ և գեղեցիկ ՚ի տեսանել․ և էառ ՚ի պտղոյ նորա, և եկեր, և ետ առն իւրում, և մեղանչեաց ընդ առն իւրում մեղօք անհնազանդութեան, և որկրամոլութեան ։ Բայց ոչ օգնեաց նոցա այս, քանզի արտաքսեցան ՚ի դրախտէ, և ծանրապէս պատժեցան ։ Վասնզի ասացեալ եղև կնոջ ՚ի պատիժ նորա ։ Բազմացուցանելով բազմացուցից զտրտմութիւնս քո, և զհեծութիւնս․ տրտմութբ̃ ծնցիս զորդիս․ և առ այր քո դարձ քո, և նա տիրեսցէ քեզ ։ Եւ Ադամայ ասացեալ եղև ՚ի պատիժ նորա․ զի լուար ձայնի կնոջ քո․ և կերեր ՚ի ծառոյ անտի, յորմէ պատուիրեցի քեզ անտի միայն չուտել․ անիծեալ լիցի երկիր ՚ի գործս քո․ տրտմութբ̃ կերիցես զնա զա̃մ աւուրս կենաց քոց ։ Փուշ, և տատասկ բուսուսցէ քեզ․ և կերիցես զբանջար վայրի ։ Քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո, մինչև դարձցիս յերկիր ուստի առար․ զի հողէիր և ՚ի հող դարձցիս ։

ցիս: Այսպէս պատժեցեալք եղեն անհնազանդութիւն, և որկրամոլութիւն ադամայ, և եւայի: Որ պատժեաց զանհնազանդութիւն, և զորկրամոլութիւն ադամայ, և եւայի, պատժեսցէ և զանհնազանդութիւն, և զորկրամոլութիւնքո, ով որկրամոլ, որ ոչ պահես հաւատարմաբար զծոմն յեկեղեցւոյ պատուիրեցեալս, որում ոչ հնազանդօղն, ոչ հնազանդի քի· առաւելեա՛ զի մի պատժիցիս պահեա՛ հաւատարմաբար զծոմն յեկեղեցւոյ հրամայեցեալս:

8. Պատժեաց Տրն և զորկրամոլս հրէայս· քանզի մինչ տակաւին մարքն էին 'ի յատամունս նոցա, և ոչ սպառեալ էր այնպիսի կերակուրն, և ահա բարկութիւն տեառն բորբոքեալ ընդդէմ ժողովրդեան, եհար զնա կարի մեծահարուածով: Քանզի հոյն որկրամոլք 'ի յարգանդի դուռնայ 'ի ներքին թիւն իժից: Որկրամոլք արդարև ուտեն, և կարի յագին· սակայն մինչ տակաւին կերակուրքն են 'ի բերանս նոցա, և բարկութիւն այ իջանէ 'ի վերայ նոցա: Որկրամոլն է հետևօղ եսաւայ, որ վասն միոյ կերակրոյ վաճառեաց զանդրանկութիւն իւր: Այսպիսիք մարդիկք ոչ ծառայեն տեառն մերոյ քի, այլ որովայնի իւրում: Քանզի սոյնպիսեաց Ածն է որովայնն, և փառքն 'ի յամաչման նոցա, վասնզի զերկրայինս և եթ դիտեն: Վասն որովայնամոլութեան բազումք մեռան· իսկ որ է պահեցօղ, երկարացուսցէ զկեանսն: Ուստի որպէս պահեցողութիւն է օգտակար հոգւոյ, և մարմնոյ· այսպէս որկրամոլութիւն է վնասակար հոգւոյ, և մարմնոյ: Որկրամոլն է անխոհեմ որպէս եսաւ, որ վասն ոսպապրոյ վաճառեաց զանդրանկութիւն իւր: Նաև 'ի ժամանակի նոյի պատժեցան որկրամոլք, քանզի 'ի յաւուրս նոյի ուտէին, և ըմպէին, զկանայս առնէին, և արանց լինէին մինչև 'ի յօրն, յորում եմուտ նոյ 'ի տապանն, և եկն ջրհեղեղն, և կորոյս զամենեսեան: Ծառայօղն որկրամոլութեան, ծառայ է չար տիրուհւոյ· քանզի ծառայէ տիրուհւոյ, որ վնասէ մարմնոյ, և հոգւոյ, և որ ածէ առ բղջախոհութիւն: Որկրամոլն, բղջախոհն, և արբեցօղն են նմանք: Քանզի որպէս բղջախոհն ունի զմիտսն 'ի մարմնասիրութեան, ագահն 'ի վաստակոջ, այսպէս և որկրամոլն 'ի յորովայնի: Անգոսնեա՛ զորկրամոլութիւն, և սիրեա՛ զպահեցողութիւն, զի օգտիցես մարմնոյ, և հոգւոյ քում:

## ԳԼՈՒԽ ԽԲ.

### Յաղագս բղջախոհութեան:

1. Բղջախոհութիւնն է անկարգ իղձ հեշտութեան շօշափողութեան: Ուստի որ անկարգաբար փափաքի հեշտութեան շօշափողութեան, է բղջախոհ: Ած ստեղծ զմարդն, և զկինն 'ի կողից նորա կերպաւորեաց 'ի կին: Ուստի ստեղծ զմարդն արու, և էգ, և ամուսնացոյց զնոսա, և կամեցաւ համապահել զմարդկային տեսակն ամուսնութբ, և զուգակցութբ արւոյ ընդ իգի: Եւ զուգակցութե զհեշտութի, զի մարդն յօժարիցի առ ամուսնութի: Հեշտութին զուգակցութե ոչ է վախճան· այլ զուգակցութե հեշտութբ իւրով է միջոց վասն վախճանի, որ է համապահութե մարդկային տեսակի: Արուն, և էգն, որք զուգակցին ամուսնութբ, և վարին զուգակցութբ միջավայրաբար, և ըստ հրամանի բանի, վասն համապահեցման տեսակի, ոչ են բղջախոհք, այլ են ողջախոհք ողջախոհութբ ամուսնութե· քանզի զուգակցութե սացելով կերպիւ արարեցեալն է սուրբ, և է հաճոյ այ: Վասնզի և հնար Ածայ-

նոյ

նայ իմաստութեն ։ Եթէ այսպիսի զուգակցումն լինիցի 'ի շնորհի 'ի հրամանէ սիրոյ , նաև է արդիւնաւոր · քանզի է բարի ներգործումն , ելուզեցեալ 'ի հրամանէ սիրոյ ։ Նաև նոքա , որք 'ի յամուսնութեն վարին զուգակցութբ միջավարաբար , և ըստ հրամանի բանի վն սպեղանւոյ տկարութե խորոյ , զոր համաքարշեցին 'ի սկզբնականէ մեղէ , ոչ են բղջախոհք · վասնզի վարին սպեղանեաւ վասն առողջութե ։

2 · 'Ի յայսոսիկ , որք ամուսնացեալք են , և վարին զուգակցութբ ամուսնականաւ , ըստ պակասութե բարեխառնութե , և դիտաւորութե պարտաւորի վախճանի , է պակասութի ողջախոհութե , և արատ բղջախոհութե · վասնզի ամբողջութի ամուսնականի ողջախոհութե պահանջէ , զի կիրառումն զուգակցութե իցէ միջավար , և իցէ վասն պարտաւորի վախճանի , դիտեցելոյ 'ի յամուսնութե ։ Ուստի ըստ պակասութե չափաւորութե , և դիտաւորութե պարտաւորի վախճանի , է պակասութի ողջախոհութե , և ըստ պակասութե ողջախոհութե է արատն բղջախոհութե , որ է ներհակ ողջախոհութե ։ Նոքա , որք 'ի յամուսնութե վարին զուգակցութբ , կերպիւ անբնականաւ , և արգելլոյաւ զյղացումն զաւակի , յայտնապէս են բղջախոհք , և կարի ծանրապէս մեղանչեն ընդդէմ ամուսնութե , և ընդդէմ հեղինակի ամուսնութե , որ կարգեց զնա վասն յղացման զաւակի , և համապահեցման առաւելի ։ Արդ ամուսնացեալն , վարելով զուգակցութբ ոչ ընդ իւրում , և էգն ամուսնացեալն , վարելով զուգակցութբ ոչ ընդ իւրում , են բղջախոհք , և ծանրապէս մեղանչեն ընդդէմ ամուսնութե , և ընդդէմ հաւատարմութե , որ է մեծագունեղ բարին ամուսնութե ։ Նոքա են շնացողք , և անդառնալիք բղջախոհք ։ Արտաքոյ ամուսնութե ամ զուգակցումն շօշափողութե է վավաշոտական , և ո և իցէ վարումն զուգակցութե է վավաշոտական , և համայնք որով և կերպիւ վարոցք զուգակցութբ շօշափողութե , են բղջախոհք · քանզի ամուսնութբ զուգակցումն առն ընդ կնոջ լինի օրինաւոր ։ Ուստի արտաքոյ ամուսնութե ամ զուգակցումն է վավաշոտական ։

3 · Բղջախոհութիւնն ածէ զխորհուրդս , զիղձս , զբանս , զգայութիս , զշարժմունս , զընկերակցութիւն , զսեղանն , զզարդն , և զպարարողութիւս ։ Բղջախոհութին ածէ զխորհուրդս · քանզի կամաւորք մտածմունք զազրալեաց առարկայից , են վավաշոտականք ։ Ուստի ունին զանմաքրութի բղջախոհութե ։ Բղջախոհութին ածականէ զիղձս · քանզի իղձք զիրաց անմաքրոց , և վավաշոտականաց , է վավաշոտական և անմաքուր ։ Ուստի ասէ Տրն ։ ( Բայց ես ասեմ ձեզ · թէ ամ որ հայի 'ի կին մարդ առ 'ի ցանկանալոյ նմա , անդէն շնացաւ ընդ նմա 'ի սրտի իւրում ։ ) Մատ · 5 · թիւ · 28 · Բղջախոհութին ածէ զբանս · վասնզի բանք զազրալիք , են բղջախոհութի , և անմաքրութի ։ Բղջախոհութին ածէ զգայութիս · քանզի հայեցմունքն բղջախոհաց , են բղջախոհք , ունկնդրումն վավաշոտական , և շօշափումն նոյն զաշրալի ։ Վասնզի հայեին 'ի վասնդաւորս դէմս , ունկդնեն բանից զազրալեաց , և ձեռամբ իւրով դայթագղին ։ Սանձելիք են զգայութք , զի արգելանիցին գայթագղութիք · ուստի ասէ Տրն ։ ( Եթէ ակն քո գայթագղեցուցանէ զքեզ , խլեա զնա , և ընկեա 'ի քէն , զի լաւ է քեզ , եթէ մի անդամոց քոց կորիցէ · և մի ամ մարմինդ քո անկանիցի 'ի գեհեն ։ Եւ եթէ աջ ձեռն քո գայթագղեցուցանէ զքեզ , հատ զնա , և ընկեա 'ի քէն · զի լաւ է քեզ , եթէ մի անդամոց քոց կորիցէ · և մի ամ մարմինդ քո արկանիցի 'ի գեհեն ։ ) Մատ · 5 · թիւ · 29 · Բղջախոհութին ածէ զշարժմունս · քանզի շարժմունքն բղջախոհաց են անպարկեշտք , և զազրալիք ։ Բղջախոհութին ածէ զընկե_

րակցութիւն. քանզի ընկերք բղջախոհաց, են անպարկեշտք, և անմաքուրք:

4. Բղջախոհութիւն պղծէ զսեղանն. քանզի 'ի սեղանոջ բղջախոհաց, են բազումք անմաքրութիւնք: Վասնզի 'ի սեղանս նոցա են անմաքուրք ընկերք, անմաքուր երգ, անմաքուր հայեցմունք, անմաքուրք խօսակցութիւնք, անմաքուրք շարժմունք, անմաքուրք խաղք, և անմաքրութիւնք որովայնամոլութեան, և արբեցողութեան: Բղջախոհութիւն ապականէ զզարդն. քանզի բղջախոհք զարդարեն զիւրեանս ինքեանս վավաշոտիւք, և անպարկեշտիւք զարդուք, որք 'ի հայեցօղս զարթուցանեն զվավաշոտս շարժմունս, զանմաքուրս մտածմունս, և զանմաքուրս խղճս: Բղջախոհութիւն պղծէ զարարողութիւնս. քանզի արարողութիւնք բղջախոհաց են պղծք: Զազիր բղջախոհութիւն զզազիրս անմաքրութիւնս 'ի կիրարկանէ, և պղծէ. Զանազանիւք զազրօք կերպիւք ապականէ: Ոչ ումեք խնայէ: Ոչ ազատաց, ոչ արենակցաց, ոչ զուգակցելոց, ոչ անձանց տեառնագրեցելոց, ոչ կրօնաւորաց, ոչ սրբոց կուսանաց Աստուծոյ նուիրեցելոց, ոչ սրբոց տեղեաց, ոչ իրի այլոյ տեսակի, և ոչ բնութեան խնայէ: Քանզի պղծէ զազատս, պղծէ զզուգակցեալս, պղծէ զարենակիցս, պղծէ զանձինս տեառնագրեցեալս, պղծէ զկրօնաւորս, պղծէ զկրօնաւորուհիս, պղծէ զսուրբ կուսանս Աստուծոյ նուիրեցեալս, պղծէ զիրս այլոյ տեսակի, և պղծէ ընդդէմ բնութեան: Պարկեշտաբար խօսեցայ: Լուեցի զզազրալիս անուանս պղծութեանց նորա: Ո՛ ապիրատ բղջախոհութիւն, դու ես ընդհանրական հրդեհումն առ 'ի պղծել: Թիւնաբեր օձ առ 'ի ապականել: Նենգաւորագունեղ հրապուրան առ 'ի պատրել:

5. 'Ի բղջախոհութեան է անժուժկալութիւն, անհամեստութիւն, անամօթխածութիւն, անպարկեշտութիւն, անիրաւութիւն, յիմարութիւն, ունայնութիւն, մարմնախրութիւն, տգեղութիւն, և զազրութիւն: 'Ի բղջախոհութեան է անժուժկալութիւն. քանզի բղջախոհք ոչ ընդդիմանան վավաշոտաց հրապուրանաց, և բղջախոհականաց շարժմանց, այլ տան զտեղի. ոչ սանձեն զմարմինն, այլ գգուեն. ոչ սանձահարեն զցանկութիւն, այլ ընդոստուցանեն. ոչ մահացուցանեն զանդամս, այլ ականարկութեան նոցա հնազանդին, և հպատակին, և հետևին մարմնաւորաց հեշտութեանց, և անսան նմա. ոչ զինուորին հոգևորօք կրթութեամբք, և խստիւք ծոմապահութեամբք, այլ ունկնդիրք լինին բղջախոհութեան. հնազանդելով ցանկութեանց, թողուն թագաւորել զմեղն 'ի մահկանացու մարմնոջ իւրեանց. ոչ տան զիւրեանս ինքեանս Աստուծոյ իբր 'ի մեռելոց յարուցեալս, և զանդամս իւրեանց առնելով զէն արդարութեան Աստուծոյ, այլ առնեն զանդամս իւրեանց զէնս անօրէնութեան մեղաց, առնելով զանիրաւութիւնս ընդդէմ Աստուծոյ, ապավարելով բարերարութեամբք նորա 'ի վշտացուցումն նորա. ոչ մահացուցանեն զերկրայինս անդամս իւրեանց, բացահերքելով զմարմնաւորս հեշտութիւնս, զանմաքրութիւնս, զվավաշոտութիւն, և զչար ցանկութիւն. այլ հետևին մարմնոյ, ցանկացողի ընդդէմ հոգւոյ, պարապելով գործոց մարմնոյ, որք են պոռնկութիւն, պղծութիւն, անպարկեշտութիւն, և բղջախոհութիւն: Ուստի եղեալք անժուժկալք, երկչոտք, և անզօրք, ոչ յաղթեն, այլ յաղթին, ոչ յաղթահարեն, այլ հնազանդին, և հպատակին. և ոչ ընդունին զյաղթանակն, այլ լեալք նախատինք անարգին:

6. 'Ի բղջախոհութեան է անհամեստութիւն. վասնզի մարմնասէրք պարապին անարգելեաց, և անգոսնելեաց ներգործութեանց, և արարողութեանց, զորս բնական լոյսն անարգէ, և ենթադատէ անգոսնելիս: 'Ի բղջախոհութեան է անամօթխածութիւն. քանզի բղջախոհք հետևելով յօժարութեան մարմնոյ, ցան-

ցանկացողի ընդդէմ հոգւոյ, բացամերժեն զամօթխածութիւն, և համարձակին նաև հրապարակաբար պարապել զաղբալեաց ներգործութեանց: 'Ի բղջախոհութեան է անպարկեշտութիւն . վասնզի բղջախոհք եղեալք անպարկեշտք, ոչ երկնչին ցուցանել զնշանս անպարկեշտութեան, բանիւք, շարժմամբք, և անվայելչաւորօք պգեստիւք, և զարդուք, և նաև մերկութեամբ: 'Ի բղջախոհութեան է անիրաւութիւն . քանզի բղջախոհք են անիրաւք ընդդէմ Աստուծոյ, անիրաւք ընդդէմ առաքինութեան ողջախոհութեան, եթէ են ամուսնացեալք, անիրաւք ընդդէմ ամուսնութեան, և ընդդէմ հաւատարմութեան, եթէ են արենակիցք, անիրաւք ընդդէմ արեան, եթէ են կրօնաւորք, և քահանայք, անիրաւք ընդդէմ կրօնի, և քահանայութեան, եթէ են կուսանք Աստուծոյ նուիրեցեալք, անիրաւք ընդդէմ ուխտի, և երդման, եթէ զուգակցումն է արտաքոյ կարգի բնութեան. անիրաւք ընդդէմ բնութեան, եթէ են արգելօղք զկղզացումն զաւակի 'ի յամուսնութեան, անիրաւք ընդդէմ համապահեցման մարդկայնոյ տեսակի: 'Ի բղջախոհութեան է յիմարութիւն . քանզի կարգն իմաստութեան է այս, զի մարմինն հնազանդիցի հոգւոյ, և հոգին Աստուծոյ, զի 'ի յամուսնութեան լիցի չափաւորութիւն, և ուղիղ դիտաւորութիւն պարտաւորի վաղճանի, և զի արտաքոյ ամուսնութեան ոչ զուգակցումն լինիցի: Բղջախոհք, և տռփեցեալք մարմնաւոր հեշտութեանց, ոչ պահեն զասացեալ կարգն իմաստութեան: Ապաւրեմն բղջախոհք, և վավաշոտք, են յիմարք:

7. 'Ի բղջախոհութեան է ունայնութիւն . քանզի բղջախոհք ընդունին զունայնութիւն ողջախոհութեան ճառակարն: Վասնզի բղջախոհք, որք են կարօղք, և զմեծամ ինչս ունեցօղք, վարին բազմագեղաւ, և փառաւորաւ սեղանով, յորում են մեծագինք կերակուրք, և պատուականք ըմպելիք, և զգենուն զզգեստս մեծագինս, և զարդարեն, և չքնաղացուցանեն զիւրեանս ինքեանս պատուականօք զարդուք, ընդունին զերգիչս, զխաղացօղս, և զքաղցրս երգս, և զուրախականս բանս տաայօղս. Համայնիւք սոսացելովք սնուցանեն, և պարարտացուցանեն զցանկութիւն, գրգռելով զիւրեանս ինքեանս 'ի վավաշոտութիւն: Ուստի 'ի բղջախոհութեան է ունայնութիւն ճառակարն ողջախոհութեան: 'Ի բղջախոհութեան է մարմնասիրութիւն . քանզի բղջախոհք, և բղջախոհութեան տռփեցեալք, ոչ հետևին հոգւոյ, կրթելով զիւրեանս ինքեանս 'ի հոգևորս ներգործութիւնս, այլ առնելով զիւրեանս ինքեանս անըմբռնս հոգևորաց կրթութեանց, և ջերմեռանդութեանց, տան զիւրեանս ինքեանս ներգործութեանց մարմնասիրութեանց, և հեշտութեանց մարմնոյ, ցանկացողի ընդդէմ հոգւոյ, և զողորմելի մարդ քարշողի առ մարմնաւորս հեշտութիւնս: 'Ի բղջախոհութեան է տգեղութիւն . վասնզի բղջախոհք մեղօք բղջախոհութեան կորուսանեն զշնորհն Աստուծոյ, որ է գեղեցկութիւն, վայելչութիւն, չքնաղութիւն, ազնուականութիւն հոգւոյ, և զառաքինութիւնս հարկաւորապէս զուգակցեալս շնորհի, որք են զարդք հոգւոյ . և կարի տալով զիւրեանս ինքեանս վավաշոտութեան, և անկանելով 'ի թշուառութիւն բղջախոհութեան, կորուսանեն նաև զգեղեցկութիւն մարմնոյ: Վերջապէս 'ի բղջախոհութեան է զազրութիւն . քանզի խորհուրդք բղջախոհաց են զազիրք, խղճքն են զազիրք, բանքն են զազիրք, խաղքն են զազիրք, ընկերակցութիւնքն են զազիրք, և համայնք այլք իրքն են զազիրք:

8. Բազումք վնասք լինին բղջախոհի 'ի բղջախոհութենէ: Վնասք հոգւոյ, վնասք մարմնոյ, վնասք պատուոյ, վնասք ընչից, վնասք ընտանեաց, և վնասք ջերմեռանդութեան: Վնասք հոգւոյ . քանզի ամենայն կամաւոր բղջախոհական ներգործու-

ծուլին է մեղք մահուչափ . ուստի կորուսանէ զշնորհն , և զսէրն : Բղջախոհն հրապարակաբար մեղանչելով , դիւրաբար գայթագղեցուցանէ զընկերն . ուստի ոչ միայն վնասէ հոգւոյ իւրում , այլ նաև վնասէ հոգւոյ այլոց : Բղջախոհն դիւրաբար ստանայ զունակութի , և դժուարաբար ատացելոյ ունակութե , դառնայ առ այծ . ուստի բազմիցս խոստովանութիք , և հաղորդութիք բղջախոհաց են սրբապղծութիք . և համահետևապէս ապերախտս առաւել կորուսանեն զիւրեանս յինքեանս : Ած է մաքրութի , քս կոյս 'ի կուսէ ծնեալ , մարիամ կոյսն մաքրադունեղ . բղջախոհք են անմաքուրք . ուստի կարի անհաճոյք են այ , քի , և մարիամայ : Վնասք մարմնոյ . վասնզի կորուսանեն զզօրութիս , կարճացուցանեն զկեանն , և կարեն անկանիլ 'ի հիւանդութի , զմարմին նոցա տգեղացուցանող : Վնասք պատուոյ . վասնզի բղջախոհք , մանաւանդ կանայք , են խայտառակք : Վնասք ընչից . քանզի ունայնաբար ծախին , և սպառին 'ի բազմապեղս սեղանս , 'ի պատուականս զգեստս , 'ի խաղս , և 'ի նմանս ունայնս , և անստխ իրս : Վնասք ընտանեաց . քանզի կռիւք , և տարաձայնութիք լինին 'ի մէջ առն , և կնոջ , և վատաբար կառավարի տունն , և 'ի թշուառութին անկանին կինն , որդիքն , և դստերքն վասն վերաեկողի չքաւորութե : Վերջապէս վնասք ջերմեռանդութե . քանզի բղջախոհք ոչ հեշտին ջերմեռանդութե , այլ կրթութեց մարմնաւորութե :

## ԳԼՈՒԽ Խ: ԽԳ.

### Յաղագս ծուլութե :

1. Ուլութին է ընդդիմութիւն կրթութեց ջերմեռանդութե , և հոգևորաց գործոց : Զանազանիւք կերպիւք կարէ լինիլ ընդդիմութիս այս : Քանզի երբեմն զոմն ձանձրացուցանէ պարապիլն հոգևորաց աշխատանաց ըստ մարմնոյ , իսկ ոչ ըստ հոգւոյ , և ըստ կամաց . այլ հոգին խնդայ ընդդէմ ձանձրութե մարմնոյ , և կամն սիրէ զհոգևորս աշխատանս , և ատէ զձանձրութին , զոր զգայ , և ջանայ ոչ ընչացուցանել զատացեալ ձանձրութին , և արդելու զկամաւորս ցնորմունս , և անկամաւոր ցնորմանց ընդդիմանայ , և ջանայ ոչ ընչացուցանել զնս : Յայնժամ ծուլութին մարմնոյ ոչ վնասէ մարդոյ . քանզի հոգին է սիրող , և ատացեալ ձանձրութին ոչ յառաջագայի 'ի կամէն , այլ 'ի մորակէ սկզբնական մեղաց : Ուստի քրիստոնեայն , որ ընդդիմանալով ատացելոյ ձանձրութե , և ակամայից ցնդեցմանց , և ատելով զնա և զնոսա , սիրէ զհոգևորս աշխատանս , և կրթէ զիւր ինքն 'ի նս , է յաղթօղ , և յաղթանակօղ . որպէս և նա , որ քաջապէս ընդդիմանալով ցանկութե , զոր ատէ , ողջախոհաբար կեայ , է յաղթօղ , և յաղթանակօղ , և արդիւնաւորի զպսակ : Սպեղանին ընդդէմ ատացելոյ , և ընդդէմ ատացելոց ակամայից ցնդեցմանց , է բորբոքեցեալ ներգործութին սիրոյ , ջերմեռանդ յաճախութին խորհրդոց , և յարաժամ պարապումն հոգևորաց կրթութեց :

2. Ընդդէմ ատացելոյ ձանձրութե մարմնոյ , և ընդդէմ ատացելոց ակամայից ցնորմանց , քաջապէս պատերազմելի է , զի մի զօ-

րայ-

բայցեն, այլ յօրէ յօր ակարանայցեն, և նուաղեսցին, զի քաղցրանայցեն մեզ հոգևորք կրթութիւնք, և հոգևորք աշխատանք, այսինքն, աղօթք, մտադրութիւն, խոկումն, ընթերցումն հոգևորաց գրեանց, յաճախումն խորհրդոց, և նմանացն իւրոց: Փախչելի է 'ի կենցաղավարութենէ, յորում է բազմախօսութիւն, և ունայնախօսութիւն: Հոգալի է, զի մի քաղցրանայցեն մեզ աշխարհայինք մխիթարութիւնք, և յուշադրաբար հեռանալի է յայնց ամենից, մեզ ոչ պատկանողաց, և կարողաց պատճառել զցնորմունս մտաց: Յուշադրաբար ջանալի է, զի ամփոփանայցեմք 'ի հոգևորս կրթութիւնս, և 'ի վարժեցմունս բարեաց գործոց, և առ ջերմեռանդութիւն պատկանողաց: Հոգալի է, զի մի զբաղեցիմք իրօք առ մեզ ոչ պատկանաւորօք, և զցնորումն մտաց պատճառօղօք: Ջանալի է, զի 'ի սիրտս մեր բորբոքեսցի սէրն հոգևորաց իրաց, և զի զբաղեսցիմք իրօք, առ ջերմեռանդութիւն պատկանողօք: Եւ այլ և նմանք առնելիք, զի քաղցրանայցեն մեզ հոգևորք կրթութիւնք, և հոգևորք աշխատանք: Եթէ այսպէս առաջանայցեմք, և գործիցեմք, ջերմեռանդաբար յաճախելով զխորհուրդս, առնելով զներկրթութիւնս ջերմեռանդութեան, ջանալով, զի միշտ յաճախեսցիմք 'ի սիրոջ, 'ի յարդարութեան, և 'ի յայլս առաքինութիւնս, պարապելով աղօթից, խոկման, մտածման, և ընթերցման գրոց, զմեզ առ ջերմեռանդութիւն զարթուցանողաց, և զգուշանալով 'ի վրդովմանէ մտաց· ստացեալ ծանծրութիւն, և ստացեալ ակամայք ցնորմունք· զմիտն չփոթօղք, և պղծօղք· նուազեսցին, և ակարասցին:

3. Են ծոյլք, որք կամաւորապէս առնեն, և գործեն զհոգևորս կրթութիւնս, զորս պարտաւանդին առնել, և ոչ ունին զատելութիւն առ ստացեալս կրթութիւնս· սակայն կատարեն զնոսա պղերգաբար, և հանդերձ կամաւորօք ցնդեցմամբք: Սոքա առնեն զբարի գործն, այլ ոչ բարւոքէս: Վասնզի պարտէին կատարել զստացեալս կրթութիւնս յուշադրաբար, և թարց կամաւորաց ցնորմանց: Ստացեալ ծուլութիւն, որ ընդունի զպղերգութիւն, և զկամաւորս ցնդեցմունս, է մնասակար· քանզի մնասէ յուշադրութեան, և մտադրութեան, որք վերաբերին առ գործն այ: Ուստի է չար· վասնզի գործն այ կատարելի է յուշադրաբար, և մտադրաբար: Վնասէ նաև ջերմեռանդութեան: Քանզի 'ի ջերմեռանդութեան է բորբոքումն սիրոյ: Ուստի 'ի ջերմեռանդութեան է յուշադրութիւն, և մտադրութիւն, որք ոչ գտանին 'ի յայնոսիկ, որք պղերգաբար, և հանդերձ կամաւորաւ ցնդմամբ գործեն: Այսպիսիք ծոյլք անհաճոյք են այ· քանզի ած պահանջէ, զի գործն իւր լինիցի յուշադրաբար, և մտադրաբար: Ստացեալ ծուլութիւն մնասէ նաև առաքինութեանց, որոց ներգործութիւնք ելուզանելիք են 'ի հոգևորս կրթութիւնս: Քանզի ուր է կամաւոր զբաղումն, անդ, եթէ ելուզանիցին ներգործութիւնք այլոց առաքինութեանց, վասն ծուլութեան, և կամաւորի զբաղման, ոչ են սաստիկք· իսկ եթէ վասն ծուլութեան ոչ ելուզանիցին, արդէն ոչ են: Ստացեալ ծուլութիւն բանայ զճանապարհն առ վատթարագոյն ծուլութիւն· քանզի զմարդն ստացելով կերպիւ ծոյլն, տրամադրէ առ նա: Վասնզի ծուլութիւն, և կամաւոր զբաղումն առնէ, զի մարդոյ պղերգաբար, և զբաղելաբար գործողի, սակաւ առ սակաւ բարի գործն, զոր առնէ անհաճոյանայցէ· և այսպէս սակաւ առ սակաւ մերձենայ առ վատթարագոյն ծուլութիւն: Ուստի քաջաբար ընդդիմանալի է ստացելոյ ծուլութեան, զի մի լինիցի վատթարագոյն:

4. Են ծոյլք, որք կատարեն զհոգևորս կրթութիւնս, ոչ 'ի սիրոյ, այլ 'ի յամօթոյ, կամ 'ի յերկիւղէ: Սոքա ոչ կատարեն զբարի գործն տեսականապէս

այլ

այլ միայն նիւթականապէս, այսինքն, առնեն զգործն, որ է բարի. սակայն ոչ առնեն տեսականապէս. քանզի ոչ գործեն 'ի սիրոյ, այլ 'ի յանպարտաւորէ շարժմանէ : Ուստի եթէ կարիցեն բացաթողուլ, բացաձգիցեն նաև զայնոսիկ իրս, առ որս պարաւանդին : Այսպիսիք ծոյլք, թէպէտ արտաքուստ վասն ամօթոյ, կամ վասն երկիւղի, ոչ տայցեն զնշանս անհամբերութե, և ոչ ցուցանիցեն զանհամբերութի իւր. սակայն ներքուստ են անհամբերք, և բամբասեն, և են վրդովեցեալք : Սոքա են վատթարագոյնք քան զվերոյասացեալս ծոյլս. վասնզի նոքա թէպէտ ունիցին զծուլութի, և զկամաւորս ցնորմունս. սակայն կամին, և սիրեն զբարի գործն, և ընտրեն զնա 'ի սիրոյ. իսկ սոքա ոչ միայն ունին զծուլութի, և զկամաւոր զբաղումն. այլ նաև ոչ կամին զբարի գործն, և ներքուստ են անհամբերք, և բամբասեն. և ոչ ընտրեն զբարի գործն 'ի սիրոյ, այլ 'ի յամօթոյ կամ 'ի յերկիւղէ : Այսպիսիք ծոյլք առաւել անհաճոյանան այ. քանզի ոչ ունին զսէր բարեգործութե : Ծուլութիս այս առաւել վնասէ ծուլի : Վասնզի ոչ միայն վնասէ ջերմեռանդութե, և ներգործութեց այլոց առաքինութեց, որոց ներգործութիք ելուզանելիք են 'ի հոգւոյս կրթութես. այլ նաև ունի զպակասութի սիրոյ բարեգործութե, զանհամբերութի, և զբամբասանս : Ծուլութիս այս բանայ զճանապարհ առ վատթարագոյն ծուլութի. քանզի տրամադրէ զմարդն առ վատթարագունեղ ծուլութի : Ուստի մարդն ունեցօղն զասացեալ ծուլութին, կարի յոյժ ջանալ պարտի, զի ազատեցէ զինքն 'ի բռնութե նորա :

5. Են ծոյլք, որք ատեն զբարիս գործս, և բացաթողուն զնս, և տան զինքեանս վատթարաց արարողութեց : Սոքա ոչ միայն ատեն զհոգևորս կրթութիս. այլ նաև ունին զատելութի դէպ 'ի յայնոսիկ, որք ունին զնախանձաւորութի : Ուստի հալածեն զնախանձաւորս, զնոսա առ բարիս գործս, և առ հոգևորս կրթութիս հրաւիրօղս : Սոքա են վատթարագունեղք ծոյլք, մարդիկք մոլութեց տուեցեալք : Այսպիսիք ծոյլք ոչ գտան զբաղցրութի բարեաց գործոց, և հոգևորաց ներկրթութեց, զորս հալածեն. այլ հետևին մարմնականաց հեշտութեց : Ուստի են տուեցեալք վավաշտութե : Սոքա են շնայոյք, անառակք, և տուեցեալք խաղից : Ոչ պարտային փրկութե հոգւոց իւրոց, այլ մեղանչականաց գործոց, որովք կորուսանեն զնս : Զպատուականագունեղ ժամանակն, ինքեանց շնորհեցեալն 'ի բաշխողէ բարեաց, ոչ ծախեն 'ի ներկրթութիս, յորոց է փրկութի հոգւոյ, այլ վատնեն 'ի գործս, յորոց է մահն նորա : Ոչ գանձեն 'ի յերկինս, այլ հաւաքեն զմեղս : Հոգևորապէս են խուլք, և կոյրք. խուլք, քանզի ոչ լսեն, կոյրք քանզի ոչ տեսանեն : Են մարդիկք թարց առաքինութեց, և լիք մոլութեք : Դատարկք 'ի բարեգործութեց բեռնաւորեցեալք բազմօք մեղօք. խորհուրդք նոցա են վատթարք. փափաքքն չարք. սիրտքն յօժարք առ մեղս, բանքն զազիրք, խօսակցութիքն թարց շնորհի, արարողութիքն պիղծք. և կենցաղավարութին վատթարագունեղ : Կեանն նոցա է թշնաառ, 'ի մոլութիս, և 'ի մեղս ծախեցեալ. են մարդիկք ճշմարտապէս թշնաաք, բայց զթշնաաութի իւր ոչ ճանաչօղք : Ատելիք են ոչ միայն այ, այլ նաև մարդկանց :

6. 'ի վատթարագունեղի ծուլութե են բազումք մոլութիք : Քանզի 'ի նմա են յիմարութի, ունայնութի, մարմնասիրութիւն, անառակութի, դատարկութի, որկրամոլութի, բղջախոհութի, խաղասիրութի, կորուսումն հոգւոյ, և ամբարշտութի 'ի վատթարագունեղի ծուլութե է յիմարութի. քանզի ունեցօղք զվատթարա‿

րա‿

րագունեղ ծուլութիւն , նախատա-
նեն զմարմնաւորս իւրս հոգեւորաց ,
զժամանակաւորս յաւիտենականաց ,
զերկրայինս երկնայնոց , զսուտս ,
և երեւելիս ճշմարտից , և զգա-
լիս իմանալեաց : Շարժին ածմամբ
զգայութեանց իբրեւ զանասուն , ոչ
կառավարութեամբ բանի , և լուսոյ
օրինի : Անցուցանեն զկեանն 'ի
վաւաշոտութեան , և ոչ 'ի հոգեւո-
րութեան : Շրջին 'ի խաւարի մոլու-
թեանց , և ոչ 'ի լուսոյ առաքինու-
թեանց : Սիրեն զնմանակարս իւրս ,
և ատեն զգործս , և զներկրթու-
թիւս բարիս : Տան զիւրեանս ին-
քեանս մոլութեանց , և ոչ հոգան զա-
ռաքինութեանց Պարապին գործոց ,
որք սպանանեն , և ոչ պարապին
ներկրթութեանց , որք կեցուցանեն:
Սիրեն զխաւարն , և ատեն զլոյսն :
Ունկնդնեն յիմարաց , և հալածեն
զիմաստունս : Ուրեմն և ինքեանք
են յիմարք : 'Ի վատթարագունեղի
ծուլութեան է ունայնութիւն . քանզի
'ի գործոց , որոց պարապին ծոյլք ,
ոչինչ շահաւէտութիւն ընդունին .
այլ ընդունին զվնաս հոգւոյ , և
մարմնոյ . վասնզի մեղօք վնասին հո-
գիք նոցա , և որկրամոլութեամբ ,
բղջախոհութեամբ , է վնասակարօք
խաղօք վնասին նաև մարմինք նոցա :
'Ի վատթարագունեղի ծուլութեան է
մարմնասիրութիւն . քանզի ծոյլք այս-
պիսեաւ ծուլութեամբ բացածգեն , և
ատեն զհոգեւորս ներկրթութիւնս ,
և տան զիւրեանս ինքեանս մար-
մնաւորաց գործոց , լեալք սիրօղք
հեշտութեանց , և մարմնականաց փափ-
կութեանց , զհոգեւորս բերկրութիւնս ,
և զհոգեւորս գործս ոչ ևս ճանա-
չեն :

7. 'Ի ծուլութեան է անառա-
կութիւն . քանզի վատթարագունեղիւ
ծուլութեամբ ծոյլքն , առնեցեալք մար-
մնասիրութեան , և վաւաշոտութեան ,
և բղջախոհականաց հեշտութեանց ,
զինչս , զորս ունին , վատնեն 'ի
գործս , յորոց ծորեն մարմնականք
բերկրութիւնք , և վաւաշոտականք
հեշտութիւնք : Ուստի վասն վաւա-
շոտականաց , և մարմնականաց հեշ-
տութեանց ծախեն , և անառակաբար
սպառեն զինչս , զորս ունին : 'Ի
վատթարագունեղի ծուլութեան է
դատարկութիւն . վասնզի վատթարա-
գունեղիւ ծուլութեամբ ծոյլքն , ատե-
լով զհոգեւորս աշխատանս , և թող-
լով զփրկաւէտս ներկրթութիւնս , տան
զիւրեանս ինքեանս ունայնութեան ,
խաղից , և հեշտութեանց : 'Ի վատ-
թարագունեղի ծուլութեան է որ-
կրամոլութիւն . քանզի վատթարա-
գունեղիւ ծուլութեամբ ծոյլքն , առնե-
ցեալք բերկրութեանց , և վաւաշո-
տականաց հեշտութեանց , ճանաչելով
'ի գործս որկրամոլութեան դուռ զվա-
ւաշոտականս հեշտութիւնս տան
զիւրեանս ինքեանս ներգործութեանց
որկրամոլութեան , զի ճաշակեսցեն
զհեշտութիւնս կերակրոց , և ըմպե-
լեաց : 'Ի վատթարագունեղի ծու-
լութեան է բղջախոհութիւն . քանզի
վատթարագունեղիւ ծուլութեամբ ծոյլք ,
խնդրօղք զմարմնաւորս հեշտու-
թիւնս , տեսանելով 'ի ներգործու-
թիւնս բղջախոհութեան դուռ զվաւաշո-
տականս հեշտութիւնս , տան զիւրեանս
ինքեանս հեշտութեանց շօշափողու-
թեան , յորս է բղջախոհութիւն : 'Ի
վատթարագունեղի ծուլութեան է
խաղասիրութիւն . վասնզի վատթա-
րագունեղիւ ծուլութեամբ ծոյլքն ,
առնեցեալք ունայնութեան , և
դատարկութեան ,'ի խաղս դատարկաբար-
կեալ , և զդատարկ կեանս անցել յօ-
ժարք , և պատրաստք են : 'Ի վատ-
թարագունեղի ծուլութեան է կո-
րուստն հոգւոյ . քանզի զանա-
զանիւք մեղօք կորուսանեն զպա-
տուականագունեղ հոգիս իւրեանց ,
պատուականագունեղիւ արեամբ
փրկչին աշխարհի փրկեցեալս : Վասն-
զի կորուսանեն զնոսա մեղօք զան-
ցառութեան , զանցանելով զփր-
կաւէտս կրթութիւնս , առ որս պա-
րտանդին : Կորուսանեն նաև մե-
ղօք յանձնառութեան , պարապելով
որկրամոլութեան , և բղջախոհու-
թեան : Վերջապէս 'ի վատթարա-
գունեղի ծուլութեան է ամբարշ-
տութիւն . քանզի այսպիսեաւ ծուլութեամբ
ծոյլքն ատեն զբարեպաշտականս

V գործս

գործս, և հալածեն զնախանձաւորս, և զայնասիկ որք հրաւիրեն առ բարեպաշտութիւն։

8. Ո՛վ քրիստոնեայ թող զծուլութիւն, և հետևեաց բարեգործութեանց։ Ջանացիր զի իցես ծառ բարի, առնող զպտուղս բարիս. մի կամիր լինել ծառ չար, առնող զպտուղս չարս. այլապէս հատցիս, և ՚ի հուրն արկցիս։ Քանզի ասէ տ՟ր։ (ամ՟ ծառ, որ ոչ առնէ զպտուղ բարի, հատանի, և ՚ի հուր արկանի. ապա ի պտղոց նոցա ծանիջիք զնոսա։ Ոչ ամ՟ որ ասէ ցիս, տ՟ր, տ՟ր, մտցէ յարքայութիւն երկնից. այլ որ առնէ զկամս հօր իմոյ, որ յերկինսն է։ Բազումք ասիցեն ցիս յաւուր յայնմիկ, տ՟ր, տ՟ր. ոչ յանուն քո մարգարէացաք. և յանուն քո դևս հանաք. և յանուն քո զօրութիւնս բազումս արարաք։ Եւ յայնժամ ասացից ցնոսա, եթէ ոչ երբէք գիտէի զձեզ. ՚ի բաց կացէք յինէն ամ՟ք, որք գործէք զանօրէնութիւն։ (Մատթէի. 7. թիւ. 19. Եդեալ ՚ի յայգւոջ տեառն ՚ի ձեռն մկրտութեան, պարտիս գործել, զի անուցուս զվարձս ՚ի վաղճանի կենի. վասնզի ոչ դատարկաց, այլ գործողաց խոստացեալ է վարձ։ Թարց զգեստու հարսանեաց ոչ կարես ժառանգել զերկնային փառս. քանզի ոչ ունեցողն զզգեստ հարսանեաց, կապեցելովք ձեռօք, և ոտիւք, արկանի ՚ի խաւարն արտաքին, ուր են լաց, և կրճտումն ատամանց։ Զգեստն հարսանեաց են բարեգործութիւքն։ Պիտոյ է ընդունիլ զձէթն ՚ի յանօթս լապտերօք հանդերձ. քանզի ոչ ունողն զձէթն ՚ի յանօթս լապտերօք հանդերձ, փակի դուռն արքայութեան։ Ձէթն ՚ի յանօթս են գործք սիրոյ։ Պսակն արդարութեան կայ զբարւոք պատերազմ պատերազմողի, զընթացն կատարողի, և զհաւատն պահողի։ Զբարւոք պատերազմ պատերազմօղն, զընթացն կատարօղն, և զհաւատն պահօղն, է քրիստոնեայն, մինչև առ վաղճան կենի իւրոյ գործօղն զբարիս։

Ած ուրեմն զի արի կեան, զի ընդունիցիս զպսակ։

## Գ Լ Ո Ւ Խ ԽԴ.

### Յաղագս Ներմարմնութեան։

1. Ներմարմնութիւնն է միոյն ՚ի գլխաւորագունեղից խորհրդոց, զորս մեք քրիստոնեայքս հաւատամք։ Խորհուրդս այս նշանակէ, և ծանուցանէ, զմինն ա՟ծային անձն առեալ գոլ զկատարեալ մարդկային բնութիւն, և միաւորեալ գոլ զնա ինքեան ենթակայականաւ, և անձնաւորականաւ միաւորութ՟բ, այնպէս զի ա՟յ, և մարդոյ իցէր մին անձն, մին ենթակայացեալ, մին ենթակայացող, և մին ենթադրեցեալ։ Ըստ զօրութ՟բ այսր խորհրդոյ. ա՟ծ, և մարդ մին անձն մին ենթակայացեալ, մին ենթակայացող, և մին ենթադրեցեալ։ ՚Ի սրբազնագունեղի երրորդութեան են երեք անձինք, այսինքն, հայր, և որդի, և հոգին ս՟բ։ Ոչ հայրն, և ոչ հոգին ս՟բ էառ զմարդկային բնութիւն. այլ որդին, որ է երկրորդ անձն, էառ զմարդկային բնութիւն, և ներմարմնացաւ, և եղև մարդ, առեալ զմին կատարեալ անհատ մարդկային բնութիւն, և միաւորեալ զնա ինքեան ենթակայականաւ, և անձնաւորականաւ միաւորութ՟բ։ Ըստ զօրութ՟բ այսր խորհրդոյ կատարեալ ա՟ծային բնութիւն, և կատարեալ մարդկային բնութիւն դոյացականաւ անձնաւորականաւ միաւորութ՟բ միաւորեցեալք, միով, և նոյնով ենթակայութ՟բ ենթակայանան ՚ի յանձին որդւոյ։ ՚Ի խորհրդոջ ներմարմնութեան մի անձն, և երկու բնութիւնք։ Մի անձն. քանզի միաւորութ՟բ արարեցեալ է ՚ի յանձին եր‿

երկու բնութիւնք ․ վասնզի անձն այս , յորում եղեալ է միաւորութիւն , է կատարեալ ա՟ծ , և կատարեալ մարդ ։ Քանզի է կատարեալ ա՟ծ , ունի զկատարեալ ա՟ծային բնութիւն ․ և քանզի է կատարեալ մարդ , ունի զկատարեալ մարդկային բնութիւն ։ Ուստի 'ի միում անձին են երկու կատարեալք բնութիւնք ։

2. 'Ի ներմարմնութեան ողորմութիւն , և ճշմարտութիւն պատահեցան ․ արդարութիւն , և խաղաղութիւն համբուրեցան ․ այսինքն, ա՟ծային բնութիւն , և մարդկային բնութիւն ենթակայականաւ միաւորութեամբ միաւորեցեալք են 'ի յանձին որդւոյ ։ Ճշմարտութիւն յերկրէ բուսաւ , և արդարութիւն յերկնից երևեցաւ ․ այսինքն , մարդկային բնութիւն 'ի յամեներանեցելոյ կուսէն Մարիամայ , իսկ ա՟ծային բնութիւն յերկնէ ։ Յայսմիկ խորհրդոջ երևեցաւ անհուն իմաստութիւն , անհուն բարութիւն , և անհուն կարողութիւն ։ Իմաստութիւն եգիտ , բարութիւն կամեցաւ , և կարողութիւն գործեաց ։ Եռապատիկ ա՟ծացուցմամբ մտածի , ա՟ծացուցմամբ 'ի շնորհի , 'ի սիրոջ , և 'ի փառս ․ ա՟ծացուցմամբ 'ի յանձին ․ և ա՟ծացուցմամբ 'ի բնութեան ։ Ածացուցմամբ 'ի բնութեան , այնպէս զի ա՟յ , և ստեղծուածոյ իցէ մի բնութիւն , է անկարելի ․ Զա՟ծացուցմամբ 'ի շնորհի , 'ի սիրոջ , և 'ի փառս արդէն ա՟ծ գործեալ էր 'ի ս՟բս հրեշտակս ․ Ածացուցմամբ 'ի յանձին , այնպէս զի ա՟յ , և ստեղծուածոյ իցէր մի անձն , եղև 'ի ներմարմնութեան ։ Զա՟ծացուցմամբ այս 'ի յանձին եգիտ անհուն իմաստութիւն , կամեցաւ անհուն բարութիւն , և գործեաց անհուն կարողութիւն 'ի ներմարմնութեան ։ Քանզի 'ի ձեռն ներմարմնութեան ա՟ծ , և մարդ մի անձն , և երկու կատարեալք բնութիւնք , Ածային , և մարդկային , ենթակայացօղք 'ի միում անձին ․ և այսպէս ներմարմնութեամբ ա՟ծացուցմամբ 'ի յանձին ։ Զարմանալի է յօժարականութիւն ա՟յ ընդ մարդոյ։ Վասնզի ոչ էառ զհրեշտակային բնութիւն , լաւագոյն քան զմարդկայինն , այլ էառ զմարմին 'ի զաւակէ Աբրահամու , և զմարդկային բնութիւն ․ քանզի միածին որդին ա՟յ , որ է 'ի ծոց հօր , էջ 'ի յերկնից , և մարմնացաւ ․ և եղև մարդ , առեալ զկատարեալ , և զճշմարիտ մարդկային բնութիւն , և միաւորեալ զնա ինքեան ընթակայականաւ , և անձնաւորաւ միաւորութեամբ ։

3. 'Ի խորհրդոջ ներմարմնութեան որպէս գտանին երկու կատարեալք բնութիւնք 'ի միում անձին միով , և նովին ենթակայութեամբ ենթակայացօղք ․ այսպէս նաև գտանին յատկութիւնք բնութեանց ․ վասնզի իւրաքանչիւր կատարեալ բնութիւն ունի զյատկութիւն իւր ։ Ուստի ոչ անդ զանազանին բնութիւնք ․ այսպէս նաև զանազանին յատկութիւնք բնութեանց ։ Ուստի անդ է ճշմարիտ , և կատարեալ ա՟ծային կարողութիւն , և ճշմարիտ , և կատարեալ մարդկային կարողութիւն , զանազանեցեալ 'ի յա՟ծայնոյ ․ ճշմարիտ , և կատարեալ ա՟ծային իմացութիւն , և ճշմարիտ , և կատարեալ մարդկային իմացութիւն , զանազանեցեալ 'ի յա՟ծայնոյ ․ և ճշմարիտ , և կատարեալ ա՟ծային կամք , և ճշմարիտ , և կատարեալ մարդկային կամք , զանազանեցեալ 'ի յա՟ծայնոյ , բայց բոլորովիմբ հնազանդ ա՟ծայնոյ ։ Եւ քանզի ա՟մ յատկութիւն ունի զիւր յատուկ զանազանեցեալ արարողութիւն ․ վասն այսորիկ նաև անդ յատուկ ա՟ծային արարողութիւն , և յատուկ մարդկային արարողութիւն զանազանեցեալ 'ի յա՟ծայնոյ ։ Ուստի անդ յատուկ ա՟ծային իմացումն , և յատուկ մարդկային իմացումն զանազանեցեալ 'ի յա՟ծայնոյ ․ և յատուկ ա՟ծային կամեցումն , և յատուկ մարդկային կամեցումն զանազանեցեալ 'ի յա՟ծայնոյ ։ Մարդկութիւն միաւորեալ ա՟ծութեան , դոյացականապէս սրբացուցեալ է ինքեամբ ա՟ծութեամբ ։ Եղև նաև ներհեղումն շնորհի 'ի հոգւոջ․ լուսոյ , գիտութեան , և

իմաստութե՟ 'ի յիմացութե՟ , և ուղղութե՟ ; և սիրոյ 'ի կամին , այնպիսի , որպիսի վայելէր բնութե՟ միաւորեցելոյ ա՟ծութե՟ 'ի յանձին : Նմանապէս առժամայն եղև երանական տեսութի՟ 'ի հոգւոջ , այլ ոչ վերատատացութի՟ 'ի մարմինն , զի կարիցէր չարչարիլ վասն մերոյ փրկութե՟ : Եղև նաև լիութիւն շնորհի , վասնզի ամ՟ք առնու 'ի լիութե՟ նորա . քանզի ք՟ս է գլուխն ա՟մց :

4. Միածին որդին ա՟յ 'ի ձեռն իմացութե՟ ծնեցեալն 'ի հօրէ , որ է երկրորդ անձն ամենասրբոյ երրորդութե՟ , և է բանն մարմնացեալն , և զոր հայր ա՟ծ կացոյց ժառանգ ընդհանրոց , և որ է լոյսն փառաց , և նկարագիր գոյացութե՟ հօր , և որ է բանն ունեցօղն զա՟մն իրս զօրութե՟ իւրով , և որով հայրն ա՟ծ արար և զյաւիտեանս , մարմնացաւ , և եղև մարդ , և կոչեցաւ որդի մարդոյ . քանզի ոչ վայելեաց ներմարմնանալ զհայրն , որ ոչ է յայլմէ անձնէ , այլ յորմէ են այլք անձինք , և ոչ զհոգին ս՟բ , որ ոչ է ծնեալ , այլ 'ի հօրէ , և 'ի յորդւոյ 'ի ձեռն կամաց բղխեալ , այլ զորդին , որ 'ի հօրէ 'ի ձեռն իմացութե՟ է ծնեալ : Ուրեմն եղև վայելչաւոր , զի նա , որ էր ծնեալ 'ի հօրէ 'ի յաւիտենից , ծնանիցիւր 'ի Մարիամայ 'ի ժամանակի : Եղև վայելչաւոր , զի նա , որ էր որդի ա՟յ , եղանիցիւր որդի մարդոյ : Եղև վայելչաւոր , զի նա , որ էր որդի հօրն յաւիտենականի , լինիցիւր որդի մօր Մարիամայ : Ահա երևեցաւ արժանապատուութի Մարիամայ . քանզի է մայր ըստ մարդկայնոյ բնութե՟ նորին որդւոյն , որ է որդի ա՟յ : Մարիամ է մայր որդւոյն ա՟յ : Որդին ա՟յ է ա՟ծ : Ուստի Մարիամ է մայր ա՟յ : Ո՛ անհուն մայրութի . քանզի ոչ կարէ գոլ մեծագոյն մայրութի : Արդ ուրեմն 'ի յաւիտենից եղև խորհուրդ ամենասրբոյ երրորդութե՟ , զի հայրն առաքիցէր զորդին , որդին իջանիցէր յերկնից , և հոգին ս՟բ ներգործիցէր զներմարմնութի՟ն : Եւ արդէն երբ եկն լրումն ժամանակի , աստուած առաքեաց զորդին իւր . և որդին էջ 'ի յարգանդ կուսին . և հոգին սուրբ ներգործեաց զներմարմնութի՟ն :

5. Ա՟ծ , որ 'ի յաւիտենից վճռեաց առաքել զորդին իւր , զԱդամ , որ հպարտութե՟ նկրտեցաւ , և ջանաց յափշտակել զա՟ծութի՟ն , պատժեաց արտաքսելով զնա 'ի դրախտէն , զի իմանայցէր , զոչոք առնուլ ինքեան զպատիւ , այլ որ կոչի 'ի յա՟յ , իբրև Ահարօն . որոյ քահանայութի՟ն եղև օրինակ քահանայութե՟ ք՟ի , և ոչ զք՟ս փառաւորելոց զիւր ինքն , զի լինիցիւր քահանայապետ , այլ զնա փառաւորելոց զնա , որ խօսեցաւ առ նա . որդի իմ իմ ես դու , ես այսօր ծնայ զքեզ . դու ես քահանայ 'ի յաւիտեան , ըստ կարգի մելքիսեդեկի , խոստացաւ Աբրահամու արդարոյ զինքն զնա առաքելոց . լինելոցն 'ի զաւակէ նորա , զի 'ի զաւակէ նորա օրհնիցեին ազգք : Նախակարգեաց զքաղուածս օրինակս , զգալուստն նորա նշանակօղս : Նախայղեաց զքաղուածս մարգարէս , զգալուստն նորա պատմօղս : Եւ յորժամ եկն լրումն ժամանակի , առաքեաց զորդին իւր միածին , նախ քան զյաւիտեան , և 'ի յաւիտենից յինքենէ ծնեցեալն ըստ ա՟ծութե՟ , համագոյակիցն , և հաւասարն ինքեան , 'ի ժամանակի ծնեալն 'ի կնոջէ ըստ մարդկութե՟ , եղեալն ընդ օրինաւ , զի զնոսա , որք էին ընդ օրինաւ , փրկիցէր , զի ընդունիցէաք զորդեգրութի՟ն որդւոց : Հայրն ա՟ծ որպէս խոստացեալ էր , առաքեաց : Որդին , որ հաճեցեալ , և կամեցեալ էր առնուլ զմարդկային բնութի՟ . և միաւորել զնա ինքեան ենթակայականաւ , և անձնաւորաւ միաւորութեամբ , իջանելով 'ի յերկնից , եկն 'ի յաշխարհ : Եւ հոգին ս՟բ , որ է երրորդ անձն ամենասրբոյ երրորդութե՟ , համահաւասարն հօր , և որ֊

որդւոյ, 'ի յարգանդի ամենորանեցելոյ կուսին Մարիամայ. շնորհօք լիոյ, ներգործեաց զներմարմնութիւնն :

6. Ներմարմնութիւն այսպէս եղև : Յետ վեցերորդում ամսեան յղացման Յօհաննու, առաքեցաւ 'ի յԱ̅յ Գաբրիէլ հրեշտակապետն առ Մարիամ կոյս խօսեցեալն Յովսէփու 'ի տանէ Դաւթի : Ողջոյն ետ հրեշտակն, և գովեաց զկոյսն, ասելով. ողջոյն քեզ Մարիամ, լի շնորհօք. Տ̅ր ընդ քեզ, օրհնեցեալ ես դու 'ի կանայս : Աճի Մարիամ գտեալ դու զշնորհ, զի յղանայցես, և ծնանիցիս զորդի անուամբ Յ̅ս, զորդին Ա̅յ բարձրելոյն, նստօղն 'ի յաթոռն Դաւթի, և թագաւորօղն 'ի տանն Յակոբայ 'ի յաւիտեան : Հոգին ս̅բ եկն 'ի վ̅ր Մարիամայ, և զօրութիւն բարձրելոյն հովանաւորեաց զնա, զի կոյսն յղանայցէ, և ծնանիցի զորդի : Տեսանելով Մարիամ, թէ մնալոց էր կոյս, և զօրութբ հոգւոյն սրբոյ յղանալոց ետ զհաւանութիւն, և յղացաւ զորդին Ա̅յ բարձրելոյն : Քանզի մինչ Մարիամ ետ զհամաձայնութիւն, առժամայն հոգին ս̅բ 'ի յարգանդի ամենամաքրոյ կուսին, 'ի մաքրագունեղէ, և 'ի կուսականէ արենէ նորա կերպաւորեաց զփոքրիկ մարմին, և ստեղծ զբանական հոգի, և միաւորեաց մարմնոյ, և զմարմինն, և զհոգին միաւորեաց անձին բանի : Համայնքը ասացեալքն եղեն 'ի միասին, և 'ի նոյնում վայրկենի, այսինքն, կերպաւորումն մարմնոյ, ստեղծումն հոգւոյ, միաւորումն հոգւոյ ընդ մարմնոյ, և միաւորումն մարմնոյ, և հոգւոյ ընդ անձին բանի : Եւ այսպէս բանն մարմին եղև, և որդին Ա̅յ մարդ եղև : Զներմարմնութիւն, որ ընձեռի հոգւոյն սրբոյ, գործեաց բոլոր երրորդութիւն. վասնզի գործողութիւն առ արտաքս հասարակ է ա̅մց երից անձանց. սակայն որդին միայն ներմարմնացաւ : Մարիամ զօրութբ հոգւոյն սրբոյ յղացաւ, և 'ի յղացման կոյս մնաց :

7. Ներմարմնութիւն եղև զօրութբ հոգւոյն սրբոյ. վասնզի հոգին ս̅բ եկն 'ի Մարիամ : Բոլոր երրորդութիւն գործեաց զնա. քանզի զօրութի բարձրելոյն հովանաւորեաց զՄարիամ : Որդին միայն եղև մարդ 'ի ձեռն ներմարմնութե. վասնզի որդին միայն էառ զմարդկային բնութի, և եղև որդի մարդոյ : 'Ի ներմարմնութե մարդկային բնութիւն միաւորեցաւ ա̅ծային բնութե 'ի յանձին. և այսպէս խօսակցի ընդ ա̅ծային բնութե. ք̅ս, և իմ ենթակայութիւն է նոյն. քանզի նոյնով ենթակայութբ որդւոյ, որով դու ենթակայանաս, և ես ենթակայանամ : Ուստի անհուն է արժանապատուութիւն այնր բնութե որքան առ ենթակայութիւն. քանզի որքան առ արժանապատուութի ենթակայութե ոչ կարէ գոլ մեծագոյն արժանապատուութի քան զարժանապատուութի ա̅ծային ենթակայութե : 'Ի ձեռն ներմարմնութե Մարիամ եղև մայր Ա̅յ. քանզի մայրութիւն եզերի առ անձն. անձն 'ի ներմարմնութե էր ա̅ծային. վասնզի ներմարմնացաւ որդին Ա̅յ. ուրեմն մայրութիւն Մարիամայ եզերի առ որդին Ա̅յ ներմարմնացեալն : Որդին Ա̅յ ներմարմնացեալն, է Ա̅ծ. ուրեմն մայրութիւն Մարիամայ եզերի առ Ա̅ծ : Ապաուրեմն Մարիամ է մայր Ա̅յ. քանզի է մայր ն̅ր, առ որ եզերի մայրութի նորա. մինչ ուրեմն եզերի առ Ա̅ծ, է մայր Ա̅յ : Է նաև հարս հոգւոյն ս̅բոյ. վասնզի զօրութբ հոգւոյն սրբոյ յղացաւ զորդին Ա̅յ : Ուստի Մարիամ է մայր, և կոյս : Մայր, քանզի յղացաւ, և ծնաւ զորդին : Կոյս, քանզի 'ի յղացման, և 'ի ծննդեան ոչ կորոյս զկուսութիւնն : Կոյս յղացաւ, և կոյս ծնաւ, զոչոք ապականութի կրեաց. Ապաուրեմն Մարիամ է մայր Ա̅յ, հարս հոգւոյն սրբոյ, և դուստր հօրն յաւիտենականի :

8. Ներմարմնութբ նաև մեզ շնորհեցան պարգևք : Քանզի որդին մարդոյ, ունելով զնոյն բնու‑

թե

թի ընդ մեզ ըստ տեսակի, է եղբայր մեր ։ Որդին մարդոյ 'ի ձեռն ներմարմնութե՟ն որդի ա՟յ ։ Ուրեմն ներմարմնութ՟բ որդին ա՟յ եղբայր մեր ։ Դուստրն եւայի ունելով զնոյն բնութիւն ըստ տեսակի ընդ մեզ, է քոյր մեր ։ Մարիամ է դուստր եւայի ։ Ուրեմն մարիամ է քոյր մեր ։ Մարիամ 'ի ձեռն ներմարմնութե՟ն է մայր ա՟յ ։ Ուրեմն մայրն ա՟յ է քոյր մեր ։ Մայրն եղբօր մերոյ, է մայր մեր ։ Մարիամ է մայր եղբօր մերոյ ։ Ապաուրեմն Մարիամ է մայր մեր ։ Մարիամ է մայր ա՟յ ։ Ապաուրեմն մայրն ա՟յ է մայր մեր, և քոյր մեր ։ Որդին ա՟յ վ՟ն մեր մարդկան, և վասն մերոյ փրկութե՟ն էջ 'ի յերկնից, և ներմարմնացաւ ։ Ուստի ներմարմնութիւն որդւոյն ա՟յ է երջանկութի՟ մեր ։ Խոնարհեցումն նորա է բարձրացումն մեր ։ Իջումն նորա է պատճառ բարձրացման մերոյ ։ Եկն փրկիչն, զի մկրտութ՟բ յինքենէ կացուցելով, լուայցէր զանօրէնութիւնս մեր ։ Եկն նորոգօղն, զի ապաշխարութ՟բ վերանորոգիցէր զմեզ մեղօք կորուսեալս ։ Եկն ազատիչն, զի արեամբ իւրով ազատիցէր զմեզ գերիս ։ Եկն բժիշկն, զի բժշկիցէր զխօթութիւնս մեր ։ Եկն վարդապետն, զի ուսուցանիցէր մեզ զճանապարհն փրկութե՟ ։ Եկն լոյսն, զի լուսաւորիցէր զնստօղս 'ի խաւարի ։ Եկն հովիւն, զի արածիցէր զմեզ մարմնով, և արեամբ իւրով ։ Եկն դուռն երկնային, զի ածիցէր զմեզ առ երկինս ։ Եկն մեռանելոց, զի շնորհիցէր մեր զկեանս ։ Ապաուրեմն ներմարմնութիւն որդւոյն ա՟յ է երջանկութի՟ մեր ։

# ԳԼՈՒԽ ։ ԽԵ ։

## Յաղագս Քրիստոսի ։

1\. Ի Ձեռն ներմարմնութե՟ն եղև ք՟ս ։ Ք՟ս նշանակէ օծեալ ։ 'Ի ներմարմնութե՟ն եղև օծումն ։ Քանզի ա՟ծային բնութիւն օծեաց զմարդկային բնութիւն, 'ի յանձին որդւոյ ինքեան միաւորեցեալն ։ Օծեաց զնա դոյացականապէս իւրեամբ ինքեամբ · քանզի մարդկային բնութիւն, ենթակայականաւ, և անձնաւորաւ միաւորութ՟բ միաւորեցեալ ա՟ծայնոյ բնութե՟ն, դոյացականապէս արբացուցեալ է ինքեամբ ա՟ծութ՟բ · որ է դոյացութի՟, և ոչ պատահումն ։ Ուստի դոյական արբութի՟ն մարդկայնոյ բնութե՟ն ենթակայականաւ, և անձնաւորաւ միաւորութ՟բ միաւորեցելոյ ա՟ծայնոյ բնութե՟ն, է նոյն ինքն ա՟ծութիւն, որով օծեցեալ է զօրութ՟բ ենթակայականի, և անձնաւորականի միաւորութե՟ն ։ Օծեաց զնա նաև արբութ՟բ, որ ոչ է դոյացութի՟, այլ որակութի՟, 'ի ձեռն ներհեղման շնորհի, որ վայելեաց բնութե՟ ենթակայականաւ, և անձնաւորաւ միաւորութ՟բ միաւորեցելոյ ա՟ծայնոյ բնութե՟ ։ Ուրեմն մարդկային բնութի՟ն ենթակայականաւ, և անձնաւորաւ միաւորութ՟բ միաւորեցեալն ա՟ծայնոյ բնութե՟ն, օծեցաւ նաև ներհեղեցելով շնորհիւ, որ ոչ է դոյացութի՟, այլ որակութի՟ ։ Արբացուցումս այս է ամենամեծ · քանզի է արբացուցումն բնութե՟, ենթակայականաւ, և անձնաւորաւ միաւորութ՟բ միաւորեցելոյ ա՟ծայնոյ բնութե՟ ։ Զմեծութիւն այսորիկ արբացուցման, որով մարդկութիւն ք՟ի օծեցեալ է 'ի յա՟ծութե՟ պատահաբար, ոչ կարեմք բացամեկնել · քանզի

քանզի յաղթէ զիմացումն մեր ։ Որքան լիցէ, նա գիտէ, որ արտածեաց, և արտահանեաց 'ի գանձէ իւրմէ ։

2. Պատահական սրբութիւն այնր մարդկութեան է ամենամեծ, բայց ոչ անհուն . քանզի ոչ է անստեղծ, այլ 'ի յա̅ծայնոյ գանձէ արտածեալ, և արտահանեալ . իսկ գոյացական սրբութիւն այնր մարդկութեան է անհուն . քանզի է նոյն ինքն անստեղծ ա̅ծութիւն ։ Ըստ մեծութեան ներհեղեղելոյ շնորհի, որով օծեցեալ է մարդկութիւն այն, եղև մեծութիւն լուսոյ, գիտութեան, և իմաստութեան իմացութեան այնր մարդկութեան, և մեծութիւն ուղղութեան կամին այնր մարդկութեան, և մեծութիւն երանականի տեսութեան հոգւոյ այնր մարդկութեան ։ Քանզի որպէս ներհեղեղեցեալ շնորհն եղև մեծագունեղ վայելչաւոր այնմիկ մարդկութեան ըստ ա̅ծայնոյ անհնոյ իմաստութեան այսպէս լոյսն իմացութեան եղև մեծագունեղ ըստ ա̅ծայնոյ անհնոյ իմաստութեան վայելչաւոր իմացութեան այնր մարդկութեան, և ուղղութիւն կամին վայելչաւոր կամին այնր մարդկութեան, և երանական տեսութիւն հոգւոյ վայելչաւոր հոգւոյ այնր մարդկութեան ։ Զհամայնս ստացեալս ամենաւք̅ մարդկութիւն այն, ենթակայականաւ, և Անձնաւորաւ միաւորութեամբ միաւորեցեալն ա̅ծայնոյ բնութեան, 'ի միասին կալաւ 'ի նոյնում վայրկենի 'ի սկզբան . քանզի այսպէս վայելեաց այնմիկ ամենասրբոյ մարդկութեան ։ Մարդկութիւն այն այնպէս կատարեալն ա̅ծայնոյ բանին մարմնացելոյ եղև զուգակցեալ գործի ։ Արդ'ուրեմն Քս̅ օծեալն, է մին անձն, մի ենթակայացեալ, և ենթակայացող, և մի ենթադրեցեալ, ունեցող զերկուս կատարեալս բնութիւնս, Ա̅ծային, և մարդկային, զա̅ծայինն օծող, և զմարդկայինն օծեալ 'ի յա̅ծայնոյ, ենթակայականաւ, և անձնաւորաւ միաւորութեամբ 'ի միում անձին միաւորեցեալս ։

3. Քս̅ է ա̅ծ, և մարդ ։ 'Ի քս̅ է մի անձն, երկու բնութիւնք ։ 'Ի քս̅ է մի անձն, քանզի միաւորութիւն եղեալ է 'ի յանձին ։ Նոյն ենթակայութիւն, որով ենթակայանայր ա̅ծային բնութիւն 'ի յորդւոջ, եղև ենթակայացող առեալ մարդկային բնութեան ։ Ուստի վասն միութեան ենթակայութեան, 'ի քս̅ է մի անձն ։ 'Ի քս̅ են երկու բնութիւնք . քանզի քս̅ է կատարեալ ա̅ծ, և կատարեալ մարդ ։ Ուստի քանզի է կատարեալ ա̅ծ, ունի զկատարեալ ա̅ծային բնութիւն . և քանզի է կատարեալ մարդ, ունի զկատարեալ մարդկային բնութիւն ։ Եւ այսպէս ունի զերկուս կատարեալս բնութիւնս, զա̅ծային, և զմարդկային, անշփոթաբար, և անբաժանելաբար միաւորեցեալս 'ի միում անձին բանի ։ Ունի նաև զերկուս իմացութիւնս, այսինքն, ա̅ծային, և մարդկային . և զերկուս կամս, այսինքն, ա̅ծային, և մարդկային, և զերկուս ներգործութիւնս, այսինքն, ա̅ծային, և մարդկային ։ Քանզի իւրաքանչիւր բնութիւն ունի զիւրս յատկութիւնս, և զիւրս յատուկս ներգործութիւնս ։ Միաւորութիւն ոչ եղծեաց զյատկութիւնս ։ Ուստի մնացին յատկութիւնք, արմատք յատկաց ներգործութեանց իւրոց ։ 'Ի քս̅ է հաղորդակցութիւն անուանց . վասնզի մինչ յարանուանութիւնքն են ենթադրեցելոց, և 'ի քս̅ է մին ենթադրեցեալ, ստորոգութիւնք երկաքանչիւրոյ բնութեան, ոչ բաժանելին, այլ ընձեռին նոյնոյ ենթադրեցելոյ ։ Աստի վասն միութեան ենթադրեցելոյ, մինչ է խօսակցութիւն զքէ, ասի որդին մարդոյ յաւիտենական, և որդին ա̅յ չարչարեցեալ . վասնզի 'ի քս̅ որդին մարդոյ, և որդին ա̅յ են մի ենթադրեցեալ, յաւիտենական, և չարչարեցեալ . յաւիտենական ըստ ա̅ծայնոյ բնութեան, և չարչարեցեալ ըստ մարդկայնոյ բնութեան . և ասի անմահ, և մեռեալ . անմահ ըստ ա̅ծայնոյ բնութեան, և մեռեալ ըստ մարդկայնոյ բնութեան ։

4. Քս̅ է մի անձն, մի ենթակայա‿

կայացող, և մի ենթադրեցեալ, ունեցող զերկուս բնութիւս, զածային, և զմարդկային, լոյս 'ի լուսոյ, ած յայ, ած ճշմարիտ յայ ճշմարտէ, ծնեալ, ոչ արարած, համագոյակից հօր. և դարձեալ յղացեալ 'ի հոգւոյն սրբոյ 'ի յարգանդի կուսին, եղեալ 'ի կնոջէ, ծնեալ 'ի Մարիամայ կուսէն։ Քս յաւիտենականն, ծնաւ 'ի ժամանակի։ Քս ած անմահ, վասն փրկութե մերոյ չարչարեցաւ, և մեռաւ։ Քս աննքտելի, և վասն փրկութե մարդոյ նքտեցաւ 'ի ճանապարհի։ Ասացեալքս ստորոգութիւք, և բազումք այլք նմանք ճշմարիտք են վասն միութե անձին, և բազմութե բնութեց, ածայնոյ, և մարդկայնոյ, և հաղորդակցութե անուանց։ Բայց զգուշաբար խօսելի է, զի մի եղծիցի ածութի անձին, և ենթայութե, կամ միութի ենթադրեցելոյ, կամ բազմութի բնութեց։ Վասնզի եղծեցելոյ միոյ 'ի յասացելոց, եղծի խորհուրդն ներմարմնութե, որ կայանայ 'ի յածութե ենթակայութե, 'ի միութե ենթադրեցելոյ, և 'ի բազմութե բնութեց, ածայնոյ, և մարդկայնոյ։ Ուստի ոչ է բացարձակաբար խօսելի. քս է ստեղծուած. քանզի այսպէս բառնի ածութի անձին։ Ուստի այսպէս խօսելի է. քս է ստեղծուած ըստ առեցելոյ բնութե, Եւ ոչ այսպէս խօսելի է։ Մինն չարչարելի, և միւսն անչարչարելի. քանզի այսպէս բառնի միութի ենթադրեցելոյ։ Ուստի այսպէս խօսելի է. նոյնն չարչարելի, և անչարչարելի. չարչարելի ըստ մարդկայնոյ բնութե, անչարչարելի ըստ ածայնոյ։ Եւ ոչ այսպէս. ածութի ն է մարդկութի, կամ մարդկութի ն է ածութի. վասնզի այսպէս բառնի բազմութի բնութեց այլ այսպէս. ած է մարդ, և մարդն է ած։

5. Ած է մարդ, մարդն է ած, է ուղիղ բան, մինչ խօսիմք զքէ. վասնզի 'ի յայսմիկ խօսակցութե փրկին համայնք իրք, յորս կայանայ խորհուրդն ներմարմնութե։ Քանզի անուանք, ած, փրկի ածութի անձին։ Այսու թէ ասեմ ած է մարդ, մարդն է ած, փրկի միութի ենթադրեցելոյ, ածն, ցուցանէ զածային բնութի ն, և մարդն զմարդկայինն։ Եւ այսպէս փրկի բազմութի բնութեց, ածայնոյ, և մարդկայնոյ։ Եւ այսպէս այսու, ած է մարդ, մարդն է ած, փրկի խորհուրդն ներմարմնութե։ Այսպէս 'ի յայսմիկ խօսակցութե։ Քս ած չարչարելի. քս ած անչարչարելի, չարչարելի ըստ մարդկայնոյ բնութե, և անչարչարելի ըստ ածայնոյ. քանզի նաև 'ի յայսմիկ խօսակցութեան փրկին համայնք իրք, յորս կայանայ խորհուրդն ներմարմնութեան, այսինքն, ածութի ն, և միութի ն ենթադրեցելոյ. և բազմութի բնութեանց, ածայնոյ, և մարդկայնոյ։ Վասնզի այսու, քս է ած, փրկի ածութի ն և միութի ն ենթադրեցելոյ. և այսու չարչարելի, և անչարչարելի. կամ յայտնագոյն, չարչարելի ըստ մարդկայնոյ բնութեան, և անչարչարելի ըստ ածայնոյ. փրկի բազմութի բնութեանց, ածայնոյ, և մարդկայնոյ։ Աղպառուբեմն խօսելով զայսմանէ խորհրդոյ, կամ զայլոց խորհրդոց հաւատոյ, պարտիմք զգուշաբար առաջանալ 'ի բառս, զի մի մոլորիցեմք. և զի մի յանդգնաբար, և գայթագղաբար խօսիցիմք։ Վերանկատելիք են բառք ժողովոց. և վերահայելի է առ կերպն խօսելոյ եկեղեցւոյ, որ է սիւն, և հաստատութի ն ճշմարտութեան. խակ իմացուածի մեր է կարի տկար։

6. 'Ի ձեռն ներմարմնութեան նաև ներգործութի ածամարդկայինն, այսինքն, ածային մարդկային, ով յարուցումն զաչարութի, զոր որդին այ ներմարմնացեալն, վարելով արարողութե մարդկութեան իւրոյ, որ էր զուգակցեալ գործի նորա. ածայնով զօրութե իւրով գործեաց։ Ասի ածամարդկայինն. քանզի է արարողութիւն այ, որ վարեցաւ արարողութե մարդկութեան իւրոյ։

Քս

Ք͞ս է ազատիչ, փրկիչ, լոյս, վարդապետ, կեանս, ճանապարհ, ճշմարտութի, գլուխ, դուքս, հովիւ, միջնորդ, տ͞ր, և դատաւոր։ Ք͞ս է ազատիչ, և վասն այսորիկ կոչեցեալ է Յ͞ս. քանզի ազատութի հոգւոց մերոց է քիւ։ Ք͞ս է փրկիչ. վասնզի նա զմեզ գերիս, և վաճառեցեալս, գնեաց արեամբ իւրով։ Ք͞ս է լոյս. քանզի լուսաւորումն մտաց մերոց է քիւ, և ցրումն խաւարի մտաց մերոց է նովաւ. Քրիստոս է վարդապետ. վասնզի քրիստոս ուսոյց մեզ զաւետարանականս ճշմարտութիս, և զճշմարիտս առաքինութիս, և զքրիստոնէականս կատարելութիս քրիստոնէի վայելուչս։ Ք͞ս է բժիշկ. քանզի կացոյց զխորհուրդս, որովք ջնջին մեղք, և լինի փրկութի հոգւոց մերոց։ Ք͞ս է կեանս. քանզի քն͞ի է շնորհ, որ է կեանս հոգւոց մերոց։ Ք͞ս է ճանապարհ. վ͞զի քն͞ի գտանեմք զշաւիղն երկնայնոյ հայրենեաց։ Ք͞ս է ճշմարտութի. քանզի քն͞ի ազատեցեալք եմք 'ի մոլորութեց։ Ք͞ս է գլուխ. վասնզի 'ի նմանէ իջանէ առ մեզ երկնային շնորհն։ Ք͞ս է դուքս. քանզի ք͞ս ցուցանէ մեզ զճանապարհն հայրենեաց։ Ք͞ս է հովիւ. վ͞զի մարմնով, և արեամբ նորա սնանի հոգին մեր։ Ք͞ս է միջնորդ. քանզի արեամբ ն͞ր հաշտեցեալք եմք ընդ ա͞յ։ Ք͞ս է տ͞ր, վասնզի արեամբ նորա փրկեցեալք եմք։ Ք͞ս է դատաւոր. քանզի հայրն զոչոք դատէ. այլ զիշխանութին դատելոյ ետ որդւոյ, որ դատեսցէ զկենդանիս, և զմեռեալս։

7. Ք͞ս է ճանապարհ առ 'ի շրջիլ շաւղով փրկութե. ճշմարտութի, զի մի պատրեսցիմք. և կեանս, զի մի մեռանիցիմք։ Ք͞ս է ճանապարհ ցուցանող զհայրենին, ճշմարտութի ուսուցանող զփրկութի, և կեանս կեցուցանող զհոգին։ Համայնք բարիք մեր են 'ի Ք͞ս, և ք͞ս 'ի մեզ է ա͞մ բարին մեր։ Ք͞ս է բժիշկ, դարմանող զվէրս մեր, և առողջացուցանող զհիւանդութիս մեր։ Ք͞ս է աղբիւր, բղխող զջուր կենաց, շնորհող զառողջութի հոգւոյ։ Աղբիւր զովացուցանող զտօթացեալս ջերմիւք. աղբիւր, յորմէ ծորի 'ի մեզ ջուր կեցուցանող։ Ք͞սի է ազատութի 'ի ծանրութէ անօրէնութեէ, և ստացումն ճշմարիտ սրբութեէ։ Ք͞ս է զօրութի, օգնող, զօրացուցանող, և քաջացուցանող զմեզ ընդդէմ ա͞մից թշնամեաց, և չարակամաց մերոց։ Ք͞ս է կեանս, ազատող զմեզ 'ի մահուանէ. լոյս, ցրուող զխաւար մեր. ճանապարհ, ածող զմարդն առ երկինս. և կերակուր, սնուցանող զհոգին մեր։ Ք͞ս է հեղինակ սրբացուցման, և արդարացուցման մերոյ, 'ի ձեռն խորհրդոց սրբացուցանող, և արդարացուցանող զմեզ։ Ք͞ս է փրկիչն մեր, փրկողն զմեզ գնով արեան իւրոյ։ Եւ զարիւն իւր, զի փրկիցէր զմարդն։ Ք͞ս է բաժինն մեր, բաւականացող մեզ։ Ուստի պարտիմք տալ զա͞մն իրս, զի կարիցեմք փոխանակ ա͞մից իրաց ունիլ զմինն։ Քանզի եթէ փափագիմք առողջանալ 'ի վէրաց, է բժիշկ. եթէ տօթանամք ջերմիւք, է աղբիւր. եթէ ծանրանամք անօրէնութեբ, է արդարութի. եթէ կարօտիմք օգնութեէ, է զօրութի. եթէ երկնչիմք 'ի մահուանէ, է կեանս. եթէ փախչիմք 'ի խաւարէ, է լոյս. եթէ փափագիմք երկնից, է ճանապարհ. եթէ բաղձամք վարդապետութեէ, է վարդապետ, ուսուցանող զճշմարտութի. և եթէ խնդրեմք զկերակուր, և զըմպելի, է ապրուստ։

8. Յ͞ս ք͞ս քաղցեաւ, զի յագեցուցանիցէր զքրիստոնեայս։ Ծարաւեցաւ, զի մեզ տայցէր զհոգևոր ըմպելի։ Եղև հաց քաղցելոց, և եղև աղբիւր ծարաւելոց։ Ք͞ս է հաց կեցուցանող, և աղբիւր զովացուցանող։ Որք ուտեն զհացս զայս, տակաւին քաղցենան. և որք ըմպեն յայսմանէ աղբերէ, տակաւին ծարաւին։ Որք ուտեն զհացս զայս, և ըմպեն յայսմանէ աղբերէ, քաղ-

ցենան արդարութեան: Ուստի այսպիսիք յաղեցուցանելիք են: Քս մինչ էր 'ի յաշխարհի, կեալ 'ի մէջ մարդկանց, նքթեցաւ 'ի ճանապարհի, զի հանգիստ իցէր 'ի սրտի: Եղեւ ինքն 'ի ճանապարհի, և բնակեցաւ 'ի յերկրի, զի ածիցէր զմեզ 'ի յերկինս, և 'ի յերկնային հայրենիսն: Համբերեաց ընդդէմ նախատողաց, և ոչ եղեւ ունկնդիր նց, զի տայցէր մեզ զբարբառ, և զունկն, և զհամատունս: Կապեցաւ, և մատնեցաւ, զի արձակիցէր զկապանս մեղաւորաց: Ձաղեցաւ, և երարձ զցաւս, զի բառնայցէր զյաւիտենականս չարչարանս մեր: Խաչեցաւ, և մեռաւ, զի շնորհիցէր մեզ զկեանս: Յարեաւ, և համբարձաւ 'ի յերկինս, զի 'ի մեզ զօրանայցէր յոյս յարութեան, և յարաժամ խոկումն իրաց երկնայնոց: Մահն քն 'ի մահուանէ, կեանն 'ի մոլորութենէ, 'ի մեղաց շնորհն ազատեաց: Կալ զՅս հաւատով, հետեւեաց նմա գործով, և ճաշակեա զնա միով: Հեռեւեաւ փրկաւէտ խորհրդոյ, կալ, և գրկեա զհանգիստ ուրախութի. ճաշակեա զերանեցեալ կեանն: Անունն Յսի է սիրելի, պարգեւն նորա շնորհիւ, բեռն թեթեւ, և լուծն նորա քաղցր: Յս լիցի մեզ 'ի բերանոջ, քաղցր նուագ 'ի յականջոջ, և լիցի խնդութի 'ի սրտի: Քարոզեա, խոկա, և կոչեա զանունն Յսի: Քանզի անունն Յսի քարոզեցեալ փայլէ, խոկացեալ սնուցանէ, կոչեցեալ մեղմացուցանէ, և ածէ:

# ԳԼՈՒԽ ԽԶ.

## Յաղագս կատարելութեանց Քի:

Հ. Րիստոս է ճշմարիտ Այ, և ճշմարիտ մարդ, ունելով զճշմարիտ, և զկատարեալ ային բնութի, և զճշմարիտ, և զկատարեալ մարդկային բնութի: Ուստի է կատարեալ ըստ որում ած, և կատարեալ ըստ որում մարդ: Է կատարեալ ըստ որում ած, քանզի ունի զնոյն ածութի, զոր ունին հայրն, և հոգին սբ, և ունի զամե նոյնս կատարելութիւնս, զորս ունին հայրն, և հոգին սբ: Քանզի է երկրորդ անձն ամենասուրբ երրորդութեան, համագոյակիցն, և համահաւասարն հօր: Ուստի է յաւիտենական, անստեղծ, անպարագրելի, անհուն, ամենակարող, նոյն ինքն ինքեամբ գոյացօղն, կեցօղն, և իմացօղն, փակօղ 'ի յիւրեան ինքեան զամե աստիճանս կատարելութեանց, և է նոյն ինքն բարութիւն, նոյն ինքն ճշմարտութիւն, նոյն ինքն իմաստութիւն, և նոյն ինքն երանութիւն: Եւ այսպէս է անհնիցս անհունապէս կատարեալ: Եւ նաև է կատարեալ ըստ որում մարդ: Քանզի ունի զճշմարիտ, և զկատարեալ մարմին, և ունի զճշմարիտ, և զկատարեալ բանական հոգի, և զմիտ. ունի զճշմարիտ, և զկատարեալ իմացութի, և զճշմարիտ, և զկատարեալ կամս, և զճշմարիտ, և զկատարեալ անձնիշխանութի, և զճշմարիտս, և զկատարեալս զգայութիւնս ներքինս, և արտաքինս, և զճշմարիտս, և զկատարեալս մարդկայինս արարողութիս, և ունի զհամայնս իրս պատկանօղս առ կատարելութի մարդկայնոյ բնութեն: Ուստի քս է կատարեալ

տարեալ ա՟ծ, և կատարեալ մարդ, նոյն է որդին ա՟յ, և որդին մարդոյ, մի անձն, և մի ենթակայացող, ունեցող զճշմարիտ, և զկատարեալ ա՟ծային բնութիւն. և զճշմարիտ, և զկատարեալ մարդկային բնութիւն :

2 Մարդկութիւնն ք՟ի է կատարեալ 'ի կողմանէ ենթակայութեան. վասնզի թէպէտ ոչ ունիցի զառեղծեցեալ ենթակայութիւն ; որով ենթակայանայցէ. սակայն ունի զա՟ծային ենթակայութիւն, և ենթակայանայ ա՟ծայնով ենթակայութեամբ որդւոյ, որով նաև ա՟ծային բնութիւնն ենթակայանայ 'ի յանձնին որդւոյ, որ ա՟ծային ենթակայութիւն որդւոյ, որով ենթակայանայ մարդկային բնութիւնն ք՟ի, լնու զլիակատարութիւնն առեղծեցելոյ ենթակայութեան, և գերազանցագոյն առնէ զայդ ա՟մ, զոր պարտիցիւր առնել առեղծեցեալ ենթակայութիւնն : Ուստի յայնմանէ թէ մարդկութիւնն ք՟ի ոչ ունիցի զառեղծեցեալ ենթակայութիւն, ոչ հետևի, թէ 'ի նմա իցէ անկատարելութիւն 'ի կողմանէ ենթակայութեան. այլ ներհակաբար հետևի, թէ 'ի նմա իցէ ամենամեծ կատարելութիւն 'ի կողմանէ ենթակայութեան. քանզի ենթակայանայ ենթակայութեամբ անհամեմատաբար լաւագունիւ : Այլ ևս աստի է ամենամեծ արժանաւորութիւն այնորիկ մարդկութեան, թէ արդարև ոչ ունիցի զառեղծեցեալ ենթակայութիւն, և ենթակայանայցէ ա՟ծայնով ենթակայութեամբ որդւոյ, որով ենթակայութեամբ ենթակայանայ նաև ա՟ծային բնութիւնն 'ի յանձին որդւոյ : Եւ 'ի յայսմիկ կայանայ խորհրդն ներմարմնութեան, թէ արդարև մարդկային բնութիւնն ք՟ի ոչ ենթակայանայ ենթակայութեամբ առեղծեցելով, այլ ենթակայանայ ենթակայութեամբ ա՟ծայնով : Քանզի եթէ ենթակայանայցէր առեղծեցելով ենթակայութեամբ, եղծիցիւր խորհրդն ներմարմնութեան : Վասնզի յայնժամ որդին ա՟յ, և որդին մարդոյ ոչ իցեն մին ենթադրեցեալ, այլ զանազան. և այսպէս եղծիցիւր խորհրդն ներմարմնութեան, որ 'ի յայսմիկ կայանայ, թէ որդին ա՟յ է որդի մարդոյ, և որդին մարդոյ է որդի ա՟յ, և թէ որդին ա՟յ, և որդին մարդոյ են մի ենթադրեցեալ : Աստի է, թէ 'ի ձեռն ներմարմնութեան մարդկային բնութիւնն ենթակայանայ ա՟ծայնով ենթակայութեամբ, անհամեմատաբար լաւագունիւ քան զառեղծեալ ենթակայութիւն :

3. 'Ի ք՟ի արդարև է մարդկային բնութիւն. քանզի ք՟ս է մարդ. այլ ոչ մարդկային ենթակայութիւն. վասնզի սա եղծէ զխորհուրդն ներմարմնութեան : Ուստի 'ի ք՟ս է մին ա՟ծային ենթակայութիւն, որով ենթակայանայ ա՟ծային բնութիւնն, և մարդկային բնութիւնն : Աստի է, թէ մինչ ենթակայութիւնն է մին, և ա՟ծային, 'ի ք՟ս է մին ա՟ծային անձն, մին ենթակայացեալ, մին ենթակայացող, և մին ենթադրեցեալ : Թէ ուրեմն անուանիցի ք՟ս, թէ որդի ա՟յ, թէ որդի մարդոյ, միշտ իմանի այն ա՟ծային ենթադրեցեալն, ունեցող զա՟ծային, և զմարդկային բնութիւն. քանզի 'ի ք՟ս ոչ գոյ այլ ենթադրեցեալ : Արդ ուրեմն յորժամ անուանի ք՟ս, իմանի ա՟ծային ենթադրեցեալն որդւոյ, քանզի ոչ գոյ այլ ենթադրեցեալ 'ի ք՟ս. և բանիւ օծման, որ իմանի, և նշանակի ք՟իւ, իմանին երկու բնութիւնք, այսինքն, ա՟ծային բնութիւնն օծողն, և մարդկային բնութիւնն օծեալն. և այսպէս ա՟ծային բնութիւնն սրբացուցանող, և մարդկային բնութիւնն գոյացականապէս սրբացուցեալ 'ի ձեռն ա՟ծայնոյ բնութեան, որում միաւորեցեալ է 'ի յանձին : Եւ յորժամ ասի որդին ա՟յ չարչարեցեալ, նմանապէս իմանի նոյն ա՟ծային ենթադրեցեալն որդւոյ, և իմանին երկու բնութիւնք, այսինքն, ա՟ծային, և մարդկային, ըստ որում, այսինքն, ըստ մարդկայնոյ բնութեան ասի որդին ա՟ծ չարչարեցեալ : Եւ յորժամ ասի որդին մարդոյ է յաւիտենական, նմանապէս իմանի նոյն ա՟ծային ենթադրեցեալն որդւոյ

դւոյն, և իմանին երկու բնութիւնք, այսինքն, մարդկայինն, և ա՟ծայինն, ըստ որում, այսինքն, ըստ ա՟ծայնոյ բնութե՟ն, որդին մարդոյ ասի յաւիտենական։ Վասն այսորիկ միշտ իմանի ա՟ծային ենթադրեցեալն որդւոյ. քանզի անդ ոչ տրի այլ ենթադրեցեալ։ Թէ ուրեմն անուանիցի ք՟ս, թէ որդի ա՟յ, թէ որդի մարդոյ, միշտ իմանի նոյն ենթադրեցեալն, այսինքն, ա՟ծային ենթադրեցեալն որդւոյ։

4. Բանիւ ենթակայականի, և անձնաւորականի միաւորութե՟ն, է ամենամեծ կատարելութի՟ 'ի մարդկութե՟ քի՟. քանզի է ամենամեծ, և ծայրագունեղ կատարելութի՟ բնութե՟ միաւորիլ ա՟ծայնոյ բնութե՟ 'ի յանձին, և ունիլ զնոյն ենթակայութի՟ ընդ ա՟ծայնոյ բնութե՟։ Բանիւ այսորիկ կատարելութե՟, որ է կատարելութի՟ ենթակայականի միաւորութե՟, ամենամեծ, և ծայրագունեղ արժանապատուութի՟ է 'ի մարդկութե՟ քի՟. վասնզի ոչ կարէ մտածիլ մեծագոյն արժանապատուութի՟ քան զարժանապատուութիս այս, որ է միաւորիլ ա՟ծայնոյ բնութե՟ 'ի յանձին, և ենթակայանալ նոյնով ենթակայութե՟ ընդ ա՟ծայնոյ բնութե՟։ Է ամենամեծ կատարելութի՟ 'ի մարդկութե՟ քի՟ նաև բանիւ գոյացականի սրբութե՟ նորա. քանզի գոյացական սրբութի՟ մարդկութե՟ քի՟, է ա՟ծութի՟ն, որում միաւորեցեալ է 'ի յանձին։ Իսկ Ոչ կարէ գոլ մեծագոյն սրբութիւն քան զա՟ծութի՟ն։ Ուստի գոյացական սրբութի՟ն մարդկութե՟ քի՟ է ամենամեծ, և ծայրագունեղ։ Նաև է ամենամեծ կատարելութի՟ 'ի մարդկութե՟ քի՟ բանիւ պատահականի սրբութե՟ նորա, այսինքն, բանիւ ներհեղեցելոյ շնորհի, որով սրբացուցեալ է. վ՟զի ներհեղեցեալ շնորհն մարդկութե՟ քի՟, թէպէտ էակութենաբար իցէ հունաւորեցեալ, մինչ է ստեղծեցեալ, և արտադրեցեալ. սակայն է ամենամեծ. քանզի այնու սրբացուցեալ է բնութի՟, որ է միաւորեցեալ ա՟ծայնոյ բնութե՟ 'ի յանձին։ Ա՟ծային իմաստութի՟ ըմբռնէ, թէ որքան իցէ շնորհս այս, որ եղև վայելչաւոր բնութե՟ միաւորեցելոյ ա՟ծայնոյ բնութե՟ 'ի յանձին։ Նաևս է ամենամեծ կատարելութի՟ 'ի մարդկութե՟ քի՟ բանիւ գործւոյ զուգակցեցելոյ։ Քանզի մարդկութի՟ն քի՟ է զուգակցեալ գործի ա՟ծայնոյ բանի։ Գործիս այս է գերազանցագունեղ. քանզի է գործի զուգակցեալ ա՟ծայնոյ բանի, որով վարի աստուածային, և անստեղծ բանն իբրև զուգակցեցելով գործեաւ իւրով։

5. Է ամենամեծ կատարելութի՟ 'ի ք՟ս բանիւ շնորհի գլխոյ։ Քանզի 'ի ք՟սւմ գլխոջ եկեղեցւոյ, է նաև շնորհն գլխոյ։ Վասնզի 'ի լիութե՟ նորա ա՟մենք առնու։ 'Ի քե՟ է ա՟մ շնորհն, ոչ միայն սրբացուցիչն, այլ նաև ձրի տուեցեալն։ Ք՟ս է գլուխ, յորմէ է ա՟մ կենդանական հոսումն 'ի մարմին, և 'ի խորհրդաւորս անդամս։ 'Ի ք՟սէ է նախապատրաստական շնորհն 'ի սկզբնականէ մեղէ, որպէս 'ի Մարիամ, 'ի ք՟սէ է սրբացուցիչ շնորհն 'ի յարգանդի, որպէս 'ի Յօհաննէս։ 'Ի ք՟սէ է սրբացուցիչ շնորհն 'ի ձեռն մկրտութե՟, որպէս 'ի յա՟մս մկրտեցելս։ 'Ի ք՟սէ է սրբացուցիչ շնորհն 'ի ձեռն ապաշխարութե՟, ո՟չ 'ի վերանորոգեցելս։ 'Ի ք՟սէ է աճումն շնորհի, որպէս շնորհն 'ի ձեռն այլոց խորհրդոց։ 'Ի ք՟սէ է հոգին ս՟բ։ 'Ի ք՟սէ է բորբոքումն սիրոյ։ Ք՟սիւ են բարիք ներշնչմունք։ Ք՟սիւ է բաշխումն ա՟մից պարգևաց։ Ք՟սիւ է ա՟մ ա՟ծային օգնութի՟։ Ք՟սիւ է շնորհումն ա՟մից բարերարութե՟ց։ 'Ի ք՟սէ են բաժանմունք շնորհաց։ 'Ի ք՟սէ է յայտնումն ոգեաց առ. օգուտ, բան իմաստութե՟, բան գիտութե՟, լուսաւորումն մտաց, զարթուցումն կամաց, հաւատն, շնորհն առողջութե՟ց, գործումն առաքինութե՟ց, մարգարէութիւն, տարորոշումն ոգեաց, սեռ լեզուաց, և թարգմանութի՟ բանից։ 'Ի ք՟սէ եղիցի շնորհն 'ի յա՟մս մարդիկ,

որք

որք կարիցեն գալ 'ի յայս աշխարհ։ Ուրեմն, որպէս ցուցանեն ասացեալքս, է ամենամեծ կատարելութի 'ի Քսում փրկչին մերում, բանիւ շնորհի գլխոյ ։

6. 'Ի Քս է նաև ամենամեծ կատարելութի գիտութե ։ Ըստ որում Ած, գիտութի նորա է անհուն․ քանզի ըստ որում Ած, գիտութի նորա է նոյն ընդ Հօր, և ընդ Հոգւոյն սրբոյ ։ Վասնզի երից Ածայնոց անձանց, որպէս նոյն է Ածութին, նոյն է էութին, նոյն է բնութին, նոյն է բարութին, նոյն է ճշմարտութին, և նոյն է սրբութին․ այսպէս նաև նոյն է գիտութին, Գիտութիս այս քի ըմբռնէ զԱծային էութին, և զամս Ածայինս իւր, և 'ի յԱծայնումն էութե առ շօշափէ զամս ճանաչելիս իւր ։ Գիտութիս այս է անհուն, Ածային, և անհունապէս կատարեալ, և է նոյն ինքն Ածութին ։ Ուստի 'ի կողմանէ այսր գիտութե, է անհուն կատարելութի 'ի յԱծայնոյ իմացութե քի ։ Ըստ որում Ած, 'ի Քս է անհնիցս անհուն կատարելութի ։ Ըստ որում Ած, 'ի Քս են այնքան կատարելութիք, որքան կատարելութիք են 'ի Հօր․ քանզի է համահաւասար Հօր ։ Նաև 'ի կողմանէ ներհեղեցելոյ գիտութե նորա, է ամենամեծ կատարելութի 'ի Քս ։ քանզի որպէս ներհեղեցեալ շնորհն նորա է ամենամեծ, և այնպիսի, որ վայելէր բնութե, ենթակայականաւ միաւորութբ միաւորեցելոյ Ածայնոյ բնութե․ այսպէս նաև ներհեղեցեալ գիտութի նորա է ամենամեծ, և այնպիսի, որ ըստ դատողութե անհնոյ իմաստութե, վայելիցէ իմացութե բնութե, ենթակայականաւ միաւորութբ միաւորեցելոյ Ածայնոյ բնութե ։ Այսու գիտութբ Քս ճանաչէ զամս իւր, որ պատկանին նմա, ըստ որում է թագաւոր ընդհանրոյ, գլուխ եկեղեցւոյ, և դատաւոր ամից ։ Ուստի գիտէ զբնութիս, զկարողութիս, և զարարողութիս ամից իւրաց, զխորհուրդս, զդատողնիս ամից արտից, զօրն դատաստանի, և զհամայնս այլս, որք պատկանին նմա ։

7. Նաև կատարելութի սիրոյ, և ուղղութե 'ի Քս է ամենամեծ ։ քանզի որպէս ներհեղեցեալ շնորհն նորա է ամենամեծ, և ներհեղեցեալ գիտութի նորա է ամենամեծ․ այսպէս սէրն, և ուղղութի նորա է ամենամեծ ։ Սէրն նորա, որով սիրեաց, և սիրէ զԱծային էութին տեսեցեալն, յաղթէ զամ սէր․ քանզի է սէր բնութե, միաւորեցելոյ Ածայնոյ բնութե 'ի յանձին, և բնութե, որոյ գոյացական սրբութին է նոյն ինքն Ածութին, և որ 'ի վայրկենի արտադրութե իւրոյ առժամայն ետես զԱծային էութին, և ամենամեծիւ սիրով սիրեաց զնա ։ Եւ սէրն նորա, այսինքն, քի, որով սիրեաց զփրկութի մարդկանց վասն փառաց, և պատուոյ Հօրն յաւիտենականի, եղև ամենամեծ․ քանզի վասն փրկութե մարդկանց աշխատեցաւ, կարի վաստակեցաւ, քաղցեցաւ, ծարաւեցաւ, զբոլոր գիշերն աղօթեաց, հաւաքեաց զաշակերտս, գնաց 'ի միոյ տեղւոջէ առ միւսն, 'ի միոյ քաղաքէ առ միւսն․ կրեաց զցաւս, և զտանջանս, չարչարեցաւ, խաչեցաւ, և մեռաւ ։ Ուստի է ամենամեծ կատարելութե սիրոյ նորա․ է ամենամեծ նաև կատարելութի ուղղութե նորա․ քանզի ըստ որում Ած, Քս է նոյն ինքն ուղղութին, նոյն ինքն արդարութին, նոյն ինքն ողորմածութին, նոյն ինքն գթութին, և նոյն ինքն բարութին ։ Նաև ըստ որում մարդ, է ամենամեծ ուղղութի կամին քի․ քանզի ուղղութի նորա է ըստ սիրոյ նորա․ սէրն նորա է ամենամեծ․ ապաուրեմն և ուղղութի նր է ամենամեծ ։ Ուստի վասն մեծութե ուղղութե, ամ արարողութի նորա էր ուղղադունեղ, և ամենասուրբ, և ամենաբարի․ և նաև ըստ որում մարդ, և որդի մարդոյ, էր անմեղանչելի, և անընդունակ մեղաց ։

8. Նաև արքունական, դատողա

տողական , և քահանայական կատարելութիւն քն է ամենամեծ : Է ամենամեծ արքունական կատարելութի քն • քանզի քս է արքայ • և իշխան ընդհանրոյ : քս է թագաւոր թագաւորաց , և տր տերանց , և համայնք իւք ենթարկեցեալք են նմա : քս է իշխան , թագաւոր , և գլուխ մարդկանց , և հրեշտակաց : Թագաւորութի քն է յաւիտենական , ոչ ունի զվախճան : Ուստի թագաւորութի քն է ամենամեծ : Ուրեմն և արքունական կատարելութի նորա է ամենամեծ : Է ամենամեծ և քահանայական կատարելութի քն • քանզի քահանայական արժանապատուութի նր է ամենամեծ : քս է քահանայ 'ի յաւիտեան ըստ կարգի Մելքիսեդեկի : քս է ծայրագունեղ քահանայապետ , և ծայրագունեղ քահանայ : 'Ի քէ է ամ քահանայապետութի , և ամ քահանայութի : Ամ քահանայական իշխանութի է 'ի քէ , և ամ քահանայական արժանապատուութին է 'ի նմանէ : Ուստի քահանայութի քն է ամենամեծ • ուրեմն քահանայական արժանապատուութի նորա է ամենամեծ : Այսուրեմն և քահանայական կատարելութի նորա է ամենամեծ : Է ամենամեծ և դատողական կատարելութի քն • քանզի է ամենամեծ դատողական կարողութի նր : Տուեալ նմա ամ իշխանութի 'ի յերկինս , և 'ի յերկրի : Նա է դատաւորն ամենեցուն : Ամ դատողական իշխանութի է 'ի նմանէ : Նա դատելոց է զկենդանիս , և զմեռեալս : Դատելոց է զնոսա , որք մեռեալք են , և զամենեսեան , որք մեռանելոցք են • և նաև զնոսա , որք ծնանելոցք , և մեռանելոցք են : Եւ ոչ հայրն դատէ զոք • այլ զամ դատաստան ետ որդւոյ , զի ամենեքեան պատուեսցեն զորդին , որպ պատուեն զհայրն : Տեսեր զկատարելութիս քն փրկչին մերոյ : Երկիր 'ի նմանէ , և ամենամեծիւ սիրով սիրեա զնա :

# ԳԼՈՒԽ. ԽԵ.

## Յաղագս կենի Քի :

1. Մա զօրութբ , և ներգործութբ հոգւոյն սրբոյ յղացեալ 'ի յարգանդի ամեներանեցելոյ կուսին Մարիամու , եկաց անդ զինն ամիս : Արգանդն Աներանեցելոյ կուսին եղև ընդունելագունեղ տաճար բանին ներմարմնացելոյ : 'Ի յարգանդի կուսին իբրև 'ի յիւրում փառաւորի աթոռոջ նստաւ թագաւորն , և ամենաբարձր իշխանն : Թագաւորն մեծվայելչութե եղև պահպանիչ փառաւորի կուսութե : Մաքրագունեղ տր ընտրեաց զմաքրագունեղ արգանդ : Այնպէս սիրեաց զկոյսն , և սիրեաց զարգանդ նորա , զի զինն ամիս բնակեցէր 'ի նմա , և հնայցէր 'ի յարգանդի նորա : Կուսական արգանդն սնուցանէր զբանն ներմարմնացեալ , և բանն ներմարմնացեալ շնորհազարդէր զկուսական արգանդն : Արգանդն տայր զսնուցումն • բանն ներմարմնացեալ զմեծ զարդ : Մարիամ կոյսն սնուցանէր արեամբ իւրոյ զորդին այ մարդացեալն • որդին այ ներմարմնացեալն լուսաւորէր զմիտն Մարիամու : Մարիամ տայր զկերակուր • բանն տայր զլոյս : Մարիամ տայր զապրուստ • որդին աճեցուցանէր զշնորհ նորա : Մարիամ սիրէր • որդին բորբոքէր զսէր նորա : Մարիամ սիրէր զբանն , 'ի յարգանդի իւրում ներմարմնացեալն • բանն ներմարմնացեալ սիրէր զմայր իւր Մարիամ : Արգանդն Մարիամու էր աթոռ • միտն նորա վառարան սիրոյ : 'Ի յարգանդոջ Մարիամու էր բանն • 'ի սրտի նորա բորբոքումն սիրոյ : 'Ի յարգանդոջ էր որդին • 'ի մտի լուսաւորումն լուսոյ : 'Ի

յար_

յորդանանոյ էր Յս̃ . 'ի մահ հագին ար̃ : Մարիամ կոյսն էր ծառ . Քս̃ պտուղ այսր ծառոյ :

2. 'Ի լնանիլն իննից ամսոց , յորս որդին այ̃ ներմարմնացեալն եկաց 'ի մաքրագունեղի արգանդոջ ամենասրբոյ կուսին մարիամու , և անուցաւ մաքրագունեղիւ արեամբ նորա , լցան աւուրք նորա , զի Մարիամ կոյսն ծնանիցիւր : Ծնաւ Մարիամ զորդին այ̃ , 'ի յարգանդոջ իւրում ներմարմնացեալն : Ծնաւ զորդին , նաև 'ի ծննդեան մնաց կոյս : Որպէս յղացաւ գոլով կոյս , այսպէս և ծնաւ գոլով կոյս թարց ուրուք ապականութե : Ուրեմն որդին այ̃ , եղեալ մարդ վս̃ փրկութե մարդոյ . ծնաւ 'ի Մարիամայ կուսէն թարց ապականութեան կուսութե մօրն : Որպէս եղև պահպանիչ կուսութե նորա 'ի յարգանդոջ , այսպէս նաև և 'ի ծննդեան : Մարիամ կոյսն զորդին իւր զՅս̃ Քս , զփրկիչն աշխարհի զփափագեցեալն ազգաց , զճշմարիտն ած̃ , և զճշմարիտն մարդ , յարդեաց երկրպագմամբ , և համբուրեաց ընդ յօժէփու : Փաթութեաց զնա 'ի խանձարուրս , և եդ 'ի մսուրն . քանզի ոչ էր նոցա տեղի յիջևանի : Փարթամն , և տէրն ընդհանրոյ վս̃ մեր գրկեաց զչքաւորութի , ընտրեաց զմայրն չքաւոր , և զհամարողական հայրն , զհօդն նորա , և մօրն նորա կրօղն աղքատ : 'Ի ծննդեան քն̃ հրեշտակ տեսան երևեցաւ հովուաց , 'ի նոյնում դաւառի հսկողաց , և պահպանողաց զպահպանութիւնս գիշերոյ հօտից իւրեանց : Եւ աւետարանեաց նոցա զուրախութի մեծ եղեալ ամե ժողովրդեան ասելով ծնաւ ձեզ այսօր փրկիչ , որ է օծեալ տր̃ 'ի քաղաքի դաւթի : Եւ յանկարծակի եղև ընդ հրեշտակին ընդ այնմիկ բազմութի զօրաց երկնաւորաց , որք օրհնէին զա̃ծ և ասէին : Փառք 'ի բարձունս այ̃ . և երկիր խաղաղութի , 'ի մարդիկ հաճութի : Ծնաւ ուրեմն մեզ փրկիչ , և եղև մեզ ուրախութի մեծ :

3. Հովիւք լուսաւորեցեալք , և եղեալք հաւատարիմք կոչման , եկին վաղվաղակի , և գտին զմարիամ , և զՅօսէփ , և զմանուկն եդեալ 'ի մսուրն : Եւ տեսանելով եկին 'ի ճանաչումն բանի , որ ասացեալ էր նոցա զմանկանէ ծնելոյ : Տրն մեր քս̃ ծնեցեալն , 'ի յութներորդում աւուր ծննդեան կամեցաւ թլփատիլ : Թլփատեցաւ մարմնով , զի մեք թլփատիցեաք հոգւով , մերկանալով զցանկութի մարմնոյ , և զանկարգ հեշտութի նորա : Ընկալաւ զծանր բեռն թլփատութե , զի մեք յօժարաբար տանիցէաք զքաղցր բեռն օրինի սիրոյ : Նոյնժամայն կամեցաւ հեղուլ զարիւն իւր , զի ցուցանիցէր զիւր իւրն գոլ փրկիչ հեղմամբ արեան : 'Ի թլփատութե կոչեցաւ Յս̃ , որ կոչեցեալ էր 'ի հրեշտակէն , մինչև յղացեալ էր զնա յորովայնի : Կոչեցաւ Յս̃ , և փրկիչ , որ եկեալ էր փրկել զաշխարհս , զի յոյսն մեր զփրկութէ մերմէ զօրացուցանիցէր : Էառ զանուն փրկչի , և չհարհաւ զի զփրկութի , զի մեզ լցէր զիւրին յուսոյն զփրկութի , և դնելն զյոյս մեր 'ի վերայ փրկչին : Էառ զանունն 'ի գործոյ , զոր գործելոց էր , և վոր առ 'ի գործել եկեալ էր 'ի յաշխարհ : Միածին որդին այ̃ , 'ի յա̃ծայնոյ բնութէ համագոյակից հօր , ունայնացոյց զիւր ինքն , առընլով զկերպարան ծառայի , և լինելով մարդ . և խոնարհեցոյց զիւր ինքն , լինելով հնազանդ մինչև առ թլփատութիւն հեղմամբ արեան : Վասն որոյ և ա̃ծ բարձրացոյց զնա , և ետ նմա զանուն , որ է 'ի վեր քան զա̃մ անուն , 'ի յաւիտենից խորհեցեալ , և ա̃ծայնով իմաստութ̃ դասեցեալ . զի 'ի յանունն Յի̃ ա̃մ ծունր կրկնեսցի , երկնաւորաց , երկրաւորաց , և սանդարամետականաց . և ա̃մ լեզու խոստովան լինիցի , զի Տր̃ Յս̃ Քս է 'ի փառս այ̃ հօր : Անունն Յս̃ է անուն քաղցր , և փրկաւէտ : Երկրպագեալ ուրեմն նմա , և յուսա 'ի նա :

4. 'Ի

4. 'Ի լնանիլն աւուրց սր-
բութե՟ նորա, ըստ օրինի մովսէսի,
ածին զՅս՟ 'ի յերուսաղէմ, յան-
դիման առնել տն՟: Եւ տալ պա-
տարագս ըստ ասացելոյն յօրէնսն
տն՟, զոյգս տատրակաց, կամ զեր-
կուս ձագս աղաւնեաց: Յայնժամ
Սիմէօն այր արդար, և երկիւղած,
և ակն ունօղ մխիթարութե՟ Իղի,
յորում էր հոգին սբ՟, և որ առեալ
էր զհրաման 'ի հոգւոյն սրբոյ, մի
տեսանել զմահ, մինչև տեսցէ զօ-
ծեալն տն՟. եկն հոգւովն 'ի տա-
ճարն: Եւ զմանուկն Յս՟ 'ի ծնո-
ղաց նորա ածեալն, զի առնիցէին
ըստ սովորութե՟ օրինի վասն նորա,
էառ 'ի գիրկս իւր, և օրհնեաց
զած՟, ասելով: Արդ արձակես
զծառայս քո տր՟ ըստ բանի քում'ի
խաղաղութի: Զի տեսին աչք իմ
զփրկութի քո: Զոր պատրաստե-
ցեր առաջի ամ՟ ժողովրդոց: Լոյս
'ի յայտնութի հեթանոսաց, և
փառս ժողովրդեան քում Իղի: Եւ
ասէ ցմարիամ մայր նորա: Ահա
սա կայ 'ի գլորումն, և 'ի կանգ-
նումն բազմաց 'ի մէջ իսրայելի.
և 'ի նշան հակառակութեան:
Եւ ընդ քո իսկ անձն անցցէ սուր,
զի յայտնեսցին 'ի բազմաց սրտից
խորհուրդք: Եւ մանուկն աճէր,
և զօրանայր, լի իմաստութբ՟. և
շնորհք ած՟ էին 'ի վերայ նորա:
Ածաւ Յս՟ 'ի տաճարն, զի ուսա-
նիցէաք առնել զօրան մեր բնա-
կարան ած՟: Լեր արդար, և եր-
կիւղած, զի 'ի քեզ բնակիցի հոգին
սբ՟, և արժանաւորիցիս ունիլ 'ի
գիրկս սրտի քո, զՅս՟ Քս՟ զորդին
ած՟: Մերձեցիր Յսի լուսաւո-
րողի, փրկչին քո, զի լուսաւորի-
ցէ զմիտն քո, և փրկիցէ զհոգին
քո: Արա, զի իցես իմաստուն, և
շնորհն ած՟ աճիցի 'ի քեզ:

5. Ծնեցելոյ Յսի 'ի քաղաքի
դաւթի 'ի յաւուրս հերովդէի ար-
քայի, ահա մոգք յարևելից եկին
յէ՟մ, ասելով, ուր է, որ ծնաւ
արքայն հրէից: Զի տեսաք զաստղ
նորա յարևելս. և եկաք երկիրպա-
գել նմա: Խռովեցաւ հերովդէս, և
ամ՟ յեէմ ընդ նմա: 'Ի ձեռն իշ-
խանաց քահանայից, և 'ի ձեռն
դպրաց ժողովրդոց, հերովդէս լեալ
ստոյգագոյն, թէ ուր ծնանիցի Քս՟,
գաղտ կոչեաց զմոգսն, և ստու-
գեաց 'ի նոցնէ զժամանակ աստե-
ղն երևելոյ: Կեղծելով թէ և ինքն
կամի երկրպագել քի, առաքէ զնո-
սա 'ի բեթլէհեմ: Նոքա գնացին,
և տեսեալք զաստղն, զոր տես-
ալք էին 'ի յարևելս, խնդացին
յոյժ յուրախութի մեծ: Առաջնոր-
դեաց նոցա աստղն մինչև եկեալ ե-
կաց 'ի վերայ, ուր էր մանուկն:
Եւ իբրև մտին 'ի տունն գտին զ
մանուկն հանդերձ մարիամաւ մարբն
իւրով. և անկեալ երկրպագանէ-
ին նմա. եւ բացեալ զգանձս իւր-
եանց մատուցին նմա, պատարագս
ոսկի, և կնդրուկ, և զմուռս: Եւ
հրաման առեալ 'ի տեսլեան չդառ-
նալ անդրէն առ հերովդէս. ընդ
այլ ճանապարհ գնացին 'յաշխարհն
իւրեանց: Եթէ ուշադրաբար խն-
դրիցես զՅս՟, գտցես զնա: Քանզի
մարդացեալ իմաստութին շրջելով
խնդրէ զարժանիս իւրեան ինքեան,
և 'ի ճանապարհի ցուցանէ զիւր
ինքն նոցա ուրախութբ՟, և 'ի յամ՟
նախախնամութե՟ ընդ առաջ ելանէ
նոցա: Մի կեղծեր զբարեպաշ-
տութի: Կեղծումն բարեպաշտու-
թե՟ է ամբարշտութի: Մինչ գտա-
նես զՅս՟, և մեծաւ ուրախութբ՟
ուրախանաս, մատո նմա զոսկի սի-
րոյ, զկնդրուկ աղօթից, և զմուռս
մահացուցման մարմնոյ, ճանաչելով
զնա գոլ ծայրագոյնեղ թագաւոր,
ած՟ քո. և վասն փրկութե՟ քո չար-
չարեցեալ ըստ մարդկութե՟: Մի
կամիր դառնալ առ թշնամին, կո-
րուսիչն հոգւոյ քո:

6. Յետ յետադարձման մո-
գուց, հրեշտակ տեառն երևեցաւ
'ի տեսլեան յօսէփու, և ասաց.
արի, առ զմանուկդ, և զմայր նր՟,
և փախիր 'ի յեգիպտոս, և լեր
անդ, մինչև ասացից քեզ. քանզի
խնդրէ հերովդէս կորուսանել զմա-
նուկդ: Յարուցեալ Յօսէփ էառ
զմանուկն, և զմայր նորա 'ի գի-

շե-

շերի, և գնաց 'ի յեգիպտոս ։ Հերովդէս տեսանելով, թէ խաբեցաւ 'ի մոգուց, կարի բարկացաւ, և առաքեալ սպան զա՟մ մանկունս, որք էին 'ի բեթղեհէմ, և 'ի յա՟մ գաւառս նորա յերկեմենից, և 'ի խոնարհ ըստ ժամանակին, զոր ստուգեալ էր 'ի մոգուց ։ Յետ մեռանելոյն հերովդէի հրեշտակ տեառն երևեցաւ 'ի տեսլեան Յովսէփու 'ի յեգիպտոս, ասելով . արի, և առ զմանուկդ, և զմայր նորա, և գնա 'ի յերկիրն յի՟լի, քանզի մեռան, որք խնդրէին զմանուկն ։ Յովսէփ յարուցեալ, էառ զմանուկն, և զմայր նորա, և եկ 'ի յերկիրն Ի՟ղի . և ազդեցեալ 'ի տեսլեան, գնաց 'ի կողմանս գալիլեացւոց ։ Եւ եկեալ բնակեցաւ 'ի քաղաքի, որ կոչի նազարէթ, զի լցցի, որ ասացեալն է 'ի ձեռն մարգարէից, թէ նազովրեցի կոչեսցի ։ Ուսիր աստ 'ի հարկաւորութիս, 'ի փորձութե՟ն, և 'ի նեղութիս քոյս յուսալ, և յուսադրիլ 'ի տր՟ ։ Յուսացողն 'ի տր՟ պաշտպանի 'ի տնէ . Յուսադրողն 'ի տր՟, ոչ զրկի 'ի յուսոյ իւրմէ ։ Ըստ հաճոյից տեառն, գտանէ զօժանդակութի՟, և զօգնութի՟ ։ Յուսամ 'ի տր՟, բայց մի կամիր անկարգաբար սիրել զայս անցաւոր աշխարհն իբրև հերովդէս ։ Անկարգ սէրն աշխարհի ոչ միայն առածէ 'ի բարկութի՟ . այլ նաև 'ի յանողորմութի՟ ։

7. Ծնօղքն տեառն ընդ ա՟մ ամս գնային 'ի յերուսաղէմ, 'ի յաւուր հանդիսաւորութե՟ն պատկի ։ Լեալ տր՟ն ամաց երկոտասանից, 'ի կատարիլն աւուրց տօնախմբութե՟ն, և 'ի դառնալն ծնօղաց, մնաց յե՟էմ, և ոչ գիտացին ծնօղքն նորա, կարծէին զնմանէ թէ ընդ ուղեկիցսն իցէ ։ Եկին իբրև աւուր միոյ ճանապարհ, խնդրէին զնա ընդ դրացիսն, և ընդ ծանօթս . և իբրև ոչ գտին, դարձան անդրէն յե՟էմ խնդրել զնա ։ Յետ երից աւուրց գտին զնա 'ի տաճարին, զի նստէր ընդ վարդապետսն, լսէր 'ի նցէ, և հարցանէր զնոսա ։ Զարմանային ա՟մքն, որք լսէին 'ի նմանէ ընդ իմաստութի՟, և ընդ պատասխանիս նորա ։ Եւ իբրև տեսին զնա զարմացան ։ Եւ մինչ մայրն ասաց որդւոյն, զի՞նչ գործ գործեցեր դու ընդ մեզ . ահաւասիկ հայր քո, և ես տառապեալք, և խնդրէաք զքեզ . պատասխանեաց, զի՞ խնդրէիք զիս . ո՞չ գիտէիք եթէ 'ի տան հօր իմոյ պարտ է ինձ լինել ։ Եւ էջ ընդ նոսա, և գնաց 'ի նազարէթ, և էր նոցա հնազանդ ։ Եւ զարգանայր իմաստութբ՟, և հասակաւ, և շնորհօքն այ՟, և 'ի մարդկանէ ։ Անհուն է արժանապատուութի՟ն Մարիամու . քանզի է ճշմարիտ մայր այ՟ ըստ մարդկութե՟ ։ Մեծ է արժանապատուութի՟ն Յովսէփու . քանզի կոչեցաւ հայր տեառն, և իւրաւի աշխատանօք իւրովք տարաւ զհոգաբարձութի՟ տեառն, և մօր նորա ։ Երանեալ Մարիամ, և երջանիկ Յօսէփ . քանզի զիրս պատմեցեալս տեսին աչօք իւրովք ։ Զմանուկն Յս՟ գրկեցին, համբուրեցին, և տարան 'ի գիրկս իւրեանց, և 'ի տնըննջեան, և 'ի գիշերի լռեան զբանս նորա, և զարարողութիս նորա տեսին աչօք իւրեանց ։ Մանուկն Յս՟ իւրաւի զարգանայր հասակաւ, և ըստ հասակաւ զիմաստութի՟ իւր, և զշնորհն իւր յայտնէր ։ Զայնոսիկ իրս, որք ոչ են գրեցեալք, տեսին Յովսէփ, և Մարիամ . Յօսէփ մինչև 'ի յօր մահուան իւրոյ . իսկ Մարիամ նաև մինչև 'ի յայտնութի՟ տեառն ։

8. 'Ի քարոզելն Յօհաննու 'ի յանապատըն հրէաստանի, և 'ի մկրտելն նորա 'ի յորդանան, եկն Յս՟ 'ի գալիլէէ 'ի յորդանան առ Յօհաննէս, զի մկրտեսցի 'ի նմանէ ։ Յօհաննէս արգելոյր զնա, ասելով . ինձ պիտոյ է մկրտիլ 'ի քէն, և դու առ իս գաս . պատասխանեաց նմա Յս՟, ասելով . թոյլ տուր այժմ, զի այսպէս վայելէ մեզ լնուլ զա՟մ արդարութի՟ ։ Եւ իբրև մկրտեցաւ Յս՟, ել վաղվաղակի 'ի ջրոյ անտի ։ Եւ բացան նմա երկինք . և ետես զհոգին այ՟, զի իջանէր իբրև զաղաւնի-

ունի , և դայր 'ի վերայ նորա , և եղև ձայն յերկնից , որ ասէ · դա է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ : Վարեցաւ Յս̃ յանապատ , և պահեաց զքառասուն տիւ , և զքառասուն գիշեր · և փորձեալ 'ի սատանայէ , յաղթեաց զնա : Սկսաւ գործել , և ուսուցանել , և քարոզել զապաշխարութի : Ետ զյայտնագունեղս օրինակս ա̃մից առաքինութեց : Հսկեաց զբոլոր գիշերն 'ի յաղօթս , աշխատեցաւ , և վաստակեցաւ վասն փրկութե մարդկան : Զպետրոս , և զՅակոբոս , և զՅօհաննէս զեղբայրն նորա հան 'ի լեառն մի բարձր առանձին , և այլակերպեցաւ առաջի նոցա : Աքանչելաբար կերակրեաց զմեծ ամբոխ , առնելով զգործ ողորմութե : Եկեր , և էարբ ընդ մեղաւորս , զի շահիցէր զնոսա : Ետ մարդկանց զգերազանցս օրինակս խոնարհութե , ողորմածութե , և սիրոյ : Համբերութբ մեծաւ կրեաց զանիրաւութիս , յանիրաւաց առբերեցեալս : Այնպէս սիրեաց զթշնամիս , զի նաև բարձրացեալ 'ի խաչին աղօթիցէր առ հայր վասն նց : Գործեաց զա̃մս սեռս սքանչելեաց , զի 'ի ձեռն սքանչելեաց ածիցէր զմարդիկ առ Ճշմարիտ հաւատն : Սքանչելեօք եցոյց զիւր ինքն դոլ ա̃ծ , մարդկայնովք արարողութբք եցոյց զիւր ինքն դոլ մարդ , Յս Քս Ճշմարիտ ա̃ծ, և Ճշմարիտ մարդ: Ով հաւատացողդ 'ի Քս , հետևեա նմա , տեառն , և ա̃յ քո :

## ԳԼՈՒԽ: ԽԲ·

### Յաղագս վարդապետութե Քի:

1. Վարդապետութի Քի սա է այն , զոր Քս բերանով իւրով ուսոյց , և աւետարանիչք գրեցին , կամ առաքեալք մեզ աւանդեցին : Վարդապետն մեր է Քս : Սա եկն յաշխարհ , զի ուսուցանիցէր մեզ : Քս̃ է լոյս լուսաւոր առնօղ զա̃մ մարդ , որ գալոց է յաշխարհ : Քս է արեգակն արդարութե , ծագեցեալ մեզ , զի լուսաւորիցէր զմեզ : Քս է սիրելի որդին այ , յորում հաճեցաւ հայրն երկնաւոր , և կացոյց զնա մեզ վարդապետ , զի լսիցեմք նմա : Սա է , 'ի յորում վերջապէս խօսեցաւ ընդ մեզ ա̃ծ , որ բազմապատկաբար , և զանազանիւք կերպիւք խօսեցեալ էր հարց 'ի ձեռն մարգարէից : Սա է , որ ոչ եկն լուծանել զօրէնս , կամ զմարգարէս , այլ լնուլ : Քանզի եկն մեկնել զպատուէիրանս , և բանալ մեզ զՃշմարիտ իմացումն նց , զի մի սուտք քրիստոսք , սուտք մարգարէք , և սուտք վարդապետք , որք գան առ մեզ հանդերձիւք ոչխարաց , իսկ 'ի ներքոյ են գայլք յափշտակօղք , մոլորեցուցանիցեն զմեզ : Տր̃ն մեր Քս , Ճշմարիտ ա̃ծն , և Ճշմարիտ մարդն , լոյսն փառաց , պատկերն , և կերպարանն գոյացութե հօր , անստեղծ իմաստութին , միածին որդին , որ է 'ի ծոց հօր , ուսոյց մեզ , ոչ միայն բանիւք , այլ նաև օրինակօք : Վարդապետն , և ուսուցիչն , որ է Ճշմարտութին , հմտացոյց զմեզ յա̃ծայինս իւր :

2. Վարդապետութին քի է գերազանցագոյնեղ , յաղթօղ զայլ ա̃մ Ճշմարիտ վարդապետութի , քանզի Քս է վարդապետ , և ուսուցիչ գերազանցագունեղ , յաղթօղ

թող զայլս ամս վարդապետս, և ճշմարտախօսս ուսուցիչս, և զճշմարտութիւն ուսուցանօղս: Վարդապետութիւն քի ճշմարտի այ, է նոյն ինքն ճշմարտութիւն: Վարդապետութիւնք այլոց վարդապետաց, և ուսուցչաց ճշմարտախօսաց, և զճշմարտութիւն ուսուցանողաց են մասնակցութիւնք այսորիկ ճշմարտութեան: Քս է արեգակն, այլք ճշմարտախօսք վարդապետք են աստեղք, զլոյսն 'ի յարեգականէ արդարութեան առընդունօղք: Ուստի 'ի բաղդատութեան քի, ոչ են կոչելիք վարդապետք · քանզի վարդապետն մեր մի է, Քս · որպէս 'ի բանի բարւոյ միայն ած է բարի: Վարդապետութիւն քի է իբրև զծով · վարդապետութիւնք այլոց զճշմարտութիւն ուսուցանողաց իբրև առուք, և գետք յառաջացօղք, և յառաջահոսօղք յասացելոյ ծովու: Վարդապետութիւն Քի է իբրև արեգակն, վարդապետութիւնք այլոց զճշմարտութիւն ուսուցանողաց իբրև շառաւիղք ասացելոյ արեգական: Լոյսն վարդապետութեան քի է պայծառագունեղ, որ լուսաւոր առնէ զամս մերձեցօղս · թէ իցէ այր, թէ իցէ կին · թէ ծեր, թէ մանուկ · թէ քաղաքացի, թէ գուեհիկ · թէ տր, թէ ծառայ · թէ իցէ այր մեծի գիտութեան, թէ միջավարի: Ուսումնարանն այսր վարդապետի զոչոք արտաքսէ, զհամայնս ընդունի: Վարդապետութիւն այսորիկ վարդապետի է թարց նենգութեան, քանզի է անկեղծ · թարց երկիւղի մոլորութեան, քանզի է ճշմարիտ · է խորին, քանզի ուսուցանէ զբարձրագունեղս խորհուրդս · և է մաքուր, քանզի ուսուցանէ զսրբակացութիւն:

3 Վարդապետութիւն քի ուսուցանէ զբարձրագունեղս հաւատալիս խորհուրդս: Աւետարանաւ քի յայտնապէս ճանաչեցաք զխորհուրդն ամենասրբոյ երրորդութեան, և զխորհուրդն ներմարմնութեան · Այսու վարդապետութեամբ ճանաչեցաք, զերիս ածայինս անձինս, զհայրն, և զորդին, և զսբ հոգին, ունիլ զմին, և զնոյն բնութիւն, և գոլ մի ած · Քանզի 'ի յաւետարանի է անուն հօր, և որդւոյ, և հոգւոյն սրբոյ, և միոյ այ: 'Ի մկրտութեան քի · հայրն 'ի վերուստ խօսեալ է, որդին 'ի յորդանան մկրտեցեալ, և հոգին սբ 'ի կերպարանի աղաւնւոյ իջեալ: Ուրեմն ըստ աւետարանի են երեք անձինք, և մի ած: Այսու վարդապետութեամբ ճանաչեցաք զներմարմնութիւն բանին, ճանաչեցաք զած, և մարդ գոլ մի անձն, մի ընթակայացեալ, մի ընթակայացօղ, և մի ընթադրեցեալ, ունեցօղ զերկուս բնութիւնս, այսինքն, զածային, և զմարդկային: Քանզի ըստ աւետարանի, բանն մարմին եղև: Եւ 'ի յաւետարանի գրեալ է: Ոչոք ել յերկինս, եթէ ոչ որ էջ յերկնից, որդի մարդոյ, որ էն երկինս: Յօհաննու · 3 · թիւ · 13 · Ուրեմն ելանօղն, և իջանօղն է նոյն, և այսպէս ած, և մարդ է մի անձն, ունեցօղ զերկուս բնութիւնս, զածային, և զմարդկային: Աւետարանաւ է ծանօթութիւն եկեղեցւոյ, ըստ այնմ: Եւ ես քեզ ասեմ · զի դու ես վէմ · և 'ի վր այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ · և դրունք դժոխոյ զնա մի յաղթահարեսցեն: Եւ տաց քեզ փականս արքայութեան երկնից: Եւ զոր միանգամ կապեսցես յերկրի, եղիցի կապեալ յերկինս · և զոր արձակեսցես յերկրի, եղիցի արձակեալ յերկինս: Մատթէի · 16 · թիւ · 18 · Ուրեմն աւետարանաւ է ծանօթութիւն եկեղեցւոյ, սեան, և հաստատութեան ճշմարտութեան, ծանօթութիւն գլխաւորութեան եկեղեցւոյ, և ծանօթութիւն իշխանութեան փականաց, և իշխանութեան կապելոյ, և արձակելոյ:

4 · 'Ի ձեռն աւետարանի է ծանօթութիւն խորհրդոց, զշնորհ համբերողաց, այսինքն, մկրտութեան, դրոշմի, հաղորդութեան, ապաշխարութեան, վերջին օծման, կարգի, և ամուսնութեան: Քանզի 'ի ձեռն աւետարանի է ծանօթութիւն վերած-

ներելութե, որ լինի 'ի ձեռն մկրտութե. խոստման հոգւոյն սրբոյ, զոր ընդունիմք 'ի դրոշմի. կացուցման հաղորդութե, որ է խորհուրդ մարմնոյ, և արեան քի, և է խորհուրդ սիրոյ, և սիրելութե. պատուիրի ապաշխարութե, որ է խորհուրդ վերանորոգման. օծման հիւանդաց, որ տրի 'ի վերջնում օծման. կացուցման քահանայի, որ է խորհուրդ կարգի. և անլուծանելւոյ կապակցութե, որ է ամուսնութե ։ Վարդապետութին քի զյարութե կարի յայտնի է ։ Քանզի ասէ 'ի յաւետարանին ։ Եկեսցէ ժամանակ, յորում ամենեքին, որք 'ի գերեզմանս կայցեն, լուիցեն ձայնի նորա ։ Եւ եկեսցեն արտաքս. որոց բարիս գործեալ իցէ, 'ի յարութի կենաց. և որոց զչար արարեալ, 'ի յարութի դատաստանաց ։ Յօհ. 5. Թիւ. 28. Վարդապետութին քի զդատաստանէ է յայտնագունեղ ։ Քանզի ուսուցանէ 'ի յաւետարանոջ ։ Յորժամ եկեսցէ որդի մարդոյ փառօք իւովք, և ամ հրեշտակք ընդ նմա, յայնժամ նստցի յաթոռ փառաց իւրոց ։ Եւ ժողովեսցին առաջի նորա ամենայն ազգք. և մեկնեսցէ զնոսա 'ի միմեանց, որպէս հովիւ զի մեկնեսցէ զօդիս յայծեաց ։ Եւ կացուսցէ զօդիսն ընդ աջմէ իւրմէ, և զայծիսն 'ի ձախմէ իւրմէ ։ Մատթէի ։ 25. Թիւ. 31. Վարդապետութի նորա նաև է յայտնագունեղ զհատուցմանէ ։ Քանզի ասէ ։ Եւ երթիցեն նք 'ի տանջանսն յաւիտենականս, և արդարք 'ի կեանս յաւիտենականս ։ Հաւատացող զյարութի, զդատաստան, և զհատուցում, յերկիր յմյ, և պահեա զպատուէրս նորա ։

5. Վարդապետութին քի նաև է չուրջ զյուսալեօք իւրօք ։ Քանզի ինքն ուսոյց զյուսալիս իւս, ասելով ։ Այսպէս ուրեմն աղօթեսջիք ։ Հայրն մեր, որ յերկինս ես. սբ եղիցի անուն քո ։ Եկեսցէ արքայութի քո ։ Եղիցի կամք քո, որպէս յերկինս, և յերկրի. Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր ։ Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց ։ Եւ մի տանիր զմեզ 'ի փորձութի, այլ փրկեա զմեզ 'ի չարէ ։ Ամէն ։ Յուսալքն 'ի յմյ են այսոքիկ ։ Այսինքն, զամ կոչեմք հայր, զի զօրանայցէ, և աճիցի յոյսն մեր ։ Խնդրեմք զբարձրացուցում անուան նորա, զի ոչ անունն մյ 'ի մէնջ ճանաչեցեալ, և երկրպագեցեալ, սրբացուցանիցէ զմեզ ։ Խնդրեմք զարքայութին մյ, զի աստ թագաւորիցէ 'ի մը մեր շնորհիւ, և յերկինս փառօք. Խնդրեմք զբոլոր կատարումն ամենայնոյ կամին, զի օգնիցէ մեզ առ 'ի պահել, և կատարել զամ պատուիրանս նորա ։ Խնդրեմք զհաց հանապազորդական, զի պահիցէ զմեզ 'ի կենի հոգևորականի, և 'ի շնորհի, տայցէ մեզ զբաւականութի յայսմիկ կենի ։ Խնդրեմք զթողութիւն պարտուց մերոց, զի թողուցու մեզ զմեղս, և նիրիցէ մեզ, ներողացս եղբարց մերոց ։ Խնդրեմք, զի մի տանիցի զմեզ 'ի փորձութի, զի օգնիցէ մեզ, և շնորհիցէ մեզ զօգնութի յաղթելոյ զառիթս, որքածեն զմարդն առ մեղս ։ Վերջապէս խնդրեմք զազատութ 'ի չարէ, զի տայցէ մեզ զօգնութի մնալոյ 'ի շնորհի, և 'ի պահպանման պատուիրանաց, և զի զօրացուցանիցէ զմեզ ընդդէմ մեղաց ։

6. Քրիստոս ուսոյց մեզ զսէր ։ Ըստ վարդապետութե նորա, ամենամեծ, և առաջին պատուիրանն է, սիրել զտր ած յամ սրտէ ։ և յամ յանձնէ, և յամ մտաց. իսկ երկրորդն նման սմին, սիրել զընկերն մեր իբրև զմեզ. ասէ 'ի յայսոսիկ երկուս պատուիրանս զընդհանուրս օրէնս և մարգարէս կախիլ ։ Ըստ ստորասութե քի ։ նոր պատուէր նորա է, սիրել զմիմեանս. և նշանն քրիստոնէի է, սիրել զմիմեանս. և պատուիրան նր է, սիրել զմիմեանս ։ Ըստ ասացուածոյ նորա, նաև սիրելք են թշնամիք մեր, և ևս բարի առնե‿

լիք

լէք այնց, որք ատեն զմեզ, և նաև աղօթել վասն այնոցիկ, որք հալածեն, և նախատեն զմեզ, զի լինիցիմք որդիք հօր մերոյ, որ յերկինս է, և որ զարեգակն իւր ծագէ 'ի վերայ բարեաց, և չարաց. և որ անձրևէ 'ի վերայ արդարոց, և մեղաւորաց : Ըստ վարդապետութե̃ քո այնպէս կեալ պարտիմք, զի լինիցիմք կատարեալք, որպէս և հայրն մեր երկնաւոր է կատարեալ : Ըստ վարդապետութե̃ նորա, այնպէս սիրել պարտիմք. մեզ չարիս առնողս, զի ներիցեմք նոցա : Եւ պատճառն է, քանզի, եթէ թողուցումք մարդկանց զմեղս նոցա, և հայրն մեր երկնաւոր թողցէ մեզ զյանցանս մեր. իսկ եթէ ոչ թողուցումք մարդկանց, և ոչ հայրն մեր թողցէ մեզ զմեղս մեր : Եթէ լեալք իցեմք վշտացուցանօղք, յիշեալք զվշտացուցմունս 'ի խորանի, պարտիմք յառաջագոյն հաշտիլ ընդ եղբօր, զեր ինչ ընդդէմ մեր ունիցողի, յետոյ մատուցանել զպատարագ մեր :

7. Քո̃ գերազանցագունեղ վարդապետ ուրացման անձին իւրոյ: Քանզի սրբոյն Պետրոսի զնա մեկուսացուցանողի, և սաստողի : Քաւ լիցի տէր իմ, զքեզ գնացօղդ յԵրուսաղէմ. զբազումս չարչարանս կրել 'ի ծերոց, և 'ի դպրաց, և 'ի յիշխանաց քահանայից, և սպանանիլ. դարձեալ ասաց : Երթ յետս իմ, սատանայ, գայթագղութի իմ ես. զի ոչ խորհիս դու զա̃յն, այլ զմարդկան : Ուստի ասաց աշակերտաց իւրոց : Եթէ ոք կամի զկնի իմ գալ, ուրասցի զանձն իւր. և առցէ զխաչ իւր. և եկեսցէ զկնի իմ : Զի որ կամիցի զանձն իւր կեցուցանել, կորուսցէ զնա. և որ կորուսցէ զանձն իւր վասն իմ, գտցէ զնա : Զինչ օգտիցի մարդ, թէ զաշխարհ ա̃մ շահեսցի, և զանձն իւր տուժեսցէ. կամ զինչ տացէ մարդ փրկանս ընդ անձին իւրոյ : Մատթէի. 16. Թիւ. 24. Ուստի ըստ վարդապետութե̃քն, քրիստոնեայք պարտին ուրանալ զիւրեանս ինքեանս, և 'ի վեր քան զա̃մ ինչ սիրել զքո̃, և հետևիլ նմա, վասն այսորիկ ասէ : Որ սիրէ զհայր, կամ զմայր առաւել քան զիս, ոչ է ինձ արժանի. և որ սիրէ զուստր, կամ զդուստր առաւել քան զիս, չէ ինձ արժանի : Եւ որ ոչ առնու զխաչ իւր, և գայ զկնի իմ չէ ինձ արժանի : Որ գտանէ զանձն իւր, կորուսցէ զնա, և որ կորոյս զանձն իւր վասն իմ, գտցէ զնա : Մատ. 10. Թիւ. 37. Կոչէ առ ինքն զհետևօղս ինքեան, ասելով, եկայք առ իս ա̃մ վաստակեալք, և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ : Առէք զլուծ իմ 'ի ձեզ. և ուսարուք յինէն, զի հեզ եմ, և խոնարհ սրտիւ. և գտջիք հանգիստ անձանց ձերոց : Զի լուծ իմ քաղցր է, և բեռն իմ փոքրոքի : Մատթէի : 11 Թիւ. 28. Գերազանցագունեղ վարդապետն, ուսոյց զիրս գերազանցագունեղս :

8. Քո̃ պահանջէ զաւելութի արդարութե̃ : Ուստի ըստ վարդապետութե̃ նորա, ա̃մք, որ անկարգաբար բարկանայ եղբօր իւրում, պարտաւոր լիցի դատաստանի : Եւ ա̃մք, որ ասէ եղբօր իւրում յիմար, պարտաւոր լիցի դատաստանի : Եւ որ ասէ մորոս, պարտաւոր լիցի գեհեն հրոյն : Ուրեմն քո̃ ոչ միայն արգելու զմարդասպանութին. այլ նաև զատելութին, զվրէժխնդրութին, և զզրպարտութի, որք տրամադրեն զմարդն առ մարդասպանութի : Ըստ վարդապետութե̃ մաքրագունեղի վարդապետի մերոյ, ա̃մ, որ տեսանէ զկին, և ցանկայ նմա, արդէն շնացաւ ընդ նմա 'ի սրտի իւրում : Ուստի ակն, որ գայթագղեցուցանէ, է սանձելի, և ձեռն, որ գայթագղեցուցանէ, արգելլի, և ականջն, որ գայթագղեցուցանէ, սանձահարելի, բերանն, որ գայթագղեցուցանէ պահպանելի, և ոտն, որ գայթագղեցուցանէ, արգելլի : Այսուրեմն քո̃ ոչ միայն արգելու զշնութի, և զպոռնկութի .

թիւն. այլ նաև զանմաքուրս ցանկութիւս, և զվաւաշոտս հայեցմունս, զբանս, զաղերս, զհամբոյրս բղջախոհս, զլուրս մարմնաւէրս, զպիղծս շօշափմունս, և զվավաշոտականս կենցաղավարութիւս. քանզի համայնք աստցեալք իրք պղծեն զմարդն, և տրամադրեն առ պիղծս արարողութիւս: Ըստ վարդապետութեան Քի սովորութիւն երդնլոյ է մեղանչական: Ուստի արգելու ոչ միայն զսուտն, և զանիրաւ երդումն. այլ նաև զսովորութիւն երդնլոյ, որ է տրամադրութիւն առ սուտ, և առ անիրաւ երդումն, և է անարգանս Այ. զի եթէ երբեմն երդնանիցի վասն հարկաւորութեան, երդնանիցի համդերձ ճշմարտութբ, և արդարութբ, և իրաւամբ: Քս պահանջէ զուղիղ դիտաւորութիւն 'ի բարեգործութիւնս, զի մի եղանիցին 'ի զուր: Քս ոչ միայն ուսուցանէ զիրս հարկաւորս. այլ նաև առաջադրէ աշակերտաց իւրոց զխրատս կատարելութեան, ողջախոհութեան, կամաւորի չքաւորութեան, և հնազանդութեան:

## ԳԼՈՒԽ. ԽԹ.

### Յաղագս չարչարանաց, մահուան, և յարութեան. Քի:

Ա. Քրիստոս, որ ծնաւ 'ի կուսէ, աւետարանեցաւ 'ի հրեշտակէ, մկրտեցաւ 'ի Յօհաննու 'ի յորդանան, պահեաց, և փորձեցաւ 'ի սատանայէ, որ ժողովեաց զաշակերտս, գործեաց զսքանչելիս. կերտեաց զեկեղեցին, վաստակեցաւ 'ի ճանապարհի. ընթացաւ 'ի վերայ երկրի, քարոզեաց մարդկանց, դարձոյց զմեղաւորս, յարոյց զմեռեալս, և կերակրեաց զքաղցեալս. որ եղև լոյս, ուսուցիչ, վարդապետ, բժիշկ, և հովիւ բարի. որ հրամայեաց զբարեգործութի, ուսոյց զգերափայլս առաքինութիւս, ետ զպատուիրանս, եբաց զխորհուրդս բարձրագունեղս, և քարոզեաց զանկեղծութի. որ եցոյց զաւետարանականս երանութիւս, եցոյց զնեղ ճանապարհն, եղև դուռն, և ետ զօրինակս բարեաց գործոց. որ եղև հեղինակ շնորհի, դուքս հաւատացելոց, նպաստ յուսացողաց, և սիրող սիրողաց. որ ուսոյց զիրս հարկաւորս, արար զզարմանալիս, և ետ հաւատացելոց զգերազանցագունեղս խորհուրդս. որ ուսոյց զիրս երկնայինս, կացոյց զխորհուրդս, և զորս սիրեաց, 'ի վախճան սիրեաց, կացուցանօղն զհաղորդութիւն, և զխորհուրդն սիրոյ. միջնորդ 'ի մէջ Այ, և մարդկանց, վասն փրկութե մերոյ, և առ 'ի հաշտեցուցանել զմեզ ընդ Այ, կամեցաւ կամաւորապէս չարչարիլ, և զդառնագունեղս ցաւս կրել, և 'ի խաչին մեռանիլ:

Բ. Վասն փրկութե մարդկանց եղև նախատինք մարդկանց, և արհամարհանք ժողովրդոց: Տեսանօղք զնա, կատակեցին զնա, խօսեցան շրթամբք, և շարժեցին զգլուխ: Երևեցաւ ոչ ունիլ զտեսիլ, զփառս, և զգեղեցկութիւն: Եղև անարգ, նուաստեալ քան զամ որդիս մարդկան, այր, ըն ցաւօք, և գիտող զտկարութիւն. Իրաւի զմեղս մեր եբարց, և զցաւս մեր կրեաց, համարեցաւ իբրև զուրկացեալ, և պատժեցեալ, և նուաստացեալ յԱյ: Վիրաւորեցաւ վս մեղաց մերոց, պատժեցաւ վասն մերոց անօրէնութեց, և վիրօքն նորա բժշկեցաք: ընծայեցաւ, քանզի կամեցաւ, և ոչ եբաց զբերան իւր, իբրև ոչխար 'ի սպանդ վարեցաւ, և իբրև որոջ առաջի կտրչի անմռունչ եկաց: Բարձաւ յերկրէ կենդանեաց, վասն անօրէնութեց ժողովրդեան 'ի մահ վարեցաւ: Ըստ բանից դանիելի մարգարէի,

դարէի , յետ վաճառուն և երկու եօթնեքորդաց սպանաւ քս՟ : Վասն ամենեցուն մեռանեցաւ քս՟, զի ընդ նմա շնորհիցէին մեզ ամ՟ք բարիք : Չարչարեցաւ , ոչ փշրեցաւ , մատնեցաւ դատաւորի , անիրաւաբար դատողի զնա , զմեղս մեր եբարձ 'ի մարմնոջ իւրում 'ի վերայ փայտի , զի մեռեալքս մեղօք , կեայցեմք արդարութե , որք վիրօք նո՟ր առողջացեալք եմք : Չարչարեցաւ մարմնով , զի խոկմամբ չարչարանաց նորա զինաւորիցեաք ընդդէմ մեղաց , և ընդդէմ մեղանչականաց հեշտութեց , և ցանկութեց : Չարչարեցաւ , զի մեզ փորձեցելոցս օգնիցէ , և չարչարանօք նորա բժշկիցին վէրք մեր : Չարչարեցաւ արտաքոյ դրան , զի արեամբ իւրով սրբացուցանիցէր զժողովուրդն : Խոկա զՅս՟ քս՟ չարչարեցեալն , և խաչեցեալն , զի չարչարանօք նորա բժշկեսցին վէրք քո :

3. Ով քրիստոնեայ , սիրող_ զքս՟ , վասն մեր չարչարեցեալն , հայեաց 'ի վէրս խաչեցելոյն , 'ի յարիւնն մեռանողի , 'ի գինն փրկողի , և 'ի սպիս յաւնողի : Հայեաց 'ի հակեցեալ գլուխն առ 'ի համբուրել , 'ի բացեալ սիրտն առ 'ի սիրել , 'ի տարածեալս բազուկս առ 'ի փարել , և 'ի բոլոր մարմինն բացադրեալն առ 'ի փրկել : Հայեաց 'ի յասացեալս , և խոկա . մտածեա, և կաղեա 'ի կշռոջ սրտի քո , և սրա , զի բոլոր նշանաւորիցի 'ի սրտի քում , որ բոլոր վասն մեր բևեռեցաւ 'ի խաչին : Խոկա զչարչարանս որդւոյն ա՟յ 'ներմարմնացելոյ . և վասն փրկութե մերոյ 'ի խաչի բևեռեցելոյ , որ գնեաց զմեզ վաճառեցեալ , պատուեաց անարգեցեալ , և կեցոյց մեռեալ , Խոկա զչարչարանս , զվէրս , և զմահն նո՟ր, որ զմեզ գնեաց արեամբ իւրով, վիրօք , և չարչարանօք իւրովք առողջացոյց , և մահուամբ իւրով կեցոյց : 'Ի չարչարանի քի՟ հեղաւ արիւնն բժշկի , և եղև սպեղանի ընդհանրոյ հիւանդի : Խոկա մտադրաբար , որք եղեալք են 'ի չարչարանի քի՟ : Որդին ա՟յ ածի առ խաչ : Տարածի իբրև զարմաւենի , որ է ճշմարիտ արմաւենի յաղթութե : Փշօք պսակի , որ եկն խորտակել զփուշս մեղաւորաց . կապի , որ արձակէ զկապեալս . կախի 'ի փայտէ , որ ուղղէ զկորացեալս . ըմպէ զքացախ , որ է աղբիւր կենի . հարկանի ձաղանօք , վիրաւորի հեղինակն փրկութե : Մեռանի , որ է կեան : Մահն եաղան առժամանակ ինչ զկեանն , զի մշտնջենաւորապէս մահն սպանանիցէր 'ի կենէ : Խոկացող զչարչարանս փրկչի , վս՟ փրկութե քո 'ի վերայ խաչի մեռանողի , արա քեզ զխաչ սանձելոյ զցանկութիս մարմնոյ , զի լինիցիս համախաչեցեալ ընդ Քի՟ փրկչին քո :

4. Ջերմեռանդաբար խոկալով զչարչարանս քի՟ , յիշեա զբանս ս՟բյն Օգոստինոսի : ( Հեղինակն մարդոյ եղև մարդ , զի դիեցէր զստինս , կառավարողն աստեղաց , զի քաղցիցիւր հացն , զի ծարաւիցիւր աղբիւրն , ննջիցէր լոյսն , 'ի ճանապարհէ վաստակիցիւր ճանապարհն , սուտ վկայիւք դատիցիւր ճշմարտութիւն , դատաւորն կենդանեաց , և մեռելոց 'ի մահկանացուոյ դատաւորէ դատիցիւր , յանիրաւաց արդարութիւն դատապարտիցիւր , խարազանօք ձաղիցիւր վարդապետն , փշօք պսակիցիւր պարտէզն, 'ի փայտէ կախիցիւր հիմն , տկարանայցէր զօրութի , վիրաւորիցիւր փրկութիւն , մեռանիցիւր կեանն : ) 'Ի բանի զծննդենէ տն : Ով քրիստոնեայ կարօտացող առողջութե , հայեաց 'ի խաչեցեալն քս՟ , զի առողջանայցես 'ի խայթից մեղաց : Քանզի որպէս որք հայէին 'ի պղղնձեայ օձն 'ի յանապատի . ոչ մեռանէին 'ի խայթմանց օձից , այսպէս , որք հաւատով նային 'ի մահն քի՟ , առողջանան 'ի խայթից մեղաց : Նկատեա զբարերարութիւն քեզ արարեցեալն չարչարանօք քի՟ : քանզի վասն այսորիկ քս՟ ենթարկեաց զիւր ինքն դատապարտութե մահուան , զի զքեզ ազատիցէր 'ի լծոյ դատապարտութե : Նա ընկա_

լաւ

կալաւ զծառայութի մահուան, զի քեզ շնորհիցէր զազատութի յաւիտենականի կենի։ Խոկա զայդ, զոր հեղինակն իրաւասիրութե արար կախեցեալ 'ի խաչին։ քանզի կերտեաց զկատակարանն, իւրաքանչիւրոյ տրամաբաշխելով զյարմարս գործս, այսինքն, Առաքելոց զհալածան, հրէից զմարմինն, հօր զհոգին, կուսի զվիճաւէրն, աւազակի զարքայութին, մեղաւորի զդժոխն, քրիստոնէից ապաշխարողաց զխաչն։ Արա. զի զքեզ ազատիցէ, որ ոչ եկն, զի զիւր ինքն ազատիցէր, որ ոչ էր ընդ ծառայութե, այլ զի զմեզ ազատիցէր, 'ի ծառայութէ։

5. Քս վս փրկութե մերոյ չարչարեցեալն, կամեցաւ թքանիլ, զի լուայցէր զմեզ կամեցաւ քօղել, զի բառնայցէր 'ի աչաց մերոց զքօղն մեղաց, և տգիտութե. կամեցաւ հարկանիլ 'ի գլուխ, զի գլուխն մեր, այսինքն զԱդամ առողջացուցանիցէր, կամեցաւ ապտակիլ, և բանիւք կատակիլ, զի մեք նմա շրթամբք, և ձեռօք այսինքն, բանիւք, և գործովք զփառս տայցեմք. նկատեա զազգեղութի մեղաւորի, որ 'ի չարչարանաց քի ոչ շարժի։ քանզի ամ տեղծուած համացաւակցի քի մեռանողի, արեգակն խաւարի, երկիրն շարժի, վէմք պատառին, քօղն տաճարի հերձի, և գերեզմանք բանին. միայն ողորմելի մարդն ոչ ցաւակցի, վս որոյ միայնոյ չարչարի քս։ Արդարեւ քս նաև թարց չարչարանաց, և թարց դառնագունեղի մահուան կարիցէր օգնել մեզ. բայց առաւել կամեցաւ օգնել մարդկանց մեռանելով, զի զմեծութի սիրոյ իւրոյ, որով կամէր փրկել զմարդիկ, ցուցանիցէր մեզ։ Ուստի ամ վասն մեր մարդեղեալ, այնքան 'ի մարդկանց արժանապէս պատուելի է, որքան վասն մարդկանց զանարգելիս իւր կրեաց։ Մտադրաբար խոկա զվէրս քի։ քանզի մտադիր խոկումն նոցա է արարչագործ ապեկանի առ 'ի բժշկել զվէրս խղճի մտաց, և առ 'ի մաքրել զչփոթութի մտաց։ Եւ մտադրաբար 'ի չարչարանի տեսան մանաւանդ զերիս իրս խոկա, այսինքն, զգործն, զկերպն, և զպատճառն։ Քանզի 'ի գործոջ արդարև համբերութին, 'ի կերպի խոնարհութին, և 'ի պատճառի սէրն դրոշմատի։ Արդարև համբերութին է գերազանցողունեղ, խոնարհութին զարմանալի, իսկ սէրն, և սիրումն անդին։

6. Մտադրաբար խոկա զիրս 'ի չարչարանի քի արարեցեալս։ Գլուխն հրեշտակայնոց ոդեաց սարսափելին խստութը փշոց խայթի. գեղեցիկ երեսն 'ի վեր քան զորդւոց մարդկանց, թքանօք հրէից աղտեղանայ. ակունքն լուսափայլք քան զարեգակն խաւարին 'ի մահուանն. ականջք, որք լսեն զհրեշտակայինս երգս, լսեն զնախատինս մեղաւորաց։ բերանն, որ ուսուցանէ հրեշտակաց, զլեղի, և զքացախ ըմպէ. ոտքն, որոց պատուանդանն երկրպագանի, բևեռին 'ի խաչի. ձեռքն, որք կերտեցին զերկինս, տարածեցեալք, և բևեռեցեալք են 'ի խաչին. մարմինն ձաղի, կողն տիգաւ ծակի. ոչ մնաց 'ի նմա, եթէ ոչ լեզուն, զի վասն մեղաւորաց աղօթիցէր, և զմայրն աշակերտի յանձնիցէր։ Զարմանալի է սէրն քի, նաև զթշնամիս սիրողի։ քանզի ձաղեցեալ, փշօք պսակեցեալ, բևեռօք ծակեցեալ, խաչափայտի բևեռեցեալ, նախատանօք լցեալ, սակայն մնացեալ զամս ցաւս, աղօթեաց վասն թշնամեաց ասելով, թող նոցա. Պնդացեալք, խստացեալք, և կարծրացեալք որդիք ադամայ, զորս ոչ մեղմացուցանէ այնքան բոյն, այնքան բարեգթութին, այնքան մեծագունեղ բորբոքումն սիրոյ, և այնքան սաստիկ սիրողն։ Սիրեաց զմեզ ամ քաղցրաբար, իմաստնաբար, և հզօրաբար. քաղցրաբար, զգենլով զմարմին. իմաստնաբար, հեռացուցանելով զմեղն. և հզօրաբար, մեռանելով։ 'Ի վեր քան զամ ինչ եա զիւր ինքն մեզ սիրելի, ըմպելով զբաժակն գործ փրկութե մերոյ։

Այս

Այս բոլորովիմբ զսէրն մեր խորա-ցուցանէ։ Այս զջերմեռանդութիւն մեր քաղցրագոյն առաջարկէ, ար-դարագոյն պահանջէ, պնդագոյն առնէ, հզօրագոյն շարժէ․ և ըն-դոստուցանէ, և սաստկագոյն բոր-բոքէ։

7. Արդ ուրեմն փրկիչն աշխա-րհի, 'ի վերնատան լուեալ զոտս ա-ռաքելոց; կացոյց զխորհուրդն հա-ղորդութեան, և զքահանայութիւն նորոյ կտակարանի; և զքարոզումն իւրա յանձնեաց առաքելոց։ 'Ի պարտի-զին սկսաւ տրտմիլ, և հոգալ։ Ա-ղօթեաց առ հայր; և եհեղ զքրտու-նս արեան։ Ըմբռնեցեալ 'ի թշնա-մեաց, կապեցաւ։ Մատնեաց զնա աշակերտն առաքելոյն։ Այլքն թո-ղեալ զնա փախեան։ Եկաց Յս առաջի անօրինին քահանայապետին, որ խնդրէր զսուտ վկայս։ Պետրոս ուրացաւ զփրկիչն, և ելեալ արտաքս լայ դառնապէս զուրացումն իւր։ Քս տարաւ, անիրաւաբար 'ի յամ-բարշտաց դատաւորին, և ընկա-լեալ զթուքն 'ի յանօրինաց զապտա-կաբար կատակի։ Յառաւօտուն փր-կիչն առածի, և մատնի դատաւորի հեթանոսի։ Յուդա յուսահատեալ կախի․ և ողորմելաբար կործանի։ Արքայն ծայրագունեղի մեծավայել-չութեան, յանօրինէ հերովդէ անար-գի; կատակի, և առ Պիղատոս վե-րադարձի։ Տրն մեր Յս քս հեղինակն արդարութեան, գանագոյն համարի քան զբարաբբայն նշանաւոր աւա-զակն ըմբռնեցեալն։ Անմեղագու-նեղն Յս, խստաբարոյագունեղա-պէս, և անողորմագունեղապէս ձաղեցեալ; ծիրանեաւ քղամիդաւ շրջապատեալ, և փշեղէնով պսակաւ պսակեցեալ, 'ի զինուորաց ժողո-վրդականի, 'ի յերեսս նորա թքա-նողաց, և զգլուխ նորա եղեգա-հարկանողաց, կատակի։ 'Ի հեթա-նոսէ դատաւորէ անիրաւաբար դա-տապարտեցեալ, 'ի մէջ երկուց ա-ւազակաց անարգաբար խաչի։ Կախ-եցեալ 'ի խաչէ, խօսի ընդ հօր, աղօթէ վասն թշնամեաց, յանձնէ զմայրն Յօհաննու, և զՅօհաննէս մօրն, զզջացելոց, և փոխմանեցելոց աւազակին շնորհէ զարքայութիւն, աղաղակէ առ հայր, ծարաւիմ, ասէ, ամ ինչ կատարեալ է, և խոնարհե-ցուցեալ զգլուխն աւանդեաց զհո-գին։ Որդին այ վասն մեր մար-մնացեալ, իբրու չարչարեցաւ, և դառնագունեղն մահուամբ մե-ռաւ։

8. Ամենասուրբ հոգին քի բա-ժանեցաւ 'ի մարմնոյ․ իսկ աստու-ծութիւն մնաց միաւորեալ և ընդ հո-գւոյն, և ընդ մարմնոյն։ Ամենա-սուրբ մարմին նորա, միաւորեալ աստ-ուածութեան, 'ի բարեպաշտից տրանց եդաւ 'ի գերեզմանի։ Ամենասուրբ հոգին միաւորեալ աստուածութեան էջ 'ի դժոխս․ տապալեցելոց, և յաղթե-ցելոց դիւաց զերծոյց զարդարս, և երանականացն աւետեամբ ուրա-խացոյց զնոսա։ Արդ ուրեմն տէրն մեր Յս քս, ճշմարիտն աստուած, և ճշմարիտն մարդ․ միջնորդն 'ի մէջ աստուածոյ, և մարդկանց, չարչարեցաւ 'ի խաչի, հաշտեցոյց զմեզ ընդ այ․ զփրկեցեալս պա-տուականագունեղիւ արեամբ իւ-րով․ յաղթեցելոց թշնամեաց երեք զօրութեանն յաղթութեամբ 'ի խաչի․ մեռաւ, թաղեցաւ, և էջ 'ի դժ-ոխս։ Զբազումս ժամս մնաց 'ի դժոխս, զի մահն նորա ստուգա-նայցէր առաջի կենդանեաց։ Յեր-րորդում աւուր ըստ գրոց յարեաւ 'ի մեռելոց փառաւորելով, և ան-մահացուցանելով զմարմին իւր։ Եղև շարժումն մեծ քանզի հրեշ-տակ տեառն էջ 'ի յերկնից, և մեր-ձեցեալ թաւալեցոյց զվէմն, և նստաւ 'ի վերայ նորա։ Հրեշտակն, որոյ երեսն էր իբրև զկայծակն, և զգեստն իբրև զձիւն, ասաց կանանց․ մի երկնչիք դուք․ քանզի գիտեմ, թէ զՅս, որ խաչեցեալ է, խնդրէք․ ոչ է աստ․ քանզի յարեաւ, որպէս ասաց․ եկայք, և տեսէք զտեղին, ուր եդեալ էր Տրն։ Եւ վաղվաղակի գնացէք, և ասացէք աշակերտաց նորա, զի յա-րեաւ․ և ահա յառաջեսցէ զձեզ 'ի գալիլեա, անդ զնա տեսջիք, ահա

նախասացի ձեզ ։ Եւ Յ͞ս հանդիպեցաւ նոցա, և ասաց, ողջոյն ձեզ ։ Մի երկնչիք. գնացէք, և ծանուցէք եղբարց իմոց, զի գնասցեն 'ի գալիլեա, անդ զիս տեսցեն ։ Ուրեմն ք͞ո, որ չարչարեալ, մեռեալ, և թաղեցեալ է, յերրորդում աւուր յարեաւ ։

## ԳԼՈՒԽ Ծ.

### Յաղագս յարութե͞, և համբարձման Ք͞ի ։

1. Ք͞ն փրկիչն աշխարհի, որ վասն մերոյ փրկութե͞ կամաւորապէս չարչարիլ կամեցաւ, և կրել զկսկծագունեղս ցաւս, և դառնադունեղիւ, և խստաքարոյադունեղիւ մահուամբ մեռանիլ, յարուցեալ կալաւ զփառաւոր մարմին ։ Կալաւ զփառս մարմնոյ ըստ վերջաւորութե͞ փառաց հոգւոյ ։ Ուստի որպէս փառքն հոգւոյն ք͞ի էին ամենամեծք. այսպէս և փառքն մարմնոյն նորա եղեն ամենամեծք ։ Կալաւ ուրեմն զամենամեծ պայծառութի͞ մարմնոյ, զանկրելութի͞, զնրբութի͞, և զարընթացութիւն ։ Փրկիչն աշխարհի յարեալ 'ի մեռելոց ամենասրբոյ, և ամեներանեցելոյ մարիամայ կուսի մօր իւրոյ, յարութե͞ նորա ամենամեծիւ եռացմամբ սրտի այսստղի, երևեցաւ, և սաստկադունեղիւ ցաւով պղծանեցեալ սիրտ նորա, ամենամեծիւ ուրախութե͞ ելից ։ Ապաուրեմն տեսեալ զորդին իւր կենդանի կենիւ անմահութե͞, ուրախացաւ, զուարճացաւ, և խնդաց մեծագնծութե͞ ։ Յարուցեալ փրկիչն երևեցաւ, և ասաց մարիամայ մագդաղենացւոյ, կացողի արտաքոյ գերեզմանի, և արտասուողի, երթ աս եղբարս իմ, և ասա նոցա, այսինքն, աւետեա նոցա զյարութի͞ն իմ ։ Յարուցեալ փրկիչն աշխարհի, խնդութի͞ն, և ուրախութի͞ն ընհանրոյ, յոյսն ճշմարտից ապաշխարողաց, և ոչ յուսահատողաց, պետրոսի առաքելոցն իշխանի, զուքացուցին իւր դառնապէս արտասուողի, երևեցաւ, և զտրտմեալ սիրտ նորա ուրախացոյց ։

2. Յարուցեալն ք͞ո ուրախութի͞ն աշխարհի, գնացողաց 'ի նոյնում աւուր 'ի գիւղն, որ կոչի էմմաւուս, և խօսակցողաց ընդ միմեանս, մերձեցաւ, և 'ի պատմելն նոցա, թէ Յ͞ս նազովրեցի եղև այր մարգարէ. կարող 'ի գործոջ, և 'ի բանի առաջի ա͞յ, և ա͞մ ժողովրդեան. զսա քահանայապետք, և իշխանք մեր մատնեցին 'ի մահ, և խաչեցին. մեք ակնունէաք, թէ նա իցէր փրկելոց զի͞էլ. այս երրորդ օր է, յորմէ հետէ այն գործեցաւ. ոմանք կանայք 'ի մէնջ, որք կանխեալք ընդ առաւօտս չոգան 'ի գերեզմանն, զարհուրեցուցին զմեզ ասելով, թէ և զտեսիլ հրեշտակաց տեսեալք են, աւետելով մեզ թէ նա կենդանի է. ոմանք 'ի մէնջ գնացին 'ի գերեզմանն, և գտին այնպէս որպէս և կանայքն ասացին, բայց զնա ոչ գտին. լռեայանդիմանեաց, և ուսոյց, պիտոյացեալ գոլ զք͞ո չարչարիլ, և այդպէս մտանել 'ի փառս իւր, և եբաց նոցա զգիրս, որք գրեալք էին զքէ 'ի ս͞ր գիրս ։ Եւ ընդ ն͞ո, 'ի բռնադատելն զնա, զի մնասցէր ընդ նոսա, եմուտ 'ի տունն ։ Եւ 'ի բազմիլն նորա ընդ նոսա, էառ զհացն, օրհնեաց, և եբեկ, և ետ նոցա ։ Եւ ն͞ց բացան աչք, և ծանեան զնա, և նա եղև 'ի ն͞ցանէ աներևոյթ ։ Եւ յարուցեալք նոյն ժամայն դարձան յե͞մ ։ Եւ գտին ժողովեալ զմետասանսն, և զորս ընդ նոսայն էին ։ Եւ ասեն արդարև յարեաւ տ͞ր, և երևեցաւ սիմոնի, և պատմէին, որ ինչ եղեն 'ի ճանապարհի, և թէ որպէս ծանեան զնա 'ի բեկանել հացին ։

3. Եւ 'ի տարաժամիլն ա-

ւուրն

ւրն այնմիկ միաշաբաթող, և դրօք փակեցելովք, ուր ժողովեալք էին առաքեալք վասն երկիւղի հրէից. եկն Յս, և եկաց 'ի մէջ նց, և ասաց նոցա խաղաղութի ընդ ձեզ: Եւ մինչ զայս ասէր. եցոյց նոցա զձեռս և զկողս: Խնդացին ուրեմն աշակերտքն տեսեալ զՏրն: Ապաուրեմն դարձեալ ասաց նոցա. խաղաղութի ընդ ձեզ: Որպէս առաքեաց զիս հայր, և ես առաքեմ զձեզ. առէք զհոգին սբ: Եթէ ումեք թողուցուք զմեղս, թողեալ լիցի նց. և եթէ զուրուք ունիցիք, կալեալ լիցի: Յետ ութ աւուր, դարձեալ էին 'ի ներքս աշակերտքն, և Թովմաս ընդ նս: Եկն Յս դրօքն փակելովք, և եկաց 'ի մէջ նց, և ասաց. խաղաղութի ընդ ձեզ: Ապա ասաց ցԹովմաս. բեր զմատունս քո աստ, և տես զձեռս իմ, և բեր զձեռն քո, և մուծ 'ի կողս իմ, և մի լինիր անհաւատ, այլ հաւատացեալ: Թովմաս, որ ասացեալ էր. եթէ ոչ տեսից 'ի ձեռս նորա զնշան բևեռացն, և արկից զմատունս իմ 'ի տեղիս բևեռացն. և մուծից զձեռս իմ 'ի կողն նորա, ոչ հաւատամ. հաւատաց, և ասաց ցնա, Տր իմ, և ած իմ: Եւ Յս ասէ, զերանելիս դոլ զայնոսիկ, որք հաւատան ոչ տեսեալք: Յետ այսորիկ դարձեալ յայտնեաց զանձն իւր Յս աշակերտաց իւրոց առ ծովեզերբն տիբերեայ, և ասաց նց յետ սքանչելագործութե ձկանց. եկայք ճաշեցէք, և առեալ զհաց ետ նց, նոյնպէս և զձուկն: Եւ իբրև ճաշակեցին, ասէ ցսիմօն, առաւել քան զայլս զնա սիրողի. արածեա զգառինս իմ. արածեա զոչխարս իմ, և կացոյց զնա հովիւ գառանց, և ոչխարաց իւրոց. այսինքն, 'ի նա հաւատացելոց, և առաքելոց, և համահետևապէս համայնից քրիստոնէից, և աշխարհականաց, և եկեղեցականաց: Ուստի եղև փոխանորդ Քի, և տեղակալ նորա 'ի վր երկրի:

4. Մետասան առաքեալք գնացին 'ի գալիլեայ, 'ի լեառն, ուր կացուցեալ էր նց Յս, և տեսեալք զնա, երկիրպագին նմա, իսկ ոմանք երկմտեցան: Եւ Յս մերձեցեալ նոցա. խօսեցաւ ընդ նս, և ասաց. տուաւ ինձ ամ իշխանութի 'ի յերկինս, և 'ի յերկրի: Գնացէք ուրեմն ուսուցէք ամից հեթանոսաց, և մկրտեցէք զնոսա, յԱնուն հօր, և որդւոյ, և հոգւոյն սբոյ. ուսուցէք նց զամ ինչ, զոր հրամայեցի ձեզ: Ահա ես ընդ ձեզ եմ զամ աւուրս մինչև 'ի կատարած աշխարհի: Քս ունի զիշխանութի 'ի վր ամի: Քանզի ամ ինչ ենթարկեցեալ է նմա: Քարոզելի է Յս Քս. վն զի փրկութին է Յսի Քի: Ուշադրաբար հոգալի է մկրտութին. քանզի է հարկաւոր խորհուրդ: Ուսուցանելի են պատուիրանքն. վասնզի պահպանութին պատուիրանաց հարկաւոր է առ 'ի ստանալ զյաւիտենական կեանն: Քս միշտ է ընդ մեզ: Է ընդ մեզ փոխանորդիւ: Է ընդ մեզ լուսաւորմամբ իւրով, որով լուսաւորէ զմիտս հարց 'ի ժողովս, և որով 'ի սրտի մերում խօսի ընդ մեզ: Է ընդ մեզ ներքնայնովք ներշնչեցմամբք, և շարժեցմամբք: Է ընդ մեզ օգնութբ, և պաշտպանութբ իւրով: Է ընդ մեզ առկայութբ իւրով, որով յանդիման կայ սրբոյ եկեղեցւոյ իւրոյ: Է ընդ մեզ աւետարանական վարդապետութբ իւրով, զոր ուսուցանէ մեզ 'ի ձեռն եկեղեցւոյ, և վարդապետաց եկեղեցւոյ: Է ընդ մեզ խորհրդովք իւրովք, որովք զմեզ արդարացուցանէ, և սրբացուցանէ, և աճեցուցանէ զշնորհս մեր: Է ընդ մեզ 'ի խորհրդոջ հաղորդութե, յորում իրականապէս գտանի, և որով արժանապէս հաղորդեցեալս կերակրէ, սնուցանէ, և կեցուցանէ:

5. Յարեաւ Քս, ցնծասցէ ընդհանուր աշխարհ. քանզի յարութին Քի աւետէ զուրախութի ընդհանրոյ աշխարհի: Որպէս ամ ստեղծուած ողբալեաւ արտասուաց ցաւակցեցաւ 'ի մահուանն Քի ստեղ_

ծողի խաչոյ, այսպէս 'ի յաղթանակի յարութեն նորա խնդալ, և ուրախանալ պարտի։ 'Ի յարութենէ նորա է յոյսն յարութեն մերոյ։ Յարեաւ Քն, ուրեմն լիցի յարութիւն մեր։ 'Ի ներմարմնութեն եղև վերաընկալումն մարդկութեն առ Ածային ներթափանցեալն որդւոյն. 'ի չարչարանսն խոնարհումն քի մինչև առ փայտ խաչին. 'ի յարութեան վերացումն քնի 'ի կրկնութէ առ անմահութի. 'ի համբարձմանն բարձրացումն որդւոյ մարդոյ առ հաւասարութի հօր։ Ուստի որքան եղև իջումն 'ի ծոցէ հօր առ փայտ խաչի, այնքան եղև վերացումն 'ի փայտէ խաչի մինչև առ յաջակողմն հօր։ Փրկիչն մեր ընկալաւ զմահն, զի մի երկիցեաք 'ի մահուանէ, եցոյց զյարութիւն, զի մեք յուսասցեմք կարել յարուցանել։ Որք վստահացեալ էաք 'ի չարչարանս քի. խնդասցէաք 'ի յարութեն նորա. քանզի այսպէս կարեմք կոչել բարեպաշտք, եթէ տրամաբանութեն նորա չարչարակցիլ արժանաւորիմք։ Որքանմանք մկրտեցաւք եմք 'ի Քս Յս, 'ի մահուան նորա եմք մկրտեցաւք։ Քանզի համաթաղեցաւք եմք ընդ նմա 'ի ձեռն մկրտութեն 'ի մահուան. զի որպէս Քս յարեաւ 'ի մեռելոց փառօք հօր, այսպէս և մեք 'ի նորոգութեն կենաց շրջեսցուք. քանզի եթէ լեալ եմք համատնկեցաւք նմանութեն մահուան նորա. եղիցուք նմանապէս և յարութեն։ Հին մարդն մեր 'ի միասին խաչեցաւ է, զի եղծիցի մարմին մեղաց, և այլ ևս ոչ ծառայեսցուք մեղաց։

6. Քս եցոյց զիւր ինքն կենդանի յետ չարչարանաց խաչոյ 'ի բազումս նշանս, ընդ աւուրս քառասուն երևելով նց, և խօսելով զարքայութենէ այ։ Եւ կերակրեալ ընդ նոսա, հրամայեաց նոցա, զի մի չուեսցեն 'ի յերուսաղեմէ, այլ սպասեսցեն խոստման հօր. ասելով նոցա, նստարուք 'ի քաղաքի, մինչև զգենուցուք զզօրութի 'ի բարձանց։ Քանզի դուք մկրտեսջիք 'ի հոգին սբ, ոչ յետ բազմաց այսոցիկ աւուրց։ Առաքելոցն ընկալջիք զզօրութի վերաեկողի հոգւոյն սբոյ 'ի ձեզ, և եղիջիք ինձ վկայք 'ի յերուսաղէմ, և յամ հրէաստանի, և 'ի սամարիայ, և մինչև 'ի ծագս երկրի։ Եւ էհան զնոսա յարտաքս մինչև 'ի բեթանիայ, և ամբարձեալ զձեռս իւր օրհնեաց զնոսա։ Եւ մինչ դեռ հայէին նոքա, վերացաւ. և ամպն կալաւ զնա յաչաց նց։ Եւ մինչ դեռ պշուցեալ էին ընդ երկինս երթալոյ նորա, ահաւասիկ արք երկու երևեցան նոցա 'ի հանդերձս սպիտակս, ասելով։ Արք գալիլեացիք. զի կայք հայեցեալք ընդ յերկինս. այս Յս, որ վերացաւ 'ի ձէնջ 'ի յերկինս, սոյնպէս եկեսցէ, զորօրինակ տեսէք զդա երթալ յերկինս։ Արդարութեամբ Քս փրկիչն մեր, որ զօրութբ իւրով յարեաւ 'ի մեռելոց, և յարուցեալ երևեցաւ Առաքելոցն. ետ առաքելոցն իշխանութի արձակելոյ, և կապելոյ զմեղս. կացոյց զպետրոս գլուխ, և իշխան առաքելոց. հաստատեաց զառաքեալս 'ի հաւատոջ, և եկեր ընդ նոսա. պատուիրեաց գնալ յընդհանուր աշխարհ, մկրտել զհեթանոսս, և ուսուցանել նց. և պատուիրեաց սպասել հոգւոյն սբոյ. համբարձաւ յերկինս, և նստաւ ընդ աջմէ այ, համահաւասար նմա, և դարձեալ գալոց է դատել զկենդանիս և զմեռեալս։

7. Զօրութի կարողութե այ է մեծ, զոր գործեաց 'ի Քս, յարուցանելով զնա 'ի մեռելոց, և կացուցանելով 'ի յաջակողմեան իւրում 'ի յերկինս, 'ի վեր քան զամ իշխանութի, և պետութի, և զօրութի, և տէրութի, և 'ի վեր քան զամ անուն, որ անուանի. ոչ միայն յայսմիկ աշխարհի, այլ նաև 'ի հանդերձելումն։ Եւ զամ ինչ հնազանդեցոյց ենթ ոտից նորա, և զնա ետ գլուխ 'ի վր ամն եկեղեցւոյ։ Քս է ընդ աջմէ այ, յաղթօղն զմահն, զի լինիցէաք ժառանգք յաւիտենական կենաց, գնացեալ 'ի յերկինս, ենթարկեաց ինքեան զհրեշտակս,

տակս, և զպետութի, և զզօրութի։ Քս յարուցեալ 'ի մեռելոց, այսուհետև ոչ մեռանի, և մահ նմա ոչ ևս տիրէ։ Զի եթէ մեռանիցիմք ընդ Քի, նաև 'ի միասին կեցցուք ընդ նմա։ Քս ամբարձեալ յերկինս գերեաց զգերութի, եւ զպարգևս մարդկանց։ Ունիմք զքահանայապետ մեծ անցեալ ընդ երկինս, զՅս զորդին այ. ապա կալցուք զխոստովանութի։ Քանզի ոչ եթէ ունիմք քահանայապետ, որ չիցէ կարող չարչարակից լինել տկարութե մերոյ, այլ փորձ է ամի ըստ նմանութե առանց մեղաց։ Մատիցուք այսու հետև համարձակութբ առ աթոռ շնորհաց նորա. զի ընկալցուք զողորմութի, և գտցուք շնորհս 'ի դէպ ժամանակի օգնականութե։ Եթէ յարեաք ընդ Քի, խնդրեսցուք զվերինն, ուր Քս նստի ընդ աջմէ այ։ Խորհեսցուք, զվերինն, մի զայն. որ յերկրի սատ է։ Քանզի մեռեալք եմք, և կեանքն մեր ծածկեալք են ընդ Քի յայ։ Իսկ յորժամ Քս յայտնեսցի կեանքն մեր. յայնժամ և մեք ընդ նմա յայտնիցուք փառօք։ Սպանանելիք են այսուհետև անդամք մերք երկրաւորք; զի կեցցուք ընդ Քի։

8. 'Ի մէ դիրս դասանի հրեշտակային խօսակցութի այսպէս։ Համբարձէք իշխանք զդրունս ձեր 'ի վեր. համբարձին դրունք յաւիտենից, և մտցէ Թագաւոր փառաց. ո՞վ է սա Թագաւոր փառաց. տէր հզօր զօրութբ իւրով. տր հզօր 'ի պատերազմի։ Համբարձէք իշխանք զդրունս ձեր 'ի վեր. համբարձցին դրունք յաւիտենից, և մտցէ Թագաւոր փառաց։ Ո՞վ է սա Թագաւոր փառաց. տր զօրութեց. սա ինքն է Թագաւոր փառաց։ Սաղ. 23. Թիւ. 7. Գրէ սբն հերոնիմոս։ Զօրութիք պաշտօնեայք յառաջօղք զՔս 'ի համբարձման առ այլ զօրութիս աղաղակեն, զի բանայցեն զճանապարհն եկողի տեառն, և նմա ընդ առաջ ելանիցէին։ Բացէք, ասեն, զերկնային մուտս. եկողի տեառն բացցի յաւիտենականն մուտն. բացցին յաւիտենականք դրունք, և յաւիտենականաց օթևանաց երկրացիկ մուտքն, և մտցէ Թագաւոր փառաց 'ի յերկինս, զի 'ի յաջակողմեան հօր բարեխօսիցէ վասն մեր։ Քանզի ինքեանք հրեշտակայինք զօրութիք նորով խորհրդով զմարմին զդեցելոյ հիացեալք, խնդրեն զարմացմամբ հանդերձ։ Ո՞վ է սա Թագաւոր փառաց։ Որոց պատասխանեն այլք, տր զօրութեց, և այլ. Քանզի թէպէտ բազումք գիտիցեն զնա գոլ մարդ. սակայն ոչ գիտէին զմարդկային բնութի'ն բարձրացուցանելի 'ի վեր քան զինքեանս։ 'Ի վերայ այնորիկ, բարձցին դրունք։ Արդարութեամ եւ Յս 'ի վեր քան զամե հրեշտակայինս զօրութիս, և համայնք հրեշտակք երկրպագին նմա, ենթարկեցեալք են նմա, հուչակելով զտօն փառաւորի համբարձման նր։ Քանզի եւ ած 'ի խնդութե. և տրն 'ի ձայնի փողոյ։ Մարդկային բնութի'ն այսօր 'ի վեր քան զքերովբէս ծայրագունեղիւ պատուով ընկալեալ է. այսօր դնայ 'ի յերկինս, և Թարց եղեր Թագաւորէ 'ի վեր քան զերկինս։

## ԳԼՈՒԽ. ԾԱ.

### Յաղագս աւետարանականաց երանութեց։

1. Յս Քս ճշմարիտ ածն, և ճշմարիտ մարդն. բերանով իւրով ուսոյց մեզ զաւետարանականս երանութիս, զորս ծառայքն այ, կեցողքն 'ի շնորհի այ, ունեցողք զհոգին սբ, զսէր, և զաղքատութի, և պահօղք զպատուիրանս տեառն ամենաբարձու, յայսմիկ մահկանացուս կենում, մինչ տակաւին են 'ի ճանապարհի, վայելեն։ Այսոքիկ երանութիք են ութն։ Առաջինն է այս։ ( Երանի աղքատաց հոգւով.

ւով. զի նոցա է արքայութիւն երկնից: Մատթ. 5. թիւ. 3. Աղքատք հոգւով, են այնոքիկ, որք խորշին յապօրինաւորաց, և յանիրաւաց իրաց. իսկ որքան առ այնպիսիս բարիս, զորս ամ̃ օրինաւորապէս վայելել կարէ, այնպէս ունին զինքեանս, զի ոչ սիրիցեն զնոսա անկարգաբար, այլ համակերպեալք զկամս իւրեանց ա̃ծայնոյ կամին. եթէ ոչ ունին, շատացեալք են, և օրհնեն զա̃ծային բարեհաճութիւն: Եթէ ունին, ուղղապէս վարին նոքօք առ փառս, և առ պատիւ ա̃յ, և այնպէս ժառանգեն իբր թէ ոչ ունիցէին, թէ իցեն փարթամութիւնք, թէ բարեկամք, թէ պատիւք, թէ արժանաւորութիւնք, թէ բարիք մարմնոյ, այսինքն, ժիրութիւն, առողջութիւն, և գեղեցկութիւն: Եթէ կորուսանիցեն, զշնորհակալութիւն մատուցանեն ա̃յ, և համբերեն, Ուրախք են: մինչ ոչ ունին. քանզի շատացեալք են: Ուրախք են, մինչ ունին. վասնզի ուղղապէս վարին նոքօք, և ոչ տանջին անկարգաւ երկիւղիւ կորուսանելոյ: Եւ մինչ կորուսանեն, ազատք են 'ի յանկարգէ տրտմութենէ, և ունին զուրախութիւն զկատարմանէ ա̃ծայնոյ բարեհաճութեան: Ուստի շատացեալք, և երանեալք են, և ունին զուրախութիւն 'ի յուսոյ. քանզի արքայութիւն երկնից նոցա է, և 'ի յերկինս վայելելոցք են զկատարեալ երանութիւն:

2. Երկրորդ աւետարանական երանութիւն է այս: ( Երանի հեզոց. զի նոքա ժառանգեսցեն զերկիր: ) Մատթէի. 5. թիւ. 5. հեզք իմանին այնոքիկ, որք ոչ նեղեն զայլս անիրաւաբար, իսկ յորժամ այլք անիրաւաբարնեղեն զինքեանս, զանիրաւութիւն ինքեանց առբերեալք, համբերութբ̃ տանին զառբերեցեալս անիրաւութիւս: Ուստի հեզք պահեն զարդարութիւն, և ոչումեք առբերեն զանիրաւ վնաս: Նոքա ոչ տանեն զծուռ դատողութիւն, ոչ անիրաւաբար բարկանան, ոչ զրպարտախօսին, ոչ կռուին. ոչ 'ի կենի, ոչ 'ի պատուոջ, ոչ 'ի յինչս, և 'ի փարթամութիւն վնասեն ընկերի: Նոքա նաև զհաստատակս օրէնս քաղաքի պահեն. և զա̃մ բնական օրէն պահպանեն: Ուստի համայնք զարդարութի սիրողք սիրեն զհեզս, և ոչ կարեն ձձգոհալ ընդդէմ հեզոց: Ուստի հեզք ընդ ա̃մից արդարոց ունին զխաղաղութի, և ոչ կրեն զնեղութի 'ի յարդարոց: Քանզի որպէս հեզք ոչ նեղեն զարդարս, այլ հատուցանեն նոցա, զորս հատուցանել պարտին. այսպէս և արդարք ոչ նեղեն զհեզս, այլ հատուցանեն նոցա, զոր հատուցանել պարտին: Ուստի հեզք 'ի կողմանէ արդարոց վայելեն զխաղաղութի, և ժառանգեն զերկիր: Հեզք նաև 'ի կողմանէ անիրաւաց ժառանգեն զխաղաղութի. քանզի թէպէտ անիրաւք նեղիցեն զնս̃, առբերելով նց̃ զանիրաւութիս, և նոցա վնասելով կամ 'ի վերյարգութեն, կամ 'ի համբաւոջ, կամ 'ի պատուոջ, կամ 'ի փարթամութիս, կամ յումեք այլում նաև ներքնայնում բարւոջ. սակայն հեզք զանիրաւութիս համբերութբ̃ տանելով, և վասն սիրոյն ա̃յ վնասողաց ներելով, և փոխանակ չարեաց զբարիս հատուցանելով, ոչ վրդովին, այլ վայելեն զհանդարտ խաղաղութի: Ուստի այնքան 'ի կողմանէ արդարոց զնս̃ ոչ նեղացուցանողաց, որքան 'ի կողմանէ անիրաւաց նեղացուցանողաց, ժառանգեն զերկիր, և են երանեալք:

3. Երրորդ աւետարանական երանութիւն է այս: ( Երանի սգաւորաց. զի նոքա մխիթարեսցին: ) Մատթ. 5. թիւ. 4. բաց 'ի յամեներանեցելոյ կուսէն Մարիամայ, համայնք մարդիկ համաքարշեցին զսկզբնական մեղն, և կալան զարմատական յօժարութի առ մեղս: Յայնցանէ, որք համաքարշեցին զսկզբնական մեղն, և կալան զարմատական յօժարութի առ մեղս, ոմանք արդարացուցեալք, յարամնացին անմեղք, այսինքն, ոչ մեղանչեցին մահացուրէն. սակայն մեղանչեցին ներելա_

բար

քար, իսկ բաղումք նաև մահացորէն մեղանչեցին · բայց դարձուցեալք առ ած, ապաշխարեցին ։ Իսկ զկրկնութիւն համայնք կարեն, նաև տրն մեր Յս Քս, և ամեներանեցեալ կոյսն Մարիամ, այսինքն, զգալ զցաւս, չարչարիլ, և մեռանիլ ։ Քանզի նաև տրն մեր Յս Քս զգաց զցաւս, չարչարեցաւ, և մեռաւ վասն փրկութեան մերոյ · և ամեներանեցեալ կոյսն Մարիամ զգաց զցաւս, և մեռաւ ։ Ուրեմն քրիստոնեայք, որք զկրկնութիւն իւրս վասն սիրոյն այ համբերութ տանին · և ունին զմեծ ուշադրութիւն ոչ գործելոյ զնորեկս մեղս, և վասն գործեցելոց 'ի ակարութե մինչ ցաւին · և ոչ գործեն զմահացուս մեղս, այլ վասն գործեցելոց զորս խոստովանեցեալք են, յարաժամ ցաւին · և 'ի վերայ մեղաց, որք գործին յայլոց աղտամին, և ցաւին, և ջերմեռանդաբար աղօթելով, և ցաւելով մատուցանեն զաղաչանս առաջի այ վասն դարձման մեղաւորաց · լան յայսմ աշխարհի, և են արտասուօղք ։ Սոցա խոստանի մխիթարութիւն ։ Քանզի այսպիսիք քրիստոնեայք, ցաւելով 'ի վերայ մեղաց, և ապաշխարելով, ունին զմխիթարութիւն ապաշխարութեան, սիրոյ, և բարւոյ խղճի մտաց 'ի ներկայում կենաջ, և մինչ տակաւին են 'ի ճանապարհի, և վայելելոցք են զերանական մխիթարութիւն, որ եղիցի 'ի հայրենւոջ ։

4· Չորրորդ աւետարանական երանութիւն է այս ։ ( Երանի, որք քաղցեալք, և ծարաւիք են վասն արդարութեան · զի նոքա յագեսցին ։ ) Մատթէի · 5· Թիւ· 6 Պիտոյ է պահել զարդարութիւն, ունիլ զաւելի արդարութիւն, և քաղցիլ, և ծարաւիլ վասն արդարութեան ։ Պահեն, և պահպանեն զարդարութիւն, և են արդարք, որք հեռանան յանիրաւութենէ, և իւրաքանչիւրոյ հատուցանեն, զոր նմա հատուցանել պարտին · զորօրինակ, հեռանան 'ի սուտ երդմանէ, 'ի հայհոյանէ, 'ի մարդասպանութենէ, 'ի շնութենէ, 'ի գողութենէ, և 'ի յամէ այլմէ անիրաւէ վնասու · և պաշտեն զած, օրհնեն զանուն տեառն, պատուեն զծնօղս, և հատուցանեն զպարտս ։ Ունին զաւելութիւն արդարութեան, որք պահեն, և պահպանեն զարդարութիւն ըստ վարդապետութեան քի տեառն, և ըստ մեկնութեան նորա · զորօրինակ, ոչ միայն հեռանան 'ի մարդասպանութենէ · այլ նաև 'ի յատելութենէ, 'ի յանիրաւ բարկութենէ, 'ի յանօրինէ վրէժխնդրութենէ, 'ի կռուոյ, և 'ի զրպարտութենէ · և ոչ միայն հեռանան 'ի շնութենէ · այլ նաև 'ի ցանկութենէ, 'ի յանմաքրոյ ըղձէ, յանմաքրոյ խօսակցութենէ, յամաքրոյ լսմանէ, յանմաքրոյ շօշափմանէ, և յանմաքրոյ կենցաղավարութենէ · և ոչ միայն հեռանան 'ի սուտ երդմանէ · այլ նաև 'ի սովորութենէ երդնլոյ ։ Ամոք ուսուցանէ զարդարութիւն ։ Զաւելութիւն արդարութեան, և զքաղցիլն, և զծարաւիլն արդարութեան, քս ուսուցանէ · Քաղցին, և ծարաւին արդարութե, որք փափագին, և ջանան աճիլ 'ի յարդարութեան ։ Այս երանութիւն ոչ բաւական պահել զարդարութիւն · այլ նաև խնդրի առաւտանալ 'ի յարդարութեան · և քաղցիլ, և ծարաւիլ վասն արդարութեան ։ Քանզի յագումն է 'ի քաղցութեան, և 'ի ծարաւութեան ։ Ուրեմն որք քաղցին, և ծարաւին վասն արդարութեան, ունին զյագեցումն փափագանաց · և են երանեալք, և յագեսցին 'ի յապագայոջ երանութեան, զփափագն երանելոյ յագեցուցանողի ։

5· Հինգերորդ աւետարանական երանութիւն է այս ։ ( Երանի ողորմածաց, զի նոքա զողորմութիւն գտցեն, ) Մատթէի 5· Թիւ 7· Ողորմութիւն է ցաւակցիլ թշուառաց, և ջանալ ազատել զնոսա 'ի թշուառութենէ ։ Ուստի քրիստոնեայք, որք տեսեալք զընկերս իւրեանց 'ի թշուառութիւնս, ցաւակցին նոցա, և ջանան ազատել զնոսա 'ի թշուառութենէ, են ողորմածք · բայց 'ն քս, որք ոչ ցաւակցին, այլ խնդան 'ի վերայ թշուառութենէ ընկերի ·

կերի, կամ որք ձգեն զընկեր իւր 'ի թշուառութի, են անողորմք, Կկնակ թշուառութի՛ն, մարմնաւոր, և հոգևոր: Մարմնաւորն է կարօտութի մարմնոյ, որպիսի է քաղցութի, ծարաւութի, մերկութի, հիւանդութի, և պարտ, և այնպիսիք: Հոգևորն է կարօտութի հոգւոյ, որպիսի է մեղքն, տգիտութի՛ն, տրտմութի սրտի, և այնպիսիք: Կարօտութի՛ն, և թշուառութի՛ն հոգւոյ է մեծագոյն, քան զկարօտութի՛ն, և զթշուառութի՛ն մարմնոյ. քանզի հոգին առաւել է քան զմարմինն. այսպէս նաև կրկնակէ ներգործութի ողորմութե: Մին է, որով օգնեմք թշուառութե հոգւոյ, միւսն է, որով ձեռնատու լինիմք թշուառութե մարմնոյ. երկաքանչիւր ներգործութի՛ն է բարի, և 'ի կիրարկանելի: Բայց ներգործութիւն ողորմութե, որով օգնեմք հոգւոյ, է լաւագոյն ներգործութի, քան զներգործութի ողորմութե, որով օգնեմք մարմնոյ. քանզի հոգին լաւագոյն է քան զմարմինն: Քրիստոնեայն, որ շարժեցեալ 'ի յողորմածութե, որ է դուստր սիրոյ, օգնէ ընկերի, որքան առ մարմինն, կերակրելով, ընդունելով, արբուցանելով, զգեցուցանելով, առողջացուցանելով, կամ ազատելով. և որքան առ հոգին, ուսուցանելով, խրատելով, համբերելով, մխիթարելով, կամ ներելով, է ողորմած, և երանեալ, և արդիւնաւորի զողորմութի: Վասնզի ողորմութի, և գթութի նորա, շարժէ զա̃ծ, զհայրն ողորմութեց, զի ողորմեսցի նմա:

6. Վեցերորդ աւետարանական երանութի՛ն է այս: (Երանի այնոցիկ, որք սրբք են սրտիւք, զի նք̃ զա̃ծ տեսցեն:) Մատթէի. 5. թիւ. 8. կրկնակաբար նկատիլ կարէ սրբութի սրտի, այսինքն, արտաքին, և ներքին: Արտաքինն է, որ երևի. ներքինն է, որ է 'ի սրտի, և առաջի ա̃յ: Արտաքինն, որ երևի, և է առաջի մարդկանց, կարէ դոլ թարց ներքնայնոյ. որպէս է երևելի սրբակացութի՛ն, և կեղծաւորաց, և սուտ մարգարէից, որք գան առ մեզ զգեստիւք ոչխարաց, իսկ 'ի ներքոյ են գայլք յափշտակողք: Կեղծաւորք ցուցանելով զերևելի սրբութի, են խաբեբայք. քանզի խաբեն զպարզամիտս. և են փափագողք ունայնի փառաց. վասնզի խնդրեն զունայնս փառս: Այսպիսիք կեղծաւորք, ոչ ունին զառաքինութիս, այլ զարտաքին տեսակն առաքինութեց: Ուստի ոչ են հաճոյք ա̃յ, և ոչ տեսցեն զա̃ծ: Ներքին սրբութի՛ն, որ է առաջի ա̃յ, և է հանդերձ անմեղութբ, և ճշմարտութբ, ոչ կարէ դոլ թարց արտաքնայնոյ, ենթադրելի, և 'ի նմանէ յառաջացեալ. որպիսի է սրբութի ծառայից ա̃յ, որք երկնչին 'ի յա̃յ, և խնդրեն զբարեհաճոյութի նորա. քանզի այսպիսիք քրիստոնեայք բարեօք ներգործութբք իւրովք տան զբարիս օրինակս ընկերի: Քանզի ծառայքն ա̃յ են լոյս աշխարհի, քաղաքք եդեալք 'ի վերայ լերանց, և ճրագ եդեալ 'ի վերայ աշտանակի, զի լուսաւորիցէ զամենեսեան, որք են 'ի տան: Ուստի պարտին տալ զլոյս առաջի մարդկանց, զի տեսանիցեն զբարիս գործս նոցա, և փառաւորիցեն զհայրն մեր, որ յերկինս է: Այսպիսիքն ունին զառաքինութի: Ուստի արտադրեն նաև զարտաքինս ներգործութիս առաքինութեց: Սոքա խնդրեն զբարեհաճոյութի՛ն ա̃յ. Ուստի են երանեալք, և հաճոյք են ա̃յ, և տեսցեն զա̃ծ:

7. Եօթներորդ աւետարանական երանութի՛ն է այս: (Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք ա̃յ կոչեսցին: (Մատթէի. 5. թիւ. 9. Խաղաղութի՛ն է ամենամեծ բարին մեր: Քանզի բարին մեր է սէրն, միաւորող զմեզ ընդ միմեանս, և ընդ գլխոյ մերոյ քի̃: Դուստրն սիրոյ, և գործն նր̃ է միաբանութի՛ն: Խաղաղութի՛ն համապահէ զմիաբանութի՛ն: Ուստի ամենա-

մեծ

մեծ բարին մեր է խաղաղութիւն, համապատօղ զմիաբանութի ։ դդործն, և զդուստրն սիրոյ, 'ի ձեռն սիրոյ միաւորողի ընդ միմեանս, և ընդ դլխոյ մերոյ քի ։ Սիրողն տարաձայնութե, եղծողի զխաղաղութիւն է սատանայն ։ Ուստի վրդովիչն խաղաղութե, և սերմանօղն հակառակութե, է որդի սատանայի ։ Հեղինակն խաղաղութե է քս, միջնորդն 'ի մէջ այ, և մարդկանց, մարդն Յս Յս, որ ետ զիւր ինքն փրկան վասն մեր ․ որով հաշտեցան համայնք, և որոյ արեամբն 'ի խաչի հեղեցելով եղև հաշտութի ․ և որ լեալ խաղաղութի մեր, արար զերկոսեան մի, լուծանելով զթշնամութիւն 'ի մարմնոջ իւրում, և առնելով զխաղաղութի ․ և սպանանելով զթշնամութի 'ի յիւրեան ինքեան, հաշտեցոյց զմեզ ընդ այ խաչիւն ․ և գալով առ մեզ, աւետարանեաց մեզ զխաղաղութի ․ և որով մերձենամք առ հայր, և որ է մեռեալ, յարուցեալ, և ընդ աջմէ այ նստեալ, բարեխօս վասն մեր ․ և որ եթող մեզ զխաղաղութի, և ետ մեզ զխաղաղութի իւր ։ Ուրեմն քրիստոնեայք, որք հետևելով քի հեղինակի խաղաղութե, և որ գործեաց զխաղաղութի միաբանօղ, և հաշտեցուցանօղ զմեզ ընդ այ արեամբ, խաչիւ, և մահուամբ իւրով, ոչ միայն պահեն զխաղաղութի, պահպանելով զարդարութի ․ այլ նաև ջանան խաղաղացուցանել զայլս, և եղծել զթշնամութի, են երանեալք, և կոչին որդիք այ ։

8. Ութերորդ, և վերջին աւետարանական երանութիւն է այս ։ ( Երանի, որք հալածեալք իցեն վասն արդարութե ․ զի նոցա է արքայութիւն երկնից ։ ) Մատթ. 5. թիւ. 10. Գտանին յայամ աշխարհի վատթարք մարդիկք, որք ոչ միայն ոչ գործեն զարդարութի, զսիրելագունեղ առաքինութիւն ․ այլ նաև հալածեն զարդարութիւն գործօղս ։ Սք են ամբարիշտք, և անօրէնք ։ Են ամբարիշտք ․ քանզի յառնեն ընդդէմ առաքինութեանց ։ Են անօրէնք ․ քանզի խորհին զանանջանս, որովք չարչարիցեն զարդարս, և զսիրօղս առաքինութեանց ։ Արդարութիւնն, և ամ առաքինութիւն այնպէս է սիրելի, զի իցէ արժանի, զի այր արդար, և սիրօղն արդարութե, և առաքինութե, վասն սիրոյ արդարութե, և առաքինութե, դրկեսցէ զհամայնս չարչարանս, 'ի յանողորմութէ ամբարշտաց խորհեցեալս, և դտեցեալս ․ քանզի առաքինութի է ամենամեծ բարին յաղթօղ զայլս ամն բարիս, նաև զկեանն մեր ։ Քանզի առաքինութիւն է բարին հոգւոյ մերոյ ։ Այսու համձոյանամք այ ստեղծողի մերոյ ։ Ուստի, որք այնպէս սիրեն զառաքինութիւն, զի վասն սիրոյ առաքինութե նաև զչարչարանս 'ի յանողորմութէ ամբարշտաց խորհեցեալս, և դտեցեալս, դրկիցեն, և զհալածմունս կամաւորապէս կրիցեն, երանեալք են ․ քանզի արքայութիւն երկնից նց է ։ Երանութիս այս պարունակէ զայլս ամն երանութիս ։ Վասնզի այնոքիկ, որք այնպէս սիրեն զարդարութիւն, և զառաքինութիւն ․ զի նաև կամաւորապէս վասն սիրոյ արդարութե, և առաքինութե կրիցեն զհալածանս, են և աղքատք հոգւով, բացահերքօղք զանկարգ սէրն ժամանակաւորաց իրաց ․ են հեզք զոչօք անխրաւաբար նեղօղք ․ սգաւորք, կրօղք զցաւս վասն մեղաց իւրոց ․ քաղցին, և ծարաւին արդարութե ․ են ողորմածք ․ են սրբք սրտիւք, սիրօղք զներքին սրբութի ․ և են խաղաղարարք ։ զտարաձայնութիս, և զթշնամութիս 'ի միջոյ բառնալ ջանացօղք ։

## ԳԼՈՒԽ. ԾԲ.

### Յաղագս առաջնոյ պատուիրանի Աստուծոյ տասնեայ բանի։

1. Ամենաստեղծողն աշխարհի, մանաւորաբար սիրեաց զմեզ. քանզի արար զմարդն ՚ի պատկեր և ՚ի նմանութիւն իւր, տալով նմա զիմացութիւն, և զազատ կամս. զիմացութիւն ճանաչելոյ զճշմարիտն, և տարորոշելոյ զբարին ՚ի չարէ. և զկամս սիրելոյ, և ընտրելոյ զբարին. և շնորհելով նմա զիշխանութիւն, զի տիրեսցէ ձկանց ծովու, և թռչնոց երկնի, և անասնոց, և ընդհանրոյ երկրի, և ամենայն սողնոյ, որ շարժի ՚ի վերայ երկրի։ Սակայն քանզի մարդն խաւարեցուցեալ էր զմիտ իւր, հետևելով վատթարութեան, առ որ հակեցեալ էր սկզբնականօք մեղօք. գթացեալ ՚ի վերայ նորա ձեռամբ Մովսիսի ծառայի իւրոյ ետ նմա զպատուիրանս օրինաց, տասնեայ բանի, զի յայտնապէս, և որոշաբար ճանաչեսցէ զպարտաւորութիւն արդարութեան դէպ ՚ի յԱստուած, դէպ ՚ի ծնողս, և դէպ ՚ի յանձինս։ Որոշաբար առաջադրեաց նմա զպարտաւորութիւն որքան առ ցանկութիւնս, և առ կամաւորս խորհուրդս, և որքան առ կամաւորս բանս, և որքան առ կամաւորս գործս։ Քանզի երիւք կերպիւք մարդն կարէ գործել բարեպէս, և երիւք կերպիւք չարաբար, այսինքն, ցանկութեամբ, բանիւ, և գործով։ Ցանկութեամբ գործէ բարեպէս, ցանկալով բարւոյն, բանիւ գործէ բարեպէս, խօսելով, և արտաբերելով զբարին, և գործով գործէ բարեպէս, ՚ի կիրարկանելով, և գործելով զբարին։ Իսկ ներհակաբար ցանկութեամբ գործէ վատթարաբար, ցանկալով չարին. բանիւ գործէ վատթարաբար, խօսելով, և արտաբերելով զչարն. և գործով գործէ վատթարաբար, ՚ի կիրարկանելով, և գործելով զչար ինչ, և կատարելով զվատթար գործ։

2. Ձեռամբ Մովսիսի ծառայի իւրոյ, այսպէս առաջադրեաց Աստուած մարդոյ զպատուիրանս իւրս։ Մի ունիցիս զայլ Աստուած առաջի իմ։ Մի առնուցուս զանուն տեառն Աստուծոյ քո ընդունայն։ Յիշեա զի պահիցիս զօր շաբաթու։ Պատուեա զհայր քո, և զմայր քո։ Մի սպանաներ։ Մի շնար։ Մի գողանար։ Մի սուտ վկայեր ընդդէմ ընկերի քո։ Մի ցանկար տան ընկերի քո, և մի ցանկար կնոջ նորա, մի ծառայի, մի աղախնոյ, մի եզանց, մի իշոյ, և ոչումեք իրի նորա։ Այս առաջադրին տասն պատուիրանք օրինաց։ Երեքն վերահային առ Աստուած, այսինքն, մի ունիցիս զայլ Աստուած առաջի իմ. մի առնուցուս զանուն տեառն Աստուծոյ քո ընդունայն. և Յիշեա զի պահիցես զօր շաբաթու։ Մին պատուիրանն վերահայի առ ծնօղս. այսինքն, պատուեա զհայր քո, և զմայր քո։ Երեք պատուիրանք վերահային առ երիս արդելեցեալս արարողութիւնս, այսինքն, մի սպանաներ. մի շնար. և մի գողանար. որք արգելուն զերիս չարագործութիւնս, այսինքն, զմարդասպանութիւն, զշնութիւն, և զգողութիւն։ Մին պատուիրանն վերահայի առ մեղն բանիւ արարեցեալն, այսինքն, մի սուտ վկայեր ընդդէմ ընկերի քո. որ արգելու զսուտ վկայութիւն։ Երկու պատուիրանքն վերահային առ մեղս ցանկութեամբ արարեցեալս, այսինքն. մի ցանկար տան ընկերի քո. և մի ցանկար կնոջ նորա, մի ծառայի, մի աղախնոյ, մի եզանց, մի իշոյ, և ոչումեք իրի նորա. որք արգելուն զցանկութիւն կնոջ ընկերի, և զցանկութիւն ընչից նորա։

3. Առաջին պատուիրանն Աստուծոյ տասնեայ բանի արգելու զանպատեհ աստուածպաշտութիւն, և զսուտն, և պատուիրէ զպատշաճաւոր երկրպագութիւն ճշմարիտ Աստուծոյ։ Ոչ յի-

շեմք

շեմք զանստուածութի · քանզի անստուածութիւն ընդհանրականապէս արգելեցեալ է , և անա՟ծք ընդհանրականապէս դարշելիք են ։ Ասաց անզգամն 'ի սրտի իւրում թէ ոչ գոյ ա՟ծ ։ Նաև նոքա , որք մոլորեցան յայսմիկ իրողութե , անգոսնեցին զանա՟ծութի · քանզի կարի յոյժ յայտ է , յայսմիկ ընդհանրոջ գոլ զա՟ծ , և գոլ երկրպագելի ։ Արգելանի երկրպագութին հեթանոսաց , զբազումս ա՟ծս ստորասողաց , և զսուտս ա՟ծս պաշտողաց ։ Քանզի յայսմիկ ընդհանրոջ է մի միայն ա՟ծ , և սա է միայն պաշտելի ։ Ուստի հեթանոսք զբազումս ա՟ծս ստորասողք , և երկրպագութե ա՟յ վայելչաւ զնոսա պաշտօղք , և նոցա երկրպագօղք , զանիրաւութի առնէին Ճշմարտի ա՟յ · քանզի զերկիրպագութին Ճշմարտի ա՟յ պատկանօղն , առընծեռէին ստեղծուածոց ։ Նաև արգելանի երկրպագութին մոլորողաց շուրջ զՃշմարտիւ ա՟ծով · կամ ասացողաց զմեսիայն տակաւին գալոց , և 'ի նա , որ եկն ոչ հաւատացողաց , կամ զսուտ օրինադիր ընդունողաց , և ըստ սուտ աղանդոց նորա զա՟ծ պաշտողաց , կամ զիր ինչ յա՟յ յայտնեցելոյն բացասողաց , և զսուտն իբրև յա՟յ յայտնեցեալ քարոզողաց , որպիսիք են հերետիկոսք , որք զոմանս մասունս հաւատոյ յայտնեցելոյ , կամ զոմն մասն հաւատոյ յայտնեցելոյն ուրանան · քանզի համայնք ասացեալք մոլորին 'ի հաւատոջ , և են անհաւատք , զսուտ դաւանութի հաւատոյ ընդունօղք · կամ նաև զբոլոր Ճշմարիտ կրօնն եղծօղք , որպէս ն՟ք , որք ոչ հաւատան 'ի ք՟ս , և 'ի մեսիայն , որ արդ եկեալ է · այլ սպասեն այլում , որ իցէ գալոց · և նոքա , որք ընդունին զսուտ օրինադիր , և ըստ սուտ աղանդոց նորա զա՟ծ պաշտեն ։ Նաև արգելանի կախարդութին , և հմայութի · քանզի 'ի կախարդութե երկրպագութին ա՟յ պատկանօղն , առընծեռի թշնամւոյ նորա · և 'ի հմայութե անպատշաՃ երկրպագութին 'ի կիրարկանի · յորմէ հեռանալի է ։

4· Ճշմարիտն ա՟ծ , որ է մին , է պաշտելի , և նմա միայնում երկիրպագելի երկրպագութե ա՟յ վայելչաւ ։ Ճշմարիտն ա՟ծ արդարև է մին · քանզի որ՟ն , յորմէ կախեալք կան համայնք իրք · և որ ոչ կախեալ կայ յումեքէ , այլ է էակ յինքենէ , և է նոյն ինքն ըստ ինքեան ենթակայացօղն , կեցօղն , և իմացօղն , է մին ։ Այս Ճշմարիտ ա՟ծն , որ է մին , 'ի մէնջ , որք կարեմք զնա Ճանաչել , և պատուել , է պաշտելի ։ Եւ այսպէս ցուցանի ։ Նա , որ ունի զամենամեծ , և զանհուն գերազանցութի , է 'ի մէնջ պաշտելի · իսկ ա՟ծ ունի զամենամեծ , և զանհուն գերազանցուի · ապաուրեմն է 'ի մէնջ պաշտելի ։ Դարձեալ այսպէս ։ Նա , որ է ստեղծօղ մեր , և որ է սկզբն , և վաղՃանն մեր , և յորմէ ունիմք զա՟մս բարիս , և կախեալք կամք ամենևին , և բոլորովիմբ , և 'ի գոլն , և 'ի համապատահիլն , և 'ի շարժիլն , և 'ի գործելն , է 'ի մէնջ երկիրպագելի · քանզի պարտիմք Ճանաչել զնա այնպիսի , որպիսի է , և զմեզ զայնպիսիս , որպիսիք եմք· և ցուցանել զնշանն այսր Ճանաչման ։ Իսկ ա՟ծ է ստեղծօղ մեր , և է այն , որ է սկիզբն , և վաղՃանն մեր , և այն , յորմէ ունիմք զա՟մս բարիս · և յորմէ ամենևին , և բոլորովիմբ կախեալք կամք , և 'ի գոլն , և 'ի համապատահիլն , և 'ի շարժիլն · և 'ի գործելն · քանզի ա՟ծ է այն , յորմէ կախեալք կան համայնք իրք · ուրեմն ա՟ծ է պաշտելի , և 'ի մէնջ երկիրպագելի ։ Ա՟ծ միայն է պաշտելի , և երկիրպագելի երկպագութե ա՟յ վայելչաւ ։ Քանզի երկրպագութե ա՟յ վայելչաւ երկիրպագելին , և պաշտելին զոմն է Ճանաչել , և համարել զնա ունեցօղ զծայրագունեղ , և զանհուն գերազանցութի · զկերտիչ , և զստեղծօղ ամենայնից , զէակ յինքենէ զինքնակալ · զան_

ծնիցս զանհունս կատարելութիւս ունեցող, զվիզքն, և զվաղձանն ամից, և զընդհանրական ար. և ցուցանելն զնշան զայնպիսի համարումն նշանակող. իսկ զածոյ միայնոյ կարեմք ձևակերպել զայսպիսի համարումն. ուրեմն ած միայն է պաշտելի, և երկրպագելի երկրպագութբ այ վայելողաւ։

5. Նշանք զատուցեալ համարումն նշանակողք, են այսոքիկ. երկրպագութիւն արարեցեալ պաշտեցելոյ իբրև վերնագունեղի տեառն. աղօթքն արարեցեալ իբրև այնմիկ, յորմէ խնդրելիք են ամէք բարիք. խոնկարկութիւն արարեցեալ իբրև վերնագունեղի, և գերազանցագունեղի տեառն. և մատուցումն պատարագի արարեցեալ 'ի վերաձանաչումն վերնագունեղի տեառն։ Այլով երկրպագութբ, որ ոչ է երկրպագութիւն պատկանող այ, կարեն երկիրպագիլ բարեկամք այ։ քանզի այսու ոչ խոստովանիմք զ ծայրագունեղ, և զանհուն գերազանցութիւն 'ի սբս, և 'ի բարեկամս այ. այլ զայնպիսի, որպիսի յարմարի նոցա. ուստի ոչ լինի անիրաւութիւն այ. այլ ևս առաւել պատիւ, յայնմանէ, թէ բարեկամք նորա պատուիցին։ Ուստի պաշտամամբ գերածառայութե կարեմք պատուել զմարիամ, ճանաչելով զնա մայր այ, 'ի յարժանապատուութե, 'ի շնորհի, և 'ի փառս գերազանցող զամս սբս, և զսիրելիս այ, և քարոզելով զնա թագուհի հրեշտակաց, և ամից սբոց։ Նմանապէս պաշտամամբ ծառայութե կարեմք պատուել զսբս արքայութե, իբր և զսիրելիս այ, առ նա վս մեր բարեխօսօղս։ Կարեմք նաև պաշտել զխաչն, և զպատկերսն քի։ Քանզի պաշտամամբ խաչի, և պատկերի քրիստոսի պաշտի քս։ Նմանապէս կարեմք պատուել զպատկերն Մարիամայ, պատուելով նմա յարմարողաւ. քանզի պատուելով արարեցելով պատկերի Մարիամայ, պատուի Մարիամ։ Այսպէս նաև կարեմք պատուել զպատկերս սբոց, պատուելով նոցա յարմարողաւ. քանզի պատուելով արարեցելով պատկերաց սբոց, պատուին սբք։ Նաև պատուել կարեմք զմասունս սբոց. քանզի պատուելով արարեցելով մասանց սբոց, պատուին սբք։ Կարի յարմար է պատուելն զմարիամ մայրն այ, և զսբս բարեկամնն. վասնզի նաև մայրն, և բարեկամք թագաւորի պատուին։

6. 'Ի յերկրպագութե, և 'ի պաշտման այ 'ի կիրարկանի ներգործութիւնք հաւատոյ, յուսոյ, և սիրոյ։ Քանզի ելուզանելով զներգործութիւն հաւատոյ, հաւատամք զած, հաւատամք այ, և հաւամք 'ի յած։ Հաւատացողքս զած, ոչ միայն հաւատամք գոլ զած. այլ նաև հաւատամք անհնիցս անհունապէս կատարեալ։ Հաւատացողքս այ, հաւատամք զճշմարտախօսութիւն նորա գոլ ծայրագունեղ, և անհուն։ Հաւատացողքս 'ի յած, հաւատամք զսիրելութիւն այ գոլ ծայրագունեղ, և անհուն, ուստի միշտ ձանաչեմք 'ի նմա զծայրագունեղ գերազանցութիւն. և ունիմք զնմանէ զհամարումն ծայրագունեղի գերազանցութե. և տալով զդաւանութիւն հաւատոյ, զայնպիսի համարումն, զոր սաուգապէս ունիմք զայնմանէ, արտաբերեմք բանիւք։ Եւ այսպէս հաւատացողքս զած, հաւատացողքս այ, և հաւատացողքս 'ի յած, պաշտեմք զած, և պաշտեմք զնա պաշտմամբ երկրպագութե։ Եւ ելուզանելով զներգործութիւն յուսոյ, ցանկամք այ իբրև առարկայի երանութե մերոյ, առարկայի գերազանցագունեղի, անհնիցս անհունապէս կատարելոյ, զամս ատիճանս բաղձալւոյ կատարելութե յինքեան փակողի, կարողի յագեցուցանել զամ բաղձանս մեր։ Ուստի ելուզանողքս զներգործութիւն յուսոյ ունիմք զայ զդաւանութեղ համարումն ծայրագունեղի, և անհնոյ գերազանցութե, և զայնպիսի համարումն արտաբերեմք բանիւք աղօթից։ Եւ այսպէս յուսացողքս 'ի յած, յեր-

կեր-

կիրպագեմք ա̄յ , և պաշտեմք զնա պաշտօնիւ ա̄ծպաշտութեան : Եւ ելուզանելով զներգործութի սիրոյ , սիրեմք զա̄ծ իբրև զաւարկայ ծայրագունեղապէս , և 'ի վեր քան զա̄մ ինչ սիրելի : Ուստի ունիմք զնմանէ զստուգագունեղ համարումն ծայրագունեղի գերազանցութե̄ , և զայնպիսի համարումն ցուցանեմք արտաքնագունիւ ներգորթե̄ : Եւ այսպէս սիրողքս զա̄ծ , երկիրպագեմք ա̄յ , և պաշտեմք զնա պաշտօնիւ ա̄ծպաշտութե̄ :

7. 'Ի յերկրպագութե̄ , և 'ի պաշտման ա̄յ նաև 'ի կիրարկանին ներգործութիք երկիւղի , խոնարհութե̄ , հնազանդութե̄ , և աղօթից : Քանզի ելուզանողքս զներգործութի երկիւղի , ճանաչեմք զա̄ծ վերնագունեղ տր̄ , կարող կորուսանել զմարմին , և զհոգի 'ի գեհենի : Ուստի ելուզանողքս զներգործութի երկիւղի , ունիմք զա̄յ զստուգագունեղ համարումն ծայրագունեղի գերազանցութե̄ , և զայնպիսի համարումն ցուցանեմք արտաքնով նշանիւ : Եւ այսպէս երկնչողքս 'ի յա̄յ , երկիրպագեմք ա̄յ , և պաշտեմք զնա պաշտօնիւ ա̄ծպաշտութե̄ : Եւ ելուզանողքս զներգործութի խոնարհեցուցման առաջի ա̄յ , ճանաչեմք զնա ծայրագունեղ տր̄ , և գերազանցագունեղ կայսր , որում ենթարկեցեալք են համայնք իրք · և ճանաչեմք զմեզ յոչընչէ ստեղծեցեալս գոլ 'ի նմանէ , և առաջի նորա գոլ հող , և մոխիր : Ուստի ելուզանողքս զներգործութի խոնարհեցուցման , ունիմք զա̄յ զստուգագունեղ համարումն ծայրագունեղի , և անհնոյ գերազանցութե̄ , և զայնպիսի համարումն ցուցանեմք արտաքնագունիւ նշանիւ խոնարհեցուցման : Եւ այսպէս ելուզանողքս զներգործութի խոնարհեցուցման , երկիրպագեմք ա̄յ , և պաշտեմք զնա պաշտօնիւ ա̄ծպաշտութե̄ : Եւ ելուզանելով զներգործութի հնազանդութեան · ճանաչեմք զա̄ծ վերնագունեղ տր̄ , և թագաւոր թագաւորաց · և ճանաչեմք զմեզ զստեղծուածս նր̄ , պարաւանդելագունեղս , և պարտաւորագունեղս ծառայս առ 'ի հնազանդիլ ա̄մի նշմարման նորա : Ուստի ելուզանողքս զներգործութի հնազանդութե̄ , ունիմք զա̄յ զստուգագունեղ համարումն ծայրագունեղի , և անհնոյ գերազանցութե̄ , և զայնպիսի համարումն ցուցանեմք պահպանմամբ պատուիրանաց : Եւ այսպէս ելուզանողքս զներգործութի հնազանդութե̄ , երկիրպագեմք ա̄յ , և պաշտեմք զնա պաշտօնիւ ա̄ծպաշտութե̄ : Եւ ելուզանելով զներգործութի աղօթից , ճանաչեմք զա̄ծ հեղինակ ա̄մից բարեաց մերոց ընդունելելոց , և յուսացելոց · և որքան առ ընդունեցեալս բարիս , ճանաչեմք զմեզ պարտաւորագունեղս առ 'ի մատուցանել զշնորհակալութիս · և որքան առ բարիս յուսալիս բոլորովիմք կարօտս բարերարութեան ա̄յ , աղբեր ա̄մից բարեաց : Ուստի աղօթողքս ունիմք զա̄յ զստուգագունեղ համարումն ծայրագունեղի գերազանցութե̄ , և զայնպիսի համարումն ցուցանեմք արտաքնագունիւ ներգործութե̄ : Եւ այսպէս աղօթողքս երկիրպագեմք ա̄յ , և պաշտեմք զնա պաշտօնիւ ա̄ծպաշտութե̄ ·

8. Ազնուագունեղ , և գերազանցագունեղ ներգործութի երկրպագելոյ ա̄յ , և պաշտելոյ զա̄ծ պաշտմամբ ա̄ծպաշտութե̄ , է մատուցումն պատարագի : Քանզի մատուցմամբ պատարագի կարի յոյժ պատուի ա̄ծ , վասն զի մատուցանեմք ա̄յ զպատարագն 'ի վերաճանաչումն վերնագունեղի տէրութե̄ նորա : Մատուցանողքս զպատարագ ա̄յ · ճանաչեմք զնա տր̄ կենի , և մահուան , և խոստովանիմք զինքն գերազանցագունեղ , կատարելագունեղ , և բարձրագունեղ : 'Ի կրօնի մերում քրիստոնէի մատուցանեմք ա̄յ , ինքեան զհաճոյագունեղ պատարագ : Քանզի մատուցանեմք նմա անարիւնահեղիւ մատուցմամբ , զՅս̄ Քս̄ փրկիչն աշխարհի , զճշմարիտ ա̄ծ , և զճշմա_

րի

րիտ մարդ, 'ի սեղանոջ խաչին արիւնահեղիւ պատարագաւ մատուցեալն վասն փրկութե̃ աշխարհի։ Ուստի մատուցանողքս ա̃յ զայս ք̃նքեան համագոյակից, և համահաւասար պատարագն, կարի յոյժ պատուեմք զնա, և երկիրպագեմք նմա, և պաշտեմք զնա պաշտօնիւ ա̃ծպաշտութե̃։ Զայս պատուելի, և սարսափելի պատարագն մատուցանեն քահանայք նորոյ կտակարանի, և ընդ քահանայի քրիստոնեայք, զո̃ր պատարագն լսօղք։ 'Ի մատուցման այսր պատարագի 'ի կիրարկանին համայնք այլք ներգործութիւնք երկրպագութե̃, և պաշտօնի ա̃ծպաշտութե̃, այսինքն, ներգործութի̃ հաւատոյ, յուսոյ, սիրոյ, երկիւղի, խոնարհեցուցման, հնազանդութե̃, և աղօթից։ Քանզի 'ի ժամանակի մատուցման պատարագի, և ընծայման նորոյ կտակարանի, հաւատամք խորհրդոց հաւատոյ մտածելով զնոսա. յուսամք զյաւիտենական կեանն, և փափագիմք երկնայնոյ երանութե̃. սիրեմք, զարթուցանելով 'ի սրտի մերում զբորբոքեցեալ սէր դէպ 'ի ք̃ս, և 'ի յամէնասու̃բ երրորդութի̃. երկնչիմք խոկալով զզարհուրելի մեծվայելչութիւն ա̃յ. խոնարհիմք, մտածելով զնուաստութիւն մեր. հնազանդիմք լսելով զմարգարէականս, զաւետարանականս, և զառաքելականս ընթերցուածս. և աղօթեմք, մատուցանելով զշնորհակալութիւս վասն բարերարութեց յա̃յ ընդունեցելոց, բորբոքեցելովք աղաչանօք խնդրելով զբարերարուիս, և ունկնդնելով աւետարանականաց քարոզութեց։

# Գ. Լ. Ո. Ւ. Խ. Ծ. Գ.

## Յաղագս երկրորդի պատուիրանի ա̃յ։

1. Երկրորդ պատուիրանն ա̃յ, է այս։ Մի առնուցուս զանուն Տ̃ն ա̃յ քո ընդունայն։ Երկրորդ պատուիրանն ա̃յ, արգելու զանարգութի̃ ա̃ծայնոյ անուան, և պատուիրէ զգովասան, և զպատիւ նորա։ Որպէս ա̃ծ է պաշտելի, երկիրպագելի, և պատուելի. այսպէս և անուն նորա է պաշտելի, երկիրպագելի, և պատուելի։ Քանզի յորժամ պարտաւորաւ գովասանաւ գովաբանի անուն տեառն, և պարտաւորաւ օրհնութի̃ օրհնի, պատուի, և պաշտի ա̃ծ։ Եւ ոպ̃ անպարտաւոր, և սուտ պաշտումն բառնալի է 'ի միջոյ, զի մի լինիցի անիրաւութի̃ ճշմարտի ա̃յ, որ պաշտելի, և որոյ երկիրպագելի է, և ծայրագունեղիւ պատուով պատուելի է. այսպէս և անարգութի̃ ա̃ծայնոյ անուան բառնալի է 'ի միջոյ։ Քանզի երբ անարգի անուն տեառն, անարգի ինքն ա̃ծ, և լինի անիրաւութի̃ ինքեան ա̃յ, վասնզի անունն ա̃յ նշանակէ զինքն, որպէս և անուանք այլոց իրաց նշանակեն զինքեանս։ Վասն այսր պատճառի շարադրեցեալք են սաղմոսք, երգք, և հոգևորք օրհնաբանութիւնք։ Վասն այսր 'ի յա̃ծային բարբառս հրամայի մեզ։ (Օրհնեցէք զտէր զի բարի է սաղմոս. ա̃յ մերում քաղցր եղիցի օրհնութի̃։) Սաղմոս. 146. թիւ. 1. Եւ յայլում սաղմոսի։ Գովեա̃ երէմ զտ̃ր. և օրհնեա զա̃ծ քո սիօն։) Սաղմոս. 147. թիւ. 12. Դարձեալ։ (Օրհնեցէք զտ̃ր յերկինս. օրհնեցէք զնա 'ի բարձունս։ Օրհնեցէք զնա ա̃մ հրեշտակք նր̃. օրհնեցէք զնա ա̃մ զօրութիւնք նորա։ Օրհնե_

Օրհնեցէք զնա արեգակն, և լուսին. օրհնեցէք զնա ամ՟ աստեղք, և լոյս: Օրհնեցէք զնա երկինք երկնից, ջուրք որք 'ի վերոյ քան զերկինս. օրհնեցէք զանուն տեառն: ) Սաղ. 148. թիւ. 1.

2. Այս երկրորդ պատուիրանս այ՟ կարի յոյժ արգելու զհայհոյանս: Հայհոյանն է ամենամեծ անիրաւութի՟, զոր առնէ այ՟, առընձեռելով նմա զիր ինչ, որ նմա ոչ յարմարի. զորօրինակ, կոչելով զնա անիրաւ. կամ բառնալով 'ի նմանէ զինն, որ նմա յարմարի. զորօրինակ, բացասելով զնա գիտել զա՟մ ինչ. կամ որ նմա յարմարի, առընձեռելով ստեղծուածոյ. զորօրինակ, ասելով, զսատանայն գիտել զա՟մ ինչ: Հայհոյօղն գործէ զամենամեծ մեղ. քանզի առնէ զամենամեծ անիրաւութիւն այ՟: Նման է սատանայի, և դատապարտեցելոց, որոտաբերողաց զհայհոյանս դէպ 'ի յա՟ծ, և դէպ 'ի սբս՟ նորա: Ասէ սբն՟ Օգոստինոս: Ոչ նուազ մեղանչեն, որք հայհոյեն զքս՟ թագաւորօղն 'ի յերկինս, քան զնոսա, որք խաչեցին զշրջօղն 'ի վերայ երկրի: 'Ի վերայ այնորիկ մատթէի. զհայհոյանէ: Կարի յոյժ անգոսնելի է հայհոյօղն. քանզի արտաբերէ զանիրաւականս բանս դէպ 'ի նա, որում պարտիւր երգել զնոր երգ, և որոյ երգն է 'ի յեկեղեցիս սբոց՟, և զոր գովաբանեն սէրոբէք, և քերոբէք, և ամ՟ք զօրք երկնայինք, և որոյ փառօքն լի է ամ՟ երկիր. դէպ 'ի նա, զոր նստօղն 'ի վերայ յաթոռոյ, պաշտեն քսան և չորք ծերունիք անկանելով 'ի վերայ երեսաց իւրոց, զկեցօղն 'ի յաւիտեանս յաւիտենից, և դնելով զպսակս իւրեանց առաջի աթոռոյն ասէին: Արժան է քեզ տր՟ աւ՟ մեր, առնուլ զփառս, և զպատիւ, և զզօրութի՟. զի դու ստեղծեր զա՟մ. և ըստ կամաց քոց էին, և ստեղծեցան. դէպ 'ի նա, զոր պարտիւր օրհնել 'ի սրբութե՟ նորա, և 'ի հաստատութե՟ զօրութե՟ նորա. և 'ի զօրութե՟ նորա, և 'ի բազում մեծութե՟ նորա. 'ի ձայն օրհնութե՟, սաղմոսիւք, և օրհնութեք՟. ցնծութեք՟, և ուրախութեք՟, գոհութեք՟, և փառաբանութեք՟:

3. Հայհոյիչն է անիրաւ դէպ 'ի նա, զորմէ բազմութիւք հրեշտակաց, քահանայք, և հազարք հազարաց ձայնիւ մեծաւ այսպէս ասեն. արժան է գառնդ զենեալ, առնուլ զմեծութի՟, զա՟ծութի՟, զիմաստութի՟, և զզօրութի՟, և զպատիւ, և զփառս, և զօրհնութիւն. դէպ 'ի նա, զորմէ համայնք ստեղծուածք, որք են 'ի յերկինս, և 'ի վերայ երկրի, և ընդ երկրի, և որք են 'ի ծովու, այսպէս խօսին. նստելոյն 'ի վերայ յաթոռոյ, և գառին, օրհնութի՟, և փառք, և պատիւ, և տէրութի՟ 'ի յաւիտեանս յաւիտենից: Հայհոյիչքն են նմանք գազանի, որ ունիցի զբերան խօսօղ զմեծամեծ, և զհայհոյանս. և բացցէ զբերան իւր 'ի հայհոյանս ընդդէմ այ՟, հայհոյել զանուն նորա, և զխորան նորա, և զայնոսիկ, որք են 'ի յերկինս: Հայհոյիչն է ատելի այ՟, հրեշտակաց երանելոց, և ամ՟ց սրբոց: Ատելի է այ՟. քանզի գարշելի է այ՟ ամբարիշտն, և ամբարշտութի՟ նորա: Կարի յոյժ ամբարշտութի՟ է հայհոյանն: Ատելի է հրեշտակաց երանեցելոց, և ամ՟ց սբոց՟. վասն զի հրեշտակք երանեցեալք, և համայնք սբք՟ որպէս կարի յոյժ գովեն զա՟ծ. այսպէս կարի յոյժ ատեն զհայհոյիչն: Ընդդէմ հայհոյչի 'ի հին կտակարանին այսպէս խօսեցեալ է Ա՟ծ: ( Հանէք զայն, որ անէծն, արտաքոյ բանակին. և դիցեն, որք լուան, զձեռս իւրեանց 'ի վերայ գլխոյ նորա, և քարկոծեսցեն զնա ամ՟ ժողովուրդն: Այր ոք, որ անիծանիցէ զա՟ծ, մեղս ընկալցի. զի անուանեաց զանուն տն՟, մահու մեռցի. քարընկեցութեք՟ քարկոծ արասցեն զնա ամ՟ ժողովուրդն. եթէ պանդուխտ իցէ, և թէ բնակ յանուանել նր՟ զանուն տն՟ սատակեսցի: ) Ղևտ. 24. թիւ.

24. Թիւ. 14. հայհոյիչն է այր կարի յոյժ ապերախտ. քանզի է անիրաւ ընդդէմ ստեղծողի, և կերպչի իւրոյ, յորմէ ընկալաւ զբազմազանս բարերարութիւնս:

4. Ամ պատիժն է 'ի վերայ հայհոյչի, ածայինն, և մարդկայինն, եկեղեցականն, և աշխարհականն: Ածայինն պատիժն, քանզի ոչ հեռասցի 'ի տանէ նորա հարուածն: Մարդկայինն պատիժն. վասնզի մարդկային օրէնն պատժէ զհայհոյիչն. եկեղեցական պատիժն. քանզի ենթարկի եկեղեցականի պատժոյ: Աշխարհական պատիժն, վասնզի նաև աշխարհական իշխանն պատժէ զհայհոյիչն: Գարշելի է հայհոյիչն. քանզի անիծանէ զայն, զոր օրհնեն մք ստեղծուածք: Անիծանէ զած, որ է օրհնեալ, և գովելի, փառաւոր, և գերաբարձրացեալ 'ի յաւիտեան: Անիծանէ զած, որոյ անունն է օրհնեալ, փառաւոր, և սբ. գովելի, և գերաբարձրացեալ 'ի յամ յաւիտեանս: Անիծանէ զած, որ է օրհնեալ 'ի սբ տաճարի փառաց իւրոց, և է գովաբանեալ, և փառաւորեալ 'ի յաւիտեան: Անիծանէ զած, որ է օրհնեալ 'ի յաթոռոջ թագաւորութեան իւրոյ. որ տեսանէ զանդունդս, և նստի 'ի վր սերոբէից. և որ է օրհնեալ 'ի հաստատութեան երկնից, և գովելի, և փառաւորելի 'ի յաւիտեան: Անիծանէ զայն, զոր օրհնեն հրեշտակք, երկինք, և մք զօրութիւք տեառն: Հայհոյէ զնա, զոր օրհնեն, արեգակն, լուսինն, աստեղք հուրն, երկիրն, օդն, և ընհանուրք ջուրք. տարերք, անասունք, ծառք, և համայնք ստեղծուածք: Նաև է գարշելի, որ հայհոյէ զմարիամ մայր այ. և զսբս, և զսիրելիս այ: Քանզի որպէս պաշտօնի գերածառայութեան պարտիմք պատուել զմարիամ կոյսն. այսպէս նաև որպէս զմայր այ պարտիմք օրհնել զնա: Եւ որպէս պաշտօնի ծառայութեան պարտիմք պատուել զսբս. այսպէս նաև որպէս զսիրելիս այ պարտիմք օրհնել զնոսա:

5. Երդումն է կոչել զած 'ի վկայ. ուստի որ կոչէ զած 'ի վկայ առ համահաստատութիւն բանից իւրոց, երդնու: Ով ոք, եթէ այնպէս երդնու, որպէս պիտոյ է, պատուէ զած. քանզի առնու զպատուաւոր յիշումն ածայնոյ անուան: Յայնժամ լինի երդումն, որպէս պիտոյ է, յորժամ ոմն երդնու ճշմարտութբ, արդարութբ, և ենթադատողութբ, այսինքն, երդնու զճշմարիտն, պարտաւորէ զիւր ինքն երդմամբ առ բարին, և երդնու վերանկատմամբ, և վասն հարկաւորութեան: Այսպիսի ոք երկնչի յայ ըստ այնմ: (Զտէր այ քումմէ երկիցես, և զնա պաշտեսցես, և 'ի նա յարեսցիս, և յանուն նորա երդնուցուս:) Երկրորդի օրինի. 6. Թիւ. 13. Այսպիսի ոք բարեպէս երդնու ըստ այնմ երեմիայի մարգարէի: (Եւ երդնուցու, եթէ կենդանի է տր, ճշմարտութբ, և իրաւամբ, և արդարութբ օրհնեսցին նովաւ ազգք, և նովին գովեսցին:) Գլ. 4. Թիւ. 2. Արդ երբ ոմն երդնու զսուտ, առնէ զանիրաւութիւն այ, և զանուն նորա առնու յունայն. քանզի առնէ զած վկայ ստութեան, և խաբէութեան. որ է կարի զազրալի, և անիրաւութիւն ընդդէմ այ, որում կարի յոյժ ատելի է ստախօսութիւն: Նմանապէս առնէ զանիրաւութիւն այ, և առնու զանուն նորա յունայն, որ երդնու թարց արդարութեան, պարտաւորելով զիւր ինքն երդմամբ առ 'ի գործել զչար ինչ. որ է կարի ատելի այ, որում կարի յոյժ անհաճոյ է չարագործութիւն: Նաև այն ոք առնու զանուն տն ընդունայն, որ երդնու թարց իրաւանց, և անխոհեմութբ, և ունի զսովորութիւն երդնլոյ. քանզի ոչ ունի զպարտաւոր մեծահամարումն Ածայնոյ անուան, և դնէ զիւր ինքն 'ի յորոգայթ երդնլոյ զսուտն, և զանիրաւն. քանզի այսպիսի ոք դիւրաբար արտաբերէ զսուտ, և զայն, որ է վատթար, և անիրաւ:

6. Ոչ համարի տր ած անպարտ

զայն

զայն ոք, որ առնու զանուն տն այ իւրոյ ընդունայն : Ոչ եղիցի թարց պատժոյ, որ վարի անուամբ այ իւրոյ ընդունայն • և առնու զանուն տն ունայնաբար. քանզի սուտ երդնողն 'ի յանուն տն, պղծէ զայնքան մեծ անուն նորա : Բանն յանձնապէս երդնողի զանհնարէ, և բթացուցանէ զականջս մեծն այնպիսեաց : Սովորութիւն երդնլոյ բառնալի է 'ի միջոյ • քանզի կարի երդնողն լցուցանի անիրաւութե, և ոչ հեռասցի 'ի տանէ նորա հարուածն : Եւ եթէ խաբեսցէ զեղբայր իւր, յանցանք նորա եղիցին 'ի վր իւրեան • և եթէ կեղծեսցէ, մեղանչէ կրկնապատկաբար • և եթէ երդնուցու 'ի յընդունայն, ոչ արդարասցի : Ուստի հրամայէ ածային բարբառն : ( Երդման մի ընդելասցուսցես զբերան քո • զի բազում վրիպումն է 'ի նմա : Իսկ անուանումն այ մի լիցի համապազորդենիւ երդմամբ 'ի բերանի քում, և յանուանս սրբոց մի շաղախեսցիս • զի ոչ եղիցիս անպարտ 'ի նոցանէ : ) Եկլեսի • 23 • թիւ • 9 • Եւ տրն մեր Յս Քս հրամայէ, և ասէ : ( Դարձեալ լուարուք • զի ասացաւ առաջնոցն, մի երդնուցուս սուտ • բայց հատուսցես տն զերդումն քո : Այլ ես ասեմ ձեզ ամենևին մի երդնուլ • մի յերկինս, զի աթոռ է այ : Եւ մի յերկիր, զի պատուանդան է ոտից նորա, և մի յԵմ • զի քաղաք է մեծի արքայի : Եւ մի 'ի գլուխ քո երդնուցուս, զի ոչ կարես մազ մի սպիտակ առնել, կամ թուխ : Այլ եղիցի ձեր բան այո, այո, և ոչն, ոչ • զի աւելին քան զայն 'ի չարէն է : ) Մատթէի • 5 • թիւ • 33 • Վասն այսորիկ դրէ առաքեալն Յակոբոս : (Յառաջ քան զամ ինչ եղբարք իմ • մի երդնուցուք, մի յերկինս, մի յերկիր, մի յայլ ինչ երդնուլ • այլ եղիցի ձեր, այոն, այո • և ոչն, ոչ • զի մի 'ի կեղծաւորութի ինչ անկանիցիք : ) Գլ • 5 • թիւ • 12 •

7 • Ուխտն է խոստումն արարեցեալ այ զլաւագունէ բարւոյ : Որ ուխտէ, և կատարէ զուխտ իւր, պատուէ զած • վասնզի առնէ զարժանաւոր յիշումն ածայնոյ անուան, և պահէ զհաւատարմութի : Իսկ որ ուխտէ, և ոչ կատարէ զուխտ իւր, անարգէ զած, և է անհաւատարիմ : Անարգէ զած • քանզի առնու զանուն տն այ իւրոյ ընդունայն : Ուստի մեղանչէ ընդդէմ երկրորդի պատուիրանի Այ • որպէս և նա, որ երդնու զսուտ : Է անհաւատարիմ • քանզի ոչ պահէ զարարեալ խոստումն • որպէս և նա է անհաւատարիմ, որ երդնեալ է զոպաւնեայ, և ոչ կատարէ զերդումն իւր : Ուխտողն պարտի կատարել զուխտ իւր • քանզի հրամայէ տրն : ( Բայց զսրբութիւնս քո, որք լինիցին քեզ • և զուխտան քո, զոր ուխտիցես, առեալ եկեսցես 'ի տեղին, զոր ընտրեսցէ տր ած քո իւր • կոչել զանուն իւր 'ի վերայ նորա : ) Երկրորդ օրին • 12 • թիւ • 26 • ուխտողն ոչ պարտի յապաղել կատարել զուխտ իւր : Վասնզի հրամայէ տրն բերանով Մովսէսի մարգարէի ասացողի : (Եթէ ուխտիցես ուխտ տն այ քում, մի յամեսցես հատուցանել զայն, զի պահանջելով պահանջեսցէ տր ած քո 'ի քէն • և լինիցի քեզ 'ի մեղս : Ապա թէ ոչ կամիցիս ուխտել, չլինիցին քեզ մեղք : Որ ինչ ելանէ ընդ շրթունս քո, զգոյշ լինիջիր, և արասցես որպէս ուխտեցեր այ քում, զատուրան • զոր խօսեցար բերանով քով • ) Երկրորդ օրին • 23 • թիւ • 21 • Դարձեալ ասէ բերանով նոյն մարգարէի • ( Այր ոք • այր եթէ ուխտիցէ ուխտ տն, կամ երդնուցու երդումն սահմանաւ, կամ սահմանիցէ ինչ վասն անձին իւրոյ • մի արասցէ ապախտ զբան իւր : ) Թուոց : 30 • թիւ • 3 • Ուստի ասէ սաղմոսասացն : ( Ուխտեցէք, և կատարեցէք տն այ մերոյ ամենեքեան, որք շուրջ էք զնովաւ : Մատուցէք զպատարագս ահաւորին : ) Սաղ • 75 • թիւ • 12 • Ուխտելն է հաւատարմաբար, զի հաճոյասցուք այ : Ուստի ասի 'ի յեկլեսիաստիկեայ : ( Որպէս ուխտես զուխտ քո

այ՟ . մի յամեր հատուցանել զայն . վասնզի ոչ են կամք յանդգամն . արդ դու զոր ուխտեսն հատո ։ ) ԳԸ. 5. Թիւ. 3.

8. Սրբապղծութիւն է ապականումն սրբոյ իրի ։ Որ առնէ զսրբապղծութիւն, անարգէ զա՟ծ . քանզի որպէս որ պատուէ զիւրս սրբազանս, պատուէ զա՟ծ . այսպէս որ ապականէ զսրբազանս իւրս, անարգէ ։ Քանզի երբ անգոսնի սրբազան իրն, որ է պատուելի վասն այ՟, լինի անարգումն այ՟ ։ Եռապատիկ սրբապղծութիւն նկատիլ կարէ, այսինքն . անձնաւոր, իրական, և տեղական ։ Անձնաւոր սրբապղծութիւն յայնժամ գործի, յորժամ ապականի սրբազան անձն, որպիսի է քահանայն, կամ կրօնաւորն, և կրօնաւորուհին ։ Քանզի քահանայն է սրբազնագործեցեալ, և կրօնաւորն է նուիրեցեալ այ՟, նմանապէս և կրօնաւորուհին նուիրեցեալ է այ՟ ։ Ուստի որ ապականէ զքահանայն, կամ զկրօնաւորն, կամ թէ զկրօնաւորուհին նուիրեցեալն այ՟, առնէ զանիրաւութիւն այ՟, և գործէ զսրբապղծութիւն ։ Նմանապէս պոռընկութիւն քահանայի, կամ կրօնաւորի, և կրօնաւորուհւոյ է անձնաւորական սրբապղծութիւն . քանզի ապականի սրբազան անձն ։ Իսկ իրական սրբապղծութիւն գործի, յորժամ ապականի սրբազան իր, զորօրինակ, սրբազանք զգեստք, կամ սրբազանք անօթք ապականին ։ Ուստի որք գողանան զսրբազանս զգեստս, կամ զանօթս, կամ վաճառեն զնոսա, կամ վարին նոքօք 'ի բծաւորս արարողութիւնս, առնեն զանիրաւութիւն այ՟, և գործեն զիրական սրբապղծութիւն . քանզի ապականեն զսրբազանս իւրս, և զիւրս այ՟ նուիրեցեալս ։ Իսկ տեղական սրբապղծութիւն գործի, յորժամ ապականի սբ՟ տեղին, և այ՟ նուիրեցեալն, զորօրինակ, եկեղեցիք, և սրբազնագործեցեալք տաճարք ապականին ։ Ուստի որք 'ի յեկեղեցիս հեղուն զմարդկային արիւն, և գործեն զմարդասպանութիւն, կամ գործեն զպոռընկութիւն . կամ զշնութիւն, կամ գործեն զայլս պիղծս, և անվայելուչս արարողութիւնս, առնեն զանիրաւութիւն այ՟, և գործեն զտեղական սրբապղծութիւն . քանզի ապականեն զսրբազան տեղին ։

## ԳԼՈՒԽ ԾԴ.

### Յաղագս երրորդի պատուիրանի ՆՃ ։

1. Երրորդ պատուիրանն այ՟ է այս ։ Յիշեա՛ զի պահիցես զօր շաբաթու ։ Յայսմիկ պատուիրանի երկու իրք բացադրին, այսինքն, բացորոշումն աւուր, և պահումն, որ է պաշտումն այ՟ ։ Բացորոշումն աւուր շաբաթու է իմն մարդավարական արարողութիւն ։ Ուստի 'ի զօրութենէ այսր պատուիրանի ոչ պարաւանդէ զքրիստոնեայս, որք ոչ պարտաւորին պահել զմարդավարականս արարողութիւնս հնոյ կտակարանի . քանզի 'ի պահպանմանէ այսպիսեաց ազատեցեալք եմք գալստեամբ քի՟, որոյ զգալուստն նշանակէին այնպիսիք արարողութիւնք ։ Իսկ պահումն, և պատուումն այ՟ յումեք աւուր է իր ինչ բնական, և բարոյական, ուստի պարաւանդէ զմեզ . որք առ բնականն, և առ բարոյականն պատկանօղն առ կրօնն, որ է մասն արդարութեան, վերահայօղ առ պարտաւորութիւն, զոր ունիմք առ ա՟ծ, պարաւանդիմք ։ Բացորոշումն աւուր վասն մեր քրիստոնէից, յորում պատուիցեմք զա՟ծ ըստ պատուիրանի, արարեցեալ է 'ի ձեռն եկեղեցւոյ հարսին քի՟, որում հնազանդիլ պարաւանդիմք ։ Եւ բացորոշեցեալ է օրն կիւրակէի, յորում յարեաւ քս՟ 'ի մեռելոց, և հոգին սբ՟ էջ 'ի վերայ առաքելոց, և ելից զնո՟ պարգևօք իւրովք ։ Բա‿

ցորո‿

ցորոշեցեալք են, և այլք աւուրք 'ի տարւոջ, զորս պարաւանդիմք պահել ընդ պատուիրանի, և 'ի յայնոսիկ պաշտել զԱծ : Վայելչագունեղապէս սբ եկեղեցին բացորոշեաց մեզ զայսոսիկ աւուրս · քանզի են աւուրք, որք երևեցուցանեն մեզ զխորհուրդս զարմանալիս, աւետման, ծննդեան, Յարութեան, համբարձման, գալստեան հոգւոյն սբոյ, և փառաւորութեան սբոց :

2. Բազումք են բանք, որք գովասանեն զբացորոշումն աւուրց, յորս պարաւանդիմք ընդ պատուիրանի պաշտել, և պատուել զԱծ : Է բան 'ի կողմանէ այ : Քանզի գերազանցութիւն այ պահանջէ, զի բացորոշիցի ժամանակն, յորում ստեղծուածն ընդունակն ճանաչման ասացելոյ գերազանցութեան, խոկայցէ, և պատուիցէ զնա : Ժամանակն են աւուրք, զորս բացորոշեաց եկեղեցին · ուրեմն վայելչագունեղապէս բացորոշեաց : Է բան 'ի կողմանէ խորհրդոց վն մեր անօրինեցելոց, զորօրինակ, աւետման, ծննդեան, թլփատութեան, տնընդառաջի, Յայտնութեան, Մկրտութեան, Յարութեան, համբարձման, գալստեան հոգւոյն սբոյ · երրորդութեան, մարմնոյ և արեանն քի, գիւտոյ սբոյ խաչին, Յղացման, ծննդեան, և վերափոխման Մարիամայ կուսին, և ծննդեան Յոհաննու Մկրտչին : Քանզի խորհուրդք վն մեր անօրինեցեալք, պահանջեն զբացորոշեալ ժամանակ, յորում զնոսա խոկայցեմք, և զպարտաւորս շնորհակալութիւնս այ մատուցանիցեմք · բացոցոշեցեալ ժամանակն են աւուրք, զորս բացորոշէ եկեղեցին · ուրեմն վայելչագունեղապէս բացորոշեաց զնոսա : Է բան 'ի կողմանէ առաքելոց և գերազանցից սբոց, զորօրինակ ստեփաննոսի, լօրենցիոսի, և անմեղ մանկանց վասն քի սպանանեցելոց : Քանզի առաքեալք, որք զմեզ լուսաւորեցին, և գերազանցք սբք, որք տուեալք են մեզ զազնիւս օրինակս առաքինութեց, արժանաւորք են, զի բացորոշիցի ժամանակ, յորում առ հոգևոր օգուտ մեր, մտածիցեմք զզարմանալիս առաքինութիւն լցեալս արարողութիւնս նոցա, և զփառս, առ որս հասեալք են : Բացորոշեցեալ ժամանակ են աւուրք, զորս բացորոշեաց եկեղեցին : Ուրեմն վայելչագունեղապէս բացորոշեաց զնոսա :

3. Է բան նաև 'ի կողմանէ մեր : Քանզի մեք ոչ միայն ունիմք զմարմին · այլ ևս ունիմք զհոգի պատուականագունեղ, անմահ, հոգևոր, ընդունակ շնորհի, առաքինութեց, և երանութեան, և անհամեմատաբար լաւագոյն քան զմարմին : Ունիմք զբազումս աւուրս, յորս պարապիմք հոգունակութեան մարմնոյ մերոյ, գործելով զծառայականս արարողութիւնս, հարկաւորս վասն ժամանակաւորի փրկութեան մերոյ : Ուրեմն եղև վայելչագունեղ, զի հոգաբարձագունեղ հոգևոր մայր մեր, սուրբ մայր եկեղեցին, սիրելագունեղ հոգևոր հարսն քրիստոսի, ունեցողն զամենամեծ նախանձաւորութի ածայնոյ պատուոյ, և զմեծամեծ փափագ փրկութեան հոգւոյ մերոյ, զոր միածին որդին այ Յս Քս պատուականագունեղիւ արեամբ իւրով փրկեաց, վասն փրկութեան մերոյ պատարագեալ հօր այ 'ի վերայ սեղանոյ խաչին · բացորոշիցէր մեզ զամանս աւուրս, յորս բացաթողեալք զծառայականս գործս · վերախնդրեցեալս առ հոգաբարձութի մարմնոյ մերոյ, և զայլս գործս, զհոգունակութի հոգւոյ մերոյ արգելօղս, պարապիցէաք խնամածութեան փրկութեան հոգւոց մերոց, և գործոց հոգևորաց, պատկանողաց փրկութեան հոգւոյ մերոյ, պարապելով ածոյնոյ պաշտօնի, խոկալով զբարձրագունեղս խորհուրդս, զբանն ածային, զհոգևոր կերակուրն հոգւոց մերոց, լսելով, քննեալք զխղճմտանս մերս խոստովանելով զմեղս մերս, և պարտաւորապէս, և ճշմարտապէս վասն մե-

ղաց մերոց ապաշխարելով, զբա_
զումս աղօթս առ Ա՟յ մերոյ մատու_
ցանելով, զպատարագս լսելով,
զսրբազան հաղորդութի ընդունե_
լով, և 'ի ձեռն բարեգործութեց
'ի յերկինս գանձելով։

4 Ս՟բ մայր եկեղեցին, որ
հոգաբարձաբար խնդրէ զպատիւ
Ա՟յ, և սիրելագունեղի փեսայի
իւրոյ Ք՟ի, և մտադրագունեղաղէս
դիտէ զփրկութի մարդկանց, վասն
որոյ փեսայն իւր Յ՟ս Ք՟ս խաչե_
ցաւ, և շրջելով 'ի վերայ երկրի
կարի աշխատեցաւ, փչմամբ, և
ներաշնչմամբ հոգւոյն Ս՟բոյ շարժե_
ցեալ, հրամայեաց, զի 'ի յաւուրս
տ՟օնայնոյ պաշտօնի, և պատուոյ
Ա՟յ նախակարգեցեալս, և բացա_
բուլեցեալս, զորս ենթ պատուի_
րանի պարաւանդիմք պահել, հեռա_
ցուցանիցէաք զմեզ 'ի ծառայակա_
նաց գործոց, և յայնց, որք ար_
գելուն զհոգևորս գործս նախակար_
գեցեալս առ տ՟օնային պաշտօն, և
ջերմեռանդաբար, և մտադրաբար
լսիցէաք զՍ՟բ պատարագն. հրա_
մայեաց, զի քահանայք զհոգաբար_
ձութի հոգւոց ունեցօղք, մատու_
ցանիցէին զՍ՟բ պատարագն, և քրիս_
տոնեայք, բանականութե հասա_
նօղք, այնքան արք, որքան կանայք,
ենթ պարտաւորութե մահուչափ
մեղաց, զՍ՟բ պատարագն լսիցէին։
Եւ հրամայեաց, զի քահանայք,
զհոգ հոգւոյ ունեցօղք, զքրիստո_
նէական վարդապետութին, հար_
կաւորն առ փրկութի իւրաքանչիւ_
րոց, ինքեամբք, կամ 'ի ձեռն
այլոց պաշտօնէութե անձինց, ողղայոց,
և աղջկունց ենթարկեցելոց իւրոց,
հոգաբարձութե իւրոյ յանձնեցե_
լոց, ուսուցանիցէին. և հրամայ_
եաց, զի հարք, և մարք, զորդիս,
և զաղջկունս իւրս ուսուցիցէին
առ 'ի յուսանիլ զքրիստոնէականն
վարդապետութի. Եւ հրամայեաց,
զի եպիսկոպոսք, 'ի նահանգոջ իւր_
ում ինքեամբք, կամ 'ի ձեռն այլոց
պաշտօնէից, զԱ՟ծային բանն,
որ է կերակուր հոգւոյ, կենդանի
բան Ա՟յ, և արարչագործ, և Թա_
փանցելագոյն քան զամ սուր երկ_
սայրի, և հասանօղ մինչև առ բա_
ժանումն շնչոյ, և ոգւոյ, նա և
առ յօդուածս, և առ ծուծս ոս_
կերաց, քննիչ մտածմանց, և դի_
տաւորութեց սրտի, քարոզիցէին։

5. Ս՟բ մայր եկեղեցին իմաստա_
նագունեղաղէս, խոհեմագունեղա_
բար, և օգտակարագունեղաբար ներ
շնչմամբ հոգւոյն Ս՟բոյ հրամայեաց,
զի յաւուրս, յորս ենթ պատուիրա_
նի պարաւանդիմք պահել, հեռա_
նայցէաք 'ի ծառայականաց գոր_
ծոց. քանզի պարապիլ այսոցիկ հո_
գաբարձութբ, և պարապիլ գոր_
ծոց առ տ՟օնայնոյ պաշտօնի, և փրկու_
թե հոգւոց մերոց, ուշադրաբար,
և որպէս պիտոյ է, ոչ կարեմք։
Ուստի պարտիմք բացաթողուլ զաշ_
խարհայինս գործս, և զաշխարհայ_
ինս զբաղմունս, զի վայելչաբար,
և որպէս պիտոյ է, և մտադրա_
բար և պարտաւորապէս, և թարց
զբաղման աշխարհայնոց լիայց զմեզ
ցնորողաց, կարիցեմք կատարել, և
գործել զգործս պատկանօղս առ
տ՟օնային պաշտօնումն, առ փրկութի
հոգւոց մերոց, և առ հոգևոր ա_
ռաջացումն մեր։ Աստի երևի ունայ_
նութի նոցա, որք 'ի յաւուրս,
յորս պարաւանդին ենթ պատուի_
րանի պահել, բոլորովին տան զի_
րեանս ինքեանս խաղի, և մարմնա_
ւորի զբօսանի։ Ս՟բ են կոյրք, և
ոչ ճանաչեն զբարեպաշտագունեղ,
և զամենաՍ՟բ դիտաւորութին Ս՟բոյ
մօր եկեղեցւոյ, արգելողի զգործս
ծառայականս։ Քանզի ոչ արգելու
զնոսա, զի մարդիկք պարապիցին
խաղի, և ունայնութե. այլ զի
պարապիցին տ՟օնայնոյ պաշտօնի, և
փրկութե հոգւոց իւրոց։ Արդ
այնոքիկ մարդիկք, որք յասացեալս
աւուրս հեռանան 'ի ծառայականաց
գործոց, զի պարապիցին որկրամո_
լութեան, արբեցողութեան,
և բղջախոհութեան, են յի_
մարք. վասնզի հեռանան 'ի գոր_
ծոց, որք ըստ ինքեանց ոչ են մե_
ղանչականք, և պարապին գործոց
մեղանչականաց։ Իսկ որք յայտնի

աւուրս

աւուրս գնան 'ի յեկեղեցին, զի անդ մեղանչիցեն ընդդէմ ողջախոհութեան, պարկեշտութեան, և պատուոյ Այ, են յիմարագունեղք. քանզի անդ վշտացուցանեն զԱծային մեծվայելչութիւն, ուր պարտէին պատուել զնա, և անդ կորուսանեն զհոգիս իւրս, ուր պարտէին փրկել զնոսա:

6. Պատուիրանն մեկնութեան քրիստոնէականի վարդապետութեան 'ի յաւուրս, զորս պարտիմք պահել ըստ պատուիրանի, պարաւանդէ զքահանայս զհոգաբարձուն հոգւոց ունեցօղս, զի ուսուցանիցեն. զծնօղս մանկանց, և զտերաց, զի յղիցեն, եթէ ոչ կարեն այլապէս ուսուցանել մանկանց, և զտերաց իւրոց զիրս հարկաւորս առ փրկութիւն. և զինքեանս մանկունս, և զծառայս հասարակօղս բանաւորութեան, և ոչ գիտօղս զիրս հարկաւորս առ փրկութիւն, զի գնայցեն առ 'ի յուսանիլ զքրիստոնէական վարդապետութիւն: Քահանայք զհոգաբարձութիւն հոգւոց ունեցօղք պարտաւանդին. քանզի պատկանի պաշտօնի նոցա հմտացուցանել զժողովս 'ի յիրս հարկաւորս առ փրկութիւն: Վասնզի ունեցօղք զհոգաբարձութիւն հոգւոց, պարտաւանդին պարտածկիլ փրկութեան իւրայնոց, հոգաբարձութեանց իւրոց յանձնեցելոց: Հմտացուցումն 'ի յիրս հարկաւորս է հարկաւոր առ փրկութիւն: Որպէս ունեցօղք զհոգաբարձութիւն հոգւոց պարտաւորին պարտաւիլ հմտացուցանն 'ի հարկաւորս իւր: Պարտաւանդին նաև ծնօղք, վասնզի ոչ միայն պարտաւորք են ունիլ զխնամածութիւն մարմնաւորի կենաց որդւոց, և ծառայից իւրոց, այլ կարի առաւել պարտաւանդին ունիլ զհոգաբարձութիւն հոգևորի կենի, և փրկութեան իւրայնոցն: Հմտացուցումն իւրայնոցն 'ի հարկաւորս իրս պատկանի հոգաբարձութեան հոգևորի կենի, և փրկութեան իւրայնոցն: Այսպէս ծնօղք պարտաւանդին ուսուցանել հարկաւորաց իրաց առ փրկութիւն: Եւ այսպէս եթէ ոչ կարիցեն այլապէս հմտացուցանել, պարաւանդին յղել, զի ուսանիցին զիրս հարկաւորս առ փրկութիւն: Նաև ինքեանք ուստերք, և ծառայք հասարակօղք բանաւորութեան, որք ոչ գիտեն զիրս հարկաւորս առ փրկութիւն, Պարտաւանդին գնալ 'ի յեկեղեցին, զի ուսանիցին զքրիստոնէական վարդապետութիւն. վասնզի Պարտաւանդին ունիլ զհոգաբարձութիւն փրկութեան հոգւոց իւրոց:

7. Եղխկողոպք 'ի յաւուրս, զորս պարտաւանդիմք պահել ըստ Պատուիրանի, 'ի յեկեղեցիս իւրս ինքեանմբք, կամ 'ի ձեռն այլոց, որք են յարմարք Պաշտօնի քարոզութեան. իսկ 'ի յայլս եկեղեցիս 'ի քաղաքի, կամ յորումումեք մասին նահանգոջ, 'ի ձեռն ժողովրդապետաց, կամ 'ի ձեռն այլոց, ըմբռնաց Պաշտօնի քարոզութեան. Պարաւանդին աւետաբերել զսբ գիրս, և զԱծային օրէնն, քարոզել զԱծային բարբառն, և Աստուածային բանի զհոգևոր կերակուրն, քրիստոնէի ժողովրդեան, հոգաբարձութեան իւրոյ յանձնեցելոյ, տալ, քանզի են աջորդք առաքելոց, որոց ասացեալ է: (Գնացէք այսուհետև. աշակերտեցէք զամս հեթանոսս, մկրտեցէք զնոսա Յանուն Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն Սբոյ. ուսուցէք նոցա պահել զամ, զոր ինչ Պատուիրեցի ձեզ:) Մատթէի: 28. Թիւ. 19. Են աջորդք նոցա, զորոց ասացեալ 'ի յաւետարանոջ այսպէս: (Եւ նոքա ելեալ քարոզէին ընդ ամ երկիր, տն գործակցութբ. և զբանն հաստատէին ամ նշանօք, որք ընթացային զհետ նոցա:) Մար. 16. Թիւ. 20. Եղխկողոպք են, որք պարտին քարոզել զբանն, լինիլ վերակացու 'ի դէպ ժամանակի, առանց յանդիմանել, աղաչել, և խրատել ամբ համբերութբ, և վարդապետութբ: Եղխկողոպք են, որք պարտին հսկել, յամենայն իրի աշխատել, առնել զգործ աւետարանչի, և կատարել զպաշտօն իւր: Եղխկողոպք են 'ի տեղի Քի: Քս քարոզէր:

րողէր ։ Ուրեմն և եպիսկոպոսք պարաւանդին քարոզել ։ Եպիսկոպոսք ոչ միայն յառաջեալս յաւուրս, զորս ենթ պատուիրի պարտիմք պահել, ասացելով կերպիւ պարաւանդին քարոզել, այսինքն, ինքեամբք, կամ 'ի ձեռն այլոց պաշտօնի քարոզութե՟ ըմբռնաց․ այլ նաև 'ի ժամանակի ծոմպահոց քառասնորդաց պահոց, և գալստեան ան՟ն օր ըստ օրէ, կամ գոնեայ յերիս աւուրս 'ի շաբաթոջ, եթէ այսպէս պիտոյանալ համարիցին ։

8. Իմաստնագունեղաբար սբ մայր եկեղեցին հրամայէ քրիստոնէից, զի յաւուրս, զորս ենթ պատուիրանի պարաւանդիմք պահել, լսիցեմք զՊատարագ, քանզի լսողքս զՊատարագ կարեմք ելուզանել զհամայնս ներգործութիս ածայնոյ պաշտօնի, և երկրպագութե, այսինքն, հաւատոյ, յուսոյ, սիրոյ, երկիւղի, խոնարհութե, հնազանդութե, աղօթից, և մատուցման ։ Վասնզի ելուզանեմք զներգործութի հաւատոյ, մինչ ասեմք զդաւանութի հաւատոյ, և խոկամք զխորհուրդս սբ Պատարագաւ ներկայացուցեալս ։ Ելուզանեմք զներգործութի յուսոյ, մինչ ցանկամք նմա, զոր հաւատամք իրականապէս լինիլ, և գոլ թաքուցեալ ենթ տեսակաց հաղորդութե, տեսանել 'ի յերկինս հայեցողականապէս տեսակաւ իւրով ։ Ելուզանեմք զներգործութի սիրոյ, բորբոքեցելոյ սիրելութե, և վառեցելոյ ըղձաւորութե, մինչ սիրեմք զՅս Քս, որ շարժեցեալ 'ի սիրոյ, կացոյց զայս խորհուրդս սիրոյ, և սիրելութե։ Ելուզանեմք զներգործութի երկիւղի, մինչ հաւատամք գոլ ներկայ զզարհուրելի դատաւորն ընդհանրոց ։ Ելուզանեմք զներգործութի խոնարհութե, մինչ տեսանեմք զմեզ կալ առաջի ծայրագունեղի մեծվայելչութե, առաջի գերազանցագունեղի թագաւորի ամից թագաւորաց, և առաջի կայսեր երկնի, և երկրի ։ Ելուզանեմք զներգործութի հնազանդութե, մինչ լսեմք զաւետարանն, և զխրատ մեր, և զկամս մեր ենթարկեմք պատուիրանաց ան՟, աւետարանաւ խրատ ընդ մեզ խօսողի ; և զպատուիրանս մեզ առաջադրողի ։ Ելուզանեմք զներգործութի աղօթից, մինչ մտադրաբար, և ջերմեռանդաբար ընդ Պատարագողի ասեմք զՀայր մեր ։ որ յերկինս ես ։ Վերջապէս ելուզանեմք զներգործութի մատուցման, մինչ զՅս Քս զանարիւն Պատարագն, վասն մեր 'ի սեղանոջ խաչին հօր այ զենեցեալն, ընդ Պատարագողի նոյնոյ հօր այ մատուցանեմք ։

## ԳԼՈՒԽ։ ԾԵ.

### Յաղագս չորրորդի Պատուիրանի այ ։

1. ՉՈրրորդ պատուիրանն այ է այս։ Պատուեա զհայր քո, և զմայր քո ։ Իմաստնագունեղն ած, կարգաւորագունեղապէս դասեալ զպատուիրանս օրինաց, յետ պատուիրանաց, որք վերահային առ ինքն ած, առ ստեղծօղն, և կերտիչն ամից ; վասնզի յորմէ կախեալ կան համայնք իւք, դնէ զպատուիրան վերահայօղ առ ծնօղս, որք են սկզբունք մեր, և յորոց վերընդունիմք զգոլ 'ի ձեռն ծննդեան ։ Իմաստնագունեղ կարգ ։ Քանզի նախ են պատուիրանք վերահայօղք առ նա, յորմէ և մեք ; և ծնօղք մեր եմք 'ի ձեռն ստեղծման, և որոյ պարտիմք երկրպագել այնքան մեք, որքան ծնօղք մեր, և պաշտել զնա պաշտօնիւ ածպաշտութե ․ յետոյ անընդմիջապէս է պատուիրանն․ վերահայօղ առ այսոսիկ, յորոց եմք 'ի ձեռն ծննդեան ։ Եւ քանզի ծնօղք մեր են սկզբունք մերք 'ի ձեռն ծննդեան,

դեան, ունին 'ի վերայ մեր զվերակացութի: Ուստի արժանիք են, զի պատուիցեմք զնոսա: Վասն այսորիկ ած հրամայէ մեզ, զի պատուիցեմք զնոսա: Ած է արդարատունեղ, և է նոյն ինքն արդարութի՛ն: Ուստի հրամայէ զիրս արդարս: Է իր արդար, զի ստորնադոյնն պատուիցէ զվերնադոյնն իւր: Ծնօղք, որք են սկզբունք մեր. և յորոց եմք 'ի ձեռն ծննդեան, են վերնադոյնք. մեք, որք յայնց իբրև 'ի սկզբանց մերոց կախեալք կամք, եմք ստորնադոյնք: Ուստի արժան է, զի զծնօղս մերս պատուիցեմք, և գերյարգիցեմք, և նոցա ծառայիցեմք: Եւ այսպէս ած հրամայեաց մեզ, որ է արդար:

2. Զօրութբ այսր չորրորդի պատուիրանի Պարաւանդի մարդն առ չորս իրս, այսինքն, առ մասնաւոր սէր ծնողաց, առ պատիւնց, առ հնազանդութի, և առ ապրեցուցումն, եթէ կարօտանայցեն: Պարաւանդի առ մասնաւոր սէր ծնողաց. քանզի պաշտօնն երախտաճանաչի զայս պահանջէ: Մարդն 'ի ծնողաց իւրոց կալեալ է զգոլ իւր 'ի ձեռն ծննդեան, կալեալ է զսնուցումն, կալեալ է զդարմանումն, կալեալ է զկրթումն, և կալեալ է զմասնաւոր սէր: Ուստի բազմօք մեծօք բարերարութբք ընդունեցելովք պարտաւորեցեալ է: Ուրեմն մասնաւորաւ սիրով պարտի համապատասխանել այնքան մեծաց բարերաց իւրոց, զի վճարիցէ զպարտ երախտաճանաչի: Քանզի բարերարութիւք հանդերձ սիրով, և սիրելութբ արարեցեալք, պահանջեն զսէր յայնմանէ, որ ընկալեալ է զասացեալս բարերարութիւնս: Աստի յայտ է զայն մարդն գոլ այլանդակ, և կարի ապերախտ, որ փոխանակ սիրոյ, և սիրելութե հատուցանէ զատելութի ծնողաց իւրոց: Պարաւանդի որդին, և վասն նոյն պատճառի դուստրն, առ Պատիւ ծնողաց: Քանզի մարդն պարաւանդի ճանաչել զծնօղս, և զհայր և զմայր իւր զսկզբունս իւրս, և զիւր ինքն որքան առ գոլ իւր կախեալ յայնց. Պարաւանդի ճանաչել զծնօղս իւրս գոլ վերնադոյնս, և զիւր ինքն ստորնադոյն կարգաւ բնութե, և ծննդեան. և Պարաւանդի ցուցանել զնշան այնպիսւոյ ճանաչման: Առնելն զայս, որ ասացեալ է, է պատուել, և գերյարգել զծնօղս: Ուրեմն Պարաւանդին առ այս: Ուստի է այլանդակ, և անիծեալ, և այր կարի ապերախտ, որ փոխանակ պատուոյ, և յարգելութե հատուցանէ զանարգան ծնողաց իւրոց:

3. Մարդն պարաւանդի հնազանդիլ ծնողաց իւրոց յայնոսիկ իրս, որք Պատկանին առ կառավարումն ծնողաց: Քանզի ծնօղքն 'ի տան են կառավարօղք, և մատակարարիչք, և են տեարք, և վերնադոյնք, և նոցա Պատկանի ունիլ զհոգաբարձութի որդւոց, բարեաւ, և պարտաւորաւ աղնուաբարոյութբ կրթել զորդիս, և զդստերս, հմտացուցանել զնս յայնոսիկ իրս, որք պատկանին առ փրկութի հոգւոյ, առ բարիս բարս, առ առաքինութիս, առ բարիս, և ուղիղս արարողութիս, և առ դարմանումն ժամանակաւորի կենի, և ուսուցանել նոցա զերկիւղն այ, և զպատուիրանս ամենաբարձրելոյ, և զայնոսիկ իրս, որք պատկանին բարեաց հոգւոյ, և մարմնոյ որդւոց, և դստերաց. քանզի ծնօղք Պարաւանդին ունիլ զհոգաբարձութի ամից իրաց, այնքան հոգևորաց, որքան մարմնաւորաց բարեաց որդւոց, և դստերաց իւրոց. դստերք, և որդիք ենթարկեցեալք են ծնողաց իրաւամբ բնականաւ. և ոք են, որք պարտին կառավարիլ, նախախնամիլ, և բարեաւ աղնուաբարոյութբ կրթիլ 'ի ծնողաց, և հմտանալ յայնց 'ի յիրս հարկաւորս առ փրկութի իւրեանց, և վասն խաղաղութե տան. իսկ առ ասացեալս խնդրի հնազանդութի: Ուրեմն որդիք, և դստերք Պարաւան‿

անդին հնազանդիլ ծնողաց · յայնոսիկ իրս , որք պատկանին կառավարութե՟ ծնողաց : Դարձեալ պատկանի ծնողաց իբրև մեծաւորաց 'ի տան հրամայել 'ի յայնոսիկ իրս , որք պատկանին կառավարման տան · ուրեմն որդւոց , և ծառայից իբր փոքրաւորաց պատկանի հնազանդիլ ծնողաց , 'ի յայնոսիկ իրս , որք պատկանին կառավարման տան : Անհնազանդք ընդ անհնազանդութե՟ մեղանչեն : Վերջապէս պարաւանդի մարդն օգնել ծնողաց չքաւորաց : Քանզի պատոն երախտաճանաչի պահանջէ 'ի մարդոյ , զի կերակրիցէ զայնոսիկ , յորոց ընկալեալ է զանուանցումն , և զկեանս : Կարի յոյժ մեծ է պարտաւորութիւն իրաւամբք բնութե՟ դարմանելոյ զծնողս , որք ետուն զկեանս : Ուստի կարի յոյժ մեղադրելիք են այնոքիկ , որք ոչ օգնեն ծնողաց չքաւորաց :

4. Նաև ծնողք ունին զբազում Պարտականութիւս դէպ 'ի զաւակս իւրս · և դէպ 'ի յարիւնակիցս , այսինքն դէպ 'ի յորդիս , և դէպ 'ի դստերս իւրեանց : Քանզի պարտականք են սիրել զնոսա , դարմանել , բարեաւ ազնուաբարոյութբ՟ կրթել , հմտացուցանել , հոգալ , խրատել , գանձել վասն ն՟ց , և տալ ն՟ց օրինակս բարեաց գործոց : Պարաւանդին սիրել · վ՟ն զի իբր թէ են նոյնք ինքեանք 'ի յայնոսիկ : Ուստի որպէս պարտին մասնաւորաւ սիրով սիրել զիւրեանս ինքեանս · այսպէս և զնոսա մասնաւորաւ սիրով սիրել Պարաւանդին : Դարձեալ · են բնականք հեղինակք նոցա , և նոքա են բնական գործ ն՟ց : Ա՟մ հեղինակ սիրէ զգործ իւր : Ուրեմն ծնողք մասնաւորաւ սիրով սիրել Պարաւանդին զորդիս , և զդստերս իւրեանց · Պարաւանդին դարմանել · վասնզի ծնօղքն են իբրև զծառ , որդիք , և դստերք իբրև զպտուղս · ծառն խնամէ զպտուղս իւրս : Ապա ուրեմն նաև ծնօղք Պարտին խնամել զորդիս , և զդստերս իւրեանց : Պարաւանդին բարեաւ ազնուաբարոյութբ՟ կրթել · քանզի այնպէս կրթել Պարտին զնոսա , զի լինիցին բարիք : Լինին բարիք բարեաւ կրթութբ՟ : Ապաուրեմն պարաւանդին կրթել բարեաւ ազնուաբարոյութբ՟ : Պարաւանդին հմտացուցանել · քանզի Պարաւանդին ուսուցանել նոցա զերկիւղն ա՟յ , և եկեղեցւոյ , և զա՟մս իւս , որք հարկաւորք են առ փրկութի՟ նոցա : Պարաւանդին ունիլ զուշադիր հոգաբարձութի՟ , այնքան որքան առ հոգևորս բարիս , և նաև որքան առ մարմնաւորս բարիս ն՟ց · վասնզի թարց ուշադրադրոյ հոգաբարձութե՟ ծնողաց լինին ողորմելիք որքան առ ա՟մս բարիս : Պարաւանդին խրատել , զի մի լինիցին անզգամք : Պարաւանդին գանձել վ՟ն ն՟ց , զի կարիցեն գտանել զբաւականութի՟ , զի մի վ՟ն պակասութե՟ անբաւականութե՟ , կորուսանիցեն զերկիւղն ա՟յ , մանաւանդ դստերք : Պարաւանդին տալ նոցա զօրինակս բարեաց գործոց , զի մի վասն վատթարագործութեց նոցա , կրիցեն զվնաս հոգւոյ :

5. Արդարև սիրելիք են ծնօղք , բայց այնպէս , զի միշտ նախադասիցի ստեղծօղն : Եթէ ճանաչիցես զընկերս զաւակի քոյ կարօտիլ ընչից , մի անարգեր զնոսա , այլ փութասցիր օգնել նոցա , և հասանիլ 'ի թիկունս նոցա · սակայն ոչ այնպէս , զի առնիցես զնոսա փարթամադոյնս , և մոռանայցես զաղքատս · այլ այնպէս , զի օգնելով նոցա , որ՟ Պիտոյ է , նաև զմտաւ ածիցես զաղքատս : և զչքաւորս : Առաջին ստիճանն բարեպաշտութե՟ է այս , զի զորս կամեցաւ ա՟ծ տալ հեղինակս քոյ , Պատուիցես հնազանդութբ՟ , հեռանայցես 'ի զրպարտանաց · ոչ ևս վիրաւորելի է բարեպաշտութի՟ ծնողաց դիմադառնութբ՟ , քանզի արժանաւորի կրել զպատիժ կուրութե՟ իւրոյ , որ զծնօղ անարգիցէ դառնադիմութբ՟ , և դառնահայեցութեամբ վերաւորիցէ զբարեպաշտութին : Արդ եթէ իցէ հարկաւորութի՟ , զի սէրն ծնողաց ,

կամ

կամ որդւոց համեմատեցի սիրոյ այ, և ոչ կարիցէ պահել երկաքանչիւրն, տուեալք են արենակիցքն, և պահելի է սէրն այ։ Արդարև սիրեսցուք, որք մեզ զուգակիցք են ազգականութբ. սակայն այնպէս, զի զորս ճանաչեմք զընկերս, սիրիցեմք, իսկ զորս տեսանեմք գոլ ներհակս 'ի ճանապարհի այ, ատելով զնոսա, և փախչելով 'ի նոցանէ, ոչ ճանաչիցեմք։ Արդարև Յորքան ժամանակ եմք յայսմ յաշխարհէս, յայտ է զմեզ գոլ պարտաւորս ծնողաց, բայց յետ որոյ թողումք զմեզ ինքեանս, ազատք եմք 'ի հոգաբարձութէ նոցա. սակայն այնպէս, զի հոգալի լիցէ ապրուստն նոցա, որք գտանին 'ի չքաւորութե, և 'ի կարօտութե; Քանզի պաշտօնն երախտաճանաչութե Պահանջէ, զի ամե կարելեաւ կերպիւ ջանասցուք զապրուստն նոցա, յորոց ընկալեալք եմք զկեանս, և զսնուցումն, և որք արարին մեզ զմեծ բարերարութի։

6. Ոչ է օրէն պարզապէս ատել զծնօղս. այլ եթէ կամիցին սիրել առաւել քան զպարտն, յայսմիկ ատեսցին։ Մինչ շատացեալք են յարմարաւ սիրով, սիրելիք են մինչև 'ի վերջին շունչն։ Քանզի Քս, որ ասաց մօրն, մայր ահա որդին քո, ուսուցանէ մեզ պարտիլ ունիլ զսէր ծնողաց մինչև առ վերջին շունչն. վնզի քանզի այլոց կանանց առկացողաց զոչ ինչ ասաց, ուսուցանէ մեզ առաւել ունիլ զպարտկանու ինչ ծնողաց։ Ասէ Պետրոս Ռավէննացին։ (Արտախսեա յարեգականէ զշառաւիղս, և ոչ տայ զլոյս. զառուն յաղբերէ, և ցամաքի. զտերևն 'ի ծառոյ, և չորանայ. զանդամն 'ի մարմնոյ, և նեխի. բաժանեա զորդին 'ի հայրականէ սիրոյ, նաև ոչ է որդի, այլ եղբայր, և ընկեր այնոցիկ, զորոց ասի. դուք 'ի հօրէ սատանայէ էք։ ) Ցումեք սասցուածով։ Գրէ մեծամեծն վալերիոս։ (Տեչիոս կայսրն մինչ առաջադրեաց մեծացուցանել զտեչիոս որդին իւր կայսերականաւ թագիւ, ոչ հաճեցաւ որդին, և ասաց. Երկնչիմ, զի մի, եթէ լինիցիմ կայսր. մոռանայցեմ գոլ որդի։ Առաւել կամիմ ոչ գոլ կայսր, այլ խոնարհ որդի, քան գոլ կայսր, և որդի թարց սիրոյ։ Հրամայեսցէ հայրն իմ. կայսերութի իմ լիցի, հնազանդիլն խոնարհաբար հրամայողի. Քանզի մերկանայ զիղձ ծնողաց. որ ենթադրեալ զանգուած զորդին ապանանէ. Քանզի յառաջադոյն դամանելք, և անուցանելիք են զաւակք, երբ յառաջեալք լիցեն, զորս պարտին կանխել, ակամայ վերելցեն։ ) 'Ի չորրորդում մատենի։ Բարի զաւակքն ունկնդիրք լինին հօր, և ծառայեն տեառն ճշմարտութբ, և արդարութբ, զի գործիցեն զհաճոյս տեառն։ Եւ բարի ծնօղք հրամայեն որդւոց իւրոց, զի գործիցեն զարդարութիւ, և առնիցեն զողորմութիւ. զի մի խոկայցեն զած, և օրհնիցեն զնա յամէ ժամանակի, և ճշմարտութբ, և բարոյով զօրութբ իւրով։

7. Հրամայեցեալ է ծնողաց, զի պատժիցեն, և ուսուցանիցեն, զորդւոց իւրեանց, զբարեհաճոյութի, զկամն, և զպատուիրանս այ. զի դնիցեն 'ի տր զյոյսն իւրեանց, և մի մոռանայցեն զգործս այ, և զպատուիրանս նորա ուսանիցին. Որդին պարտի ունկնդնել խրատու հօր իւրոյ, զերկիւղ տեառն ուսուցանողի, և ոչ թողուլ զօրէն մօր իւրոյ, զկամն այ ուսուցանողի, զի առաւելիցի շնորհ գլխոյ նորին, և մանեակ պարանոցի նորա։ Որ փափագի թողուլ յետ յինքեան զորդիս երանեալս, երկնչօղս 'ի այ, և յուսացօղս 'ի նա, գրկեսցէ զարդարութի, և լրջեսցի պարգամաւք. քանզի արդարն, որ լրջի 'ի պարզամտութե իւրում, յետ ինքեան թողցէ զորդիս երանեալս։ Որդին, որ ունկնդնէ խրատու, և ուղղէ 'ի ճանապարհի զիւր ինքն, է կարի իմաստուն. քանզի ունկնդնելն խրատու, և ուղղելն 'ի ճանապարհի զիւր ինքն, է իմաստութի։

Ոչ է ուրախանալի 'ի բազմութե որդւոց ամբարշտաց, և ոչ հրճուելի 'ի վերայ նց, որք 'ի տեառնէ ոչ երկնչին. այլ խնդալի, և ուրախանալի է 'ի վերայ սակաւուց, 'ի տեառնէ այ երկնչողաց: Քանզի լաւագոյն է մին, որ երկնչի յայ, քան զհազարս որդիս ամբարիշտս: Եւ օգտակար է մեռանիլ թարց որդւոց, քան թողուլ զորդիս ամբարիշտս: Ուրեմն որդիք պարտին գրկեալք զարդարութիւն, և զերկիւղ տեառն, հնազանդիլ ծնողաց իւրոց, զօրէն տեառն ուսուցանողաց, զի ուրախացուցանիցեն զնս: Եւ ծնողք պարտին մտադիրք լինիլ, և զգուշանալ, զի մի զայրացուցանիցեն զորդիս իւրեանց, այլ վարժիցեն զնոսա 'ի խրատ, և 'ի յանդիմանութե: Պարտին հսկել, զի մի որդին ծնեալն, կերակրելով զորովայնամոլս, տրտմեցուցանիցէ զնոսին. այլ պահելով զօրէնն, և լեալ իմաստուն, ուրախացուցանիցէ զնոսա: Քանզի որդին իմաստունն ուրախ առնէ զհայրն. իսկ որդին յիմարն տրտմութիւն է մօր իւրոյ, և անարգէ զնա: Ուստի խնդայ ծնութք հայրն, որ ծնաւ զորդի արդար. և զորդի բարեպաշտ, և երկնչօղ 'ի յայ:

8. Ունեցողք զորդիս, պարտին հմտացուցանել, և խոնարհեցուցանել զնոսա 'ի մանկութե նց, զի մի վասն անհոգութե նցին լեալք անարգելիք, և յիմարք, պատճառիցեն նոցա զտրտմութիւն, և զցաւ: Եւ ունեցողք զդստերս, պարտին ուշադրաբար պաշտպանել զնոսա, զի մի վասն ուրախադիմութե նցին, և կարի հեզաբարոյութե նոցա, լեալք լիրբք, յիմարք, և փառահամբաւք, պատճառիցեն իւրեանց զնեղութիւն սրտի, վասն անարգելոյ կենին, և արհամարհելոյ կենցաղավարութեան: Քանզի յիմար դուստրն, որ կեայ զազրաբար, առնէ զտրտմութիւն ծնողաց իւրոց. և անխոհեմն նախատինք է հօրն, և տան: Որդիք տրտմեցուցանեն զծնօղս, ընդ նս հեզաբարոյաբար խաղացողս. և ծիծաղակից լինողաց նոցա, պատճառեն, և աւերեն զցաւս: Դստերք ոչ բարեպէս պաշտպանեցեալք, և անհոգութե ծնողաց զանցառուեցեալք, ածեն զնս 'ի նախատինս, և ամաչեցուցանեն 'ի մէջ բազմութե ժողովրդեան: 'Ի տան են այրն, և կինն, որդիքն, և դստերքն: Այրն պարտի սիրել զկին իւր: Կինն պարտի հնազանդիլ առն իւրում, Երկոքեան պարտին երկնչել յայ, և 'ի մէջ իւրեանց ունիլ զխաղաղութիւն, պահելով զհաւատարմութիւն. և կատարելով զպատուիրանս այ: 'Ի միասին պարտին ուշադրաբար պարապիլ, զի կարիցեն ըստ ուղղոյ սովորութե կրթել զզաւակս իւր: Պարտին մտադրաբար հսկել, զի կարիցեն ընծայել այ զորդիս, և զդստերս բարեպաշտս: Որդիք, և դստերք պարտին պատուել զծնօղս, ունկնդնել բարեաց խրատուց, երկնչել 'ի տեառնէ այ իւրմէ, և ուրախացուցանել զբարիս ծնօղս: Եղբարք պարտին ունիլ զսէր 'ի մէջ իւրեանց, և պահել զփոխաբերական հնազանդութիւն, զի մի շփոթիցեն զխաղաղութիւն, և զհամաձայնութիւն, և զընտանեկան անդորրութին: Քորք պարտին սիրել զեղբարս, և եղբարք պարտին սիրել զքորս: Նաև քորք պարտին 'ի մէջ իւրեանց ունիլ զսէր:

## ԳԼՈՒԽ. ԾՁ.

### Յաղագս հինգերորդի պատուիրանի այ:

1. Հինգերորդ պատուիրանն այ է այս: Մի սպանաներ: Այսու պատուիրանաւ ած արգելու զմարդասպանութիւն, և զարիւնահեղութի մարդոյ: Յետ պատուիրանի, որով հրամայեաց ած զպատիւ ծնողաց, սկսանի պատուիրանօք իւրովք արգելուլ զվնաս, որք կարեն լինել ընկերի: Եւ քանզի վնասք, որք լինին գործովք, են մեծագոյնք. վն այսորիկ նախ արգելու զվնաս, որք լինին գործովք: Եւ քանզի ի մէջ վնասուց, որք լինին գործովք ընդդէմ ժամանակաւորաց բարեաց, մեծագոյնն է մարդասպանութիւն. վասն այսորիկ նախ արգելու զմարդասպանութին: Մարդասպանութին է մեծագոյն վնաս. վասնզի կեանն ի վեր քան զամ ժամանակաւոր բարի է սիրելի: Ամ մարդ ունի զամենամեծ իրաւունս, շնորհեցեալ ի հեղինակէ բնութե, ի վերայ կենի իւրոյ: Ուստի անիրաւաբար բարձողն զկեանս, գործէ զամենամեծ անիրաւութի ընդդէմ ընկերի: Ուստի որքան առ ժամանակաւորս բարիս մարդոյ, կարի յոյժ անիրաւութի ընդդէմ մարդոյ է մարդասպանութին: Ուստի մարդասպանն կարի գարշելաբար մեղանչէ ընդդէմ արդարութե: Նմանապէս մարդասպանն մեղանչէ ընդդէմ սիրոյ: Քանզի սէրն կամի զբարի ընկերի: Ամենամեծ բարին ընկերի ի մէջ ժամանակաւորաց բարեաց, է կեանն: Ուստի մարդասպանն նաև ընդդէմ սիրոյ կարի յոյժ մեղանչէ: Անողորմ է մարդասպանն. քանզի բառնայ զկեանն ընկերի իւրոյ, զոր պարտի սիրել որպէս զիւր ինքն: Վն այսորիկ մարդասպանն է անիրաւ, և է թարց սիրոյ և անողորմ: Է անիրաւ ընդդէմ այ, և ընդդէմ մարդոյ: Է անիրաւ ընդդէմ այ. քանզի գործէ ընդդէմ իրաւանց նր. վզի նա է տր կենի, և մահուան: Է անիրաւ ընդդէմ մարդոյ. քանզի բառնայ զկեանն նր:

2. Տր Աճ հեղինակն կենաց մերոց, այսու պատուիրանաւ պաշտպանէ զկեանն մեր, և տայ մեզ զապահովութե կենի: Քանզի ոչ իցէր ապահով, եթէ իւրաքանչիւրոյ իցէր օրէն սպանանել զմիւսն: Ուրեմն սաստկաբար արգելլով զմարդասպանութին, պահէ զկեանն մեր, և տայ մեզ զապահովութի կենի: Օգտակար է իւրաքանչիւրոյ պատուէրս այս. քանզի պահպանէ զկեանն իւրաքանչիւրոյ: Օգտակար է համապահեցման մարդկայնոյ տեսակի. քանզի պահպանէ զնա: Պատուէրս այս է ըստ բնական սիրոյ. վասնզի իւրաքանչիւրոք բնականաբար սիրէ զկեանն իւր: Պատուէրս այս է ըստ ըղձի բարեկամաց, և արենակցաց. քանզի բարեկամք, և արենակիցք, որպ սիրեն զկեանս իւրեանց, այնպէս և զմերն: Է նաև ըստ ըղձի մարդկայնոյ ընկերակցութե, և ըստ ըղձի քաղաքականութե. քանզի մարդկային, և քաղաքական ընկերութին փափագի, զի մարդիկք ապահովք համակեալ կարիցեն: Է նաև ըստ փափագի իրաւանց հեթանոսաց. վզի իրաւունն հեթանոսաց առնէ զանիրաւ սպանութիւն: Ուստի մարդասպանն, որ համարձակի անիրաւաբար հեղուլ զարիւն մարդկային, և բառնալ զսիրելի կեանն մարդոյ, և անողորմաբար սպանանել զընկեր իւր. է անիրաւ ընդդէմ այ հեղինակի կենի, և զկեանն մեր ապահով առնել կամեցողի. է անիրաւ դէպ ի յիւրաքանչիւրոք, ապահովապէս կեալ փափագողի. է անիրաւ դէպ ի մարդկային տեսակն, ունեցողն զիրաւունս յարածնալոյ. է անիրաւ դէպ ի բնա-

կան սէրն կենի մարդոյ, կեալ փափագողի. է անիրաւ դէպ 'ի բարեկամս, և դէպ 'ի յարենակիցս մարդոյ, զկեան նորա սիրողաց. է անիրաւ դէպ 'ի մարդկային, և դէպ 'ի քաղաքական ընկերութի, զմարդիկ ապահովապէս համակեալ փափագողաց. վերջապէս է անիրաւ դէպ 'ի յիրաւունս հեթանոսաց. զանիրաւ սպաննումն մարդոյ առնեցողն:

3. Կարի անհաճոյ է ա̄յ մարդասպանութիւն. քանզի այսպէս խօսի 'ի գիրս ծննդոց ընդդէմ մարդասպանաց. (Եւ զձեր արիւն շնչոյ խնդրեցից. 'ի ձեռաց ա̄մ գազանաց խնդրեցից զնա. և 'ի ձեռաց մարդոյ. 'ի ձեռաց առն զեղբօր իւրոյ խնդրեցից: Որ հեղու զարիւն մարդոյ փոխանակ արեան նորա հեղցի արիւն նորա, զի 'ի պատկեր ա̄յ արարի ես զմարդն:) Գլ. 9. Թիւ. 5. Եւ 'ի գիրս ելից ասէ: (Եթէ հարցէ ոք զոք, և մեռանիցի. մահու մեռցի, և նա: Իսկ եթէ մտաբերեսցէ ոք յընկեր իւր, սպանանել զնա նենգութբ, և փախիցէ. և 'ի սեղանոյ իմմէ առնուցուս զնա և սպանանիցես:) Գլ. 21. Թիւ. 12. և 14. Ուստի տր̄ն ասէ 'ի յաւետարանի: (Զի ա̄մք, որք զսուր առնուցուն. սրով անկանիցին:) Մատթ. 26. Թիւ. 52. Ատելի է ա̄յ մարդասպանն. քանզի զմարդն 'ի պատկեր ա̄յ արարեցեալն, փառօք, և պատուով յա̄յ պսակեցեալն, և կացուցեալն 'ի վերայ գործոց ձեռաց նորա. և ենթ ոտից որոյ ենթարկեցեալք են համայնք իւք, խաշինք, և ընդհանուրք արջառք; եւս և երէվայրի, թռչունք երկնից, և ձկունք ծովու. որք շրջին ընդ շաւիղս ծովու. և զոր պահեաց ինքեան տր̄ն մահուան, և կենի նր̄, սպանանէ: Ատելի է ա̄յ. վասնզի զիրաւունս, և զհեղինակութի նորա յափշտակէ, և իւրացուցանէ, և զպղնիւ գործ նորա, զոր արար ինքեան. լեալ յանդուգն եղծէ: Ատելի է ա̄յ. քանզի դատաստանն ինքեան պատկանողն, յափշտակէ: Ուստի առաջին մարդասպանն եղև կայէն, որ եղև եղբայրասպան, և որ յարուցեալ ընդդէմ եղբօր իւրոյ Աբելի, սպան զնա. անխնայաբար պատժեցաւ, և եղև անիծեալ 'ի վերայ երկրի, որ եբաց զբերան իւր, և ընկալաւ զարիւն եղբօր նորա 'ի ձեռանէ նորա: Քանզի եղև տատանեալ, և աքսորեալ 'ի վերայ երկրի, և եղև ողորմելաբար սպանեալ, և հեղօղն զարիւնն անմեղի կորեաւ սպանեալ:

4. Առանձնական մարդոյ ոչ ետ է օրէն սպանանել զչարագործն. քանզի տալի է տեղի բարկութե, և վրէժխնդրութին, և հատուցումն թողլի է ա̄յ: Եթէ առանձնականաց մարդկան, առ վրէժխնդրութի հակեցելոց, իցէր օրէն սպանանել զչարագործս, զօր հանապազ 'ի քաղաքօջ, և 'ի յընդհանրօջ աշխարհի լինէին անթիւք մարդասպանութիք, և ոչոք կարիցէր կեալ ապահով 'ի մէջ մարդկանց, առ վրէժխնդրութի հակեցելոց, և նաև զփոքրագունեղէ անիրաւութե երևեցելոյ վրէժխնդրութի առնել հաւաշողաց, ոչ առ արդարութե վերահայողաց, այլ վերահայողաց առ հատուցումն չարի փոխանակ չարի: Սակայն ինքնակալաց իշխանաց, և դատաւորաց յայնց զհեղինակութի դատելոյ ունեցողաց. պաշտօնէից արդարութե, և փոխանորդաց ա̄յ, է օրէն, և պատկանի դատել, դատապարտել, և պատժել ըստ իրաւանց զչարագործս, և բառնալ 'ի միջոյ զանտանելիս. քանզի դատաստանն, դատապարտումն, և պատժումն այսպիսեաց ըստ իրաւանց ոչ է առիթ գործելոյ զմարդասպանութի, այլ է կատարումն արդարութե. և արդելումն, և խափան մարդասպանութե, և պատճառ ապահովութե կենի մարդկանց: Քանզի չարագործք տեսանելով զարդար պատժումն ըստ իրաւանց, զարհուրին, և երկնչին, և բազմք ատանան զապահովութի կենի: Ուստի

տի գրէ ո̄բն Պօղոս ։ ( Իշխանքն ոչ են յերկիւղ բարեաց գործոց, այլ չարաց ։ Կամիս չերկնչել յիշխանութենէ անտի զբարիս գործեա․ և ընկալցիս զգովութիւն 'ի նմանէ ։ Զի ա̄յ պաշտօնեայ է քեզ 'ի բարիս ։ Ապա եթէ զչար գործիցես, երկիր ։ Զի ոչ եթէ վայրապար ածեալ է զսուսեր ընդ մէջ, զի ա̄յ սպասաւոր է վրէժխնդիր 'ի բարկութիւն, այնմ, որ զչարն գործիցէ ։ Վասն որոյ հարկ է հնազանդ լինել, ոչ միայն վասն բարկութեանն․ այլ և վասն մտացն խղճի ։ ) Հռոմ․ 13․ Թիւ․ 3․

5․ Պատճառն մարդասպանութեան հեռացուցանելի է, զի մի գործիցի մարդասպանութիւն ։ Երբեմն պատճառն, որ շարժէ, է նախանձն ։ Այսպէս հրէայք հրամայեցին խաչել զՔս, ըստ այնմ ։ ( Քանզի գիտէր, թէ առ նախանձու մատնեցին զնա ։ ) Մատթ․ 27․ Թիւ․ 18․ վասն այսորիկ ա̄ւն ասաց հրէից ։ ( Դուք 'ի հօրէ սատանայէ էք․ և զցանկութիւն հօր ձերոյ կամիք առնել․ զի նա մարդասպան էր 'ի սկզբանէ ։ ) Յօհ․ 8․ Թիւ․ 44․ Եւ ևս կայէն 'ի նախանձու սպան զեղբայր իւր հաբէլ արդարն․ ըստ այնմ ։ ( Եւ եղև յետ աւուրց եբեր կայէն 'ի պտղոյ երկրի պատարագ ա̄յ ։ Եւ ած և հաբէլ յանդրանկաց խաշանց իւրոց և 'ի պարարտաց նց․ և հայեցաւ ա̄ծ 'ի հաբէլ և 'ի պատարագս նորա․ և 'ի կայէն և 'ի զոհս նորա ոչ նայեցաւ․ և տրտմեցաւ կայէն յոյժ, և խոնարհեցան անկան երեսք իւր ։ ) Ծնն 4․ Թիւ․ 3․ Եւ եղբարք Յօսէփու 'ի նախանձու կամեցան սպանանել զնա ։ Վասնզի տեսեալք զՅօսէփ սիրել 'ի հօրէ առաւել քան զայլս համայնս եղբարս, նախանձեցան նմա, և շարժեալք 'ի նախանձու, ատեցին զնա, և ոչ կարէին խօսել ընդ նմա զեր ինչ խաղաղութե ։ Պատմութիւն երազատեսութեց, որք մատացոյց առնէին զգերազանցութիւն նորա, ետ նոցա զառիթ նախանձու, և ատելութե ։ Եւ քանզի նախանձէին նմա, խորհեցան սպանանել զնա, և ասէին ։ Ահա եկն երազատեսն, եկայք, սպանցուք զնա ։ Եւ սաւուղ 'ի նախանձու ատեաց զդաւիթ, և հալածեաց զնա ։ Քանզի մինչ նուագէին կանայք, և խաղային, և ևս ասէին ։ Եհար սաւուղ զհազար, դաւիթ զտասն հազար․ բարկացաւ յոյժ սաւուղ, և անհաճոյացաւ 'ի յաչս նորա բանս այս․ և սկսաւ նախանձու ակամբք հայիլ առ դաւիթ 'ի յաւուր յայնմանէ, և յետոյ ։

6․ Երբեմն շարժօղ պատճառն է ագահութիւն ։ Այսպէս յեզաբէլ առ 'ի յունել զայգին եղև հեղինակ սպանման նաբօթայ ։ Քանզի նաբօթ, որ ոչ կամեցաւ զայգի իւր տալ աքաբու արքային, խնդրողի զնա 'ի նմանէ, վասն չարութեան, և խորամանկութեան Յեզաբելայ կնոջ աքաբու, 'ի ծերոց, և 'ի յազատաց քաղաքին, որք բնակէին ընդ նմա, սուտ վկայիւք յաղթեալ, և անիրաւաբար դատապարտեալ, ածաւ արտաքոյ քաղաքի, և վիմօք սպանաւ ։ Այսպէս պատմի յերրորդում թագաւորաց, 'ի գլխոջ քսան և միերորդում, ո̄ր տեսանելի է անդ ։ Այսպէս ունի զինքն իրն․ վասնզի կանխագոյն յառնէ մարդասպանն, սպանանէ զաղքատն, և զտնանկն․ իսկ 'ի գիշերոջ եղիցի ո̄ր գող ։ Երբեմն շարժօղ պատճառն է բղջախոհութիւն ։ Այսպէս դաւիթ ջանաց սպանանիլ զուրիա 'ի պատերազմին ։ Քանզի զուրիա, ընդ կնոջ որոյ մեղուցեալ էր, և նա յղացեալ էր, և որ ոչ կամեցաւ գնալ 'ի տուն իւր, առաքեաց հրովարտակաւ հանդերձ առ Յովաբ, ասելով ։ ( Դրէք զուրիա ընդդէմ պատերազմի, ուր է հզօրագունեղ մարտ․ և թողէք զնա, զի հարեալ մեռանիցի ։ Եւ այնպէս եղև․ զի Յովաբ եդ զնա 'ի տեղւոջ, ուր գիտէր գոլ զհզօրագունեղս արս ։ Ուստի մինչ անկան 'ի զօրուէ ծառայիցն դաւթի, և մեռաւ ուրիա քետա-

քետա-

քետացի։) 2. Թագաւ. գլ. 11. Դարձեալ, հերովդէս սպան զՅովհաննէս։ Քանզի հերովդէս, որ առաքեաց, և կալաւ զՅովհաննէս, և կապեաց զնա, և եդ 'ի բանտի վասն հերովդիադայ կնոջ փիլիպպոսի եղբօր նորա. վասն խնդրոյ դստեր հերովդիադայ, որ կաքաւմամբ իւրով կարի հաճոյացաւ, հրամայեաց գլխատել զնա 'ի բանտի։ Երբեմն շարժօղ պատճառն է սնափառութիւն։ Ոպ աքիմելէք սպան զեօթանասուն եղբարս, զի ինքն միայն թագաւորել կարիցէր։ Եւ գոթողիա կորոյս զամ զաւակ թագաւորութե։ 4. Թագաւորաց։ Գլ. 11. Թիւ. 1.

7. Տակաւին են ոմանք կիրք, որք տրամադրեն, և ածեն առ մարդասպանութի, այսինքն, ատելութիւն, խղձն վրէժխնդրութե. բարկութիւն, զրպարտութիւն, և կռիւքն։ Ուստի զգուշանալի է յայսցանէ։ Շիջուցանելի է ատելութիւն, զի մի տրամադրեսցիմք առ մարդասպանութի։ Կարի հեռանալի է 'ի յատելութե. քանզի է վատթարագունեղ սերմն չարագործութե. այլ և ըստ Յօհաննու է մարդասպանութի։ Վասնզի ամենայն, որ ատէ զեղբայր իւր, է մարդասպան, ոչ ունեցող 'ի յիւրեան ինքեան զկեանսն յաւիտենականս։ Հեռանալի է 'ի յըղձէ վրէժխնդրութե, զի մի դահավիժիցիմք 'ի վերջին վրէժառութիւն, որ է մարդասպանութի։ Պարտիմք գոլ ծանունք առ բարկութի, և ամենեւին հեռանալի է 'ի բարկութե մարդոյ, հաւաչողի առ վրէժխնդրութի, և փափագողի առնուլ զվրէժ. քանզի բարկութիւն առն հաւաչողի առ վրէժ, զարդարութի այ ոչ գործէ, որ է ոչ փափագել վրէժխնդրութե, հատուցանելով զչար փոխանակ չարի։ Վասնզի արդարութի այ է է ոչ յաղթիլ 'ի չարէ, այլ յաղթել բարեաւ, հատուցանելով զբարի փոխանակ չարի։ Սանձելիք են շրթունք, զի մի արտաքերիցեն զզրպարտութիս, և զնախատանս, և զբանս անիրաւս։ Քանզի զրպարտանք արտաքերեցեալք շարժեն, և ընդդատուցանեն զնա, ընդդէմ որոյ արտաքերին։ Ուստի և ընդդատուցեալն արտաքերէ զզրպարտանս, և նախատէ զայն, յորմէ ընկալաւ զնախատինս, և զբանս արհամարհականս։ Աստի լինի, զի զերեարս զրպարտելով, և զբանս արհամարհականս արտաքերելով, տրամադրին առ մեծագոյնս զրպարտանս։ 'Ի զրպարտանաց, և 'ի նախատանաց համաշարժին, և ընդդատուցանին առ կռիւս, և առ վէճս։ 'Ի կռուոց, և 'ի վիճից համաշարժին, և ընդդատուցանին առ մարտ, և առ սուր։ 'Ի մարտէ, և 'ի սրոյ գան առ վէրս, և առ հեղումն արեան, և առ եղեռնագործութի մարդասպանութե, կորուսանելով ընդ մարմնոյ 'ի միասին և զհոգին, մեռանելով անզեղջք։

8. Արմատն մարդասպանութե է ատելութի, միջոցք համածօղքն առ նա են բաղձանն վրէժխնդրութե, բարկութիւն, զրպարտանք, կռիւք, վէճք, և մարտն։ Արտախլելի է արմատն, զի մի բողբոջիցին այնոքիկ, որք յարմատոյ բողբոջիլ, և բուսանիլ կարեն։ Արմատն է ատելութիւն. ուրեմն արտախլելի է ատելութիւն։ Արտախլի ատելութի։ Եթէ իցէ 'ի մեզ ոգի ներմանն։ Քանզի որ պատրաստ է ներել, և թողուլ, ոչ պահէ զատելութի ընդդէմ այնորիկ, յորմէ ընկալաւ զանիրաւութիս։ Ուստի ջանալի է, զի 'ի մեզ իցէ ոգի ներմանն։ Ոգին ներմանն է ոգի քի. որ նաև կախեալ 'ի խաչի, եթող զանիրաւութիս, և ներեաց թշնամեաց։ Եթէ լինիցի 'ի մեզ սէր թշնամեաց, եղիցի 'ի մեզ ոգի քի։ Ուսցուք ուրեմն 'ի քէ, գերազանցագունեղէ վարդապետէ մերմէ, զսէր թշնամեաց, և զբացադրութի պատուիրանի սորա։ Ահա բանք վարդապետի մերոյ։ (Լուարուք ասաքէն, զի ասացաւ։ Սիրեսցես զընկեր քո, և ատեսցես զթշնամին քո։ Այլ ես ասեմ ձեզ,

ձեզ, սիրեցէք զթշնամիս ձեր. բարի արարէք ատելեաց ձերոց. և աղօթս արարէք 'ի վերայ այնոցիկ, որք լլկեն զձեզ և հալածեն: Զի եղիջիք որդիք հօր ձերոյ, որ յերկինս է. զի զարեգակն իւր ծագէ 'ի վերայ չարաց և բարեաց. և ածէ զանձրև 'ի վերայ արդարոց, և մեղաւորաց: Զի եթէ սիրիցէք զայնոսիկ, որք սիրեն զձեզ, զինչ վարձք իցեն, ո՛չ ապաքէն և մաքսաւորք զնոյն գործեն: Եւ եթէ տայցէք միայն ողջոյն բարեկամաց ձերոց, զինչ աւելի առնէք, ո՛չ ապաքէն մաքսաւորք, և մեղաւորք զնոյն գործեն: Արդ եղերուք դուք կատարեալք, որպէս և հայրն ձեր երկնաւոր կատարեալ է) : Մատթ. 5. Թիւ. 43. սիրեսցուք ուրեմն զթշնամիս, զի լիցի մեզ դիւրին ներել թշնամեաց: Ներեսցուք թշնամեաց, զի մի պահիցեմք զատելութի: Արտաքսելի է ատելութիւն, զի մի բողբոջիցին գործք մարդասպանութեան: Բառնալի է միջոցն, զի արգելացի մարդասպանութիւն:

# ԳԼՈՒԽ. ԾԷ.

## Յաղագս վեցերորդի Պատուիրանի այ:

1. Վեցերորդ պատուիրանն այ է այս: Մի՛ շնար: Պատուէրս այս արգելու զամ բղջախոհական արարողութի, և մանաւանդ զշնութին, որ է ընդդէմ պատուոյ ընկերի, և է ծանր անիրաւութի ընդդէմ ընկերի: Անստեղծ իմաստութի յետ արգելման մարդասպանութեան, որ բառնայ զկեանն, որ է ամենամեծ ժամանակաւոր բարին մարդոյ, արգելու զշնութի, որ բառնայ զպատիւն, որ է մեծագոյն ժամանակաւոր բարին մարդոյ, քան զժամանակաւորս ինչս. քանզի ժամանակաւորք իւք ծառայեն կենի, և պատուոյ մարդոյ: Քանզի մարդն վարի փարթամութբք 'ի հեղինակէ բնութե ինքեան շնորհեցելովք, զի դարմանիցէ զիւր ինքն, և զտուն իւր, այսինքն, զկին իւր, և զզաւակս իւրս: Արգելու ամ զշնութի, զի ամք իցէ ապահով զպատուոյ իւրոյ, որ է կին նորա: Նաև արգելու զշնութին, զի արգելանիցի մարդասպանութին: Վասնզի եթէ ո՛չ իցէր արգելեցեալ շնութին, մարդիկք յօժարք, և դիւրինք առ մարմնաւորս հեշտութիս, դիւրաբար գործիցէին զշնութի. և վասն գործեցելոյ շնութե մարտնչիցէին ընդ միմեանս վասն կորուսեցելոյ պատուոյ. և այսպէս առ վրէժառութի, և առ հատուցումն կորուսեցելոյ պատուոյ գործիցէին զբազումս մարդասպանութիս: Տակաւին արգելու, զի ծնօղն զաւակի անսղալօրէն ճանաչիցի, և դիտիցի, առ պարտաւոր, և առ յարմար դարմանութն, սնուցումն, և վարժակերտութն նր:

2. Վեցերորդ պատուիրանն արգելու զամ բղջախոհական արարողութի, և ներգործութի. վասնզի միայն ամուսնութին կացուցեալն յայ առ համապահեցումն մարդկայնոյ տեսակի, հաճոյ, և ընդունելի է այ. ուրեմն այլ ամ մարմնաւոր արարողութի, յորում է հեղումն սերման, արգելեցեալ է 'ի ձեռն պատուիրանի այ: Ուստի արգելու զպոռնկութին, զշնութին, զկուսապղծութին, զորբապղծութին, զազգապղծութի, և զամ այլ բղջախոհական արարողութի ընդդէմ բնութե: Պոռնկութին է մարմնաւոր զուգակցութն ազատի ընդ ազատի, այսինքն, նորա որ ոչ է ամուսնացեալ, ընդ այնմիկ, որ նմանապէս ոչ է ամուսնացեալ: Շնութին է մարմնաւոր զուգակցութն զուգակցեցելոյ ընդ զուգակցեցելոյ. կամ զուգակցեցելոյ ընդ ազատի. կամ ազատի ընդ զուգակցելոյ: Կուսապղծութին է բռնութբ բառնալ զկուսութի: Որբապղծու-

պղծութիւն է մարմնաւոր զօդակցութիւն ընդ անձին ուրուք նուիրեցելոյ , կամ ուրուք տեառնագրեցելոյ , կամ մարմնաւոր զուգակցութիւն առն ընդ կնոջ 'ի սուրբ տեղւոջ . կամ այլ ինչ պիղծ գործ ընդդէմ բնութեան 'ի սուրբ տեղւոջ : Ազգապղծութիւն է մարմնաւոր զուգակցութիւն ընդ ազգակցի . կամ ընդ մարմնաւորի խնամւոյ . կամ ընդ հոգևորի : Գարշելի բղջախոհական արարողութիւն ընդդէմ բնութեան , է մարմնաւոր զուգակցութիւն ընդդէմ բնութեան , որով ոչ կարէ յղանիլ զաւակ . կամ հեղութիւն սերման ընդդէմ բնութեան : Զնոյն ասացեալս մարմնաւորս զուգակցութիւնս , կամ զհեղութիւն սերման ընդդէմ բնութեան , արգելու վեցերորդ սրբազնագոյն պատուիրանն Աստուծոյ , և կոչէ զմեզ առ մաքրութիւն :

3. Պոռնկութիւն է մեղք . վասն զի է ընդդէմ կամացն Աստուծոյ , և ընդդէմ հրամանի բանի : Է ընդդէմ Աստուծոյ . քանզի մեծ կացոյց զամուսնութիւն վասն համապահեցման մարդկայնոյ տեսակի . ուրեմն պոռնիկն , որ եղծէ զամուսնութիւն , է ընդդէմ կամացն Աստուծոյ : Է նաև ընդդէմ հրամանի բանի . վասն զի բանն հաւանի ամուսնութեան . ուրեմն ատէ զպոռնկութիւն : Պոռնիկն մեղանչէ ընդդէմ Աստուծոյ , մեղանչէ ընդդէմ զաւակի , մեղանչէ ընդդէմ բարեկամութեան , մեղանչէ ընդդէմ մարմնոյ իւրոյ , մեղանչէ ընդդէմ պատուոյ իւրոյ , և մեղանչէ ընդդէմ ընչից իւրոց : Մեղանչէ ընդդէմ Աստուծոյ . վասն զի զուգակցի արտաքոյ ամուսնութեան , որ կացուցեալ է յԱստուծոյ : Ուստի մեծ բարկացեալ ընդդէմ պոռնկի , հրամայէ , և ասէ : ( Մեռցի . զի արար անզգամութիւն 'ի մէջ որդւոցն Իսրայէլի , պոռնկիլ 'ի տան հօր իւրոյ . և բարձջիք զչարն 'ի ձէնջ : ) 'Ի գիրս երկրորդ օրինաց : գլ. 22. թիւ 21. Մեղանչէ ընդդէմ զաւակի . քանզի կամ չարութեամբ արգելու զյղացումն զաւակի , կամ եթէ ոչ արգելու զյղացումն զաւակի , արգելու զպատուաւոր , և զպարտաւոր աստուածաբարոյութիւն : Մեղանչէ ընդդէմ բարեկամութեան քանզի ճշմարիտ , հաւատարիմ , յարամնացող , և բանաւոր բարեկամութիւն առն ընդ կնոջ է միայն 'ի ձեռն ամուսնութեան : Մեղանչէ ընդդէմ մարմնոյ իւրոյ . վասն զի տգեղացուցանէ , տկարացուցանէ , և պղծէ : Մեղանչէ ընդդէմ պատուոյ իւրոյ . քանզի ամ կին , որ է պոռնիկ , իբրև զաղբ 'ի ճանապարհի , յամենայն անցանողաց ոտնակոխի : Մեղանչէ ընդդէմ ընչից իւրոց , վատնելով զնոսա . վասն զի է հուր կլանող մինչև առ կորուստ , և արմատախիլ զամենայն զարժանապատուութիւնս : Պոռնիկն է գուբ խորագոյն , և օտարային անձուկ հոր : Կազմէ զորոգայթ 'ի ճանապարհի իբրև զաւազակ , և զորս տեսանէ անմտադիրս , սպանանէ : Եւ որ ծնուցանէ զպոռնիկս , կորուսանէ զինչս :

4. Շնութիւն է մեծագոյն մեղք քան զսոսկ պոռնկութիւն : Քանզի աղաւաղէ ամուսնութիւն , յանհնոյ իմաստութեան կացուցելով , նա , որ գործէ զշնութիւն , ոչ զուգակցելով զինքն ընդ իւրում , այլ ընդ օտարականի . նաև գործէ զանհաւատարմութիւն , քակելով զհաւատն , զոր խոստացաւ 'ի յամուսնութեան : Շնացողն մեղանչէ ընդդէմ Աստուծոյ , մեղանչէ ընդդէմ կողակցի , կինն մեղանչէ ընդդէմ առն , մեղանչէ ընդդէմ զաւակի , ընդդէմ բարեկամութեան , ընդդէմ հաւատարմութեան , և ընդդէմ ընտանեկանի խաղաղութեան : Շնացողք մեղանչեն ընդդէմ Աստուծոյ . քանզի անցանեն զծանրագուգիւ պատուիրանաւ նորա , և անարգեն զամուսնութիւն 'ի նմանէ կացուցեալն : Շնացողն մեղանչէ ընդդէմ ընկերի . վասն զի գործէ զանիրաւութիւն մեծ ընդդէմ կողակցի . և ծանրաբար վշտացուցանէ զնա , և դառնացուցանէ զսիրտ նորա . Նմանապէս կին շնացող մեղանչէ ընդդէմ առն իւրոյ . վասն զի նմանապէս գործէ զմեծ անիրաւութիւն ընդդէմ առն իւրոյ , և ծանրաբար վշտացուցանէ զնա , և դառնացու-

ցանէ

ցանէ զնա, և գտանայցուցանէ զ-
տիրս նորա, և բորբոքէ զնա առ
մարդասպանութի, վասն ծանու-
անարգման նմա արարեցելոյ: Մե-
ղանչեն ընդդէմ զուտկի. վասնզի
առնեն զնա անառոյգ: Մեղանչեն
ընդդէմ բարեկամութե. քանզի բա-
րեկամութի զուգակցեցելոց լուծանի
չնութբ: Մեղանչեն ընդդէմ հա-
ւատարմութե. վասնզի չնութբ լինին
անհաւատարիմք, քակտելով զխոս-
տումն 'ի յամուսնութե առեցեալն:
Մեղանչեն ընդդէմ ընտանեկանի
խաղաղութե, որ է փափագելի,
և է հաստատութի տան. վասնզի
չնութի՛ն բառնայ զխաղաղութի,
եղծէ զմիաբանութի, ծնանի զան-
հաշտելի թշնամութի: Ով մարդ,
որ ես ամուսնացեալ, ունկնդիր
հոգւոյ սբոյ քեզ պատուիրանողի: (Ընդ
կնոջ օտարի մի նստցիս ամենեւին.
և մի ընկողմանեսցիս ընդ նմա 'ի
վր մահճի: Եւ մի վիճիցես ընդ
նմա 'ի գինւոյ, մի գուցէ խոտո-
րեսցի սիրտ քո 'ի նա, և արեամբ
քով սահեսցիս 'ի կորուստ:) Եկղե-
սիայ: 9. Թիւ. 12.

5. Կուսապղծութի՛ն է կարի
ծանր, և կարի նախատական, և
վատահամբաւական մեղք. քանզի
բառնայ 'ի կուսէ զամենամեծ բարին
նորա, և ծնանի նմա զամենամեծ
վատահամբաւութի, և զամենամեծ
անարգանս: Ամենամեծ սիրելի
բարին կուսի է կուսութի նորա:
Կոյսն եթէ կամի ամուսնանալ, ոչ
կարէ նուիրել փեսայի իւրոյ զմե-
ծագոյն պարգև, քան զկուսութի
իւր, և ոչ կարէ ունել զմեծագոյն
վատահամբաւութի, ամօթումն, և
նախատանս, առաջի նորա, քան զա-
պականումն կուսութե իւրոյ: Իսկ
եթէ կամի մնալ թարց ամուսնութե,
ոչ կարէ վայելել զմեծագոյն զարդ,
զմեծագոյն գովասան, և զմեծագոյն
փառս, քան զկուսութի իւր: Ուս-
տի, որ լրբանայ բառնալ 'ի կուսէ
զկուսութի նորա, առնէ զամենա-
մեծ վնաս ինքեան կուսի, ծնողաց
նորա, և փեսայի նորա, եթէ իցէ
խօսեցեալ և պատճառէ նմա զա-
մենամեծ նախատինս, ծնողացն նր,
և փեսայի նր, եթէ իցէ խօսե-
ցեալ: Եթէ առնիցէ զայս բռնու-
թբ, է առնօղ նմա զլրբագունեղ,
և զանողորմագունեղ ուժգնութի.
եթէ խաբեբայութբ, է մատնա-
բագունեղ խաբեբայ, և վատթա-
րագունեղ մեղաւոր, պարտաւորե-
ցեալ վճարել զվնաս անիրաւա-
բար արարեցեալն: Ապականօղն
կուսութե, է անիրաւ ընդդէմ այ.
անիրաւ ընդդէմ կուսի ապականե-
ցելոյ, անիրաւ ընդդէմ ծնողաց
կուսի ապականեցելոյ, և է անի-
րաւ ընդդէմ փեսայի նորա, եթէ
իցէ խօսեցեալ: Այսպէս խօսի սբ
գիրն ընդդէմ պատրողաց կուսի:
(Իսկ եթէ ոք խաբեսցէ զկոյս խօ-
սեցեալ, և ննջեսցէ ընդ նմա. վար-
ձանօք վարձեսցէ զնա իւր կնութի.
եթէ ոչ առնուցու յանձն հայր նր
տալ զնա նմա կնութե. տուժեսցի
արծաթ հօր նորա, որչ իցեն վար-
ձանք կուսից:) Ելից: Գլ. 22.
Թիւ. 16.

6. Սրբապղծութի անմաքրութե,
է ամենամեծ մեղք. վասնզի անմա-
քուր սրբապիղծն լրբանայ գործել
զանմաքրութի ընդ անձին նուիրե-
ցելոյ այ, կամ 'ի սբ տեղւոջ: Է
ամենամեծ յանդգնութի սրբապղծի
անմաքրոյ 'ի սբ տեղւոջ. վասնզի
տեղի, յորում վայելէ ամ սրբա-
կացութի. որ է տուն այ, և տուն
աղօթից. որ է սրբաղնագործեցե-
ալ, և նուիրեցեալ թագաւորի թա-
գաւորաց. յորում մատակարարին
խորհուրդք եկեղեցւոյ, և մատու-
ցանի պատարագ. յորում գտանի
իրական ներկայութի քի 'ի խորհր-
դոջ հաղորդութե. յորում մատու-
ցանին աղօթք, և պատարագք ա-
մենաբարձրելոյն այ. յորում կան
հրեշտակք ամենամեծիւ պատկա-
ռանաւ. և յորում անմաքուրք պար-
տին մաքրիլ, և սրբանալ. վա-
վաշտութբ, և անմաքրութբ իւր-
ով արատաւորէ: Ուստի անմա-
քուր սրապիղծն 'ի սբ տեղւոջ, է
անիրաւ ընդդէմ այ, ընդդէմ տանն
այ, ընդդէմ սբ տեղւոջ, ընդդէմ


խոր-

խորհրդոց, ընդդէմ պատարագի, ընդդէմ իրականի ներկայութեանն ք̅ի, ընդդէմ հրեշտակաց, և ընդդէմ սրբապատիւ մաքրութեան: Նաև է կարի յոյժ յանդգնութիւն սրբապղծի անմաքրոյ ընդ անձին սրբազանի, և ա̅յ նուիրեցելոյ. քանզի զսրբազան անձն, և զա̅յ նուիրեցեալն, և զհարսն ք̅ի, եթէ իցէ էգ, չարագունեղիւ անմաքրութ̅բ իւրով բծաւորէ: Ուստի է անիրաւ ընդդէմ ք̅ի, և ընդդէմ հարսի նորա: Եթէ անմաքուր ս̅բապիղծն իցէ քահանայ, է անիրաւ ընդդէմ ա̅յ: որում է նուիրեցեալ. ընդդէմ քահանայութեան, զոր ընկալաւ. ընդդէմ ս̅բազանի տեառնադրութեան, որով ազնուացուցեալ է. և ընդդէմ ս̅բազանից պաշտօնից, զորս 'ի կիրարկանէ: Իսկ եթէ իցէ կրօնաւոր, է անիրաւ ընդդէմ ա̅յ, որում հանդիսաւորապէս ուխտեաց զողջախոհութիւն. ընդդէմ ս̅բազանի կրօնի, 'ի յոր մտեալ է, և ընդդէմ հանդիսաւորի ուխտի ողջախոհութեան, զոր խոստացաւ: Իսկ եթէ կրօնաւորուհի, նաև է անիրաւ ընդդէմ Յ̅ի ք̅ի ամենամաքրագունեղի փեսայի իւրոյ:

7. Եւ ևս ազգապղծութիւն է ամենամեծ անմաքրութեան, և բղջախոհութեան մեղք: Քանզի ազգապիղծն, զանձինս, զորս պարտիւր մասնաւորաւ պատուով, և մասնաւորաւ պատկառանօք, և դերապատուութ̅բ պատուել, վատթարագունեղիւ ապականութ̅բ անարգէ: Ուստի ազգապիղծն է անիրաւ ընդդէմ ա̅յ, որում կարի յոյժ անհաճոյ է ազգապղծութիւն. է անիրաւ ընդդէմ արենակցաց, զորս պարտիւր մասնաւորաւ պատկառանօք պատուել. է անիրաւ ընդդէմ մարմնաւորս, կամ հոգևորս խնամիս, զորս անմաքրութ̅բ իւրով համարձակի ապականել. և է անիրաւ ընդդէմ պատուոյ, զոր պարտի ունիլ 'ի յարենակիցս, կամ 'ի մարմնաւորս, կամ 'ի հոգևորս խնամիս: Ամենեքեան, որք գործեն զազգապղծութիւն այնքան արք, որքան կանայք են գարշելիք, և ատելիք. Ուստի գրեալ է 'ի ս̅բ գրոջ: (Մարդ ոք մարդ առ ա̅մ ընտանութիւն մարմնոյ իւրոյ մի մերձեսցի. յայտնել զառականս նորա. զի ես եմ տ̅ր: Զառականս հօր քո, և զառականս մօր քո մի յայտնեսցես, զի մայր քո է. և մի յայտնեսցես զառականս նորա: Զառականս կնոջ հօր քոյ մի յայտնեսցես. զի առականք հօր քո են: Զառականս քեռ քո թէ առ 'ի հօրէ իցէ կամ առ 'ի մօրէ, 'ի տան ծնեալ կամ արտաքոյ. մի յայտնեսցես զառականս նորա:) Ղև. 18. Թիւ. 6 'Ի նոյնում ս̅բ գրոջ գրեալ է: Այր ոք, որ ննջիցէ ընդ կնոջ հօր իւրոյ. զառականս հօր իւրոյ յայտնեաց. մահու մեռցին երկոքին. զի ամբարշտեցան, և մահապարտք են: Եւ եթէ ննջիցէ ոք ընդ նուոյ իւրում մահու մեռցին երկոքին. զի ամբարշտեցան մահապարտք են: (Ղև. 20. Թիւ. 11. Ուստի և առաքեալն յանդիմանէ զազգապիղծս, և ասէ: (Բնաւ և անուանի իսկ 'ի ձեզ ընդ էր պոռնկութիւն, և այնպիսի պոռնկութիւն, որ ոչ և 'ի հեթանոսս, որպէս թէ զկին հօր իւրոյ ոք ունիլ: Եւ դուք հպարտացեալ էք. և առաւել սգացարուք, զի բարձցի 'ի միջոյ ձերմէ, որ զգործն զայն գործեաց:) Առ կորնթիս առաջնոյ գլ. 5. Թիւ. 1. Ազգապիղծք են նաև անիրաւք ընդդէմ մաքրոյ սիրոյ, որով սիրել պարտին զիրեարս արենակիցք:

8. Անմաքրութիւն, և վավաշոտութիւն ընդդէմ բնութեան է ծանրագունեղ մեղք անմաքրութեան. քանզի է ընդդէմ կարգի բնութեան, և ընդդէմ վախճանի դիտեցելոյ 'ի բնութենէ, և է ընդդէմ անհնոյ ա̅ծային իմաստութեան, և է ընդդէմ բնականի լուսոյ, որով ազնուացուցեալք եմք, և է ընդդէմ բնականի հակեցման, որ է առ համապահեցումն մարդկային տեսակի: Կարգն բնութեան է, զի այրն զուգակցիցի ընդ կնոջ, և լիցի հեղումն սերման, ուր պիտոյ է, և ոչ

այլ-

այլապէս ։ Անմաքրութիւն ընդդէմ բնութեան, է ընդդէմ այնորիկ, որ ասացեալ է. վասնզի յայնմիկ լինի այլ զուգակցութիւն, կամ հեղումն սերման, ոչ լինի ուր պիտոյ է, կամ ուր պիտոյ է ։ Որպէս է ընդդէմ կարգի բնութեան ։ Վախճանն դիտեցեալն 'ի բնութենէ է յղացումն, և ծնունդն մարդոյ, համապահօղն զտեսակ մարդկային ։ 'Ի յանմաքրութեան ընդդէմ բնութեան, արգելանի յղացումն, և ծնունդն մարդոյ ։ Ապաուրեմն անմաքրութիւն ընդդէմ բնութեան, է ընդդէմ վախճանի դիտեցելոյ 'ի բնութենէ ։ Գտուումն անհնոյ իմաստութեան Աստուածայնոյ, է զուգակցումն առն ընդ կնոջ պարտաւորաւ կարգաւ, վասն այսորիկ ստեղծ զայր, և զէգ ։ Անմաքրութիւն ընդդէմ բնութեան է ընդդէմ այնորիկ, որ ասացեալ է ։ Ապաուրեմն անմաքրութիւն ընդդէմ բնութեան, է ընդդէմ Աստուածայնոյ անստեղծի իմաստութեան ։ Նաև բնական լուսն մեր զզուգակցումն առն ընդ կնոջ ճանաչէ գոլ զմիջոցն առ համապահեցումն մարդկայնոյ տեսակի, և բնական յօժարութիւն մարդոյ է առ ասացեալ զուգակցումն ։ Ապաուրեմն անմաքրութիւն ընդդէմ բնութեան, է ընդդէմ բնականի լուսոյ, և ընդդէմ բնականի յօժարութեան մարդոյ ։ Ոչ միայն պոռնկութիւն, շնութիւն, կուսապղծութիւն, սրբապղծութիւն, ազգապղծութիւն, և անմաքրութիւն ընդդէմ բնութեան, են մեղք. այլ նաև բանք, հայեցմունք, համբոյրք, շօշափմունք, և համայնք այլք առ ասացեալս կարգաւորեցեալք, են մեղք ։

# ԳԼՈՒԽ ԾԲ.

## Յաղագս եօթներորդի պատուիրանի ԱՅ ։

1. Եօթներորդ պատուիրանն Աստուծոյ է այս ։ Մի գողանար. պատուիրանս այս արգելու զվնասն, որ լինի ընչից ընկերի ։ Երեք վնասք կարիցեն լինիլ մարդոյ արարողութեամբ, այսինքն, վնաս կենի, վնաս պատուոյ, և վնաս ընչից. Աստուած է պահապան կենի, պատուոյ, և ընչից մերոց. երեք պատուիրանօք արգելեաց զերիս ասացեալս վնասս ։ 'Ի ձեռն հինգերորդի պատուիրանի արգելեաց զվնաս կենի, ասելով, մի սպանաներ ։ 'Ի ձեռն վեցերորդի պատուիրանի արգելեաց զվնաս պատուոյ. ասելով, մի շնար ։ 'Ի ձեռն այսորիկ եօթներրորդի պատուիրանի արգելու զվնասն ընչից, ասելով ։ Մի գողանար. զի յայսմիկ կենի կարիցէաք շրջիլ ապահովք 'ի կենի, 'ի պատուոջ, և 'ի յինչս. զի որքան առ կեանն, որքան առ պատիւն, և որքան առ ինչս պահիցեմք զարդարութի ։ Եւ զի պահեալք զարդարութիւն, դարշեցեալք, զզուեցեալք, և ատեալք վնասել ընկերի, և եղբօր մերում 'ի կենի, կամ 'ի պատուոջ, կամ 'ի յինչս. և յանիրաւութենէ, որք կարեն լինիլ ընկերի հեռացեալք, զսէր առ միմեանս ունիլ ուսանիցիմք, և եղեալք ապահովք զբարեաց մերոց որքան առ կեանն. որքան առ պատիւն, և որքան առ ինչս, իբրև զեղբարս խաղաղութեամբ կեայցեմք յայսմ աշխարհի ։

2. Այս եօթներորդ պատուիրանն արգելու զամենայն անիրաւ յափշտակութիւն, և յատկացուցումն օտարականի ընչի, որով և կերպիւ ա-

բարեացն ընդդէմ կամաց տեառն: Ուստի արգելու զգողութիւն, արգելու զյափշտակութիւն, արգելու զպատրանս, արգելու զնենգութիւն, արգելու զանիրաւ կշիռն, և արգելու զանիրաւ չափն: Գողութիւն է գաղտնի յանկացուցումն, և ինքնացուցումն օտարականի իրի ընդդէմ կամաց տեառն: Յափշտակութիւն է յայտնի իւրացուցումն օտարականի իրի ընդդէմ կամաց տեառն, բռնութեամբ արարեցեալ: Պատրանն է խաբեբայութիւն, որով խաբեմք զընկերն մեր ստութեամբ, և սուտ երդմամբ, և խաբելով զնա, զիր նորա ընդդէմ կամաց նորա, և ընդդէմ յօժարութեան նորա իւրացուցանեմք, և այսպէս անիրաւաբար, և պատրողութեամբ ընդ յառաջ ելանեմք ընկերի, և եղբօր մերում, բացահերքելով զարդարութիւն: Նենգութիւն է, որով հնարիւք, և խորամանկութեամբ, անիրաւութիւնք, և անարդարիւք կերպօք, անհաւատարմաբար յառաջանալով, և խորամանկութեամբ ընթանալով, խաբեմք զընկերն մեր, և պատրելով զնա, զգոյացութիւն, և զիրս, կամ զիշխանութիւն նր, անիրաւաբար, և անօրինաբար իւրացուցանեմք, անիրաւաբար զրկելով 'ի բարեաց իւրոց զճշմարիտ տէրն: Անիրաւ կշիռն է, որով խաբեմք զընկերն մեր կշռով, և խարդախութեամբ, և նենգութեամբ ընթանամք ընդդէմ նր, և պատրելով զնա 'ի ձեռն անիրաւ կշռոյ, զիրս, և զգոյացութիւն նորա ընդդէմ կամաց նորա անիրաւաբար, և անօրինաբար իւրացուցանեմք: Անիրաւ չափն է, որով 'ի չափելն, վարելով սուտ չափով, պատրեմք զընկերն մեր, խարդախութեամբ, և նենգութեամբ ընդդէմ կամաց նորա անիրաւաբար, և անօրինաբար առաջանալով, և 'ի ձեռն ստոյ, և անիրաւի չափոյ խաբելով զնա, զիրն, և զինչս նորա անիրաւաբար, և անօրինաբար ընդդէմ արդարոյ կամաց նորա ինքնացուցանեմք, և իւրացուցանեմք:

3. Գողութիւն է մեղք անարդարութեան. վասնզի գողն անիրաւաբար իւրացուցանէ զօտարական իրն ընդդէմ կամաց տեառն: Գողն է անիրաւ ընդդէմ Այ ընդդէմ արդարութեան, և ընդդէմ ընկերի: Է անիրաւ ընդդէմ Այ. քանզի բեկանօղն զհնազանդութիւն, գործէ ընդդէմ պատուիրանի, և կամաց նորա, առ օգուտ մարդոյ զգողութիւն արգելոյլ. զի իւրաքանչիւր ոք ապահովական, և հանդարտաբար վայելիցէ զինչս իւր առ ապրուստ իւր, և ընտանեաց իւրոց, առ բարեգործութիւն, և առ ողորմութիւն չքաւորաց և աղքատաց: Է անիրաւ ընդդէմ արդարութեան. վասնզի արդարութիւն կամի, զի ոչ ոք զանիրաւ ձեռն իւր մխիցէ 'ի յօտարական իրն ընդդէմ կամաց տեառն իւրի, զի ամենք ապահովապէս կարիցեն վարիլ ընչիւք իւրովք: Է անիրաւ ընդդէմ ընկերի. քանզի անիրաւաբար, և ընդդէմ կամաց նորա, զրկէ զնա 'ի բարեաց իւրոց, և 'ի յընչից իւրոց, որք պիտոյ են նմա առ ապրուստ իւր, և առ ապրուստ ընտանեաց իւրոց, և առ 'ի գործել զգործս գթութեան, և ողորմութեան: Գողք են անիրաւք նաև ընդդէմ խաղաղութեան, և անդորրութեան մարդկանց. վասնզի վրդովելով զմարդիկ բառնան զխաղաղութիւն, և զանդորրութիւն. ուստի առնեն զմարդիկ զանհանգիստս: (Ուստի աքար, որ գողանալով զամոն մի նկարէն, և երկերիւր երկդրամեան արծաթոյ, և լեզու մի ոսկի, որոյ յիսուն երկդրամեան, վրդովեաց զԻսրայէլ. հրամանաւ յեսու քարկոծեցաւ յամէն յիսրայէլէ. և համայնք ինչք նորա, հրով այրեցան: Որպէս պատմի 'ի գիրս յեսուայ:) Գլ. 7. թիւ. 21. Ասաի տօբիթ երկնչեալ 'ի գողութէ յուլի աղաղակեաց, և ասաց: (Միթէ գողունի է, տուր անդրէ ցտեառնս իւր. զի ոչ է ինձ օրէն ուտել զգողունի:) Տօբիթ. 2. թիւ. 14. Ըստ առաքելոյն գողք, և ագահք ընդ արբեցողաց, ընդ անիծանողաց, և յափշտակողաց զարքայութիւն այ ոչ ժառանգեն:

4. Յափշտակութիւն աճէ 'ի

չարութեան ընդդէմ արդարութեան : Քանզի որ յափշտակէ զօտարական իրն ; յայտնապէս առնու զօտարական իրն ընդդէմ կամաց տեառն , և առնէ զրկանութիւն : Որոյ ցուցանէ զմեծագոյն չարութիւն կամաց սիրողի անիրաւութեան : Այսի է , թէ որ առնէ զյափշտակութիւն , է առաւել անիրաւ ընդդէմ ընկերի . վասնզի առաւել զնա անհանգստացուցանէ , և վրդովէ , և ընդդէմ կամաց նորա անիրաւաբար առաջանայ : Եւ է առաւել անիրաւ ընդդէմ արդարութեան . քանզի յայտնապէս , և բռնաբար պատերազմի ընդդէմ նորա , և է յայտնի թշնամի արդարութեան : Եւ համահետևապէս նաև է առաւել անիրաւ ընդդէմ այ̃ . քանզի առաւել ընդդիմանայ ամենասրբոյ կամին այ̃ , զանիրաւութիւն արգելողի , և առ արդարութի ամենասրբով , և ամենիմաստ պատուիրանաւ իւրով զմեզ պարաւանդողի : Են յափշտակօղք , որք գոլով կարօղք , յափշտակեն 'ի գնելն , կամ 'ի վաճառելն . 'ի գնելն բռնաբար ոչ տալով զարդար գինն . 'ի վաճառելն , առնլով ուժգնութբ զմեծագոյն գին : Են յափշտակօղք, որք բռնութբ չտալով զճշմարիտ պարտս , յափշտակեն : Են յափշտակօղք , որք զմշակս , և զծառայս բռնութբ զրկելով 'ի յարդար վարձուց իւրոց , յափշտակեն: Են յափշտակօղք , որք զանկարս, զորբս , և զայրիս բռնութբ յընչից իւրոց մերկացուցանելով , յափշտակեն : Են յափշտակօղք , որք զօտարականս իրաւունս բռնութեամբ իւրացուցանելով , յափշտակեն : Են յափշտակօղք , և գողք , որք զճանապարհորդս ընդ ցամաք , և ընդ ծով , զրկելով բռնութբ 'ի բարեաց իւրոց , յափշտակեն : Են յափշտակօղք , որք զօտարականս երկիրս անիրաւաբար աւար առնելով , յափշտակեն : Են յափշտակօղք , որք զբոլորս գաւառս անիրաւաբար իւրացուցանելով , և զբազումս վնաս նաև կենի , և պատուոյ ընկերի առնելով , յափշտակեն , Եւ են յափշտակօղք , որք 'ի գիշերոջ 'ի ճաճանապարհի , կամ 'ի տան զօտարականս իրս բռնութբ յափշտակեն :

Ե, Նաև պատարանն է անիրաւութի ընդդէմ այ̃ . ընդդէմ արդարութեան , և ընդդէմ ընկերի . քանզի անհաճոյ է այ̃ , արդարութեան , և ընկերի : Որոյ պատրօղն է անիրաւ դէպ 'ի յա̃ծ , դէպ 'ի յարդարութին , և դէպ 'ի յընկերն : Է անիրաւ ընդդէմ այ̃ . քանզի ա̃ծ , մինչ է ճշմարտութի , սիրէ զանմեղութին . և պահանջէ , զի իցեմք անմեղք , և ճշմարտախօսք : Որոյ պահանջէ 'ի մէնջ , զի թարց պատրողութեան , և խաբեբայութեան ընթանայցեմք , և կեայցեմք . վ̃զի պատրօղն , և խաբեբայն ոչ ունի զանմեղութի , և զճշմարտախօսութի . այլ վարի ստով , և խաբէ : Քանզի սուտն է գործի նորա առ 'ի պատրել , և առ 'ի խաբել զընկերն : Այլ և ս պատրօղն , և խաբեբայն ոչ միայն խաբէ , և վարի ստով , առ 'ի պատրել զընկերն . այլ նաև դնէ զիւր ինքն 'ի յորոգայթի , զի երդնուցու զսուտ : Քանզի երբեմն ոչ կարէ խաբել 'ի ձեռն միայնոյ ստոյ , այլ պիտոյ է նմա նաև երդումն : Եւ այսպէս յայնժամ նաև երդնու , զի խաբիցէ : Եւ այսպէս է անիրաւ ընդդէմ այ̃ , ոչ միայն պատրանօք . այլ նաև ստով , և սուտ երդմամբ : Է նաև անիրաւ ընդդէմ արդարութե . վ̃զի արդարութին պահանջէ զիրաւասիրութի 'ի յիրի , 'ի բանի , և 'ի յերդման : 'Ի պատրօղի նաև ոչ է իրաւասիրութի իրի , ոչ բանի , և ոչ երդման : Ոչ է իրաւասիրութի իրի . քանզի պատրէ , և խաբէ : Ոչ է իրաւասիրութի բանի . վասնզի խաբէ : Եւ ոչ է իրաւասիրութի երդման . քանզի սուտ երդնու : Է նաև անիրաւ ընդդէմ ընկերի . քանզի զանազանիւք կերպիւք վնասէ նմա , երբեմն 'ի յընչի , երբեմն 'ի քանակութե , և երբեմն 'ի յորակութե: Քանզի յորժամ խաբէ զնա 'ի գոյացութե իրի , վնասէ 'ի յընչի : Եւ յորժամ պատրէ 'ի

քանա-

քանակութե , մնաք 'ի քանակութե· Եւ յորժամ խաբէ 'ի յորակութե , մնաք 'ի յորպիսութե ։

6. Նաև նենգութիւն , որ է խորամանկ կերպ պատրողի առ 'ի խաբել է , անիրաւութի ընդդէմ այ , ընդդէմ արդարութե , և ընդդէմ ընկերի · քանզի անհաճոյ է այ , արդարութե , և ընկերի ։ Անհաճոյ է այ · քանզի է ընդդէմ պատուիրանի , և կամացն նորա , զարդարախօսութի սիրողի , և զխարդախութիւն դատապարտողի ։ Անհաճոյ է արդարութե · վասն արդարութիւն պահանջէ զկերպ , որ է ընդ արդարախօսութե , և ոչ ունի զխարդախութի ։ Անհաճոյ է ընկերի · քանզի է վնասակար նմա ։ Պատրողն , և նենգաւորն մեղանչէ ընդդէմ հասարակի դիտաւորութե մարդկանց , որք կացուցին զբանս նշանաւորականս ։ Քանզի բանք նշանակաւորք ոչ են կացուցեալք , զի մարդիկք պարտիցեն , և խաբիցեն զմիմեանս · այլ զի ամ ոք զխորհուրդս իւրս արտաքերիցէ բանիւք նշանակաւորօք առ ծանօթութի միւսոյ ։ Ուրեմն ոչ վարիլն բանիւք առ այդ , առ որ կացուցեալք են , այլ վարիլն առ 'ի խաբել , և պատրել զընկերն , է մեղք , և է ընդդէմ հասարակի դիտաւորութեան մարդկանց , որք կացուցին զբանս վասն մարդկայնոյ ընկերակցութե ։ Ուրեմն 'ի մարդկայինս ընկերակցութիս վարելի է բանիւք , և նշանօք հանդերձ արդարախօսութե , և ճշմարտութե , թարց խաբեբայութե , թարց պատրողութե , թարց դաւաճանութե , թարց խարդախութե , թարց հրապուրանի , և թարց նենգութե ։ 'Ի հաղորդակցութիս մերս հեռանալի է 'ի յերկարատևէ վարձահատուցմանէ , որ է սնուցիչ ձանձրութեց , նիւթ կասկածանաց , ջահ անհամբերութե , և մայր յուսահատութե ։ Հեռանալի է 'ի նենգութե , որ զիմ իր երևեցուցանէ , և զայլ իմ իր գործէ · այսինքն , որ նենգաւորաւ կերպիւ , և դաւաճանութե ցուցանէ զճշմարտութի , և գործէ զխաբեբայութի · ցուցանէ զճշմարտախօսութի , և գործէ զստութի · կեղծէ զարդարութի , և գործէ զանիրաւութի ։ Հեռանալի է 'ի նենգութե , որ է գաղտնի , և դարանակալ չարութի , որոյ արարչագործադունեղք զօրութի ն են պատրելն , և խաբելն ։

7. Անիրաւ կշիռն է ապիրատ , և անօրէն · վասնզի մնաք ընկերի , և է թշնամի արդարութե , և է ներհակ պատուիրանի ամենաբարձրելոյն , յանիրաւութե գարշողի , և զարդարութի սիրողի , և յայտնատեսս ատողի ։ ( Մի առնիցէք անիրաւութի 'ի դատաստանի , 'ի չափս , և 'ի կշիռս , և 'ի գիրս ։ Եւ զոյգք արդարք , և կշիռք արդարք և չափք արդարք , և կապիճ արդար լինիցի ձեզ ։ ) Ղևտ։ 19. Թիւ. 35. Նոյն տր ած մեր , որ գարշի 'ի գործողաց զանիրաւութի , և ատէ զամ անիրաւութի , հրամայէ մեզ , ասելով ։ (Կշիռ. ստոյգ և արդար եղիցի քեզ · և չափ ստոյգ , և արդար եղիցի քեզ , զի բազմօրեայ եղիցիս 'ի վր երկրին , զոր տր ած քո տայցէ քեզ 'ի ժառանգութի ։ Զի պիղծ է առն այ քում ամ , որ առնէ զայն , և ամ որ առնէ զանիրաւութի ։ ) 'Ի յերկրորդի օրինց ։ 25. Թիւ. 15. Ուստի ըստ ածային բարբառոյ , և ըստ ածային պատուիրանաց , զկատարել արդարութի մեզ հրամայողաց , և պատուիրողաց 'ի քսակոջ մերում ոչ պարտին գոլ զանազանք կշիռք ծանրագոյն , և թեթևագոյն · և տան մերում ոչ պարտին գոլ կապիճ մեծագոյն , և փոքրագոյն · այլ կշիռք , արդարք և , կապիճ հաւասար ։ Կշիռն մեր պարտի գոլ արդար , կապիճ մեր արդար , և սափոր մեր արդար ։ Պիղծ է առաջի առն այ մերում անիրաւ կշիռն , և նենգաւորք քաշք , յորս մարդիկք լնանին անիրաւութե , և բնակողք 'ի յերկրի խօսին զստութի , և ունին զլեզու պատրիչ 'ի բերանոջ իւրում ։ Ոչ պարտի գոլ առ մեզ քաշ , և քաշ , չափ , և չափ · վասնզի այսոքիկ պիղծք են

առաջի

առաջի այ, զարդարութիւն սիրողի․ այլ կշիռ արդար, և չափ արդար, զի հաճոյանայցեմք այ, ամենաքաղցրելոյն տն ։

8․ Նաև անիրաւ չափն է ապիրատ, և անօրէն․ քանզի է վնասակար ընկերի, ներհակ արդարութե, և ատելի այ ։ Վասնզի ած որպէս ատէ զանիրաւ քաշն, զանիրաւ կշիռն․ այսպէս և զանիրաւ չափն վնասակարն ընկերի ։ Եթէ գործեալ եղիցիս զարդարութի, և կալեալ լիցիս զմաքրութի, հատուսցէ քեզ տր ած ըստ արդարութե քում, և ըստ մաքրութե ձեռաց քոց տացէ քեզ ։ Դու որ ոչ սիրես զարդարութի, և գործես զանիրաւութի, եթէ յափշտակես, յափշտակեսցիս․ եթէ արհամարհես, արհամարհեսցիս․ մինչ աշխատեալ դադարիս ՚ի յարհամարհելոյ, արհամարհեսցիս ։ Որպէս արասցես, և գործեսցես եղիցիս, ով մարդ, որ պարաւանդեցեալ ես պահել զարդարութի, այնպէս արդարագունեղն ած հատուսցէ, և տացէ ՚ի ծոց քո․ և վերաչափեսցէ զգործ քո ՚ի ծոց քո ։ Ապաուրեմն թող զյափշտակութին, զկողոպտութին, զպատրանս, զխաբեբայութի, զդաւաճանութի, զնենգութի, զստախօսութի, զխարդախութի, զանիրաւ քաշն, զանիրաւ կշիռն, և զանիրաւ չափն, զամ անօրէնութի, և զամս անիրաւութիւս ընդդէմ ընկերի քո, և դրկեա զարդարախօսութի, զճշմարտախօսութի, զարդար քաշ, զարդար կշիռ, զարդար չափ, և զամ արդարութի դէպ ՚ի յընկեր քո, զի կարասցես ընդունիլ ՚ի ծոց քո զբարի հատուցումն ։ Գործեա զարդար չափ, զի ընդունիցիս ըստ այնմ ։ Վասնզի որով չափով չափես, չափեսցի քեզ, և առատրեսցի քեզ ։ Արա, զի դէպ ՚ի յընկեր քո արարողութիւնք քովք իցեն արդար, ոչ միայն որքան առ կեանս, և պատիւ նորա, այլ նաև որքան առ ինչս, և առ փարթամութիւնս նորա, և որքան առ ամենայնս իրաւունս նորա, զի իրաւի ՚ի յամս արարողութիւնս քոյս գտցիս արդար ։

## ԳԼՈՒԽ։ ԾԹ․

### Յաղագս ութերորդի Պատուիրանի այ ։

1․ Ութերորդ պատուիրանն այ է այս ։ Մի սուտ վկայեր ընդդէմ ընկերի քո ։ Իմաստնագունեղն ած յետ արգելման անիրաւութեց, որք կարեն լինիլ արարողութք, սկսանի արգելուլ զանիրաւութիւս, որք կարեն լինիլ բանիւք ընդդէմ ընկերի մերում, և միակաւ պատուիրանաւ արգելու զամս անիրաւութիւս, որք կարեն լինիլ բանիւք ընդդէմ ընկերի մերում ։ Արգելու զամս անիրաւութիւս, որք կարեն լինիլ բանիւք, զի եղիցուք արդարք դէպ ՚ի յընկեր մեր, ոչ միայն արարողութբք, այլ նաև բանիւք ։ Քանզի պարտիմք պահել զամ արդարութի ։ Ուստի պարտիմք լինիլ արդարք, ոչ միայն արարողութբք, այլ նաև բանիւք ։ Եւ քանզի սուտ վկայութին պարունակէ զամս անիրաւութիւս, որք կարեն լինիլ բանիւ, վասն այսորիկ արգելու զսուտ վկայութին, որ կարէ լինիլ ընդդէմ ընկերի մերում ։ Արգելու զամ սուտ վկայութի, և զայս, որ լինի առաջի առանձնականաց մարդկանց․ և զայն, որ լինի առաջի դատաւորի առ ՚ի ներբերել զվնաս կամ ՚ի կենի, կամ ՚ի պատուոջ, կամ ՚ի յինչս ։ Եւ յայնժամ սուտ վկայութին, որ լինի ընդդէմ ընկերի, լինի միջոց առ ՚ի ներբերել զմեծ վնաս ընկերի, զոր օրինակ, զի սպանանիցի, կամ անարգիցի, կամ կորուսանիցէ զինչս, և զփարթամութիւս, և այսպէս, զի լինիցի նմա վնաս, կամ ՚ի կենի, կամ ՚ի պատուոջ, կամ ՚ի յինչս ։ Ուստի յայնժամ սուտ վկայութին ընդ-

ընդ-

ընդդէմ ընկերի մերում է վատթարագունեղ, և անիրաւագունեղ:

2. Ութերորդ պատուիրանս այս, որ արգելու զամ սուտ վկայութիւն, այսինքն, և զսուտ վկայութիւնն, որ լինի առաջի առանձնականաց անձանց, և զայն, որ լինի առաջի դատաւորի, նաև արգելու զթիւր դատողութիւնն, զսուտ, զբամբասանս, զրպարտախօսութիւն, և զանիծաբանութիւն. վասնզի համայնք այսոքիկ ունին զինքեանս ընտ կերպի սուտ վկայութեան: Սուտ վկայութիւնն է սուտ ստորասութիւն զումեքէ: Թիւր դատողութիւնն է, դատել զոք առ վատթարագոյն կողմն թարց բաւականի հիման: Սուտն է արտաբերութիւն բանի ընդդէմ մտաց: Բամբասանն է նսեմացուցումն համբաւոյ ընկերի: Զրպարտախօսութիւնն է անիրաւախօսութիւն ընդդէմ պատուոյ ընկերի: Անիծաբանութիւնն է խնդրել զչարիս ընկերի, և անիծանել զնա: Ուստի յորժամ առաջի մարդկանց երբեմն ստորասեմք զսուտ ինչ զընկերէ, առնեմք զսուտ վկայութիւն ընդդէմ նորա: Եւ յորժամ դատեմք զոք գոլ վատթար թարց բաւականի հիման, գործեմք զթիւր դատողութիւն: Եւ յորժամ ասեմք, և արտաբերեմք զեր ինչ ընդդէմ այնորիկ, զոր ունիմք 'ի միտ, ստեմք, և խօսակցութիւն մեր է սուտ: Եւ յորժամ անիրաւաբար վատահամբաւեմք, և բառնամք զումեքէ զբարի անուն, և զբարի համբաւ նորա, գործեմք զբամբասանս: Եւ յորժամ անիրաւիւք, և պարսաւականօք բանիւք անարգեմք զոմն, զրպարտեմք: Եւ երբ խնդրեմք զչար ինչ ումեք, գործեմք զանիծաբանութիւն: Արդ. կարճառօտաբար, և սակաւիւք յայտնեօք բանիւք ծանուցեալք, և բացամեկնեցեալք են այնոքիկ իրք, որք արգելեցեալք են 'ի ձեռն ութերորդի պատուիրանի, այսինքն, սուտ վկայութիւն ընդդէմ ընկերի, թիւր դատողութիւն, սուտն, և ստախօսութիւն, բամբասանն, որ է անուանակոտրութիւն, զրպարտանս, որ է զրպարտախօսութիւն, և չարախօսութիւն, որ է անիծաբանութիւն:

3. Կարեմք առնել զճշմարտավկայութիւն. քանզի 'ի ճշմարտավկայութեան ոչ է սուտ, այլ է ճշմարտութիւն: Առ օգուտ ընկերի պարտիմք գոլ յօժարք առ 'ի վկայել զճշմարիտն, վասնզի այսպիսի վկայութիւնն է գործ սիրոյ: Եւ երբեմն պարտաւորիմք, զի հնազանդիցիմք դատաւորի, և ազատիցեմք զընկեր մեր 'ի վտանգէ: Բայց առ վնաս նորա ոչ, եթէ ոչ երբ պարտաւորեցեալք եմք ասել զճշմարիտն: Քանզի թէպէտ իցէ գովելի գոլ յօժար առ օգուտ ընկերի. սակայն ոչ է փափագելի գոլ պատրաստ առ վնասակարութիւն նորա: Արդ ոչ երբէք է օրէն վկայել զսուտ. վասն զի 'ի սուտ վկայութեան է ստախօսութիւն, որ միշտ է վատթար: Յորժամ 'ի սուտ վկայութեան է նաև երդումն, յայնժամ մեղանչի մահացու: Քանզի յայնժամ լինի սուտ երդումն, որ միշտ է մեղք մահացու, նաև երբ ոչ լինի ծանր վնաս ընկերի. վասնզի սուտ երդումն է ծանր անիրաւութիւն ընդդէմ այ: Բայց երբ 'ի սուտ վկայութեան ոչ է երդումն, յայնժամ սուտ վկայութիւնն ըստ վնասու, որ լինի ընկերի, է առաւել, կամ նուազ ծանր. քանզի 'ի պատճառեցելոյ վնասու ընդունի զծանրութիւն: Որ սուտ վկայութեամբ իւրով վնասէ ընկերի, պարտաւորի վճարել զվնասն. վասնզի սուտ վկայութեամբ իւրով եղև պատճառ վնասու: Ստախօս վկայն, և որ առնէ զսուտ վկայութիւն, երդնլով առաջի դատաւորի, երից անձանց վնասակար է: Նախ է վնասակար, և անիրաւ այ, զոր անարգէ սուտ երդմամբ, երկրորդ է վնասակար դատաւորի, զոր խաբէ ստախօսութեամբ: Վերջապէս է վնասակար, և անիրաւ անմեղի, որում վնասէ սուտ վկայութեամբ: Ուստի այսպիսի ոք է թարց արդարութեան, անիրաւ, և անօրէն ընդդէմ այ, և է անիրաւ, և անօրէն ընդ-

դէմ

դէմ դատաւորի. և է անիրաւ, և անօրէն ընդդէմ ընկերի իւրոյ:

4. Ովք, որ դատէ զընկեր իւր դոլ վատթար թիւր դատողութե՟, և թարց բաւականի հիման, մեղանչէ. քանզի առնէ զանիրաւութի՟ ընկերի անբանիւ դատողութե՟ իւրով, վասնզի դատողութի՟ն թարց բաւականի հիման, որ դատէ, և սորասէ, է անբան: Թիւր դատողութե՟ դատօղն զընկեր իւր, ըստ վատհամբաւութե՟, զոր պատճառէ ընկերի իւրում, աւաւել, կամ նուազ մեղանչէ. քանզի թիւր դատողութի՟ն ընդունի զծանրութի՟ իւր 'ի յանիրաւութե՟, որ լինի ընկերի թիւր դատողութե՟: Է վտանգաւորագոյն մեղք: Վասնզի կորէ պատահիլ, զի թիւր դատողութե՟ դատօղն խօսիցի, և բազումք հաւատայցեն, և վատահամբաւիցի անմեղն, և լինիցի նմա վնաս, և ծնանիցին մեծ վրդովմունք, և լինիցի դժուարին հատուցումն վատահամբաւութե՟, և վերանորոգումն վնասու, անմեղի արարեցելոյ, և այսպէս վտանգաւորիցի փրկութի՟ն առնողի զթիւր դատողութի՟: Է վատթարագունեղ սովորութի՟ մարդոյ զա՟մ ոք դատել կամեցողի: Քանզի այսպիսի ոք բազմիցս զթիւրս դատողութիս զբազմաց մարդկանց զանազանաց կացութեց, և արժանապատուութեց հանապազ ձևակերպեսցէ, թարց կոչման, թարց թոյլտուութե՟ խօսելոյ, և զիւրեանս ինքեանս պաշտպանելոյ, և թարց քննութե՟, և փորձառութե՟, տուեալ զվճիռ դատապարտութե՟: Ո՜ յանդգնութի՟, ո՜ լրբութի՟ անիրաւ դատողի: Անսահման իմաստութի՟ն, վասն փրկութե՟ մարդկանց ներմարմնացեալն, որ գիտէր զվտանգաւորութի՟ն այսպիսւոյ վատթարագունեղի սովորութե՟, խրատեալ զմարդիկ, ասաց: (Մի դատիք, զի մի դատիցիք: Զի որով դատաստանաւ դատիք դատեցելոց էք. և որով չափով չափիք, չափեսցի ձեզ:) Մատթ. 7. Թիւ. 1. Ով Մարդ, որ կամիս դատել զա՟մ, երկիր, զի մի դատիցիս:

5. Սուտն միշտ է մեղք. քանզի ունի զստութի՟, որ է ներհակ ճշմարտութե՟: Ճշմարտութի՟ն միշտ է սիրելի: Ուստի միշտ խնդրելի է ճշմարտութի՟ն. ապաուրեմն միշտ անդունելի. է ստութի՟ն: 'Ի ստախօսութե՟ է խաբեբայութի՟: Ապաուրեմն միշտ անդունելի է ստախօսութի՟ն: Գոյ սուտ, որ է օգտակար: Զորօրինակ, սուտ, որով ոմն ազատէ զընկեր իւր 'ի վտանգէ: Թէպէտ իցէ օգտակար. սակայն այսու ա՟մն ոչ դադարի դոլ մեղք: Ուստի է ներելի մեղք: Գոյ սուտ, որ է խաղական, զորօրինակ սուտն, որ լինի թարց վնասու ընկերի 'ի խաղի: Եւ և այս ոչ դադարի դոլ մեղք. քանզի է խաղական: Ուստի է մեղք ներելի, վատագոյն քան զօգտակար սուտն: Գոյ սուտ, որ է վնասակար, զորօրինակ սուտն, որով ոմն վնասէ ընկերի իւրում: Այս է մեղք յա՟մ կողմանէ: Է մեղք 'ի կողմանէ ստոյ, և է մեղք 'ի կողմանէ վնասու: Ըստ վնասու, և վնասակարութե՟, որ լինի ընկերի, է առաւել, կամ նուազ ծանր, վնասակար սուտն: Քանզի վնասակար սուտն ընդունի զծանրութի՟ն 'ի ծանրութե՟ վնասու, և վնասակարութե՟, որ լինի ընկերի: Համայնք սուտք են անդունելիք. վասնզի ա՟մք սուտք են մեղք 'ի ներքուստ: Ընդդէմ ստոյ այսպէս խօսի Ոսկեբերանն: (Սուտք եթէ ոչ ունին, զոր խաբիցեն, խաբեն զիւրեանս ինքեանս. որպէս ասի 'ի սաղմոսի: Ստեցին ինձ յանօրէնութե՟ իւրեանց:) 'Ի վերայ մատթէի: Նոյն ա՟բն ասէ: (Մինչ վասն խոնարհութեան խօսիս զսուտ, եթէ ոչ էիր մեղաւոր, նախ քան թէ խօսեալ իցէիր զսուտ, խօսելով զսուտ լինիս, յորմէ խուսափեալ էիր): 'Ի վերայ Մատթէի: Ապաուրեմն փախչելի է յա՟մէ ստոյ:

6. Բամբասանն, որ է սևացուցումն անուան, և համբաւոյ մար-

մարդոյ, է մեղք. քանզի անիրաւաբար բառնայ զբարի համբաւ ընկերի: Մինն 'ի բարեաց ընկերի, է բարի անուն նորա, որ է ցանկալի արտաքին բարին նորա, զի պատուելաբար կարիցէ կեալ 'ի մէջ մարդկանց: Որ անիրաւաբար բառնայ զայս բարին նր, առնէ նմա զանիրաւութիւն: Ուստի մեղանչէ, և պարտական լինի առ հատուցումն: Գոյ բամբասող, որ հնարէ զսուտ յանցանս 'ի չարութեանէ իւրմէ, և դնէ 'ի վերայ ընկերի, զի բառնայցէ զբարի անուն, և զբարի համբաւ նորա: Այս է վատթարագունեղ բամբասող: Գոյ բամբասող, որ զգաղտնի մեղքն ընկերի, զորմէ ունի իրաւուն, զի մնայցէ թաղեցեալ, յայտնէ, և վատահամբաւէ զընկերն: Այս է վատթար բամբասող: Գոյ բամբասող, որ զհրապարակական մեղքն ընկերի մեծացուցանէ: Այս է չարակամ բամբասող: Գոյ բամբասող, որ զյայտնի մեղքն ընկերի, որ թաղեցեալ է 'ի մոռացութեան, վերածէ 'ի միտ, կամ յայտնէ յայնմիկ տեղւոջ, ուր ոչ գիտէին: Եւ այս է բամբասող թարց սիրոյ: Սովորութիւն բամբասելոյ է վատթարագունեղ: Է վարժատուն բազմագունից չարեաց: Եւ այսու վատթարագունեղիւ սովորութբ վտանգաւորի փրկութիւն, վասն դժուարութեան հատուցման համբաւոյ ընկերի, անիրաւաբար բարձելոյ: Շրթունք բամբասողաց, են շրթունք անիրաւք, և լեզու նոցա լեզու նենգաւոր: Բամբասողք, և զհամբաւն ընկերի սեւացուցանողք սրեն զլեզուս իւրեանց իբրև զօձս: Ենթ շրթանց նոցա է թիւն իժից: Չարալեզուն, և երկլեզուն, որ վրդովէ զայնոսիկ, որք են 'ի խաղաղութեան, է անիծեալ. և լեզուն, որ յարուցանէ զխռովութիւն 'ի մէջ բազմաց, և ցրուէ զնոսա 'ի քաղաքէ առ քաղաք, է անիծեալ:

7. Անիծեալ, որ անիրաւիւք շրթամբք իւրովք դաղտաբար հարկանէ զընկերն: Կոկորդ բամբասողաց է գերեզման բացեալ, լեզուօք իւրեանց նենգաւորօք գործեն, և ենթ շրթանց իւրոց ունին զթիւն իժից: Ատամունք նոցա են զէնք, և նետք չարութեան, և լեզու նոցա սուր սրեցեալ: Վէրն լեզուի անիրաւի, յաղթէ զվէր խարազանի: Վասնզի վէրն խարազանի առնէ զդանակոծութիւն. իսկ վէրն լեզուի փշրէ զոսկերս: Սք են, որք սատելով ասեն զամ չար ընդդէմ արդարոց զերանութիւն վայելողաց: Բամբասողք են օձք խայթահարք, և ծնունդք իժից, ոչ երկնչողք 'ի դատաստանէ գեհենոյ, Սք են, որք 'ի չար գանձէ սրտի իւրոյ արտաբերեն զչարիս: Չարիք բանք, և ունայնախօսութիւնք բամբասողաց կարի օգնեն ամբարշտութեան, և բան նոցա որպէս զխեցգետին առղայ: Լեզու բամբասողաց է հուր, բոլորոքոք ընդհանրութիւն անիրաւութեան և անդադար չար, լի թունիւ մահաբերաւ, և է սիրող, և առնող զատութիւն: Մեծք բամբասողք նաև վատախօսին զայնց. որք հետևին բարութեան, և յորոց ընկալեալք են զբարերարութիւն: Անիրաւք բամբասողք սրեն որպէս զսուսեր զլեզուս իւրեանց, և լարեն զաղեղս, զի նետահարիցեն դաղտաբար զանարատն: Հաստատեն ինքեանց զբան չար, և լեալք աներկիւղք նետահարեն զանմեղն: Գաղտաբար բամբասողն նմանէ օձի խածանողի 'ի լռութեան: Այք բամբասողք են արիւնահեղք, չարալեզուի վրդովմամբ, ատելութիւն, թշնամութիւն, և նախատան: Չարաբարոյ բամբասողն, դարձուցանող զբարին 'ի չարն, դարանակալ լինի, և 'ի վերայ ընտրելոց դնէ զարատ: Լուծն բամբասողի է երկաթեղէն, և կապան նորա է պղնձեղէն: Երանեալ է այն, որ քողեցեալ է 'ի լեզուէ բամբասողի, և որ ոչ առքարշեաց զլուծ նորա, և կապանօք նորա ոչ է կապեցեալ: Բամբասողք են ատելիք այ, և զարքայութիւն նորա ոչ ժառանգեն: Բամբասողն զեղբայր իւր, և դատողն

տօղն զնա , չարախօսի զօրինէ , և դատէ զօրէն :

8. Եւևս զրպարտանն է մեղք: Քանզի , որ զրպարտէ զընկերն , անարգէ զնա: Ըստ անարգականի բանի , որով անարգէ զընկերն , ծանրագոյն , կամ նուազ ծանրաբար մեղանչէ կուռախօսն : Վասնզի զրպարտանն առնու զծանրութիւն իւր 'ի ծանրութենէ անիրաւականի բանի , որով անարգի ընկերն : Անիրաւաբար զրպարտօղն , և մեղանչօղն ընդդէմ ընկերի , պարտաւորի առ հատուցումն , խնդրելով զթողութիւն յայնմանէ , զոր վշտացոյց կուռախօսութեամբք իւրովք , խոնարհեցուցանելով զիւր ինքն ըստ որպիսութեան անձին , զոր կուռախօսութեամբք իւրովք անարգեաց : Բամբասօղն , որ գաղտաբար նենգաւորաւ լեզուաւ իւրով խաւարեցուցանէ զբարի համբաւն ընկերի , է իբրև պղծող , որ գաղտաբար բառնայ զստացական իւրն ընդդէմ կամաց նորա · իսկ զրպարտախօսն , որ յայտնաբար անիրաւախօսութեամբք իւրովք անարգէ զընկերն , է իբրև յափշտակօղ , որ յայտնաբար , և բռնութեամբ բառնայ զստացական իւրն : Նաև անիծանօղն մեղանչէ , անիծանելով · վասնզի անիծաբանութեամբ իւրով խնդրէ զ չար ընկերի : Ըստ որպիսութեան անիծաբանութեան 'ի կողմանէ չարի , զոր խնդրէ ընկերի , ծանրագոյն , կամ նուազ ծանրաբար մեղանչէ · քանզի ծանրութիւն այս առնանի 'ի ծանրութենէ չարի , որ խնդրի ընկերի : Անիծանօղն է անիրաւ ընդդէմ ընկերի , և ընդդէմ այ : Է անիրաւ ընդդէմ ընկերի · վասնզի խնդրէ նմա զչար : Է նաև անիրաւ ընդդէմ այ · քանզի անիծանօղն խնդրէ , զի ած կորուսանիցէ զմարդն , որ ոչ կամի կորուսանել , այլ փրկել : Այսուրեմն բացահերքեալք զամ չարութիւն , և զամ նենգութիւն , և զկեղծաւորութիւնս , և զսուտն , զդաւաճանութիւն , և զկռիւս , և զ զրպարտախօսութիւնս , և զնախանձս , և զամս բամբասանս , որպէս այժմ ծնեցեալք մանկունք թարց նենգութեան , ցանկասցուք կաթի , զի նովիմբ աճիցեմք 'ի փրկութիւն , սակայն եթէ ճաշակեմք , զի քաղցր է տր :

## ԳԼՈՒԽ. Ծ.

### Յաղագս իններորդի Պատուիրանի այ :

1. Իններորդ պատուիրանն այ է այս , մի ցանկար կնոջ ընկերի քո : Իններորդ պատուիրն որոշեցեալ 'ի տասներորդէ , արգելու զցանկութիւն կնոջ օտարականի : Ամենիմաստն ած , որ կամի զմեզ գոլ ուղիղս , ոչ միայն արարողութեամբք , և բանիւք · այլ նաև սրտիւ , և ցանկութեամբք , այսինքն , նաև ներքնայնովք արարողութեամբք · յետ պատուիրանաց , որովք արգելեաց զմեզ , որք լինին արարողութեամբք , և բանիւք , կամի արգելուլ զմեզ , որք լինին սրտիւ , և ցանկութեամբք : Նախ արգելեաց զմեզս , որք են յայտնիք · յետոյ արգելու զայնոսիկ , որք գաղեցեալք են 'ի ներքս : Արդ ուրեմն արգելու զցանկութիւն կնոջ օտարականի , և իրի օտարականի : Նախ խօսիցուք զցանկութենէ կնոջ օտարականի , և յետոյ զցանկութենէ իրի օտարականի : Համայնք չարք ցանկութիւնք են մեղք · քանզի ած ոչ միայն պահանջէ 'ի մէնջ , զի գործողութիւնք , և բանք մեր իցեն ուղիղք · այլ նաև պահանջէ , զի համայնք ցանկութիւնք մեր իցեն ուղիղք : Չարք ցանկութիւնք են սերմունք չարաց բանից , և չարաց գործոց : 'Ի չար ցանկութենէ մարդիկք գան առ վատթարս բանս , և առ անիրաւս գործս : Վասնզի ցանկութիւնք մարդկանց շարժեն զնոսա առ այնոսիկ իրս , որոց ցանկան · ուստի եթէ այնոքիկ , որոց ցանկան , իցեն չարք , շարժեն զնոսա առ չարս : Մարդիկք , որք ունին զուղիղս գործս ,

և զուղիղս բանս , բայց զչարս ցանկութիւնս , են կեղծաւորք , և սուտ մարգարէք , և ծառ չար , առնօղ զպտուղ չար . յառաջացօղ 'ի չար ցանկութենէ :

2. Ասէ վարդապետն Ճշմարտութեն : ( Զգուշ լերուք 'ի սուտ մարգարէիցն , որք գան առ ձեզ հանդերձիւք ոչխարաց , և 'ի ներքոյ են գայլք յափշտակօղք : 'Ի պտղոց նոցա ծանիջիք զնոսա : Մի թէ քաղիցեն 'ի փշոյ խաղող , կամ 'ի տատասկէ թուզ : Այսպէս ամ ծառ բարի պտուղ բարի առնէ . և ծառ չար , պտուղ չար առնէ : Մատթէի : 7. թիւ. 15. Սուտ մարգարէք գան զգեստիւք ոչխարաց , այսինքն , ունին զբարիս գործս , և զբարիս բանս երևելիս , հեռանալով 'ի յայտնեաց չարագործութենէ , և 'ի յայտնեաց մեղանչականաց բանից : Բայց 'ի ներքուստ են գայլք յափշտակօղք , այսինքն , սրտիւ , և ցանկութբք են չարք , և անիրաւք : Զարտաքինս յայտնիս երևելիս բարեգործութիւնս , և զբարիս բանս ցուցանեն վասն սնափառութեան : Ուստի են կեղծաւորք : Գործք , և բանք նոցա , որք երևին բարիք , ոչ են ճշմարտապէս բարիք . վասնզի այնպիսիք ոչ շարժին 'ի յառաքինութե , այլ 'ի սնափառութե : Այնպիսիք ոչ միայն են անիրաւք սրտիւ , և ցանկութբք . այլ նաև են անիրաւք 'ի գաղտնիս գործս , և 'ի վատթարս բանս . քանզի 'ի չար ցանկութեանց գան առ գաղտնիս գործս , և առ վատթարս բանս : Եւ թէպէտ յումեք սեռօջ վասն սնափառութե ոչ գործիցեն զյայտնիս վատթարս գործս , և ոչ արտաբերիցեն զյայտնիս վատթարս բանս . սակայն յայլում սեռօջ գործեն զյայտնիս վատթարս գործս , և արտաբերեն զյայտնիս վատթարս բանս , որ յայտ է 'ի փարիսեցիս : Ուստի են ծառք չարք առնօղք զպտուղ չար : Ուստի 'ի պտղոց նց պիտոյ է ճանաչել զնոսա :

3. Երևելիք բարեգործութիւնք , և բարիք բանք կարեն գոլ թարց ուղղութե սրտի , և թարց բարեաց ըղձից , որք են ներքինք ներգործութիւնք առաքինութեանց . վասնզի կարեն յառաջագայիլ յունայնէ սնափառութենէ : Այլ ուղղութի սրտի , և բարիք իղձք , որք են ներքինք ներգործութիւնք առաքինութեանց , ոչ կարեն գոլ ընդ չարագործութեանց , և ընդ ժանտախօսութեանց . քանզի շարժեն , և աճեն զմարդն առ ուղղախօսութիւնս , և առ բարեգործութիւնս : Եւ այսուքիկ ամենեքեան վն այսորիկ այնպէս , որպէս ասացեալ , և բացամեկնեցեալ է , վասնզի ամ ծառ բարի զպտուղս բարիս առնէ . իսկ ծառ չար զպտուղս չարս առնէ : Ոչ կարէ ծառ բարի առնել զպտուղս չարս և ոչ ծառ չար առնել զպտուղս բարիս : Ներքին սրբակցութին , մինչ մնայ , ոչ է թարց սրբակցութե արտաքնայնոյ . վասնզի է արմատն սրբակցութե արտաքնայնոյ : Երևելի արտաքին սրբակցութին է թարց սրբակցութե ներքնայնոյ . քանզի է 'ի սնափառութե : Ած արգելեալ զչար ցանկութիս , զի ցուցանիցէր մեզ , ոչ հաճոյանալ ինքեան երևելի սրբակցութին , որ է թարց ներքնայնոյ սրբակցութե , և է 'ի սնափառութե . բայց հաճոյանալ ինքեան զներքին սրբակցութին , որ է արմատն արտաքնայնոյ սրբակցութե : Ուստի ած պահանջէ 'ի մէնջ զերկաքանչիւր սրբութին , և զներքինն , և զարտաքինն , զի լինիցիմք բոլորովիմբ բարիք , և ներքնապէս , և արտաքնապէս , և զի բացաշարժիցի 'ի մէնջ ամ անմաքրութի , և ներքինն , և արտաքինն : Ած է տրն սրբութե . է տր սրտից , և անդամոց մերոց , զգայութեանց մերոց , շրթանց մերոց , և լեզուաց մերոց . է տր հոգւոց մերոց , և մարմնոյ մերոյ , և ամից կարողութեանց մերոց : Ուստի կամի , զի համայնք արարողութիւնք , և ամք ներգործութիւնք մերք լինիցին ըստ բարեհաճութե իւրում :

4. Համայնք , որք ասացեալք

են

են չար ցանկութեանց 'ի հասարակի, իմանալիք են ըստ միոյ վավաշտականաց, և բղջախոհականաց ցանկութեանց, թէ արդարև պատուիրանաւ Աստուծոյ արգելեցեալք իցեն ամք ցանկութիւք վավաշտականք, և բղջախոհականք: Ուստի համայնք վավաշտականք, և բղջախոհականք ցանկութիւք են մեղք. վասնզի են ընդդէմ պատուիրանի այ: Արդարև են չարք. քանզի են ներքինք ներգործութիւք բղջախոհութե, և են ներքին պղծութիւք, պղծօղք զհոգիս մեր: Են ներքինք վավաշտականք, և բղջախոհականք ներգործութիւք, չարժօղք, և ածօղք զմարդն առ վավաշտականս բանս, և առ վավաշտականս գործս: Են չարք սերմունք, արտադրօղք զպոռնկութի, զշնութի, զկուսապղծութի, զաղդապղծութի, կամ զբո̃ դարշելի արարողութիւն ընդդէմ բնութեան: Ուստի համայնք բղջախոհականք, և վավաշտականք ցանկութիւք են սանձելիք: Հեռանալի է 'ի մասնաւորէ կենցաղավարութե, ընկերակցութե, և բարեկամութե կանանց: Հեռանալի է 'ի յակնարկութե, 'ի շօշափմամանէ, 'ի խօսակցութե, և 'ի յընտանեկցութե կանանց: Հեռանալի է յամից ասացելոց. քանզի կենցաղավարութի, ընկերակցութի, բարեկամութի, ակնարկութի, շօշափումն, խօսակցութին, և ընտանեկցութին կանանց ընդոստուցանեն, բորբոքեն, և վառեն զբղջախողականս, և զանմաքուրս ցանկութիս: Եթէ միայնք երևակայութիւք կարօղք են ընդոստուցանել, բորբոքել, և վառել զվավաշտականս, և զանմաքուրս ցանկութիս. ուրեմն հզօրագոյն, և սաստկագոյն կարասցեն ընդոստուցանել, բորբոքել, և վառել այնոքիկ իրականք կենցաղավարութիւք, ընկերակցութիւնք, բարեկամութիւնք, ակնարկութիւնք, շօշափմունք, խօսակցութի, ընտանեկցութի, և խաղն կանանց: Հեռացուցանելիք են պատճառք, զի արգելանիցին գործք: Հեռանալի է 'ի հրոյ, զի մի ջերմանայցեմք, 'ի հրկիզմանէ, զի մի բորբոքիցիմք, և 'ի յիժէ, զի մի խածանիցիմք:

5. Որոգայթական ընտանեկցական ընկերակցութին կանանց, և մասնաւոր բարեկամութին նոցա, դերեցուցանեն զխղճն մարդկանց, և քարշեն զնոսա առ ապօրինաւոր սէր նոցա, և առնեն զնոսա կորուսանել զառաքինութի, և անկանիլ 'ի սէր նոցա, և ստանալ զշփոթումն, առաջի այնոցիկ, որք դան 'ի ճանաչումն ապօրինաւորի սիրոյ նոցա: Աստի հետևին տարաձայնութիւք, թշնամութիւք մարտնչումն, վրդովումն ընտանեաց, բարձումն խաղաղութե, և երբեմն նաև հեղումն արեան: Վատթար իղձն կնոջ ճանաչի 'ի դերադանցութե աչաց, և 'ի յարտևանս նորա: Հեռանալի է 'ի դերադանցութէ ականց նր, և 'ի յարտևանաց նորա, զի մի սպանանիցեն: Սիրօղն զորոգայթական ընտանեկցութի կանանց, լինի վատթար: փտեցումն, և որդունք ժառանգեն զնա: Բարձրանայ 'ի մեծագոյն օրինակ, և բառնի 'ի թուլոյ հոգի նորա: Սիրօղք կանանց, և ցանկացօղք կողակցաց ընկերաց իւրոց, բարկացուցանեն զած, զի սրտմտեալ 'ի վերայ նց, պատժիցէ զապօրինաւոր, և զանիրաւ սէրն նոցա: Սրտմտութի տեառն է 'ի վերայ կանանց զցանկութի մարդկանց վտանգաւորաւ կենցաղավարութե իւրով վառողաց, և զսիրտ մեր բնակարան տեառն բորբոքողաց. քանզի զմեզ, և զսիրտ մեր ստեղծ ած վասն իւր, զի ծառայիցէաք ինքեան, և սիրիցէաք զինքն: Տրն մեր է ամենամաքուր: Ուստի վայելէ նմա մաքուր բնակարան: Ցանկութի է պղծութի: Ապա ուրեմն ցանկութին, և պղծութին հեռացուցանելի է 'ի բնակարանէ ամենամաքրոյ տեառն, զի մի պղծիցէ զնա. և առնիցէ բնակարան անմաքրոյ ոգւոյ, դարշելւոյ թշնամւոյ տեառն, ստեղծչի մերոյ:

6. Մեք

6. Մեք քրիստոնեայքս եմք անդամք Քի՛, մաքրագունեղի խորհրդաւորի գլխոյ մերոյ: Միաւորիլ պարտիմք գլխոյ մերոյ, ոչ միայն հաւատով. այլ նաև ախորժութբ, և սիրով, զի լինիցիմք մի ինչ ընդ նմա 'ի ձեռն սիրոյ: Սէրն, որով միաւորիմք ընդ Քի, է մաքուր, և անարատ: Իսկ սէրն ցանկութե, որով ոմն ցանկայ կնոջ ընկերի իւրոյ, է անմաքուր, և վավաշոտական: Անմաքուր, և մաքուր սէրն. և վավաշոտական, և մաքուր սէրն, ոչ կարեն գոլ 'ի միասին 'ի նոյնում սրտի: Ուստի որք անմաքրով, և վավաշոտականաւ սիրով սիրեն զվատթարս կանայս, և լինին մի ընդ նոսա, կորուսանեն զսէրն Քի, և կորուսանեն զլինելն մին ախորժութբ, և սիրով ընդ Քի: Ուստի այնպիսի ոք որքան առ ախորժութի, և առ սէր, որոշի 'ի Քէ մաքրագունեղէ խորհրդաւորէ գլխոյ իւրմէ, և անարատագունեղէ, և սիրելագունեղէ հոգևորէ փեսայէ հոգւոյ իւրոյ, և որքան առ ախորժութի, և սէր զուգակցի վատթարից, և անմաքրոց կանանց, և 'ի սրտի իւրում շնայ ընդ նոսա, ըստ այնմ տեառն: (Բայց ես ասեմ ձեզ, թէ ամ որ հայի 'ի կին մարդ առ 'ի ցանկանալոյ նմա, անդէն շնացաւ ընդ նմա 'ի սրտի իւրում: Մատթ. 5. թիւ. 28. ուրեմն հեռացուցանելի է 'ի սրտէ մերմէ անմաքուր սէրն կանանց, զի միայցէ 'ի նմա մաքուր սէրն Քի: Եւ փախչելիք են առիթք, ըստ այնմ տեառն: (Եթէ ակն քո աջ գայթագղեցուցանէ զքեզ, խլեա զնա, և ընկեա 'ի քէն, զի լաւ է քեզ, եթէ մի յանդամոց քոց կորիցէ. և մի ամ մարմինդ քո անկանիցի 'ի գեհեն: Եւ եթէ աջ ձեռն քո գայթագղեցուցանէ զքեզ, հատ զնա. և ընկեա 'ի քէն. զի լաւ է քեզ, եթէ մի յանդամոց քոց կորիցէ, և մի ամ մարմինդ քո արկանիցի 'ի գեհեն: ) Մատթ. 5. թիւ. 29.

7. Սիրտ մեր է տաճար հոգւոյ ս̃բոյ, որ է 'ի մեզ, և զոր ունիմք 'ի ա̃յ: Ուստի և մեք, և սիրտն մեր, ոչ եմք մեր, այլ եմք հոգւոյ ս̃բոյ: Ուրեմն զեղձն, և զսէրն սրտի մերոյ, ոչ պարտիմք տալ վատթարից, և անմաքրոց կանանց. այլ պարտիմք տալ հոգւոյն ս̃բոյ, տեառն սրտի մերոյ: Որք տան զեղձ, և զսէր իւր վատթար կանանց, տան նոցա նաև զինչս իւր: Ուստի կորուսանեն զհոգիս իւրս, զիւրեանս ինքեանս, և զինչս իւր: Է իր կարի վտանգաւոր նստիլ ընդ օտարական կնոջ, և բազմիլ ընդ նմա 'ի յանկողնի, և վիճել ընդ նմա 'ի գինւոջ. զի որ ոչ փախչի յասացելոց առթից, գնէ զիւր ինքն 'ի յօրոգայթի տալոյ նմա զսիրտ իւր. և արեամբ իւրով անկանիլ 'ի կորուստ: Սիրողդ զփրկութի հոգւոյ քո, զգուշ լեր, զի մի կորուսանիցես զնա, փախչելով բոլորովիմբ յասացելոց առթից: Ամենեին հակել պարտիմք, զի զսիրտ մեր պահիցեմք մաքուր, և ս̃բ: Վասնզի տէրն սրտի մերոյ է ա̃ծ, կամի զսրբացուցումն մեր, զի հեռացուցանիցեմք զմեզ յամէ անմաքրոյ սիրոյ, և 'ի վավաշոտականէ ցանկութէ, զի դիտիցեմք զանօթն մեր ժառանգել 'ի սրբացուցման, և 'ի պատւոջ, ոչ 'ի յախտի ցանկութե, որպէս և հեթանոսք, որք ոչ ճանաչեն զա̃ծ: Հեռանալի է 'ի կնոջէ կաքաւողէ, և 'ի ձայնէ նորա: Քանզի որք հանապազ են ընդ կաքաւողի, և ունկնդնեն նմա, գնեն զիւրեանս ինքեանս 'ի յօրոգայթի կորընչելոյ 'ի գործունակութե նր: Ոչ է նայելի 'ի դէմս կանանց, և ոչ յամելի է 'ի մէջ նց: Վասնզի որպէս 'ի զգեստից յառաջանայ ցեց, այսպէս 'ի կնոջէ անիրաւութիւն առն:

8. Ճնշելիք են անդամք մերք. որք են 'ի վերայ երկրի, զի կարիցեմք արտաքսել 'ի մէնջ զանմաքրութին, զարատութի, զվավաշոտութի, և զչար ցանկութի: Բղջախոհութին է դժոխային հուր, որոյ նիւթն են որկրամոլութին, ընդոստուցումն, կենցաղավարութի, և չար ընկերակցութի. բոցն

է

է ունայն կինն , ունելն է հայեցումն · կայծակունքն են վատթարք, և վաւաշոտականք խուակացութիւնք · ծուխն վատահամբաւութիւն , մոխիրն անմաքրութիւն , և վախճանն է դժոխն : Նա , որոյ զմիտն զբաղեաց բղջախոհութիւն , և որոյ զսիրտն գերեցոյց վաւաշոտութիւն, և որոյ զհոգին ենթարկեաց ինքեան ցանկութիւն , հազիւ կարէ մտօք մտածել զիրս բարիս : Քանզի են իղձք խժոյք · վասնզի 'ի յազդեցմանէ ծագի խորհումն , 'ի խորհմանէ սէրն , 'ի սիրոյ հեշտութիւն , 'ի հեշտութենէ հաւանումն , 'ի հաւանմանէ գործն , 'ի գործոյ սովորութիւն , 'ի սովորութենէ յուսահատութիւն , 'ի յուսահատութենէ պաշտպանումն մեղաց , 'ի պաշտպանմանէ պարծանն , 'ի պարծանէ դատապարտութիւն : Վախճանս այս է բղջախոհի , վաւաշոտականաց ցանկութեանց ոչ ընդդիմացողի · բղջախոհի , որ մեղմաբար հետևի վաւաշոտականաց ցանկութեանց , և զպատճառս բղջախոհութեան , 'ի սրբոյն Գրիգորիոսէ գրեցեալս , ոչ բեկանէ , իբրև հաւատարիմ ծառայ բղջախոհութեան , զամենայն պատճառս նորա , հոգւոյ իւրոյ ամենավնասակարս , թարց խորտակման պահելով : Բղջախոհութիւն է անսանձ լրբութիւն մարմնոյ , քաղցր թոյն , բոլորոյ մարմնոյ մահաւոր բթութիւն , վշտագին ցաւ , ամենաբեր ըմպելի , տկարացուցանող զմարդկային մարմին , և արականի ոգւոյ ուժգնութեան զօրաթափիչ : Բղջախոհութիւն է հրապուրական հեշտութիւն , պոռնկածնութեան ուրախութիւն , ունեցող զմեղր 'ի բերանոջ , զլեղի 'ի սրտի , և զկիծ 'ի թիկանց : Զբղջախոհութեամբ յառաջեն եռումն , և լրբութիւն · ընդ բղջախոհութեան համարձակութիւն դարշահոտութիւն , և պղծութիւն · և բղջախոհութեան հետևին ցաւն , և զղջումն :

## ԳԼՈՒԽ ԿԱ

### Յաղագս տասներորդի պատուիրանին ԱԺ :

1. Տասներորդ պատուիրանն այս է այս : Մի ցանկար տան ընկերի քո , մի ծառայի , մի աղախնոյ , մի արջառոյ , մի իշոյ , և մի ամենից իրաց նորա : Տասներորդիւ , և վերջնով պատուիրանաւ արգելու զամենայն ցանկութիւն ընչից ընկերի : Անիմաստաբար · քանզի ոչ 'ի ցանկութենէ կնոջ ընկերի ծագին բազումք չարիք , զորօրինակ , վաւաշոտքբանք · վաւաշոտք երգք , խաղք , վաւաշոտ կենցաղավարութիւն , պոռնկութիւն , շնութիւն , կուսապղծութիւն , ազգապղծութիւն : սրբապղծութիւն , և դարշելիք մեղք վաւաշոտութեան ընդդէմ բնութեան · այսպէս 'ի ցանկութենէ ընչից ընկերի ծագին բազումք չարիք , զորօրինակ , գողութիւն , յափշտակութիւն , կողոպտումն , աւարառութիւն , անմարդաբնակութիւն , անիրաւք վաճառականութիւնք 'ի յառս և 'ի տուրս , մերկացուցումն այրեաց , որբոց , և անկարից , անիրաւ իւրացուցումն ընչից ընկերի , անիրաւութիւն 'ի հատուցման վարձու մշակաց , ծառայից , և պարտուց , զրկանք , նենգութիւն , խաբէութիւն , դաւաճանութիւն , սուտ , ստերդմնութիւն , անհաւատարմութիւն , և բազումք այլք մեղք : Վասնզի ցանկութիւն ընչից ընկերի է սերմն արտադրելոյ զասացեալս չարագործութիւնս : Ուստի իւրաքանչիւրոք պարտի գոլ շատացեալ ընչիւք իւրովք , յորս ինքեան շնորհեցելովք , զի պահիցէ զարդարութիւն , և զսէր , և իցէ ազատ 'ի մեղաց , որք լինին ընդդէմ արդարութեան , և ընդդէմ սիրոյ , և զի իցէ 'ի մէջ մարդկանց խաղաղութիւն , համաձայնութիւն ,

և

և անդորրութի՟ : Եթէ իւրաքանչիւրոք իցէր շատացեալ ընչիւք իւրովք, և ոչ ձգիցէր զաչս իւրս ՚ի վերայ ընչից ընկերի, այլ կատարելապէս սիրիցէր զարդարութի՟ն, և պահիցէր զիրաւունս, ՚ի մէջ մարդկանց լիցէր խաղաղութի՟, համաձայնութի՟, և անդորրութի՟, և ա՟մք ապահովապէս վայելիցէր զիւրս բարիս թարց ահի, և թարց երկիւղի. և այսպէս դադարիցէին կռիւք, անէծք, վէճք, բամբասանք, աշխարումն, կոծումն, թշնամութի՟, զխամամարտութի՟ք արենակցաց, և քաղաքակցաց, և վայելիցէին ամենեքեան զխաղաղութի՟, և պահիցէին ՚ի մէջ իւրեանց զբարեկամութի՟. և այսպէս աշխարհս այս, յորում եմք, և կեամք, լիցէր փոքրիկ արքայութի՟ :

2. Ցանկութի՟ք օտարականի ընչից են ներքինք ներգործութի՟ք մոլութե՟ ագահութե՟ : Հեղձանելի է ագահութի՟ն, զի մի բողբոջիցին ցանկութի՟ք օտարականի իրի : Բարձելոյ ագահութե՟, որ է անկարգ իղձ փարթամութե՟ց, դադարի ցանկութի՟ ընչից ընկերի. վասնզի բարձելոյ արմատոյ արդելանի բոյսն, և ՚ի հեռացուցանելն պատճառի, հեռանան և գործք : Ցանկացողն ընչից ընկերի է անիրաւ : Որ շատանայ իւրովք է արդար : Որ շատանայ իւրովքն է իմաստուն. քանզի սիրէ զարդարութի՟, որ անհամեմատաբար է լաւագոյն քան զա՟մ ոսկի, քան զա՟մ արծաթ, քան զա՟մս պատուականս ակունս, և քան զա՟մ պատուականագոյնս գանձս ա՟մից թագաւորութե՟ց, վասնզի ունեցողն զարդարութի՟ վայելէ զա՟ծ. որ է աղբիւրն ա՟մից բարեաց : Ուստի ագահն, և ցանկացողն ընչից ընկերի, է անմիտ. քանզի տայ զարդարութի՟ն, որ է պատուականագոյնն, և ընդունի զայդ, որ ՚ի համեմատութե՟ արդարութե՟ է ոչինչ. վ՟զի ա՟մ գանձ այսր աշխարհիս ՚ի համեմատութե՟ արդարութե՟ է ոչինչ : Շատացեալն ընչիւք իւրովք, և սիրողն զարդարութի՟, ճշմարտապէս սիրէ զիւր ինքն. վ՟զի անփոյթ առնէ զնուաղ բարին, զի վայելիցէ զբարին, որ անհամեմատաբար է մեծագոյն. այսինքն, անփոյթ առնէ զոսկին, և զարծաթն, զի վայելիցէ զարդարութի՟ն, որ անհամեմատաբար է լաւագոյն քան զա՟մ գանձ այսր աշխարհիս : Ցանկացողն ընչից ընկերի, և սիրողն զանիրաւութի՟, ատէ զիւր ինքն. վ՟զի անփոյթ առնէ զբարին, որ անհամեմատաբար է մեծագոյն, զի վայելիցէ զբարին, որ ՚ի համեմատութե՟ ասացելոյ մեծագունի բարւոյ ոչինչ է. այսինքն, անփոյթ առնէ զարդարութի՟, որ լաւագոյն է քան զա՟մ գանձ այսր աշխարհիս, զի վայելիցէ զոսկի, կամ զարծաթ, որ ՚ի համեմատութե՟ արդարութե՟ է ոչինչ : Որ շատանայ ընչիւք իւրովք իրաւի է իմաստուն, և սիրող զիւր ինքն. վասնզի տայ զոսկին, և զարծաթն, զի ՚ի ձեռն արդարութե՟ գնիցէ զերկինն : Իսկ ցանկացողն ընչից ընկերի, է յիմար, և ատող զիւր ինքն. վասնզի հրաժարի յերկնէ, զի ունիցի զոսկի, կամ զարծաթ :

3. Սպանանելի է ագահութի՟ն, զի կորնչիցի ա՟մ ցանկութի՟ ընչից ընկերի : Քանզի արմատն, և մայրն ա՟մից մեղաց, որք անիրաւաբար լինին ընդդէմ ընկերի, ՚ի կարգի առ ինչս նորա, է ագահութի՟ : Մոլութի՟ս այս ագահութե՟, առնէ զմեզ անկարգս. այնքան ՚ի կարգի առ փարթամութի՟ս մեր, որքան նաև ՚ի կարգի առ փարթամութի՟ս ընկերի : Վասնզի ոչ միայն է ագահ այն, որ յափշտակէ զօտարական իրն. այլ նաև նա է ագահ, որ մեծաւ փափագանօք պահէ զինչս իւրս : Քանզի որ մեծաւ փափագանօք պահէ զինչս իւրս, է անկարգ ՚ի կարգի առ փարթամութի՟ս իւրս. որպէս որ յափշտակէ զօտարական իրն, է անկարգ ՚ի կարգի առ օտարականս փարթամութի՟ս : Զի ուրեմն լինիցիմք արդարք այնքան ՚ի կարգի առ փարթամութի՟ս մերս, որքան նաև ՚ի կարգի առ օտարականս փարթամութի՟ս,

մութիս, հզօրաբար, և արիաբար մարտնչելի, և մենամարտելի է ընդդէմ ագահութեան, որով ագահն նախ քան թէ ստանայցէ, կորուսանէ զիւր ինքն. և նախ քան թէ յափշտակիցէ զիր ինչ, յափշտակի. և որով ագահն լինի նման գժոխոյ։ Քանզի ո՜ղ գժոխն որքան և կլեալ իցէ, ոչերբէք ասէ բաւ է. այսպէս նաև ագահն, որչափ գանձք համահօսեալք իցեն առ նա, ոչ երբէք ասէ. բաւական է։ Ագահն է վատթարագոյն, քան զգազանս յափշտակօղս։ Վասնզի գազանք յափշտակօղք ունին զկերպ։ Քանզի յայնժամ յափշտակեն, յորժամ քաղցին. իսկ ներեն աւարոյ, երբ յագեցեալք են։ Բայց ագահն է անյագելի։ Քանզի միշտ յափշտակէ, և ոչ երբէք յագի։ Ոչ յա՜յ երկնչի, ոչ 'ի մարդոյ ամաչէ, ոչ հօրն ներէ, ոչ զմայրն ճանաչէ, ոչ եղբօրն հնազանդի, և ոչ ընդ բարեկամի զհաւատարմութի պահէ։ Զայրին նեղէ, զորբն յաղթահարէ, զաղքատս դերեցուցանէ, վկայէ զսուտն։ Ագահն ոչ ևս մեռելոց ներէ։ Քանզի խուրացուցանէ նաև զայնոսիկ իրս, զորս մեռեալք թողին վասն հոգւոց իւրոց։

4. Ագահութի է անկարգ տենչ փարթամութեց. որք անկարգաբար փափագեցեալք լինին։ Այսու անկարգիւ տենչիւ զբաղեալ մեղս գործէ ագահն, մինչ հաւաքէ զփարթամութիս. վասնզի պատրէ, խաբէ, ստէ, սուտերդնու, կողոպտէ, յափշտակէ, նեղէ. և նաև մինչ վարի հաւաքեցելովք փարթամութեք, գործէ զբազում այլս մեղս. քանզի գործէ զմեղս որկրամոլութե, շուայտութե, արբեցողութե, խաղի, ունայնի փառաց, անառակութե, և բղջախոհութե։ Ուստի ագահութի նէ արմատ, և պատճառ բազմաց մեղաց։ Ուստի մինչ ագահութին տիրէ ումեք, երևի նա գոլ ենթարկեցեալ ամ՜ց չարեաց. վասնզի 'ի յագահութէ յառաջանան համայնք չարիք, և և արատդրին փուշք ամ՜ց մեղաց։

Ոչ միայն նա է ագահ, որ յափշտակէ, այլ նաև այն է ագահ, որ ունի զբազումս բարիս աւելորդս, այլ լեալ անողորմ, և խստաբարոյ, ոչ առնէ զողորմութիս։ Ուստի ոչ է նուազ մեղապարտ, որպէս ասէ ս՜րն Ամբրոսիոս, բառնալն 'ի յունեցողէ, որքան ոչ տալն կարօտողաց զաւելորդս, երբ պիտոյ է առնել զողորմութիս։ Ուստի է հացն քաղցելոց. զոր պահեմք. է զգեստն մերկաց, զոր ներփակեմք. է աղքատութի, և արծաթութիւն թշուառաց գրամն, զոր թաղեմք 'ի յերկրի։ Ուստի յափշտակեմք զբարիս յայնքանից, որքանից ոչ կամիմք տալ, զոր կարեմք։ Ուրեմն թողցուք զագահութի, արասցուք զողորմութի։ Վասնզի ոչ են բարիք մերք։ զորս ընդ մեզ տանիլ ոչ կարեմք. այլ միայն ողորմութի ն է ընկերն մեր, Արդարև ասէ ագահութին. արծաթն, և ոսկին, զոր ունիս, է գին ծառայութեքո։ Ժառանգուն՜, զոր պահես, է գնուն՜ իրաւանքո։ Բայց ո՜չ է ունկնդնելի, այլ է պատասխանելի. աւելորդք տրամաբաշխելիք են չքաւորաց.

5. Ոչ է հաւատալի, զմեզ շահիւ տալով 'ի յագահութէ. վասնզի շահն ոչ է միջոց ազատելոյ 'ի յագահութէ։ Քանզի ագահութին շահիւ ոչ շիջանի, այլ բորբոքի։ Իբր զատիճանս ցանկութե ունի, և որքան յաւաւելս ելանիցէ, այնքան բարցրագունից փութայ։ Ուստի լինի ծանր կործանուն՜ այնմ, որ անկանելոց է։ Վատթար ագահութին առնէ, զառատացողն ընչիւք ենթադատել զիւր ինքն գոլ չքաւորքան զամենեսեան. վասնզի առնէ զնա համարիլ, թէ ինքն ոչ ունի զայն ա՜մ, զոր ունին այլք։ Այսպիսի ոք կարօտի բոլորոյ աշխարհի, որոյ զիղձն ոչ տանի աշխարհս։ Ուստի ագահի այնքան պակասի, զոր ունի, որքան, զոր ոչ ունի։ Մինչ ուրեմն ագահն նաև 'ի յաճիլն փարթամութեց համարի զինքն կարօտիլ, 'ի յառատահօսելն

նց առաւել փափագի մեծաւ ընչիւ ունել զնոսա : Ուստի ագահութիւն առաւել քան զայլս մոլութիւս , որք 'ի ծերանալն մարդոյ ծերանան , զայս ունի , զի 'ի ծերանալն մարդոյ երիտասարդանայցէ : Պատճառն , վն զի ագահի այնքան պակասի , զոր ունի , որքան զոր ոչ ունի , է այս· վասնզի կամ ցանկայ այնմիկ , զոր ոչ ունի , զի ունիցի , կամ երկնչի , զի մի կորուսանիցէ , զոր ունի : Եւ մինչ 'ի ձախորդութիւս յուսայ զյաջողակս , 'ի յաջողակս երկնչի 'ի ձախորդութեց : Սա յուսալով 'ի ձախորդութիս , և երկնչելով 'ի յաջողութիս , ոչ այլ ինչ է , որպէս ասէ սբն Հերոնիմոս , քան քասկ իշխանաց , ծածկոց աւազակաց , վէճ ծնողաց , հնչիւն մարդկանց : Ագահութին , որ զագահն առնէ յուսացող , և երկնչող միշտ ցանկալ , գաղտաբար ծագի 'ի մոլի , իսկ զխայթեցմունս ամից մեղաց յայտնաբար արտադրէ 'ի գործոյ : Ողորմելի միտ ագահի , շաղախեցեալ մեղիւ ագահութե , այնպէս ծանրանայ , զի մի վերանայցէ առ 'ի ըմբռնել զբարձունս :

6. Ագահութին ցանկացեալսն իրօք ոչ շիջանի , այլ աճի : Քանզի որպէս հուրն 'ի վերադրելն փայտից , որ այրէ , աճի · այսպէս ագահութին 'ի յառատրելն փարթամութեց աճի : Ագահն յառաջագոյն ցանկայ հաւաքել զիւր փափագեցեալս , և մինչ իբր յումեք արգանդի ագահութե ժողովեալ է , յաղեցեալ արգելանի · վասնզի մինչ տառապի , թէ որպիսաբար զատացեալն , և զհաւաքեցեալն պահիցէ , այն յաղեցուցմ իւր նեղէ զիւր ինքն : Միան ագահի , որ յառաջագոյն 'ի յառատութե խնդրեալ էր զհանգստութի , յետոյ առ պահպանութ ընչից ծանրագոյն աշխատի : Ամ ագահ , որ ծարաւի փարթամութեց , 'ի յըմպեցմանէ բազմացուցանէ զծարաւութին · քանզի մինչ ստացեալ է զայնոսիկ , զորս խնդրէ , առաւել հառաչէ առ 'ի ցանկալ այլոց : Ագահն միշտ է 'ի ցաւս · Քանզի միտն նորա յառաջագոյն կալաւ զցաւ 'ի յինքեան աշխատման ցանկութե իւրոյ , թէ որպիսաբար վերատանայցէ զցանկացեալս , թէ որով զօրանս հրապուրանօք , զօրանս ահիւ բառնայցէ : Իսկ մինչ յետ ստանալոյն զիւր դոյ առ փափագն , այլ ցաւ նեղէ զնա , զի հոգաբարձիւ երկիւղիւ պահիցէ , զոր յիշէ մեծաւ աշխատանաւ դոյ ստացեալ : Ատոի ասոտի երկնչի 'ի գաւաճանից , և զայս միշտ , զոր ինքն արար , երկնչի լինել յայլոց : Ագահն անփոյթ առնելով զփրկութի իւր , սատ , և տակաւին կելով յայսմիկ կենի , բորբոքի տօթիւ ցանկութե , և բազմապատկաւ հոգաբարձութբ պահպանման · և յետոյ բորբոքեսցի հրով դժոխոյ : Արդարև բորբոքի սատ · վասնզի եթէ տեսանէ զկարօղագոյն , երկնչի յափշտակողէ · եթէ զաղքատագոյն , կասկածէ 'ի գողէ : Ապերջանիկն այնքան չարչարի , որքան երկնչի 'ի չարչարանէ :

7. Մեծ է ապահովութի սրտի զոչինչ աշխարհականի ցանկութե ունել : Քանզի եթէ սիրտն հակի առ 'ի ստանալ զերկրայինս , ապահով , և հանդարտ դոլ ոչ իւիք կերպիւ կարէ : Վասնզի ստա , և անդ իբր ումամբք ալեօք տապալի · և զանազանիւք կերպօք 'ի փոփոխելն իրաց փոփոխելութբ շարժի : Իսկ եթէ միանգամ ողին քաջարոփ հաստատութբ 'ի յըղձի վերնայնոյ հայրենւոյ սևեռի , նուազ վրդովի չփոթութբ ժամանակաւորաց իրաց : Հեղինակի բարեաց այլապէս յենուլ ոչ կարեմք , եթէ ոչ հատանիցեմք 'ի մէնջ զագահութին , որ է արմատն ամից չարաց : Կարի յոյժ յանդիմանէ զըղձս մեր հակիրճութիւն կենի : Ցաղումք իրք տարեալք լինին ընդ վայր · մինչ մերձ է , ուր Ճեպի : Սերն փարթամութեց է անյագ , կարի առաւել չարչարէ զհոգին , քան թէ զովացուցանիցէ վարժութբ իւրով , որոց արդարև ստացումն աշխատանաւ , ժառանգումն երկիւղիւ , և կորուսումն գտանի լի ցաւով : Ագահն ցաղցի երկրայ-

նոց

նոց իւրաց որպէս չքաւոր, հաւատարիմն անարգէ, որպէս Տր: Նա ժառանգելով մուրանայ, առ անարգելով պահէ: Ագահն ոչ տայ. քանզի ոչ է ազատ. և քանզի ոչ են իւրք, զորս երևի ունիլ, այլ ոչ և ս ինքն է ընդ իրաւան իւրոյ: Ո՞ ագահ, եթէ իրաւի են քոյք, զորս ժառանգես, ծախեա առ օգուտ, և փոխանակ երկրայնոց փոխարկեա զերկնայինս: Եթէ ոչ կարես, գիտասջիր զքեզ ոչ դոլ Տր դրամոյ, այլ ծառայ. պահապան, ոչ ժառանգող: Ագահութիւն տարեալ լինի անուամբք չորից մոլութեց, որք են փոքրոգութիւն, անողորմութիւն, անարգութիւն այ, մոռացումն մահուան: Սակայն դրատք քարշողի, են արծաթապաշտութիւն, և յափշտակութիւն: Եւ այսոցիկ երկոցունց մին կառավար վերակացոյ, ունելոյ ջերմութիւն: Արդարև միայն ագահութիւն, զի զբաղումն վարձել ոչ կարէ. շատանայ միով ծառայիւ: Ագահն ոչ հոգացեալ զփրկութիւն, որ ծառայէ դրամոյ, և նեղմի ներկայիւք ունակալօք, և պատրաստի ապագայից:

Ը. Ագահութիւն է անյագ արբեցողութիւն: Ագահութիւն է անշիջանելի հուր: Ագահութիւն է մայրն ամից չարաց. Ագահութիւն է ծառայութիւն կռոց: Ագահութիւն է նիւթն ամենայնի անիրաւութեան: Ագահութիւն առնէ անողորմս զայնոսիկ, որք ծառայեն նմա: Ագահն է հասարակ թշնամի ամից: Ագահն յօժարագոյն տայ զմարմին իւր, քան զոսկին: Ագահն է ոսկեպաշտ, և ոչ երբեք լնանի ընչիւք: Ագահն, որ անկարգաբար զբարիս աշխարհի սիրէ, կամիցի, ոչ կամիցի, նոնաձի չարչարանօք երկիւղի, և ցաւոյ: Զարայոյգ ժանտագոյն ագահութեան միշտ առելի է բարեաց ոգւոց: Սա զոչինչ անիմաս, և զոչինչ անվրդով թողու: Սա չփոթէ զսեռ մարդկանց: Սա զաշակերտն ընկերն քրիստոսի դաւաճանեաց ՚ի յառաքելականէ աստիճանէ: Սա զզինուորս պահապանօղս զգերեզմանն գերեզոյց: Ուս_տի, ուր է ագահութիւն, անդ դրամոյ հնազանդին համայնք: Սիրոյ դրամոյ խոտան է ամ իղձ, և հոգին, փափագօղ շահի, նաև վասն սակաւոյ շահի կորնչիլ ոչ երկնչի: Եւ ոչ ինչ շաւիղ արդարութեան է ՚ի սրտի յայնմիկ, յորում ագահութիւն արար ինքեան զբնակարան: Երկու են, որք ապօրինաբար սովորք են ստանալ, այսինքն, հպարտութիւն, և ընչասիրութիւն. և երկու. որք վատթարաբար վարին ստացելովն, որկրամոլութիւն, և բղջախոհութիւն: Երկու են, որք վատթարաբար ժառանգել կամին, այսինքն, անառակն, և ագահն: Մինն, զի հաւաքիցէ. միւսն, զի վատնիցէ: Եւ երկու, որք զստացեալս պաշտպանեն, այսինքն, անբարեխառնութիւն, և խոհեմութիւն աշխարհի: Հպարտութիւն փակեաց զերկինն սատանայի: Որկրամոլութիւն եբարձ զարքայութիւն յառաջնոյ ծնողէ: Ագահութիւն փարթամի եբաց զդժոխսն: Իսկ անբարեխառնութիւն տակաւին ապականէ զաշխարհս: Ուրեմն ագահութիւն, որով ագահն ապօրինաբար պահէ զիւրս, և ցանկայ օտարականաց, է սպանանելի, զի պահիցին պատուիրանք:

## Գ Լ Ո Ւ Խ: ԿԲ.

### Յաղագս եկեղեցւոյ:

1. Եկեղեցին նիւթական է տաճար, յորում երկրպագեմք այ, և պաշտեմք զճշմարիտն ած: Ունկնդրեմք, կամ ընդունիմք զխորհուրդս: Աղօթեմք, աղաչեմք, և զպատարագ ամենաբարձրելոյն այ մատուցանեմք: Լսեմք զածային բանն, և գործեմք զայլս սրբազանս իրս: Յայսմիկ նիւթականի եկեղեցւոջ գործելիք են այնոքիկ իրք, որք նմա վայելեն, զած պատուեն, և զփրկութի մեր առնեն. և հեռանալ պարտիմք յայնց յամից, որք նմա ոչ վայելեն, զած ոչ պատուեն, և փրկութե մերոյ հնասեն: Եկեղեցին տեսական է հաւաքումն քրիստոնէից, 'ի քս հաւատացողաց, և զճշմարիտն ած պաշտողաց ըստ նորոյ օրինի, և ըստ նորոյ կտակարանի: Եկեղեցիս այս կերտեցեալ է 'ի քէ վասն փրկութե մարդկանց: Քանզի իմաստութի շինեաց իւր տուն. և կանգնեաց սիւնս եօթն: Եզէն զզէնլիս իւր, և խառնեաց 'ի խառնարանս զգինի իւր: Անստեղծ իմաստութին, վասն փրկութե մերոյ ներմարմնացեալն, տարածեաց կարգադրութբ զվէմս իւրս: Ամենիմաստ որդն, փրկիչն աշխարհի Յս, շինեաց զիւր տուն 'ի վերայ վիմի, այնպէս հաստատուն, զի անձրևք իջանօղք, գետք առնկօղք, և հողմունք փչօղք, և 'ի յայն արձակօղք ոչ կարիցեն զօրանալ ընդդէմ նորա, այնու թէ իցէ հիմնեցեալ 'ի վերայ վիմի: Փրկիչն մեր Յս Քս շինեաց զտունն այ, որ է եկեղեցի այ, սիւն, և հաստատութի ճշմարտութե:

2. Խոստովան եղև սիմօն Պետրոս, և ասաց. դու ես քս որդի այ կենդանւոյ: Պատասխանեաց զխոստովանութի նորա որդն, և ասաց: Երանի քեզ սիմօն որդի յօնանու. զի մարմին, և արիւն ոչ յայտնեաց քեզ, այլ հայր իմ, որ յերկինսն է: Եւ ես քեզ ասեմ. զի դու ես վէմ. և 'ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ. և դրունք դժոխոց զնա մի յաղթահարեսցեն: Եւ տաց քեզ փականս արքայութե երկնից. և զոր միանգամ կապեսցես յերկրի. եղիցի կապեալ յերկինս. և զոր արձակեսցես յերկրի, եղիցի արձակեալ յերկինս: Մատթ. 16. թիւ. 16. Քս աստ պետրոսի վասն խոստովանութե նորա խոստացաւ զփոխանորդութի իւր, և զիշխանութի 'ի վերայ ամից այլոց առաքելոց: Եւ զոր աստ խոստացաւ, յետ յարութե իւրոյ ետ, յորժամ ասաց: Արածեա՛ զգառինս իմ, արածեա՛ զոչխարս իմ, կացուցանելով զնա հովիւ գառանց, և ոչխարաց իւրոց, այսինքն, առաքելոց, և ամից այլոց քրիստոնէից: Ուստի պետրոս եղև փոխանորդ քի 'ի վերայ երկրի, և իշխան առաքելոց, ունելով զիշխանութի 'ի վերայ առաքելոց, և 'ի վերայ ամից այլոց քրիստոնէից: Աստի է, թէ հռոմէական պապն աջորդն սբոյն պետրոսի, է փոխանորդ քի, հովիւ գառանց, և ոչխարաց քի, իշխան եպիսկոպոսաց, աջորդաց առաքելոց, ունեցօղ զիշխանութի 'ի վերայ ամից եպիսկոպոսաց, և 'ի վերայ ամից քրիստոնէից, այսպէս այժմ 'ի յեկեղեցւոջ քի, որպէս յայնժամ սբն պետրոս:

3. Ոչոք կարէ դնել զայլ հիմն, բաց 'ի յայնմանէ, որ եդեալ է, որ է Յս Քս, որոյ փոխանորդն է սբն պետրոս, որոյ աջորդն է հռոմէական պապն, որ վայելէ զնոյն լիութի հեղինակութե, զոր վայելեաց սբն պետրոս: Մեք վերահիմնեցեալք եմք 'ի վերայ հիմանց առաքելոց, և մարգարէից ինքեամբ ծայրագունեղիւ վիմիւ անկիւնականաւ Յսիւ Քսիւ, յորում ամ շինուած օրինեալ, աճի 'ի սբ տաճար տեառն, յորում և մեք

հա-

համաշինիմք 'ի խորան այ՟ 'ի հոգին սբ՟ : Առ որ Յս՟ քս՟ տր՟ն մեր մերձեցուք առ վէմն կենդանի , արդարև 'ի մարդկանց անարգեցեալն, իսկ 'ի յայ՟ ընտրեցեալն , և պատուեցեալն , և նմա իբրև կենդանիք վէմք վերաշինիմք հոգևորք տունք 'ի սբ՟ քահանայութի , մատուցանելով զհոգևորս զոհս , ընդունելիս այ՟ Յսի՟ Քսի՟ : Արդարև լերինք համաշարժեցին , և բլուրք դողացին , բայց ողորմութի տեառն ոչ հեռացի 'ի մէնջ , և դաշն խաղաղութե տեառն ոչ շարժեցի: Արդարև սատանայն խնդրեաց զառաքեալս , զի խարբալիցէր որպէս զցորեան . իսկ տր՟ն մեր Յս՟ աղաչեաց վասն պետրոսի , զի մի պակասիցէր հաւատն նորա , և երբեմն դարձեալ հաստատիցէր զեղբարս իւրս : Այսպէս նաև վասն հռոմէական պապից , աջորդաց սբոյն պետրոսի , զնոյն մանաւանդականութի վայելողաց , զի մի պակասիցի հաւատն նոցա , և երբեմն դարձեալք հաստատիցեն զեղբարս իւրս եպիսկոպոսս : 'Ի յեկեղեցւոջ քի՟ ունեցօղքս զձեռն տեառն 'ի վր՟ մեր , և զհոգի նորա , երգեմք զսաղմոսս : Բացօղքս զբերան մեր օրհնեմք զտր՟ն , և բարբառնեմք զնա : 'Ի յեկեղեցւոջ բարւոք սաղմոսերգեմք տեառն 'ի ձայն երգութե , մատուցանելով նմա զողջակէզ գովութե , և հատուցանելով անբարձրելոյն զուխտս մեր , և լցուցանելով զբերան մեր գովութբ տեառն :

4. Եկեղեցին քի՟ է երևելի , զի ամենեքեան կարիցեն գտանել զնա , և կարիցեն մնանել 'ի նա : 'Ի միայնում եկեղեցւոջ քի՟ է փրկութիւն մարդկանց . վասնզի սա է տապանակ փրկող զմեզ 'ի ջրհեղեղէ անհաւատութեան : Ուստի որք ոչ են 'ի յեկեղեցւոջ քի՟ ուխտիւ , կամ ներգործութբ , փրկիլ ոչ կարեն : Ոչ ամենեքեան , որք գտանին 'ի յեկեղեցւոջ քի՟ , են որդիք փրկութե : Քանզի գտանին բարիք , և չարք . իսկ 'ի վերջնում որոշեսցին: Վասնզի որպէս հաւաքեն զորոմն , և հրով այրեն . այսպէս եղիցի 'ի վախճանի աշխարհի : Առաքեսցէ որդի մարդոյ զհրեշտակս իւրս , և ժողովեսցեն 'ի յարքայութէ նորա զամ՟ գայթագղութի , և զայնոսիկ , որք գործեն զանօրէնութի , և առաքեսցէ զնոսա 'ի հնոց հրոյ : Անդ եղիցի լալ , և կրճել ատամանց : Արկեալ է ուռկանն 'ի ծով , որ հաւաքէ զձկունս յամ՟ից սեռից . այսինքն , կերտեցեալ է եկեղեցին , յորում յամ՟է սեռէ մարդկանց հաւաքեցեալք են հաւատացեալք : Իսկ 'ի վերջնում կենի , և 'ի վախճանի աշխարհի , ընտրեսցին բարիք 'ի յանօթս իւրեանց , իսկ չարք ընկեսցին 'ի բաց : Բարիք ընտրեսցին 'ի յանօթս . վասնզի յամ՟է սրտէ , և բերանով օրհնեն , և բարբառնեն զանուն տեառն , պահելով զպատուիրանս նր՟ , և հնազանդելով ձայնի նր՟ , և վերացուցանելով զսիրտս իւրս ձեռօք հանդերձ առ տր՟: Իսկ չարք հանին արտաքս . զի արդարև բերանով իւրեանց մերձենանն այ՟ , և փառաւորեն զտր՟ն . բայց սիրտք նց՟ հեռիք են 'ի նմանէ . և տր՟ն մերձ է բերանոյ նց՟ , բայց հեռի է 'ի սրտից նոցա : Այսպիսիք ոչ աղաղակեն առ տր՟ սրտիւ իւրեանց . այլ գոչեն 'ի սենեակս իւրեանց : Ուստի ասէ , և բացահերքէ տր՟ն զտօնախմբութիս այսպիսեաց , և ոչ զգայ զհոտ հանդիսից նոցա . այլ դարձուցանէ զտօնախմբութիս նոցա 'ի լաց , և այս վասն այսորիկ , զի ոչ պահեն զպատուիրանս տեառն :

5. 'Ի յեկեղեցւոջ քի՟ ճշմարիտք պաշտօղք պաշտեն զհայրն հոգւով , և ճշմարտութբ . սաղմոսեն հոգւով , և սաղմոսերգեն մտօք . երգեն , և սաղմոսեն սրտիւք իւրեանց տեառն , շարժելով զիւրեանս ինքեանս 'ի սաղմոսերգութիս , և միշտ մատուցանելով այ՟ զոհ գովութե : Սոքա գոլով արտմեցեալք աղօթեն հանդարտիւ ոգւով , և սաղմոսեն : Եկեղեցին իբր շուշն է 'ի մէջ փշոց , չարօք , և բարեօք խառ-

խառնեցաւ։ Այս է յատուկ եկեղեցւոյ, զի յայնժամ յաղթիցէ, յորժամ վնասի. յայնժամ իմանայցէ յորժամ յանդիմանի. և յայնժամ ստանայցէ, երբ բացաթողեցեալ լինի։ Արդուրեմն եկեղեցին քի, մինչ հալածի, ծաղկի. մինչ նեղի, աճի. մինչ արհամարհի, զարդանայ. մինչ վնասի, յաղթէ. մինչ յանդիմանի, իմանայ. յայնժամ կայ, յորժամ երևի յաղթիլ։ Որպէս տապանակն, որ եղև գաղափար եկեղեցւոյ, 'ի դադարիլն ջրհեղեղին, հանգեաւ 'ի վր լերին. այսպէս սբ եկեղեցին, որ այժմ պատերազմի ընդդէմ հալածողաց, և ընդդէմ թշնամեաց, 'ի դադարիլն ապականութեան այսր կենաց, մինչ անցեալք լինին պտուղք չարագործութեանց, 'ի յերկնայնոջ հայրենւոջ իբր 'ի դերազանցի լերին դադարի։ Արդուրեմն սբ եկեղեցին ունի զերկուս կեանս։ Զմինն, որով հաւաքի վարձ։ Զմիւսն, յորում խնդայ զընդունելոց պարգևաց. և 'ի յերկաքանչիւրում կենի մատուցանէ զզոհ. այսինքն, աստ զզոհ զղջման. անդ զզոհ գովութեան։ Աստ յայնժամ իրաւի քաջագոյն զօրանայ, մինչ ջերմեռանդագոյն աշխատի վասն ճշմարտութեան։ Եկեղեցին քի, է մին։ Վասնզի որպէս մարմինն, որ ունի զբազումս անդամս, կայանայ միութբ անդամոց. այսպէս սբ եկեղեցին խորհրդաւոր մարմինն քի, որ ունի զբազումս հաւատացեալս, կայանայ միութբ հաւատացելոց։

6. Սբ եկեղեցին, հարսն քի, զոչինչ ինքեան փառաւորագոյն համարի, քան կրելն զնախատանս քի։ Եկեղեցին է միջոց 'ի մէջ երկնի, որ է տեղի միայն բարեաց, զԱծ տեսանողաց, և զյաւիտենական երանութիւն վայելողաց. և 'ի մէջ դժոխոյ, որ է տեղի միայն չարաց, 'ի յարդար դատաւորէ դատապարտեցելոց, և մշտնջենաւորաց տանջանաց ենթարկեցելոց. իսկ ինքն եկեղեցին է միջին. քանզի անտարբերաբար հաւաքէ զբարիս, և զչարս. որ նկարագրեցաւ է 'ի տապանոջ Նոյի, ուր հեզք կենդանիք էին 'ի միասին ընդ գազանաբարոյից։ Բարիք 'ի յեկեղեցւոջ գտեցեալք են կենդանիք անդամք, 'ի քէ գլխոյ զներհեղումն շնորհի, և սիրոյ ընդունողք։ Չարք 'ի յեկեղեցւոջ գտեցեալք են անդամք մեռեալք զրկեցեալք 'ի կենաց շնորհի, և սիրոյ, միայնով ուղղափառ հաւատով զուգակցեալք քի գլխոյ մերոյ։ Զերիս տաղաւարս նշանաւորել կարեմք, այսինքն, նիւթական, խորհրդաւոր, և բարոյական. այսինքն, տաղաւար Մօսէսի, տաղաւար քի, և տաղաւար իւրաքանչիւրոյ սրբոյ։ Տաղաւարն Մօսէսի եղև 'ի զանազանաց սեւից զարդուց յարմար կերտուած։ Տաղաւարն քի է եկեղեցին կերտեցեալն 'ի վր հիման։ Տաղաւարն սրբոյ, է իւրաքանչիւր հաւատացեալ հոգի, չքնաղացուցեալ շնորհիւն այ։ Մինն լինի 'ի փայտից անփտելեաց, միւսն 'ի հաւատացելոց 'ի քս հաւատացողաց, երրորդն 'ի պարգևաց, և յառաքինութեանց։ Մօսէս կանգնեցոյց զիւրն 'ի յանապատոջ, քս 'ի յաշխարհի, արդարն 'ի հոգւոջ։ Սակայն համայնք կերտեցին 'ի յանապատի։ Տաղաւարն քի, որ է եկեղեցին, է մասնաւոր հաւաքումն հաւատացելոց իւրաքանչիւրոյ քաղաքի։

7. Եկեղեցին քի է մայր ճշմարտութեան. քանզի համայնք վարդապետութիւնք նորա են ճշմարիտք, և անսխալելիք։ Վասնզի ոչ ուսուցանէ զայլ վարդապետութիւն, եթէ ոչ զվարդապետութիւն Յի Քի, և որ է 'ի ներշնչմանէ հոգւոյն սրբոյ։ Նշանակութիւն վարդապետութեան քի է 'ի յեկեղեցւոջ. քանզի հոգին սբ, եկեղեցւոյ խոստացեալն, զնա նման յայտնէ, և նմա տայ զճշմարիտ իմացումն։ Եկեղեցին է հարս քի։ Ուստի նա գիտէ զմիտս փեսայի իւրոյ։ Ի յեկեղեցւոջ է վարդապետութիւն քի, որ է լոյս աշխարհի. և 'ի նմա է ճշմարիտ մեկնութիւն վարդապետութեան նորա։ Մասնաւոր մարդն է սխալելի, եկեղեցին քի է անսխալելի. քանզի

նա

նա է սիւն, և հաստատութիւն ճշ-
մարտութեան: Եւ դրունք դժոխոց
զնա յաղթել ոչ կարեն: Եւ հռո-
մէական քահանայապետն, որ է եր-
ևելի գլուխ եկեղեցւոյ, տեղակալ
քի, աջորդ սրբոյն պետրոսի, իշ-
խանն առաքելոց, հովիւ ոչխարաց,
'ի քս̄ հաւատացողաց, առաջին հայ-
րապետն 'ի յեկեղեցւոջ քի, որ ունի
զառաջնորդութիւն 'ի մէջ ա̄մց եպիս-
կոպոսաց, առաքելոց աջորդողաց,
որ վայելէ զլիութիւն եկեղեցականի
իշխանութեան, որ համակոչէ, և
հաստատէ զժողովս. որ տնօրինէ
զներողութիւնս, հեղինակն եկեղե-
ցականի օրինի, և վարդապետն
բոլորոյ աշխարհի, որ երբ խօսի 'ի
գահէ, է անսխալելի. քանզի է
վարդապետ վարդապետութեան քի,
ունօղ զառաջնորդ զհոգին ս̄բ. և
զի է արածող զհօտն քի 'ի ճշմար-
տութեան հաւատանալեաց, և գոր-
ծելեաց. և քանզի 'ի խնդրոյ քի
ոչ կարէ պակասիլ 'ի հաւատոջ, և
'ի ճշմարտութեան, զի դարձեալ հաս-
տատեսցէ զեղբարս, և ուսուսցանիցէ
նոցա զաւետարանական ճշմարտու-
թիւնն:

8. 'Ի յեկեղեցւոջ քի է ճշմա-
րիտ վարդապետութիւն հաւատանա-
լեաց, յուսանալեաց, և գործելեաց,
է ճշմարիտ վարդապետութիւն ա-
ռաքինութեանց, և ճշգրիտ հմտա-
ցուցումն պատուիրանաց: Սիրողն
ճշմարտութեան, յա̄մում իրի ենթար-
կէ զիւր ինքն վարդապետութեան
եկեղեցւոյ: 'Ի յեկեղեցւոջ քի են
խորհուրդք, զօրացուցիչ շնորհն
համաբերօղք: Եկեղեցին քի է մին,
ս̄բ, կաթուղիկէ, և Առաքելական:
Է մին վասն միութեան գլխոյ, և հա-
ւատոյ. քանզի ունի զմին աներևոյթ
գլուխ զՅ̄ս Ք̄ս զորդին ա̄յ միածին,
որում իբր զմին խորհրդաւոր մար-
մին միաւորի: Եւ զմի երևելի գլուխ
զհռոմէական պապն, զփոխանորդն
քի, յորմէ երևելւոյ գլխոյ իբր 'ի
միոյ ընդհանրոյ հովուէ կառավա-
րի: Է ս̄բ վասն սրբութեան վար-
դապետութեան. հաւատոյ, և սր-
բոց, որք 'ի միայնոջ եկեղեցւոջ քի
գտանին: Է կաթուղիկէ, վասնզի
յա̄մուրէք, և յա̄մում ժամանա-
կով ընդունի զամենեսեան, և ոչ
երբէք պակասի, և ունի զհոգա-
բարձութիւն ա̄մց: Է առաքելա-
կան, քանզի հիմնեցեալ է 'ի վերայ
հիման առաքելոց: Ճշմարիտ եկե-
ղեցին քի է հռոմէական եկեղեցին,
վ̄զի 'ի նմա միայնում տեսանին չորք
իրք 'ի միասին գտանին, այսինքն,
գոլն մին, ս̄բ, կաթուղիկէ, և
առաքելական: Քանզի ունի զմին
գլուխ, և զմին հաւատ, ունի զճշ-
մարիտ ս̄բս, ունի զհոգաբարձու-
թիւն բոլորոյ աշխարհի, և վայելէ
զհանապազորդական աջորդութիւն 'ի
սրբոյն պետրոսէ: Զհռոմէականն
եկեղեցւոյ այսպէս գրէ պետրոս
ռավէննացին: Քանզի որ է կութ-
զի ոստ, որ գլխոյ, անդամք, որ
արեգական շառաւիղք, որ աղբեր,
առուք, զայս պարտին համայնք ե-
կեղեցիք դերադասութեան առաքե-
լականի աթոռոյ, զորս եկեղեցիս
ա̄մուրէք քրիստոնէական կրօնի
հիմնեաց:

## Գ Լ Ո Ւ Խ ԿԳ.

### Յաղագս ժողովոյ:

1. ԺՈղովն է միաբանութիւն,
կամ ժողովութիւն եպիս-
կոպոսաց, առ 'ի յըն-
ձեռել զհաւատոյ,
զկրօնէ, և զբարուց,
հեղինակութբ ծայրագունեղի պա-
պին: Կարեն ընդունեցեալք լինիլ
աբբայք, և մեծաւորք կրօնից 'ի
շնորհատուէ, 'ի տեղականի սինո-
տոսի: Համակոչողն, և հաստա-
տողն է ծայրագունեղ հռոմէական
պապն, փոխանորդն քի, և աջոր-
դողն սրբոյն պետրոսի. վասնզի այս
ինչ նմա պատկանի, մինչ է երևե-
լի գլուխ եկեղեցւոյ, կառավարող,
արածող, և խնամող զհօտն քի:
Վճռատուքն են եպիսկոպոսք, և

այլք.

ույք, որք գտանին 'ի ժողովոջ ըստ իրաւանց ս̃րբոյ եկեղեցւոյ, և ըստ իշխանատուութե̃ ծայրագունեղի հռօմէականի պապին: Տրոհի 'ի սեռաւորականն, կամ 'ի յընդհանրականն, 'ի նահանգականն, և 'ի յեպիսկոպոսականն: Սեռաւոր ժողովն է այն, առ որ սեռաւորապէս համակոչին եպիսկոպոսք: Նահանգականն է այն, առ որ եպիսկոպոսք գաւառաց, կամ թագաւորութեց, արհեպիսկոպոսականաւ հեղինակութե̃ ժողովին: Եպիսկոպոսականն է այն, զոր առնեն եպիսկոպոսք հանդերձ քահանայիւք իւրովք: Ոմանք 'ի սինոդոսից են հաւաքեցեալք, և համահաստատեցեալք 'ի պապէ. ոմանք են միայն հաւաքեցեալք, և ոչ համահաստատեցեալք. ոմանք ոչ են հաւաքեցեալք, սակայն են համահաստատեցեալք. և ոմանք ոչ են համահաստատեցեալք, և ոչ հաւաքեցեալք: Սինոդոսք արհամարհեցեալք, և դատապարտեցեալք 'ի հռօմէականէ պապէ, են ոչինչք, և են չարաժողովք:

2. Ժողովն, որ հաւաքեցեալ, և համահաստատեցեալ է 'ի հռօմէականէ պապէ, է պատուելի. քանզի 'ի ժողովոջ 'ի հռօմէականէ պապէ համակոչեցելոջ, և համահաւաքեցելոջ, և 'ի նոյնոյ հռօմէականէ պապէ համահաստատեցելոջ, և հաւանեցելոջ, խօսի հոգին ս̃ր, որ 'ի խնդրոյ ք̃ի տուեցեալ է եկեղեցւոյ, զի մնայցէ ընդ մեզ 'ի յաւիտեան, որ է հոգին ճշմարտութե̃, 'ի յեկեղեցւոյ ճանաչեցեալ, և միշտ առ մեզ մնալոց, ուսուցանելով մեզ զա̃մ ճշմարտութի̃: Եւ նաև, քանզի 'ի մէջ ասացելոյ ժողովոյ է տ̃րն մեր Յս̃ Քս̃ փրկիչն աշխարհի, որ է ճանապարհ, ճշմարտութի̃, և կեան, ըստ այնմ աւետարանի: ( Ուր իցեն երկու, կամ երեք ժողովեցեալ յանուն իմ, անդ եմ ես 'ի մէջ նոցա: ) Մատթ. 18. Թիւ. 20. Եթէ ասացեալ ժողովն իցէ ընդհանրական, արդէն է բոլոր եկեղեցին ք̃ի ընդ երևելւոյ գլխոյ իւրոյ, այսինքն, ընդ Հռօմէականի պապին, փոխանորդի ք̃ի: Ասացեալ ժողովն է պատուելի, և նմա ունկնդնելի, և հրամանի նորա ամենևին է հնազանդելի. քանզի է բոլոր եկեղեցին ք̃ի, որ է սիւն, և հաստատութի̃ ճշմարտութե̃: Ասացեալ ժողովն է քաջագունեղ, և հզօրագունեղ ձեռնարկութի̃, միջոց, և սպեղանի ընդդէմ հերձուածողութեց, և առ 'ի հաստատել 'ի հաւատոջ զքրիստոնեայս, և առ 'ի յամաչեցուցանել զհերետիկոսապետս: Որ ոչ ունկնդնէ այսպիսւոյ ժողովոյ, ոչ ունկնդնէ եկեղեցւոյ: Ուստի է որպէս զհեթանոս, և զմաքսաւոր, ըստ ասացելոյ տեառն, որ ասէ: Իսկ եթէ և եկեղեցւոյ ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրև զհեթանոս, և զմաքսաւոր: Այսպիսի է թշնամին բոլորոյ եկեղեցւոյ ք̃ի:

3. Առաջին հռչակաւորագունեղ ընդհանրական ժողովն եղև նիկիականն, յորում հեղինակութե̃ ս̃րբոյն սեղբեստրոսի պապի հաւաքեցան երեք հարիւր, և տասն և ութն եպիսկոպոսք ուղղափառք, որք զհաւատն ամբողջ, ս̃ր, ուղղափառ, և անարատ բացադրեցին, դատապարտելով զարիոս, զաբելինոս, և զփօցինոս հերետիկոսս: Յարուցաւ վատթարագունեղ հերետիկոսութի̃, եղծօղ զխորհուրդն ամենասրբոյ երրորդութե̃, որ խորհուրդն կայանայ յայսմիկ, թէ 'ի յա̃ծ իցեն երեք անձինք, և միա̃ծութի̃: Առաջին անձն անուանի հայր, երկրորդն որդի, և երրորդն հոգին ս̃ր: Հայրն ոչ է յայլմէ ումեքէ անձնէ, քանզի է առաջինն. որդին է 'ի հօրէ ծննդեամբ. և հոգին ս̃ր 'ի հօրէ, և 'ի յորդւոյ բղխմամբ: Հայրն, և որդին, և հոգին ս̃ր են մի ա̃ծ. քանզի ա̃մից երից անձանց է մին էութի̃ն, մին բնութի̃ն, մին դոյացութի̃ն, և մին ա̃ծութի̃ն: Զայս ուսոյց մեզ ք̃ս. Յայսմիկ մկրտեցեալք եմք, և զայս ուսաք 'ի յառաքելոց: Ճանաչեցաք 'ի ձեռն դրոց, և 'ի ձեռն առա-

առաքելոց զորդին այ՟ գոլ ճշմարիտ ած՟, և զհոգին սբ՟ ճշմարիտ ած՟, զհայրն գոլ այլ անձն, և զորդին այլ անձն, և հոգին սբ՟ այլ անձն․ բայց զհայրն, և զորդին, և զհոգին սբ՟ գոլ մի ած՟: Ոմանք ՚ի հերետիկոսաց ասէին զմի անձն, և զմի բնութիւն: Այլք ասէին զերիս անձինս, և զերիս զանազանս բնութիւնս: Համայնք եղծէին զխորհուրդն ամենասրբոյ Երրորդութեան: Վատթարադաւանողականս սղալեալք եղեն թշնամիք ուղղափառ հաւատոյ, ժողովն դատապարտեաց զվատթարադաւանողականս սղալօղս հերետիկոսս, և բացատրեաց մեզ զխորհուրդն Երրորդութեան:

4․ Երկրորդ հանդիսաւորադունեղ ընդհանրական ժողովն եղև կոստանդինուպօլսականն առաջինն, յորում հեղինակութբ՟ դամասկոսի պապին հաւաքեցան հարիւր և յիսուն հարք ընդդէմ մակեդոնի եպիսկոպոսի կոստանդինուպօլսեցւոյ․ որ ուրանայր զածութին՟ հոգւոյն սբոյ՟, ասելով զնա ոչ գոլ ած՟: Այդ է ՚ի չորից գլխաւորաց ժողովոց, և արդարև մերձաւորն յետ նիկիականին: Հարք գումարեցեալք յայսմիկ ժողովոջ, կացուցին զոմանս կանոնադրութիս, և զդաւանութի հաւատոյ ոչ զանազան յայնմանէ, որ ՚ի յեկեղեցւոջ երգի, եթէ ոչ թէ առակցեցին զհոգին սբ՟ բղխօղ ՚ի հօրէ: ՚Ի յասացելոջ ժողովոջ ենթադրեցին զիւրեանս ինքեանս հարիւր և յիսուն եպիսկոպոսք: Վատթարադաւանողականս մոլորեցաւ և մակեդոն, որ ուրացաւ զածութի՟ հոգւոյն սբոյ՟, ասելով զհոգին սբ՟ ոչ գոլ ած՟․ որպէս և արիոս, որ ուրացաւ զածութի՟ որդւոյն, ասելով, զորդին գոլ ստեղծուած: Սոքա են վատթարադաւանողք թշնամիք քրիստոնէականի կրօնի, որոյ գլխաւորադունեղ խորհուրդն, է խորհուրդն Երրորդութեան․ Արիոս անիրաւ ընդդէմ ածութեան՟ որդւոյն: Մակեդոնեանիք ընդդէմ ածութեան՟ հոգւոյն սբոյ՟: Այլք չարաբարոյք համարձակեցան մոլեգնիլ նաև ընդդէմ ածայնոց՟ անձանց, և անիրաւանալ նաև ընդդէմ ածայնոց՟ անձանց: Միթէ ոչ է որդին, որ ասէ: Ես եմ սկիզբն, և վախճան: Արդարև որդին է որ ած՟, որ է, և որ էր, և որ գալոց է ամենակարող: Ուրեմն որդին է ած՟: Եւ միթէ ոչ է հոգին սբ՟, որ ուսուցանէ զամ՟ ինչ Ուրեմն ունի զանհուն գիտութիւն: Իսկ ունեցող զանհուն գիտութիւն է ած՟: Ապաուրեմն հոգին սբ՟ է ած՟:

5․ Երրորդ հռչակաւորադունեղ ընդհանրական ժողովն եղև եփեսականն, յորում հեղինակութբ՟ կելեստինոսի առաջնոյ պապի ժողովեցան երկերիւր հարք ընդդէմ նեստորի կոստանդինուպօլսեցւոյ եպիսկոպոսի, որ ասաց զքս՟ սոսկ մարդ ծնեալ ՚ի Մարիամայ կուսէն, և ստորասէր զայլ անձն մարմնոյ, և զայլ անձն առնել զածութի՟: Այս ժողովն եղև ՚ի չորից գլխաւորաց: Որում սինոտոսի հեղինակութբ՟ կելեստինոսի առաջնոյ պապի եղև վերակացու կիւրեղ աղեքսանդրոյ եպիսկոպոսն, որ հանդերձ ընդհանրով ժողովով առ նոյն նեստորիոս զնոյն վճիռն անդրառաքեաց: Երկրորդ գլխաւորադունեղ խորհուրդն քրիստոնէականի կրօնի, է խորհուրդն ներմարմնութեան: Որ խորհուրդն յայսմիկ կայանայ, թէ ՚ի քս՟ իցեն երկու կատարեալք բնութիք, ածային՟, և մարդկային, և մի անձն․ թէ որդին այ՟, և որդին մարդոյ ոչ իցեն երկու, այլ մին, ըստ ածայնոյ՟ բնութե՟ որդի այ՟, և ըստ մարդկայնոյ բնութե՟ որդի մարդոյ․ և թէ ՚ի քս՟ անմահն, և չարչարեցեալն ոչ իցեն երկու, այլ մին ըստ ածութե՟ անմահ, և ըստ մարդկութե՟ չարչարեցեալ: Ուստի ՚ի քս՟ ածն՟, և մարդն են մի անձն, մի ենթակայացեալ, մի ենթակայացօղ, և մի ենթադրեցեալ, ունօղ զերկուս կատարեալս բնութիս, այսինքն, զածային՟, և զմարդկային: Զայս եղծեաց նեստոր, որ եդ զերկուս որդիս զմին

ծոյ, և զմիւսն մարդոյ, զմին անմահ, և զմիւսն չարչարեցեալ, և որ ուրացաւ զմարիամ դոլ ածածին: Ուստի արժանաւորապէս դատապարտեցաւ 'ի սրբազանէ ժողովոյ եփեսոսի:

6. Չորրորդ հռչակաւորագունեղ ընդհանրական ժողովն եղև քաղկեդոնականն, մին 'ի չորից գլխաւորագունեղից, յորում հեղինակութբ ըլևոնի պապին հաւաքեցեալք էն վեցհարիւր երեսուն հարք ընդդէմ եւտիքեսի կոստանդինուպօլսեցւոյ աբբային, որ ասէր, զքս յետ ներմարմնութեան ոչ գոյանալ յերկուց բնութեանց, այլ 'ի նմա մնալ զածային բնութիւն միայն. և ընդդէմ դէոսկորոսի պաշտպանչի նորին աղեկսանդրացւոյ եպիսկոպոսի, դատապարտելով նաև զեպիսկոպոսս ձեռնադրօղս վասն դրամոյ, զկղերիկոսս, զի մի թարց նամակի յառակի եպիսկոպոսի պաշտօնատրիցեն: Վատթարագունեղ է նաև հերետիկոսութիւն եւտիքեսի, դնողի 'ի քս զմին բնութիւն: Քանզի նաև հերետիկոսութիւս այս եղծէ զխորհուրդն ներմարմնութեան: Զի որպէս առ խորհուրդն ներմարմնութեան խնդրի միութիւն անձին, զի իցէ մին ենթադրեցեալ գործօղ զփրկութիւն մեր. այսպէս նաև խնդրի բազմութիւն բնութեանց, ածայնոյ, և մարդկայնոյ: Վասնզի քս է ճշմարիտ, և կատարեալ ած. ուրեմն ունի զճշմարիտ, և զկատարեալ ածային բնութիւն. և է նաև ճշմարիտ, և կատարեալ մարդ. ուրեմն նաև ունի զճշմարիտ, և զկատարեալ մարդկային բնութիւն: Եւ այսպէս ունի զերկուս ճշմարիտս, և զկատարեալս բնութիւնս, զածային, և զմարդկային, 'ի միում անձին բանի անշփոթաբար, և անբաժանելաբար միաւորեցեալս անձնաւորաւ, և ենթակայականաւ միաւորութեամբ: Ուստի արժանապէս եւտիքէս, և պաշտպանիչ նորա դէոսկորոս, որք դնէին 'ի քս զմին բնութիւն, դատապարտեցեալք, և բանադրեցեալք են 'ի սրբազանէ հռչակաւորագունեղէ ժողովոյ քաղկեդոնի:

7. Հինգերորդ ընդհանրական ժողովն եղև կոստանդինուպօլսականն երկրորդն 'ի հարիւր և վաթսուն և հնգից հարց, ենթ փելիքսի չորրորդի. Բոնիֆաչիոսի երկրորդի, Յօհաննու երկրորդի, Ակափիտոսի առաջնոյ, Սիլվերիոսի, և Վիճիլիոսի պապից ընդդէմ պետրոսի, անդիմոսի, սեվերոսի, և եպանոսի հերետիկոսաց: Պետրոս արհիեպիսկոպոսն անտիոքացին ասէր 'ի յերեքսրբեան օրհներգութեան առադրելի դոլ զխաչն, այսինքն, զերրորդութիւն դոլ խաչեցեալ, զի ասիցէր, սբ, սբ սբ, որ խաչեցաւ վասն մեր: Որ հարկ էր, կամ չփոթել զանձինս երրորդութեան. կամ ուրանալ զերկուս բնութիւնս 'ի քս: Ընդդէմ որոց բազումք եպիսկոպոսք արևելեայք, զբազումս իրս գրեցին: Վեցերորդ ընդհանրական, և աղնուագունեղ ժողովն եղև կոստանդնուպօլսական երրորդն, 'ի դոլ վերակացու պատգամաւորաց յղեցելոց 'ի յակաթոնէ պապէ, դարձեալ ընդդէմ սարքսի, և այլոց 'ի վեր յիշեցելոց, որք ասէին զմին ներգործութիւն 'ի տնօրէնութեան ներմարմնութեան: Եօթներորդ ժողովն, 'ի յունաց ընդհանրական անուանեցեալն, եղև նիկիական երկրորդն, ենթ Ադրիանոսի պապի, յորում վճռեցաւ յայտնապէս երկրպագել պատկերաց, և փարել զնոքօք պատուով, և վերյարդել զմասունս սրբոց, Ութերորդ ընդհանրական ժողովն եղև կոստանդինուպօլսական չորրորդն, ենթ ադրիանոսի երկրորդի պապի, արտաքսեցեալ մանաւանդ վասն իջուցման 'ի գահէ իգնատիոսի պատրիարգի կոստանդինուպօլսեցւոյ. զոր ոմանք եպիսկոպոսք 'ի յեկեղեցւոյ, որոց իրաւամբ էր վերակացու, բռնութբ արտաքսեալք էին, և զֆօցիոս 'ի յաշխարհականութենէ առժամայն կղերիկոսացուցեալ նորին եկեղեցւոյ ընդդէմ սրբազանից կանոնաց վերակացուցեալք էին:

8. Իննե‿

8. Իններորդ հռչակաւորագունեղ ժողովն եղև ժողովն Փլօրենցիու, ենթ Եւգենիոսի չորրորդի, սկսեցեալն 'ի Փեռառարի, և վասն ժանտացաւու 'ի Փլօրենցիա անդրաբերեցեալ, 'ի գոլ ներկայ պատրիարգի կոստանդնուպօլսեցւոյ Յունաց ընդ այլոց հայրապետաց, Աբբայից, կրօնաւորաց, և խաչիկնքեցելոց. 'ի ձեռն քսան և հնգից նստմանց, վեցից արարեցելոց յառաջագոյն 'ի Փեռառարի, յաղագս բղխման հոգւոյն սրբոյ 'ի յորդւոյ, յաղագս հրոյ քաւարանի, յաղագս գլխաւորութե պապի, և յաղագս խորհրդոց անդ վճռեցեալ է: Տասներորդ, և վերջին հռչակաւորագունեղ ընդհանրական և ազնուագունեղ ժողովն եղև ժողովն Թրիդենդինոյ, ենթ Պօղոսի երրորդի, Յուլիոսի երրորդի, Մարցելոսի երկրորդի, Պօղոսի չորրորդի, և Փիոսի մնգերորդի պապից, առ 'ի շիջուցանել զհերետիկոսութիւնս Մարթինոսի Լութեռի, 'ի յալամանի ընդդէմ ներողութեանց պապից հերետիկոսաբար քարոզողի, և դրողի ընդդէմ գլխաւորութե հռոմէականի եկեղեցւոյ, ընդդէմ կուսակրօնութե, և ընդդէմ այլոց արարողութեց հնոյ եկեղեցւոյ, ընդդէմ որոյ, և ընդդէմ այլոց նշանաւորեցաւ ժողովն մանթուայ, յետոյ վասն ոմանց օրինաւորաց պատճառաց 'ի վինչենցիա, երրորդաբար 'ի Թրիդենդինոյ քաղաքի, յայնժամ ոչ ինչ արարեցեալ է, դարձեալ չորրորդաբար յամի: 1545. երրորդում սկսեցաւ յաւուր երեքտասաներորդում դեկտեմբերի, 'ի վերանատին պատգամաւորաց առաքելական աթոռոյ ընդ բազմաց պատրիարգաց, արհիեպիսկոպոսաց, եպիսկոպոսաց, աբբայից, մեծաւորաց կրօնաւորաց, ածաբանից, և օրինադիտաց, պատգամաւորաց 'ի թագաւորաց քրիստոնէից, և նաև իշխանաց առաքեցելոց, որք յայտ են 'ի յայնմիկ: Եդաք զտասն հռչակաւորագունեղս պատմելիս ժողովս, թողլով զայլս ընդհանրականս, և նահանգականս:

## ԳԼՈՒԽ ԿԴ:

### Յաղագս պահեցողութե.

1. Պահեցողութիւն է հեռացումն յամից կերակրոց մինչև առ բացորոշեցեալ ժամանակ: Դոյ պահեցողութի, որ է պատուիրեցեալ 'ի յեկեղեցւոյ ամից քրիստոնէից, զքսան և մին ամ աւարտողաց: Զայս ծոմապահս պարտաւանդիմք պահել. վասնզի պարտականք եմք հնազանդիլ եկեղեցւոյ: Ուստի որք ոչ պահեն, մեղանչեն. քանզի անցանեն զպատուիրանաւ եկեղեցւոյ: Քրիստոնեայք, որք պահեն, գոլով 'ի շնորհի այ, ոչ միայն ոչ մեղանչեն, այլ նաև հաւաքեն զարդիւնս. վասնզի գործեն զարդիւնաւոր գործ 'ի շնորհի այ: Իսկ որք պահեն գոլով 'ի մահուչափ մեղս, թէպէտ ազատիցեն զինքեանս 'ի մեղաց օրինազանցութե պահեցողութե. սակայն ոչ արդիւնաւորին: Պահեցողութիւն, որ պատուիրեցեալ է յեկեղեցւոյ, արգելու զճաշակումն կերակրոյ մինչև 'ի կէսօր: Ուստի 'ի յաւուր ծոմապահոյ պատուիրեցելոյ նախ քան զճաշ ոչ կարեմք ուտել զառաւօտեան կերակուր, արգելու նաև զլիակատար ընթրիս. սակայն 'ի ժամանակի ընթրոյ կարեմք ուտել զսակաւ ինչ հաց, և զսակաւ ինչ պտուղ, զբանջարս, և զնմանս իրս. վասնզի այս յայնժամ թոյլատրեցեալ է: Բայց զբարեգունեղ գործ գործէ, որ ըստ նախկնոյ սովորութե, առ մեծագոյն արդիւն զոչինչ ուտէ: Յաւուր պահեցողութե պարտիմք հեռանալ 'ի մսոյ, 'ի կաթնեղինաց, և 'ի ձուանց. քանզի այսպէս հրամայէ եկեղեցին, սակայն ուր վասն չգոյութե ձկանց, թոյլատրեցեալք են կաթնեղէնք, և ձուանք, ոչ մեղան-

չեն ուտօղք զկաթնեղէնս, և զձուանս։

2 'Ի ժամանակի կէսօրականի ճաշու յաւուր ծոմապահութեան ճաշակումն աւելորդի կերակրոյ, թէպէտ ոչ եղծիցէ զծոմապահութիւն. սակայն է մեղք ընդդէմ առաքինութեան պահեցողութեան. վասն զի առաքինութիւն պահեցողութեան դարձի 'ի յաւելորդութէ կերակրոյ։ Նաև ըմպելին թէպէտ ոչ եղծիցէ զեկեղեցական ծոմապահութիւն. սակայն աւելորդութիւն նորա է ընդդէմ առաքինութեան զգաստութեան. վասն զի առաքինութիւն զգաստութեան դարձի 'ի յաւելորդութէ ըմպելւոյ, մանաւանդ յայնմանէ, որ պատճառէ զարբեցողութիւն, բառնալով զկիրառութիւն բանին։ Եկեղեցական ծոմապահութիւն պահելի է յամենայն աւուր քառասնօրեայ պահոց, բաց 'ի յաւուրց կիւրակէից, յորս պահելի է միայն հեռացումն 'ի մսոյ, 'ի կաթնեղինաց, և 'ի ձուանց։ Ասացեալ եկեղեցական ծոմն պահելի է նաև 'ի յերիս աւուրս ամենից չորից եղանակաց, այսինքն, 'ի չորեքշաբաթոջ, 'ի յուրբաթոջ, և 'ի շաբաթոջ։ Նաև պահելի է 'ի յամենայն վիճիլի, յորում ենթ պատուիրանի ծոմապահելի է։ Բայց յամենայն ուրբաթոջ, և յամենայն շաբաթոջ բոլորոյ տարւոյ, ենթ պատուիրանի հեռանալի է միայն 'ի մսոյ 'ի յեկեղեցւոջ լատինականի։ Իսկ 'ի յեկեղեցիս այլոց ազգաց պահելիք են ծոմապահութիւնք նոցա, և պահեցողութիւնք նոցին, ըստ սովորութեան նոցա։ Բայց առ հաղորդութիւն խնդրի բնական ծոմապահութիւն. քանզի արժանապատուութիւն Քրիստոսի պահանջէ զայս։ Բնական ծոմապահութիւն է այն, յորում հեռանամք յամենայնէ նաև փոքրագունեղէ կերակրոյ, և յամենայնէ նաև սակաւագունեղէ ըմպելւոյ։

3. Օգտակարագունեղապէս հրամայեաց մեզ եկեղեցին զծոմս, և զպահս. քանզի ծոմք, և պահք ազատեն զմեզ 'ի մեղաց որկրամոլութեան, պահպանեն զողջախոհութիւն. են միջոցք առ 'ի սանձել զմարմինն. են բարեգործութիւնք առ 'ի վճարել զպատիժս, կրելիս վասն թողեցելոց մեղաց. և են միջոցք, որք օգնեն մեզ, զի զգաստաբար, մտադրաբար, և ուշադրաբար պարապիլ կարիցեմք աղօթից, և քարոզութեանց, և ընթերցման գրոց հոգևորականաց։ Պարաւանդիմք պահել զպատուիրեցեալս ժոմս, և զպատուիրեցեալս պահս 'ի յեկեղեցւոյ. վասնզի պարաւանդիմք հնազանդիլ եկեղեցւոյ։ Քանզի ասէ տէրն։ (Որ ձեզ լսէ, ինձ լսէ. և որ զձեզ անարգէ, զիս անարգէ, և որ զիս անարգէ, զառաքիչն իմ անարգէ։) Ղուկաս։ 10. թիւ. 16. Է իմն ծոմ, զոր ոմն ուխտեաց Աստուծոյ։ Արդուրեմն ծոմն է յարմար նիւթ ուխտի. քանզի է մին 'ի բարեգործութեանց, որք հաճոյք են Աստուծոյ։ Քրիստոնեայն, որ ուխտեաց զծոմն, պարաւանդի պահել զնա. վասնզի պարաւանդիմք հատուցանել Աստուծոյ զուխտս մեր։ Նախ քան թէ ուխտիցեմք, ազատք եմք. բայց ուխտիւ ազատաբար արարեցելով կապիմք։ Ուստի պարտականք եմք հատուցանել զնա։ Է իմն ծոմ, զոր ոմն ազատաբար պահէ, ոչ պարտաւորելով զինքն առ պահեցումն նորա։ Նաև սա առնէ զբարի, և գովելի գործ. քանզի ամենայն ծոմ, արարեցեալ որպէս պիտոյ է, է բարի, և է գովելի։ վասնզի ամենայն ծոմապահութիւն ազատէ զմարդն 'ի մեղաց, որք առաջադային 'ի յորկրամոլութենէ, 'ի զեխութենէ, և 'ի յարբեցողութենէ։ Ամենայն ծոմ է օգնութիւն ողջախոհութեան։ Ամենայն ծոմ սանձէ, և սանձահարէ զմարմինն, և է սպեղանի ընդդէմ ցանկութեան, և ընդդէմ անկարգից շարժմանց նորա, Ամենայնիւ ծոմապահութեամբ վճարեմք զպատիժս, պարտաւորեցեալս թողեցելոց մեղաց մերոց։ Եւ ամենայն ծոմապահութիւն օգնէ մեզ առ 'ի յաղօթել։

4. Միաւորելիք են այսոքիկ երեքիւք, այսինքն. աղօթն, ծոմն, և ողորմութիւն։ Զի բարի է աղօթն ծոմա-

ծոմապահութք, և հանդերձ ողորմութք, առաւել, քան թաքուցանելն զգանձս ոսկւոյ՝ հաճոյք են ա̄յ աղօթօղք, և ծոմապահօղք։ Վասնզի որ̄ն ունկնդրնէ աղաչանաց նոցա, որք յարատևողաբար ծոմապահեն․ և աղօթեն առաջի տեառն։ Երանի այնոցիկ, որք այժմ քաղցեալք են ծոմապահով, զի նոքա յագեսցին։ Դարձման մերոյ առ տ̄ր զուգակցելք են ծոմ̄, արտօսր, և հառաչանն։ Արդարև հաճոյ է ա̄յ դարձումն, որ լինի բոլորով սրտիւ, ծոմապահութք, արտասուօք, և հառաչանօք։ Ուրեմ̄ յա̄մնում պարտիմք առնել զմեզ իբրև զպաշտօնեայս ա̄յ 'ի պահեցողութիս, և 'ի ճնշման մարմնոյ։ Մինչ ծոմապահեմք զգուշանալի է յունայնէ փառաց, և 'ի վատթարէ դիտաւորութէ, զի մի կորուսանիցեմք զվարձն բարեգործութե մերոյ, ըստ այնմ տեառն։ (Այլ դու յորժամ պահիցես, օծ զգլուխ քո, և լուա զերես քո։ Զի մի երևիցիս մարդկան իբրև զպահօղս, այլ հօր քում 'ի ծածուկ․ և հայր քո, որ տեսանէ 'ի ծածուկ հատուսցէ քեզ։) Մատթ․ 6․ թիւ․ 17․ Քարոզելի է ծոմ̄, և է ծոմապահելի, զի անձկացուցանիցիմք առաջի ա̄յ մերոյ, և խնդրիցեմք 'ի նմանէ մեզ զուղիղ ճանապարհ։ Այս է մեծագոյն, և լաւագոյն ծոմ̄, ընդունելին հօրն ողորմութեց, և ա̄յ ամենակարողի, այսինքն, քանդել զկապակցութիս ամբարշտութե, լուծանել զծրարս ցածուցանօղս, արձակել, և ազատել զայնոսիկ, որք բեկեցեալք են, և խորտակել զա̄մ բեռն․ տալ քաղցելոց զհաց մեր, և զաղքատս, և զտնանկս ներմուծանել 'ի տուն մեր, զգեցուցանել զմերկն, և ոչ անարգել զընկեր մեր։

5․ Ծոմապահելի է հանդերձ խոնարհութք։ Քանզի խոնարհեցուցանելի է անձն մեր ծոմով․ զի ծունկք մերք տկարասցին ծոմիւ, և մարմին մեր դունափոխեսցի վասն ձիթոյ։ Են, որք ծոմապահեն, և ծոմք նոցա, ոչ են հաճոյք տեառն։ Խոնարհեցուցանեն զանձինս իւրեանց ծոմով․ սակայն որ̄ն ոչ համեմատի 'ի խոնարհեցուցմն նց․ վասնզի յաւուր ծոմապահոց նոցա գտանի վատթար կամ̄ նց․ քանզի լեալք անողորմք, և խստաբարոյք, զա̄մ պարտապանս իւրեանց նեղեն։ Ծոմապահեն, զի կռուիցին, և վիճիցեն, և ամբարշտաբար ձաղիցեն զայլս։ Այսպիսիք արդարև տառապեցուցանեն զանձինս իւրեանց 'ի յաւուր, ծոմապահելով, և զգլուխս իւրեանց իբրև զշրջանակ դարձուցանելով այսր և անդր, և զքուրձ, և զմոխիր տարածելով․ սակայն զծոմ̄ նոցա որ̄ն ոչ կոչէ ծոմ, և զօրն տառապանաց նոցա ոչ անուանէ օր ընդունելի․ քանզի յաւուր ծոմապահոց գտանի վատթար կամ̄ նոցա։ Ուստի ոչ այսպէս է ծոմապահելի․ այլ ծոմապահելի է կատարելով զկամ̄ ա̄յ, զի աղաղակ մեր լսելի լինիցի 'ի բարձունս։ Ոչ ևս ծոմապահելի է որպէս ծոմապահեն կեղծաւորք վասն սնափառութե, ըստ այնմ տեառն։ (Եւ յորժամ պահիցէք, մի լինիք իբրև զկեղծաւորսն տրտմեալք․ որք ապականեն զերեսս իւրեանց․ որպէս զի երևեսցին մարդկան թէ պահիցեն։ Ամէն ասեմ ձեզ, այն իսկ են վարձք նոցա։) Մատթէի։ 6․ թիւ․ 16․ Ուստի ասէ Էկլեզիկայ։ (Որ մկրտի 'ի մեռելոյ, վերստին շօշափէ զնա․ զի՞նչ օգուտ է լուացումն նր̄։ Այսպէս մարդ, որ 'ի բաց կայցէ 'ի մեղաց իւրոց, և վերստին զնոյն առնէ, զի՞նչ օգուտ առնէ խոնարհեցուցանելով զինքն․ զաղօթս նր̄ ո՞վ լուիցէ։) Գլ․ 34․ թիւ․ 30

6, Ծոմ̄ առնէ մարդոյ զբազումս բարերարութիս։ Քանզի ծոմ̄ մաքրէ զմիտն, վերացուցանէ զզգայութին, ենթարկէ զմարմին հոգւոյ, զղջացուցանէ զսիրտն․ և խոնարհեցուցանէ զնա․ ցրուէ զմէգս ցանկութե, շիջուցանէ զբորբոքմունս բղջախոհութե, պահպանէ զողջախոհութին, և զնա, որ պա-

պարապի աղօթից , և գրոց ընթերցոց , տրամադրէ առ լուսաւորութիւն մտաց։ Ծոմ ոչ սիրէ զերկարախօսութիւն , և զչատախօսութիւն , ոչ խնդրէ զաւելորդութիւն փարթամութեանց , անարգէ զհպարտութիւն , գովէ զխոնարհութիւն , և շնորհէ մարդոյ զճանաչումն իւրեան ինքեան , ցուցանելով նմա զտկարութիւն , և զվայրահակութիւն նորա ։ Ծոմ է նշան խոնարհութեան , օգնութիւն ողջախոհութեան, թիկնահասութիւն աղօթից , մահ մեղաց , կործանումն յանցանաց , դարման փրկութեան արմատ շնորհաց , հիմն մաքրութեան , և ներածումն առ կատարելութիւն ։ Որպէս աղօթն բժշկէ զծանրացութիւս մտաց · այսպէս ծոմ բժշկէ զկիրս մարմնոյ ։ Ծոմ ոչ միայն է առաքինութիւն , այլ նաև է հիմն առաքինութեանց · վասնզի տրամադրէ առ աղօթս , ածէ առ ժուժկալութիւն , հակէ առ ապաշխարութիւն , որբացուցանէ զապաշխարօղն , և զզղջացօղն , և զփոշիմանօղն 'ի մեղաց , և 'ի յանցանաց իւրոց , և առնէ զմարդն ըմբռն խոկման , և ներգործութեանց խոհեմութեան ։ Ցրտութեամբ ծոմապահութեանց , և հսկմանց , սեղմին բորբոքեցեալք նետք դիւաց ։ Սրբացուցանելի է ծոմ այլովք բարեգործութեամբք նմա առակցեցելովք, զի զարժանաւոր պահեցողութիւն մարմնոյ կարիցեմք մատուցանել այ ։ Այնպէս ծոմապահելի է , զի զայն , զոր առորաքարշեմք 'ի մէնջ , այլոց շնորհիցեմք ։ Եւ այս վասն այսորիկ առնելի է , զի ուստի մարմին մեր նեղի , անտի մարմինն չքաւորի ընկերի վերանորոգիցի ։

7. Ծոմապահութեան առակցելի է ողորմութիւն ; զի բարեպէս ծոմապահիցեմք ։ Քանզի նա բարեպէս ծոմապահէ , որ զապրուստ մարմնոյ , որք են հասարակք պարգեւք ստեղծողի , ընդունի 'ի միասին ընդ աղքատաց , և չքաւորաց · և քանզի զայնոսիկ , զորս առ ժամանակ ինքն յինքենէ ենթաքարշեաց , ոչ իւիք կերպիւ պահէ վասն որովայնի իւրոյ , այլ բաշխէ աղքատաց , և չքաւորաց ։ Եւ այնպէս է ծոմապահելի , զի և այլք անդամք մերք պարապիցեն յառկաց ծոմապահութեանց իւրոց ։ Քանզի ոչ միայն մեղաւ կոկորդն մեր , այլ նաև այլք անդամք մերք մեղանչեցին ։ Ապաուրեմն ծոմապահեսցէ ակն 'ի հեշտախուզականաց հայեցմանց , զի բարուք խոնարհեցեալ համակրթիցի 'ի յապաշխարութեան , որ դոլով վատաբար աղատ շրջիւր 'ի յանցանս ։ Ծոմապահեսցէ լեզուն , որով մեղանչեմք զրպարտելով . և բամբասելով , 'ի յանօգտից , և 'ի կատակաց բանից ։ Ծոմապահեսցէ ձեռն , որով անիրաւաբար գործեալք եմք , յամենից գործոց , որք ոչ վայելեն մեզ ։ Վերջապէս ծոմապահեսցէ հոգին , որ սիրեաց զմոլութիւս , և կամեցաւ զմեղս , 'ի մոլութեանց , և 'ի չարակամութենէ իւրմէ ։ Քանզի թարց այսոցիկ ծոմապահութեանց անդամոց մերոց , մնացեալքն անարդիւն 'ի տեառնէ , այնու թէ յաւուրս ծոմապահութեանց մերոց կամքն մեր վատթարք գտանիցին ։ Գոյ բարի համապատասխանութիւն 'ի մէջ ծոմապահութեան , և աղօթից ։ Վասն զի ծոմ շնորհէ զաղօթս , զջերմեռանդութիւն , և զյուսադրութիւն · աղօթն ստանայ զզօրութիւն ծոմապահելոյ ։ Ծոմ արդիւնաւորի զշնորհ աղօթելոյ , աղօթն առատանայ զառաջացումն ծոմապահութեան ։ Ծոմ զօրացուցանէ զաղօթն , աղօթն սրբացուցանէ զծոմ , և մատուցանէ տեառն ։

8. Կարի ջանալի է , զի ծոմապահիցեմք հանդերձ իւղով ողորմութեան ։ Քանզի թէպէտ ծոմ բառնայցէ զխօթութիւս մոլութեանց , հատանիցէ զկիրս մարմնոյ , բաղամերժիցէ զաւիթս յանցանաց · սակայն թարց իւղոյ ողորմածութեան , թարց վառակոյ գթութեան , և թարց ծախից ողորմութեան , ոչ վերահատուցանէ զկա-

զկատարեալ փրկութիւն մտաց : Ծոմն բժշկէ զվէրս մեղաց , բայց զապիս մեղաց ոչ մաքրէ թարց ողորմութե : Ծոմոյ առակցելի է ոչ միայն մարմնաւոր ողորմութիւն , այլ կարի առաւել հոգեւորն : Քանզի բարի , եւ փրկաւէտ է ծոմն , որով ջնջին յաւիտենականք տանջանք , յորժամ թողանին մեղք : Ոչ միայն է լռացումն մեղաց , այլ նաեւս է արմատախլումն մոլութեց . ոչ միայն ստանայ զթողութի , այլ արդիւնաւորի զշնորհ . ոչ միայն ջնջէ զանցեալս մեղս , զորս գործեալք եմք , այլ նաեւ բացամերժէ զապագայս , զորս կարէաք գործել : Ծոմն է ճրագ , ողորմութիւն ձէթ : Զի ուրեմն միշտ լոյս տայցէ , եւ ոչ շիջանիցի ճրագն ծոմապահութեան մերոյ , մինչ տանելի է ընդ մեզ ձէթն ողորմութե : Ծոմապահելի է խոհեմութբ հանդերձ , զի 'ի ծոմապահութե մերում փայլիցէ լոյսն քրիստոնէականի իմաստութե : Ուստի ծոմապահութեց այնպէս առակցելի է բարեխառնութիւն , զի մարմին մեր ոչ յագութի ընդոստուցանիցէ , ոչ անմիջավար տկարացուցանիցէ : Առնելի է, զի ծոմապահութիւնքն լիցեն չափաւորեցեալք , եւ որք ամիւ խոնարութբ մտաց , որք նուաճեցուցանիցեն զմարմինն, ոչ հպարտացուցանիցեն զմիտն , զի մի իրն խոնարհութե ծնանիցի զհպարտութի , եւ 'ի յառաքինութեց ծնանիցին մոլութիք : Արդարեւ պարտաւոր ծոմապահութիւն է ամրոց այ , բերդ քի , որմն հոգւոյն սրբոյ , ձող հաւատոյ , նշան ողջախոհութե , յաղթանակ սրբակացութե :

# ԳԼՈՒԽ ԿԵ.

## Յաղագս լսելոյ զպատարագ :

1. Պատարագն է նուէր նորոյ կտակարանի , եւ նորոյ օրինի , որով քրիստոնէական կրօնն պաշտօնիւ երկրպագութե պատուէ այծ զատեղծօղն աշխարհի , եւ զկերտիչն ամից իրաց , զթագաւորն , եւ զտէրն ծայրագունեղի մեծվայելչութե , որ է աղբիւր ամի բարութե , ներփակօղ յինքեան զամն ատրիճանս կատարելութե , եւ յորմէ կախին ամք իրք յամում , այսինքն , 'ի գոլն . 'ի համապահելն, 'ի շարժելն , եւ 'ի գործելն . եւ զոր մատուցանէ 'ի վերաճանաչումն վերնագունեղի տերութե նորին : Պատարագն է գերազանցագունեղ նուէր , յանհնոյ իմաստութե կացուցեալ : Պատարագս այս ունի զգերազանցութի յամէ կողմանէ : Քանզի ունի զգերազանցութի 'ի կողմանէ կացուցանողի , 'ի կողմանէ մատուցանողի , 'ի կողմանէ կրօնի , 'ի կողմանէ պաշտօնէի , 'ի կողմանէ յանդիմանկացուցանողի , 'ի կողմանէ վաղճանի , վասն որոյ . 'ի կողմանէ անձին , որում մատուցանի , եւ 'ի կողմանէ իրի ընծայեցելոյ : Ունի զգերազանցութիւն 'ի կողմանէ կացուցանողի . քանզի կացուցանօղն զայս է անհուն իմաստութիւն , բանն անստեղծ , վասն փրկութե մարդոյ ներմարմնացեալն , Յս Քս միածին որդին այ , որ վս փրկութե աշխարհի 'ի վր խաչին զենաւ ,որ պատուականագունեղ արեամբ իւրով փրկեաց զմեզ , եւ հաշտեցոյց զմեզ ընդ հօր այ . որ չարչարեցաւ , մեռաւ , եւ թաղեցաւ . եւ որ յարեաւ , համբարձաւ 'ի յերկինս , նստի ընդ աջմէ հօր , եւ անտի գալոցէ դատել զամենեսեան :

2. Ունի

2. Ունի զգերազանցութի 'ի կողմանէ մատուցանողի . վասնզի է պատարագ եկեղեցւոյ, հարսին քի, որ աստ 'ի յերկրի վասն սիրելագունեղի փեսայի իւրոյ զինուորի, և վայելելոց է 'ի յերկինս զհանդէսն յաղթանակի ընդ փառաւորագունեղի փեսայի իւրոյ 'ի յաւիտեան : Ունի զգերազանցութի 'ի կողմանէ կրօնի . քանզի է նուէր ազնուագունեղի կրօնի, յորում մարդիկք ունին զճանաչումն ամենաբարձրից խորհրդոց, այսինքն, ամենասրբոյ երրորդութե, և ներմարմնութե : Ունի զգերազանցութի 'ի կողմանէ պաշտօնէի . քանզի պաշտօնեայն սյսր ընծայի, մատուցանօղն զնա անուամբ եկեղեցւոյ թագաւորի թագաւորաց, և տեառն տերանց, է քահանայն այ ամենաբարձրելոյն, որ գործէ բանիւ քի զանդրադարձափոխումն հացի 'ի մարմին քի, և գինւոյ 'ի յարիւն նորա . և որ հեղինակութբ քի ունի զիշխանութի կարգի թողլոյ զմեղս. և որ անուամբ եկեղեցւոյ այ մատուցանէ զաղաչանս այ ամենաբարձրելոյն, և միջնորդէ 'ի մէջ այ, և մարդոյ . և որ որոշեցեալ 'ի մարդկանց, լեալ է բաժն, և ժառանգութի ամենակարողի այ, և որ վն մատակարարութե խորհրդոց, զշնորհ առբերողաց, կարէ առնել զմարդիկ մասնակիցս սրբացուցչի շնորհի: Ունի զգերազանցութի 'ի կողմանէ յանդիմանկացուցանողի . քանզի անարիւն ընծայս այս ներկայացուցանէ զարիւնային ընծայն յորում եղև հեղումն արեան, 'ի վերայ սեղանոյ խաչին վասն փրկութեան մարդկայնոյ սեռի, և բոլորոյ աշխարհի, այ ամենաբարձրելոյն մատուցեալն, որոյ մատուցմամբ խաղաղացուցաւ բարկութին ածայնոյ արդարութե, և եղև փրկութիւն մարդկայնոյ սեռի, և հաշտութն 'ի մէջ այ, և մարդոյ :

3. Ունի զգերազանցութի 'ի կողմանէ վախճանի, վասն որոյ . քանզի վախճանն 'ի կողմանէ այ է վերաճանաչումն ամենաբարձրելոյ տեառն այ, որ ճանաչումն է գերազանցագունեղ . վասնզի նուաստամբ այ զգերազանցագունեղ պատիւ, և գերազանցագունեղիւ պատուով պատուեմք զնա, ճանաչելով զնա ծայրագունեղ տր : Իսկ վախճանն 'ի կողմանէ մեր է ամենամեծ հոգևոր օգուտն մեր . քանզի մատուցմամբ այսր ընծայի, արարեցելով, որպէս ասիտայէ, առընդունիմք 'ի յայ զշնորհ զղջման, զօգնութի ընդդիմանալոյ չարաց ազդեցմանց սատանայի, և յաղթելոյ զնա, և ստանալոյ զյաղթանակն ընդդէմ նորա . և ընդունիմք զբազումս այլս բարերարութիս . և կարեմք վճարել վասն մեր, և վասն հոգեաց քաւարանի . և ըստ ջերմեռանդութե, 'ի շնորհի այ կրթեցելոյ, արդիւնաւորիմք զյաւիտենական կեանն : Ունի զգերազանցութի 'ի կողմանէ անձին, որում մատուցանի : Քանզի մատուցանի հօրն յաւիտենականի, որ է առաջին անձն ամենասրբոյ երրորդութե, և որ է աղբիւրն ածութե, և յորմէ որդին ծննդեամբ առնու զածութին : Վերջապէս ունի զգերազանցութի 'ի կողմանէ իրի մատուցելոյ . քանզի տրն մեր Յս Քս, միածին որդին այ, համագոյակից հօր, ճշմարիտ ած, և ճշմարիտ մարդն, կատարեալ ած, և կատարեալ մարդն, ամենևին համահաւասարն հօր, ունեցօղն զամ անհնիցս անհունս կատարելութիս, որք են 'ի հօր, է որ 'ի յայսմիկ անարեան նուիրի, որ ներկայացուցանէ զայն արիւնային ընծայն, 'ի վերայ սեղանոյ խաչին մատուցեալն, հանդերձ բոլորով ածութբ, և բոլորով մարդկութբ իւրով վասն մեր, և վն փրկութե մերոյ մատուցանի :

4. 'Ի կրօնի մերում սրբազանի բազումք հոգևորք, և ածահաճոյք ներգործութիւնք 'ի կիրարկանին : 'Ի կրօնի մերում 'ի յեկեղեցիս քարոզին ածայինք բանք : 'Ի յիրս առ փրկութի հարկաւորս վարժին անհմուտք : 'Ի յաւաղանի,

և

և 'ի լուսաւորանի լուսանին մեղաւորք, և մաքրին : 'Ի խոստովանանելիս արձակին եղեռնագործք : Մկրտեցեալքն դրոշմին 'ի յեղեակայսէ մեռոնաւ, և լինին զինուորք Քի : Ամուսնացողք օրհնին 'ի քահանայից : 'Ի յեպիսկոպոսաց ձեռնադրին քրիստոնեայք, ընդունողք զփոքրագոյնս, կամ զմեծագոյնս, և զորբաղանս աստիճանս : 'Ի դասս սպասաւորդեն, և զմեծայինս օրհնաբանութիւնս նուագեն եկեղեցւոյ : Քրիստոնեայք զջերմեռանդս, և զբորբոքեցեալս աղօթս մատուցանեն Այ : 'Ի տանս հիւանդք օծանին որք իւղով ընդդէմ դիւաց : Եւ այսպէս բազումք ներգործութիւնք 'ի կիր արկանին 'ի սրբազանի կրօնի մերում 'ի յեկեղեցիս, կամ արտաքոյ եկեղեցւոյ, և լինին հոգևորք, և մեծահաճոյք արարողութիւնք : Համայնքն են բարիք, և սուրբք : Համայնքն են պատուելիք, և 'ի կիր արկանելիք : Այդ ամենաբարի գործն սրբազանի կրօնի մերոյ է պատարագն : 'Ի պատարագի է դաւանութիւն հաւատոյ : 'Ի պատարագի են ջերմեռանդագունեղք աղօթք, և աղաչանք : 'Ի պատարագի են մեծայինք բարբառք, մարգարէականք, առաքելականք, և աւետարանականք : 'Ի պատարագի է երևեցուցումն բարձրագունեղից խորհրդոց : 'Ի պատարագի է պաշտումն երկրպագութեան Այ, և նուիրումն անարատ ողջակիզի : 'Ի պատարագի է հոգևոր, կամ խորհրդաւոր հաղորդումն : 'Ի պատարագի է իրական ներկայութիւն փրկչին մերոյ. Ապաւրեմն պատարագն է ամենաբարի գործն սրբազանի կրօնի մերոյ :

5. Մատուցողք առ պատարագ, ոմանքն են պատարագողք, և ոմանք են լսողք զսբ պատարագն : Պատարագողք, որք դասանին 'ի մահուչափ մեղս, 'ի հարկէ պարտին տրամադրել զինքեանս առ սբ պատարագ 'ի ձեռն խորհրդոյ ապաշխարութեան, և 'ի ձեռն խորհրդաւոր խոստովանութեան, յորժամ է առատութիւն խոստովանահարաց. իսկ եթէ ոչ իցէ առատութիւն խոստովանահարաց, պարտին տրամադրել զինքեանս կատարեալ զղջմամբ : Եւ պատճառն է, քանզի մատուցանողքն զպատարագ, են մատակարարիչք, և հաղորդողք : Արդ մատակարարողք զխորհուրդն 'ի մահուչափ մեղս, և հաղորդողք 'ի մահուչափ մեղս, մեղանչեն մահացորէն, և գործեն զմեղս սրբապղծութեան : Ուստի եթէ պատարագողք թարց տրամադրութեան, և 'ի համուչափ մեղս մերձենայցեն առ պատարագ, մեղանչեն մահացորէն, և գործեն զմեղս սրբապղծութեան : Զի մի ուրեմն մեղանչիցեն, պարտին տրամադրել զինքեանս, որպէս ասացեալ է : Նաև լսողք, եթէ գտանիցին 'ի մահուչափ մեղս, պարտին տրամադրել զինքեանս խորհրդով խոստովանութեան. գոնեայ կատարեալ զղջմամբ, զի մի կորուսանիցեն զգլխաւորագունեղ պտուղն, որ է արդիւնն յաւիտենականի կենի : Քանզի գործողք զբարիս գործս 'ի մահացուս մեղս, զրկին 'ի յարդեանց յաւիտենականի կենի : Ոչ միայն խնդրելի է հարկաւոր տրամադրութիւն առ արդիւն. այլ նաև խնդրելի է այն, որ է առ մեծագոյն արդիւն 'ի ձեռն մեծագունի ջերմեռանդութեան, զի պատարագողքս, կամ լսողքս զպատարագ ստանայցեմք նաև զմեծագոյն արդիւն, և գանձիցեմք 'ի յերկինս :

6. Պարագողքս, կամ լսողքս զսբ պատարագն, պարտիմք ունել զուշադիր ջան, զի ստանձիցեմք զցնծմունս մտաց, և մտադրաբար պարապեցիմք հոգևորի շահի մերոյ. վասնզի է ժամ շահելոյ, և 'ի յերկինս գանձելոյ : Հոգևոր շահն մեր, են ներգործութիւնք, որք հետևեին . այսինքն, ներգործութիւն հաւատոյ, յուսոյ, կատարեալ զղջման, սիրոյ, խոնարհեցուցման, երկրպագութեան, ենթարկեցման, խնդրոյ, շնորհակալութեան, և մատուցման պատարագին

և մեր ինքեանց ։ Ելուզանելի է 'ի հրամանէ սիրոյ ներգործութիւն հաւատոյ, խոկալով զբարձրագունեղս խորհուրդս ։ Ելուզանելի է ներգործութիւն յուսոյ, ընձալով զէմ յանդիմանականի տեսութեան ա՟ծայնոյ էութեան ։ Ելուզանելի է ներգործութիւն կատարեալ զղջման, կարի յոյժ ցաւելով 'ի վերայ ա՟մից մեղաց մերոց վասն սիրոյն ա՟յ ։ Ելուզանելի է ներգործութիւն սիրոյ, առնելով զսիրտ մեր հնոց սիրոյ, զՅ՟ս Ք՟ս վասն սիրոյ մերոյ պատարագեցեալն, 'ի վեր քան զա՟մ ինչ սիրելով ։ Ելուզանելի է ներգործութիւն խոնարհեցուցման, նկատելով զնուաստութիւն մեր ։ Ելուզանելի է ներգործութիւն երկրպագութեան, խոկալով զգերազանցութիւն անհնոյ մեծվայելչութեան ։ Ելուզանելի է ներգործութիւն ենթարկեցման, զկամս մեր ա՟ծայնոյ կամացն ենթարկելով ։ Ելուզանելի է ներգործութիւն խնդրոյ, խնդրելով զյաւիտենական երանութիւնն ։ Ելուզանելի է ներգործութիւն շնորհակալութեան. ճանաչելով թէ, որ ա՟ծ է հեղինակն ա՟մից բարեաց մերոց ։ Ելուզանելի է ներգործութիւն մատուցման պատարագի, և մեր ինքեանց, զՏ՟ր մեր Յ՟ս Ք՟ս հօր ա՟յ մատուցանելով, և զմեզ ծառայս բոլորս նմա 'ի յաւիտեան ընծայելով ։

7. Բազմազանք պտուղք յառաջագոյին 'ի պարտաւորէ, և 'ի ջերմեռանդէ մատուցմանէ պատարագի քահանայից, ջերմեռանդաբար պատարագողաց. և նաև բազմազանք պտուղք 'ի պարտաւորէ, և 'ի ջերմեռանդէ լսեցմանէ պատարագի քրիստոնէից, զո՟ք պատարագն ջերմեռանդաբար լսողաց ։ Քանզի որդին ա՟յ, և բանն յաւիտենական, վասն փրկութեան մերոյ ներմարմնացեալն, վասն հոգևորից շահաւէտութեանց մերոց, զայս այնքան հօր ա՟յ ընդունելի, և հաճոյ պատարագն կացոյց ։ Արդուրեմն ո՟ք պատարագն ջերմեռանդաբար, և որպէս պիտոյ է, մատուցեալ կամ լսեցեալ. լուսաւորէ զմիտն, մաքրէ զխիղճս, զալէ զվարս, սանձէ զանկարգս շարժմունս, արգելու զցնդեցմունս, շնորհէ զմտադրութիւն, աճեցուցանէ զշնորհն, զարթուցանէ զմաքուրս խղճս, կերտէ 'ի սրտի զհնոց սիրոյ, տայ զլոյս ճրագի հաւատոյ, կանգնէ զյոյսն, բորբոքէ զսէրն, զարդարէ զհոգին, լուսաւորէ զիմացութիւն, հաստատէ զկամս 'ի յուղղութեան, ընդօստուցանէ 'ի սրտի զմաքուրս խղճս, զօրացուցանէ զառաքինութիւնս, քաջալերէ զսիրտն, սանձահարէ զմարմինն, նուաճէ զախտս, կարգադրէ զզգայութիւնս, ջնջէ զմեղս, կործանէ զպատիժս, օգնէ ջերմեռանդութեան, տայ զզօրութիւնս ընդդէմ փորձութեանց, տայ զօգնութիւն պարտաւորապէս պատերազմողաց, և արիաբար ընդդէմ թշնամեաց մարտնչողաց, տայ զյաղթութիւն, ամաչեցուցանէ զթշնամիս, շնորհէ զյաղթանակն ընդդէմ թշնամւոյ, փախուցանէ զմոլութիւնս, ժողովէ զառաքինութիւնս, ճնշէ զմարմինն, շնորհէ զողջախոհութիւն, աճեցուցանէ զջերմեռանդութիւնն, զաշխարհս առնէ ատելի, զերկինս առնէ սիրելի, ցրուէ զխաւար կուրութեան, արտադրէ զլոյս իմաստութեան ։

8. Ոչ միայն պարտիմք գոլ հոգաբարձք, զի տրամադրեցեալք ջերմեռանդաբար լսիցեմք զո՟ք պատարագն, զի մի կորուսանիցեմք զարդիւնն. և զի ընդունիցիմք զպտուղս 'ի ո՟ք պատարագէ արտադրելիս. այլ նաև պարտիմք գոլ հոգաբարձք, զի պարտաւորապէս, և ջերմեռանդաբար զո՟ք հաղորդութիւն յաճախիցեմք, և յաճախաբար, որպէս պիտոյ է, առ սրբազան հաղորդութիւն մատչիցիմք ։ Երկնաւոր թագաւորն խորհրդաւորեցեալ հաճեցաւ գալ առ մեզ. ուրեմն խնդութ՟բ, և ուրախութ՟բ, և ջերմեռանդաբար, և բորբոքելաբար հանդերձ պատկառանօք, սիրով, և ըղձիւ պարտիմք ընդունիլ զնա 'ի սրտի մերում ։ Ք՟ն է

հաց

հաց կենի. հաց, որ ըստ Աստուածութեան եջ 'ի յերկնից, և ըստ մարդկութեան ձևակերպեցաւ 'ի յամենամաքրագոյն արենէ մարիամու կուսին, եղեալ ի սեղանոյ խորհրդաւորի, զի որ 'ի նմանէ ուտէ, ոչ մեռանիցի, այլ կեայցէ 'ի յաւիտեան: Հացն կենդանի է մարմինն քո, խորհրդաւորեցեալն վասն կենի աշխարհի: Ջերմեռանդաբար ուտօղն զմարմին քո, և բորբոքելաբար ըմպօղն զարիւն քո, ունի զկեանն 'ի յիւրեան ինքեան: Ուտօղն զմարմին, և ըմպօղն զարիւն, ունի յինքեան զկեանն յաւիտենական: Մարմինն քո է ճշմարիտ կերակուր, արիւն նորա ճշմարիտ ըմպելի: Ուտօղն զմարմինն, և ըմպօղն զարիւնն, մնայ 'ի քո, և քո 'ի նմա: Ընդունօղն ենթ միոյ տեսակի, ընդունի զբոլորն, և կեայ քիւ: Մատիցուք խորհրդաւորապէս առ հաղորդութեան, զի ուտիցեմք զՔս, և կեայցեմք նովաւ. և զի մնայցեմք 'ի քո, և քո 'ի մեզ: Յորժամ ոչ մատչիմք խորհրդաւորապէս, ընդունելով զՔս ենթ տեսակաց, յայնժամ մատիցուք հոգևորապէս ընդունելով զնա սիրով:

## ԳԼՈՒԽ: ԿԶ.

### Յաղագս խոստովանութեան:

1. Խոստովանութիւնն է յայտնութիւն: Ուստի խոստովանութիւն մեղաց, է յայտնութիւն մեղաց: Խօսիմք զխոստովանութենէ մեղաց: Նա, որ ճանաչէ զմեղն իւր, և յայտնէ զնա, խոստովանի: Է խոստովանութիւն, որ լինի այ: Եւ է ճանաչել զիւր ինքն մեղաւոր առաջի այ: Է խոստովանութիւն, որ լինի մարդոյ: Եւ է ճանաչել զմեղն իւր, և յայտնել զնա մարդոյ: Եթէ յայտնիցի մարդոյ, ոչ քահանայի, ոչ է խորհրդաւոր. քանզի որ ոչ է քահանայ, ոչ ունի զիշխանութիւն արձակելոյ, և կապելոյ. և ոչ է պաշտօնեայ խորհրդոյ խոստովանութեան: Իսկ եթէ լինիցի քահանայի ունեցողի զիշխանութիւն արձակելոյ, է խորհրդաւոր. քանզի քահանայն ունի զիշխանութիւն արձակելոյ, և կապելոյ, և է պաշտօնեայ բազմաց խորհրդոց: Սակայն զի հաստատապէս արձակիցէ զմեղաւորն, ոչ է բաւական իշխանութիւն կարգի, այլ նաև խնդրի իշխանութիւն իրաւասութեան, առաջնորդական, կամ փոխանորդական, առաջնորդական, որպէս 'ի ժողովրդապետիրոջ. իսկ փոխանորդական, որպէս 'ի յայլում քահանայի, զիշխանութիւն արձակելոյ ունեցողի, և փարձեցելոյ. քանզի արձակելն է այնորիկ, որ ունի զիրաւասութիւն: Է խոստովանութիւն, որով հրապարակապէս, և որոշաբար յայտնի մեղն, այս ոչ է հարկաւոր. այլ ևս կարէ դոլ դայթագղական: Եռ է խոստովանութիւն, որով 'ի գաղտնեաւոջ որոշաբար յայտնի մեղն քահանայի: Եւ այս է հարկաւոր:

2. Խոստովանութիւն պարտի դոլ ճշմարիտ, ցաւագին, ամբողջ, խոնարհ. հնազանդ, յայտնի, մեղադիր, հաստատ, վերուղղիչ յաձախ: Խոստովանութիւն պարտի դոլ ճշմարիտ, և ունիլ զճշմարտութիւն. քանզի ատեան խոստովանութեան է ատեան ճշմարտութեան, հնարեցեալ յայնմանէ, որ է ճշմարտութիւն: Ճշմարիտ է, եթէ ոչ բացասի այն, որ է. և ոչ առադրիցի այն, որ ոչ է: Ուստի որ ուրանայ զգործեցեալ մեղն, կամ առադրէ ինքեան զասւտ մեղ, ստէ, և պակասի 'ի ճշմարտութեան: Խոստովանութիւն պարտի դոլ ցաւագին. վասնզի խոստովանօղն զմեղս իւրս, պարտի յետադարձուցանել զկամս իւր, և եղծել զառաջին կամեցումն, որով կամեցաւ, և սիրեաց զմեղն: Թարց ատացելոյ յետադարձուցման կամին ոչ կարէ արձակիլ. քանզի տակաւին կամի,

մի, և սիրէ զմեղն: Ասացեալ եղծումն կամեցման լինի ցաւադնութիւն 'ի վերայ մեղաց: Ուստի խոստովանողն պարտի ցաւիլ 'ի վերայ մեղաց, զի ցաւադնութիւն եղծիցէ զկամեցումն, որով կամեցաւ զմեղն: Ցաւս այս պարտի գոլ կարի յոյժ մեծ, ընդհանրական, և գերբնական: Պարտի գոլ կարի յոյժ մեծ քանզի մարդն 'ի վեր քան զամ՛ ինչ պարտի ատել զմեղն: Պարտի գոլ ընդհանրական. վասնզի պարտի ատել զհամայնս մեղս: Պարտի գոլ գերբնական. քանզի պարտի գոլ զբացայայտեցելոց: Ասացեալ ցաւն կարէ գոլ կատարեալ, և կարէ գոլ անկատար: Է կատարեալ, եթէ լինիցի զղջումն 'ի սիրոյ, և լինիցի վասն սիրոյն այ: Իսկ է անկատար, եթէ իցէ զղջումն վասն երկիւղի, և լինիցի վասն երկիւղի դժոխոյ: Կատարեալն առժամայն արդարացուցանէ զպարտաւորութիւ հանդերձ խոստովանելոյ: Անկատարն իւր ինքեամբքն միայն արդարացուցանել ոչ կարէ:

3. Զղջումն վասն երկիւղի, որ իւր ինքեամբ միայն ոչ կարէ արդարացուցանել. յայնմանէ թէ ոչ իցէ սիրումն այ, է տրամադրութիւն առ արդարացուցումն, յայնմանէ թէ իցէ գերբնական ցաւ: Քանզի պարտաւորաւ խոստովանութբ, և հաստատուն արձակմամբ 'ի յարգեանց քն արդարացուցանէ: Վասն այսորիկ է բաւական տրամադրութիւն: Ուստի զղջմամբ վն երկիւղի մերձեցողն առ խոստովանութիւն, պարտաւորաւ խոստովանութբ, և հաստատուն արձակմամբ 'ի յարգեանց քն արդարացուցանի, և ընդունի զշնորհս, և զսէր, և 'ի զղջացելոյ վասն երկիւղի լինի զղջացեալ վասն սիրոյն այ, սիրելով զած վասն սիրոյ: Արդարև զղջումն վասն երկիւղի է բաւական տրամադրութիւն, բայց անհամեմատաբար լաւագոյն է զղջումն վն սիրոյ, որով ոմն ցաւի 'ի վերայ մեղաց իւրոց վասն սիրոյն այ. քանզի անհամեմատաբար լաւագոյն է սէրն այ, քան երկիւղն դժոխոյ: Խոստովանութիւն պարտի գոլ ամբողջ. վասնզի մեղաւորն պարտի որոշաբար յայտնել խոստովանահօրն զամս մահացուս մեղս իւրս: Լինի ամբողջ, եթէ խոստովանողն ասիցէ, և բանայցէ խոստովանահօրն զամս տեսակս մահամերս, և զթիւն ամց մահուչափ մեղաց, և զամս պարագայս ծանրացուցանողս, որքան ճշգրտիւ, և մարդկայնով կերպիւ բանիլ, և յայտնիլ կարեն: Խոստովանութիւն պարտի գոլ խոնարհ, քանզի մեղաւորն որպէս 'ի մեղանչելն բարձրացոյց զինքն ընդդէմ այ, անցանելով զպատուիրանօք նորա. այսպէս 'ի խոստովանութեան առաջի փոխանորդի այ, պարտի խոնարհեցուցանել զինքն, և խոնարհաբար խնդրել զներումն: Լինի խոնարհ խոստովանութիւն, եթէ խոստովանողն ցաւելով 'ի վր մեղաց, և մեղադրելով զինքն, բանայցէ, և յայտնիցէ խոստովանահօր իւրում զմեղս իւրս, զորս գործեաց խորհրդով, բանիւ, կամ գործով: Ցուցանելի է խոնարհութիւն 'ի դրութեան, 'ի խօսման, 'ի բանս, և 'ի շարժման:

4. Խոստովանութիւն պարտի գոլ հնազանդ, այսինքն, խոստովանողն պարտի գոլ պատրաստ առ 'ի հնազանդիլ խոստովանահօրն, զփրկաւէտ ապաշխարան դնողի: Քանզի փրկաւէտ ապաշխարանն է զամբողջութեան խորհրդոյ ապաշխարութեան: Ուստի խոստովանահայրն պարտի դնել զնա, զի ապաշխարողն, որ խոստովանութբ ազատի 'ի յաւիտենականաց տանջանաց, կրիցէ զժամանակաւորս պատիժս առ վճարումն, և առ բժշկականութիւն: Ուրեմն ապաշխարողն, պարտի գոլ պատրաստ, և յօժար, զի ընդունիցի զապաշխարանն: Խոստովանութիւն պարտի գոլ յայտնի. վասնզի պարտի գոլ այնպիսի, զի խոստովանահայրն զնա որոշաբար իմանայցէ: Աւ որ խնդրի յայտնութիւն: Արդ լինի յայտնի, եթէ խոստովանողն թարց երկարախօսութե

թէ բանից ճշդրտիւ որոշեցելովք բանիւք զմիտ իւր բանայցէ : Խոստովանութիւն պարտի գոլ մեղադիր . քանզի խոստովանողն պարտի ցուցանել զանհաճոյութիւն իւր , զոր ունի 'ի վերայ մեղաց իւրոց : Ոչ լինի մեղադրութբ : Խոստովանութիւն պարտի գոլ հաստատ . վասնզի խոստովանողն ոչ միայն պարտի ունել զցաւ 'ի վերայ գործեցելոց մեղաց իւրոց . այլ նաեւ պարտի ունել զհաստատ առաջադրութիւն այլ եւս ոչ մեղանչելոյ . քանզի պարտի դառնալ առ ած . խոստովանութիւն լինի հաստատ, եթէ խոստովանողն յօժար կամօք տացէ զնմա մեղս : Խոստովանութիւն պարտի գոլ վերուղղիչ . քանզի խոստովանիմք զմեղս , զի թողուցումք զնա : Ուստի վերուղղումն է վախճանն խոստովանութեան : Լինի վերուղղումն, եթէ ոչ կրկնիցին : Յետ սակաւուց կրկնողն , ցուցանէ զառաջադրութի իւր ոչ գոլ հաստատ : Վերջապէս խոստովանութիւն պարտի գոլ յաճախ , զի դիւրաբար կարիցէ լինել կատարեալ քննութի , որ է հարկաւոր առ խոստովանութի , զի խոստովանութի մեր կարիցէ լինել ամբողջ :

5. Զամենամեծ բարերարութի արար մեզ տրն մեր Յս Քս, կացուցանելով զխոստովանութիւն , եւ պարտաւորելով զմեզ առ նա , նաեւ զճշմարիտ սէրն այ ունեցողքս . վասնզի խոստովանութբ դիւրագոյն հասանիլ կարեմք փրկութե մերոյ : Քանզի ունեցողքս զանկատար զղջումն խոստովանութբ , եւ հաստատով արձակմամբ 'ի յարգեանց քի փրկիմք : Իսկ թարց խոստովանութե , եւ արձակման անկատար զղջումն զմեզ փրկել ոչ կարէ , այլ խնդրի կատարեալ զղջումն , զոր ոչ կարեմք այնպէս դիւրապէս ունել , որպէս կարեմք ունել զանկատար զղջումն . քանզի դիւրագոյն է մեզ զղջալ 'ի մեղաց մերոց վն երկիւղի դժոխոյ , քան վասն սիրոյն այ : Յետ այնորիկ խոստովանութբ , եւ արձակմամբ ոչ միայն ազատիմք 'ի պարտաւորութե մեղաց , եւ 'ի յաւիտենականաց տանջանաց . այլ նաեւ վճարեմք զժամանակաւորս պատիժս , զորս պարտիցեաք կրել 'ի քաւարանի : Ուստի եւ զբարերարութիւս այս շնորհէ մեզ խոստովանութիւն : Դարձեալ , խոստովանութիւն է աղեղանի , օգնիչ դարձման , եւ վերուղղութե մերոյ : Քանզի եթէ յետ խոստովանութե մերոյ , փորձիցէ զմեզ սատանայն , զմիտ ածելով զպարտականութի խոստովանութե , յորում առաջի խոստովանահօրն ամաչեմք , զի մի բռնադատիցիմք ենթարկել այնպիսւոյ ամաչման , շարժիմք հզօրագոյն , եւ քաջագոյն ընդդիմանալ սատանայականաց ներդրդմանց : Դարձեալ բազմիցս վերանորոգելով 'ի խոստովանութե զառաջադրութի մեր ոչ մեղանչելոյ , եւ ոչ դառնալոյ 'ի յառաջին մեղանչական կացութի մեր , եւ ոչ վերանկանելոյ 'ի յառաջին հոգեւոր թշուառութի մեր , առէպ , եւ բազմիցս քաջալերիմք , եւ զօրացուցանիմք , եւ լինիմք հզօրագոյնք ընդդէմ մեղաց , եւ ընդդէմ փորձութեց :

6. Խոստովանահայրն պարտի գոլ այր իմաստուն , խոհեմ , եւ ուղիղ : Պարտի գոլ իմաստուն , զի կարիցէ որոշել զմեղքն 'ի մեղաց , եւ կարիցէ տարորոշել զբարին 'ի չարէ , եւ զառաքինութիւն 'ի մոլութէ : Քանզի կոյրն , որ լինի առաջնորդ կուրի , ընդ նմա , որում առաջնորդէ անկանի 'ի գուբ : Պարտի գոլ իմաստուն , զի կարիցէ գոլ առաջնորդ , եւ ոչ մոլորեցուցիչ : Ոչ միայն պարտի գոլ իմաստուն , այլ նաեւ պարտի յարաժամ պարապիլ վարդապետութեց , վասնզի յայսմիկ ածագունեղի պաշտօնի , նաեւ իմաստունն կարօտի վարդապետութե , եւ աճեցման հմտութե : Ուստի պարտի ուշադիր լինել , զի առաւել աճիցի 'ի յիմաստութե : Ոչ է բժիշկ մարմնոյ , այլ է բժիշկ հոգւոյ : Ուստի որպէս հոգին է գերազանցագոյն քան զմարմինն , եւ փրկութիւն հոգւոյ անհամեմատաբար է լաւագոյն

քան

քան զառողջութիւն մարմնոյ • այսպէս բժիշկն հոգւոյ, պարտի գոլ գերազանցագոյն 'ի վարդապետութեան քան զբժիշկն մարմնոյ։ Եթէ սխալիցի բժիշկն մարմնոյ, սպանանէ զմարմինն, և միայն մարմինն կորնչի։ Բայց եթէ սխալիցի բժիշկն հոգւոյ, սպանանէ զհոգին, և կորնչի ոչ միայն հոգին, այլ նաև մարմինն։ Պարտի գոլ խոհեմ • քանզի եթէ ուրեք խնդրի խոհեմութիւն, կարի յոյժ խնդրի յայսմիկ պաշտօնատարութեան, և յայսմիկ պաշտօնի։ Խոստովանահայրն պարտի գոլ խոհեմ, զի տայցէ զփրկաւէտ յանդիմանութիւն, և դնիցէ զփրկաւէտ ապաշխարան։ Պարտի գոլ ուղիղ, բարի, առաքինի, և երկիւղած ծառայ Աստուծոյ • քանզի պարտի ածել զխոստովանորդիս 'ի յերկինս, ոչ միայն վարդապետութեամբք, այլ կարի առաւել օրինակօք, որք ըմբռնադոյն շարժեն, քան զվարդապետութիւնս, և զձայնս։ Վատք հրապարակականք օրինակք խոստովանահօրն, կարի վնասեն, և առնեն զանպտուղս զյանդիմանութիւնս նորա։

7. Բորոտ մեղաւորն ածելի է առ քահանայն, զի բժշկեսցի 'ի բորոտութենէ մեղաց։ Պղծեցեալն մեղօք, մերձեսցի առ լուացարան խոստովանութեան, զի մաքրեսցի, և ընդունիցի զառողջութիւն։ Արասցէ բերանն զխոստովանութիւն գործեցելոց մեղաց, զի մեծանայցէ հոգին մաքրեցեալ 'ի մեղաց, և ստացեալ զերանութիւն ներման։ Ճանաչեսցէ մարդն զյանցանս իւրս, և խոստովանեսցի, զի ներիցէ նմա Աստուած արձակմամբ։ Ընթարկցէ զինքն մարդն փականաց եկեղեցւոյ, զի բացցի նմա դուռն արքայութեան։ Խոստովանեսցի մարդն ընդդէմ իւրեան ինքեան զանիրաւութիւն իւր Աստուծոյ, զի Աստուած ձայնիւ պաշտօնէի իւրոյ, թողուցու նմա զամբարշտութիւն իւր։ Խորհեսցի, և յայտնեսցէ մեղաւորն զանօրէնութիւն իւր, զի 'ի հօրէ ողորմութեանց ընդունիցի զներումն մեղաց իւրոց։ Արկցէ զսիրտ իւր առաջի Աստուծոյ, զի ընդունիցի զառողջութիւն հոգւոյ իւրոյ • Մի մատնիցէ զհոգի իւր գազանաց, և դժոխայնոց դիւաց • այլ խոնարհաւ խոստովանութեամբ տացէ Աստուծոյ, զի փրկիցէ զնա 'ի յերկինս։ Խոստովանեսցի առաջի Աստուծոյ զյանցանս իւրս, զի լինիցի չքնաղ, և գեղեցիկ հոգի իւր։ Բացցէ զբերան իւր խոստովանութեամբ, զի առքարշիցէ զհոգի տեառն արդարացուցմամբ։ Մի դիցէ զպատճառս մեղաց իւրոց արդարացուցանելով զինքն բանիւք չարաբարոյիւք, այլ բանալով զբերան իւր մեղադրեսցէ զինքն վասն մեղաց, և յանցանաց իւրոց, զի խոստովանութեամբ, և արձակմամբ ջնջիցին անօրէնութիւնք իւրք։ Մեղաւորն • սիրողն զփրկութիւն իւր, անկեղծաբար բացցէ զանօրէնութիւն իւր։

8. Յայտնեսցէ մարդ զգործս իւրս տեառն, զի տէրն ուղղիցէ զխորհուրդս նորա։ Յօժար լիցի առ 'ի մեղադրել զինքն, զի ցուցանիցէ զինքն սիրող արդարութեան։ Յայտնեսցէ, և խոստովանեսցի մարդն զանօրէնութիւնս իւրս, զի ուղղիցի, և ստանայցէ զողորմութիւն։ Խոստովանեսցի մեղաւորն ասելով զճշմարիտն, և բանալով զյանցանս իւր • և վասն փրկութեան հոգւոյ իւրոյ կրեսցէ զամաչումն, զի ամաչեցեալ ստանայցէ զփառս, և զշնորհ։ Նախ քան զմահ իւր մարդն, որ սիրէ զբարեպաշտութիւն, խոստովանեսցի, և գովեսցէ զԱստուած, զի փառաւորիցի 'ի յողորմածութիւնս նորա։ Ցուցցէ մարդն զամենայն ամս իւրս տեառն, 'ի դառնութեան հոգւոյ իւրոյ, զի գտանիցէ զներումն, և զողորմութիւն։ Գոլով կենդանի խոստովանեսցի, զի 'ի կենդանի իւրում արդարանայցէ, և յետ այնր կենդանի փառաւորիցի, և զճշմարիտ երջանկութիւն ստանայցէ, Զյանցանս իւրս, և զանօրէնութիւնս, և զամենայն անիրաւութիւնս իւրս, ածցէ 'ի միտ, զի դատիցի, և զնոսա պատմեսցէ, զի արդարանայցէ, վարձցէ զերկան, և աղասցէ զալիւրն • մերկացուսցէ զսիրտ իւր, և բացցէ զուս իւր • յայտ_

յայտնեսցէ զբարձս, անցէ զդետս, խոստովանելով զյանցանս իւրս, և ծանուցանելով զմեղս իւրս, զի մի յաւուրն դատաստանի, և վրէժխնդրութե՛ն տեառն, յայտնիցին առաջի ամենեցուն, վատահամբաւութիւք, և արհամարհանք նր՛ : Վասնզի եկեսցէ օր, յորում առցէ տր՛ն զվրէժխնդրութի՛ն. և ոչ կարասցէ ողորմելի մարդն ընդդիմանալ նմա: Մաքրեսցէ զհին խմորն. զի լիցէ նոր զանգուած : Դատեսցէ մարդն զիւր ինքն, զի մի դատիցի ՚ի տնէ :

# Գ Լ Ո Ւ Խ. ԿԷ.

## Յաղագս հաղորդութե՛ն :

1. Սրբազան հաղորդութի՛ն է մարմինն, և արիւնն քի՛ ընդ տեսակաց հացի, և գինւոյ : ՚Ի բանից սրբագործութե՛ն, ընդ տեսակի հացի է մարմին քի՛, և ընդ տեսակի գինւոյ է արիւն նորա : Բայց վասն միաւորականութե՛ն, ընդ երկաքանչիւրոյ տեսակի է բոլոր քս՛ : Ուստի որ ընդունի զսրբազան հաղորդութի՛ն ընդ միոյ տեսակի, ընդունի զբոլոր քս՛ իրականապէս : Քս՛ կամեցաւ, զի ՚ի յեկեղեցւոջ իւրում լիցէր սեղան, յորում դնիցիւր խորհրդաւոր հացն, և խորհրդաւոր ըմպելին: Խորհրդաւոր հացն է մարմինն քի՛, և խորհրդաւոր ըմպելին է արիւն նորա : Կացոյց զքահանայութի՛, և ետ քահանայից զիշխանութի՛ սրբագործելոյ զհացն ՚ի մարմին նր՛, և զգինին ՚ի յարիւն նր՛ ՚ի ձեռն անդրագոյափոխման : Ուստի քահանայք նորոյ կտակարանի, ՚ի ձեռն սրբագործութե՛ն դարձուցանեն զհացն ՚ի մարմին քի՛, և զգինին ՚ի յարիւն նր՛ : Եւ զասացեալ իշխանութի՛ն քահանայից, զի պատրաստիցեն ՚ի յառաջասացելոջ սեղանոջ զխորհրդաւոր կերակուր, և զխորհրդաւոր ըմպելի : Կամեցաւ զպատրաստութի՛ս այս, զի ոչխարք իւրք, որոց ինքն է հովիւն, զասացելոյ սեղանոյ կերակրիցեն, ուտելով զմարմին նր՛, և ըմպելով զարիւն նր՛ : Հաճոյացաւ նմա, զի ոչխարք իւրք ուտելով, և ըմպելով զասացելոյ սեղանոյ հրճուիցեն, սնուցանիցեն, կեայցեն, քաջալերացուցանիցեն, և ուրախանայցեն : Հաճոյացաւ նմա, զի քրիստոնեայք, որք ընդունին զնա, հաղորդակիցք լինիցին նմա, սիրելով զնա, և ընդունելով ՚ի նմանէ զշնորհ :

2. Քս՛ կարի յոյժ սիրեաց զմեզ. քանզի ոչ միայն կամեցաւ վս՛ մեր մարմնանալ, ծնանիլ ՚ի կուսէն, քաղցիլ, ծարաւիլ, վաստակիլ, չարչարիլ, և մեռանիլ նախատելաբար ՚ի վր՛ խաչին. այլ նաև կացոյց զխորհուրդն հաղորդութե՛ն, զի ինքն լիցէր խորհրդաւոր կերակուր, և խորհրդաւոր ըմպելի մեր : Կարի յոյժ սիրեաց, և պահանջէ ՚ի մէնջ կարի յոյժ սիրել, զի լիցէր ՚ի մէջ մեր, և ՚ի մէջ ինքեան անդրաբերական սէր : Վասն այսորիկ կացոյց զխորհուրդն սիրոյ, և սիրելութե՛ն, յորում զնոյն ինքն զմեզ սիրողն վերասիրիցեմք, և սրամադրեցեալք մերձեցողքս առ խորհուրդն հաղորդութե՛ն, միաւորիցեմք ընդ նմա կապանօք սիրոյ, և լինիցեմք մի ինչ ընդ նմա ՚ի սիրոջ, անդրաբերաբար մեք զինքն, ինքն զմեզ սիրելով, մեք տալով զսիրտ մեր նմա, և ինքն հեղլով ՚ի մեզ զշնորհ իւր. Այս է սուրբե՛ն խորհուրդն, յորում մեք վերընդունելով ՚ի մեզ զքս՛, իբրև խորհրդաւորք անդամք կապանօք բորբոքեցելոյ սիրոյ միաւորիմք խորհրդաւորի գլխոյ մերոյ. և ինքն իբրև զխորհրդաւոր գլուխ սիրով, և ներհեղմամբ շնորհի, և կենի միաւորի ընդ մեզ խորհրդաւորաց անդամոց իւրոց : Այս է խորհուրդ, յորում հոգիք մերք կապանօք սիրոյ միաւորին ընդ

քի

ջի երկնաւորի փեսայի մերոյ, և երկնային փեսայն մեր ողջախոհադունելովն սիրով միաւորի ընդ հոգւոց մերոց սիրեցելոց հարսից իւրոց: Այս է խորհուրդ, յորում ընդունողքս զխորհրդաւոր կերակուրն, և զխորհրդաւոր ըմպելին, և աւընդունողքս 'ի մեզ զբոլոր ք̃ս հանդերձ ա̃ծութե̃բ, և մարդկութե̃բ իւրով, զառաւրկայն երանութեն մերոյ, վայելեմք զերանութի̃ն, որ շնորհեցեալ է ճանապարհորդաց:

3. Հաղորդութի̃ն է կերակուրն, զոր ետ մեզ տէ̃ր մեր Յ̃ս Ք̃ս առ զբօսանս մեր: Ուրեմն մերձեցուք, զի զբօսնուցումք, և վերանորոգիցիմք: Տէ̃ր ա̃ծ մեր հաճեցաւ զմեզ ժողովուրդս իւր սնուցանել կերակրով հրեշտակաց. և ետ մեզ զհաց, ըստ ա̃ծութե̃ երկնայնոյ, թարց աշխատանաց պատրաստեցեալ, ունեցօղ յինքեան զա̃մ բերկրութի̃, և զա̃մ քաղցրութի̃ համեղութե̃: Հաճեցաւ շնորհել մեզ զքաղցրագունեղ դոյացութի̃ իւր, որ է քաղցրագունեղ մանանայ. և է խորհրդաւոր կերակուր, և խորհրդաւոր քաղցրագունեղ ըմպելի: Շնորհեաց մեզ զվէ̃մն, տուօղ մեզ զկեան: Կերակուրս այս է ընծայն, որով 'ի ծագմանէ արեգական մինչև առ արևմուտն մեծ է անուն տեառն 'ի հեթանոսս: Կերակուրս այս է նուէրն այն մաքուրն, որ յա̃մ տեղւոջ պատարագի, և մատուցանի ամենաբարձու անուան տեառն, որոյ անունն է մեծ 'ի հեթանոսս: Կերակուրս այս է պատարագն, զոր մատուցանեն հաւատացեալք տեառն 'ի յարդարութե̃, պատարագ բոլորովինք հաճոյ տեառն: Սրբազան հաղորդութի̃ն է մարմինն ք̃ի, զոր ինքն ետ աշակերտաց իւրոց, ասելով. առէք, և կերէք. և արիւնն նորոյ կտակարանի, որ հեղաւ վասն մեր 'ի թողութի̃ մեղաց: Սրբազան հաղորդութի̃ն է մարմինն ք̃ի աւանդեցեալ վասն մեր, և է պատարագն անարիւնահեղ, որ մատուցանի 'ի վերայ խորանի. 'ի յիշատակ, և 'ի յանդիմանակացուցումն պատարագի արիւնահեղի 'ի վ̃ր սեղանոյ խաչին մատուցելոյ. և բաժակ նորոյ կտակարանի 'ի յարեան ք̃ի, զոր ըմպեմք 'ի յիշատակ նորա: Սրբազան հաղորդութի̃ն է հացն, զոր ուտեմք և բաժակն, զոր ըմպեմք, զմահ, տեառն աւետօղք:

4. Երանի մեզ հաւատացելոցս. քանզի ուտեմք զմարմինն որդւոյ մարդոյ, և ըմպեմք զարիւն նր̃, ունելով 'ի մեզ զկեանն: Ուտեմք զմարմին, որ է ճշմարիտ կերակուր, և ըմպեմք զարիւն, որ ճշմարիտ ըմպելի: Ուտողքս զմարմին, և ըմպողքս զարիւն, մնամք 'ի ք̃ս, և ք̃ս 'ի մեզ: Ապաուրեմն արասցուք զտօնս, մի 'ի խմորն հին. և մի 'ի խմոր չարութե̃, և անզգամութե̃. այլ յանխմորն սրբութե̃, և ճշմարտութե̃: Քանզի բաժակն օրհնութե̃, զոր օրհնեմք, է մասնակցութի̃ արեան ք̃ի. և հացն, զոր բեկանեմք, է մասնակցութի̃ մարմնոյ տեառն: Մեք համօրէնք քրիստոնեայքս 'ի միոյ հացէ, և 'ի միոյ բաժակէ մասնակցիմք: Որպէս եղիա 'ի քաջալերութե̃ կերակրոյ, 'ի հրեշտակէ ինքեան առբերեցելոյ, գնաց առ լեառն ա̃յ քորեբ. այսպէս մեք 'ի քաջալերութե̃ կերակրոյ հաղորդութե̃ գնամք մինչև առ երանական տեսումն, և առ յաւիտենական երանութի̃: Եզն պարարակ զենեալ առաջադրեցեալ է մեզ, ճաշակեսցուք, և ցնծասցուք: Հայրն երկնաւոր տայ մեզ զհաց ճշմարիտ 'ի յերկնից. զհաց ճշմարիտ յերկնից իջանողն, զկեան շնորհօղ մեզ տուօղն: Զհաց կենի զուտօղն յագեցուցանօղ, և ուտողի տուօղ զկեան: Հացն կենդանի է տէ̃ր մեր Յ̃ս Ք̃ս, և մարմին նորա վ̃ս կենի աշխարհի, արժանապէս զնա զուտօղն, կեցուցանօղ 'ի յաւիտեան: Արժանապէս ուտօղն զմարմինս այս, և ըմպօղն զարիւնս այս, ունի ինքեան զյ̃ս ք̃ս, և կեայ այսու տերամբ: Մերձեցուք տրամադրեցեալք, սիրօղք,

և

և ջերմեռանդք , լիք ճշմարտու սիրով , և հրով զմեղ բորբոքողաւ , առ խորանն , ուր է Ճշմարիտ , և կենդանի կերակուրն , և ըմպելին , խրախճացուք , և ցնծացուք ; և ուրախութեամբ լցցուք :

ե. Մերձեցողն առ որբազան հաղորդութեան պարտի գոլ տրամադրեցեալ , այնպէս զի ոչ իցէ 'ի մահուչափ մեղս : Քանզի առ աղբիւրն մաքրութեան մերձենալի է հանդերձ մաքրութեամբ , և առ սուրբն սրբոց հանդերձ սրբութեամբ : Ուստի հոգին պղծեցեալն աղտեղութեամբ մահաբեր մեղաց , որ ուտէ զմարմնոյ նշխարի հաղորդութիւն , ընծայեցելոյ տեառն , կորընչի : Նմանապէս իմ մարդ , որ է պիղծ , և բղջախոհ , և բորոտ բորիւ մահուչափ մեղաց , մերձենալով առ որբազան հաղորդութեան , կորընչի : Ոզա , որ շօշափեաց զտապանակն , մեռաւ , վասն այնր զի 'ի գիշերոջ մերձեցեալ էր կնոջ իւրում : Զինչ ուրեմն ենթադատելի է զմարդոյ , որ պղծեցեալ վավաշոտութեամբ , կամ բծաւորեցեալ աղտեղութեամբ ուրուք մահուչափի մեղի , զհոգին պղծողի , համարձակի մերձենալ առ խորանն առ 'ի յուտել զկուսածին մարմինն Յիսուսի Քրիստոսի որդւոյն Աստուծոյ . ոչ է տալի սրբութիւնն շանց . և ոչ արկանելի մարգարիտն առաջի խոզաց . ոչ ևս գնելի է նոր գինին 'ի հին տիկս . այլ թէ ոչ հերձին տիկք , և հեղանի գինին , և կորընչին տիկք : Ոչ ունեցողն զզգեստ հարսանեաց , ոչ պարտի մտանել 'ի հարսանիս մաքրութեան : Համարձակողն մտանել թարց զգեստի հարսանեաց , կապեցեալ ձեռօք , և ոտիւք , արկանի 'ի խաւարն արտաքին , ուր է լալ և կրճտել ատամանց : Արդ ուրեմն որ ուտէ զհացդ , կամ ըմպէ զբաժակ տեառն անարժանութեամբ , պարտական լինի մարմնոյ , և արեան տեառն : Ուստի որ ուտէ , և ըմպէ անարժանութեամբ զդատաստան անձին իւրում ուտէ , և ըմպէ , զի ոչ խտրէ զմարմինն տեառն : Ուրեմն փորձեսցէ մարդ զանձն իւր , և ապա 'ի հացէ անտի կերիցէ . և 'ի բաժակէն արբցէ :

զ. Փորձումն վասն որբազանի հաղորդութեան լինի 'ի ձեռն խորհրդոյ ապաշխարութեան : Խորհուրդն ապաշխարութեան , և խորհրդաւոր խոստովանութիւն , մաքրէ զբծաւորեցեալս : Ուստի բծաւորեցեալքն աղտեղութեամբ մահաբերաց մեղաց , որք փափագին հացի կենի , և բաժակի փրկութեան , նախ պարտին ճշմարիտ , և պարտաւորաւ ցաւով 'ի վերայ գործեցելոց մեղաց , և ճշմարիտ , և ցաւագնիւ խոստովանութեամբ մերձենալ առ խորհուրդն ապաշխարութեան , որ է խորհուրդ մեռելոց . յետոյ մաքրեցեալք , արբեցեալք , արդարացեալք , և կենդանացուցեալք խորհրդով ապաշխարութեան , մերձենալ առ որբազան հաղորդութեան , որ է խորհուրդ կենդանեաց 'ի ձեռն շնորհի , և սիրողաց 'ի ձեռն սիրոյ : Տրամադրութիւն այս , և փորձումն անձին իւրոյ է հարկաւոր . վասնզի հացն հաղորդութեան , է հաց կենդանեաց , և կերակուր սիրողաց : Ուստի անուցանէ զկենդանիս , վերանորոգէ զկենդանիս , զուարճացուցանէ զկենդանիս , զօրացուցանէ զկենդանիս , և տայ զուրախութիւն , և զխնդութիւն կենդանեաց : Որ մերձենայ գոլով մեռեալ , առաւել մեռանի , և կորընչեցեալն , առաւել կորընչի : Պղծեցեալն աղտեղութեամբ այլոց մահուչափից մեղաց , բծաւորի նաև աղտեղութեամբ սրբապղծութեան , թարց պարտաւորի տրամադրութեան , և փորձառութեան , և անարժանապէս մերձենալով : Բաց 'ի յառաջեցելոյ հարկաւորի տրամադրութեան , հոգալի , և ջանալի է ուշադրութեամբ , և ամենայն կարելեաւ մտադրութեամբ , նաև տրամադրութեան ջերմեռանդութեան , և մեծագունի սիրոյ , զի ընդունիցիմք զառատագոյն շնորհս , և զի պնդագոյն միաւորիցիմք խորհրդաւորի գլխոյ մերոյ : Յետ հաղորդութեան մատուցանելի է պարտա-

որ շնորհակալութի, և հոգաբարձաբար պահելի է հաւատարմութեն։

7. Կերակուրն հոգւոյ քո է արդէն պատրաստեցեալ 'ի սեղանոյ, ո՛վ մարդ սիրող հաղորդականի կերակրոյ։ Վասն քո պատրաստեցեալ է։ Ընկալ ուրեմն որ ըստ օրէ, եթէ ոչ խորհրդաւորապէս, գոնեայ հոգևորապէս, որ որ ըստ օրէ օգնիցէ քեզ։ Այնպէս կեաց, զի արժանասցիս որ ըստ օրէ ընդունիլ զհացն հրեշտակաց։ Եթէ ոչ կարես որ ըստ օրէ ընդունիլ խորհրդաւորապէս վասն աշխարհականաց զբաղմանց, և ընտանեկանի հոգաբարձութե. Ջանասցիր, զի յամ ում աւուր տէրունականի, և ենթ պատուիրանի աւուրց տօնախմբութեց ընդունիցիս. այսոքիկ աւուրք տօնեցեալք են քեզ առ հոգևոր օգուտ քո, առ շահաւէտութի հոգւոյ քո, և առ հոգևորս կրթութիս։ Բարեգունեղ հոգևոր կրթութին է, խոստովանիլն զմեղս, ընդունիլ զհաղորդութի, և ապաշխարելն։ Յս՟ սիրելագունեղ փեսայն հոգւոյ քո, փափագեցեալն յազգաց, 'ի յոր հայիլ փափագին հրեշտակք, և սիրելագունեղ առաքեալն երանելոյ, յաւուրս տէրունականս, և յաւուրս տօնախմբութեց ենթ պատուիրանի, յորս պարաւանդիս թողուլ զաշխարհականս զբաղմունս, կոչէ զքեզ առ ինքն, զի մաննաւորաւ սիրով 'ի ձեռն սրբազանի հաղորդութե միաւորիցիս ինքեան խորհրդաւորի գլխոյ քո, և սիրելագունեղի փեսայի հոգւոյ քո, զի ընդունիցիս զառատագոյն շնորհ, և զաճումն շնորհի, և հաւաքիցես զառատագոյն մթացականն գանձ 'ի յերկինս. և դու յետ ունկնդրութե միոյ պատարագի, զի աղատիցես զքեզ 'ի մահուչափ մեղէ, և 'ի պատուիրանազանցութե պատուիրանի պատարագի, բացաթողլով զՅս՟, և անթոյթ առնելով զսրբազան հաղորդութին հացի կենի, տաս զքեզ ունայնութեց, և ունայնից մխիթարութեց։ Ո՜ դառնութի, և ծուլութի ջերմեռանդի ոգւոյ։ Ո՜ անհոգութի, և պղերգութի դաղջ, և թոյլ սրտի։

8. Բացահերքելով զծուլութին, զանհոգութին, և թուլութին 'ի յայսպիսւոջ հոգաբարձութեան հոգևորի յառաջացման, ջանասցիր, զի յաճախապէս Ճշմարտիւ զղջմամբ սրտի, խոստովանութբ բերանոյ, առատիւ աղքատաւարատանաց, մծիւ պատկառանաւ, պատշաճաւորաւ երկիւղիւ, անկեղծիւ ողջախոհութբ, և մաքրութբ ոգւոյ մերձեսցիս առ Տծայինն, և երկնային խորհուրդն, ուր Ճշմարտապէս ընդունեցեալ լինի մարմինն քո, և Ճշմարտապէս ըմպի արիւն նորա. և ուր բարձրագունեղից ցածագունեղքն, և մարդկայնոց Տծայինքն միաւորին։ Ջանասցիր, զի յաճանապէս մերձենայցես սեղանոյ, ուր մերձ է ներկայութի սրբոց հրեշտակաց, և ուր քս՟ է քահանայ, և պատարագ զարմանալաբար, և անպատմելաբար, խոնարհաբար հայցելով յամենակարողէ Այ, զի զքեզ ջերմեռանդաբար մերձեցողաւնիցէ արժանի։ Խոկա՛, նկատեա՛, և այսպէս խօսեաց։ Որքան իցս հեղանի արիւնն, հեղանի 'ի թողութի մեղաց։ Ուրեմն պարտիմ զնա միշտ ընդունիլ տրամադրեցեալ, զի միշտ թողցին ինձ մեղք։ Կարօտիմ դեղոյ ընդդէմ հանապազորդականաց մեղաց իմոց։ Հաղորդութին է դեղ ընդդէմ հանապազորդականաց մեղաց։ Ուրեմն յաճախապէս մերձենալ պարտիմ առ նա, զի կարիցեմ ընդունիլ զառողջութի։ Ունեցօղն զվէր, խնդրէ զդեղ։ Վէրն է, քանզի եմ մեղաւոր։ Դեղն է երկնային, և ամենապատուելի խորհուրդն։ Ապաուրեմն ընդունելի է այն, այսինքն, սրբազան հաղորդութին, որ տայ առողջութի, զի բժշկիցի հոգին իմ։ Յաճախեա՛ զհաղորդութին, զի ուտիցես զքաղցր կերակուր։ Քանզի քաղցր կերակուրն է մարմինն, և արիւնն քն։

## ԳԼՈՒԽ ԿԸ.

### Յաղագս բանադրանաց :

1. Եկեղեցական բանադրան, զորմէ բան, է հոգևոր, և բժշկական պատիժ : Քանզի է պատիժ, որով մերժեցեալ մարդն, որ մեղանչէ, և որ է յանդուգն, եկեղեցականաւ իշխանութեամբ զրկի 'ի վարմանէ ոմանց հոգևորականաց բարեաց: եկեղեցին, որ 'ի քէ կալաւ զիշխանութի արձակելոյ, և կապելոյ, ունի զիշխանութի զենթարկեցեալս իւրս մեղանչօղս, որք են անհնազանդք, հոգևորաւ պատժով պատժելոյ : Վասնզի ած իշխանութիւն զենթարկեցեալս իւրս մեղանչօղս, կարէ պատժել, պատժով իւրեանն պատկանողաւ : Իսկ եկեղեցին ունի զհոգևոր իշխանութի 'ի վերայ իւրոց : Ուրեմն կարէ զմեղանչօղս իւրս, որք են անհնազանդք, պատժել հոգևորաւ պատժով : Իսկ ենթարկեցեալք եկեղեցւոյ են մկրտեցեալք. քանզի մկրտութեամբ մարդն մտանէ 'ի յեկեղեցին : Եւ այսպէս մկրտութեամբ ենթարկի եկեղեցւոյ : Այսուրեմն եկեղեցին զմկրտեցեալս մեղանչօղս, որք են անհնազանդք, կարէ պատժել հոգևորաւ պատժով : Հոգևոր պատիժս այս է նաև բժշկական. վասնզի եկեղեցին, որ է գթած մայր, և որ ոչ խնդրէ զկորուստն իւրայնոցն, այլ զփրկութին, և զկեանն, այսու հոգևորաւ պատժով պատժէ զիւրայինս մեղանչօղս անհնազանդս վասն հոգևորի օգտի, և շահաւէտութե նոցա, որպէսզի մկրտեցեալք այսու հոգևորաւ պատժով զահհարեալք, զղջասցին, և ուղղիցին, և թողեալք զշաւիղն կորստեան, մտանիցեն 'ի ճանապարհն փրկութեան :

2. 'Ի հին կտակարանոջ արտաքսէին 'ի բերդէց համայնք բորոտք, սերմնահեղք, և արտացեալք 'ի վերայ մեռելոց : Նաև քաղաքն, և ամք. որք էին 'ի նմա, լինէին նզովեցեալք : Վասն պղծեցելոյ բանադրանաւ, ոչ կարէր իէլ կալ առաջի Թշնամեաց իւրոց, այլ փախիւր 'ի նոցանէ : Հրամայէր ած, զի պատժանապարտն ժանտագործութե զահհարեցիւր բանադրանօք : Յորժամ բանադրանն էր 'ի մէջ իէլի, ոչ կարէր իէլ կալ առաջի Թշնամեաց իւրոց, մինչև ջնջիցիւր 'ի նմանէ, որ ապականեցեալ էր եղեռնագործութեամբ բանադրանաց : Յուդա զնովեաց զորդիս բեանայ : Եւ ըստ բանի տեառն ովք կապեցեալ է 'ի յեկեղեցւոյ 'ի վերայ երկրի, կապեցեալ է և 'ի յերկինս, և ովք արձակեցեալ է 'ի վերայ երկրի, արձակեցեալ է և 'ի յերկինս : Եւ ըստ նոյնոյ տեառն, որ ոչ լսէ եկեղեցւոյ, է հեթանոս, և մաքսաւոր : Եւ սբն Պօղոս վարդապետն հեթանոսաց, գրէր հաւատացելոց, զի մի խառնակիցին, և ոչ զկերակուր ուտիցեն ընդ այնմիկ, որ էր պոռնիկ, կամ ագահ, կամ կռապաշտ, կամ անիծանօղ, կամ արբեցող, կամ յափշտակօղ : Եւ հրամայէր, զի բառնայցեն զչարն 'ի յիւրեանց իւքեանց : Եւ քարոզէր, թէ որ ոչ սիրէր զտրն մեր Յս Քս, էր բանադրած, և նզոված : Եւ ծանուցանէր հաւատացելոց, թէ եթէ ինքեանք, կամ հրեշտակ յերկնից, աւետարանիցէին նոցա բաց 'ի յայնմանէ, որ աւետարանեցեալ էր, նզովեալք իցէին :

3. Նոյն առաքեալն պօղոս գրէր նոցա, որք հաւատացեալք էին 'ի յս քս փրկիչն մեր, զի եթէ ոմն ոչ հնազանդիցիւր բանի առաքելականի, ծանուցելոյ թղթով. նշանաւորիցէին զնա, և մի հաղորդակցիցեն ընդ նմա, զի ամաչեցուցա‿

նիցիւր, ոչ առ կորուստ, այլ առ հոգևոր օգուտ նր ։ Ուստի հրամայէր, զի մի համարիցէին զնա իբրև զթշնամի, այլ խրատիցէին զնա որպ զեղբայր ։ Ինքն վերոյասացեալ առաքեալն պօղոս միանգամ գոլով հեռի մարմնով, բայց ներկայ հոգւով, ենթադատեաց որպէս ներկայ, զայնպիսի մարդն 'ի ձեռն դատաւճռութեն բանադրանի մատնել սատանայի 'ի կորուստ մարմնոյ, զի հոգին փրկիցիւր յաւուր տեառն, այսինքն, 'ի գալուստն նր օգնութե տեառն ։ Եւ որն Յօհաննէս աւետարանիչն, և առաքեալն, և սիրելի աշակերտն տեառն, գրեաց հաւատացելոց, զի զնա, որ գայցէր առ նոսա, և ոչ առբերիցէր զառաքելական վարդապետութի, ոչ ընդունիցէին 'ի տուն, և ոչ ասիցէին նմա ողջոյն ։ Եւ նշանաւորեաց նոցա, թէ որ նմա ասիցէր ողջոյն, հաղորդիցիւր վատթար գործոց նորա ։ Յայտ է յայնմից ասացելոց, թէ եկեղեցական դատաւճռութին իցէ վաղընջագունեղ, և թէ իցէ 'ի ժամանակէ յինքեանց առաքելոց ։ Ուստի յայտնի է, թէ եկեղեցին պատժով դատաւճռութեն կարիցէ պատժել զիւրս մեղանչօղս, և յանդգունս ենթարկեցեալս. և թէ երբ այնպէս պատժէ, բարւոք առնիցէ 'ի հոգևոր օգուտ ենթարկեցելոց իւրոց ։ Սակայն եպիսկոպոսք կարի զգուշաբար վարիլ պարտին այսու զարհուրելեաւ հոգևորաւ սրով . զի մի լինիցի հոգևոր կորուստ, և կործանումն հոգւոց արեամբ քի փրկեցելոց . այլ այնպէս զի դատաւճռութին լինիցի բժշկական պատիժ ։

4. Դատաւճռութի էականապէս բաժանի 'ի նզովս, 'ի կարգելութին, և 'ի խափանումն, զորոց 'ի վայր ։ Պատահաբար տրոհի 'ի դատաւճռութի 'ի յիրաւանց, 'ի դատաւճռութի 'ի մարդկանէ, 'ի դատաւճռութի վճռոյ բերեցելոյ, և 'ի դատաւճռութի վճռոյ բերելւոյ ։ Դատաւճռութի 'ի յիրաւանց է, որ առբերի 'ի ձեռն կանոնաց, և 'ի ձեռն սահմանադրութեց, կամ 'ի ձեռն եկեղեցականաց կանոնադրութեց, հաստատնով, և մնացականաւ օրինաւ ։ Դատաւճռութի 'ի մարդկանէ է, որ առբերի 'ի դատաւորէ, կամ 'ի նախադասեցելոյ, ըստ կերպի հրամանի, կամ վճռոյ դատողականի ։ Դատաւճռութի վճռոյ բերեցելոյ է, զոր իրաւունն, կամ դատաւորն կացոյց ներարշաւելի ինքեամբ արարեցելով ։ Դատաւճռութի վճռոյ բերելւոյ է, զոր իրաւունն կամ դատաւորն ոչ կամի ներարշաւիլ ինքեամբ արարեցելով, այլ ներհարկիլ 'ի ձեռն վճռոյ ։ Զդատաւճռութին ամնք կարէ առբերել, և միայն եկեղեցական վերնագոյնն, ունեցօղն 'ի գիւանի արտաքնայնում, կամ հակաճառականի, զատորական, կամ զփոխանորդական իշխանութիւն ։ Դատաւճռութին կարէ ներբերիլ վասն արտաքնոյ յանցանի, համեմատեցելոյ դատաւճռութեն, և համազուգեցելոյ անհնազանդութեն ։ 'Ի դատաւճռութէ, որ է բերեցեալ վճռով մասնաւորաւ, հասարակապէս նա միայն կարէ արձակել, որ առեբեր զնա, կամ մեծաւորն նորա, կամ յաջորդօղն, կամ փոխանորդ նորա ։ Իսկ 'ի դատաւճռութէ, որ է բերեցեալ 'ի հասարակէ իրաւանէ, կամ 'ի մարդկանէ 'ի ձեռն սեռաւորի վճռոյ, եթէ ոչ իցէ վերապահեցեալ, ամնք կարէ արձակել, որ կարէ արձակել զդատաւճռեցեալն 'ի մահացուեց . բայց եթէ իցէ վերապահեցեալ, առորականապէս, և ըստ ինքեան կարէ միայն լուծանիլ կամ 'ի հեղինակէ օրինի, կամ յաջորդողէ նորա, կամ 'ի փոխանորդէ ։ Կերպն, որով տալի է արձակումն դատաւճռութե, կացուցանելի է 'ի բնութէ և դատաւճռութե, և որոյուրուք արձակման, և լուծանման ։

5. Նզովս է դատաւճռութ . որով ոք զրկի 'ի հաղորդակցութէ եկեղեցւոյ ։ Նզովս բաժանի 'ի մեծագոյնն, և 'ի փոքրագոյնն ։ Փո֊

քրա֊

քրագոյն նզովք է . որ միայն զրկէ 'ի կրօնականէ վարմանէ խորհրդոց . այսինքն , որ միայն զրկէ 'ի յընկալմանէ խորհրդոց : Իսկ մեծագոյն նզովն , որ նաեւ սոսկ բանադրանք , եւ 'ի յիշատակն հասարակաբար միշտ իմանի անուամբ նզովի , է որ զրկէ յամէ եկեղեցականէ հաղորդակցութենէ : Այսու մեծագունիւ նզովաւ կրկնապատկաբար ոմն սոսկ նզովեցեալ , այսինքն , տանելի , կամ անտանելի : Տանելին է , յորմէ հաւատացեալք ոչ պարտաւորին խորշել : Իսկ անտանելին է , յորմէ պարտաւորին խորշիլ : Յետ ժողովոյ քոնստանտինեննոսոյ ոչ տանելիքն են այսոքիկ միայն , այսինքն , յայտնի հարկանօղն կղերիկոսի , եւ ովք անուանաբար նզովեցեալն , եւ մասնաւորապէս , եւ հրապարակաբար ծանուցեալն : Անկանի ոք 'ի փոքրագոյն նզովն վասն միոյ միայնոյ պատճառի , այսինքն , եթէ ոմն , ընդ նզովեցելոյ մեծագունիւ նզովիւ հաղորդակցիցի 'ի պատահմունս , յորս ոչ է օրէն : Գործն նորա է զրկումն 'ի յընկալմանէ խորհրդոց . գործք մեծագունի նզովի են կրկնապատիկք , այսինքն , միջականք , եւ անմիջականք , միջականք , կամ հետեւորդն են այսոքիկ , անկարողութիւն , 'ի յոր նզովեցեալն անկանի , 'ի կիր արկանելով զներգործութիւն ուրուք սատիճանի . եւ կասկածեցեալն զհերետիկոսութենէ , եթէ նզովեցեալն զբոլոր ամն մնայցէ 'ի նզովոջ : Անմիջականք գործքն են այսոքիկ , զրկումն 'ի յընկալմանէ խորհրդոց , եւ զրկումն ներգործականի վարման նոյնոց , եւ զրկումն յամ յեկեղեցականաց հաղորդակցութեանց :

6. Բազումք են պատճառք վասն որոյ անկանի ոք 'ի մեծագոյն նզովն : Սոսկ նաեւ նզովքն են զանազանք , եւ մանաւանդ բաժանին 'ի չորս դասս : Քանզի ոմանք ոչումեք պահին , ոմանք պահին եպիսկոպոսի , ոմանք պապի 'ի ձեռն կոնդակի ընթրեաց , եւ ոմանք նաեւ արտաքոյ կոնդակի ընթրեաց նոյնոյ պապի պահին : Նզովք , որք ոչ պապի եւ ոչ եպիսկոպոսի պահին , են այնոքիկ , որք ոչումեք պահին : Պահին եպիսկոպոսի այսոքիկ , որք հետեւին : Նզովն համաքարշեցեալն 'ի թեթեւոյ հարկանմանէ կղերիկոսի , կամ 'ի ծանու , եթէ իցէ կին : Նզովն 'ի յայնոսիկ , որք զինքեանս ոչ ցուցանեն մեծաւորի յետ առողջանալոյն : Նզովն 'ի յեղբարս կոչեցեալս փոքրիկս , եթէ ընդունիցին 'ի յիւրս եկեղեցիս առ ա̃ծայինս ժամակարգութ̃ս , զեղբարս երրորդի կարգի : Նզովն 'ի ջանացօղս վիժել զհղիացեալ զաւակն հետեւեցելով գործով : Նզովն 'ի յայնոսիկ , որք հաղորդակցին 'ի նոյնում յանցանի ընդ նզովեցելոյ 'ի յեպիսկոպոսէ : Եւ համայնք այնոքիկ , զորս բերեն եպիսկոպոսք 'ի ձեռն յատկաց կացուցմանց , եւ վերապահեն իւրեանց ինքեանց : Բազումք են նզովք , որք արտաքոյ կոնդակի , կամ կոնդակաւ ընթրեաց պահեցեալք են պապի : Յիշեցից զոմանս , 'ի հրդեհիչս , 'ի յունեցօղս զսուտս առաքելական գիրս , 'ի կործանօղս , եւ 'ի մերկացուցանօղս զեկեղեցիս , 'ի հաղորդակցօղս 'ի նոյնում յանցանի ընդ նզովեցելոյ 'ի պապէ , 'ի լուծանօղս զքահանայապետական խափանումն , 'ի գործօղս զմենամարտութի , 'ի կանայս գնացօղս 'ի վանս կրօնաւորաց , 'ի հերետիկոսս , եւ 'ի գիտելաբար պահօղս , ընթերցօղս , տպագրօղս , եւ պաշտպանօղս զգրեանս հերետիկոսաց , զհերետիկոսութի ունեցօղաց :

7. Կարգադրելութիւն է դատավճռութի , որով կղերիկոսն արգելանի 'ի կիր արկանել զոմանս եկեղեցական պաշտօնատարութիս : Սոսկ միայն կղերիկոսն կարէ կարգադրելանիլ : Կարեն առնել զկարգադրելութի , որք կարեն առնել զդատավճռութիս : 'Ի սեռէ իւրմէ է մեղք մահուչափ , 'ի կիր արկանելն զներգործութի արգելեցեալն կարգադրելութե : Սոսկ ներածէ զանկանոնաւորութիւն : Կարգադրեցեալն անտանելին անհաստա-

հաստատապէս արձակէ, քանզի ոչ ունի վերադասութիւն ։ Ոմն կարգադրութիւն բերի առ իմն սուղ ժամանակ, որոյ 'ի յանցանելն, անչնչանայ ։ Ոմն բերի բացարձակապէս, կամ անսահմանաբար, և մնայ, մինչև բարձցի արձակմամբ ։ Ոմն է 'ի պաշտօնէ կարգի, կամ իրաւասութեան ։ Ոմն է 'ի տարեկանէ եկամտէ ։ Ոմն 'ի յերկաքանչիւրոյ ։ Կարգադրութիւն 'ի պաշտօնէ, կամ է 'ի բոլորոյ, կամ միայն 'ի մասանէ, այսինքն, 'ի կատարմանէ կարգի, կամ իրաւասութեան ։ Դարձեալ կարգադրութիւն 'ի տարեկանէ եկամտէ, կամ բացարձակապէս 'ի բարերարութէ, կամ միայն 'ի յոմանց պաշտօնատարութեց, բանիւ նորին պատշաճողաց ։ Ոմանք կարգադրութիւնք են 'ի յիրաւանց, ոմանք 'ի մարդկանէ ։ Իրաւանցն են, որք ներբերեցեալք են 'ի յիրաւանէ ։ 'Ի մարդկանէն, որք ներբերեցեալք 'ի մարդոյ ։ Ունեցողն զեպիսկոպոսական հեղինակութիւն, կարէ արձակել 'ի կարգադրութէ ոչ պահեցելոյ ։ Եպիսկոպոսն կարէ արձակել յամէ կարգադրութէ իրաւան, եթէ ոչ իցէ յատկապէս պահեցեալ առաքելականի աթոռոյ ։ Սովորք են ենթարկիլ կարգադրութեան իջուցումն 'ի կարգէ, և ստորիճանանկանումն, վասն նմանութեան, զոր ունին ընդ կարգադրութեան ։ Իջուցումն 'ի կարգէ սեռաւորապէս առեցեալն, ոմն է բառական· որ բացարձակապէս առի բացընկեցումն· իսկ ոմն իրական, որ սովորէ կոչիլ ստորիճանանկումն· արդ ուրեմն ստորիճանանկումն է զրկումն 'ի կիրառութէ պաշտօնից, և 'ի տարեկանաց եկամտից պարզապէս, և բոլորովիմբ, և թարց յուսոյ վերահաստուցման, արարեցեալ ոմամբ հանդիսաւորութբ, և զրկեցմամբ 'ի սեպհականութենէ կղերիկոսականէ, այնքան կանոնի, որքան արտաքնայնոյ դիւանի, այնպէս զի անկանիցի ընդ աշխարհականի դատողութեն ։ Իսկ բառական բացընկեցումն է նման զրկումն, բայց թարց հանդիսաւորութեն տուացելոյ, և բացաթողեցելոյ երկաքանչիւրոյ մանաւանդականութեն կանոնի, և արտաքնայնոյ դիւանի ։

§. Խափանումն է եկեղեցական դատավճռութի· արգելող զա̃ծայինս պաշտօնս, զոմանս խորհուրդս, և զվարումն եկեղեցականի թաղման ըստ որում է այնպիսի ։ Խափանումն բաժանի 'ի տեղականն, որ անընդմիջապէս զտեղին առշօշափէ, և անձնական, որ զանձինս· և 'ի խառնեցեալն, որ անընդմիջապէս առշօշափէ տեղին, և զբնակիչս նր ։ Խափանումն այնքան տեղականն, որքան անձնաւորականն, ենթաբոհի 'ի յընդհանրականն, և 'ի մասնաւորն ։ Ընդհանրականն է, որով ընդհանուր տեղին խափանի, զորօրինակ, քաղաքն, նահանգն, կամ որով խափանի հասարակութի, զորօրինակ, դպրատունն, համաժողովն ։ Մասնաւորն է, որով խափանին տեղին ։ կամ մասնաւոր անձն, կամ մասնաւորք ։ Գործք խափանման են այսոքիկ, արգելումն ա̃ծայնոց պաշտօնից, արգելումն մատակարարութեց ոմանց խորհրդոց, և արգելումն եկեղեցականի թաղման ։ Կղերիկոսք անգանօղք զխափանմամբ մեղանչեն մահացուէն, որպէս նաև կրօնաւորք երկաքանչիւրոյ սեռի, որք արդէն իսկ լինին նզովեցեալք ։ Կարեն խափանել նոյնք, որք կարեն նզովել, և կարգադրել ։ Խափանմունք տեղականք, և անձնաւորականք ընդհանրականք, որք են եդեալք 'ի հասարակէ իրաւանէ, ոչ վերապահեցեալք, կարեն բառնիլ 'ի յեպիսկոպոսէ, կամ յայլմէ ունեցողէ զիրաւասութի 'ի վերայ հասարակականի խափանման ։ 'Ի խափանմանէ իրաւանց անձնաւորէ մասնաւորէ, եթէ ոչ է վերապահեցեալ, ովոք փորձեցեալ կարէ արձակել ։ Կարգադրութին վասն նմանութեան շարադրուցի ընդ խափանման ։ Կարգադրութիւն է կանոնական արգելումն, զընկալումն կարգաց սրբազանաց, զվա_

րումն

րումն ընդունեցելոց արգելող ։ Ուստի անընդունակացուցանէ առ 'ի յընդունելն զկարգս , և արգելու զկիրառութիւն կարգաց ընդունեցելոց։ Ծանրագէս մեղանչէ , որ 'ի կարգադրելութեան 'ի կիրարկանէ զներգործութիւն կարգի , , կամ ընդունի զկարգ ։ Ներարշաւի 'ի յանցանէ, որպէս է մարդասպանութիւն ։ Եւ ներարշաւի 'ի պակասութէ հոգւոյ, ո̃չ է յիմարութիւն , և 'ի պակասութէ մարմնոյ , որպէս է անըմբռնութիւն առ 'ի կիրարկանել զկարգն ։ Բառնի տնօրինութիւն ։

## Գ Լ Ո Ւ Խ Կ Թ ·

### Յաղագս Մարիամու ։

1. Սրբոյ եկեղեցւոյ , խորհրդաւորի մարմնոյ քի , կատարելագունեղ խորհրդաւոր անդամն է մարիամ ։ Ուստի կարի յոյժ արդիւնաւորի , զի 'ի սրբազանի ա̃ծաբանութեան զնմանէ իցէ մասնաւորագունեղ բան ։ Մարիամ է խակականագունեղ դուստր հօրն երկնայնոյ ։ Մարիամ է սիրելագունեղ հարս հոգւոյն սրբոյ ։ Մարիամ է Ճշմարիտ մայր Յի Քի որդւոյն ա̃յ ։ Քանզի որդին ա̃յ է որդի մարիամու ․ է որդի ա̃յ ըստ ա̃ծութեան , և որդի մարիամու ըստ մարդկութեան ։ Ուստի մարիամ այսպէս խօսիլ կարէ ընդ հօր յաւիտենականի ։ Որդին քո է որդի իմ․ է որդի քո ըստ ա̃ծութեան , և է որդի իմ ըստ մարդկութեան ։ Նոյն որդին , որ ծնեալ է 'ի քէն 'ի յաւիտենից , յղացաւ 'ի յորովայնի իմում, և ծնաւ յինէն 'ի ժամանակոջ ։ Նոյն որդին , որ էառ 'ի քէն զա̃ծութիւն , էառ յինէն զմարդկային մարմին ։ Նոյն որդին , որ էր 'ի ծոցքո 'ի յաւիտենից ․ եղև 'ի յորովայնի իմում 'ի ժամանակոջ ։ Որդին քո եղև մարդ 'ի յորովայնի իմում ։ Ուստի որդին քո է որդի մարդոյ , և որդին իմ , է ա̃ծ , և ես եմ ա̃ծածին , և մայր ա̃յ ։ Որդին քո է ա̃ծ , և ես եմ մայր որդւոյ քո ։ Ուրեմն եմ ա̃ծածին , և մայր ա̃յ ։ Մարիամ այսպէս , որպէս ասացեալ է կարէ խօսակցիլ ընդ հօր յաւիտենականի ։ Եկեղեցին քի , ոչ միայն է խորհրդաւոր մարմին նո̃ր , այլ նաև սիրելագունեղ հարս նո̃ր ։ Սրբազանք կուսանք եկեղեցւոյ , որք տեառնագրեցին զկուսութիւն իւրեանց ա̃յ , ողջախոհք հարսք քի ։ Մարիամ է կոյսն կուսանաց , և յաղթող 'ի յողջախոհութեան զա̃մս կուսանս ։ Ուրեմն մարիամ է ողջախոհագունեղ հարս քի ։

2. Համայնք մ̃րք յայսմ կենի կեցողք , հարցաքննեցեալք , արդեօք իցեն Թարց մեղաց , պատասխանեն․ եթէ ասիցեմք , թէ զմեղս ոչ ունիմք , ստեմք զմեզ ինքեանս ։ Միայն մարիամ այնպէս ընկալաւ զլիութիւն շնորհի , զի իցէր Թարց ա̃մի մեղի նաև սկզբնականի , յորմէ եղև վերապահեցեալ ։ Մարիամ եղև Թարց ա̃մից մեղաց ․ քանզի արժանաւորեցաւ յղանալ , և ծնանիլ զնա , որ եղև Թարց ա̃մի մեղի ։ Որդին մարիամու , որ է ա̃ծ , և մարդ , է անմեղանչական բնութեամբ վասն ա̃ծային անձնաւորութեան ։ Մարիամ , որ է միայն մարդ , է անմեղանչական շնորհիւ ։ Եթէ եւայ առաջին կինն , եղև հեղինակ մեղաց․ մարիամ դուստրն եւայի , եղև առաջնորդուհի արդեան ։ Եթէ եւայ վնասեաց սպանանելով․ մարիամ օգնեաց կեցուցանելով ։ Եթէ եւայ էհար մեղանչելով․ մարիամ բժշկեաց , զորդին ա̃յ ծնանելով , մարիամ է , որ եղև լի շնորհիւ , և որ ընկալաւ զտ̃րն ընդ ինքեան․ ընդ ինքեան 'ի սրտի , ընդ ինքեան 'ի յորովայնի , և ընդ ինքեան 'ի 'ի յօգնութեան ։ Սա է , որ ցնծացաւ , և մինչ զգացաւ , թէ յղացեալ էր զփրկիչն աշխարհի հոգւով սրբով

Թարց

թարց վնասու կուսութեան իւրոյ, ուրախացաւ, և մինչ ծանուցեալ թէ լեալ է մայր այ, բերկրեցաւ զարմացմամբ հանդերձ: Սա է, որ ոչ միայն հաւատով, այլ նաև մարմնով յղացաւ զՔս. և որ ոչ միայն հաւատով, և սիրով եղև առընթերագոյն որդւոյն այ, այլ նաև ճշմարտիւ մայրութբ. և որ ոչ միայն ոգւով, այլ նաև մարմնով տարաւ զՔս: Սա է, որ եղև երջանիկ, և երանեալ, ոչ միայն, զի պահեաց զբանն ամենաբարձրելոյ տեառն, ստեղծողի, և կերտողի աշխարհի. այլ նաև, զի յղացաւ, և ծնաւ զորդին այ:

3. Մարիամ, քանզի է մայր այ, է ազնուագունեղ, և քանզի յղացաւ զԼոյսն, է պայծառագունեղ: Արժանապատւութի մարիամու մօրն այ, ի կողմանէ որդւոյն է անհուն: Վասնզի ոչ է կարելի մեծագոյն, արժանապատւագոյն, և ազնուագոյն մայրութին, քան զմայրութին այ: Մարիամ է մայր ողջախոհագունեղ. քանզի է մայր, և կոյս: Զի սա է, որ թարց շօշափման մարմնոյ ծնաւ զմարմին: Ուստի ի մարիամ մայրութին, և կուսութին համբուրեցին զիրեարս: Մարիամ է կոյս ոչ միայն մարմնով, այլ նաև մտօք: Մարիամ է սրտիւ խոնարհ, բանիւ ծանր, և ոգւով խոհեմ: Մարիամ ի խօսիլն հեզագոյն, և յընթեռնուլն մտադրագոյն, ոչ ի հաւաքման փարթամութեց, այլ ի յաղաչանս չքաւորաց զյոյս վերապահօղ: Մարիամ ուշադիր գործոց, ամօթխած ի բանի, խոհական մտօք, ոչ զմարդն խնդրող, այլ զած: Մարիամ ոչ ումեք վնասօղ, այլ ամենեցուն զբարի կամեցօղ, մեծագունից յոտն կացօղ, հաւասարաց ոչ նախանձօղ, փախչօղ ի սնափառութէ, հետևօղ բանաւորութէ, և կարի յոյժ սիրօղ: Մարիամ ոչ երբէք ձանձրացոյց զմարդն, ոչ երբէք կատակեաց զտկարն, և ոչ երբէք բացամերժեաց զկարօտացեալն: Ակունքն մարիամու եղեն պարկեշտագունեղք, բանքն հեզաբարոյագունեղք, ներգործութին մաքրագունեղ, շարժումն իմաստնագունեղ, ընթացն ծանրագունեղ, և ձայնն խոհեմագունեղ: զի ինքն տեսիլն մարմնոյ լինէր պատկեր մտի, և ձև բարեպաշտութե: Աւետարանիչն եցոյց զմարիամ այսպիսի, հրեշտակն եգիտ այսպիսի, և հոգին սբ ընտրեաց զայսպիսին: Բարքն մարիամու եղեն գերազանցագունեղք, քան զայսոսիկ, որք գրեցան: Մարիամ կոյսն է այն, որ եղև լի շնորհօք, և եղև այն, որ հաճոյացաւ հոգւոյն սրբոյ, և որ եղև արժանաւոր, յորմէ ծնանիցի իւր որդին այ:

4. Ի միում ողջախոհագունեղի կուսոջ, որ յղացաւ, և ծնաւ զհեղինակն մաքրութե, և ողջախոհութե, փայլեն տեսակք ամից առաքինութեց, խորհուրդն ամօթխածութե, նշանակն հաւատոյ, և գանձարանն ջերմեռանդութե, կոյս ներ բնակարանի, ընկեր պաշտօնատարութե, և մայր ի տաճարի: Ի միում կուսոջ այնպէս փայլեն տեսակք առաքինութեց, զի միայնոյ նր կեանն լիցէ ուսումն ամենից: Լիցի ուրեմն մեզ իբրև ի պատկերոջ գրեցեալ, կուսութին, և կեանն մարիամու, յորում իբր ի հայելւոջ փայլէ տեսակն ողջախոհութե, և տիպն առաքինութե: Աստի առցուք զօրինակս կենաց, ուր իբր ի նախագաղափարականի վարդապետութիք արտատպեցեալք են բարեպաշտութե, թէ զինչ կշտամբել, յորմէ փախչել, և զինչ առնել պարտիցիմք, ցուցանեն: Ուսցուք ուրեմն ի կուսէ զբարս, զպաշտօն, զամօթխածութի, ի յառաքինութեց նորին արտաքարշելով զկերպ կենաց: Մարիամ կոյսն լի շնորհիւ, է այն, որ ետ երկնի զփառս, երկրի զած, և եհեղ զխաղաղութի, զհաւատ հեթանոսաց, զվախճան մոլութեց, զկանոնադրութի կենի, և զպարումն վարուց: Մարիամ կոյսն է բարձրագոյն քան զերկինս, և խորագոյն քան զխորխորատ, յաղթօղ զգովասանս

ամից

դովաբանողաց : Քանզի մարիամ կոյսն է այն, որում լիութին շնորհի զինքն բոլոր եհեղ, որպէս 'ի տաճարի մաննաւորապէս նուիրեցելոյ : Մարիամ կոյսն է մայր այ : Ուստի լիութի շնորհի, որ եղև 'ի քս իբրև 'ի գլխոյ ներհօսողի, եղև 'ի մարիամ որպէս 'ի պարանոցի անդրահեղողի : Բնաւին ոչ է 'ի յաշխարհի տեղի արժանագոյն քան զկուսական արգանդն, յորում մարիամ ընկալաւ զորդին այ : Եւ ոչ 'ի յերկինս է արժանագոյն տեղի քան զթագաւորական գահն, ուր բարձրացոյց որդին այ զմարիամ :

5. Որինչ է առաքինութե, որինչ է լուսափայլման, որինչ է շնորհի, և որինչ է պայծառութե, վերափայլէ 'ի փառաւորագունեղի կուսոջ: Մարիամ կոյսն է այն, որով փրկիչն եկն առ մեզ, արտաքսելով յարգանդէ նորա, իբրև զփեսայ յառագաստէ իւրմէ : Մարիամաւ որ եգիտ զշնորհ, ծնաւ զկեանն, և եղև մայր փրկութե, մերձենամք քի : Մարիամաւ, 'ի ձեռն որոյ տուաւ մեզ քս, ընկալեալք լինիմք 'ի քէ, և բարեխօսութք և արդեամբ նորա, ընդունիմք 'ի յորդւոյն զհոգևորս պարգևս, զշնորհ զօջման, զսկզբն արդարացուցման, զպահեղանի փրկութե, զլոյս պայծառութե, զդարմանթողութե, զճանապարհ հաշտութե, զյաղթութի 'ի մոլութեց, զօգնութի առնձելոյ զախտս, զթիկնապահութի պահելոյ զպատուիրանս, զյաղթանակ ընդդէմ թշնամեաց : Երանեալ կոյսն է այն, որով փրկեցան, որք նստէին 'ի խաւարի սպասօղք փրկչի, լցաւ երկինն, նորոգեցան կործանմունք երկնային երուսաղեմի, և թշուառաց մեղաւորաց տուաւ կորուսեալ կեանն : Երանեալ կոյսն է այն, որոյ արգանդն եղև ընդունակագոյն քան զերկինս, հեղելագոյն քան զերկիր, և լայնագոյն քան զտարերս. քանզի կարաց պարունակել զայն, զոր բոլոր աշխարհն ոչ կարաց պարունակել, և որ երիւք մատամբ ըմբռնէ զմարմնեղութի երկրի : Երանեալ կոյսն է այն, որոյ բարեխօսութին է խնդրելի : Քանզի ուշադրաբար, և ջերմեռանդաբար, անկեղծաբար կոչողն զնա, բարեխօսութք նր գտանէ զշնորհ :

6. Օգնութին մարիամու է կարողագունեղ: Քանզի է մայր այ ամենակարողի : Սրբեա շփոթեալ խստաբարոյութք յանցանաց, վրդովեալ դառնութք խղճի մտաց, զահիհարեալ ահաբեկութք դատաստանի, խորտակեալ անդնդիւ յուսահատութե, դանեցեալ 'ի մեծագունեղս թշնամութիս, և տառապեցեալ յամէ կողմանէ դժուարութք, կոչեա զմարիամ : Վասնզի մինչ նա պաշտպանէ զքեզ, և օգնէ քեզ, դադարի շփոթութի, փախչի դառնութին, ծնանի վստահութին, կանգնի յոյսն, լինի ազատութի 'ի թշնամութեց և կորընչին դժուարութիք : Մտածեա սրբեա զմարիամ, և պահեա զնա 'ի սրտի քում : Քանզի մտածեալ զնա, ոչ մոլորիս կալեալ զնա, ոչ յուսահատիս, և հետևեալ նմա, ոչ խոտորիս : 'Ի պաշտպանելն նորա, ոչ երկնչիս, 'ի պահելն նորա, ոչ անկանիս, 'ի յառաջնորդելն նորա, ոչ վաստակիս, և 'ի յօգնելն նորա փափագեցելոյ իրի հասանիս : Վսնզի մինչ է աստղ ծովային, ապա հոլովապէս ածցէ զքեզ առ նաւահանգիստն փրկութե : Պարտ է սրբեա զմեզ քրիստոնեապաշտս, 'ի մէջ ալեաց այսր աշխարհի նաւարկօղս, մտածել զայս ծովային աստղս, ցուցանող մեզ զապահով ճանապարհն : Պարտ է մեզ մտածել զաստղն, վերնագունեղի ծննդոջ մերձաւորյնն. և վերահայեցմամբ առ օրինակ նորա զընթացս կենի մերոյ ուղղել, և զգործս մեր կարգաւորել : Եթէ քրիստոնեայն զայդ, որ ասացեալ է, առնիցէ. մտադրաբար մտածիցէ զմարիամ կոյսն, և օրինակօք նր զընթացս

կենի իւրոյ ուղղեցէ , ոչ բացարձակեսցի հողմով ունայնի փառաց , ոչ բեկցի քարաժեռի հակառակորդաց , և ոչ ընկլուզեսցի յուշկապարականաւ խորխորատի հեշտութեց · այլ յաջողութ̄ եկեսցէ առ նաւահանգիստն յաւիտենականի անդորրութեն։

7. Որպէս անդոանեցեալն 'ի մարիամու , և հակառակն նորա կործանիչ , այսպէս առ նա դարձեալն , և 'ի նմանէ ակնարկեցեալն, հասանի փափագեցելոյ փրկութե̄ ։ Մարիամ է ապաստան մեղաւորաց , սանդուխտն երկնի · վստահութիւն ապաւինողաց , և բոլոր պատճառ յուսոյ յուսացողաց ։ Մարիամ է նա , 'ի յոր էջ առատութեն շնորհն արքայութեան , ոչ միայն սրբացուցանելով զյղացուա̄ , և զծնունդն նր̄ · այլ նաև յետայնորիկ և զկեանն , պահելով անարատ յա̄մէ մեղաց ։ Մարիամ ոչ միայն յինքեան է այսպէս կատարեալ , այլ նաև դէպ 'ի յայլս է ողորմածագունեղ։ Քանզի երկայնութի̄ , լայնութի̄ , խորութի̄ , և բարձրութի̄ ողորմութե̄ նորա , է մեծ , Վասնզի երկայնութի̄ ողորմութե̄ նորա , մինչև առ վերջին օրն , օգնէ համայնից , զնա ջերմեռանդաբար , և պարտաւորապէս կոչողաց ։ Լայնութի̄ ողորմութե̄ նորա , լցուցանէ զբոլոր աշխարհս , այնպէս զի ողորմութ̄ մարիամու , լցեալ լի բոլոր երկիրն ։ խորութի̄ ողորմութե̄ նր̄ , նստողաց 'ի խաւարի , և 'ի ստուերս մահու , ստացաւ զփրկութի̄ ։ Եւ բարձրութի̄ ողորմութե̄ նր̄ վերնայնոյ քաղաքի եգիտ զվերանորոգուա̄ ։ Մարիամ , որ եղև լի շնորհիւ , և որ ծնաւ զհեղինակն շնորհի , զՅս̄ Քս̄ զփրկիչն աշխարհի , առատագունեղիւ սիրով , պարտաւոր արար զիւր ինքն ա̄մից , իմաստնոց , և յիմարաց ։ Քանզի զծոցն ողորմութե̄ եբաց ա̄մից , զի 'ի լիութե̄ նորա ընկալցին համայնք , գերին զփրկութի̄ , հիւանդն զառողջութի̄ , տրտուա̄ զմխիթարութի̄ , մեղաւորն զթողութի̄ , արդարն զշնորհ , հրեշտակն զուրախութի̄ , վերջապէս բոլոր երրորդութի̄ն զփառս , անձն որդւոյ զգոյացուն մարդկայնոյ մարմնոյ , զի ոչոք իցէ , որ թաքուցանիցէ զինքն 'ի տապոյ նր̄ ։

8. Պարտաւորապէս ա̄մք ազինք երանեն զմարիամ , և լնուն զմարգարէութի̄ նորա ։ Քանզի մարիամ ա̄մից ազգաց ետ զկեան , և զփառս և 'ի մարիամ · հրեշտակք զնորոգութի̄ , արդարք զշնորհ , և մեղաւորք զներուա̄ գտանեն 'ի յաւիտեան ։ Ուրեմն ըստ արժանւոյն վերահայլին առ մարիամ ակունքն բոլորոյ ստեղծուածոյ · վասզի 'ի նմա , և նովաւ , և զնմանէ բարեգութ ձեռն ամենակարողի ա̄յ , զորինչ ստեղծ, վերանորոգեաց ։ Մարիամ կոյսն է աւետարանական կինն , որ համախառնեաց զերիս դրիւս ալեր ։ Քանզի մարիամ կոյսն 'ի ներմարմնութե̄ խմորոյ հաւատոյ իւրոյ , համախառնեաց զերիս դրիւս · զնորն , զհինն , և զյաւիտենականն , այսինք , զհոգին նորապէս ստեղծեցեալն , զմարմինն զբնութե̄ , և զյաւիտենականն 'ի միութե̄ ա̄ծութե̄ · որպէս ասէ ս̄բն պետռնարոսս ։ Ս̄բն Յոհան ոսկեբերանն գովելով զմարիամ , ասէ · ո՜ անգին գովասան մարիամու ։ Ս̄բն Յօսէփ առաւել հաւատաց ողջախոհութե̄ · քան արգանդի մեծացելոյ · առաւել շնորհի , քան բնութե̄ · զյղացուա̄ ետես , բայց զպոռնկութի̄ ոչ դատեաց · կարելագոյն հաւատայր զկինն յղանալ թարց առն , քան զմարիամ կարել մեղանչել ։ 'Ի վերայ Մատթէի ։ Մարիամ խնամակալն մարդկայնոյ սեռի , տառապեցելոց իւրաց է մասնաւոր բժիշկ։ Մինչ ուրեմն մեղանչելն է հասարակ , ա̄մք կարօտի օգնութե̄ նր̄ ։ Ասէ ս̄բն Հերոնիմոս ։ Որպէս 'ի համեմատութե̄ ա̄յ ոչ է բարի · այսպէս նաև 'ի համեմատութե̄ մօրն ոչոք գտանի կատարեալ · թէպէտ գոցի գերազանց առաքինութե̄ք ։ 'Ի յասացուածոց ։ Մարիամու ա̄ծածնի , 'ի վեր քան զհամայնս

մայնս

մայնս ստեղծուածս վերայելոյ , ա̃մց քրիստոնէից Թագուհւոյ , փափագօղքս պարգեւի , եւ օգնութե նորա , հետեւիցուք օրինակի ։

## ԳԼՈՒԽ · Հ ·

### Յաղագս կատարելութեց Մարիամու ։

1\. Տեսաք զգովասանն Մարիամու 'ի հատորանի ։ Այժմ խօսիցուք զկատարելութեց , եւ զգովասանէ նորա որոշաբար ։ 'Ի բնութե մարիամ կոյսն համաձայնի մեզ 'ի տեսակոջ ։ Քանզի է դուստր , որ 'ի Թագաւորականէ դաւթեան ազգէ յառաջացեալ , ծնեցեալ 'ի ս̃բ ծնողաց , որք են Յովակիմ , եւ աննա ։ Ուրեմն ոչ խօսիմք զբնութէ , եւ զբնականաց կատարելութեց մարիամու , այլ զգերբնականաց կատարելութեցն ։ Առաջին գերբնական կատարելութին է շնորհն , զարդարօղն զհոգին ։ Շնորհն մարիամու զոր կալաւ 'ի ստեղծման հոգւոյ իւրոյ , եւ 'ի յղացման իւրում , եւ որով հոգին նր̃ գեղեցկացաւ , վայելչացաւ , եւ չքնաղացաւ ա̃ծայնոց ականց , զորս յափշտակեաց 'ի սէր իւր , եւ որո̃վ նախապահեցաւ 'ի սկզբնականէ մեղէ · եւ որով հաստատեցաւ 'ի բարւոջ , եւ յօժարեցաւ առ ա̃մ բարիս , եղեւ անհամեմատաբար գերազանցագոյն քան զշնորհս ա̃մց սրբոց , հրեշտակաց , եւ մարդկանց , Միայն ներհեղեցեալ շնորհն մարդկութե քի յաղթէ զշնորհն մարիամու ։ Շնորհն ա̃մց այլոց 'ի համեմատութե շնորհի մարիամու է իբրեւ զփոքրիկ կայծ առաջի արեգական ։ Քանզի պարտ եղեւ զա̃ծ տալ զշնորհ մարիամու ըստ պաշտօնի , առ որ նախաընտրեալ էր զնա ։ Պաշտօնն առ որ նախաընտրեալ էր ա̃ծ զմարիամ , էր մայրութին ա̃յ , որ 'ի կողմանէ եղեր է անհուն արժանապատուութի ։ Ուստի զշնորհն , զոր ա̃ծ ետ մարիամու , պիտոյացուցող ծայրագոյն յետ շնորհի մարդկութե քի ։

2\. Շնորհն մարիամու արար զհոգին նորա կարի յոյժ գեղեցիկ · վասնզի շնորհն , որ է տեսական մասնակցութի ա̃ծայնոյ բնութե , տայ զգեղեցկութի հոգւոյ · ուրեմն գերազանցագունեղ շնորհն տայ զգերազանցագունեղ գեղեցկութի ։ Հոգին մարիամու չքնաղացեալն շնորհիւ , յափշտակեաց զա̃ծայինս ակունս 'ի սէր իւր · քանզի ա̃ծ 'ի վեր քան զա̃մ ստեղծուածս սիրեաց զմարիամ · Մարիամ ստացելով շնորհիւ նախապահեցաւ 'ի սկզբնականէ մեղէ · վասնզի ոչ վայելեաց զնա , որ նախաընտրեցեալ էր գոլ մայր ա̃յ , եւ խակակաւագունեղ բնակարան ամենասրբոյ երրորդութե , նաեւ զպակուցագունեղ ժամանակ կալ ենթ իշխանութե սատանայի , եւ 'ի թշնամութե ա̃յ ։ Մարիամ եղեւ միշտ գեղեցիկ , միշտ սիրելի , միշտ բարեկամ եւ ոչ երբեք գերի ։ Մարիամ շնորհիւ եղեւ հաստատեցեալ 'ի բարւոջ · քանզի շնորհն , որ զնա նախապահեաց 'ի սկզբնականէ մեղէ , այնպէս հաստատեաց զնա , զի իցէր յաղթելի ընդդէմ ա̃մց մեղաց , նաեւ թեթեւագունեղեց ։ Ուստի զօրութե շնորհի , զոր կալաւ , 'ի բոլորոջ կենի իւրում եղեւ ազատ յա̃մց մեղաց , նաեւ փոքրագունեղեց ։ Եւ այսպէս եղեւ շնորհիւ հաստատագունեղ 'ի բարւոջ ։ Մարիամ հակեցեալ էր առ ա̃մ բարին · վասնզի շնորհն յօժարեցուցանէ առ բարին · ուրեմն ամենամեծ շնորհն կարի յոյժ յօժարեցուցանէ առ բարին ։ Շնորհն մարիամու եղեւ ամենամեծ · ուրեմն մարիամ կարի յոյժ յօժարեցեալ եղեւ առ բարին ։ 'Ի մարիամ ոչ եղեւ գրգռումն առ մեղս · ուստի բոլորովիմբ եղեւ յօժարեցեալ առ ա̃մ բարին ։ Արդարեւ եղեւ ամենամեծ շնորհն մարիամու , բայց յաղթեցեալ 'ի ներհեղեցելոյ շնորհէ մարդ-

կութեան քո, քանզի մարդկութիւն քո եղև միաւորեցեալ Աստուծոյ բնութե ենթակայականաւ, և անձնաւորականաւ միաւորութեամբ:

3. Պատճառս ասացելոյ շնորհի, որով զարդարեցեալ եղև Մարիամ, այսպէս գրեցեալ է ընդմանէ 'ի սբ գիրս: Ամենևին գեղեցիկ ես դու մերձաւոր իմ, և արատ ոչ գոյ 'ի քեզ: Սրտացուցեր զմեզ միով ակամբ քով, և միով քառամանեակաւ պարանոցի քոյ: Զի գեղեցկացան ստինք քո քոյր իմ հարս. զի գեղեցկացան ստինք քոյ 'ի գինւոյ, և հոտ հանդերձից քոց քան զամ խունկս: Մեղր կաթեցուցանեն շրթունք քո, քոյր իմ հարսն. մեղր, և կաթն 'ի ներքոյ լեզուի քոյ. և հոտ հանդերձից քոց իբրև զհոտ կնդրկի: Պարտէզ փակեալ քոյր իմ հարսն, պարտէզ փակեալ, և աղբիւր կնքեալ: 'Ի յերգ երգոց: Գլ. 4. Թիւ. 7. և 9. Մարիամ է բոլոր գեղեցիկ, և վայելուչ: 'Ի Մարիամ ոչ ոք արատ եղև: Մարիամ է մերձաւոր հարսն, կարի յոյժ սիրեցեալ, գեղեցկութբ իւրով վիրաւորող զսիրտ երկնային փեսային, քարշող զնա 'ի սէր իւր: Մարիամ է պարտէզ փակեցեալ, և աղբիւր կնքեալ շնորհիւ, զնա հաստատող 'ի բարւոք, և պահող ազատ յամ մեղաց: 'Ի նմա փակեցելում շնորհիւ, ոչ եղեն փուշք, և անօգուտ խոտք դալարք մեղաց, և լեղի ջուր անօրէնութե: Ուստի արժանաբար այսպէս խօսի զինքենէ Մարիամ: Ես մայր գեղեցիկ տարփման, և երկիւղի, և գիտութե, և սբոյ յուսոյ: Ինև շնորհ ամի ճանապարհի, և ճշմարտութե, ինև ամ յոյս կենաց, և զօրութե: Առ իս անցէք ամենեքեան, որք ցանկայք ինձ, և 'ի տոհմականաց իմոց լցարուք: Զի հոգի իմ գեր քան զմեղր քաղցր, և ժառանգութի իմ 'ի վեր քան զմեղր, և զխորիսխ: Յիշատակ իմ յազգս յաւիտենից: Որք ուտեն զիս ևևս քաղցեսցին, և որք ըմպեն զիս ևևս ծարաւեսցին: Որ լսէ ինձ ոչ ամաչէ, և որք գործեն ինև ոչ մեղանչեն: Որք պայծառացուցանեն զիս, զկեանս յաւիտենականս ստացին: Եկլեսիկէ: Գլ. 24. Թիւ. 24.

4. 'Ի մարդում է հոգի ազնուագոյնեղ, և են երկու ազնուագունեղք կարողութիւնք հոգւոյ, այսինքն, իմացութիւն, և կամք: Կատարելութիւն հոգւոյ է շնորհն, առնող զնա գեղեցիկ, չքնաղ, և վայելուչ: Կատարելութիւն իմացութեն է իմանալի լոյսն, լուսաւորող զմիտն, զի ճանաչիցէ զճշմարտութիւն, զբարին, և զուղղութիւն: Ուստի կատարելութիւն իմացութե է լոյսն հաւատոյ, լոյսն խոհեմութե, լոյսն իմանալոյ զիրս հաւատալիս, իմանալոյ զիրս ածայինս ըստ ածայնոց բանից, և իմանալոյ զիրս ածայինս ըստ ստեղծեցելոց բանից, և լոյսն իմանալոյ զառնելիս իրս: Եւ այսպէս կատարելութի իմացութե է հաւատն, խոհեմութիւն, հմտութիւն, իմաստութիւն, գիտութիւն, և խորհուրդն: Առցուք զիմաստութիւն փոխանակ ամից ասացելոց: Իմաստութիւն մարիամու եղև ըստ շնորհի նորա: Ուստի որպէս շնորհն մարիամու եղև ամենամեծ, յաղթող զայլ ամ շնորհս, բաց 'ի շնորհէ մարդկութե քո. այսպէս իմաստութի մարիամու եղև ամենամեծ, յաղթող զայլ ամ իմաստութի. բաց 'ի յիմաստութե մարդկութե քո: Իմացութե մարիամու տուաւ իմաստութի ըստ շնորհի, որով պճնեցեալ եղև հոգին նորա, զի ճանաչիցէր զպատուականութի շնորհի, որպէս պիտոյ է, և զարժանասիրելութիւն տուողի շնորհի, զոր այնպէս սիրիցէր, որպէս պահանջէր շնորհն: Ուստի մարիամ հասեալ 'ի բանավարութի, առժամայն ճանաչեաց լուսաւորոյն քան զայլ ամ ստեղծուած զպատուականութի շնորհի, զամ տուողն շնորհի, զամենայն կատարելութիս, զառաջին, և զծայրագոյնեղ ճշմարտութիւն, զխորհուրդս ինքեան յայտնեցեալս, զսիրելութիւն այ, 'ի վեր քան զամ ինչ սիրելին,

զուղ_

զուղղութին , և զայլս ամենայն
իրս առ ինքն պատկանօղս յայն֊
ժամ ։

5. Կատարելութի կամին է սէրն,
արդարութին, և ուղղութի ։ Ըստ շնորհի,
որով պճնեցեալ եղև հոգին մարի֊
ամու , և ըստ իմաստութե , որով
լուսաւորեցեալ եղև միտն նորա ,
տուեալ կամին նորա սէրն , արդա֊
րութին , և ուղղութին ։ Ուստի
սէրն , արդարութին , և ուղղու֊
թին մարիամու եղև ծայրագու֊
նեղ , յաղթօղ զայլ ամ սէր , ար֊
դարութի , և ուղղութի բաց 'ի
սիրոյ , յարդարութե ։ և յուղղութե
մարդկութե քի ։ Տոնեցեալ եղև
մարիամու սէր , արդարութի , և
ուղղութի , ըստ շնորհի , և իմաս֊
տութե նորա , զի այնպէս սիրիցէր
զած , և զընկեր իւր վասն այ , և
պահիցէր զարդարն , և զուղիղն ,
որպէս պահանջէր շնորհն , և ցու֊
ցանէր իմաստութի նորա ։ Ուստի
լաւագոյն , և սաստկագոյն քան
զայլ ամ ստեղծուած , սիրեաց զած ,
'ի վեր քան զամ ինչ սիրելին , և
զընկեր իւր վասն այ , և պահեաց
զարդարն , և զուղիղն ։ Սիրտն մա֊
րիամու էր հնոց սիրոյ , և սիրե֊
լութե ։ Ըստ մեծութե սիրոյ նո֊
րա , եղեն մեծք համայնք այլք ամե
առաքինութիք նորա , այսինքն ,
խոհեմութին , արդարութին , հնա֊
զանդութին , ածպաշտութին , ի֊
րաւասիրութին , ողորմածութին ,
խոնարհութին , մեծվայելչութին ,
մեծագործութին , արիութին . հե֊
զութին , համբերութին , երկայն֊
մտութին , քաջասրտութին , բա֊
րեխառնութին , ողջախոհութին ,
պահեցողութին , զգաստութին ,
պարկեշտութին , բարեգթութին , քաղց֊
րաբարոյութին , ճշմարտախօսութին ,
արդարախօսութի , հաւատարմու֊
թին , և այլք համայնք իմանա֊
լիք . վասնզի սէրն , թագուհին , և
տեսակն առաքինութեց , է մայրն
առաքինութեց ։ Ուստի ըստ մեծու֊
թե իւրոյ ծնանի զառաքինութիս ,
որք են դստերք իւրք ։ Տեսաք
զկատարելութիս հոգւոյ , իմացու֊
թե , և կամին Մարիամու ։

6. Մեծութին ողջախոհութեան
մարիամու երևեցաւ 'ի յաւետման
հրեշտակի , մինչ ասաց ։ Զիարդ
լինիցի այդ , քանզի զայր ոչ գի֊
տեմ ։ Ղուկաս . 1. Թիւ. 34. Իբր
թէ ասիցէր ։ Եթէ ած հրամայէ
զայս , զոր ասես , հնազանդիմ նմա ։
Բայց եթէ թողու զայս ընտրողու֊
թե իմում ազատի . առաւել սիրեմ
զիս մնալ կոյս , քան գոլ մայր կորա֊
տեամբ կուսութե այնպիսւոյ որ֊
դւոյ ։ Յայտնագունեղապէս երևի
ամենամեծ հնազանդութին , և ա֊
մենամեծ ողջախոհութին ։ Վասն
այսորիկ արժանաւորեցաւ , զի մնա֊
լով կոյս , յղանայցէր զորդին , և
զուգակցիցէր կուսութեն զմայ֊
րութին այ ։ 'Ի յղացման երևեցաւ
ծայրագունեղ խոնարհութին ։ Քան֊
զի լեալ մայր այ , քարոզէ զինքն
աղախին տն ։ Աստուածեռնութին
երևեցաւ 'ի դալտեան մոգուց ,
որք անկեալք երկրպագին Յի -
և բացեալք զգանձս իւրեանց մա֊
տուցին նմա զպարգևս , զոսկի ,
զկնդրուկ , և զմուռս ։ Քանզի
զգանձս , ծնեցելոյ թագաւորի 'ի
մոգուց մատուցեալս , աստուածեռ֊
նաբար բաղխեաց աղքատաց , պա֊
հեցելոց ինքեան հարկաւորաց ։
Արիութին , և ամենամեծ համբե֊
րութին մարիամու երևեցաւ 'ի
չարչարանի քի ։ Վասնզի մինչ տե֊
սանէր զբևեռս , զփշեղէն պսակն,
զհեղումն արեան , զխաչն , զնախա֊
տինս , և զմահն ամենասիրելագու֊
նեղի որդւոյն , ամենամեծիւ համ֊
բերութե կրելով զդառնագունեղս
ցաւս խոկայր զբարձրագունեղս
խորհուրդս ։ Մեծութին եղբայր֊
սիրութեն երևեցաւ , մինչ կամեցաւ
առ օգուտ եկեղեցւոյ , և քրիս֊
տոնէից 'ի յերկրի յայսմ աքսորութե
մնալ զբազումս տարիս ։

7. Մարիամ պճնեցեալ ա֊
մենամեծիւ շնորհիւ , լուսազարդ ,
պայծառ , և փայլեալ ամենամեծիւ
իմաստութե , և վառեալ բորբո֊
քելագունեղիւ հրով սիրոյ , ոչ
կայր դատարկ , այլ միշտ զարդա֊
նայր,

նայր, և յարաժամ աճէր 'ի շնորհսն, 'ի յիմաստութիւն, և 'ի սիրոջ, և համաձայնապէս 'ի յամս այլս ճշմարիտս, անկեղծս, լուսաւորագունեղս, պայծառագունեղս, և զարմանալագունեղս առաքինութիւնս : Ոչ յետագայնայր, ոչ մնայր, այլ միշտ առաջանայր : 'Ի միոջէ բոպէէ առ միւսն միշտ զարմանալաբար աճէր : Քանզի միշտ խոկայր զԱստուածայինս : Եւ ամենամեծիւ ջանիւ պարապէր խոկման, մտադրագունեղապէս խոկալով զԱստուածային բարութիւն, զԱստուածայինս կատարելութիւնս, և զբարերարութիւնս 'ի յայլ ինքեան արարեցեալս : Մինչ օգնեցեալ մասնաւորաւ օգնութեամբ այ, որ զնա կարի յոյժ սիրէր, և որոյ զսիրան 'ի սէր իւր յափշտակեալ էր, և որոյ զմասնաւոր օգնութիւն արդիւնաւորիւր, մտադրագունեղաբար խոկայր զԱստուածայինս, առաւել լուսաւորիւր, և առաւել իմանայր զԱստուածային բարութիւն, զոր սիրէր : Եւ այսպէս 'ի վայրկենէ 'ի վայրկեան աճէր 'ի յիմաստութիւն : Առաւել լուսաւորեալ, և առաւել իմանալով զԱստուածային բարութիւն, առաւել, և սաստկագոյն սիրէր զնա : Եւ այսպէս 'ի բոպէէ 'ի բոպէ աճէր 'ի սիրոջ, 'ի սիրելութիւն, և 'ի շնորհաւորութիւն : Ըստ սաստկութեան ներգործութեան սիրոյ, լինէր սաստկութիւն շնորհի, որով զարդարեցեալ էր, և այլոց առաքինութեանց, որովք զարմանալաբար փայլէր, և ճառագայթէր : Եւ այսպէս 'ի բոպէէ 'ի բոպէ զարգանայր 'ի շնորհսն, և 'ի յայլս ամենայն առաքինութիւնս :

8. Համայնք կատարելութիւնք ժողովեցեալք եղեն 'ի Մարիամ : Եղև կատարելագունեղ 'ի մանկութեան իւրում : Քանզի 'ի մանկութեան իւրում կալաւ զսրբութիւն, որ յաղթէր զսրբութիւն ամենից : Եղև խոհեմագունեղ, ծանրագունեղ, և զարմանալագունեղ : Եղև կատարելագունեղ 'ի կրօնաւորութեան : Վասնզի 'ի տաճարին զբաղումն ամս վարեաց զկատարելագունեղ կրօնաւորական կեան յարաժամ պարապելով աղօթից, մտածման, խոկման, և ընթերցման, բուրելով զանուշահոտութիւն ամենից առաքինութեանց առ քիմս ամենեցուն, տալով ամենեցուն 'ի նա հայողաց զպայծառագունեղս, և զկատարելագունեղս օրինակս բարեգործութեանց, և ուխտելով ամենաքաղցրելոյն զողջախոհութիւն, և զկուսութիւն իւր : Եղև կատարելագունեղ 'ի կենցաղավարութեան : Զի զհամայնս զնա տեսանողս, և ընդ նմա զկեան վարողս, քարշէր առ սէր գերազանցագունեղից առաքինութեանց : Եղև կատարելագունեղ 'ի խօսակցութեան : Վասնզի բանք, որք արտաբղխէին 'ի բերանոյ նորա, էին բոլորովիմբ լիք շնորհօք : Եղև կատարելագունեղ 'ի նշանագրութեան : Քանզի նշանագրեալ յղացաւ զորդին 'ի հոգւոյն սրբոյ, և ծնաւ զնա թարց ապականութեան, և հանդերձ ամբողջութեամբ կուսութեան իւրոյ : Եղև կատարելագունեղ 'ի մայրութեան : Վասնզի կալաւ զԱստուած որդի, որում ծառայեաց միշտ հաւատարմութեամբ հանդերձ : Եղև կատարելագունեղ 'ի յամս առաքինութիւնս : Քանզի միշտ ետ զգերազանցս օրինակս ամենից առաքինութեանց : Եղև կատարելագունեղ 'ի վարդապետութեան : Զի յետ համբարձման Քրիստոսի, եբաց առաքելոց զխորինս խորհուրդս : Ուրեմն յամէ կողմանէ եղև կատարելագունեղ :

# ԳԼՈՒԽ ՀԱ

## Յաղագս կենի Մարիամու :

1. Յովակիմ, և Աննա արդարք, և երկիւղածք այ, էին ամուսնացեալք. բայց ոչ ունէին զզաւակ : Ջերմեռանդիւք աղօթիւք խնդրեցին հայցելաբար զզաւակ 'ի բարերարէն ամից բարեաց : Ած լուեալ աղաչանաց նոցա, և ետ նոցա զդուստր, որ յաղթէ զհամօրէնս գաներս, ետ զդուստր լուսաւորող, զաշտարակ զդաւթեան, և փղոսկրեայ, զաստղն առաւօտեան: Ցնցաւ ուրեմն Աննա զայն, և ծնաւ զնա, զկնդուհին, և զուրախութին սրտի իւրոյ, և սրտի առն իւրոյ Յովակիմայ : Դուստրն 'ի Յաննայէ ծնեցեալն կոչեցաւ Մարիամ. զի է լուսաւորեցեալ, լի շնորհիւ, և պայծառ իմաստութե. դուստր այս է հայելի արդարութե, աթոռ իմաստութե, և պատճառ մերոյ խնդութե : Քանզի դուստր այս եղև մայր այ, մայր քի, մայր ստեղծողի, և մայր փրկչի : Դուստր այս է տապանակն ուխտի, և դուռն երկնից : Այս դստեր 'ի յաննայէ ծնեցելոյ, ոչ միայն ծնունդն, այլ նաև յղացումն եղև մաքուր, և սբ : Վասն այսորիկ սբ մայր եկեղեցին, սիրելի հարանք, ոչ միայն տօնախմբէ զծնունդն Մարիամու. այլ նաև զանարատ յղացումն նորա, ուստի Մարիամ եղև սբ ոչ միայն 'ի ծննդեան, որպէս Յոհաննէս մկրտիչն. այլ նաև 'ի յղացման. վասն այսորիկ է խակակամնապէս սբ: Ուստի միայնակ Մարիամ 'ի ծննդեան, և 'ի յղացման սբ :

2. Մարիամ, որոյ յղացումն եղև անարատ, նախապատուհեցեալ եղև 'ի սկզբնականէ մեղէ. քանզի եղև միշտ սբ, և սիրելի ամենակարողին այ : Եկաց երից ամաց. խոհեմ, և ծանր, շարժեալ 'ի յայ մատուցաւ տաճարի, զի անդ կեայցէր, և աճիցէր զսբ կեան : Անդ եղև բարեկամ, և կարի յոյժ սիրելի աննայի մարգարէուհւոյ, որ բուհւոյ այրւոյն: Անդ եկաց, և էած զսբ կեան, որպէս սրբազանն կրօնաւորուհի, և սիրելազդունեղ ամենակարողին այ, զարմանալաբար զարդանալով 'ի յիմաստութե, և 'ի յամս ածահանջս առաքինութիւ, տալով ամից 'ի նա հայրոզաց, զգեբաղանցս օրինակս բարեգործութեց, և սրբազունեղից արարողութեց : Այսպէս գրէ զմարիամայ տաճարի մատուցելոյ սբն Հերոնիմոս : Գոլով երից ամաց 'ի տաճարի մատուցաւ երանեցեալ կոյսն, և 'ի համբնակութե կուսանաց եդեալ. ոչ տակաւին խօսէր կատարելապէս. և արդ հանճարեղաւ ընթացմամբ շրջէր, զի մի վարկանիցիւր մանկիկ, այլ լցեալ ամօք : Զժամս այնպէս որոշէր, թէ 'ի յառաւօտէ մինչև առ երրորդ ժամ պարապիւր աղօթից. 'ի յերրորդէ մինչև առ իններորդն գործէր կամ մանէր առ պաշտօն տաճարին. իսկ 'ի յիններորդէ հեռանիւր աղօթից, մինչև հրեշտակն գայր, որոյ 'ի ձեռանէ առնոյր զկերակուրն. բայց զկերակուրն, զոր առնոյր ընդ այլոց կուսանաց ջամբէր չքաւորաց: Մաքրադունեղ, և ողջախոհադունեղ կոյսն կարի յոյժ սիրեաց զկուսութին : Ուստի ներշնչեալ 'ի հոգւոյն սրբոյ ուխտեաց զկուսութին իւր, լեալ թագուհի կուսանաց :

3. Հասեալ առ հասակ հարսնութե, նշանեցաւ Յովսէփու, առն ամենարբոյ, և 'ի մաքրութե գերազանցի : Ոչ Յովսէփ երկեաւ առնուլ զՄարիամ, ոչ Մարիամ երկեաւ առնուլ զՅովսէփ : Բարւոք ճանաչէր Յովսէփ զմաքրութին Մարիամու, և Մարիամ ճանաչէր զողջախոհութի Յովսէփու : Մարիամ թագուհի մաքրութե, Յովսէփ սիրող ողջախոհութե : Մարիամ ածեալ 'ի տունն Յովսէփու, ծանուցանէ զուխ-

տն

ան կուսութե իւրոյ նմա ։ Յովսէփ
սիրողն ողջախոհութե , հաւանի
ուխտի կուսութե ։ 'Ի տան Յովսէ-
փու , եղև աւետումն հրեշտակի ,
'ի ժամու , յորում մարիամ կոյսն ,
ընթեռնլով զմարգարէութիւն Ե-
սայեայ , գերահռչակի մարգարէի ,
խոկայր զխորհուրդն ներմարմնութե,
և զբարձրացումն մօրն մեսիային ։
Սրբազնագունեղ կոյսն ցանկայր
տեսանել զմեսիայն , և զմայրն նր
ազնիւ կոյսն , զորմէ ասէ Յեսայի
մարգարէն , ահա կոյս յղասցի , քա-
ղոլելով զնա երանեալ , և մատու-
ցանելով զիւր ինքն նմա 'ի յաղա-
խին ։ Մարիամ կոյսն , յաւետեալ
'ի հրեշտակէ , թէնայ նմա զգաղտ-
նին սրտի իւրոյ , այսինքն , թէ
պատրաստագունեղ էր առ 'ի հնա-
զանդիլ , և յօժարագունեղ առ 'ի
հպատակիլ , բայց առաւել սիրէր
զուխտեցեալ կուսութիւն 'ի տա-
ճարոջ , քան զմիայնակ մայրութիւն
գերազանցագունեղի որդւոյ։ Ստու-
գացեալ 'ի հրեշտակէ , թէ ինքն
էր այն կոյսն , որ պարտիւր գոլ
մայրն մեսիային , որդւոյն ա՟յ ամե-
նաբարձրելոյն , ընդունի զողջոյնն ,
և կոչէ զինքն աղախին ա՟ն , վե-
րացեալ 'ի մայրութիւն ք՟ն վերապա-
հեալ զառաջին խոնարհութիւն իւր ,
որով արդինաւորեցաւ վերացու-
ցանիլ 'ի յայնքան մայրութիւն ։

4\. 'Ի ներմարմնութե բանին ,
որդւոյն ա՟յ ամենաբարձրելոյն , սր-
բազնագունեղ կոյսն մարիամ , ըն-
կալաւ զնկականագունեղս պարգևս։
Ներգործութբ հոգւոյն սրբոյ յղա-
ցաւ , զկուսութիւն անարատ պահ-
եաց , լեալ մայր անբիծ , եղեալ
մայր անարատ ։ Վերացաւ արդարև
'ի մեծ , և 'ի յանհուն արժանա-
պատուութիւն , 'ի կողմանէ եղեր ,
զոր յղացաւ , և 'ի յարգանդի իւ-
րում զինն ամիս կրեաց ։ Սատ-
կագունեղիւ , և բորբոքելագունե-
ղիւ սիրով զա՟ծն իւր , 'ի յարգան-
դոջ իւրում ներմարմնացեալն , սի-
րեաց , և եղեալ է մի ինչ ընդ
նմա 'ի սիրոջ ։ Խոհեմագունեղ ,
և գերյարգելի , կարող , բարե-
գոյթ , և քաղողելի կոյսն , զխոր-
հուրդն ոչ եբաց Յովսէփու , այլ
առժամայն գնաց 'ի տուն զաքա-
րիայի , զյայտնումն խորհրդոյ Յո-
սէփայ թողեալ ամենակարողին ա՟ծ ։
'Ի լնանիլն ա՟մից պաշտօնից դար-
ձաւ 'ի տուն իւր ։ Յովսէփ զգաց
զյղացումն , բայց զեղեալ խորհուր-
դն ոչ իմացաւ ։ Ա՟ծ եբաց նմա
զխորհուրդն , և զպարզամիտ սիրտն
նորա հանդարտեցոյց ։ Յովսէփ գի-
տաց զխորհուրդն . արարեցեալն 'ի
մարիամու ամուսնուհւոյն իւրում ։
Լցեալ խնդութբ , և մեծաւ ուրա-
խութբ , պատուէ զմարիամ , զա-
մուսնուհին իւր , որպէս զմայր
ստեղծողի իւրոյ , և փրկչի բոլո-
րոյ աշխարհի , գովաբանելով զգե-
րազանց իմաստութիւն իւր , և զաղ-
նիւ խոհեմութիւն իւր , 'ի յուսա-
գրութեն իւրում 'ի յա՟ծ ամենակա-
րող տ՟րն ։

5\. Լցան աւուրքն , զի ծնանի-
ցիւր , և առբերիցէր զխնդութիւն
ընդհանրոյ աշխարհի ։ Ծնաւ զՅ՟ս
Ք՟ս , զսիրելագունեղ որդին իւր ,
ծնաւ թարց ապականութե , և
թարց կորստեան կուսութե ։ 'Ի
յղացման կոյս , 'ի ծննդեան կոյս ,
մարիամ մայր տեառն յաւիտեան
մնացեալ կոյս ։ Համբուրեաց
զա՟ծ , զսիրելագունեղ որդին , ծնե-
ալն 'ի կուսականէ արգանդէ իւրմէ
ըստ մարդկայնոյ առեցելոյ բնութե ։
Երկրպագեաց նմա , որպէս ստեղ-
ծողի իւրոյ , և սիրեաց զնա որպէս
զորդի իւր վառեցեալ սաստկագու-
նեղիւ սիրով , և բորբոքեցեալ ջեր-
մեռանդագունեղիւ ըղձիւ ։ Գր-
կեաց զնա , և ետ զկաթ նմա , և 'ի
վ՟ր բազկաց իւրոց էառ զնա ։ Ըն-
կալաւ զմոգս պատուով , քաղցրու-
թբ , և ամենամեծիւ մարդասիրու-
թբ , որք եկեալք էին առ 'ի յեր-
կրպագել ք՟ն յինքենէ նորապէս
ծնեցելոյ ։ Փախեաւ 'ի յեգիպտոս ,
զի ի մահուանէ ազատիցէր զորդին։
Պանդխտեցաւ 'ի յօտարականի երկ-
րի , և 'ի գաւառոջ , որ ոչ էր իւրն,
վասն բորբոքեցելոյ սիրոյ , որով
սիրէր զՅ՟ս , սիրելագունեղ զոր-
դին ։

դին ։ Դարձեալ 'ի հայրենուսին կորոյս զորդին, վն՟ այսորիկ կրեաց զդառնագունեղ ցաւ ։ Գտեալ զորդին 'ի տաճարին, լցաւ մեծաւ խնդութբ՟ ։ Կալաւ ինքեան հնազանդ, զամենակարող ածն իւր ։ 'Ի տուընջեան․ և 'ի գիշերի տեսանէր զՅն՟, և ունկնդնէր նմա, զինքն լուսաւորողի ։ և զխորհուրդս ուսուցանողի ։ Գոլով յարաժամ մերձ արեգական լուսաւորողի, փայլողի, և ճառագայթողի, 'ի վայրկենէ 'ի վայրկեան առաւել լուսաւորիւր, և մեծաւ սիրով բորբոքիւր ։

6․ Նախ քան զքարոզելն քն՟, փրկչին մերոյ, զեռասուն ամս, և զերկար ժամանակ 'ի տուընջեան, և 'ի գիշերի, ուշադրաբար, և մտադրաբար, եղև աշակերտուհի նր՟, մարիամ սիրելագունեղ մայրն։ Յայտնէր Յն՟ որդին մարիամու կուսին, անստեղծ, յաւիտենական, և անհուն իմաստութիւն, սիրելագունեղի մօրն, զխորագունեղս խորհուրդս ։ Արեգակն արդարութե լուսաւորէր զմիտն մարիամու։ Մարիամ ունկնդնէր այնմիկ, 'ի յոր մտադրաբար հայէր ։ Զարմանալաբար ուսանէր 'ի վարդապետէ որդւոյն, 'ի հոգևորէ ողջախոհագունեղէ փեսայէ իւրմէ, զոր բորբոքելաբար սիրէր, և 'ի սրտի իւրում կրէր ։ Իմանայր զիմաստութիւն, և զզարմանալի խոհեմութիւն ։ Ուսանէր, և սիրէր, լուսաւորիւր, և սիրով նորա բորբոքիւր ։ Ընդ վարդապետի որդւոյն, աստուածագունեղապէս սիրեցելոյն, 'ի բորբոքելագունեղոջ սիրոջ էր մի լինչ ։ Վարդապետն սիրէր զաշակերտուհի մայրն ․ մայրն սիրէր զվարդապետ որդին ։ Յն՟ ուսուցանէր մարիամու, զոր կրէր 'ի սրտի իւրում։ Մարիամ ունկնդնէր Յի, զոր ունէր 'ի սրտի իւրում ․ Քաղցրագունեղ վարդապետ, անուշագունեղ աշակերտուհի ։ Վարդապետն իմաստագունեղ, աշակերտուհին ընդունակագունեղ ։ Վարդապետն հայր, աշակերտուհին մայր ։ Վարդապետն ած, աշակերտուհին ածածին։ վարդապետն որդի, աշակերտուհին դուստր ։ Վարդապետն սիրելի, աշակերտուհին ըղձալի ։ Վարդապետն եղբայր, աշակերտուհին քոյր ։ Վարդապետն փեսայ, աշակերտուհին հարս ։ Վարդապետն տր՟, աշակերտուհին տիրուհի։ Վարդապետն Թագաւոր, աշակերտուհին Թագուհի ։

7․ Լռեաւ նաև զհրապարակական վարդապետութին որդւոյն, և տեսանէր զքանչելիս նր՟ ։ 'Ի ժամու չարչարանաց քն՟, ակամբք իւրովք եւտես զդառնագունեղս ցաւս նր՟ ։ Ետես զպսակն արարեալն 'ի փշոց ։ Ետես զանողորմ բևեռս, ծակօղս զփափուկս անդամս որդւոյն ։ Ետես զորդին, 'ի խաչափայտին կախեցեալն ։ Ետես զհեղումն արեան, 'ի յանդամոց որդւոյն հոսհեցելոյն ։ Ետես զհակումն գլխոյն, և զցաւագին մահն զհոգին աւանդողի ։ Ետես զխստաբարոյ գեղարդն, յետ մահուան զկողն խոցողն ։ Կայր առ խաչին, հայէր առ անտրտունջ որդին ։ Արդարև զգայր զասատկագունեղս, և զդառնագունեղս ցաւս ։ Քանզի ընդ հոգին նորա էանց սուսերն ցաւոյ ։ Բայց մինչ ցաւէր, և զգայր զչարչարանս, խոկայր զխորհուրդս, զփրկութին մարդկանց գործօղս։ Էր լի եղբայրսիրութբ՟, վշտացեալ մայրն մարիամ։ Ուստի զցաւն, և զմահն, և զդառնագունեղ չարչարանս սիրեցելոյ որդւոյ իւրոյ, վասն փրկութե մերոյ չարչարեցելոյ, մատուցանէր հօր այ՟, 'ի փրկութին մարդկանց ։ Յետ Թաղման որդւոյն, վասն փրկութե մերոյ մեռելոյն, առանձնացաւ մարիամ, սղասելով յարութե սիրեցելոյն ։ Խոկայր զխորհուրդս, և վառիւր սիրով, փափագելով, և ցանկալով տեսանել զՔս՟ յարուցեալն ։ Մինչ խոկայր, և փափագէր տեսանել բորբոքելագունեղիւ սիրով, յանկարծակի երևեցաւ Յն՟, իւրաւի յարուցեալն, և կենդանին ։ Լցաւ մարիամ ուրախութբ՟, և մեծաւ խնդութբ՟,

Գրկեաց զսիրելի փառաւոր որդին իւր ։ Յետ յարութե̃ բազմիցս տեսեալ ուրախացաւ . և խնդաց ։ Ետես և զհամբարձումն նորա 'ի յերկինս ։

8. Մարիամ կոյսն ընդ առաքելոց սպասեաց գալստեան հոգւոյն սրբոյ, 'ի քն̃է աշակերտաց խոստացելոյն ։ Ընկալան համայնքն զհոգին ս̃բ, որքան առ սրբացուցիչ շնորհն, ըստ տրամադրութե̃, որով տրամադրեցեալք էին ։ Մարիամ, որ էր լի շնորհօք, առաւել քան զա̃մս վերացաւ հոգւով սրբով ։ Մարիամ խորհրդաւոր լուսինն լուսաւորեցեալն 'ի քէ, խորհրդաւորէ արեգականէ արդարութե̃, յետ համբարձման քի̃ մնաց 'ի յեկեղեցւոջ, զի լուսաւորիցէր զնա, բանայցէր աշակերտաց զգաղտնիս խորհուրդս, տայցէր ա̃մց զգերազանցս օրինակս ներգործութե̃ց առաքինութե̃ց, և բարեաց գործոց, և մխիթարիցէր զքրիստոնեայս, 'ի Յս̃ Քս̃ հաւատացօղս ։ Լուսաւորեաց, ետ զօրինակս, և մինչև 'ի վախճան կենաց իւրոյ, մխիթարեաց զամենեսեան, առ ինքն մերձեցօղս ։ Միայն ներկայութի նր̃, էր մխիթարութի քրիստոնէից ։ Սաստկացաւ փափագն տեսանելոյ զՅս̃, զսիրելագունեղ որդին իւր, և թագաւորելոյ ընդ նմա 'ի յերկինս 'ի յաւիտեան ։ Սաստկութի սիրոյ, և բորբոքեցելոյ ըղձի, որով սիրէր զՅս̃, զամենասիրելի որդին իւր, բաժանեաց զամենասէ̃ հոգին նորա 'ի մարմնոյ ։ Ուստի 'ի ներկայութե̃ առաքելոց, և բազմաց այլոց աղնուաց հաւատացելոց, աւանդեաց զհոգին մարիամ, խնդութին, և ուրախութին հաւատացելոց ։ Առժամայն յարուցեալ . հանդերձ հոգւով, և մարմնովն փառաւորապէս վերացաւ 'ի յերկինս, և եդեալ 'ի բարձրագունեղի թագաւորականի գահոջ, պսակեցաւ յԱմենասրբոյ երրորդութե̃, թագուհի հրեշտակաց, պատրիարքաց, մարգարէից, առաքելոց, մարտիրոսաց, խոստովանողաց, կուսանաց, և ա̃մց սրբոց հնոյ, և նորոյ կտակարանի ։

## ԳԼՈՒԽ ՀԲ.

### Յաղագս խօսակցութե̃ ընդ Մարիամու ։

1. ՅԱյսմիկ գլխոջ խօսիմ ընդ քեզ, ո՜ ամենասրբուհի կոյս մարիամ ։ Կարի յոյժ փափագիմ մի անգամ տեսանել զքեզ ։ Կոչէի զիս երջանիկ, եթէ մի միայն անգամ տեսանիցէին զքեզ ։ Ոչ տեսի զքեզ 'ի տեսակի քում, բայց զպատուականութի քո, 'ի ս̃րոց գրոց, զքէն խօսողաց, 'ի ս̃րոյ մօրէ եկեղեցւոյ, զքեզ զարմանալաբար մեծացուցանողէ, 'ի ս̃րոց հարց, զքեզ մեծիւք գովեստանօք, հովասանօք, և գովաբանութե̃ք մեծարողաց, և 'ի ս̃րոց, մանաւորապէս զքեզ սիրողաց ։ Յայսցանէ մարդկանց ձևակերպեցի զտեսակ իմ̃, զքեզ ինձ պատուականագունեղ երևեցուցանօղ, ըստ այսմ իմում անկատարի, զքէն ձևակերպեցելոյ տեսակի, գտի այնքան սիրելի, զի ոչ կարիցեմ բանիւք արտաքերել ։ Քաղցրութի քո, զոր զգամ ըստ այսմ տկարի, և անկատարի տեսակի, այնքան մեծ է, զի ոչ կարիցեմ ծանուցանել, եթէ ոչ այնմիկ, որ ճաշակէ զայնպիսի քաղցրութի, զի 'ի ձեռն քաղցրութե̃, զոր ճաշակէ, ճանաչիցէ զքաղցրութի իմ ։ Այնպէս մեծ է քաղցրութի քո, զի կարիցեմ ասել, դու ես քաղցրութի իմ, դու բերկրութի իմ, դու կերակուր իմ, դու ըմպելի իմ, դու պարտէզ իմ, դու փարթամութի իմ, դու պատիւ իմ, դու գանձ իմ, դու զբօսան իմ, դու խնդութի իմ, դու ուրախութի իմ, դու ցնծութի իմ, դու ապաստան իմ, դու օգնութի իմ, դու մայր իմ,

իմ, դու դուստր իմ, դու քոյր իմ, դու մխիթարութիւն իմ, դու յոյս իմ. և դու ժառանգութիւն իմ ։

2. Այժմ ունիմ, զինչ փափագէի. վասն զի տկար, և անկատար տեսակն իմ, զոր ունիմ զքէն, ո՛ սրբուհի կոյս, ոչ դադարեցուցանէ զսիրտ իմ, և զփափագն իմ տեսանելոյ զքեզ 'ի տեսակոջ քում ։ Արդ եթէ 'ի յընկերակցութեան իմում ունիցէի զքեզ ամենասիրելի կոյսդ մարիամ, մխիթարութիւնդ, և խնդութիւնդ սրտի, և հոգւոյ իմոյ. ոչինչ այլում փափագիցէի բաց 'ի Յ՟ն Ք՟ն որդւոյ քումմէ, և սիրելագունեղէ ստեղծողէ, և Տ՟ր իմմէ ։ Աստի ճանաչեմ զերջանկութիւն Յօսէփու, սիրելագունեղի փեսայի քո, որ 'ի յայսմ պանդխտութեան 'ի յընկերակցութեան իւրում ունէր զքեզ կոյսդ մարիամ, և զՅ՟ն Ք՟ն զամենասիրելի որդին քո ։ Եթէ այսպէս քաղցր ես ինձ ո՛ մարիամ, յայսմիկ անկատարոջ տեսակի իմում. որքան եղիցի քաղցրութիւն քո, 'ի յատկի փափագելւոջ տեսակի քում. արդարև անհամեմատաբար քաղցրութիւն այն յաղթէ զայս ։ Քանզի զգամ զքաղցրութիւն քո, և ճանաչեմ ըստ տեսակի զքեզ ինձ երևեցուցանողի. բայց յատուկ տեսակն քո անհամամատաբար յաղթէ զայս տկար, և անկատար տեսակն իմ. և անհամեմատաբար լաւագոյն երևեցուցանէ ինձ զսիրելութիւն քո, քան զայս տկար, և անկատար տեսակն իմ. ուրեմն քաղցրութիւն քո զգացեալ յատկիւ տեսակաւ քով, անհամեմատաբար յաղթէ զքաղցրութիւն զգացեալն տկարաւ, և անկատարաւ տեսակաւ իմով ։ Թէպէտ տեսակն իցէ տկար, և անկատար. սակայն այնպէս ճանաչեմ զքաղցրութիւն քո, զի ճաշակելով զքեզ. քաղցիցիմ քեզ, և ըմպելով զքեզ, ծարաւիցիմ քեզ, և զանուշութիւն քո նախադասիցեմ ա՟մից այլոց օրինաւորաց քաղցրութեանց ։

3. Եթէ դու, ո՛ ամենասրբուհի կոյս մարիամ, որ ես սոսկ մարդ, և որոյ բնութիւն ոչ է միաւորեցեալ ա՟ծային բնութեան ենթակայականաւ, և անձնաւորաւ միաւորութեամբ, և որոյ շնորհն թարց համեմատութեան յաղթի 'ի շնորհէ բնութեան միաւորեցելոյ ա՟ծային բնութեան ենթակայականաւ, և անձնաւորաւ միաւորութեամբ, ես այնքան քաղցր. որքա՛ն պարտի գոլ քաղցր ամենասիրելի որդին քո Յ՟ս Ք՟ս փրկիչն մեր, որ է մարդ, և ա՟ծ, և որոյ մարդկային բնութիւն միաւորեցեալ է ա՟ծային բնութեան ենթակայականաւ, և անձնաւորաւ միաւորութեամբ. և որոյ գոյացական շնորհն է նոյն ինքն ա՟ծութիւն, և ներհեղեցեալ շնորհն անհամեմատաբար յաղթէ զշնորհն քո, որպէս այն, որ վայելէ բնութեան միաւորեցելոյ ա՟ծային բնութեան ենթակայականաւ, և անձնաւորաւ միաւորութեամբ ։ Դու բարեպէս ճանաչեցեր զքաղցրութիւն նորա, յորժամ յղացար զնա 'ի յարգանդի, և կրեցեր զնա մեծաւ խնդութեամբ զինն ամիս ։ Եւ յորժամ ծնար զնա ուրախութեամբ մեծաւ, և համբուրեցեր զնա, և ընկալար զնա 'ի վերայ բազկաց քոց, և մատուցեալ նմա զամենամաքուր ստինս քոյս, դիեցուցեր զնա, սնուցանելով զնա մաքրագունեղիւ կաթամբ քով, և դրկեալ համբուրեցեր զնա ։ Եւ յորժամ նկատեալ զշարժմունս ձեռաց նորա, և այլոց անդամոց լի շնորհօք հայէիր առ գերազանցութիւն, և առ գեղեցկութիւն երեսի, և ականց նորա ։ Եւ յորժամ լսէիր զքաղցրագունեղ, և զանուշագունեղ ձայնն նորա ։ Եւ յորժամ դու խօսէիր ընդ նմա 'ի մանկութեան իւրում, և ինքն խօսէր ընդ քեզ, և բանիւք լի շնորհօք խնդրէր 'ի քէն զկաթն, և դու հայելով առ բարեդոյթ դէմս նորա բարեգթածիւ տեսլեամբ, դնէիր 'ի բերան նորա զքաղցրագունեղս ստինս քոյս, և սնուցանելով զնա լինէիր մի ինչ ընդ նմա 'ի սիրոջ ։

4. Դու բարւք գ[illegible]ացեր, և

և զգացեալ ես, և ճաշակեցեր զքաղցրութին որդւոյն քո Յի. յորժամ դոլով մանուկ, ննջէր 'ի վերայ կուսականի անուշագունեղի լանջի քո: Ինքն բարէոք գիտաց, և ճաշակեաց զզարմանալի անուշութի քո, և դու բարէոք ճանաչեցեր զգերազանցագունեղ քաղցրութին: Դու էիր բերկրութին Յի, և Յս̃ էր բերկրութի քո: Դու սիրէիր զնա, և նա սիրէր զքեզ: Դու զա̃ծն քո եղեալն մանուկ, և երեխայ, դրկէիր. և ա̃ծն քո եղեալն երեխայ, ձգէր զիւր ինքն 'ի վերայ կուսականի անուշագունեղի պարանոցի քո: Բերկրութիք նորա էին դոյն ընդ մարիամու. բերկրութիք մարիամու էին դոյն ընդ Յի: Դու բարէոք գիտացեր զքաղցրութին Յի, յորժամ առաջի ականց քոց գնացիւք լի շնորհօք, շրջէր, և ընթանայր. ձայնի քո հնազանդէր, և կոչէր զքեզ տիրուհի մայր, ասելով, զինչ կամիս զի արարից տիրուհի մայր: Զինչ հրամայես ինձ, սիրելագունեղ մայր: Եւ երբ ասէր, կարի յոյժ սիրեմ զքեզ սիրելագունեղ մայր իմ, պատուեմ զքեզ, ամենարղձալի ծնող իմ. հնազանդիմ, և հպատակիմ քեզ, ամենասիրելի մայր, և պատրաստ եմ կատարել զհրամանս քո: Եւ հրամայեմ, և պատուիրեմ քեզ որպէս ա̃ծ քո. հրամայեա, և պատուիրեա դու ինձ որպէս մայր իմ: Որպէս դու ես ամենապատրաստ առ 'ի հնազանդիլ ինձ ա̃յ, և ստեղծողի քո. այսպէս և ես պատրաստ եմ առ 'ի հնազանդիլ, և հպատակիլ քեզ մօր, և ծնողի իմում: Ես եմ ճշմարիտ ա̃ծն քո, և դու ես ճշմարիտ մայրն իմ: Ես ստեղծի զքեզ, և ես ետու քեզ զամ̃ն բարիս քոյս, և դու համապատասխանեցեր ինձ, սնուցանելով զիս 'ի յարգանդ քում արեամբ քով, և կերակրելով զիս զծնանեալս կաթամբ քով:

5. Դու բարէոք գիտացեր զքաղցրութի նորա, յորժամ նստեալ 'ի նոյնում սեղանոջ մերձ առ քեզ ճաշակէր, և ըմպէր ընդ քեզ, և 'ի սեղանոջ քաղցրաբարոյաբար խօսակցէր ընդ քեզ: Եւ յորժամ 'ի տունընջեան, և 'ի գիշերի ընտանելագունեղաբար որպէս սիրելագունեղ որդի քաղցրագունեղի կենակցութբ կենցաղավարէր ընդ քեզ: Եւ յորժամ արեգակն արդարութե լուսաւորէր զքեզ, ուսուցանելով քեզ զխորագունեղս խորհուրդս. բացատրելով քեզ զխորհուրդն ամենասրբոյ երրորդութե, և զխորհուրդն ներմարմնութե, 'ի քեզ, և 'ի յամենասրբոջ արգանդի քում գործեցեալն. բերանով իւրով մարդացեալն ա̃ծ, հմտացուցանելով զքեզ զմիութե ա̃ծայնոյ բնութե, և զերրորդութե ա̃ծայնոց անձանց, և զկատարելութեց ա̃ծայնոց. և որքան առ խորհուրդն ներմարմնութե, տեղեկացուցանելով զքեզ զմիութե անձին, և զբազմութե բնութեց, ա̃ծայնոյ, և մարդկայնոյ, միաւորեցելոց 'ի միում անձին իւրում, ենթակայականաւ, և անձնաւորականաւ միաւորութբ. և բանալով քեզ զգործունէութի խորհրդոց, յինքենէ կացուցանելեաց, զշնորհ, և զանձուամբ շնորհի շարաբերողաց. և ցուցանելով քեզ զպատուականութե շնորհի, որով մարդն լինի որդեգրական որդի ա̃յ, և ժառանգ յաւիտենականի կենի, ունելով զիրաւունս 'ի յերանութին. և ծանուցանելով քեզ թէ ինքն էր դատաւորն ա̃մից. դատելոց զհամայնս որդիս ադամայ, զանօրէնս, և զանապաշխարս, պատժելոց յաւիտենականաւ պատժով, և մշտնջենաւորաւ չարչարանաւ. և թէ վասն փրկութե մարդկանց էր չարչարելի, և մեռանելոց, յերրորդում աւուր յառնելոց, և յետոյ յերկինս համբառնալոց, և նստելոց ընդ աջմէ հօր, և դարձեալ փառաւորապէս, և հանդերձ մեծօք փառօք գալոց առ 'ի դատել զընդհանուրս:

6. Դու բարւոք ճանաչեցեր զքաղցրութին նր, երբ բացամեկ_

նէր

ներ քեզ զեուԹի յաւիտենականի երանութե, և հմտացուցանէր զքեզ զանուշուԹե երանականի տեսութե : Ո՞վ կարէ մեկնել զքաղցրուԹին, զոր զգայիր, և ճաշակէիր, ունկնդնելով Յի սիրելագունեղի որդւոյ քո, քեզ զխորագունեղս խորհուրդս, և զայլս իւր բացադրողի, կարի յոյժ միտադրութբ ունկնդնողիդ, և զսիրտ քո նմա տուողիդ : Վասնզի խօսակցուԹին քո, անստեղծի իմաստութեան, որոյ կենցաղավարուԹին ոչ ունի զդադարուԹի, և որոյ կենակցուԹին ոչ ունի զձանձրուԹի, այլ զխնդուԹի, և զուրախուԹի ; էր անուշագունեղ, և առ այս խօսակցուԹի դու էիր ընդունակագունեղ · քանզի դու կարի յոյժ սիրէիր զՅս, և ունէիր զնա 'ի սրտի քում, և եղեալ էիր ընդ նմա մի ինչ 'ի սիրոյ, և 'ի սիրելուԹե : Դարձեալ դու էիր ըմբռնագունեղ առ 'ի յիմանալ զիմաստուԹին, և կարի յոյժ սիրէիր զիմաստուԹին : Ուստի երբ զքաղցրագունեղ բարբառն Յի Քի սիրելագունեղի որդւոյ քո զբացադրողն, և զբացամեկնողն քեզ զիմաստուԹին 'ի քէն կարի յոյժ սիրեցեալն, լսէիր, և լսելով իմանայիր զիմաստուԹին, քաղցրագունեղ բարբառն նր պատճառէր 'ի քեզ զմտադրագունեղ միտադրուԹի, և զուշադրագունեղ յօժարուԹի առ 'ի յունկնդնելոյ քո · ուստի ստացելով միտադրուԹբ, և ստացելով յօժարուԹբ ունկնդնելով Յի, զգայիր զքաղցրուԹին անուշագունեղի բարբառոյ քո : Եւ այսպէս ունկնդնելով քո, քեզ զխորագունեղս խորհուրդս ուսուցանողի, զգայիր, և ճաշակէիր զքաղցրուԹին : Ապատուրեմն դու բարւոք ճանաչեցեր զքաղցրուԹին որդւոյ քո անուշագունեղի, յորժամ բացադրէր և բանայր քեզ զխորագունեղս խորհուրդս :

7. Դու բարւոք ճանաչեցեր զքաղցրուԹի նորա, յորժամ ինքն ամենասիրելի որդին քո այսպէս խօսակցէր ընդ քեզ, ասելով · կերտելոց եմ զեկեղեցի, զսիրելագունեղ հարսն իմ : Ես սիրեմ զեկեղեցին իմ · և եկեղեցին իմ սիրէ զիս : 'Ի յեկեղեցւոջ իմում եղիցին բազումք ողջախոհագունեղք կուսանք, որք նուիրեսցեն ինձ զկուսուԹի իւրեանց, և որոց բազումքն վասն իմ զմահ ճաշակեսցեն, և անարատի կուսուԹե իւրեանց, և մարտիրոսուԹե պսակն յինէն ընկալցին : Եկեղեցին իմ, որ է հարսն իմ, է նաև խորհրդաւոր մարմին իմ, և ես խորհրդաւոր գլուխ նորա, ներհոսօղ 'ի նա զհոգևորս ծորանս : Գլխաւորագունեղն, և գեղեցկագունեղն, և շնորհալի խորհրդաւոր անդամն եկեղեցւոյ իմոյ, ինձ սիրելագունեղն. և ընդունելագունեղն, դու ես : Ես նախապահեցի զքեզ 'ի սկզբնականն մեղէ, և լցի զքեզ շնորհիւ, և իմաստուԹբ ; և ընտրեցի զքեզ ինձ 'ի մայր : Թագուհին այնոցիկ կուսանաց, որք նուիրելոցք են ինձ զկուսուԹի իւրեանց, դու ես : Դու նախքան Թէ յղանայցէիր 'ի կուսական արգանդոջ քում, նուիրեցեր ինձ զամենամաքրագունեղ, և զողջախոհագունեղ կուսուԹի քո · և ես ընկալայ զնա, և կամեցայ 'ի մաքրագունեղի կուսական արգանդոջ քում յղանիլ, և զինն ամիս յայնմիկ իբր 'ի յարքունական գահոջ, և աԹոռոջ իմում ներփակեցեալ մնալ : Եղեն զբօսանքն իմ յինն ամիս մնալն 'ի մաքրագունեղոջ, և 'ի յողջախոհագունեղոջ կուսական արգանդոջ քում : Եւ 'ի յողջախոհագունեղէ արգանդէ քումմէ, պահելով ամբողջ զկուսուԹի քո, 'ի քէն կարի յոյժ սիրեցեալն : Ես արարի, զի 'ի քեզ մայրուԹին, և կուսուԹին զուգակցիցեին : Դիեցի զկուսական կաԹն քո, և բերկրուԹիք իմք եղեն ծծեալ զոյն զայն :

8. Դու բարւոք գիտացեր զքաղցրուԹի նորա, յորժամ նա և այսպէս խօսակցէր ընդ քեզ, բացադրելով քեզ զգիրն երգոյ երգոց, և ասէր : Ձիոյն իմոյ 'ի կառսն փա-

րա-

առաւօտի նմանեցուցի զքեզ մերձաւոր իմ ։ Իբրև շուշան 'ի մէջ փշոց ․ այնպէս է քոյրն իմ 'ի մէջ դստերաց ։ Արի եկ մերձաւոր իմ գեղեցիկ իմ ։ Աղաւնի իմ , ցոյց զդէմս քո ․ և լսելի արա ինձ զբարբառ քո ։ Վասնզի ձայն քո քաղցր է , և դէմք քո գեղեցիկք ։ Ամենևին գեղեցիկ ես մերձաւոր իմ , և արատ ինչ ոչ գոյ 'ի քեզ ։ Եկ հարս իմ , եկ , և պսակեսցիս ։ Սրտացուցեր զմեզ քոյր իմ հարս , սրտացուցեր զմեզ միով ակամբ քով , և միով քառամանեկաւ պարանոցի քո ։ Զի գեղեցկացան ստինք քո քոյր իմ հարս ․ զի գեղեցկացան ստինք քո 'ի գինւոյ ․ և հոտ հանդերձից քոց քան զամ խունկս ։ Մեղր կաթեցուցանեն շրթունք քո , քոյր իմ հարսն , մեղր և կաթն 'ի ներքոյ լեզուի քո ․ և հոտ հանդերձից քոց ․ իբրև զհոտ կնդրկի ։ Պարտէզ փակեալ քոյր իմ հարս , պարտէզ փակեալ , և աղբիւր կնքեալ ։ Բաց ինձ քոյր իմ , մերձաւոր իմ , աղաւնի իմ , կատարեալ իմ ։ Գեղեցիկ ես մերձաւոր իմ իբրև զանուշահոտութի ․ գեղեցիկ ես իբրև զԵէմ ․ որպէս հիացումն կարգեալ ։ Մի է աղաւնի իմ , կատարեալ իմ ․ մի է մօր իւրոյ , ընտրեալ ծնողի իւրոյ ։ Տեսին զնա դստերք , և երանեցին զնա , թագուհիք , և հարճք գովեցին զնա , որ ելեալ ես , իբրև զառաւօտ , գեղեցիկ որպէս զլուսին , ընտիր իբրև զարեգակն , իբրև զհիացումն կարգեալ ։ լուեալ զհոգևոր բացադրումն առացելոց , զգայիր զանպատմելի քաղցրութին փրկչին ։ Արա ո՛ ամենաօրհնելի մայր , զի և ինձ քաղցրանայցէ անուշադունեղն Յս ։

## ԳԼՈՒԽ ՀԳ․

### Յաղագս հոգւոյն մերոյ ։

1․ Հոգին սբ է երրորդական ամենասուրբ երրորդութե , բղխեալ 'ի հօրէ , և 'ի յորդւոյ , համահաւասար հօր , և որդւոյ , ունեցող զնոյն ածութի հօր , և որդւոյ , և բոլորովիմբ զնոյնս կատարելութիւնս , որք են 'ի հօր , և 'ի յորդւոջ , գոլով մի ած ընդ հօր , և ընդ որդւոյ ։ Քանզի հայրն , և որդին , և հոգին սբ են մի ած ։ Հոգին սբ է ճշմարիտ ած , որ այսպէս համօզի ։ 'Ի ստեղծման աշխարհի համայնք երեք ածայինք անձինք համընթացան առ ստեղծումն աշխարհի հաւասարապէս ․ վասնզի հայրն արար զընդհանուրս որդւով , և հոգին սբ շրջէր 'ի վր ջուրց ․ իսկ հայրն , և որդին են ճշմարիտ Ած ։ Ապաուրեմն և հոգին սբ է ճշմարիտ ած ։ Երկրորդ համօզի ։ 'Ի կերտման մարդոյ ասաց ած ։ Արասցուք զմարդ ըստ պատկերի , և ըստ նմանութե մերում ։ Պատկերն , և նմանութին սա իմանի ածային էութին , որ ասի գոլ հօր , և որդւոյ , և հոգւոյն սրբոյ , և է մին ։ Ուրեմն հոգին սբ ունի զածային էութին , և զածութին ։ Ունեցողն զածութի է ած ։ Ապաուրեմն հոգին սբ է ած ։ Երրորդ համօզի ։ Գործն ներմարմնութե է գործ այ ․ քանզի է մեծագոյն գործ քան զստեղծումն ․ վասնզի է մեծագոյն գործ առնել , զի երկու բնութիւնք , ստեղծեցեալն , և անստեղծն , ենթակայանայցեն 'ի միում ածայնոյ անձին , քան զստեղծելն զաշխարհս ․ իսկ ներմարմնութին է գործ հոգւոյն սբոյ ․ վասնզի հոգին սբ եկն 'ի վերայ մարիամու ․ Ապաուրեմն հոգին սբ է ած ։

2․ Զոր֊

2. Չորրորդ համօրէն ։ Ազատութիւն մեր , փրկութիւն մեր , և ներհեղումն սրբացուցիչ շնորհի է գործ ա̅յ . քանզի ա̅ծ է փրկիչ մեր . իսկ ազատումն մեր , փրկութիւն մեր , և ներհեղումն սրբացուցիչ շնորհի է գործ հոգւոյն սրբոյ . քանզի անուամբ հօր , և որդւոյ , և հոգւոյն ս̅բոյ ազատիմք , փրկիմք , և ընդունիմք զսրբացուցիչ շնորհն ։ Ապաքէն հոգին ս̅բ է ա̅ծ ։ Հինգերորդ համօրէն ։ Հեղինակն բաժանմանց շնորհի է ա̅ծ , վասնզի ա̅ծ է , որ գործէ զա̅մ ինչ 'ի յա̅մսում 'ի յամենեսեան . իսկ հոգին ս̅բ է հեղինակն բաժանմանց շնորհի . քանզի հոգւով ս̅բով տրի ումեմն բան իմաստութեան , այլում բան գիտութեան , միւսումն հաւատք , այլում շնորհ բժշկութեանց , այլում յաջողութիւն զօրութեանց , այլում մարգարէութիւն , այլում ընտրութիւն հոգւոց , այլում ազգք լեզուաց , այլում թարգմանութիւն լեզուաց . զայս ա̅մ յաջողէ մի , և նոյն հոգին , և բաժանէ իւրաքանչիւրում ո̅պ և կամի . ապաքէն հոգին ս̅բ է ա̅ծ ։ Վեցերորդ համօրէն ։ 'Ի յա̅ծ են երկու արարողութիւնք առ ներքս , մինն իմացութեամբ , և միւսն կամօք ։ Արարողութեամբ 'ի ձեռն իմացութեան արտադրի բանն , որ երևեցուցանէ զա̅ծային էութիւն , և զա̅մն ա̅ծայինս , և 'ի յա̅ծայնում էութեան զա̅մն կարելիս ։ Ուրեմն եզրն արտադրեցեալն իմացութեամբ է անհուն ։ Ուրեմն 'ի յարտադրութեան իւրեան ընդունի 'ի յարտադրողէ զնոյն ա̅ծութիւն արտադրողի ։ Ապաքէն է ա̅ծ ։ Եւ այսպէս որդին է ա̅ծ ։ Արարողութեամբ 'ի ձեռն կամին արտադրի հոգին ս̅բ իբր եզր արտադրեցեալ , որով ա̅ծային բարութիւն այնպէս սիրիցի , որպէս արդիւնաւորի ։ Ուրեմն նաև եզրն արտադրեցեալն կամօք է անհուն ։ Ուրեմն նաև եզրս այս 'ի յարտադրութեան իւրեան ընդունի զնոյն ա̅ծութիւն ։ Ուրեմն է ա̅ծ ։ Ապաքէն հոգին ս̅բ է ա̅ծ ։

3. Հոգին ս̅բ բղխէ 'ի հօրէ , և 'ի յորդւոյ ։ Որ այսպէս ցուցանի ։ 'Ի յերրորդութեան վերահայեցեալ լինի կարգ ա̅ծայնոց անձանց , այսինքն , հօր , և որդւոյ , և հոգւոյն ս̅բոյ ։ Հայրն է առաջին անձն , որդին երկրորդն , և հոգին ս̅բ երրորդն ։ Ուրեմն հայրն , որ է առաջին ա̅ծային անձն , ոչ է յայլմէ անձնէ ։ Եւ այսպէս հայրն ոչ է յայլմէ . քանզի եթէ լինէր յայլմէ , ոչ լինէր առաջին անձն ։ Որդին է երկրորդ անձն . ուրեմն է յառաջնոյ անձնէ , որոյ բանիւ ասի երկրորդ ։ Եւ այսպէս է յայլմէ , այսինքն , 'ի հօրէ ծննդեամբ , առօղ 'ի նմանէ զբոլոր ա̅ծութիւն , և զա̅մ , որ է 'ի հօր , բաց 'ի հայրութենէ ։ Հոգին ս̅բ է երրորդ անձն . ուրեմն է 'ի յառաջնոյ , և 'ի յերկրորդէ , բանիւ որոց ասի երրորդ , զի պահիցի կարգն ։ Եւ այսպէս է յայլոց , այսինքն , 'ի հօրէ , և 'ի յորդւոյ ներգործականաւ փչմամբ , առօղ 'ի հօրէ , և 'ի յորդւոյ զբոլոր ա̅ծութիւն , և զա̅մ , որ է 'ի հօր , և 'ի յորդւոջ , բաց 'ի հայրութենէ , և յորդիութենէ ։ Ապաքէն հոգին ս̅բ բղխէ ոչ միայն 'ի հօրէ , այլ նաև 'ի յորդւոյ ։ Եւ այսպէս հայրն ոչ 'ի յայլմէ , որդին 'ի հօրէ ծննդեամբ , և հոգին ս̅բ 'ի հօրէ , և 'ի յորդւոյ փչմամբ ։ Երկրորդ ցուցանի ։ Հոգին ս̅բ է հոգի հօր , և է հոգի որդւոյ . քանզի որդին ետ զնա առաքելոց , և խոստացաւ առաքել զնա առ նոսա . ուրեմն հոգին ս̅բ բղխէ ոչ միայն 'ի հօրէ , այլ նաև 'ի յորդւոյ ։ Քանզի յայնմանէ բղխէ , որոյ է , և յորմէ առնու զգոլ . այլ ոչ միայն է հօր , այլ նաև է որդւոյն , և նաև յորդւոյ առնու զգոլ ։ Ապաքէն բղխէ ոչ միայն 'ի հօրէ . այլ նաև 'ի յորդւոյ ։

4. Երրորդ ցուցանի ։ 'Ի յա̅ծայինս ոչ լինի ընդունեցեալ իրական զանազանութիւն , եթէ ոչ բանիւ իրականի առընչականի հակադրութեան ։ Աստի հայրն , և որդին իրականապէս զանազանին վասն իրականի առընչականի հակադրութեան .

թե· այսինքն , քանզի հայրն է ծնօղ , և որդին է ծնեալ , 'ի մէջ որոց , այսինքն , 'ի մէջ ծնողի , և ծնեցելոյ , առի իրական առընչական հակադրութի · վասնզի ոչ կարէ նոյնն գոլ ծնօղ , և ծնեալ · այլ ծնօղն ծնի զայլ : Արդ ուրեմն եթէ հոգին Սբ ոչ բղխիցէր 'ի յորդւոյ , այլ միայն 'ի հօրէ , արդարև զանազանիցի 'ի հօրէ իրականապէս վասն իրականի առընչականի հակադրութե փչողի , և փչեցելոյ · սակայն ոչ զանազանիցի իրականապէս 'ի յորդւոյ · քանզի ոչ ունիցի առ որդին իրական առընչական հակադրութի · և համահետևապէս ծնեալն , և փչեալն ոչ իցէին երկու անձինք , այլ մին անձն զանազանիւք կերպօք ելանօղ 'ի հօրէ , մերթ որպէս եղր ծնեալ , և մերթ որպէս եղր փչեցեալ , և համահետևապէս բառնիցի երրորդութի ն , և մնայցէր միայն երկութի ն · որ է ընդդէմ հաւատոյ · քանզի հաւատամք զերրորդութի : Իսկ եթէ դնիցեմք , զհոգին Սբ բղխել նաև 'ի յորդւոյ , զանազանեսցի իրականապէս 'ի յորդւոյ · վասնզի ունիցի առ նա զիրական առընչական հակադրութի · և այսպէս փրկի երրորդութի ն , զոր հաւատամք : Ուստի վասն խորհրդոյ ամենասրբոյ երրորդութե պարտիմք ասել , զհոգին Սբ բղխել , ոչ միայն 'ի հօրէ , այլ նաև 'ի յորդւոյ : Հայրն , և որդին 'ի կարգի առ 'ի հոգին Սբ , զոր փչեն , ոչ հակադրին · վասնզի ոչ վերահայցին առ իրեարս առընչաբար , բայց առ հոգին Սբ վերահայցին առընչաբար : Ուստի հակադրին նմա , և 'ի նմանէ զանազանին : Ուստի 'ի կարգի առ հոգին Սբ ոչ առնեցեալք լինին ոպ̅ երկու սկզբունք իրականապէս զանազանեցեալք , այլ որպէս մին սկիզբն փչօղ :

Ե· Հոգին Սբ տուեալ է մեզ :

Ընդունիմք զխորհուրդն դրոշմի , զի զօրացուցանիցէ զմեզ հոգին ճշմարտութեան : Հոգին սուրբ բնակելով 'ի մեզ , զհոգին մեր չքնաղացուցանէ սրբացուցչիւ շնորհիւ : Լուսաւորէ զմիտս մեր , ուսուցանէ մեզ զճանապարհ , և զշաւիղն փրկութե , և ածէ զմեզ 'ի յերկինս · զկամս մեր շարժէ , զսէրն բորբոքէ , և վառէ : Զհաւատն զօրացուցանէ , զյոյսն կանգնեցուցանէ , զսէրն ներհեղու , և աճեցուցանէ · իմացութե տայ զլոյս , և զխոհեմութի · կամին զարդարութի , զուղղութի , և զբարեպաշտութի · ցասմնականի զյարիութի , զհամբերութի , զերկայնմտութի , զքաջալերութի , և զյաղթութի · և ցանկականի զբարեխառնութի , զպահեցողութի , զզգաստութի , զժուժկալութի , զողջախոհութի , զմաքրութի , և զյաղթանակ ընդդէմ մարմնոյ : Հոգին Սբ բնակելով 'ի մեզ , առնէ , զի մեք անդոսնիցեմք զիրս աշխարհայինս , և փափագիցեմք իրաց երկնայնոց , անփոյթ առնիցեմք զժամանակաւորս , սիրիցեմք զյաւիտենականս · թողուցումք զանցաւորս , և հաւաչիցեմք մնացականաց · ուրանայցեմք զանձինս մեր , և հետևիցեմք Յի Քի դքսի մերում · անարգիցեմք զվավաշոտութի , և սիրիցեմք զհոգևորութի : Հոգին Սբ բնակելով 'ի մեզ ցրուէ զունայնս խորհուրդս , ներաշնչէ զօգտակարս խոկմունս · արմատախլէ զհպարտութի ն , և տնկէ 'ի սրտի մերում զխոնարհութի · սանձէ զատելութի , և ընդստուցանէ զսէրն · բացահերքէ զանողորմութի ն , և շնորհէ զողորմածութի ն : Սանձահարէ զբարկութի ն , և տայ զհեզութի · բառնայ զխստաբարոյութի , և շնորհէ զքաղցրաբարոյութիւն , և զբարեգթութի : Մահացուցանէ զերկրայինս անդամս մեր , և զմարմինս մեր , և կեցուցանէ զհոգին · սպանանէ զչար ցանկութի մեր , և զարթուցանէ զբարի բաղձանս · յաղթահարէ զբղջախոհութի ն , և արտադրէ զմաքրութի , զամօթխածութի , և զպարկեշտութի :

Զ· Հոգիս այս տայ մեզ զսէր նորոգ , լի ողորմածութե դէպ 'ի մեզ ·

մեզ, և դէպ 'ի յընկեր մեր, և շնորհէ մեզ զսիրտ զղջացեալ, և խոնարհեցուցեալ, և բառնայ 'ի մէնջ զսիրտ քարեղէն, և խստացեալ, և նորոգէ 'ի սրտի մերում զոգի խոնարհեցուցման, և զղջման 'ի վերայ մեղաց մերոց։ Հոգիս այս եդեալ 'ի սրտի մերում, առնէ, զի շրջեցիմք 'ի պատուիրանս Աստուծոյ, և պահիցեմք զնոսա, և գործիցեմք զիրաւունս տեառն։ Հոգիս այս հեղեալ 'ի վերայ մեր, յայտնէ մեզ զերեսս տեառն, ուսուցանելով մեզ ճանաչել զկամս նորա։ Հոգիս այս հեղեալ 'ի վերայ մեր ծերոց, և երիտասարդաց, ծառայից, և աղախնեաց տեառն, լուսաւորէ զմիտս մեր, և բանայ զբերան մեր առ 'ի խօսել զմեծամեծս Աստուծոյ, պատմել զխորագոյնս իւր, և արտաբերել զբանս, և զբառս փրկաւէտս։ Այս է հոգին, յորում զմեզ Քրիստոս մկրտէ, տալով մեզ զհոգի սրբացուցման, և սիրոյ, և զոգի համարձակ սիրով 'ի նա հաւատացողաց։ Այս է հոգին, որ է հոգի ճշմարտութեան, զոր աշխարհս ոչ տեսանէ, և ոչ գիտէ զնա, սակայն է հոգի, զոր մեք 'ի Քրիստոս հաւատացօղքս, պարտիմք ճանաչել, և պարտիմք ջանալ ամենայն զօրութեամբ, զի մնասցէ առ մեզ, և լիցէ 'ի մեզ։ Այս է մխիթարիչն առաքեցեալն մեզ 'ի հօրէ, և 'ի յորդւոյ, տանօղ զվկայութիւն զՔրիստոսէ։ Արդուրեմն մխիթարիչն, առաքեցեալն 'ի Քրիստոսէ առ մեզ, որ յանդիմանէ զաշխարհս վասն մեղաց, վասն արդարութեան, և վասն դատաստանի, որ առնէ զմեղս, որ պահանջէ զաւետարանական արդարութիւն, որ առաւելանայցէ առաւել քան զդպրացն, և փարիսեցւոցն, որ դատապարտէ զդատաստանն, և զթիւր դատողութիւն ըստ երեսպաշտութեան, և որ խնդրէ զարդար, և զուղիղ դատողութիւն։

7. Հոգին սուրբ բնակօղն 'ի մեզ, մինչ շրջիմք 'ի յայսմիկ պանդխտութեան, է 'ի բերանոջ մերում, և ուսուցանէ մեզ, թէ զինչ պարտիցիմք խօսել։ Հոգիս այս տայ մեզ զիմացութիւն, և խրատէ զմեզ 'ի ճանապարհի, յորում շրջիմք, և ընթանամք, հաստատելով 'ի վերայ մեր զաչս իւրս, և ուսուցանելով մեզ զհամայնս զվարդապետութիւնս տեառն, և խօսի 'ի մեզ, բանալով զբերան մեր առ 'ի խօսել զայնոսիկ իրս, որք են աւետելիք, և արտաբերելիք, և զեկուցանելով մեզ, թէ զինչ պարտիցիմք մեք ասել, և տալով մեզ զիմաստութիւն, որում ոչ կարասցեն ընդդիմանալ, և ներհակախօսել համայնք հակառակորդք մերք, և առնելով զմեզ ուսումնասէրս Աստուծոյ, ունկնդրողս, և ուսանօղս 'ի հօրէ, յեցօղս Քրիստոսի, և զպատուիրանս նորա պահօղս։ Հոգիս այս է մխիթարիչն այն, որ 'ի յառաջանէ Քրիստոսի խոստացեալ է մեզ 'ի հօրէ, զի մնասցէ ընդ մեզ 'ի յաւիտեան. և է հոգի ճշմարտութեան, ուսուցանօղ մեզ զամենայն ճշմարտութիւն, և խօսօղ մեզ զպատուիրանս Քրիստոսի, աւետօղ զայնոսիկ իրս, որք լինելոցք են։ Հոգիս այս տայ զվկայութիւն հոգւոյ մերում. թէ եմք որդիք Աստուծոյ։ Իսկ եթէ որդիք, և ժառանգք. արդարև ժառանգք Աստուծոյ, և ժառանգակիցք Քրիստոսի։ Սա է հոգին, որով հաւատացօղքս 'ի Քրիստոս հաստատեցեալք եմք, և որով օծեցեալք, և նշանաւորեցեալք եմք 'ի յԱստուծոյ, և որ է առհաւատչեայ 'ի սիրտս մերս։ Ուստի է հոգին խոստման, որով հաւատացօղքս նշանաւորեցեալք եմք։ Արդուրեմն մեք ընդունեցաք զօծումն 'ի Քրիստոսէ։ Ուստի ջանալ պարտիմք, զի մնասցէ 'ի մեզ։ Եւ ոչ ունիմք զհարկաւորութիւն, զի ոմն օտարական ուսուցանիցէ մեզ. այլ որպէս օծումն նորա ուսուցանէ մեզ, այնպէս շրջել պարտիմք։ Եւ զայն, զոր օծումն ուսուցանէ մեզ, է ճշմարիտ, և ոչ ունի զըստախօսութիւն։ Օծումն Քրիստոսի ուսուցանէ 'ի ձեռն ժողովոց, հոգւով սրբով գումարեցելոց, և 'ի ձեռն սահմանադրութեանց սրբոյ եկեղեցւոյ, որ է սիւն, և հաստատութիւն ճշմարտութեան։

8. Հոգիս այս է այն, որ ազդէ, շարժէ, և ուսուցանէ։ Վասնզի

տայ է զխիղճութիւն, շարժէ զկամս, և ուսուցանէ բանի ։ Հոգիս այս է՝ է քաղցր, և անուշ, ոչ հաճի, զի նաև փոքրագունեղ ինձ յարդ վերանաւորիցի ներ սրտի, զոր առացեալ է վասն բնակութեան, այլ առժամայն նրբագունեղեւ հրով շրջահայեցման, և զ ըզման այրէ ։ Հոգիս այս համահաւասարն հօր, և որդւոյ է Ած, իբրև զհուր, և իբրև զաղաւնի յուցաւ, և երևեցաւ, զի իմանայցեմք, թէ զհամայնս զորս լնու, և պարզամտութբ աղաւնւոյ հեզս, և հրով նախանձաւորութե առնիցէ ջերմեռանդս ։ և զի իմանայցեմք, թէ Ած սիրտ, որ շօշափի 'ի շնորհէ նորա, և քաղցրաբարոյութբ հեզութե հանդարտ, և նախանձաւորութբ արդարութե լինիցի բորբոքեցեալ ։ Հոգիս այս տրի 'ի յերկրի, զի սիրիցի ընկերն. տրի 'ի յերկնէ, զի սիրիցի Ած ։ Որպէս ուրեմն մի է սէրն, և երկու պատուիրանք. այսպէս մի հոգի, և երկու պարգևք ։ Հոգիս այս մերձ ընդ մերձ հմտացուցանէ զնա, 'ի յոր բնակի ։ Քանզի ոչինչ յամեցումն է 'ի յուսման, ուր վարդապետն է հոգին սբ ։ Հոգիս այս երևեցաւ նաև 'ի կերպարանի լեզուաց հրեղինաց, զի գիտիցեմք, թէ զհամանս. զորս լնու, առնիցէ 'ի միասին բորբոքեցեալս, և լաւախօսս ։ Սա լնլով զմանուկն դաւիթ քնարահարն, արար սաղմոսասաց. լնլով զմանուկն դանիէլ պահեցօղն, արար դատաւոր ծերոց. լնլով զամովս հովիւն եղնարած, արար մարգարէ. լնլով զձկնորսն, արար իշխան առաքելոց. լնլով զհալածիչն, արար վարդապետ հեթանոսաց. և լնլով զմաքսաւորն, արար աւետարանիչ ։ Ուրեմն զհոգիս այս խնդրեսցուք ամենամեծիւ ջանիւ, զի ընդունիցիմք զպարգևս նորա ։

# ԳԼՈՒԽ ։ ՀԴ.

## Յաղագս պարգևաց հոգւոյն սրբոյ ։

1. Զինքենէ հոգւոյն սրբոյ խօսեցաք, այժմ ընձեռեսցուք զպարգևաց նորա. Հոգիս այս, զորմէ է բան, ոչ միայն սրբացուցանէ շնորհիւ զմարդն 'ի յոր բնակի, և զարդարէ զնա առաքինութբք. այլ նաև զօրացուցանէ զնա մասնաւորօք պարգևօք, ընդդէմ մոլորութե, ամբարշտութե, փոքրոգութե, և մարմնասիրութե. քանզի չորիւք պարգևօք զօրացուցանէ զիմացութիւն, զի մի անկանիցի 'ի մոլորութի, և զի մի մոլորեցուցանիցի ։ Միով պարգևով քաջալերէ զկամս, զի կարի բացահերքիցէ յինքենէ զամբարշտութին ։ Միով պարգևով զօրացուցանէ զցասմնականն, զի քաջաբար պատերազմելով, ստանայցէ զդերահաչակ յաղթութին ընդդէմ թշնամւոյ մարդկայնոյ սեռի ։ Եւ միով պարգևաւ ամրացուցանէ զցանկականն, զի բոլորովիմբ սանձիցէ զմարմինն, և սանձահարիցէ զմարմնաւորս կիրս ։ Պարգևք հոգւոյն սբոյ են այսոքիկ, որք հետևին. իմաստութի, իմացումն, գիտութի, հանճար, Ածպաշտութի, զօրութի, և երկիւղ տեառն ։ Քանզի այսպէս խօսի եսայի զպարգևաց հոգւոյն սրբոյ, որք թուով են եօթն ։ Եւ բղխեսցի գաւազան յարմատոյն յեսսեայ. և ելցէ ծաղիկ յարմատոյ անտի ։ Եւ հանգիցէ 'ի վերայ նր հոգի այ. հոգի իմաստութե, և հանճարոյ. հոգի խորհրդոյ, և զօրութե. հոգի գիտութե, և Ածպաշտութե ։ Եւ լցցէ զնա հոգի երկիւղի այ ։ գլ. ԺԱ. թիւ. Ա.

2. Իմաստութիւն, իմացումն, գիտութիւն, և հանճարն, վերահային

հային առ ազնուագունեղ կարողութիւն հոգւոյ մերոյ, այսինքն, առ իմացողական կարողութիւն, որ ասի միտ, և կոչի իմացութի։ Կարողութիւս այս է ազնուագունեղ, և չարն նորա, որ է մոլորութիւն, է վատթարագունեղ։ Իմացողական կարողութիւն է ազնուագունեղ․ վասնզի այսու գերազանցեմք զայլս ստեղծուածս, և տիրեմք նոցա, և նմանիմք այ̃, և հրեշտակաց։ Չարն այսր կարողութե է վատթարագունեղ․ քանզի մոլորութիւն 'ի հաւատոջ, 'ի կրօնի, և 'ի յառաքինութիւս է վատթարագունեղ։ Վասն այսորիկ հոգին սբ̃ տայ մեզ մերոյ զչորս անուանեցեալս գերազանցագունեղս պարգևս, զի հզօրաբար զօրացուցանիցեն զիմացութիւն մեր ընդդէմ ամի̃ մոլորութե 'ի յիրս հաւատալիս, 'ի կրօնի, 'ի յառաքինութիւս, և 'ի բարեգործութիւս։ Ածպաշտութիւն վերահայի առ կամս̃ մեր, առ միւս ազնուագունեղ կարողութի հոգւոյ մերոյ։ Եւ այս կարողութիւն մեր է գերազանցագունեղ․ վասնզի այսու եմք տեարք ներգործութեց մերոց, և նմանիմք այ̃, և հրեշտակաց։ Պարգևն ածպաշտութե զօրացուցանէ զկամս̃ մեր ընդդէմ անիրաւութե, ամբարշտութե, և անողորմութե։ Պարգևն զօրութեան վերահայի առ ցասմնականն, առ ստորնագունեղ կարողութի մեր, զօրացուցանող զնա, և քաջալերող զնա առ 'ի տանիլ արիաբար զհամայնս ձախորդութիւս։ Վերջապէս պարգևն երկիւղի տեառն վերահայի առ ցանկականն, նմանապէս առ ստորնագունեղ կարողութիւն մեր, զօրացուցանող զնա առ 'ի յընդդիմանալ արիաբար հրապուրանաց մարմնոյ։

3․ Պարգևն իմացութե առնէ, զի հաստատագոյն յենուցումք սկզբանց հաւատոյ, և իրաց յայ̃ մեզ յայտնեցելոց, և զի լիցեմք պատրաստագունեղք առ 'ի կորուսանել զհամայնս, քան թէ կորուսանել զհաւատն։ Պարգևս այս նաև լուսաւորէ զմիտն մեր, զի գերափայլագոյն իմանայցեմք զհաւատալիս, և զիրս յայ̃ մեզ յայտնեցեալս, և զմասունս հաւատոյ։ Ունեցողքն զպարգևս այս յօժարագոյն, և բերկութ̃բ նկատեն, և խոկան զիրս հաւատալիս, և զմասունս հաւատոյ։ Պարգևն իմաստութե լուսաւորէ, և վերացուցանէ զմիտն մեր, զի գերափայլագոյն, և բերկրութ̃բ խոկայցեմք զիրս ածայինս ըստ ածայնոց բանից, խոկալով զածայինս զարմանալիս կատարելութիւս, զորօրինակ, ածային իմաստութիւն, բարութիւն, կարողութիւն, ճշմարտութիւն, անփոփոխելութիւն, յաւիտենականութիւն, գեղեցկութիւն, արդարութիւն, ողորմածութիւն, ճշմարտախօսութիւն, ինքնակալութիւն, վերնագունեղ տէրութիւն, անհնութիւն, անչափութիւն, անըմբռնելութիւն, երջանկութիւն, սիրելութիւն, անպարագրելի մեծվայելչութիւն, զանհուն մեծութին, և զայլս զմիտն մեր գերազանցօղս ածայինս կատարելութիւս․ և առնէ, զի 'ի խոկմանէ ածայնոց կատարելութեց դայցեմք առ իղձս, և առ սէր, ջանալով, զի սիրտն մեր բորբոքիցի, վառիցի 'ի սիրոջ․ և 'ի սիրելութե այ̃, և ածայնոց կատարելութեց։ Արդ․ ուրեմն պարգևն իմաստութե վերացուցանէ զմիտն մեր առ 'ի խոկալ զածայինս, և 'ի խոկմանէ ածայնոց ըստ ածայնոց բանից, այսինքն, 'ի խոկմանէ ածայնոց կատարելութեց ընդոստուցանէ 'ի կամսն զիղձ, սիրելութի, և սէր դէպ 'ի յածայինս։ Ունեցօղք զպարգևս այս յօժարագոյն, և բերկրութ̃բ խոկան զածայինս կատարելութիւս, և 'ի խոկմանէ դան առ սիրելութի, և սէր այ̃։

4․ Պարգևն գիտութե լուսաւորէ, և վերացուցանէ զմիտն մեր, զի լուսափայլագոյն, և բերկրելագոյն խոկայցեմք զածայինս ըստ բանից ստեղծեցելոց, խոկալով զզարմանալիս հոգևորս իրս, զոր-

օրինակ, զպատուականութիւն, և զանդնութիւն շնորհի, զգործունէութիւն, և զօգտակարութիւն խորհրդոց, զյղացումն, զծնունդն, զքարոզութիւն, զվարդապետութիւն, զքանչելիս, զչարչարանն, զմահն, զթաղումն, զյարութիւն, զհամբարձումն, զնստումն ընդ աջմէ հօր. և զերկրորդ փառաւոր գալուստն քի 'ի յաշխարհ առ 'ի դատել զկենդանիս, և զմեռեալս, զմանաւանդականութիւս, և զնշանս սրբոյ եկեղեցւոյ, սիրելագունեղի հարսին քի, զպատուականագունեղութիւն հոգւոյ մերոյ, զբարերարութիւս այ ընդունեցեալս, զփրկութի հոգւոյ մերոյ, զվերջինս մարդոյ, և զյետինս նորա, այսինքն, զմահն, զյարութիւն, զմահաւոր դատաստանն, և զվերջինն, զտանջանս քաւարանի, և դժոխոց և զերկնութիւս արքայութե, և զայնպիսիս: Ունեցողքն զպարգեւն գիտութե յօժարագոյն, և բերկրելագոյն խոկան զասացեալս, և զիրս նմանս: Պարգեւն խորհրդոյ լուսաւորէ, և վերացուցանէ զմիտս մեր, զի յայտնագոյն, և բերկրելագոյն նկատեսցեմք զառնելիս, և զգործելիս, այսինքն, զառաքինութիւս առ փրկութի մեր հարկաւորս, զներգործութիւս ասացելոց առաքինութեց, զպատուիրանս այ, և եկեղեցւոյ, զներգործութիւս հոգեւորի, և մարմնաւորի ողորմութե, զբարեգործութիւս, զբարեպաշտօն կիրառութիւս, և զիրս նմանս: Ունեցողքն զպարգեւն խորհրդոյ յօժարագոյն, և բերկրելագոյն օր ըստ օրէ, և յարաժամ խոկան, մտածեն զասացեալս, և զիրս նմանս:

5. Պարգեւն այծպաշտութե զօրացուցանէ զկամս մեր առ 'ի սիրել զարդարութիւն, զուղղութիւն, զկրօնն, զբարեպաշտութիւն, զհնազանդութիւն, և զողորմածութիւն. և հզօրաբար շարժէ զնա առ ներգործութի ասացելոց առաքինութեց, այսինքն, շարժէ զնա առ 'ի հատուցանել խնրաքանչիւրոյ, որ է իւրն. այ զհաւատ, զյոյս, և զսէր, ծնողաց զպատիւ, և այլոց, զայն, որ նոցա պատկանի. հրաւիրէ առ 'ի գործել զայդ, որ է ըստ հրամանի բանի, և օրինի այ. ընդունուցանէ առ 'ի յերկրպագանել, և առ 'ի յաղօթել, բորբոքէ առ բարեպաշտօս կրթութիւս, գէպ 'ի յայծ, գէպ 'ի հայրենիսն, և գէպ 'ի ծնողս. շարժէ առ 'ի հնազանդիլ այ, և մեծաւորաց, և առ 'ի պահել զպատուիրանս. ստիպէ առ հոգեւորս և մարմնաւորս գործս ողորմութե, այսինքն, առ 'ի կերակրել զքաղցեալս, առ 'ի յարբուցանել զծարաւեալս, առ 'ի զգեցուցանել զմերկս, առ 'ի ժողովել զօտարս, առ 'ի յայցելանել, բանտարկելոց, և առ 'ի տեսանել զհիւանդս, առ 'ի յազատել զպարտաւորս 'ի բանտի եղեալս, և առ 'ի թաղել զմեռեալս. դարձեալ առ 'ի դարձուցանել զմեղաւորս, առ 'ի յուսուցանել, և խրատել զտգէտս, առ 'ի վերածել 'ի ճանապարհն փրկութե զմոլորեալն, առ 'ի յանդորրեցուցանել զերկմիտն, առ 'ի մխիթարել զտրտմեալն, առ 'ի տանիլ զպակասաւորն, առ 'ի թողուլ զպակասութիս, և առ 'ի յաղօթել վասն կենդանեաց, և վասն մեռելոց: Ուստի ունեցողքն զպարգեւն այծպաշտութե յօժարագոյն, և բերկրելաբար 'ի կիր արկանեն զներգործութիս արդարութե, հետեւին հրամանի բանի, աղօթեն, երկրպագեն, հետեւին բարեգործութեց, հնազանդին, և հպատակին, և գործեն զներգործութիւնս ողորմութե:

6. Պարգեւն զօրութե քաջալերէ զցասմնականն, առ 'ի պատերազմիլ, և մարտնչիլ արիաբար, և հզօրաբար ընդդէմ թշնամեաց հոգւոյ մերոյ, այնպէս զի ստանայցեմք զյաղթութի, և առբերիցեմք գյաղթանակն ընդդէմ թշնամեաց. առ 'ի կրել, և առ 'ի տանիլ համբերութբ, և թարց վրդովման զամս ձախորդութիս. առ 'ի յանաղթելաբար ենթարկիլ չարչարանաց, նաև մինչև 'ի մահ, և առ մար-

տի-

տիրասութիւն վասն հաւատոյ, և վասն առաքինութեանց, և վասն սրբոյ, և ճշմարիտ կրօնի։ Ուստի ունեցողքն զպարգևն զօրութե, հզօրաբար, և քաջաբար պատերազմին, յաղթեն, յաղթահարեն, և առ բերեն զյաղթանակն յաղթութե, համբերութբ տանին զհակառակորդութիս, և զտառապանս. եթէ իցեն տանջիչք, քաջալերիւ սրտիւ կրեն զտանջանս, և զչարչարանս, և եթէ հանդիպիցի, յօժարութբ յանձն առնուն զմահն վն հաւատոյ, և կրօնի, և ընդունին զպսակն մարտիրոսութե։ Պարգևն երկիւղի այ զօրացուցանէ զցանկականն ընդդէմ հրապուրանաց մարմնոյ, առ 'ի սանձել զերկրայինս անդամս, առ 'ի յարգելուլ, և առ 'ի սանձահարել զմարմնայինս կիրս, առ 'ի յաղթել զվավաշոտութին ծոմապահօք, պահեցողութբք, և այլովք խստաբարոյիւք կրթութբք, զմարմինն ճնշողօք, և առ 'ի սանձել զզգայութիս, և ենթարկել զնոսա բանի, այնպէս զի բարեխառնութբ, ողջախոհութբ, և զգաստութբ կեայցեմք, թարց մոլութեց անբարեխառնութե, որկրամոլութե, շռայլութե, արբեցողութե, և բղջախոհութե։ Ունեցողքն զպարգևն երկիւղի այ, յօժարագոյն, և բերկրելագոյն սանձահարեն զմարմինն, յաղթեն զվավաշոտութին, սանձեն զախտս, սանձահարեն զզգայութիս, ընդդիմանան ցանկութե, ճմլեն զորկրամոլութին, սպանանեն զվավաշոտութին, երկնչին 'ի յայ, պահեն զծոմս, և զպահս։

7. Իմաստութին կերտէ զհոգևոր տուն հոգւոյ, ունեցողի զհոգին սբ, և զպարգևս նր վայելողի. իմացութին գտանէ զկառավարիչս. գիտութին ստանայ զփարթամութիս այ, և փրկութե. խորհուրդն առնէ զբարիս հանճարեղս. քաջութին, և զօրութին ժառանգէ զհոգին 'ի համբերութե. ածպաշտութին ներգործէ զյաջողութի ներկայի, և ապագայի կենի. և երկիւղն այ պահէ զմարդկութի, և արտաքսէ զամս մեղս։ Դարձեալ, իմաստութին փոյթ առփոյթ արտաքսէ զծուլութին. իմացութին բանականաբար խնդրէ զուշադրութին. գիտութին փախուցանէ զմոռացումն ազրդութն. խորհուրդն խոհեմաբար գտանէ զածային խնամն. ածպաշտութին ներէ մարդկայնոյ տկարութե. զօրութին քաջաբար յետամղէ զներգրդմունս. և երկիւղն այ բորբոքելաբար եռացուցանէ, և լցուցանէ զանզգուշ տգիտութին։ Դարձեալ, ունեցողք զհոգին սբ, իմաստութբ լինին խելահասք, իմացութբ նախահոգք, գիտութբ հանճարեղք, խորհրդով զգոյշք. ջանադրութբ ածպաշտութե ողորմածք, զօրութբ մտաց ապատք, և երկիւղին այ խոնարհք։ Ուստի քրիստոնեայք, ունեցողք զհոգին սբ, եօթնարփեանիւ շնորհիւ նր, այսինքն, խելահասութբ, խնամատարութբ, հանճարեղութբ, զգուշութբ, ողորմածութբ, առատաձեռնութբ, և խոնարհութբ գտանեն զմուտն երկնայնոյ կենի, Զհոգին սբ տուողն եօթնից պարգևաց, ջերմեռանդաբար աղաչեսցուք, ասելով ընդ սբոյն օգոստինոսի. հոգի սբ միշտ ներշնչեա 'ի 'ի մեզ զգործ, զի խորհիցիմք. մղեա, զի առնիցեմք. համոզեա, զի սիրիցեմք զքեզ. հաստատեա զմեզ, զի ըմբռնիցիմք զքեզ. և պահպանեա զմեզ, զի մի կորուսանիցեմք զքեզ։

8. Մխիթարիչ հոգին տայ զգրաւ փրկութե, զզօրութի կենի, և զլոյս գիտութե։ Տայ զգրաւ փրկութե. քանզի ինքն տայ զվկայութի հոգւոյ մերոյ, թէ իցեմք որդիք այ։ Տայ զզօրութի կենի. վասնզի այն, որ մեզ է անկարելի ըստ բնութե, շնորհիւ նր ոչ միայն լինի կարելի այլ նաև դիւրին։ Տայ զլոյս գիտութե, զի մինչ արարեալք եմք զամ բարիս, համարիցիմք զմեզ ծառայս անպիտանս. և զոր ինչ բարի գտանիցեմք 'ի մեզ, ընձեռիցեմք այնմիկ, յորմէ է ամ բարի։

րի ։ 'Ի յայտնել երիս հոգին ՜սբ ուսուցանէ մեզ զա̃նձն իւր , որք պատկանին առ փրկութիւն մեր ։ Հոգին այս բազմապատկաբար շնորհի մեզ ։ Քանզի շնորհի մեզ առ վարուձ առ , սքանչելիս , առ փրկութիւն , առ օգնութիւն , առ մխիթարութիւն , և առ եռանդն ։ Առ վարուձ կենի , բարեաց , և չարեաց զհատուցանել բարիս առատագունեղապէս շնորհելով ։ Շնորհի առ սքանչելիս , 'ի նշանս , և 'ի հրաշագործութիւնս ։ Առ փրկութիւն , մինչ նովաւ մարդն բոլորովին արտաքս դառնայ առ տէր ա̃ծ իւր ։ Առ օգնութիւն , մինչ յանձնում համամարտութեան օգնէ տկարութեան մերում ։ Առ մխիթարութիւն , մինչ տայ զվկայութիւն հոգւոյ մերում , թէ եմք որդիք ա̃յ ։ Առ եռանդն , մինչ 'ի սիրտս կատարելոց սաստկագոյն ներշնչելով , զուժգին հուրն սիրոյ վառէ , զի ոչ միայն 'ի յուսոջ որդւոցն ա̃յ , այլ նաև 'ի նեղութիւնս պարծիցին , առ բերելով զփառս 'ի նախատանաց, և առնելով զնիւթ սիրոյ զնեղութիւնս , և զհակառակորդութիւնս , և զվիշտս ։

## ԳԼՈՒԽ ՀԵ.

### Յաղագս պտղոց հոգւոյն ՜սբոյ ։

1. Ի Յառաջնում նախընթացի գլխոջ խօսեցաք զեօթնից պարգևաց հոգւոյն սրբոյ , այսինքն , զիմաստութենէ , զիմացութենէ , զգիտութենէ , զխորհրդոյ , զա̃ծպաշտութենէ , զզօրութենէ , և զերկիւղէ ա̃յ , զորս հոգին ՜սբ շնորհէ մեզ ընդդէմ եօթնից մոլութեանց , այսինքն , զիմաստութիւն ընդդէմ յիմարութեան , զիմացումն ընդդէմ անմտութեան , զգիտութիւն ընդդէմ տգիտութեան , զխորհուրդն ընդդէմ վաղվաղութեան , զա̃ծպաշտութիւն ընդդէմ անզգամութեան , զզօրութիւն ընդդէմ երկչոտութեան , և զերկիւղն ա̃յ ընդդէմ հպարտութեան ։ Այժմ 'ի ներկայոջ գլխոջ խօսիցուք զպտղոց հոգւոյն սրբոյ ։ Քանզի հոգին ՜սբ բնակելով 'ի մեզ , ոչ միայն զարդարէ զհոգին մեր շնորհիւ իւրով , և չքնաղացուցանէ զմեզ համայնիւք առաքինութեամբք , և զօրացուցանէ զկարողութիւնս մեր եօթնիւք պարգևօք իւրովք . այլ նաև արտադրէ 'ի մեզ զերկոտասան հոգևորս պտուղս ։ Քանզի արդարք , 'ի յորս բնակի հոգին ՜սբ , և որք ոչ գնան 'ի խոհուրդս ամբարշտաց , ոչ կան 'ի ճանապարհի մեղաւորաց , և ոչ նստին 'ի յաթոռս ժանտից , այլ զկամս իւրեանց են թարկեն կամին ա̃յ , սահեղծողի իւրոյ , և 'ի յօրէնս նորա խորհին 'ի տուէընջեան , և 'ի գիշերի , խոկալով զպատուիրանս , և զհրամանս նորա , են իբրև զծառ , որ տնկեալ է 'ի գնացս ջուրց , և տայ զպտուղ իւր 'ի ժամու իւրում ։ Ուստի արդարք ունեցօղք զհոգին ՜սբ , են ծառք առնօղք զպտուղս բարիս ։

2. Առաքեալն պօղոս թուէ զպտուղս հոգւոյն ս̃բոյ , և ասէ ։ Արդ պտուղն հոգւոյն սրբոյ է ։ Սէր , խնդութիւն , խաղաղութիւն , համբերութիւն , քաղցրութիւն , բարութիւն , երկայնմտութիւն , հեզութիւն , հաւատ , պարկեշտութիւն , ժուժկալութիւն , ողջախոհութիւն ։ Առ գաղա. 5. թիւ. 22. Պտուղքն հոգւոյն սրբոյ թուով են երկոտասանք ։ հինգք պտուղք վերահային առ կամս, և են ներգործութիւնք կամին , այսինքն , սէրն , խնդութիւնն , խաղաղութիւնն , քաղցրութիւնն , բարութիւնն ։ Մին պտուղն վերահայի առ իմացութիւն , և է ներգործութիւն իմացութեան , այսինքն , հաւատն ։ Երեք պտուղք վերահային առ ցասմնականն , և են ներգործութիւնք ցասմնականին , այսինքն , հեզութիւն , համբերութիւն , երկայնմտութիւն ։ Երեք մնացեալք պտուղքն վերահային առ ցանկականն , և են ներ֊

գոր֊

գործութիւնք ցանկականին, այսինքն, ժուժկալութիւն, ողջախոհութիւն, և պարկեշտութիւն։ Հոգին ա̃ծ բնակելով 'ի մարդոջ, սրբացուցանելով զնա շնորհիւ, առնելով զնա սիրելի, որդի, և ժառանգ ա̃յ, և շնորհելով նմա զիրաւունս 'ի փառս, զօրացուցանելով զհաւատն, վերացուցանելով զյոյսն, և բորբոքելով զսէրն. որպէս իւրաքանչիւրում կարողութեան նորա տայ զմասնաւոր առաքինութիւն, իմացութեան զխոհեմութիւն, կամին զարդարութիւն, ցասմնականին զարիութիւն, և ցանկականին զբարեխառնութիւն, և նաև զմասնաւորս պարգևս, իմացութեան զիմաստութիւն, զիմացումն, զգիտութիւն, և զխորհուրդ, կամին զա̃ծպաշտութիւն, ցասմնականին զզօրութիւն, և զարիութիւն. ցանկականին զերկիւղն ա̃յ. այսպէս նաև առնէ զիւրաքանչիւր կարողութիւն նորա արտադրել զմասնաւորս պտուղս։

3. Սէրն առաջին, և գլխաւոր պտուղն հոգւոյն սրբոյ, և արմատն ա̃մից այլոց պտղոց, քանզի ուր սէր, անդ են և այլք համայնք պտուղք հոգւոյն սրբոյ, է ազնուագունեղ ներգործութիւն կամին. քանզի է սէրն ա̃յ յա̃մէ սրտէ, յա̃մէ անձնէ, յա̃մէ մտաց, և յա̃մէ զօրութենէ, այսինքն, սէրն ա̃յ վ̃ն իւրեան ինքեան, և 'ի վեր քան զա̃մ սիրեցելոյ. սէրն ա̃յ առնող զմեզ մի ինչ ընդ նմա 'ի սիրոջ, որով մեք մնամք 'ի յա̃ծ, և ա̃ծ, որ է սէր, մնայ 'ի մեզ. սէրն, որով զօրացուցեալք, ասեմք, թէ ոչ ինչ կարիցէ բաժանել զմեզ 'ի սիրոյն ա̃յ, որ է 'ի Ք̃ս Յ̃ս տ̃ն մեր. և սէրն ընկերի, նաև թշնամւոյ, վասն սիրոյն ա̃յ սիրեցելոյ, զոր պարտիմք սիրել որպէս զմեզ, ապաուրեմն սէրն ա̃յ, և ընկերի է առաջին պտուղն հոգւոյն սրբոյ։ Հոգին ա̃ծ է սէր։ Ուստի բնակելով 'ի մեզ, և 'ի սիրտս մերս, նախ քան զա̃մ առնէ, զի սիրիցեմք զա̃ծ 'ի վեր քան զա̃մ ինչ, և զընկերն մեր իբրև զմեզ ինքեանս։

Երկրորդ պտուղն հոգւոյն սրբոյ, որ նաև է ներգործութիւն կամաց, է հոգևոր խնդութիւն, որով ոգի խնդայ 'ի տ̃ր 'ի վերայ հոգևորաց բարեաց իւրոց, այսինքն 'ի վերայ բարեկամութեան, և 'ի վ̃ր շնորհի ա̃յ, 'ի վերայ յուսոյ, 'ի վերայ իրաւանց 'ի փառս, 'ի վերայ առաքինութեանց, 'ի վ̃ր բարւոյ խղճմտանի, 'ի վերայ բարեգործութեանց, և 'ի վերայ հոգևորաց գանձից հաւաքեցելոց 'ի յերկինս։ Պտուղս այս ծնանի յառաջնոյ պտղոյ, և ծագի 'ի նմանէ. քանզի նա ուրախանայ, և խնդայ 'ի վերայ ստացելոց բարեաց հոգևորաց, որ սիրէ զա̃ծ, և զընկեր իւր։

4. Երրորդ պտուղն հոգւոյն սրբոյ, որ նաև է ներգործութիւն կամաց, է խաղաղութիւն. պտուղս այս, 'ի գնիլն երկուց ստացելոց պտղոց հետևի։ Վասնզի սիրօղն զա̃ծ 'ի վեր քան զա̃մ ինչ, և զընկերն իւր իբրև զանձն իւր, գոլով 'ի շնորհի, և 'ի բարեկամութեան ա̃յ, ժառանգ արքայութեան երկնից, և ժառանգակից Ք̃ի, ունելով զիրաւունս 'ի փառս, և զյոյս յաւիտենականի երանութեան, ժառանգելով զհոգևորս գանձս 'ի յերկինս, և զբարի խղճմտանս 'ի յիւրեան ինքեան, և խնդալով 'ի վ̃ր ստացելոց բարեաց 'ի տ̃ր, և 'ի յուսոջ, վայելէ զմեծ խաղաղութիւն։ Քանզի այսպիսին ունի զխաղաղութիւն 'ի յիւրեան ինքեան, զխաղաղութիւն 'ի խղճմտանի, զխաղաղութիւն ընդ ա̃յ, և զխաղաղութիւն ընդ մարդկանց 'ի կողմանէ իւրմէ։ Ունի զխաղաղութիւն 'ի յիւրեան ինքեան, քանզի ունի զմարմինն ենթարկեցեալ հոգւոյ, զախտս սանձեցեալս, և զանկարգս շարժմունս 'ի մեզ զվրդովմունս պատճառօղս սանձահարեցեալս։ Ունի զխաղաղութիւն 'ի խղճմտանի. քանզի բարի խղճմտանն, զսիրօղն զա̃ծ 'ի վեր քան զա̃մ ինչ, և զընկերն իւր իբրև զինքն, և զխնդացօղն 'ի վերայ հոգևորաց բարեաց 'ի տ̃ր, ոչ վրդովէ,

գոմէ, այլ շնորհէ նմա զմեծ անդորրութիւնն զխաղաղութեն ընդ այ. քանզի հնազանդի այ, և զպատուէրանս նր պահէ: Քանզի պատուէրանքն այ են, սէրն այ, և սէրն ընկերի: 'Ի մէջ այնպիսւոյ, և այ, 'ի վեր քան զամ ինչ սիրեցելոյ, և 'ի մէջ բարեկամաց է խաղաղութի: Ունի զխաղաղութի նաև ընդ մարդկանց 'ի կողմանէ իւրմէ. վասնզի ոչ միայն պահէ զամ արդարութի, զոչոք անիրաւաբար նեղելով. այլ նաև սիրէ, և ոչ միայն զբարեկամս, այլ նաև զթշնամիս:

5. Չորրորդ պտուղն հոգւոյն սրբոյ, որ նաև է ներգործութի կամաց, է քաղցրութին: Որ սիրէ զընկեր իւր որպէս զինքն, արդարև է քաղցր դէպ 'ի նա: Է քաղցր ներքսապէս, և է քաղցր արտաքսապէս: Է քաղցր ներքսապէս, քանզի է քաղցրաբարոյ: Եւ քաղցր արտաքսապէս, քանզի առնէ զիւր ինքն քաղցրաբարոյ: Ճշմարտապէս սիրողն, է ճշմարտապէս քաղցրաբարոյ: Քանզի սիրելն է կամիլ զբարի: Ուստի սիրողն զընկեր իւր, կամի նմա զբարի: Կամի ընկերոջ զամ բարի: Կամի զբարիս հոգւոյ, և զբարիս մարմնոյ: Հաճոյ է նմա, զընկերն գոլ բարի, գոլ 'ի շնորհի, և 'ի բարեկամութեն այ, ունիլ զառաքինութիւնս, գործել զբարի, և խնդրել զբարի, և խնդրել զփրկութի հոգւոյ իւրոյ: Եւ ևս հաճոյ է նմա, զընկերն վայելել նաև զօրինաւորս բարիս ստորնագունի մասին, և նմա պատկանողս: Արդ ուրեմն կամի նմա զամս բարիս նորա, և զբարիս վերնագունի մասին, և զբարիս ստորնագունի մասին, այսինքն, զայնոսիկ, որք են օրինաւորք, և նմա պատկանողք, և յարմարք. և առնէ զինքն այսպիսի: Արդ ուրեմն հոգին բնակողն 'ի մարդ ումն, առնէ զնա քաղցրաբարոյ դէպ 'ի յընկեր իւր: Հինգերորդ պտուղն հոգւոյն սրբոյ, որ նաև է ներգործութի կամաց, է բարութին: Սիրողն զընկեր իւր իբրև զինքն, արդարև է բարի դէպ 'ի յընկեր իւր: Քանզի ոչ միայն է քաղցրաբարոյ, այլ նաև առնող, և տուող զբարի ընկերի, ուսուցանելով, խրատելով, մխիթարելով, հանդարտեցուցանելով, կրելով, ներելով, և աղօթելով. և կերակրելով, և արբուցանելով, զգեցուցանելով, ժողովելով, այցելանելով, ազատելով, արձակելով, և թաղելով զբացաթողեցեալն:

6. Վեցերորդ պտուղն հոգւոյն սրբոյ, որ է ներգործութի իմացութե, է հաւատն, այսինքն, ճշմարտութին, ճշմարտախօսութին, լրջմտութին, և հաւատարմութին: Ունեցողն զհոգին սբ, զհոգին ճշմարտութե, և լրջմտութե, և 'ի շարժմանէ հոգւոյն սրբոյ բնակողի, սիրողն զընկեր իւր, շրջի, ընթանայ, և կենցաղավարի ընդ նմա, հանդերձ ճշմարտութբ, լրջմտութբ, ճշմարտախօսութբ, և հաւատարմութբ: Քանզի ոչ խաբէ, այլ զճշմարիտն խօսի: Ոչ ստէ, այլ զայն, զոր ունի 'ի մտի, յայտնէ նմա: Ոչ պատրէ, այլ պահէ զհաւատարմութի: Ոչ վարի խորամանկութբ, այլ հետևի խոհեմութե, և վարի լրջմտութբ: Առաջանալով հանդերձ ճշմարտախօսութբ, լրջմտութբ, և հաւատարմութբ, տայ զբարի օրինակ մարդկանց, ընդ որոց կենցաղավարի: Այնպէս սիրէ զճշմարտախօսութին, և ատէ զստախօսութին, զի կամիցի կորուսանել զամ ինչ, քան արտաբերել զփոքրագունեղ իմն ստուտ, որ կարի յոյժ է ատելի: Ունեցողն զհոգին սբ, ճանաչելով զած ճշմարտութին, և զհոգին սբ առաջնորդն իւր, զվարդապետն ճշմարտութե, զներշնչօղն զլրջմտութի, և զհաւատարմութի, զշարժօղն առ ճշմարիտն, բնական, և բոլորովիմբ ատօղն, և արհամարհօղն զդաւաճանութի, զխաբեբայութի, և զստուտն, կարի յոյժ սիրէ զճշմարտութին, զլրջմտութին, զճշմարտախօսութին, և զհաւատարմութի:

թի ։ Ուրեմն հոգին Ճշմարտութե, զնա, 'ի յորում բնակի. շարժէ, և ընդոստուցանէ առ 'ի պահել զխոստացեալն, առ 'ի մնալ 'ի վերայ խոստմանն, և առ 'ի կատարել զարարեալ խոստումն ։

7. Եօթներորդ պտուղն հոգւոյն սրբոյ, որ է ներգործութի ցասմնականին, է հեզութին ։ Ունեցողն զհոգին սբ, և 'ի շարժմանէ հոգւոյն սրբոյ սիրողն զընկեր իւր ։ է հեզ ։ Քանզի շարժեցեալ 'ի սիրոյ ներէ ընկերի, զանիրաւութի առբերողի ։ Ուստի ոչ շարժի 'ի յանբան վրէժառութի, այլ զմն անկարգ շարժումն ցասմնականին սանձէ. ենթարկելով զցասմնականն հրամանի բանի, և օրինի այ ։ Այսպիսին եղեալ ազատ 'ի յանկարգէ բաղձանէ վրէժառութե, և 'ի յորձէ հատուցանելոյ զչար փոխանակ չարի, վայելէ զհանդարտութիւն, լեալ յաղթիչ իւրոյ ինքեան, ոչ ումեք վնասէ, արտաքսերելով զբանս արդարս, և զխաղաղականս. հատուցանէ զբարի փոխանակ չարի, գործելով ոգւով հեզաբարոյիւ. և յաղթանակէ ընդդէմ ախտի վրէժխնդրութե, ներելով առնողի զանիրաւութի ։ Ութերորդ պտուղն հոգւոյն սրբոյ, որ նաև է ներգործութի ցասմնականին, է համբերութի ։ Քանզի ունեցողն զհոգին սբ, որպէս զոչոք ներէ, ոչումեք առնէ զանիրաւութի, ոչ առնէ զքինախնդրութի զանիրաւութեց, ինքեան առբերեցելոց, այլ ներէ, և բարեաւ յաղթէ չարին. և ոչ լսէ ձայնի վրէժխնդրութե, այլ հնազանդի հրամանի բանի, և պատուէրանի այ. այսպէս զհամայնս նեղութիս անխռովաբար ինքեան առբերեցեալս, համբերութբ, և հանդարտ ոգւով տանի, նաև զհալածանս անիրաւաց ։ Սա նաև 'ի յմնում այլում ներհակութե, և ձախորդութե համբերութբ առաջանայ, կրելով զմն ներհակութիս, և զհակառակութիս հանդարտ ոգւով ։ Իններորդ պտուղն հոգւոյն սրբոյ, որ նաև է ներգործութի ցասմնականին, է երկայնմտութին ։ Քանզի, որ ունի զմխիթարիչն հոգին սբ, զզբօսանն սրտի մերոյ, զնեղութիս, զտառապանս, և զձախորդութիս ոչ միայն 'ի միում ժամանակի, այլ միշտ մինչև 'ի վախճան կենի. անդորրութբ տանի ։

8. Տասներորդ պտուղն հոգւոյն սրբոյ, որ է ներգործութի ցանկականի, է ժուժկալութին ։ Ժուժկալութին է ներգործութի, որով բարեխառն ընդդիմանայ անկարգից շարժմանց ցանկութե մարմնոյ ։ Ունեցողն զհոգին սբ, զհոգին մաքրութե, ոչ հետևի ցանկութե մարմնոյ, այլ զօրացուցեալ օգնութբ հոգւոյն սրբոյ ընդդիմանայ ամից անկարգից շարժմանց վավաշոտութե, և ամից ախտից ցանկութե, սանձելով, և սանձահարելով զնա ծոմիւք, պահօք. ընթերցմամբք, խոկմամբք, աղօթիւք, և խափիւք կրթութբք, առ այս գործ ըմբռնիւք, և յարմարիւք ։ Քանզի ոչ հետևի յօժարութե մարմնոյ, և հակեցման անկարգի բաղձանի նորա, այլ առաջնորդութե ներբնակողի հոգւոյ, զհնազանդօղն ինքեան, առ մաքրութի, և առ պարկեշտութի հրաւիրողի, և շարժողի ։ Մետասաներորդ պտուղն հոգւոյն սրբոյ, որ նաև է ներգործութի ցանկականի, է ողջախոհութին ։ ողջախոհութի է ներգործութի, որով բարեխառն սանձէ զմարմինն, և ենթարկէ զնա հրամանի բանի, մահացուցանելով զերկրայինս անդամս, և սանձահարելով զախտս ցանկութե ։ Վասնզի որ ունի զհոգին սբ, օգնութբ նր, սանձելով զանկարգս շարժմունս մարմնոյ, յօժարի առ մաքրութի, առ որ շարժէ զնա հոգին մաքրութե ։ Երկոտասաներորդ պտուղն հոգւոյն սրբոյ, որ նաև է ներգործութի ցանկականին, է պարկեշտութին ։ Քանզի որ ունի զհոգին սբ, հեղինակն մաքրութե, և պարկեշտութե, զմարդն, 'ի յորում բնակի, յօժարեցուցանողն առ

ողջախոհութի, ոչ միայն ընդդիմանայ անկարգից շարժմանց մարմնոյ, և ենթարկէ զմարմինն հոգւոյ. այլ նաև զնշանս մաքրութե, և ողջախոհութե երևեցուցանէ 'ի բանս, 'ի յընթացս, 'ի յանդամս, 'ի հայեցման, 'ի շարժման, 'ի յարարս, և 'ի կենցաղավարութե:

## ԳԼՈՒԽ ՀԶ:

### Յաղագս մարմնաւորի ողորմութե:

1. Ողորմութին է օգնութի, որով ձեռնտուք լինիմք կարօտեցելոյ: Ուստի մարմնաւոր ողորմութին է օգնութի, որով օգնեմք կարօտեցելոյ որքան առ բարին մարմնոյ նորա: Մարդն որքան առ մարմինն կարօտի կերակրոյ, ըմպելւոյ, զգեստի, բնակարանի, առողջութե, ազատութե, և եթէ մեռանիցի, թաղման: Ուստի որ կերակրէ զքաղցեալն, արբուցանէ զծարաւեալն, զգեցուցանէ զմերկն, ժողովէ զօտարն, և տայ զբնակարան, կարօտողի տան, այցելանէ հիւանդաց, և դարմանէ զնոսա, ազատէ զերեալն 'ի բանտի, և տայ նմա զազատութի, և թաղէ զմարմինն մեռելոյ անխնամատարեցելոյ, առնելով զհարկաւորս ծախս վասն թաղման, կամ ջամբէ աղքատաց, և չքաւորաց զդրամս, որովք նք կարիցեն օգնել մարմնաւորաց հարկաւորութեց իւրեանց, առնէ զմարմնաւորս գործս ողորմութե, և գործէ զմարմնաւոր ողորմութի: Քրիստոնեայն, որ ջամբէ չքաւորաց զողորմութիս, առնէ զգործ հաճոյագունեղ, և ընդունելագունեղ այ. քանզի լնու զգործ սիրոյ: Վասնզի ողորմածութին է գործ սիրոյ. ողորմութին է գործ ողորմածութե: Ուստի որ տայ զողորմութիս, զի օգնիցէ աղքատաց, լնու զգործ սիրոյ: Է գործ սիրոյ ընդունելագունեղ, և հաճոյագունեղ այ: Քանզի պատուիրանն այ է սէրն ընկերի: Այսպիսին արժանի է ողորմութե: Քանզի արդիւնաւորի զայն, զոր առնէ: Առնէ զողորմածութի, և զողորմութի: Ուրեմն արդիւնաւորի զողորմուի:

2. Նախ քան զմահն առնելի է բարերարութի ընկերի մերոյ, և ինչք մերք տալիք են չքաւորի, զի յետ մահուան ընդունիցիմք զհատուցումն: Աղաչանն վշտագնեցելոյ ոչ է բացահերքելի, և ոչ է բացադարձուցանելի երեսն մեր 'ի չքաւորէ, զի ամենաբարձրն ունկնդրիցէ աղաչանաց մերոց, դարձուցանելով առ մեզ զողորմածս աչս իւրս: Մի բացադարձուցուք զաչս մերս 'ի տնանկէ, զի մի բարկացեալ ամենաբարձրն, զբարերարս աչս իւրս բացադարձուցանիցէ 'ի մէնջ: Ոչ է այնպէս առաջանալի, և խստաբարոյաբար շրջելի, զի դառնացեալ դանդատիցէ զմէնջ. վասնզի ած, որ արար զանանկն, ունկնդրէ աղաչանաց նորա. ուստի ժողովման չքաւորաց պարտիմք առնել զմեզ քաղցրաբարոյս: Պարտիմք գոլ յօժարագոյնք առ 'ի տալ, քան առ 'ի յընդունել. քանզի երանելագոյն է տալն, քան զառնուլն: Ուստի այնպէս շրջել պարտիմք, զի մինչ առնեմք զբարի, մի պակասիցիմք: Մինչ ուրեմն ունիմք զժամանակ, առնելի է բարի ամենեցուն, մանաւանդ ընտանեկաց հաւատոյ: Առատաբար, և ուշադրաբար առնելի է ողորմութի: Քանզի ողորմութին շնորհիւ զղջման ազատէ յամեց մեղաց, և զերծուցանէ 'ի մահուանէ, և ոչ թողու դնալ 'ի խաւարին զհոգին ողորմածի: Ուստի է մեծ յուսադրութի առաջի ծայրագունեղի այ ողորմութին ամեց զնա առնողաց: Աղօթից առակցելի է ողորմութին: Քանզի բարիէ աղօթն ծոմապահօք, և ողորմութե, առաւել, քան թա-

քու-

քուցանելն զգանձն ոսկւոյ · և քանզի ողորմութիւն աղատէ 'ի մեղաց, և նա է, որ մաքրէ զմեղս, և առնէ գտանել զկեանս յաւիտենականս ։

3 · Կարի յոյժ օգնէ ողորմութիւն առ 'ի ստանալ զզղջումն, և զղջմամբ զթողութիւն մեղաց · քանզի ողորմութեամբ, և հաւատով ջնջին մեղք, և ողորմութեամբ, և ճշմարտութեամբ քաւին անօրէնութիւնք · և որպէս ջուրն շիջուցանէ զբորբոքեցեալ հուրն · այսպէս ողորմութիւն ընդդիմանայ մեղաց ։ Քանզի ա՟ծ է հայօղ առ նա, որ առնէ զշնորհ, և բաշխէ զողորմութիւն ։ Ուսանի ողորմութիւն ոչ միայն 'ի մոռացման ։ Վասնզի ա՟ծ, որ ոչ մոռանայ զողորմութիւն պարտաւորապէս արարեցելն, մարդոյ հաւատացողի, և զճշմարիտ կրօնս դրկողի, և զողորմութիւն առնողի, տայ զշնորհ զղջման, և լրջամիտ խոստովանութեան ։ Վասն այսորիկ պիտոյ է աղօթել · և աղօթից զողորմութիւն առակցել · վասն պատուիրանի ընդունիլ զչքաւորն, և վասն չքաւորութեան նորա ոչ թողուլ զնա դատարկ · փակել զողորմութիւն 'ի ծոցում չքաւորի, և ընդունիլ 'ի յի՟ո ունկնդնողէ աղաչանաց չքաւորի վասն մեր աղօթողի · զաղատութիւն յի՟մէ շարէ · զմեղս մեր քաւել ողորմութեամբք, և զանօրէնութիւնս մեր գթութեամբ աղքատաց, զղջմամբ, և խոստովանութեամբ մեղաց մերոց, ընդունելով զներումն 'ի հօրէ ողորմութեանց · և որինչ է աւելի տալ զողորմութիւն · զի ա՟մ ինչ իցէ մեղ ա՟բ խորհրդով աղաչխարունէ ։ Որպէս պարտիմք սիրել զողորմութիւն · և սիրել զջամբուսն ողորմութեան · այսպէս ուշադրաբար ջանալ պարտիմք, զի մի խցիցեմք զականջս մեր աղաչանաց աղքատի ։ Քանզի որ խցէ զականջ իւր աղաչանաց չքաւորի, և ինքն աղաղակեսցէ, և ոչ լիցի լսեցեալ ։

4 · Այնուքիկ, որք առակցեն զարդարութիւն ողորմութեան, դատանեն զյարգեցուսն կենի · և արդարութիւն այնորիկ, որ ողորմի, և տայ աղքատաց, մնայ 'ի յաւիտեանս յաւիտենից · և գտանի երանեալ, որ ողորմի չքաւորաց ։ Որպէս որ չարախօսէ զչքաւորն, նախատէ զարարիչն նորա · այսպէս պատուէ, և մեծարէ զա՟ծ, սա, որ ողորմի աղքատաց ։ Առնօղն զողորմութիւն չքաւորի, փոխ տայ տեառն զփոխարինութիւն նո՟ր հատուցանողի ։ Որ ողորմի ը՟կերի իւրում, գտանէ զհատուցումն մեծ · և եթէ ոչ 'ի նմանէ, սաստկապէս 'ի տեառնէ ։ Որ տայ ընդունի ։ Վասնզի տայ մարդոյ զդրամ, և ընդունի 'ի յի՟ո զներումն յանցանաց իւրոց, մինչ ա՟ծ գթացեալ արդարացուցանէ զհոգին նորա ։ Ողորմութիւն առն, որ առնէ զողորմութիւն, է մեծ օգնութիւն նորա, զշնորհն նո՟ր որպէս զբիբ ական պահօղ ։ Որ առնէ զողորմութիւն, մատուցանէ ա՟յ զհաճոյ, և զընդունելի նուէր ։ Նմա որ կերակրէ զքաղցեալն գործովդոյթ արտիւ, և ուրախացուցանէ զհոգին տառապեցելոյ, ծագի լոյս 'ի խաւարի, և խաւար նո՟ր լինի ո՟ր զկէսօր ։ Վասնզի շնորհէ նմա զհանգիստ ա՟ծ, ամենակարօղն ողորմածն լնլով զհոգին նորա ճառագայթիւք, և պարարելով զոսկերս նորա, և եղիցի իբրև զպարտէզ ուռոգեալ, և որպէս աղբիւր ջուրց, որոյ ոչ պակասեսցին ջուրք ։ Նաև որ տայ միում 'ի փոքրկանցս զբաժակ մի ջուր ցուրտ, միայն վասն անուան աշակերտի, ոչ կորուսանէ զվարձ իւր, վասն արարչագործութեան ողորմութեան ։

5 · Որ վաճառէ զա՟մ ինչ, զոր ունի, և տայ աղքատաց, ունի զգանձ 'ի յերկինս, և է այր կատարեալ 'ի յաշխարհի ։ Ըստ աւետարանական ճշմարտութեան յաւուր ընդհանրոյ դատաստանի, ողորմածք լսելոցք են զձայն տեառն, որ ասէ ։ Եկայք օրհնեալք հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւն 'ի սկզբանէ աշխարհի ։ Զի քաղցեայ և ետուք ինձ ուտել · ծարաւեցայ

և արբուցէք զիս. օտար էի և ժողովեցէք զիս. մերկ և զգեցուցէք զիս. հիւանդ էի և տեսէք զիս. 'ի բանտի էի և եկիք առ իս: Մատթէի. 25. Թիւ. 34. Ուստի յորդորէ զմեզ տ̄ր̄ն ասելով: Վաճառեցէք զինչս ձեր, և տուք զողորմութիւն և արարէք զքսակ առանց հնանալոյ, գանձ անպակաս յերկինս. ուր ոչ գող մերձենայ, և ոչ ցեց ապականէ: Ղուկ. 12. Թիւ. 33. Նոյն տ̄ր̄ն ասէ: Յորժամ առնիցես ընդունելութիւն, կոչեա զաղքատս, և զխեղս, և զկաղս, և զկոյրս. և երանելի լինիցիս, զի ոչ ունին փոխարէն հատուցանելոյ քեզ. և հատուսցի քեզ փոխարէն 'ի յարութեան արդարոց: Ղուկ. 14. Թիւ. 13. Նոյն տ̄ր̄ն ասէ: Եւ ես ասեմ ձեզ. արարէք ձեզ բարեկամս 'ի մամոնայէ անիրաւութեան, զի յորժամ պակասիցի այն ընկալցին զձեզ 'ի յարկան յաւիտենականս: Ղուկ. 16. Թիւ. 9. Ուրեմն պիտոյ է առատաբար սերմանել զգործս ողորմութեան, և բաշխել զողորմութիւնս: Քանզի որ սերմանէ ճշդելով, ճշդելով և հնձեսցէ: Ուստի ոչ պարտիմք մոռանալ զբարերարութիւն, և զհաղորդութիւն: Վասնզի այսպիսիք պատարագք հաճոյք, և ընդունելիք են այ̄:

6. Սիրելագունեղ, և արդարագունեղ տ̄ր̄ն, ոչ մոռանայ զգործս մեր, և զսէրն մեր, զոր ցուցանեմք անուամբ նորա, դէպ 'ի ծառայս նորա, գործելով զբարիս, և մատակարարելով զպիտոյս, և 'ի կիր արկանելով զբարեգործութիւս: Եթէ խնդրեմք զերանութիւն, գործեսցուք զողորմութի: քանզի երանի, որ խորհի զաղքատն, և զտնանկն: Այսպիսի ոք է երանելի, քանզի յաւուր չարի ազատեսցէ զնա տ̄ր̄ն: Որ է յօժար առ 'ի առնել զողորմութիւն, է օրհնեալ. քանզի 'ի հացից իւրոց բաշխէ աղքատաց: Տարածեսցուք ուրեմն զձեռն մեր աղքատի, զի կատարիցի քաւութիւն, և օրհնութիւն մեր: Կալցուք 'ի ծոց մեր զողորմութիւն: Քանզի ողորմութիւն մեր իբր զքսակ է ընդ մեզ. և 'ի վերայ վահանի կարողի, և 'ի վերայ բարեգունեղի տիգի, մենամարտեսցի ընդդէմ թշնամեաց մերոց: Եթէ 'ի յառաջնոց ա̄մից պտղոց մերոց բաշխիցեմք աղքատաց, շտեմարանք մերք լցցին յադեցմամբ, և հնձանք մերք վերատատացին գինեաւ: Քանզի զյատուկս բաժանօղք լինին փարթամադոյնք. յափշտակօղք զայն, որ ոչ է իւրեանց, զրկին 'ի բարեաց, և են չքաւորք: Ուրեմն որ տայ աղքատի, ոչ կարօտասցի, որ անդոսնէ զպաղատօղն, կրեսցէ զչքաւորութիւն: Տացուք, և տացի մեզ: Քանզի ա̄ծ̄ կարօղ է առնել, առատանալ 'ի մեզ զա̄մ̄ շնորհ, զի յա̄մ̄ում իրի միշտ ունելով զա̄մ̄ բաւականութիւն, առատասցուք 'ի յա̄մ̄ բարեգործութիւն: Առնելի է ողորմութիւն ուղղով դիտաւորութբ, զի մի կորուսանիցեմք զգործունէութիւն նորա:

7. Ոչ պակասին աղքատք 'ի յերկրի բնակութեան մերոյ: Եւ այս 'ի յա̄ծ̄այնոյ նախախնամութենէ, զի բացցուք զձեռն մեր եղբօր կարօտեցելոյ, և չքաւորի, որ շրջի ընդ մեզ 'ի յերկրի: Ամենիմաստ նախախնամութիւն, զի 'ի կիր արկանիցի գործն սիրոյ, և ողորմութեան, և 'ի միասին լինիցի գործ խոնարհութեան, և համբերութեան. այսինքն, զի որք ունին զբարիս այսր կենի, 'ի կիրարկանիցեն զ գործս սիրոյ, և ողորմածութեան, տալով զողորմութիւնս աղքատաց. և չքաւորք 'ի կիր արկանիցեն զ գործ համբերութեան, և խոնարհեցուցման, համբերութբ տանելով զկարօտութիւն, և խոնարհութբ խնդրելով զողորմութիւն: Ուրեմն զհացն մեր կերիցուք ընդ քաղցելոյ, և ընդ չքաւորաց, և 'ի զգեստուց մերոց զմերկս ծածկեսցուք, և այսպէս արասցուք զբարեգործութիւս, զի լիցէ 'ի բարիս մեր բաղում շնորհ: Ջամբեսցուք քաղցելոց զհացն մեր, և զաղքատս, և զտնանկս ներմուծցուք 'ի տուն մեր,

մեր, զմերկն, զոր տեսանեմք զգեցուցէք, եւ զընկերն մեր մի անգոսնեսցուք, զի ծագիցի իբրեւ առաւօտ լոյսն մեր, եւ առողջութիւն մեր արագագոյն յառաջադիմիցի, եւ արդարութիւն մեր գնասցէ առաջի երեսաց մերոց, եւ փառք տեառն ժողովեսցէ զմեզ: Յայնժամ կարդասցուք, եւ տէրն լուիցէ մեզ. աղաղակեսցուք, եւ ասասցէ մերձ եմ: Որք ունիմք զերկուս պատմուճանս, տացուք ոչ ունեցողի, եւ որք ունիմք զկերակուրս, նմանապէս արասցուք. զի ի ներկայում ժամանակիս առատութիւն մեր լցուսցէ զկարօտութիւն չքաւորաց: Որք ունիմք զինչս այսր աշխարհի, եւ տեսանեմք զեղբայրն, որ ունի զկարօտութիւն, գթասցուք նմա, տալով զողորմութիւն, զի սէրն այ մնասցէ ի մեզ:

8. Ի յընչից մերոց արասցուք զողորմութիւն, եւ մի դարձուսցուք զերեսս մեր յումեքէ չքաւորէ, զի մի դարձցի ի մէնջ երեսս տեառն: Ջանասցուք, զի հետեւեսցուք այնմիկ, որ զկէսն ընչից իւրոց ետ չքաւորաց, եւ եթէ զումեք ի յիմեքէ զրկեալ էր, հատոյց զքառապատիկն: Որպէս կարիցեմք, այնպէս լիցուք ողորմածք: Ունեցողքս զբազում ինչ առատաբար ջամբեսցուք. ունեցողքս զսակաւ ինչ, կամաւորապէս բաժանել ջանասցուք: Մի զրկեսցուք զաղքատն ի յողորմութենէ, եւ զոչս մեր մի դարձուսցուք ի չքաւորէ. զանձն, որ է քաղցեալ, մի անգոսնեսցուք, եւ մի դառնացուսցուք զչքաւորն ի կարօտութեան իւրում. զխրատն մի տառապեցուսցուք, եւ մի յամառեսցուք զայն, զոր բաշխելոցք եմք ի չքաւորն. հակեսցուք թարց տրամութեան զականջն մեր չքաւորի, եւ հատուսցուք զպարտն մեր, եւ պատասխանեսցուք նոյնոյ խաղաղութեամբ եւ հեզութեամբ. եւ կարկառեսցուք չքաւորի զձեռն մեր, զի կատարեսցի այցելութիւն, եւ օրհնութիւն մեր: Ի բարիս մի տացուք զառիթ տրանջի, եւ ի տուեցելոջ մի տացուք զառիթ տրտմութեան բանի չարի: Ձրի առաք, ձրի տացուք, եւ ուրախութեամբ ողորմեսցուք: Քանզի զուրախութեամբ տուօղն սիրէ ած. Զկերպէ առնելոյ ասէ տէրն: Այլ յորժամ առնիցես զողորմութիւն. մի հարկանէր փող առաջի քո, որպէս կեղծաւորք առնեն ի ժողովուրդս, եւ ի հրապարակս, որպէս զի փառաւորեսցին ի մարդկանէ. ամէն ասեմ ձեզ, այն իսկ են վարձքն նց: Այլ դու յորժամ զողորմութիւն առնիցես, մի գիտասցէ ձախ քո, զինչ գործէ աջ քո: Որպէս զի եղիցի ողորմութիւն քո ի ծածուկ, եւ հայրն քո, որ տեսանէ ի ծածուկ, հատուսցէ քեզ յայտնապէս: Մատթէի: 6. Թիւ. 2

## ԳԼՈՒԽ. ՀԷ.

### Յաղագս հոգեւորի ողորմութեան:

1. Հոգեւոր ողորմութիւնն է օգնութիւն, որով ձեռնտուք լինիմք ընկերին որքան առ բարին հոգւոյ նորա: Մարդն որքան առ հոգին կարօտի խրատոյ, լուսաւորութեան. հանդարտութեան հոգւոյ, մխիթարութեան, կրեցման պակասութեան իւրոյ, թողութեան, եւ աղօթից: Ուստի որ խրատէ, եւ դարձուցանէ զմեղաւորն, խրատէ զտգէտն, եւ լուսաւորէ զկոյրն հոգեւորապէս, լուծանէ զտարակուսութիւն երկմտողի, մխիթարէ զտրտմեալն, տանի, եւ կրէ զպակասութիւն ընկերի, ներէ խնդրողի զթողութիւն, եւ աղօթէ վասն դարձման ընկերի իւրոյ, եւ վասն ազատութեան որբոց հոգեաց քաւարանի ի պատժոց, առնէ զգործս հոգեւորի ողորմութեան, եւ առնէ զհոգեւոր ողորմութիւն. քանզի օգնէ ընկերին որքան առ բարին հոգւոյ նորա: Սա առնէ զգործ հաճոյագունեղ եւ ընդ‿

ընդունելադունեղ այ։ Վասնզի կալի յոյժ հաճոյ է այ օգնելն ընկերի 'ի հոգևորս իւր։ Հաճոյ է այ օգնելն ընկերի որքան առ բարին մարմնոյ նորա. ուրեմն կարի առաւել հաճոյ է նմա օգնելն ընկերի որքան առ բարին հոգւոյ նր. քանզի անհամեմատելաբար հոգին լաւագոյն է քան զմարմինն. ուրեմն նաև անհամեմատաբար լաւագոյնք են բարիքն հոգւոյ քան զբարիս մարմնոյ։ Եւ այսպէս անհամեմատելաբար լաւագոյն է փրկութիւն հոգւոյ, քան զփրկութիւն մարմնոյ։ Ըստ հոգւոյ մարդն նման է այ. ըստ մարմնոյ անասնոց։ Հոգին է անմահ, մարմինն մահկանացու։ Ուրեմն հոգին անհամեմատելաբար լաւագոյն է քան զմարմինն։

2. Հոգալ զփրկութիւն հոգւոյ մարդոյ է գործ ածադունեղ։ Գործս այս է գործ ամենամեծի սիրոյ։ Քանզի հոգալն զբարին ընկերի, է գործ սիրոյ։ Ուրեմն հոգալն զմեծագոյն բարին ընկերի, է գործ մեծագունի սիրոյ։ Ապա ուրեմն հոգալն զամենամեծ բարին ընկերի, է գործ ամենամեծի սիրոյ։ Արդ հոգալն զփրկութիւն հոգւոյ ընկերի, է հոգալ զծայրագունեղ բարին նր. վասնզի որ հոգայ զփրկութիւն հոգւոյ ընկերի, հոգայ, զի ընկերն գիտիցէ զիրս ածն, որք են հարկաւորք առ փրկութիւն. զի ազատիցի 'ի մեղաց, որ է ամենամեծ չարն մարդոյ. զի ունիցի զշնորհն, և զբարեկամութիւն այ. զի իցէ ժառանգ արքայութեան, և ունիցի զիրաւունս 'ի փառս. զի կեայցէ 'ի շնորհի, և 'ի սիրոջ. զի ունիցի զամն առաքինութիւնս, և ներգործութիւնս առաքինութեանց, 'ի հրամանս սիրոյ ելուղեցելովք գանձիցէ 'ի յերկինս. և զի յարատևելով 'ի շնորհի, առնայցէ զփառս. որք համայնք 'ի միասին առեցեալք, են ամենամեծ բարին ընկերի. ուրեմն հոգալն զփրկութիւն հոգւոյ ընկերի, է գործ ամենամեծի սի. յ։ Օգնել ընկերի որքան առ բարին հոգւոյ նր, է գործ նման գործոյ մարգարէից, որք զբազումս փրկաւէտս իւրս ուսուցին. որդւոյն այ վասն փրկութեան մարդկանց ներմարմնացելոյ, չարչարեցելոյ, խաչեցելոյ, և 'ի խաչին մեռելոյ. առաքելոց, առ 'ի քարոզել զաւետարանական վարդապետութիւն ընդհանրոյ աշխարհի 'ի քէն յղեցելոց. և սրբոց հարց, սրբոյ մօր եկեղեցւոյ, վարդապետաց, որք զբազումս իւրս դրեցին վասն փրկութեան մարդկանց. քանզի ասացեալք ամենեքեան հոգացին զ զփրկութիւն հոգւոյ. ապա ուրեմն հոգալն զփրկութիւն հոգւոյ է ամենաբարի հոգևոր գործ։

3. Առաջնորդք, բունքեպիսկոպոսք, և քահանայք, որք ունին զհոգաբարձութիւն հոգւոց, և վայելեն զմուտս եկեղեցեաց, ոչ միայն 'ի սիրոյ, այլ նաև 'ի յարդարութէ պարտաւանդին հոգալ զփրկութիւն հոգւոց, հոգաբարձութեան նց յանձնեցելոց։ Սք պարտաւանդին ուսուցանել, որք են հարկաւորք առ փրկութիւն. և պարտաւանդին վարել ամբ հնարագիտութբ, զի դարձուսցանիցեն զմեղաւորս, և արդելուցուն զմեղս։ Ճրագք եդեալք են 'ի վերայ աշտանակաց։ Ուրեմն պարտին լուսաւորել, ուսուցանելով, քարոզելով, լուծանելով զերկբայութիւնս, տալով զփրկաւէտս խորհուրդս, և ճշմարտիւք վարդապետութբք մխիթարելով զտրտմեալս։ Պարտին քարոզել զբանն, սովորել 'ի դէպ ժամանակի, 'ի յանդէպ ժամանակի, յանդիմանել, աղաչել, և կշտամբել ամբ համբերութբ, և վարդապետութբ։ Պարտին հսկել, յամմ իրի աշխատիլ, առնել զ գործ աւետարանչի, և կատարել զպաշտօն իւր։ Հովիւք են. ուրեմն արածել պարտին զհօտս իւրեանց, ինքեանց յանձնեցեալս, և հաւատացեալս. նաև ծնօղք պարտաւանդին 'ի յարդարութէ հոգալ զփրկութիւն հոգեաց որդւոց, և ծառայից իւրոց. վասնզի պարտա-

ւանդին

ւանդելն հոգալ զնմա բարիս նց , նաև զապրուստ մարմնոյ , մինչ են ճարք նց ։ Ուրեմն կարի առաւել պարաւանդելն հոգալ զբարիս հոգւոյ նց ։ Քանզի ամուսնացեալք են , ոչ միայն , զի պահիցեն զունակն մարդկայնոյ սեռի , այլ նաև զի ընծայիցեն զնս այ , և աճիցեն պաշտօնեայս իւրոյ ածայնոյ մեծվայելչութե ։ Ուրեմն պարտին ուսուցանել նց զիրս հարկաւորս առ փրկութ ։ և արգելուլ զմեղս նց , խրատելով խոհեմաբար , և պատժելով պողաբերաբար , տալով նց զբարիս օրինակս բարեաց գործոց , ներգործութեց առաքինութե , պարտաւորի ջերմեռանդութե , և յաճախեցման խորհրդոց ։

4. Մեք համայնք այլք քրիստոնեայքս , որք ոչ եմք ծնօղք , և ոչ ունիմք զհոգաբարձութ հոգեաց, պարաւանդիմք 'ի սիրոյ հոգալ զփրկութի ընկերի ։ Որ այսպէս համազի ։ 'Ի սիրոյ պարաւանդիմք սիրել զընկերն , և հոգալ զբարին նորա. ուրեմն 'ի սիրոյ պարաւանդիմք հոգալ զբարին ընկերի . իսկ ամենամեծ բարին ընկերի է փրկութին հոգւոյ նր . ապաուրեմն 'ի սիրոյ պարաւանդիմք հոգալ զփրկութի հոգւոյ ընկերի ։ Դարձեալ, 'ի սիրոյ պարաւանդիմք արգելուլ զմահն մարմնոյ ընկերի , զորօրինակ , կերակրել , զի մի մեռանիցի , և հոգալ , զի բժշկեսցի . իսկ անհամեմատելաբար մեծագոյն է մահն հոգւոյ , քան մարմնոյ . ուրեմն կարի առաւել պարաւանդիմք 'ի սիրոյ առնել , զի արգելանիցի մահն հոգւոյ ; ուսուցանելով զիրս հարկաւորս առ փրկութի . և եթէ իցէ 'ի մահուչափ մեղս , և իցէ յոյս դարձման , առնել , զի բժշկիցի հոգևորաբար . խրատելով զնա սիրով ։ Դարձեալ պարաւանդիմք պահել զպատուիրանս աւետարանականս . իսկ է պատուիրան հոգալոյ զփրկութի հոգւոյ ընկերի . ուրեմն պարաւանդիմք հոգալ զփրկութի հոգւոյ ընկերի ։ Գոյ պատուէր հոգալոյ զփրկութին հոգւոյ ընկերի . քանզի գոյ պատուէր խրատելոյ զընկերն ։ Վասնզի ասէ տր ։ Եթէ մեղիցէ քեզ եղբայր քո , երթ յանդիմանեա զնա , յորժամ դու և նա միայն իցէք , եթէ լուիցէ քեզ. շահեցար զեղբայր քո ։ ապա թէ ոչ լուիցէ քեզ ։ առ ընդ քեզ միւս ևս կամ երկուս , զի 'ի բերանոյ երկուց , և երից վկայից հաստատեսցի ամ բան ։ Իսկ եթէ նց ոչ լուիցէ, ասասջիր եկեղեցւոյ. ապա եթէ և եկեղեցւոյն ոչ լուիցէ , եղիցի քեզ իբրև զհեթանոս , և զմաքսաւոր ։ Մատթ. 18. Թիւ. 15.

5. Հոգևոր ողորմութին պահանջէ զեօթն իրս , այսինքն , խրատել , լուծանել զտարակուսութիս , դարձուցանել , մխիթարել , տանիլ զանիրաւութիս , ներել , և աղօթել ։ Խրատէ զընկերն , որ ուսուցանէ նմա զայնոսիկ իրս , որք հարկաւորք են առ փրկութի , այսինքն , ուսուցանելով նմա զիրս հաւատալիս , յուսալիս , և գործելիս ։ Զհաւատալիս , բացամեկնելով նմա զխորհուրդն ամենասրբոյ երրորդութե , և զխորհուրդն ներմարմնութե , և զայլս մասունս հաւատոյ , որք գտանին 'ի հանգանակի ։ Զյուսալիս , բացադրելով նմա զտէրունական աղօթն , և ծանուցանելով նմա , որք հանդերձ յուսով աղերսանօք խնդրելիք են 'ի այ հօրէ ողորմութեց ։ Զգործելիս, բացամեկնելով , և ծանուցանելով նմա զպատուիրանս սիրոյ , զպատուիրանս այ , և եկեղեցւոյ , և ծանուցանելով նմա զթիւն , և զբնութին խորհրդոց , որովք սրբացուցանիմք , և զայլս քրիստոնէի պատկանօղս ։ Լուծանէ զտարակուսութիս , որ ստուգիւ , և ճշմարտիւ վարդապետութբ լուսաւորէ զընկերն , որ զերկմտութի հոգւոյ իւրոյ ըղջամտաբար առաջադրէ առ հանդարտութի խղճմտանի իւրոյ , զի ունիցի զհանդարտութի 'ի սրտի իւրում։ Առ դարձուցմն մեղաւորի մեծ խոհեմութի վերախնդրի ։ Ուստի 'ի կիր արկանելի է մեծ զգուշութի , զի մինչ ջանամք օգնել

նմա ,

նմա, մի՛ վհատիցեմք, և մինչ ջանամք ազատել զնա ՚ի մեղաց, մի՛ լինիցիմք նմ՟ա առիթ մեղանչելոյ, և զիրս անիրաւս գործելոյ, և առաւել զհոգին իւր մեղօք կորուսանելոյ:

6. Իւրաքանչիւրոք, որ փափագի դարձուցանել զմեղաւորն, պարտի ճանաչել զորպիսութիւն, և զիշխանութիւն իւր. և զորպիսութիւն, և զիշխանութիւն նր՟, զոր դիտէ, և փափագի դարձուցանել, և առ ուղիղ ճանապարհ զնա ածել: Եթէ ջանացողն ստանալ զայլ ոք իցէ մեծաւոր, պարտի ՚ի կիր արկանել զայնոսիկ իրս, որք պատկանին մեծաւորի: Իսկ եթէ ոչ իցէ մեծաւոր, պարտի ՚ի կիր արկանել զայնոսիկ իրս, որք պատկանին մարդոյ, որ ոչ է մեծաւոր, և որ ոչ կարէ պատժել, այլ միայն կարէ տալ զսոսկ խրատ: Մինչ ՚ի կիրարկանելի է կերպն այն, որ գտանիցի ըմբոն, և ընդունակ առ դարձումն մեղաւորի: Խրատելի է ընկերն խոհեմութբ՟, իմաստութբ՟, մտախոհութբ՟. զգուշութբ՟, շրջահայեցողութբ՟, սիրով, մեծաւ հնարիւ, և յուսով դարձման: ՚Ի խրատելն ՚ի կիրարկանելի է կերպն այն, զոր ուսոյց մեզ ՚ի յամենաարբոջ աւետարանի, անստեղծ, և անհուն իմաստութիւն, փրկիչն Յս՟ Քս՟, տծ՟ և վարդապետն մեր, որ գիտէ զա՟մ ինչ, քանզի է այն, որում յայտնիք են համայնք իրք: Մինչ խրատեմք, շարժօղն զմեզ իցէ սէրն, փափագն ստանալոյ, և շահելոյ զընկերն, ոչ ախտն, ոչ հպարտութիւն, և ոչ ատելութիւն: Պարտի գնալ առաջի մեր բարի օրինակն, ս՟բ կեանն, բարի խղճմտանն, ուղղութիւն, արդարութիւն, երկիւղ տեառն, և սէրն Թագուհւոյն ա՟մից առաքինութեց:

7. Նա մխիթարէ զտրտմեալն, որ շարժեալ ՚ի ցաւակցութե, և ՚ի սրտոյ ցաւակից լինի եղբօր, և ընկերի տառապեցելոյ, լրջամտաբար ցուցանելով ցաւագին կերպիւ զցաւն սրտի իւրոյ: որով ցաւի ՚ի վերայ թշուառութե ընկերի, և ջանայ ճշմարտիւ, և աւետարանական վարդապետութբ՟, օրինակաւ քն՟ի վս՟ մեր ՚ի խաչին չարչարեցելոյ, և մարիամու, որ զգաց զամենամեծ ցաւ, մինչ առաջի աչաց իւրոց չարչարիւր քս՟, սիրելագունեղ որդին նր՟, և օրինակաւ սրբոց, և սրբուհեաց, և սրանց երկնչողաց յա՟յ, որք համբերութբ՟ կրեցին վասն սիրոյն ա՟յ զամենամեծս նեղութիւս, թշուառութիւս, և տառապանս թարց տրտնջմանց, և հանդերձ շնորհակալութբ՟, բառնալ, և բացամերժել զտրտմութիւն տառապեցելոյ ընկերի. և լնուլ զսիրտն նր՟ հոգեւորաւ ուրախութբ՟, կարի յուշադրութբ՟ ջանալով, զի վշտացեալն մի՛ անկանիցի ՚ի յանհամբերութի, այլ հանդարտ ոգւով վասն սիրոյն ա՟յ կրելով զնեղութիւն, և խնդալով ՚ի սրտի իւրում, համակերպիցէ զիւր ինքն կամացն ա՟յ, և մատուցէ զշնորհակալութիւն հօրն ողորմութե, որ վասն օգտակարութե մերոյ թոյլ տայ զմեզ յայսմ կենի չարչարիլ, և զգալ զնեղութիւս, առ վերուղղութի կենի մերոյ, առ վճարումն պատժոց, վասն մեղաց մերոց մեզ պարտաւորաց, և առ արդիւն յաւիտենականի կենի: Յորժամ մխիթարեմք զտրտմեալն, պարտիմք ցաւակիցք լինել նմա, զի ցաւն մեր բժշկիցէ զցաւն, և զտրտմութիւն նր՟, և պարտիմք մեծաւ ուշադրութբ՟ զգուշանալ, զի մի՛ վասն անխոհեմ կերպի մերոյ յաւելուցումք զվիշտն նորա, և շարժիցեմք զնա առ անհամբերութիւն:

8. Տանիլն զպակասութի ընկերի, է կատարեալ ներգործութի սիրոյ: Քանզի որ տանի զպակասութե ընկերի, արգելու զբազումս մեղս ընկերի: Վ՟ղի յորժամ տանիմք զպակասութի ընկերի, համբերութբ՟ մերով, ստանամք զնա, և տամք նմա զբարի օրինակ: Ուստի տեսեալ զբարի օրինակ, ոչ դրդի առ անհամբերութի, և ոչ վրդովի,

վի, այլ 'ի համբերութեան մերում ուսանի զառաքինութիւն, և հեռանայ 'ի մեղաց։ Եթէ երկու 'ի միջինքեանց այսպէս ունին զինքեանս, այսինքն, տանին զպակասութիւս միմեանց, արգելուն զմեղս, և զկռիւս իւրերաց, և փոյթ լեն զխաղաղութիւն։ Իսկ նոքա, որք ոչ կամին տանել զպակասութիւս միմեանց, վրդովին, կռուին, կորուսանեն զխաղաղութիւն, և անկանին 'ի բազում մեղս, այսինքն, 'ի մեղս անհամբերութեան, զրպարտութեան․ հպարտութեան, ատելութեան, և թշնամութեան։ Ուստի է կարի իմաստուն, որ շարժեալ 'ի սիրոյ համբերութեամբ տանի զպակասութիւն ընկերի․ քանզի արգելու զբազում մեղս ընկերի, և զիւրս, և այսպէս ստանայ զիւր ինքն․ և զընկերն, շարժեալ 'ի գութ 'ի հոգին իւր, և 'ի հոգին ընկերի։ Նա, որ ներէ ընկերի, թողութիւն խնդրողի, ցուցանէ թէ ունի զսէր և սիրէ զեղբայրական սէրն, և ցուցանէ թէ նաև կամի սիրել զթշնամին։ Ուստի է կատարեալ 'ի սիրոջ, և ունի զողորմածութիւն դէպ 'ի յիւր ինքն, և դէպ 'ի յընկեր իւր, Քանզի որ ոչ ներէ, կորուսանէ զհոգին իւր, և ցուցանէ թէ սիրէ զթշնամութիւն, և զչարակամութիւն։ Յորժամ ոչ կարեմք տանել զընկերն խոհեմաւ խրատով, ուշադրութեամբ ջանիւ զփրկութեան նորա, քաղցրութեամբ, կրեցմամբ պակասութեան, շնորհեցմամբ թողութեան, պարտիմք աղօթել։

# Գ Լ Ո Ւ Խ ՀԸ.

## Յաղագս առթի մեղաց։

1\. Առթիւ մեղաց իմանամք զայն տեղ, որով այր դիւրաւ անկանի 'ի մեղս։ Գոյ առիթ, որ առ ի հեռաւոր․ և գոյ, որ առ ի մերձաւոր։ Այն առ ի հեռաւոր, որով սակաւիցս հետևին մեղք։ Իսկ այն առ ի մերձաւոր, որով յաճախաբար հետևին մեղք․ Որ սիրէ զհոգին իւր, և զփրկութիւն հոգւոյ իւրոյ, փախիցէ յամենայն առթէ։ Պատճառական իւրն պահպանի ամենայնիւ ուշադրութեամբ։ Պատճառականագոյնն է հոգին մեր, արեամբն որդւոյն Աստուծոյ փրկեցեալն, վասն որոյ փրկութեան որդին Աստուծոյ եղև մարդ, և յանձն էառ զաշխատանս, և զդառնութիւնս չարչարանին, և զտաժանութիւնս մահն․ և վասն որոյ փրկութեան եդաւ օրէնքն, առաքեցեալք են առաքեալք առ 'ի քարոզել, և վարդապետք եկեղեցւոյ կարի յոյժ աշխատեցեալք են։ Ուրեմն ուշադրաբար պահպանելի է, զի մի կորընչիցի մեղօք։ Առիթն մեղաց ածէ 'ի յամենամեծ թշնամութիւն, և 'ի ծայրագունեղ չարն, զի ածէ 'ի մահացու մեղն, որ է ամենամեծ թշնամութիւն։ Քանզի մահացու մեղօք կորուսանեմք զշնորհն, և զբարեկամութիւն Աստուծոյ, զերանութիւնն 'ի փառս, մեք գոլով 'ի մահացու մեղս լինիմք անընդունակք արդեան յաւիտենականի կենի․ և լինիմք պարտականք առ 'ի կրելոյ զտանջանս դժոխոյ, եթէ ոչ ուղղիցեմք զվարս մեր։ Յամենամեծէ թշնամութենէ, և 'ի ծայրագունեղէ չարէ կարի յոյժ հեռանալի է։ Որ կարի յոյժ զգուշանայ ի ծայրագունեղէ չարէ, զգուշանայ նաև յառթէ, որ ածէ 'ի յամենամեծ չարն։ Մինչ ու-

րեմն առիթն մեղաց ածէ 'ի մեղս, որ է ամենամեծ չարն մեր, զդուշանալով 'ի մեղաց, զգուշանալ պարտիմք նաև յառիթէ մեղաց, որ ածէ 'ի մեղս:

2. Որք խնդրեն զմեծ շահաւէտութիւն, և վասն այնորիկ յայնժամ առնուն զմեծս աշխատանս, և հաւաչեն, զի հասանիցին առ ժառանգութիւն ստացելոյ շահաւէտութեան, ոչ միայն կարի յոյժ զգուշանան 'ի կորուսմանէ փափագեցելոյ շահաւէտութեան. այլ նաև յայնմանէ ամենայնէ, որ ածէ առ կորուստ սիրեցելոյ շահաւէտութեան: Մեք եմք խնդրողք զպատուականագունեղ աւետարանական մարգարիտն, և զգանձն թաքուցեալն 'ի յայգւոջ. և առ 'ի հասանել առ ժառանգութիւն ստացելոյ մարգարտի, յայնժամ առնումք զմեծս աշխատանս: Վասն զի ծոմապահեմք, աղօթեմք, հսկեմք, խոկամք, և բաշխեմք զողորմութիւնս: Ուրեմն ոչ միայն զգուշանալ պարտիմք 'ի կորուսմանէ, որ լինի մահացու մեղօք. այլ նաև յամենայնէ առիթէ, որ ածէ առ մեղս: Նաւավարք 'ի ծովու, և փափաքօղք երջանկաբար հասանել առ փափագեցեալ նաւահանգիստն, առ որ դիմեն նաւավարութեամբ, ոչ միայն զգուշանան 'ի նաւաբեկութենէ. այլ նաև յայնմանէ ամենայնէ, որ ածէ առ նաւաբեկութիւն: Աշխարհս այս է ծով, երկինն է նաւահանգիստն, եկեղեցին է նաւն, մեք եմք նաւավարք: Պահութիւն պատուիրանաց է Ճանապարհն, ներշնչումն հոգւոյն սրբոյ է հողմն յաջողակ, սիրտն, և միտն մեր, թևք, փորձութիւնն սատանայի, ախտի, և աշխարհի, մրրիկն. մահացու մեղն, նաւաբեկութիւն, առիթն մեղաց, ածիչ առ նաւաբեկութիւն: Ուրեմն մեք քրիստոնեայքս, որք դիմեմք առ երկինս, որ է նաւահանգիստն երջանկութեան մերոյ, պահպանութեամբ պատուիրանացն Աստուծոյ, և եկեղեցւոյ, ընդդիմանալով մրրկի փորձութեանց սատանայի, ախտի, և աշխարհի, ոչ միայն պարտիմք զգուշանալ 'ի մահացու մեղէ, որ է նաւաբեկութիւն հոգևոր, այլ նաև յառիթէ մեղաց, որ ածէ առ հոգևոր նաւաբեկութիւն:

3. Ճանապարհորդք, որք ուղղով ճանապարհաւ դիմեն առ փափագեցեալ, և սիրեցեալ հայրենին, ոչ միայն զգուշանան 'ի դահավիժութենէ, որ կարէ հանդիպել 'ի ճանապարհի, այլ նաև յայնմանէ ամենայնէ, որ առաջնորդէ, և ածէ 'ի դահավիժութիւն: Մեք քրիստոնեայքս եմք ճանապարհորդք, և հոգևորք պանդուխտք, ուղղով ճանապարհաւ դիմօղք առ հայրենին մեր, առ որ ստեղծեցեալք եմք: Հայրենին, առ որ ստեղծեցեալք եմք, է յաւիտենական երանութիւն, և երանական տեսութիւն: Ուղիղ ճանապարհն, որով դիմեմք առ փափագեցեալ, և առ սիրեցեալ երկնային հայրենին մեր, է կաթուղիկէ կրօնն, արտաքոյ որոյ ոչ գոյ փրկութիւն: Դահավիժութիւն 'ի ճանապարհի, և 'ի հոգևորի շաւղի, է մահուչափ մեղն, և ածօղն առ դահավիժութիւն, է առիթն մեղաց: Ուրեմն որք գտանիմք 'ի կաթուղիկէի կրօնոջ, և ունիմք զկաթուղիկէ հռոմէական հաւատն, և եմք որդիք որոյ կաթուղիկէի հռոմէական եկեղեցւոյ, ոչ միայն պարտիմք հեռանալ 'ի մեղաց, այլ նաև յառիթէ, որ ածէ առ մեղս: Զինուորք, զյաղթութիւն պատերազմի սիրօղք, և առ պսակն յաղթութեան հառաչօղք, և ընդդէմ թշնամւոյ յաղթանակել փափագօղք, հաւատարմաբար, և քաջաբար պատերազմին, և զգուշանան ոչ միայն 'ի կորստենէ յաղթութեան, այլ նաև յայնմանէ յամենայնէ, որ ածէ առ կորուստ յաղթութեան, և առ կորուստ պսակի: Մեք քրիստոնեայքս եմք հոգևորք զինուորք, պատերազմօղք, և մարտնչօղք ընդդէմ խաւարային իշխանութեանց, այսինքն, ընդդէմ սատանայի, և դիւաց, և նաև ընդդէմ ախտից մերոց, և ընդդէմ աշխարհի: Պսակն է յաւիտենական փառքն, խոստացեալ օրի-

նաւքաց

ծաքար պատերազմողաց , և ընդ-
դէմ հասարակի թշնամւոյ յաղթա-
նակողաց ։ Կորուսանի հոգևոր յաղ-
թութի՟ն մահացու մեղօք , քանզի
քրիստոնեայն , որ ծանրաբար մե-
ղանչէ , ոչ յաղթէ , այլ յաղթի ։
Ածօղն առ մահացու մեղն է առիթն
մեղաց · ուրեմն զգուշանալ պար-
տիմք ոչ միայն 'ի մահացու մեղաց ,
այլ նաև յամէ առթէ , որ ածէ առ
մահացու մեղն ։

4. Պատուհանն , ընդ որ ներ-
մտանեն մեղք , է ակն ։ Մեծ առի-
թն մեղաց , է տեսութի՟ն վտանգա-
ւորի տեսակի ։ Նաև հզօրագունեղն
դաւիթ տեսմամբ վտանգաւորի տե-
սակի յաղթեցաւ , և անկաւ ։ Ոչ
ինքն , այլ մեղն յաղթանակեաց ։
Եւ մին մեղն , առ որ էած տեսութի՟ն
վտանգաւորի տեսակի , եղև առիթ
միւսոյ մեղաց · քանզի շնութի՟ն է-
ած զնա առ մարդասպանութի՟ն ։
Բացադարձուցանելի է երեսն 'ի
կնոջէ զարդարեցելոյ , և ոչ է շր-
ջահայելի 'ի յօտարական տեսակն ։
Քանզի վասն տեսակի կնոջ բազումք
կորեան · և յոյժմանէ ցանկութի՟ ,
իբրև զհուր բորբոքի ։ Բա-
զումք հայեցեալք 'ի տեսակ կնոջ
օտարականի, զատապարտեցան։ Վ՟ս-
զի խօսակցութի՟ն նր՟ իբրև զհուր
բորբոքի ։ Եւ պատճառն է · քանզի
վտանգաւոր տեսակն շարժէ զերև-
ակայութի՟ն , երևակայութի՟ն ,
շարժէ զոգին , ոգին զարթուցա-
նէ զշարժումն , շարժումն ընդու-
նուցանէ զհեշտութի՟ն , և հեշ-
տութի՟ն շարժէ զանգամն , և այս-
պէս անզգուշն կործանի 'ի շրջահայե-
ցութե՟ իւրում ։ Ուրեմն ոչ պար-
տիմք շրջահայիլ 'ի քաղաքի , և ոչ
պարտիմք մոլորիլ 'ի հրապարակս
նորա ։ Սանձելիք են ակունք , զի
մի մոլորեցուցանիցեն , և մի շրջա-
հայիցին 'ի վտանգաւոր տեսակս ։
Ուրեմն զգուշանալի է 'ի տեսու-
թե՟ վտանգաւորի տեսակի։ Ունկն դը-
նելի է բանից տեառն ասացողի ։
Թէ եթէ ակն քո աջ գայթագղե-
ցուցանէ զքեզ , խլեա՛ զնա , և ըն-
կեա՛ 'ի քէն · զի լաւ է քեզ , եթէ
մի յանդամոց քոց կորիցէ · և մի ա՟մ
մարմինդ քո անկանիցի 'ի գեհեն ։
Մատթ. 5. Խիւ. 29. Ապաուրեմն
սիրօղն զփրկութե՟ իւր , և կամե-
ցօղն ուշադրաբար պահպանել զա-
ւաքինութի՟ն ողջախոհութե՟ , և
մաքրութե՟ , սանձէ զզգայութի՟ն
տեսողութե՟ , և զգուշանայ 'ի տես-
մանէ վտանգաւորի տեսակի ։

5. Պատուհանն , ընդ որ ներմտա-
նէ մահն մեղաց , է նաև ունկն ։
Քանզի նաև վտանգաւոր ձայնն է
առիթ մեղաց ։ Քանզի , որ է յա-
ճախ ընդ կաքաւողի , և ունկն դնէ
նմա , վասն ակարութե՟ իւրոյ , կոր-
ընչի 'ի գործունէութե՟ նր՟ ։ Ոչ միայն
վտանգաւոր տեսակն շարժէ զերև-
ակայութի՟ն , այլ նաև վտանգա-
ւոր ձայնն ։ Ուստի զայն , զոր առ-
նէ տեսութի՟ն վտանգաւորի տեսա-
կի , կարէ առնել նաև լսումն վտան-
գաւորի ձայնի ։ Նաև լսումն ձայնի
կարէ շարժել մինչև առ կործանում ։
Որպէս բազումք կորեան , վասն շր-
ջահայեցման տեսակի կնոջ · այսպէս
նաև բազումք կորեան վասն լսման
ձայնի նորա . եթէ ոչ մինչև առ
արտաքին գործն վասն անկարելու-
թե՟ , և ամօթխածութե՟ · սակայն
կորեան որքան առ ներքին կամա-
ւոր համահաճոյութի՟ն , ցանկութի՟ն ,
և համահաւանութի՟ն ։ Քանզի բազումք
նայելով , և լսելով կործանին ներք-
սապէս , և առաջի ա՟յ , թէպէտ
ոչ գործիցեն զարտաքին արարողու-
թի՟ն ։ Քանզի որք ոչ զգուշանան
'ի լսմանէ վտանգաւորի ձայնի , և
որք տան զներքին համահաւանութի՟ն ,
կործանին առաջի ա՟յ ։ Եթէ ձայնն ,
և տեսութի՟ն կանանց յափշտակեն
զանզգուշս , և սպանանեն · զի՞նչ ոչ
արասցեն երևեցուցմունք զազիրք ,
և կաքաւողաց , առ վավաշոտ սէր
դրդօղք ։ Եթէ ոմն յաղթի և յաղ-
թահարի 'ի մանկանէ , զի՞արդ կա-
րասցէ ընդդիմանալ երիտասարդի ,
և առն · յաղթեցեալն , և յաղթա-
հարեցեալն 'ի սակէ տեսութէ , և
'ի ձայնէ կնոջ , ողբալաբար , և յի-
մարաբար համարձակի յաղթել , և
յաղթահարել զվավաշոտս երևե-

ցուցմունս, և զբղջախոհս երգս կաքաւողաց, և երգողաց ։ Որ սիրէ զողջախոհութիւն, և զմաքրութիւն զգուշասցի 'ի տեսանէ, և 'ի ձայնէ կնոջ, իսկ 'ի յերևեցուցմանց վավաշոտաց, և 'ի յերգոց անմաքրոց փախիցէ որպէս յօձից թիւնաւորաց ։

6. Նաև վտանգաւոր կենցաղավարութիւն է առիթ մեղաց ։ Վասնզի 'ի վտանգաւոր կենցաղավարուէ գտանին վատթարք մարդիկք ։ Որք միաւորեն զինքեանս վատթարաց, գործողաց զվատթարութի, այրդին 'ի վատթարութի նոցա ։ Ուստի եթէ իցեն բամբասօղք, և զրպարտիչք, անկանին 'ի բամբասան, և 'ի զրպարտախօսութի, բամբասելով, և զրպարտելով, և զբամբասան, և զզրպարտախօսութի լսելով. եթէ իցեն որկրամոլք, և արբեցօղք, անկանին 'ի յորկրամոլութի, և 'ի յարբեցողութի, անկարգաբար ուտելով, և անկարգաբար ըմպելով. եթէ իցեն անառակք, և դատարկասէրք, անկանին 'ի յանառակութի, և 'ի դատարկասիրութի, անառակաբար, և դատարկաբար կելով. եթէ իցեն վավաշոտք, և բղջախոհք, վավաշոտաբար խօսօղք, վավաշոտաբար խաղացօղք, և վավաշոտաբար գործօղք, անկանին 'ի վավաշոտուէ, և 'ի բղջախոհութի, լեալք նմանք վավաշոտաց, և բղջախոհաց, համագործօղք նոցա 'ի վավաշոտս, և 'ի բղջախոհականս ներգործութիս. եթէ իցեն անիրաւք, և անօրէնք, անկանին 'ի յանիրաւուէ, և 'ի յանօրէնութի, անիրաւաբար, և անօրինաբար գործելով. եթէ իցեն ժանտագործք, վրէժխնդիրք, նախատօղք, կռուարարք, վիճօղք, թշնամանօղք, անկանին 'ի ժանտագործութի, 'ի վրէժխնդրուէ, 'ի նախատան, 'ի կռուարարութի, 'ի վիճողութի, և 'ի թշնամանողութի, կելով համանգոյն վատթարից ընկերաց ։ Որք զուգեն զինքեանս վատթարից ընկերաց. լինին այնպիսիք. քանզի գրեալ է 'ի սաղմոսի ։ Ընդ սրբոյն սրբ եղիցիս. ընդ առն ամբծի ամբիծ եղիցիս ։ Ընդ ընտրելումն ընտրեալ եղիցիս. և ընդ թիւրումն թիւրեսցիս ։ Սաղ. 17 թիւ. 26. Ուստի որ սիրէ զուղիղ ճանապարհ, որոշէ զինքն 'ի վատթարից ընկերաց, և փախիցէ 'ի վատթարէ կենցաղավարութեէ, և բարեկամութեէ ։

7. Նաև խաղն է առիթ բազմաց մեղաց ։ Մարդիկք տուեցեալք խաղից, ունայնաբար կորուսանեն զժամանակն, որ տուեցեալ է մեզ, զի գործիցեմք զփրկութի մեր, և գանձիցեմք 'ի յերկինս ։ Առնեն զինքեանս անըմբռնս առ հոգևորս կրթութիս, առ աղօթս, առ ջերմեռանդութի, առ խոկումն իրաց երկնայնոց, առ ընթերցումն հոգևորաց գրեանց, և առ ունկնդրումն ածային բանի. քանզի ստանալով զյօժարութի առ խաղն, կորուսանեն զփղձն, և զփափագն առ հոգևորս կրթութիս ։ Եթէ 'ի խաղն շահիցին, լինին անառակք, և վավաշոտք, զառատս դրամս թարց աշխատանաց ստացեալս, մսխելով, և ցրուելով ։ Իսկ եթէ կորուսանիցեն, լինին յափշտակօղք, անողորմք խստաքարդք, բարբարոսք, չքաւորք, ողորմելիք, և անկարք առ 'ի դարմանել զընտանիս իւրս, և ըստ կացութե իւրոյ կեալ պատշաճաբար ։ Եթէ ստանայցեն, լինին հպարտք, և լիրբք. իսկ եթէ կորուսանիցեն, լինին անհամբերք, բարկացօղք, զայրացօղք, և հայհոյիչք, լեալք բղջախոհք. և լիրբք դէպ 'ի յինքեանս, դէպ 'ի յիւրս, դէպ 'ի յընկերն, և դէպ 'ի յած ։ Լինին չարք, թէ շահիցին, թէ կորուսանիցեն ։ Խաղալով լինին մոլեկանք, շահելով լինին մոլեկանք, և կորուսանելով լինին մոլեկանք ։ Խաղալով լինին անխոհեմք, դնելով զինքեանս 'ի վտանգի չքաւորութե, և ողորմելութե, շահելով անվայելչաբար խնդացօղք, և կուրուսանելով վրդովեցեալք ։ Ոչ միայն զիւրեանս ինքեանս. այլ նաև զիւրայինս

քնս առնեն զողորմելիս ։ Լինին ողորմելիք որքան առ հոգին, ողորմելիք որքան առ մարմինն ։ Լինին ողորմելիք որքան առ հոգին, քանզի մերկացուցանեն զնա յառաքինութեանց, և զգեցուցանեն նոցա զմոլութիւս ։ Լինին ողորմելիք որքան առ մարմինն, քանզի լինին չքաւորք, և կարօտացեալք, երբեմն ոչ ունելով նաև զիրս հարկաւորս, լեալք մուրացիկք, որք էին առատք, և խնդրողք յայլոց, որք էին փարթամք ։ Որ սիրէ զհոգին, և զմարմին իւր, փախչի 'ի խաղէ, յաւէտ այնքանից մեծագունից չարեաց ։

8. Նաև վատթար գիրքն են առիթ չարեաց ։ Գտանին ոմանք պաշտօնեայք սատանայի ։ Քանզի շարադրեն զգիրս, տկարս, յիմարս, և զանզգուշս առ վատթարութիւս բորբոքօղս ․ վասնզի շարադրեն զգիրս, և զերգս զվավաշոտ, և զանմաքուր սէր ուսուցանօղս ։ Սատանայն չարիւք, և վատթարիւք լրագրութեք, փորձէ զմարդիկ ․ այնպիսիք շարադրիչք հետևօղք սատանայի, փորձեն զմարդիկ վատթարիւք գրօք, և անմաքրօք երգօք ։ Հետևին սատանայի առ 'ի կորուսանել զմարդիկ ։ Այնպիսիք շարադրիչք են ներհակք սրբազան շարադրողաց ․ քանզի գրեանք սրբոց գրողաց ուսուցանեն զբարեպաշտութիւն, և հրաւիրեն, և ընդոտուցանեն զմարդն առ գրկումն առաքինութեանց ․ և երգք նոցա զարթուցանեն զսիրտ մեր առ բորբոքեցեալ ջերմեռանդութիւն ․ իսկ գրեանք ասացելոց շարադրողաց, ուսուցանեն զմոլութիւն, և ընդոստուցանեն զմարդն առ այն ․ և երգք նոցա շարժեն առ վավաշոտութիւն, և բորբոքեն 'ի սրտի յիմարաց զհուրն անմաքրոյ սիրոյ ։ Իրաւի են յիմարք, որք թողեալք զգրեանս ջերմեռանդութեան, և սրբոց երգոց, ընթեռնուն զգրեանս ուսուցանօղս զմոլութիւս ․ երգեն զերգս, առ վավաշոտութիւն ընդոստուցանօղս ․ քանզի ընդունին զգործիս պաշտօնէից սատանայի առ կորուստ հոգւոյ իւրոյ ։ Նմանապէս է առիթ չարեաց, անմաքուր պատկերն, 'ի պատկերահանէ նկարագրեցեալն ․ որ զուշիմութիւն, և զհնարագիտութիւն, և զհանճարեղութիւն իւր, ոչ ցուցանէ 'ի նկարագրելն զսրբոց պատկերս, զմարդն առ ջերմեռանդութիւն շարժօղս ․ այլ ցուցանէ 'ի նկարագրութեան վավաշոտի պատկերի, զմարդն առ վավաշոտութիւն բորբոքողի, լեալ պաշտօնեայ սատանայի, կորստեան մարդոյ ջանացողի ։ Գայթագղութիւն վատթարից գրեանց, անմաքրոց երգոց, երևեցուցմանց, և պատկերաց վավաշոտաց, է մեծ. քանզի ասացելովք պաշտօնէից սատանայի գործեօք, բազումք տկարք, և 'ի միասին կամաւորք յիմարք գայթագղին, և կորընչին ։ Իմաստունք զասացեալս գործիս պաշտօնէից սատանայի անգոսնեն, և 'ի նոցանէ գարշին, պարապեալք փրկութեան հոգւոց իւրոց ։

## Գ Լ Ո Ւ Խ Հ Թ.

### Յաղագս մահացուցման զգայութեանց ։

1. Մարդն է ճանաչողական ։ Ուստի ունի զճանաչողական կարողութիւն ։ Տուեալ է նմա ճանաչողական կարողութիւն, զի ճանաչիցէ զբարին իւր, զի ցանկանայցէ այնմիկ ։ Ուստի է նաև բաղձական, բաղձացօղ բարւոյ իւրում ։ Ճանաչողական կարողութիւն է կրկնակ, կատարեալ, և անկատար ․ կամ առաւել կատարեալ, և նուազ կատարեալ ։ Կատարեալ, և առաւել կատարեալն, է իմացութիւն առշօշափօղն նաև զիմանալիս իրս ․ իսկ անկատարն, կամ նուազ կատարեալն, է զգայութիւն առշօշափօղն միայն զգալիս իրս ․ ուստի և բաղձանն է կրկնակ, բաղ

բաղձան կատարեալ , և բաղձան անկատար . կամ բաղձան վերնագոյն , և առաւել կատարեալ , և բաղձան ստորնագոյն , և նուազ կատարեալ : Բաղձանն կատարեալ , և վերնագոյն , է կամք , հետևող իմացութեան : Բաղձանն անկատար , և ստորնագոյն , է զգացողական բաղձանն , հետևող զգայութեան : Հոգին մարդոյ նաև բաժանեցեալ 'ի մարմնոյ , իմանայ , և կամի . քանզի որքան առ իմացութիւն , և կամս , որք են կարողութիւնք կատարելագունեղք , և հոգևորք , ոչ է կախեցեալ 'ի մարմնոյ : Ուստի նաև բաժանեցեալ 'ի մարմնոյ , կարէ վարիլ ստացելովք իւրովք կատարելագունեղիւք կարողութեամբք . իսկ բաժանեցեալ 'ի մարմնոյ , ոչ զգայ , վասնզի որքան առ զգայութիւն , և որքան առ զգացողական բաղձանն , որք են կարողութիւնք անկատարք , և ստորնագոյնք , կախեալ կայ 'ի մարմնոյ : Ուստի բաժանեցեալ , ոչ զգայ . քանզի առ զգացումն խնդրի մարմինն :

2. Զգայութիւն բաժանի 'ի ներքինն , և 'ի յարտաքինն : Ներքին զգայութիւն է , որով ներքսապէս զգամք : Եւ արտաքինն է , որով արտաքսապէս զգամք : Արտաքին զգայութիւն բաժանի 'ի տեսողութիւն , 'ի լսողութիւն , 'ի ճաշակողութիւն , 'ի հոտոտողութիւն , և 'ի շօշափողութիւն : Տեսողութիւն է , որով զգամք զիրս տեսանելիս , զորօրինակ , զգոյնս , և զգունաւորեցեալս իրս , զմեծն , և զփոքրն , զլոյսն , և զխաւարն , զհեռացութիւն , և զմերձակայութիւն , զպատկերս , և զձևս , զթանձրն , և զնօսրն , և զայլնմանիս : Լսողութիւն է , որով զգամք , և ճանաչեմք զհնչիւնն , և զձայնն , և զնման լսելիս իւր : Ճաշակողութիւն է , որով զգամք , և ճանաչեմք զհամս , զքաղցրն , և զդառն , և զայնպիսիս : Հոտոտողութիւն է , որով զգամք , և ճանաչեմք զհոտս , և զայնպիսիս : Շօշափողութիւն է , որով զգամք , և ճանաչեմք զհեշտութիւն , և զցաւն , զցուրտն , և զջերմն , զխոնաւն , և զչորն , զպինդն , և զկակուղն , և զայնպիսիս : Ներքին զգայութիւն բաժանի 'ի հասարակ զգայութիւն , 'ի յերևակայական կարողութիւն , 'ի յիշողութիւն , 'ի համարողական զօրութիւն , և 'ի զգացողաբար , և նիւթականաբար կարծողական զօրութիւն : Հասարակ զգայութիւն է , որով զգացողաբար տարորոշեմք զզգացմունս արտաքնայնոց զգայութեանց : Երևակայական կարողութիւն է , որ ներքսապէս ձևակերպէ զտեսակս , և զձևս զգալեաց իրաց : Յիշողութիւն է , որ զձևակերպեցեալս տեսակս զգալեաց իրաց պահէ , և յորժամ պիտոյանայ մատուցանէ : Համարողական կարողութիւն է , որով զմին զգալին ներքսապէս զգացողաբար տարորոշեմք յայլմէ , որպէս մինչ կենդանին զիւր ձագն զանազանէ յայնց , որք ոչ են իւրն : Կարծողական զօրութիւն է , որով զմինն 'ի միւսոյ նիւթականաբար ներքսապէս մակաբերեմք . որպէս մինչ կենդանին տեսեալ զցուլն , 'ի տեսմանէ մակաբերէ զփախուստն , և փախչի :

3. Զգայութիւն տուեցեալ է մեզ , զի նովաւ վարիցիմք ըստ հրամանի բանի , և օրինի Աստուծոյ : Տեսողութիւն է , զի տեսանիցեմք զզգալիս իրս , և 'ի տեսմանէ , և 'ի ճանաչմանէ զգալեաց իրաց դայցեմք 'ի ճանաչումն իմանալեաց իրաց : Կարեմք նաև վարիլ տեսողութեամբ առ ճանաչումն այնոցիկ , որոց ճանաչումն ըստ հրամանի բանի խնդրի առ համապահումն անհատի մերոյ : Լսողութիւն է , զի լսիցեմք զիրս մեզ օգտակարս , և զայնոսիկ , որք պատկանին մեզ , այնքան որքան առ բարին հոգւոյ , և այնքան նաև որքան առ բարին մարմնոյ ըստ հրամանի բանի , և օրինի Աստուծոյ : Ճաշակողութիւն է , զի ընդունիցիմք զհարկաւոր կերակուրն , և զհարկաւոր ըմպելին , այսինքն , զկերակուրն , և զըմպելին , առ համապահումն կենի հարկաւորն : Հո_

տոտո_

տուողութիւն է, զի վասն առողջութեան մարմնոյ մերոյ ընդունիցիմք զառողջ, և զօգտակար օդն, և փախիցիմք 'ի վնասակարէ : Շօշափողութիւն է, զի կարիցեմք ըստ հրամանի բանի, և օրինի ա̅յ վարիլ նովաւ առ համապահեցուցումն անհատի, թողլով զվնասակարն, և ընտրելով զօգտակարն, և նաև վարիլ առ համապահեցուցումն տեսակի : Ուրեմն արդարև կարեմք ըստ հրամանի բանի, և օրինի ա̅յ, տեսանել, լսել, ճաշակել, հոտոտել. և շօշափել, և վարիլ համայնիւք զգայութեամբք մերովք, այնքան ներքնայնովք, որքան արտաքնայնովք : Զգայութիւնք տուեցեալք են մեզ 'ի բնութենէ առ համապահեցուցումն անհատի, և տեսակի : Եթէ վարումն նոցա է ըստ հրամանի բանի, և օրինի ա̅յ, է բարի, զի զվաղճան, առ որ 'ի յա̅յ առ. բարին հոգւոյ, և մարմնոյ մերոյ կարգաւորեցեալք են. սոսանայցեմք : Կարգն է այս. զի ստորնագոյն մասն մեր ծառայիցէ վերնագունի մասին մերոյ. և վերնագոյն մասն մեր ծառայիցէ ա̅յ, վասն որոյ ստեղծեցեալք եմք : Քանզի ստեղծեցեալք եմք 'ի յա̅յ, զի ծառայիցեմք ա̅յ : Արդարեւ ուղիղ կարգն պահանջէ, զի զգայութիւնք մեր ծառայիցեն իմացութեան մերում, և իմացութիւն մեր ծառայիցէ Ա̅Յ :

4. 'Ի յայնսիկ, որք հետևին առաջնորդութեան վատթարացելոյ զգացողականութեան, ոչ պահի կարգն : Քանզի 'ի յայնսիկ վերնագոյն մասն ոչ ծառայէ ա̅յ, այլ հնազանդի ստորնագունի մասին : Ուստի 'ի յայնսիկ ստորնագոյն մասն եղեալ է թագուհի, հրամայող մասին վերնագունի, զի հնազանդիցի, և ծառայիցէ ինքեան : 'Ի յասացեալս վատթարացեալս անձինս, զուղիղ կարգն քանդօղս, նաև իմացութիւն ոչ ծառայէ ա̅յ, այլ հնազանդի զգայութեանց վ̅ն լուցկի մեղաց առ վատթարութի հակողի : Ուստի 'ի յասացեալս վատթարացեալս անձինս, վատթարացելոյ զգացողականութեան հնազանդօղս, զգայութիւնք լեալք են թագաւորք, հրամայօղք իմացողութեան : 'Ի մարդում որդւոջ ադամայ վասն սկզբնականի մեղին լուցիկն մեղաց է հակօղ զզգացողականութիւն առ վատթարութի, և զզգայութիւն առ չարն : Անկանօղն 'ի ներքոյ սկզբնականի մեղին, և ունեցօղն զլուցիկն սկզբնականի մեղին, լայ զթշուառութի իւր, և ասէ : Վաճառեցեալ եմ ընդ մեղաց, ոչ զբարին, զոր կամիմ, զայն առնեմ. այլ զչարն, զոր ատեմ, զայն գործեմ : Արդ ոչ ես գործեմ զայն, այլ չարն, որ բնակի 'ի յիս : Համահրճուիմ օրինաւն ա̅յ ըստ ներքին մարդոյն. բայց տեսանեմ զայլ օրէն 'ի յանդամս իմս, ընդդիմացօղ օրինի մտաց իմոց, և դերեցուցանօղ զիս օրինի մեղաց, որ է 'ի յանդամս իմս : Կամի ասել, վասն լուցկի սկզբնականի մեղի, զգացողութիւն իմ, և զգայութիւնք իմք հակեցեալք են առ. չարն : Ուստի, որք ոչ ընդդիմանան զգացողութեն հակողի առ չարն, այլ հետևին առաջնորդութեան նորա, և ոչ սանձեն զզգայութիւնս, այլ գործեն զչարիս, առ որ հակեցեալք են նոքա, են չարաբարոյք. իսկ որք օգնութեամբն աստուծոյ ընդդիմանան զգացողութեն, և սանձեն զզգայութիւնս, են երկիւղածք :

5. Ուղղութի մարդոյ, զլուցիկ մեղաց ունեցողի, զինքն առ չարն յօժարեցուցանօղ. լինի ընդդիմացմամբ զգացողականութեն, և սանձմամբ զգայութեանց, Ուստի ժուժկալութի ընդդիմանալի է զգացողականութեն, և ցանկութեն, և սանձելիք, և սանձահարելիք են զգայութիւնք, և նուաճելիք են անկարգ շարժմունք մարմնոյ : Քաջաբար մենամարտելի, և պատերազմելի է ընդդէմ ցանկութեն մարմնոյ, զի նուաճիցին զգայութիւնք, և անդամք մերք երկրայինք, որովք մեղանչեն վավաշոտք, և զանձն ամենամեծի վայելչութեն տ̅ն վշտացուցանեն : Հին մարդն մեր 'ի միասին

ընդ

ընդ անդամոց խաչելի է, զի եղծիցի մարմինն մեղաց, և այլ ևս ոչ ծառայիցէ մեղաց։ Պատերազմելի է, զի մի թագաւորիցէ մեղքն 'ի մահկանացու մարմնոջ մերում, զի հնազանդիցիմք ցանկութեանց նր· և զի մի առնիցեմք զանդամս մեր զէնս անօրէնութեան մեղաց· այլ զի տեառնագրիցեմք զմեզ այ իբրև յարուցեալս 'ի մեռելոց, և առնիցեմք զանդամս մեր զէնս արդարութեան այ։ Նուաճելիք են անդամք, և սանձելիք են զգայութիւնք, զի մեղն ոչ իշխիցէ 'ի վերայ մեր, այլ զի մեք իշխիցեմք անդամոց, և զգայութեանց մերոց։ Որք հնազանդին առաջնորդութեան զգայողականութեան, և հպատակին վատթարի յօժարութեան զգայութեանց, լինին ծառայք մեղաց առ մահն· իսկ որք ընդդիմանան զգայողականութեան, և նուաճեն զզգայութիւնս յօժարեցուցանօղս առ չարն, լինին ծառայք այ առ կեանս։ Զի մի լինիցիմք ուրեմն ծառայք մեղաց առ մահ, այլ զի լինիցիմք ծառայք այ առ կեանս, ընդդիմանալի է զգայողականութեան, և մահացուցանելիք են զգայութիւնք։

6. Սանձելի է տեսողութիւն, սանձահարելի է լսողութիւն, նուաճելի է շօշափողութիւն։ Սանձելիք են ակունք, սանձելիք են ականջք, սանձելի է որկորն, սանձելի է լեզուն, և սանձելի է բոլոր մարմինն։ Սանձէ զտեսողութիւն, և զակունս, որ փակէ զակունս· զի մի տեսանիցէ զվտանգաւորս գեղեցկութիւնս, զերևեցուցմունս անմաքուրս, և զպատկերս զազիրս, որք յափշտակեն զմիտս տկարաց, ընդոստուցանեն զանկարգս շարժմունս, պատճառեն զվավաշոտական հեշտութիւնս, բորբոքեն զըղձախոհութիւն, և վառեն զանմաքուր սէր։ Որք փակեն զակունս, զի մի տեսանիցեն զիրս վտանգաւորս, զմարդն առ վավաշոտութիւն շարժօղս, են իմաստունք· քանզի որք նուաճեն զակունս, զի մի տեսանիցեն զիրս վտանգաւորս, ազատեն զինքեանս 'ի մահուանէ։ Իսկ տուօղք զազատութիւն ականցն նայելոյ 'ի յիրս վտանգաւորս, և վավաշոտաբար հեշտանալոյ 'ի յայնոսիկ իրս, են յիմարք· քանզի կամաւորապէս ճաշակելով զվավաշոտական հեշտութիւնս, և զըղձախոհական բերկրութիւնս, կորուսանեն զշնորհն, և զբարեկամութիւն այ, և զեղբայրութիւն քի, և ենթարկեն մահուան զպատուականագունեղս հոգիս իւրս· արեամբ որդւոյն այ ըստ մարմնոյ վն մեր չարչարեցելոյ, փրկեցեալս։ Իրաւի այսպիսիքն են ողորմելիք· վասնզի ոչ կամելով նուաճել զտեսողութիւն, ենթարկեն մահուան զպատուական հոգին։ Որք ճաշակեն զհեշտութիւնս տեսողութեան, կորուսանեն զկեանսն հոգւոց իւրոց, որք են ոգիք։ Որք հեռանան 'ի կամաւորէ սանձմանէ, օգտակարէ, շահաւէտագունեղէ, գրկեն զմահն հոգւոց իւրոց, դարշելին, և կարի վնասակարն։ Ապաուրեմն սանձահարելի է տեսողութիւն, և սանձելի, և նուաճելի է ակն։

7. Սանձահարէ զլսողութիւն, և զականջս, որ խցէ զականջս, զի մի լսիցէ զվտանգաւոր ձայն, զվավաշոտական խօսակցութիւն, զչարախօսութիւն, և զըղձախողական երգս, որք շարժեն զսիրտն, ընդոստուցանեն զանմաքուրս խղձս, զարթուցանեն զվավաշոտութիւն, և գրգռեն զըղձախոհութիւն, և բորբոքեն զմարմինն առ վավաշոտական գործս։ Խլացուցանօղք զականջս, զի մի լսիցեն զանմաքուրս բանս, և զանիրաւ զրպարտախօսութիւն, անիրաւաբար զհամբաւն ընկերից սևացուցանօղ, են իմաստունք· քանզի սանձօղք զականջս, ազատեն 'ի մահուանէ զհոգիս իւրեանց։ Իսկ որք ունկնդրեն վավաշոտից, և անմաքրից բանից, են յիմարք· քանզի վն մարմնականաց հեշտութեանց սպանանեն զհոգիս հոգևորս· նմանապէս են յիմարք, որք ունկնդրեն բամբասանաց, և անիրաւաց զրպարտախօսութեանց, զանուանն ընկերի նսեմացուցանողաց, վասնզի մա‿

նեն

նեն 'ի վտանգ կորնչելոյ 'ի յաւիտեան ։ Սանձահարէ զձաշակողութիւն, և զորովայնամոլութիւն, որ հեռանայ 'ի կերակրոյ միսարէ, աւելորդէ, և արգելեցելոյ, և 'ի յըմպելւոյ միսաակարէ, աւելորդէ, և արբեցուցանողէ. և կատարէ զամս պահեցողութիւս, և զծոմս, 'ի սբոյ մօրէ եկեղեցւոյ հրամայեցեալս ։ Են, որք 'ի կիր արկանեն զաւագագոյն սանձումն որկրամոլութեան, նաև պահելով կամաւորապէս զոմանս ճնշեցմունս յինքենէ ընտրեալս, և զխստաբարոյս ծոմապահեցմունս ըստ խոհեմութեան ։ Սանձօղք զորովայնամոլութիւն են իմաստունք, քանզի սանձմամբ որկրամոլութեան, գործեն զկեան հոգւոյ ։ Են իմաստնագոյնք, որք գործեն զմեծագոյն սանձումն որկրամոլութեան. քանզի սանձմամբ որկրամոլութեան, հաւաքեն զաւագագոյնս գանձս 'ի յերկինս ։ Են յիմարք, որք հետևին թելադրութեան որկրամոլութեան մինչև 'ի մահ. քանզի հեշտութեամբ որկրամոլութեան, համափոխեն զերջանկութիւն փառաց ։

8. Սանձահարէ զլեզուն, որ հեռանայ 'ի բամբասանաց, 'ի զրպարտախօսութենէ, 'ի յանիծաբանութենէ, 'ի կռուոց, 'ի պարսաւանաց, 'ի վավաշոտականաց բանից, և 'ի հայհոյանաց ։ Սանձումն լեզուի է կարի հարկաւոր. քանզի լեզուն արդարև է փոքրիկ անդամ, բայց զմեծս իրս գործէ ։ Լեզուն է հուր. բորբոքօղ զամենամեծ հրդեհումն, և է ընդհանրութիւն անիրաւութեան ։ Լեզուն, որ կացուցեալ է 'ի յանդամս մերս, արատաւորէ զբոլոր մարմինն, և վառէ զանիւն ծննդեան մերոյ, բորբոքեցեալ 'ի դժոխոյ ։ Լեզուն է անսանձ անասուն, անդադար չար, և է փոքրիկ անդամ, լի թիւնիւ մահաբերիւ ։ Որ սանձէ զլեզուն, և պաշտպանէ զբերան իւր, պաշտպանէ զհոգին իւր ։ Որ սանձահարէ զլեզուն իւր, և որ ոչ է սղալեալ բանիւ բերանոյ իւրոյ, է երանեալ ։ Որ պաշտպանէ զլեզուն իւր, և զշրթունս իւրս, ազատէ 'ի աղալմանէ լեզուի, և 'ի կորստենէ, զոր ծնանին շրթունք ։ Որ պաշտպանէ զշրթունս իւրս, է այր բարի, 'ի բարւոյ գանձէ սրտի իւրոյ արտաբերօղ զբարի ։ Որ տայ զազատութիւն լեզուի, է կարի յոյժ ողորմելի. վասնզի է ստախօս, բամբասօղ, անիծանօղ, երդնուօղ, կատակօղ, կռուօղ, զրպարտօղ, գրգռիչ, և զվավաշոտս, և զբղջախոհս իւր խօսօղ, և հայհոյիչ ։ Սանձէ զբոլոր մարմինն, որ հեռանայ 'ի հեշտութեանց, և 'ի բերկրութեանց մարմնաւորաց ապօրինաւորաց, ընդդիմանայ ցանկութեանց մարմնոյ, և սանձեալ զամս անդամս իւրս, ենթարկէ զնս հրամանի բանի, և օրինի այ ։ Որ սանձէ զմարմին իւր, է իմաստուն. քանզի սանձմամբ մարմնոյ մահկանացուոյ, կեցուցանէ զանմահ հոգին ։

## ԳԼՈՒԽ. Ձ.

### Յաղագս հասարակաց բարերարութեանց այ ։

1. ԲԱրերարութիւնքն այ են բարիքն, զորս մեք ընդունիմք 'ի յայ ։ Ոմն հասարակք բարերարութիւնք, որք արարեցեալք են ամենեցուն ։ Ոմն մասնաւորք, որք տուեցեալք են ումեմն 'ի մասնաւորի ։ Յայսմիկ գլուխ խօսիցուք զհասարակաց բարերարութեանց ։ Յայլում գլուխ խօսիցուք զմասնաւորաց պարգևեցելոց 'ի մասնաւորի ։ Բարերարութիւնքն այ յարաբերեցեալք մարդոյ, են բազումք, և մեծք ։ Են բազումք, քանզի ստեղծ զմարդն, ետ նմա զիմացութի, ազնուացոյց զնա անձնիշխանութեամբ. արար զնա տր ստեղծուածոց իւրոց, համապահէ զմարդն մասնաւորաւ խնամակալութեամբ, ետ նմա զօրէն, ե-

ղեալ մարդ փրկեաց զնա արեամբ իւրով, և յղեաց զառաքեալս, զվարդապետս, և զքարոզիչս առ 'ի լուսաւորել, արդարացուցանել, և սրբացուցանել զնա: Ահա երևեցան բազումք բարերարութիւնք, 'ի յառաջաբաշխողէ ա̃մից բարեաց մարդոյ շնորհեցեալք, այսինքն, բարերարութիւն ստեղծման, բարերարութիւն իմացութեան, բարերարութիւն կամին, բարերարութիւն տէրութեան, բարերարութիւն համապահման բարերարութիւն օրինի, բարերարութիւն փրկութեան, և բարերարութիւն քարոզութեան, յորս պարունակեցեալք են բազումք բարերարութիւնք, բարերարութիւն լուսաւորութեան, բարերարութիւն ներշնչման, բարերարութիւն կրօնի, բարերարութիւն խորհրդոց, բարերարութիւն արդարացուցման, բարերարութիւն սրբացուցման, բարերարութիւն շնորհի, և բարերարութիւն փառաց: Բարերարութիւնքն այս են մեծք. քանզի են գերազանցք, գերափայլք, և ազնիւք:

2. Նախ քան զլինելն այսր աշխարհի, ոչ ինչ էր, միայն ամենակարողն ա̃ծ 'ի յաւիտենից էր 'ի յիւրեան ինքեան, ներփակօղն 'ի յինքեան զանհնիցս անհուն կատարելութիւնս, ոչ ուրուք իրի կարօտօղ, զամենայնս ստինձանս կատարելութեան իւրեամբ ինքեամբ վայելօղ, էակ յինքենէ, իւրեամբ ինքեամբ երջանիկ, և իւրեամբ ինքեամբ երանեալ: Վասն ամենամեծի բարութեան իւրոյ, և առ 'ի յայտնել զամենակարողութիւն իւր, և զանհուն գերազանցութիւն իւր, յոչընչէ ստեղծ, և կերտեաց զայս աշխարհս, և զայս ընդհանուրս, այսինքն, զերկինս, զերկիր, և զհրեշտակս, և զհամայնս իրս, որք են 'ի յերկինս, և յերկրի: Զհամայնս ստեղծեաց ապատաքար, քանզի ոչ բոլոր աշխարհն, և ոչ ո՛ և իցէ կատարելագունեղ մասն նորա հաւասարի ա̃ծայնոյ անհնոյ բարութեան, զի հարկաւորիցէ զնա առ արտադրութիւն իւր: Կարէր և զայլս տեսակս ստեղծուածոց արտադրել, մինչ է ամենակարող. սակայն ոչ կամեցաւ զայլս տեսակս արտադրել, այլ միայն 'ի յազատէ ընտրողութենէ իւրմէ զայսքանս բացորոշեցեալս տեսակս արտադրեաց, զորս կամեցաւ: Նաև զոմանս տեսակս այսոցիկ, զորս արտադրեաց կարաց ոչ արտադրել. սակայն արտադրեաց, զի կամեցաւ: Ներ այսոցիկ տեսակաց, զորս արտադրեաց, ներփակեաց նաև զմարդկային տեսակն, զոր կարէր ոչ արտադրել, բայց արտադրեաց, քանզի կամեցաւ: Ուստի զբարերարութիւն ստեղծման շարաբերեաց նաև մարդոյ, քարշելով զնա 'ի յոչ գոյէն առ գոյն, տալով նմա զգոլ բնական, այսինքն, զայս, որ էայս. գոլ բաղադրեցեալ 'ի մարմնոյ կազմողականէ, և 'ի հոգւոյ բանականէ: Որ բարերարութիւն եղև ամենամեծ. քանզի ետ զգոլ ստեղծմամբ:

3. Իմացութիւն է ազնուագունեղ կարողութիւն: Քանզի իմացողականաւ կարողութեամբ իմացող ստեղծուածն նմանի ա̃յ: 'Ի յա̃ծ, որ է նոյն ինքն ըստ ինքեան էնթագոյանալն, ըստ ինքեան կեալն, և ըստ ինքեան իմանալն, է անհուն ճանաչելն, և անհուն իմանալն: Ուստի իմացող ստեղծուածն նմանի ա̃յ: Քանզի իմացող ստեղծուածն, է կեայ, ճանաչէ, և իմանայ: Ուստի բարուոք երևեցուցանէ զա̃ծ: Մարդն է իմացող ստեղծուած. քանզի, է, կեայ, ճանաչէ, և իմանայ: Ուստի բարուոք երևեցուցանէ զա̃ծ: Ուրեմն նմանի ա̃յ: Վասն այսորիկ 'ի ս̃բ գրոց ասի: Արար ա̃ծ զմարդն 'ի պատկեր իւր: Ծնն. 1. Թիւ. 27. Այս է գոլ իմացական: Ուստի իմացութեամբ երևեցուցանէ զա̃ծ, և նմանի նմա: Ուրեմն իմացութիւն է ազնուագունեղ կարողութիւն, և ազնուագունեղ կատարելութիւն: Դարձեալ իմացութիւն ձևակերպէ զիմանալիս տեսակս, յինքենէ ձևակերպեցեալս. իմանայ զէութիւնս իրաց, և իմանայ զբնութիւնս: Եւ միջնորդութեամբ տեսակաց իմանալեաց, զէ‿

զէութիւս իւրաց ինքեան երևեցուցանողաց , գրեթէ լինի ամ ինչ : Մարդն իմացողականն զայս ունի իմացութբ : Որպէս իմացութիւն է աղնուագունեղ կատարելութի: Ած եւ զիմացութիւն մարդոյ · քանզի մարդն յորժամ էառ զգոյն , 'ի նոյնոյ էառ և զկարողութիւս : Զգոյն էառ 'ի յայ · ուրեմն և զկարողութիւս , և զկատարելութիւս իւրս էառ 'ի յայ : Ուրեմն և բարերարութիւն իմացութեն , որ է աղնուագունեղ կարողութի մարդոյ յայ նմա շնորհեցեալ , է ամենամեծ , վասնզի պարգևօղ զաղնուագունեղ կատարելութին :

4. Նաև կամն է աղնուագունեղ կարողութի : Վասնզի նաև կամօք անձնիշխան ստեղծուածն նմանի այ : 'Ի յած , որ է անհնիցս անհունաբար կատարեալ, և որ է ամենակարօղ , ոչ միայն է իմանալն , այլ նաև է կամիլն : Ուստի 'ի նմա ոչ միայն է իմացութիւն , այլ նաև է կամն : Իմացութբ ըմբռնէ զիւր ինքն , և զէութի իւր , և 'ի յէութեն իւրում, որ է մասնակցելի 'ի յանհնից ստեղծուածոց , իմանայ զհամայնս կարելիս իւրս : Կամօք հարկաւորապէս կամի զիւր ինքն , և զբարութի իւր , որ է լիութի գոլոյ · իսկ զստեղծուածս , որք ոչ են լիութի գոլոյ , այլ մասնակցութիք լիութեն գոլոյ , ոչ կամի հարկաւորապէս , այլ ազատաբար : Ուստի շուրջ զգոյութբ ստեղծուածոց ունի զանձնիշխանութի : Մարդն է ստեղծուած նաև կամեցօղ · քանզի է իմացօղ , և կամեցօղ : Եւ զորս ունի ենթ իշխանութեն իւրոյ , կամի ազատաբար : Ուստի շուրջ զայնոքիւք իրօք , զորս ունի ենթ իշխանութեն իւրոյ , ունի զանձնիշխանութի : Ունի զազատութիւն շուրջ զկրթութբ : Քանզի կարէ ազատաբար ելուզանել զօէր , կամ զատելութի , և կարէ կամիլ զկիրառութն սիրոյ , կամ կախըմբունել զնա : Եւ այսպէս է տր ներգործութեց իւրոց , ոչ միայն , որքան առ կիրառութն , այլ նաև որքան առ տեսակն : Ուստի բարւոք երևեցուցանէ զած : Ուրեմն նմանի այ նաև կամօք , և անձնիշխանութբ : Ուրեմն նաև կամն է աղնուագունեղ կարողութի , և կատարելութի : Ած եւ մարդոյ զազատ կամն : Ապաուրեմն նաև բարերարութիւն կամին է ամենամեծ · քանզի պարգևօղ զաղնուագունեղ կատարելութի :

5. Ած , որ ստեղծ զընդհանուրս , ունի զծայրագունեղ տէրութի 'ի վերայ ամից իւրաց : Համայնք կախեալք կան ի նմանէ յամում իրի , 'ի գոլն , 'ի համապահիլն , 'ի շարժիլն , և 'ի գործելն : Որպէս վերնագունեղ տր կառավարէ զընդհանուրն , բոլորովիմբ ինքեան ենթարկեցեալն : Արար զընդհանուրն վասն իւրեան , զի որպ ինքն է սկիզբն ամից իւրաց , այսպէս նաև ինքն իցէր վախճանն ընդհանրոց : Արդուրեմն ած , որ է սկիզբն , և վախճանն ամից իւրաց , կացոյց 'ի յիրս զկարգադրութի : Կարգադրեաց զշարժմունս երկնից առ խառնեցուն տարերաց : Կարգադրեաց զտարերս առ բուսուն տնկոց , զտունկս , և զբանջարս առ կերակուր անասնոց , և զանասունս առ կերակուր , և առ կիրառութն մարդոց : Եւ այսպէս կացոյց զմարդն տր , և թագաւոր 'ի վերայ գործոց ձեռաց իւրոց : Արար զմարդն առ պատկեր , և առ նմանութի իւր , և կացոյց զնա , զի իշխիցէր ձկանց ծովու , և թռչնոց երկնից , և անասնոց , և ընդհանրոյ երկրի , և ամի սողնոյ , որ շարժի 'ի յերկրի : Յիշեաց զմարդն , և յայցել նմա : Փոքր ինչ խոնարհ արար զնա քան զհրեշտակս , և փառօք , և պատուօք պսակեաց զնա , և կացոյց զնա 'ի վերայ ձեռակերտաց իւրոց : Զամ ինչ հնազանդեցոյց 'ի ներքոյ նր , զխաշս , և զարջառս , և զամ ինչ եւ և զերեվայրիս . զթռչունս երկնի , և զձկունս ծովու , որք շրջին ընդ շաւիղս ծովաւ : Եւ ուրեմն մարդոյ և զբարերարութին տէրութեն , ո-

բով տիրիցէր ստեղծուածոց նորա։ Ուստի մեծ է, և բարերարութի՟ն տէրութե՟։ Զմարդն, զոր ստեղծ, համապահէ։ Ուստի և բարերարութի՟ն համապահման, է այնքան մեծ, որպէս և բարերարութի՟ն ստեղծման. քանզի համապահեցուա՟ծ է իբրև զհանապազորդական ստեղծում։

6. Վասն լուցկի սկզբնականի մեղաց, մարդն կարի խաւարեցուցեալ էր զիմացութի՟ իւր, և զմ՟ կուրութե՟ մնաց վատթարացուցեալ էր զկամ՟ իւր, և վասն վատթարաց ներգործութեց ազնուագունեղից կարողութեց իւրոց արարեալ էր զիւր ինքն կարի արհամարհելի, և անդոսնելի. ա՟ծ, որ զմարդն ստեղծեալ էր յոչընչէ, և զարդարեալ էր զնա ազնուագունեղիւք կարողութբք, և տուեալ էր նմա զտէրութի՟ 'ի վերայ ա՟մց ձեռակերտաց իւրոց. գթացեալ 'ի վերայ նորա, ետ նմա նաև զբարերարութի՟ն օրինի, լուսաւորելով զնա գրեցելովք պատուիրանօք որքան առ ա՟ծ, որքան առ ծնօղս, և որքան առ ա՟մն այլս մարդիկ, արգելլով զվատթարս ցանկութիս կանանց, և օտարականաց իրաց, զսուտ վկայութիս, և զանիրաւս բանս, զչարագործութիս, և զանիրաւագործութիս, զմարդասպանութի՟, զշնութի՟, և զգողութի՟. լուսաւորելով զնա նաև որքան առ սէրն ա՟յ ստեղծողի, և կերտողի իւրոյ 'ի վեր քան զա՟մ ինչ. և ընկերի իւրոյ որպէս իւրոյ ինքեան, և լուսաւորելով զնա նաև վարդապետութբք բազմաց մարգարէից, յինքենէ առաքեցելոց, որքան առ արդարութի՟, առ իմաստութի՟, առ արիութի՟, և առ այլս առաքինութիս, և որքան առ խորհուրդս հաւատալիս, և որքան առ յուսադրութի՟ն 'ի յա՟ծ, և որքան առ երկիւղն ա՟յ. զի լուսաւորեցեալ օրինօք, և վարդապետութբք մարգարէից, ուղղիցէր, և զարդիցէր զիւր ինքն, և զազնուութի՟ իւր ճանաչիցէր, և լուզանելով զուղիղս արարողութիս, և զներգործութիս իմացութե՟, և կամին, և պահելով զպատուիրանս ա՟ն ա՟յ իւրոյ։ Եւ բարերարութիս այս օրինի, յա՟յ մարդոյ ողորմածաբար շնորհեցեալն, է ամենամեծ։

7. Որ ունի զանհուն բարութի՟, և ողորմութի՟, վերստատրեաց նաև զբարերարութի՟ փրկութե՟. քանզի միածին որդին ա՟յ, վասն փրկութե՟ մարդոյ 'ի ծոցոյ հօր էջ 'ի յարգանդ կուսին. էառ զմարդկային, ճշմարիտ, չարչարելի, և մահկանացու բնութի՟ն, և միաւորութբ ենթակայականաւ, և անձնաւորաւ միաւորեաց ինքեան. և եղև մարդ չարչարելի, և մահկանացու։ Ծնեալ 'ի յանարատէ, և 'ի յամբիծէ կուսէ, և հասեալ առ կատարեալ հասակ, սկսաւ աշխատիլ վասն փրկութե՟ մարդկան, պահելով, փորձեցեալ, աղօթելով, զառաքեալս հաւաքելով, զզարմանալիս, և զհիանալիս սքանչելիս գործելով, զխորագունեղս, և զբարձրագունեղս խորհուրդս յայտնելով, զազնուագունեղս, և զգերազանցագունեղս վարդապետութիս աւանդելով, զպատուիրանս օրինի իմաստնագունեղապէս բացատրելով, զզարմանալիս օրինակս առաքինութեց տալով, զաւետարանականս խրատս զկատարելութե՟ կենդի խնդրողի առաջադրելով, զաւետարանականս երանութիս ուսուցանելով, և ցուցանելով, զեկեղեցին սիւն, և հաստատութի՟ ճշմարտութե՟ կերտելով զնոր կտակարանն, և զնոր օրէնսն սիրոյ դնելով, նորոյ կտակարանի զկատարելագունեղս խորհուրդս, զշնորհն շարաբերօղս, և զամբարիշտն արդարացուցանօղս, և զշնորհն աճեցուցանօղս, կացուցանելով։ Վերջապէս վասն փրկութե՟ մարդկան չարչարեցաւ, խաչեցաւ, և թաղեցաւ։ Յերրորդում աւուր յարեաւ, համբարձաւ 'ի յերկինս, նստի ընդ աջմէ հօր, և դարձեալ գալոց է դատել զկենդանիս, և զմեռեալս, և տալ իւրաքանչիւրոյ ըստ գործոց իւրոց։ Բարերա-

րա-

թարութիւս այս փրկութեան ողորմածաբար արարեցեալն մարդոյ, է ամենամեծ, և յաղթօղ զայլ ամ բարերարութի :

8. Քս պատուիրեաց առաքելոց, զի գնասցեն 'ի յընդհանուր աշխարհ, և քարոզեսցեն մարդոյ զՔս աւետարանն : Հրամայեաց, զի նստիցեն 'ի յերուսաղէմ, մինչև ընդունիցեն զզօրութի 'ի բարձանց : Ելեալ յերկինս, յղեաց առաքելոյս զհոգին Սբ : Առաքեալք, աւետարանիչք. և աշակերտք սն, լցան հոգւով սրբով : Առաջնորդութբ հոգւոյն սրբոյ աւետարանիչք գրեցին զաւետարանս : Աւետարանիչք, առաքեալք, և աշակերտք սն գնացեալք, քարոզեցին զաւետարանն յամուրեք ան գործակցութբ, և զբանն հաստատէին ամ նշանօք : Պատմեցին զփառս այ, և աւետարանեցին զգործս ձեռաց նորա : Յամ երկիր ենհաս հնչումն նոցա, և 'ի յեզերս տիեզերաց երկրի բարբառք նոցա : Քարոզեցին, յաղթեցին զհասարակ թշնամին մարդկայնոյ սեռի, և լուսաւորեցին զմարդիկ : Ուսուցին զՔս հաւատն, և տնկեցին զճշմարիտ օրէնն : Յետ առաքելոց եղեն եպիսկոպոսք, առաջնորդք առաքելոց, և սրբոյ մօր եկեղեցւոյ վարդապետք, լցեալք նոյնով հոգւով սրբով, և վառեցեալք նախանձաւորութբ ճշմարտութե, բանիւք, և գրովք զնոյն հաւատն, և օրէնն քարոզեցին, և զճշմարտութի ն ուսուցին հաւատացողաց : Եւ այժմ ուսուցանեն, և քարոզեն, և հաստատեն զհաւատացեալս վարդապետութբք իւրովք : Եւ հոգին Սբ լուսաւորէ ներքսապէս, և 'ի սիրտս մերս ներաշնչէ : Այս և բարերարութի ն քարոզութե, է մեծ բարերարութի, և է գերազանց : Այսքանիւք մեծիւք, և ազնուօք բարերարութբք յաղթեցեալ, ջանացիր, զի 'ի քեզ իցէ ոգի երախտաճանաչութե, զի կարիցես պատասխանել մեծից, և ազնուաց բարերարութեանց քեզ պարգևեցելոց :

## ԳԼՈՒԽ. ՁԱ:

### Յաղագս մասնաւորաց բարերարութեանց ԱԾ :

1. Խօսեցաք զհասարակաց բարերարութեանց 'ի հօրէ ողորմութեանց այ արարեցելոց : Քանզի այ է ստեղծօղն, և համապահօղն ամց : Համայնք մարդիկք զարդարեցեալք են իմացութբ, և կամօք : Համայնք մարդիկք ունին զազատութի 'ի ստեղծուածս ինքեանց ենթարկեցեալս : Օրէնն է վասն ամենեցուն : Վս զի ամենեքեան պարաւանդին պահել զպատուիրանս տեառն պատգամաց : Նաև փրկութի ն եղև վասն ամենեցուն : Քանզի որդին այ եղև մարդ, և չարչարեցաւ վասն փրկութե ամենեցուն : Վասնզի կամի, զի ամենայնոք փրկիցի : Զոչոք, որ գայ առ փրկութի, արտաքսէ : Քանզի 'ի Քս ոչ է հեթանոս, և հրէայ. թլփատութի, և անթլփատութի, բարբարոս, և սկիւթացի, ծառայ, և ազատ. այլ ամենեքեան, և 'ի յամս Քս : Եւ իւրաքանչիւրք, որք մկրտին 'ի Քս, զգենուն զՔս : Ոչ է հրէայ, և ոչ յոյն, ոչ է ծառայ, և ոչ ազատ. ոչ է այր, և ոչ կին : Քանզի համամայնքն մի են 'ի Քս Յս : Վասնզի 'ի Քս Յս ոչ թլփատութի ն արժէ ինչ . ոչ անթլփատութի ն, այլ նոր ստեղծուածն : Նաև քարոզութի ն եղև վասն ամենեցուն : Քանզի առաքեալքն հրամայեցան քարոզել ամից ստեղծուածոց, այսինքն, ամից մարդկանց : Ուրեմն ամոք ընդունեցեալ կնի առ քարոզութի, առ հոգևորս հարսանիս, առ եկեղեցին, առ խորհուրդս, առ հաւատն, առ շնորհս, և առ փառս, միայն թէ գայցէ : Յայսմիկ գլխոջ խօսեսցուք զմա_

նա_

նաւորաց բարերութեանց, որք ոչ լինին ամենեցուն, այլ լինին միում, կամ ոմանց ըստ բարեհաճոյութեան ա̄յ ։

2. Ա̄ծ, որ սիրէ զա̄մս շնորհելով նոցա զհասարակս բարերարութիւնս, նաև կացոյց զզանազանութիւն 'ի մարդիկ ։ Վասնզի են բաժանմունք շնորհաց, բայց հոգին է նոյն ։ Եւ են բաժանմունք պաշտօնատարութեանց, բայց տ̄ր նոյն է ․ և են բաժանմունք ներգործութեանց, բայց ա̄ծ է նոյն, որ գործէ զա̄մ իր 'ի յա̄մում ։ Արդ ուրեմն իւրաքանչիւրոյ տրի յայտնութիւն հոգւոյ առ օգուտ ։ Արդարև ումեմն տրի հոգւով բան իմաստութեան ․ իսկ այլումն բան գիտութեան ըստ նոյնոյ հոգւոյ ․ այլումն հաւատ 'ի նոյնում հոգւոջ ․ այլում շնորհ առողջութեանց 'ի միում հոգւոջ ․ այլում գործողութիւն զօրութեանց, այլում մարգարէութիւն, այլում որոշումն ոգւոց, այլում սեռ լեզուաց ․ այլում թարգմանութիւն բանից ։ Զայս ա̄մ գործէ մին, և նոյն հոգին, բաժանող իւրաքանչիւրոյ ըստ որում կամի ։ Քանզի որպէս բազումք բնականք անդամք, որք կերտեն զմին բնական մարմին, ունին զզանազանութիւն կազմողութեան, և արարողութեանց ․ այսպէս նաև բազումք խորհրդաւորք անդամք, որք կերտեն զմին խորհրդաւոր մարմին, ունին զզանազանութիւն շնորհաց, և և պաշտօնատարութեանց ։ Եւ արդարև զոմանս եդ ա̄ծ 'ի յեկեղեցւոջ, նախ զառաքեալս, երկրորդ զմարգարէս, երրորդ զվարդապետս, յետոյ զզօրութիւնս, յետ այնորիկ զշնորհս բժշկութեանց, զօգնութիւնս, զկառավարութիւնս, զսեռս լեզուաց, զթարգմանութիւնս բանից ։ Ուստի ոչ ամենեքեան են առաքեալք ․ ոչ ամենեքեան մարգարէք, ոչ ամենեքեան վարդապետք, ոչ ամենեքեան ունեցողք զշնորհ բժշկութեան, ոչ ամենեքեան խօսին զլեզուս, և ոչ ամենեքեան թարգմանեն ։

3. Սեպհականագունեղ բարերարութիւն արարեցեալ է մարդկութեան ք̄ի առժամայն 'ի յայնմիկ կետոջ ստեղծման իւրոյ ։ Քանզի մի միայն անհատ մարդկային բնութիւն, այսինքն, մարդկային բնութիւն ք̄ի, միաւորեցեալ է ա̄ծային բնութեան 'ի յանձին որդւոյ, միաւորութեամբ ենթակայականաւ, և անձնաւորաւ, և ենթակայանայ ա̄ծայնով ենթակայութեամբ որդւոյ, լեալ անմեղանչելի պարզապէս վասն ենթակայականի միաւորութեան, և երանականի տեսութեան, վայելօղ փոխանակ գոյացականի սրբութեան իւրոյ ․ զնոյն ինքն ա̄ծութիւն, իսկ փոխանակ պատահականի սրբութեան իւրոյ, զամենամեծ ներհեղեցեալ շնորհն վայելչաւորին մարդկութեան, որ միաւորեցեալ է ա̄ծութեան միաւորութեամբ ենթակայականաւ, վայելօղ զներհեղեցեալ իմաստութիւն պատշաճաւորն իմացութեան բնութեան իմացողականի, միաւորեցելոյ ա̄ծայնոյ բնութեան միաւորութեամբ ենթակայականաւ, և անձնաւորաւ ։ Մասնաւանդագունեղ բարերարութիւն արարեցեալ է նաև մարիամայ միշտ կուսին ․ քանզի միայն մարիամ կոյսն է ա̄ծածին, հարս հոգւոյն սրբոյ, զօրութեամբ, և հովանաւորութեամբ նորա յղացող զորդին, 'ի միասին մայր, և կոյս, յատկագունեղ դուստր հօր յաւիտենականի, վայելօղ զանհուն արժանապատուութիւն 'ի կողմանէ որդւոյն յինքենէ ծնեցելոյ, լի շնորհօք, լեալ անմեղանչական շնորհիւ, նախապահեցեալ 'ի ակզբնականէ մեղաց, վայելօղ զանարատ յղացումն, ոչ միայն ծնեալ, այլ նաև յղացեալ ս̄բ, արարեցեալ, և կացուցեալ թագուհի հրեշտակաց, պատրիարգաց, մարգարէից, առաքելոց, մարտիրոսաց, խոստովանողաց, կուսանաց, և ա̄մից սրբոց, պսակեցեալ մասնաւորագունեղիւ պսակաւ 'ի յամենասրբոյ երրորդութենէ, 'ի հօրէ, 'ի յորդւոյ, և 'ի հոգւոյն սրբոյ ։

4. Մասնաւոր բարերարութիւն արարեցեալ է սրբոյն Յօսեփայ ․ վասնզի միայն ս̄բն Յօսեփ հայր համարողական ք̄ի որդւոյն ա̄յ, այր մարիամու մօրն ա̄յ, և աշխատանօք

իւրօք

իւրօք սնուցանօղ զՅս, և զմարիամ մինչև առ վերջն կենի իւրոյ : Մասնաւոր բարերարութի արարեցեալ եղև ոմանց սրբոց, զի 'ի յարգանդոջ մարց իւրոց սրբացուցանիցեին: Որպէս ունի զինքն բարերարութի, որ արարեցեալ եղև երեմիայ մարգարէին, և սրբոյն Յօհաննու մկրտչին. վասնզի սք 'ի յարգանդոջ մարց իւրոց սրբացուցան : Յօհաննէս մկրտիչ կալաւ զմասնաւորս բարերարութիս : Քանզի աւետարանիչք 'ի ներշնչմանէ հոգւոյն սրբոյ, մասնաւորապէս պատմեն, որք նմա պատկանին, այսինքն, զյղացումն նր, զսրբացուցումն 'ի յարգանդոջ մօր, զսքանչելիս, որք եղեն նախ քան զյղացումն, և 'ի ծննդեան, զկեանն նորա 'ի յանապատոջ, զքարոզութին, զմկրտութին, զգովասանս, և զգովաբանութիս, որովք գովեաց զնա որդին այ Յս Քս̅ փրկիչն աշխարհի, և զմարտիրոսութին նորա : Զհամայնս ասացեալս 'ի յաւետարանս 'ի յաւետարանչաց, 'ի ներշնչմանէ հոգւոյն սրբոյ, զմիտն նոցա լուսաւորողի, և զլեզուն նոցա շարժողի խօսողաց և գրողաց, յայտնիւք, զանազանիւք, և հաւաստեօք բանիւք պատմեցեալք յայտնապէս երևին : Կալաւ զմասնաւորս բարերարութիս և Յօհաննէս աւետարանիչն. վասնզի նա միայն եղև մասնաւորաբար սիրեցեալ աշակերտ քի, քանզի էր աշակերտն այն զոր սիրէր քս, և նմա միայն մասնաւորաբար յանձնեցաւ մայր տեառն :

5. Մասնաւորք բարերարութիք, որք ոչ միոյ, այլ բազմաց արարեցեալք են, են այսոքիկ, անմեղութի կենի, մարգարէական ոգի, առաքելութի, վարդապետութի, սքանչելագործութի, մարտիրոսութի, կուսութի, և կրօնաւորականութի : Անմեղութին է պարգև, որով ոմանք 'ի յարգանդոջ մօր, կամ յետ ծննդեան իւրեանց արդարացուցեալք, զշնորհն, 'ի յարդարացուման, և 'ի սրբացուցման իւրեանց ընդունեցեալն, հաւատարմաբար պահեն 'ի բոլորոջ կենի իւրեանց, և ոչ կորուսանեն մահացու մեղօք: Սոքա թէպէտ ներելաբար մեղանչեն, սակայն ազատք են 'ի մահացու մեղաց : Ուստի են անմեղք : Այսպիսիք մեղանչեն ներելաբար. քանզի բաց 'ի յամեներանեցելոյ կուսէ մարիամայ ածածնէ. համայնք այլք հասեալք բանաւորութե, խոստովանին ասելով, եթէ ասիցեմք, թէ զմեղս ոչ ունիմք. ստեմք զմեզ, և ճշմարտութի ոչ գոյ 'ի մեզ : Սակայն են անմեղք. քանզի զշնորհն, և զբարեկամութին այ հաւատարմաբար պահեն, և փախչին յամէ մահուչափ մեղէ: Իսկ այլք հաւատացեալք մարդիկք, որք յետ արդարացուցման, և սրբացուցման իւրեանց, մահացու մեղօք կորուսին զբարեկամութին, և զշնորհն այ, եթէ դառնայցեն առ ած, և ապաշխարիցեն, ասին ապաշխարօղք, բայց եթէ մնայցեն 'ի մէջ մեղաց իւրեանց, և ոչ դառնայցեն առ ած, ասին մեղանչօղք : Պարգևն անմեղութե է ամենամեծ բարերարութի. վասնզի շնորհէ զհաւատարմութի, և տայ զսիրելութի. քանզի անմեղքն են կարի սիրելիք, և գովելիք :

6. Մարգարէութին է պարգև այ, մասնաւորաբար տուեցեալ ոմանց, զի 'ի ներշնչմանէ հոգւոյն սրբոյ, և 'ի յածայնոյ յայտնութէ, առուգապէս ճանաչիցեն զայնոսիկ իրս, որք լինելոցք են, և որք բնականաւ գիտութբ ճանաչիլ ոչ կարեն : Եղեն բազումք գերազանցք, և ազնիւք մարգարէք, նախ քան զգալուստն քի, որք 'ի ներշնչմանէ հոգւոյն սրբոյ, և 'ի յածայնոյ յայտնութէ, զբազումս իրս նախագուշակեցին : Որպէս են դաւիթ, եսայի, երեմիայ, եզեկիէլ, դանիէլ, և այլք : Առաքելութին է պարգև, որով ոմանք 'ի քսէ տեառնէ փրկչէ մերմէ ընտրեցեալք են, և 'ի նմանէ տեղեկացուցեալք են 'ի գերազանցագունեղի վարդապետութե նորա, և առաքեցեալք են 'ի յընդհանուր

աշ_

աշխարհ առ 'ի քարոզել զաւետարանն , և առ 'ի կոչել զմարդիկ առ ճշմարիտ հաւատն , առ քրիստոնէական կրօնն , առ արդարացուցումն , առ շնորհ , առ պահպանունութիւն պատուիրանաց , առ առաքինութիւս , առ բարեգործութիւս , և առ յաւիտենականս փառս : Որպէս են սիմօն , Պետրոս , Անդրէաս , Յակոբոս , Յօհաննէս, և այլք: Վարդապետականութիւն է պարգև այ , որով ոմանք 'ի յեկեղեցւոջ քն լուսաւորեցեալք են 'ի հոգւոյն սրբոյ , զի զածաշունչն մեզ մեկնիցեն , զանսասան վարդապետութիւն մեզ ուսուցանիցեն , զառաքելականս աւանդութիւս առ մեզ անցուցանիցեն , զեկեղեցին քն զերազանցիւք վարդապետութեանք իւրովք զարդարիցեն , և զկաթուղիկէ , և զուղղափառ հաւատն ընդդէմ հերետիկոսաց պաշտպանիցեն : Որպէս են Դիոնէսիոս , Աթանաս , Օգոստինոս , և այլք :

7. Սքանչելագործութիւն է պարգև այ , շնորհեցեալ ոմանց , զի առ հաստատութիւն հաւատոյ , առ 'ի դարձուցանել զանհաւատս , և առ ամաչեցուցումն նոցա , որք զլեզուն իւրեանց ընդդէմ ճշմարտութեան հաւատոյ մերոյ սրեն , ածայնով զօրութեամբ գործիցեն զոմանս իրս , որք բնականաւ զօրութեամբ ոչ կարեն լինել , որպիսի է բժշկելն զհիւանդս կոչեցմամբ անուանն քի , յարուցանել զմեռեալս , և տանել զնմանս իրս , որպէս գործեցին զզարմանալիս իրս առաքեալք , և բազումք այլք սրբք : Քանզի ձեռամբք առաքելոց լինէին բազումք նշանք , և սքանչելիք : Մարդիկ ջանային տանիլ 'ի փողոցս , զհիւանդս իւրեանց ; և դնել 'ի յանկողնիկս , և 'ի մահիճս , զի 'ի գալն սրբյն պետրոսի , գոնեայ հովանաւորիցէր զիւրաքանչիւրն այնոցիկ , և ազատիցեն 'ի հիւանդութեանց իւրեանց: Համբունեանայր և բազմութիւն մերձաւորաց քաղաքաց 'ի յերուսաղէմ , առբերելով զհիւանդս , և զըմեղեցեալս 'ի յանմաքրոց ոգեաց , որք համայնք բժշկեին : Մարտիրոսութիւն է պարգև այ , շնորհեցեալ ոմանց , զի վասն հաւատոյ , և վասն սիրոյն այ , համբերութեամբ կրելով զչարչարանս , 'ի խստաբարոյութէ , և 'ի գազանաբարոյութէ բռնաւորաց դտեցեալս , և մահեցեալս , ենթարկիցին մահուան , և մեռանելով յաղթնակիցեն ընդդէմ չարութեան , և ամբարշտութեան հալածողաց զճշմարիտ կրօնն , և զուղղափառ հաւատն , և զառաքինութիւս 'ի վարդապետէ մերմէ մեզ ուսուցեալս , և ընդունիցին զպսակն մարտիրոսութեան : Եղեն բազմազանք դերազանցք մարտիրոսք , որք մեռան վասն սիրոյն քի , և պսակեցան 'ի յայ . որպէս են ստեփաննոս , լօրենցիոս , և այլք բազմազանք :

8. Կուսութիւն է պարգև այ շնորհեցեալ ոմանց , զի զմարմինն իւրեանց անարատ պահելով , նաև ընդդէմ հեշտութեանց , զորս կարէին 'ի յամուսնութեան օրինաբար վայելել , մինչև առ վախճան կենի ընդդէմ ցանկութեանց մարմնոյ քաջաբար պատերազմիցեն , և յաղթեալք զմարմինն , ընդդէմ հրապուրանաց նորա փառաւորապէս յաղթանակիցեն , և 'ի յամենամաքրոյ փեսայէ կուսանաց զպսակն կուսութեան ընդունիցեն : Արդէն եղեն բազմազանք դերազանցք կուսանք , որք 'ի մարմնոջ ածեալք պհրեշտակական կեանս , քաջաբար պատերազմեցան , անյաղթելաբար յաղթեցին , փառաւորապէս յաղթանակեցին , և 'ի յարդար դատաւորէ ընկալան զպսակն կուսութեան , որպէս են ակաթայն , լուկիայն , ակնէսն , չէչիլիայն , կատարինէն , և այլք բազմազանք ամենասուրբք կուսանք : Կրօնաւորական կեանն է պարգև այ , շնորհեցեալ ոմանց , զի թողեալք զաշխարհս , զազգականս , զբարեկամս աշխարհայինս , զփարթամութիւս , զբերկրութիւս , զազատութի կամաց , 'ի յանապատս , կամ 'ի վանս ենթ ուխտադրութեան ողջախոհութեան , աղքատութեան , և հնազանդութեան , ընծայիցեն զինքեանս այ ողջակէզ ,

մինչև

մինչև 'ի վերջն կենաց իւրեանց , ծառայելով նմա , և զկանոնս կարգի իւրոյ , և կրօնի իւրոյ պահելով : Արդէն եղեն բազմազանք ազնիւք կրօնաւորք : Որպէս են , Անտոն , պէնէտիկդոս . Պէրնարտոս , տօմէնիկոս , ֆրանչիսքոս , և բազումք այլք , Յիշեա ով մարդ , զհամայնս բարերարութիւնս ա̄յ , 'ի մանկութենէ քումմէ մինչև առ հասակն , յորում գտանիս , 'ի նմանէ ողորմածաբար , և մասնաւորաբար քեզ արարեցեալս , և ջանացիր , զի մինչև 'ի վերջն կենի քո լինիցիս այր երախտածանաչ :

## Գ Լ Ո Ւ Խ ՁԲ .

### Յաղագս Առաքելոց :

1. Առաքեալքն են ազնուագոյնք աշակերտք ք̄ի , զորս ինքն ընտրեաց 'ի գերազանցագունեղ արժանապատուութի սրբոյ եկեղեցւոյ . սոքա են այնոքիկ երկոտասանք առաքեալք տ̄ն , որոց կոչեցելոց ետ զիշխանութի ոգւոց անմաքրոց , զի զնոսա արտաքսիցեն , և բժշկիցեն զա̄մ հիւանդութի , և զա̄մ խօթութի : Սոքա են այնոքիկ փոքրիկք , 'ի ձեռն որոց ա̄ծ յայտնեաց զխորադունեղս , և զբարձրագունեղս խորհուրդս , զորս թաքոյց 'ի յիմաստնոց , և 'ի խորագիտաց այսր աշխարհի : Սոքա են այնոքիկ , որոց ասաց տ̄ր . զորամանս կապիցէք 'ի վերայ երկրի , եղիցին կապեալք և 'ի յերկինս . և զորամանս արձակիցէք 'ի վերայ երկրի , եղիցին արձակեալք և 'ի յերկինս : Սոքա են այնոքիկ , որոց խոստացաւ ք̄ս , և ասաց . դուք որք եկիք զկնի իմ , նստջիք 'ի վ̄ր երկոտասան աթոռոյ դատել զերկոտասան ազգս Ի̄ղի : Սոքա են այնոքիկ , որոց ասաց . որպէս առաքեաց զիս հայր , և ես առաքեմ զձեզ : Եւ 'ի յորս փչեաց , և ասաց . առէք զհոգին ս̄բ , որոց թողուցուք զմեղս , թողեալ լիցին նոցա . և զորս կապիցէք կապեալք լիցին : Սոքա են այնոքիկ աղքատք , զորս ընտրեաց ա̄ծ յաշխարհի : Են այնոքիկ պարզամիտք . զորս ընտրեաց ա̄ծ , զի ամաչեցուցանիցէր զիմաստունս . և են այնոքիկ տկարք , զորս ընտրեաց , զի ամաչեցուցանիցէր զհզօրս : Առաքեալք տ̄ն են երկոտասանք , այսինքն , սիմոն Պետրոս . և Անդրէաս եղբայր նորա . Յակոբոս զեբեդեայ , և Յօհաննէս եղբայր նորա . փիլիպպոս և Բարթուղիմէոս , Թովմաս , և Մատթէոս մաքսաւորն . Յակոբոս Աղփէոս . և Թադէոս . Սիմոն կանանացին , և Յուդայ իսկարիովտացին , որ մատնեաց զտ̄րն , և եղև մատնիչ :

2. Յուդայ մատնիչն յուսահատեցաւ . և ընկէց զարծաթս 'ի տաճարոջ , հեռացաւ , և գնացեալ զինքն խեղդեաց , և կորեաւ , արտաքսեցաւ 'ի յառաքելութենէ իւրմէ : Զառաքելութիւն մատնչի , որ կախեալ պայթեցաւ , 'ի պատիժ վ̄ն այնպիսւոյ յանցանաց ցրուեցան համայնք փորոտիք ն̄ր , ընկալաւ միւսն : Վասնզի յետ համբարձման տ̄ն , իշխանութբ Պետրոսի իշխանի առաքելոց , կացուցան երկու , Յօսէփ , որ անուանիւր բարսաբաս , կոչեցեալն արդար , և մատաթիաս : Եւ աղօթեցին , և ետուն զվիճակս 'ի վ̄ր ն̄ց , և անկաւ վիճակն 'ի վ̄ր մատաթեայ , և թուեցաւ ընդ մետասան առաքեալս : Ուստի եպիսկոպոսապետութի , և զառաքելութի Յուդայի մատնչի , ընկալաւ մատաթիաս : Յետ գալստեան հոգւոյն սրբոյ , մինչ առաքեալք լցեալք հոգւով սրբով քարոզէին , և դարձուցանէին զբազումս , և եկեղեցին ք̄ի կրէր զհալածանս , սողոս լցեալ սպառնալեօք , և սպանմամբ աշակերտաց տ̄ն , մատուցեալ առ քահանայապետն , խնդրեաց 'ի նմանէ թուղթս 'ի դա_

մասկոս առ ժողովուրդսն, որպէս թէ զոք գտցէ զայնր ճանապարհաւ սրա, կամ կանայս, կապեալս ածցէ յԵԷմ: Եւ ընդ երթալն նր զօրութբ Քի անկաւ, և հնազանդեցաւ ձայնի նորա. սակայն ոչ տեսանէր, ներածեցաւ 'ի Դամասկոս: Անդ ընկալեալ զտեսութն մկրտեցաւ: Մկրտեցեալ եղև առաքեալ անսովորական, քարոզիչ, և վարդապետ հեթանոսաց, և անօթ ընտրութե Քի, որ սքանչելաբար դարձոյց, և լուսաւորեաց, և արար զնա առաքեալ, և վարդապետ հեթանոսաց, զի տանիցէր զանուն նր առաջի ազգաց, և թագաւորաց, և որդւոցն Իէլի, և կարի չարչարիցիւր վս անուան նորա:

3. Առաքեալք են այնոքիկ, որք հաւատացին 'ի Քս, և կոչեցեալք 'ի նմանէ, թողեալք զամ իւր հետևեցան Քի: Են, որք 'ի բերանոյ բանի մարմնացելոյ լուան զբանս կենի: Են, որք համարձակապէս խօսեցան ընդ Քի, միածնի որդւոյն այ, և որք նստան, ճաշակեցին, և ըմպեցին ընդ նմա: Են, որք 'ի տուընջեան, և 'ի գիշերի եղեն ընդ Յի, և տեսին զգործս, և զսքանչելիս 'ի նմանէ արարեցեալս: Են, որք 'ի վերնատանն եղեն ընդ որդւոյն այ, զնոր կտակարանն կերտողի, և զխորհուրդն հաղորդութե կացուցանողի, և որք յետ յարութե նորա տեսին զնա, և խօսեցան ընդ նմա, և 'ի համբարձման նորա եղեն ներկայք, և 'ի նմանէ յերկինս դնացողէ ընկալան զօրհնութի: Են, որք 'ի վերնատան սպասեցին գալստեան հոգւոյն սրբոյ. և յորժամ եկն հոգին սբ, և ելից զբոլոր տունն, ուր էին նստեալք, լցան հոգւով սրբով, որ նստաւ 'ի վր իւրաքանչիւրոյ նոցա 'ի կերպի լեզուի հրոյ. և սկսան խօսիլ զզանազանս լեզուս, բստ որում հոգին սբ տայր նորա խօսիլ: Են, որք լուան, տեսին, և ծանեան զայն, որ եղև 'ի սկզբանէ, և որոց ձեռքն շօշափեցին 'ի վր բանին կենի: Են, որք քարոզեցին զաւետարանն, դարձուցին զհեթանոսս, գործելով զսքանչելիս, և զիրս զարմանալիս, հիմնեցին զեկեղեցիս, ձեռնադրեցին զքահանայս, և զեպիսկոպոսս, և 'ի սիրտս մարդկանց հաստատեցին զհաւատն: Են, որք զայն, զոր տեսեալք էին, և լուեալք էին, ծանուցին մեզ, զի և մեք զընկերակցութի ունիցէաք ընդ նս, և ընկերութին մեր իցէր ընդ հօր, և ընդ որդւոյ նորա Յի Քի:

4. Սոքա են այնոքիկ, որք առաքեցան առ 'ի յուսուցանել հեթանոսաց. և մկրտել զնս Յանուն հօր, և որդւոյ, և հոգւոյն սրբոյ: Սոքա են այնոքիկ, որք առաքեցան 'ի յնդհանուր աշխարհ առ 'ի քարոզել զաւետարանն ամից ստեղծուածոց. Սոքա են այնոքիկ, որք ընտրեցեալք, և եդեալք են 'ի Քէ, զի երթիցէին, և զպտուղս առբերիցէին, և պտուղն նոցա մնայցէր: Սոքա են այնոքիկ, որք ընկալեալք զզօրութի 'ի վերաժամանողէ հոգւոյն սրբոյն 'ի վր նոցա, եղեն վկայք Քի 'ի յԵԷմ, և 'ի յամ հրէաստան, և 'ի սամարիայ, և մինչև 'ի ծագս երկրի: Սոքա են այնոքիկ, 'ի բերանոջ որոց էր հոգին սբ, որ ուսուցանէր նոցա, թէ զինչ խօսիցէին. և որոց լեզուաւն խօսեցաւ հոգին սբ, և եդ զօրէնն այ 'ի սիրտս մարդկանց. և որք ճանաչեցին զհոգին սբ, և կալան առ յինքեանս. և որք մկրտեցեալք, և լցեալք հոգւով սրբով, խօսէին զբանն այ համարձակութբ. և որք եդեալք զձեռս 'ի վր հաւատացողաց տային զհոգին սբ, և խօսէին զլեզուս, և մարգարէանային. և որք լցեալք հոգւով սրբով, և գիտակք երկնայնոց իրաց, խօսէին 'ի վարդապետութե հոգւոյն, հոգևորաց զհոգևորս մասնակցեալք. և 'ի յորս խօսէր Քս: Սոքա են այնոքկկ, որք ունէին զսբ գիրս ածաբար ներաշնչեցեալս, օգտակարս առ 'ի յուսուցանել, առ 'ի կշտամբել, առ 'ի խրատել, և առ 'ի հմտացուցանել

նել 'ի յարգարութե, զի մարդն այ իցէ կատարեալ, առ ամ բարի գործ խելամուտ : Աք են իշխանք եկեղեցւոյն այ, կարի պատուեցեալք, և 'ի վեր քան զայլս ոքս բարձրացուցեալք : Աք են այնոքիկ, որք եղեն աղն երկրի աւբերօղք զհամ աւետարանականի վարդապետութե 'ի ընդհանուրս գաւառս, և լուսով աւետարանի լուսաւորօղք զհեթանոսս :

5. 'Ի մէջ առաքելոց առաջինն է պետրոս : Քանզի սա կոչաւ զնա խապետութի, և եղև իշխան առաքելոց : Քս խոստացաւ զառաջնորդութի Պետրոսի, և յետ յարութեն ետ նմա : Խոստացաւ նմա զառաջնորդութի . քանզի նախ քան զմեռանիլն իւր ասաց : Երանի է քեզ Սիմօն որդի յօնանու . զի մարմին և արիւն ոչ յայտնեաց քեզ, այլ հայր իմ, որ յերկինս է : Եւ ես քեզ ասեմ . զի դու ես վէմ, և 'ի վր այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ, և դրունք դժոխոց զնա մի յաղթահարեսցեն : Եւ տաց քեզ զփականս յարքայութե երկնից : Եւ զոր միանգամ կապեսցես յերկրի . եղիցի կապեալ յերկինս . և զոր արձակեսցես յերկրի, եղիցի յարձակեալ յերկինս : Մատթէի . 16. Թիւ 17. Եւ աղաչեաց տրն, զի մի պակասիցիւր հաւատն Պետրոսի, որում տալոց էր զառաջնորդութի : Վասնզի ինքն ասաց : Սիմօն Սիմօն . ահա սատանայ խնդրեաց զձեզ խարբալել իբրև զցորեան : Այլ ես աղաչեցի վս քո, զի մի պակասեսցին հաւատք քո . և դու երբեմն դարձցիս, և հաստատեսցես զեղբարս քո : Ղուկ. 22. Թիւ. 31. Եւ ետ նմա յետ յարութեան զառաջնորդութին, զոր խոստացեալ էր նմա նախ քան զմահն : Քանզի յետ յարութե ասաց նմա Արածեա զգառինս իմ, արածեա զոչխարս իմ : Յօհաննու . 21. Թիւ . 15. և 17. զայս արար քն անստեղծ իմաստութին, և զայս պահանջէ իմաստութեն կառավարութին : Զի թարց գլխաւորի, ոչ կարէ լինիլ կառավարութի :

Ուստի Պետրոս եղև գլուխ, և իշխան առաքելոց, որում պարտէին ամենայն առաքեալք, և այլք հնազանդիլ : Յայնժամ այնպէս : Այժմ Հռօմէական Պապն աջորդն Պետրոսի առաքելոյն, է գլուխ, և իշխան ամից եպիսկոպոսաց, որում համայնք եպիսկոպոսք, և ամք հաւատացեալք բոլորոյ աշխարհի պարտաւանդին հնազանդիլ :

6. Մեծ, և զարմանալի եղև իշխանութին, որ շնորհեցեալ, և տուեցեալ է առաքելոց : Վսզի տրն ետ նց զիշխանութի 'ի վերայ բնութե, զի զնա բժշկիցէին . 'ի վր տարերաց, զի զնոսա փոփոխիցէին . 'ի վր մահուան, զի զնա անդոսնիցէին . 'ի վր կռոց, զի զնս խորտակիցէին, 'ի վր իմաստնոց այսր աշխարհի, զի զնս յաղթիցէին, 'ի վերայ հեթանոսաց, զի զնս դարձուցանիցէին . 'ի վր հաւատացելոց, զի զնս սքանչելօք, և բարեօք օրինակօք հաստատիցէին 'ի հաւատոջ . և 'ի վր հրեշտակաց, զի կապիցէին, և արձակիցէին, և զի սրբազնագործիցէին զմարմին, և զարիւն տն : Իշխանութիս այս տուեցեալ է նաև աջորդաց առաքելոց, և քահանայից : Քանզի նաև եպիսկոպոսք, աջորդք առաքելոց, և քահանայք ունին զիշխանութի փակելոյ, և բանալոյ զերկինս, կապելոյ, և արձակելոյ փականօք, և արձակմամբ, և դարձուցանելոյ զգինին 'ի յարիւն, և զհացն 'ի մարմին սրբազնագործութբ : Մեծ է զօրութին քի 'ի յառաքեալս : Վսզի զձկնորսն նախադասեաց թագաւորաց, և զհալածիչն հաւասարեցոյց առաքելոց : Զօրութբ տն խնդրօղն զհանապազորդական ապրուստն 'ի ծովու, եղև փարթամ 'ի քս, որում թագաւորք, և ազինք ծառայեն 'ի յաւիտեան : Իսկ պօղոս, որ սուսերօք հալածէր զքնս, զօրութբ քի ընկալաւ զլուծն հաւատոյ, և եղև վարդապետ հեթանոսաց, տեսան մարտիրոսաց, զարհուրան դիւաց, ներօղ յանցանաց, որամբաշխօղ խորհրդոց, պաշտօ-

նեայ քի̅, և աղբիւր առաքինութեց ։

7. ՅՍ̅ ՔՍ̅ կամելով զաշխարհս կոխան առնել ընդ իշխանութբ̅, ոչ զփքացեալս իմաստութբ̅ այսր աշխարհի, և զհպարտս լիս ունայնախօսութբ̅ օրինաց, այլ զպարզամիտս, և զխոնարհս ձկնորս, զպետորս, և զանգրէտս, և զայլս էառ առ ինքն, և սոքօք գործեաց զփրկութի̅ն 'ի մէջ երկրի ։ Արդ ուրեմն ոչ զԹագաւորս, զծերակոյտս, զփիլիսոփայս, զքերականագէտս, զ զինաւորեցեալս ճարտարաբանութբ̅, զփքացեալս հռետորութբ̅, և զկարօղս իմաստութբ̅ այսր աշխարհի, ընտրեաց · այլ զռամիկս, զչքաւորս, զանհմուտս, և զգռեհիկս անգէտս ուսումնականաց իմաստութեց · և զամկաւագունեղս ձկնորս ուռկանօք հաւատոյ առաքեաց · և այնպէս յամէ սեալ է այնքան զբազումս ձկունս, և այնքան կարի զարմանալագոյնս · որքան նաև զինքեանս անօրագոյնս փիլիսոփայս որսաց ։ Ու 'ի քարոզել զաւետարանն, և առ 'ի յաղթահարել զաշխարհս առաքեցան ձկնորսք, և անհմուտք, զի հաւատն հաստատեսցի, ոչ մարդկային զօրութբ̅, այլ ճոխաբանութբ̅, և վարդապետութբ̅ այ̅ եղանիլ համարիցիւր ։ ՔՍ̅, որ ընտրեաց զձկնորսս, և զանհմուտս, զխոնարհս, և զպարզամիտս, աւետարանական վարդապետութբ̅ պայծառս, և հոգւով սրբով լցեալս, առաքինութբ̅ք մեծահամբաւս, և օրինակօք բարեգործութեց ազնիւս, առաքեաց զառաքեալս իբրև արեգակն զշառաւիղս իւրս, իբրև վարդ զանուշահոտութիւս իւրս, և իբրև հուր զկայծս իւրս ցրուեաց ։ Քանզի որպէս արեգակն երևի 'ի շառաւիղս, վարդն զգացեալ լինի 'ի յանուշահոտութիս իւրս, և հուրն տեսանի 'ի կայծս իւրս · այսպէս 'ի զօրութիս նոցա ճանաչի կարողութի̅ն քի̅ ։ Վասն զի աշակերտք բարեպէս հմտացուցեալք, ցուցանեն զգիտութի̅ն վարդապետի իւրոյ ։ ՔՍ̅ գործեր զքանչելիս, գործէին և աշակերտք նորա, և 'ի մէջ առաքելութեց իւրեանց զարմանալեաց աճէր համբաւն զօրութեց ։

8. Խօսելով զառաքելոց, ասէ Լեօն Պապն ։ Հրով հոգւոյն սբ̅ոյ իբրև կենի լուսոյ զաղբիւր քն̅ զ առաքեալս իւրս եզ̇ց, զի ինքեանք յետոյ զընդանուր աշխարհն իբրև երկոտասան շառաւիղք արեգական, և այնքան զամբարք ճշմարտութե̅ լուսաւորիցէին, և արբեցեալք նորով գինեաւ լցուցանիցէին, և առոգիցէին գիտութբ̅ զսիրտս ժողովրդոց ։ 'Ի յասացուածոջ 'ի վր̅ Պետրոսի, և Պօղոսի ։ Սէն Բասիլիոս ընծեռելով 'ի վր̅ այնր մատթէի, դուք էք լոյս աշխարհի, ասէ ։ Մինչ լոյսն գայ ախտաժէտութիք աւուր Թեթևանան, մարդիկք 'ի քնոյ զարթին, Թռչունք կարկաչեն, անասունք գնան 'ի Թաքուստ իւրեանց · այսպէս մինչ եկն լոյսն առաքելոց, աշխարհս փախեաւ շինեցեալ 'ի հաւատալիս, պարարտացեալ 'ի բարեգործութիս, Թեթևացեալ 'ի մեղաց, ընդոտնեցեալ 'ի ծուլութեց, զինաւորեցեալ առ խոկումն երկնայնոց իրաց, ազատեցեալ 'ի յիշխանութե դիւաց ։ Առաքեալքն են գործին զմեզ ածօղք առ քն̅, որ է կեան, վարդապետութբ̅ կենի, զոր մեզ աւանդեցին, և գերազանցիւք օրինակօք, զորս նք̅ մեզ ետուն ։ Առաքեալքն են շառաւիղք արեգական արդարութե, զխաւար, և զտգիտութի մեր ցրուօղք ։ Առաքեալքն են գերազանցք վարդապետք, և ուսուցիչք, զվարդապետութի̅ն քի̅, ուսուցչի բոլորոյ աշխարհի, առ մեզ անդրաբերօղք ։ 'Ի ձեռն առաքելոց է լուսաւորութի մեր 'ի հաւատալիս, պարարտութի մեր 'ի գործելիս, յուսադրութի մեր 'ի յուսալիս ։ Վարդապետութբ̅ առաքելոց է մեզ ազատումն 'ի մեղաց, ջերմեռանդութի, և ընդոտնումն մեզ առ բարեպաշտութի, և առ կրթութիս խոկման, և առ մերձացումն մտաց առ յերկնայինս իրս ։ Զերեմն պատուեսցուք

զնոսա, և հետևիցուք նոցա ։

# ԳԼՈՒԽ ՁԳ.

## Յաղագս վարդապետի ։

1. Վարդապետ է այն, որ ունի զվարդապետութիւն, և զիշխանութիւն ուսուցանելոյ ։ Պաշտօնն վարդապետի է ուսուցանել ։ 'Ի յեկեղեցւոջ քի է վարդապետականութիւն. քանզի է արժանապատուութիւն, և իշխանութիւն ուսուցանելոյ ։ Ուստի 'ի յեկեղեցւոջ քի են վարդապետք. քանզի են ունեցողք զարժանապատուութիւն, և զհեղինակութիւն ուսուցանելոյ ։ Եպիսկոպոսք աջորդողք առաքելոց, որք յղեցեալք են 'ի քէ առ 'ի յուսուցանել հեթանոսաց, են վարդապետք ։ Վասնզի առաքեալքն են վարդապետք, լեալք այսպիսիք 'ի քէ, յորմէ առաքեցեալք են ուսուցանել զհեթանոսս ։ Մինչ ուրեմն եպիսկոպոսքն են աջորդք առաքելոց, աներկբայաբար են վարդապետք ։ Այսուրեմն եպիսկոպոսաց պատկանի ուսուցանել գրովք, և ձայնիւ պաշտպանել զհաւատն ընդդէմ հերետիկոսականի վատթարութեան, և չարութեան, զոր հաւատոն պարաւանդին ուսուցանել ենթարկեցելոց իւրոց, և հոգաբարձութեան իւրոյ յանձնեցելոց, 'ի ժողովս տալ զվճիռն իւր, և ընդ այլոց եպիսկոպոսաց դատապարտել զհերետիկոսս, և զհեղինակս սուտ վարդապետութեան, և հաստատել զհաւատացեալս 'ի հաւատոջ. և մինչ են հովիւք, զհօտն իւրեանց արածել 'ի ճշմարտի վարդապետութեան ։ Եպիսկոպոսաց պատկանի հոգևոր հացիւ կերակրել զհոգիս ենթարկեցելոց իւրոց ։ Հոգևոր հացն, և կերակուրն հոգւոյ է ճշմարիտ վարդապետութիւն որքան առ հաւատալիս, որքան առ յուսալիս, և որքան առ գործելիս իրս ։ Ուստի պարտին ուսուցանել իւրոց և զայնոսիկ իրս, որք են հաւատալիք, և զայնոսիկ, որք են յուսալիք. և զայնոսիկ, որք են գործելիք ։

2. Վարդապետն բոլորոյ աշխարհի, և վարդապետն վարդապետաց 'ի յեկեղեցւոջ քի է ծայրագոյնն քահանայապետն հռոմէական, փոխանորդն քի, և աջորդն սրբոյն պետրոսի իշխանի առաքելոց. քանզի նմա պատկանի որքան առ բարիս վարս, և որքան առ հաւատն արածել ճշմարտիւ վարդապետութեամբ զգառինս, և զոչխարս քի, այսինքն, զամն հաւատացեալս, և զամն եպիսկոպոսս, և զհովիւս ։ Նաև նմա պատկանի համակոչել, և համահաւանիլ ժողովոց, դատապարտել զհերետիկոսս, և կացուցանել զընդհանրականս կանոնս մի բոլորոյ եկեղեցւոյ ։ Ուստի է վարդապետ բոլորոյ աշխարհի, և վարդապետ վարդապետաց ։ Վարդապետութիւն մեր է բանն ածային, հին, և նոր կտակարանն, վճիռք ժողովոց 'ի հռոմէականէ եկեղեցւոյ համահաւանեցելոց, և վճիռք հռոմէականաց Պապից, գրեանք սրբոց հարց, և սրբազան ածաբանութիւն ։ Ոչ արտաքսեմք զբարի փիլիսոփայութիւն, և զմարդկայինս առողջագիտութիւնս, այլ ընդունիմք իբրև զաղախինս, զի ծառայիցեն վարդապետութեան մերում ։ Վարդապետք եկեղեցւոյ պարտին կրթել զիւրեանս ինքեանս 'ի սրբս գիրս, 'ի վճիռս ժողովոց, և պապից, 'ի գիրս սրբոց հարց, գերազանցից վարդապետաց եկեղեցւոյ, 'ի սրբազանի ածաբանութեան, և ոչ անարգել զբարի փիլիսոփայութիւն, և զմարդկայինս առողջագիտութիւնս, այլ վարել նոքօք իբր աղախնեօք առ օգուտ մեր ։ Պարտին վարդապետք 'ի յառաջեալս իրս վարժել զիւրեանս ինքեանս, և ոչ պարապել դատարկութեան, զի փուանիցին պատրաստք առ 'ի յուսու-

ցանել

ցանել ենթարկեցելոց իւրեանց առ 'ի հաստանել զմիտս, առ 'ի պաշտպանել զհաւատն, առ 'ի պատասխանել թշնամեաց, Ճշմարտի վարդապետութե ընդդիմախօսողաց ։

3. Եկեղեցին կարէ կացուցանել և զայլս վարդապետս, որք ոչ են եպիսկոպոսք. քանզի եկեղեցին ունի զհեղինակութի հոգալ զօգուտն քրիստոնէից ։ Ուստի որպէս կարէ առնուլ առ ինքն զայլս յարմարս, որք ոչ են եպիսկոպոսք, առ 'ի քարոզել զբանն Աստուծոյ, զի քրիստոնեայք ուսանիցին զիւրս հարկաւորս առ փրկութի, և շարժիցին առ փարթումն առաքինութեց, և առ փախուստ մոլութեց. այսպէս նաև կարէ առնուլ առ ինքն զյարմարս, որք ոչ են եպիսկոպոսք, առ 'ի ուսուցանել զաւետարանն, առ 'ի մեկնաբանել զսբս գրեանս, առ 'ի պաշտպանել զդրոյք, և ձայնիւ զհաւատն, առ 'ի պատասխանել թշնամեաց, և հերետիկոսաց, գործունէաբար ընդդէմ նոցա վիճաբանելով, և առ 'ի հաստատել զհաւատացեալս 'ի հաւատոջ մերում կաթուղիկէի ։ 'Ի յեկեղեցւոջ է հեղինակութի, 'ի հաւատացեալս կարօտութի, զի մի մոլորեցուցանիցին 'ի ստոց, և 'ի խաբեբայից մարգարէից, 'ի բազումս է ընդունակութի, և յարմարութի առ վարդապետականութի ։ Ուրեմն կացուցանելիք են, և այլք վարդապետք, որք ոչ են եպիսկոպոսք, առ օգուտ եկեղեցեաց ։ Առ վարդապետականութի ընտրելիք են ըմբոնք, և ընդունակք, զի զայդ զոր գիտեմք, ունիլ, և ուսանել կարիցեմք ։ Այդ, զոր գիտեմք, է օգուտն եկեղեցւոյ, այսինքն, զի ունիցիմք զբարիս մեկնիչս սրբոց գրոց, և զքաջագործս պաշտպանողս հաւատոյ, առ պայծառութի կաթուղիկէի եկեղեցւոյ ։ Առ այս խնդրին յարմարք, և ըմբոնք ։ Բայց նք, որք ոչ են ըմբոնք, և ընդունակք, են անօգուտք, և ոչ են առ պայծառութի կաթուղիկէի եկեղեցւոյ, այլ են առ ամօթ մեր, եթէ վիճաբանիցեն ընդ հերետիկոսաց ։ Ուստի ընտրելիք են ընդունակք, վասն այսորիկ բարեպես են քննելիք ։

4. Համայնք հաւատացեալք պարտաւորին գիտել զայնոսիկ իրս, որք հարկաւորք են առ փրկութի. քանզի գոյ պատուիրան, զի ուսանիցիմք զայնոսիկ իրս, որք հարկաւորք են առ փրկութի ։ Վասն զի եթէ ոչ գիտիցեմք, զիարդ կատարել կարեմք. համայնք, որք ունին զեկեղեցականս աստիճանս, թէ իցեն սրբազանք, թէ իցեն փոքրագոյնք, պարտին գիտել զայնոսիկ իրս, որք խնդրին առ կիրառութի ընդունեցելոյ աստիճանի. վասն զի առ այս կարգին, զի կատարիցեն զպաշտօն ընդունեցելոյ աստիճանի ։ Ուստի պարտին գիտել, զի բարւոք, և ուշադրաբար կատարիցեն ։ Որք ունին զհոգաբարձութի հոգեաց, պարտին գոլ խելամուտք 'ի յայնոսիկ իրս. որք խնդրին առ այսոսիկ, որովք փրկութի հոգեաց ստանի ։ Պարտին գոլ հմուտք 'ի բանի, զի կարիցեն գոլ ուղղիչք հոգեաց, այլապէս վասն տգիտութե իւրոյ կարեն գոլ մոլորեցուցիչք, և կորուսանողք ։ Խոստովանահայրք պարտին գոլ հմուտք 'ի յայնոսիկ իրս, որք խնդրին առ դարձումն մեղաւորաց, և առ արդարացուցումն ամբարշտաց, զի մի վս տգիտութե իւրոյ կապիցեն զարձակելիս, և արձակիցեն զկապելիս, և զի մի արգելուցուն զներելիս, և թողուցուն զարգելլիս, և զի մի լեալք կոյրք առաջնորդք կուրաց, ընդ կուրաց, զորս ածեն, անկանիցին 'ի խորխորատ, կորուսանողք զհոգիս իւրեանց 'ի միասին ընդ հոգեաց նց, որոց լսեն զխոստովանութիս ։ Դարձուցանել, և արդարացուցանել զամբարիշտս, և զմեղաւորս խորհրդով ապաշխարութե, է առ մենաբարի. բայց ընդ մեղաւորաց, և ամբարշտաց կորուսանել և զհոգիս իւրեանս է վտանգարագունեղ ։ Է ամենամեծ խելագարութի պաշտօնիւ կացուցելով առ փրկութի

հոգեաց,

հոգեաց, կորուսանել զհոգիս իւրեանց և զհոգիս իւրոց ։

5. Քարոզիչք պարտին գոլ հմուտք յայնոսիկ իրս, որք պատկանին առ պաշտօն քարոզողի, և պարտին ունիլ զճշմարիտս վարդապետութիս, և քարոզել զաւետարանն ։ Պարտին գոլ հմուտք 'ի յառաջեալս իրս, զի զպաշտօն քարոզողի վայելչաբար 'ի կիրարկանիցեն, պարտին ունիլ զառողջ վարդապետութիս, զի յարմարաւ, և ճշմարտիւ հոգևորաւ կերակրով զհոգիս լսողաց դարմանել կարիցեն ։ Պարտին հետևանալ յունայնութէ, և քարոզել զաւետարանն, զի ցուցանիցեն զինքեանս աշակերտս փրկչի աշխարհի ։ Վարդապետք եկեղեցւոյ, որք կացուցեալք են առ 'ի բացադրել զնք գրեանս, առ 'ի պաշտպանել զկաթուղիկէ հաւատն, և առ 'ի պատերազմիլ ընդդէմ անհաւատից, և հերետիկոսաց, թշնամեաց ուղղափառ հաւատոյ, պարտին գոլ գիտակք սրբոց գրոց, սահմանադրուեց եկեղեցւոյ, սրբազանի ածաբանութե, և աղախնեաց նր, որովք, ոչ պիտոյանայցէ, վարիցին, զի բարւոք, և մտադրաբար, և փառաւորապէս, և թարց ամօթոյ իւրեանց, և իւրայնոցն, կատարել կարիցեն զպաշտօն իւրեանց, մինչ սպառազինեն զինքեանս առ 'ի պատերազմիլ ընդդէմ թշնամեաց եկեղեցւոյ ։ Եպիսկոպոսք աջորդք առաքելոց, և փառաւորք իշխանք, և հայրապետք եկեղեցեաց, պարտին 'ի կիրարկանել զուշադրագունեղ ջանադրութի, զի ոչ միայն լինիցին գիտակք ածից ասացելոց, որոց առաջնորդք են քահանայք, ժողովրդապետք. հոգաբարձք հոգեաց, խոստովանահայրք քարոզիչք, և վարդապետք, որոց ածից պաշտօնն 'ի կիրարկանեն. այլ նաև զի իցեն գիտունք 'ի հնարագիտութե, և յարհեստի խոհեմաբար, և իմաստնաբար ուղղելոյ, և կառավարելոյ զհօտն իւրեանց. քանզի ոչ միայն են վարդապետք, այլ նաև իշխանք, և կառավարիչք ։

6. Ո՛ մարդ սիրեա՛ զիմաստութի, և ուսի՛ր զարդարութին. վասնզի երանեալ է այն, որ պատմէ զարդարութի ականջի ունկնդրողի ։ Ուստի առաւել վարդապետութին, քան զոսկի է ընտրելի ։ Քանզի ոչ ոսկին, այլ վարդապետութին առնէ երանելի ։ Ուսի՛ր զարդարն, և փութասցիս ընդունիլ զվարձն ։ Ատեա՛ զխելագարութին, և սիրեա՛ զիմաստութին, զի խնդրիցես զվարդապետութին, և փախիցիս 'ի տգիտութէ ։ Վասնզի սիրտն իմաստնոյ խնդրէ զվարդապետութի, և սիրտն յիմարաց դարմանի անհմտութբ ։ Ուրեմն մի դադարիր 'ի լսելոյ զվարդապետութի, և մի տգիտանար զբանս գիտութե, Այլ խոնարհեցո՛ զականջ քո, և լուր զբանս իմաստնոց ։ Մերձեցո՛ զսիրտ քո երկնայնոյ վարդապետութե, որ լիցի քեզ վայելչաւոր, մինչ պահեալ իցես զնա սիրով. և եռանդիւ, և առատասցի 'ի շրթունս քոյս, զի ապաւինութի քո իցէ 'ի տր ։ Արա, զի սիրտ քո ներմտանիցէ առ վարդապետութի, և ականջք քո առ բանս գիտութե ։ Ջանացիր, զի ունիցիս զականջ բարի. վասնզի բարի ականջն ունկնդիր լիցի իմաստութե ամիւ ջերմեռանդութբ ։ Լեր հեզաբարոյ առ 'ի լսել զբանն այ, զի իմանացիս, և իմաստութբ արտաբերցես զպատասխանին ։ Եթէ հակիցես զականջ քո, ընկալցիս զվարդապետութի. և եթէ սիրիցես լսել, առասցիս զգիտութի ։ Կաց 'ի մէջ բազմութե քահանայից խոհեմաց, զի զամ պատմութին այ կարիցես լսել, և յառակաց մի փախիցիս ։ Եւ եթէ տեսցես զիմաստունն, հսկեա առ նա, զշեմս դրանց նր մաշեսցէ ոտն քո, զխոկումն քո կալ 'ի պատուէրս այ, և 'ի պատուիրանս նր լեր կարի յոյժ յաճախ, և ինքն տացէ քեզ զսիրտ, և շնորհեսցի քեզ փափագ իմաստութե ։

7. Մանաւանդ պարապեաց ածաշնչոյ ։ Վասնզի որ ինչ գրեալ է 'ի նմա, առ օգուտ մեր գրեալ է ։

է ։ Մի ուրեմն ձանձրացուսցէ զքեզ պատմութիւն ծերոց, զի ուսեալք են 'ի հարց իւրեանց ։ Քանզի 'ի նոցանէ ուսցիս զիմացութիւն, և 'ի ժամու տացես զպատասխանին ։ Լեր արդար, զի կարիցես հմտացուցանել զբազումս ։ Վասնզի շրթունք արդարոյ հմտացուցանեն զբազումս. իսկ որք են ադէտք, մեռցին 'ի կարօտութենէ սրտի ։ Ճանօթութիւն մարդոյ է վարդապետութեամբ ։ Քանզի վարդապետութեամբ իւրով ճանաչի այրն. իսկ որ է ունայն, և դատարկ, հրապարակեսցի 'ի յարհամարհման իւրում ։ Եւ 'ի լեզուող ճանաչի իմաստութիւն, և խորհուրդն, և գիտութիւն, և վարդապետութիւն 'ի բանի գիտնոյ, և հաստատութիւն 'ի գործս արդարութեան ։ Եւ այր հմուտ զբազումս խրատէ, և քաղցր է հոգւոյ իւրոյ ։ Դու, որ ունիս զիմաստութիւն, ունկնդիր իմաստութեան, զի լինիցիս իմաստնագոյն ։ Քանզի իմաստունն, որ է ունկնդիր, լիցի իմաստնագոյն, և իմացօղն, ժառանգեսցէ զկառավարութիւնս ։ Եւ 'ի սրտոջ խոհեմի հանգիցի իմաստութիւն, և եւս խրատեսցէ զանհմուտս ։ զՍիրան իմաստնոյ խրատեսցէ բերան նորա, և շրթանց նր առակցեսցէ զշնորհ ։ Խորիսխ մեղու է զուարճալի բանն, քաղցրութիւն հոգւոյ, և ծուծ ոսկերաց ։ Սիրտ խոհեմի ժառանգեսցէ զգիտութիւն, և ականջն իմաստնոց խնդրեսցէ զվարդապետութիւն ։ Որպէս լաւ մեղրն է քաղցր քիմ քո, և լաւ խորիսխ քաղցրացուսցէ կոկորդ քո. այսպէս և վարդապետութիւն իմաստութեան հոգւոյ քո, զոր յորժամ գտցես, կալցիս զյոյս 'ի վերջինս, և յոյսն քո ոչ կորիցէ ։ Ուսիր ուրեմն զիմաստութիւն, զի հաճոյասցիս այ, և զի կարիցես պատասխանի տալ նախատողի ։ Մի անարգեր զիմաստութիւն, և մի մեկուսանար 'ի յուսանելոյ ։ Վասնզի զիմաստութիւն, և զվարդապետութիւն անմիտք անարգեն. և որ փախչի 'ի յուսանելը, անկցի 'ի չարիս ։

8. Ի մանկութենէ քումմէ ընկալ զվարդապետութիւն. և մինչև առ ծերութիւն գտցես զիմաստութիւն ։ Իբրև դա, որ վարէ զերկիրն, և սերմանէ, մերձեցիր առ նա, և սպասեա՛ բարեաց պտղոց նորա ։ Քանզի իմաստութիւնն է ըստ անուան վարդապետութեան նր, և ոչ յայտ բազմաց ։ Բայց որոց է յայտ, մնայ մինչև առ տեսութիւն այ ։ Իմաստութիւն է կարի յոյժ սիրելի ։ Վասնզի իմաստունին ներաշնչէ զկեանս որդւոց իւրոց, և ընդունի զայնոսիկ, որք խնդրեն զնքեն, և առաջնեսցէ 'ի ճանապարհի արդարութեան ։ Եւ որ սիրէ զնա, սիրէ զկեանս, և որք հսկիցեն առ նա, փարեսցին զվայելչութեամբ նորա ։ Որք կալեալք իցեն զնա, ժառանգեսցեն զկեանս, և ուր ներամտեսցէ, օրհնեսցէ ած ։ Որք ծառայեն նմա, հնազանդօղք լիցին սրբոյ. և զայնոսիկ, որք սիրեն զնա, սիրէ ած ։ Որ լինի նմա ունկնդիր, դատեսցէ զհեթանոսս, և որ նայի առ նա, յարամնասցէ ապաւինել ։ Եթէ հաւատայցէ նմա, ժառանգեսցէ զնա, և եղիցին 'ի հաստատութեան ստեղծուածք նր ։ Քանզի 'ի փորձութեան շրջի ընդ նմա, և 'ի յառաջինս ընտրէ զնա ։ Զերկիւղ, և զահ, և զփորձառութիւն ներածէ 'ի վր նր 'ի յանձկութեան վարդապետութեան իւրոյ, մինչև փորձեսցէ զնա 'ի խոկմունս իւրս, և հաւատասցէ հոգւոյ նորա ։ Եւ հաստատեսցէ զնա, և առածցէ առ նա զուղիղ ճանապարհ, և ուրախացուսցէ զնա ։ Եւ յայտնեսցէ նմա զգաղտնիս իւրս, և գանձեսցէ 'ի վր նր զգիտութիւն, և զիմացութիւն արդարութեան ։ Սիրօղդ իմաստութեան, մի լինիր հետաքրքիր ։ Քանզի, որ է քննիչ հանդիսավեհութեան, զրկեսցի 'ի փառաց ։ Մի խնդրեր զբարձրագոյնս քան զքեզ, և զհզօրագոյնս քան զքեզ մի որոներ, այլ խոկա՛ միշտ զայնոսիկ, զորս հրամայեաց քեզ ած, և 'ի բազումս գործս նր մի լինիր հետաքրքիր ։

ԳԼ·

## ԳԼՈՒԽ ՁԴ.

### Յաղագս քարոզութեան ։

1. Քարոզութիւն է գործ վարդապետութեան ։ Վասն որոյ ոչ սոսկամբք զվարդապետութիւն, զոր մեք միայն լինիցիմք գիտունք · այլ նաև զոր և զայլս առնիցեմք գիտունս · քանզի բարին է տարածահեղական իւրեան ինքեան ։ Սոյնպէս բարի վարդապետութիւն է տարածահեղական իւրեան ինքեան , և բարի վարդապետն է տարածահեղական իւրեան ինքեան։ Սոսկ է թէ պաշտօնն վարդապետի է քարոզութիւն ։ Ոմանք 'ի յարդարութէ պարաւանդին քարոզել, որպէս եպիսկոպոսք , և ժողովրդապետք , որք ունին զհոգաբարձութիւն հոգւոց · վասնզի պարաւանդին զքրիստոնեայս հոգաբարձութեան իւրեանց յանձնեցեալս , կերակրով ճշմարին բանի դարմանել , և այս է քարոզել ։ Իմաստունք ընդունակք առ 'ի քարոզել , որք ոչ պարաւանդին քարոզել 'ի յարդարութէ , պարտին 'ի սիրոյ աւետարանել զբանն այ ։ Մանաւանդ եպիսկոպոսաց , աջորդաց առաքելոց , որք 'ի տեառնէ քէ առաքեցեալք են առ 'ի քարոզել , պատկանի պաշտօն քարոզելոյ ։ Քանզի որպէս եղեն աջորդք առաքելոց 'ի յարժանապատուութե , այսպէս նաև 'ի պաշտօնս ։ Մին առաքելական պաշտօնն է քարոզել ։ Վասնզի առաքեալք հոգւով սրբով լցեալք , 'ի յընդհանուր աշխարհ քարոզեցին զաւետարանն ։ Սոյնպէս մանաւանդ եպիսկոպոսաց պատկանի պաշտօնն քարոզելոյ ։ Եպիսկոպոսք կարեն կացուցանել զընդունակս առ պաշտօն քարոզելոյ։ Քանզի եպիսկոպոսք ունին զբազումս այլս գործառութիւնս ։ Սոստի կարեն արդելանիլ։ Եւ 'ի միում նահանգում գտանին բազումք եկեղեցիք , 'ի յորս ամն ոչ կարեն 'ի նոյնում ժամու քարոզել ։ Սոստի կարեն , և պարտին կացուցանել զըմբռնս , և առ 'ի քարոզել ընդունակս , առ պաշտօն քարոզելոյ ։

2. Եպիսկոպոսք , աջորդք առաքելոց , վարդապետք քրիստոնէից , հոգաբարձութեան իւրեանց յանձնեցելոց , որոց են հովիւք , և որոց փրկութե 'ի պաշտօնէ պարաւանդին պարտապիլ , պարտին 'ի կիր արկանել զամենայն ուշադրութի շուրջ զքարոզութիւն ճշմարին բանի , զի մի որդիք վասն չքաւորութե հոգևորի հացի , առ փրկութի հոգւոյ հարկաւորի , կորընչիցին · և զի մի քրիստոնեայք վասն տգիտութե հաւատալեաց իւրաց , բացադրիցին վտանգի մոլորութեց ։ Սոստի պարտին 'ի ձեռն իւրեանց ինքեանց , կամ արդելեցեալք , 'ի ձեռն այլոց , առ պաշտօն քարոզութե ըմբռնից , քարոզել զաւետարանն ։ Այսպէս նաև ժողովրդապետք 'ի թեմի եպիսկոպոսաց 'ի յեկեղեցիս վերակացուցեալք , զփոխանորդութիւն եպիսկոպոսաց լցուցանողք , փրկութե հոգւոց պարտապողք , և ունեցողք զիշխանութի մատակարարելոյ զխորհուրդս ինքեանց պատկանողս , արածելոյ հոգևոր կերակրով հոգաբարձութե իւրոյ զյանձնեցեալս , ուսուցանելոյ զաւետարանն · քարոզելոյ զճշմարին բանն , և ուսուցանելոյ զիրս հարկաւորս հոգևորաց որդւոց իւրոց , պարաւանդին ինքեամբք , կամ 'ի ձեռն այլոց ըմբռնից առ պաշտօն քարոզութե , եպիսկոպոսաց իւրոց ներկայացուցելոց , քարոզել իւրոց զճշմարին բանն · և ինքեամբք , կամ 'ի ձեռն այլոց առ 'ի յուսուցանել զքրիստոնէական վարդապետութիւն ըմբռնից , 'ի յաւուրս 'ի յեկեղեցւոյ սահմանեցեալս , ուսուցանել զքրիստոնէական վարդապետութիւն մանկանց , և մանկունեաց ։ Վ͞ա սաս‿

ցելոց կրթութեանց կացուցեալք են ունեցօղք զհոգաբարձութի հոգեւոց, և վայելեն զբարերարութիս եկեղեցականս ։ Ուրեմն պարտաւորին 'ի յարդարութե ։ Եթէ նոքա կորընչիցեն վասն ապիրատութե, զարիւնն նոցա ․ 'ի ձեռաց սոցին խնդրեսցէ ած ։

3. Բազումք են, որք պարտաւորին ուսուցանել մանկանց, և մանկունհեաց զառաջինս սկզբունս, և զառաջինս խրատս քրիստոնէականի կրօնի ։ Քանզի պարտաւորին ծնօղք, այսինքն հայրն, և մայրն ․ պարտաւորին կնքահարք, և կնքամարք, և պարտաւորին ժողովրդապետք ։ Պարտաւորին ծնօղք, որք ծնեալք են զորդիս և զդստերս ․ վասնզի ծնօղք պարտաւորին ունիլ զհոգաբարձութի շուրջ զնոքօք, զորս ծնեալք են ։ Այսոքիկ, զորս ծնեալք են, ոչ միայն զմարմին, այլ նաև ունին զհոգի ։ Ուրեմն ոչ միայն զմարմնոյ որդւոց իւրոց, այլ նաև զհոգւոյ նցին պարտաւորին ունիլ զհոգաբարձուի ։ Իսկ ունին զմեծ պարտաւորութի դարմանելոյ զմարմինն որդւոց, և դստերաց իւրոց ։ Ուրեմն ունին զմեծագոյն պարտաւորութի հոգալոյ զհոգիս նցին ։ Իսկ առ հոգաբարձութի հոգւոց պատկանի ուսուցանել նոցա զառաջինս սկզբունս, և զառաջինս խրատս քրիստոնէականի կրօնի ․ վն զի թարց ծանօթութե սոցա ոչ կարէ գոլ փրկութի հոգւոց ։ Ապաուրեմն ծնօղք պարտաւորին ուսուցանել որդւոց և դստերաց իւրոց զառաջինս խրատս քրիստոնէականի կրօնի ․ կամ ունիլ զուշադիր ջանադրութի, զի ուսանիցին ։ Եւ այս պատկանի առ բարի մանկանուի որդւոց և դստերաց ։ Պարտաւորին նաև կնքահարք ․ քանզի առ այս կացուցանին, զի 'ի պակասին այլոց յանձն առնուցուն զհոգաբարձութին մկրտեցելոց ։ Ուրեմն 'ի պակասին այլոց, պարտաւորին հոգալ զմկրտեցեալս ։ Իսկ առ խնամածութի նց մանաւանդ պատկանի հոգաբարձութի հոգեաց ։

Ուրեմն պարտաւորին ունիլ զհոգաբարձութի հոգեաց ։ Իսկ առ հոգաբարձութի հոգեաց մկրտեցելոց պատկանի ուսուցանելն նոցա զիրս հարկաւորս առ փրկութի ։ Ապաուրեմն 'ի պակասին այլոց պարտաւորին ուսուցանել մկրտեցելոց զիրս հարկաւորս առ փրկութի ․ կամ ունիլ զուշադիր ջանադրութի, զի հմտացուցանիցին յայլոց առ այս պաշտօն ընդունակաց ։

4. Պարտաւորին նաև ժողովրդապետք զհոգաբարձութի հոգեաց ունեցօղք ։ Որ այսպէս հաստատի ։ Մարմնաւորք հարք պարտաւորին ունիլ զհոգունակութի մարմնաւորաց որդւոց իւրոց, յայնոսիկ իրս, որք պատկանին առ փրկուի նցին ։ Ուրեմն նաև հոգևորք հարք պարտաւորին ունիլ զհոգաբարձութի հոգևորաց որդւոց իւրոց, յայնոսիկ իրս, որք պատկանին առ փրկութի նցին ։ Իսկ ժողովրդապետք են հոգևորք հարք մկրտեցելոց ․ վասնզի ծնանին զնս զորդիս այ 'ի ձեռն մկրտութե ։ Ուրեմն պարտաւորին ունիլ զհոգաբարձութի զմկրտեցելոց, յայնոսիկ իրս, որք պատկանին առ փրկութի նոցա ։ Դարձեալ ամ ոք պարտաւորի ունիլ զխնամածութի զայնմանէ, որ պատկանի առ պաշտօն նր ․ քանզի իւրաքանչիւրոք պարտի հոգալ զպաշտօն իւր ։ Իսկ ուսուցանել քրիստոնէից զայնոսիկ իրս, որք պատկանին առ փրկուի նց, պատկանի առ պաշտօն ժողովրդապետի ․ քանզի պաշտօնն ժողովրդապետի է պարապիլ փրկութե հոգեաց հոգաբարձութե իւրում յանձնեցելոց ։ Ուրեմն ժողովրդապետք պարտաւորին ուսուցանել քրիստոնէից, հոգաբարձութե իւրոյ յանձնեցելոց զայնոսիկ իրս, որք պատկանին առ փրկութի նոցա ․ և այսպէս պարտաւորին ունիլ զհոգաբարձութի զմկրտեցելոց հոգաբարձութե իւրոյ յանձնեցելոց, յայնոսիկ իրս, որք պատկանին առ փրկութի հոգեաց նցին ։ Դարձեալ սոքա, որք ունին

զփո_

փոխանորդութե եպիսկոպոսաց, առաջորդաց առաքելոց, պարաւանդլն ունիլ զհոգունականութի զմկրտեցելոց ինքեանց ընթարկեցելոց, յայնոսիկ իրս, որք պատկանին առ փրկութի նոցա · զանզի ինքեանք եպիսկոպոսք պարաւանդին առ այս : Իսկ ժողովրդապետք են փոխանորդք եպիսկոպոսաց · քանզի կացուցանին 'ի յեպիսկոպոսաց, զի լցուցանիցեն զփոխանորդութի նց̃ին : Ապաուրեմն ժողովրդապետք պարաւանդին ունիլ զհոգաբարձութի 'ի վր̃ քրիստոնէից, հոգաբարձութե իւրոյ յանձնեցելոց, յայնոսիկ իրս, որք պատկանին առ փրկութի հոգեաց նց̃ին : Յորժամ ոչ պարաւանդիմք 'ի յարդարութե, պարտիմք ուսուցանել 'ի սիրոյ · վասնզի գործս այս ողորմութե է հաճոյագունեղ այ̃ :

5. Եպիսկոպոսք, և այլք քարոզողք զբանն այ̃, պարտին յառաջ բերել զհեղինակութի 'ի վարդապետութե ածաշնչոյ, ոչ զաշխարհականաց գրեանց հնարագիտութիս ցուցանել : Քանզի ոչ են վարդապետք ունայնութեց, այլ քարոզիչք ածաշնչոյ, և աւետիչք ածայնոյ բանի : Քարոզիչն ածայնոյ բանի, և աւետիչն աւետարանի, աշխատեսցի, զի իմացողաբար, զի յօժարաբար, և զի հնազանդաբար լուիցի · և զայս զինքն կարել առնել բարեպաշտութե աղօթից, մինչ քանթէ արհեստիւ քարոզչի, մի երկբայեսցի, զի աղօթելով վասն իւր, և վս̃ ունկնդրողաց · իցէ առանձնական քարոզիչ, նախքան վարդապետ · և յայնմ ժամու յորում մերձենայ առ 'ի քարոզել, նախքան թէ կրթիցէ զլեզուն արտաբերօղն, վերացուսցէ զծարաւեցեալ հոգին առ ած, զի արտաբղխիցէ զայն, զոր ըմպեալ իցէ, կամ զոր լցուցեալ իցէ, հեղուցու : Աղօթեսցէ վասն իւր, և վասն ունկնդրողաց · վասն իւր, զի վայելչաբար քարոզիցէ, և յարմարաբար խօսիցի · և վասն ունկնդրողաց, զի օգտակարաբար լուիցեն : Բայց ուրեմն զերկան քո · բայց յառաջադոյն, զի բացցի, խնդրեա : Զուգակցեա խօսակցութե զկեանքդ : Զի ունիցիս զգործունեայ խօսակցութի : Քանզի կեանն վերացուցանէ զբանն, և ստանայ զնա · իսկ բանն թարց կենի դատանի թարց գործունէութե : Ուստի զխօսքն առ ած, բազմաւ ժամանակաւ պարտի հանդիպել, և կալ յայնոսիկ իրս, զորս տեսանէ, և զոչինչ ունիլ 'ի խղճմտանս, զորս 'ի յայլս խրատելոց է, զի ոչ միայն բանիւ այլ նաև կենիւ ուսուցանիցէ : Բանն, որ ոչ խրատէ, այլ միայն հեշտացուցանէ զլսօղս, զգինին սրբոց գրոց աղծէ, և իւրով նշանակութ̃ ապականէ :

6. Քարոզն պարտի դոլ խայթօղ, զի կարիցէ դոլ դիտուն : Վասնզի քարոզութին որ ոչ խայթէ, և ոչ շարժէ զսիրան առ փարումն առաքինութե, և առ փախուստ մոլութե · այլ միայն զուարճացուցանէ զլսօղս, ոչ է իմաստուն : Ով քարոզիչ բանին այնպէս կեաց, զի գործք քոյք ոչ չփոթիցեն զբանն քո տարբեր, և տարաձայն 'ի գործոց քոց · և մինչ 'ի յեկեղեցւոջ խօսիս, ոչ իցէ ոք, որ լաւեալ պատասխանիցէ · վասն էր ուրեմն, զայն զոր ասէ, ինքն ոչ առնէ : Խոստովանեալ վարդապետ է, որ լի արդանովն վիճէ զծոմից · ամբաստանել զադահութե, և աւազակն կարէ · քահանայի քի բերանն, միտն, և ձեռքն պարտին համաձայնիլ, ընթերցումն գրոց պարտի համեղացուցանել զբանն քարոզչի : Վասնզի բանն քահանայի եթէ ոչ համեղացուցանիցի ընթերցմամբ գրոց, հոլովէ զբանս արադութե ասելոյ : Այսպէս 'ի քարոզելն առաջանալի է, զի այն ած, որ արտաբերի, շինիցէ զլսօղս · Քանզի այն ած որ ոչ շինէ զլսօղս, դարձուցանի 'ի վնասս լսողաց · Որ առնու զբարերարութիս 'ի յեկեղեցւոյ, 'ի կիրարկցէ զպաշտօն քարոզութե · վասնզի որ զբարիս եկեղեցւոյ առնու առ պէտս մարմնոյ, զպաշտօն յորդորման ջամբել

պարտի ։ Ուստի ոչ են բարւք հովիւք, որք ընկալեալք զպաշտօն քարոզչի, զարդիւնս եկեղեցականս ճաշակեն, և պահանջեն, որ պիտոյ է մարմնոց նց, այլ ոչ ջամբեն, որ պիտոյ է սրտի ենթարկեցելոց, առնուն զժամանակաւորս, այլ ոչ տան զփրկաւէտս, և զհարկաւորս առ փրկութի ենթարկեցելոց իւրոց ։

7. Կեանն քարոզողաց հնչէ, և բորբոքի. բորբոքի ըղձիւ, հնչէ բանիւ ։ Է ուրեմն փայլեալ քարոզութին վառեցեալ ։ 'Ի բերանոյ հովուաց, վառեցեալ քարոզութի քարոզողաց, և որոց քարոզութին է բորբոքեալ, արտեւանունքն կայծք. վասնզի 'ի յորդորմանց նոցին բանք բորբոքօղք առ ականջս լսողաց սառաջանան ։ Ուրեմն բարւոք բանք քարոզողաց կոչեցեալք են կայծք վմնի զնա, զորս 'ի սրտի շօշափեալք իցեն, վառեն ։ Այն բանն 'ի լսողէ յօժարապէս ընկալեալ լինի, որ 'ի քարոզողէ ցաւակցութբ ոգւոյ արտաբերի ։ Նա ծանեաւ ճշմարտաբար խօսիլ, որ յառաջադոյն ուսեալ է բարեբարել. և յայնժամ սեփն բանին բուսանի, յորժամ զայս 'ի սրտի լսողի սուզէ բարեպաշտութին քարոզողի ։ Մինչ քարոզեմք, պարտիմք աղօթել առ ած, զի մինչ մեք արտաքսադոյն խօսիմք, ինքն ներքսադոյն ուսուցանիցէ ։ Քանզի եթէ հոգին սբ ոչ իցէ մերձ սրտի լսողի, դատարկ է բան վարդապետի. ուրեմն ոչոք ընձեռեսցէ մարդոյ ուսուցանողի, զայն զոր իմանայ 'ի բերանոյ ուսուցանողի. վասնզի եթէ ոչ իցէ 'ի ներքս, որ ուսուցանիցէ, լեզուն վարդապետի արտաքուստ 'ի զուր աշխատի ։ Քարոզիչն յառաջադոյն տրամադրեսցէ, յետոյ քարոզեսցէ ։ Տրամադրութին է ունիլ 'ի յինքեան զայն, զոր քարոզէ ։ Ուստի յառաջադոյն պարտի մաքրիլ, և ապա զայլս մաքրել ։ Յառաջադոյն լինել իմաստուն, և ապա իմաստնացուցանել զայլս. լինել լոյս, և ապա լուսաւորել զայլս. մերձենալ առ ած, և առածել զայլս առ ած. օրհնել, և ապա օրհնեցուցանել. ունիլ զձեռս մաքուրս, և ապա յորդորել զայլս առ առաքինութի. առնել զբարեգործութիւն, և ապա ջանալ առածել և զայլս առ բարեգործութի ։

8. Նա հաւաքէ զպարարտս պտուղս քարոզութե, որ նախայղէ զսերմունս բարեգործութե ։ Վմնի կորուսանի հեղինակութի խօսելոյ, յորժամ ձայնն ոչ լինի օգնեալ գործով ։ Որ զկշտամբանսն խայթէ մեղապարտութի յանցանաց, երկիւղն պատկառանաց կապէ զլեզուն ։ Որ նախապատրաստէ զիւր ինքն առ բանս ճշմարտի քարոզութե, հարկ է, զի առնուցու զսկզբունս պատճառաց 'ի սրբոց գրոց, զի զայն ած, զոր խօսի, վերակոչիցէ առ հիմն ածային հեղինակութե, և 'ի յայնմիկ հաստատիցէ զշինութի խօսակցութե իւրոյ, և պարտի ջանալ, զի առնիցէ զայն, զոր ուսուցանէ ։ Քանզի ոչ կարէ հասանիլ առ թագաւորութի յաւիտենականի երանութե, որ ոչ կամի գործովք կատարել զայն, զոր ուսուցանէ. Վասնզի որոյ կեանն անարգի, հետևի, զի քարոզութի նորա անարգանիցի ։ Իսկ որ ընդունի զպաշտօն քարոզութե, ոչ պարտի գոլ մարմնապերծ, և ընդարձակ, այլ արի, և հզօր յոյժ իւր. քանզի ոչ ես գտնեալ սմն առշօշափել պարտի այսր գերապայծառ պաշտօնի զպատսաւորութին, եթէ ոչ իցէ պատրաստ հաղարիցս մտանել զանձն իւր 'ի մահ, և 'ի վտանգս ։ Արժանապատուութի մարդոյ է քարոզութբ բանին այ ։ Վասնզի որպէս կերակրօք, և ըմպելութբք զօրանայ մարմինն, այնպէս հոգին ածայնովք բանիւք ։ Ուրեմն կերակուրք հոգւոյ են ընթերցումն ածայնոց գրոց, համապաղորդականք աղօթք, բան վարդապետութե, այսոքիւք կերակրօք սնանի, այսոքիւք զօրանայ ։ Այսոքիւք լինի կատարող ։ Քարոզիչն մի դիցէ զյուսադրութի

քա-

քարոզելոյ 'ի պայծառութեան բանից, այլ զբոլորն 'ի զօրութեան գործոց. մի ձայնիւք ժողովրդեան աղաղակողի զուարճասցի, այլ արտասուօք, և մի ջանասցէ սպասել ծափահարման ժողովրդեան ։

## ԳԼՈՒԽ ։ ՁԵ.

### Յաղագս ունկնդրութեան ա՟ծայնոյ բանի ։

1\. Ամենակարողն, և ողորմածն Ա՟ծ, ոչ միայն ետ մեզ զբնականն լոյսն. այլ նաև շնորհեաց մեզ զս՟բ գրեանս ։ Շնորհեաց մեզ զՀին, և զՆոր կտակարանն ։ Առաքեաց առ մեզ զմարգարէս, զի լուսաւորիցեն զմեզ. զՈրդին իւր միածին, որ է արեգակն արդարութեան, զի յայտնիցէր մեզ զխորհուրդս. զառաքեալս, զի ուսուցանիցեն մեզ. զաւետարանիչս, զի գրովք ծանուցանիցեն մեզ զգործեցեալս, և զասացեալս որդւոյն իւրոյ վասն փրկութեան մերոյ ներմարմնացելոյ. զվարդապետս, զի բացատրիցեն մեզ զա՟ծայինս բանս. զժողովս, զի հմտացուցանիցեն զմեզ 'ի հաւատալիս, և 'ի գործելիս իրս. 'ի հաւատոյ, և 'ի բարիս վարս. զհոգևորս հարս, զի գրեամբք, զորոց հոգևորաց շարադրեցելովք, ածիցեն զմեզ առ փարումն առաքինութեանց, և առ փախուստ մոլութեանց. զս՟բս, զի ոչ միայն բանիւք, այլ նաև գերազանցիւք, և ազնուիւք արարովք ուսուցանիցեն մեզ զերկնայինս իրս, և ներածիցեն զմեզ օրինակօք մեզ թողեցելովք, առ 'ի գանձել 'ի յերկինս, և առ 'ի հաւաքել զփարթամութիւնս, անհամեմատաբար զհամայնս գանձս այսր աշխարհի յաղթօղս. զսահմանադրութիւնս, զի ունիցեմք առողջս վարդապետութիւնս. և զքարոզիչս, զի լսիցեմք զփրկաւէտս բանս ։ Ուրեմն ոչ միայն պարտիմք կամաւորապէս ունկնդրել ա՟ծայնոյ բանի, այլ նաև պարտիմք վասն այնքանոյ բարերարութեան զամենամեծս շնորհակալութիւնս մատուցանել Ա՟յ ։

2\. Այնոքիկ, որք ոչ գիտեն զիրս հարկաւորս առ փրկութի, պարաւանդին ուսանել զն՟ա. վասն զի թարց գիտութեան, և ծանօթութեան հարկաւորաց իրաց առ փրկութի, ոչ կարեն հասանել փրկութեան, Առ փրկութի մեր հարկաւոր է հաւատալ զհաւատալիս, յուսալ զյուսալիս, և գործել զգործելիս իրս ։ Ուրեմն քրիստոնեայք, որք ոչ գիտեն զիրս հաւատալիս, ոչ գիտեն զյուսալիս, և ոչ գիտեն զգործելիս, պարտաւորին ուսանել զիրս հաւատալիս, զի ելուզանիցեն զներգործութի հաւատոյ, և ուսանել զյուսալիս. զի ելուզանիցեն զներգործութի յուսոյ, և ուսանել զիրս գործելիս, զի գործիցեն ։ 'Ի մեզ է իմացութի, և կամք ։ Իմացութին առաջադրէ, և կամն 'ի յիմացութէ առաջադրեցելոյ հետևի. իմացութին ոչ կարէ առաջադրել, եթէ ոչ գիտիցէ. և կամն ոչ կարէ հետևիլ, եթէ ոչ առաջադրիցին նմա հետևելիք ։ Ուրեմն քրիստոնեայք, որք ոչ գիտեն զիրս հարկաւորս առ փրկութի, պարաւանդին ուսանել զն՟ա, զի իմացութին կարիցէ առաջադրել, և կամն հետևիլ ։ Ծնօղք, կնքահարք, և ժողովրդապետք, զայնոսիկ, որք հարկաւորք են առ փրկութի, պարաւանդին ուսուցանել այնոցիկ որոց հոգաբարձուին պատկանի ինքեանց ։ Եւ եպիսկոպոսք 'ի թեմս իւրեանց պարաւանդին հոգալ զայս ուսուցումն ։ Ուրեմն նաև հմտացուցանելիք պարտին ուսանել ։ Քանզի եթէ հմտացուցանօղք պարաւանդին ուսուցանել նոցա, որոց հմտացուցումն պատկանի ինքեանց, զայնոսիկ իրս, որք են հարկաւորք առ փրկութի, նաև հմտացուցանելիք պարաւանդին հմտացուցանիլ ։ Ուրեմն քրիս-

քրիստոնեայք, որք ոչ գիտեն զիւր հարկաւորս առ փրկութիւն, պարտաւանդին ուսանիլ զնոսա։

3. Ունկնդրնելի է աստուածայնոյ բանի. քանզի հաւատն է 'ի լոյս, իսկ լոյսն բանիւն Աստուծոյ, որպէս ասէ առաքեալն. եթէ ուրեմն իւրաքանչիւրոք թարց քարոզչի ոչ լսէ, թարց լոյս ոչ հաւատայ, թարց հաւատոյ ոչ իմանայ, թարց իմացութեան ոչ գործէ. քարոզելի է աստուածային բանն, զի լսօղն հաւատայցէ, հաւատացօղն իմանայցէ, և իմացօղն զբարի գործն յարատեւողապէս 'ի կիրարկանիցէ. զի զկարօղս վարիլ անձնիշխանութեամբ կամաց, ոչ գործք թարց հաւատոյ, ոչ թարց գործոց հաւատն միայն արդարացուցանէ։ Որպէս ջերմեռանդաբար ընդունելի է մարմինն Քրիստոսի, այսպէս յուշադրաբար աստուածային բանն, որ ոչ է նուազ քան զմարմինն Քրիստոսի, և վասն այսորիկ ոչ են նուազ մեղապարտք, որք զաստուածային բանն հեղգաբար լսիցեն, քան զայն, որ վասն պղերգութեան իւրոյ թողեւ անկանիլ 'ի յերկիր զմարմինն Քրիստոսի։ Եթէ այսպէս ունի զինքն, որ հեղգաբար լսէ. զինչ եղիցի զայնմանէ, որ ոչ լսէ։ Որ ոչ ընդունի զսերմն աստուածայնոյ բանի, է ողորմելի. վասնզի ուր ոչ է սերմն, անդ ոչ և եղիցի պտուղ։ Բազումք ընդունին զսերմն աստուածայնոյ բանի, բայց ոչ համայնք առբերեն զպտուղ։ Ոմանք ընդունին զսերմն աստուածայնոյ բանի որպէս ճանապարհ. և գան թռչունք երկնից, և ուտեն զնա։ Ոմանք ընդունին որպէս ապառաժ, ոչ ունեցող զբազում հող. և 'ի ծագելն արեգական տօթանայ, և զի ոչ ունի զարմատ, չորանայ։ Ոմանք ընդունին զսերմն բանի որպէս փշաբեր երկիր. և փուշք աճեցեալք խեղդեն զնա։ Ոմանք ընդունին զսերմն բանի որպէս երկիր բարի, որ տայ զպտուղ հարիւրաւոր, կամ վաթսնաւոր, կամ երեսնաւոր։ Պարտիմք ընդունիլ զսերմն աստուածայնոյ բանի որպէս բարի երկիր, զի կարիցեմք առբերել զպատշաճաւոր պտուղ։

4. Իրջանիկ է, որ կերակրի բանիւն Աստուծոյ։ Քանզի ամենայն ոք որ զարմանի բանիւն Քրիստոսի, ոչ խնդրէ զերկրային կերակուր։ Վասնզի ոչ կարէ ընդունիլ զհացն աշխարհի, որ սնանի հացիւ փրկչի։ Անփոյթ առնէ զքաղցրութիւն մարմնոյ, որ անսայ կերակրոյ ընթերցման, և ոչ կարասցէ հոգալ զարգանան, որ ստանայ զդարման երկնային կերակրոյ։ Քանզի այն է ճարակումն ամենից, որ պարարտացուցանէ զհոգին, որ գիրացուցանէ զփորոտիս, մինչ ընդունիմք զկերակուրն բարբառոյ մշտնջենաւորի աստուածայնոց գրոց. կերակուրս այս է քաղցրագունեղ. սակայն քաղցրութիւն այս ոչ զգանի 'ի կոկորդս այնոցիկ, յորս է դառնութիւն չարութեան։ Աստուածային բանն որպէս պինդ է լռեալ, գործէ զպտուղ վարուց. լուսաւորէ զմիտն, և շնորհէ մարդոյ զճանաչումն իւրեան ինքեան առ 'ի ժառանգել զճշմարիտ առաքինութիւն. վերյօրինէ զվարս, տալով զճշմարիտ, և զկատարեալ իմաստութիւն. առնէ, զի սիրտն մեր համակերպիցի աստուածայնոյ կամին, և հոգին մեր զգենուցու զհոգեւոր գեղեցկութիւն. գործէ 'ի մեզ զպտղաբերութիւն բարեաց գործոց, և գերաղանցից առաքինութեանց, և տայ սրտի զճշմարիտ ուրախութիւն։ Ջերմեռանդաբար, և մտադրաբար լսելի է աստուածային բանն։ Զի է կենդանի, և գործունեայ բանն Աստուծոյ, և թափանցողագոյն քան զամենայն սուր երկսայրի. և ձգի մինչև առ բաժանումն ոգւոյ, և եւս մինչև առ յօդուածս, և առ ծուծս, և է քննիչ մտաց, և խորհրդոց սրտի։ Աստուածային բանն է լուսաւորող, շարժիչ, և աճող. վասնզի լուսաւորէ զմիտն առ 'ի ճանաչել, շարժէ զսիրտն առ առաքինութիւնս, և աճէ զլսօղն առ փրկութիւն։

5. Պարտիմք դոլ քաղցեալք, և ծարաւիք առ 'ի լսել զբանն աստուածային։ Կերակուրս այս ճաշակեալ, ընդոստուցանէ զքաղձանն։ Քանզի միտն մեր լուսաւորեալ,

և

և ճանաչեալ զպատուականութիւն ա՟ծայնոյ բանի , ընդունուցանի առ մեծագոյն լուսաւորութիւն ։ Առշօշափեալ զմեծագոյն լուսաւորութիւն , ըմբռնէ, և զգայ զմեծագոյն քաղցրութի ։ Եւ մեծագոյն քաղցրութիւն տրամադրէ , և շարժէ առ մեծագոյն լուսաւորութիւն ։ Եւ այսպէս միշտ լինի աճումն քաղցրութեան . և լուսաւորութեան ։ Ուստի է քաղցր կերակուր . ճաշակեցեալ որպէս պիտոյ է , ոչ պատճառէ զտաղտկութիւն , այլ զարթուցանէ զքաղձան ։ Արդարև է կերակուր , զոր ճաշակօղք , առաւել քաղցենան . և ըմպօղք , առաւել ծարաւին ։ Որ լսէ զա՟ծային բանն , ոչ ամաչէ ։ Որ լսէ զա՟ծային բանն, և հնազանդի քարոզութեան , և գործէ որպէս հրամայէ նա , ոչ մեղանչէ ։ Եւ որք պայծառացուցանեն զնա գործօղք , և ուսուցանօղք , վայելեսցեն զյաւիտենական կեանն ։ Ամիւ կարելեաւ կերպիւ, պարտիմք ուսանիլ զբանն , զորմէ այժմ աստ մեք խօսիմք ։ Այսինքն , պարտիմք լսել, ընթեռնուլ , մտածել , և խօսել ։ Պարտիմք ունկնդրել , նաև գոլով իմաստունք քարոզչի , և զա՟ծային բանն քարոզօղի ։ Խոնարհութիւն պահանջէ զայս , և շնորհէ մեզ զբաղումս բարիս ։ Պարտիմք ընթեռնուլ զա՟ծաշունչն , զսահմանադրութիւս եկեղեցւոյ , զգործս ս՟րբոց հարց , զհոգևորս գրեանս , զշարադրութիւս դերազանցից հեղինակաց , և զկեանս սրբոց ։ Վասնզի ա՟մ գիր աղդմամբն ա՟յ ներշնչեցեալ , օգտակար է առ 'ի յուսուցանել, առ 'ի խրատել , առ 'ի յանդիմանել , և առ 'ի հմտացուցանել 'ի յարդարութեան , զի կատարեալ իցէ մարդն ա՟յ , առ ա՟մ գործ բարի վարժեցեալ ։ Պարտիմք խօսել 'ի տունընջեան , և 'ի գիշերի զօրէնն ա՟յ , և պարտիմք խօսել զնորհուրդս ա՟յ մեզ յայտնեցեալս ։

6. Որ լսէ զա՟ծային բանն , պարտի ունիլ զուղիղ դիտաւորութի ։ Քանզի զա՟ծային բանն 'ի յայնմիկ , որ ոչ ունի զուղիղ դիտաւորութի , ոչ արտադրէ զգործս , զորս սովորէ արտադրել ։ Վասնզի վատ դիտաւորութիւն ունկնդրողի արգելու զնոսա ։ Քանզի որպէս վատ դիտաւորութիւն , որ առնէ զողորմութի , զրկէ 'ի պտղոյ ողորմութեան , զաղօթօղն 'ի պտղոյ աղօթից , և զծոմապահօղն յարդեանց ծոմապահութեան . այսպէս վատ դիտաւորութիւն լսողի զա՟ծային բանն , զրկէ զլսօղն 'ի գործոյ ունկնդրութեան ա՟ծայնոյ բանի ։ Ա՟մ բարի գործ ունի զեւր յատուկ վախճանն , վ՟ն որոյ է 'ի կիրարկանելի . զորօրինակ , յատուկ վախճանն ողորմութեան , է օգնելն չքաւորի . վախճանն աղօթից , է ժառանգումն արքայութեան ա՟յ , և արդարութեան նորա . և յատուկ վախճանն ծոմապահութե , է ճնշումն մարմնոյ ։ Այսպէս յատուկ վախճանն ունկդրութեան ա՟ծայնոյ բանի , է լուսաւորումն մտաց , և փրկութի հոգւոյ մերոյ ։ Վասնզի լսեմք զա՟ծային բանն , զի լուսաւորեսցիմք , և գործիցեմք զփրկութի մեր ։ Վերջին վախճանն ա՟մից գործոց բարեաց , է փառքն ա՟յ ։ Քանզի վասն փառացն ա՟յ , որ է սկիզբն , և վախճանն մեր , պարտիմք գործել զբարին ։ Յիմար է , որ ոչ գործէ , և ոչ առնէ զգործ իւր վ՟ն յատկի վախճանի իւրոյ ։ Որպէս յիմար է վաճառականն , կարի աշխատօղն , և նքթօղն 'ի տունընջեան , և 'ի գիշերի , որ ոչ խնդրէ զշահն ։ Այսպէս յիմար է , որ լուեալ զա՟ծային բանն , ոչ դիտէ զլուսաւորումն , և զփրկութի իւր , այլ խնդրէ զփ՟մ ունայն իր , լեալ հետաքրքիր , և հետախոյզ քարոզչաց , զա՟ծային բանն աւետարանողաց , և բարձրացուցանելով զայն , որոյ կերպն ինքեան հաճոյանայ , և արհամարհելով զմիւսն , որոյ կերպն ոչ հաճոյանայ ։

7. Ոչ է նկատելի կերպն , որ կարէ գոլ զանազան , հաճոյացօղ միոյն , և ոչ միւսոյն ։ Վասնզի ոչ կերպն քարոզչի է կերակուրն հոգւոյ մերոյ , այլ իրաւի , և ճշմարիտ վարդապետութիւն , վար-

դասաւորութիւն ըստ ա̃ծայնից · ըստ սրբոց հարց , ըստ սահմանադրութեանց եկեղեցւոյ , և ըստ սրբազանի հաստատեալ ա̃ծաբանութեան ։ Սիրելիք են ա̃մէք ճշմարտախօսք քարոզիչք ։ Զանազանք են բարիք ծաղկունք , և մինն է լաւագոյն քան զմիւսն ։ Թէպէտ 'ի նոսա իցէ զանազանութիւն , և տարաձայնութիւն · սակայն համայնքն հաճոյանան ։ Զանազանք են քաղցրահամութեամբ , և մինն է լաւագոյն քան զմիւսն ։ Թէպէտ 'ի նոսա իցէ զանազանութիւն , և տարբերութիւն համից սակայն ա̃մէք բարիք քաղցրահամութեամբ հաճոյանան ։ Զանազանք են քաղցունք պտուղք ծառոց , և մինն է քաղցրագոյն քան զմիւսն ։ Թէպէտ 'ի նոսա իցէ զանազանութիւն , և տարբերութիւն քաղցրութեան · սակայն համայնք քաղցունք , և անուշք պտուղք հաճոյանան ։ 'Ի յաշխարհի են զանազանք իրք ըստ բնութեանց իւրոց կատարեալք , և մինն է կատարելագոյն քան զմիւսն · որպէս հրեշտակք են կատարելագոյնք քան զմարդիկ , մարդիկք քան զանասունս , անասունք քան զտունկս , և տունք քան զտարերս ։ Թէպէտ 'ի նոսա իցէ զանազանութիւն , և տարբերութիւն կատարելութեանց · սակայն ա̃ծ սիրէ զա̃մս ստեղծուածս իւրս , ըստ բնութեանց իւրոց կատարեալս ։ 'Ի յարքայութեան են զանազանք ս̃րբք · և մինն է երանելագոյն քան զմիւսն , և յայտնագունիւ տեսողութեամբ տեսանող զա̃ծային էութիւն ։ Թէպէտ 'ի նոսա իցէ զանազանութիւն , և տարբերութիւն փառաց · սակայն ա̃ծ սիրէ զա̃մս ս̃րբս իւրս , և մեք համայնքս սիրեմք , և պատուեմք ։ Ուրեմն նաև թէպէտ իցեն զանազանք ճշմարտախօսք քարոզիչք , և մինն իցէ կատարելագոյն քան զմիւսն ըստ կերպի ասելոյն · սակայն պարտիմք սիրել զհամայնս , և ունկնդրել նոցա ։

8. Ճանաչելի է խորամանկութիւն հասարակի թշնամւոյ , կարի ուշադրաբար ջանացողի արդելուլ զպտուղս լոյ ա̃ծայնոյ բանի ։

Այս խորամանկագունեղ թշնամին ջանայ առնել զմարդիկ հետաքրքիրս , և հետազօտիչս , զի խնդրիցեն , թէ որն 'ի ճշմարտախօսից , և 'ի փորձեցելոց քարոզչաց , 'ի յեպիսկոպոսաց առաջադրեցելոյ առ 'ի քարոզել , իցէ լաւագոյն 'ի կերպի , և 'ի յարհեստի ասելոյ ։ Աստի հետևի , թէ ոմն գովասանէ զմին քարոզիչն , և միւսն զմիւսն ։ Որ գովասանէ զիւրն , այսինքն , զայն որ ինքեան հաճոյ է , արհամարհէ զմիւսն , որ հաճոյէ այլում ։ Աստի ընկնին կռուարարք 'ի մէջ իւրեանց , և անիրաւք , և նախատիչք ընդդէմ քարոզչաց ։ Երբեմն մինն հաճոյ է բազմաց , և միւսն սակաւուց , կամ գրեթէ ոչումեք ։ Համընթանան առատագունեղապէս առ 'ի լսել զայն , որ հաճոյ է բազմաց ։ Իսկ առ 'ի լսել զայն , որ սակագունեղից է հաճոյ , կամ գրեթէ ոչումեք , ոմանք սակաւագունեղք գնան ։ Նա , առ որ մարդիկք առատագունեղապէս համահոսեն , փքանայ ։ Եւ նա , որ է բացաթողեցեալ , բարկանայ , և կորուսանէ զեռանդն քարոզելոյ ։ Ուստի խօսի իբրև զզօրաթափ , որ ոչ ունի զոգի ։ Բազումք , որք են մերձք եկեղեցւոյ , յորում քարոզէ զօրաթափն , ոչ լսեն զքարոզութիւն , վասնզի զօրաթափն արհամարհեն · առ միւս եկեղեցին , ուր է բազմութիւն մարդկանց , ոչ գնան · զի ոչ գոյ տեղի ։ Կամ եթէ գնան , մնան արտաքոյ , զոչինչ լսողք ։ 'Ի բերանոջ լսողաց , է միայն գովասանութիւն քարոզչի , առ որ բազումք առատագունեղապէս համընթանան ։ Իմաստունն , և խնդրողն զքարոզութիւն վասն յատկի վաղձանի ծանեաւ զխորամանկութիւն թշնամւոյ ։

# ԳԼՈՒԽ. ՁԶ։

## Յաղագս խորհրդոց ։

ա. Խորհուրդք են երևելիք նշանք աներևելոյ շնորհի ։ Քանզի են նշանք զգալիք, և երևելիք, որք շարաբերեն զշնորհ, պարտաւորապէս առ նոսա մերձեցելոց ։ Այսոքիւք զանազանիմք 'ի յանհաւատից ։ Վասնզի են երևելիք նշանք զանազանօղք զմեզ հաւատացեալքս 'ի յանհաւատից ։ 'Ի ձեռն այսոցիկ վերընդունիմք զշնորհ և զաճումն շնորհի ։ Խորհուրդք մերք յամէ կողմանէ են գերազանցագունեղք ։ Գերազանցագունեղք 'ի կողմանէ օրինի, և կտակարանի, 'ի կողմանէ կացուցանողի, 'ի կողմանէ եկեղեցւոյ, 'ի կողմանէ արդարացուցման, 'ի կողմանէ շնորհի, և 'ի կողմանէ վախճանի ։ Են գերազանցագունեղք 'ի կողմանէ օրինի, և կտակարանի. զի են խորհուրդք նորոյ օրինի, և նորոյ կտակարանի ։ Են գերազանցագունեղք 'ի կողմանէ կացուցանողի. վասնզի կացուցիչն նոցա է Յս Քս որդին այ, փրկիչն աշխարհի ։ Են գերազանցագունեղք 'ի կողմանէ եկեղեցւոյ, զի են խորհուրդք եկեղեցւոյ նորոյ կտակարանի, սիրելագունեղի հարսին քի ։ Են գերազանցագունեղք 'ի կողմանէ արդարացուցման, վասնզի արդարացուցանեն զամբարիշտն ։ Են գերազանցագունեղք 'ի կողմանէ շնորհի. զի շարաբերեն զշնորհ ։ Են գերազանցագունեղք 'ի կողմանէ վախճանի. զի պարտաւորապէս, և արժանապէս առ նա զմերձեցօղս, ածեն առ յաւիտենական կեանն ։ Խորհուրդք նորոյ կտակարանի, որք շարաբերեն զշնորհ, են եօթն. այսինքն, մկրտութիւն, դրոշմ, հաղորդութիւն, ապաշխարութիւն, վերջին օծումն, կարգ, և ամուսնութիւն ։

բ. Կացուցիչն խորհրդոց նորոյ օրինի, և նորոյ կտակարանի է Քս, ճշմարիտ ած, և ճշմարիտ մարդ ։ Քանզի որդին այ եղեալ մարդ, կերտեաց զեկեղեցին, զամենափրկելի հարսն իւր ։ Իրոցեաց զնոր օրէնն, և զնոր կտակարանն յարեան իւրում. և կացոյց զխորհուրդս, յարմարս նորոյ օրինի, և նորոյ կտակարանի ։ Եւ գոլով ճշմարիտ ած, ունեցօղ զանհուն զօրութիւն, ետ խորհրդոց յինքենէ կացուցելոց, զզօրութիւն շարաբերելոյ զշնորհ ։ Նախապետական պատճառն շնորհի է ինքն ։ Գործիականն գերազանցութբ, և գործին զուգակցեալն է մարդկութիւն նորա ։ Բաժանեցեալ գործին են խորհուրդք, 'ի նմանէ ունեցօղք զզօրութիւն շարաբերելոյ զշնորհ ։ Օրինաւոր պաշտօնեայն ամից խորհրդոց են եպիսկոպոսք աջորդք առաքելոց, որք առաքեցեալք են 'ի 'ի քէ առ 'ի յուսուցանել հեթանոսաց, մկրտելով զնոսա Յանուն հօր, և որդւոյ, և հոգւոյն սբոյ. բաց 'ի յամուսնութենէ, որոյ պաշտօնեայքն են ինքեանք ամուսնացօղք. իսկ եպիսկոպոսք, և քահանայքն են օրհնօղք զհարսանիս ։ Բաց 'ի դրոշմէ, 'ի կարգէ, և 'ի յամուսնութենէ, օրինաւոր պաշտօնեայն այլոց խորհրդոց են քահանայք ։ 'Ի խորհրդոջ ապաշխարութեան առ հաստատութիւն խորհրդոյ խնդրի 'ի քահանայի նաև իշխանութիւն իրաւասութեան, և հրաման արձակելոյ, օրինաւոր, կամ փոխանորդական ։ 'Ի խորհրդոջ մկրտութեան 'ի հարկաւորութեան անսովորական պաշտօնեայն է ամ մարդ ։ 'Ի խորհրդոջ ապաշխարութեան 'ի կէտոջ մահուան ամ քահանայ է պաշտօնեայ, նաև ոչ ունեցօղն զիշխանութիւն իրաւասութեան, և հրաման արձակելոյ ։ Մինչ պաշտօնեայք մատակարարեն զխորհուրդս, քս 'ի նոսա, որք արժանաւորապէս, և պարտաւորապէս

մերձենան առ խորհուրդս , յինքենէ կացուցեալս , ներհեղու շնորհ , սրբացուցանող զհոգին :

3. Անհուն իմաստութիւն շինողին ինքեան զտուն , եդ զեօթն սիւնս , այսինքն , որդին այ , որ է իմաստութիւն հօր , լեալ մարդ կերտեաց զեկեղեցին , և 'ի նմա կացոյց թուով զեօթն խորհուրդս , որք են մկրտութիւն , դրոշմ , հաղորդութիւն , ապաշխարութիւն , վերջին օծումն , կարգ , և ամուսնութիւն : Վասնզի որպէս 'ի բնականի կենի խնդրին եօթն իրք . այսպէս 'ի հոգևորի կենի խնդրին եօթն իրք : 'Ի բնականի կենի խնդրի , զի մարդն ծնանիցի , աճիցի , սնանիցի , եթէ հիւանդանայ , բժշկիցի , եթէ յարիցէ 'ի վր պատերազմ . զինաւորիցի , ոմանք վերակացուցանիցին , զի կառավարիցեն , և ոմանք պարապիցեն ծննդեան , զի բազմացուցանիցեն զանհատս , և համապահիցեն զտեսակն : Ուստի 'ի բնականի կենի խնդրին եօթն իրք . այսինքն , ծնունդ , աճումն , սնունդ , բժշկումն , զինաւորումն ընդդէմ թշնամեաց , առաջնորդութիւն , և զուգակցումն : Այսպէս 'ի հոգևորի կենի խնդրի , զի մարդն հոգևորապէս , ծնանիցի , աճիցի , սնանիցի , բժշկիցի , եթէ հիւանդանայ , զինաւորիցի , եթէ յառնէ թշնամի , ոմանք իցեն վերակացուք առ հոգևոր կառավարումն , և ոմանք պարապիցին առ բազմացուցումն հաւատացելոց : Ուստի և 'ի հոգևորի կենի խնդրին եօթն իրք , այսինքն . վերստին ծնունդ , հոգևոր աճումն , սնունդ , բժշկութիւն , զինաւորումն , առաջնորդութիւն , և խորհրդաւոր զուգակցումն : Վերստին ծնունդն լինի մկրտութբ , հոգևոր աճումն դրոշմիւ , սնանումն հաղորդութբ , բժշկումն ապաշխարութբ , զինաւորումն վերջին օծմամբ , վերակացութիւն կարգիւ , և խորհրդաւոր զուգակցումն ամուսնութբ : Յայտ է 'ի յասացելոց . թէ եօթնակայն խորհրդոց իցէ մարդն :

4. Նիւթն խորհրդոյ է , որով կատարի խորհուրդն Ուստի են իրք , որովք լինին խորհուրդք : Խնդրի նիւթն առ կատարումն խորհրդոյ . քանզի խնդրի իր որով կատարիցի խորհուրդն : Բաժանի նիւթն 'ի հեռաւորն , և 'ի մերձաւորն , հեռաւոր նիւթն է զգալի իրն , որ խնդրի առ կատարումն խորհրդոյ . զորօրինակ , բնական ջուր , մր մեռոն , հաց 'ի ցորենոյ , գինի 'ի յորթոյ , մեղք գործեցեալք , իւղն օրհնեցեալն 'ի յեպիսկոպոսէ , գործիք ընդունակք առ 'ի նշանակել զիշխանութիւն կարգի , և մարդկայինք մարմինք առն և կնոջ : Վասնզի բնական ջուրն է հեռաւոր նիւթ մկրտութեն , մր մեռոնն նիւթ դրոշմի , հացն 'ի ցորենոյ , և գինին 'ի յորթոյ է հեռաւոր նիւթ հաղորդութեն , մեղքն են հեռաւոր նիւթն ապաշխարութեն , օրհնեալ իւղն , և սրբազնագործեցեալն 'ի յեպիսկոպոսէ , է հեռաւոր նիւթն վերջին օծման , գործիք ընդունակք առ 'ի նշանակել զիշխանութիւն կարգի , են հեռաւոր նիւթն կարգի , և մարդկայինք մարմինք , են հեռաւոր նիւթ ամուսնութեն : Մերձաւոր նիւթն խորհրդոյ , է կիրառումն զգալւոյ իրի . զորօրինակ , լուացումն , է մերձաւոր նիւթն մկրտութեն . օծումն մր մեռոնիւ , է մերձաւոր նիւթն դրոշմի , տեսակք հացի , և գինւոյ մնացօղք , են մերձաւոր նիւթ հաղորդութեն , ներգործութիւնք ապաշխարողի . զղջումն , առաջադրութիւն , և խոստովանութիւն , են մերձաւոր նիւթ ապաշխարութեն , օծումն իւղոյ օրհնեցելոյ , է մերձաւոր նիւթ վերջին օծման , աւանդումն գործեաց , է մերձաւոր նիւթ կարգի , և մատուցումն մարմնոց , է մերձաւոր նիւթն ամուսնութեն :

5. Խորհուրդք ոչ միայն ունին նիւթ , այլ նաև զտեսակ : Քանզի բաղկանան 'ի նիւթոյ , և 'ի տեսակէ : Տեսակն , և ձևն խորհրդոց են բանք , որովք կատարին

խոր-

խորհուրդք։ Արդ ուրեմն տեսակք խորհրդոց են այնոքիկ բանք, զորս պաշտօնեայն խորհրդոց, մինչ կատարէ զխորհուրդն, արտաբերէ։ Առ կատարումն խորհրդոց խնդրի տեսակ, և ձև․ վասն զի նիւթն ըստ ինքեան է անտարբեր։ Ուստի խնդրի տեսակ, զի բառնայցէ զանտարբերութիւն, և բացորոշիցէ զնիւթն, և առնիցէ զատոյգ, և զբացորոշեցեալ նշանակութիւն։ Նիւթն է կատարելի, տեսակն է կատարողական։ Ուստի նշանակողական տեսակն մերձեցուցանելի է նիւթոյ, զի կատարիցի 'ի նշանակելն։ Արդ ուրեմն տեսակն մկրտութեան են բանք, որք նշանակեն զլուացումն մկրտելոյ։ Տեսակն դրոշմի են բանք, որք նշանակեն զօծումն հաստատելոյ, և դրոշմելոյ։ Տեսակն հաղորդութեան են բանք, որք նշանակեն զփոխարկումն հացի 'ի մարմին քի, և գինւոյ 'ի յարիւն նորա։ Տեսակն ապաշխարութեան են բանք, որք նշանակեն զարձակումն։ Տեսակն վերջին օծման, են բանք, որք նշանակեն զօծումն զգայութեանց։ Տեսակն կարգի են բանք, որք նշանակեն զիշխանութիւն կարգի աւանդմամբ գործւոյ։ Տեսակն ամուսնութեան են բանք, կամ նշանք զհամահաւանութիւն մարդոյ նշանակօղք։ Նիւթն խորհրդոց է բացորոշեցեալ, և տեսակն է բացորոշեցեալ։ Վարելի է նիւթով, և տեսակաւ բացորոշեցելով, 'ի կատարել զխորհուրդն։

6. Խորհուրդքն են նշանակողականք, քանզի են նշանք նշանակօղք։ Գործեն զայն, զոր նշանակեն․ են նշանք երևելիք աներևելոյ շնորհի։ Ուստի գործեն 'ի հոգւոջ պարտաւորապէս, և թարց արգելման ընդունողի զխորհուրդս, զաներևելի շնորհն։ Ուրեմն գործն խորհրդոց է արդարացուցիչ, և սրբացուցիչ շնորհ։ Խորհուրդք կացուցեալք են վասն մեր․ և վս հոգևորի օգտի մերոյ։ Ամենամեծ բարին մեր է շնորհն այ, որով լինիմք որդիք, բարեկամք այ, եղբարք քի, և ժառանգք արքայութեան․ և որով ապատիմք 'ի մահուանէ, և կեամք կենիւ հոգևորաւ, և առանամք զիրաւունս 'ի փառս․ և որով զինաւորիմք ընդդէմ մեղաց, զներամտութեան 'ի փառս արգելողաց, և քաջալերիմք առ 'ի պաշտպանել պառաքինութիւս 'ի մեզ, որոց ներգործութիւնք են փարթամութիւնք, և գանձք հոգւոյ մերոյ, և առ 'ի պահել զպատուէրս իրանս, զորս պահելով մտանեմք 'ի կեանն։ Արդ ուրեմն փրկիչն մեր, որ եկն առ 'ի փրկել զմեզ, կացոյց զխորհուրդս զշնորհ շարաբերօղս, զի արժանապէս, և պարտաւորապէս մերձեցօղքս առ խորհուրդս, արդարանայցեմք, ընդունիցեմք զշնորհ, փրկիցեմք, և ունիցեմք զիրաւունս 'ի փառս, և 'ի կեանս յաւիտենականս։ Երկու խոհուրդք, մկրտութիւն, և ապաշխարութիւն, արդարացուցանեն զամբարիշտն, և շարաբերեն զառաջին շնորհն։ Մկրտութիւն տալով, և ապաշխարութիւն վերանորոգելով զկորուսեալն։ Ուստի են խորհուրդք մեռելոց։ Այլք խորհորդք շարաբերեն զաճումն շնորհի։ Ուստի են խորհուրդք կենդանեաց։ Երեք խորհուրդք ոչ միայն շարաբերեն զշնորհն, այլ նաև ներատպեն զանջնջելի կնիք, այսինքն մկրտութիւն, դրոշմն, և կարգն։

7. 'Ի պաշտօնէի խորհրդոյ խնդրի դիտաւորութիւն կատարելոյ զխորհուրդն, և խնդրի, թէ իցէ 'ի շնորհի։ Խնդրի դիտաւորութիւն․ քանզի դիտաւորութիւն բացորոշի մարդկային ներգործութիւն․ և քարշի առ այս, կամ առ այն տեսակն արարողութեան․ որպէս յայտ է 'ի յայնմիկ, որ տայ զբաղում դրամ կնոջ չքաւորի։ Վասնզի, եթէ տայցէ, զի քարշիցէ զնա առ պոռնկութիւն, օձտումն դրամոյ ոչ է ողորմութիւն, այլ է միջոց ածող առ պոռնկութիւն․ իսկ եթէ տայցէ, զի օգնիցէ, և ձեռնտու լինիցի նմա

'ի թշուառութենէ, է ողորմութիւն։ Ուստի վերախնդրի գիտաւորութիւն, զի բացորոշիցի ներգործութիւն։ Խնդրի նաև, զի պաշտօնեայն խորհրդոյ իցէ 'ի շնորհի. վասնզի մեծին սրբաբար շօշափելի է։ Խորհուրդք մերք 'ի քէ տեառնէ մերմէ կացուցեալք, և առբերօղք զշնորհն, կարի մեծ են։ Ուրեմն սրբաբար ընձեռելիք են։ Նա ընձեռէ սրբաբար, որ ընձեռէ արժանաբար։ Նա ընձեռէ արժանաբար, որ է 'ի շնորհի. և նա ընձեռէ անարժանաբար, որ գտանի 'ի մահուչափ մեղս։ Ուրեմն խնդրի, զի պաշտօնեայն խորհրդոյ իցէ 'ի շնորհի։ Դարձեալ խոհեմութիւն պահանջէ, զի նա, որ սրբացուցանէ զայլն, առաւել սրբացուցանիցէ զիւր ինքն. քանզի ոչ միայն պարտի սիրել զայլն, այլ նաև պարտի սիրել զիւր ինքն. և ոչ միայն պարտի կամիլ, և գործել զբարին այլում, այլ նաև պարտի կամիլ, և գործել զբարին իւրեան ինքեան։ Իսկ գոլով 'ի մահացու մեղս, եթէ կատարիցէ, և մատակարարիցէ զխորհուրդն, սրբացուցանող զայլն, զիւր ինքն ոչ սրբացուցանէ այլ ևս առաւել կորուսանէ, գործելով զսրբապղծութիւն։ Ուրեմն անխոհեմաբար գործէ, կատարելով, և մատակարարելով զխորհուրդն 'ի մահացու մեղս։ Քանզի ամենամեծ անխոհեմութիւն է նոյնով գործով փրկել զայլն, և զիւր ինքն առաւել կորուսանել։

8. 'Ի յընդունողի զխորհուրդն, որ հասեալ է բանականութեան, 'ի մերձենալն առ խորհուրդն, խնդրի տրամադրութիւն։ Վասնզի թարց տրամադրութեան ոչ ներմուծանի տեսակն։ Նախ քան զամ խնդրի, զի կամիցի։ Քանզի որ ընդունի ոչ կամելով, ոչ է ընդունակ։ Խորհուրդք կացուցեալք են կամեցողի։ 'Ի յայնմիկ, որ մերձենայ առ մկրտութիւն, խնդրի, զի հաւատայցէ, զի թողուցու զմեղս, և զի կամիցի պահել զօրէնն Քի։ Պարտի հաւատալ. վասնզի մկրտութիւն է խորհուրդ հաւատոյ։ Պարտի թողուլ զմեղս, քանզի որ մերձենայ ոչ կամելով թողուլ զմեղս, գնէ զարգելումն։ Պարտի կամիլ պահել զօրէնն Քի, վասնզի մկրտութիւն առ այս պարտաւորէ զընդունօղն։ 'Ի յայնմիկ, որ մերձենայ առ ապաշխարութիւն, խնդրի զղջումն 'ի մեղաց, առաջադրութիւն ոչ մեղանչելոյ, խոստովանութիւն մեղաց, և կատարումն առկցեցելոյ ապաշխարանի։ Խնդրի զղջումն, զի 'ի վեր քան զամ չար ցաւիցի 'ի վերայ մեղաց։ Խնդրի առաջադրութիւն ոչ մեղանչելոյ, զի լինիցի դարձումն, և համադարձումն առ Ած։ Խնդրի խոստովանութիւն, զի ընդունիցի զարձակումն։ Եւ խնդրի կատարումն առակցեցելոյ ապաշխարանի, զի լինիցի բաւարարութիւն։ Որ այլապէս մերձենայ, է թարց տրամադրութեան, և գործէ զմեղս սրբապղծութեան։ 'Ի յայնմիկ, որ մերձենայ առ այլս խորհուրդս, որք ասին խորհուրդք կենդանեաց, խնդրի, զի իցէ 'ի շնորհի Այ։ Քանզի, որ մերձենայ գոլով 'ի մահացու մեղս, մերձենայ անարժանաբար։ Ուստի մեղանչէ, և գործէ զսրբապղծութիւն։ 'Ի կատարելն, և 'ի մատակարարելն զխորհուրդս, եկեղեցին իրոցէ ջերմեռանդս, և զսրբազանս արարողութիւնս. զի պատուեսցին խորհուրդք, և ընդուտուցանիցեն առ ջերմեռանդութիւն որք գտանին առընթերք։ Ուստի պատուելիք են, և ջերմեռանդաբար 'ի կիրարկանելիք։

ԳԼ.

# ԳԼՈՒԽ ՁԷ.

## Յաղագս մկրտութեան ։

1. Մկրտութիւն է խորհուրդ նորոյ կտակարանի, կացուցեալ 'ի Քէ, առ 'ի ջնջել զսկզբնական մեղն, և զայլս 'ի բանաւորութիւն հասելոյ, 'ի նոցանէ նախ քան զմկրտութիւն գործեցելոց, և առ 'ի բառնալ զամս պատիժս մեղաց պարտաւորս ։ Ուստի մկրտեալն արդարանայ, վերստին ընդունի զթողութիւն ամից մեղաց, և ազատի յամից տանջանաց վասն մեղաց պարտաւորեցելոց, վերընդունի զշնորհ, և լինի որդի, և սիրելի Այ, եղբայր Քի, ժառանգ արքայութեան, և փառաց, մտանէ 'ի յեկեղեցին, միաւորի ընդ խորհրդաւորի մարմնոյ Քի, և լինի խորհրդաւոր անդամ որդւոյն Այ ներմարմնացելոյ, խորհրդաւորի գլխոյ մերոյ, լինի ընդունակ հաղորդութեան, և ստանայ զիրաւունս 'ի փառս ։ Ուստի եթէ մկրտեալն առժամայն մեռանիցի յետ մկրտութեան, իսկոյն ընդունի զժառանգութիւն արքայութեան, զերանական տեսութիւն, և զյաւիտենական փառսն ։ Զդուռն արքայութեան ունի բացեալ ինքեան, առժամայն մտանէ 'ի նա ։ Մկրտութիւն փրկէ զմկրտեալս, ոչ է բացամերժութիւն աղտեղութեանց մարմնոյ, այլ քննութիւն բարւոյ խղճի մտաց 'ի յԱծ 'ի ձեռն յարութեան ՅԻ ՔԻ ։ Մկրտեալն փրկի ամբ աւազանաւ վերստին ծննդեան, և վերանորոգման հոգւոյն սրբոյ ։ 'Ի մկրտութեան հեղու Ած զջուր 'ի վր ծարաւեցելոյ, և զգնացս ջուրց 'ի վր երկրի ցամաքեցելոյ, և հեղու զհոգին իւր 'ի վր մարդոյ մկրտեցելոյ, և զօրհնութիւն իւր 'ի վերայ նորա ։

2. 'Ի մկրտութեան Ած հեղու զմաքուր ջուր 'ի վերայ մկրտեցելոյ, և մաքրէ զնա յամից զաղտութեանց, և յընդհանրոց ժանտագործութեանց նորա ։ 'Ի մկրտութեան լինի աղբիւր բացեալ մկրտեցելոյ 'ի լուացումն նորա ։ Փրկի, որ հաւատայ, և մկրտի ։ Որ մկրտի մկրտութբ Քի, մկրտի 'ի հոգին սբ ։ Նաև ընդունի զհոգին սբ, և լինի տաճար նորա, և բնակարան ամենասրբոյ երրորդութեան ։ Նա, որ թողեալ զմեղս մկրտի մկրտութբ Քի Յանուն հօր, և որդւոյ, և հոգւոյն սրբոյ, ընդունի զթողութիւն մեղաց, և առնու զպարգևս հոգւոյն սրբոյ ։ Համայնք մկրտեցեալք 'ի Քս Յս, 'ի մահ նորա մկրտին ։ Վասնզի համաթաղին ընդ նմա մկրտութբ 'ի մահ, զի որպէս Քս յարեաւ 'ի մեռելոց փառօք հօր, այսպէս և նոքա 'ի նորոգութեան կենի շրջիցին ։ Նոքա, որք մկրտին մկրտութբ Քի, լուանին, սրբացուցանին, և արդարանան, Յանուն տեառն մերոյ ՅԻ ՔԻ, և 'ի հոգին Այ մերոյ ։ Քս սիրեաց զմեզ, և մատնեաց զիւր ինքն վասն մեր, զի սրբացուցանիցէ զմեզ, մաքրելով աւազանաւ սրբոյ ջրոյ 'ի բանի կենի, զի առնիցէ զմեզ փառաւորս ինքեան, ոչ ունեցօղս զարատ, այլ կեցօղս անարատ կենիւ ։ Մեք մկրտեցեալք, և թլփատեցեալք եմք թլփատութբ ոչ ձեռագործաւ 'ի մերկացման մարմնոյ, այլ 'ի թլփատութեան Քի, համաթաղեցեալք ընդ նմա 'ի մկրտուեան, 'ի յորում և յարուցեալք եմք հաւատով ներգործութեան Այ ։

3. Մկրտեցեալքն մկրտութբն Քի, մերձենան առ Ած ճշմարտիւ սրտիւ 'ի լիութեան հաւատոյ, թացեալք սրտիւ 'ի վատթարէ խղճմտանէ, և լուացեալք 'ի մարմնի մաքուր ջրով ։ Մկրտեցեալք մկրտութեամբ Քի, ընդունին զհոգին սբ, և պարգևօք նորա լնանին ։ Մկրտեցեալք մկրտութբ տեառն լուանան զմեղս իւրեանց, և լնանին հոգւով սրբով ։ 'Ի մէջ մկրտեցելոց, մկրտութբ արդարացելոց, և յետ մկրտութեան 'ի մէջ ճշմարտապէս ապաշխարողաց, և

ապաշ-

ապաշխարութբ արդարացելոց , գտանի յայտնի ղանազանութիւն ։ Քանզի անհաւատք , և մեղապարտք զմկրտութին հաւատով ընդունողք, այնպէս արժանին 'ի պարտաւորութե դատապարտութե , զի մի պարաւանդիցին պարաւանդութբ քաւութե ։ Իսկ հաւատացեալք , և մեղապարք յետ մկրտութե ճշմարտապէս ապաշխարօղք , այնպէս արժանին 'ի պարտուց դատապարտութե , զի սակայն պարաւանդիցին ենթ պարտաւորութե քաւութե ։ Մեղանչօղն յետ մկրտութե դժուարագոյն քաւի, վասնզի մեղածանրագոյն ։ 'Ի մկրտութե այնպէս համայնք , և սկզբնականք մեղք , և յիմարաբար գործեցեալք մաքրին , զի վերանորոգիցէ զմեզ այնու մաքրութբ , յորում ադամ ճանաչի գոլ ստեղծեցեալ ։ Մկրտեցեալք վարին սպիտակիւք զգեստիւք , որպէս որոց ծննեան զդէմն հնոյ մոլորութե ասուն խաւարեցուցեալ էր , զդեսան ապահովի ծննդեան փառաց յառաջաբերցէ զզգեստն ։ Ծածկի յետ սրբոյ օծման գլուխն նորա խորհրդաւորաւ ծածկութիւ , զի իմանայցեն զիւրեանս ինքեանս հրճուէիլ պսակաւ արքայութե , և քահանայականաւ արժանապատուութբ , լեալս թագաւորս, քահանայս, և մարգարէս որպէս ասէ սբն Յօհան ոսկեբերանն ։

4. Թլփատութին էր 'ի հնում, մկրտութին է 'ի նորում կտակարանի ։ Վասնզի զնոյն փրկաւէտ բժշկութե օգնութին , թլփատութին 'ի յօրէնսն ընդդէմ սկզբնականի մեղի վիրի առնէր , զոր մկրտութին սովորեցաւ առնել 'ի յայտնելն 'ի ժամանակի շնորհի , բաց 'ի յայսմանէ , թէ տակաւին ոչ կարէին մտանել 'ի դուռն արքայութե երկնից , մինչև եկեալ տայցէր զօրհնութի , որ եւ զօրէն , զի կարիցէր տեսանիլ ածն աստուծոց 'ի սիօն . միայն 'ի գոգն աբրահամու յետ մահուան երանեալ հանգստութբ մխիթարեցեալք , երջանկաւ յուսով ապաւէին ներամտանման երկնայնոյ խաղաղուե ։ Գերազանցագունեղ է մկրտութին . քանզի մկրտեցելոց բացեալ է արքայութին երկնից ։ Այժմ ելանօղք յայսմանէ կենէ , և մաքրեցեալք մկրտութբ , 'ի միւսն դնացօղք , ոչ առ գոգն աբրահամու , այլ առ երանական տեսութիւն անքրաքերին ։ Տրն պահեաց ինքեան զիշխանութի մկրտելոյ , ծառայից եւ զպաշտօնատարութի ։ Ուստի մկրտութին է այնպիսի որպ է նա , յորոյ իշխանութե տրի , ոչ որպ , որոյ պաշտօնատարութբն տրի ։ Վասն որոյ ոչ կեղծաբար , այլ արժանապէս առ մկրտութին մերձեցօղք , և ճշմարտիւ հաւատով զնա ընդունօղք , նաև յայնժամ արդարանան յորժամ պաշտօնեայքն գտանին մեղաւորք ։ Մեղքն պաշտօնէից , զմկրտութին կատարել դիտողաց , զնիւթն , և զտեսակն դնողաց , առ մկրտութի մերձեցօղս լուացողաց , ոչ կարեն արգելուլ զգործն մկրտութե , խորհրդոյ նորոյ կտակարանի զգործունէութի լուանալոյ , և զմեղս , և զյանցանս ջնջելոյ , ունեցողի 'ի չարչարանաց քի , 'ի սեղանոջ խաչին վասն փրկութե մերոյ զենեցելոյ ։

5. Կացուցիչն մկրտութե , որպէս և ամից այլոց խորհրդոց է քս ։ Վասնզի որպէս օրինադիրն նորոյ օրինի է քս , այսպէս նաև կացուցիչն մկրտութե , և ամից այլոց խորհրդոց նորոյ օրինի է քս ։ Մկրտեցեալ 'ի յորդանան 'ի Յօհաննու , իւրով ամենասրբով մարմնովն շօշափեաց զբնական ջուրն , և էառ զնա փոխանակ նիւթոյ մկրտութե իւրոյ ։ Կացոյց զիւր մկրտութիւն տուէօղն զհարկին մբ , հարկաւորն վասն փրկութե մարդկանց , ասելով ։ Եթէ ոչ ոք ծնցի 'ի ջրոյ , և 'ի հոգւոյ , ոչ կարէ մտանել յարքայութին այ ։ Յօհաննու. 3. թիւ. 5. Էառ զջուրն փոխանակ նիւթոյ մկրտութե հարկաւորի վասն փրկութե . զի դիւրաբար գտանիլ կարէ ։ Քանզի ուրուրեք իցեն մարդիկք ; անդ զջուր գտանել կարեն ։ Դարձեալ , ջուրն է ըմբռն նիւթ

առ

առ 'ի նշանակել զայդ, որ լինի մկրտութբ ։ Արտաքրեմն ջուրն է հեռաւոր նիւթ, և լուացումն է մերձաւոր նիւթ ։ Մկրտութիւն է հարկաւոր․ վասնզի նովաւ վերածնանի մարդն որդի այ որդեգրութբ, և նովաւ լինի ժառանգ արքայութեան ։ Ամ մարդ, որ է որդի ադամայ, է ենթակայ մկրտութեան ։ Քանզի կացուցեալ է, զի մարդն նովաւ ազատիցի 'ի սկզբնականէ մեղէ, և լինիցի որդի այ, և ժառանգ արքայութեան ։ Սովաւ մտանեմք 'ի յեկեղեցին, և լինիմք ընդունակք այլոց խորհրդոց ։ Ոչ միայն համաբերէ զշնորհ, այլ նաև ներատպէ զանջնջելի տիպ ։ Վասն այսորիկ կրկնել ոչ կարէ ։ Ուստի ասէ առաքեալն, Մի է տր, մի հաւատ, մի մկրտութիւն ։ Առ եփեսս, 4. թիւ. 5.

6. Կացուցիչն մկրտութեան է քս, հրամայեաց առաքելոց մկրտել զհեթանոս, ասելով ։ Գնացէք այսուհետև աշակերտեցէք զամ հեթանոս, մկրտեցէք զնոսա Յանուն հօր, և որդւոյ, և հոգւոյն սրբոյ ։ Մատթէի․ 28. թիւ. 19. այսպէս ըստ Մատթէի․ Իսկ Մարկոս այսպէս պատմէ, Եւ ասէ ցնոսա․ երթայք յաշխարհ ամ, և քարոզեցէք զաւետարանն արքայութեան ամ արարածոց ։ Որ հաւատասցէ և մկրտեսցի, կեցցէ․ և որ ոչն հաւատասցէ դատապարտեսցի ։ Գլ. 16. թիւ. 15. Աստի յայտ է, զմկրտութիւն գոլ սոսկապէս հարկաւոր․ 'ի մանկունս 'ի յիրի․ վասնզի մանկունք նորապէս ծնեցեալք անընդունակք են մկրտութեան 'ի յուխտի․ Իսկ 'ի հասեալս բանաւորութեան 'ի յիրի, կամ գոնեայ 'ի յուխտի պարտաւորութբ ընդունելոյ 'ի յիրի, եթէ կարասցեն ։ Վասնզի որք հասեալք են բանաւորութեան կարեն ունել զմկրտութիւն 'ի յուխտի ։ Աստի մկրտութիւն հրոյ, այսինքն, 'ի յղձի, արեան, այսինքն, 'ի մարտիրոսութեան, և գետոյ, այսինքն, 'ի ջրոյ, և 'ի յիրի ։ Մկրտութիւն հրոյ, և արեան է մկրտութիւն 'ի յուխտի ։ Մկրտութիւն գետոյ է մկրտութիւն 'ի ջրոյ ։ Որ սիրէ զած 'ի վեր քան զամ ինչ, և փափագի մկրտութեան 'ի յիրի, եթէ նախ քան զընդունիլն զմկրտութիւն 'ի յիրի մեռանիցի, ոչ կորնչի․ վասնզի կալաւ զմկրտութիւն հրոյ, և 'ի հոգւոյ ։ Նմանապէս փափագօղն մկրտութեան 'ի յիրի, եթէ նախ քան զընկալումն մկրտութեան 'ի յիրի վասն սիրոյն քի, և վասն հաւատոյ մարտիրոսացուցանիցի, ոչ կորնչի․ քանզի կալաւ զմկրտութիւն արեան ։ Մանկունք մկրտեցեալք ջրով, եթէ նախ քան զկիրառումն բանաւորութեան մեռանիցին, փրկին․ վզի կալան զմկրտութիւն ջրոյ, և 'ի գետոյ ։

7. Մանկունք նորապէս ծնեցեալք կարեն մկրտիլ․ վասնզի յարդեանց քի այս շնորհեցեալ է մանկանց, զի մեռանօղք 'ի մանկութեան, փրկեսցին ։ Այսպէս ուսուցանէ մեր մայր եկեղեցին, գոլով գիտակ մտի սրբելագունեղի փեսայի իւրոյ ։ Հրամայեաց տրն առաքելոց մկրտել զհեթանոսս ։ Ուստի սովորական պաշտօնեայն մկրտութեան է քահանայն, յայսմիկ առաքելոց աջորդօղ ։ Քանզի քահանայք, որք են հոգևորք հարք, 'ի ձեռն վերածննդեան կարեն ծնանիլ զհոգևորս որդիս ։ Իւրաքանչիւրոք օրինաբար 'ի նահանգոջ իւրում ։ 'Ի հրամանէ եպիսկոպոսի, կամ ժողովրդապետի իւրոյ նաև սարկաւագն կարէ մկրտել․ որպէս յայտ է 'ի յարարոց փիլիպպոսի, որ մկրտեաց զներքինին ։ 'Ի հարկաւորութեան պաշտօնեայն այսր խորհրդոյ, է ամ մարդ վարօղն բանաւորութբ ։ Վասնզի որքան առ հաստատութիւն պաշտօնեայն այսր խորհրդոյ, է ամ մարդ վարօղն բանաւորութբ․ վն հարկաւորութեան նր ։ Ուստի 'ի հարկաւորութեան իւրաքանչիւրոք, որ վարի բանաւորութբ, և գիտէ արտաբերել զձևն մկրտութեան, պահելով զկարգն մկրտութեան, կարէ մկրտել նաև օրինաբար, և պարաւանդի, զի օգնիցէ ընկերոջ․ զիմի կորնչիցի 'ի յաւիտեան ։ Ձևն մկրտութեան է այս ։ Ես մկրտեմ զքեզ

Յա‿

Յանուն Հօր , և որդւոյ , և Հոգւոյն ս՟բոյ , ամէն : Այս են , զի յայտնիցի մկրտողն : Այս , մկրտեմ , զի յայտնիցի լնացումն , և ներգործութիւն մկրտելոյ : Այս զքեզ , զի յայտնիցի մկրտեցեալն : Այս Յանուն Հօր , և որդւոյ , և Հոգւոյն ս՟բոյ , զի իմանայցեմք զարարարչագործութիւն մկրտութեան գոլ 'ի զօրութենէ ամենասրբոյ երրորդութեան , և զամենասուրբ երրորդութիւն մին ա՟ծն գոլ գլխաւոր պատճառն գործոյ մկրտութեան : Քանզի գործն մկրտութեան է գործ ամենասրբոյ երրորդութեան :

8. Մկրտութիւն ջնջէ զսկզբնական մեղն 'ի յերեխայս , իսկ 'ի հասեալս կատարեալ հասակի , որք կամեցեալք , հաւատացեալք զգործեցեալս մեղս ատեալք , և 'ի վերայ նոցա ցաւեցեալք հաստատապէս առաջադրեալք ոչ այլ ևս մեղանչել , ընկալեալք զօրէնն ք՟ի , և կամաւորապէս ենթարկեալք զինքեանս պահպանման պատուիրանացն ա՟յ , և եկեղեցւոյ , մերձենան առ մկրտութիւն , ջնջէ ոչ միայն զսկզբնականն , այլ նաև զներգործականս մեղս , նախ քան զընդունումն մկրտութեան գործեցեալս , բառնայ զբոլոր պատիժն պարտաւորն մեղաց , հեղու զշնորհս , զսէր , և զայլս առաքինութիւնս , տայ զհոգին ս՟բ , և վերալնու պարգևօք նորա զմկրտեցեալն , առնէ որդի , և սիրելի ա՟յ զմկրտեցեալն , և եղբայր ք՟ի , և ժառանգ արքայութեան , կերտէ զմարդն բնակարան ա՟յ , և տաճար հոգւոյն ս՟բոյ , պատկէ զհոգին մկրտեցելոյ ընդ ք՟ի , և տայ նմա զերաւուն 'ի փառս , առնէ զմարդն ընդունակ արդիւնաւորելոյ զյաւիտենական կեանն , և հաւաքելոյ զգանձ 'ի յերկինս , քաջալերէ զհաւատացեալն ընդդէմ փորձութեանց սատանայի , մոլորեցուցչի ընդհանրոյ տիեզերի , և օգնէ առ 'ի պահել զպատուիրանս ա՟յ , և եկեղեցւոյ : 'Ի մեզ , որք մկրտեցեալք եմք , հին մարդն մեր 'ի միասին խաչեցեալ է , զի եղծիցի մարմինն մեղաց , և այլ ևս ոչ ծառայիցեմք մեղաց : Պարտիմք մերկանալ զհին մարդն հանդերձ ներգործութեամբք իւրովք , և զգենուլ զնորն , զնա , որ վերանորոգի 'ի ճանաչումն , ըստ պատկերի նորա , որ ստեղծ զնա , և համարիլ զմեզ մեռեալս մեղաց . իսկ կենդանիս ա՟յ , 'ի Ք՟ս Յ՟ս Տ՟ն մեր :

## ԳԼՈՒԽ ՁԸ.

### Յաղագս դրոշմի .

1. Դրոշմն է խորհուրդ նորոյ կտակարանի , կացուցեալ 'ի ք՟է , առ 'ի հաստատել զմկրտեցեալն 'ի հաւատոջ ընդդէմ հալածչաց հաւատոյ : Խորհուրդս այս տայ մեզ զաճեցումն շնորհի , որով քաջալերիմք , և հաստատիմք ընդդէմ հալածչաց հաւատոյ : Խորհուրդս այս այնմ , որ ունի զհոգին ս՟բ մկրտութեամբ , մասնաւորաւ կերպիւ շնորհէ զնոյն հոգին ս՟բ , զի մասնաւորապէս մեզ ուսուցանիցէ , լուսաւորելով զմիտս մեր շուրջ զպատուականութեամբ հաւատոյ , և քրիստոնէականի կրօնից . և մասնաւորապէս 'ի ձեռն սիրոյ շարժիցէ զկամս մեր , զի հաստատագոյն պահիցէ զհաւատն , և խոստովանիցի առաջի մարդկանց , և իցէ պատրաստ առ 'ի կրել զհամայնս չարչարանս վասն քրիստոնէականի հաւատոյ : Օգնութեամբ այսր խորհրդոյ , մկրտեցեալն մասնաւորաւ կերպիւ լցեալ է հոգւով սրբով , և ժառանգէ զպարգևս ն՟ր : Քանզի ունի զլիութիւն հոգւոյն սրբոյ , զլիութիւն լուսաւորութեան , զլիութիւն քաջալերութեան , և զլիութիւն յուսադրութեան , և աներկիւղն դաւանութեան : Վասնզի լցեալն հոգւով ս՟բով քաջ է 'ի պատերազմի , և 'ի մարտի ընդդէմ հալածչաց հաւատոյ , և ընդդէմ տանջանաց , 'ի բա-

բա-

քունաւորաց խորհեցելոց: Է խորհուրդ կենդանեաց: Ուստի մերձեցօղն պարտի գոլ 'ի շնորհի: Վասնզի է խորհուրդ տուօղ զաճումն շնորհի, առնօղ զվերածնեալն մկրտութբ, աճիլ 'ի հոգևորի կենօջ:

2. Ամենասիրելագունեղ փրկիչն մեր քս, որ կարի յոյժ սիրեաց զմեզ, շարժեալ 'ի սիրոյ, ոչ միայն կացոյց զմկրտութին, որ տայ մեզ զբաւականութի առ փրկութի, ծնանելով զմեզ որդիս բարեկամս, և ժառանգս այ, բանալով մեզ զարքայութին, և տալով զիրաւունս 'ի փառս. այնպէս զի զօրութբ շնորհի մկրտութե, մեռեալքս, և ելեալքս յայսմանէ աշխարհէ, կարիցեմք մտանել 'ի յաւիտենական կեանն. այլ նաև կացոյց զդրոշմն, , որ տայ մեզ զլիութի հոգւոյն սրբոյ, և զառատութիւն շնորհի Զայս գործս շնորհի նշանակեաց մեզ քս, յորժամ ասաց: Այլ յորժամ մատնեսցեն զձեզ մի հոգայցէք թէ որպէս կամ զինչ խօսիցիք: Զի ոչ եթէ դուք իցէք, որք խօսիցիքն. այլ հոգին հօր ձերոյ, որ խօսիցի 'ի ձեզ: Մկրտեցեալք, որք ընդունին զառատութի շնորհի 'ի ձեռն դրոշմի, լինին ածուսոյցք: Յայտնի մխիթարիչն, մանաւանդ կերպիւ տնեցեալ, ամայ ուսուցանելով, և յիշեցուցանելով զամ իւր, զոր ասացեալ իցէ մեզ քս: Վկայելով զքէ, և ուսուցանելով զամ ճշմարտութի: Հոգին ոք դրոշմիւ տնեցեալն մկրտեցելոց, տայ զլեզու, բորբոքէ զսիրտ, շնորհէ զջերմեռանդութի, և զօրացուցանէ զոգին. տայ զվկայութի հոգւոյն ոյ, թէ են որդիք այ: Օգնէ տկարութե նոցա, խնդրելով վասն նոցա, հառաչմամբք անպատմելեօք: Դրոշմեցեալք օծեցեալք են, և կնքեցեալք են, և ունին զառհաւատչեայ հոգւոյն 'ի սիրտս իւրեանց:

3. Դրոշմեցեալք նշանաւորեցեալք են հոգւով սրբով խոստացման, որ է առհաւատչեայ ժառանգութե մերոյ: Քս, որ կերտեաց զնոր Օրէնն 'ի վերնատան, հաստատեալ լինի անդ կացուցեալ գոլ զխորհուրդն դրոշմի. վասնզի անդ բազմիցս յիշէ զհոգին ոք, զոր մանաւանդ ընդունիմք դրոշմիւ: Դրոշմն ոչ է այնպէս հարկաւոր, որպէս մկրտութին: Քանզի մկրտեցեալն թարց ընկալման դրոշմի, 'ի մեռանիլն, գոլով սիրելի, և որդի այ ըստ որդէգրութե, և ժառանգ արքայութե, և ունելով զիրաւունս 'ի փառս շնորհիւ մկրտութե, ոչ կորընչի այլ փրկի: Նաև դրոշմն ներատպէ զանջնջելի կնիք: Քանզի որպէս մկրտութբ նշանաւորիմք հետևօղք քի, և լինիմք անդամք խորհրդաւորի մարմնոյն նորա. այսպէս դրոշմիւ նշանաւորիմք զինուորք քի, պատերազմօղք վասն հաւատոյ, որով հաւատամք 'ի քս, ընդդէմ բռնաւորաց, և հալածչաց հաւատոյ: Ուստի որպէս մկրտութին վասն անջնջելւոյ կնքոյ ոչ կարէ կրկնիլ, այսպէս և դրոշմն: Վասն այսորիկ դրոշմեցեալն ոչ կարէ դարձեալ դրոշմիլ: Մանկունք որպէս նախ քան զբանավարութի կարեն մկրտիլ. այսպէս նաև կարեն հաստատապէս դրոշմիլ: Վասնզի որպէս կարեն մկրտութբ նշանաւորիլ հետևօղք քի, այսպէս նաև կարեն նշանաւորիլ դրոշմիւ զինուորք քի: Ուստի ամ մկրտեցեալ թէ իցէ մանուկ, թէ հասեալ 'ի կատարեալ հասակն, որ ոչ է դրոշմեցեալ, է ընդունակ դրոշմի. քանզի է ենթակայ այսր խորհրդոյ, զորմէ է բան:

4. Թէպէտ երեխայք նախ քան զկիրառումն բանի կարիցեն հաստատապէս դրոշմիլ. սակայն, մինչ թարց ընկալման դրոշմի են 'ի կացութե փրկութե, եթէ ոչ իցէ պատճառ ստիպօղ, սպասելի է ժամանակի կիրառութե բանի, զի հանդերձ ճանաչմամբ պատուականութե այնքանոյ մեծի խորհրդոյ, հանդերձ ջերմեռանդութբ, և տրամադրութբ մերձենայցեն առ այս խորհուրդն առ վերընկալումն

առատագունի շնորհի։ Ուրեմն ՚ի յայնմանիկ, որք հասեալք են ՚ի կատարեալ հասակն, և մերձենան առ այս խորհուրդ, խնդրի տրամադրութիւն։ Խնդրի զի կամիցին. վասնզի ունեցողք զկիրառութիւն բանի, կամաւորապէս պարտին մատչիլ։ Եւ խնդրի, զի իցեն ՚ի շնորհի. քանզի է խորհուրդ կենդանեաց։ Որք կամին ընդունիլ զկարգս, յառաջագոյն պարտին մատչիլ առ դրոշմն, յետոյ ընդունիլ զկարգս. վասնզի այսպէս պատուիրեցեալ է ՚ի յեկեղեցւոյ։ Եւ այս վասն այնորիկ, զի ՚ի կիրարկանիցեն զպաշտօն կարգի լցեալք հոգւովսրբով։ Մկրտեցեալք, որք հասեալք են կիրառութեան բանի, և լեալք կատարեալք, ոչ պարտին հեղգանալ, այլ պարտին գոլ ուշադրադունեղք, զի հանդերձ ջերմեռանդութեամբ, և բորբոքեցելով ըղձիւ փութանակի մերձենայցեն առ խորհուրդն դրոշմի, զի ընկալցին հոգւովսրբով, որպէս աշակերտք տեառն լցեալք են հոգւովսրբով յաւուր պենտեկոստէի, զի գտանիցեն պատրաստք առ դաւանութիւն հաւատոյ ընդդէմ հալածչաց հաւատոյ, հետևեալք օրինակաց քրիստոնէից, որք մկրտեցեալք դրոշմեին ՚ի յառաքելոց. հասեալք ՚ի կատարեալ հասակն, որք են մկրտեցեալք, անփոյթք առնելով զխորհուրդս այս հանդերձ անարգմամբ, և գայթագղութեամբ, մեղանչեն, և են յանդիմանելիք։

5. Հեռաւոր նիւթն դրոշմի է սբ մեռոնն. այսինքն, իւղն, որ ունի խառնեցեալ ինքեան զպալասան օրհնեցեալն ՚ի յեպիսկոպոսէ։ Ուստի երեք իրք խնդրին առ նիւթ դրոշմի, այսինքն, իւղ, պալասան, և օրհնութիւն եպիսկոպոսի։ Այսպէս ուսուցանէ եկեղեցին սուրբ, և հաստատութիւն ճշմարտութեան։ Բացորոշեցեալ է իւղն, քանզի է ըմբոն առ օծումն, որ ՚ի կիրարկանելի է ՚ի պաշտօնատարութեան այսր խորհրդոյ։ Խառնի պալասանն իւղով, զի իմանայցեմք, զդրոշմեցեալն պարտիլ գոլ զանոյշ հոտ քի ՚ի դաւանութեան հաւատոյ։ Իւղն, որ ունի ընդ ինքեան խառնեցեալ զպալասան, օրհնի ՚ի յեպիսկոպոսէ, զի օրհնութբ ստանայցէ զհաստատութիւն։ Մերձաւոր նիւթն է օծումն սբոյ մեռոնի, արարեցեալ ՚ի յեպիսկոպոսէ ՚ի նշան խաչի ՚ի ճակատի մկրտեցելոյ, առ դրոշմ մերձեցողի, Օծի դրոշմելին, զի իմանայցեմք, զդրոշմելին դրոշմիւ ընդունիլ զզօրութիւն ընդդէմ հալածչաց հաւատոյ, և ընդդէմ բռնաւորաց. Օծի ՚ի յեպիսկոպոսէ. վասնզի եպիսկոպոսն է սովորական պաշտօնեայն այսր խորհրդոյ. օծումն լինի ՚ի ձև խաչի. քանզի խաչիւն քի վս մեր խաչեցելոյ, տրի մեզ զօրութիւն ընդդէմ հալածչաց հաւատոյ, և ընդդէմ բռնաւորաց, և տրի զօրութիւն առ ՚ի կրել զչարչարանս, և առ ՚ի համբերել տանջանաց վասն հաւատոյ, որով հաւատամք ՚ի քս։ Օծումն լինի ՚ի ճակատի, ուր է դահն ամօթխածութեան, զի մի ամաչիցեմք մեք յայտնապէս, և առաջի ամենեցուն, նաև հալածչաց, խոստովանիլ զհաւատն, որով հաւատամք ՚ի քս։

6, Ձևն դրոշմի է այս։ Կնքեմ զքեզ նշանաւ խաչի, և դրոշմեմ զքեզ մեռոնաւ փրկութեան, Յանուն հօր, և որդւոյ, և հոգւոյն սրբոյ։ Բանք ձևոյ ցուցանեն զպաշտօնեայն, զենթակայն, զնիւթն, զգործն, և զգլխաւոր պատճառն։ Կնքօղն, և դրոշմօղն է պաշտօնեայն։ Կնքեցեալն, և դրոշմեցեալն է մկրտեցեալն, որ ընդունի զայս խորհուրդս։ Սբ մեռոնն է հեռաւոր նիւթն։ Նշանն խաչի ցուցանէ զկացուցիչն այսր խորհրդոյ, զՅս Քս զխաչեցեալն, և ցուցանէ զզօրութիւն այսր խորհրդոյ գոլ ՚ի ձեռն չարչարանաց քի խաչեցելոյն։ Եւ նշանաւորէ զօծումն արարեցեալն ՚ի ձև խաչի, որ օծումն արարեցեալն ՚ի ձև խաչի, է մերձաւոր նիւթ։ Կնքումն, և դրոշմումն ցուցանեն զգործս

այսր

խորհրդոյ ։ Կնքումն ցուցանէ զանջնջելի կնիքն, որով դրոշմեցեալն նշանաւորի զինուոր քի ։ Դրոշմն ցուցանէ զշնորհն, որով դրոշմեցեալն հաստատի ընդդէմ հալածչաց հաւատոյ ։ Նշանն խաչի նաև ցուցանէ զբանն ․ վասն փրկութեան մարդկանց ըստ մարդկութե չարչարեցեալն, և խաչեցեալն ։ Եւ աստ նշանակի խորհուրդն ներմարմնութե ։ Այսու, թէ ասի ։ Յանուն հօր, և որդւոյ, և հոգւոյն սրբոյ ․ ցուցանի գլխաւոր պատճառն, որ է ամենասուրբ երրորդութին ։ Ուստի նշանակին երկու գլխաւորագունեղք խորհուրդք հաւատոյ մերոյ, այսինքն, ներմարմնութե ․ և երրորդութե, զորս դրոշմեցեալն պարտի թարց երկիւղի խոստովանել առաջի հալածչաց, յորժամ պիտոյանայ ։

7․ Սովորական պաշտօնեայն այսր խորհրդոյ է միայն եպիսկոպոսն ․ քանզի դրոշմել զմկրտեցեալն, և խորհրդով դրոշմի զօրացուցանել զնա ընդդէմ թշնամեաց հաւատոյ, պատկանի մեծագունից քահանայից, աջորդաց առաքելոց, որք զմկրտեցեալս յայլոց, դրոշմէին ։ Մեծագոյնք քահանայք, աջորդք առաքելոց, են եպիսկոպոսք ։ Ուրեմն մատակարարելն զխորհուրդն դրոշմի պատկանի եպիսկոպոսաց ։ Եւ այսպէս միակ եպիսկոպոսն է սովորական պաշտօնեայն այսր խորհրդոյ ։ Գործք առաքելոց հաստատեն զայս, որ ասացեալ է ։ Քանզի 'ի գործս առաքելոց այսպէս պատմի ։ Իբրև լուան, որք յեէմ առաքեալքն էին, թէ և 'ի սամարիայ ընկալան զբանն այ ․ առաքեցին առ նոսա զպետրոս, և զյօհաննէս ։ Որք իջեալք կացին յաղօթս 'ի վր նց ․ որպէս զի առցեն զհոգին սբ ։ Զի ցայնժամ չև եւս էր, և ոչ 'ի վերայ միոյ նոցա հասեալ ․ բայց միայն մկրտեցեալք էին յանուն տն Յի ։ Յայնժամ եդին զձեռս 'ի վերայ նոցա, և առնուին զհոգին սբ ։ Գլ․ 8․ Թիւ․ 14․ Յայտ է յասացելոց, թէ առավորական պաշտօնեայն այսր խորհրդոյ լցէ միակ եպիսկոպոսն ․ վն զի որպէս տեսաք, առ 'ի դրոշմել զմկրտեցեալս, առաքեցեալք են առաքեալք, որք էին եպիսկոպոսք ։ Սակայն 'ի հեղինակութէ միայնոյ Հռօմէականի պապի, որ է փոխանորդ քի, և աջորդ սրբոյն պետրոսի իշխանի առաքելոց, և յորում է լիութի իշխանութե, կարէ սոսկ քահանայն մատակարարել զխորհուրդն դրոշմի, և զմկրտեցեալն դրոշմել ։

8․ Մկրտութե քրիստոնեայք ․ են իբրև մանկունք նորապէս ծնեցեալք, փափագօղք կաթի ։ Իսկ դրոշմիւ քրիստոնեայք լեալք զինուորք, պատերազմին ընդդէմ իշխանաց, և պետութեց այսորիկ խաւարի ։ 'Ի մկրտութե հոգին սբ տրի առ թողութի ․ 'ի դրոշմի առ պատերազմ ։ 'Ի մկրտութե մաքրիմք 'ի յանօրէնութեց ․ 'ի դրոշմի ամրանամք զօրացուցելովք, և աճեցելովք զօրութեք ։ 'Ի մկրտութե ընդունիմք զշնորհ, 'ի դրոշմի աճիմք 'ի շնորհի ։ 'Ի մկրտութե ծնեալք ․ 'ի դրոշմի քաջալերեալք ։ 'Ի մկրտութե զարդարեալք հոգևորօք զգեստիւք ․ 'ի դրոշմի զինաւորեալք հոգևորօք զինուք ։ Ուրեմն յետ մկրտութե հասեալք առ բաւական, և վայելուչ հասակ, մի յապաղեսցուք զդրոշմն, այլ փութասցուք զգեցուցանել, և ամրացուցանել զմեզ զօրութե նորա, զի զինաւորեցեալք, և զօրացուցեալք մտցուք 'ի պատերազմ ընդդէմ իշխանաց, և պետութեց խաւարի, զի մի նենգաւոր թշնամին գտանիցէ զմեզ զինաթափս, Ապաուրեմն օծեալք իւղով երկաքանչիւրոյ ցօղոյ, սովաւ բժշկեցեալք, սովաւ զօրացուցեալք, ապահովագոյն իջցուք առ մասնաւոր պատերազմ ։ Ոչ զարհուրեցուսցեն զմեզ զէնն գողխաթու, կամ մեծութի նորա ․ զի է ընդ մեզ ամենամեծ տրն տծ մեր, և մեծ է զօրութի նորա, առեալ զզէնս, և զվահան, զի հասանիցի մեզ 'ի յօգ‿

նութի : Մեք դրոշմեցեալքս ունիմք զհոգին որ զմեզ պաշտպանող , և ընդդէմ նեռից թշնամեաց զմեզ պաշտպանող : Ապաուրեմն պատերազմեսցուք քաջապէս , յուսալով զյաղթութի , և զյաղթանակ :

## ԳԼՈՒԽ : ՁԹ.

### Յաղագս հաղորդութե :

1. Աղորդութի՛ն է խորհուրդ նորոյ օրինի , առ հոգևոր սփոփումն մեր , կացուցեալ 'ի տէ քէ , ընդ տեսակաց հացի , և գինւոյ , պարունկող զճշմարիտ մարմինն , և զճշմարիտ արիւնն քի : Յայսմիկ խորհրդոջ էրականապէս գտանի բոլոր քս , ճշմարիտն ած , և ճշմարիտն մարդ , բոլորով ածութբ , և բոլորով մարդկութբ իւրով : Քս կենդանի : Ուստի բոլոր իրականապէս է ներկայ 'ի հաղորդութե : Բոլոր ընդ տեսակի հացի , և բոլոր ընդ տեսակի գինւոյ , և բոլոր ընդ իւրաքանչիւրոյ մասին հաղորդութե : 'Ի զօրութե բանից ընդ տեսակի հացի միայն մարմինն քի , և ընդ տեսակի գինւոյ միայն արիւն նր : Ուստի 'ի զօրութե բանից 'ի հաղորդութե զենանի քս , և գործէ քահանայն զանարիւն պատարագ , երևեցուցանող զարիւնաւոր պատարագն քի , 'ի սեղանոջ խաչին մատուցեալն . սակայն վասն միանականութե ընդ երկաքանչիւրոյ տեսակի է բոլոր քս , ճշմարիտ ած , և ճշմարիտ մարդ : Քս կացուցեալ 'ի յընթրոջ զայս պատուական խորհուրդն , և հօր ոյ կարի յոյժ ընդունելի պատարագն , եցոյց մեզ զբոլոր սէր իւր : Քանզի զոր ինչ ունէր , ետ մեզ : Վոգի զբոլոր անձն իւր , զբոլոր ածուի իւր , և զբոլոր մարդկութի իւր պարգևեաց մեզ : Եւ վասն անքաժանելութե ածայնոց անձանց , նաև զանձն հօր , և հոգւոյն սրբոյ շնորհեաց մեզ : Կացոյց 'ի յընթրոջ զխորհուրդն բոլորոքելադունեզի սիրոյ , և ամենավառեցելոյ սիրելութե :

2. Ամենասիրելի փրկիչն մեր , որ կացոյց զմկրտութի՛ն առ տրդարացուցում , և առ հոգևոր մաքրութի մեր . և զդրոշմն առ հոգևոր աճումն մեր , շարժեալ 'ի յանպատմելւոյ սիրոյ , կացոյց զհաղորդութի՛ն առ հոգևոր սնուցումն մեր : Կամեցաւ , զի իրական մարմինն իւր իցէր կերակուր հոգւոյ մերոյ , և իրական արիւն իւր իցէր ըմպելի հոգւոյ մերոյ : Կամեցաւ , զի ինքն իցէր կերակուր , և ըմպելի մեր , և զի 'ի ձեռն նորին հոգևորապէս սնուցանիցեաք : Կամեցաւ , զի ուտողքս զմարմին նր , և ըմպօղքս զարիւն նր , սեղմագունեղապէս սիրով միաւորիցեաք ընդ նմա, և լինիցեաք ընդ նմա մի ինչ 'ի սիրոջ, և սիրեալքս նմա անդրադերիցեաք 'ի յինքն Կամեցաւ առնանիլ 'ի մէնջ ընդ տեսակաց հացի , և գինւոյ, զի իմանայցէաք , զմարմին , և զարիւն նորա զայն առնել 'ի հոգւոջ մերում հոգևորապէս , զոր առնեն հացն . և գինին 'ի մարմնոջ մարմնաւորապէս : Հացն , և գինին սնուցանեն զմարմինն , և համապահեն զմարմնաւոր կեանն մեր , ուրեմն հաղորդութի՛ն սնուցանէ զհոգևոր կեանն մեր : Հացն հաստատէ , և գինին ուրախացուցանէ : Ուրեմն հաղորդութի՛ն հաստատէ զմեզ 'ի կողմանէ իւրմէ 'ի շնորհի , և առբերէ մեզ զզարմանալի խնդութի հոգւոյ : Հացն , և գինին հաղորդութե հաստատեն զմեզ 'ի ճանապարհի փրկութե : Առողջկերակուրն , և առողջ ըմպելին ընդդիմանան հիւանդութե : Ապաուրեմն հաղորդութի՛ն առնէ զմեզ ընդդիմանալ մեղաց :

3. Հաղորդութի՛ն է հաց , տուեցեալ մեզ 'ի տէ առ. 'ի յուտել , զի կեայցէ նովաւ հոգին մեր .

Հա-

Հաղորդութիւն է կերակուր, որ ունի յինքեան զա՟մ բերկրութիւն, և քաղցրութիւն ա՟մի համեղութե՟, տուող հոգւոյ զզարմանալի անուշութիւն, և զհոգևոր զուարճութիւն ։ Հաղորդութիւն է մանանայ հնարեցեալ յանհնոյ իմաստութէ՟, և արարեցեալ 'ի յանհնոյ կարողութէ՟, հաւատացեալ մարդոյ, արժանապէս, և ջերմեռանդաբար մերձեցողի յառաջ եդեալ, զի նովաւ զմայլեսցի ։ Է հոգևոր կերակուր, զարմանալաբար քաղցր, պատրաստեցեալ ամենեցուն, զնա ընդ արժանեայն առնուլ, և ուտել փափագողաց. 'ի միասին է և հոգևոր ըմպելի, կարի յոյժ քաղցր, և անոյշ մատուցեալ ամենից զնա արժանաբար առնուլ, և ըմպել ցանկացողաց ։ Հաղորդութիւն է խորհուրդ, յորում իրաւի առնանի մարմինն ք՟ի, և իրաւի ըմպի արիւն նորա ։ Է խորհուրդ ոչ արդեամբ սրբագնագործողի, այլ արարեցեալ բանիւ ստեղծողի. ոչ արդեամբ բարութեց մատակարարողաց ճոխացուցեալ, և ոչ անարժանութե՟ չարաց նուաղեցուցեալ ։ 'Ի միասին է պատարագ, առ որոյ մատուցումն մերձ է ներկայութիւն հրեշտակաց, և առ որոյ նուիրումն պաշտօնեայն է քահանայ նորոյ օրինի ։ 'Ի հաղորդութեան, որ է քաղցրագունեղ, և անուշագունեղ կերակուր հոգւոյ մերոյ. քահանայն, և պատարագն զարմանալաբար, և անճառելաբար, է ք՟ս ։ Հաղորդութիւն է կերակուր կարի յոյժ բերկրեցուցանող, և ըմպելի 'ի սիրման ա՟յ, սիրով հանդերձ զմերձեցողն արբեցուցանող ։ Հաղորդութիւն է կերակուր տուող, և կեցուցանող, և է ըմպելի տուող զուրախութիւն, և զուարճութիւն, և ոչ միայն տայ զշնորհ, այլ նաև զհեղինակն շնորհի ։

4. Նախ քան զսրբագնագործութիւն է հաց 'ի սեղանոջ. բանիւք սրբագնագործութե՟ արտաբերեցելովք է մարմինն ք՟ի ։ Նախ քան զսրբագնագործութիւն բաժակի, է գինի. բանիւք սրբագնագործութե՟ բաժակի է արիւն ք՟ի ։ Ք՟ս յարուցեալ 'ի մեռելոց, արդ ոչ մեռանի, և մահն նմա այլ ևս ոչ իշխէ. սակայն, որ վասն մեր չարչարեցեալ, խաչեցեալ, և մեռեալ է, և որ վասն փրկութե՟ մերոյ 'ի սեղանոջ խաչին արիւնահեղիւ պատարագաւ զենաւ. 'ի յիւրեան ինքեան անմահաբար, և անապականելաբար, կելով, վասն մեր դարձեալ 'ի խորհրդոջ հաղորդութե՟, որ է կերակուր, և ըմպելի հոգւոյ մերոյ, պատարագի ։ Աստ մարմինն ք՟ի առնանի, և մարմին նորա 'ի փրկութիւն ժողովրդեան բաշխի. և արիւն նորա արդէն ոչ 'ի ձեռս անհաւատից, այլ 'ի բերանս հաւատացելոց հեղանի ։ Կացուցիչն այնքանոյ խորհրդոյ, և անարիւնահեղի պատարագի, է ք՟ս ։ Քանզի 'ի յընթրոջ 'ի յերեկոյի բազմեցաւ, և երկոտասանքն ընդ նմա ։ Եւ մինչդեռ ուտէին ն՟ք ։ Էառ Յ՟ս զհաց, օրհնեաց և եբեկ, և յետ աշակերտաց, և ասէ ։ Առէք կերայք, այս է մարմին իմ ։ Եւ առեալ բաժակ գոհացաւ, ետ նոցա, և ասէ, արբէք 'ի դմանէ ա՟մքին. զի այդ է արիւն իմ նորոյ ուխտի, որ 'ի վ՟ր բազմաց հեղանի 'ի թողութիւն մեղաց ։ Կացոյց և զքահանայութիւն նորոյ կտակարանի, ձեռնադրելով զքահանայս, որք մատուցանիցեն ա՟յ 'ի յեկեղեցւոջ նորա զպատարագն նորոյ կտակարանի ։ Հրամայեաց քահանայից, զորս ձեռնադրեաց, և ասաց, զայս արարէք 'ի յիշատակ իմ, զի մատուցանիցէ՟ն ։

5. Հեռաւոր նիւթն վասն մարմ՟նոյ ք՟ի, է հացն 'ի ցորենոյ. վ՟զի ք՟ս որ է կացուցիչն խորհրդոց, էառ զհացն. արդ հացն պարզապէս, է հացն 'ի ցորենոյ ։ Իսկ հեռաւոր նիւթն վասն արեանն ք՟ի, է գինին 'ի յորթոյ. վասնզի ք՟ս կացուցիչն խորհրդոց, էառ զբաժակ. արդ 'ի բաժակոջ պարզապէս է գինի 'ի յորթոյ ։ 'Ի բաժակոջ խառնելի է ջուր, ոչ իբր նիւթ, այլ վասն խորհրդոց, և քանզի հաւատացեալ լինի զօր՟ն մեր ք՟ս այս-

պէս

պէս արարեալ դոյ ։ Մերձաւոր նիւթն այսր խորհրդոյ, են տեսակք հացի և գինւոյ, որք մնան ։ Վասնզի 'ի յայսմիկ խորհրդոջ հեռաւոր նիւթն անցանէ, և մերձաւոր նիւթն մնայ ։ Քանզի սրբազնագործութեամբ հացի, գոյացութիւն հացի փոխարկի 'ի մարմին Քրիստոսի. և սրբազնագործութեամբ բաժակի, գինին փոխարկի 'ի յարիւն Քրիստոսի ։ Այս համադարձումն բոլորոյ գոյացութեան հացի, 'ի մարմին Քրիստոսի, և բոլորոյ գոյացութեան գինւոյ 'ի յարիւն նորա, վայելչաբար, և յատկաբար 'ի սրբոյ կաթուղիկէ եկեղեցւոյ կոչի անդրագոյափոխումն ։ Իսկ տեսակք հացի և գինւոյ մնան. քանզի հաղորդութիւնն է խորհուրդ, իրականապէս պարունակող զմարմինն, և զարիւնն Քրիստոսի, ընդ տեսակաց հացի և գինւոյ ։ Ուստի մարմինն Քրիստոսի է ճշմարիտ կերակուր, և արիւն նորա է ճշմարիտ ըմպելի ։ Որ ուտէ զմարմին Քրիստոսի, և ըմպէ զարիւն նորա, մնայ 'ի Քրիստոս, և Քրիստոս 'ի նմա ։ Որպէս Քրիստոս կեայ վասն Հօր. այսպէս որ ուտէ զՔրիստոս, կեայ վասն Քրիստոսի ։ Եւ ունի զկեանն յաւիտենական, որ ուտէ զմարմին Քրիստոսի, և ըմպէ զարիւն նորա ։

6. Պաշտօնեայն խորհրդոյ հաղորդութեան, դարձուցանող բանիւք սրբազնագործութեան զգոյացութիւն հացի 'ի մարմին Քրիստոսի, և զգոյացութիւն գինւոյ 'ի յարիւն նորա, է միայն քահանայն, զի միայնոյ քահանայից ասացաւ. զայս արարէք 'ի յիշատակ իմ։ Քահանայութիւն կացուցեալ է, զի քահանայք ունիցին զիշխանութիւն առ 'ի կատարել զխորհուրդն հաղորդութեան, առ 'ի մատակարարել զհաղորդութիւն, և առ 'ի մատուցանել Աստուծոյ վասն ժողովրդեան քրիստոնէի, վասն կենդանեաց, և վասն մեռելոց, զայս անարիւնային պատարագն, որ երևեցուցանէ զարիւնահեղ պատարագն Քրիստոսի 'ի սեղանոջ խաչին մատուցեալն վասն փրկութեան աշխարհի ։ Քահանայք կատարօղք զայս ամենասուրբ, և պատուելի խորհուրդն, 'ի խորանոջ զօրութեամբ բանից զենուն զՔրիստոս, մատուցանելով Աստուծոյ զայս գերազանցագունեղ մեղսաքաւիչ, վճարական, և աւստացողական անարիւնահեղ պատարագն ։ 'Ի քահանայն առ հաստատութիւն սրբազնագործութեան խնդրի դիտաւորութիւն, զի բառնիցի անտարբերութիւն, և լինիցի բացորոշումն առ պարտաւոր վախճան ։ Զի օրինաւոր սրբազնագործիցէ, մատուցանիցէ զպատարագն, և մատակարարիցէ զխորհուրդն, խնդրի սրբակացութիւն. վասնզի սրբոց իրք սրբաբար ընծեռելիք են ։ Ձևն վասն սրբազնագործութեան հացի, է այս ։ Զի այս է մարմին իմ ։ Եւ վասն սրբազնագործութեան բաժակի, է այս ։ Զի այս է բաժակ արեան իմոյ, նորոյ, և յաւիտենականի կտակի. խորհուրդ հաւատոյ, որ վասն ձեր, և վասն բազմաց հեղցի 'ի թողութիւն մեղաց ։ Առ հաստատութիւն հաղորդութեան խնդրին, կարգ, դիտաւորութիւն, նիւթ, և տեսակ ։

7. Ենթակայն հաղորդութեան է մարդն մկրտեցեալն ճանապարհորդն. զի Քրիստոս վասն մեր քրիստոնէից մկրտեցելոց ճանապարհորդաց կացոյց զայս խորհուրդս, այսինքն, զի մեք հաւատացողքս 'ի Քրիստոս, վերածնեցեալք մկրտութեամբ, և զօրացուցեալք դրոշմիւ, սնուցանիցեմք հաղորդութեամբ ։ Ուստի պարտաւորէ զմեզ Տէրն, և ասէ ։ Եթէ ոչ կերիջիք զմարմին որդւոյ մարդոյ, և արբջիք զարիւն նորա, ոչ ունիք զկեանս յանձինս ։ Յոհ. 6. թիւ. 54. Ուստի պարտաւորիմք 'ի հրամանէ ընդունիլ զհաղորդութիւն 'ի կենի իբրև զսնուցիչ կերակուր հոգւոյ մերոյ, և 'ի վախճանի կենի իբրև զթոշակ ։ Եկեղեցին հրամայէ, զի համայք երկաքանչիւրոյ սեռի հաւատացեալք 'ի զատկի յարութեան ընդունիցին զսրբազան հաղորդութիւն ։ Մանկունք, և երեխայք որք ոչ ունին զկիրառութիւն բանի, և զխելահասութիւն, ոչ պարտաւորին. վասնզի առ ընկալումն

այսր

այսր պատուէրելոյ խորհրդոյ խնդրի խելահասութի, զի հանդերձ պատուով, և փափագանօք ընդունեցեալ լինիցի, որ ոչ է 'ի յերախայս: Ուստի նոքա շնորհիւ մկրտութե բաւականաբար փրկին: Եւ ոչ է հարկ, զի համայնք ենթ երկաքանչիւրոյ տեսակի ընդունիցին, այլ միայն պատարագօղք պարտաւորին առնուլ ենթ երկանչիւրոյ տեսակի, իսկ որքան առ այլս բաւական է, զի ենթ միոյ տեսակի ընդունիցին զօրբազան հաղորդութին: Քանզի մինչ ենթ երկաքանչիւրոյ տեսակի է բոլոր քս, որ ընդունի ենթ միոյ տեսակի, ընդունի զբոլոր քս. և այսպէս ուտէ զմարմին, և ըմպէ զարիւն նորա: Արդ կերակուր հոգւոյ մերոյ է մարմինն քի, և ըմպելին հոգւոյ մերոյ է արիւն նորա: Ուրեմն որ ընդունի ենթ միոյ տեսակի, ուտէ, և ըմպէ, և համահետևապէս սնանի, և կեայ:

8. Մերձեցօղն առ սրբազան հաղորդութի պարտի գոլ 'ի շնորհի. զի է խորհուրդ ոչ մեռելոց, այլ կենդանեաց: Ուստի որք դտանին 'ի մահացու մեղս, յառաջագոյն պարտին արդարանալ ապաշխարութբ, և յետոյ մերձենալ առ սրբազան հաղորդութի: Քանզի որ ուտէ զհացս այս, կամ ըմպէ զբաժակ տն անարժանապէս՝ պարտաւոր լինի մարմնոյ, և արեան տն: Եւ որ ուտէ, և ըմպէ անարժանապէս, զդատաստան անձին իւրոյ ուտէ, և ըմպէ, ոչ խտրելով զմարմին տն: Ուստի մարդն պարտի փորձել զիւր ինքն խորհրդով խոստովանութե, և քահանայն, որ պատարագելոց է, և որ ոչ ունի զառատութիւն խոստովանահարց, զղջմամբ. և այսպէս ուտել զհացէ այնմանէ, և զբաժակէ ըմպել: Մերձենալի է առ հաղորդութի. հաւատով, յուսով, սիրով, ջերմեռանդութբ, բորբոքմամբ, խոնարհութբ, շնորհակալութբ, և հաւատարմութբ. խոկալով զխորհուրդս. խնդրելով զբարերարութիւս, զսիրօղն զմեզ, բորբոքեցելով սիրով սիրելով, կամաւորապէս առ մեզ եկօղն, փութաբար, և բորբոքելաբար գրկելով, ամենամեծ վայելչութե տն, բոլորապէս զմեզ ինքեանս ենթարկելով, վասն բարերարութեց մեզ արարեցելոց զպարտաւորս շնորհակալութիւս մատուցանելով, և տն տյ մերոյ հաւատարմաբար ծառայելով: Յաճախաբար մերձենալի է, զի յաճախօրէն ընդունիցիմք զբարերարութիւս, զերանութի ճանապարհորդաց յաճախաբար վայելիցեմք, ամենասիրեցելոյ փեսայի հոգեաց մերոց յաճախապէս զուգակցիցեմք, զհացն հրեշտակաց ստէպ ուտիցեմք, հոգևորաւ կերակրով յաճախապէս սնուցանիցիմք, և ընդդէմ մեղաց յաճախաբար զինաւորիցիմք:

## ԳԼՈՒԽ Ղ.

### Յաղագս ապաշխարութե:

1. Ապաշխարութիւնն է խորհուրդ նորոյ օրինի, կացուցեալ 'ի քէ, առ 'ի վերստանալ զշնորհն, կորուսեալն մահուչափ մեղօք: Աշխարհս այս է ծով: Նաւահանգիստն է արքայութին: Նաւն, որ տանի առ նաւահանգիստն է եկեղեցին քի, որ 'ի ձեռն խորհրդոց 'ի քէ կացուցելոց, փրկէ զմարդիկ: Յայսմիկ ծովու գոյ ալէկոծութի, և մրրիկ, և ընդոստուցիչ մրրկի: Ալէկոծութին, և մրրկին, է փորձութին: Չարաբարոյ փորձիչն, որ հառաչէ կործանման մերում, է սատանայն նախանձոտն, յորդորօղն զմարդն առ մեղս: Չարաբարոյ մոլորեցուցիչն ջանայ 'ի ձեռն վատթարի ներգործման ածել զմարդն առ մեղս: Առաջին տախտակն, որ փրկէ զմարդն, է մկրտու-

տութեան ։ Յետ մկրտութեան մարդն, որ մեղանչէ մահացորէն, կրէ զալէկոծումն ․ քանզի կորուսանէ զշնորհն, որով էր 'ի ճանապարհի փրկութեան ։ Երկրորդ տախտակն, որով կարիցէ փրկիլ նա, որ կրեալ է զալէկոծումն մահացու մեղօք, է ապաշխարութիւնն ։ Վասնզի ամենասիրելի փրկիչն մեր, որ 'ի բարութենէ իւրմէ կացոյց զմկրտութիւն, որով ունիցեաք զառաջին շնորհն ․ զդրոշմն, որով հաստատիցեաք, և համազօրացուցանիցեաք 'ի շնորհի, և 'ի հոգևորի կենի ․ և զհաղորդութիւն, որով սնուցանիցեաք, և համապահիցեաք 'ի շնորհի ․ շարժեալ 'ի սիրոյ կացոյց նաև զապաշխարութիւն, որով վերստանայցեաք զշնորհն, 'ի ձեռն մահուչափ մեղաց յետ մկրտութեան գործեցելոց կորուսեալն ։ Ողորմեցաւ նաև ապերախտից ։ Քանզի մեղն յետ մկրտութեան գործեցեալն, է ապերախտութիւն դէպ 'ի յԱստուած, կարի յոյժ սիրելին, որ 'ի ձեռն մկրտութեան շարաբերեաց մեզ զամենամեծ բարերարութիւն ։

2 ․ Յայտ է, թէ Աստուած կամի զդարձումն մեղաւորի, քանզի ասէ Աստուած ։ Եւ անօրէն եթէ դարձցի յամենայն անօրէնութենէ իւրոց, զոր արար ․ և պահիցէ զամենայն պատուիրանս իմ ․ և արասցէ զարդարութիւն, և զողորմութիւն ․ կելով կեցցէ, և մի մեռցի ։ Ամենայն մեղք նորա զոր գործեալ իցէ, մի յիշեսցին ․ այլ արդարութեամբ իւրով զոր արար, կեցցէ ։ Եզեկիէլ ․ 18 ․ թիւ ․ 21 ․ Ուստի փրկիչն մեր, մինչ սկսաւ քարոզել, ասաց ։ Ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւն երկնից ։ Մատթ ․ 4 ․ թիւ ․ 17 ․ Որպէս, որ կորոյս զոչխարն, խնդրէ զնա, և յորժամ գտանէ խնդայ ընդ բարեկամաց իւրոց 'ի վերայ ոչխարի գտեցելոյ ․ այսպէս Քրիստոս խնդրէ զմեղաւորս, մահացու մեղօք կորուսեալս ․ և 'ի վերայ նոցա 'ի ձեռն ապաշխարութեան գտեցելոց, խնդայ հանդերձ հրեշտակօք իւրօք ։ Զի եղիցի խնդութիւն 'ի յերկինս 'ի վերայ միոյ մեղաւորի ապաշխարողի ։ Արդ, ուրեմն անստեղծ իմաստութիւն լուցանէ զճրագ և ածէ զաւել 'ի տան, և խնդրէ ուշադրաբար զբանական հոգին, առ պատկեր իւր ստեղծեցեալն, բայց մահացու մեղօք կորուսեալն, մինչև գտանիցէ զնա ապաշխարութեամբ, և 'ի վերայ գտեցելոյ ապաշխարութեամբ խնդայ հանդերձ սրբօք հրեշտակօք իւրօք ։ Եւ հայրն ողորմութեանց, տեսեալ զմեղաւորն զղջացեալ, և սորջացեալ, խոստովանիլ զմեղս իւրս ․ և կամեցեալ ապաշխարել, շարժեալ 'ի յողորմութենէ ընդ առաջ ընթանայ, և անկանի 'ի վերայ պարանոցի նորա, և համբուրէ զնա ։ Եւ ասէ ծառայից իւրոց ։ Փութանակի առբերէք զառաջին պատմուճանն, և ագուցէք նմա, և տուէք զմատանին 'ի ձեռս նորա, և զկօշիկս 'ի յոտս նորա ․ և ածէք զեզն պարարակ, և զենէք և, կերիցուք, և բերկրեսցուք ․ զի որդիս իմ այս մեռեալ էր, և կենդանացաւ, կորուսեալ էր, և գտաւ ։

3 ․ Յայտ է, թէ Քրիստոս կացուցեալ իցէ զխորհուրդն ապաշխարութեան ։ Քանզի Քրիստոս ետ առաքելոց զիշխանութիւն կապելոյ, և արձակելոյ, կապելոյ զանզեղջս, և արձակելոյ զապաշխարողս ։ Քանզի ասաց ։ Զոր կապիցէք յերկրի, եղիցի կապեալ յերկինս ․ և զոր արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս ։ Մատթէի ․ 18 ․ թիւ ․ 18 ․ Եւ յետ յարութեան ասաց ։ Առէք զհոգին Սուրբ ։ Եթէ ումեք թողուցուք զմեղս, թողեալ լիցի նոցա ։ Եւ եթէ զուրուք, ունիցիք կալեալ լիցի ։ Յօհաննու ։ 20 ․ թիւ ․ 23 ․ Քրիստոս է բժիշկ, մեղաւորք են հիւանդք ։ Եկն բժիշկն առ 'ի բժշկել, և առ 'ի դարմանել զհիւանդս ։ Քրիստոս է աղբիւր կենի, մեղաւորք են մեռեալք ։ Եկն կենդանի յարուցանել զմեռեալս ։ Բազմեցաւ, եկեր և էարբ ընդ մեղաւորաց, զի ցուցանիցէր զինքն եկեալ գոլ առ 'ի փրկել զմեղաւորս ։ Ապաշխարութիւն է հարկաւոր մեղաւորաց առ փրկութիւն ։

Քանզի

Քանզի յետ մկրտութեան մահացորէն մեղանչողաց, ոչ գոյ այլ միջոց առ ՚ի ստանալ զփրկութիւն, եթէ ոչ ապաշխարութիւն: Նաև սիրողք պարտին ապաշխարել. վասնզի պարտին ցաւիլ ՚ի վերայ մեղաց իւրոց, և գոլ պատրաստք առ ՚ի խոստովանել զյանցանս իւրս: Ուստի ասէ Տէրն: Եթէ ոչ ապաշխարիցէք համայնք, նոյնպէս կորնչիցիք: Մարդն, որ յետ ապաշխարութեան դարձեալ անկանի, և զհոգին իւր ՚ի ձեռն մահացու մեղաց դարձեալ կորոյս, կարէ ճշմարիտ ապաշխարութեամբ մինչև առ վաղճան կենաց իւրոյ զփրկութիւն հոգւոյ իւրոյ ստանալ: Քանզի ապաշխարութիւն ոչ ներատպէ զկնիք, որպէս և հաղորդութիւն: Ուստի կարէ կրկնիլ:

4. Ո՛վ մեղաւոր, որ աներկբայաբար հաւատաս ապաշխարութեամբ զմեղս ջնջիլ, ՚ի յատենի մտաց քոց ել ընդդէմ քո, և զքեզ մեղապարտ կարգս առաջի քո, հանդերձ ճշմարիտ զղջմամբ ցաւելով ՚ի վերայ մեղաց քոց, ընդդէմ փրկչի քո ՚ի քէն գործեցելոց, և հանդերձ հաստատուն առաջադրութեամբ ոչ մեղանչելոյ, և զոր ած ոչ ես վճարեցուցանելոյ. դրկեա՛ զճշմարիտ դարձումն. Յետ առնելոյ զայսոսիկ, բաց առաջի խոստովանահօր քո զյանցանս քոյս, և զամենայն անօրէնութիւնս քոյս: Կատարեա՛ զեդեալ ապաշխարանն, և այսպէս փրկեա՛ զհոգին քո: Քանզի լաւագոյն է քեզ ունիլ զսակաւիկ դառնութիւն ՚ի կենցաղս, քան զյաւիտենական չարչարանս ՚ի դժոխսն: Մի՛ դներ զքեզ զկնի քո, կանխայոյթ առնելով զապաշխարութիւն, զի մի Աստուած դիցէ զքեզ առաջի քո, դատապարտեալ զհեղգութիւն քո: Համափոխեա՛ զվարս ՚ի բարեգոյնն, հեռանալով յամենից անօրէնութեանց քոց և զայսցանէ, որք գործեցեալք են, վճարեա՛ Աստուծոյ, զղջմամբ ապաշխարութեան, հառաչանօք խոնարհութեան, և պատարագաւ զղջացելոյ սրտի ՚ի համաղործելն ողորմութեանց: Լեր ուշադիր, զի մի ունայնացի ապաշխարութիւն քո, և մի ոչընչացի խոստովանութիւն մեղաց քոց ՚ի ձեռն յանցանաց հետեւողաց, զապաշխարութիւն քո ապականողաց: Կարի ջանասջի՛ր, զի մի մեղք կրկնեցեալք ոչընչացուցանիցեն զապաշխարութիւնս քոյս: Այնպէս լաց զմեղս քոյս, զի մի նորապէս կրկնիցես զյանցանս քոյս: Ապաշխարեա՛ ոչ ունայնաբար, այլ ճշմարտապէս. ապաշխարութիւն, որ բժշկէ զխօթութիւնս, բուժէ զբորոտս, և յարուցանէ զմեռեալս, աճեցուցանէ զառողջութիւն, համապահէ զհոգին, կաղից զընթացումն, գօսացելոց զխոնաւութիւն, կուրաց շնորհէ զտեսութիւն. փախուցանէ զմոլութիւնս, չքնաղացուցանէ զառաքինութիւնս, ամրացուցանէ, և զօրացուցանէ զմիտս:

5. Ապաշխարութեամբ քաւեա՛ զմեղս, և զամենայն աղտեղութիւնս քոյս, զի կարիցես գոլ ընկերակից հրեշտակաց երջանկութեան ՚ի յաւիտեան: Մի՛ յապաղեր զապաշխարութիւն քո մինչև առ ծանր հիւանդութիւն: Քանզի խնդրել պարտիս, և դրկել զառոյգն, և թողուլ զայն, որ է անստոյգ: Ապաշխարեա՛, մինչ ես առողջ, և մինչ մեղանչել կարես, և ես ժիր, զի դու թողցես զմեղս, զանօրէնութիւնս, և զյանցանս քոյս: Այսպէս առնելով ապահով ես, թողլով զմեղս, մինչ մեղանչել կարես: Եթէ կամիս ապաշխարել, յորժամ այլևս ոչ կարես մեղանչել, մեղք, և յանցանք քոյք թողուն զքեզ, և ոչ դու զնոսա, զոր հիւանդութիւն նեղէ, և պատիժն զարհուրեցուցանէ, և զոր որդիքն, և կինն ներկայք, և աշխարհս կոչեն առ ինքեանս, հազիւ հասանի ճշմարիտ վճարման. քանզի սովոր է զբաղումս խաբել երեկոյեան ապաշխարութիւն: Թող ուրեմն զյիմարութիւնս զայս, և առժամայն ապաշխարեա՛ ճշմարտապէս: Ջանասջի՛ր, զի լինիցիս հաւատարմագոյն, առնելով զճշմարիտ ապաշխարութիւն, քան թէ յառաջագոյն լեալ իցես, զի զմեծագոյն

շնորհ ստանայցես ապաշխարութբ, քան զայն, զոր կորուսեր: Այնպէս զղջացիր, և չարչարեսցեն զքեզ մեղք քոյք, զի քեզ դառնասցի 'ի հոգւոջ, որ յառաջ քաղցր եղև 'ի կենի. և որ զքեզ յառաջագոյն հրճուեցոյց 'ի մարմնոջ, նոյն ինքն չարչարեսցէ զքեզ 'ի սրտի. զի բարեպէս հատուսցես, և ճշմարտութբ ցուցցես 'ի վերայ մեղաց քոց: Ապաշխարեա՛ ապաշխարութբ, որ կամ հաւասարեսցի յանցանաց, կամ առաւելապէս աւելցի, զի լինիցիս նման նոցա, որք այսպէս ապաշխարեցին, և զփրկութիւն հոգւոց իւրեանց երջանկաբար ստացան:

6. Դու, որ ապախարես, այնպէս հեծեա, զի որքան 'ի քեզ կալար զբերկրութիւս, զայնքանս զքէն գտցես զողջակէզս: Արա՛, զի զ թիւս մեղաց, դարցուցանիցես առ թիւս առաքինութեց: Եւ արա՛, զի բոլորն ծառայիցէ այ 'ի յապաշխարութեն, որինչ յինքենէ արհամարհեաց զնա 'ի մեղս: Եւ ջանասցիր, զի զայնքան մեծագոյնս շահս բարեաց խնդրիցես, զորքանս զմեծագոյնս պատիժս ստացար մեղօք: Մի յուսահատիր, այլ ընթացիր առ ապաշխարութի: Զի ոչ երբեք արհամարհէ ած զապաշխարութիւն, եթէ նմա ճշգրտիւ, և անկեղծաբար մատուցանիցի: Եւ եթէ ոմն հասանիցի առ ծայրագունեղն չարեաց, և ասկայն կամիցի դառնալ անտի առ ճանապարհն առաքինուեն, կամաւորապէս ընդունի, և փրկէ զնա: Կարի յոյժ մեծ է առաքինութիւն ճշմարտի ապաշխարութեն: Վասնզի ճշմարիտ ապաշխարութիւն զամ կապեցեալս արձակէ, զամ փակեալս բանայ, զամ հակառակս մեղմացուցանէ, զամ ներհակս առողջացուցանէ, զամ շփոթեցեալս լուսաւորէ, և զամ յուսահատեցեալս հոգիաւորէ: Կարի անկարգաբար մեղաւ Պօղոս 'ի յաշխարհի, և կարի ծանրաբար պետրոս 'ի կրօնի: Սակայն սոքա ապաշխարութբ արժանաւորեցան ստանալ ոչ միայն զպաշտօնատարութի, այլ նաև զվերակացութի արքայութեն: Եւ անառակ որդին ճշմարտիւ ապաշխարութբ դարձեալ առ հայրն, ստացաւ զողորմութի: Ոչ է ծանր ինչ անկանիլ զմաքառօղն, այլ ընկողմանիլ զկործանեալն: Ոչ է վտանգաւոր վիրաւորիլն 'ի պատերազմի, այլ յետ վիրաւորութեն յուսահատութբ առողջութեն զդեղն վիրաց բացահերքել: Բազմիցս նաև տեսանեմք զքաջամարտիկս յետ յաճախից սահեցմանց, և բազմաց անկեցմանց գոլ պսակեցեալս. գիտեմք նաև զզինուորն յետ բազմաց փախստեանց լեալ գոլ այր հզօր, և յաղթեալ գոլ զյաղթիչս. այսպէս խօսի մրքն Յօհան ոսկեբերանն:

7. Հեռաւոր նիւթն ապաշխարութեն են մեղք յետ մկրտութեն գործեցեալք: Վասնզի կացուցեալ է ապաշխարութիւն առ 'ի յեղծել, և առ 'ի ջնջել զմեղս յետ մկրտութեն գործեցեալս: Մերձաւոր նիւթն ապաշխարութեն են ներգործութիք ապաշխարողի, այսինքն, զղջումն զմեղաց վասն գերբնականաց պատճառաց, հաստատ առաջադրութիւն դարձման, և ճշգրիտ խոստովանութիւն մեղաց. Ապաշխարօղն պարտի առնել զուշադիր քննութի, զի կարիցէ գտանել զամ մահացու մեղս իւրս: Եւ պարտի ցաւիլ 'ի վերայ ամից մեղաց իւրոց վասն գերբնականաց պատճառաց: Պարտի կարի յոյժ ցաւիլ, զի 'ի վեր քան զամ չարիս անհաճոյացին նմա մեղք: Պատճառքն պարտին գոլ գերբնականք. վասնզի բնականքն ոչ են բաւականք: Ցաւն է կրկին, կատարեալ, և անկատար: Կատարեալն է կատարեալ զղջումն, և ելուզանի վասն վշտացուցման, և սիրոյն այ: Ցաւս այս արդարացուցանէ հանդերձ պարտաւորութբ խոստովանելոյ զմեղս: Անկատարն է անկատար զղջումն, և ելուզանի վասն երկիւղի դժոխոյ, և կորստեան արքայութեն: Սա է բարի, բայց ոչ կարէ արդարացուցանել թարց խոստովանութեն:

Ապաշ-

Աղաչխարօղն նաև պարտի ունել զհաստատուն առաջադրութիւն դարձման, և ոչ մեղանչելոյ. վասնզի պարտի թողուլ զմեղս, և դարձուցանել զինքն բոլորովիմբ առ Աստուած: Եւ պարտի զղջմամբ պարզաբար, ճշմարտիւ, և խոնարհաբար խոստովանիլ զամենայն մահացուս մեղս իւրս, զորս ունի ՚ի միտ, զատոյգս որպէս զատոյգս, և զերկբայականս որպէս երկբայականս, որքան առ տեսակս, որքան առ թիւս, և որքան առ ծանրացուցանօղս պարագայս. զի խոստովանութիւն լինիցի ճշմարիտ, և ամբողջ: Զղջացօղն նաև պարտի ընդունել զապաշխարանսն եդեալն ինքեան ՚ի խոստովանահօրէ. զի բաւարարութիւն է զամբողջութե ապաշխարութե:

8. Ձևն խորհրդոյ ապաշխարութե է այս: Ես արձակեմ զքեզ ՚ի մեղաց քոց, յանուն Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն սրբոյ: Արտաքերին պաշտօնեայն, ենթակայն, ներգործութին արձակման, հեռաւոր նիւթն, և գլխաւոր պատճառն: Ենթակայն ապաշխարութե է մեղաւորն, որ մեղաւ յետ մկրտութե: Քանզի կացուցեալ է առ ՚ի յարդարացուցանել զայնպիսի մեղաւորն: Պաշտօնեայն խորհրդոյ ապաշխարութե է քահանայն զհրաման առեալն, որ ունի զսովորական, կամ զփոխանորդական իշխանութի արձակելոյ: Քանզի ՚ի քահանայոջ փորձեցելոջ, որ ունի զհրաման արձակելոյ, գտանի իշխանութի կարգի, և իշխանութիւն իրաւասութեան, որք բաւականք են առ արձակումն: Գլխաւոր պատճառն արձակման է ամենասուրբ Երրորդութիւն, մի Աստուած: Վասնզի Աստուած է, որ ջնջէ զանօրէնութիւնս մերս ինքեամբ: Եւ Աստուած է, որ կարէ մաքրել զպղծացեալն յանմաքուր սերմանէ: Ներգործութիւն արձակման է ազատումն մեղաւորի ՚ի մեղաց իւրոց: Արդարեամբ արձակմամբ թողանին մեղք, և ջնջին անօրէնութիւնք, և արդարանայ ամբարիշտն, ընդունելով զներումն մեղաց իւրոց: Արձակմամբ մարդն վերստանայ զշնորհն, մահուչափ մեղօք կորուսեալն, և զօէրն, և զամենայն առաքինութիւնս ընդ սիրոյ զուգակցեալս, և ստանայ զիրաւունս ՚ի փառս, և լինի ընդունակ արդիւնաւորելոյ ՚ի ձեռն բարեգործութեց զյաւիտենական կեանսն, Ըստ տրամադրութե, որով մերձենայ մեղաւորն առ ապաշխարութի, լինի վերստացումն շնորհի: Վերջապէս ապաշխարութբ համայնք բարեգործութիւնք մահացուցեալք մեղօք կենդանանան:

## ԳԼՈՒԽ ԼԱ.

### Յաղագս վերջին օծման:

1. Վերջին օծումն է խորհուրդ նորոյ օրինի, կացուցեալ ՚ի Քէ Տէ փրկչէ մերմէ, առ ՚ի յօգնել այնմիկ, որ է ՚ի ծանր հիւանդութե: Փրկիչն մեր, կացոյց զմկրտութիւն առ հոգևոր ծնունդ, զդրոշմն առ աճումն ՚ի հոգևորն կենի, զհաղորդութիւն առ հոգևոր սնունդ, և զապաշխարութիւն առ ՚ի վերստանալ զշնորհն, մահուչափ մեղօք կորուսեալն. կացոյց նաև զվերջին օծումն, առ ՚ի յօգնել մեզ, մինչ գտանիմք ՚ի վերջին կենի: Քս կացոյց զայս խորհուրդս. զի կացուցիչն ամից խորհրդոց նորոյ օրինի, զշնորհ համաբերողաց, է Քս: Հեղինակն նորոյ օրինի, և նորոյ կտակարանի, և հեղինակն շնորհի է Քս: Ապա ուրեմն հեղինակն, և կացուցիչն ամից խորհրդոց նորոյ օրինի, զշնորհ համաբերողաց, է Քս: Իսկ վերջնում օծումն է խորհուրդ նորոյ օրինի, և նորոյ կտակարանի. քանզի է մինն ՚ի յեօթնից խորհրդոց եկեղեցւոյ Քի: Ապաուրեմն կացուցիչն վերջին օծման է Քս: Ըստ որբոյն Մարկոսի զայսմանէ ասացեալ

է. վասնզի այսպէս պատմի մեզ: Եւ ելեալ քարոզէին, զի ապաշխարեսցեն, Եւ դեւս բազումս հանէին. և օծանէին իւղով զբազումս հիւանդս, և բժշկէին զնոսա: գլ. 6. Թիւ. 12.

2. Ասացեալն բան սբոյն մարկոսի, ՚ի ձեռն Յակոբու առաքելոյն հրատարակեցաւ, և յանձարարեցեալ է քրիստոնէից: Զի ասէ սբ առաքեալն: Հիւանդանայցէ ոք ՚ի ձէնջ, կոչեսցէ զերիցունս եկեղեցւոյ, և արասցեն ՚ի վերայ նորա աղօթս, օծցեն իւղով յանուն տն. և աղօթքն հաւատովք փրկեսցեն զաշխատեալն, և յարուսցէ զնա տր, և եթէ մեղս ինչ իցէ գործեալ, թողցի նմա: գլ. 5. Թիւ. 14. ՚Ի կատարման այսր խորհրդոյ ՚ի յասացելոց առաքելոյն ենթրի օծումն իւղոյ: Եւ այս յարմարագունեղապէս: Քանզի օծումն պատշաճաւորապէս երևեցուցանէ զշնորհն հոգւոյն սրբոյ, որովաներևութաբար հոգին հիւանդի, և ակարարեցելոյ ներօծանի: ՚Ի ձեռն աղօթից իմանին աղօթարարք բանք, որք արտաքերին ՚ի պաշտօնէէ, մինչ օծանի հիւանդն: Իրն այսր խորհրդոյ է շնորհն հոգւոյն սբոյ, որոյ օծումն ջնջէ զմնացեալս մեղս, և զյանցանս, եթէ ամանք տակաւին իցեն քաւելիք: Ասացեալ օծումն հոգւոյն սրբոյ թեթևացուցանէ, և համահաստատէ զհոգին հիւանդի, զվերջին օծումն ընդունողի, զարթուցանելով ՚ի նմա զմեծ յուսադրութի ածայնոյ ողորմութե: Ուստի հիւանդն օգնեցեալ շնորհիւ հոգւոյն սբոյ, թեթևագոյն տանի զնեղութիս, և զաշխատանս խօթութե. և դիւրագոյն ընդդիմանայ փորձութեց սատանայի, կրընկի դարանակալի: Եւ երբեմն նաև զառողջութի մարմնոյ, յորժամ պատշաճաւորեսցի հոգւոյ, ստանայ: Արդուրեմն վերջին օծումն ջնջէ զմնացեալս մեղս, թեթևացուցանէ զհիւանդն ընդդէմ փորձութեց սատանայի. և եթէ պատշաճաւոր իցէ փրկութե հոգւոյ հիւանդի, տայ նաև զառողջութի մարմնոյ:

3. ՚Ի ձեռն քահանայից եկեղեցւոյ, որք ներածելիք են, զի օծանիցեն զհիւանդս, աղօթելով ՚ի վերայ նոցա, իմանին, կամ եպիսկոպոսք, կամ քահանայք, ՚ի նոցանէ ձեռնադրեցեալք: Ուստի եպիսկոպոսք, կամ քահանայք կոչելիք են, զի օծանիցեն զհիւանդս, և աղօթիցեն ՚ի վերայ նց: Օծումն այս առնելի է հիւանդաց, և մանաւանդ այնոցիկ, որք այնպէս անկանին ՚ի մահիճս, զի երևիցին հասեալք առ վերջն կենի. Ուստի խորհուրդն վերջին օծման, կոչի խորհուրդ ՚ի յաշխարհէս ելանողաց: Հիւանդք այսու խորհրդով թեթևացուցեալք, և զառողջութի մարմնոյ ստացեալք, դարձեալ օժանդակութբ այսր խորհրդոյ կարասցեն օգնել, եթէ ՚ի յայլ նման վտանգ կենի անկանիցին: Քանզի խորհուրդս այս մինչ ոչ նեբառպէ զկնիք, ՚ի նմանօղ վտանգի կենի կարէ կրկնիլ: Խոստովանութին մահուչափ մեղաց պարտի յառաջել զընկալումն այսր խորհրդոյ. վասնզի առ ջնջումն մահացուաց կացուցեալ է խորհուրդն ապաշխարութե. իսկ խորհուրդս այս ջնջէ զմնացեալս մեղս, այսինքն, զներելիս: Ուստի բացարձակապէս է խորհուրդ կենդանեաց: Վասն այսորիկ հիւանդն պարտի տրամադրել զիւր ինքն առ ՚ի յընդունելն զայն ՚ի ձեռն խորհրդոյ ապաշխարութե: Կարէ նաև ջնջել զմահացուս, որք յետ ընկալման խորհրդոյ ապաշխարութե, ոչ են մասնաւորապէս խոստովանութբ յայտնեցեալք, կամ քանզի ապաշխարօղն անմեղադրելաբար ոչ փիտէր զոլ մահացուս, կամ քանզի անմեղադրելաբար մոռացեալ էր զնա. ապա այն գարշեցեալ է յամէից մահացուաց, և հաստատապէս առաջադրեալ է ոչ ևս մեղանչել մահացօրէն: Երբեմն զայսանիկ մնացեալս մեղս տը օծումն ջնջէ: Ուստի սեռօրէն ասի. եթէ իցէ ՚ի մեղս, թողցին նմա:

4. Թէ...

4. Թէպէտ խորհուրդս այս ոչ իցէ այնպէս հարկաւոր, որպէս հարկաւոր է ապաշխարութիւն․ սակայն վասն մեծամեծից օգտակարութեանց նորա, հիւանդն պարտի գոլ ամենահոգաբարձ, զի յետ խոստովանութեան, և սրբոյ հաղորդութեան, ջերմեռանդաբար ընկալցի և զայս ևս խորհուրդս, զի շնորհիւ 'ի վերջնում օծման ընդունելով, հզօրաբար զինաւորիցի ընդդէմ փորձութեանց խորամանկագունեղի Թշնամւոյ, որ յայնժամ զամ ջանադրութիւն իւր 'ի կիրարկանէ խորամանկագունեղիւք կերպօք, զի զհիւանդն ներածիցէ 'ի մեղս։ Յայնմիկ վերջնում պատերազմի մերում, ընդդէմ հասարակի փորձչի առնելով կարի յոյժ ջանացողի առնել, զի անկանիցիմք, պարտիմք նաև դիմել առ աղօթս բարեպաշտից, և ջերմեռանդայց մարդկանց, զի աղօթիւք իւրովք օգնիցեն մեզ յայնմիկ զարհուրելով պատերազմի ընդդէմ մոլորեցուցչի ընդհանրոյ աշխարհի, և ընդդէմ իշխանութեանց այսորիկ խաւարի․ և պարտիմք ընդունիլ զպահպանութիւն այ, զի կարիցեմք ընդդիմանալ Թշնամւոյ յաւուր չարի․ և պարտիմք կալ զօտևորեալք ճշմարտորէն, և զգեցեալք զզրահ արդարութեան, և ագուցեալք զկօշիկս 'ի յոտս 'ի պատրաստութեան աւետարանի խաղաղութեան, առեալք զվահան հաւատոյ, որով կարասցուք զամ հրեղէնս նետս նենգաւորագունեղին շիջուցանել, և զսաղաւարտ փրկութեան, և զսուր ոգւոյ, ամենիւք աղօթիւք։ Զի՛ արդ կարեմք անփոյթ առնել զխորհուրդն, 'ի փրկչէ աշխարհի կարգեցեալն, զի Թեթևացուցանիցէ զմեզ ընդդէմ Թշնամւոյ մերոյ, 'ի վերջնում պատերազմի մերում։ Արհամարհօղք զայսքան խորհուրդս, գործեն զամենամեծ անօրէնութիւն, և առնեն զանիրաւութիւն հոգւոյն սրբոյ։ Ջանփոյթ առնօղք խրատելիք են․ դայթագղեցուցանօղք կշտամբելիք են։

5. Հեռաւոր նիւթն վերջին օծման է իւղն օրհնեցեալն 'ի յեպիսկոպոսէ։ Մերձաւոր նիւթն է օծումն իւղոյ օրհնեցելոյ։ Վա զի ըստ առաքելոյն Յակոբայ, հիւանդն օծանելի է իւղով։ Ձևն այսր խորհրդոյ է այս։ Այսու օծմամբ, և ամենաբարեգթիւ ողորմութբ իւրով, ներեսցէ քեզ տր զոր ինչ մեղար, զօրօրինակ տեսութբ։ Նմանապէս արտաբերելիք են բանք մաղթողականք որքան առ այլս զգայութիս, բացայայտելով զնոսա։ Մաղթօղն է պաշտօնեայն, որ օծէ զհիւանդն։ Այս, վասն որոյ մաղթէ պաշտօնեայն, օծելով զնա, է հիւանդն, լինօղն 'ի ծանու, և 'ի վտանգաւորի հիւանդութեան, որ է ընթակայ այսր խորհրդոյ։ Օծումն, որ յարանուանի, է մերձաւոր նիւթն, յորում կայանի խորհուրդս այս․ քանզի որպէս ասացաք, մերձաւոր նիւթն այսր խորհրդոյ, է օծումն․ որով օծանի հիւանդն։ Ամենագթած ողորմութիւն է ողորմութիւն այ, որով տծ շարժեալ, ներէ մեղաւորի։ Ներումն նշանակէ զջնջումն մնացելոց մեղաց։ Ուստի ներմամբ նշանաւորի իրն, և գործն այսր խորհրդոյ, որ է ջնջումն մնացելոց մեղաց։ Եւ յայսմիկ ներփակի Թեթևացուցումն հիւանդի։ Վասնզի շնորհիւ, որով ջնջին մնացեալք մեղք, Թեթևացուցանի, և օգնի հիւանդն ընդդէմ փորձչի, որ ջանայ զհիւանդն ներածել 'ի մեղս, և նաև ստանայ զառողջութիւն մարմնոյ․ եթէ շահաւէտ իցէ փրկութեան հոգւոյ։ Անուանի տր, զի խնամայցեմք, զամ գոլ զտուողն շնորհի։ Քանզի հեղինակն շնորհի է տր ած ամենակարօղն։

6. 'Ի ձևոջ վերջին օծման անուանին զգայութիւնք, որովք մարդն մեղանչէ, զի ճանաչիցեմք զմասունս․ որք յայսմիկ խորհրդոջ օծելիք են, և են աչք, ականջք, ունչք, բերանն, ձեռք, ոտք, և երիկամունք, որք 'ի կանայս վասն պարկեշտութեան բացաթողանին։ 'Ի յաչս է տեսութիւն, 'ի յականջս լսումն, 'ի յունչս հոտո-

հաստատուն, 'ի բերանոյ ձայնակութեամբ, 'ի ձեռս, 'ի յոտս, և 'ի յերիկամունս շօշափմամբ: 'Ի ձեռն հնգից զգայութեանց մեղանչեմք: Ուստի յարմարագունեղապէս հինգ զգայարանք զգայութեանց օծանին: 'Ի ձեռօք այսր խորհրդոյ լինի մաղթանս, և կոչումն ա̄ծայնոյ ողորմութեան. վասնզի մեղք, որք թողանին, են ներելիք, և եթէ իցեն ծանունք, են այնոքիկ, որք ոչ են ճանաչեցեալք, կամ թէ են մոռացեալք: Ուստի են մեղք, որք արժանաւորին, զի վասն թողութեան նոցա լինիցի մաղթանս, և անուանակոչումն ա̄ծայնոյ ողորմութեան: Ք̄ս ա̄ծ մեր, որոյ ողորմութեանն է անհուն կացոյց նաև զայս խորհուրդս, որ մաղթողականաւ ձևով, և անուանակոչութեամբ ա̄ծայնոյ ողորմութեան, 'ի գործոյ գործեցելոյ գործիցէ զփրկութիւն մարդոյ: Թէպէտ ուրեմն խորհուրդս այս ունիցի զմաղթողական ձևս սակայն 'ի զօրութեան ք̄ի, որ կացոյց զայս խորհուրդս, 'ի գործոյ գործեցելոյ գործէ զփրկութիւն հիւանդի, միայն թէ իցէ տրամադրեցեալ, այսինքն, զմեղս ճանաչեցեալս խոստովանեալ իցէ, զսրբազան հաղորդութիւն, և զթոշակն ընկալեալ իցէ, զա̄մ մեղս ատեալ իցէ, զհաստատ առաջադրութիւն ոչ ևս մեղանչելոյ արարեալ իցէ, և զվերջին օծումն ջերմեռանդաբար կամեցեալ իցէ:

7. Պաշտօնեայն վերջին օծման է քահանայն: Քանզի նա է պաշտօնեայ վերջին օծման, որ օծէ զհիւանդն. զի կիրառնել զայս պաշտօն պատկանի պաշտօնէի խորհրդոյ: Իսկ քահանայն օծէ զհիւանդն, և աղօթէ 'ի վերայ նորա. այսինքն, արտաբերէ զմաղթողական ձևն վերջին օծման. վասնզի 'ի ձեռն քահանայի, որ ըստ սրբոյն Յակոբայ ներածելի է, զի օծիցէ իւղով զհիւանդն, և աղօթիցէ 'ի վերայ նորա, 'ի ժամանակէ Առաքելոց մինչև ցայժմ եկեղեցին հարսն ք̄ի, որ գիտէ զմիտս ք̄ի փեսայի իւրոյ, և որ հաւատարմաբար պահէ զաւանդութիւնս առաքելական, իմացաւ զքահանայն, և միշտ առ այս մատակարարումն վարեցեալ է քահանայիւ: Ուրեմն պաշտօնեայն վերջին օծման է քահանայն: Դարձեալ նա պարտի դոլ պաշտօնեայ վերջին օծման, և պարտի օծել զհիւանդն, և աղօթել 'ի վերայ նր, 'ի ծանուս հիւանդութեան նորա, զինուորելով զնա ընդդէմ փորձչի, որ տայ զթօշակ հիւանդին: Իսկ քահանայն տայ զթօշակ հիւանդի: Ուրեմն քահանայն է պաշտօնեայն վերջին օծման: 'Ի քահանայոջ, որ օծէ զհիւանդն, առ հաստատութիւն խորհրդոյ խնդրի դիտաւորութիւն. քանզի դիտաւորութիւն խնդրի առ կատարումն ա̄մից խորհրդոց. և խնդրի, զի վարիցի պարտաւորաւ նիւթով, և պարտաւորաւ ձևով. վս̄ զի պարտի օծել զհիւանդն իւղով, և աղօթել 'ի վերայ նր: Այլ զի օրինաբար մատակարարիցէ զայս խորհուրդս, խնդրի, զի իցէ 'ի շնորհի. վասնզի ո̄րք իրք սրբաբար ընծայելիք են. և խնդրի, զի իցէ ժողովրդապետ, կամ ունիցի զհրաման 'ի ժողովրդապետէ, կամ 'ի յեպիսկոպոսէ. քանզի ոչ պարտի դնել զմանգաղ 'ի հունձս այլոց. և խնդրի, զի առնիցէ զա̄մս իրս, զորս պատուիրէ եկեղեցին. վասնզի հնազանդելի է եկեղեցւոյ:

8. Իրն, և գործն վերջին օծման է շնորհն, որ օգնէ հիւանդին առ 'ի յընդդիմանալ փորձութեանց թշնամւոյ: Քանզի կացուցեալ է այս խորհուրդս, զի 'ի վերջնում պատերազմի մերում զինուորիցիմք ընդդէմ փորձչի, զի օգնեցեալք օգնութեամբ շնորհի ա̄յ քաջաբար պատերազմիցիմք, և մարտնչիցիմք ընդդէմ նորա, ջանացողի զմեզ ներածել 'ի մեղս, այնպէս զի յաղթիցեմք զնա, և առացեալք զփրկութիւն հոգւոյ, ընկալցուք զյաղթանակ ընդդէմ նորա: Շնորհս այս նաև թեթևացուցանէ զհիւանդն, զի կամաւորապէս, և զօրաւորաբար վասն սիրոյն ա̄յ տանիցի, և կրիցէ զնեղութիւնս հիւանդութեան:

թեան ։ Ուստի յայնպիսւոջ հիւանդոջ վասն պատրաստութեան , սիրոյ , և ուրախութեան , նեղութիւնք հիւանդութե լինին թեթևք։ Յորժամ 'ի հիւանդոջ , մերձեցողի խորհրդոյ վերջին օծման , դտանին մնացեալք մեղք , և հիւանդն գտանի տրամադրեցեալ , յայնժամ խորհուրդն վերջին օծման ջնջէ նաև զմնացեալս մեղս . վասզի է խորհուրդ , կացուցեալ 'ի քրիստոսէ առ այս , զի ոչ միայն օգնիցէ ընդունողի ընդդէմ փորձչի , այլ նաև ջնջիցէ զմնացեալս մեղս , եթէ իցեն 'ի յընդունողի տրամադրեցելոջ։ Քանզի ասէ սուրբն Յակոբ առաքեալն , եթէ իցէ 'ի մեղս , թողցին նմա ։ Եւ եթէ շահաւէտ իցէ փրկութեան հոգւոյ ընդունողի , նաև շարաբերէ զառողջութիւն մարմնոյ ։ 'Ի յասացելոց երևին գործք վերջին օծման ։ Ուրեմն հիւանդն գտեցեալն 'ի ծանու հիւանդութեան , պարտի գոլ հոգաբարձագունեղ առ այս , զի ընդունիցի զայս օգտակարագունեղ խորհուրդս , զորմէ խօսեցաք , զի մի զրկիցի 'ի վերոյասացելոց գործոց այսր խորհրդոյ ։

# ԳԼՈՒԽ ՂԲ.

## Յաղագս կարգի ։

1. Կարգն է խորհուրդ նորոյ օրինի . կացուցեալ 'ի քէ տէ , հեղինակէ նորոյ օրինի , տալով զիշխանութի առ 'ի կատարել , և առ 'ի մատակարարել զխորհուրդն հաղորդութե ։ Ամենասիրելի փրկիչն մեր , որ 'ի յընթրոջ կացոյց զխորհուրդն հաղորդութե , տալով մեզ զմարմին իւր 'ի կերակուր , և զարիւն իւր 'ի յըմպելի , կացոյց նաև զկարգն , որով լինիցին քահանայք առ 'ի կատարել զխորհուրդն հաղորդութե ։ Արդ ուրեմն կարգն ներատուէ զանջնջելի կնիք 'ի ձեռնադրեցելոջ , որով ձեռնադրեցեալն ստանայ զիշխանութի 'ի յիրական մարմինն քի ։ Աստիճանք են եօթն , և են այսոքիկ , որք հետևին . դռնապանութի , ընթերցողութի , երդմնեցութի , ջահընկալութի , կիսասարկաւագութի , սարկաւագութի , և քահանայութի ։ Առաջին խուզումն է տրամադրութի առ աստիճանս ։ Այսու տրամադրութբ առ աստիճանս , քրիստոնեայն մկրտեցեալն , և դրոշմեցեալն լինի կղերիկոս , և եղանի ընդունակ բարերարութե եկեղեցականի , և մանաւանդականութեց կղերիկոսականաց ։ 'Ի յեօթնից աստիճանաց երեքն են մեծագոյնք , այսինքն , կիսասարկաւագութի , սարկաւագութի , և քահանայութի , և ասին սրբազանք վասն առնցեցելոյ հանդիսաւորի ուխտի ողջախոհուէ ։ Իսկ մնացեալք կոչին փոքրագոյնք ։ Քահանայութին է կրկնակ , մեծագոյն , և փոքրագոյն ։ Մեծագոյնն է եպիսկոպոսութին , զոր ունին մեծագոյնք քահանայք։ Փոքրագոյնն է իրիցութի , զոր ունին փոքրագոյնք

գոյնք քահանայք ։

2. Մեծագոյնք քահանայք կոչին եպիսկոպոսք։ Ս̃ք են պաշտօնեայք ա̃մից խորհրդոց, և ունին զիշխանութի̃ ոչ միայն 'ի յիրական մարմինն քի̃, այլ նաև 'ի խորհրդաւոր մարմինն նորա ։ Քանզի են աջորդք առաքելոց, և փեսայք եկեղեցեաց 'ի տեղի քի̃ ։ Եւ է ծայրագոյն քահանայպետ, գլխաւոր փոխանորդ քի̃, որ ունի զիշխանութի̃ 'ի բոլոր խորհրդաւոր մարմին քի̃, այսինքն, ոչ միայն 'ի վ̃ր ա̃մից աշխարհականաց քրիստոնէից, այլ նաև 'ի վերայ ա̃մից քահանայից, և 'ի վերայ ա̃մից եպիսկոպոսաց ։ Յայսմիկ է լիութի̃ եկեղեցականի իշխանութե̃ ։ Ուստի ոչ միայն կարէ ձեռնադրել զփոքրագոյնս քահանայս, այլ նաև զմեծագոյնս, և զեպիսկոպոսունս ։ Եւ 'ի յայսմիկ է լիութի̃ եկեղեցականի իրաւասութե̃, և 'ի նմանէ ըստ բացորոշութե̃ նորա առ այլս ածանցի ։ Ծայրագունեղ քահանայն է պապն, այսինքն, հռոմէական քահանայապետն աջորդն պ̃ետրոսի, և փոխանորդն քի̃ 'ի վերայ երկրի ։ Փոքրագոյնք քահանայք ունին զիշխանութի̃ 'ի յիրական մարմինն քի̃, և զիշխանութի̃ կապելոյ, և արձակելոյ, և են պաշտօնեայք բազմաց խորհրդոց, զորօրինակ, մկրտութե̃, ապաշխարութե̃, հաղորդութե̃, և վերջին օծման ։ Գերազանցագունեղ արժանապատուութի̃ է ծայրագունեղի քահանայի, զի է փոխանորդ քի̃ 'ի վերայ երկրի ։ Կարի, և գերազանց արժանապատուութի̃ է եպիսկոպոսաց, զի են առաջնորդք եկեղեցեաց ։ Գերազանց արժանապատուութի̃ է քահանայից, զի են պաշտօնեայք բազմաց խորհրդոց ։

3. Նիւթն կարգի է կրկնակ, այսինքն, հեռաւոր, և մերձաւոր ։ Հեռաւոր նիւթն է գործին, աւանդելին ձեռնադրելւոյ ։ Իսկ մերձաւոր նիւթն է աւանդումն գործեւոյ ընձեռելւոյ ։ Խնդրի Փիզիքական, և անընդմիջական շօշափումն գործւոյ ։ Հեռաւոր նիւթն դռնապանութե̃, են փականք եկեղեցւոյ, իսկ մերձաւոր նիւթն նորա, է աւանդումն փականաց եկեղեցւոյ ։ Ուստի աւանդմամբ փականաց եկեղեցւոյ, ձեռնադրի դռնապանն ։ Հեռաւոր նիւթն ընթերցողութե̃, է գիրքն ընթերցուածոց ։ Իսկ մերձաւոր նիւթն նորա, է աւանդումն գրքոյ ընթերցուածոց ։ Ուստի աւանդմամբ գրքոյ ընթերցուածոց, ձեռնադրի ընթերցիչն ։ Հեռաւոր նիւթն երդմնեցութե̃, է գիրքն երդմնեցութե̃ց ։ Իսկ մերձաւոր նիւթն նր̃, է աւանդումն գրքոյ երդմնեցութեց ։ Ուստի աւանդմամբ գրքոյ երդմնեցութե̃ց ձեռնադրի երդմնեցուցիչն ։ Հեռաւոր նիւթն ջահընկալութե̃, են պատարկք բաժկամանք, և մոմակալն շիջուցելով մոմիւ․ վասնզի առ ջահընկալն պատկանի պատրաստել զլոյսն, զգինին, և զջուրն առ պատարագն ։ Իսկ մերձաւոր նիւթն նորա, է աւանդումն բաժկամանաց դատարկաց, և մոմակալի հանդերձ մոմիւ շիջուցելով ։ Ուստի աւանդմամբ բաժկամանաց դատարկաց և մոմակալի հանդերձ շիջուցելով մոմիւ ձեռնադրի ջահընկալն ։ Հեռաւոր նիւթն կիսասարկաւագութե̃, է բաժակն դատարկ, հանդերձ մաղզմանաւ դատարկաւ վերադրեցելով․ քանզի կիսասարկաւագի պատկանի պատրաստել զայսոսիկ առ պատարագն ։ Իսկ մերձաւոր նիւթն նորա, է աւանդումն բաժակի դատարկի հանդերձ դատարկաւ մաղզմանաւ վերադելով ։ Ուստի աւանդմամբ բաժակի դատարկի հանդերձ դատարկաւ մաղզմանաւ վերադրեցելով ձեռնադրի կիսասարկաւագն ։ Հեռաւոր նիւթ սարկաւագութե̃ են ձեռն, և գիրքն աւետարանաց․ վասնզի սարկաւագի է ուսուցանել զքրիստոնէական վարդապետութի̃ն, երգել զաւետարանն, և հրամանաւ ժողովրդապետի քարոզել, մկրտել, հաղորդել ։ Իսկ մերձաւոր նիւթն նորա, է վերադրումն ձեռին, և աւան-

աւանդութեան գրքոյ աւետարանաց ։ Ուստի վերադրութիւն ձեռին, և աւանդեցմամբ գրքոյ աւետարանաց ձեռնադրի սարկաւագն ։

4. Հեռաւոր նիւթն քահանայութեան վասն սրբագնագործութեան, է բաժակն հանդերձ գինեաւ, և մաղզմանն հանդերձ հացիւ․ բայց վասն իշխանութեան թողլոյ զմեղս, է ձեռն ։ Իսկ մերձաւոր նիւթն նո՟ վասն սրբագնագործութեան, է աւանդութիւն բաժակի հանդերձ գինեաւ, և մաղզմանի հանդերձ հացիւ․ բայց վասն իշխանութեան թողլոյ զմեղս, վերադրութիւն ձեռին ։ Ուստի աւանդեցմամբ բաժակին հանդերձ գինեաւ, և մաղզմանի հանդերձ հացիւ, առատրեցելոյ ձևոյ, որով տրի իշխանութիւն սրբագնագործելոյ․ յետոյնորին վերադրութեան ձեռին, առատրեցելոյ այլոյ ձևոյ, որով տրի իշխանութիւն թողլոյ այլոց զմեղս, ձեռնադրի քահանայն ։ Զևն կարգի են բանք, զորս, եպիսկոպոսն, մինչ աւանդէ զգործին ձեռնադրելոյ, արտաբերէ հրամայականաւ եղանակաւ, զի իմանիցի աւանդութիւն իշխանութեան 'ի յաւանդմանէ գործեոյ, և 'ի բանից 'ի յեպիսկոպոսէ արտաբերեցելոց Զանաչին պաշտօնք ձեռնադրեցելոց ։ Ուստի պաշտօնն դռնապանի է պահել զփականս եկեղեցւոյ, բանալ, և փակել զդրունս նորա․ արգելուլ զնոսա, որոց ոչ է օրէն ներդուլ սրբազանից իրաց․ բախել զզանկակս․ որք իրք ներեկեղեցւոյ են, պահել․ և նմա, որ քարոզէ 'բանալ զգիրքն ։ Պաշտօն ընթերցողի է ընթեռնուլ 'ի յեկեղեցւոջ զընթերցուածս հնոյ, և նորոյ կտակարանի․ և ուսուցանել նորընծայից զսկզբունս քրիստոնէականի հաւատոյ ։ Պաշտօնն երդմնեցութեան է, դնել զձեռս 'ի վերայ նեղեցելոց 'ի յանմաքրից ոգեաց, առ 'ի յերդմնեցուցանել, և արտաքսել զնոսա, և առ 'ի յերդմնեցուցանել զնորընծայս ։ Պաշտօնն ջահընկալի է, պատրաստել զբաժակամանս գինւոյ, և ջրոյ առ մատուցումն պատարագի, և տալ կիսասարկաւագի, բերել զմոմեղէնս առ նոյն պատարագն, և սպասաւորել նմա ։ Ուստի և ասի մոմատար ։ Այսցեալք են պաշտօնք պատկանօղք առ չորս աստիճանս փոքրագոյնս ։

5. Պաշտօնն կիսասարկաւագի է, անընդմիջապէս ենթակարգիլ սարկաւագի առ մատուցումն պատարագի, զբաժակն, և զմաղզմանն տալ նմա, զտակառիկն հանդերձ ջրով տալ, զջուրն ներհեղուլ առ 'ի լուանալ զձեռս ։ և զընթերցուածն 'ի պաշտօնէ, և հանգիսաբար ընթեռնուլ ։ Պաշտօն սարկաւագի է, երգել հանդիսաբար զաւետարանն 'ի պատարագի, անընդմիջապէս սպասաւորել քահանայի 'ի յիրս ամս, որք պատկանին մատուցման պատարագի, զգեցուցանել զխորանս, տանիլ զխաչն, և վերջապէս 'ի հրամանէ քահանայի քարոզել, և մկրտել ։ Վերջապէս պաշտօն քահանայի, և իրիցու է, սրբագնագործել զխորհուրդն հաղորդութեան, մատուցանել զնուէրն պատարագի, աղօթել առ ած վասն ժողովրդեան, արձակել 'ի մեղաց, զօրհնութիւն ջրոյ, և զնմանս իրս առնել, և զժողովուրդն կերակրել վարդապետութեամբ, և օրինակօք ։ Թէպէտ աստիճանք իցեն եօթն, և իցեն խորհուրդ, սակայն ոչ բաղկացուցանեն զեօթն զանազանս խորհուրդս, այլ միայն զմին ամբողջ խորհուրդ ։ Քանզի խորհուրդք եկեղեցւոյ են միայն եօթն, և ոչ առաւելք ։ Նաև աստիճանք են միայն եօթն, և ոչ առաւելք ։ Վասնզի եպիսկոպոսութիւն ոչ է զանազան կարգ, այլ է տարածումն քահանայականի կարգի ։ Պաշտօն եպիսկոպոսի է առնել զամս իրս, զորս առնէ քահանայն, և զայլս բազումս, զորօրինակ, դրոշմել, ձեռնադրել զքահանայս, զբազումս օրհնութիւնս յատուկս եպիսկոպոսի կատարել․ և զհօտն իւր կառավարել ։ Պաշտօնն պապի է առնել զհամայնս իրս, զորս առնէ եպիս-

կոչման , և զայլս բազումս , զոր օրինակ , ձեռնադրել զեպիսկոպոսս , համակոչել զժողովս , դնել զընդհանրականս օրէնս , և կառավարել զբոլոր եկեղեցին :

6. Ընծայական կարգի է այր մարդ մկրտեցեալ : Խնդրի , զի իցէ մկրտեցեալ , վասնզի մկրտութիւն , որ է դուռն այլոց խորհրդոց , մարդն լինի ընդունակ այլոց խորհրդոց : Խնդրի , զի իցէ արու , քանզի էգն է անըմբռն , և էգարուն , յորում զօրէ իգական սեռն : Զի օրինաբար ընդունիցի , խնդրի , զի ընդունողն իցէ 'ի շնորհի , զի է խորհուրդ կենդանեաց : Ըստ իրաւանց եկեղեցւոյ բազումք իրք խնդրին : Խնդրի զի ընդունողն ոչ իցէ դեռահասակ , կամ վատահամբաւ , կամ էգարու , կամ տարակարգ , արգելեցեալ , և նզովեցեալ . վասնզի իրաւունք արգելուն զայսպիսւոյ կարգաւորութիւն : Խնդրի կղերիկոսական ոգի ; զի լինիցի բարի եկեղեցական : Խնդրի , զի իցէ դրոշմեցեալ , զի մասնաւորակերպիւ ունիցի զհոգին ս͞բ : Խնդրի , զի ձեռնադրելին ունիցի զնամակս յատկի եպիսկոպոսի , թէ ծննդեան , թէ բարեբարութեան , թէ բնակութեան , զի մի լինիցի պատրան : Խնդրի , զի ձեռնադրելին քննիցի առաջի եպիսկոպոսի շուրջ զհարկաւորաւ գիտութիւն առ վարումն իւրաքանչիւրոյ աստիճանի , զի մի տգէտն , և անըմբռնն ձեռնադրիցի : Վասն առաջնոյ խուզման խնդրի , զի ձեռնադրելիք գիտիցեն զսկզբունս հաւատոյ , գիտիցեն ընթեռնուլ , և գրել , և իցեն այնպիսիք , զորոց իցէ հաւանական ենթադատումն , թէ ընտրեալք իցեն զկղերիկոսութիւն , ոչ 'ի յաշխարհականէ դատողութենէ նենգութեան փախչելոյ , այլ զի զհաւատարիմ պաշտօն մատուցանիցեն ա͞յ : Վասն փոքրագունից աստիճանաց խնդրի . զի գիտիցեն զգլխաւորական լեզուն : Վասն կիսասարկաւագութեան . և սարկաւագութեան խնդրի , զի ունիցին զճանաչումն այնոցիկ իրաց , որք պատկանին առ այնոսիկ աստիճանս . Եւ վասն քահանայութեան խնդրի , զի կարիցեն ուսուցանել ժողովրդեան զիրս հարկաւորս առ փրկութիւն , և մատակարարել զխորհուրդս :

7. Խնդրի , զի պահիցի կարգն 'ի մէջ ընկալման միոյ , և միւսոյ , զի նախ ընկալեալք լինիցին չորք աստիճանք հանդերձ կարգաւ , յետոյ մեծագոյնք աստիճանք հանդերձ կարգաւ , զի մի լինիցի անդրաշրջումն : Եպիսկոպոսութիւն ընկալեալ նախ քան զքահանայութիւն , է հաստատ . վասնզի ոչ է զանազան կարգ , այլ է տարածումն քահանայութեան : Խնդրի ժամանակ , զի փոքրագոյնք աստիճանք կարիցեն տրիլ յիւրաքանչիւրում աւուր կիւրակէի , կամ յայնպիսւոջ տօնի , որ 'ի պատուիրանէ եկեղեցւոյ տօնախմբիցի նաև 'ի հրապարակի , և 'ի յընդունեցելոյ սովորութենէ եպիսկոպոսաց , նաև յաւուր ուրբաթի յերեկոյեան ժամու նախքան զօր շաբաթու , յորում համայնք աստիճանք օրինաբար կարեն տրիլ . իսկ մեծագոյնք 'ի յաւուրս շաբաթուց չորից եղանակաց , և յաւուր կիւրակէի շարչարանաց , և ս͞բոյ շաբաթու : Խնդրին միջարկութիւնք ժամանակաց , զի ձեռնադրեցեալք կրթիցեն զիւրեանս ինքեանս յընդունեցելոյ աստիճանի նախ քան զընկալումն միւսոյ իւրք ժամանակաւ : Ուստի մեծագոյնք ոչ կարեն տրիլ եթէ ոչ յետ միոյ ամի 'ի յընդունելմանէ միւսոյ : Յայսմիկ եպիսկոպոսն վասն հարկաւորութեան , կամ վասն օգտակարութեան եկեղեցւոյ կարէ տնօրինել : Երկու մեծագոյնք աստիճանք ոչ կարեն տրիլ 'ի նոյնում աւուր , եթէ ոչ 'ի հրամանէ պապի . իսկ ա͞մք փոքրագոյնք , տնօրինութիւն եպիսկոպոսի , կարեն տրիլ 'ի նոյնում աւուր . և եթէ իցէ սովորութիւն , 'ի միասին ընդ կիսասարկաւագութեան : Խնդրի տեղի , զի վայելչաբար տրիցին : Ուստի վասն հանդիսաւորի կարգաւորութեան , խնդրի եկեղեցի . վասն առանձնակա-

նի

նի կարգաւորէութեան , խնդրի խորան , կամ մատուռն ։ Վերջապէս խնդրի հասակ ․ յորում ամօրաբար եպիսկոպոսն ոչ կարէ անօրինել ։ Խնդրի հասակ , զի պաշտօնն կարգի վայելչաբար լինիցի ։ Ուստի վասն առաջնոյ խուզման , և վասն փոքրագունից աստիճանաց խնդրի գոնեայ աւարտումն եօթնից ամաց ։ Վասն ջահընկալութեան խնդրի աւարտումն երկոտասանից ամաց ։ Վասն կիսասարկաւագութեան սկսումն քսանից և երկուց ամաց , վասն սարկաւագութեան քսանից և երից ամաց․ վասն քահանայութեան քսանից և հնգից ամաց․ ամենեքին սկսեցեալք․ և վասն եպիսկոպոսութեան աւարտումն երեսնից ամաց ։

8. Պաշտօնեայն կարգի է եպիսկոպոսն ։ Քանզի եպիսկոպոսաց, միջորդաց առաքելոց պատկանի ձեռնադրել զպաշտօնեայս խորանի , և զքահանայս , առ 'ի մատակարարել զհաղորդութի ։ 'Ի յեպիսկոպոսոջ խնդրի դիտաւորութի առ հաստատութի , վասնզի դիտաւորաւին է հարկաւոր առ հաստատութի խորհրդոյ ։ Զի օրինաբար տայցէ , խնդրի , զի իցէ 'ի շնորհի ․ վասնզի մեք իբք որբաբար ընծեռելիք են ։ Խնդրի , զի մի իցէ արգելեցեալ , զի առնիցէ զձեռնադրութի 'ի նահանգոջ իւրում , և զի պահիցէ զմն իւր , զոր հրամայէ մեր մայր եկեղեցին․ քանզի պարտի առաջնալ ըստ իրաւանց եկեղեցւոյ ։ Կարգն ներատպէ զանջնջելի կնիք․ վասնզի ձեռնադրեցեալք նշանաւորին պաշտօնեայք խորանի ։ Ուստի ձեռնադրեցեալն ոչ կարէ վերստին ձեռնադրիլ․ վասնզի նշանաւորեցեալ է անջնջելեաւ կնքաւ ։ Կարգն շարաբերէ զորբացուցիչ շնորհ ․ քանզի զմ խորհուրդ նորոյ օրինի շարաբերէ զշնորհ ։ Շնորհն կարգի օգնէ ձեռնադրեցելոյ , զի քերկրելաբար 'ի կիրարկանիցէ զպաշտօն աստիճանի իւրոյ , և յաղթիցէ զամ դժուարութի ինքեան հանդիպողն , և դիպողն ։ Վասնզի շնորհն կարգի , օրինաբար , և հանդերձ պարտաւորաւ տրամադրութե զմերձեցօղն , ոչ միայն սրբացուցանէ , այլ նաև օգնէ նմա ։ Լուր ո՛վ քահանայ զՅօհան ոսկեբերանն , որ խօսի զքէն ։ Քահանայն պարտի գոլ իմաստնագունեղ , և սրատես յամուլ իրի , և որպէս սաի , ունեցօղ զհաղարս ակունս յամէ կողմանէ․ վասնզի որպէս նա որ ոչ միայն կեայ իւրեան ինքեան , այլ նաև ժողովրդեան ։ Յաղագս արժանապատուութե քահանայի ։ Ուրեմն ով քահանայ , որ ոչ միայն քեզ , այլ նաև կեաս ժողովրդեան , այնպէս կեաց , և զպաշտօն քո 'ի կիր արկ , զի և զքեզ , և զքեզ յանձնեցեալս , կարիցես ածել յերկինս ։

## ԳԼՈՒԽ ։ ՂԳ․

### Յաղագս ամուսնութեան ։

1. Ամուսնութիւն է խորհուրդ , կացուցեալ առ անքակտելի ընկերակցութի առն ընդ կնոջ ։ Արդուրեմն է խորհուրդ 'ի մէջ մկրտեցելոց , որով այրն , և կինն փոխաբերաբար օրինաբար միմեանց տան զմարմինս իւրեանց առ մշտնջենաւոր ընկերակցութի կենի ։ Առ էութի ամուսնութե այս վաղձանս բաւ է ։ Սակայն կարեն ամուսնացօղք ունել և զայլս օրինաւորս վաղձանս , այսինքն , առ որդէծնութի , և առ դեղ ցանկութե ։ Հեռաւոր նիւթն այոր խորհրդոյ են մարմինք առն , և կնոջ ։ Իսկ մերձաւոր նիւթն է փոխաբերական համահաւանութի առն , և կնոջ , ունեցօղ զբան աւանդման ։ Բայց տեսակն այսր խորհրդոյ է փոխաբերական համահաւանութի նոցա , այսինքն , առն , և կնոջ , ունեցօղ զբան ընդունելման կամ այսպէս ։ Հեռաւոր նիւթն , են մարմինք առն , և կնոջ ։ Մերձաւոր նիւթն փոխաբերական առ‿

անդումն մարմնոց : Իսկ տեսակն
փոխաբերական ունկալումն : Է-
ութի ամուսնութեան կայանայ 'ի փո-
խաբերական աւանդութեն , և
'ի փոխաբերական ընդունեցման
մարմնոց : Պաշտօնեայք այսր խոր-
հրդոյ են ինքեանք ամուսնացօղք ,
այսինքն , այրն , և կինն , և ոչ
քահանայն : Վասնզի ինքեանք ա-
մուսնացօղք դնեն զնիւթն , և
զտեսակն , այսինքն , զաւանդումն ,
և զընդունեցումն մարմնոց առ մի-
տնջենաւոր ընկերակցութի : Ամուս-
նութիւն դաշնակցեցեալն թարց
զուգակցութեան մարմնոց , ասի հաս-
տատեալ . իսկ արարեցելոյ զուգա-
կցութեն մարմնոց , ասի կատարեալ :

2. Առ ամուսնութիւն յառաջէ
նշանադրութի : Ուստի ասելի է իր
ինչ զնշանադրութէ : Նշանադրու-
թիւն է փոխաբերական խոստումն
առն , և կնոջ կամաւոր , և խոր-
հրդածեցեալ , զգալի նշանաւ բա-
ցադրեցեալ , ապագայի ամուսնու-
թեն 'ի մէջ անձանց ըստ իրաւանց
ընդունակաց : Առ նշանադրութի խն-
դրի խոստումն , քանզի խոստմամբ
լինի պարտաւորութի : Խոստումն
այս է առն և կնոջ , վասնզի 'ի
մէջ առն և կնոջ կարէ լինել ամուս-
նութի : Խոստումն այս ասի փո-
խաբերական , քանզի է խոստումն
երկաքանչիւրոյ , և առն , և կնոջ .
կամաւոր , վասնզի պարտի լինել
թարց բռնութե . և խորհրդածե-
ցեալ , քանզի պարտի լինել խորհե-
լաբար : Ասի զգալի նշանաւ բա-
ցադրեցեալ , վասնզի պարտի ճա-
նաչել : Ասի ապագայի ամուսնու-
թե , քանզի է խոստումն զապագայէ :
Ասի 'ի մէջ անձանց ընդունակաց , վա-
զի պարտին գոլ այնպիսիք , որք կա-
րիցեն խոստանալ : Ուստի խնդրի
բաւական հասակ , այսինքն , որ
իցէ բաւական առ մահուչափ մեղս :
Եւ պարտին գոլ այնպիսիք , որոց
ոչ իցէ արգելեցեալ այսպիսի դաշ-
նակցութի : Նշանադրութիւն ընդ
այլում անձին , յետ նշանադրու-
թե արարեցելոյն , է անհաստատ ,
վասնզի մինչ առաջինն է հաստատ ,
երկրորդն ոչ կարէ գոլ հաստատ :
Սակայն ամուսնութիւն , յետ նշա-
նադրութե , ընդ այլում անձին
դաշնակցեալն հաստատ է , քանզի
ամուսնութիւն է մեծագոյն քան
զնշանադրութիւն : Սակայն առնօղն
զամուսնութի յետ նշանադրութե
ընդ այլում անձին , մեղանչէ , քան-
զի առնէ զանիրաւութի անձին ,
ընդ որում արարեցեալ էր նշանա-
դրութի : Կարեն լինել հրամանա-
տուութբ , վասնզի , որք կարեն
խոստանալ նոցա ինքեամբք , կարեն
խոստանալ 'ի ձեռն այլոց :

3. Նշանադրութիւն պարտա-
ւորէ առ 'ի կատարել զամուսնու-
թիւն ենթ ծանու մեղաց . քանզի
խոստումն 'ի ծանու իրի , ենթ ծա-
նու պարտաւորէ : Ուստի հաստա-
նօղք առ վաղճան սեւեռեցեալ ,
պարտաւանդին կատարել զխոստումն ,
մինչ բանաւորաբար պահանջի կա-
տարումն խոստման : Դաշնակցօղք
զնշանադրութի պարտին ծանուցա-
նել զայս ծնողաց իւրոց : Քանզի
'ի յայնքանում իրողութե պարտին
պատուել զծնօղս իւրս : Որք պսա-
կին յետ նշանադրութե դաշնակ-
ցեցելոյ , պարտաւանդին բացա-
յայտել զայս 'ի խոստովանութե .
վասնզի շուրջ զիրաւ այլում խոս-
տացելով առնեն զանհաւատարմու-
թի : Նշանադրութիւն կարէ լու-
ծանիլ յոմանս դիպուածս . քանզի
ոչ է անքակտելի : Ուստի լուծա-
նի հաստատանով ամուսնութբ ընդ
այլում արարեցելով . փոխաբերա-
կանաւ համահաւանութբ . անկար-
ծահասի արգելմամբ , որ խափա-
նէ զամուսնութիւն : Գարշելեաւ-
յանցանաւ , որպէս է պոռնկութիւն .
հերետիկոսութիւն , ծանր դողու-
թիւն , մարդասպանութիւն , և
նմանք մեղք , որք ծնանին զծանր
վնաս , կամ զչարահամբաւութի .
նշանաւորաւ փոփոխմամբ պատահօ-
ղաւ , կամ յայտնեցելով , որ եթէ
իցէր ճանաչեցեալ , արգելեալ իցէր
զդաշնակցութիւն , որպէս է խեղու-
թիւն , մոլեգնութիւն , և նմանք
սոցին . գնալմամբ միւոյն 'ի հե-

ռաւոր

ուսոր երկիր , և զասա թարց հրամանի ընկալեալ ոպաղանի կարգի , կամ մոմամբ 'ի կրօն , և 'ի ձեռն նմանաց իրաց յայտնապէս ցուցելոց . այսպիսի բաւականացին զնշանագրութիւն , որ յառաջէ զամուսնութիւն . դարձցուք առ ամուսնութիւն , որ է զներկայն ; և յորում այրն , և կինն փոխաբերականաւ համաձայնութեամբ արտաքնովք նշանօք բացայայտեցելով , տան զմարմինս իւրս առ մշտնջենաւոր ընկերակցութիւն կենի . այսինքն , մինչև 'ի մահ . առ ամուսնութիւն , որ է խորհուրդ , և որոյ ենթակայն , և պաշտօնեայքն են այրն , և կինն մկրտեցեալք :

4. Զուգակցական ներգործութիւն , որով վարին ամուսնացեալք առ պարտաւոր վախճան , պարտաւորաւ կերպիւ , 'ի յարմարում տեղւոջ , և ժամանակի , է օրինաւոր . քանզի ասէ առաքեալն : Կնոջ այր իւր զպարտն հատուսցէ . նոյնպէս և կին առն իւրում : Զի կին մարմնոյ իւրում ոչ իշխէ , այլ այրն . նոյնպէս և այր իւրում մարմնոյ ոչ իշխէ , այլ կինն . մի զրկէք զմիմեանս . բայց եթէ 'ի միաբանութենէ առ ժամանակ մի , զի ուխտիցն պարապիցէք . և դարձեալ 'ի նոյնս դարձջիք , զի մի փորձեսցէ զձեզ սատանայ վասն անխառնութեան ձերոյ : Առ . Կորն . 7 . թիւ . 3 . Դարձեալ , դիտեցեալ վախճանն է բարի , և է օրինաւոր , այսինքն . ծնանումն զաւակի . ուրեմն և վարումն ամուսնութեան է օրինաւոր . որ է միջոց ածող առ ասացեալ վախճան : Զուգակցեալք ոչ պարտաւորին առ վարումն ամուսնութեան . վասնզի ոչ պարտաւորին վարիլ իրաւամբ իւրով : Ուստի կարեն թարց վարման ամուսնութեան 'ի փոխաբերականէ համաձայնութենէ ողջախոհիւ ընկերակցութեամբ կեալ 'ի միասին : Սակայն եթէ մին 'ի միւսոյ յայտնապէս , կամ լռաբար պահանջիցէ զպարտն , ըստ ինքեան ի յարդարութենէ պարտաւորին միմեանց հատուցանել զպարտն : Ուստի պա- բաւանդին առ համբերութիւն , զի զպարտն , մինչ խնդրիցեն , կարիցեն հատուցանել : Որ յետ կատարման ամուսնութեան , ուխտեաց զողջախոհութիւն , ոչ կարէ խնդրել , սակայն պարտաւորի խնդրողի հատուցանել զպարտն : Եթէ երկոքեանք ուխտեցին զողջախոհութիւն 'ի փոխաբերականէ համաձայնութենէ , երկաքանչիւրն ոչ կարէ խնդրել զպարտն : Որ այնպէս մեղաւ , զի ոչ կարիցէ խնդրել զպարտն , զորօրինակ , քանզի ճանաչեաց զմայրն , կամ զքոյրն կնոջ , անմեղի խնդրողի զպարտն . պարտաւորի հատուցանել :

5. Ամուսնութիւն ոչ կատարեցեալն , եթէ զուգակցեալք կամիցին մտանել 'ի կրօն ներ ժամանակոջ յեկեղեցւոյ սահմանադրելոյ , տայ զտեղի կրօնի : Իսկ ամուսնութիւն կատարեցեալն ոչ իւիք պատահմամբ լուծանիլ կարէ որքան առ կապակցութիւն , մինչ երկաքանչիւրն է կենդանի . վասնզի տրն մեր քս , բարձրացուցեալ զամուսնութիւն առ արժանապատուութիւն խորհրդոյ ; արար զնա ամենևին անքակտելի որքան առ կապակցութիւն , մինչ կենդանիք են երկաքանչիւրք զուգակցեալք . և հրամայեաց զհամալծութիւն միոյ ընդ միոյն : Եղև նաև ներկայ հարսանեաց , և ներկայութեամբ իւրով օրհնեաց զամուսնութիւն : Ուստի ասէ 'ի յաւետարանոջ : Չիցէ ընթերցեալ ձեր , թէ որ հաստատեացն 'ի սկզբանէ արու , և էգ արար զնոսա , և ասէ : Վասն այսորիկ թողցէ այր զհայր , և զմայր . և երթիցէ զհետ կնոջ իւրոյ , և եղիցին երկոքեան ի մարմին մի : Ապա ուրեմն ոչ են երկու այլ մի մարմին . արդ զոր ած զուգեաց , մարդ մի մեկնեսցէ : Մատթ . 19 . թիւ . 4 . Ուրեմն ամուսնութիւն քրիստոնէից է խորհուրդ կենդանեաց , առ որ մերձեցողք պարտին գոլ 'ի շնորհի , շարաբերող զշնորհ , ոչ միայն հանդերձ պարտաւորաւ տրամադրութեամբ մերձեցողս սրբացուցանող . այլ նաև վասն անքակտելութեան կապակցութեան , և

և եղականութեան միոյ ընդ միոյն · պարգևօղ զամենայնիւ ընկերակցութի , զանուշագունեղ բարեկամութի , զընտանեկական խաղաղութի , զպղեղանի ցանկութեան , զամուսնական ողջախոհութի , զանդրադարձական սէր , զանդրադարձական հաւատարմութի , և զքաջալերութի առ 'ի քաղցրաբար տանելոյ զընտանեկան բեռն ։

6. Հրաժարումն , կամ որոշումն որքան առ անկողին վասն բանականագունեղից պատճառաց կարէ լինել , և որքան առ համբնակութի , առ ժամանակ , կամ մշտնջենաւորապէս · քանզի ընդ այսու կարէ կալ կապակցութի ամուսնութեան ։ Պատճառն պարտի գոլ արդար , և կարի ծանր , զորօրինակ , մեղադրելի չնութի կողակցի , խելագարութին , որ սպառնայ զմահ , կամ պատրաստէ զթոյն , առիթումն առ հերետիկոսութի , առ կախարդութի , հերետիկոսութի յետ ամուսնութեան , և անդրադարձական համահաւանութի, որով համահաւանին , զի կինն մտանիցէ 'ի կրօնս , և այրն ընկալցի զսրբազան կարգ , կամ թէ զի երկոքեան մտանիցեն 'ի կրօնս ։ Որքան առ կապակցութի ասէ սբն Պօղոս ։ Այլ կանամբեաց պատուիրեմ , ոչ ես , այլ տրն , կնոջ յառնէ մի մեկնիլ ։ Ապա եթէ մեկնեսցի , անայր մնասցէ , կամ անդրէն ընդ առն իւրում հաշտեսցի · և առն զկին իւր մի թողուլ ։ Կորընթ. 7. 10. 'Ի մեռանելն զուգակցի լուծանի ամուսնութիւն ։ Քանզի ասէ սբն Պօղոս ։ Կին առնակին 'ի կենդանի այր իւր կապեալ կայ օրինօք · իսկ եթէ մեռցի այրն , արձակեալ է յօրինաց առնն ։ Ապաուրեմն մինչ կենդանի է այրն , շուն կոչի եթէ լինիցի ընդ առն այլում , և եթէ մեռանիցի այրն , ազատ է յօրինացն , չհամարեալ շուն , եթէ լինիցի ընդ առն այլում ։ Հռովմ. 7. 2. Կինն հետևիլ պարտի առն առ համաբնակութի · քանզի այրն է գլուխ գերդաստանի , և կնոջ ։ Եւ կինն պարտի հետևիլ առն ։

7. Գոն արգելմունք , որք արգելուն զամուսնութիւն , այլ ոչ խափանեն , և են այսոքիկ , որք հետևին · մահուչափ մեղն , նզովս , արգելումն արարեցեալ վասն երկբայութեան արգելման , կամ անըմբռնութի 'ի մէջ զուգակցելեաց , ժամանակ աւուրց որ սկսանի 'ի գալստենէ տն մինչև առ յայտնութի ներփակելաբար · և 'ի յօրէ մոխրոյ մինչև առ ութերորդ օրն զատկի ներփակելաբար , պատասխանատուութի վասն երեխայի , յորժամ կատարին արարողութիք յետ մկրտութեան շարաբերեցելոյ 'ի հարկաւորութեան , յանցան , զորօրինակ , ագդապղծութի ընդ արենակցի կողակցի յառաջնում, կամ յերկրորդում աստիճանի , դիտելաբար գործեցեալ , և այլք բազումք · նշանադրութի արարեցեալ ընդ ումեք , պարզ ուխտ ողջախոհութեան , բացաթողումն օրհնութեան , դաշնակցութի ամուսնութեան թարց նախ ընթացից հրատարակութեց , և զանխլութի , ուր թրիտենթինոյ սբ ժողովն ոչ է ընկալեալ ։ Են այլք արգելմունք , որք խափանեն զամուսնութիւն , և են այսոքիկ , սխալումն անձին , կացութի ծառայական , որպէս եթէ ազատ մարդն անգիտաբար ամուսնանայցէ ընդ աղախնոյ · հանդիսաւոր ուխտն ողջախոհութեան ընկալմամբ սրբազանի կարգի , կամ հանդիսաւորաւ ուխտադրութեան արարեցելով 'ի կրօնի ընդունեցելոյ · օրինաւոր ազգականութի 'ի կատարեալ որդեգրութեան , հոգևոր ազգականութի 'ի յեկեղեցականէ իրաւանէ , և ազգականութի արենակցութեան մինչև առ չորրորդ աստիճանն ։ յանցան մարդասպանութեան զուգակցի վասն վաղճանի ամուսնութեան , յանցանն շնութեան մինչ կենդանի է զուգակիցն , առ վաղճան ամուսնանութեան յետ մահուան զուգակցի , և յանցանն յափշտակութեան պատճառաւ ամուսնութեան ։ Զանազանութի կրօնի մկրտեցելոյ , և ոչ մկրտեցելոյ · բռնութիւն , և ծանր երկիւղն , անիրաւաբար ներհարեցեալ ։

8. Ամազան ,,

8. Սէգաղան, և մեծագոյն աստիճան, որպէս կիսասարկաւագութի, սարկաւագութին, և քահանայութին. կապակցութին ընդ ամուսնոյ տակաւին կենդանւոյ: Արդարութի հրապարակական համբաւութե, որ արգելու զամուսնութին ընդ արենակցի նորա, ընդ որում դաշնակցեցեալ էր նշանադրութի, կամ հաստատեցեալ ամուսնութին, հասակն, այսինքն առն չորեքտասան ամ լցեալ, իսկ կնոջ երկոտասան ամ լցեալ: Անդամալուծութի, և խնամութի, ծնեալ ՚ի մարմնաւորէ զուգակցութե: Զանխլութի, քանզի լինի ամուսնութին թարց ատենիցս, և թարց երկուց վկայից: Եւ մշտնջենաւոր անկարութի, յառաջօղ զամուսնութե: Սակայն ՚ի յամանս արգելմունս խափանօղս, կարէ լինել առօրինումն. իսկ ՚ի յամանս ոչ: Քանզի ՚ի յարգելմունս իրաւամբ բնութե, կամ աստուածային խափանօղս ոչ կարէ լինել առօրինումն. վասնզի իրաւունքն բնութե, և իրաւունքն աստուածային ոչ ենթարկին իշխանութե մարդոյ: Իսկ ՚ի յարգելմունս իրաւամբ եկեղեցականաւ խափանօղս, կարէ լինել առօրինումն ՚ի պապէ. վասնզի պապն որ կարէ ներածել զարգելմունս եկեղեցականս, այսպէս նաև կարէ բառնալ, և արդարև ինքն միայն: Քանզի պապն միայն ունի զիշխանութի ՚ի հասարակ իրաւունս: ՚Ի մէջ ամուսնացելոց այս միջոցել պարտի: Այրն պարտի սիրել զկին իւր: Կինն պարտի դոլ ենթարկեալ առն, որպէս պիտոյ է ՚ի տէր: Այրն պարտի տալ զհեր իւր միայնում կնոջ իւրում, և կինն միայնում առն իւրում: Երկաքանչիւրն պարտի դոլ հաւատարիմ ՚ի յօրինի, և ՚ի յիրաւանց ամուսնութե: Եւ յայնժամ լիցի աներկբայապէս քաղցրացուցանեղ ընկերակցութի ՚ի մէջ առն, և կնոջ:

# ԳԼՈՒԽ ՂԳ.

## Յաղագս կուսութեան:

1. Ողջախոհութին ամենասիրելի առաքինութի, է եռապատիկ, զուգակցական, այրիական, և կուսական: Զուգակցականն է բարի, և օգտակարագունեղ, որ համապահէ զտեսակ մարդկային, և տանայ այ զուստերս, և զդստերս քրիստոնեայս: Այրիական ողջախոհութին է լաւագոյն, որ թողու զերկիրորդս հարսանիս, և փարի յետ ամուսնութե զխստալի կենսիւ: Բայց կուսական ողջախոհութին է ամենաբարի, և զարմանալագունեղ, առծօղ զհրեշտակային կեանս, և զողջախոհ կոյսն, առնօղ նման քի և մարիամու: Զուգակցական ողջախոհութին է բարի նուէր, որ հրաժարի ՚ի յապօրինաւորաց հեշտութեանց, այրիական ողջախոհութին է լաւագոյն նուէր, որ հրաժարի նաև ՚ի յօրինաւորաց հեշտութեանց. բայց կուսական ողջախոհութին է ամենաբարի ողջակէզ, որ հրաժարի յամենից հեշտութեանց ՚ի բոլորոջ կենի: Զուգակցական ողջախոհութին, ՚ի յառաքինութե ողջախոհութե է երկիր բարի, որ բերէ զպտուղ երեսնաւոր: Իսկ այրիական ողջախոհութին, ՚ի յառաքինութե ողջախոհութե է երկիր լաւագոյն, որ բերէ զպտուղ վաթսնաւոր. բայց կուսական ողջախոհութին, ՚ի յառաքինութե ողջախոհութե, է ամենաբարի, պտղաբերագունեղ, և ամենացանկալի երկիր, որ բերէ զպտուղ հարիւրաւոր:

2. Արդարև զուգակցական ողջախոհութին է բարի վասնզի ած որ ետեղծ զմարդն առ պատկեր իւր, արու, և էգ ետեղծ զնս, և զու‿

զուգակցեաց զնոսա անբաժանելաբար ։ Ուստի ամուսնութիւն է բարի, և համաձայնապէս զուգակցական ողջախոհութիւն է բարի ։ Բարի է զուգակցական ողջախոհութիւն, քանզի յամուսն իւրի է պատուելի ամուսնութիւն, և պատուելի է անարատ անկողինն ։ Ուստի շնորհի մարդոյ առնուլ զկին, եթէ կամիցի, և կնոջ առնուլ զայր ։ Բարի գործ է տալ զդուստր մարդոյ խելամտի ։ Ողջախոհ, և խոհեմ կինն է 'ի տեառնէ, և բարի կինն է ժառանգութիւն մարդոյ, և է օգնական, և սիւն ըստ ածայնոյ բարբառոյ ։ Վասն բարութեան ամուսնութեան հրամայէին արք սիրել զկանայս իւրեանց որպէս զյատուկս մարմինս. և որպէս քս սիրեաց զեկեղեցին, և զիւր ինքն մատնեաց վասն նորա ։ Ուստի որ զկին իւր սիրէ, սիրէ զիւր ինքն ըստ սբոյն Պօղոսի ։ Աստի է, թէ որք արգելուն զամուսնութիւն, 'ի յառաքելոյն կոչին հեռացօղք 'ի հաւատոյ, պարապօղք ոգեաց մոլորութեան, և վարդապետութեանց դիւաց, խօսօղք զստուտ 'ի կեղծաւորութեան, և ունեցօղք զխղճմտանն խարանով նշանաւորեալ ։ Ամուսնութիւն է բարի, վասնզի կացուցեալ է 'ի Այ, և բարձրացուցեալ է 'ի քէ առ արժանապատուութիւն խորհրդոյ ։ Եւ է մեծ խորհուրդ, որ նշանակէ զմիաւորութիւն քի փրկչի աշխարհի ընդ սբոյ եկեղեցւոյ, սիրելագունեղի հարսի նորա ։

3. Զուգակցական ողջախոհութիւն է գովելի ։ Բայց այրիականն գովելագոյն. քանզի գրէ առաքեալն, վարդապետն հեթանոսաց սբն Պօղոս ։ Բայց ամուրեացն, և այրեացն ասեմ, լաւ է նոցա, եթէ կայցեն իբրև զիս ։ 1. կորընթ. 7, թիւ. 8. Նոյն առաքեալն ուսուցանէ, և ասէ ։ Կին կապեալ է օրինի, ցորքան ժամանակ կենդանի է այր նորա, ապա եթէ ննջիցէ այր նորա, ազատ է. ում կամիցի ամուսնասցի. բայց միայն տէ ։ Բայց երանելի ևս է, թէ այնպէս կայցէ ըստ իմում խրատու. առաջ. կորթ. 7. թիւ. 39. Երանելի լիցի, քանզի ազատեսցի 'ի զբաղմանց, և 'ի հոգաբարձութեանց մեծաց, որք հանդիպեսցին նմա 'ի յերկրորդայ հարսանեաց ։ Դարձեալ, երանեգոյն լիցի, վասնզի մնասցէ ազատ 'ի լծոյ երկրորդի առն ։ Տակաւին երանելագոյն եղիցի, վասնզի ըմբռնագոյն, և դիւրագոյն կարասցէ պարապիլ աղօթից, կրթութեանց ջերմեռանդութեան, և գործոց բարեպաշտութեան ։ Տակաւին երանելագոյն եղիցի, վասնզի գոլով մարմնով 'ի յերկրի, միօք, խոկմամբ, և մտածմամբ յաւիտենականաց իրաց կենցաղավարելով 'ի յերկինս. թողլով զերկրայինս, փափագելով երկնայնոց, անգոսնելով զունայնս, խնդրելով զճշմարիտս, և զմնացականս բարիս, անփոյթ առնելով զաշխարհայինս, հառաչելով հոգևորաց, հրաժարելով 'ի բերկրութեանց, ձնշելով զանդամս, մեռանելով զմարմինն, հնազանդելով, հպատակելով ոգւոյ, հաւաքեսցէ զփարթամութիւս, և գանձեսցէ 'ի յերկինս ։ Վերջապէս երանելագոյն լիցի. քանզի հեռանալով 'ի բերկրութեանց, և 'ի հեշտութեանց մարմնոյ վասն սիրոյն այ, կալցի զմեծագոյն արդիւն 'ի յերկինս.

4. Այրիական ողջախոհութիւն է գովելագոյն, բայց կուսականն է գովելագունեղ. վասնզի որ է թարց կնոջ հոգայ զտն, թէ որպէս հաճոյ լիցի տն, և որ կանամբին է, հոգայ զաշխարհի, թէ որպէս հաճոյ լիցի կնոջ իւրում. և ահա մեկնեցան 'ի միմեանց, Առնակինն, և կոյսն. զի կոյսն հոգայ զտն, զի իցէ սբ հոգւով, և մարմնով. և առնակինն հոգայ զաշխարհիս, թէ որպէս հաճոյ լիցի առն իւրում ։ Եւ այս է առ օգուտ մարդոյ, և կարի յոյժ, և բոլորովիմբ է համեստ, և տայ զհպատակութիւն թարց արգելման աղօթելոյ առ Տր ։ Կինն, որ ամուսնանայ, և մնայ 'ի յաշխարհի վասն ծնանելոյ զզաւակ կարի լաւ առնէ. բայց այլին, որ ոչ

անցանէ առ երկրորդ հարսանիսն , այլ յետ մահուան առն , ընտրէ զայրիական ողջախոհութի , և 'ի բերկրութեց , և 'ի հեշտութեց հեռանայ 'ի մնացորդի կենի իւրոյ. լուսագոյն առնէ , և զլուսագոյն , և զգովելագոյն կեան ածէ յայսմիկ մահկանացուէս կենում : Ուրեմն կոյսն , որ նաև ոչ կամի զառաջինն հարսանիս , այլ հրաժարելով յամեից մարմնաւորաց , և զգալեաց հեշտութեց , ընտրէ զկուսական ողջախոհութի , և 'ի բոլորում կենի փարի զհրեշտակայնով մաքրութբ , և ձնշելով զանդամս , սանձելով զզգայութիս , 'ի տուընջեան , և 'ի գիշերի քաջալէս մարտնչելով ընդդէմ զգայութենականութե , և ցանկութե մարմնոյ , և սանձահարելով զանողորմ ախտն , ածէ զզարմանալի կեան , լուսաւունեզակէս առնէ :

5. Կուսութին է առաքինութի , որ հրաժարեալ յամեից բերկրութեց , ոչ միայն 'ի յապօրինաւորաց , այլ նաև յամեից օրինաւորաց , և արդարև 'ի բոլորում կենի , պահէ անարատ զշուշանն հրեշտակայնոյ մաքրութե , և մատուցանէ զնոյն այ 'ի յողջակէզ : Կոյսն յանձնառնու զդժուար , և զհանապազորդական մարտ : Մարտս այս է կարի յոյժ դժուար . վասնզի մեծ է խայթումն մարմնոյ : Եւ յարաժամ է մարտս այս . քանզի 'ի տուէ, և 'ի գիշերի խայթն մարմնոյ նեղէ զկոյսն : Ուստի յաղթութին կուսի է մեծ , և արժանի զարմացման : Կոյսն 'ի մարմնոջ տկարի , ածէ զհրեշտակային կեան : Կոյսն է հզօր, զի յաղթէ զանյաղթ թշնամին : Յաղթանակն կուսի է փառաւոր , վնզի կարի մեծ է յաղթութի նր : Կոյսն է սիրելի մարիամու , թագուհւոյ ամից կուսանաց : Քանզի մինչ ամ նման սիրէ զնմանն ինքեան , և ողջախոհ կոյսն է նման մարիամու , մաքուր , և ողջախոհ կոյսն , է սիրելի մարիամու : Սիրելի է և քի , 'ի կուսականէ արգանդէ ծնեցելոյ : Քանզի որ սիրէ զկուսական արդանտ , սիրէ նաև զմաքուր կոյսն . Արդար դատաւորն քս , որ պսակէ զտաժանական , և զդժուար գործն , պսակեսցէ զկոյսն , զմաքրութի իւր նմա տուողի , և նուէրողի : Եւ որ պսակէ զմարտիրոսն , վասն սիրոյ իւրոյ , զչարչարանս , և զմահն կրողն , պսակեսցէ նաև զկոյսն , զմաքրութի իւր նմա նուէրողն : Եւ որ պսակէ զպղնիւ յաղթօղն , պսակեսցէ նաև զյաղթութի կուսի : Ուրեմն կոյսն 'ի յերկնի , 'ի քնէ փեսայէ իւրմէ , ընկալցի զմանաւոր պսակ յաղթութե իւրոյ :

6. Զսիրելութի կուսութե ոչ իմանան ամենեքեան , այլ դոն , որք զդան : Քանզի եղեն բազումք , որք արարին ներքինիս զիւրեանս ինքեանս վասն արքայութե երկնից : Քս գառն այ , վասն փրկութեան մարդոյ մեռեալն , սիրօղն ամեցարքոց , և մնաւանդ կուսանաց , կայ 'ի վերայ լերին սիոնի վերնայնոյ երուսաղէմի , և ընդ նմա հարիւր քառասուն և չորք հազարք , որք ունին զանուն նորա , և զանուն հօր նորա գրեալ 'ի ճակատս իւրեանց : Ձայն նոցա յերկնից , իբրև զձայն ջուրց բազմաց , և իբրև զձայն մեծի որոտման , և իբրև զձայն քնարաց քնարահարաց 'ի քնարս իւրեանց : Հարիւր և քառասուն և չորք հազարք , որք ընտրեցեալք են յերկրէ , երգեն զերգս նորս առաջի աթոռոյն , և առաջի չորից կենդանեաց , և երիցանց : Սք են որք ընդ կանայս ոչ են խառնակեցեալք . զի են կուսանք : Սք երթան զկնի գառինն ուր և երթայցէ : Սք ընտրեցեալք են 'ի մարդկանէ առաջի այ, և գառինն : Արդարեւ զմանաւանդական ուրախութի , և զմանաւանդական խնդութի ունին կուսանք , որք հետևին գառինն կուսի , 'ի մարիամայ կուսէն ծնեցելոյ : Կուսանք վասն կուսականի մաքրութե , զոր նուիրեցին որդւոյն այ , վասն փրկութե մարդկանց ներմարմնացելոյ , հետևելով նմա նաև

'ի մաքրութե մերձապէս զհետ երթան Յի Քի կուսի , կուսութեան իւրատոյ հեղինակի : Են բազմազանք կուսանք , որք սիրեցին զՔս , և զկուսութի իւր նմա նուիրեցին :

7. Տէրունի կոյսն , որ հրաժարեցաւ 'ի յաշխարհէս , և նուիրեաց զկուսութի իւր քի , պարտի ճանաչել , որովք առաքինութեք վայելչէ զարդարել զինքն , և որոց պատուիրանաց յարմարիցի անսալ , կամ յորքանից մոլութեց պարտիցի հեռանալ . եթէ կամի գոլով 'ի յաշխարհի գոլ ընդ այ , և ընդ նոյնոյ յետ բաժանման այսր կենի 'ի յերկնայնում պայծառութե թագաւորել : Տէրունի կոյսն , որ գտանի 'ի տան , նախ պարտի խորշել 'ի հրապարակականաց տեսութեց , և և խուրափել 'ի յաճախութէ փողոցից , և եղեալ 'ի տան պարապիլ ձեռագործութե , կամ աղօթից , և ածայնոց ընթերցմանց : Տէրունի կոյսն , որ գտանի 'ի տան , ոչ պարտի զարդարել զգլուխն , կամ զհերս , և ոչ աչօք վերացուցելովք , կամ ուրախուք , այլ հերիւք դէպ 'ի յերկիր , և գիմօք խոնարհեցելովք պարտի յառաջանալ , զի մի ներածիցէ 'ի յինքն զունայնս սէրս , և լինիցի պատճառ կորստեան մարդկանց : Տէրունի կոյսն յամէ անպարկեշտէ բարբառոյ , կամ ծիծաղոյ պարտի բոլորովիմբ հեռանալ . և լռեցմամբ , և ամի վարդապետականաւ կրթութեք չքնաղացուցանել զկեան իւր : Տէրունի կոյսն ոչ ինքնադովութեք բանի . ոչ փարթամութեք , ոչ ազնուութեք սեռի , հպարտանալ պարտի , այլ փարեալ զխոնարհութեք , և ղաղքատութեք ոգւով , պարտի , ցորքան ժամանակ կեայցէ , մնալ : Կուսութին է առաքինութի ամենագերազանց : Վասնզի կուսութին անդրանցանէ զբոլորութի մարդկայնոյ բնութե , որով մարդիկք նմանին հրեշտակաց : Սակայն մեծագոյն է յաղթութի կուսանաց , քան հրեշտակաց : Հրեշտակք կեան թարց մարմնոյ , իսկ կուսանք յաղթանակեն 'ի մարմնոջ , ճնշելով զմարմինն , յաղթելով , և յաղթահարելով զխայթուածս նորա :

8. Մեծ է շնորհն կուսութե : Կոյսն արժանաւորեցաւ ընտրիլ 'ի քէ , զի լիցէր մարմնաւոր տաճար այ : 'Ի կուսէ էառ զմարմին , միածին որդին հօր : Կոյսն ծնաւ զփրկութի աշխարհի : Կոյսն ծնաւ զկեանն ընդհանրոյ : Չքնաղութի կուսութե յաղթէ զամ գեղեցկութի : Քանզի սա սիրի 'ի թագաւորէ , հաւանեցեալ լինի 'ի դատաւորէ , նուիրի ան , անառնագրի այ : Կուսութին է ծաղիկ , մարտիրոսութին է ծաղիկ , բարեգործութին է ծաղիկ: 'Ի պարտիզոջ է կուսութին , 'ի դաշտի մարտիրոսութին , 'ի յառագաստի բարեգործութին : Կուսութին է բարձր լեառն : Ելցէ , որ կարէ ելանել : Բայց նա , որ ոչ կարէ , մնասցէ 'ի յարմատոջ լերին, զի մի ընդ քարավէժս վավաշոտութեց գահավիժիցի : Որ ընտրէ զկուսութին , ջանասցի , զի իցէ կոյս մարմնով , և կոյս մտօք : Քանզի կոյսն մարմնով , և ոչ մտօք , ոչինչ վարձ ունի 'ի խոստման : Որքան բարձրագոյն է փառքն կուսանաց , այնքան մեծագոյն պարտի գոլ ջանն նոցա : Վասնզի կուսութին է ծաղիկն այն եկեղեցականի բուսոյ , վայելչութի , և զարդ հոգևորի շնորհի , և պայծառագոյն մասն հօտին քի : Մեծ գերազանցութի է կուսութին : Քանզի է քոյր հրեշտակաց , յաղթութի վավաշոտութեց , թագուհի առաքինութեց , և ստացուած ամից բարեաց : Յայտ է յասացելոց . թէ ողջախոհութի կուսութե յաղթէ , և գերազանցէ զայլ ամ ողջախոհութի : Այս ողջախոհութիս 'ի մարմնի , և մտի է ողջախոհութի 'ի բոլորում կենի : Սա է ողջախոհութի հրեշտակային , գերազանց , ազնիւ , մեծահռչակ , և զարմացման արժանի :

# Գ Լ Ո Ւ Խ ՂԵ.

## Յաղագս մահուան :

1. ՄԱհն մարդոյ է բաժանումն հոգւոյ 'ի մարմնոյ : Քանզի յորժամ բաժանի հոգին 'ի մարմնոյ, մեռանի մարդն : Այս է բնական մահ : Զայս ճաշակելոց է ա̅մ մարդ : Ադամ մեղաւ, և մեռաւ : Ա̅մ մարդ որ է որդի ադամայ մեռանելոց է : մահն է պատժականութի̅, զոր ա̅մ մարդ ճաշակելոց է։ է պատժականութի̅ ընդհանրական, յորմէ ոչոք ազատեցեալ է : Մեռաւ ք̅ս, և մեռաւ մարիամ, և մեք համայնքս մեռանելոցք եմք : Մահս այս է բաւական պատճառ, զի մարդն արհամարհիցէ զաշխարհս, և սիրիցէ զա̅ծ : Եթէ համայնքս մեռանելոցք եմք, և թողլոցք զաշխարհս զայս, վասն է՞ր սիրել զաշխարհս : Թարց սիրոյ ա̅յ, ոչ կարեմք գտանել զա̅ծ յայլում կենի : Վասն այսորիկ պարտիմք սիրել զա̅ծ, զի յայլում կենի կարիցեմք գտանել զա̅ծ : Գոյ նաև հոգևոր մահ, և այս է սաստիկ զարհուրելի : Հոգևոր մահն է, մահ հոգւոյ, և է բաժանումն շնորհի ա̅յ : Վասնզի որպէս հոգին մեր է կեան մարմնոյ մերոյ, այսպէս և շնորհն ա̅յ է կեան հոգւոյ մերոյ : Ուստի որպէս յորժամ հոգին մեր բաժանի 'ի մարմնոյ մերմէ, մեռանի մարմին մեր . այսպէս յորժամ շնորհն ա̅յ բաժանի 'ի հոգւոյ մերմէ, մեռանի հոգին մեր . շնորհն կորուսանի մահացու մեղօք : Ուստի հոգին մարդոյ մեռանի, յորժամ գործի մահացու մեղք :

2. Հոգևոր մահն է, մահ կամաւոր : Զի որպէս կամաւորապէս մեղանչեմք, այսպէս և կամաւորապէս կորուսանեմք զշնորհն ա̅յ, և հոգևորապէս մեռանիմք : Մահս այս է խեղդամարտութի̅ մեր . Իբրև յորժամ մեղանչեմք մահացօր-ն, խեղդամբիմք . վասնզի մեք ինքեանքս զհոգիս մեր կորուսմամբ շնորհի ա̅յ կամաւորապէս սպանանեմք : Անհամեմատաբար զարհուրելի է մահս այս : Քանզի բազմաց վնասուց հանդիպիմք այսու մահուամբ : Վասնզի կուրուսանեմք զշնորհն, որ է մանակցութի̅ ա̅ծայնոյ էութե̅, և է սերմն փառաց, և իրաւունն 'ի յերանութի̅, և բան, որով եմք բարեկամք, որդիք, և ժառանգք ա̅յ . և կորուսանեմք զսէրն, որ է բան արդեան, և չափ երանութե̅ . և կորուսանեմք զառաքինութի̅ս, հարկաւորապէս զուգակցեալս ընդ սիրոյ, որք են զարդք հոգւոյ մերոյ : Ճշմարտիւ ապաշխարութե̅ք, օգնութե̅ք ա̅յ կարեմք վերանորոգել զշնորհն։ Ուստի յայսմանէ հոգևորէ մահուանէ, մինչ տակաւին գտանիմք յայսմ կենի, օգնութե̅ն ա̅յ ճշմարտիւ ապաշխարութե̅ք կարեմք ազատիլ : Գոյ նաև յաւիտենական մահ, և այս է զարհուրելագունեղ . քանզի 'ի յաւիտենականէ մահուանէ ոչ գոյ ազատումն : Յաւիտենական մահն է զրկումն փառաց, և երանութե̅ : Քանզի փառքն, և երանութի̅ն է յաւիտենական կեան : Ուստի զրկումն փառաց, և երանութե̅ է մահն յաւիտենական : Այսու մահուամբ մեռեալ է դատապարտեցեալ հոգին 'ի դժոխս : Վասնզի դատապարտեցեալ հոգին 'ի դժոխս է թարց փառաց, և երանութե̅, և ոչ կարէ ստանալ զփառս : Ուստի է մեռեալ մահուամբ յաւիտենականաւ :

3. Արդարև մեռաւ ք̅ս . վ̅ն զի խայտառակագունեղիւ մահուամբ դատապարտեցին զնա ամբարիշտք, և ընդ անօրէնս համարեցաւ : Բայց մահն նորա մեզ եղև պտղաբերագունեղ . քանզի գահավիժեաց զմահն 'ի յաւիտեան, և մահուամբ նորա մեք փրկեցեալք եմք . ինքն վիրաւորեցաւ վասն անօրէնութեց մերոց, և ցաւեցաւ վասն

ամբարշտութեանց մերոց ։ Ինքն է քաւիչ զմեղս մեր, և մահն նորա եղև մահ մահուան ։ Քս մեռաւ վասն մեղաց մերոց ։ Վասն ամենեցուն մեռաւ, զի և նոքա, որք կեան, ոչ արդէն կեայցեն իւրեանց ինքեանց, այլ նմա, որ վասն նոցա մեռաւ, և յարեաւ ։ Քանզի ած, որ է փարթամ 'ի յողորմութիւն, վասն սաստկի սիրոյ իւրոյ, որով սիրեաց զմեզ, մինչ մեռեալք էաք մեղօք, համակեցոյց զմեզ 'ի քս, որոյ շնորհիւն փրկեցեալք եմք, և համայարոյց, և համանստեցոյց 'ի յերկինս 'ի քս Յս ։ Քս միանգամ վասն մեղաց մերոց մեռաւ, արդարն վասն անօրինաց, զի զմեզ մատուսցանիցէր այ, արդարև մեռուցեալս մարմնով, բայց կեցուցեալս հոգւով ։ Մեք որք մեռեալք եմք մեղաց, ոչ այլ ևս պարտիմք կեալ նոքօք, այլ պարտիմք համարիլ զմեզ մեռեալս մեղաց, բայց կեցօղս այ 'ի քս Յս ։ Ուրեմն ոչ պարտի թագաւորել մեղն 'ի մահկանացու մարմին մեր, զի հնազանդիցիմք ցանկութեանց նորա, այլ պարտիմք միշտ զչարչարանս Յի շրջաբերել 'ի մարմնոջ մերում ։ Քանզի միշտ մեք, որք կեամք, 'ի մահ մատնիմք վասն Յի, զի և կեանն Յի յայտնեսցի 'ի մարմնոջ մերում ։

4 Որ կեայ քի, որ է կեանն արդարոց, ունի յինքեան զքս ։ Վասն որոյ համարձակաբար ասէ ։ Արդ կեամ, բայց ոչ ես այլ կեայ 'ի յիս քս ։ Որք կեան քիւ, մահացուցանեն զանդամս իւրեանց, որք են 'ի վերայ երկրի ։ Քանզի համատնկեցեալք նմանութեն մահուան նորա, սոսնան 'ի միասին 'ի յինքեանս և զնմանութի յարութեն նր ։ Ուրեմն մեռեալք ընդ քի, 'ի միասին նաև կեան ընդ նմա ։ Ուրեմն մեք, որք կեամք քիւ, մեռեալք եմք մեղաց ։ և կեանն մեր թաղեցեալ է ընդ քի 'ի յած ։ Արդ մինչ քս երևեսցի, կեանն մեր ։ յայնժամ և մեք երևեսցուք ընդ նմա 'ի փառս ։ Քանզի եթէ համամեռեալք եմք, և համակեցցուք ։ եթէ տանիցեմք, և համաթագաւորեսցուք ։ Որք համակեան մեղաց, ոչ են համամեռեալք ընդ քի ։ Անմախիք չարութեան սովանանեն զհոգիս իւրեանց ։ Ուստի որ փարի զմեղօք, 'ի յանօրէնութեն իւրում մեռանի ։ Մեղքն առշօշափօղն զկատարումն, է մահաբեր ։ վասնզի մեղքն գործեցեալ ծնանի զմահ ։ Մեռեալքն մեղօք, որք ոչ կամին դառնալ առ ած, մնացին 'ի մեղս ։ 'Ի մահուանէ մեղաց երթիցեն առ մահն դժոխոյ ։ 'Ի մահուանէ 'ի մահ անցցեն ։ Թշուառ մեղաց մահն ։ Իսկ շնորհն յաւիտենական կեան 'ի քս Յս Տր մեր ։ Արի ուրեմն ով մարդ, որ ննջես 'ի մեղս, գործելով զանօրէնութի, և կանգնեաց 'ի մեռելոց թողլով զյանցանս քոյս ։ զի մի վասն անապաշխարութեն քո, և խստութեն սրտի քո, և յանդգնութեն մտաց, 'ի մահուանէ մեղաց անցանիցես 'ի մահն դժոխոյ ։

5. Ած զմեզ, որք էաք մեռեալք 'ի յանցանս, և 'ի յանօրէնութիս, ձնշմամբ անդամոց մերոց, որք են 'ի վերայ երկրի, համամեռեալս ընդ քի, համակեցոյց ընդ նմա, թողլով մեզ զամս յանցանս, ջնջելով, որ էր ընդդէմ մեր, զձեռագիրն վնասոյ, որ էր ընդդէմ մեր, և զնա եբարձ 'ի միջոյ, բևեռելով զնա խաչի ։ Ուրեմն 'ի միտ ածեալք զայսքանս բարերարութիս, մի դարձցուք առ մահ, այլ 'ի կենի. քիւ մեզ շնորհեցելում, յարատևեսցուք ։ քանզի քրիստոնեայք մահուչափ մեղօք դարձօղք առ մահ, և 'ի մահացուս մեղս յայսմանէ կենէ ելանօղք, որպէս ոչխարք դիցին 'ի դժոխս, և մահն յաւիտենական արածեսցէ զնոսա ։ Վասնզի սիրօղք չարեաց, և 'ի յանօրէնութեն մեռանօղք, արժանիք են յաւիտենականի մահուան ։ Դժոխսն լիձն հրոյ, և երկրորդ մահն պատրաստեցեալք են նոցա ։ Բնական մահն, որով հոգին բաժանի 'ի մարմնոյ, է հասարակ ։ Մահն հոգւոյ, և հոգևորն, որով պատուականագունեղ շնորհն այ,

բա‿

բաժանի 'ի հոգւոյ մերմէ, և կորուսանի մահացու մեղօք, է մահացօրէն մեղանչողաց, և զանօրէնութի գործողաց։ Յաւիտենական մահն, որով դատապարտեցեալ հոգին, զրկի 'ի յաւիտենականանց փառաց, է անապաշխարողաց։ Աւ բնական մահն, և ամենեքին անխորշելին, արամադրել, և պատրաստել պարտիմք զմեզ։ 'Ի հոգևորէ մահուանէ, 'ի յոր մարդն կամաւորապէս ներանկղի մահացու մեղօք, ամենևին է զգուշանալի։ Որք երկնչիմք 'ի յաւիտենական մահուանէ, և փախչիմք յամից մեղաց. պարտիմք պարապիլ կրթութե բարեաց գործոց, և պահպանման պատուիրանաց։

6. Բնական մահն է հասարակ. քանզի ասացեալ է ադամայ, և համահետևապէս որդւոց նորա։ Զի լուար ձայնի կնոջդ քո, և կերեր 'ի ծառոյ անտի, յորմէ պատուիրեցի քեզ անտի միայն չուտել. և կերեր 'ի նմանէ. անիծեալ լիցի երկիր 'ի գործս քո. տրտմութե կերիցես զնա զամ աւուրս կենաց քոց։ Փուշ, և տատասկ բուսուսցէ քեզ, և կերիցես զբանջար վայրի։ Քրտամբ երեսաց քոց կերիցես զհաց քո. մինչև դարձցիս յերկիր ուստի առար, զի հող էիր, և 'ի հող դարձցիս։ Ծննդոց։ 3. Թիւ. 17. Արդարութեամբ համայնքս մեռանիմք, և իբրև զջուր սպրդիմք 'ի յերկիր, յորում մնացէ մարմին մեր մինչև յօրն դատաստանի։ Գիտեմք զի տէրն մատնեսցէ զմեզ 'ի մահ, ուր կացուցեալ է տունն ամի կեցողի։ Ոչ դոյ մարդ, որ կեայցէ, և ոչ ճաշակիցէ զմահ. Ած եստեղծ զմարդն անվերջանալի, և առ պատկեր նմանութե իւրոյ արար զնա։ Բայց նախանձու սատանայի մահն եմուտ 'ի բոլոր աշխարհ։ 'Ի կնոջէ սկսաւ մեղն և նովաւ համայնք մեռանին։ 'Ի ձեռն միոյ մարդոյ մեղն եմուտ յայս աշխարհ, և 'ի ձեռն մեղաց մահն, և այսպէս մահն եանց 'ի յամ մարդ, յորում մեղան ամենեքեան։ Խայթն մահուան է մեղն. Թոշակն մեղաց է մահն. Թէպէտ մեղօք մահն, սակայն քեւ կեանն։ Աստի որպէս 'ի յադամ ամենեքեան մեռանին. այսպէս և 'ի քս համայնք, որք սիրեն զարդարութի, և գործեն ըստ աւետարանի, կեայցեն։

7. Սակաւութի աւուրց մերոց վերջացի մերձ ընդ մերձ։ Ուրեմն լաւագոյն է գնալ 'ի տուն սգոյ, քան 'ի տուն խրախոյ, զի լինիցիմք յիշօղք, թէ մահն ոչ յապաղէ. և ոչ գիտելով, թէ յորում ժամու տէրն գալոցէ, արթուն կացցուք, և թողեալք զանիրաւութիւն, սիրեսցուք. և գործեսցուք զարդարութի. մինչ արդարութին է մշտնջենական, և անմահ, իսկ անիրաւութին է ստացումն մահուան։ Արդարութեամբ պարտիմք կալ պատրաստք. վասնզի յորում ժամու ոչ համարիմք, եկեսցէ որդին մարդոյ։ Յիշելի է, թէ մեծատան, որոյ ագարակն բերեալ էր զպարարտ պտուղ, և ասացեալ էր, քակեցից զշտեմարանս իմ, և զմեծագոյնս արարից. և անդ ժողովեցից զամ ինչս, որք բուսեալք են ինձ, և զբարիս իմս. և ասացից անձին իմում։ Անձն իմ ունիս զբարութիս ինչս եդեալս վասն բազմաց ամաց, հանգիր, կեր, արբ, և խրախացիր. ասացեալ եղև. յիմար յայսմ գիշերի խնդրեն 'ի քէն զհոգին քո. զոր պատրաստեցեր, ում եղիցին։ Համայնք ծնեալք մեռանին։ Մեռանի իմաստունն. նմանապէս և տգէտն։ Մեռանի փարթամն, նմանապէս և չքաւորն։ Մեռանի աղնիւն. նմանապէս և գռեհիկն։ Մեռանի այրն, նմանապէս և կինն։ Համայնք, որք ծնանին, մեռանին։ Զի մի է մուտն ամենեցուն առ կեանս, և նման է ելումն։ Լաւագոյն է մահն, քան զդառն կեանն, և յաւիտենական հանգիստն, քան զյարատևող տկարութի։ Ո՞վ մահ բարի է դատաստան քո մարդոյ կարօտողի, և այնմ որ նուաղի 'ի զօրութեց, քան դեգերելոյ հասակին։

8. Մահն մեղաւորի արդարև

է

է լալի. զի հոգին մեղաւորի բաժանեցեալ 'ի մարմնոյ, ենթարկի յաւիտենականի մահուան: Իսկ մահն արդարոց է 'ի յուրախութե: Զի հոգիք արդարոց են 'ի ձեռնին այ: Արդարն եթէ շրջապատեցեալ եղիցի մահուամբ, 'ի զովացման լիցի: Արդարք խնդութբ ելանիցեն, և խաղաղութբ անդրանցին: Լերինք, և բլուրք երգեսցեն առաջի նոցա զգովասանս, և ամք փայտք դաւառաց զծափս հարցեն: Արդարն, որ շրջեցաւ յուղղութե բուրում, եղիցի 'ի խաղաղութե, և հանգիցի 'ի սենեկի բուրում: Արդարք խնդութբ սաեն: Գիտեմք, զի եթէ երկրային տուն մեր այսր բնակութե լուծանի, թէ զշինուած ունիմք 'ի այ, զտուն ոչ ձեռագործ, այլ յաւիտենական 'ի յերկինս: Եւ այր բարւոյ խղճմտանի, համարձակաբար արտաքերէ: Անձկանամ 'ի յերկուց, փափագելով լուծանիլ, և լինիլ ընդ քի: Ուրեմն երանի մեռելոց, որք 'ի տր մեռանին: Զարհուրելի է մահն չարաց: Քանզի մահն մեղաւորաց է վատթարագունեղ: Մեղաւորն մեռեալ ժառանգեսցէ զօձս, զանասունս, և զորդունս: 'Ի մեռանիլն մարդոյ ամբարշտի ոչ այլ ևս եղիցի յոյս: Մահն արդարոյ է երջանիկ, զի յետ մահուան է երանութի, և ժառանգութի այմից բարեաց, նախ քան զընդհանրական դատաստան որքան առ հոգին. իսկ յետ ընդհանրական դատաստանի նաև որքան առ մարմինն: Ուրեմն պարտիմք գրկել զկեանն արդարոց, զի յետ մահուան անխորշելւոյ, ժառանգիցեմք զերջանիկ կեան:

# ԳԼՈՒԽ ՂԶ:

## Յաղագս մասնաւորի դատաստանի:

1. Դատաստանն է ներգործութի. որով ունեցողն զհեղինակութի 'ի վր այլոյ, ըստ հրամանի իրաւան, և արդարութե տայ զվճիռ 'ի նա, տալով նմա զվարձ, կամ զպատիժ: Չորք զդատաստանաւ նկատելիք են, դատաւորն, դատելին, իրաւունն, և արդարութին, ներգործութի դատաւորի, վարձն, և պատիժն: Դատաւորն է վերնագոյնն, ունեցողն զհեղինակութի, և զիշխանութի 'ի վերայ միւսոյ: Դատելին է ստորնագոյնն, և ենթարկեցեալն, որ է ընդ իշխանութե վերնագունի, ունեցողի զհեղինակութի 'ի վր նորա: Ներգործութի դատաւորի է արարողութին, որով դատաւորն վարի 'ի դատելն: Եւ է կրկնակ, այսինքն, քննութի, և վճռատուութի: Քննութի, զի արդիւնք, կամ պատժապարտութիք դատելւոյ երևիցին: Վճռատուութի, զի լինիցի համարումն արդեան, կամ պատժապարտութե: Իրաւունն, և արդարութին են կանոնք, ըստ որոց առնելի է դատաստանն: Խնդրին իրաւունն, և արդարութի, կանոնք արդարութե, զի դատողութին լինիցի ուղիղ, և դատաստանն լինիցի արդար: Քանզի եթէ դատաստանն լինի ըստ կանոնաց իրաւան, և արդարութե, է ուղիղ: Իսկ եթէ է ընդդէմ կանոնաց իրաւան, և արդարութե, է անիրաւ: Վարձն է հատուցումն ըստ արդեանց: Վասնզի որ ունի զարդիւնս, վարձարելի է. քանզի իրաւունն, և արդարութին, զայս պահանջեն: Պատիժն, և պատժումն է հատուցումն ըստ պատժապարտութեց:

Վ֊

Վասնզի որ ունի զպատժապարտութիս, պատժելի է: Քանզի իրաւունն, և արդարութիւն, և կանոնք, և հրամանն արդարութեան, զայս պահանջեն:

2. Իշխանութիւն է կրկնակ, այսինքն, ա՟ծային, և մարդկային: Ածայինն է իշխանութիւն ա՟յ: Մարդկայինն է այն, որ 'ի յա՟յ տուեցեալ է մարդոյ: Մարդկային իշխանութիւն է կրկնակ, այսինքն, եկեղեցական, և աշխարհական: Եկեղեցականն է այն, որ 'ի ք՟է տուեցեալ է եկեղեցւոյ: Այս եղև 'ի յառաքեալս, որոց ք՟ս ետ զիշխանութիւն կապելոյ, և արձակելոյ: Լիութիւն այսր եղև 'ի ս՟րբում պետրոսի փոխանորդի ք՟ի, և իշխանի առաքելոց: Այս նոյն իշխանութիւն է 'ի յեպիսկոպոսս, աջորդս առաքելոց: Եւ լիութիւն նորա է 'ի պապի, փոխանորդի ք՟ի, և աջորդի սրբոյն պետրոսի: Յայտ է, թէ 'ի յեկեղեցւոջ իցէ եկեղեցական իշխանութիւն: Վասնզի 'ի յեկեղեցւոջ է կառավարութիւն: Ուրեմն է իշխանութիւն կառավարելոյ: Ուստի առաքեալն Պօղոս ասէ 'ի գործս առաքելոց: Զգոյշ կացէք անձանց, և ամ՟ հօտին, յորում եդ զձեզ հոգին ս՟բ տեսուչս, հովուել զժողովուրդ տ՟ն, զոր ապրեցոյց արեամբ իւրով: Գծ. 20. թիւ. 28. Աշխարհայինն է, որ տուեալ է 'ի յա՟յ իշխանաց աշխարհայնոց: Այսպիսի է այն, զոր ունի կայսրն 'ի բոլորոջ կայսերութեան, և թագաւորք 'ի յիւրս թագաւորութիս, և իշխանք աշխարհայինք, որք են բացարձակք 'ի յիւրս իշխանապետութիս, և դատաւորք 'ի նոցանէ կացուցեալք, և եդեալք առ 'ի դատել զենթարկեցեալս: Յայտ է, թէ նաև 'ի յիշխանս իցէ աշխարհային իշխանութիւն: Քանզի ասէ Առաքեալն: Ամ՟ անձն, որ ընդ իշխանութեամբ է, 'ի հնազանդութեան կացցէ. քանզի ոչ ուստեք է իշխանութիւն, եթէ ոչ յա՟յ, և որք ենն 'ի յա՟յ կարգեալ են: Այսու հետև որ հակառակ կայ իշխանութեան, ա՟յ հրամանին հակառակ կայ: Հռօ. 13. թիւ. 1.

3. Մարդկային դատաւորն ոչ է նոյն ինքն ուղղութիւն. քանզի ոչ ունի զուղղութիւն յինքենէ, այլ առնու: Ուստի 'ի վճռելն պարտի հայիլ 'ի բնական իրաւունս, և 'ի յա՟ծային իրաւունս, զի մի վճռիցէ զիր ինչ ընդդէմ ասացելոց իրաւանց: Եկեղեցին ք՟ի ունի զվկայութիւն հոգւոյն սրբոյ, զի մի սղալիցի: Քանզի եկեղեցին ք՟ի է սիւն, և հաստատութիւն ճշմարտութեան: Նաև Հռօմէական պապն, խօսօղն յաթոռոյ, ոչ կարէ սղալիլ. վասնզի ք՟ս աղաչեաց վասն պետրոսի, զի մի պակասեսցի հաւատ նորա. և համահետևապէս աղաչեաց վասն հռօմէականաց պապից, աջորդաց ս՟րբոյն պետրոսի, զի մի պակասիցեն հաւատք ն՟ց: Դարձեալ հռօմէական պապն կացուցեալ է 'ի ք՟է հովիւ, և վարդապետ ընդհանրական, զի արածիցէ, և ուսուցանիցէ: Ուրեմն ունի զմանաւոր առկայութիւն, զի մի սղալիցի 'ի հովուելն, և 'ի յուսուցանելն: Աշխարհական իշխանն 'ի վճռելն, պարտի հայիլ 'ի բնական իրաւունս, 'ի յԱստուածային իրաւունս, և 'ի յիրաւունս եկեղեցւոյն աստուծոյ, զի մի վճռիցէ զիր ինչ ընդդէմ ասացելոց իրաւանց: Եկեղեցական մասնաւոր դատաւորն 'ի դատելն պարտի նայիլ 'ի յիրաւունս եկեղեցւոյ, և ըստ այնմ դատել. քանզի է պաշտօնեայ եկեղեցականի իրաւանց. և նաև քանզի եկեղեցական իրաւունքն առաջադրեցեալ է նմա, զի ըստ այնմ դատիցէ: Եւ աշխարհային մասնաւոր դատաւորն 'ի դատելն պարտի հայիլ 'ի յուղիղ իրաւունս իշխանի, որ կարէ կերտել զաշխարհային օրէնս. զի է պաշտօնեայ աշխարհայնոյ իրաւանց: Ուրեմն պարտի դատել ըստ այնմ: Մասնաւորք դատաւորք 'ի դատելն այնպէս պարտին ունել զինքեանս, որպէս ասացեալ է, զի մի դատիցեն ընդդէմ արդարութեան, և ընդդէմ ուղղութեան, և գործիցեն զանիրաւութիւն:

4. Ած

4. Ա՟ծ է նոյն ինքն ուղղութիւն, և է նոյն ինքն արդարութիւն . վասնզի ուղղութիւն ոչ առնու, այլ յինքենէ ունի զնա : Քանզի որպէս է էակ յինքենէ, այսպէս է ուղիղ, և արդար յինքենէ : Ուստի որպէս է նոյն ինքն բարութիւն, նոյն ինքն ճշմարտութիւն, նոյն ինքն սրբութիւն, նոյն ինքն կեանն, նոյն ինքն իմաստութիւն . նոյն ինքն չքնաղութիւն, և նոյն ինքն երանութիւն . այսպէս նաև է նոյն ինքն ուղղութիւն, նոյն ինքն արդարութիւն, նոյն ինքն արդար օրէն, և նոյն ինքն ուղիղ իրաւունս : 'Ի յա՟ծ դատաւորն է դատաստան, դատաստանն է ա՟ծ : Դատողն է ներգործութիւ, ներգործութիւն է դատող : Դատաւորն է արդարութիւն, արդարութիւն է դատաւոր : Ուստի 'ի յա՟ծ դատաւորն, դատաստանն . ներգործութիւն, արդարութիւն, իրաւունքն, և ուղղութիւն են մի և նոյն անբաժանելի իրական էակութիւն : Ա՟ծ է ընդհանրականագունեղ դատաւոր, ունեցող զիշխանութի 'ի վերայ ամենեցուն : Որպէս է ստեղծող, կերտող, և համապահող ամենեցուն . այսպէս է դատաւոր ամենեցուն : Դատաւոր հրեշտակաց, և դատաւոր մարդկանց : Դատաւոր կայսերաց, թագաւորաց, և ա՟մից իշխանաց : Դատաւոր քահանայից, եպիսկոպոսաց, և նաև ծայրագունեղից պապից : Որպէս համայնք կախեալք կան 'ի նմանէ . այսպէս համայնք դատելիք են 'ի նմանէ : Դատելոց է զամենեսեան, և իւրաքանչիւրում տալոց է զարդար հատուցումն : Դատէ արդարութբ, և անհնիւ ուղղութբ : Դատէ նաև զկենդանիս ըստ ուղղագունեղի բարեհաճութե իւրում : Դատէ ուղղութբ, և հատուցանէ իրաւամբ : Այլ ոչ մինչ տակաւին կենդանիք են մարդիկք, գործէ զզուգահաւասար, և զբոլորական հատուցումն : Զզուգահաւասար հատուցումն վերայ պահէ, զի յետ այսր կենի հատուցանիցէ, որքան առ հոգին առժամայն, իսկ որքան առ մարմինն 'ի յընդհանրականի դատաստանի :

5. Յետ այսր կենի կրկնակ է ամենաուղիղ դատաստանն ա՟յ, մինն է մասնաւոր, և միւսն ընդհանրական : Մասնաւորն է, զոր ա՟ծ յետ մահուան իւրաքանչիւրոյ, և յետ բաժանման բանականի հոգւոյ 'ի մարմնոյ, առժամայն գործէ : Ընդհանրականն է այն, զոր յետ յարութե մեռելոց գործելոց է : Արդարեւ ա՟ծ յետ մահուան առժամայն դատեալ զմարդն մասնաւոր դատաստանաւ, հատուցանէ նմա զվարձ որքան առ հոգին, որ է անմահ, և ընդունակ նաև յայնժամ վարձու, և պատժոյ . իսկ յետ յարութե դատելով զնա ընդհանրականաւ դատաստանաւ, հատուցէ նմա զուգահաւասարաւ հատուցմամբ զվարձ, կամ զպատիժ, որքան առ հոգին, և որքան առ մարմինն 'ի միասին, Այսպէս գործէ ա՟ծ առժամայն յետ մահուան մարդոյ, քանզի հոգին մեր է անմահ, ունեցող զիւրս յատուկս կարողութիս, և զօրաւորութիս, այսինքն, զիմացումն, և զկամն, և զիմացմունս, և զկամեցմունս : Վասնզի հոգին մեր է հոգևոր գոյացութի, ոչ արտածեցեալ 'ի մարմնոյ, այլ անընդմիջապէս ստեղծեցեալ 'ի յա՟յ : Վասն այսորիկ յետ բաժանման 'ի մարմնոյ ոչ եղծի, այլ մնայ : Մարմինն 'ի հող վերադառնայ, իսկ հոգին վերամնայ թարց ապականութե, ընդունակ երջանկութե, և պատժոյ : Ուստի ասէ տէրն : Մի երկնչիք յայնցանէ, որք սպանանեն զմարմին, և զհոգի ոչ կարեն սպանանել : Մատթ. 10. թիւ. 28. Ուրեմն ըստ տն հոգին ոչ սպանանի . և այսպէս է անմահ. Վասն այսորիկ յետ բաժանման հոգւոյ 'ի մարմնոյ, վերընդունի մարդն զհատուցումն որքան առ հոգին ընդունակն երջանկութե, և պատժոյ :

6. Մարդն մինչ հիւանդանայ, կամ մեռանի 'ի մահացու մեղս . կամ 'ի շնորհի ա՟յ : Նա, որ մեռանի

նի 'ի մահացուս մեղս . է որդի կորստեան ։ Իսկ նա , որ մեռանի 'ի շնորհի այ̃ , է 'ի կացութեան փրկութեան ։ Կրկնապատկաբար կարէ դատանիլ 'ի կացութեան փրկութեան . կամ այնպէս զի վճարեալ իցէ վասն ամ̃ից ժամանակաւորաց պատժոց , զորս պարտիւր կրել 'ի քաւարանի . կամ այնպէս զի ոչ վճարեալ իցէ , այլ տակաւին մնացեալք իցեն պատիժք տուժելիք ։ Արդար դատաւորն 'ի մասնաւորի դատաստանի այսպէս դատէ ։ Այսինքն , տայ զվճիռ , զի հոգին մարդոյ , որ մեռեալ է 'ի շնորհի , և վճարեալ է վս̃ ամ̃ից պատժոց , զորս պարտիւր տուժել 'ի քաւարանի , պսակիցի , և մտանիցէ 'ի փառս , և տեսանիցէ զա̃ծային էութիւն , ըստ սաստկութեան սիրոյ իւրոյ , յորում մեռեալ է ։ Իսկ որքան առ այն մարդն , որ մեռեալ է 'ի շնորհի , այլ տակաւին ոչ վճարեալ է վասն ամ̃ից ժամանակաւորաց պատժոց , տայ զվճիռ , զի դնայցէ 'ի քաւարանն , և անդ չարչարիցի , մինչև վճարիցէ , և տուժիցէ վասն ամ̃ի ժամանակաւորաց պատժոց , և կատարեալ զվճարումն կրեցմամբ չարչարանաց , կամ բարեգործութբ̃ք , ողորմութբ̃ք , պատարագօք , և աղօթիւք , և աղաչանօք կենդանեաց , կամ ներողութբ̃ք նմա մերձեցելոց , մտանիցէ 'ի փառս , տեսանիցէ զաստուծային էութիւն , և վայելիցէ զյաւիտենական երանութիւն , ըստ սաստկութեան սիրոյ իւրոյ , յորում մեռաւ ։ Բայց որքան առ մարդն , որ մեռեալ է անզեղջ , և 'ի մահուչափ մեղս , տայ զվճիռ , զի դնայցէ 'ի դժոխս , և առ մշտնջենաւորս չարչարանս , զի անդ չարչարիցի , և տանջիցի 'ի յաւիտեան , թարց ուրուք յուսոյ ազատութեան 'ի չարչարանաց , 'ի դժոխս կրելեաց ։

7. Որքան առ հոգին մարդոյ , որ մեռեալ է 'ի շնորհի , և վճարեալ է վասն ամ̃ից ժամանակաւորաց տանջանաց տուժելեաց 'ի քաւարանի , կամ խստակրօնիւ ապաշխարանաւ , կամ լիակատարաւ ներողութբ̃ 'ի կետի մահուան , կամ սաստկազունեղեն ներգործութբ̃ սիրոյ , յայտէ , թէ առժամայն 'ի ձեռն մասնաւորի դատաստանի , մտանիցէ 'ի փառս , տեսանիցէ զա̃ծային էութիւն , ընդունիցի զվարձ , և վայելիցէ զյաւիտենական երանութիւն ։ Քանզի այսպէս պատմի 'ի յաւետարանի զհատուցմանէ վարձու , 'ի մեռանիլն մարդոյ արդարոյ ։ Եւ իբրև երեկոյ եղև , ասէ տր̃ այգւոյն ցգործաւորս իւր . կոչեա զմշակսն , և տուր նոցա զվարձս։ Մատթ. 20. Թիւ. 8. Ուստի առդարն ցանկայ զերծիլ 'ի մարմնոյ , և լինել ընդ ք̃ի ։ Նաև յայտ է որքան առ քաւարանն , թէ արդարև , հոգին մարդոյ , որ մեռաւ 'ի շնորհի , և տակաւին ոչ վճարեալ է վս̃ ժամանակաւորաց չարչարանաց , դնայցէ 'ի քաւարանն առ 'ի տուժել զտանջանս . վասնզի գրէ առաքեալն ։ Եթէ ուրուք գործն այրեսցի , տուժեսցի , բայց ինքն կեցցէ , այլ այնպէս որպէս թէ 'ի հրոյ։ Կորընթ. առաջնորդ ։ 3. Թիւ. 15. Նաև յայտ է որքան առ դժոխսն , թէ արդարև հոգին մարդոյ , որ մեռեալ է 'ի մահուչափ մեղս , և անզեղջ , 'ի մասնաւորի դատաստանի դատապարտիցի 'ի դժոխս , և առ յաւիտենականս տանջանս։ Քանզի զմեծատանէ , որ ագանիւր բեհեզս , և զծիրանիս , և ուրախ լինէր հանապազ առատապէս , այսպէս պատմի 'ի յաւետարանի ։ Մեռաւ և մեծատունն , և թաղեցաւ 'ի դժոխս ։ Ղուկ. 16. Թիւ. 22. Ուստի 'ի ձեռն մասնաւորի դատաստանի հոգիքն արդարոց 'ի յերկինս են , այնոցիկ , որք տակաւին ոչ վճարեալք են , 'ի քաւարանի , իսկ անզեղջից 'ի դժոխս ։

8. Գործն սրբոյ եկեղեցւոյ զայս հաստատէ , որ ասացեալ է ։ Քանզի ս̃բ եկեղեցին , ամենասիրելի հարսն ք̃ի , որ է սիւն , և հաստատութիւն ճշմարտութեան , խոստովանի զս̃բս գոլ 'ի յերկինս , տեսանել զա̃ծ , ընկալեալ դոլզոսակ , և վայելել զերանութիւն . խնդրէ զբարեխօսութիւն սրբոց , և հաչակէ զտօնախմբութիւն նոցա ։ Ու-

րեմն խոստովանի զհոգիս սրբոց հասեալ գոլ փառաց ։ Նոյն սուրբ եկեղեցին, վասն հոգեաց նոցա, որք ընկալեալք զնա խորհուրդս մեռեալք են 'ի սոյն, աղօթէ, զի ազատիցին 'ի տանջանաց, և հանգիցին 'ի խաղաղութեան ։ Ուրեմն խոստովանի զքաւարանն, յորում մաքրիցին հոգիք նոցա, որք ոչ վճարեալք բոլորապէս, չուեալք են յայսմանէ աշխարհէ 'ի շնորհի Աստուծոյ ։ Բայց վասն հոգեաց նոցա, որք անզեղջք, և 'ի յայտնիս մահուչափս մեղս մեռեալք են, ոչ աղօթէ ։ Ուրեմն խոստովանի, զհոգիս այսպիսեաց գոլ դատապարտեցեալս մասնաւորաւ դատաստանաւ 'ի դժոխս, յորմէ ոչ գոյ ազատութիւն ։ Եւ առնէ զորոշումն շուրջ զմարմնոց մեռելոց ։ Քանզի պատուէ զմարմինս սրբոց, և գերյարգէ զմասունս նոցա ։ Իսկ զմարմինս նոցա, որք մեռեալք են զղջմամբ, թաղէ 'ի սուրբ տեղիս ։ Բայց զմարմինս այնոցիկ, որք մեռեալք են անզեղջք, հայհոյիչք, և 'ի յայտնիս ժանտագործութիւնս, ոչ թաղէ 'ի սրբազան տեղւոջ ։ Յորոց ամենից յայտ է, թէ հոգիքն սրբոց հասեալք են փառաց. ապաշխարութեամբ մեռելոց են 'ի քաւարանի. իսկ հոգիքն անզեղջից 'ի դժոխս ։

## ԳԼՈՒԽ ։ ԼԸ.

### Յաղագս յարութեան ։

1. ՄԱրդն, որ մեռանի յարիցէ ։ Հոգին բաժանեցեալ 'ի մարմնոյ, դարձեալ միաւորեսցի մարմնոյ, և կենդանացուսցէ զայն ։ 'Ի յընդհանրոջ յարութեան հոգին այնպէս միաւորեսցի մարմնոյ, զի ոչ երբէք բաժանիցի ։ Յետ ընդհանրական յարութեան, մահն այլևս ոչ իշխեսցէ մարդոյ ։ Յետ յարութեան կեանն մարդոյ եղիցի անմահ ։ Նոյն հոգին նոյնոյ մարմնոյ իւրոյ միաւորեսցի, զի նոյն մարդն յարիցէ ։ Յարիցէ մարդն համայնիւք անդամօք իւրօք 'ի կատարելոջ հասակի ։ Համայնիւք անդամօք իւրօք հանդերձ, զի մարդն յարիցէ ամբողջ ։ 'Ի կատարելոջ հասակի, զի մարդն յարիցէ կատարեալ ։ Ամենակարողն Աստուած արասցէ զյարութիւն ։ Նոյն ինքն, որ ստեղծ, և համապահեաց յայսմիկ մահկանացուոջ կենում զմարդն, յարուսցէ զնա ։ Կարողն ստեղծել, և համապահել, որ է իբրև շարունակ ստեղծումն, կարէ նաև յարուցանել ։ Ոչինչ է անկարելի ամենակարողին ։ Կարէ ստեղծել, և համապահել, կարէ նաև յարուցանել ։ Որ է ամենակարող, կարէ զամենայն ինչ ։ Կարէ կերտել, և կարէ եղծել ։ Կարէ նաև զեղծեալն դարձեալ վերանորոգել ։ Կարէ կեցուցանել, և կարէ մահացուցանել ։ Քանզի մահն, և կեանն են 'ի ձեռին նորա ։ Ուրեմն կարէ նաև զմեռեալն յարուցանել, և դարձեալ կեցուցանել, և զհօրադոյն կեան պարգևել ։

2. Միակ հոգին ոչ է մարդ այլ է ազնուագոյն մասն մարդոյ ։ Այսպէս նաև միայնակ մարմինն ոչ է մարդ, այլ է տկար մասն մարդոյ ։

գոյ ։ Ուրեմն հոգին, և մարմինն 'ի միասին են մարդ ։ Յարիցէ ուրեմն մարդն, զի 'ի յաւիտեան մնայցէ մարդն, ազնիւ մասն այսր ընդհանրոյ ։ Յարեաւ քս̅, իշխանն, և թագաւորն մարդկանց 'ի յաւիտեան ուրեմն յարիցեն մարդիկք, զի նոցա իշխեսցէ քս̅ թագաւորն, և իշխանն ամենեցուն 'ի յաւիտեան, բարեաց իբրև ենթարկեցելոց համաթագաւորողաց, իսկ չարաց իբրև ենթարկեցելոց անօրինաց, առ տանջանս դատապարտեցելոց։ Մարդն, որ ունի զհոգին, և զմարմին, մեղանչէ, կամ գործէ զբարի․ Ուրեմն պարտի վերընդունիլ զզուգահաւասար վարձ, կամ զզուգահաւասար պատիժ ․ և այսպէս փառաւորիլ ոչ միայն որքան առ հոգին, այլ նաև որքան առ մարմինն․ կամ պատժիլ ոչ միայն որքան առ հոգին, այլ նաև որքան առ մարմինն ։ Բայց այս ոչ կարէ գոլ թարց յարութեան ։ Ուրեմն մարդն պարտի յառնել, զի ընկալցի զզուգահաւասար վարձ, կամ զզուգահաւասար պատիժ ։ Քս̅ է դատաւոր մարդոյ ոչ միայն որքան առ հոգին, այլ նաև որքան առ մարմինն ։ Ուրեմն մարդն պարտի յառնել, և կալ առաջի ատենի քս̅ի հանդերձ հոգւով, և հանդերձ մարմնով, զի դատեսցէ քս̅ զբոլոր մարդն, և վարձատրեսցէ, կամ պատժեսցէ զբոլոր մարդն ։ Յայտ է յասացելոց, թէ համայնք մարդիկք պարտին յառնել, և կալ առաջի ատենին քս̅ի 'ի յընդհանրական դատաստանի, զի իւ̅ ոք ընկալցի ըստ գործոց իւրոց ։

3․ Վասն ստուգութեան յարութեան, հաւատարիմ ծառայն ա̅յ յուսադրաբար խօսի, և ասէ ․ հաւատամ, թէ փրկիչն իմ կենդանի է, և 'ի վերջին աւուրն 'ի յերկրէ յառնելոց եմ, և դարձեալ շրջապատելոց է զինև մորթ իմ, և 'ի մարմնի իմում տեսանելոց եմ զա̅ծ փրկիչն իմ։ 'Ի ճշմարտի, և 'ի ս̅րբում կրօնի աղօթեմք վասն մեռելոց ։ Ուրեմն յուսամք յառնելոցս գոլ զմեռեալս ։ Քանզի եթէ ոչ յուսայցեմք գոլ յառնելոցս, ոչ աղօթիցեմք ։ Ա̅ծ կոչի, և ասի ա̅ծ աբրահամու, ա̅ծ իսահակայ, և ա̅ծ Յակոբայ ։ ։ Զի ա̅ծ ոչ է մեռելոց, այլ կենդանեաց ։ Վասնզի համայնք կեան նմա ։ Ուրեմն մեռեալք յարիցեն ։ Արդարև համայնքս յարիցուք, այլ ոչ համայնքս փոփոխիցուք ։ Յարիցուք 'ի կէտոջ, 'ի թօթափել ական, 'ի վերջնում փողոջ ։ Վասնզի հնչեսցէ փողն, մեռեալք յարիցեն թարց ապականութեան, և մեք փոփոխիցուք, որք մտածեմք զիրս երկնայինս ։ Փոփոխիցուք այնպիսիք, որք արհամարհեմք զաշխարհս, և պահեմք զպատուիրանս ա̅յ ։ Սադուկեցիք հայհոյեն, և ասեն, ոչ գոլ զյարութիւն մեռելոց․ իսկ մեք, որք հաւատամք 'ի յս̅ քս̅, աւետեմք զյարութիւն մեռելոց, և քարոզեմք զսադուկեցիս գոլ հայհոյիչս ։ Արդարև յարիցեն մեռեալք, և յարիցեն ամենեքեան կատարեալք ։ Քանզի ամենակարողն ա̅ծ, ստեղծիչն երկնի, և երկրի, բացցէ զգերեզմանս մեր, և արտածեսցէ զմեզ 'ի գերեզմանաց մերոց, զժողովուրդ իւր, որ պաշտէ զամենակարողն, և յուսայ 'ի զօրութիւն նորա, և ներածեսցէ զմեզ 'ի յերկիր կենդանեաց, որ է երկնային յերուսաղէմ ։

4․ Գայցէ ժամ, յորում համայնք, որք 'ի գերեզմանս եմք, լսելով զձայն որդւոյն ա̅յ, յարիցուք ։ Եւ որք գործեցաք զբարիս, առաջասցուք 'ի յարութիւն կենի․ իսկ որք գործեալք են զիրս չարս, 'ի յարութիւն դատաստանի ։ Հոգասցուք, զի իցեմք 'ի թւոյ նոցա, որք յարուցեալք ոչ կորընչին, այլ հասանին երկնայնոց փառաց ։ Քս̅, որ է յարութիւն, և կեան, խօսելով զայսպիսեաց, ասէ ։ Այս են կամք հօր իմոյ, որ առաքեացն զիս, զի զա̅մ, զոր ետ ցիս հայր, ոչ կորուսից 'ի նմանէ․ այլ յարուցից զնա յաւուրն յետնում ։ Յօհ․ 6․ Թիւ․ 39․ Քս̅ առաջին պտ

տուղն մեռելոց, յարեաւ 'ի մեռելոց: Ուրեմն և մեք, ք՟իւ յարիցուք: Քանզի որպէս առաջնով մարդով եղև մահն, այսպէս ք՟իւ յարութի մեռելոց: Եւ որպէս 'ի յադամ ա՟մ ոք մեռանի, այսպէս և 'ի ք՟ս ա՟մ ոք կենդանասցի: Յ՟ս Ք՟ս, որ յարեաւ 'ի մեռելոց, յարուցէ և զմեզ 'ի վերջնում յաւուր: Յ՟ս մեռաւ, և յարեաւ: Ուրեմն ա՟ծ զայնոսիկ, որք մեռանին Յ՟իւ, առածցէ ընդ նմա: Մարդիկք, որք մեռանին և լինին հողք, զարթիցին. ոմանք 'ի յաւիտենական կեան, ոմանք 'ի նախատինս: Իմաստունք, որք են բարեկամք ա՟յ, փայլեսցին որպէս ճառագայթ հաստատութե. և որք ուսուցանեն զարդարութի բազմաց, եղիցին իբրև զաստեղս 'ի մշտնջենաւորս յաւիտենականութիս: Որպէս աստղն տարբերի 'ի յաստեղէ 'ի պայծառութե. այսպէս և յարութի մեռելոց: Մինչ ք՟ս երևեսցի կեանն մեր, յայնժամ և մեք երևիցուք ընդ նմա 'ի փառս:

5. Արդարև յարիցեն համայնք, այլ ոչ յարութին ամենեցուն եղիցի փառաւոր: Արդարև յարութին արդարոց է փառաւոր. բայց յարութին ամբարշտաց արհամարհելի: Ուրեմն յարիցեն արդարք, և բարեպաշտք առ փառս. իսկ ամբարիշտք, և անօրէնք առ նախատինս: Արդարք առ յաւիտենական կեանն. իսկ անիրաւք առ երկրորդ մահն: Արդարք առ 'ի ժառանգել զարքայութին երկնային. իսկ ամբարիշտք առ 'ի յընթարկիլ տանջանաց դժոխոց: Արդարք զի մտանիցեն 'ի յուրախութի տն իւրեանց. իսկ ամբարիշտք, զի կապեցեալք ձեռօք, և ոտիւք արկանիցին առ արտաքինս խաւարս. արդարք առ տեսութի ա՟յ, և առ յաւիտենական հանգիստ, իսկ ամբարիշտք առ որդն, որ ոչ մեռանի: Ոչ մեռանին այլ ևս 'ի յաւիտեան, է հասարակ ամենեցուն. բայց կեանն արդարոց 'ի յերջանկութե, 'ի յուրախութե, և 'ի խնդութե. իսկ կեանն անօրինաց 'ի տանջանս, 'ի յարտասուս, և՝ 'ի կրճտման ատամանց. կեանն ամենեցուն է անմահ, բայց կեանն արդարոց վասն փառաց, կեան յաւիտենական. իսկ կեանն ամբարշտաց վասն պակասութե փառաց, մահ յաւիտենական: Մարմինն արդարոց անչարչարելի. բայց մարմինն ամբարշտաց չարչարելի թարց մահուան: Վասնզի կեայցեն դատապարտեցեալք 'ի յաւիտեան, զի չարչարիցին 'ի յաւիտեան: Մարմինն արդարոց փառաւոր. բայց մարմինն ամբարշտաց թարց փառաց: Մարմինն արդարոց նուրբ, և թեթև. բայց մարմինն անօրինաց հաստ, և ծանր: Ուստի 'ի մարմնոջ արդարոց են չորք օժիտք փառաւորի մարմնոյ, որք են պայծառութի, անչարչարելութի, նրբութի, և թեթևութի: Բայց 'ի մարմնոջ անօրինաց է պակասութի ասացելոց ազնուութեց:

6. Որպէս այլ է պայծառութի արեգական, այլ պայծառութի լուսնի, և այլ պայծառութի աստեղաց, և աստղն 'ի յաստեղէ տարբերի 'ի պայծառութե, այսպէս և յարութի մեռելոց: Քանզի այլ է պայծառութի մարմնոյն ք՟ի, այլ պայծառութի մարմնոց ս՟բոց, և պայծառութի մարմնոյ միոյ ս՟բոյ տարբերի 'ի պայծառութե մարմնոյ միւսոյ սրբոյ: Պայծառութի մարմնոյն ք՟ի է որպէս պայծառութի արեգական: Իսկ պայծառութի մարմնոյն մարիամայ որպէս պայծառութի լուսնի: Բայց պայծառութի մարմնոց սրբոց ո՟պ պայծառութի աստեղաց: Արդարև սերմանի 'ի յապականութե, յարիցէ 'ի յանապականութե: Սերմանի 'ի յանարգութե, յարիցէ 'ի փառս: Սերմանի 'ի տկարութե, յարիցէ 'ի հզօրութե: Սերմանի մարմին շնչաւոր, յարիցէ մարմին հոգևոր: Ճշմարտութին յարութե մեռելոց այնպէս ստոյգ է, որպէս ստոյգ է ճշմարտութի յարութե ք՟ի: Որ հաւատայ զյարութե ք՟ի, պարտի հաւատալ, և ընդու-

դու-

դունիլ զյարութիւն մեռելոց ։ Որ ուրանայ զյարութիւն մեռելոց, ուրանայ զյարութիւն քս ։ Յարութիւն քս, է պատճառ յարութեան մերոյ, քս յարեաւ, զի հաւատացողքս զյարութիւն քս, յուսայցեմք զյարութիւն մեր․ Ուստի ընդդէմ ուրացողաց զյարութիւն, այսպէս ձեռնարկէ առաքեալն ։ Եթէ յարութիւն մեռելոց չիք, ապա և քս չէ յարուցեալ․ և եթէ քս չիցէ յարուցեալ, ընդունայն է քարոզութիւն մեր, ընդունայն են և հաւատք ձեր ։ Կորն․ Առաջ․ 15․ Թիւ․ 13․

7․ Փրկիչն մեր մեռաւ, զի մի երկիցէաք ի մահուանէ ։ Եցոյց զյարութիւն, զի յուսադրիցիմք զմեզ կարել յառնել ։ Ընդդէմ ուրացողաց զյարութիւն, նաև այսպէս ձեռնարկել կարեմք ։ Եթէ ոչ է յարութիւն, ոչ ևս է ած, ոչ ևս է նախախնամութիւն․ յայնժամ ամք իրք պատահաբար բերրին, և գործին ։ Քանզի տեսանեմք զբազումս արդարս քաղցեալս, և տանջեալս զանիրաւութիւն․ բայց զմեղաւորս, և զանիրաւս ՚ի փարթամութիւնս, և ՚ի յամս բերկրութիւնս առատացեալս ։ Եթէ այսպէս իցէ, և ոչ այլ դատաստան, ոչ արդէն իցէր գործ արդարոյ դատաստանի, և իմաստաւոյ նախախնամութեան ։ Արդ է ած, և է իմաստնագունեղ նախախնամութիւն ։ Ուրեմն եղիցի յարութիւն, յորում արդարք քաղցեալք, և զանիրաւութիւն տանջեալք, ընկալցին զհատուցումն․ իսկ մեղաւորք, և անիրաւք ՚ի փարթամութիւնս, և ՚ի բերկութիւնս առատացեալք, և ընդդէմ այ բարերարի իւրոյ բարերարութեք նորին ապաժամողք, ընկալցին զդատապարտութիւն ։ Վասն զի արդար է ած, և այնոցիկ, որք յուսան ՚ի նա, վարձատու ։ Այսպէս նաև ընդդէմ ամբարշտաց ձեռնարկեմք ։ Յամում իրի, կամ ներգործութեան, զօրութիւն գործելոյ է յոյսն ապագայի ։ Քանզի որ սերմանէ, սերմանէ ; զի հնձիցէ․ և որ պատերազմի, պատերազմի, զի յաղթ իցէ ։ Այսպէս, որ ՚ի կիր արկանէ զգործ բարեգթութեան, ՚ի կիր արկանէ, զի ընկալցի զհատուցումն ։ Եթէ ուրեմն բառնիցի յոյսն յարութեան․ վերլուծանի պահպանութիւն այի բարեգործութեան ։ Ուրեմն նաև նոյն ինքն բարեպաշտութիւն, և ջանն առաքինութեան, խնդրէ զյոյս յարութեան ։ Ուրեմն եղիցի յարութիւն, զի արդարք․ և բարեպաշտք, զհատուցումն աշխատանաց իւրոց ՚ի յարդար դատաւորէ ընկալցին ։

8․ Այսպէս ընդդէմ ամբարշտաց ոչյուսադրողաց, խօսի սբն Գրիգոր ։ Են ոմանք, մտածողք, թէ հոգին ՚ի մարմնոյ լուծանի, թէ մարմինն փտի, թէ փոշի ՚ի փոշի դառնայ, թէ փոշին ՚ի տարերս լուծանի, զի ոչ իւիք կերպիւ ՚ի մարդկայնոյ ականէ տեսանիցի, յուսահատին կարել լինել զյարութի, և մինչ հային ՚ի չորացեալս ոսկերս, զայսոսիկ դարձեալ զգենուլ զմարմինս և ևս առ կեանս կարել բողբոջիլ յուսահատին․ որք եթէ զհաւատն յարութեան ոչ պահեն ՚ի հնազանդութեան, առուգիւ զայս ունիլ պարտաւորք եղեալք էին ՚ի բանէ ։ Քանզի որում իմիք օր ըստ օրէ, եթէ ոչյարութեան մերում՝ ի տարերս իւրս աշխարհն առ հետևի ։ Վասնզի ընդ վայրկեան ժամանակաց տեսանեմք զբարունակս զկանանչութի տերևոց կորուսանել, ՚ի բերմանէ պաղոց յետ առատութեան դադարիլ, և ահա առժամայն, իբր ՚ի չորացելոյ փայտէ, իբրև յումեքէ յարութէ յառաջացողէ, տեսանեմք զտերևս արձակիլ, զպտուղս մեծանալ, և զբոլոր ծառն դարձեալ կենդանանալ, և զգենուլ զչքնաղութիւն ։ ՚Ի բարոյականի ։ Ուրեմն եղիցի յարութիւն ։ Արդուրեմն յարիցէ արդարն, զի դատիցէ, մեղաւորն, զի դատիցի, ամբարիշտն, զի թարց դատաստանի պատժիցի ։ Յարիցեն մարմինք սրբոց թարց ուրուք յոռութեան, թարց ուրուք տգեղութեան, թարց ուրուք ապականութեան, թարց դժուարութեան․ յորս եղիցին

այն-

այնքան դիւրութի, որքան եղիցի երջանկութի։ Տեսաք զյարութիւն արդարոց լինելոց փառաւոր, իսկ անօրինաց նախատելի։ Գրկեսցուք ուրեմն զարդարութի, զի կարասցուք առնուլ զփառաւոր յարութիւն։

## ԳԼՈՒԽ ՂԸ.

### Յաղագս ընդհանրականի դատաստանի։

1. Յետ յարութեան առժամայն լինի ընդհանրական դատաստան։ Վասնզի եկեսցէ Քս դատաւորն ընդհանրոց առ 'ի դատել զհամայնս։ Յս, որ 'ի յաւուր համբարձման վերացաւ 'ի յերկինս, այնպէս եկեսցէ որպէս տեսին զնա առաքեալք գնալ 'ի յերկինս։ Եկեսցէ ընդհանրական դատաւորն, դատողն ըստ ուղղութեան, և արդարութեան։ Եղիցի ընդհանրական դատաստան, զի իւրաքանչիւր ընկալցի զզուգահաւասար հատուցումն ըստ գործոց իւրոց, զորս գործեաց 'ի յաշխարհի։ Դարձեալ, զի փառաւորիցի Քս, որ անիրաւաբար դատապարտեցաւ 'ի յերկրի 'ի յամբարշտաց։ Դարձեալ, զի ուղղութի դատաստանի այ, յայտ լինիցի ամց։ Դարձեալ, զի արդարք, որք ընկալան զպսակ, և զփառս մասնաւոր դատաստանաւ որքան առ հոգին, պսակեսցին, և փառաւորեսցին նաև որքան առ մարմինն։ Դարձեալ, զի անիրաւք, որք անիրաւաբար աստ 'ի յաշխարհի նեղեցին զարդարս, և բռնաւորք, և հալածիչք, որք անողորմաբար կոտորեցան ընդդէմ բարեաց, և խստաբարոյաբար չարչարեցին զանմեղս, և զհաւատարիմս ծառայս ամենակարողին այ. տեսեալք զերջանկութի արդարոց յինքեանց անողորմաբար, և խստաբարոյաբար նեղեցելոց, և չարչարեցելոց, առաջի ամենեցուն ամաչեսցեն։ Վերջապէս, զի արդարք, և հաւատարիմք ծառայք այ 'ի վերայ ուղղագունեղի վճռոյ ամենակարողի, ամենիմաստոյ, արդարագունեղի, ուղղագունեղի, և ամենաբարւոյ դատաւորի խնդասցեն, ուրախանասցեն, և ցնծասցեն։

2. Դատաւորն, որ առնէ զընդհանրական, և զվերջին դատաստան, է Յս Քս փրկիչն աշխարհի, միածին որդին այ, ճշմարիտն ած, և ճշմարիտն մարդ, 'ի սեղանոյ խաչին վասն փրկութեան մարդկանց զենեալն, ամենակարողն, արդարագունեղն, ուղղագունեղն, և ամենաբարին, որ ունի յինքեան զամս իրս, որք 'ի դատաւորի ըստ ուղղութեան, և արդարութեան դատողի խնդրին։ Քանզի եթէ խնդրի կարողութի, է ամենակարող. եթէ խնդրի իմաստութի, է ամենիմաստ. եթէ խնդրի արդարութի, է արդարագունեղ. իսկ եթէ խնդրի ուղղութի, է ուղղագունեղ. և եթէ խնդրի բարութի, է ամենաբարի։ Դատաւորս այս արասցէ զխստագունեղ քննութի։ Վասնզի քննեսցէ զմիտս, զխորհուրդս, զբանս, զգործս, և զդիտաւորութիւնս. զննելով, թէ որով դիտաւորութեամբ, և որպիսեաւ ջերմեռանդութեամբ արարեալք իցեն բարեգործութիւնք։ Վերջին դատաստանն եղիցի կարի յոյժ զարհուրելի։ Քանզի ամենահզօր առիւծն 'ի ցեղէն յուդայ բարկացեալ, ընդդէմ անօրինաց գոչեսցէ, և ծայրագունեղ կայսրն, և թագաւորն ընդհանրոյ, ընդդէմ ողորմելւոյ մարդոյ մեղաւորի զաստեղծոնածս իւրս զինաւորեսցէ։ Կացցեն առաջի ատենի զարհուրելւոյ դատաւորի, ընդհանուրք որդիք, և դստերք ադամայ զահիհարեալք, քահանայապետք, քահանայք, եկեղեցականք, և աշխարհականք, թագաւորք, և թագուհիք, արք, և կանայք, հաւատացեալք,

ցեալք, և անհաւատք ։ Արդարադունեղ, և ուղղադունեղ դատաւորն թարց աչառութեան անձանց, ըստ ուղղոյ արդարութեան, զանփոփոխելի վճիռն տացէ, կոչելով զարդարս օրհնեցեալս, և զանօրէնս անիծեալս․ առընլով զարդարս առ արքայութի, և յղելով զանիրաւս առ դժոխս ։

3. Յս Քս տրն մեր, որում ետ հայրն յաւիտենական զամն ազգս։ Հովուեսցէ զնս գաւազանաւ երկաթեաւ ։ Եւ որ կացուցաւ օրինադիր 'ի վր ամենեցուն, դատեսցէ զբոլոր տիեզերս իրաւամբ, և զժողովուրդս արդարութբ իւրով ։ Վս այսորիկ ամից, զորս գործեմք, քս ած մեր ածէ զմեզ 'ի դատաստան ։ Տրն ած մեր 'ի դատաստան եկեսցէ ընդ ծերոց ժողովրդեան, և իշխանաց նր, ընդդէմ այնոցիկ, որք հովուէին զայգին նորա․ և զյափշտակումն չքաւորի պահեն 'ի տան իւրում ։ 'Ի յամպս երկնի որդին մարդոյ եկեսցէ, և դատեսցէ զամենեսեան, դատապարտելով զանօրէնս, և տալով արդարոց զիշխանութի, և զպատիւ, և զարքայութի, և համայնք ժողովուրդք, ազգք, և լեզուք ծառայեսցեն նմա ։ Տրն զօրաց մերձեսցի առ մեզ և եղիցի շուտափոյթ վկայ չարաբարոյից, և շնացողաց, և երդմնազանցից, և այնոցիկ, որք զրկեն զվարձն վարձկանի, և խոնարհեցուցանեն զայրիս, և զորբս, և նեղեն զպանդուխտն ; և ոչ երկնչին 'ի տէր իւրմէ ։ Երևեսցի նշան որդւոյ մարդոյ 'ի յերկինս, և յայնժամ ողբասցեն ամք ազգք երկրի․ և տեսցեն զորդին մարդոյ, որ նստի ընդ աջմէ զօրութեն այ, եկեալ 'ի յամպս երկնից բազմաւ զօրութբ, և մեծվայելչութբ ։ Որդին մարդոյ, ածն մեր, դատեսցէ զմեզ․ քանզի հայրն զամ դատաստան ետ որդւոյ ; զի համայնք պատուիցեն զորդին, որպէս պատուեն զհայրն, և ետ նմա զիշխանութի դատելոյ, զի է որդի մարդոյ ։ Համայնքս կացցուք առաջի ատենինքի, և իւրաքանչիւր մեր տացէ վասն իւր զհամար այ ։ Երկիցուք ուրեմն 'ի զարհուրելւոյ դատաստանէն այ ։

4. Արդուրեմն մեք համայնքս պարտիմք երևիլ առաջի ատենին քի, զի իւրաքանչիւր վերաբերիցէ զյատուկս մարմնոյ, ըստ որում գործեաց, թէ զբարի, թէ զչար ։ Յս քս, որ կացուցեալ է 'ի այ դատաւոր կենդանեաց, և մեռելոց, դատեսցէ զմեզ ։ Արդարև կացոյց ած զօրն, յորում դատելոց է զաշխարհս իրաւամբ 'ի ձեռն Յիքի, որ յարեաւ 'ի մեռելոց ։ Երկիցուք 'ի քէ, և սիրեսցուք զնա ։ Սա է օրինադիրն, և դատաւորն․ սա կարէ կորուսանել, և փրկել ։ Սա եկեսցէ ամպօք, և զայս տեսցէ ամ ակն, և այնոքիկ, որք զնա խոցեցին ։ Տեսեալք զնա, ողբասցեն զիւրեանս ինքեանս 'ի վերայ նորա ամք ազգք երկրի ։ Քանզի 'ի բերանոյ նորա ելցէ սուր երկսայրի ։ Փոյթ առ փոյթ եկեսցէ առ 'ի հատուցանել իւրաքանչիւրում ըստ գործոց նրին ։ Յորժամ գայցէ տրն, բաժանեսցէ զիւրս 'ի դատապարտեցելոց․ զբրս առցէ ընդ ինքեան, իսկ զչարս մատնեսցէ հրոյ․ և զորս ընտրեալ իցէ մերձեսցին նմա ։ Ձեռն տն կալցի զդատաստան, և հատուցէ տր զվրէժ թշնամեաց իւրոց, և վերահատուցէ նոցա, որք ատեցին զնա ։ Եկեսցէ տրն մեր, և ամք սրք նորա ընդ նմա, և դատեսցէ զժողովուրդ իւր ։ Ուրեմն եկեսցէ տրն հազարօք սրբօք իւրովք առնել զդատաստան ընդդէմ ամից, և զամից գործոց ամբարշտութեն նոցա, որովք ամբարշտաբար գործեցին ։ Ժողովեսցէ զամ ազգս ի ձորն Յովսափու, և վիճեսցէ ընդ նոսա անդ ։ Ուստի յարիցեն, և ելցեն մարդիկք 'ի ձորն Յովսափու վասն զի նստցի տրն անդ, զի դատիցէ զամ ազգս 'ի շրջակայս ։

5. Տրն զօրաց առաքեսցէ զհրեշտակս իւրս ընդ փողոյ, և ձայնիւ մեծաւ, և ժողովեսցեն զընտրեալս

տրեալս նորա 'ի չորից հողմոց , 'ի ծագաց երկնից մինչև 'ի ծագս նր : Առժամայն յանկարծակի տրն զօրաց այցարասցէ 'ի յորոտման , և 'ի համաշարժեցման երկրից , և ձայնիւ մեծաւ մրրկի , և ալեկոծման : և բոցով հրոյ կլանողի : Զարհուրելի տրն եկեսցէ հրով , և իբրև մրրիկ կառավար նորա , խաղաղուցանել սրտմտութբ զպայրացումն իւր , և զյանդիմանութի իւր 'ի բոց հրոյ · վասնզի տրն դատեսցէ հրով : Առաջի նորա հուր կլանող , և յետ նորա բոց այրող · իբր պարտեզ բերկրութե առաջի նորա , և յետ նորա միայնակեցութի անապատի , ոչոք եղիցի , որ փախիցի 'ի նմանէ : Արեգակն , և լուսինն խաւարեսցին , և աստեղք յետաքարշեսցեն զճառագայթ իւր : Զի մեծ է օր տն , և կարի զարհուրելի , և ով կարասցէ տանել զնա : Մերձ է օր տն մեծ , մերձ է և կարի փաղփաղեայ · ձայն աւուր տն է գառն , նեղեսցի անդ հզօրն : Օր բարկութե , է օրն այն , օր նեղութե , և անձկութե , օր տառապանաց , և թշուառութե , օր խաւարի , և ստուերի , օր մառախլոյ , և մրրկի , օր ամբոխոյ , և հնչման 'ի վր քաղաքաց ամրացելոց , և 'ի վր աշտարակաց բաձրագունեղից : Եկեսցէ օրն բորբոքեցեալ իբրև զհնոց , և եղիցին ամբ հպարտք , և համայնք գործօղք զանօրէնութի իբրև զեղեգ : Եւ օրն աւեկօղն այրեսցէ , այնպէս զի ոչ թողցի նոցա արմատ , և ոչ ոստ : Զի նաւորեսցուք ուրեմն զմեզ վասն այնր աւուր արդարութբ , բարեգործութբ , և սիրով , զի մի կորընչիցիմք յաւուրն այնմիկ :

6. Յառաջեսցեն զօրն դատաստանի նեղութիք , և առժամայն յետ նեղութեց աւուրցն այնոցիկ արեգակն խաւարեսցի , և լուսինն ոչ տացէ զլոյս իւր , աստեղք թօթափեսցին 'ի յերկնից , և զօրութիք երկնից համաշարժեսցին : Նախ քան զօրն դատաստանի բացցի վեցերորդ կնիքն , և 'ի բանիլն վեցերորդի կնքոյ · եղիցի մեծ երկրաշարժումն , և արեգակն եղիցի սեւ իբրև զքուրձ մազեղէն , և լուսինն բոլոր լիցի որպէս զարիւն , և աստեղք թօթափեսցին 'ի յերկնից 'ի վերայ երկրի · որպէս թուզն արտայղէ զդեռահաս իւրս , մինչ շարժի 'ի մեծէ հողմոյ : Նախ քան զդատաստանն եղիցի մեծ անձկութի : որպի ոչ եղև 'ի սկզբանէ աշխարհի մինչև ցարժմ , և ոչ եղիցի · և եղիցի 'ի յերկրի վիշտ ազգաց վասն խռովութե հնչման ծովու , և ալեաց , 'ի ցամաքիլն մարդկանց վասն երկիւղի , և ակնկալութե , որք վերադան ընդհանրոյ աշխարհի : Հսկել ուրեմն պարտիմք յամենայն ժամանակի , և աղօթել , զի արժանի լինիցիմք փախչել յայսմանէ յամէ , և կալ առաջի որդւոյ մարդոյ : Արդ ուրեմն եկեսցէ օր տն որպէս գող , յորում երկինք մեծաւ ուժգնութբ անցցեն , իսկ տարերք ջերմութբ լուծցին , իսկ երկիրն , և որք 'ի նմա են գործք , այրեսցին : Մինչ ուրեմն այսոքիկ ամենեքեան լուծանելիք են , պարտիմք մեք գոլ 'ի սրբս կենցաղավարութիս , և 'ի բարեգործութիս , սպասելով , և փաղփաղելով առ գալուստ աւուր տն , որով երկինք բորբոքեցեալք լուծցին , և տարերք ջերմութբ հրոյ մաշեսցին : Վասնզի տր դատաւորն մեր , տր օրինադիրն մեր : Տր թագաւոր , կայսր , և իշխան մեր , պահեսցէ զմեզ 'ի յինքեան :

7. Յաւուր տն փրկեսցին ամենեքեան , որք գտեցեալք լինիցին 'ի մատենի կենի : Վասնզի ծագեսցի երկիւղածաց յանուանէ տն արեգակն արդարութե , և առողջութի ն 'ի փետուրս նորա · և ելցեն , և թռիցին երկիւղածք յանուանէ տն , որպէս զուարակն 'ի յանդէոց : Եւ երկիւղածք յանուանէ տն սատակեսցեն զամբարիշտս , որք եղիցին որպէս զմոխիր ընդ թաթի ոտից նոցա : Յերկիւղածաց յանուանէ տն պահեցեալ է պսակն արդարութե , զոր հատուսցէ նոցա տր և յաւուրն յայնմիկ

մեկ

մին արդար դատաւորն ։ Քանզի պսակեսցէ պամենեսեան, որք սիրեն զգալուստ նորա ։ Յաւուրն յայնմիկ ընդդէմ անարգեցելոց, որք ոչ են գրեալք 'ի մատենի կենի, բարկութի ածն բորբոքեցեալ, և ծանր առ 'ի տանիլ · շրթունք նորա լիք սրտմտութե, և լեզու նորա իբրև զհուր կլանող ։ Ոգի նորա որպէս զվտակ դիզացեալ մինչև առ միջն վզի, առ 'ի կորուսանել զամբարիշտս ։ Յաւուրն յայնմիկ կալցի տէր զհեծանոցն 'ի ձեռին իւրում, և սրբեսցէ զկալ իւր, և ժողովեսցէ զցորեան իւր 'ի շտեմարան իւր, իսկ զյարդս այրեսցէ հրով անշիջանելեաւ · վասնզի յորժամ դայցէ որդին մարդոյ մեծավայելչութե իւրով, և ամք հրեշտակք ընդ նմա, յայնժամ նստցի 'ի վերայ աթոռոյ մեծավայելչութե իւրոյ · և ժողովեսցին առաջի նորա ամք ազինք, և մեկնեսցէ զնոսա 'ի միմեանց որպէս հովիւն որոշէ զօդիսն 'ի յայծեաց ։ Եւ արդարև կացուսցէ զօդիսն ընդ աջմէ, և զայծիսն 'ի ձախմէ ։ Յայնժամ երկինք յայտնեսցեն զանօրէնութի մարդոյ, և երկիրն յարիցէ ընդդէմ նորա ։ Եւ զհամայնս, որք լինին, առածցէ ած 'ի դատաստան վասն ամի մոլորեցելոյ, թէ իցէ բարի, թէ չար ։ Քանզի 'ի վերջնում մարդոյ եղիցի բացայայտութի գործոց նորա ։

§. Արդարադատունեղ դատաւորն յայնմ աւուր, ամբարշտաց, և մեղաւորաց հատուսցէ զվրէժ, պահեալ զնոսա 'ի յաւուր վրէժխնդրութե ։ Ուրեմն ով մարդ, նախ քան զդատաստան պատրաստեա քեզ զարդարութի, զի առաջի այ կարիցես գտանել զքաւութի ։ Վասնզի ըստ Ճանապարհաց մերոց, և ըստ հնարակերտութեց մերոց դատեսցէ զմեզ ած ։ Յայնժամ ամ գաղտնի յայտնեսցի, և ամ ծածուկ հրատարակեսցի ։ Եւ օրն տն որպէս գող 'ի գիշերոջ, այնպէս եկեսցէ ։ Զի յորժամ ասիցեն խաղաղութի, և ապահովութի, յայնժամ յանկարծահաս մահն վերադայցէ նց, որպէս զցաւ ունեցողի 'ի յարգանդոջ, և ոչ փախիցեն ։ Երանի, որ հսկէ, և պահէ զզգեստս իւրս, զի մի շրջիցի մերկ, և տեսանիցեն զտգեղութի նորա ։ Տակաւին յետ սակաւոյ, և փոքրիկ ժամանակի, որ գալոց է, եկեսցէ, և ոչ յապաղեսցէ ։ Ահա դատաւորն կայ առաջի դրան ։ Մեռեալք մեծք, և փոքրիկք կացցեն յառաջի աթոռոյ, և գրեանք բացցին, և դատեսցին մեռեալք յայսցանէ իրաց, որք գրեալք են 'ի գիրս, ըստ գործոց նց ։ 'Ի վաղՃանի դատաստանի ասասցէ ամենաարդար դատաւորն, այնոցիկ, որք եղիցին ընդ յաջմէ նորա ։ Եկայք օրհնեալք հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալն ձեզ զարքայութին 'ի սկզբանէ աշխարհի · յետոյ ասասցէ այնոցիկ, որք եղիցին ընդ ահեկէ · երթայք յինէն անիծեալք 'ի հուրն յաւիտենականն, որ պատրաստեցեալ է սատանայի, և հրեշտակաց նորա ։ Եւ երթիցեն սոքա 'ի տանջանս յաւիտենականս, իսկ արդարք 'ի կեանս յաւիտենականս ։ Յետ ընդհանրոյ դատաստանի ոչ գոյ այլ դատաստան ։ ՎՃիռն է անփոփոխելի ։ Կեանն արդարոց է յաւիտենական, պատիժն դատապարտեցելոց է յաւիտենական ։

# ԳԼՈՒԽ ՂԹ.

## Յաղագս դժոխոց :

1. Դժոխն է տեղի պատապարտեցելոց, յորում անօրէնք չարչարելք, և տանջելք են 'ի յաւիտեան: Յարդարադատութենէ աստուածոյ պատրաստեցեալ է տեղիս այս, զի անզեղջք, և մահուչափ մեղօք յայսմանէ կենէ ելանօղք չարչարեսցին 'ի յաւիտեան: Նախ քան զընդհանրական դատաստանն հոգիք ամբարշտաց և անզեղջից տանջին 'ի դժոխս: Յետ ընդհանրոյ դատաստանի, ամբարիշտք, անիրաւք, և անզեղջք ընդ հոգւոյ, և ընդ մարմնոյ տանջելք են 'ի յաւիտեան: Զդժոխն քարոզէ Ածաշունչն, ուսուցանէ մեր մայր եկեղեցին, առաջադրէ մեզ հաւատալի ուղղափառ, և կաթուղիկէ հաւատն, հզօրաբար պաշտպանեն մեք հարք, վարդապետք եկեղեցւոյ, և ճշմարտախօսք քարոզիչք, պահանջէ արդարութիւն, և հաստատէ ողորմութիւն: Ածաշունչն քարոզէ զդժոխն, վասնզի 'ի բազում տեղիս հնոյ, և նորոյ կտակարանի դատանի յիշումն դժոխոց: Ուսուցանէ սուրբ մայր եկեղեցին, քանզի 'ի բազում վճիռս նորա ստորասի, և անուանի դժոխն: Առաջադրէ մեզ ուղղափառ հաւատն զդժոխն հաւատալի. վասնզի մին 'ի ստորագունեղից մասանց ուղղափառի հաւատոյ, դատանի, և է մասն դժոխոց: Պաշտպանեն զդոյն դժոխոյ մեք հարք, վարդապետք եկեղեցւոյ, և քարոզիչք. քանզի զերկարագունեղս բանս շարադրեն զգոյութենէ դժոխոց:

2. Արդարութիւն պահանջէ զդժոխն. վասնզի բնութիւն, և հրամանն արդարութեան է, զի հատուսցի իւրաքանչիւրում այն, որ արժանաւորի: Ըստ պարտի մարդոյ ենթակայի օրինի, և աստաբար գործողի, հատուցանիլ պարգև, եթէ արժանաւորի զպարգև. իսկ եթէ արժանաւորի զպատիժ, պարտի տալ պատիժ: Եղեռնագործք, անօրէնք, և ամբարիշտք, որք արհամարհեն զօրէնն, անդոսնեն զպատուիրանս, և անարգեն զօրինագիրն, լեալք ապստամբք, և անհնազանդք, ոչ արժանաւորին զպարգևս: Վասնզի պարգևն պարտի այնոցիկ, որք պատուեն զօրինագիրն, պահեն զպատուիրանս, պահպանեն զպատուէրս, փարին զհնազանդութեան, և կամաւորապէս ենթարկեն զինքեանս լծոյ օրինաբար հրամայողի: Ուրեմն եղեռնագործք, անօրէնք, և ամբարիշտք արժանաւորին զպատիժ: Պատիժ պարտաւոր սոցին, որք 'ի վախճանի կենի իւրոյ անզեղջք, և 'ի մահուչափ մեղս մեռանին, ոչ է այլ, եթէ ոչ պատիժն դժոխոց, և յաւիտենականն. վասնզի պատիժն քաւարանի, և ժամանակաւորն պարտաւոր է ապաշխարողաց, և 'ի ներելիս մեղս թարց մահացու մեղաց մեռանողաց: Ուրեմն եղեռնագործք, անօրէնք, և ամբարիշտք, անզեղջք, և 'ի մահացու մեղս մեռանօղք, արժանաւորին զպատիժ դժոխոց, և զյաւիտենականն: Հաստատէ զդժոխն ողորմութիւն. վասնզի ողորմութիւն զապաշխարօղս խնայէ ինքեամբ, և զանիրաւութիւն առնօղս ինքեան անդառնէ, և իբրև զապերախտս մատնէ արդարութեան քեռ իւրում, զի զեղեռնագործս, և հեզաբարոյութեան, և քաղցրաբարոյութեան ողորմածութեան ապաշխարօղս, և զգթած ծոցն ողորմութեան ոչ ընդունօղս, պատժել, զոր արժանաւորին, պատժեսցէ:

3. Կրկնակ է պատիժն դատապարտեցելոց, այսինքն, պատիժն վնասու, և պատիժն զգայութեան: Պատիժն վնասու է զրկումն 'ի բարեաց: Պատիժն զգայութեան է

հաւա-

հաւաքումն չարչարանաց ։ Դատապարտեցեալն առ դժոխս , զրկի 'ի բազմաց բարեաց հանդերձ յուսահատութե̄ ։ Քանզի զրկի 'ի փառաց մարմնոյ , այսինքն , յանչարչարելութենէ , 'ի պայծառութենէ , 'ի նրբութենէ , և 'ի թեթևութենէ ։ Զրկի 'ի յուղղութենէ իմացութե̄ , և 'ի յուղղութենէ կամաց ։ Զրկի 'ի բարեկամութենէ , և 'ի շնորհէ ա̄յ ։ Զրկի 'ի տեսութենէ ա̄ծային էութե̄ , 'ի յերջանկութենէ , 'ի յերանութենէ , և 'ի յաւիտենականէ փառաւորէ , և երջանիկ կենէ ։ Զրկի յարքայութենէ երկնից , 'ի պետութենէ երջանիկ , և 'ի յընկերակցութենէ ս̄րբոց ։ Զրկի յա̄միից ցանկալեաց , և փափագելեաց բարեաց , զորս երանեալք , և զա̄մենայն էութե̄ն տեսանողք վայելեն 'ի յերկինս ։ Դատապարտեցեալք առ դժոխս են թարց ուղղութե̄ իմացութե̄ , և թարց ուղղութե̄ կամաց , ունեցողք զիմացութի̄ն խաւարացեալ , և զկամս չարացեալ ։ Դատապարտեցեալք առ դժոխս են թարց փառաց մարմնոյ , և թարց երանութե̄ հոգւոյ ։ Դատապարտեցեալք առ դժոխս են թարց ժառանգութե̄ արքայութե̄ երկնից , թարց միաւորութե̄ ընդ ք̄ի , թարց սիրոյ , և կատարելոյ սիրելութե̄ , և թարց ընկերակցութե̄ ս̄րբոց ։ Նաև զրկեցեալք են յա̄միից յիշեցելոց բարեաց , զորս երանեալք վայելեն 'ի յերկինս ։ Յասացելոց բարեաց զրկեցեալք են յուսահատութե̄ հանդերձ ։ Վասնզի դատապարտեցեալք ստուգացեալք են , թէ դատապարտեցեալք են առ դժոխս , և ստուգացեալք են , թէ տանջանն դժոխոց լիցէ յաւիտենական , և ստոյգք են , թէ վճռն ընդդէմ ինքեանց տուեցեալն լիցէ անփոփոխելի ։ Ուստի ոչ կարեն յուսալ զազատումն ։

4 . 'Ի դատապարտեցեալս է հաւաքումն չարչարանաց , և տանջանաց ։ Վասնզի 'ի դժոխս է գերութի̄ , շղթայք , խաւար արտաքին , կրճտումն ատամանց , անտանելի դարշահոտութի̄ , քաղցութի̄ , ծարաւութի̄ , անհանգստութի̄ , խռովումն , շփոթումն , որդ , որ ոչ մեռանի , և հուր անշիջանելի ։ 'Ի դժոխս է գերութի̄ . քանզի դատապարտեցեալք մատնեցեալք են իշխանութե̄ սատանայի , անողորմագունեղի , խստաբարոյագունեղի , և դաժանաբարոյագունեղի չարչարողի ։ 'Ի դժոխս են շղթայք . վասնզի դատապարտեցեալք կապեալք են զազատութի̄ն ։ 'Ի դժոխս է խաւար արտաքին . քանզի դժոխն է 'ի խորում երկրի , ուր ոչ՛ք լոյս դոյ արեգական , կամ լուսնի ։ 'Ի դժոխս է կրճտումն ատամանց . վասնզի 'ի դատապարտեցեալս , յարժամ գնին 'ի կողմն ցրտագունեղի , 'ի ցրտութե̄ լինի կրճտումն ատամանց ։ 'Ի դժոխս է անտանելի դարշահոտութի̄ . վասնզի մարմինք դատապարտեցելոց են ամենագարշահոտք , զանտանելի դարշահոտութի̄ արտաւաքօղք ։ 'Ի դատապարտեցեալս է քաղցութի̄ , և ծարաւութի̄ . վասնզի 'ի քիմս դատապարտեցելոց է մեծ չարչարան ։ 'Ի դժոխս է անհանգստութի̄ . քանզի 'ի դատապարտեցեալս ոչ է հանգստութի̄ , այլ չարչարան , և տանջան ։ 'Ի դժոխս է խռովութի̄ . վասնզի 'ի դատապարտեցեալս ոչ է խաղաղութի̄ ։ 'Ի դժոխս է շփոթումն . քանզի 'ի դատապարտեցեալս ոչ՛ք կարգաւորութի̄ գտանի ։ 'Ի դատապարտեցեալս է որդ , որ ոչ մեռանի . վասնզի միտն դատապարտեցելոց միշտ չարչարէ , և տանջէ ։ Ա̄մ մտածումն միշտ չարչարէ , և այն որ է անցելոց , և այն , որ է ներկայից , և և այն , որ է ապառնւոյ ։ 'Ի դժոխս է հուր անշիջանելի . քանզի հուրն միշտ տանջէ զդատապարտեցեալս ։

5 . Կամքն դատապարտեցելոց կարի յոյժ , և բոլորովին է վաթարացեալ , այնպէս զի 'ի նոցանէ ոչ կարիցէ ելնել առաքինութի̄ն ։ Քանզի 'ի դժոխս թէպէտ եղիցի խայթ զղջման , սակայն անդ ոչ եղիցի իմն զարթումն կամաց ։ Ուստի 'ի դատապարտեցեալս այնպէս մեղա_

դրին անօրէնութիւնք նոցա, զի ոչ իւիք կերպիւ յայնցանէ կարիցէ սիրել, կամ ըղձացեալ լինել արդարութեան: 'Ի դատապարտեցեալս է ցաւն այրեցման, և 'ի միասին կուրութիւն մտաց: Վասնզի այն վրէժառու բոցն մոլութեանց ոչ ունի զլուսումն, և զլոյս. քանզի որով զնա դժոխային բոցն կլանէ, 'ի տեսութենէ ճշմարտի լուսոյ կուրացուցանէ, զի արտաքուստ զնոսա ցաւն այրեցման չարչարիցէ, և 'ի ներքուստ պատիժ կուրութեան խաւարեցուցանիցէ, ըստ որում, որք հեղինակի իւրում մարմնով, և սրտիւ մեղանչեցին, 'ի միասին սրտիւ, և մարմնով չարչարիցին, և զչարչարանս երկաքանչիւրուրեք զգայցեն, որք մինչ աստ կեային վասթարաց հեշտութեանց իւրոց յերկաքանչիւրոյն ծառայէին: Հուրն դժոխոց ըստ ծանրութեան մեղաց չարչարէ զդատապարտեցեալս: Քանզի թէպէտ հաւաստի է, թէ հուրն գեհենոյ, և դժոխոց իցէ մի, սակայն ոչ միով կերպիւ չարչարէ զամս մեղաւորս: Վասնզի իւրաքանչիւր դատապարտեցեալն, և յաւիտենականի հրոյ մատնեցեալն, որքան պահանջէ մեղն նորա, այնքան չարչարանս զգասցէ անդ: Հուրն անշիջանելի, 'ի յաւիտեան չարչարեսցէ զդատապարտեցեալս: Հուրն գեհենոյ, որ է մարմնեղէն, զի յինքն զեղեցեալս անիծեալս 'ի յոյժ մարմնաւորապէս այրեսցէ, ոչ վառի մարդկայնով հնարիւ, և ոչ սնանի փայտիւք. այլ միանգամ ստեղծեցեալ յարատևէ անշիջանելի, և ոչ կարօտի աջորդման, և ոչ դադարի 'ի բորբոքմանէ, միշտ մնայ, և միշտ չարչարէ զդատապարտեցեալս:

6. 'Ի դժոխոց ոչ գոյ յետադարձումն, և ոչ լինի ազատութիւն յայնմանէ տեղւոջէ: Վասնզի ովք էջ 'ի դժոխս առ 'ի կրել զչարիս նորա, այլ ևս անդէն ոչ դարձցի առ լոյս. քանզի ոչ բնաւ այլ ևս ողորմութիւն ներողի ազատէ զայնոսիկ, զորս միանգամ դատապարտէ արդարութիւն դատողի 'ի տեղիս չարչարողականս: Յայնժամ անյագ բոցն այրէ, զորս այժմ մարմնաւոր հեշտութիւն այրէ. յայնժամ ընդարձակ բացեալ խորխորատն դժոխոց կլանէ զայնոսիկ, զորս ունայն հպարտութիւն այժմ բարձրացուցանէ. և ևս որք վաղնջուց 'ի մոլութեան զկամս նենգաւորի, և խորամանկի յորդորչի առ կատարեցին, յայնժամ ընդ դքսի իւրում դատապարտեցեալք հասնին առ տանջանս, և առ չարչարանս: Իւրաքանչիւրն դատապարտեցելոց ըստ կերպի մեղաց իւրոց 'ի յաւիտեան չարչարեսցի: Քանզի ըստ կերպի մեղաց զանազանին պատիժք, և ըստ եղեռնագործութեանց, և ըստ ծանրութեան անօրէնութեան, իւրաքանչիւր դատապարտեցեալ 'ի դժոխայնոջ հրոջ չարչարեսցի: Որպէս յայսմ աշխարհի բազումք կան ենթ միոյ արեգական. ոչ սակայն նոյնոյ արեգական զջերմութիւն հաւասարապէս զգան. վասնզի նա զոմն առաւել ջերմացուցանէ, և զոմն նուազ: Այսպէս անդ 'ի միում հրոջ ոչ է մին կերպ բորբոքման, և այրեցման. քանզի զոր առնէ աստ զանազանութիւն մարմնոց, զայս անդ առնէ զանազանութիւն մեղաց, զի և զհուրն ոչ ունիցին աննման, և սակայն զիւրաքանչիւրն նոցին աննմանաբար այրիցէ: Անդ եղիցի լաց, և կրճտումն ատամանց. լաց արդարև վասն հրոյ, որ ոչ շիջանի. կրճտումն վասն որդոյ, որ ոչ մեռանի. Յայտնապէս լացն է 'ի ցաւոյ, և կրճտումն ատամանց 'ի զայրացմանէ:

7. Անիրաւք անզեղջք ընկեսցին 'ի խաւարն արտաքին, զի անդ կրճտիցեն ատամունս, որք աստ 'ի շատակերութենէ խնդային: Քանզի լացն 'ի ջերմութենէ, կրճտումն սովոր է ընդոստուցանել 'ի ցրտութենէ. անդ ցուցանի գոլ կրկնակ դժոխս, այսինքն, սաստկի ցրտութեան, և անտանելւոյ ջերմութեան: Արդ, ուրեմն 'ի դժոխս եղիցի անտանելի ցրտութիւն, անշիջանելի հուր, անմահ որդն, անտանելի

նելի դարշահոտութիւն , շօշափելի խաւար , դանակոծումն ձաղողաց , զարհուրելի տեսումն դիւաց , շփոթումն մեղաւորաց , յուսահատումն ամ̃ից բարեաց : Վասնզի եղիցի թշուառաւաց մահ թարց մահուան , պակասումն թարց պակասութեան . քանզի մահն անդ միշտ սկսանի , և վերջանալ ոչ գիտէ : Յետ ընդհանրոյ դատաստանի յառաջագոյն կոչին օրհնեալքն 'ի յարքայութիւն , քան անիծեալքն 'ի հնոց հրոյ ձգիցին յաւիտենականի , այսինքն , որով յառաջագոյն ցուցիցին տեսանելով , թէ զինչ կորուսեալ իցեն . և արդարք տեսցեն , և ուրախասցին , թէ յորմէ ազատեալք իցեն : Հուրն դժոխոց ճառագայթեսցէ թշուառաց առ աճեցումն , զի տեսանիցեն , ուստի ցաւիցին . և ոչ առ մխիթարութիւն , զի մի տեսանիցի , ուստի խնդասցեն : Դժոխն է լիճ թարց չափոյ , խոր թարց յատակի , լի ցաւով անթուելեաւ , անդ է թշուառութիւն , անդ խաւար , անդ ոչոք կարգաւորութիւն , անդ է յաւիտենական զարհուրումն , անդ ոչոք յոյս բարւոյ , ոչոք յուսահատութիւն չարի : 'Ի դժոխս մեղաւորն տեսցէ , և բարկասցի , կրճտեսցէ զատամունս իւր , և մաշեսցի . ցանկութ̃ի մեղաւորաց կորիցէ : Որքա , որք էին որդիք արքայութեան , և որք կարէին հասանիլ յաւիտենականի կենի , վասն անզեղջութեան ընկեցցին 'ի խաւարն արտաքին , անդ եղիցի լաց , և կրճտումն ատամանց :

8. Անօրէնք անզեղջք , 'ի ապառանւոջ դարոջ ասացողք են . Տր Տր ոչ ապաքէն անուամբ քով մարգարէացաք , և անուամբ քով դեւս արտաքսեցաք . և անուամբ քով զբազում զօրութիւնս արարաք : Լուիցեն յամենարդար դատաւորէ . զի ոչ երբէք ճանաչեցի զձեզ . 'ի բաց կացէք յինէն , որք գործեալ էք զանօրէնութիւն : Առաքեսցէ ուրեմն որդին մարդոյ զհրեշտակս իւրս , և հաւաքեսցեն յարքայութե̃ նորա զամ̃ն գայթագղութիւնս , և զայնոսիկ , որք գործեն զանօրէնութիւն . և արկցեն զնոսա 'ի հնոցն հրոյ : Անդ եղիցի լաց , և կրճտումն ատամանց : 'Ի վերջնումն աշխարհի , գայցեն հրեշտակք , և որոշեսցեն զչարս 'ի միջոյ արդարոց , և արկցեն զնոսա 'ի հնոցն հրոյ . անդ եղիցի լաց , և կրճտումն ատամանց : Հուրն բորբոքեսցի արտամուութբ ամ̃ , և այրեսցէ մինչև 'ի յատակս դժոխոց : Անիրաւք , և անօրէնք զապաշխարութիւն ոչ ընդունողք , որքան փառաւորեցին զինքեանս , և եղեն 'ի բերկրութիւնս , այնքան ընկալցին զտանջան , և լաց : Որդն նոցա ոչ մեռցի , և հուրն նոցա ոչ շիջցի . և եղիցին մինչև առ յագեցումն տեսութեան ամ̃ մարմնոյ : Հնազանդողք սատանայական ընդդատուցմանց , կատարողք զանիրաւ կամ̃ սատանայի , անսանողք զպատուիրանօք ամենաբարձրելոյն , անարգողք զպատուէրս այ̃ , ոչ կամեցողք տանիլ ընդ ինքեանց զձէթն սիրոյ , և բարեգործութեան ընդ զամբարոյ հաւատոյ , պաշտողք զդաղանն , և զպատկերն նորին , և ընդունողք զկնիք գազանի 'ի ճակատի իւրում , կամ 'ի ձեռին իւրում , արբցեն 'ի գինւոյ բարկութեան այ̃ , որ խառնեցեալ է զուտ գինեաւ : Դու որ խոկաս զատուգանելս տանջանս դժոխոց , վերանուղղեա՛ զքեզ , որ գործես զանօրէնութիւն :

Գ Լ

# ԳԼՈՒԽ Ճ.

## Յաղագս արքայութեան:

1. Արքայութիւն է կացութիւն ներփակող զա՟մ ցանկալիս իրս, և զփափագելիս բարիս, և արտաքսող զա՟մ զարհուրելիս չարիս: 'Ի յարքայութեան է վայելումն ա՟մց բարեաց, և արտաքսումն ա՟մց տանջանաց, և ա՟մց չարչարանաց: Արքայութիւն է ներհակ դժոխոյ: 'Ի դժոխս դատապարտեցեալք զրկին 'ի բարեաց: 'Ի յարքայութեան երանեալք վայելեն զբարիս: 'Ի դժոխս չարչարին, և տանջին անիրաւք: 'Ի յարքայութեան խնդան, և ուրախանան արդարք: 'Ի դժոխս է գերութիւն: 'Ի յարքայութեան է ազատութիւն: 'Ի դժոխս են կապանք, 'ի յարքայութեան են զարդարանք: 'Ի դժոխս է խաւար, 'ի յարքայութեան ճառագայթ: 'Ի դժոխս է կրճտումն ատամանց, 'ի յարքայութեան ոչըք տանջան: 'Ի դժոխս է պարշահոտութիւն, 'ի յարքայութեան անուշահոտութիւն: 'Ի դժոխս է քաղցութիւն, և ծարաւութիւն, 'ի յարքայութեան յագութիւն: 'Ի դժոխս է անհանգստութիւն, 'ի յարքայութեան է հանգստութիւն: 'Ի դժոխս է խռովութիւն, 'ի յարքայութեան է խաղաղութիւն, և հանդարտութիւն: 'Ի դժոխս է չփոթումն, 'ի յարքայութեան է կարգ: 'Ի դժոխս է որդ մնաց չարչարող, 'ի յարքայութեան երանական տեսումն բերկրեցուցանող: 'Ի դժոխս է հուր տանջող, 'ի յարքայութեան լոյս զուարճացուցանող: 'Ի դժոխս է յաւիտենական պատիժ, 'ի յարքայութեան յաւիտենական կեանք: 'Ի դժոխս միշտ է գիշեր, 'ի յարքայութեան միշտ օր: 'Ի դժոխս է յուսահատութիւն բարեաց, 'ի յարքայութեան ոչ գոյ իմն երկիւղ չարի: 'Ի դժոխս է լաց, 'ի յարքայութեան խնդութիւն: 'Ի դժոխս է ցաւ, 'ի յարքայութեան բերկրութիւն: 'Ի դժոխս է թշուառութիւն, 'ի յարքայութեան երջանկութիւն: 'Ի դժոխս են դեւք դաժանաբարոյք, խստաբարոյք, և անողորմադունեղք չարչարիչք, 'ի յարքայութեան ս՟ք հրեշտակք, քաղցրադունեղք, և ամենասիրելիք ընկերք:

2. 'Ի յարքայութեան է փառք հոգւոյ: 'Ի յարքայութեան է երանական անմահութիւն, փափագեցեալ անչարչարելութիւն, սէր, նրբութիւն, և բարակութի: 'Ի յարքայութեան է ուղղութիւն իմացման, և ուղղութիւն կամաց: 'Ի յարքայութեան մարդն է ուղիղ, ոչ միայն ըստ իմացութեան, այլ նաև ըստ կամաց: Իմացութեամբ անսղալաբար իմանալով զճշմարիտն, և կամօք անբաժանելաբար սիրելով զբարին: 'Ի յարքայութեան մարդն է սիրելի ա՟յ, հրեշտակաց սրբոց, և արդար մարդկանց: Է սիրելի ք՟ի, սիրելի Մարիամու, և սիրելի երանելեաց ա՟մց: Հաստատեցեալ է 'ի շնորհի, և շնորհիւ լեալ է մասնակից ա՟ծութեան: Է տեսանող զա՟ծութիւն, և զամենասուրբ երրորդութիւնն: Է տեսանող զծնունդն որդւոյ 'ի հօրէ 'ի ձեռն իմացութեան, և զբղխումն հոգւոյն ս՟րբոյ 'ի հօրէ, և 'ի յորդւոյ 'ի ձեռն կամաց: Է տեսանող զզանազանութիւն ա՟ծայնոց անձանց 'ի մէջ իւրեանց. թարց բաժանման, և զնոյնութիւն նոցա ընդ ա՟ծայնոյ բնութեան: Է տեսանող զա՟ծայինս կատարելութիւնս նոյնացեալս 'ի մէջ իւրեանց, ընդ ա՟ծայնոյ բնութեան, և ընդ ա՟ծայնոց անձանց: Է տեսանող զա՟ծային էութիւն, և 'ի յա՟ծայնոյ էութեան զայլ իրս ինքեան վայելչաբար տեսանելիս: Է սիրող զա՟ծութիւն լեալ երջանիկ, երանեալ, և վայելող զկեանս փառաւորն, երջանիկն, և յաւիտենականն: Տեսանող զա՟ծ,

լեալ

լեալ ժառանգ արքայութեան երկնից, և տէրութեան երջանկի, և անմահ կենի: Է վայելօղ երանութեան, ընկերակցութեան սրբոց, և ամիւք բարեօք, երանեցելոց պատկանողօք: 'Ի յարքայութեան է հաւաքումն ամից բարեաց, և արտաքսումն ամից չարեաց:

3. Այս տէր նման է արքայութիւն երկնից առն թագաւորի, որ արար հարսանիս որդւոյ իւրում: Մատթ. 22. Թիւ. 2. Թագաւորն, որ առնէ զհարսանիս որդւոյ իւրոյ, է հայրն յաւիտենական: Փեսայն է քս տրն մեր: Հարսն է հոգին արդարոյ: Զգեստն հարսանեաց, է սէրն հոգւոյ մարդոյ արդարոյ: Հարսանիքն է ներամտումն հոգւոյ արդարոյ 'ի յարքայութիւն: Մինչ ուրեմն արդար մարդն մտանէ 'ի յարքայութիւն, 'ի մէջ հոգւոյ արդարոյ, և քս որդւոյն այ տօնախմբին հարսանիք: Հոգին արդարոյ է հարս, քս որդին այ է փեսայն: Շնորհն, յորում պտանի հոգին, է գեղն հարսին. սէրն, և այլք առաքինութիւնք, են զարդք, արդիւնք 'ի յերկինս ժողովեցեալք, են օժիտքն. երանական տեսութիւն, է ներամտումն հարսին 'ի յառագաստ փեսայի, որով հարսն լինի ներկայ փեսայի, և փեսայն հարսին. ներգործական սէրն 'ի տեսութեան, է միաւորումն մարսին ընդ փեսայի: Երանեալ հոգին միշտ տեսանէ, և միշտ սիրէ, և միշտ տեսանելով, և միշտ սիրելով, միշտ վայելէ: Ոչ տեսումն դադարել կարէ, ոչ սէրն, և վայելումն: Ուստի տեսումն է 'ի յաւիտեան, սէրն 'ի յաւիտեան, և վայելումն 'ի յաւիտեան: Ոչ տեսումն կարէ միջահատանիլ, ոչ սէրն, ոչ վայելումն: Ուստի տեսումն է շարունակ, սէրն շարունակ, և վայելումն շարունակ: Ուրեմն սբ հարսն, և երկնային հարսն, միշտ, և շարունակաբար 'ի յաւիտեան ներկայ է երկնայնոյ փեսային, և երկնային փեսայն երկնայնոյ հարսին. և միշտ, և շարունակաբար 'ի յաւիտեան միաւորեալ է երկնայնոյ փեսային. և միշտ, և շարունակաբար 'ի յաւիտեան վայելէ զերկնային փեսայն: Ահա 'ի ձեռն սրբոց հարսանեաց բացատրեցեալ, և բացայայտեցեալ է յաւիտենական երանութիւն:

4. Ամենասիրելագունեղ փեսայն հոգւոց մերոց, այլով կերպիւ բացատրէ մեզ զյաւիտենական երանութիւն, և ասէ: Եւ ես ուխտեմ ձեզ, որպէս և հայրն իմ ուխտեաց ինձ զարքայութիւն: Զի ուտիցէք, և ըմպիցէք 'ի սեղանն իմ յարքայութեան իմում: Ղուկ. 22. Թիւ. 29. 'Ի յերկնայնում արքայութեան քն, պատրաստեցեալ է սեղանն առաքելոց, և հետևողաց Առաքելոց: Յայսմիկ սեղանոջ դնի կերակուրն 'ի փայտէ կենի, որ է 'ի յարքայութեան այ, Դնի քաղցրագունեղ մանանայն թագուցանեալն: Եւ ևս դնի անուշագունեղ գինին, որ արբեցուցանէ զըմպօղն: Այս սեղանն նստին հայրն յաւիտենական, և որդին տրն մեր Յս Քս, և հոգին սբ: Նստին նաև առաքեալք, և համայնք, և ընդհանուրք երանեալք: Ամենեքեան ուտեն զնոյն քաղցրագունեղ կերակուրն, և ըմպեն զնոյն քաղցրագունեղ գինին: Տարբերութիւն է 'ի կերպի ուտելոյ, և ըմպելոյ: Ամենեքեան 'ի միասին խրախանան 'ի յաւիտեան, Սեղանն է ածային էութիւն. ներկայեցեալ տեսակն, և յաւիտենական բանն է արտայայտեցեալ տեսակն: Կերակուրն է երանական տեսումն ածայնոյ էութեան: Ըմպելին է սէրն ածայնոյ էութեան 'ի յերանականն տեսութեան: Քաղցրութիւն կերակրոյ, և ըմպելւոյ, է վայելումն երանութեան, որ է 'ի տեսութեան, և 'ի սիրոյ: Ուտելն, և ճաշակելն զկերակուրն, է տեսանելն զաստուածային էութիւն: Ըմպելն զըմպելին, է սիրելն զածային բարութիւն: Ճաշակելն զքաղցրութիւն կերակրոյ, և ըմպելւոյ, է վայելելն զանուշութիւն տեսութեան ածայնոյ էութեան, և սիր‿

ման

մանն ա̄ծայնոյ բարութե։ Ահա երևեցաւ թէ երջանկութիւն մեր իցէ մասնակցութիւն Ա̄ծայնոյ երջանկութե, և երանութիւն մեր իցէ մասնակցութ̄ ա̄ծայնոյ երանութե։

5. Ա̄ծ է թագաւոր երկնի, և երկրի, և ընդհանրոյ աշխարհի։ Վասն ազնուէութե երկնի, արքայութիւն ա̄յ կոչի արքայութիւն երկնից։ Եւ հաճոյացաւ նմա ընտրեալս իւրս առնել մասնակիցս այսր արքայութե իւրոյ։ Ուստի կամեցաւ առաքարշել զնոսա առ արքայութիւն իւր, զի 'ի յերկինս թագաւորեսցեն ընդ ինքեան 'ի յաւիտեան։ Ուստի զնշանս թագաւորի, որք են. պսակ, իշխանութիւն, գաւազան, զգեստ, անուն, և նստումն 'ի յաթոռոջ, խոստացաւ իւրոց։ Քանզի որքան առ պսակն, ասէ, Լեր հաւատարիմ մինչև 'ի մահ. և տաց քեզ զպսակ կենաց։ յայտնութ Յօհաննու. 2. Թիւ. 10. Արդ որքան առ իշխանութիւն, և գաւազան, ասէ։ Եւ որ յաղթէ, պահէ զգործս իմ մինչև ցվախճան, տաց նմա զիշխանութիւն 'ի վերայ ազգաց. և հովուեսցէ զնոսա գաւազանաւ երկաթեաւ, և իբրև զանօթ բրտի փշրեսցէ զնոսա։ Յայտնութիւն Յօհ. 2. Թիւ. 26. Իսկ որքան առ զգեստն, և անունն, ասէ։ Եւ որ յաղթէ, այսպէս զգեցցի սպիտակս, և ոչ ջնջեսցի անուն նորա 'ի դպրութէ կենաց, և խոստովանեցից զանուն նորա առաջի Հօր իմոյ, և առաջի հրեշտակաց նորա։ Յայտնութիւն Յօհ. 3. Թիւ. 5. վերջապէս որքան առ նստումն 'ի յաթոռոջ, ասէ։ Որ յաղթէ, տաց նմա նստել ընդ իս յաթոռս իմ. որպէս ես յաղթեցի. և նստայ յաթոռ Հօր իմոյ։ Յայտնութիւն Յօհ. 3. Թիւ. 21. Յայտ է յասացելոց, թէ երանութիւն, և երջանկութիւն երկիւղածաց ա̄յ, և զպատուէրանս նորա պահողաց իցէ արքայութիւն երկնից, և թագաւորել ընդ ա̄յ 'ի յաւիտեան։ Ուստի 'ի յարքայութե կայցեն արդարք զ մասնակցութի արքայութե քի, և թագաւորեսցեն ընդ նմա 'ի յաւիտեան։

6. 'Ի յարքայութե է կատարեալ փառք հոգւոյ։ Առ կատարեալ փառք հոգւոյ խնդրին, լոյս փառաց, մասնակցութիւն ա̄ծութե, տեսութ̄, սէր, վայելութ̄, ճշմարտութիւն, հաստատութիւն, անմեղանչականութիւն, անկորուստութ̄, և յաւիտենականութիւն։ 'Ի յարքայութե են համայնք սասցեալք իրք։ Վասնզի իմացութիւն մարդոյ, առ յաւիտենական փառքն առքարշեցելոյ, վերացուցանի լուսով փառաց առ 'ի տեսանել զա̄ծային էութիւն։ 'Ի յարքայութե է մասնակցութ̄ ա̄ծութե. քանզի իմացութիւն մարդոյ, զա̄ծային էութիւն տեսանողի, ունի վասն ներտպեցելոյ տեսակի, զնոյն ինքն զա̄ծային էութիւն, և վասն արտատպեցելոյ տեսակի, զնոյն ինքն ներմարմնացեալ բանն։ Ուրեմն ունի զմասնակցութիւն ա̄ծութե։ 'Ի յարքայութե է տեսութ̄, սէր, և վայելութ̄, վասնզի երանեալքն տեսանեն զա̄ծային էութիւն, սիրեն զա̄ծային բարութիւն, և վայելեն զա̄ծ, զոր տեսանեն, և կատարելապէս սիրեն։ 'Ի յարքայութե է ճշմարտութիւն. քանզի երանեալքն տեսանեն զա̄ծ, որ է ծայրագոյնն, և անհուն ճշմարտութիւն, և զա̄մս այլս իրս առ ինքն պատկանօղս, տեսանեն 'ի յա̄ծայնոջ էութե, որ ոչ կարէ խաբել։ 'Ի յարքայութե է հաստատութիւն. վասնզի կամ̄ երանեցելոյ, զա̄ծ տեսութ̄ սիրողի, այնպէս յենու 'ի վերայ ա̄յ, զի ոչ կարիցէ ոչ յենուլ։ 'Ի յարքայութե է անմեղանչելութիւն. քանզի երանեցեալն տեսեալ զա̄ծ ոչ կարէ ոչ տեսանել, և ոչ կարէ ոչ սիրել։ Այստի է նաև անկորուսելութիւն։ Վերջապէս 'ի յարքայութե է յաւիտենականութիւն. վասնզի երանեալն միշտ տեսցէ, միշտ սիրեսցէ, միշտ վայելեսցէ, և միշտ թագաւորեսցէ ընդ ա̄յ։ Ուրեմն 'ի յարքայութե է կատարեալ փառք հոգւոյ։

7. 'Ի յարքայութեան է նաև կատարեալ փառք մարմնոյ։ Վասնզի 'ի կատարեցեալ փառաց հոգւոյ

վերա-

վերստանայ նաև կատարեալ փառք 'ի մարմին ։ Արդարոց մարմինն երանելոյ ունի չորս կատարելութիւն ինքեան պարտաւորս ։ Վայելէ զամբողջութիւն ամենայն անդամոց համեմատեցելոց , զյարմարս զօրութիւնս անկորուսանելիս, զանապականութիւն , զզանազանութիւն անդամոց առն և կնոջ , զկատարեալ հասակ , և զվայելչաւոր գեղեցկութիւն ։ 'Ի փառաւորի մարմնոջ է փառաւոր անմահութիւն ։ Քանզի հոգին յառնողի այնպէս միաւորի մարմնոյ , զի ոչ կարիցէ բաժանիլ ։ Ուստի է անմահութիւն ։ Յարութիւն արդարոյ փառաւոր ։ Ուստի անմահութիւն երանելոյ է փառաւոր ։ 'Ի փառաւորի մարմնոջ է անչարչարելութիւն , պայծառութիւն , նրբութիւն , և արընթացութիւն ։ Վասնզի փառաւոր մարմինն վայելէ զօժիտս փառաւորի մարմնոյ ։ Օժիտք փառաւորի մարմնոյ է անչարչարելութիւն , զի լիցէ անընդունակ թշնամութեան . պայծառութիւն , զի ունիցի զվայելչաւոր գեղեցկութիւն . նրբութիւն , զի ոչինչ մարմին կարիցէ նմա ընդդիմանալ , և արընթացութիւն , զի կարիցէ ունիլ վարագութիւն ։ 'Ի փառաւորի մարմնոջ ցանկական մասն հանդի . քանզի ոչ կարօտի իմիք իրի ։ Հանդի նաև ցասմնական մասն . վասնզի յոչինչ մեքէ երկնչի ։ Հանդին նաև համայնք զգայութիւնք , վասնզի ոչ իմիք իրի կարօտին ։ Երջանիկք եղիցին ակունք երանելոյ . քանզի տեսցեն զփառաւոր մարմինն Քրիստոսի , զփառաւոր մարմինն Մարիամու , և զփառաւորս մարմինս ամենայն Սրբոց , և զգեղեցկութիւն հրեղէնի երկնի , և բոլորոյ աշխարհի ։ Երջանիկք եղիցին նաև ականջք երանելոյ . վասնզի լուիցեն զձայնն Քրիստոսի , Մարիամու , և ամենայն Սրբոց ։

§. 'Ի յարքայութեան է քաղցրագունեղ , և անուշագունեղ ընկերակցութիւն . վասնզի անդ թագաւորէ կատարելագունեղ սէր ։ Համայնք մարդիկք , և հրեշտակք երանեալք սիրեն զմիմեանս կատարեալ սիրով ։ Իւրաքանչիւրք զիւրաքանչիւրս պատուէին ճշմարտիւ , և արժանաւորաւ պատուով . վասնզի իւրաքանչիւրոք կատարելապէս ճանաչէ զիւրաքանչիւրս , և համայնք ունին զուղղութիւն , զի այնպէս համարիցին զայլս , որպէս համարելիք են ։ Ոչ գոյ ինչ երկիւղ սխալման 'ի համարման . Ամոք է կատարեալ 'ի ճանաչման , և 'ի գիտութեան ։ Ուստի իւրաքանչիւրոք ճանաչեցեալ է կատարելապէս 'ի յիւրաքանչիւրոյ ։ Ըստ ճշմարտի համարման, զոր իւրաքանչիւրոք ունի զիւրաքանչիւրոյ , իւրաքանչիւրք սիրեն զիւրաքանչիւրս , այնպէս որպէս արժանիք գտանին սիրոյ ։ Ամենեքեան են արդարք , արդարք 'ի համարման , և արդարք 'ի սիրոջ ։ Որպէս արդարաբար համարին , և արդարաբար սիրեն , այսպէս և արդարաբար իւրաքանչիւրք վերյարգեն , և գովասանեն զիւրաքանչիւրս ։ Ուստի 'ի մէջ երանելոց է կատարելագունեղ , և քաղցրագունեղ ընկերակցութիւն , և է կատարելագունեղ բարեկամութիւն ։ 'Ի մէջ նոցա նաև է կատարելագունեղ հաղորդակցութիւն բարեաց ։ Քանզի իւրաքանչիւր երանեալ , ոչ միայն վայելէ զերանութիւն իւր , այլ նաև վայելէ զերանութիւն այլոց ։ Ամենեքեան խնդան 'ի վերայ երջանկութեան իւրոյ, և 'ի վերայ երջանկութեան ամենեցուն ։ Չափն էական երանութեան , է սաստկութիւն սիրոյ ։ Վասնզի ըստ սաստկութեան սիրոյ , է լոյսն փառաց , ըստ լուսոյ փառաց , է երանական տեսութիւն , ըստ տեսութեան , է սէրն , և ըստ սիրոյ վայելումն ։ ամէն ։

Վերջ ընդհանրականի Աստուածաբանութեան ։

# ՑԱՆԿ

## ԳԼԽՈՑ ԵՒ ՄԱԿԱԳՐՈՑ


Գլուխ առաջին ։
Յաղագս ածաբանութեան 1

Գլուխ երկրորդ ։
Յաղագս այ ։ 5

Գլուխ երրորդ ։
Յաղագս կատարելութեանց այ ։ 10

Գլուխ չորրորդ ։
Յաղագս երրորդութեան ։ 13

Գլուխ հինգերորդ ։
Յաղագս կարողութեան այ ։ 16

Գլուխ վեցերորդ ։
Յաղագս ստեղծման աշխարհի ։ 19

Գլուխ եօթներորդ ։
Յաղագս իրաց, որք գտանին յաշխարհի ։ 22

Գլուխ ութերորդ ։
Յաղագս հրեշտակաց ։ 25

Գլուխ իններորդ ։
Յաղագս բարի հրեշտակաց ։ 28

Գլուխ տասներորդ ։
Յաղագս դիւաց ։ 31

Գլուխ մետասաներորդ ։
Յաղագս մարդոյ, և յաղագս բանականի հոգւոյ ։ 34

Գլուխ երկոտասաներորդ ։
Յաղագս կրօնի, և ներգործութեանց կրօնի ։ 37

Գլուխ երեքտասաներորդ ։
Յաղագս աղօթից ։ 41

Գլուխ չորեքտասաներորդ ։
Յաղագս պատարագի ։ 44

Գլուխ հնգետասաներորդ ։
Յաղագս երանութեան ։ 47

Գլուխ վեշտասաներորդ ։
Յաղագս ախտից ։ 51

Գլուխ եօթն և տասներորդ ։
Յաղագս առաքինութեանց ։ 54

Գլուխ ութ և տասներորդ ։
Յաղագս հաւատոյ ։ 57

Գլուխ ինն և տասներորդ ։
Յաղագս յուսոյ ։ 61

Գլուխ քսաներորդ ։
Յաղագս սիրոյ ։ 64

Գլուխ քսան և միերորդ ։
Յաղագս խոհեմութեան ։ 67

Գլուխ քսան և երկուերորդ ։
Յաղագս արդարութեան ։ 70

Գլուխ քսան և երեքերորդ ։
Յաղագս արիութեան ։ 73

Գլուխ քսան և չորքերորդ ։
Յաղագս բարեխառնութեան ։ 77

Գլուխ քսան և հինգերորդ ։
Յաղագս խոնարհութեան ։ 80

Գլուխ քսան և վեցերորդ ։
Յաղագս եղբայրականի սիրոյ ։ 84

Գլուխ քսան և եօթներորդ ։
Յաղագս առատաձեռնութեան ։ 87

Գլուխ քսան և ութերորդ ։
Յաղագս հեզութեան ։ 91

Գլուխ քսան և իններորդ ։
Յաղագս պահեցողութեան ։ 95

Գլուխ երեսներորդ ։
Յաղագս զգաստութեան ։ 98

Գլուխ երեսուն և միերորդ ։
Յաղագս ողջախոհութեան ։ 102

Գլուխ երեսուն և երկուերորդ ։
Յաղագս ջերմեռանդութեան ։ 106

Գլուխ երեսուն և երեքերորդ ։
Յաղագս օրինի ։ 110

Գլուխ երեսուն և չորքերորդ ։
Յաղագս պատուիրանաց ։ 114

Գլուխ երեսուն և հինգերորդ
Յաղագս մոլութեանց ։ 118

Գլուխ երեսուն և վեցերորդ ։
Յաղագս մեղաց ։ 122

Գլուխ երեսուն և եօթներորդ ։
Յաղագս հպարտութեան ։ 126

Գլուխ երեսուն և ութերորդ ։
Յաղագս նախանձու ։ 130

գլուխ երեսուն և իններորդ ։
Յաղագս ագահութեան, 134

գլուխ քառասներորդ ։
Յաղագս բարկութեան ։ 138

գլուխ քառասուն և միերորդ ։
Յաղագս որկրամոլութեան ։ 142

գլուխ քառասուն և երկուերորդ ։
Յաղագս բղջախոհութեան ։ 146

գլուխ քառասուն և երեքերորդ ։
Յաղագս ծուլութեան ։ 150

գլուխ քառասուն և չորքերորդ ։
Յաղագս ներմարմնութեան ։ 154

գլուխ քառասուն և հինգերորդ ։
Յաղագս քրիստոսի ։ 158

գլուխ քառասուն և վեցերորդ ։
Յաղագս կատարելութեանց քրիստոսի ։ 162

գլուխ քառասուն և եօթներորդ ։
Յաղագս կենի քրիստոսի ։ 166

գլուխ քառասուն և ութերորդ ։
Յաղագս վարդապետութեան քրիստոսի ։ 170

գլուխ քառասուն և իններորդ ։
Յաղագս չարչարանաց, մահուան, և յարութեան քրիստոսի ։ 174

գլուխ յիսներորդ ։
Յաղագս յարութեան, և համբարձման քրիստոսի ։ 178

գլուխ յիսուն և միերորդ ։
Յաղագս աւետարանականաց երանութեանց ։ 182

գլուխ յիսուն և երկուերորդ ։
Յաղագս առաջնոյ պատուիրանին ա̃յ սատանեայ քանի ։ 186

գլուխ յիսուն, և երեքերորդ ։
Յաղագս երկրորդի պատուիրանին ա̃յ ։ 190

գլուխ յիսուն և չորքերորդ ։
Յաղագս երրորդի պատուիրանին ա̃յ ։ 194

գլուխ յիսուն և հինգերորդ ։
Յաղագս չորրորդի պատուիրանին ա̃յ ։ 198

գլուխ յիսուն և վեցերորդ ։
Յաղագս հինգերորդի պատուիրանին ա̃յ ։ 203

գլուխ յիսուն և եօթներորդ ։
Յաղագս վեցերորդի պատուիրանին ա̃յ ։ 207

գլուխ յիսուն և ութերորդ ։
Յաղագս եօթներորդի պատուիրանին ա̃յ ։ 211

գլուխ յիսուն և իններորդ ։
Յաղագս ութերորդի պատուիրանին ա̃յ ։ 215

Գլուխ վաթսներորդ։
Յաղագս իններորդի պատուիրանի ա̃յ։ 219

Գլուխ վաթսուն և միերորդ։
Յաղագս տասներորդի պատուիրանի ա̃յ։ 223

Գլուխ վաթսուն և երկուերորդ։
Յաղագս եկեղեցւոյ։ 228

Գլուխ վաթսուն և երեքերորդ։
Յաղագս ժողովոյ։ 231

Գլուխ վաթսուն և չորքերորդ։
Յաղագս պահեցողութե̃։ 235

Գլուխ վաթսուն և հինգերորդ։
Յաղագս լսելոյ զպատարագ։ 237

Գլուխ վաթսուն և վեցերորդ։
Յաղագս խոստովանութե̃։ 243

Գլուխ վաթսուն և եօթներորդ։
Յաղագս հաղորդութե̃։ 247

Գլուխ վաթսուն և ութերորդ։
Յաղագս բանադրանաց։ 251

Գլուխ վաթսուն և իններորդ։
Յաղագս մարիամու։ 255

Գլուխ եօթանասներորդ։
Յաղագս կատարելութե̃ց մարիամու։ 259

Գլուխ եօթանասուն և միերորդ։
Յաղագս կենի մարիամու։ 263

Գլուխ եօթանասուն և երկուերորդ։
Յաղագս խօսակցութե̃ ընդ մարիամու։ 266

Գլուխ եօթանասուն և երեքերորդ։
Յաղագս հոգւոյն սրբոյ։ 270

Գլուխ եօթանասուն և չորքերորդ։
Յաղագս պարգևաց հոգւոյն սրբոյ։ 274

Գլուխ եօթանասուն և հինգերորդ։
Յաղագս պտղոց հոգւոյն սրբոյ։ 278

Գլուխ եօթնասուն և վեցերորդ,
Յաղագս մարմնաւորի ողորմութե̃։ 282

Գլուխ եօթանասուն և եօթներորդ։
Յաղագս հոգևորի ողորմութե̃։ 285

Գլուխ եօթանասուն և ութերորդ։
Յաղագս ութի մեղաց։ 289

Գլուխ եօթանասուն և իններորդ։
Յաղագս մահացուցման զգայութե̃ց։ 293

Գլուխ ութսներորդ։
Յաղագս հասարակաց բարերարութե̃ց ա̃յ։ 297

Գլուխ ութսուն և միերորդ։
Յաղագս մասնաւորաց բարերարութե̃ց ա̃յ։ 301

Գլուխ ութսուն և երկուերորդ։
Յաղագս առաքելոց։ 305

Գլուխ ութսուն և երեքերորդ։
Յաղագս վարդապետի։ 309

Գլուխ ութսուն և չորքերորդ։
Յաղագս քարոզութե̃, 313

Գլուխ ութսուն և հինգերորդ։
Յաղագս ունկնդրութե̃ ա̃ծայնոյ բանի։ 317

Գլուխ ութսուն և վեցերորդ։
Յաղագս խորհրդոց։ 221

Գլուխ ութսուն և եօթներորդ։
Յաղագս մկրտութե̃։ 325

Գլուխ ութսուն և ութերորդ։
Յաղագս դրոշմի։ 328

Գլուխ ութսուն և իններորդ։
Յաղագս հաղորդութե̃, 332

Գլուխ

գլուխ իննսուներորդ։
Յաղագս ապաշխարութեան։ 335

գլուխ իննսուն և մէկերորդ։
Յաղագս վերջին օծման։ 339

գլուխ իննսուն երկուերորդ։
Յաղագս կարգի։ 344

գլուխ իննսուն և երեքերորդ։
Յաղագս ամուսնութեան։ 348

գլուխ իննսուն և չորքերորդ։
Յաղագս կուսութեան։ 351

գլուխ իննսուն և հինգերորդ։
Յաղագս մահուան։ 355

գլուխ իննսուն և վեցերորդ։
Յաղագս մասնաւորի դատաստանի։ 358

գլուխ իննսուն և եօթներորդ։
Յաղագս յարութեան։ 362

գլուխ իննսուն և ութերորդ։
Յաղագս ընդհանրական դատաստանի։ 366

գլուխ իննսուն և իններորդ։
Յաղագս դժոխոց։ 370

գլուխ հարիւրերորդ։
Յաղագս արքայութեան։ 374

## Վերջ ցանկի գլխոց, և մակագրոց։

# ՑԱՆԿ
## ԽՐԱՏ Ի ՎԵՐԱՅ ՆՇԽԱՐՀԵԱՑ

### Ա

Ագահութիւն : 134
Ախտք : 51
Ամուսնութիւն : 347
Ապաշխարութիւն : 335
Առաջին պատուիրանն ա̃յ : 186
Առաքեալք : 305
Առաքինութիւնք : 54
Աւիթ մեղաց : 289
Աստուած : 5
Աստուածաբանութիւն : 1
Արդարութիւն : 70
Արիութիւն : 73
Արքայութիւն : 374
Աւետարանականք երանութիւնք : 181


### Բ

Բանադրանք : 251
Բանական հոգի : 34
Բարեխօսութիւն : 77
Բարի հրեշտակ : 28
Բարկութիւն : 138
Բղջախոհութիւն : 146


### Դ

Դատաստան : 358
Դեւք : 31
Դժոխ : 370
Դրախտ : 374
Դրոշմ : 328


### Ե

Եկեղեցի : 228
Եղբայրական սէր : 84
Երանութիւն , 47
Երկրորդ պատուիրանն ա̃յ : 190
Երրորդութիւն : 13
Երրորդ պատուիրանն ա̃յ : 194
Եօթներորդ պատուիրանն ա̃յ : 211


### Ը

Ընդհանրական դատաստան : 366


### Զ

Զգաստութիւն : 98


### Թ

Թողով : 231


### Ի

Իններորդ պատուիրանն ա̃յ : 219
Իրք որք գտանին յաշխարհի : 22


### Լ

Լսել զպատարագ : 239


### Խ

Խոհեմութիւն : 67
Խոնարհութիւն : 80
Խոստովանութիւն : 243
Խորհուրդ : 321
Խօսակցութիւն ընդ Մարիամու : 266


### Ծ

Ծուլութիւն : 150


### Կ

Կատարելութիւնք ա̃յ : 10
Կատարելութիւնք Մարիամու : 259
Կատարելութիւնք Ք̃ի : 162
Կարգ : 344
Կարողութիւն ա̃յ : 16
Կեանք Մարիամու : 263
Կեանք Ք̃ի : 166
Կուսութիւն : 351
Կրօն : 37

## Հ

Հաղորդութիւն ։ 332
Հաղորդութիւն ։ 247
Համբարձումն քի ։ 178
Հասարակք բարերարութիւնք այ ։ 297
Հաւատ ։ 57
Հեզութիւն ։ 91
Հինգերորդ պատուիրանն այ ։ 203
Հոգին սբ ։ 270
Հոգևոր ողորմութիւն ։ 285
Հպարտութիւն ։ 126
Հրեշտակք ։ 25

## Մ

Մահ ։ 355
Մահացուցումն զգայութեանց ։ 293
Մահ քի ։ 174
Մասնաւոր դատաստան ։ 358
Մասնաւորք բարերարութիւնք այ ։ 301
Մարիամ ։ 255
Մեղք ։ 122
Մոլութիւնք ։ 118
Մկրտութիւն ։ 325

## Յ

Յարութիւն ։ 362
Յարութիւն քի ։ 174
Յարութիւն քի ։ 178
Յոյս ։ 61

## Ն

Նախանձ ։ 130
Ներգործութիւն ։ 554
Ներգործութիւնք կրօնի ։ 37

## Ո

Ողջախոհութիւն ։ 102
Որկրամոլութիւն ։ 142
Ութերորդ պատուիրանն այ ։ 215
Ունկնդրութիւն ածային բանի ։ 317

## Չ

Չարչարանք քի ։ 174
Չորրորդ պատուիրանն այ ։ 198

## Պ

Պահեցողութիւն ։ 44
Պահեցողութիւն ։ 235
Պատարագ ։ 44
Պատուիրանք ։ 114
Պարգևք հոգւոյն սրբոյ ։ 274
Պտուղք հոգւոյն սրբոյ ։ 278

## Ջ

Ջերմեռանդութիւն ։ 106

## Ս

Սէր ։ 64
Ստեղծումն աշխարհի ։ 19

## Վ

Վարդապետ ։ 309
Վարդապետութիւն քի ։ 170
Վերջին օծումն ։ 339
Վեցերորդ պատուիրանն այ ։ 207

## Տ

Տասներորդ պատուիրանն այ ։ 223

## Ք

Քաղցրութիւն ։ 33
Քրիստոս ։ 258

## Օ

Օրէն ։ 110

Վերջ ցանկի 'ի վերայ այբուբենից ։

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССРА

[illegible]

№25:

[illegible]

[illegible]

16/Է 43 Թ.

[illegible]

[illegible] 2. 1864 ին.